Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L i n
649

1 9 99

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ո Ւ Ր Ա Տ Ե Ա Ն

ԵՒ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԵՒ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱԲԲԱՅԻՑ

ԳՐԵԱԼ ԴԻՄԱՌՆԱԲԱՐ

Ի Մ. ՎԱՐԴԱՊԵՏԷ ԹԷՈԴՈՐԵԱՆ

Տ Պ Ա Գ Ր Ե Ա Լ

ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Գ. Ռ. ՆԱՏԻՐԵԱՆԻ

Ի ՓԱՐԻԶ

1866=Ռ.ՅԺԵ

ՀԱՏՈՐ Բ

4649.60

2ф. 649

ՆԱԽԱՇԱՒԻՂ

Ըստ խոստմանս մերում ահա դամք ի լոյս ընծայել և զերկրորդ մասն պատմութեան Մուրատեան վարժարանին, և զայս ևս ըստ յեղանակի առաջնում մասին, այս է, զնամականին իբրև նիւթ պատմութեան և իբրև հաւաստիք բանիցն ճշմարտութեան յանդիման կացուցանել ։

Թէպէտ և նիւթ և յեղանակ երկրորդիս նոյն են որպէս առաջնոյն, սակայն խնդիրն և անցքն որք յայսմիկ այլազգ են բոլորովին ։ Քանզի յառաջնումն խնդիրն և անցքն էին զպահանջմանէ հրխտակին, վէճ և դատ կտակակատարաց բարերարին ընդ Հ. Սարգսի և յաղթութիւն սորին ի դատաստանի, հանդերձ շահիւք աղքատաց ազգին ։ Իսկ խնդիրն և անցքն որք յայսմիկ՝ են զանուղիղ մատակարարութենէ Մ. վարժարանին, բողոք Հ. Սարգսի զայնմանէ, վէճ և դատ Աբբային Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի, արտաքսիլ սորա բռնութեամբ զինու ի Մ. վարժարանէն և բաժանիլ ի Մխիթարեան միաբանութենէն, հանդերձ վնասիւք աղքատաց ազգին ։

Վասն այսորիկ պարտ է առնել աստ նախաշաւիղ ինչ բանից, իբր ներածութեան յեղանակաւ, յորում քննել և հաւաստեօք ցուցանել զիրաւունս Հ. Սարգսի որ ի Մ. վարժարանի, և զպատճառս խիստ գրութեան նորին առ Մեծաւոր իւր, Գեր. Հիւրմիւզ, և առ ոմանս ի կրօնակից եղբարց իւրոց ։

Եւ այս առ ի զգուշութիւն ընթերցողաց պատմութեանս, զի մի առ տեղեաւն միայն հայելով ի բանն և չքննելով զպատճառն՝ ձախողակի և տարապարտ կարծիօք դատիցին զգրու-

թիւն Հ. Սարգսի և մեղանչիցեն ճշմարտութեան և արդարութեան ։

Գիրն սպանանէ, հոգին կեցուցանէ ։

Արդ՝ իրաւունս ունի Հ. Սարգիս ի Մ. վարժարանի յերկուց գլխոց. նախ, յարդեանց վաստակոց իւրոց, ի չորեքտասանամեայ ոգւով չափ աշխատութենէն, զիրաւունս աղքատաց ազգին պահանջելով, և պահպանելով զայն ամենայն աւանդապահ զգուշութեամբ, և բազմօրեայ բանտարգելութեամբ. երկրորդ՝ ի հրաժարելոյ Մխիթարեան միաբանութեան ի պահանջմանէ հրիտակին, և ի պատուիրելոյ Հ. Սարգսի դարձուցանել առ ժառանգս բարերարին զընկալեալ արծաթն, զերկու միլիոն ֆրանքն, զիրաւունս որք և աղքատ մանկանց ազգիս Հայոց, որպէս տեսանի յէջ 396. Ա. հատորոյ ։ Ահա վասն այսորիկ ոչ միայն իրաւունս ունի Հ. Սարգիս ի Մ. վարժարանի, այլ և երկրորդ հիմնադիր նորին համարիլ. և յիրաւի՝ քանզի եթէ հաւանեալ էր նա յետսամիտ խորհրդոյ Մխիթարեան միաբանութեան և անսացեալ անիրաւ հրամանի նորին, ոչ երբէք հաստատէր Մ. վարժարանն ։

Զլասցի՞ն զայս և ժխտիցե՞ն ճշմարտութեանս, բաց ի նախանձոտ և յապերախտ ոմանց, որք չկարեն տեսանել և լսել անգամ զառաքինի գործ ընկերաց իւրեանց ։

Պատճառք խիստ գրութեան Հ. Սարգսի առ Մեծաւոր իւր՝ են նախ՝ կողմնաւոր բարք և ինքնահաճ կամք Մեծաւորին, Գեր. Հիւրմիւզի. երկրորդ՝ անուղիղ մատակարարութիւն նորին յիրաւունս ժառանգութեան աղքատաց համօրէն ազգին Հայոց, ըստ կամաց բարերարին. երրորդ՝ վրէժխնդրութիւն և փառասիրութիւն նորա, վասն որոյ կամէր փոխադրել զՄ. վարժարանն ի Հռոմ, և զոհել զայն Պապին և Ծաւալոցի նորին. չորրորդ՝ վնասակար և անիրաւ վրէժխնդրութիւն նորա յոսոխէ իւրմէ ի Գեր. Հասունէ, վասն որոյ զեղծանի ի սկզբունս կրօնի Մխիթարայ աբբայի, և անիրաւի զազգն Հայոց համարելով զնա հերձուածող և հերետիկոս, և զեկեղեցի նորա արտաքոյ եկեղեցւոյն Քրիստոսի ։

Ասկայն արդեօք, թէ Հ. Սարգիս իբրեւ կրօնաւոր հպատակ և հնազանդութիւն ուխտեալ՝ չունէր իրաւունս առնել զայնպիսի խիստ գրութիւն առ մեծաւոր իւր. մանաւանդ ընդ այնպիսի մեղմ գրութիւն նորա առ ինքն ։

Ասեմք, թէ կրօնաւոր հպատակն և հնազանդութիւն ուխտեալն ունի իրաւունս առնել զայն, յորժամ Մեծաւորն առնէ զամենայն ինչ ընդդէմ սահմանադրութեան կրօնի իւրոյ. իսկ արդ՝ Գեր. Հիւրմիւզ առնէ զամենայն ինչ ընդդէմ սահմանադրութեան կրօնի իւրոյ, որպէս վկայեն բանիւ և գրով ոմանք ի միաբանից նորա, և որպէս տեսանի յէջս 366–500. Գ. հատորոյ. ապա ունի իրաւունս Հ. Սարգիս առնել զայնպիսի խիստ գրութիւն առ նա ։

Իսկ պատճառք խիստ գրութեան Հ. Սարգսի առ ոմանս ի կրօնակից եղբարց իւրոց՝ էին վնասակարութիւն նոցա յիրաւունս աղքատաց ազգին, և յանդգնութիւն նոցա առ ներողամտութիւն իւր. իբրեւ ոչ զգաստանան նոքա, յայնժամ բռնադատի նա յարդարութենէն գրել առ նոսա գիր յանդիմանութեան, և այն ոչ ի վրէժխնդրութիւն անձին, այլ յուղղութիւն նոցին ։

Ահա այսոքիկ են պատճառք խիստ գրութեան Հ. Սարգսի առ Մեծաւոր իւր, և առ ոմանս ի կրօնակից եղբարց իւրոց, բնաւին օտար յայնցանէ զոր պարսաւադէտք բարուք պախարակիցեն և դատիցեն զնա արդեօք ։

Ու այսոսիկ ի դէպ համարիմք յիշատակել ստա զբանս սրբոյն Բեռնարդոսի. « Եթէ կուրօրէն պարտ իցէ հնազանդիլ « ամենայնի, ասէ, առ ի՞նչ պիտոյ իցեն բանք առաքելոյն, « թէ Զամենայն ինչ փորձեցէք զբարին ընկալարուք ։ » — « Հնազանդիլ պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան. » գոչեն առաքեալք ։ Խմանայ նա զայս՝ ոչ միայն զվճռոյ և և զհրամանաց Աբբայից, այլ և զհրամանաց եպիսկոպոսաց, վասն որոյ գոչէ ամենայն զօրութեամբ իւրով ընդդէմ զեղծմանց և անկարգութեանց պաշտօնէից դահին Հռովմայ, այսպէս.

« Հանճար և բնաւորութիւն պաշտօնէից նորին յոյժ սակաւ

„ պատկառ կան յառաջադիմութեան իւրոյ ինչ. Կարտինալքն
„ ոչ միտ դնեն բայց միայն շահուցն որք անտի, խօսիմ ես
„ համարձակ զայնմանէ, վասն զի անկարգութիւնն այն յայտ-
„ նի է ։ Ոչ յայտնեմ ես զամօթալիսն, այլ յանդիմանն հար-
„ կանեմ զայն, ընդ որ պարտ էին չիկնիլ ։ Երանի՜ թէ ան-
„ կարգութիւնքն չէին այնչափ յայտնի, և եթէ խօսիմ ես
„ զայնցանէ, երանի՜ թէ չկամէին այլք հաւատալ բանից
„ իմոց ։ Ի զուր ջանամ ես պատել զվէրս ինչ խորին և մա-
„ հացու, զլուխն ջախջախեալ է, արիւնն որ ցայտէ յամե-
„ նայն կողմանց՝ մասն լինի զգուշութեանս իմում, և աղտե-
„ ղէ զայն ամենայն, զոր դնեմ ի վերայ վիրացն ։ „

Եթէ սուրբն Բեռնարդոս իբրեւ հպատակ գահին Հռովմայ ունէր իրաւունս առնել զայսպիսի գրութիւն ընդդէմ զեղծմանց և անկարգութեանց պաշտօնէից նորա, ապա ունի իրաւունս և Հ. Սարգիս իբրեւ հպատակ Աթոռոյն առնել զայնպիսի խիստ գրութիւն առ Մեծաւոր իւր, և առ ոմանս ի կրօնակից եղբարց իւրոց, յաղագս զեղծման սկզբանց կրօնի իւրեանց, և անիրաւ գործոց նոցա յօրէնս ազգին հայոց, և վնասակար յիրաւունս աղքատաց ազգին ։

Իսկ յաղագս մեղմ կարծեցեալ գրութեան Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս, չեմ համարիմք յիշատակել զթուղթ նորա որ յէջ 518 Գ. հատորոյ, և որով մարթ իցէ ասել, թէ գրութիւն նորա առ Հ. Սարգիս մեղմ էր թէ խորամանկ ։

Կնիք բանիս՝ յայտ առնեմք խղճիւ մտաց, որում վկայ է Աստուած, թէ Հ. Սարգիս ի գրութիւն իւր առ Գեր. Հիւրմիւզ, և առ ոմանս ի կրօնակից եղբարց իւրոց, ոչ երբէք ի կրից առաջնորդութեան, և ի հոգւոյ վրէժխնդրութեան շարժեալ, կամ յայլ ուստեք դրդեալ՝ գրեաց զոր գրեաց, այլ միայն ի սիրոյ ճշմարտութեան և ի լրմանէ արդարութեան, և ապացոյց այսմ, թէ և հաւատոյք բազում են, այլ մեք չեմ համարիմք յիշատակել աստ զմին անտի, այս է, զանձի-չարութիւն նորա, զոր զկնի զինու արտաքսելոյ ի Մուրատեան մանկանց թէ յիւր վարժարանէն և զրկելոյ յամենայնէ եցոյց նա, խնդրելով խնդրէ ի հալածչէն և ի զրկողէն իւրմէ համ-

բույր աշխոյ խաղաղութեան, և այնպէս հրաժարի ի նմանէ. ապա չունէր նա ատելութիւն ընդ նմա, այլ նախանձաւորութիւն ընդդէմ անիրաւութեան նորա, հայեցեալ յիրաւունս աղքատաց համօրէն ազգիս, զրկելով զնոսա ի ժառանգութենէ իւրեանց, և յօրէնս նորին, զրպարտելով զնա իբրև զհերետիկոս:

Ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց նախանձայոյզ էր Աստուծոյ:

Ասիցեն արդեօք, թէ չէր արժան Հ. Սարգսի ըստգտանել զհամօրէն միաբանութիւն սակս թերութեան մասնաւորաց ումանց անտի:

Ասեմք, թէ համօրէն միաբանութեանն հաւանելով ի կամս մասնաւորաց ումանց անտի յեղծումն սկզբանց կրօնի իւրոյ, և ընդդէմ ճանաչման և խղճի մտաց իւրոց, վասն որոյ արժան էր Հ. Սարգսի ըստգտանել զմիաբանութիւն համօրէն:

Եւ գլուխ ամենայնի, եթէ ճշմարտասէր, արդարասէր, և ազգասէր բարուք մարդիք յիշեսցեն զամենայն գնացս և զանցս կենաց Հ. Սարգսի, սկսեալ ի քսանամեայ հասակէն մինչև ցութսունամ հասակ նորին, զչորեքտասանամեայ ոգւով չափ աշխատութիւնն ի Հնդիկս, և զերեսունամեայ բանիւ և գրով վաստակն յԵւրոպայ, որք լինին ամք քառասուն և չորք, և զվրիպիլ նորա ապա յամենայն մխիթարութենէ սրտի, և յականկալութենէ բարեաց ազգին իւրոյ, ոչ միայն արդարացուցանեն զնա ի բանս ըստգտանաց որ զհամօրէն միաբանութենէն, այլ և գովեն զանաչառութիւն նորա իբրև ճշմարտութեան, և զանշահասիրութիւն նորա ի խնդիրս արդարութեան:

Ասիցեն ևս, թէ զի՞նչ հարկ ի վերայ կայր Հ. Սարգսի գրով խօսել զճշմարտութիւն, և յնուլ զարդարութիւն, ի վասահամբաւութիւն Գեր. Հիւրմիւզի և Մխիթարեան միաբանութեան:

Ասեմք, թէ Գնացք Գեր. Հիւրմիւզի և Մխիթարեան միաբանութեան որ ընդ Հ. Սարգսի, արտաքսելով զնա բանու-

թեամբ զինու ի Մուրատեան և յիւր իսկ վարժարանէն, իբրև զապստամբ ոք, և զրպարտելով զնա իբրու զխորող ընչից ազգատոց ազգին, հարկ և անհրաժեշտ հարկ ի վերայ կայր Հ. Սարգսի գրով խօսել զճշմարտութիւն և լնուլ զարդարութիւն, ի պաշտպանութիւն համբաւոյ իւրոյ, ըստ օրինաց բնութեան ։

Ասացին և ասիցեն եւս արդեօք, թէ վէճն էր ընդ անհաւատ մատակարարութիւն Հ. Ամբրոսեայ Գալֆայեան որ ի Մուրատեան վարժարանին, ի պաշտպանել նմա Հ. Սարգսի, հարկաւորի Գեր. Հիւրմիւզ կոչել զՀ. Սարգիսն ի դատաստան և արտաքսել զնա բռնութեամբ զինու ի Մ. վարժարանէն ։

Առ այս թէպէտ հատուցեալ եմք յէջս 540-3. Գ. հատորոյ, ի ծանօթութեան, հատուցուք և աստ դարձեալ հանդերձ յաւելուածով. վասն որոյ՝

Ասեմք նախ՝ թէ Հ. Սարգիս պաշտպանէ Հ. Ամբրոսեայ պայմանաւ և պատճառաւ, առ ի դադարեցուցանել զխռովութիւն աշակերտաց վարժարանին, և ի խափանել զելս նոցին անտի որ ի վնաս ազգատոց ազգին և ի գայթագղութիւն նմին, որպէս և եղև, և որպէս տեսանի յէջս 472-558. Գ. հատորոյ. երկրորդ՝ թէ արդարև վէճն էր ընդ անհաւատ մատակարարութիւն Հ. Ամբրոսեայ, ընդէր ոչ եհարց, ոչ յանդիմանեաց զնա Գեր. Հիւրմիւզ իբրև Մեծաւոր, և խօսեցաւ ընդ նմա զայնմանէ անգամ մի, ըստ բազում անգամ առաջարկութեան Հ. Սարգսի. ընդէր և առ նա ոչ գրեաց թուղթ ելանել ի պաշտօնէ անտի և դառնալ ի Վենետիկ, որպէս գրեաց առ Հ. Սարգիս աւուրբք ինչ յառաջ քան կոչել զնա ի դատաստան, որպէս տեսանի յէջ 518. Գ. հատորոյ ։

Ընդէր զՀ. Սարգիս միայն կոչէ ի դատաստան, և զՀայր Ամբրոսիոս ոչ կոչէ ։ Ընդէ՞ր յետ արտաքսելոյ զՀ. Սարգիս ի վարժարանէն, ապա գրէ թուղթ առ Հ. Ամբրոսիոս գնալ ի Հռովմ առ Գեր. Եդուարդ ։ (Յէջ 542. Գ. հատորոյ ։) Ընդէ՞ր պահանջէ նա ապա ի Հ. Սարգսէ 30,000 փրանք, և վաւերացուցանէ զայն յատենէն, հանդերձ սպառնալեօք բանտի,

եթէ չհաստուցանէր զայն, ընդունելով նորա յառաջագոյն ի Հ. Ամբրոսիոսէ զհաշիւ մատակարարութեան և բաւականալով ընդ այն. որպէս տեսանի յէջ 492. Գ. հատորոյ։

Ասիցեն զարձեալ՝ թէ Հ. Սարգսի գոլով ուղղիչ Մ. վարժարանին՝ ընդ նմա միայն խօսի Գեր. Հիւրմիւզ զթերութենէ Հ. Ամբրոսեայ, և ձեռամբ նորին կամի հանել զնա ի վարժարանէն։

Ասեմք թէ ոչ այդպէս. ի բացակայութեան Մեծաւորին, և գրով հրամանաւ նորին, ուղղիչ անկանէր առնել զայն. բայց յորժամ Մեծաւորն ներկայ էր անդ, և ունէր հաւաստիք ի ձեռին ի յանդիմանութիւն թերութեան նորին, նմա անկանէր առնել զայն ինքնին. և հաստատութիւն այսմ՝ ահա են Հայր Գաբրիէլի ի վարժարանէն. զի յետ բազում գրութեան Հ. Սարգսի զամս երկու ի պաշտպանութիւն նմին, և յետ տեսանելոյ զկամս Մեծաւորին, զեղն նորա ի վարժարանէն, արձակէ զնա անտի խաղաղութեամբ։

Արդ իբրեւ յետ ժամանակաց ի յետին լրութիւն համանի Ամբրոսիոս Գալֆայեան... ասէ ոմանց Գեր. Հիւրմիւզ, թէ Ահա պաշտպանեալն ի Հ. Սարգսէ։...

Ասեմք մեք և խրատեմք, թէ ահա պտուղ խստութեան Գեր. Հիւրմիւզի... որ ոչ միայն ի վնաս միաբանութեան, բաժանելով անտի չորից անձանց, այլ և ի գայթագղութիւն ժողովրդեան, և ի նախատինս միաբանութեան... ո՞չ ապաքէն խոհական և օգտակար էր խորհուրդն այն Հ. Սարգսի, զոր տայ Գեր. Հիւրմիւզի, համբերել եւս ամիս ինչ մինչեւ աւարտել աշակերտաց զընթացս ուսման, և արձակել անտի խաղաղութեամբ, ապա հրաժարել իւր և Հ. Ամբրոսեայ ի պաշտօնէ անտի իւրեանց և դառնալ ի վանս. եթէ անսացեալ էր նա այս խորհրդոյ նորա՝ չպատահէին չարիքս այսոքիկ... և ո՞չ ապաքէն արդարանայ ասացեալն սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի, թէ. «Որ ինչ հրապարակաւ յանդիմանին մեղք, ի լրբութիւն զարձուցանեն զյանցաւորն։»

Հաւանեցի՞ Գեր. Հիւրմիւզ ճշմարտութեան և արդարութեան, և զզջացի՞ ի վերայ անիրաւ և վնասակար գնացից

իւրոց, կամ չլուեալ՞ գտնեալ ոչ ըստգտանել զգնացս Հ. Սարգսի յայսմ պաշտպանութեան :

Յամին 1865, խռովին աշակերտք Մ. վարժարանին, սակս անընդել բարուց ուղղչի նորին, Հ. Օքսենտիոսի, և բողոքեն առ Գեր. Հիւրմիւզ ի Վենետիկ, հանել զնա ի պաշտօնէ անտի և զայլ ոք կարգել, ապա թէ ոչ՝ չկարեն կալ անդ : Կատարէ նա զկամս նոցա, կարգէ ուղղիչ զՀ. Հմայեակ, և հանեալ անտի զՀ. Օքսենտիոս՝ առաքէ ի Պօլիս, պատճառանօք օգափոխութեան, առ ի պահել զպատիւ նորա : Միաբանիցի՞ այս գնացք Գեր. Հիւրմիւզի ընդ գնացից իւրոց, որով վարեցաւ ի 1855 ամի ընդ աշակերտս Մ. վարժարանին և ընդ ուղղիչն նորին, ընդ Հ. Սարգսի : . . .

Ձէ՞ր այն գնացք նորա կողմնաւոր բարուց և անիրաւ վարուց : . . .

Հ. Աբրահամ Ճարեան զամս բազում ունի զպաշտօն ուղղչութեան Ռափայէլեան վարժարանին ի Վենետիկ քաղաքի, թէպէտ և երկիցս կամի Գեր. Հիւրմիւզ հանել զնա ի պաշտօնէ անտի, այլ նա ոչ կամի, ասելով, եթէ հանիցէ զինքն ի պաշտօնէ անտի, չկամիցի կալ ի մենաստանի . . . և Գեր. Հիւրմիւզ լռէ, և չհանէ զնա անտի բռնութեամբ, իբրև զանհնազանդ ոք :

Հ. Սարգիս զամս ինչ միայն կամէր ունել ևս զպաշտօն տեսչութեան Մ. վարժարանին, առ ի դադարեցուցանել զխռովութիւն աշակերտաց նորին, և ի չկորուսանել իսպառ զՀ. Ամբրոսիոս և զՀ. Խորէն Գալֆայեան, Գեր. Հիւրմիւզ ոչ միայն չլռէ, այլ և նախ խիստ գրութեամբ հրամայէ նմա ելանել ի պաշտօնէ անտի և դառնալ ի վանս, ապա բռնութեամբ զինու արտաքսէ զնա ի վարժարանէն, իբրև զանհնազանդ և զապստամբ ոք :

Միաբանիցի՞ն այսոքիկ գնացք նորա ընդ միմեանս : . . .

Զիցե՞ն այսոքիկ գնացք նորա վաս միանգամայն և անգութ արանց : . . .

Թողումք ասել զապերախտ բարուց նորա որ ընդ արժանիս նոցա և այլս :

Պա՞րտ իցէ և Հ. Սարգսի լռել և ոչ տպագրութեամբ հրատարակել զանպատեհ և զանիրաւ գնացս Գեր. Հիւրմիւզի, և միաբանից նորին, զի մի՛ համբաւ նոցին աղարտեսցի, ըստ կարծեաց ոմանց անտի... Թէպէտ և համբաւն Հ. Սարգսի աղարտեսցի և անունն նորին ի թիւս անհնազանդից և ապըստամբաց ի ժամանակագրութեան վանաց գրոշմեսցի, իբրև զայնց որք ի Թրեստոյ միաբանից, որպէս զի Աբբայքն երկոքեան Մելգոնեան, և Հիւրմիւզեան արդարք երևեսցին ի գընացս իւրեանց, թէպէտ և լռելն Հ. Սարգսի ընդդէմ իցէ ճշմարտութեան և արդարութեան, որոց հաւանեալ է նա միայն և արհամարհեալ զկարծիս միաբանութեան ։

Պա՞րտ իցէ Հ. Սարգսի լռել, և ոչ տպագրութեամբ բողոքել զանիրաւ և զանգութ գնացից Գեր. Հիւրմիւզի որ ընդ ինքն, յետ յիսուն ամ աշխատելոյ իւր ի միաբանութեան, և նուիրելոյ նմա զարդիւնս ոգւոյ չափ աշխատութեան իւրոյ, իբրև 200,000 ֆրանք. Թողուլ զինքն, որ ութսուն և երեք ամաց հասակի է այսօր, և յօտար երկրի, հալածել զկարեւոր պէտս իւր ի շնորհաց այլոց . . . մինչդեռ իշխեցուքն որք ի վանս, ի Մ. վարժարանի և ի Պօլիս են զարդիւնս վաստակոց իւրոց անարժանութեամբ վայելեն . . . ահա խիղճ մտաց Արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի միաբանութեան և ազնիւ ծառայի Պապին Հռովմայ ։ . . .

Հուսկ յետոյ ասիցեն արդեօք, թէ անտի աշխատութիւն հեղինակին, և ընդունայն ծախք ի տպագրութիւն մատենից նորին, յորս ոչ այլ ինչ գտանին, բայց եթէ վէճ և հակառակութիւն միաբանից ընդ միմեանս. ո՞չ ապաքէն բարւոք լինէր, ասիցեն, ի կարեւորագոյնս և յօգտակարագոյնս ծախել հեղինակն զայնքան ամաց աշխատութիւն իւր, և զայնքան գումար արծաթոյն. զոր ջանք անօգուտ վատնել ։ . . .

Առ այս ասեմք, թէ որք միանգամ ոչ ճանաչեն զբարոյական հիւանդութիւն, զտգիտութիւն սեան ազգիս, անտի աշխատութիւն համարին զաշխատութիւն հեղինակին. և որք միանգամ ոչ ճանաչեն զպատճառ բնական հիւանդութեան, ազգասիրութեան սեան ազգիս, ընդունայն ծախք համարին

զգումար արծաթոյն որ ի տպագրութիւն մատենից Նորին ։ Սակայն հեղինակն ճանաչէ զպատճառս չարեացս այսոցիկ , ի խնդիր լինի բաղում նեղութեամբ դարման տանել սոցին ։ Դիմէ նա ի Հայաստանէ յԻտալիա առ Մխիթարեան միաբանութիւն ի Վենետիկ, և ուսանի առ ոտս նորա զամս երկոտասան. ահա դարման բարոյական հիւանդութեան, որում տանի նա ըստ ընդունակութեան իւրում , և ըստ կարողութեան վարժապետաց իւրոց ։ Դիմէ նա ապա յԻտալիոյ ի հընդիկս ի խնդիր ժառանգութեան աղքատաց ազգին, յորս զամս չորեքտասան ոգւով չափ աշխատութեամբ առնու ի ձեռին զժառանգութիւն նոցա և տայ դնել զայն ի վերայ գետնոյ յեկամուտ, ի ծախս դպրոցին , ըստ դիտաւորութեան հանգուցեալ բարերարին . և ահա դարման բնական հիւանդութեան , որում տանի նա ըստ կարի իւրում ։ Բողոքէ նա բանիւ և գրով ընդդէմ անուղիղ մատակարարութեան Մ. վարժարանին, և ընդդէմ զեղծման սկզբանց կրօնի Մխիթարայ Աբբայի, վասն այնորիկ արտաքսի ի Մ. վարժարանէն, և բաժանի ի Մխիթարեան միաբանութենէն ։

Բռնադատեալ նորա ի ճշմարտութենէն և յարդարութենէն՝ հրատարակէ տպագրութեամբ զանցս կենաց իւրոց . ապա չէ մնոտի աշխատութիւն հեղինակին, և ոչ ընդունայն ծախս տպագրութեան մատենից նորին . այլ մասն է արդի պատմութեան հայոց ազգին ։

Սակայն ի վերայ այսր ամենայնի, իրաւանց ասեմ և զգուշութեան, եթէ տակաւին գտանիցին ոմանք , որք ձախողակի և տարապարտ կարծեօք դատիցին զգրութիւնս, և մեղանչիցեն ճշմարտութեան և արդարութեան , չեն ինչ զարմանք. զի գտանին յամենայն ազգս պարսաւասէր բարուք ոմանք , որք սիրեն պարսաւել զմատենագիրսն ամենայն , առ տեղեաւն միայն հայելով ի բանն և չքննելով զպատճառն՝ դատին զնոսա, և հասարակ դատելով ; համարին զինքեանս անաչառ դատաւորս , զեղծանին ի դատաստանս իւրեանց ։

Զդատաստանաց այսպիսեաց ոչ ինչ փոյթ արասցէ հեղինակ մատենիս, թողլով զգրութիւն իւր ի դատաստանս ճըշ-

մարտասէր և արդարասէր բարուք մարդկան, և մանաւանդ ի դատաստան արդարութեան և ողորմութեան Աստուծոյ առնելով ապաստան ։

Չերկրորդ մասն պատմութեան Մ. վարժարանին, սակս ընդարձակութեան բանիցն որք ի նմին, յերկուս հատորս բաժանեցաք, շարունակութիւն երկրորդ մասին առնելով գերրորդ հատորն ։ —

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈԴՈՐԵԱՆ,
երբեմն Աբբահայր Մխիթարեան միաբանութեան, և Վերատեսուչ Ռափայէլեան և Մուրատեան վարժարանաց որք ի Վենետիկ, ի Պատաւին և ի Փարիզ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Վրիպիլ Հօր Սարգսի ի Մխիթարութենէ Մուրատեան վարժարանին. — Անմիաբանութիւն և թերութիւն պաշտօնէից վարժարանին. — Ընտրութիւն աշակերտաց հակառակ դիտաւորութեան Բարերարին. — Բողոք Ս. վարդապետի ընդ անուղիղ մատակարարութիւն Մ. վարժարանին. — Դարման թերութեան վարժապետի նորին. — Հակառակութիւն ուրումն ընդդէմ վարժարանին. — Գանգատ Պ. Աղեքսանդր Ռափայէլի զՀ. Աղեքսանդրէ Պէշիքթաշլեան. — Խափանումն բարեաց հասարակաց ի ձեռն Աղեքսանդր Ռափայէլի.

Թէպէտ և ակնկալութիւն Հ. Սարգսի Վարդապետի զերծանելոյ ի հոգոց Մուրատեան վարժարանին ի դերև ելանէ արդէն՝ տեսանելով նորա զգնացս Հ. Աղեքսանդրի ի Լոնտոն, այլ և ոչ ըստ ակնկալութեան իւրում գտանէ նա մխիթարութիւն ընդ յառաջադիմութիւն Մ. վարժարանին որ ի Պատաւիոն, տեսանելով անդ զանբաւականութիւն և զթերութիւնս պաշ-

տօնէիցն, այս ինքն, ուղղչի Նորին Իգնատիոսի վարդապետի, և վարժապետի մանկանց Հ. Պետրոսի։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և զհակառակութիւն ոմանց ի վանականաց և մանաւորաբար միոյ ուրումն, ընդ վարչութիւն վարժարանին, համդերձ քինու վրէժխնդրութեան, որ ծագեալ էր ի սկզբանէ անտի յընտրութենէ վարժապետի Նորին, արարելոյ յուղղչէն ի մէջ երկուց անձանց. զի նախադասութիւն Հ. Պետրոսի Մինասեան ծանր թուէր յոյժ Հ. Ռափաէլի Թրենց, վասն որոյ և հակառակութիւն և վրէժխնդրութիւն անտի սկսանի և տեւէ յերկար մինչև Հ. Ռ. Թրենց հասանէ նպատակի իւրում. և առաւել ևս, լինի նա ուղղիչ Մ. վարժարանին ի Փարիզ, յանցս 1855 ամի։ Իսկ Հ. Պետրոսի յիշելով զբռնաւորական բնաւորութիւն ուղղչին, Իգնատիոս Վարդապետի Փափազեան, կամի անկախ լինել ի նմանէ, և յայտնէ նմա համարձակ զդիտաւորութիւն իւր. վասն որոյ և անմիաբանութիւն ի մէջ նոցա անդադար, և յառաջադիմութեան Մ. վարժարանին վնասակար։ Թող զթերութիւն նոցին որ ի պաշտօնն յայն, ի մատակարարութիւն ասեմ արծաթոյ, և ի վարժապետութիւն մանկանց, շռայլ գոլով ուղղչին, և անծանօթ իտալ. և գաղղ. լեզուաց գոլով վարժապետին, վասն որոյ և արհամարհի նա յօտար վարժապետաց անտի, և յաշակերտաց իւրոց իսկ։

Թո՛ղ նա և զընտրութիւն մանկանցն որ ի Պօլիս ձեռամբ Հ. Անանիայի Ճէլալեան, և որ բոլորովին հակառակ լինի դիտաւորութեան Բարերարին, որոյ կամքն են այսպէս. « Եթէ ոմանք հարուստ անձինք ևս յազգէն Հայոց կամիցին զմանկունս իւրեանց վերոյ ասացեալ դպրատանն ուսուցանել, կարող են, զծախսն հատուցանելով. քանզի դիտաւորութիւն իմ վասն դպրատան շինութեան, է վասն աղքատ մանկանց ուսուցանելոյ, այս ինքն վասն նոցա որոց հարքն չքաւորք են, և վասն չկարելոյ նոյա զծախսն դպրատան հատուցանել, զանց առնեն ուսմամբ մանկանց իւրեանց և անմեղ մանկունքն այնոքիկ մնան զուրկ յամենայն ուսմանց և գիտութեանց, և որոյ վասն դրեթէ ըստ մեծի մասին անտերունչ ազգս Հայոց տգէտք են։ »

Ընտրելով Հ. Անանիայի մանկունս ըստ կամաց իւրոց և աշառանք, զմանկունս ազգականաց, բարեկամաց և ծանօթից իւրոց և իւրայնոցն որք ի Պօլիս, յորս գտանի և ոչ մի ի նոցանէ թուլակամոր, թէպէտ և գտանէին ի մէջ նոցին ամանք, որոց ծնողքն ունէին բաւական հարստութիւն, ըստ վկայելոյ բազմաց. և ոչ այսչափ միայն, այլ և ոչ զկարեւոր զգեստս ճանապարհի մանկանցն այնոցիկ պահանջէ ի ծնողաց նոցա, այլ հոգայ նա և զայն յարծաթոյ աղքատաց ազգին, ահա հակառակ զխոստաւորութեան բարերարին. և ահա ի հանգամանաց և ի գնացից պաշտօնէից Մ. վարժարանին իմացեալ լինին մասնակարարութիւն և յառաջադիմութիւն նորին : . . .

Զայն ամենայն անուղղութիւն տեսեալ և լուեալ Ս. վարդապետի թէպէտ և ցաւի և բողոքէ ընդ այն, այլ ոչ լինի այնմ ինչ դարման, պակասելով ի Միաբանութեանն յարմար և բաւական անձինք ի պաշտօնն յայն : Թէպէտ և Հ. Իգնատիոս վարդապետ Փափազեան հրաւիրէ և յորդորէ զՀ. Սարգիս վարդապետ գնալ ի Պատաւիոն և օգնական նմա լինել ի պաշտօնն յայն տեսչութեան իւրոյ, և այն առ ի սանձ և ի վրէժխնդրութիւն համարձակութեան Հ. Պետրոսի արդեօք. այլ չկարէ Հ. Սարգիս յանձն առնուլ զայն ի ժամուն, ունելով ի վերայ իւր զհոգս տանն Աղամուրի բնակելոյ ի Վենետիկ, վասն որոյ լուէ և ցաւի նա ընդ վնաս հասարակաց : Բայց ոչ դադարի նա դարման տանել այնմ զո՛նէ ըստ մասին և ըստ կարի իւրում : Քանզի խորհի նա և խօսի ընդ գեր. Սուքիաս Սոմալի, զի վարժեսցին իւրքն անդստին ի նորընծայութենէ առնուլ յիտալացի և գաղղիացի լեզուաց վարժապետ ունելով ի բնիկ լեզուագիտաց անտի իւրաքանչիւր բարբառոյ, որպէս զի օգտակար լիցին աշակերտաց վարժարանին : Թէպէտ և հաւանի Գեր. Սոմալեան խորհրդոյ Հ. Սարգսի, բայց ցուցանէ դժուարութիւն ընդ այն, զանկարողութիւն միաբանութեան իւրոյ հատուցանելոյ զծախսն օտար վարժապետաց զամս ինչ : Եւ իբրև խոստանայ Հ. Սարգիս հոգալ զայն յիւրմէ, հաւանի յայնժամ Գեր. Սոմալ, և կատարէ Հ. Սարգիս զխոստումն իւր, հատուցանելով զծախսն զայն զամս իբրև երկուս, և այնպէս

վարժին նորընծայք միաբանութեան յիտալ. և ի գաղղ. լեզուս վարժապետք ազգայն այնոցիկ ։

Մինչդեռ մնայ Հ. Սարգիս վարդապետ գալստեան Պարոն Աղէքսանդր Ռափայէլի ի Վենետիկ, հանդերձ Հ. Աղէքսանդրաւ Պէշիքթաշլեան, ըստ բանից խոստման նորա բերանով և գրով, և ակնունելով բարեացն որ անտի, յիշատակեալ յառաջին հատոր պատմութեանս, ահա գտանէնա թուղթ ի Պ. Աղեքսանդրէ, օրինակ զայս ։

« Վեր. Հ. Սարգիս վարդապետի ի սէրտ սրտէ ողջոյն ։

« Երանի Ազանուրեանց զի նոցա է Հ. Սարգիսն. երիցս երանի լինէր ինձ տատապելոյս և անմխիթարիս, եթէ փոխան նորա Հ. Աղէքսանդրն ընկերակցեալ էր նոցա, և Հ. Սարգիսն աստ էր կացեալ, զի հաւաստեաւ խեղանոտ եմ, և հաւաստ ընծայեսցէ ինձ Մխիթարեան Միաբանութիւն վենետկոյ, թէ այժմ այդր ի վանս էի ուրախ և հանգիստ, և պատրաստ ի դէմ եդեալ նպատակն օրհնութեամբ ի վերուստ, Աղօթիւք Հասարակութեանն, և ձեր անխոնջ և կարեկից աջակցութեամբ ։ Սիրալիր թուղթ ձեր, գրեալ ի հոկտեմբերի 4, եհաս յիւրում ժամու. այլ զինչ գուտ, զի ոչ աստ էիր, և ոչ թողեր զհոգի քո յաստ մնացօղն. որպէս կերպիւ իմն զգացուցի վերապատուութեանդ յանցեալ թղթիս, և այժմ ցաւ է ինձ և խոց սրտիս յայտնել ձեզ մտերմաբար, թէ Հ. Աղէքսանդր չէ ինձ ամենևին ոչ մխիթար և ոչ օգնական. և փոխան զիս քաջալերելոյ և փաղփաղելոյ զգործադրութիւն բարի բարի խորհրդոց, ես ինքն բազմիցս անպտուղ վաստակեցայ ի յիշեցուցանել նմա զայնս ։ Ի սուղ խօսիցս շատ է բազումս իմանալ ։ Գերապայծառ վեհի մերում գրեցի զայսմ նիւթոյ, և սպասեմ օր աւուր լսել զհրաման առ Հ. Աղէքսանդր դառնալ ի վանս, կամ մնալ աստ ոչ վասն իմ ։ Գրեցից և առ Հ. Յակոբոս ոչ ծածուկ ի ձէնջ ։ Սիրելի վերապատուելիդ աղօթեսցէ յոյժ յոյժ վասն իմ ։

Ի Լոնտոն. դեկտ. 8, 1835 ։

« ԱՂԵՔՍԱՆԴՐ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԱՆ »

Առեալ Հ. Սարգսի զթուղթն Աղեքսանդր Ռոփայէլի, ցաւի ընդ այն յոյժ, ընդ խափանումն բարեաց հասարակաց ազգիս, յանպատեհ գնացից Հ. Աղեքսանդրի Պէշիքթաշլեան տեսանելով զդադարումն անցուցանելոյ արծաթոյն որ ի Պարոն Աղեքսանդր Ռոփայելէ, և զփոփոխութիւն զխոստովութեան Նորա, տալով հրաման յայլ պէտս դարձուցանել զյղեալ արծաթն, 5000 լիրէ բանկրլին. թէպէտ և 4200 և եթ էր անցուցեալ ի վանս Հ. Աղեքսանդրի. և 800 տակաւին ի ձեռս իւր էր պահեալ, ի պէտս վայրապար ծախուց իւրոց, զորոց և ոչ ուղիղ հաշիւ տայ Նա ապա, թէպէտ և խստիւ պահանջի ի Նմանէ այն: Առեալ Գեր. Սոմալի զթուղթ Պարոն Աղեքսանդր Ռոփայէլի, և խմացեալ անտի զգնացս Հ. Աղէքսանդրի Պէշիքթաշլեան, խռովի ընդ այն, և գրէ վաղվաղակի թուղթ հրամանի առ Հ. Աղեքսանդր ի Լոնտոն դառնալ ի վանս անպատճառ և անխափան: Ընկալեալ Հ. Աղեքսանդրի զթուղթն զայն հրամանի, խռովի ընդ այն յոյժ մինչև հիւանդանալ, զմտաւ ածեալ զզրկումն իւր ի զուարճութեանց Լոնտոնի. վասն այնորիկ և վասն այլ պատճառանաց յապաղէ նա զդարձ իւր ի Վենետիկ այլ ևս ամիս մին, յամելով աստ և անդ զճանապարհայն և ծախելով ի զուր զարծաթն աղքատաց ազգիս:

Իբրև դառնայ Նա յոչ կամաց և ցաւօք սրտի ի վանս, սկսանի գանգատել զՀ. Սարգսէ ի ծածուկ, որպէս թէ Նա իցէ պատճառ յետս կոչելոյ իւրոյ ի Լոնտոնէ, վասն որոյ և պատճառ խափանման բարեաց հասարակաց որ ի Պարոն Աղեքսանդր Ռոփայէլէ, կարծելով թէ չգիտեն այլք զգանգատ Պարոն Աղեքսանդրի զինքենէ առ Գեր. Սոմալ, և առ Հ. Սարգիս. վասնայսորիկ յիշատակեցաւ վերյիշեալ թուղթն Պարոն Աղեքսանդր Ռոփայէլի, որպէս զի ծանիցի ճշմարտութիւն հանդերձ հաւաստեօք, թէ ո՛ լինի պատճառ խափանման բարեաց հասարակաց ազգին:

Յետ եօթնեկաց ինչ դարձի Հ. Աղեքսանդրի ի վանս, խնդրէ Հ. Սարգիս հաշիւ ի Նմանէ, վասն 800 լիրէ ստեռլինի, զոր ընկալեալ էր Նա յԱղեքսանդր Ռոփայէլէ անցուցանել ի վանս վասն բանի զխոստովութեան Նորա բարեաց հասարակաց, և

զոր ծախեալ էր նա յայլ պէտս ըստ ցանկութեան իւրում ։ Խնդրէ յայնժամ Հ. Աղեքսանդր Պէշիքթաշլեան ժամանակ աւուրց ինչ ։ Անցանեն բազում աւուրք և եօթնեակք, և ոչ տայ նա հաշիւ ։ Ի ստիպել զնա Հ. Սարգսի տալ նմա զայն հաշիւ, խօսի Հ. Յակովբոս Ճէլալեան ընդ Հ. Սարգսի և աղաչէ զնա չստիպել զՀ. Աղէքսանդր վասն հաշուին այնորիկ, քանզի չփոթեալ է, ասէ, և չկարէ հաշիւ տալ վասն ընկալեալ 800 լիրայ ստեռլինի. և այնչափ տագնապեալ է, մինչև ցնցիւն ջղաց գտանել, յորմէ յայտ է, թէ վատնեալ է նա զայն ։ Ասէ ցնա Հ. Սարգիս, թէ ինքն զարծաթն զայն իբրև աւանդ սրբազան գիտէ, ժառանգութիւն որբ և աղքատ մանկանց ազգին իւրոյ, ըստ այնմ պահեալ է զհաշիւն նորին, և ըստ այնմ պահանջէ զայն յայլոց ։

Ասէ ցնա Հ. Յակովբոս. այո՛ այնպէս է, բայց զի՞նչ կարեմք առնել. կորուսելոյն չիք ճար գտանելոյ, պարտիմք ապա համբերել ։ Ասէ ցնա Հ. Սարգիս. արարէք որպէս և գիտէք, զի ինքն քաւեալ է յայնպիսի անիրաւ գործոց, ի վատնելոյ զկրաւունս աղքատաց ։ Ահա արդիւնք Հ. Աղէքսանդրի ի Մ. վարժարանն, որ պարծի առաջի անծանօթից, թէ աշխատութեամբ իւրով հաստատեալ իցէ Մ. վարժարանն ։ Թողեալ զվատնումն 400 լիրէ ստեր. զոր ընու Հ. Սարգիս ի Լոնտոն առ ի ծածկել զպակասութիւն նորա առաջի այլոց, և զորմէ յիշատակեալ է ի Ա. հատոր պատմութեանս, և թողեալ զյայտնի ծախսն նորա սպառեալ ի Լոնտոն զամս երիս, որք առաւելուն քան զ1000 լիր. ստէռլին, սակայն ի վերայ այսր ամենայնի՝ պարծի նա համարձակ, թէ յոյժ խնայութեամբ վարեալ իցէ ինքն ի Լոնտոն, ծախելով ոչ աւելի քան զերկու շիլինք օր ըստ օրէ ։

Իբրև զերծանի Հ. Աղեքսանդր ի պահանջմանէ անտի 800 լիր. ստէռլին հաշուին, սկսանի նա ապա բաժանել և տնօրինել ըստ քմաց իւրոց զՖիլիքեական գործսն, գնեալ ձեռամբ իւրով ի Լոնտոն և առաքեալ ի Վենետիկ ի վանս ։ Առնու նա անտի զքանի մի նոր և կատարեալ գործսն Մ. վարժարանին, և դնէ ի տեղի նոցին զհին և զանկատար գործսն վանաց, առանց հարցանելոյ ումեք, և առանց հատուցման ։ Նա որոշէ

անդ սենեակ մի առանձին, յոր և զետեղէ զայնս, և ցուցանէ օտարականաց, իբրև զարդիւնս վաստակոց իւրոց, և զխօս հանճարոյ իւրոյ կերտեալ ի Լոնտոն :

Եւ ծանրութեան մաքսին խափան գոլով փոխադրութեան գործեացն ի Պատուխոն, կամի Հ. Աղեքսանդր պահել զնոսա ի պէտս Ռափայէլեան վարժարանին որ ի Վենետիկ. բայց ի չկամել Հ. Ռափայէլի հատուցանել զբովանդակ գին նոցին, փոխանակելով Հ. Աղեքսանդրի զհինսն ընդ նորոցն, վասն որոյ մնայ այն այնպէս անորոշ, թէպէտ և ի գործ ածին այնք ի Ռ. վարժարանին զամս տասն, սկսեալ ի 1836 ամէն մինչև ցամն 1846, առանց հատուցանելոյ զգին նոցին 20,000 ֆրանք, կամ զչահ դրամոյն : Ոչ գիտէ Հ. Սարգիս, թէ յետ այնորիկ հատուցա՞ւ այն ըստ արդարութեան՝ թէ ոչ. զի ամենայն ինչ Մ. վարժարանին զանխուլ գործէր ինմանէ, թէպէտ և կարծեցեալ Տեսուչ էր. քանզի ամենայն ինչ, ասէ Գեր. Հիւրմիւզ, իւր միայն գիտել անկանի :

ԳԼՈՒԽ Բ.

Պատճառ յապաղմանն բանալոյ Ռափայէլեան վարժարանին ի Վենետիկ. — Խնդիր տեղւոյ Ռ. վարժարանին և գտանել նորին. — Ընտրութիւն Տեսչի, և այլ պաշտօնէից Ռ. վարժարանին. — Ժամանումն աշակերտաց և բացումն Ռ. վարժարանին. — Անբաւականութիւն գնատակարարութեանն Մ. վարժարանին. — Անբաւականութիւն գնատակարարութեանն Մ. և Ռ. վարժարանաց. — Առիթք անբաւականութեանց զայնցանէ. — Անխնէմ գնացք ունանց ի Մխիթարեան միաբանից.

Թէպէտ և զարծամն հրիտակի Ռ. վարժարանին հանեալ էր Լորտ Քանչէլէրի ի ձեռաց Մուրատեանց դատաստանաւ, և զետեղեալ զայն ի պանքն Անգղիոյ և քննեալ և վճռեալ նորա հաստատել զդպրոցն ի Վենետիկ մատակարարութեամբ Մ. Մխիթարանութեանն որ անդ, ըստ բանից կտակի Եդուարդայ Ռափայէլի, և ըստ բանից կտակի Հ. Նիկողայոսի Բու-

զոյեան, սակայն յապաղէ Միաբանութիւնն զբացումն նորին, պատճառաւ Աղեքսանդր Ռափայէլի որ կամի և խնդրէ մնալ զալստեան իւրում ի Վենետիկ և հաճութեամբ իւրով ընտրել զտեղին, և ի ներկայութեան իւրում բանալ զդպրոցն։ Բայց յորժամ տեսանէ Միաբանութիւնն թէ յամէ նա գալ անդ մանաւանդ թէ հատանէ զյոյս գալստեան նորա, սակս տհաճութեանն, որ ընդ անպատեհ գնացս Հ. Աղեքսանդրի, յայնժամ փութայ բանալ զայն, ակնածեալ ի Լօրտ Քանչլերէն, զի մի հարցեալ քննեսցի և մեղադրեսցի ի նմանէ ընդ յապաղումն այնորիկ. վասնորոյ ի խնդիր լինի տեղւոյ դպրոցին ի սկիզբն 1836 ամին, և յանձնէ զհոգն զայն հարց Յակոբոսի Ճէլալեան, և Սարգսի Թէոդորեան. որոց որոնեալ և քննեալ զբազում տեղիս, ի վախճանի ընտրեն զպալատն Բէզարօի, և ի վարձու կալնուն զայն 1,000 ֆիորինիւ ի տարւոջն. և պատրաստեալ ի պատշաճ բնակութիւն քսան մանկանց, և գրեալ Գեր. Սուքիաս Սոմալի թուղթ առ Հ. Անանիա Ճէլալեան ի Պօլիս, ածել տալ անտի մանկունս հնգետասան ձեռամբ Եզ. Ստեփաննոսի։

Եւ մինչև ժամանեալ մանկանցն ի Վենետիկ, կոչէ Գեր. Սուքիաս Սոմալեան զՀ. Սարգիս Թէոդորեան և տայ այսպէս .

« Գիտես դու, զի ըստ կտակի հանգուցեալ Հ. Նիկողայոսի Բուզայեան, ինձ անկանի Տեսչութիւն Ռ. վարժարանին. և ես ահաւասիկ ի կողմանէ իմմէ զքեզ կացուցանեմ անդ Տեսուչ, իբրև փոխան իմ. ապա ընտրեսջիր դու ուսուցիչ և դաստիարակ մանկանցն այնոցիկ, և օգնական նմին ընդ որ և հաճիցիս. ի կամս և յընտրութիւն քո է այն։

Ընտրէ Հ. Սարգիս զՀ. Ռափայէլ Թրենց ուսուցիչ և դաստիարակ մանկանցն, առ ի մատանալ տալ նմա որդեօք զնախատինս և զքէն որ ի նախադասութենէ Հ. Պետրոսի յայն պաշտօն ի Մ. վարժարանին. և զՀ. Եսայի Մղրաքեան օգնական նմա, և ի միասին ընդ նոսա պատրաստէ զամենայն կարեւորսն Ռ. վարժարանին։

Ապա ժամանեն անդ ի Պօլսոյ հնգետասան մանկունք ընդ

Եղ. Սոփիաննոսի, և բացեալ լինի վարժարանն յամսեան սեպտեմբերի 1836 ամի հանդիսիւ միաբանութեան և խրատական բանիւք և օրհնութեամբ Գեր. Սուքիաս Սոմալի ։

Յառաջ քան զբացումն Ռ. վարժարանին, ի սկիզբն 1836 ամի, գտանէ Հ. Սարգիս գիր ի Մատրասէ, գրեալ ի ծանօթէ իւրմէ անդ, որ ազդ առնէ նմա, թէ գրեալ իցէ Պօղոս Ղազարովիչ թուղթ առ Յովհաննէս Մուրատ, յորում բազում քննութիւն և ամբաստանութիւն լինին զՄ. վարժարանէն, ստորագրելով զանկարգութիւն վարչացն անդ, և զանիրաւ մատակարարութիւն իրաւանց աղքատաց ազգին, և զոր ընթեռնու Յովհաննէս Մ. առաջի նորա, և ասէ, թէ պարտաւորի ինքն ի խղճէ մտաց, իբրև կտակակատար հօր իւրոյ անցանել վերստին յԵւրոպա և դարման տանել վնասուց աղքատաց ազգին, որպէս և անցանէ անտի այսր և նեղէ զմիաբանութիւնն զամս չորեքտասան, հանդերձ տարապարտ ծախիւք և բազում դայթակղութեամբ. և այնպիսի լինին քննութիւնք և ամբաստանութիւնքն այնոքիկ, որպէս թէ Ղազարովիչն ինքն ի Մ. վարժարանի անդ կացեալ իցէ, թէպէտ նա մի անգամ և եթ յայն միջոց ժամանակի գնացեալ էր անդ և ոչինչ տեսեալ աչօք. ապա յայտ է զի լուեալ էր նորա զայն յոմանց ի միաբանից անտի յաճախ երթևեկելոց առ նա. և նոքա լինին Հարք Ռափ. Թրենց, և Յովհաննէս Սորկուճեան։ Սա չունի ինչ հակառակութիւն ընդ Մ. վարժարանին. ապա միայն Հ. Ռափայէլ Թրենց, որ յոյժ հակառակ լինի այնմ, պահելով քէն ի սրտի ընդ նախադասութիւն Հ. Պետրոսի Մինասեան ։ Թէպէտ և Հ. Սարգիս գրէ ի Մատրասէ մի անգամ և երկիցս առ Գեր. Սոմալ զգուշանալ ի Պօղոս Ղազարովիչէ իբրև ի դաւաճանէ, և գուշակէ թէ լիցի նա երկրորդ Տէր Միքայէլ Սանոս (*) ։

(*) Տէր Միքայէլ Սանոս Կարնեցի, իբրև մի յաշակերտաց Ծաւալոցին Հռովմայ լինի, և իբրև մի ի կարեւոր բարեկամաց Մխիթարեան Միաբանութեան Վենետկոյ համարի. գնացեալ նորա երբեմն ի Վաշխալով փոքրիկ քաղաք գաղթեալ Հայոց, գտանէ անդ զՀ. Ներսէս ոմն Մխիթարեան որ Առաջնորդ լինի երկրորդական վանաց Միաբանութեան, և յանձնէ նմա 1,000 Թղթեայ փիօրին, 1,250 ֆրանք, գնել նորա զայն յեկամուտ վանացն այնորիկ հանդերձ պայմանաւ, զի յորժամ մեռանիցի ինքն, վասն հոգւոյ իւրոյ մշտնջենաւոր պատարագ մատուսցի յեկեղեցի վանացն ։ Յետ ամաց ինչ թշնամացեալ նորա ընդ Մխիթարեան Միաբանու-

Սակայն զարմացեալ և տարակուսեալ Գեր. Սոմալի ընդ այն, պատասխանէ հարցմամբ, թէ ընդէ՞ր Տէր Սանոս լիցի նա. ոմանք եւս ի բարեկամաց Նորա գայթակղին և մեղադրեն զՀայր Սարգիս, ասելով թէ կասկածոտ ոք է Նա և չարագուշակ. և իբրեւ առնուն զփորձ անզգամութեան Նորա՝ յայնժամ յիշեն զգուշակութիւն Հ. Սարգսի և արդարացուցանեն զնա, բայց յոյժ անագան, յետ բազում վնասուց և գայթագղութեան. և այսորքիկ արդիւնք են հակառակութեան և նախանձու որք ի մէջ կրօնակից եղբարց, զորոյ վերագոյն յիշատակեցաք, և յիշատակեսցուք ապա ըստ կարգի պատմութեանս ։

Իբրեւ զամս երկուս Տեսուչ կայ Հ. Սարգիս Ռ. վարժարանին. և քանզի ունէր նա ի վերայ իւր զհոգս տանն Աղանուրի, յանձնէ Հ. Ռափայէլի զմատակարարութիւն Ռ. վարժարանին, և Նա ըստ ցանկութեան իւրում և ըստ քմացն մատակարարէ զայն. զոր տեսեալ Պօղոս Լազարովիչի որ բնակէր ի Վենետիկ, գրէ թուղթ առ Աղէքսանդր Ռափայէլ ի Լոնտոն, ստորագրելով զանկարգութիւն վարչայն երկուց վարժարանաց, և անիրաւ մատակարարութիւն իրաւանց աղքատաց ազգին, և առաւելապէս Մ. վարժարանին, իբրեւ ի հատուցումն գործոց Հ. Ռափայէլի ամբաստանողի Մ. վարժարանին ։... Ջրնագիրն թղթոյ Նորա ունելով Հ. Սարգսի ի ձեռին, կարեւոր համարի յառաջ բերել աստ, թէ և յերկար և ձանձրալի, հանդերձ բաղդատութեամբ բանից ։

∴ Ազնուամեծար և Մեծապատիւ Պ. Աղէքսանդր Ռափայէլի Ղարամեան .

թեան Վենետկոյ պահանջէ ի Հ. Ներսէսէ զյանձնեալ արծաթ իւր հանդերձ տոկոսեօք. և ի զլանալ զայն Հ. Ներսէսի զօրութեամբ պայմանին՝ Տէր Միքայէլ Սանոս զատ վարէ ընդ Նմա և կորուսանէ զիրաւունս պահանջման իւրոյ ։ Նլեալ Նորա անտի գնայ ի Վենետիկ պահանջել զայն ի Միաբանութենէն. Առ ի չվճարել Միաբանութեան ընդ Նմա՝ կամի դարձուցանել առ Նա զարծաթն զայն ։ Իսկ Նա ոչ միայն հանդերձ տոկոսեօք պահանջէ զարծաթ իւր, այլ և ըստ արժէի արծաթ փոբինի, 5,000 ֆրանք. և յընդդիմանալ Միաբանութեան անիրաւ պահանջանաց Նորա, դատ վարէ և. անդ ընդ միաբանութեան և կորուսանէ զարձեալ զիրաւունս պահանջման իւրոյ անդարձ վճռով ։ Դառնացեալ Նորա յայնժամ խօսի չարիս զՄիաբանութենէն ընդ ծանօթս և. ընդ անծանօթս որոց և հանդիպի ի Վենետիկ. և այնու ոգւով գնայ ի Հռովմ, և անդ յանկարծամահ մեռանի ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։

«Ազգասիրութիւն իմ ստիպէ զիս գրել ազնուութեան ձերում գլթուղթս, ի սակս ներկայ ողբալի վիճակաց երկուց դպրատանց, այս ինքն Մուրատեան և Ռափայէլեան. Նախ՝ վասն Մուրատեանին ասեմ, զի մինչեւ ցարդ՝ գրե թէ կորուսին զկէս դրամագլխոյն։ Առաջին՝ զամս բազումս անգործ և անպտուղ պահելով զարծաթն, և ապա յոյժ թանկագնոց գնելով զանդեր, զապառաժուտ և զանպիտան կալուածս, զխարխաբեալ տունս և զկրպակս, և այլն. ոմանց տալով քան զարժողութիւնս հատուցանելով, զոմանս մեծամեծ ծախիւք նորոգելով և զառարկ պահելով, ոմանց անվաճառելի լինելով, և ոմանց զարծաթն հատուցանելոյ զկնի, հազարաւոր կանգունս պակաս գտանելով. վասնորոյ ի դատս և յ րէնս ծախելով և տուժելով ի զուր կորուսին զարծաթն և զհամբաւ իւրեանց։ Թողումք զմեծագոյն վնասն, որ յետ սորին յայտնապէս երեւեցի, սակս գնելոյ նոցա զամենայն կալուածս ի մէջ Վենետիկ և Պատուա մեռեալ քաղաքաց, որոց վիճակն օր ըստ օրէ ի նուաստութիւն փոխի, և գին կալուածոց, տանց և կրպակաց ամ յամէ տասն առ հարիւր պակասի, և այլն, և այլն։

«Իսկ սակս կացութեան դպրոցին համառօտիւ և միով բանիւ ծանուցանելով ասեմ, կործանեալ է. քանզի ի 24 ուսանողաց վեշտասանն առանց ոչինչ ուսանելոյ դարձան յետս, և այժմ մնացին միայն ութ. և գնացողքն ի Պօլիս ի վերայ համբաւոյ վանականաց հռչակեցին զանպատեհս, որով աղարտեցաւ յոյժ յոյժ անուն միաբանութեան և խռովեցաւ ազգն, վասնորոյ այժմ ոչ ոք կամի տալ զզաւակս իւր յաշակերտութիւն եթէ երկուց դպրատանց և եթէ վանաց. վասնորոյ մնացին այժմ ի նորընծայարանի և ի վարժարանի նոցա միայն վեց պատանեակք, և նոցին մնալն եւս երկբայելի է, զի յառաջ քան զուխտելն ծնողքն յետս կոչեցին զորդիս իւրեանց և այն խստութեամբ։

«Իսկ ի Ռափայէլեան դպրատան ուսանէին յառաջ չորեքտասան պատանեակք, յորոց մին Աւագ ուրբաթիս ինքնին դարձաւ յետս ի Պօլիս, և զկնի սակաւ աւուրց ունին դառնալ այլ եւս 3 կամ 4, որ հազիւ մնայ ութ կամ ինն։ Եթէ զի

ճակէ դպրոցին և զկատարելութենէ նորին հարցանէք, ստ այս ասեմ, զի նմանի Հասարակապետութեան. քանզի բազմութիւն վարդապետաց են որք կառավարեն զայն, մին Գերյարգելի, մին Յարգելի, մին Վարժապետ, մին Վերատեսուչ, մին Մատակարար, մին Վերակացու, մին Խոստովանահայր, և այլն, և այլն: Թողումք զզառամեալս, ընդարմացեալս և զպարապորդս վանաց, որք խումբս խումբս ժողովեալ գան ի քաղաք և ի դպրոցն անցուցանեն զօրն, իբրև հարուստ կապելօնք, ուտեն ըմպեն և զութսուր պարէնս իւրեանց բեռնաւորեալ տանին ի վանս: Իսկ կանոնք դպրոցին է բոլորովին նման կանոնաց վանական դպրոցին, այս ինքն ժամատցութիւնք, յաճախ խոստովանութիւնք, ծոմապահութիւնք, լռութիւնք, այլ և այլ ծաղրական կանոնք. միմոսական թեքթեքմունք, տմարդի քաղաքավարութիւնք, և այլն, և այլն, որք առաւել բթացուցանեն զզգայութիւն ողբալի պատանեկաց, քան թէ ուսուցանեն. և զինչ ուսուցանեն ոչինչ.... և դարձեալ ոչինչ.... Թափաէլ վարդապետն ուսուցանէ զհայկականն, և մի լատինացի քահանայ յամենայն քան փիորին վարձիւք ուսուցանէ զիտալականն. Միացեալ ուսմունքնոցա են խաղալիկք տղայականք, որք ի նմանիր վատնեն զդրամս, ուսուցանելով զտառս ծաղկագիրս, բխանաֆօրդէ, կիդառ, երգել զերգս թատերականս, և այլն, որոց բոլորքն են անպիտանք, անպտուղք և անպատշաճ ուսումն վասն Զօլսեցւոց. զի երաժիշտն և երգիչն չունի պատիւ 'անդ և ոչինչ շահիլ, զորմէ քաջ գիտէ Ազնուութիւն ձեր ականատես լինելով քաղաքին: (Անցեալ ամի ի Վեննա էի և լուայ ի Գեր. Ազարեանէ որ ասէր թէ հարիւր հազար փիորինի եկամտովք կարեմ ուսուցանել զքսան պատանեակս և երկու հարիւր հազարի եկամտովք զքառասուն և հինգ, ի չորս կարեւոր լեզուս, համդերձ միով ընտիր արհեստիւ, որ զկնի դարձին իւրեանց ի հայրենիս, նովաւ կարող լիցին ապրել բարեպէս. եթէ հարիւր հազար փիօրինի եկամտովք, նոյնպիսի թանկագին քաղաքին կարեն ուսուցանել 20 պատանեակք, ապա սոյնպիսի դիւրածախ քաղաքի, այնչափ մեծագումար դրամագլխոյ եկամտովք,

քանի՛ պատանեակք կարեն ուսանել, զայն թողում քեզէն ի միտ առնուլ ։ Եւ ո՞ւր թողումք Զմիւռնիոյ հայոց դպրոցն որ 800,000 ղուրուշ, որ է 80,000 ֆիորին, դրամագլխոյ եկամտովք, իբր չորեք հարիւր մանկունս և պատանեակս, ի վեց լեզու ձրի ուսուցանէ, այս ինքն Հայ, Լատին, Իտալական, Գաղղիացի, Յոյն և Տաճիկ ։ Ահա վասն ազգին ջանամք և տքնիմք առելով մեծարան միաբանութեան հաւատարմութեան պտուղն, որ մինչեւ ցայսօր խաբեալ են և խաբել կամին զպարզամիտս ազգիս և յազգայնոցս) ։

« Գամ այժմ գրել զանպատեհ ծախսն զոր արարին և առնեն եւս վասն ատացեալ դպրոցին ։ Կալան ի վարձու զհոյակապ պալատն Բէզարօի, և ի նմին ծախեցին զբազում դրամս վասն բաժանելոյ զմեծամեծ սենեակս նորա. գնեցին զհարիւրաւոր աթոռս, զգրքարանս ապակեայս, նստարանս, զարկղս, զրասեղանս, զսեղանատախտակս մեծամեծս և զպատկերս անթիւս, զարդարեցին զամենայն սենեակս և զմեծամեծ սրահս և զամենայն պատուհանս և զդրունս տանն. զորոց յոյժ մասնաւորն գնեցին արտաքուստ, իսկ զմնացեալսն ի վանաց իւրեանց վաճառեցին դպրոցին, այս ինքն զաւելորդ անկողինս, մոհիճս, ծածկարանս, զանազան անօթս, զկահ և կարասիս մառանաց և խոհանոցի և զամենայն պիտոյս սեղանոյ վասն հարիւրաւոր անձանց բերին ի վանաց ի դպրոցն. Նա և մաքրեցին զգրատուն վանաց, զամենայն անպիտան և զաւելորդ մատեանս, եթէ հայոց և եթէ օտարազգաց, իբրեւ հինգ հազար հատորք բերին ի դպրոցն և զորոց ամենեցուն զգինն լիուլի առացան և մուծին ի հաշիւ դպրոցին. և բաց յայսմանէ զզանազան թանկագին մատեանս, որ ըստ այժմեան վիճակի դպրոցին բոլորովին անպիտան էր, բայց վասն իւրեանց պիտանի, գնեցին զայնս և եդին ի դպրոցն ։ Թողում զերկրաչափական և զաստղաբաշխական գործիս, զոր վասն վանաց գնեալք էին վաճառեցին դպրոցին, որով լցին զամենայն անկիւնս հոյակապ պալատին. Նա և տպեցին ի ճակատ, և ամենայն թղթոց ողջունագրոց զպատկեր դպրոցին, շինեցին մետաղս արծաթեայս և ոսկեզօծս վասն դպրոցաց, եդին ի վերայ կոճակաց զգեստուց պատա-

նեկայն զատոս Ը. և Դ. և այլ սոյնպիսի գործս տղայականս, ծաղրելիս ամենայն հասունացեալ մտաց. և զայսոսիկ գործեցին և գործեն առ ի որսալ զձեզ, զի ոչ գիտեն զինչ հնարս հնարել վասն հաճոյացուցանելոյ ձեզ զինքեանս, և վասն արկանելոյ զԱզնուութիւն ձեր յուռկանս իւրեանց. և այս չէ բաւական, այլ ակնադէտ սպասեն զալստեան ձերոյ ի Վենետիկ: Նախ՝ զի գնեսջիք զպալատն Բէզարօի, և ապա սպասեն զանազան գլխոց, այս ինքն, մին սպասէ առաջարկել զի առջիք ի մամուլ ածել զբառարանն հելլենական, և միւսն զեկեղեցական պատմութիւնն Հռովմայ, և այլք զՀոմեր. և զԱնաքարսիս, և ոմանք զԱւագ շաբաթն և տօնացոյցն. մին պատրաստեալ է յառա՝ մատչիլ շողոքորթութեամբ զի նորոգեսջիք զեկեղեցին և ըզ զանկակատունն, և միւսն զի ծածկեսջիք ապակեօք զբոլոր ներքին սրահն վանաց. մին զի կառուսջիք երկրորդ զասփկոն տպարանին, այլք զի մեծացուսջիք զգրքատունն և կամ շինեսջիք երկրորդ գրքատունս վասն ձեռագիր մատենից. իսկ ամենեքեան ի միասին սպասեն զի զբոլոր ստացուածս ձեր հաստատուն կտակաւ թողջիք վանաց իւրեանց. վերջապէս որպէս հրէայք սպասեն Մեսիայի այնպէս սպասէ ձեզ համօրէն միաբանութիւնն, վասն որոյ ըստ այնմ շնորհ արարեալ բեռնաւորեալ ոսկւով եկեսջիք, որպէս յառաջն :

«Բայց թուի ինձ զի այն ևս չէ բաւական, զի յոյժ սուր տեսանեմ զախորժակս նոցա, և երկնչիմ զի ճոխութեամբք ձերով ոչ կարէք բաւականացուցանել զնոսա, զի մինչև ցայս ի արարեալ բազում երախտեաց և բարերարութեանց ձերոց զփոխարէնն, տեսանեմ և լսեմ զի անգոհունակութեամբք բամբասեն, ծաղր և ծանակ առնեն զձեզ և գրեն թէ այսոսիկ նիւթովք պարապին և զձէնն՝ խորհին, և ի վերայ ձեր խօսին յամենայն երեկոյ ժողովեալ ի սենեակ վանաց ճեմարանին: — Ներումն մաղթեմ երկարագրութեանս, գիտելով զի բոլորովին անտեղեակ էք զողբալի վիճակէ զպրոցին, վասն որոյ և չէր հնարաւոր քան զայս համառօտիւ բացայայտել ձեզ. թէպէտ չէ զանխուլ ի մէնջ, զի ընթեռնուք ի վանականաց զբազմահատոր և զանպատասխանելի թուղթս, զոր ըստ քմաց և հաճոյից

իւրեանց գրեն առ ձեզ, վասն այնորիկ իբրեւ հաստատուն հիմն մեծապատիւ Տանն Ոսփանէյեան և իբրեւ արժանաժառանգ փոխանորդ ի Քրիստոս հանգուցեալ Արժանապատիւ և Ազգասէր Հօր ձերում և Բարերարին ազգիս, պարտ անձինս վարկայ նախ ձերումդ Ազնուութեան ծանուցանել, զի վաղվաղակի զելս իրացն խորհեսջիք. ապա եթէ զբանս մեր մերժելով և նոյին թակարթեալ մեքենայիցն հաւատալով անփոյթ լինիջիք ի գործադրութենէ պարտականութեանց ձերոց, որում պարտականութիւն մեծ ունիք առաջի Աստուծոյ և Ազգիս, յայնժամ ստիպիմ ծանուցանել Լօրտ Չէնսէրին, ողբալի վիճակն ասացեալ դպրատան, զի իբրեւ հայր գթացի անաղարտելի իրաւանց որբ և աղքատ մանկտւոյ. վասն որոյ այժմէն սկսեալ զիս անմեղադիր առնել աղաչելով, կնքեմ զթուղթս մեծաւ յարգութեամբ իմով և ընդ ողջունիւ քերց իմոց, և մնամ ձերումդ Ազնուամեծար և Մեծապատիւ Տէրութեանդ:

« Ի Վենետիկ. 3 մայիսի. 1838.

« Պատրաստական ծառայ և բարեկամ,

Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ. »

Ահա հաստատութիւն վերոյիշեալ թղթոյ նորա որ առ Յովհաննէս Մուրատ ի Մատրաս, գրեալ երեք ամօք յառաջ անտի, յամի 1835, ի ժամանակի, յորում Հ. Սարգիս ուղւոյ լինէր, դառնալով ի Հնդկաց յԵւրոպ. և ի ժամանակի, յորում Միաբանութիւնն և մասնաւորաբար կարգ Ռափայէլ Թրենց և Յովհաննէս Սորկուճ համարին զՊօղոս Լազարովիչ մտերիմ և ճշմարիտ բարեկամ Միաբանութեան, անդադար երթեւեկելով ի տուն նորա և զամենայն թերութիւն միաբանութեան և զկիրս իւրեանց յայտնելովնմա:

Եւ ահա չէր Հ. Սարգիս կասկածոտ և չարագուշակ ոք որպէս դատէին ոմանք ի միաբանից, այլ փորձ և զգուշաւոր, ազդ առնելով միաբանութեան իւրոյ զգուշանալ ի դաւաճանէն

և գուշակելով զլինել Նորա երկրորդ Տէր Միքայէլ Սանոսեան. որպէս և կատարի գուշակութիւն նորա, և որպէս տեսցի ի սմին կարգաւ։ Ապա միամիտ լինի Գեր. Սոմալ համարելով զնա բարեկամ միաբանութեան իւրոյ, և անխոհեմ գտանին ոմանք անտի որք յայտնեն դաւաճանին զամենայն թերութիւն միաբանութեան և զկիրս իւրեանց։ Թէպէտ և բազում ինչ ստութեամբ և բարդութեամբ գրէ Պօղոս Ղազարովիչ առ Աղեքսանդր Ռաֆայէլ, սակայն են ինչ ինչ ճշմարիտ և ճիշդ, լուեալ և տեղեկացեալ Նորա զայն ի միամիտ և յանխոհեմ անձանց միաբանից զորս յանուանէ յիշատակեցի։

ԳԼՈՒԽ Գ.

Տնանկութիւն Պօղոս Ղազարովիչի և պահանջ նորա ի Մխիթարեան միաբանութենէն. — Փախուստ Պօղոս Ղազարովիչի ի Վենետ և բողոք պահանջման նորա առ Գեր. Սուքիաս Սոմալ. — Պատասխանի թղթոյ Պ. Ղ. ի Գեր. Սոմալէ. — Դարձ Պ. Ղ. ի Վենետիկ և վէճ նորա ընդ միաբանութեան. — Հաւաստիք պահանջման Պ. Ղ. և կուսակիցք նորա ի Միաբանից. — Թուղթ Պ. Ղ. առ Ճանիկ Ամիրայն ի Պոլիս. — Պատասխանիք ամբաստանութեանց զանգատագրոց Պ. Ղ. — Վճիռ Ատենի Վենետկոյ ընդդէմ Պ. Ղազարովիչի. — Զղջական թուղթ աղերսանաց Պ. Ղ. առ Գեր. Սուքիաս Սոմալեան.

Երկու ամօք յառաջ քան զվերոյիշեալ թուղթն սպառի արծաթն Պարոն Ղազարովիչի, վատնելով Նորա զայն շռայլութեամբ. և խորհի Նա հնարս գտանել, հանել ի ձեռաց այլոց արծաթ խորամանկութեամբ. վասն որոյ յօրինէ երկու հաշիւս առնելեաց ի Մխիթարեան միաբանութենէն. մին՝ որպէս թէ վաճառեալ Նորա ի Կալկաթա զտպագրեալ մատեանս ինչ միաբանութեան, և այն ժամանակաւ հատուցանելի, և ինքն հատուցանէ միաբանութեան զգին Նոցին յառաջագոյն, յուսալով գտանել զայն ապա ի գնողէ Նոցին. բայց սնանկացեալ գնողին, կորուսանէ ինքն զարծաթն զայն. և միւսն՝ առնելիք ինչ

ի Հ. Սարգսէն. որպէս թէ տուեալ նմա իցէ ի փոխ ինչ ինչ կարասի տան մինչդեռ Հ. Սարգիս ի բանտի կայր և առանձին բնակէր ի Մատրաս քաղաքի, զորոց զգին խնդրէ գտանել, հանդերձ ծախիւք որ ի դարման ձիոյ կառաց նորին, ի ժամանակի բանտարգելութեան, որ ընդ ամենայն լինի 5,000 ֆրանք. և զերկոսին հաշիւսն առաքէ առ Հ. Յակոբոս Ճէլալեան գործակալն միաբանութեան։ Առեալ նորա զայն գնայ առ Հ. Սարգիս հարցանել ի նմանէ թէ զի՞նչ այն հաշիւք իցեն, և թէ արդարև պա՞րտ է հատուցանել նմա։ Ասէ ցնա Հ. Սարգիս զառակն զայն, թէ « Յորժամ աղքատանայ հրեայն, քննէ նա զհին հաշուէմատեանն »։ Ապա առեալ զնա ընդ իւր՝ գնայ առ Պարոն Լազարովիչ և հարցանէ ցնա թէ զի՞նչ այն հաշիւք իցեն զոր առաքեալ էր նա առ նոսա։ Պատասխանէ նա այլայլեալ գլխոք զնոյն վերյիշեալ կարծեցեալ իրաւունս իւր։ Գիտելով արդէն Հ. Սարգսի զթշուառ վիճակ նորա, միանգամայն և փորձ գոլով անզգամութեան նորա, կամի զառաջս առնուլ չարեացն, վասն որոյ ասէ ցնա. « Որովհետև արարեալ է քո զայն գործ ծառայութեան, զվաճառումն մատենից միաբանութեան բարեկամաբար, և ոչ պայմանաւ վարձու աշխատութեան, կարծեմ ես, թէ յանիրաւի իցէ կորուսանել քեզ զայն արծաթ, թէ արդարև ըստ բանիցդ գնոց մատենիցն մնանկացեալ է »։

Զայս ասացեալ՝ հատուցանել տայ նմա Հ. Յակոբոսի ըզ կարծեցեալ կորուստ արծաթոյ նորա, որ լինի 3,000 ֆրանք։ Իսկ յաղագս միւս հաշուի նորա ասէ ցնա. « Ո՞չ յիշես արդեօք, զի յորժամ ես ի բանտի էի ասացեր ինձ չունել ի ժամուն ձի կառացդ, և զձին կառաց իմոց ի գործ ածեալ հատուցանէիր զծախսն դարմանոյ նորին։ Այլ վասն գնոց կահուցն զոր ի փոխ ետուր ինձ, ո՞չ ապաքէն յանձնեցի ես զայն ամենայն գործակալիդ ի Մատրաս վաճառել ընդ այլ կահուց տանդ, ըստ պատուիրանի քում, և անցուցանել զգին նոցին ի հաշիւ քո, որպէս արար նա և ծանոյց քեզ գրով ի Կալկաթա, զորոյ պատճէն ունիմ ի ձեռին։ » Ասէ ցնա Պ. Լազարովիչ, թէ ինքն ոչ յիշէ զայն, բայց հաւատայ բանից նորա, վասն

որոյ և պատուել առաջի Հարց Յակոբու և Սարգսի զայն հաշիւն. և այնպէս վճարի՛ վէճն։

Բայց հաշիւք պարտուց Նորին որք առ զանազան վաճառականս ի Վէննետիկ՝ ոչ վճարին այնու արծաթով, զոր անխրատութեամբ հանէ ի ձեռաց միաբանութեան. վասն որոյ յետ քանի մի աւուրց տագնապեալ Նորա ի պարտատեարցն խոյս տայ ի Վէննետկոյ գնալ ի Վէննա առ բարեկամն իւր Գեր. Արխատակէս Ազարեան, խորհուրդ հարցանել ի Նմանէ, թէ զի՞նչ այլ հնարիւք կարիցէ հանել այլ արծաթ ի ձեռաց միաբանութեան Վէննետկոյ։ Գտանէ Նա անտի խորհուրդ և օժանդակութիւն ընդ այն, թարգմանելով Նորա զկարծեցեալ հաւատարիմն զոր ունէր Նա ի ձեռին իւրում, առ ի պահանջել ի միաբանութենէ Վէննետկոյ զկարծեցեալ իրաւունս իւր։ Ապա յետ աւուրց ինչ խօսելոյ և խորհրդակցելոյ ընդ Գեր. Արխատակէս Ազարեանի գրէ անդուստ գիր ի Վէննետիկ առ Գեր. Սուքիաս Սոմալ, օրինակ զայս։

« Գերապայծառ Տէր։

« Մինչեւ ցարդ չունելով իմ կարօտութիւն արծաթոյ՝ չը պահանջեցի ի Ձէնջ զվարձս աշխատութեան իմոյ, գգործակալութեանս որ վասն բանի աւարտման հրխակի Մուրատեան դպրատանն. այժմ կարօտութիւն ունելով արծաթոյ, խնդրեմ զի շնորհ արարեալ հատուցջիք զայն. վասն որոյ առաքեցից ատի ի վերայ Ձեր այդր հրամանագիր հատուցման. բայց կամիմ գիտել, թէ ո՞րպէս հաճոյ իցէ Ձեզ հատուցանել զայն, մի՞ման մասն ի գիւրութիւն Ձեզ, թէ զբոլորն միանգամայն։ Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ Խ. Ծառայ

« Ի Վէննա, 20 Օգոստ. 1837.

« Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ. »

Առեալ Գեր. Սուքիաս Սոմալի զայս գիր խռովի յոյժ, և

առաքեալ կոչէ զՀ. Սարգիս խորհել զայնմանէ ։ Ուր գնացեալ գտանէ զնա խռովեալ մտօք, ցուցանէ նմա Գեր. Սոմալ զգիր Ղազարովիչի և հարցանէ զնա, թէ զինչ պարտ իցէ առնել ընդ այն պատասխանի ։ Ասէ ցնա Հ. Սարգիս մի ընաւ հոգալ, այլ լինքն առնել զայն ապաստան. առնէ անդէն և անդ համառօտ և հակիրճ բանիւք պատասխանի, օրինակ զայս ։

« Պարոն.

« Առեալ զգիր ձեր զարմացաք յոյժ ընդ օտար և անկարծելի պահանջումն ձեր. և յիրաւի՛ քանզի ոչ երբէք ծանեաք զքեզ գործակալ վասն բանի ուսուցման հրխտակի Մուրատեան դպրատան. վասն որոյ և ոչ ճանաչեմք զմեզ պարտական հատուցանել քեզ ընդ այն վարձս ինչ աշխատութեան. արդ իբրև Հայր խրատ տամ քեզ ի բաց կալ յայդպիսի խորհրդոյ, որպէս զի մի՛ յաւելցի քեզ առաւել եւս թշուառութիւն ։ »

« Մնամ միշտ Ագնուութեանդ Ազօթարար ծառայ

« Ի Վենետիկ, 27 Օգոստ. 1837.

« ՍՈՒՔԻԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

« Արքեպիսկոպոս և Աբբայ Մխիթարեանց. »

Ընկալեալ Պօղոս Ղազարովիչի զայսպիսի անակնկալ՝ պատասխանի՝ յուսահատի կորզել ինչ անտի խաղաղութեամբ, այլ դատաստանաւ արդեօք. վասն որոյ դառնայ ի Վենետիկ, հանդերձ կարծեցեալ զինուք իւրովք, այս ինքն, գրով ինչ գործակալութեան, որ առեալ լինի երբեմն Հ. Սարգսի և նմա միանգամայն, և որ չլինի երբէք պիտանի, ատարեալով արդէն Հ. Սարգսի զրան հրխտակի դպրատանն առանձին գրով գործակալութեան իւրոյ, զորմէ յիշատակէ և դատաւորն յատենի

անդ քննութեան խնդրոյն, և պատասխանեաւ թղթոյ իւրոյ տուելոյ ի Գեր. Սուքիաս Սոմալէ, որ ունի օրինակ զայս ։

« Զգրեալդ առեալ արար յԱպրիլի 10, ընկալայ և շնորհ յոյժ ունիմք քրտնաջան վաստակոցդ յաւարտումն մեծի այսր կարեւոր իրի, որով մթերեցեր քեզ գանձ յերկինս և յերկրի փառս անմահ, և օրհնութիւն ոչ ի մէնջ միայն, այլ և ի բազմահոյլ երամոց որբոց և անտած մանկանց, որ մինչև ի սպառ ի վաստակս քո վայելեսցեն ։ Ապա ոչ վայրապար առանց խորհրդոյ ի 2 Յունիսի 1827 կացուցար ընդ Վ. Սարգիս վարդապետի մերոյ գործակալ. այլ զի հաստատութեան քում և հայրենասիրութեանդ քաջ հասու էաք, զոր աստուածախնամ տեսչութիւնն նախանկատեալ, կոչեցեալ էր զքեզ ի կողմանս յայդոսիկ ։

« Ի Վենետիկ 30 Հոկտ. 1827 .

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ Արքեպիսկոպոս. »

Թէպէտ և քաղաքավարութեան և չափազանց քաղաքավարութեան է պատասխանին, հաւատացեալ բարեմտին չափազանց բանից թղթոյ Լազարովիչին որ ունի այսպէս. « Քանզի սկսեալ ի Յունվարէ տարւոյս մինչև ի 28 Մարտի զտիւն ամենայն խօսելով և զգիշերն ողջոյն գրելով վաստակեցաւ անձն իմ, մինչև զբովանդակ գումար դրամոյ դպրատան ընդ հաշուէգրերոյ յանձնեցի ի ձեռս Վ. Հ. Սարգիս վարդապետին ։

« Ի Մատրաս, 10 Ապրիլ. 1827.

« Գ. Գ. ԼԱԶԱՐՈՎԻՉ. »

Սակայն կարծէ նա թէ հաւատոք էին այնորիկ ի ձեռին իւրում, առ ի պահանջել զկարծեցեալ իրաւունս իւր, զոր և թարգմանէ յիտալ. լեզու Գեր. Ա. Ազարեան ։

Այս յետ աւուրց ինչ դառնալոյ Պ. Լազարովիչի ի Վենետիկ, վերստին ուղղէ զառաջին գիր իւր առ Գեր. Սուքիաս Սոմալ ։ Որոյ առեալ զայն, վերստին խռովի և հոգայ թէ զի՞նչ պարտ իցէ առնել ընդ այն պատասխանի ։ Խորհուրդ տան նմա ոմանք ի հարց, Աղէքսանդր Պէշիքթաշ. և Ռափայէլ Թրենց, թէ բարւոք լիցի անձամբ գնալ Հ. Սարգսի առ Պ. Լազարովիչ և խօսել ընդ նմա բերանով, և աւարտել ըզ բանն խրատախոհութեամբ ։ Հաւանեալ Գեր. Սոմալի բանից նոցա՝ առաքէ զՀ Յակոբոս Ճէլալեան հաղորդել Հ. Սարգսի զայն կամս իւր և յորդորել զնա յայն ։

Առնէ Հ. Սարգիս գրով պատասխանի առաջարկութեան Գեր. Սոմալի օրինակ զայս ։

« Արհիապատիւ Տէր.

« Ընթերցայ դարձեալ զժպիրհ գրութիւն Լազարովիչի, և ծանեայ ի ձեռն Վ. Հ. Յակոբոսի զկամս վեհիդ, երթալ իմ անձամբ առ անզգամն և խօսել ընդ նմա բերանով, և աւարտել զբանն խրատախոհութեամբ ։ Թէպէտ և պատրաստ եմ հրամանի վեհիդ, այլ քաջ ճանաչելով իմ զանզգամութիւն առն, և զվճարումն չարութեան նորա, հաւաստի եմ զի խցցէ նա զականջս իւր չլսել ձայնի թովչի, և չընկալցի զիս անգամ, ասելով, թէ գրեալ է ինքն առ Գեր. Տէրդ, և ի Ձէնջ կամի առնուլ գրով պատասխանի ։ Ուստի ինձ այսպէս թուի, կամ արհամարհեալ զնա լռել, և կամ զնոյն առնել պատասխանի, զոր արարիք երբեմն ։

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Հաւանեալ Գեր. Սոմալի բանից Հ. Սարգսի՝ առնէ այնպէս, զնոյն առաջին պատասխանին վերստին տայ թղթոյ Լազարովիչին ։

Յայնժամ յուսահատեալ անզգամին ի հնարիմացութենէ անտի, ի յանդուգն բերի գործ, երկու գանգատագիր յա-

տեանն Վենետկոյ մատուցանէ, մին ընդդէմ Գեր. Սոմալի, պահանջելով ի նմանէ վարձս աշխատութեան իւրոյ, ի գործակալութիւն աւարտման բանի գրքոյցին, 100,000 ֆրանք, և միւսն ընդդէմ Հ. Սարգսի, պահանջելով ի նմանէ զնոյն զոր վերագոյն յիշատակեցի, թէպէտ և հրաժարի նա անտի և զհաշիւն պատառէ առաջի նորա և Հ. Յակոբոսի Ճելալեան : Երկոքին պատճէնք գանգատագրոյ նորա առաքին ի վանս յատենադպրէ անտի, առ ի տալ նոցին պատասխանի ըստ ժամանակին :

Յանձնէ զնոսին Գեր. Սոմալ Հ. Սարգսի առ ի հոգալ զայնցանէ, զորոց և հոգայ նա ինքնին առանց ուրուք օգնականի յեղբարց անտի, բաց ի Հ. Յովհաննէս Սորկուճէ, որ գնայ ընդ նմա յատեան ի ցուցանել դատաւորին զընագիրն հաւատեաց, զորոց օրինակն բերէ ի պատասխանիս գանգատագրոց Ղազարովիչի :

Պէտս ունի Հ. Սարգիս անգղիերէն գրոյ միոյ թարգմանութեան յիտալերէն, վասն որոյ խնդրէ նա զայն աշխատութիւն ի Հ. Ռափայէլէ, ծանօթ գոլով նորա անգղիերէնի. այլ նա հրաժարի անտի, ասելով թէ չունի ժամանակ : Նոյնպէս հրաժարի նա գնալ ընդ Հ. Սարգսի մի և եթ անգամ յատեանն, վասն վերոյիշեալ գործոյն, զնոյն տալով պատճառ : Այլ բուն պատճառն՝ ըստ ասելոյ իւր, ամենափափուկ սիրտ նորա լինի, չկարելով ընդդէմ շահու մտերիմ բարեկամին իւրոյ Ղազարովիչի առնել ինչ, այն զի հաւանեալ ի միտս, թէ զլացումն Հ. Սարգսի անիրաւութիւն լինի, ունելով Ղազարովիչի իրաւունս ստանալ զայն գումար արծաթոյ. քանզի աւարտումն բանի գրքատան արդիւնք նորա լինին, և ոչ Հ. Սարգսի, և զայս կարծիս իւր ասէ բազմաց ի ծածուկ. զոր և թէպէտ լսէ Հ. Սարգիս, այլ լռէ համբերութեամբ, մինչև յայտնիցի ճշմարտութիւնն, որպէս և յայտնի այն ոչ եթէ յետ բազում ամաց, այլ զկնի քանի մի ամսոց. քանզի առնէ Հ. Սարգիս վաղվաղակի պատասխանի երկուց գանգատագրոց Ղազարովիչի միանգամայն, և ուրոյն ուրոյն ըստ պայմանեալ ժամանակին, յառաջ բերելով զհաւատարիմ

զորս ունէր ի ձեռին, և զորս պահեալ էր նախահայնոց տեսութեամբ, ճանաչելով և փորձ գոլով անզգամութեան Լազարովիչի, զգիր ընդունելութեան և վկայութեան ասեմ գործակալի նորին ի Հնդիկս վասն բանի կահուց նորա, զորմէ վերագոյն խօսեցաք ։

Նոյնպէս և վասն բանի պահանջման նորա ի վարձս աշխատութեան իւրոյ, իբրև կարծեցեալ գործակալի ի կողմանէ միաբանութեան յաւարտել զբան հրիտակի դպրատանն յառաջ բերէ Հայր Սարգիս նախ զվճիռ Ատենի Անգղիացւոց ի Մատրաս ընդդէմ Պ. Լազարովիչի, ի պահանջել նորա զայն և ի Մուրատեանց, իբրև միջնորդ եղեալ ի կողմանէ նոցա և իբրև ի նպաստ նոցին աւարտեալ զբան հրիտակի դպրատանն. ապա չունի նա, ասէ, իրաւունս պահանջելոյ ի միաբանութենէն իբրև վարձս աշխատութեան իւրոյ յայն, ոչ գոլով, ոչ գործակալ և ոչ միջնորդ ի կողմանէ միաբանութեան, և ոչ ի նպաստ ալքատաց ազգին աւարտելով զայն ։ Երկրորդ՝ գյատուկ ձեռագիր նորա որ առ Ճանիկ Ամիրայն ի Պօլիս. և զոր դէպք յանձնեն ի ձեռս Հ. Սարգսի անակնկալ և զարմանալի իմն եղանակաւ (*), և այն ձեռամբ նոյն իսկ Հ. Աղեքսանդրի, որ մինչև ցայն վայր իբրև զՀ. Ռափայէլ, իրաւունս տայր Պ. Լազարովիչի և մեղադիր լինէր Հ. Սարգսի, որպէս թէ զլանալով նորա զիրաւունս Լազարովիչի ։ Յաւելումք աստանօր զպատճէն թղթոյն այնորիկ ի հաստատութիւն բանիցս ճշմարտութեան ։

« Մեծապատիւ և Ազգասէր Ամիրա.

« Ի Վենետիկ. 16 փետր. 1838.

« Ի վաղուց ճանաչելով և քաջ գիտելով զԱզգասիրութիւն Ձերումդ Մեծապատուութեան , վասն որոյ համարձակիմ

(*) Այս թուղթ Պ. Լազարովիչի հայերէն և եթ հասցէիւ արձակեալ ի Վենետկոյ, պաշտօնեայք թղթատանն Պօլսոյ այլազգիք ամենեքին, չմարթացեալ ընթեռնուլ զհասցէն՝ ուստի և անգիտացեալ թէ ո՛ւմ ումեք գիրն ուղղեալ իցէ, դարձուցանեն զնա անդրէն ի Վենետիկ։ Դէպ լեալ Հ. Աղեքսանդրի գնալ ի թղթատուն

գրել առ ձեզ զթուղթ սակս օգտի և պայծառութեան Ազգին մերոյ. զի որպէս լսեմք, համայն Ազգս եթէ ի Կոստանդնուպօլիս և եթէ ի Զմիւռնիայ անխտիր ջանիւք ջանան և տքնին վասն յառաջադիմութեան և ուսման անաւէրունչ մանկտւոյ Ազգիս Հայոց, պայծառացուցանելով և կառուցանելով զդըպրոցս զհամալսարանս նորանորս յուսումն այլ և այլ լեզուաց և գիտութեանց, որով յուսամք յԱստուած զի ունելոցին այնոքիկ յաւուր միում կորագլուխ արասցեն զթշնամիս մեր, և այլն: — Գիտեմք, չէ զանխուլ ի Ձէնջ, զի Քեռին իմ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատեան յամի Տեառն 1816 յԱպրիլի 20. ի Հնդիկս ի քաղաքն Մատրաս հանգեալ է ի տէր և թողեալ է հաստատուն կտակ, գրեալ յամի Տեառն 1815 ի Մայիսի և կտակակատար կացուցեալ է զերկու որդիս իւր, զՊարոնայս Հեգվարդ և Յովհաննէս Մուրատեանս:

« Ասացեալ Աղա Սամուէլ զկնի մահուան իւրոյ թողեալ է իբրեւ քան միլիոն ֆիօրին ստացուածս, և զայս ճոխութիւնն ըստ հաճոյից իւրոց բաժանեալ է կտակաւ զանազան անձանց, այս ինքն բարեկամաց, ընտանեաց, աղքատաց և ծառայից իւրոց. Նա և ի վեցերորդ համարուածոյ կտակի իւրոյ թողեալ է իբրեւ երկու հարիւր հազար Մատրասայ ռուփի, որ առնէ եօթն հարիւր հազար արծաթ ֆիօրին, վասն դպրատան շինութեան և վասն ձրիապէս ուսման որբ և աղքատ մանկանց Ազգին հայոց, և գրէ ի կտակին այսու բանիւք. «Ես Սամուէլ Մկրտիչ Մուրատեան Մատրասիս Հայ վաճառական, ի մէջ իմ հաշուագրքոյս մի հաշիւ ունիմ որբոց աղքատաց և տնանկաց, ասացեալ հաշուի բոլոր գումարն թողում Հայոց ազգին որբ և աղքատ մանկանց դպրատան շինութեան և ուսման: Եւ կամիմ որոյ տարեկան եկամուտն քանի մանկանց տարեկան ծախուցն բաւական լինի, այնքան Հայոց ազգէն որբ և աղքատ

Վենետկոյ հարցանել զեր վասն իւր, ցուցանեն նմա զայս գիր պատմելով զարկածն՝ առ ի գիտել թէ չիցէ՞ նա ձեռագիր ուրուք ի կրօնակցաց իւրոց. Ընթերցեալ նորա զհասցէն՝ հաւատայ ցուցանողացն թէ այնպէս իցէ. և տարեալ զգիրն բանայ ընթեռնու, և այնպէս բաց մատուցանէ զնա յետոյ առ Հայր Սարգիս.

(Ծանօթութիւն Հեղինակին.)

մանկունք ասացեալ գպրատան ձրիապէս ուսումն և լեզուք ուսանիցին, և այլն ։ „ Այն մեծագումար դրամագլխոյ չեղեւ պահանջող յազգէս Հայոց մինչեւ ցամ Տեառն 1824 ։

„ Իսկ յամի Տեառն 1824 ի Մխիթարեան վանաց Վէննետ- կոյ եկն ի Մադրաս վարդապետ ոմն Բաղիշեցի Սարգիս Թէո- դորեան և զամս երեք աշխատեալ ի վերայ իրացն, յամի Տեառն 1827 ի կողմանէ ազգիս Հայոց բարեկամօրէն իրաւա- խոհ եղեւ ընդ որդւոց հանգուցելոյն և շատացաւ իբրեւ կիսոյն գումարին, որ յայնժամ փաչխիւն հասանէր գումարն մի և կէս միլիոն ֆլօրինս, և ստացաւ ի նոցանէ իբրեւ ութ հարիւր հազար ֆլօրին որ առաւել քան զվեշտասան հազար քսակս Կոստանդնուպօլսոյ և դարձաւ ի Վէննետիկ, զոր ես յայնժամ ի Հնդիկս էի գրեցի անտի Արքազան Պատրիարգին մերոյ ի Կոստանդնուպօլիս ։ Յետ դարձին իմոյ յաշխարհէն Անէացւոց յԵւրոպայ, ծանեայ զի այն ամենայն անգիտելի է ազգիս և Ազգապետաց մերոց. և մանաւանդ զի նոքա բաժանեալ են յազգէս և ոչ են Հայ, այլ Կաթոլիկ միլլեթի անուանին, որ խաբէութեամբ և անիրաւութեամբ գրաւեալ են զիրաւունս որբ և աղքատ հայոց մանկանց, վասն որոյ հարկ է Ձեզ ի վե- րայ կարեւոր իրացս վաղվաղակի խորհել և ջանալ հանել ի ձե- ռաց նոցա զարծաթն և զայն Եւրոպական օրինօք, որ յոյժ դիւրութեամբ աւարտի ։ Եւ սակս յառաջացուցանելոյ զգատն, զամենայն կարեւոր ծանօթութիւնս և զպատճէնս թղթոց կա- բեւորաց ես ունիմ ի ձեռին իմում, և պատրաստ եմ ի գործ դնել զծառայութիւն իմ վասն օգտի և պայծառութեան Ազգիս մերոյ, ի սոյն սակս մնամ պատասխանւոյ ։ Եւ յետ ընթեռ- նըլոյ իմոյ ի ձէնջ ունիմ ցուցանել Ձեզ զգիւրին ճանապարհն ի կատար հասուցանելոյ զգործս զայս ։

„ Կնքեմ զթուղթս մեծաւ յարգութեամբ իմով և մնամ

„ Ձերումդ Մեծապատուութեան

„ Պատրաստական ծառայ և բարեկամ

„ Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ. ”

« Առ Մեծապատիւ և Ազգասէր Ճանիկ Աղա փափազեան.

« Ի Կոստանդնուպօլիս ։ »

Զի՞նչ առաւել քան զայս յայտնի ճշմարտութիւն, զոր բերանով իւրով խոստովանի և ձեռամբ իւրով հաստատէ Պօղոս Լազարովիչ ։ Ուստի և իբրեւ յանդիման առնէ Հ. Սարգիս յատենի անդ զայս թուղթ, ապշի փաստաբան Լազարովիչի և հարցանէ ցնա թէ արդարեւ ձեռագիր ի՞ւր իցէ նամակն այն. և իբրեւ ոչ ժխտէ նա, սաէ ցնա փաստաբանն. Արեմն ամենայն ինչ վճարեալ է ։ Եւ ելանէ Լազարովիչ յատենէ անտի խոնարհեալ անկեալ երեսօք.

Խնդրէ Հ. Սարգիս վկայութիւն ի Յովհաննէս Մուրատէ, որ գտանէր յայնժամ ի Լոնտոն, թէ զի՞նչ գիտէր նա զորդեանց և զիրաւանց Պարոն Լազարովիչի ի բանն յայն աւարտման հրիտակի դպրատան. այլ նա հրաժարի տալ նմա պատասխանի, և այն ոչ ի նպաստ Լազարովիչի՝ ընդ որում քէն ունէր անհնարին, այլ ի նեղութիւն Հ. Սարգսի, և ի վնաս աղքատաց ազգին, զորմէ չեղեւ նմա փոյթ երբէք ։

Ահա զվերոյիշեալ հաւաստիսն տայ Հ. Սարգիս ի պատասխանի դանգատագրոց Պ. Լազարովիչի, զոր քննեալ Ատեանն Վենետկոյ, տայ զանաչառ և զխիստ վճիռ իւր ընդդէմ Պարոն Լազարովիչի, հանդերձ տուգանօք հատուցանել նմա զծախս դատաստանի երկոցունց կողմանց, զիւրոյ և զմիաբանութեան միանգամայն ։

Թէպէտ և խելամուտ լինի Պ. Լ. ի պատասխանեաց անտի՝ թէ չունի ինչ գտանել, այլ չկարծէ թէ բովանդակ ծախք դատաստանին ի վերայ իւր անկանի. վասն որոյ զարհուրի և տագնապի թէ զի՞նչ ունիցի առնել ի պահանջելն, չունելով արծաթ ի հատուցանել . ի ի բա՛նտ մնալ նմա մնանել ։ Ի վախճանի բռնադատի նա յարդարութենէն խոստովանել վերստին զճշմարտութիւն և յականջս Մխիթարեան Միաբանութեան, և խնդրել ի նոցանէ յանցանաց իւրոց թողու-

թիւն, հանդերձ հայցմամբ ողորմութեան, ի հաստատումն ծախուց դատին. վասն որոյ գրէ նա թուղթ առ Գեր. Սուքիաս Սոմալ, օրինակ զայս ։

« Գերապայծառ․․ Տէր.

« Ի Վենետիկ, 2 Յուլիս 1842.

« Այսունամակաւ ծանուցանեմ Արհիապատուութեան Ձերում, զի գումար ծախուց երկուց դատից մերոց զոր ըստ վճռոյն պահանջէ ի մէնջ օրէնսդէտ Պարոն Կրանտից, իբրեւ երկու հարիւր եօթանասուն և հինգ (275) արծաթ ֆիօրին, ըստ ներկայ հանգամանաց կացութեան իմոյ չկարեմ հատուցանել. վասն որոյ խնդրեմ զի հաճեսջիք բոլորովին ընծայել ինձ զգումարն. նա և մաղթեմ ներումն ամենայն անախորժ անցիցն անցելոց, զոր ի դրդմանէ ծխոյ կրից բազում վիշտս և նեղութիւնս ետու ոչ միայն Արհիապատուութեան Ձերում, այլ և Պատուելի Հատարակութեանդ Գերայարգոյ Ծերունի Հարց, և վասն որոյ առաւել ունայնացուցանեմ զամենայն պահանջողութիւնս յամենայն ուխտէդ այժմ ի յապայն և միշտ. և յանձնելով գիս ի մաքրափայլ յաղօթս Ձեր, մնամ Ձերումդ Արհիապատուութեան

« Պ. Պ. ԼԱԶԱՐՈՎԻՉ. »

Ո՛չ ապաքէն այսու յայտնի խոստովանութեամբ Պ. Լազարովիչի զճշմարտութիւնն, արդարանալով արդարանայ Հ. Սարգիս ի զլացումն իւր, չզիջանելով բնաւ անիրաւ պահանջման նորա, այլ և ի գրաւոր խրատ իւր, տուեալ նմա ձեռամբ Գեր. Սոմալի, թէ ի բաց կացցէ յայնպիսի խորհրդոց, զի մի յաւելցի նմա տուժել եւս թշուառութիւն ։

Զայսպիսի ելս իրաց տեսեալ Հ. Ռափայէլի Թրենց ափիբերան լինի և ամաչէ ընդ սխալ կարծիս իւր, որ ընդ կարծեցեալ իրաւունս բարեկամին իւրոյ Պ. Լազարովիչի, թէպէտ և ոչ թողու նա զքէն իւր որ ընդդէմ Մ. վարժարանին ։

ԳԼՈՒԽ Գ.

Հրաժեշտ Հ. Իգնատիոսի Փափազեան ի պաշտօնէ Տեսչութեան Մ. վարժարանին. — Կարգումն ի տեղի նորա Հ. Սարգսի Թէոդորեան. — Հանգամանք զանազան բարուց և գնացից այլ պաշտօնէից ի Մ. վարժարանին. — Ելն Հ. Պետրոսի ի պաշտօնէ անտի. — Մուտն ի պաշտօն նորին Հ. Միքայէլի Ջեմպերճեան. — Վերստին մուտն Հ. Պետրոսի ի պաշտօն իւր անդ. — Թուղթ քննութեան Յովհաննու Մուրատեան առ Գեր. Սուքիաս Սոմալ. — Պատասխանի թղթոյ նորա ի նմանէ. — Երկրորդ թուղթ նորին առ նա. — Երկրորդ պատասխանի նորին ի նմանէ ։

Յառաջ քան զվերյիշեալ խնդիրն որ ընդ Պ. Լազարովիչի, անմիաբանութիւն պաշտօնէից Մ. վարժարանին և անկարգութիւն աշակերտաց նորին ցայն կէտ հասանէ, մինչև հարկ լինի հրաժարել Հ. Իգնատիոսի ի տեսչութենէ անտի, և Հ. Սարգսի կարգել ի տեղի նորին հրամանաւ Գեր. Սոմալի և հաւանութեամբ առաջակայից նորին ։ Լուեալ զայն Լազարովիչի ասէ. Եթէ Հ. Ս. վարդապետ զվարժարանն զայն ի կարգի դիցէ, ինքն զնա ոչ Հ. Սարգիս կոչեսցէ, այլ սուրբ Սարգիս ։

Արդարև դժուարին և ծանր էր պաշտօնն այն, հայեցեալ ի հանգամանս բնաւորութեան և ի գնացս իւրաքանչիւր պաշտօնէից անդ ։ Հ. Սամուէլ Սամարեան գործակալ և տնտես վարժարանին, որ զդիւրութիւն անձին իւրոյ և եթ հոգայր, զաւուրս եօթնեկին խտրէր, և զջերին օդն ընտրէր յելանել իւր ի գործ, և ամենեցուն խրատունս տայր որոց տրտունջ և գանգատ ինչ ունէին զմիմեանց ։ Հ. Պետրոս Մինասեան, ուսուցիչ և դաստիարակ մանկանց, որ անդադար վիճէր ընդ աշակերտս իւր և ի յանդգնութիւն հասանէր զնոսա, և ի զգուշացուցանել զնա Տեսչին, ոչ անսայր նմա, անկակից և յամառ կամակորութեամբն ասելով, թէ այնպէս պարտ է ուսուցանել և դաստիարակել զմանկունս ։

Հ. Գրիգոր Ալէփեան, և Հ. Թովմաս Զամչեան, երկու օգնականք Հ. Պետրոսի հակառակ միմեանց լինելն, և պախարակեն զմիմեանս առ Տեաչին. վասն այնորիկ և հերձուած ի մանկունս անկանի, և անկարգութիւն ի մէջ նոցա զօրանայ, և այն այնչափ, մինչև հարկաւորի Տեառչն յետս առաքել զոմանս ի նոցանէ. և վասն այնորիկ վնաս աղքատաց ազգին և նախատինք վարժարանին, թերակատար ուսմամբ և անկիրթ վարուք դառնալով նոցա ի տեղիս իւրեանց, ընդ որ ցաւի յոյժ և հիւանդանայ եւս Հ. Սարգիս, կրելով բաբախումն սրտի ուրուք ինչ :

Տեսեալ զայն Գեր. Սոմալի և առաջնակայից նորա հանեն զՀ. Պետրոս ի պաշտօնէ անտի, և ի տեղի նորա կարգեն զՀ. Միքայէլ Ջէնպէրէկճեան, թէպէտ և ոչինչ մխիթարութիւն և ի նմանէ գտանէ Տեառչն, անբաւական գոլով և նորա ի պաշտօնն յայն, այլ և անփոյթ զյառաջադիմութենէ աշակերտաց վարժարանին, տալով ի ձեռս նոցա համառօտութիւն ինչ ուսմանց, թարգմանեալ յԻտալականէն ուրումն ի միաբանից. և ինքն մեկուսացեալ նստի ի սենեկի իւրում առանձին պարապելով յարուեստ ոտանաւորի :

Ահա այսպիսի ոք լինի նորոգ ուսուցիչն և դաստիարակն, և այնպիսի կանոնիւ ընթացեալ աշակերտացն զեղծանին, և ոմանք եւս ի նոցանէ յետս առաքին : Տեսեալ Հ. Սարգսի ըզ յոռեգոյն վիճակ վարժարանին՝ կարօտի դարձեալ Հ. Պետրոսի, չգտանելով դժբաղդութեամբ ի միաբանութեան զայլ ոք բաւական յայն գործ պաշտաման. և Հ. Պետրոս վերստին կարգի ուսուցիչ և դաստիարակ մանկանց, և վարէ զայն պաշտօն որպէս յառաջն, և մնայ յայն մինչև ցփակումն Մ. վարժարանին ի Պատաւիոն. ապա յայլ ուրեք գնայ նա ի նոյն գործ պաշտաման, զորմէ յիշատակեսցի յետոյ :

Յայսմ ժամանակի սկսանի Յովհաննէս Մ. դարձեալ խնդիր յարուցանել ընդդէմ Մխիթարեան Միաբանութեան վասն բանի դպրատան հօր իւրոյ. քանզի որպէս վերագոյն ծանուցաք, գրգռեալ նորա ի բանից Թղթոյ Պ. Լազարովիչի, և անցեալ ի Հնդկաց յԵւրոպա ի Լոնտոն յամին 1837, յաւ անդ

և ինչ ինչ նովին լազարովիչեան ոգւով և Թեկադրութեամբ ի բերանոյ երկուց Հարց Մխիթարեան Վիեննայի, որք գնան անդ պահանջել ի նմանէ զհրխտակն ողորմութեան Թողեալ նոցա յԱգա Միքայէլէ Տէր Յովհաննեան. և տուեալ եւս գըր֊գըռեալ՝ գանգատի առ Աղէքսանդր Ռաւֆայէլ զանիրաւութենէ Միաբանութեան, և խորհուրդ տայ նմա Աղէքսանդր Ռաւֆայէլ գրել ուղղակի առ Առաջնորդ Միաբանութեան և հարցանել զայնմանէ ։ Յայնժամ յորդորեալ նորա ի բանից Աղէքսանդրի գրէ Թուղթ անտի ի Վիենէտիկ առ Գեր. Սուքիաս Սոմալ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Լոնտոն, 30 Յունիս. 1838.

« Քանզի այժմ յԵւրոպա գտանիմ, ուր հաղորդակցութիւն ընդ ձերումդ միաբանութեան դիւրացաւ ինձ ի պատճառս մերձաւորութեան տեղեաց, խնդրեմ ի Տէրութենէդ զի հաճեսջիք տալ ինձ տեղեկութիւն ինչ զառաջիկայ խնդրոյ ։

« Արդ շնորհ արարեալ ասացէք, եթէ դրամագլուխն բարերարութեան հանգուցեալ հօրն իմոյ, զոր ընկալաւ գործակալն ձեր ի Մատրաս զետեղեա՞լ իցէ ի կալուածս գետնոյ, և եթէ իցէ զետեղեալ՝ յո՞յր անուն իցէ ։ Հաճեսջիք ասել և եւս, թէ զի՞նչ ինչ արարաւ յարդ ի գործադրութիւն եկամտից հրատակին ողորմութեան ։ Կէտ նպատակի իմոյ ի խնդիրս յայսմիկ է ընդունել ի ձերմէ տէրութենէդ տեղեկութիւնս որք կարեւոր են ինձ իբրեւ երեսփոխանի բարերարին ։

« Ընկալարուք աղաչեմ զնուէր մեծարանացս որով մնամ՝

« Գերապայծառ Տէր, Ձերդ

« Խ. Ծ. Յ. Ս. ՄՈՒՐԱՏ. »

Առեալ Գեր. Սոմալի զվերոյիշեալ Թուղթ Յովհաննու Մու֊

բանի՛ խռովի, բայց քաջալերեալ ի բանից և ի թելադրութենէ Հ. Սարգսի՛ առնէ ըստ պատշաճի պատասխանի թղթոյ նորին, օրինակ զայս.

« Մեծապատիւ Սիրելւոյ Պ. Յովհաննու Մուրատի Աստուածային օրհնութեամբ խնդալ ի Քրիստոս :

« Ընկալեալ զգիր ձեր գրեալն յ30 Յունիսի տարւոյս ուրախացաք յոյժ ընդ լուր փափաքելի առողջութեան ձերոյ, զոր և առաւելապէս ցանկայաք լսել ի բազմաց հետէ : Իսկ ընդ հարցուածս ձեր որ ի նմին, թէպէտ և զարմացաք յաղագս անագան և յայտնի գալոյ նորին, սակայն ոչինչ դանդաղիմք ահա իբրև սիրելւոյ բարեկամի խնդամտաբար կարճ ի կարճոյ առնել պատասխանի : Տակաւին բոլորեցան ամք երկու, յորմէ հետէ զբովանդակ գումարն հատուցեալ ի կալուածս գետնոյ. այլ թէ քանի՛ և որպիսի ջանիւք և աշխատութեամբ, զայն չմարթիմ ես ընդ գրով բովանդակել :

« Զայս և եթ առեմ ի մխիթարութիւն, թէ ողորմութեամբն Աստուծոյ և աղօթիւք աղքատաց ազգիս՝ ի գործողութիւնս յայսմիկ յամենայնի յաջողութիւն գտեալ է մեր, եթէ ի գիւտ բարեբեր երկրի, և եթէ ի գինս նոցին յօգուտ որբոց և աղքատաց և յառաւելութիւն փառաց հանգուցեալ յաւերժայիշատակ բարերարին և Ազնուազարմ ազգատոհմի նորա :

« Յայտնագոյն ևս է պատասխանին և երկրորդ հարցուածոյ ձերոյ. զի յո՞յր անուն մարթէաք մեք գնել զկալուածն՝ որք սեփական ինչք են տառապելոյ ազգիս, բայց եթէ յանուն Մուրատեան դպրոցին, յորում յանվախճանելի դարս դաստիարակեսցին որդիք և այնց տառապելոց որ գալոց են զմեր կնի, զոր և մեծախոհ կտակագիրն բարեյիշատակ հաճեցաւ յանձնել ի հայրենասէր խնամս տնտեսութեան Մխիթարեանս միաբանութեան : Իսկ յեկամուտ անտի ցայս վայր ժողովելոյ, նախ գումար ինչ ի գործ արկաւ ի գնել զարտօրէսն . քանզի մասն առ մասն գնեալ զընդարձակածաւալ անդաստանսն, մնացուած արծաթոյն չէր բաւական յետին բարեբեր հաստածոյն :

« Երկրորդ՝ ոչ սակաւ արժամ ծախեցաւ ի պատրաստութիւն կարեւոր կաղուց, մատենից և գործեաց դպրատանն, և ի չորից ամաց հետէ դաստիարակեցան ի նմին աւելի քան ըղ քսան և չորս մանկունս, յորոց ոմանք դարձան իսկ ի հայրենիսն, և ոմանք դեռ ես ի դպրոցին կան. ի մէսոյ ածցին և այլք ի լինել պատշաճագոյն բնակարանի ։ Պատճառք այսչափ սակաւութիւ մանկունս ունելոյ մեր ի սկզբանս, այս են, զի կամիք յեկամուտն հաւաքել գումար բաւական ի կանգնել ըղ դպրոցն մեծականոյց, որպէս զի մեծագումար բարերարութեանն ամբողջ մնացեալ, յաւէժ և օժանդակեայքն բազմագումար եղիցին ։ Ի կնիք բանիս ցանկալի էր մեզ ո՛ Ազնուական Պարոն, զի հուպ առ մեզ կայեալ ձեր աստ՝ տեսցէրդս սուրբ դութեան անձամբ խելամուտ և ականատես լինէիք, ում և մեծապէս փափաքելով և ակնունելով բոլոր միաբանիցս ի քաջալեր՝ որ մեծաւ սիրով ողջունեն զԱզնուութիւնդ, և ես մաղթեմ զերկնից առատ օրհնութիւնն ի վերայ ձեր, և ի վերայ բովանդակ Ազնիւ Տանդ, և մնամ միշտ

« Մեծապատիւ Պարոնիդ Խ Ծ. և Աղօթարար

« Ի Վենետիկ, 29 Յուլիսի 1838.

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

« Արքեպիսկոպոս և Աբբայ Մխ. Միաբան. »

Առեալ Յովհաննու Մ. զվերոյիշեալ պատասխանին թղթոյ իւրոյ՝ չբաւականանայ ընդ այն, վասն որոյ և վերստին գրէ, հանդերձ սնոտի պատճառանօք և նոյն պահանջմամբ, թէպէտ և անազան, յետ տասն ամաց, օրինակ զայս ։

« Գերապայծառ Տէր.

« Ի Լոնտոն, 14 Մայիս 1839.

« Մինչեւ ցանցեալ եօթնեակս յուսայի ես տակաւին թէ կատարեցից զառաջարկութիւն իմ զայոյ յՒտալիա, որ և

լնոյր զտեղի զրաւոր բանագնացութեանս, այլ պատճառք մեծագոյնք յանկարծ ի վերայ հասին պատրաստութեանս, և առ ժամս անհնարին գործեցին զկատարումն խորհրդոցս : Ամէն իրի հաստատեցի ի ձեռն առնուլ զմիտ հնարսն որ մնայր ինձ ի խօսակից լինել ընդ ձեզ, այս իսկ է թղթակցութիւնն : Թղթովն իմ որ յ30 Յունիսի անցելոյ տարւոյն, ծանուցի Ձեզ, Գերապայծառ, երիս խնդիրս, զիւրիմացս յոյժ, զորս և կարգադրեալ էր իմ ըստ կարի մեկին և հակիրճ բանիւք :

« Դրամք ողորմութեան հանգուցելոյ հօրն իմոյ ընկալեալ ի գործակալէն ձերմէ ի Մատրաս, զետեղեցան, յո՞յր անուն :

« Զի՞նչ ինչ գործեցաւ ցայժմ ի գործածութենէ ողորմութեանն :

« Առաջնոյ և վերջնում խնդրոյս արդարեւ ետուք պատասխանի, այլ ոչ պատասխանեցիք, Գերապայծառ, երկրորդի խնդրոյս. — քանզի ներեսջիք ինձ ասել ամենայն մեծարանօք հանդերձ, — պատասխանին զոր ետուք ինձ՝ ոչ յարմարի նմին :

« Ասէք ցիս՝ եթէ գետինքն գնեցան « յանուն Մուրատեան Դպրոցին, » և զօլլին ոչինչ նշանակին անձինքն՝ զորոց է խնդիրն իմ ի գործնական միտս իւր :

« Եւ զի մեկնագոյնս ասացից, — կալուածքն գնեցա՞ն արդեօք յանուն կտակակատարացն, միանգամայն և յանուն Միաբանութեանց : — Ահա իսկութիւն խնդրոյս իմոյ. զի եթէ գնեալ իցեն յանուն Միաբանութեանց միայնոյ, արդեամբք ի ձեռս դորա լինի իշխանութիւն վաճառելոյ զնոսին երբ և կամիցի :

« Ապաքէն ի խափանել զայսպիսի արդեամբք իշխանութիւն՝ յառաջագոյն սահմանեաց դաշնագրութիւնն ընդ կտակակատարս և ընդ գործակալ ձեր, զի « Ամենայն կալուածք Դպրոցին գնեսցին յանուն ժառանգաց և կտակակատարաց հանգուցելոյ Սամուէլի Մուրատեան, և յանուն Մխիթարեան Միաբանութեան Վենետկոյ, որպէս զի մի՛ ոք յապագայն կարասցէ սեպհականել կամ օտարացուցանել զկալուածսն կամ զեկամուտս նոցա յորում ժամանակի և յինչ պատճառս և իցէ, ո՛չ ի կտակակատարաց ոք, կամ ի ժառանգաց նոցին, և ոչ Մխի-

թարեան Միաբանութիւնն և յաջորդք նորին ։ ” Եւ ամին դաշնադրութեան եռոյք, Գերապայծառ, Դուք և Միաբանութիւնդ զհաւանութիւն ձեր լի կատարեալ ի ձեռն թղթոյն ձերոյ որ յ30 Հոկտեմբերի 1827 ։

“ Ոչ մի ինչ վէճ դատաստանի ծագեցաւ ընդ կտակակատարսն և ընդ գործակալ ձեր ի Մատրաս, որ այլայլեցէ զկարգաւորութիւնս կտակի հօրն իմոյ հանգուցելոյ, և ազատեցէ զձեզ ի պարտեաց կատարելոյ անթերի զզգուշութիւնն որոց նախատես լինի դաշնադրութիւնն մեր. և այս զգուշութիւնք յայլմէ կողմանէ ըստ ինքեան անկախ են յամենայն դաշնադրութենէ, և յառաջ գան բնաւորապէս յամբծութենէ այնր հանրական օրինաց՝ որ ջանայ յապահովել զբարերար դիտաւորութիւնս վախճանելոց ։

“ Աստանօր ոչինչ տարադէպ վէճս կամիմ յուզել յաղագս այժմու խնդրոյս առաջի ձերոյ Տէրութեանդ. փոխանակ ամենայն պատճառաբանութեան, ահա ունիմ ես ի միում ձեռին զկտակ հօրն իմոյ, որ կամի զի բարերարութիւն իւր մշտնջենաւոր իցէ. և ի միւսում զդաշնադրութիւնն մեր, և՛ որպէս դաշնադրութիւն, և՛ որպէս վկայութիւն զոր ինքն իսկ Միաբանութիւն ձեր տայ զհարկաւորութենէ զգուշութեանցս առ ի կատարել ճշգիւ զդիտաւորութիւն կտակագրին ։ Եւ ի սոյն յաւելում զհաստատութիւն թղթոյն ձերոյ որ յ30 Հոկտ. 1827. ի սմա կայ այնպիսի իմն խոստովանութիւն բարւոյն և արդարացւոյն, զի չէ ինչ հարկ բողոք ունել զայսմանէ ։ Արդ ես, որպէս միայն մնացեալ կատարիչ կտակի հանգուցելոյ հօրն իմոյ, պահանջեմ, զի զետեղումն դրամոց ողորմութեան նորա լիցի ըստ մտաց իւրոց, որպէս դաշնադրեալ իսկ է մեր ։ Եւ միանգամայն, զի դուք շնորհս արարեալ տայջիք ինձ եթէ այս դրամք ողջոյն որչափ ինչ իցեն յաւուր յայսմիկ ի ձեռս ձեր ։ . . .

“ Հաւատասջիք եւս, զի ոչ միայն ոչ տածեմ ի սրտի իմում խորհուրդ ինչ հակառակ մտերմութեանս առ ձեզ, այլ և ցանկամ ի խորոց սրտէ տեսանել ի ձեզ զբարեկամ, և նոյնպէս համարիլ և առ ի ձէնջ, . . .

“ *Ամենախոնարհ ծառայ* ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄՈՒՐԱՏ. ”

Արդարև ըստ առաջին դաշինն որ ի մէջ Մուրատեանց և ի մէջ գործակալի Միաբանութեան, պարտ էր գնել զկալուածս դպրոցին յանուն Մուրատեանց և յանուն Միաբանութեան. բայց ապա, յորժամ վէճ յարուցին Մուրատեանք ընդդէմ գործակալի Միաբանութեան, ոչ միայն եղծին նոքա ինքնին զդաշինս զայն, այլ և կորուսին զիրաւունս իւրեանց խառնելոյ ի գործ դպրոցին, որպէս տեսանի ի վճիռն Անգղիացւոց ատենին ի Մատրաս, և ի վերջին դաշնագրի որ ի մէջ Մուրատեանց և ի մէջ գործակալի միաբանութեան, յորում չիք բնաւ յիշատակութիւն զայնմանէ. վասն որոյ և Միաբանութիւնն զառաջինն յանուն իւր միայն գնէ զկալուածսն դպրոցին. բայց ապա, յորժամ դառնայ Հ. Սարգիս ի Հնդկաց, փոխել տայ զայն տիտղոսն նախահայեաց տեսութեամբ, այսպէս.

“ Կալուածք դպրոցի Սամուէլ Մկրտիչ Մուրատի ի դաստիարակութիւն որբ և աղքատ մանկանց ազգին Հայոց, մատակարարեալ բացարձակ ի Յարգոյ Միաբանութենէ Հայ Կրօնաւորաց Մխիթարեան որ ի Վենետիկ ի Վանս Սրբոյն Ղազարու : ” Թէպէտ և ոմանք ի Միաբանից անտի չկամին տանել զայն փոփոխութիւն, պատճառելով զընդունայն ծախսն որ յայն, իբրև 10,000 ֆրանք, այլ Հ. Ս. Թէոդորեան կամի զայն, հայելով ի հանգամանս Միաբանութեան և յապագայսն նորին . . . որպէս և արդարանայ նա ի տեսութիւն իւր, որ և տեսցի ապա ի տեղւոջ իւրում յընթացս պատմութեանս : . . .

Առեալ Գեր. Սոմալի զվերոյիշեալ երկրորդ թուղթ Յովհաննու Մուրատի, դարձեալ խռովի և տարակուսի, թէ զինչ պարտ էր տանել նմին պատասխանի : Դարձեալ քաջալերէ զնա Հ. Սարգիս, և պատրաստէ նա պատասխանի մի, զոր ցուցեալ Գեր. Սոմալի և այլոց ոմանց անտի, թէպէտ և հաճին ընդ այն, այլ ասեն, թէ բարւոք լիցի յօրինել տալ զայն նոյին իմաստիւք փաստաբանի ուրուք, հանդերձ օրինական փաստիւք. վասն որոյ յօրինել տան զայն Գազպարօ փաստաբանին յիտալլեզու և թարգմանեն անտի ի Հայ, որ ունի ըստ հետագայ օրինակին :

« Մեծապատիւ Պ. Յովհաննու Մուրատի Աստուածային օրհնութեամբ խնդալ ի Քրիստոս ։

« Թուէր ինձ այնպէս, Պարոն, եթէ պատասխանին զոր գրեցի թղթոյ ձերում որ յ30 Յունիսի 1838, լիով հանդուցեալ իցէ զխիթ ձեր յաղագս հարցմանցն զորս արարեալ էիք, որովհետեւ յայտ արարեալ էի ի նմա յոր պէտս վարեալ իցէ Մխիթարեան միաբանութիւնս զգումարն զոր ընկալեալ է ի կատարել զկամս լուսահոգի ծնողին ձերոյ, ստանալով այնու բազում կալուածս գետնոյ յայսոսիկ գաւառս Վենետկոյ, և զշահ նորին ծախելով ի կանգնումն և յանընդհատ տնտեսութիւն Դպրոցին կարգելոյ ի դաստիարակութիւն աղքատ մանկանց Հայոց, ուղղակի ըստ բարեպաշտ և բարեսէր խորհրդոյ բարերար կտակագրին ։ Գրեցի զարձեալ առ Ձեզ, եթէ այն կալուածք գնեցան յանուն վերոյիշեալ Դպրոցին, և Հոգաբարձու անօտարանալի այնց ստացուածոց Միաբանութիւնս Մխիթարեան, և այսու անուամբ ամենայն յետկարք նշանակեալ և դրոշմեալ կան յամենայն արձանագիրս ատենից իւրաքանչիւր գաւառաց՝ յորում իցեն կալուածքն. և այսու բացարձակաբար ի բաց տարագրի կասկած երկիւղին այնորիկ, զոր դուք թուիք յայտ առնել, որ արդարեւ ոչ սակաւ տարապարտ նախատինս ածէ նմին Միաբանութեան, այսինքն, թէ գուցէ ժամանակաւ ըստ ինքնահաճոյ կամաց այլազգ ինչ տնօրինեսցին դրամքն, կամ վարեսցին յայլ ինչ պէտս, և ոչ յոր կարգեալ են կտակաւ բարեյիշատակ և բարեացապարտ Հօրն Ձերոյ ։

« Եւ թէպէտ հաւաստի է, եթէ ի դաշնագրին որ յիշատակի ի թղթի ձերում որ ի 14 Մայիսի տարւոյս, հաստատեալ էր, զի ստացումն կալուածոցն այնոցիկ լիցի յանուն ժառանգաց և կտակակատարաց հանգուցելոյ Պ. Սամուէլի Մուրատեան, և Մխիթարեան Միաբանութեան. սակայն դուք անշուշտ ոչ ունիք անգիտանալ որ ինչ անցք անցին յետ վերոյիշեալ դաշնագրին, այն են վէճքն որք յուզեցան ի նոյն ժառանգաց և կտակակատարաց, և վճիռ Գերակայ Ատենին Մատրասայ

ի Նպաստ Միաբանութեանս. և մանաւանդ վերջին դաշնագիրն որ հաստատեցաւ յ31 Մարտի յամին 1832, որով եթէ ի միոյ կողմանէ օրինաւոր գործակալ Միաբանութեանն ի Նպաստ Մուրատեան ժառանգորդաց հրաժարեցաւ յիրաւանց պահանջելոյ զշահս գլխոյ դրամոցն կարգելոց ի գովելի այն փոխման, զմնացեալս որ ի պատճառս դժկամակութեանցն և վիճից այնքան ժամանակս մնաց ի ձեռս նոցին ժառանգաց, այլ և ի միւս կողմանէն Դուք ինքնին ըստ որում ժառանգ և կտակատար, յանուն եղբօր ձերոյ ևս Պ. Եդուարդայ հանդիսապէս յայտ արարիք Գործակալին Հ. Սարգսի վարդապետի Թէոդորեան, և բովանդակ Մխիթարեան միաբանութեան եթէ « Հրաժարիք յամենայն վիճմանց, իբրաց թողուք զամենայն խնդիրս և խռովութիւնս յինչ և է ժամանակի և որո՛վ և իցէ պատճառաւ և եղանակաւ, եթէ ի Մատրաս, և եթէ յայլ ամենայն ուրեք և տեղիս վասն հրիտակի ողորմութեանն հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատեանի, որ ի վեցերորդ հատուածս կտակի նորա, և վասն ամենայն պատկանելեաց նորին ընդհանրապէս : —

« Բայց իսկ տեսանէք, Պարոն, եթէ այսու դաշնագրովս, որ հինգ ամօք յետոյ է քան զնախընթաց դաշնագիրն 1827 ամին, առաջինն այն դաշնագիրն խափանեցաւ, և ժառանգքն և կտակակատարք պարտ անձին եղին զգուշանալ յայնմհետէ՝ չըխառնիլ յայն ամենայն որ հայիցի ընդհանրապէս ի կատարումն բարեյիշատակ կտակին. Թո՛ղ զի՝ զայդ կատարումն Բարերար կտակագիրն յանձնեալ է առաքէն Մխիթարեան միանձանց Վենետկոյ վեցերորդ հատուածիւ կտակի իւրոյ, որով նոցա յանձն առնէ ստանալ յորում կողման Եւրոպայ պատշաճագոյն թուիցի ինքեանց կալուած գնելոյ, որոյ հասիւքն հրահանգեսցին ձրի ի գիտութիւնս և ի լեզուս այնչափ աղքատ մանկունք Հայոց, որչափ մարթ իցէ զարմանիլ նովին հասիւք :

« Ահա զայս օրինակ յուշ արարեալ Ձեզ գիրս յառաջագոյն պատահեալս, զորս առ ընդմիջելոյ ժամանակի և առ զբաղմանց ի բազմապատիկ յայլ գործս թուիք ի մոռացօնս արկեալ. յուսամ թէ այսուհետեւ ոչ ևս մնասցէ ինչ պատճառ

ի կողմանէ Ձերմէ աշխատ լինելոյ ի յուղել այլ եւս հետադօտութիւնս. և կարեմ ամենայն իրօք փութով տանել զՁեզ, եթէ բարեպաշտ կամք առատաձեռն և բարերար ծնողին ձերոյ որպէս այժմ, նոյն և յապագայս կատարեսցի անընդհատ և երկիւղած մտօք. և այսու պատեհաւ դաւանիմ զանձնս

« Մեծապատիւ Պարոնիդ խ Ծ. և Աղօթարար

« ի Վենետիկ. 24 Յուլիս. 1839.

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

« Արքեպիսկոպոս և Աբբայ Մխի. »

Ընկալեալ Յովհաննու Մ. զայս վերջին և զարժան պատասխանին ի Գեր. Սոմալէ, յուսահատի այնու եղանակաւ հասանել նպատակի իւրում. ապա խորհուրդ հարցանէ յԱղեքսանդր Ռափայէլէ, թէ զինչ ունի առնել այնուհետեւ առ ի բռնադատել զՄխիթարանութիւնն ի կատարումն խնդրոյ իւրոյ մերժելոյ ի նմանէ :

Պատեհ գտեալ Աղեքսանդր Ռափայէլի խառնիլ յայն գործ, (որում ցանկայր ի սկզբանէ անտի, և պարծէր ասելով թէ որովհետեւ ի սկզբան անդ ոչ յանձնեաց նմա Մխիթարանութիւնն զայն գործ, վասն այնորիկ ոչ դադարի ի մէջ նոցա վէճ և խռովութիւն,) ասէ ցՅովհաննէս Մ. թէ ունի ինքն կամս գնալոյ յԻտալիա յառաջիկայ ամին. խօսեսցի անդ ընդ միաբանութեան զայնմանէ, և տացէ նմա տեղեկութիւն զհանգամանաց վարժարանին և զկամաց Մխիթարանութեան ընդ այն : Հաւանեալ Յովհաննու Մ. խորհրդոյ Աղեքսանդրի, յուսայ հասանիլ ցանկութեան իւրում ձեռամբ նորա. վասն որոյ լռէ ժամանակս ինչ ի ձեռնարկութենէ անտի, այլ ոչ ի խորհրդոյ իւրոյ :

ԳԼՈՒԽ Ե.

Երբ Աղեքսանդր Ռափայէլի ի Վենետիկ. — Միջնորդութիւն նորա ի կողմանէ Յովհաննու Մ. վասն բանի խնդրոյ Մ. վարժարանին. — Անյաջողութիւն միջնորդութեան նորին. — Պատճառք Աղ՚քսանդր Ռափայէլի ի միաբանութենէ վասն բանի Ռափայէլեան վարժարանին. — Հակառակութիւն Ա. Ռափայէլի ընդ Մխիթարեան միաբանութեան. — Գանգատ նորա առ Քանցլէրին ի Լոնտոն ընդդէմ Միաբանութեան. — Պատասխանին Միաբանութեան առ գանգատն այն ի Լոնտոն. — Երթն Ա. Ռափայէլի ի Վիեննա. — Բողոք նորա առ Մետերնիխ ի դիմաց Յովհաննու Մ. — Հրամանագիր Մետերնիխի առ Միաբանութիւնն տալ հաշիւ Մ. վարժարանին. — Պատասխանի Միաբանութեան առ հրամանագիրն Մետերնիխի. — Վճիռ Լօրտ Քանցլէրի ընդդէմ Ա. Ռափայէլի. — Դարձ նորա ի Վենետիկ և շանք նորին հաշտիլ ընդ Միաբանութեան. — Վերադարձ նորա ի Լոնտոն առ վրիպել ցանկութեան իւրոյ. — Թուղթ Հ. Կարապետի Եսայեան Ազգայեանի Պօլսոյ առ Հ. Ս. Թէոդորեան ի Պատաւիոն :

Ի սկիզբն 1840 ամի Աղեքսանդր Ռափայէլ գայ յԱնգղիոյ ի Վենետիկ : Երթեւեկելով նորա յաճախ ի վանս Սրբոյն Ղազարու, յաւուր միում ժողովել տայ նա Գեր. Սոմալի զխորհրդականսն, և առաջարկէ նոցա զխնդիրն Յովհաննու Մ, զոր գրով տուեալ էր նորա Միաբանութեան : Նոքա զնոյն պատասխանի տուեն նմա, զոր միանգամ արարեալ էին թղթոյ Յովհաննու Մ. թէպէտ և լռութեամբ իւրով ինչ ցուցանէ նա թէ տեղի տայ պատճառաց նոցա, բայց գրեալ առ Յովհաննէս Մ. ի Լոնտոն խրատս տայ պահանջմանց նորա, և հնարս ցուցանէ նմա, որով միայն կարէր նա հասանել նպատակի իւրում, և խոստանայ օգնել նմա յայն. այս է, բողոքել Յովհաննու Մ. առ Տէրութիւնն Աւստրիոյ, և ինքն գնացեալ ի Վիեննա խօսեսցի զայնմանէ ընդ Մէթէրնիխի ի կողմանէ նորա :

Յետ այսպէս վճարելոյ Աղեքսանդր Ռափայէլի զկարծեցեալ խաղաղարար միջնորդութիւն իւր որ ի խնդիր Մ. վարժարանին, ապա սկսանի նա զխնդիր Ռ. վարժարանին, շարժեալ յամբաստանական բանից զրութեան և խօսակցութեան Պօղոս Լազարովիչի, առ որ յաճախէ և լսէ ի նմանէ բազում ինչ հակառակ մտաց և կարծեաց իւրոց. և զրգռեալ ի բանից քննութեան և դատաստանի Հ. Յարութիւնի Աւգէրեան, յընտանի հակառակորդէն, (որ զամենայն գործս միաբանութեան իւրոյ խծբծէր և չհաւանէր բնաւ,) և ստիպեալ ի թախանձանաց նորա, կարգել զինքն Տեսուչ վարժարանին: Վասն այսորիկ խնդրէ Աղեքսանդր Ռափայէլ ի միաբանութենէն նախ՝ զհաշիւ ծախուց վարժարանին. և երկրորդ՝ ձեռնամուխ լինել ի տնտեսութիւն նորին, կարգելով նորոգ կարգ և կանոնս: Յընդդիմանալ նմա Միաբանութեան, ջանայ նա զամենայն հնարս ի գործ դնել ի կատարումն կամաց իւրոց, մինչև կոչել տալ ի Լոնտոնէ զփաստաբան իւր, և առաքէ զնա ի Վանըս, ի համոզել զՄիաբանութիւնն զիջանել կամաց իւրոց:

Եկեալ փաստաբանի նորա ի Վենետիկ և գնացեալ ի Վանս խօսի ընդ Գեր. Սոմալի Թարգման ունելով զՀ. Ռափայէլ, և համոզէ զնա տեղի տալ կամաց Աղեքսանդր Ռափայէլի. վասն որոյ հրաւիրէ նա երկուս անձինս ի Միաբանից անտի գնալ ի վաղիւ անդր առ Աղեքսադր Ռափայէլ խօսել և իրաւախոհ լինել ընդ նմա ի կողմանէ Միաբանութեան: Առ այս որոշէ Գեր. Սոմալ զՀ. Ռափայէլ Թրենց և զՀ. Յովհաննէս Սորկունեան. որոց գնացեալ առ Աղեքսանդր Ռափայէլ խօսին ընդ նմա և զիջանին կամաց նորա յամենայնի, յանդիման փաստաբանին, որ և վկայ լինի իրաւախոհութեան նոցա և ուրախանայ ընդ այն: Դառնան նոքա ի Վանս ոչ գոհութեամբ ի մտս իւրեանց, զղջացեալ ընդ բոլորովին զիջումն իւրեանց կամաց Աղեքսանդրի, և առաւել ևս՝ ի լսել զոհաճութիւն ընդ այն բազմաց ի Միաբանից. վասն որոյ տագնապեալ նոցա, մանաւանդ Հ. Ռափայէլի, ուրում միայն անկանէր ի պաշտօնէ իւրմէ, ի տեսչութենէ Ռ. վարժարանին, գրէ նա տոմսակ մի առ Հ. Սարգիս ի Պատուական, խնդրելով իջանել նմա վաղվա-

զակի ի Վէնէտիկ, և խորհել և դարման տանել սխալանաց իւրոց ի բանն յայն ։ Գրէ առ Նա և Հ. Սամուէլ ի կողմանէ Գեր. Սոմալի օրինակ զայս.

« Արդ յանձնէ Գերապայծառ վեհս զի ընդ առնուլ զայս գիր՝ անմիջապէս եկեսջիր այսր ոչ և իցէ եղանակաւ, զի ըստ կարգի խորհուրդ առցի վասն ամենայն պահանջանաց Պարոն Աղէքսանդր Ռաֆաէլի ։

« 29 Յուլիս. 1840 ։ »

Իջեալ Հ. Սարգսի ի Վէնէտիկ, և իմացեալ զխնդիրն՝ ասէ ցնոսա, թէ չոր արարեալ էր Նոցա՝ աւելի քան զկար իւրեանց և քան զարժանն Նմա խոստանալով. վասն որոյ՝ առ ի դարման վրիպանացն պարտ իցէ յաւելուլ ի ճակատ հաշուին զոր մատուցանելոց էին Նմա զբանս զայսոսիկ. « Միաբանութիւնս տայ Ձեզ զհաշիւս այս իբրեւ բարեկամի և միանգամ և եթ, և ոչ իրաւամբք պահանջողի և միշտ ։ » Յայտ է, ասէ, զի ըմբոստացեալ Նորա ընդ արժանաւոր առաջարկութիւնդ՝ մերժիցէ զհաշիւն, և դուք արձակիցիք այնու ի կապանացն, յոր զանձինս ձեր և զՄիաբանութիւնն պարաւանդեալ էք անխորհրդաբար ։ Ըստ խորհրդոյս այսմիկ արարեալ Նոցա, չհաւանի Աղեքսանդր ընդ այն պայման և չընդունի զհաշիւն զայն. և յայնժամ զերծանին Նոքա ի խոստմանէ իւրեանց ։

Տեսեալ Աղէքսանդր Ռաֆաէլի զդերեւանալ ակնկալութեան իւրոյ և հնարիցն՝ զայրանայ յոյժ և գրէ առ փաստաբան իւր ի Լոնտոն, որ այն ինչ ժամանեալ էր անդ, զի յետս կալ Միաբանութիւնն ի կատարելոյ զխնդիր իւր. Նմին իրի՝ անկ է Նմա զանգատագիր մատուցանել Ատենին ի կողմանէ իւրմէ ընդդէմ Մխիթարեան Միաբանութեանն ։ Եւ կատարէ փաստաբանն զհրաման Աղէքսանդրի, մատուցանելով Լօրտ Քանչէլէրի զանգատագիր ընդդէմ Միաբանութեանն, պահանջել ի Նմանէ հաշիւ մատակարարութեան Ռ. վարժարանին, և զօրինակ զանգատագրոյն առաքէ Միաբանութեանն ի Վենե-

տիկ, առ ի տալ նմին պատասխանի ըստ հրամանի Քանչլերին. Նա և զգացուցանէ տալ Միաբանութեան զշահն զրամագլխոյ հրխտակին, ըստ բողոքման Աղեքսանդրի, մինչև քննեսցի և որոշեսցի խնդիրն ։

Զայս առնել տայ Աղեքսանդր փաստաբանին իւրոյ ի Լոնտոն, և ինքն տակաւին դեգերեալ ի Վենետիկ գանգատի ի հրապարակի անդ քաղաքին զապերախտութենէ Միաբանութեան, որ տասն հազար լիրէ ստերլին ի պարգև ընկալեալ յիւրմէ, չկամի զփոքրիկ ինչ խնդիր իւր կատարել ։ Եւ զայս գանգատ՝ ոչ միայն բերանով առնէ նա, այլ և ի լրաթուղթս քաղաքին հրատարակէ. և առ ի խափանել զՄիաբանութիւնն չառնել ընդ այն պատասխանի, միջնորդ ունի զԻտալացի ոմն համոզել զնա չառնել ընդ այն պատասխանի, խոստանալով տալ նմա 30,000 ֆրանք. այլ Միաբանութեան խորագիտութեամբ վարեալ ի պատեհին՝ չանսայ բանից խոստման նորին, առնէ պատասխանի բանից գրութեան նորա, խոստովանելով թէ արդարև ընկալեալ էր ի նմանէ 10,000 լիր. ստ. այլ զայն ոչ իբրև ի շնորհս, այլ իբրև պարտիք զոր պարտ էր նմա հատուցանել ըստ զանազան գլխոց, զորս յիշատակէ անդ մի ըստ միոջէ ։

Իբրև տեսանէ նա զայն պատասխանին ի լրաթուղթս և լսէ զքննութիւն հասարակաց, առաւել ևս զայրանայ ընդ դէմ Միաբանութեան, և մեկնեալ այնպէս ի Վենետկոյ՝ գնայ ի Վիեննա, ուր միջնորդութեամբ Գեր. Արխատակէս Ազարեանի խօսի ընդ Մէթէրնիկի ի կողմանէ Մ. Յովհաննու, որ բողոքէ առ Տէրութիւնն Աւստրիոյ պահանջել ի Մխիթարեան Միաբանութենէն Վենետկոյ զհաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին, և վերատեսուչ գոլ նմին յանձնեցէ ։

Ընդունի Մէթէրնիկ զբողոք Մ. Յովհաննու և խոստանայ կատարել զխնդիր նորա ։ Վասն որոյ առաքէ նա իբրև ոստիկան արտաքին իրաց Պետութեան հրամանագիր առ վարչութիւն Վենետկոյ քաղաքին և սահմանաց նորին, պահանջել ի Մխիթարեան Միաբանութենէն զհաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին ,

Առեալ Միաբանութեան զայն հրամանագիրն՝ խառլի յոյժ, և վանական ժողով արարեալ խորհի թէ զինչ պարտ իցէ առնել, եթէ Տէրութիւնն պահանջիցէ զայն խստութեամբ. և որոշէ միաբան հաւանութեամբ և յետ քուէից փոխադրել զվարժարանն այլուր արտաքոյ Աւստրիական Տէրութեան՝ եթէ մինչեւ ի սպառ և խստութեամբ պահանջիցէ նա զայն, ապա առնէ պատասխանի վարչութեան քաղաքին՝ թելադրութեամբ Իտալացւոյ ուրումն Պրանգիլիա անուն, օրինակ զայս.

« Կայսերական Ատեան Տեսչութեան գաւառիս.

« Ես ներքոյ գրեալս, որ յանձին բերեմ դէմս Միաբանութեան Հայոց Մխիթարեանց Սրբոյն Ղազարու, ունողի զնմանս հայկական դպրոցին Թողլոյ կտակաւ ի Պ. Սամուէլէ Մկրտիչ Մուրատեան, խոկացեալ ի վերայ բանից մեծարոյ հրամանագրի Տեսչութեանդ որ յ9 Օգոստ. այսր ամի, թիւ 18,901, հարկադրի առ ի պահպանութիւն իրաւանց Միաբանութեան իւրոյ յայտ առնել յարգանօք, զի այս Միաբանութիւն ըստ որում հպատակ Օսմանեան Պետութեան ըստ ազգի՝ ազատ համարի ամենեւին ի կանոնաց տնտեսական կառավարութեան Կայսերական պետութեանդ, վասն որոյ ոչ կարծէ զանձն իւր պարտական ի պատասխանել ճշգիւ քննութեանցն երեւելոց ի վերոյիշեալ մեծարոյ հրամանագրիդ ։

« Եւ արդարեւ Միաբանութիւնս այս՝ յորոյ անուն ստորագրեմ ես ի թղթիս, ամբողջ պահէ զհպատակութիւն իւր ըստ ազգի առ Օսմանցիս, զի և ոչ ունի ինչ, ոչ յիւր ստացուածս, և ոչ ի ստացուածս Դպրոցին յիւրմէ տնտեսելոյ, որ համարիցի յառաջ եկեալ յԱւստրիական աղբերաց, եթէ յարքունի գանձուէ, և եթէ ի մասնաւոր եկամտէ, յորմէ զհետ գայ, թէ չէ պարտական բնաւ յայտ առնել զիրս տնտեսութեան իւրոյ առ Հասարակաց Տեսչութիւն Կայսերական պետութեան ։

« Իսկ եթէ իցէ ոք որ բողոք ինչ ունիցի զիշխանութենէս, կամ քննել կամիցի զօր և իցէ տնտեսական ներքին կառա-

վարութիւն Միաբանութեանս, ապաքէն բաց է առ ամենեսեան դուռն Դատաստանարանաց, որպէս և Մեծարոյ Տեսչութեան Կայսերական պետութեան ոչ պակասեն միջոցք ազգային գործադրութեանց, որովք կարէ օրինաւոր կարգօք առնուլ զպատասխանիս իրաւացի հարցմանց իւրոց, և միանգամայն պահել զակնառութիւնս որ գտանին ի մէջ այլ և այլ Պետութեանց ։

« Ի Վենետիկ. 18 Օգոստ. 1840.

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ.

« Արքեպիսկոպոս և Աբբայ Մխ. Միաբ. »

Առեալ Աւստրիոյ Տէրութեան զվերոյիշեալ պատասխանին Միաբանութեան՝ լռէ առ ժամն ։ Իսկ վէճն Ա. Ռափայէլի ընդ Մխիթարեան Միաբանութեանն զոր վերագոյն յիշեցաք, փութով վճարի, տալով Միաբանութեան պատասխանի զանգատոյ նորա յատեանն Քանչըլըրի ի Լոնտոն, և նորա քննեալ և բաւականացեալ ընդ այն, տայ վճիռ ի նպաստ Միաբանութեան, և ի կշտամբութիւն Աղէքսանդր Ռափայէլի, զոր լսէ նա յՈւնկարիա և տխրի յոյժ, և առ ամօթոյ դեգերի յերկար ժամանակ ի կողմանս յայնոսիկ ։ Ապա դարձեալ անտի ի Վիեննա՝ լսէ ի Գեր. Ազարեանէ զկարծեցեալ յաջողութիւն իրաց Յովհաննու Մ, զԿայսերական վճիռն որ ի նպաստ նորա և հակառակ Միաբանութեան, սակաւիկ մի մխիթարի. և անտի անցեալ ի Վենետիկ և լուեալ անդ զպատրաստութիւն փոխադրութեան Մ. վարժարանին ի Փարիզ՝ դարձեալ տխրի և խոնարհի յոյժ, վասն որոյ ջանայ հաշտիլ ընդ Միաբանութեան, զի կարգեսցի վերստին ի պաշտօնն յայն գործակալութեան, որ ի կողմանէ Միաբանութեան ընդունել ի Քանչըլըրէն զտարեկան շահն դրամագլխոյ հրիտակի Ռ. վարժարանին, և այնու համարի պատրուակել զձախողուած դատին իւրոյ.

և ի գլանալ նմա զայն Միաբանութեան՝ սարջանօք դառնայ ի Լոնտոն ։

Ի դառնալ նորա ի Լոնտոն անցեալ ի Փարիզ, հանդիպի անդ Հ. Սարգսի. և ի պատմել նմա ցաւագին սրտիւ զգլացումն խնդրոյ իւրոյ ի Միաբանութենէն, Միխիթարէ զնա Հ. Սարգիս, յուսացուցանելով գտանել նմա զայն ապա, զոր և գտանէ նա յետ միոյ ամի միջնորդութեամբ Հ. Սարգսի, որով և հաշտի նա ընդ Միաբանութեան, թէպէտ և չմնաց երբեք գլխաւոր կորստեան դատին, և զապերախտութիւն Հ. Ռափայէլի Թրենց, զոր որդեգրեալ էր իւր, և նպաստէր նմա ։ Զայս ամենայն չմոռանայր նա յիշատակել Հ. Սարգսի ի հանդիպել նմա երբեք երբեք ի Փարիզ ։ Թէպէտ և Հ. Սարգիս ջանայր միշտ պաշտպանել զՀ. Ռափայէլ, որպէս և պաշտպանեալն էր յորժամ կամէր Աղեքսանդր Ռաֆայէլ հանել զնա ի պաշտօնէ Տեսչութեան Ռ. վարժարանին, այլ ոչ կարծէր, թէ զնոյն ապերախտութիւն և առաւել ևս քան զայն գտանելոց էր ի նմանէ և ինքն ի հասուցումն, որ և տեսցի ապա ի տեղւոջ իւրում յընթացս պատմութեանս ։

Յայսմ ժամանակի ընդունի Հ. Սարգիս նամակ ի Հ. Կարապետ վարդապետէ Նասյեան և Աղգապետէ ի Պօլիս, օրինակ զայս ։

« Մեծապատիւ Տեառն Տեառն Հ. Սարգսի վարդապետի մտերիմ սիրոյ ողջոյն ի Քրիստոս.

« Զբազմարդիւն վաստակ ձեր և զջան ի նպաստ ազգին և ի փառս Հասարակութեանս մերոյ թերևս լռութիւն մեր ցայժմ կարծեցուցանեն ոմանց եթէ չճանաչիցեմք, և կամ իբր ի պատկերի տեսանիցեմք. այլ մեր հանգամանք կենաց (որպէս քաջ գիտէ սիրելիդ մեր) այնպէս ինն նման են ալէկոծեալ ծովու, որպէս զի որ ի նմա հանգոյն մեր տկար լուղակի ի տեսանելն յեզերսն ինչ մի արժանի տեսութեան, կամ մեծավայելուչ, թէպէտ և տեսանել տեսանեն, այլ առ տագնապ անձինն և վտանգին պշնուլ չժամանեն թո՛ղ թէ զմայլել, կամ զայլս

ի գովելի կրից կամ ի գործոյ ի վար արկանել ։ Բայց ի ժամուս զկնի երկար և սուղ խօթութեանցս յեզերս պարապութեան յեցեալ մեր՝ ընկալցիս սիրողաբար զմեր զաւանձին և զառաջին նշանակ սիրոյ, համբուն գոլութեան և քաջալերութեան ի տաժանաւոր գործս վարժարանիդ, որում ի վերայ կաս արժանապէս, և յառաջատութեանն մեծապէս հոգաս ։

« Ողջ լինել Ձեզ ըղձամ

« Վերապատութեանդ սիրոյ

« Ի Միջագիւղն. 2 Սեպտ. 1840.

« Հ. ԿԱՐԱՊԵՏ Վ. ԵՍԱՅԵԱՆ

« *Ազգապետ*. »

Ահա մի է սա ի վարդապետաց անտի, որ հեռի գտանելով ի վանաց գրէ առ Հ. Սարգիս Թէոդորեան բանս գոլութեան և քաջալերսութեան յետ դարձի նորա ի Հնդկաց աշխարհէն ,

* * *

ԳԼՈՒԽ Զ.

Տրտունջ և գանգատ զընտրութենէ մանկանց Մ. և Ռ. վարժարանաց. — Թուղթ ազդարարութեան Հ. Սարգսի, առ Հ. Անանիա Ճէլալեան ընդ գանգատն այն. — Թուղթ մեղադրութեան Հ. Սարգսի առ Հ. Անանիա ընդ պակասութիւն նորա ի պաշտօնի իւրում. — Պատճառանք նորա յարդարացուցանել զինքն ընդ պակասութիւնն այն. — Խորհուրդ Հ. Սարգսի ի դարման տանել վնասուց հասարակաց, հաստատելով ժողով խնամակալաց. — Հաւանութիւն ընդ այն Գեր. Սումալի և պատուէր նորին կատարելոյ զայն. — Յապաղումն գործոյն այնորիկ ի պատճառս դանդաղութեան Հ. Ռափայէլի. — Կատարէ զայն Հ. Սարգիս հրամանաւ Գեր. Սումալի. — Կարգի Հ. Սարգիս նախագահ ժողովոյն այնորիկ. — Ընտրէ նա իւր օգնական զՀ. Ռափայէլ. — Ընտրի ատենադպիր ժողովոյն Հ. Գաբրիէլ Այվազեան. — Առաջին գործ խնամակալաց ժողովոյն լինի որոշումն կառուցման դպրոցին ի Պօլիս. — Ծախք դպրոցին Պօլսոյ մեծ և արդիւնքն անտի չնչին. — Հիւանդութիւն Հ. Սարգսի. — Թուղթ խնդակցութեան Հ. Կարապետի Եսայեան առ Հ. Սարգիս, և պատասխանին նորա առ այն. — Հրաժեշտ գործակալի կալուածոց Մ. վարժարանին, և գնացք նորին ։

Ի սկզբանէ անտի և այս անդադար գանգատ և տրտունջ լինէր, հանդերձ մեղադրանօք զՀ. Անանիայէ Ճէլալեան, որ առանց ընտրութեան և աչառանօք ժողովեալ մանկունս ի Պօլսոյ առաքէր յերկոսին վարժարանս. վասն այսորիկ գրէ Հ. Սարգիս թուղթ ազդարարութեան առ նա ի Պօլիս, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ Հայր

« Ի Պատաւին, 12 Մարտ. 1841.

« Ըստ միաբան խորհրդոյ մերոյ աստ երբեմն և ըստ խոստման առ միմեանս, յաղագս գործառնութեան դպրոցացս

ասեմ, ապաքէն պարտ էր ինձ անդանդաղ բերել ի գրութիւնս և անյապաղ առնել պատասխանի թղթոց Ձերոց. սակայն հոգք զանազան և ցաւք անպակաս խափան եղեն ցարդ լինել ինձ զպարտս իմ:

«Զանվտանգ ճանապարհորդութիւն *** պատանւոյն և զող-ջամբ ժամանել նորա այսր՝ գիտեմ զի լուեալ իցէք ցարդ ի թղթոյ նորա առ ծնողսն. և գիտեմ ապա զի մնայք այժմ լսել և զհաճութիւն մեր ընդ նա և զկարծիսն որ զհանգամա-նաց նորա: Թէպէտ և զգաստ է պատանին և յարմար ուս-մանց ըստ բաւականին, բայց ինքնահաճ և կամակոր բարուք. վասն որոյ և բազում աշխատութիւն և ցաւք վերակացուաց, որպէս և տեսցի ապա: Իսկ վիճակ նորա ոչ աղքատի, որպէս լսեմք յայլուստ և ի նոյն ինքն պատանւոյն, պատմելով նորա մեզ, թէ հայրն իւր ծախէր այդր ի Պօլիս վասն ուսման նորա, գաղղիարէն լեզուի միայն, 5,000 ղուռուշ ի տարւոջն, և թէ ունի նա վաճառաշահ գործառնութիւն յԱնգղիա, ի Գաղղիա, և յԻտալիա, որպէս և ի Թրեստ ընդ Պարոն Իւսուֆին, որ և գրեաց առ մեզ գիր յանձնարարութեան վասն պատանւոյն, Ամիրա զհայր նորա կոչելով:

«Հաստատէ զայս և Հ. Աղեքսանդր մեր այտի, գրելով առ մեզ այսպէս. «Զսոյն զայս (ուսումն փիլիսոփորթի,) ի մանաւորի աղաչեաց վասն որդւոյ իւրոյ՝ Թ*** որ է մին յա-ռաստաձեռն իշխանաց ազգիս և բարեկամ մեր, և միաբանու-թիւնս սոքօք առնու ոյժ և զօրութիւն յազգիս:» Որովք յայտ է թէ ի կարգս հարստաց է նա և ոչ աղքատաց: Ապա օրպէս համարուեսցուք նորին 120 ֆիօրին միայն պատշաճ դատեցան հատուցանել նորա վասն տարեկան ծախուց երկուց մանկանց իւրոց, զարմանամք մեք յոյժ ամենեքեանս ընդ ճանաչումն և ընդ դատաստան նոցա, և առաւելապէս ընդ լռութիւն ձեր, թողլով զիրաւունս աղքատաց ազգիս և զպատիւ միաբանու-թեանս ի կամս և ի դատաստան քանի մի արուեստաւորաց, զիրաւունս ասեմ աղքատաց ազգիս. քանզի ժառանգութիւնս այս թողեալ է նոցա միայն, որոց ծնողքն աղքատ են և տնանկ, և ոչ նոցա որք կարող են հատուցանել զծախս ուսման ման-

կանց իւրեանց, որպէս յայտ է ի կտակի անդ բարերարին. և զպատիւ Միաբանութեանս տացի, զի բամբասիմք մեք յամենայն ուստեք իբրև աչառուք ամենք և իբր շահախնդիրք, զրկելով զորբ և զաղքատ մանկունս ։ Վասն այսորիկ՝ թողուք մեք զորոշումն զայն համարուեստից, զի զերծանել կարասցուք ի բամբասանաց և ազատ ի խղճէ մտաց. սակայն զընդհակառակն տեսանեմք այժմ, և վասն այսորիկ ցաւիմք յոյժ, զըղջացեալ ընդ բարեմտութիւն մեր, և ընդ հաւատոյն զոր ընծայեցաք այլոց ։

« Ասիցէք արդեօք, թէ ըստ պայմանին եդելոյ ի մէնջ ի յայտարարութեան անդ, համարուեստից թողաւ որոշումն այն ։ Ասեմ ես, զի եթէ ըստ միոյ պայմանին թողաւ նոցա այն, այլ ոչ ըստ միւս պայմանին. այս է, թէ չկարեն երկու եղբարք ի միասին վայելել զշնորհս ողորմութեանն. վասն որոյ չէր պարտ ձեզ լռել և լուծանել զօրէնս դպրոցացս չնչին ինչ հառուցմամբ ։ Ահա ընդ այս առաւելապէս զարմանամք և ցաւիմք յոյժ. թո՛ղից ասել և զլուծմանէ և այլ կարեւորագոյն օրինաց վարժարանիս. այս ինքն, չառաքել ատս մանկունս, որոց անցեալ իցեն զչորեքտասանամենիւքն. սակայն առաքեցան ատս վեշտասանամեայ՝ ութեւտասնամեայ և քսանամեայ պատանիք. և ընդէ՞ր լուծումն այս օրինաց վարժարանիս ։— Առ ի հաճել միայն զկամս Ամիրայից, թէպէտ և դպրոցս այս ոչ վասն մանկանց նոցա է կարգեալ, թէպէտ և հասակեայ մանկունքն չկարեն և չկամին խակ բնաւ ուսանել ինչ և կրթիլ. և երանի՛ թէ այնչափ միայն էր անտի վնասն, այլ և խափան և օրինակ չար ընկերաց իւրեանց կրտսերագունից լինին, մանաւանդ նոքա որք յոչկամաց և պայմանաւ են եկեալք, որպէս ինքեանք համարձակ ասեն, թէ չեն եկեալ ատս հայերէն կամ այլ ինչ ուսումն ուսանել, այլ գաղղիարէն միայն. և թէ՝ չգտանեն աստ քաջ վարժապետ գաղղիարէն լեզուի, վասն որոյ կամին դառնալ այդր ի Պօլիս ։ Եւ ահա այսպիսի յանդուգն և անմիտ բանիւք խարբալեն զմանս յընկերաց իւրեանց, և դառնացուցանեն զմեզ համապազ ։

« Տեսի՞ք զպատուղն հասակեայ մանկանց. թողից ասել զայլ

*վնասակարութեանց, որք հետևանք են հանգամանաց պատա-նութեան. վասն որոյ բազում հոգոց և տքնութեան պէտք են վերակացուաց : Եւ թողից ասել զանպիտանութենէ այլոց ոմանց, որոց թերութեանց տանիմք բազում նեղութեամբ, որպիսի ոմանք են ***, յորս գտանին ամենայն թերութիւնք բնական և բարոյական :*

*« Արդ՝ առ. ի դարման տանել չարեացս, խորհիմք յետս առաքել Զ*** որ անտանելի է, և Զ***, որ արդէն անպիտան է կամակորութեամբ և անյամարութեամբ իւրով : Իսկ վասն մնացեալ անպիտանեացն զորս յանուանէ յիշատակեցաք, խնդրեմ ազդ արասջիք ծնողաց նոցա, զի խրատեսցեն զնոսա յանդիմանական թղթովք իւրեանց, թերևս զգաստասցին. ապա թէ ոչ, առաքեսցուք յետս և զնոսա մի առ մի. քանզի չկարեմք տանել անպիտանութեան նոցա, մանաւանդ յայսմ ժամանակի, յոր ամենայն ուստեք նեղիմք և վշտանամք :*

« Մնամ Յարգոյապատիւ Հայրութեանդ

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. ::

Յետ տամանեայ լռութեան Հ. Անանիայի Ճէլալեան, չառնելով նորա ինչ պատասխանի վերոյիշեալ ազդարար թղթոյ Հ. Սարգսի, գրէ նա թուղթ յանձնարարութեան վասն անպիտան պատանւոյ միոյ, արդէն յետս առաքելոյ ի Ռ. դըպրոցէն, որում տանէ Հ. Սարգիս պատասխանի, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Պատուխոն. 31 Դեկտ. 1841.

*« Յետ երկար սպասելոյ առնուլ ի Ձէնջ գիր զկարեւոր իրաց վարժարանիս, ահա կարեւորագոյն պատճառըդ նամակիդ առ իս՝ յանձնարարութիւն իցէ վասն *** պատանւոյն : Գովեմ և զխնամոտ միտս ձեր, որ առ կարօտեալն ազգիս, այլ ոչ*

զընտրութիւնդ յայն ամենեւին. և յիրաւի՝ քանզի չգիտեմ ես, թէ որո՞վ պատեհաւ և զի՞նչ իրաւամբք ընտրեցաւ երբեմն պատանիդ այդ և առաքեցաւ այսր ի դպրոցս աղքատաց ։ Իբրեւ մանուկ քաջուշի՞մ և բարեմնո՞ւնդ արդեօք. ոչ բնաւ, անբաժ գոլով նորա յայս ամենայն կարեւոր հանգամանաց, որպէս և տեսաւ խոկ և ծանուցաւ ձեզ յառաջագոյն. և իբրեւ ծնողք նորա և ազգականքն այնչափ աղքատք, մինչեւ չլինել նոցա բաւական, ոչ միայն զկարեւոր զգեստիկ նորա հայթայթել, այլ և ոչ զծախս նամակացն հատուցանել. զի՞ս ոչ կարեմ հաւատալ, և հաստատութիւն այսմ, ահա քեզ ծախքն զոր առնեն մայր նորա և քեռին, առաքելով զնա այսր հանդերձ ամենայն պատրաստութեամբ և խոստմամբ առնել նմա զայն ամս քանի մի, առանց ինչ խնայութեան, որով յայտ է թէ չեն նոքա աղքատ, այլ առ մեզ միայն ժլատ, մանաւանդ թէ անիրաւ առ աղքատս ազգիս, յափշտակելով զիրաւունս նոցա ։

Թողից ասել և զխորթութենէ տոհմի նորա, որ ի կողմանէ մօրն, և զմիտումն նորա յազգն այն, փոխելով զանուն իւր անգամ (*). և ահա զայսպիսի պատանեաց տակաւին հոգայ վերատեսչութիւնդ և տայ մեզ հոգալ ։ Շատ են Վ. Հայր, շատ են ցայս վայր և այսչափ ընդունայն աշխատութիւն մեր և ծախք վայրապար որք եղեն վասն նորա . . . Թո՛ղ հոգայցեն զնմանէ այսուհետեւ ազգականք նորա և ծանօթք, որոց արդէն յանձն արարեալ է նա և զետեղեալ ի դեղանոց հիւանդանոցի քաղաքիս ի ծեծել զդեղս, զոր և այժմ ի Պօլիս կարէր ուսանել և այն սակաւ ծախիւք ։

« Մնամ Վերապատուելի Հայրութեանդ

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Գրէ Հ. Սարգիս և անուղղակի զթերութենէ պաշտաման

(*) Մայր պատանւոյն Խաղացի էր ազգաւ, և անուն որդւոյն ի Պետրոսէ ի Լէթրովիչ էր փոխեալ ։

Հ. Անանիայի Ճէլալեան, որ յիշատակեցի ի տեղւոջ իւրում ըստ կարգի պատմութեանս ։

Իսկ Հ. Անանիա պատճառ տայ Թերութեան իւրում որ ի պաշտօնն յայն զկարօտութիւն պատշաճ և սեփական տեղւոյ դպրատան որ անդ ի Պօլիս, և խնդրէ ի Գեր. Սոմալէ հրաման և արծաթ ի գնել տեղի ինչ պատշաճ և ի շինել անդ դպրատուն, ի Նախակրթութիւն մանկանց առաքելեաց ի վարժարանս Վենետկոյ և Պատաւինի ։

Իմացեալ Հ. Սարգսի զտուեալ պատճառն Հ. Անանիայի, և կամեցեալ դարման տանել հասարակաց մնասուց խորհի և խօսի ընդ Հ. Ռափայէլի, Նախ խնամակալաց ժողով մի հաստատել և ապա հաւանութեամբ Նորին որոշել զամենայն խնդրոց երկուց վարժարանաց ։ Եւ յայտնեալ Նորա զայն խորհուրդ իւր Գեր. Սոմալի խնդրէ զհաւանութիւն Նորա ընդ այն և զհրաման ի գործ դնել զայն ։

Հաւանի յայժ Գեր. Սոմալ ընդ այն խորհուրդ Նորա և հրաման տայ կատարել զայն ։

Խնդրէ Հ. Սարգիս ի Հ. Ռափայէլէ յօրինել քանի մի կանոնս ընդ այն, զոր Թէպէտ և խոստանայ առնել Հ. Ռափայէլ, բայց ոչ կատարէ զխոստումն իւր, վասն որոյ և յապաղի հաստատութիւն խնամակալաց ժողովոյն տարի մի և աւելի, և վասն որոյ հարցանէ Գեր. Սոմալ ցՀ. Սարգիս և մեղադրէ զնա ընդ անհոգութիւն Նորա ի վերայ գործոյն այնորիկ. ընդ որ ամաչեցեալ Նորա հարկաւորի ինքն յօրինել զկանոնսն, և տայ զայն Գեր. Սոմալի ի քննել և յուղղել ըստ կամաց իւրոց, որպէս Թէ յիւրմէ յօրինեալ, Թէպէտ և ոչինչ փոփոխէ Նա ի Նոսին, այլ միայն օրինակէ զայն ձեռամբ իւրով, և յանձնէ Հ. Սարգսի ի ցուցանել ժողովոյն ։

Հրաւիրեալ Հ. Սարգսի չքանի մի անձինս ի Միաբանից իւրոց ի Ռ. վարժարանն, առաջարկէ Նոցա զխնդիրն և ընթեռնու զկանոնսն ։ Իմացեալ Նոցա զվախճան խնդրոյն և քննեալ զկանոնս Նորին մի առ մի՝ հաճին հաւանին ընդ այն առ հասարակ, և որոշեն և հաստատեն Նախ՝ անձինս վեց իբրև անդամք խնամակալաց ժողովոյն, և ապա քուէ արկեալ ընտրեն

նախագահ ժողովոյն զՀ. Սարգիս Թէոդորեան, և թողուն նմա ընտրել իւր օգնական ։ Ընտրէ նա զՀ. Ռափայէլ Թրենց. և ապա ընտրի Հ. Գաբրիէլ Այվազեան քարտուղար ժողովոյն ։

Իբրև հաստատի ժողովն այն խնամակալաց ի գործառնութիւն երկուց վարժարանաց, առաջարկէ յայնժամ Հ. Սարգիս խնամակալաց ժողովոյն զխնդիրն Հ. Անանիայի, որ վասն գնոյ տեղւոյն և ծախուց շինութեան դպրոցին ի Բերա Պօլսոյ, որով հատանի, ասէ, պատճառ թերութեան նորա ի պաշտօն իւր յայն, և զարման լինի մնասուց հասարակաց այսու հետև ։

Թէպէտ և Հ. Ռափայէլ հակառակի ընդ այն վայրապար և անօգուտ ծախս համարելով զայն, և չվստահանալով բնաւ ի Հ. Անանիա Ճէլալեան, բայց այլք հաւանին ընդ այն, հանդերձ պայմանաւ հարցեալ տեղեկանալոյ ի նմանէ թէ քանի արծաթ պիտոյ էր ի գին տեղւոյն և ի ծախս շինուածոյն այնորիկ, և յետ ընդունելոյ ի նմանէ որոշ և ճիշդ տեղեկութիւն, որոշելոյ և տալոյ նմա հաւանութիւն ։

Առնէ պատասխանի Հ. Անանիա հարցման ժողովոյն, թէ պիտոյ էր ընդ այն ամենայն 50,000 և շատ առաւել 60,000 փրանք, ըստ հաշուի ճարտարապետի Մելքոն Աղայի, մտերիմ բարեկամին իւրոյ ։ Հաւանի ընդ այն ժողովն խնամակալաց, և որոշէ տալ նմա զարծաթն զայն, դարձեալ հանդերձ պայմանաւ, զի զոր ինչ արասցէ նա զխոստութեամբ ումանց ի մեբոյն անտի արասցէ, և վկայութեամբ նոցին տացէ հաշիւ խնամակալաց ժողովոյն ։ Սակայն նա զընդհակառակն առնէ, զամենայն ինչ ինքնօրէն գործելով, որպէս երևի ի բանից թղթոյ Հ. Սարգսի առ Հ. Ռափայէլ, որ ունի օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Ահա եհաս երէկ ի Վ. Հ. Անանիայէ պատասխանի թղթոյ ժողովոյն գրելոյ առ նա ի Յունուարի ամսոյս, թէպէտ և այն ոչ ըստ ակնկալութեան մերում, չզտանելով անդ ոչ

վկայութիւն և ոչ կարծիք ինչ ուրուք ի մերոյն անտի, զոր և խնդրէաքն իսկ և հարցանէաք, այլ իւրն միայն հանդերձ վերստին յիշատակութեամբ պարտուց իւրոց և առաջարկութեամբ ծախուց, իբրև 30,000 ֆրանք ։ Զպատասխանին նորա ծրարեալ ի սմին առաքեմ Ձեզ այդր յընթերցումն, մինչև ժողովեալ մեր այսր կամ այդր՝ խորհեսցուք և արասցուք զարժանն ։

« Ի Պատաւիոն. 14 Մարտ. 1843.

« Հ. Ս. ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Ի միջոցի ութ ամաց, սկսեալ ի 1834 ամէն մինչև ցամն 1842, առաքէ Հ. Անանիա Ճէյալեան ի Պօլսոյ ի Մ. վարժարանն որ ի Պատաւիա մանկունս յիսուն, յորոց ոմանք իբրև անպիտան ի վարս և անյարմար ուսման յետս առաքին անդէն, և ոմանք կիսակատար ուսմամբ դառնան յետս, և յոյժ սակաւք ոմանք չափաւոր ուսմամբ և կրթութեամբ դառնան ի Պօլիս ։ Ի մէջ ամենեցուն նոցա մին միայն՝ հանգուցեալն Մանուկ որդին Նազարէթ Ամիրայի Ալլահվէրտեան հատուցանէ թոշակ ըստ կանոնի վարժարանին 1,500 ֆրանք, այլ մասն մի նորա ոչ հասանէ ի ձեռս Տեսչին, մնալով առ Հ. Անանիայի, առանց ծանուցանելոյ նորա զայն Տեսչին ։ Որոյ թէպէտ գրեալ հարցանէ ի նմանէ զայն, այլ նա ոչ տանէ պատասխանի, մինչև հանդիպելն միմեանց ի Վենետիկ յամին 1846, Տեսուչն և Հ. Անանիա՝ յընտրութեան Աբբայի, ուր վերստին և բերանով հարցանէ ցնա Տեսուչն զայնմանէ ։ Պատասխանի տանէ նմա Հ. Անանիա, թէ ընկալեալ էր ինքն զայն մասն թոշակին և ծախեալ զայն վասն կահուց դպրոցին ի Պօլիս, ընդ որս ցուցանէ նա և զայլ հաշիւ ինչ պահանջման, և զայն ի կրկին օրինակս, և զանազան յոյժ ի միմեանց. և ի զարմանալ Հ. Սարգսի ընդ այն և ի հարցանել ցնա զպատճառն, պատասխանէ Հ. Անանիա, թէ « Հատուցջիք ընդ մ՛ր և հաճեջիք ։ » . . Արդ ա՛ր հաշիւ , . . . և առ ատամիտ պահանջող ։ . . .

Յայնմ ժամանակի, (յամին 1841,) հիւանդանայ Հ. Սարգիս սաստիկ խիժ ջերմամբ փայծեղան, եւ անկանի ի մահիճս հիւանդութեան աւուրս իբրեւ հարիւր, մինչեւ տարակուսիլ բժշկաց ընդ ապաքինումն նորին. ապա յետ բազում դեղոց եւ դգուշութեան հաստատի նա յառողջութիւն առ սակաւ սակաւ ողորմութեամբն Աստուծոյ ։

Լուեալ զայն Հ. Կարապետի Շահեան եւ ազգապետի ի Պօլիս, գրէ առ նա թուղթ խնդակցութեան եւ քաջալերութեան, հանդերձ խնդրուածով ընդունելոյ ի Մ. վարժարանն զպատանի զմն ի Պոլսեցւոց անտի, եւ տալոյ նմա տեղեկութիւն զհանգամանաց եւ զյառաջադիմութենէ Մ. վարժարանին, ի մխիթարութիւն բազմավիշտ անձին եւ վհատկի ծերութեան իւրոյ ։

Առնէ պատասխանի Հ. Սարգիս թղթոյ նորա, օրինակ զայս ·

« Գերապատիւ Տէր.

« Շնորհ յոյժ ունիմ ողորմութեանն Աստուծոյ եւ արժանաւոր աղօթից ձերոց եւ համօրէն հոգեհարազատ եղբարց իմոց, որովք ապաքինեալ ի ծանր եւ յերկար հիւանդութենէս հաստատեցայ յառողջութիւն, թէպէտ եւ ոչ ի կատարեալն, ունելով դեռ հետս ինչ տկարութեան. վասն որոյ եւ աղօթից դարձեալ կարօտիմ Հոգեհարազատացդ, եւ այս ոչ վասն կարեւորութեան ինչ անձինս զորոյ չգիտացի եւ չգիտեմ բնաւ զպիտանութիւնն, այլ սակս պակասութեան ի ժամուս կարեւոր անձանց ի գործս հասարակութեան ։

« Յաղագս ընդունելութեան *** պատանւոյն ի վարժարանս, արդարեւ գրեցին ոմանք ի մերոցն այտի առ Գերապայծառ մեր եւ առ Հ. Պետրոս Մինասեան, եւ ընկալան ի նոցանէ պատասխանի բացասական, հանդերձ իրաւացի պատճառօք, զոր եւ կարծեմ իմացեալ իցէ Ձեր յարդ ի Հ. Անանիանէ եւ հաւանեալ ընդ այն ։ Ապա չմնայ ինձ արդ այլ ինչ ասել, բայց եթէ ներումն ոչ կամակարութեանս խնդրել ի Ձէնջ,

և աղաչել զգերապատիւ Հայրութիւնդ չհամարել ընաւ զհրաժեշտ խնդրոյդ թերութիւն ինչ յարգանացս, որ մեծապէս և անչափ են առ Ձեզ :

« Ի մխիթարութիւն բազմավիշտ անձին և վիճակի ծերութեանս ցանկայք և խնդրէք յինէն տեղեկութիւն հանգամանաց և զյառաջատութենէ դպրոցիս : Արդարև զովելի ցանկութիւն և կարևոր խնդիր . այլ աւա՜ղ, զի չկարեմ ես ընդ զայն, չունելով և իմ ցարդ անտի ինչ մխիթարութիւն տառապեալ և ցաւագնեալ անձինս. և եթէ զպատճառն հարցանիցէք գրկանացս, ասացից Ձեզ զայն համարձակ. քանզի ցորչափ աչք մեր անդր քան զոչորտս բնակութեան մերոյ չկարեն տեսանել ինչ, չհամարեալ երբէք թէ իցեն այլ ուրեք տարկայ ինչ արժանի տեսութեան մերոյ, այնչափ սակաւ լիցի մխիթարութիւն մեր : . . . Խնդրելով ներումն և վասն անմխիթար գրութեանս իմում,

« Մնամ միշտ Գերապատիւ Տէրութեանդ

« Ի Պատուիոմ. 21 Յունվար. 1842.

« Խ. Ծ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Այսպիսի բանիւք խելամուտ առնէ նմա Հայր Սարգիս զանուղիղ մատակարարութիւն միաբանութեանն, որ ամփոփէ զբարին հասարակաց ազգին իւրոյ յօգուտ մասնաւորաց ոմանց ազգականաց և բարեկամաց իւրոց որք ի Պօլիս, և զայսմանէ զանգատէր և բողոքէր նա միշտ որպէս տեսանի ի բազում թուղթս իւր յիշատակեալս ի մատենիս :

Ի ժամանակի անդ հիւանդութեան Հ. Սարգսի՝ հրաժարի ի պաշտօնէ իւրմէ գործակալն կալուածոց Մ. վարժարանին Հ. Անտոնիոս Խնձիճեան, և մեկնի անտի գնայ յԱւնկարիա : Քանզի զամս երկուս կալեալ նորա զայն պաշտօն, և շահեալ անտի առանձին իբրև 10,000 ֆրանք, կամի գնալ անդ ծախել զայն ի շինուածս լառքմաց իւրոց, թէպէտ և Գեր. Սուքիաս

Սոմալ Առաջնորդն չհաւանի ընդ հրաժեշտ Նորա, թէպէտ և Հ. Սարգիս ի մահճաց անտի հիւանդութեան իւրոյ աղաչէ զնա համբերել այլ եւս սակաւ ինչ՝ մինչեւ յաջորդ իւր Հ. Եսայի Մզրաքեան ծանօթասցի պաշտօնին այնմիկ։ Այլ Նա չլսէ աղաչանաց Նորա, և ի մեղադրել զնա ոմանց ի միաբանակցաց իւրոց ընդ այն, արդարացուցանէ Նա զանձն իւր ասելով, թէ չէ ինքն ուխտեալ ի ծառայել աշխարհական դպրոցի։ . . . Ահա և սոսա յաւելումն հոգոց և ցաւոց սրտի Հ. Սարգսի։

ԳԼՈՒԽ Է.

Կայսերական վճիռ Աւստրիոյ Տէրութեան իպարտաւորել զՄխիթարեանութիւնն տալ հաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին. — Բողոք և աղերսագիր Մխիթարեանց առ Կայսրն Աւստրիոյ ձեռամբ գործակալաց իւրոց ընդ այն. — Արձակումն աշակերտաց Մ. վարժարանին. — Գործք գործակալացն ի Վեննա և թղթակցութիւն նոցա ընդ Մխիթարեանս. — Զանազան կարծիք մասնաւորաց ոմանց Մխիթարեանց զտեղւոյ փոխադրութեան Մ. վարժարանին. — Յուսահատեալ գործակալաց ընդ յաջողութիւն ելից իրացն՝ դառնան ի Վենետիկ և պատմեն զայն։

Առեալ Աւստրիոյ Պետութեան զազդու և զարժան պատասխանին Մխիթարեանութեան՝ թէպէտ և լռէ զամս իբրեւ երկուս ընդ այն պահանջանս իւր, բայց յանդադար ազդմանէ հակառակորդին Մխիթարեանութեան՝ Յովհաննու Մ, մանաւանդ օժանդակի Նորին Գեր. Արիստակէս Ազարեանի, հանէ վճիռ Կայսերական պարտաւորելոյ զՄխիթարեանութիւնն տալ Պետութեանն հաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին, և արկանել զայն ընդ Տեսչութեամբ Նորին։

Յայնժամ Միաբանութիւնն Մխիթարեան զվերջին փորձէ փորձ, բողոքէ առ Կայսրն Աւստրիոյ հանդերձ աղերսագրով և միջնորդութեամբ փոխարքային Իտալիոյ Ռէնիյէր Իշխանին, և որոշէ առաքել ի Վեննա երկուս անձինս յիւրոցն անտի,

զի անձամբ մատուցէն զաղերսագիրն առ Կայսրն, և բերանով խօսեսցին ընդ աւագանին դրանն և ընդ մեծամեծ իշխանս, ցուցանելով նոցա զիրաւունս միաբանութեանն, և խնդրելով յետս դարձուցանել զԿայսերական վճիռն զայն ։

Ի պաշտօնն յայն գործակալութեան ընտրի Հ. Յովհաննէս Սորկուճեան. և տագնապեալ ի գտանել զայլ ոք յարմար ընկեր նմին, գրէ Գեր. Սոմալ գիր առ Հ. Սարգիս ի Պատաւիոն, ծանուցանելով նմա, թէ անկարանայ գտանել զայլ ոք, և թէ՝ զՀ. Յովհաննէս միայնակ առաքել անդ ոչ բարւոք թուի իւր. վասն որոյ հարկ է, ասէ, և զայս աշխատութիւն եւս յանձն առնուլ նմա և ընկերանալ Հ. Յովհաննու ։

Առնէ Հ. Սարգիս պատասխանի թղթոյ Գեր. Սոմալի օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Ընկալայ զնամակ Արհիապատիւ Տեառնդ, գրեալ ի 19 ամսոյս, և խմացայ անտի զդժուարութիւն գտանելոյ ուրուք այդր ի յարմար ընկերութիւն Հ. Յովհաննու ի գործ անդ Վիեննայի ։ Թէպէտ և ընդ այս պակասութիւն ցաւիմ եւ յոյժ, այլ զամենայն ինչ ի խնամս վերին տեսչութեան թողեալ և կամաց Վեհիդ հպատակեալ՝ մխիթարիմ. վասն որոյ մի՛ եւս հոգասցէ այսուհետեւ Արհիապատիւ Տէրդ զայսմանէ, այլ միայն զարժանաւոր աղօթս իւր և զառատ օրհնութիւնն անպակաս արասցէ յինէն, որով զօրացեալ՝

« Մնամ միշտ Արհիապատիւ Տէրութեանդ Ամենահնազանդ ծառայ

« Ի Պատաւիոն. 20 Յուլիս. 1843.

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Կամի նախ Հ. Սարգիս խորհրդով և հաւանութեամբ Միաբանութեան իւրոյ արձակել զաշակերտս Մ. վարժարանին որ

ի Պատաւխոն, դարձուցանել զնոսա ի տեղիս իւրեանց, որոց որդէն մեծագոյն մասն աւարտեալ էր զկարեւոր ընթացս ուսմանց, և ապա գնալ ի Վէննա. որպէս զի եթէ յաջողեալ անդ գործոյն հրաժարէր Աւստրիոյ Տէրութիւնն ի պահանջմանց անտի իւրոց, նորոգ աշակերտս բերել տացէ անդ յարեւելից. իսկ եթէ յամառեալ մնայր նա յայն, յայլ ուրեք ուղղել զնոսին, հանելով զՄ. վարժարանն յիշխանութենէ Աւստրիոյ Տէրութեան, ըստ որում խորհեալ և որոշեալ էր միաբանութեանն յառաջագոյն։ Զայն այնպէս կարգաւորեալ Հ. Սարգիս, ապա պատրաստի եղանել ի ճանապարհ ընդ Հ. Յովհաննու Սորկուճեան գնալ ի Վէննա, առ ի փորձել զփորձն վերջին, բողոքելով առ Կայսրն ։

Արդ՝ ի 1843, յ30 Յուլիսի, ելանեն ի ճանապարհ Հ. Սարգիս Թէոդորեան և Հ. Յովհաննէս Սորկուճեան գնան ի Վէննա իբրեւ գործակալք Մխիթարեան Միաբանութեան, առ ի մատուցանել աղերսագիր ի դիմաց նորին առ Կայսրն Աւստրիոյ, և առ ի խօսել ընդ աւագանւոյ դրանն զիրաւանց Միաբանութեանն որ ի բան Մ. վարժարանին ։ Զամիսս եօթն անցուցանեն նոքա անդ պանդխտութեամբ, դեգերելով հանապազ ի դրունս Կայսեր և աւագանւոյ նորին, խելամուտ առնելով զնոսա զդիտաւորութեան կտակագրին, Սամուէլ Մուրատի, և իրաւանց Մխիթարեան Միաբանութեան որ ի մատակարարութիւն Մ. վարժարանին, հանդերձ յայտարարութեամբ վճռոյ Անգղիացւոց ատենին ի Մատրաս, և դաշին որ ընդ կտակակատարս և ժառանգս բարերարին, որով չկարէին նոքա խառնիլ ի գործ դպրոցին և վէճս յարուցանել երբեք ընդ այն ։

Ի Վէննա թէպէտ և աւագանին առ հասարակ քաղաքավարութեամբ ընդունին զՀ. Սարգիս Թէոդորեան և զՀ. Յովհաննէս Սորկուճեան, և իրաւունս տան նոցա, բայց ոչինչ կարեն նպաստել նոցա, զհաճութենէ Մէթէրնիկի կախեալ գոլով յաջողուած՝ բանին. զի նա էր հակառակորդ նոցա, պահանջող հաշուի դպրատան ըստ խնդրոյ Յովհաննու Մուրատեան՝ միջնորդութեամբ Գեր. Արիստակէս Ազարեանի, որ անդադար

երթեւեկէր առ նա, իբրեւ նախանձայոյզ բարեաց հասարակաց ցուցանելով զինքն, միանգամայն և իբրեւ հաւատարիմ հպատակ Աւստրիոյ Տէրութեան, թէպէտ և առ արտաքս անծանօթ անցիցն երեւեցուցանէր զինքն, և մեղադրէր զՄխիթարեանսն Վենետկոյ և զգործակալս նորա անդ, վասն չհարցանելոյ յուրմէ խորհուրդ ընդ խնդիրն այն, սակայն հրաւիրէր զգործակալն գնալ բնակել ի վանս իւր. և ի չառնուլ նոցա յանձն բնակել անդ, հրաւիրէ զնոսա ստէպ ստէպ գնալ ճաշել ընդ նմա ի վանս և ի տան եղբօր իւրոյ. և նոքա քաղաքավարութեամբ վարին ընդ նմա, ըստ քաղաքավարութեան նորա։

Ջհակառակութիւն Գեր. Ազարեանի ընդ Միաբանութեան Վենետկոյ յայտնապէս ծանուցանէ գործակալաց ոմն յիշխանաց անտի, ասելով զնոսա այսպէս. « Ցաւի ինքն զի հակառակորդն ձեր յեղբարց ձերոց է։ » Զնոյն և այլք ոմանք ծածկաբար ծանուցանեն նոցա։

Ի հաստատութիւն այսմ յառաջ բերցուք աստ զբանս նամականւոյ գրեցելոյ ի Վիեննայէ ի Վենետիկ, և ի Փարիզէ ի Վիեննա։ Աւասիկ նախ՝ թուղթ Հ. Սարգսի։

« Վերապատուելի Հայր.

« Ի Վիեննա. 21 Օգոստ. 1843.

« Ի 18 ամսոյս ընկալաք գիր ի Փարիզէ ի Հ. Գէորգէ մերոյ, յորում և տայ մեզ լուր ինչ, թէպէտ և ոչ նոր և անկարծելի, այլ ի ստուգութիւն կարծեացս և ի հաստատութիւն նոցին, այլ և ի հաւաստիս պատմութեանն Մ. վարժարանին որ ի լոյս եկեալ է ըստ ժամանակին... և է այս. « Յաւուրս յայսոսիկ լուայ ես, ասէ, ինչ աստ, որ մարթի թերեւս ըստ տեղւոյն կարեւոր լինել ձեզ. Նմին իրի փութամ ծանուցանել, զի գիտասջիք քաջ զոր մինչեւ ցարդ կասկածէաքն ոչ յանիրաւի ինչ էր. իբրեւ զի ի Գաղղիացւոց ոմն ծանօթ Յովհաննու Մուրատեան որ աստ, յընթրիս ուրեք, յոր հրաւիրեալ էաք և մեք, առանց գիտելոյ և ճանաչելոյ զիս թէ ո՞ ոք իցեմ, այլ զի միայն հայազգի, բանս ի մէջ էարկ վասն Մուրատին, և

սկսաւ պատմել զլուեալսն ի նմանէ, թէ որպէս միլիոնս երկու դրամագլխոյ թողեալ հօր նորա կտակաւ ի կառուցումն դըպրոցի վասն աղքատ մանկանց ազգին Հայոց, և զի Մխիթարեանց Վենետկոյ առեալ զայն գումար ընդ ամս քան իբրև ոչինչ առնէին. սկսաւ Մուրատն հարցանել զնոսա, որում իբրև չկամեցան տալ պատասխանի, և փակեցին ընդդէմ նորա զամենայն դրունս, յայնժամ Մուրատն ի ձեռն առեալ զՄխիթարեանս Վեննայի, որք թշնամութեամբ են ընդ Մխիթարեանց Վենետկոյ և հզօրագոյնք առ Աւստրիական պետութեամբն, ի ձեռն նոցա զօրացաւ և հաւանեցոյց զպետութիւնն զի կացուսցէ զոք խնամակալ դպրոցին, որոյ իցէ իշխանութիւն հարցաքննելոյ զՄխիթարեանս Վենետկոյ. և ահա իբրև հնգետասան աւուրք են, զի զայս լուր ընկալաւ Մուրատ ի Վեննայէ:

« Զայսոսիկ չկարէր գիտել Գաղղիացին բայց ի Մուրատէ լուեալ, և ահա վկայութեամբ Մուրատին յայտնի եղեւ՝ թէ ո՞յք ոսոխք մեր իցեն, որք վեր ի վերոյ զսէր կեղծաւորեալ և ի ներքոյ մեքենայեն զամենայն չարիս, և մեք տակաւին ի վանս նոցա երթեալ նստիմք և զմիննէրս նոցա լսեմք. ո՞հ, որչափ ուրախ եմ զի ուժգին մաքառեալ՝ բացէ ի բաց հրաժարեցայ բնակելոյ ընդ նոսա: Ես Գաղղիացւոյն ետու սա պատասխանի, թէ կամի հօր Մուրատեանին իշխանութիւն բացարձակ տալ Մխիթարեանց Վենետկոյ ի տնտեսութիւն և ի տեսչութիւն դպրոցին, և զի Աւստրիացւոյն չէ իշխանութիւն խառնելոյ յայն, բայց եթէ կարի ստիպեսցէ զՄխիթարեանս, է նոցա իշխանութիւն դարձեալ բառնալոյ անտի զդպրոցն և փոխադրելոյ այսր ի Գաղղիա, և կամ յԱնգղիա, և յայնժամ զի՞նչ կարասցէ առնել Աւստրիացին: Յայս որպէս կարծեմ յանգիցեն իրքն, և ակամայ մեր ընդ ձեռն ոսոխաց բռնադատեսցէ զմեզ Աստուած առնել զարժանն: —

« Ահա քեզ լուրն զոր ետ մեզ աստ Հ. Գէորգ ի Փարիզէ ի հաստատութիւն կարծեաց մերոց որ զԳեր. Ազարեանէ, և զուշակութիւն նորա, որում և մեք հաւանեալս եմք. վասն որոյ և արդարք թղթոյ նորին պատասխանի, ծանուցանելով

զամենայն անցս և հանգամանս իրացս, որք աստ մինչև ցարդ, և զկարծիս մեր և զդիտաւորութիւնն որ ընդ այն, և յանձնելով նմա խօսել ընդ Պարոն Հիլթի Անգղիացւոյ ի Լոնտոն և գործել անդ զոր արժան է գործել. այս է դիմել առ Անգղիացւոց Տէրութիւն և խնդրել զպաշտպանութիւն նորին, ի հարկաւորիլ Միաբանութեանս փոխադրել յայլ ուրեք զդըպրոցն Մուրատեան, և եթէ չիցէ մարթ այնմ, հարցանել զհաճութիւն կամաց նորա, տալոյ մեզ տեղի ուրեք յերկիր պետութեան իւրում. զորօրինակ, ի Յոնիական կղզւոջ միում, և կամ ի Լոնտոն, ուր և Միաբանութեանս պատշաճ թուիցի, պահելով նորա միանգամայն և զազատութիւն և զանկախութիւն իւր միշտ յամենայն ուրեք. բայց ջանացարուք դուք խելամուտ առնել Պ. Հիլթին, զի դպրոցն ընդհանուր ի Պոլիս լիցի, ցուցանելով նմա զառաւելութիւն օգտին, և զայլ բազում պատճառս, զոր և առաւելորդ համարիմ յիշատակել աստ. և եթէ ըստ կարգի օրինաց և ըստ իրաւանց իշխանութեան՝ պահանջիցէ Անգղիացւոց Տէրութիւն զի դպրոցն ի պետութեան իւրում փոխադրեսցի, լիցի այն, բայց մասնաւոր դպրոցն և ոչ ընդհանուր, զոր օգտակարագոյն համարիմք ի Պոլիս հաստատել։

« Զայս առաջարկութիւն մեր գրով, և լաւագոյն ևս անձամբդ արասջիք Հիլթին, գնալով ձեր ի Լոնտոն, և զծախս նորին ի հաշիւ մեր բերեալ և յաջողութիւն գործոյն Աստուծոյ յանձն արարեալ։ » Ահա զայս գրեցի առ նա ի Փարիզ, և ըստ այսմ առ վեհն մեր այդր ի Վենետիկ, զոր և յուսամ հաղորդեալ և յանձնեալ իցէ ձեզ ցարդ ի գործ դնել ձեռամբ Հօլմին։ Յայս կարծիս էի ես միշտ, զոր և յիշիցէք արդեօք, թէ պէտք և հարկ է մեզ ընդ ապաստանաւ հզօր տէրութեան իմիք լինել, և զպաշտպանութիւն նորին յամենայն ուրեք ունել, որպէս զի կարասցուք ըստ պիտոյից և կարօտութեան ազգիս, և ըստ պաշտաման մերում գործ գործել. ի սոյն յայս կարծիս իմ օր ըստ օրէ հաստատիմ, լսելով ի բազմաց բազում ինչ, և տեսանելով աչօք իսկ իմով իրս անհաւատալիս, զոր գրով ծանուցանել ձեզ չներէ ինձ խոհեմութիւնն, այլ պարտ

է ի ժամուս լսել, և զելից ազատութեանս խորհել և խօսել ընդ այնոցիկ, որք կամին և կարեն նմին հնարս գտանել խորհրդով բանիւ և գործով ։ Վասն որոյ աղաչեմ զսիրելի Հայրութիւնդ, զի և ձեր այսի փոյթ տարեալ սատար լինիք գործոյս, խելամուտ առնելով ամենեցուն զկարծիս, և անյապաղ գրելով զառաջարկութիւնս առ Հիթ ի Լոնտոն ։ »

« Մնամ Վերապատուելի Հայրութեանդ

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Որպէս ի վերոյիշեալ նամակին որ առ Հ. Ռափայէլ յիշեցաւ, թէ գրեաց Հ. Սարգիս և առ Գեր. Սուքիաս Սոմալ վասն բանի փոխադրութեան Մ. վարժարանին ի Պօլիս ընդ պաշտպանութեամբ Անգղիացւոց Տէրութեան, առնու նա ընդ այն պատասխանի խիստ ի Գեր. Սոմալէն, որ համարի զխորհուրդ նորա այն և զկարծիս իբրև երազ զարթուցելոյ, ամենեւին խոտելի, և կործանիչ վանացս և Ռափայէլեան դպրոցին ։ Քանզի առնու Գեր. Սոմալ յայնոսիկ աւուրս և թուղթ ի Պօլսոյ, յորում ծանուցանեն նմա, թէ Գեր. Մարուշն կամի տիրապետել ամենայն դպրոցաց ուղղափառաց ազգիս ի Պօլիս, և թէ՝ Յակոբ Չէլէպին Տիւզեան հրաժեշտ տուեալ յիշխանութենէ իւրմէ, չկամի խառնիլ յիրս ազգին. վասն այնորիկ խռովի յոյժ Գեր. Սոմալ, և չփոթեալ առնէ այնպիսի պատասխանի բանից թղթոյ Հ. Սարգսի ։ Նա զի չհաճեալ և Հ. Ռափայէլի ընդ այն խորհուրդ և կարծիս Հ. Սարգսի, խորհուրդ տայ Գեր. Սոմալի չհաւանիլ բնաւ ընդ այն, մանաւանդ և հաւանեցուցանէ զնա փոխադրել զՄ. վարժարանն ի Քորֆու կղզին, ընդ որ հաւանեալ նորա խորհի ի գործ դնել զայն ։ Ահաւասիկ պատճէն թղթոյ Գեր. Սոմալի առ Հ. Սարգիս և առ Հ. Յովհաննէս ի Վիեննա ։

« Սիրելի վարդապետաց մերոց Հ. Սարգսի և Հ. Յովհաննու խնդալ.

« Զի՞ է սիրելիք ընդ վայր տապիլ տագնապիլ ձեզ, և ան-

ղեկութեանց մեալ ի Լոնտրայէ ։ Զի՞չ այգր ի քաղաքիդ դեսպան Անգղիացւոց. զի՞ ոչ երթայք առ նա և պատմէք զամենայն անցս Մ. դպրոցին զառաջինն և զվերջինդ, և առնուք ի նմանէ տեղեկութիւն թէ պաշտպանիցէ՞ արդեօք Անգղիացին և թէ ի յամառիլ Գերմանացւոյն յառաջին կարծիս իւր, փոխադրեսցի դպրոցն այլուր ոչ այսր և անդր, այլ անմիջապէս յերկիր տէրութեան իւրոյ ի Քորֆու, որ ի միջոցի Վենետկոյ և Պօլսոյ կալով՝ դիւրին լիցի մեզ և շահաւէտ ըստ բազում գլխոց, միայն թէ պաշտպանութիւնն լիցի նովին ազատութեամբ զոր երբեմն շնորհեաց մեզ առեանն Մատրաստ ըստ ազատ մատակարարութեանն, և եթէ գտցի՞ անդ ի Քորֆու յարմար տեղի վասն դպրոցի մինչեւ նոր ի հիմանց կառուսցի ։

„ Զայսոսիկ մարթիք հարցանել և առնուլ լիուլի տեղեկութիւն նպաստաւոր մեզ, և ես աստի ընդ անցանել մերոցն ընդ Քորֆու ընծայականաւ Հօլմին առից տեղեկութիւն յԱնգղիացի կուսակալէն Քորֆուոյ ։ Իսկ իրք Պօլսոյ զոր երագէք, ամենեւին խոտելի են, ոչ միայն ի պատճառս բարբարոս Պետութեանն, այլ և ի պատճառս անիմաստ խորհրդակորոյս ազգիս որ յար ի խռովութեան կայ, որպէս և զարգիս, ահա մինչեւ հրաժեշտ տալ Զէյթունոյն յիշխանապետութենէն, որում և մարթի ժամանակաւ հանել ի մէնջ զդպրոցն ողջոյն, զի տիրօղ դպրոցացն այժմ անդ Գաղատացին է, և լինիցի յետինն չար քան զառաջինն ։ Թո՛ղ զի կործանումն է այն վանացս և Ռ. դպրոցին միանգամայն, զոր ձեզ թողում խորհել ։ Մերոցն ասացի վերադարձնել յանցանելն ընդ Քորֆու. զի ահա որոշեցաւ երթն Հ. Ներսէսի ընդ Հ. Գրիգորի ի Հայաստան ընդ Զմիւռնա, և երկրորդ շոգենաւաւ գալոյ ամսոյն ելցեն ի ճանապարհ ։ Ողջ լերուք ։

„ Հայրութեան Ձերում աղօթարար

„ Ի Վենետիկ. 30 Օգոստ. 1843.

„ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ Արքեպիսկոպոս. „

Առեալ Հ. Սարգիս զպատասխանի ի Գեր. Սմաւէ, և լուեալ զայն որոշումն նորա, զարմանայ և ցաւի յոյժ, վասն որոյ առնէ պատասխանի այնմ, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Ընկալեալ զցանկալի նամակ Արհիապատիւ Տէրութեանդ, զշնորհեալն յ30 Օգոստ. ամսոյս, և լուեալ անտի զառանձին լուրն յայնցող՝ մխիթարեցաք ոչ սակաւ, թէպէտ և ընդ անյաջող լուրն արտաքին ցաւեցաք շատ, և առաւելապէս ընդ երկիւղ վեհիդ որ ընդ ախրապետութիւնն զառամելոյ ուրուք ի վերայ դպրոցաց Պոլսոյ, և ընդ հրաժեշտ յիշխանապետութենէ նախատեսս խորհրդականի առն, որ առանց նախատեսութեան և խորհրդոյ և գիտութեան իսկ Ձերոյ՝ զկողմն հակառակորդաց մերոց զօրացոյց և զիշխանութիւն իւր այսօր անպիտան կացոյց, և երկիւղ ձեր և ցաւ ընդ այս անչափ մինչեւ ի մահիճս անկանել, . . . և զխորհուրդ մեր և զկարծիսն իբրեւ երազ զարթուցելոյ, անհետեւելի խոտելի, և կործանիչ վանացս և Բ. դպրոցին համարել : . . .

Այո՛ Գեր. Տէր, ընդ այս առաւելապէս ցաւեցաք և ցաւիմք ի չներել մեզ այժմու հանգամանացս գրով խեղամուտ առնել զերկիւղն յորմէ պարտ է երկնչիլ, և զցաւն ընդ որ արժան է ցաւիլ . . . այլ ի հանգարտութիւն մտաց ձերոց այսչափ միայն ասասցուք, թէ կարծիք մեր փոխադրելոյ զՄ. դպրոցն ի Պոլիս՝ պայմանաւոր էր, եթէ բռնադատեալ ի Տէրութենէս՝ կամիցիմք փոխադրել զայն յայլ ուրեք, և եթէ պաշտպանիցէ զմեզ Անգղիացւոց պետութիւնն յամենայնուրեք, և յազատութեանս թողցէ զմեզ : Եւ եթէ ունիցիմք մեք զայսոսիկ, չգիտեմք զի՞նչ երկիւղ ի զառամեալ գաղատացւոյն և յանխնամ խորհրդակորոյս ազգէն անտի մեզ կայցէ, և կամ այլուստ, հանելոյ ի ձեռաց մերոց զդպրոցն, որոյ կալուածքն և ելամուտք նոցին արդէն յիշխանութեան մերում են, և լիցին միշտ, միայն բնակութիւնն լիցի անդ ի Պոլիս, ուր արդէն էր, որ և այրեցաւ, և զոր կամիմք շինել և ընդարձակել, այլ

միայն ծախք չինուածոյն կիսով չափ աւելի լինին, և այն ևս դարձեալ ընդ պաշտպանութեամբ Անգղիոյ Պետութեան և յիշխանութեան մերում։ Եւ ոչինչ է երկիւղն որ ի բարբարոս պետութենէ անտի. զի շատ է անուն Անգղիացւոց Տէրութեան և հզօր պաշտպանութեան նորա ի վերայ դպրոցին։

« Այս կարծիք մեր այս նախատեսութեան են, յոր և պակասեալ ցարդ չարչարիմք այսօր և չարչարիցուք միշտ, և կորուսցուք արդեօք զդպրոցն, եթէ պակասիցիմք յայն դարձեալ։ Վասն որոյ աղաչեմք զՁեզ Գեր. Տէր, մի ամենևին խոտելի զկարծիս մեր զայս համարիջիք, այլ զպատճառն նոցին և զօգուտն որ անտի անգամ մի հարցանիջիք, և քննել տալ զայն Հասարակութեանս արժանի համարիջիք. նոյնպէս և զպատճառն և զօգուտն փոխադրելոյ զդպրոցն ի Քորֆու, հայեցեալ յայժմեան հանգամանս պետութեանց Եւրոպայ և ի վիճակ ազգիս։

« Մնամ Արհիապատիւ Տէրութեան Ձերում

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Իսկ Հ. Ռափայէլ Թրենց լռէ և ոչ պատասխանէ առաջարկութեան Հ. Սարգսի Թէոդորեան, այլ միայն ըստ սովորութեան իւրում, քաղաքավար բանիւք քաջալերէ զնա, միանգամայն և թելադրէ Գեր. Սոմալին առնել նմա այնպիսի պատասխանի, զոր վերագոյն յիշեցի։ Իմացեալ զայն Հ. Սարգսի գրէ առ նա թուղթ, և գանգատի նախ ընդ լռութիւն նորա, չտալով զկարծիս իւր զփոխադրութենէ Մ. դպրոցին ի Պոլիս, և ապայ յաւելու անդ ինչ ինչ քննութիւն ի լրումն պատասխանւոյ Թղթոյ Գեր. Սոմալի, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Ցանկայաք մեք և ակն ունէաք լսել և ի Ձէնջ որոշ և անաչառ բանիւք զդատաստան կարծեաց մերոց որ զփոխադրութենէ դպրոցիս ի Պոլիս, և այն՝ ի սոփայել հարկին, և

յընդունել յԱնգղիացւոց պետութենէն զպայմանս մեր և ի հաճել Միաբանութեանս, հանդերձ բանաւոր պատճառօք, զոր թէպէտ և լուաք, այլ ոչ ի Ձէնջ ուղղակի, և ոչ ցանկացեալս պատճառօք. և այն՝ խիստ բանիւք և բացարձակ որոշմամբ, (զփոխադրել զդպրոցս ի Քորֆու.) թէպէտ և մեք արարաք համառօտ և պատշաճ պատասխանի բանիցն այնոցիկ ըստ ներելոյ վիճակին մերոյ և ըստ հանգամանաց գործոյս և և ժամանակին . . . այլ կամիմ ես ի սմին առանձինն և անուղղակի յաւելուլ զայս քննութիւնս ի լրումն նորին ։

« Հարցանեմ ձեզ արդ՝ մի՛ թէ զամս երեսուն ի բանս այս դպրոցիս ի քո՞ւն և յերազի՞, և ո՞չ յարթնութեան և արդեամբ խորհեցայ և գործեցի ։ Մի՛թէ Պօլիս հայրենիք իմ իցէ, և ազգականս անդ ունիմ վասն այնորիկ կամիմ ես զդպրոցն անդ փոխադրել. և մի՛ թէ կարճատես անձնասիրութեա՞ն իցեն խորհուրդ և կարծիք իմ զի խոտելի իցեն ամենեցուն ։ . . . Թողի՛ց հարցանել զառանձին կամաց և զբացարձակ որոշման փոխադրելոյ զդպրոցն ի Քորֆու կղզին, և նոր ի հիմանց կառուցանել զայն անդ, և որ դիւրին և շահաւէտ մեզ անդ լինելոյ ըստ ամենայն գլխոց ։

« Աղաչէ զիս սիրելի եղբայրութիւնդ, վկայութիւն ինձ ի գրոց բերեալ, և զերբեմն ձիւնաբեր ուպառնայիս կենացս յիշատակեալ, անմիջով ունել իմ զմիտս. այլ ես ասեմ ձեզ, սիրելի, ոչ հոգք և նեղութիւնք արտաքոյ որչափ կարի ծանր իցեն կարեն երբէք ընկճել զմիտս իմ զորոյ ունիմ զփորձն զամս երեսուն, այլ ի ներքոյ, որչափ և թեթև և չնչին կարծիցեն վհատեցուցանեն զմիտս իմ ։ Եւ այժմ իսկ ոչ թէ ընդ արհամարհութիւնն անտարբեր կարծեաց նեղեալ իցեմ, այլ ընդ ճանաչումն և ընդ որոշումն, և մանաւանդ ընդ ոգին, ընդ ոգին այն կարճատես անձնասիրութեան, որ տիրեալ է զանազան պատճառանօք և կերպարանօք, և որով անհնարին է միաբանութեանս յառաջադէմ լինել և ըստ վախճանին գործ գործել ։

Ահա այս է որ նեղէ զմիտս իմ և վրդովէ զմիտս և յամենայնի անհանգիստ առնէ և լքուցանէ զիս ։ Եթէ զարման

այամ տանել կարող իցէք, չամա է ինձ այն ի կենդանութիւն. իսկ եթէ ոչ, անօգուտ են խրատ և կարեկցութիւն, և աՀա վասն այսորիկ յապաղեցի ցարդ ծանուցանել ձեզ թէ զինչ արժան իցէ առնել, քանզի չկամիմ ես այսուՀետև զայամանէ ինչ գրել և խորՀել իսկ. որպէս և պատշաճ գատիցիք, այնպէս արասջիք. այն զի և Հ. Գէորգեայ մերոյ Հրաժարեալ ի յանձնարարութենէ աստի մերոյ անցանելոյ ի Լոնտոն և խօսելոյ ընդ Հիթին, վասն զանազան պատճառաց, յորոց և մի է անգիտանալ նորա զկամս վանացս այսի, առաւել քան զիս փորձ գոլով նորա քմաց նոցա... ուստի չկամիմ ես զայլ ինչ իրաց խորՀել և Հոգալ, բայց եթէ զյաջող որոշմանէ աստի խնդրոյս, և ընդ այն ևս, յուսացեալ եմ յանբաւ ողորմութիւնն Աստուծոյ և ի Հզօր պաշտպանութիւն ԱմենօրՀնեալ Կուսին, որոյ այսօր է յիշատակ ծննդեանն և Հաստատութեան Կրօնիս, և որում անսասանութիւն մաղթեալ ի Տեառնէ, և ողջոյն Համօրէն սիրելեացս մատուցեալ,

« Մնամ Վերապատուելի Հայրութեանդ

« Ի Վիեննա. 8 Սեպտ. 1843.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Առեալ Հ. Ռափայէլի Թրենց զվերոյիշեալ թուղթ Հ. Սարգսի՝ կարեւէր խոցի, և բռնադատեալ յարդարութենէն առնէ պատասխանի, խոստովանելով զճշմարտութիւն, օրինակ զայս.

« Արժանապատիւ Տեառն իմոյ և սիրեցելոյ Վ. Հ. Սարգսի Վարդապետի անձկալից ողջունիւ խնդալ.

« Զմարթիմ բացայայտել Ձեզ զկարեւէր խոցուած սրտիս յընթեռնուլ իմում զցաւագին թուղթ Ձեր գրեալ ինչանաւոր աւուր տարեկանաց մերոց և զարդարացի գանգատ: Զնոյն թուղթ գրեալ առ Ձեզ լուայ և ես երկու աւուրբք յառաջ և ցուցի ընթերցողին զզարմանս իմ և զտՀաճութիւն, ընդ որ

տարջացու ինձ և ինքն գլխովին. այլ մեզ պարտ է դրել զայն ահարեկ ընութեանն և չխոթ բարոյից ։ Աղետալի տեսիլ ինձ էր յաչս իմ տեսանել զնա ի պալթէյն հապճէպ եկեալ ի դըպրոցս, այլագունեալ և հատկեալ, մինչդեռ մեք զբաղեալ էաք ի քննութիւն ուսմանց մանկանցն. խռովութիւն այսպիսի որոգւոյն պատուղ մարթիցի ծնանել ։ Այլ Ձեզ, Վ. Հայր իմ, պարտ էր, Ներեցէք համարձակութեանս, դառնալ մօտ յամեն անցեալս և ջնջել զայն թուղթ, որ պատուիրէր զի յետ քրտամբ չափ աշխատ լինելոյ և զրեթէ ի կատար հասուցանելոյ զգործն մեծ և կարեւոր, թողջիք զամենայն և դարձջիք յետս ։ Որ ի մեծամեծ գործս հրաւիրեալ են չեն Նոցա օտարոտի դէպք այսպիսի. մանաւանդ թէ յաղթութիւն այսպիսի խոչընդակաց տայ զվեհ Նկարագիր փեսի ոգւոյն այնորիկ որ ի վերայ օգտի եղբարց Նահատակիցի ։ Աղաչեմ զՁեզ մի վհատիլ այսպիսեօք, որ անշուշտ չառնուցուն արդիւնս, զի ոչ խորհրդով մտօյ, այլ բազմացն խորհրդակցութեամբ կատարեցի ամենայն ։

« Ցանկայք լսել և զկարծատես մտածութիւն իմ ի վերայ խորհրդոց ձերոց. այլ զի՞րդ մարթիմ առանց կանխագէտ լինելոյ ձերոց պատճառաց տալ ձեզ իրաւունս կամ ժխտել. միայն՝ քանզի հրաւիրէք զիս, առացից ազատ համարձակութեամբ զոր ինչ խորհիմ և ես, այլ միշտ Ներքոյ արկեալ զայն հաւանութեան բազմաց ։ Որչափ օգտակար թուի ինձ ունել դպրոց ի Պօլիս, որչափ հնար իցէ ընդարձակ, այնչափ առ ժամս անօգուտ թուի զմեծագոյն կամ կեդրոնական դպրոց մեր հաստատել անդէն ։ Ինձ գուցէ առ իմոյ կարճմտութեան, երկիւղալի է յոյժ հեռանալ դպրոցաց մերոց ի վանաց, զի ոչ միայն առ սակաւ սակաւ մարթին օտարանալ օգտից յիրերաց, այլ և սակաւութիւն անձանց մերոց առ այն չէ բաւական գտնելոյ առ ժամս ։ Իսկ եթէ հայրն բռնադատեսցէ զմեզ փոխել ի սահմանացս, ընտրելի թուին ինձ վայրքն յորս ոչ միայն Նիւթական օգուտ ինչ ունիցիմք, այլ մանաւանդ ուր դաստիարակութիւն մեր բարգաւաճեսցէ արդեամբք և համբաւով, վասն այն Նախադասելի է ինձ Փարիզ քան զայլ քաղաքս, Նովին պայմանօքն զոր ձեր խորհեալ է արդէն, ուր

յաճախութիւն վարժապետաց և ամենակերպ հանդիսարանաց ։

« Իսկ պատճառք չընտրելոյ իմոյ զՊօլիս այս է, զի դժուարին է գտանել վարժապետս կարեւոր ուսմանց. անընդմիջաբար ընդ աչօք ազգային գոլով՝ ստուարանան թերութիւնք մեր, անհնարին նեղութիւն հասցէ մեզ ի ծնողաց մանկանցն և ի բարեկամաց նոցա. ազատութիւն մեր անկցի ընդ բազում կապանօք, և ի վեր քան զամենայն թուի թէ մերձ է կործանումն պետութեանն այնորիկ, և ամենայն փոփոխութիւն ի ժամուն բազում տագնապս ածէ ի վերայ, և առնուլ ազատութիւնս ինչ ի Տաճկէն դժուարին, զի մի ասացից անհնարին և անհաստատ ։ Իսկ յանկանիլ քաղաքին ընդ կորդաւոր պետութեամբ իւիք, փոխադրութիւն մեր յայնժամ անդր՝ նոր զարդ յաւելցու քաղաքին, գուցէ և մեզ արտօնութեան իրիք ի ժամուն լիցի պատճառ ։ Զայսոսիկ մտածութիւնս իմ համառօտիւ արկանեմ ընդ կիրթ քննութեամբ և փորձով ձերով, և մնամ

« Արժանապատիւ և Սիրելի Վերապատուեթեանդ

Անձնանուէր ծառայ

« Ի Վենետիկ. Սեպտ. 14 1843.

« Հ. ՌԱՓԱԷԼ ԹՐԵՆՑ. »

Առնէ Հ. Սարգիս Թէոդորեան պատասխանի վերոյիշեալ թղթոյ Հ. Ռափաէլի Թրենց, հաստուցանելով նախ զարժանն քաղաքավար բանից նորա, և ցուցանելով ապա զհակառակութիւն բանիցն որ ի նմին, ի կարծիս և ի տուեալ պատճառս իւր, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Թէպէտ և ասաց ոք երբեմն՝ թէ « Ընդ լռութիւն իւր ոչ երբէք զղջացաւ, իսկ ընդ խօսելն միշտ ստրջացաւ ։ » Այլ ես ասեմ, թէ ընդ համարձակախօսութիւն իմ յօգուտ հասարակաց երբէք ոչ զղջացայ. իսկ ընդ լռութիւն իմ, առ ակնա-

ծութեան կամ առ քաղաքավարութեան, միշտ սորջացոյ ։ Ջայսոսիկ ծանուցեալ՝ եկից արդ առնել պատասխանի բանից թղթոյ ձերոյ մի առ մի, և երկար, և ձանձրալի ձեզ արդեօք ։

« Ցաւ է ինձ և կրկին ցաւ, Վ. Հայր և սիրեցեալ եղբայր, նախ՝ զի խոցեալ իցէ սիրտ ձեր՝ և այն կարեւլէր, ի բանից անտի ցաւագին թղթոյ իմոյ. և երկրորդ անգամ, զի փոխանակ դարման տանելոյ ձեր ցաւոց իմոց առաջնոց, նորոգեցէք յիս զայն վէրսոսին, չիմանալով և ձեր զնպատակ բանից գրութեան իմոյ, և կամ այլազգ իմանալով զայն և ըստ այնմ դատելով ։ Եւ յիրաւի՝ քանզի գանգատն իմ, մանաւանդ ցաւն իմ անդ, ոչ ընդ խստութիւն բանից թղթոյ Վեհիս է, այլ ընդ չիմանալ նորա զնպատակ բանից գրութեան իմոյ առ նա ։

« Ոչ ապաքէն պայմանաւոր էին բանք թղթոյ միրոյ առ Հ. Գէորգ ի Փարիզ, և առ ձեզ այդր ի Վենետիկ, եթէ բանադատեալ մեր ի Տէրութեննէս, կամէաք փոխադրել զդպրոցս յայլ ուրեք, և եթէ չկարէաք պաշտպանել մեզ անդ, հարկաւորեալ մեր յայնժամ, պատշաճ և օգտակար դատէաք նախադասել զՊօլիս քան զայլ քաղաքս և տեղիս, և անդ եւս ոչ այնպէս մեծագոյն դպրոց՝ որպէս կամք էին մեզ ի Պատուխն կանգնել, և որպէս դուք կարծէք ի բանս ձեր . . . յայս ի բանից մերոց անտի է, զի զիջանէաք մ․ք Անգղիացւոց պետութեանն ունել մեզ զփոքրիկ դպրոցն ի Լոնտոն, և զի զայն ամենայն՝ թողեալ ի կամս և յընտրութիւն Հաստարակութեանս ։

« Ապա չէր իմացեալ ձեր զնպատակ բանից գրութեան մերոյ, կամ այլ ազգ իմացեալ զայն և դատեալ այնպէս. վասն որոյ և զիս առս ի գանգատ շարժեալ և ցաւեալ ձեր ընդ այն ի զուր, և ցուեցուցեալ զիս կրկին ։ Թողից վերստին յիշատակել զցաւսն որ ընդ առանձին և բացարձակ որոշումն Հաստատութեան դպրոցին, և այն միայնակ և մեծագոյն դպրոցին ի Քօրֆու կղզին . . . և թողից քննել աստ զաղետալի և զարժանի ցաւոց տեսիլն ձեր որ ընդ անհնարին և ընդունայն սադնապս խորհրդոյ և խաօխութիւնս մօսացս Վեհին մերոյ, և զորոյ անտի հարկաւ արգիւնսն վայելել մեր աստ անարժանութեամբ ։

« Թէպէտ և շնորհ յոյժ ունիմ կարևկից մտաց և օժանդակ կամաց Վ. Հօրդ և սիրելի եղբօրդ, զի մխիթարէք և քաջալերէք զիս մխիթար և քաջալեր բանիւք, յիշեցուցանելով ինձ զանուղղութիւնն ամացն անցելոց, և զուղղութիւնն ապագայ գործոցն. միանգամայն և յուշ արարեալ զնկարագիրն վսեմ և եղբայրասէր ոգւոյ քաջ Նահատակի սովորելոյ յաղթել խոչընդակացն. այլ գիտասցէ սիրելութիւնդ՝

« Զի բանք միայն չեն բաւական աստանօր,
Գործոց են պէտք արդեանց նոյին համազօր,
Եւ խորհրդոց համախոհից միշտ ընդ այն,
Եթէ ցանկայք առնուլ զդափնին յաղթութեան:
Եւ զի ոչ ոք յընկերութեանս Նահատակ
Գործ քաջութեան կարէ առնել միայնակ,
Կարօտի նա նահատակցաց բազմերամ,
Եւ նախանձորդ այնմիկ փառացն անթառամ (*):

« Ահա՛ համարձակախօս և առանց ակնածութեան պատասխանի կարևոր բանից Թղթոյ ձերոյ:

« Իսկ յաղագս մտածութեան ձերոյ ի վերայ խորհրդոյ իմոյ տալոյ ի նմին, Թէպէտ և հաստուցաւ յինէն վերագոյն ըստ միոյ և գլխաւոր մասին, Թէպէտ և կարծիք մեր և մտածութիւն ձեր ընդ այն արժէն այժմ ոչինչ, ներքոյ անկեալ նոյին միանգամայն հաւանութեան և որոշման բազմաց, այլ առ ի լրումն բովանդակ բանից Թղթոյ ձերոյ և ակնկալութեանդ արդեօք արարից պատասխանի և մնացելոց բանիցդ, յառաջ բերեալ զայն աստ մի առ մի, և զքննութիւնն իմ նոյին տալով:

« Ցանկայք լսել և զկարճատես մտածութիւն իմ ի վերայ խորհրդոց ձերոց, ասէք: Թէպէտ և սովորութիւն և հաճոյ իսկ է Ձեզ, առ քաղաքավարութեան կարճատես զմտածութիւնդ ասել, և կարճմտութեան զկարծիսդ տալ, այլ ես զայս

(*) Տաղքս այսոքիկ չեն ուստեք կոչեալ, այլ հեղինակին գրչին են ամին կամ զարտուղութիւն գրական:

(Ծանօթութիւն հեղինակին.)

ոչ տեսեմ, և լսել ևս չախորժեմ, սակայն և լուել առ քաղաքավարութեան և ակնածութեան զայդ ես ոչ կարեմ, հակառակ գոլով բանիս և սովորութեանս. վասն որոյ քննեցից զամենայն մտածութիւն ձեր անաչառ և արարից զդատաստան իմ ընդ այն համարձակ։

« Արդ՝ հակառակութիւնս բանից տեսանեմ ես ի մտածութիւն ձեր յայս, և աւասիկ ձեզ այնք։ Հեռանալ միոյ դպրոցիս ի վանացս, և հաստատիլ նորին ի Պոլիս երկիւղալից իցէ յոյժ, ասէք. իսկ ի հաստատիլ նորին ի Փարիզ, ո՞չ հեռացի այն ի վանացս, և չկայցէ՞ ինչ երկիւղ յայն։ Օտարասցին, ասէք, ողիք յիրերաց։ Ո՞չ օտարասցին այնք ի Փարիզ, ուր ամենայն ինչ զանազան է։ Վասն այն նախադասելի է ինձ, ասէք, Փարիզ քան զայլ քաղաքս, Նոյին պայմանօքն, զոր ձեր խորհեալ է արդէն։ Ուրեմն իմացեա՞լ իցէ ձեր արդէն զնպատակ բանից գրութեանս. ապա ընդէ՞ր նրաց իմն և խոտելի թուեցան ձեզ կարծիք մեր զառաջինն, և Փօրֆու կղզին ընտրելի վայրք որոշեցան։ Անյնարին նեղութիւն հասցէ մեզ ի ծնողաց մանկանցն, ասէք, յորժամ դպրոցս ի Պոլիս լիցի։ Ուրեմն չկարեմք մեք ունել դպրոց ի Պոլիս երբէք, զի ծնողք մանկանց անդ են, և կամ ի դպրոցն անդ միայն Պոլսեցի մանկունք լիցին, որոց ծնողքն միշտ անդ գտանիցին։ Ազատութիւն մեր անկցի ընդ բազում կապանօք, ասէք։ Ո՞ր ազատութիւնն և զի՞նչ կապանքն. տանէ ի տուն դատարկութեամբ շրջի՞լն, և հանդարտութեամբ կալն ի դպրոցն, պարապելով յուսումն։ Եւ ի վեր քան զամենայն թուի ինձ, ասէք, մերձ է կործանումն պետութեանն այնորիկ, և ամենայն փոփոխութիւն ի ժամուն բազում տագնապս ածէ ի վերայ։ . . . Հապա ազգ արասջիք վաղվաղակի մերոյն ի Պոլիս, զի զերծեալք յԵւրոպիա հանդերձ ազգականօքն, զի մի՛ հասցեն նոցա չարիք ի տագնապ ժամուն, յորում չկարասցեն հզօր պետութիւնք յապահովել զկեանսն։ . . . Զայսոսիկ մտածութիւնս իմ համառօտիւ արկանեմ ընդ կիրթ քննութեամբ և փորձով ձերով, ասէք։ Մասն ինչ մտածութեան ձերոյ, հակառակութիւնք բանից էին, որպէս և քննեալ ցուցի ձեզ վերագոյն. և

մտօն ինչ անոփ, երեւակայութիւնք խառն ընդ երկիւղի և յուսոյ, եթէ արկանիցէք արդեօք ընդ քննութեամբ և փորձով իմով։ Ահա ձեզ առանց քաղաքավարութեան պատասխանի բանից մտածութեան ձերոյ, և անաչառ քննութիւն ընդ այն, թէպէտ և բովանդակն բանք են և կարծիք առանձնականաց առանց ինչ հաւանութեան և հաստատութեան հասարակաց։ Այս կնքեմ զթուղթս հաստատութեամբ մեծի վարկմանս և յարգանացս առ ձեզ, և բազում ողջունիւ սիրոյ առ համօրէն սիրելիս այդր, և մնամ

« Վերապատուելի Հայրութեանդ

« ի Վեննա. 30 սեպտ. 1843.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Ի նոյն կարծիս էր, որ զփոխադրութենէ Մ. վարժարանին յայլ ուրեք, հաստատուն մնացեալ Հ. Սարգսի, և առ ընդդիմութեան ոմանց ընդ այն լռեալ՝ առնէ պատասխանի բանից թղթոյ Գեր. Սոմալի, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Ձերեսին շնորհալից նամականին Արհիապատիւ Տէրութեան ձերոյ ընկալայ ըստ իւրաքանչիւր ժամանակին, և մխիթարեցայ ընդ լուրսն որ ի նոսին։ . . .

« Զձախողակ կարծեցեալն լինէին դէպք, կարապետ արդեօք յաջողութեան գործոյս, թէ ընդունայն սուրհանդակ նմին, իմանայ Տէրդ ի բանից թղթոյ Հ. Յովհաննու. զի ես եդեալ եմ ի մտի չերկրորդել Ձեզ զյանկուցիչ բանս իշխանաց աստի, մնալով արդեանց գործոյ նոցին, ըստ իմաստուն խրատու մեր ճշմարիտ բարեկամին, մանաւանդ թէ այցելութեան Տեառն ակնունելով, ըստ երբեմն փորձառութեանս իմում . . . այս ոչ յօտար իշխանս յայսոսիկ և ոչ ի ջանս մեր սաստիկ եդեալ եմ զյոյս յաջողութեան խնդրոյս, այլ յողորմութիւնն Աստուծոյ միայն և ի հզօր պաշտպանութիւն նորին։

« Թէպէտ և ընդ դանդաղ քննութիւն խնդրոյս չունիմ ես

զքեզ սատ մեղադրել, հաւանեալս գոլով թէ ըստ բախտին իմոյ կայ ինձ արդեօք ի գործս յայս տակաւին կրել . բայց կարեմ ես ընդ այն այսչափ ինչ զանգատել, թէ զամս երեսուն յոր կամ ես ի գործս յայս դպրոցին, չտաղտկացայ ես այնչափ, որչափ ի վեց ամիսս այս վերջին ։

« *Թէպէտ և յառաջագրեալ էի լռել և ոչ զկարծիսն իմ պնդել, գիտելով սատի զանախորժութիւն լսելեացն որ ընդ այն այտի . . . այլ տեսեալ իմ օր ըստ օրէ զհանգամանս մեր սաստ, և լուեալ ի թղթոյ վեհիդ զվիճակ մերոցն այլուր, . . . բռնադատիմ ես ի պարտուցս զլռութիւն իմ լուծանել, զկարծիս ասեմ առաջին վերստին պնդել, այս է . Եթէ կանուխ և թէ անագան կարօտի միաբանութիւնս Նախահայեաց տեսութեան . և հաստատութիւն բանիս չա՛տ լիցին մեզ Նորոգ դէպքն, որք սատ ի Վեննա և որ անդ ի Զմիւռնիա ։ Զի եթէ Նախահայեաց տեսութեամբ հոգացեալ էաք մեզ զպաշտպանութիւն հզօր ուրուք Պետութեան , հակառակորդքն մեր չկարէին երբեք չարչարել զմեզ և մաշել զկեանս մեր ընդունայն . և զի եթէ փութացեալ էր մեր ունել ի Զմիւռնիա զմի ոք ի մերոց այտի, Նախանձորդն մեր չկարէր բնաւ հալածել տալ զմեզ անտի ։*

« *Ահա յայտնի մեր զանգատ չարժմանն, և ոչ մեզ յայլուստ հզօր օգնական, տարածեցին Նոքա մինչև ի խոր Հայաստան, և լիցին մեզ յամենայն ուրեք հալածիչ և սատան . Թողից ասել զպարտուցս պաշտամանն և զազգիս մերոյ զվիճակ այժմեան : . . . Բազում են ինձ բանք, Գեր. Տէր, բայց չկամիմ գրով տալ Ձեզ զամենայն, երկուցեալ՝ զի մի և այնք իբրև զառաջինն պատրազմող լսելեաց լիցին ։*

« *Մնամ միշտ*

« *Արհխապատիւ Տէրութեան Ձերում*

« *Ի Վեննա.* 21 *Դեկտ.* 1842.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Յամենայն իշխանս տանն Կայսեր Աւստրիոյ՝ առ որս զիմն

գործակալքն, միայն Օէյնէր փոխարքայն Իտալիոյ լինի որ յուսացուցանէ զնոսա, և խոստանայ օգնել նոցա ամենայն ջանիւք իւրովք, գտանելով նորա յայնմ ժամանակի ի Վիեննա, և տալով նոցա միշտ ունկնդրութիւն յարքունիսն : Եւ նորա ևս տեսեալ ապա զանհնարութիւն յաջող ելից իրացն, քանի և առ ամօթոյ չկամի այնուհետև երևիլ գործակալացն պատճառանօք. և իբրև մեկնի նա ի Վիեննայէ գնալ յԻտալիա, յուսահատին յայնժամ գործակալքն բոլորովին ընդ յաջողութիւն ելից իրացն : Վասն որոյ խորհին գնալ յետս ի Վենետիկ ի վանս, այնր գոլով և կամք Գեր. Սոմալի և Միաբանութեան, ցորչափ ի Վիեննա կայցէ փոխարքայն, կացցեն անդ և գործակալքն, յուսալով տակաւին յաջողութեան ելից իրացն, և յորժամ մեկնեսցի նա անտի, դարձցին և նոքա յետս ի վանս, յուսահատելով իսպառ ընդ յաջողութիւն գործոյն. վասն այսորիկ գրէ Հ. Սարգիս Թուղթ առ Գեր. Սոմալ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ըստ յառաջագոյն ծանուցանելոյ վեհիդ մեկնեցաւ աստի փոխարքայն Իտալիոյ ի 13 ամսոյս, և կարծեմ թէ ցարդ ժամանեալ իցէ նորա այդր, Ձեր լուեալ զայն, և ըստ Նախահայեաց տեսութեան Ձերոյ և խոհական հրամանին փութամք մեք մեկնիլ աստի. այն զի զոր ինչ պարտ էր մեզ աստ խօսել, խօսեցաք միանգամայն և երկիցս, և որոց հարկ էր զանազան գրութեամբ և հզօր փաստիւք ցուցանել զիրաւունս միաբանութեանս ցուցաք համարձակ : Ապա չմնայ մեզ այսուհետև աստ, ոչ տեղի խօսելոյ, և ոչ նիւթ գրելոյ, զի զամենայն ինչ ըստ կարգի և լիով հաստուցաք, մինչև ցասել ոմանց ի խորհրդականացն, թէ չկամին աւելի ինչ ի մէնջ լսել բանս, և այլ ինչ գրուածս ընդունել. այլ զցարդ տուեալսն քննեսցեն և տացեն զկարծիս իւրեանց, և ոչ իսկ ներկայութիւն մեր աստ փութացումն խնդրոյս կարիցէ տալ. զի ըստ օրինաց և ըստ սովորութեան սոցա պարտ է ընդ ամենայն խորհրդա-

բանս կարգաւ ընթանալ խնդրոյս և ընդ քննութեամբ ամենայն խորհրդականաց անկանիլ նորին, վասն որոյ պիտոյ բազում ժամանակ. և մինչև լինել մեր ի բերանոյ խորհրդականին Խաթէրի, որոյ կարծեօքն աւարտեցի խնդիրս, և ապա մատուցի ի քննութիւն ներքին խորհրդականաց Կայսեր. այլ թէ ե՛րբ, զկնի ամսոց, և ո՛ւր, աստ, ի Վենետիկ, և կամ ի Միլան որոշեսցի խնդիրն՝ չկարեմ ասել... և վասն այս ամենայն պատճառաց աւելորդ և վայրապար համարեալ մեր զդեգերելս աստ այլ ևս, որոշեցաք մեկնիլ աստի և երանել ի ճանապարհ յետս եօթնեկիս, և հասեալ այդր Տերամբ զկարեւոր իրացն բուռն հարկանել։

„ Մնամ Արհխապատիւ Տէրութեանդ

„ Ի Վիեննա. 20 փետր. 1844.

„ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

Եւ յամենայն պաշտօնէայս Քանչէլէր Ակլիքայի ի Վիեննա, մի միայն ոք անաչառ և կարեկից բարեկամ գտանեն գործակալքն զԱպէ Մէչութար Կանոնիկոս և դատաւոր օրինաց։ Տեսեալ նորա թէ անիրաւութիւնն ի ծայր հասեալ էր, խրատ տայ գործակալացն մի ի զուր ժամավաճառ լինել, այլ ժամ մի յառաջ դառնալ ի Վենետիկ, և զոր ինչ ունին առնել տրասցեն վաղվաղակի և լռելեայն։

Հաւանեալ գործակալացն կարեւոր խորհրդոյ նորա ելանեն ի ճանապարհ դառնան ի Վենետիկ յետս փետր. 1844, ի ձիւնաբեր եղանակի, և տան զայն ամենայն տեղեկութիւն Միաբանութեան։

ԳԼՈՒԽ Ը.

Վանական ժողով յորոշել զվիճակ Մ. վարժարանին. — Որոշումն փոխադրութեան Մ. վարժարանին ի Լոնտոն կամ ի Փարիզ. — Ընտրութիւն գործակալաց ի գործառնութիւնն յայն. — Երթ գործակալաց ի Լոնտոն և գործ նոցա անդ. — Անցանել գործակալաց ի Լոնտոնէ ի Փարիզ, և գործ նոցա անդ. — Թղթակցութիւն գործակալաց ընդ Միաբանութեան ի Վենետիկ.

Առնէ Գեր. Սուքիաս Սոմալ վանական ժողով միանգամ և երկիցս ի խորհել և որոշել թէ զինչ ունէր և պարտ էր առնել Միաբանութիւնն վասն Մ. վարժարանին: Յետ բազում խորհրդոյ և խօսակցութեան որոշէ ժողովն փոխադրել զՄ. վարժարանն ի Լոնտոն կամ ի Փարիզ, ուր կարիցէ գտանել պաշտպանութիւն ի տէրութենէ անտի, և ազատութիւն մատակարարութեան իւրոյ. վասն որոյ կարգէ զնոյն գործակալսն զՀ. Սարգիս Թէոդորեան, և զՀ. Յովհաննէս Սորկունեան ի գործադրութիւն այնորիկ:

Ելանեն գործակալքն ի ճանապարհ յամսեանն Մայիսի 1844 ամի, և ժամանեն ի Լոնտոն ի Յունիսի նորին ամի:

Բայց առ ի ծածկել Միաբանութեան զկամս և զորոշումն իւր յԱւստրիոյ Տէրութենէն, զի մի խափան ինչ լիցի նմին հնարիւք կամ բռնութեամբ, այլ պատճառ տալ ճանապարհորդութեան իւրոյն ի Լոնտոն, որպէս թէ գնան նքա անդ խօսել ընդ Յովհաննու Մուրատեան, հարցանել զնա, թէ որով իրաւամբք վիճէ նա ընդ Միաբանութեան, աւարտելով զամենայն ինչ իրաւախոհութեամբ և դաշնադրութեամբ, հանդերձ դատաստանաւ և վճռով ատենին:

Հարցանեն գործակալքն ի Լոնտոն միջնորդութեամբ բարեկամին իւրեանց Պարոն Հիթի, ի փաստաբանէն, թէ պաշտպանիցէ՞ Անգղիացւոց Տէրութիւնն Մ. վարժարանին ի փո-

խնդրել զայն միաբանութեան ի Լոնտոն, և թէ մարթ իցէ պահանջել ի Յովհաննէ Մուրատեան զվաշխ դրամագլխոյ հրիտակի դպրատանն, չպահելով նորա զպայմանս դաշնագրութեան որ ընդ միաբանութեանն:

Ասէ ցնոսա փաստաբանն, թէ Անգղիացւոց Տէրութիւնն չունի ինչ ընդդիմութիւն ի հաստատել օտարականաց յերկրի իւրում դպրատուն, բայց չկարէ նա պաշտպանել զստացուածս դպրոցին այնորիկ որք ընդ այլ Տէրութեամբ են, չզօրելով անդ իշխանութեան նորա: Իսկ վասն բանի պահանջման վաշխի դրամագլխոյն ասէ, թէ չունի միաբանութիւնն բաւական պատճառ պահանջելոյ ի Յովհաննէ Մուրատեան զայն, չվճարելով նորա յայտնապէս և ուղղակի ընդ միաբանութեան, այլ ծածուկ և անուղղակի. վասն որոյ պարտ է, ասէ, նախ խօսել ընդ նմա զայնմանէ ձեռամբ փաստաբանի, առ ի լսել ի բերանոյ նորա զհակառակութիւն իւր ընդ միաբանութեան, և ապա այնուհետև պահանջել ի նմանէ զիրաւունս զայն աղքատաց ազգին, եղծանելով նորա զպայմանն. և եթէ կամիք, ասէ, գնացեալ իւր խօսեսցի ընդ Յովհաննու Մուրատեան որ բնակի ի Փարիզ:

Երկուցեալ գործակալաց ի ծախուց անտի ատեն, թէ կարօտի այն խորհրդոյ, և այնպէս չառնուն զայն յանձն ի ժամուն: Բայց յետ քանի մի աւուրց անտի, ասէ ցնոսա փաստաբանն, թէ ունի ինքն գնալ ի Փարիզ վասն այլ գործոյ ինչ իւրոյ, հանդիպեալ ընդ Յովհաննու Մ. խօսեսցի ընդ նմա, և առցէ ինչ ի բերանոյ նորա, և ապա խորհուրդ տացէ նոցա թէ զինչ ունիցին առնել ընդ նմա: Յայսմանէ պատեհ առեալ Հ. Յովհաննու Սարկուճեան՝ ասէ, թէ բարւոք լիցի անցանել ինքեան յառաջագոյն ի Փարիզ, առ ի տեղեկանալ ի փաստաբանէն խօսակցութեան նորա որ ընդ Յովհաննու Մուրատեան, և առ ի տալ փաստաբանին կարեւոր տեղեկութիւն զխնդրոյն, որպէս զի քաջ խելամուտ լեալ նորա մի խաբեսցի ի խորամանկ բանից Յովհաննու Մ.:

Թէպէտ և պատրուակ լինի այն կարծիք Հ. Հովհաննու Սարկուճեան, անծանօթ գոլով նորա Անգղիացւոց լեզուի,

և փաստարանին Գաղղիացի լեզուի, վասն որոյ և ընդունայն երթ Նորա յառաջագոյն ի Փարիզ։ Բայց քանզի ըստ բնաւորութեան իւրում կամի նա ոչ ուրեք և ոչ յիմիք մի՛ ընդ հրամանաւ կալ ուրուք, որպէս զի ըստ քմաց իւրոց վարիցի և ծախիցէ արծաթ, վասն որոյ ջանայ միայնակ անցանել ի Փարիզ պատեհիւն այնուիկ։

Թէպէտ և իմանայ զայն Հ. Սարգիս, այլ խոհեմութեամբ չիմանալոյն առնէ և չտեսանելոյն զանպատեհ գնացս Նորա, զի մի տհաճութիւն ինչ ի մէջ իւրեանց ծագիցի։

Անցանէ Հ. Յովհաննէս ի Փարիզ առանձինն յամսեանն օգոստոսի 1844, ուր ոչ զԱնգղիացի փաստարանն տեսանէ և ոչ իսկ իմանայ թէ հանդիպեա՞լ էր նա Յովհաննու Մուրատեան, այլ ծախէ անդ արծաթ ըստ խելաց իւրոց, շրջելով աստ և անդ ի գրօսանս տեսարանաց, և փորագրել տալով անպիտան պատկեր ինչ կարծեցեալ Հայկայ, ընդ որ չհաճեալ՝ տուժէ 200 ֆրանք, որպէս և ի Լոնտոն գնելով աւելորդ ինչ, յորս լինի և ժամացոյց մի 50 լիրէ ստէրլինի, և այն ի ծածուկ։

Անցանէ և Հ. Սարգիս ի Փարիզ յամսեանն սեպտեմբերի նոյն ամի, ուր գտանէ զՀ. Յովհաննէս բնակեալ ի փողոցին Ռիվօլի, ծանր վարձիւք, յամսեան 180 ֆրանք, վասն երկուց փոքրիկ սենեկաց, 100 աստիճան բարձրութեամբ։ Պատրաստէ նա անդ և Հ. Սարգսի փոքրիկ սենեակ մի միայն 120 աստիճան բարձրութեամբ։ Սորա վաստակեալ յելանել և յիջանել երիցս և չորիցս յաւուրն՝ և տեսեալ զծանրութիւն վարձուց սենեկացն՝ առէ ցՀ. Յովհաննէս յայլ ուրեք առնել բնակութիւն, ընդ որ թէպէտ և ցուցանէ նա հաւանութիւն, այլ ոչ կամի թողուլ զիւր բնակութիւն, սակս բարեկամութեանն որ ընդ տիկնոջ տանն, ընդ որում և շրջի նա ի տեսարանս ծախիւք իւրովք։ Համբերէ Հ. Սարգիս և այնմ, երկուցեալ ի մի՛ գժտութիւն անկեալ ի մէջ իւրեանց խափան կարեւոր գործոցն լինիցի։

Թէպէտ և յուսահատ միաբանութիւնն ընդ յաջողելս իւրացն յԱւստրիոյ Տէրութենէն, չկասելով Նորա ի պահան-

ջանաց անտի խուրոյ, թէպէտ և որոշէ վանական ժողովով և հասարակաց հաւանութեամբ փոխադրել զՄ. վարժարանն ի Փարիզ, և առաքէ անդ գործակալս ի գործ դնել զայն, սակայն ի վերայ այսր ամենայնի տակաւին ի կախ թողուլ կամի զայն, մերթ հաւատալով բանից ումանց, թէ զիջանիցի Աւստրիոյ Տէրութիւնն, և մերթ տեսանելով զհակառակութիւն Հ. Ռափայէլի Թրենց որ ընդ այն :

Տեսեալ Հ. Սարգսի զանհաստատութիւն մտաց միաբանութեանն և իմացեալ զհակառակութիւն կամաց Հ. Ռափայէլի ի գործն յայն, բողոքէ ի ծածուկ առանձին թղթով առ Գեր. Սոմալ, և նորա վշտացեալ յոյժ ընդ այն՝ գրէ առ Հ. Սարգիս օրինակ զայս .

« Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի Սիբելեայ ողջոյն խանդակաթ ի Քրիստոս .

« Յոյժ բարւոք արարեալ է քո պիտակ մի ծածուկ ի գրիդ յաւելուլ, զի ահա անտի քաջ ծանուցաւ ինձ թէ յիրողութեանս յայսմիկ մարդկային կիրք յածին որ յետին սաստանումն է և կործանումն ո՛ և է հաստատնոց : Եթէ բարկութիւն մարդոյ՝ սիրելի՝ չգործէ ըստ առաքելոյն զարդարութիւնն Աստուծոյ, ապա և ոչ կողմնասիրութիւնն, նախանձն, ատելութիւնն, ամբարտաւանութիւնն, բամբասանքն և քսութիւնն որք առ հասարակ զսէրն շիջուցանեն և զերկպառակութիւն տածեն յեղբայրութեան : Աւա՜ղ աւուրցս, յորս զայսպիսիս նշմարեմ մեծաւ ցաւով սրտիս, և խիթամ յոյժ թէ մի՛ գուցէ մարգարէութիւն ուրումն հաստատեսցի ի վերայ իմ որ ասէր ցիս թէ թոյլտուութեամբ կամացն Աստուծոյ եղեւ ընտրութիւն քո յԱբբայութիւն, զի կործանեսցի յաւուրս քո Միաբանութիւնս : Զայս ո՛չ ումեք ի վեր հանեալ էի ես ցայսօր, և ահա առ վշտիս ասացի ի տեղւոջս, ինձ առաւել ի խրատ և ի զգուշութիւն :

« Յիշեմ և ես քաջ զասացեալս երբեմն ձեզ Վեննայի խորհրդականին և քաջի փաստաբանի Մեղիոլանու ի Պատաւիոն.

բայց սակայն նոքին այժմ, սա մանաւանդ գրով իւրով առ մեզ իմօտ աւուրս՝ այլ ազգ թուին խորհել. քանզի և լսեմ թէ ի Վիեննա բազումք այժմ կուսակիցք կացցեն մեր։ Նզեալ թէ և չլինիցին և հակառակ վճիռ հանցին, ահա յայնժամ լուծանին ձեռնակապք մեր և ոտնակապք առ ի ազատաքայլ ընթանալոյ յիրողութեանս մերում միաբան խորհրդով ամենեցուն մեր և համաչունչ հաւանութեամբ, և ոչ միոյ կամ երկուցն զի այսպէս կամին և ոչ կամին, որոց տացէ Տէր միտս զի մարթասցին ըստ Աստուծոյ խորհիլ ի կանգնումն և ոչ ի կործանումն ։

« Ողջ լինել ցանկամ Հայրութեան քում

« Ի Վենետիկ. 1 սեպտ. 1844.

« Խ. Ծ. ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ

« Արքեպիսկոպոս և Աբբայ. Մխ. Միաբ. »

Առնէ պատասխանի Հ. Սարգիս վերոյիշեալ թղթոյ, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Թէպէտ և յիշել յիշէ Արհիապատիւ Տէրդ զերբեմն առացեալսն մեզ Վիեննայի խորհրդականին և Մետիոլանու քաջ փաստաբանին, այլ կարծէ թէ նոքա այժմ զխորհուրդս իւրեանց փոխեալ իցեն, և զանուանս նոցին ընդ միմեանս խառնէ. սակայն ոչ այդպէս, զի գիրն այն որ առ ձեզ տուեալ այդր, է գրագրի ուրումն Իտալացւոյ որ ի Վիեննա, և զի գիրն այն գրեալ է առ բարեկամն իւր և մեր որ ի Պատաւիոն ։ Թողից ասել թէ ի գրի անդ ոչ այլ ինչ են, բայց եթէ առանձին կարծիք նորա միայն, և եթէ իցէ անդ ինչ մի մեզ նպաստաւոր, է ազգութիւնն միայնակ և զօրաւոր զինուց մերոց, այսինքն յառաջադրութիւն մեր փոխադրելոյ զդպրոցն յայլ ուրեք, եթէ բռնացի մեզ տէրութիւնդ ։ Ահա՝ այս միայն կասեցուցանէ զնա հաստատել զվճիռ իւր զառաջինն, վասն

որոյ սպասէ նա պատեհի և գիտէ զշարժումն մեր աստ և զգործս, եթէ չգործեսցուք մեք ինչ աստ և ընդունայն յետս դարձուք այդր, կատարեսցէ նա զկամս իւր անշուշտ և անհրաժեշտ ։

« Մեք այժմ քաջ խելամուտ եղաք ի հերուն հետէ, մինչ դեռ ի Վիեննա էաք, և յուսադրական բանս ի փոխարքայէն լուաք. վասն այսորիկ յամենայն թուղթս իմ որ առ Վեհդ զայս բանս յեղյեղի. « Եթէ կանուխ և թէ անագան նախահայեաց տեսութեան պէտք են միաբանութեանս ։ » Եւ վասն այսորիկ փութացոյց զմեզ կարեկիր բարեկամն մեր և քաջ խորհրդականն ժամ մի յառաջ այդր ի Վենետիկ դառնալ և զպարտս մեր և զարժանն առնել. այս է, զՄ. դպրոցն այլուր փոխադրել, և պաշտպանութեան մեր ի խնդիր լինել, թէպէտ և խելամտութիւն մեր և այնչափ գրութիւնս ոչինչ համարեցան, թէպէտ և խորհուրդ և խրատ քաջի արանց ոչ լսելի եղեն ցարդ, այլ կարծիք միայն ոմանց և յոյս ակնկալութեան զօրացան և զօրանան միշտ, մինչև սաստկասցին հնարք խորամանկութեան հակառակորդին մերոյ, և մինչև գտցէ տէրութիւնդ ժամ պատեհ կատարել զկամս բռնութեան իւրոյ ։ Դարձեալ՝ զի ոսոխն մեր Մէթեռնիկն է, զորոյ զփորձ առիք ի մօտոյ ։

« Եգեալ թէ, ասէք, չլինիցին և հակառակ վճիռ հանցին, ահա յայնժամ լուծանին ձեռնակապք մեր և ոտնակապք առ ի ազատաքայլ ընթանալոյ յիրողութեանս մերում ։ Ա՛հ Գեր. Տէր, ներեսջիք համարձակութեանս, չգիտեմ ես, ո՞րպէս դուք զայդ այդպէս կարծէք, և ոչ զընդհակառակն դորին ։ Մինթէ յերեքկնիւ կապանացն լուծանելի՞ լիցին այնք յայնժամ, և իցէ՞ մեզ այնուհետև յոյս ազատութեան ։ . . . Աւելորդ համարիմ երկրորդել Ձեզ աստ վերստին զպատճառն, զոր ի նախընթաց թուղթս մեր տուեալ եմք կրկին և երեքկին ։ Ապա չմնայ ինձ այժմ ի սմին այլ ինչ գրել, բայց եթէ զԱրհիապատիւ Տէրդ դարձեալ աղաչել, զի ժամ մի յառաջ տաջիք մեզ զհաճութիւն որոշ կամաց ձերոց և զհաւանութիւն Հասարակութեանս, զի կարող լիցուք մեք աստ զիրաւունս մեր

և զգաստութիւնս տպաւորել ։ Ահա աւուրք եօթն են այսօր զի աստ ի Փարիզ եմ, և զի պարտ էր ինձ և պատշաճ իսկ մինչև ցարդ գնալ յայց Դեսպանին տաճկաց, Ռէշիդ փաշային, սակայն դանդաղիմ և օր ի յօր թողում զայն, մնալով որոշ ինչ կամաց այտի, որպէս զի կարացից և ես որոշ ինչ պատասխանի տալ հարցման նորա, քանզի հարցանէ նա ստէպ ցՀ. Յովհաննէս և մեղադրէ զնա եւս, թէ ընդ է՞ր դանդաղի նա և չգործէ ինչ, չմատուցանէ զյանձնարարական թուղթսն որ այտի առ պաշտօնեայս տէրութեանս և զաղերսագիրն մեր առ Գաղղիացւոց արքայն. և ի չկարել նորա ասել զպատճառն, չերևի նմա աւուրս բազումս. և ահա յայսպիսի վիճակի եմք մեք աստ, և դուք այդր տակաւին ակն ունիք յաջող ելից խնդրոյս, և այն հաստատեալ յաւանձին կարծիս սոսկականաց ոմանց, և ի յոյն խառն ընդ երկիւղի ։ Վերատին ներումն համարձակ գրութեանս ի Վեհէդ խնդրեալ,

« Մնամ միշտ

« Արհիապատուութեանդ Ջերում

« Ի Փարիզ. 22 սեպտ. 1844.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Յետ ուղղելոյ Հ. Սարգսի զվերոյիշեալ թուղթ իւր ի Վենետիկ առ Գեր. Սոմալ, գտանէ ի նմանէ թուղթ, յորում արդարացուցանի անհաստատութիւն մտաց միաբանութեան, և հակառակութիւն կամաց Հ. Ռափայէլի ոչ վնասակար դատի, և առաջին խորհուրդ և որոշումն հասարակաց յայլ կերպարանս փոխի, և որ ունի օրինակ զայս.

« Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի սիրելւոյ ողջոյն խանդակաթ ի Քրիստոս.

« Որպէս յամենայնի խնամք վերնական տեսչութեան տնօրինեն զկրս Միաբանութեանս, և զանազանութիւն կարծեաց ազատ յանձնակամ յամառութենէ և տենչողաց բարւոյն հասարակաց, ոչ միայն չէ ինչ վնասակար այլ և ապահովագոյն

յամենայն մնասակարայ տանէ զՄխիթարնութիւնս, նոյն և տատանօր յայտնապէս ցուցաւ ։ Չի ուր յառաջագոյն ոմանց ի մէնջ, և ինձ խսկ գլխովին, որպէս և կանխեցի գրել առ ձեզ, ոչ հաճոյ թուէր և օրինաւոր ինչ՝ փոխադրել այժմէն զՄ. վարժարանն այլուր վասն վտանգի զայրացման պետութեանս որ ի տեսաներն զմեզ խուսեալս ի ձեռանէ իւրմէ մինչ-չեւ տուեալ նորա վճիռ ինչ ընդդէմ իրաւանց մերոց կարէ ի մեղս գրել մեզ զայն և բանանալ ի վերայ մեր յայլ իրս. նո-քին ինքեանք այժմ ի լսել ի ձէնջ զրանաւոր պատճառս՝ միա-բան ընդ այլոն ամենեսին հաճեալ հաւանեցան ընդ խոհական առաջարկութիւնն հիմնելոյ ի Գաղղիա ոչ զվարժարանն Մու-րատեան, այլ երկրորդ իմն նմին նպատամատոյց, որպէս այն որ ի Պօլիս ։

« Այս առաջարկութիւն ձեր ազատ թուեցաւ և մեզ յամե-նայն վտանգէ. զի եթէ յաջողեսցին սատ իրք մեր, և Պետու-թիւնս կատարեսցէ զխոստումն իւր, որով յուսացուցանէ ազատ զմեզ կացուցանել ի պահանջմանցն, տակաւին պիտոյ լիցի մեզ օժանդակ վարժոցդ ընդդէմ ամենայն ապառնի դաւադրութեանց ։ . . . Իսկ եթէ անյաջող եկեսցէ վճիռ, յայն-ժամ աւետարանական խորագիտութիւն մեր պակեսցի, և կարասցուք տալ պատասխանի Պետութեանս, վաղ իսկ ըստ իշխանութեանն տուելոյ մեզ ի կտակէն յայլ ի մի կողմն Եւ-րոպիոյ ուր հաճոյ թուիցի մեզ հաստատել զվարժարանն. և ահա մեք ի Գաղղիա փոխադրեցաք, և Գաղղիա յայնժամ լիցի մեզ պաշտպան ընդդէմ Արծւոյն ։ Բայց զխտաւորութիւնս այս մեզ և ձեզ լիցի գիտելի, և դուք խոսեսջիք այդր, ըստ խորհըր-դոյ քաջահմուտ բարեկամացդ զամենայն հանդամանաց և զարտօնութեանց վարժարանիդ, և զազատութենէն մերմէ յամենայնի, և սկսջիք խնդրել տեղի չափաւոր իմն վարժարանի ըստ պատշաճի զխտաւորութեանս մերոյ ։

« Իսկ.ընդ Յովհաննու Մ. մի՛ եւս ամենեւին լիցին մեզ իրք, զի նորա ջանք այն թուի՝ պարանել զմեզ անդրէն ի դատ ։ . . . Իմ առանձնական կարծիք է, թէ ցորչափ կենդանի կայ Մուրատդ, չգտցէ միաբանութիւնս երբէք հանգիստ. զի ժա-

ռանդ է նա և կատակատար, որպէս ինքնին պարծի առ օտարս, որք չեն գիտակք անցիցն անցելոց ի Մատրաս, զի զրկեսցեն զնա յիրաւանց որպէս ատեանն Անգղիոյ ։ Սմին իրի դարձեալ երկրորդեմ ասել, թէ լաւ է մեզ զպատմութիւն անցիցն գրով հրատարակել առ խափանելոյ զնախապաշարումն ագխտաց (*) ։

« Ողջ ցանկամ լինել Հայրութեան քում

« Ի Վենետիկ. 15 դեկտ. 1844.

« Խ. Ծ. ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

« Արքի եպիսկոպոս և Աբբայ. »

Առնէ պատասխանի Հ. Սարգիս վերոյիշեալ թղթոյ Գեր. Սոմալի, առանց ասելոյ ինչ զկարծեցեալ առաջարկութենէ իւրեանց և զհաւանութենէ Միաբանութեան ընդ այն, թողլով զայն յայլում պատեհութեան, առ ի չտալ տեղի վերստին հակառակութեան, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Յետ տալոյ զնախընթաց թուղթս որ ի 22 սեպտ. եհաս անդէն ի նմին աւուր ցանկալի նամակ Վեհիդ, և մխիթարեաց և քաջալերեաց զմեզ ոչ սակաւ, վասն որոյ և սկսաք այնուհետեւ այսր և անդր դիմել, առ ի գտանել քաջ խորհրդական և առաջնորդ մեզ ի գործս մեծ և կարեւոր ։ Բայց ըստ բախտին մերոյ, մանաւանդ թէ ըստ սովորական մեր դանդաղ շարժման, չկարացաք գտանել զմեծամեծս ի քաղաքիս, ընդ որոց պէտք էին մեզ խօսել և որոշել ինչ, հանդստեան գոլով նոցա այժմ միջօցս և զբօսանաց ի գիւղագնացութեան. վասն որոյ կարօտիմք մեք դարձեալ համբերութեան, զի պարտիմք սպասել մինչեւ դարձցին և ժողովեսցին նոքա աստ ։

« Թէպէտ և մեք յայսմ միջոցի ոչ դատարկ և անգործ

(*) Զայս ահաւասիկ առնէ այժմ Հ. Սարգիս վարդապետ, առ բառնալոյ ի սրտէ զնախապաշարումն ամենայն ագխտաց առ հասարակ ։

(Ծանօթութիւն հեղինակին ։)

կամք. քանզի հարցանեմք խորհուրդ և առնումք տեղեկութիւն զընթացից գործոյս յաշխարհագէտ անձանց ոմանց, որպէս և լուաք զայսօրիկ խրատ յերևելւոյ միոյ որ ի Նոցանէ, թէ չէ պարտ մեզ ընաւ խօսել աստ սոցա զանիրաւ պահանջանաց և զբռնադատութենէն Աւստրիոյ Պետութեան. այլ թէ այս ինչ անուն բարերար յազգէս թողեալ է ի կտակի իւրում գումար ինչ արծաթոյ, զի զետին գնեսցի յԵւրոպա, յոր կողմն պատշաճ դատիցի Միաբանութիւնս, և եկամուտ նորին զանազան գիտութիւն և արուեստ ուսանիցին որբ և աղքատ մանկունք յազգէս Հայոց յարևելից. և զի տուեալ է ի կտակագրէն բացարձակ իշխանութիւն միաբանութեանս կառուցանելոյ և մատակարարելոյ զդպրոց իւր։

« Արդ՝ Միաբանութիւնս պատշաճագոյն տեղի վասն այսր դպրատանն ի Գաղղիա տեսանէ, ուր ամենայն գիտութիւնք և արուեստք ծաղկեալ են յոյժ, և որոյ Պետութիւնն պաշտպան և բարերար եղեալ է և է միշտ արևելեան քրիստոնէից, և մանաւորաբար ուղղափառաց ազգիս. վասն որոյ խնդրէ ի Պետութենէդ տալ նմա հրաման հաստատելոյ զդպրոցս ի մայրաքաղաքիդ, և օժանդակել նմին ի յառաջադիմութիւն կարօտելոյ ազգիս. զայս, ասաց, և ոչ այլ ինչ պարտ է ձեզ խօսել և խնդրել ի Պետութենէս, առանց ինչ տրտունջ զՏէրութենէ Աւստրիոյ ցուցանելոյ, զի մի խնդիր ձեր ընդ քննութեամբ անկեալ և ախնածութիւն ինչ ի տէրութենէ անտի արարեալ դժուարասցի և կամ յապաղեսցի կատարումն նորին։ Զի եթէ ընտրութեամբ ձերով և ազատ կամօքդ խնդրէք դուք տեղի ի պետութենէս, դիւրաւ և փութով կատարեսցի խնդիր ձեր, միանգամայն և կարէք խնդրել ինչ ինչ առանձնաշնորհութիւն, և զի յետ ընդունելութեան սոցա և հաստատութեան ձեր աստ, եթէ բռնասցի ձեզ այնուհետև իւիք ինչ Աւստրիոյ տէրութիւնն, յայնժամ հարկաւ պաշտպանեսցեն սոքա զիրաւունս ձեր. բայց պարտ է ձեզ, ասաց, յանուն Բարերարին զդպրոցն կոչել. որպէս զի ի լինել ինչ ընդդիմութեան յԱւստրիոյ Տէրութենէն զկալուածոց նորին, կարասցեն սոքա իրաւամբք պաշտպանել նմին. ապա թէ ոչ՝

ասիցեն ոքա, թէ դպրոցս այս որ աստ ի Փարիզ յանուն միաբանութեան է, և զայսմանէ չիք ինչ խնդիր, այլ զդպրոցէն Մուրատեան որ ի Պատաւիոն, և յոր չէ պարտ մեզ խառնիլ, գոլով այնր ի սահմանս Աւստրիոյ Պետութեան ։

« Այս խրատ կարևոր և նախահայեաց տեսութիւն աշխարհագէտ առնս այսորիկ խոհական թուեցան մեզ, և համաձայն հրահանգաց վեհիդ տուելոց գրով մեզ աստ ։

« Այժմիկ կարծեմք թէ չէ խոհեմութիւն վերստին մանկունս ի Պօլսոյ ի Պատաւիոն ածել, զի յաւելումք մեք մեզէն զկապանս ոտից և ձեռաց մերոց, և քաջալերեմք զտէրութիւնդ ի յոյս բռնութեան կամաց իւրոց ։ Վասն որոյ աղաչեմք զՁեզ, մի այդպիսի ինչ խորհեսջիք ի ժամուս, մինչև գտջիք յաջողակ վճիռ ի Վեննայէ. ապա թէ ոչ՝ ամենայն արարք մեր աստ մինչև ցարդ առանց մտածութեան և ընդունայն համարիցին ի տէրութենէդ և յայլոց առ հասարակ. զի որպէս զաղարումն չինուածոյ դպրատան, նոյնպէս և արձակումն մանկանց նորին՝ նշանք են ազատութեան մերոյ և իշխանութեանս որ ի վերայ դպրոցին ։

« Իսկ պաշտպանութիւնն որ ի Դրանէն, որչափ և տկար կարծիցի, և մանաւանդ ճանապարհորդութիւն մեր ի կողմանս, բաւական կապանք են բռնութեան զորա, զոր և չէ պարտ թուլացուցանել ։ Սակայն պարտ և հարկ է մեզ զթիւ մանկանց Ռափայէլեան դպրոցին աճեցուցանել, զորոց և հարցանելով հարցին ցմեզ ոմանք ի Լոնտոն, և մեք ասացաք նոցա, թէ թիւ նոցին հասանէն մինչև ցերեսուն ։ Ուստի խնդրեմք փութասջիք հոգ տանել այսմ, զի մի յաւելցին մեզ ցաւք և անտի ։

« Մնամ

« Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 27 Սեպտ. 1844.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Ըստ վերոյիշեալ խորհրդոյ բարեկամին սկսանին գործա-

կայքն գործել ի Փարիզ, և նախ զխմեն առ Դեսպանն Տաճկաց Ռէշխտ փաշայ և խնդրեն ի նմանէ նպաստել իւրեանց ի խնդիրն յայն, խօսել ընդ ոստիկանի արտաքին իրաց, Կիզօի վասն խնդրոյն այնորիկ ։ Յանձն առնու զայն Ռէշխտ փաշայ յօժարութեամբ և խօսի ընդ Թարգմանն Տէկուանժ, զի առաջնորդեսցէ նոցա առ Ոստիկանն արտաքին իրաց տէրութեան, և խնդրեսցէ ի կողմանէ իւրմէ կատարել զհայցուած նոցա, և որչափ և հնար իցէ փութով ։

Առաջնորդէ Տէկուանժ գործակալացն, և ածէ զնոսա ի պալատն Ոստիկանի արտաքին գործոց տէրութեան յանդիման առնել զնոսա Քարտուղարի նորին Տէսաժի, որ քաղաքավարութեամբ ընդունի զգործակալսն, և քաղցրութեամբ լսէ բանից հայցուածոյ նոցա, և խորհուրդ տայ նոցա զի գրով խնդրեսցեն նոքա զայն յՈստիկանէն արտաքին գործոց Տէրութեան ի Կիզօէ ։

Մինչ դեռ պատրաստեն գործակալք զաղերսագիր հայցուածոյ իւրեանց տալ առ Ոստիկանն Կիզօ, գտանեն գիր ի Վենետկոյ ի Գեր. Սոմալէ, որ տայ նոցա ինչ ինչ լուր հայեցեալ ի Մ. և Ռ. վարժարանս միանգամայն, և որ ունի օրինակ զայս.

“ Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի սիրելւոյ ողջոյն խանդակաթ ի Քրիստոս.

“ Գրեալն ձեր ի 27 Սեպտ. չունէր ինչ պէտս պատասխանւոյ, զի խմում կանուխ գրեցելոյս էր պատասխանի, և սպասելի զի դարձցին անդրէն ի Փարիզ գնացեալքն ի զբօսանս և ի Լոնտոն ։ Արդ դարձան, մնամք լսել ի ձէնջ զուրախականս յաղագս գործոց մերոց այդր. քանզի Գերմանացին աստ տակաւին ննջէ, բայց ոչ ի խոր, զի մերթ ընդ մերթ տեղեկութիւնս խնդրէ նորս, զարգիս և զՌ. վարժարանէն, որպէս թէ առ ի դիւրաւ փախճան տալոյ Մուրատեանին գործողութեան, որպէս ասէ ի գրին ։

“ Զայս համարիմ թէ վաղ հաղորդեալ է ձեզ առտի Հ. Ռափայէլ կամ այլ ոք ։

.. Պատասխանեցաւ այն յինէն համիրճ բանիւ, որ ինչ ար-

ժան էր, մեամք արդ գիտել թէ զի՞նչ ծնանիցի ։ Լուայ ես յայտնապէս աւուրս ի Վաշխալովէ թէ ոմն հայազգի Խզուգուց անուն ի Վեննայէ գրէ առ Մակիտարդ Վաշխալովի, զի աղերսագիր մի արասցէն առ Կայսրն վասն Սամուէլեան հրխակին, առ ի մասն ինչ գտանել վասն ազգային մանկուոյ կողմանցն. քանզի յօգուտ համօրէն հայազգի մանկտւոյն թողեալ է այն, և Մխիթարեանք Վեննետկւոյ անձանց սեփականել զայն, առնեն և ոչինչ յօգուտ ազգիս ։

« Ողջ լինել ցանկամ

« Հայրութեան քում

« Խ. Ծ. ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ.

« Արքեպիսկոպոս և Աբբայ Մխի. »

Թէպէտ և պատրաստեն գործակալքն զգրով հայցուած իւրեանց մատուցանել առ Ոստիկան արտաքին գործոց, Կիզօ, բայց դանդաղին մատուցանել նմա զայն, և պատճառ դանդաղելոյն տեսանի աչա ի թուղթն նոցա առ Գեր. Սոմալ որ ունի օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Թէպէտ և ծանուցաք մեք վեհիդ յելս Սեպտ. թէ հաճութեամբ և հրամանաւ Ձերով արարաք մեք զառաջին քայլ ընթացից գործոյս, ծանօթանալով մեր Տէսամի, Քարտուղարի Ոստիկանին արտաքին գործոց պետութեանս, և թէ խնդրեաց նա ի մէնջ գրով առնել զհայցուած մեր, և թէ զհետ նմբ պատրաստել զայն, և մնալ դարձին Կիզօի ի Լոնտոնէ մատուցանել նմա զայն. և թէպէտ պատրաստեցաք մեք զայն ըստ ժամանակին, զորոյ զօրինակն տուաք այգր խոկոյն ի գիտութիւն ձեզ և միաբանութեանս ։

« Թէպէտ և դարձաւ Կիզօն ի Լոնտրայէ աստ ի Փարիզ, և յորդորեցին զմեզ բարեկամք մեր մատուցանել նմա զհայցուած մեր զայն, այլ դանդաղեցաք և յապաղեցաք մեք առնել զայն, տալով նոցա զանազան պատճառս, բայց միայնակ

պատճառ յապաղելոյ մեր զայն այս էր ։ Քանզի լուեալ մեր այտի յայսոսիկ աւուրս, թէ խնդրի ի Տէրութենէ Աւստրիոյ տեղեկութիւն և զՌափաէլեան դպրոցէն, և թէ ոմանք այդր յեղբարցս զնպատակ խնդրելոյն այնորիկ ի բարւոք միտս առեալ ակն ունին յաջող վճռոյ անտի վասն Մուրատեան դպրոցին. և այս բարւոք մտաց ակնկալութիւնն հաստատի առաւել եւս, հաւատալով նոցա բարեմիտ բանից ազնուականաց ոմանց ի քաղաքիդ, ի հանդիպել նոցա զճանապարհայն և յողջունելն զմիմեանս ։

« Թէպէտ և մեք աստ զընդհանրականն կարծէաք և կարծեմք, ճանաչելով քաջ և փորձ իսկ գոլով զնացից Աւստրիոյ տէրութեան, և հաւատացեալ ներքին և քաջ խորհրդականին և կարեկից բարեկամին մերոյ որ ի Վիեննա, և որ խրատ ետ մեզ կարեկցութեամբ և փութացոյց զմեզ ժամ մի յառաջ այդր դառնալ և զհոգս մեր առնել վճարեալ ասելով որ ի նոյանէ չարութիւն. նոյնպէս և խրատու քաջածանօթ առն, փաստանին որ ի Մեդիոլան, և որ զնոյն բանն հաստատէր և փութացուցանէր զմեզ զերծանիլ ի ճիրանէ Արծւոյն և պատսպարիլ այլուր, ի Փարիզ կամ ի Լոնտոն ։

« Սակայն ի վերայ այսր ամենայնի, և դրէ թէ ընդդէմ իսկ ճանաչման և փորձոյ մերում, յապաղէաք մեք և յօրէ օր թողուաք զմատուցումն գրով հայցուածոյ մերոյ առ ոստիկանն, որպէս զի մի՛ տեղի տայցուք մեք կարծեաց և քննութեան ոմանց ի մէնջ այտի, թէ գոյ յոյս ակնկալութեան յաջող վճռոյ ի Վիեննայէ, և թէ ի զուր թողաք մեք զՎիեննա, և վասն միայնակ ցանկութեան մերոյ այլուր դիմեցաք. և զայս բարի կարծիս նոցա և զխիստ քննութիւն ականջօվք մերովք լուաք, մինչդեռ այդր էաք, և աստ ի գրութենէ այլոց իմացաք ։ Թողումք ասել և զբանիւ և զգրով ազդարարութիւն ուրումն այտի աստ և անդ, գուշակելով զնեղութիւն և զխնամ որք հասանելոց են Միաբանութեանս յԱւստրիոյ Տէրութենէն, սակս յանդգնութեան մերոյ, կամելոյ փոխադրել զՄ· դպրոցն այսր ի Փարիզ, այլովքն հանդերձ ։ . . .

« Բայց իբրև տեսաք մեք զնշանն հակառակ կարծեցեալ

բարի ակնկալութեան մերոցն այդր , և տեղեկացաք աստի և անտի զպատրաստութիւն և զհաւանական ակնկալութիւն վրէժխնդրութեան հակառակորդաց մերոց , յայնժամ հարկաւորեալ մեր մատուցաք զգրով հայցուածն ոստիկանին , Կիզօի. քանզի լուաք մեք զփոփոխութիւնս պաշտօնէից Դրանն ի Պօլիս, ի Վիեննա, և ի Լօնտրա, բարեկամաց մերոց և պաշտպանողաց ի բռնութենէ Աւստրիոյ. և զի գտաք մեք ի Լօնտրայէ, միջնորդութեամբ բարեկամին մերոյ անդ , գրուածս պատրաստեալ ի Յովհաննէ Մուրատեան , կասկածելով նորա թէ դատ ունիմք մեք վարել ընդ նմա անդ. սակայն ի գրուածս նորին անդ գտանի և թղթակցութիւն ընդ Դեսպանին Աւստրիոյ, ի Փարիզ , և յորս կոյ յոյս ակնկալութեան հակառակորդին մերոյ հասանել վախճանին իւրում ։

“ Ահա այսոքիկ հակառակ նշանք բարեմիտ ակնկալութեան մերոցն այդր , և ահա յետ տեսանելոյ և իմանալոյ մեր զայս ամենայն, հարկաւորեցաք մեք մատուցանել զգիր հայցուածոյ մերոյ ոստիկանին արտաքին իրաց պետութեանս, ի 12 դեկտեմբերիս , և սպասեցաք աւուրս ինչ իմանալ զհաճութիւն կամաց նորա ընդ հայցուածն մեր այն. և ապա իմացաք զի հաճի նա ընդ այն , և խորհի ի կարգի դնել զայն , և ապա գրով տալ մեզ պատասխանի ։

“ Ահա այս են Գեր. Տէր , պատճառք դանդաղութեան մերոյ ի գործս, և երկար լռութեանս չունելով մեր ցարդ ինչ գրել և ծանուցանել Վեհիդ , բայց լիցի մեզ այն այսուհետեւ, յորժամ առցուք պատասխանի խնդրոյ մերոյ յոստիկանէն արտաքին իրաց պետութեանս ։

“ Ողջունեալ զհամօրէն եղբարս , մնամք

“ Արհիապատիւ Տէրութեան Ձերում ,

“ Ի Փարիզ . 24 դեկտ. 1844.

Խ. Ծառայք

“ Հ. Ս. ԹԷՈԴՈՐԵԱՆ . Հ. Յ. ՍՈՐԿՈՒՃԵԱՆ . ”

ԳԼՈՒԽ Թ.

Աղերսագիր գործակալաց Միաբանութեան առ Ոստիկան արտաքին գործոց պետութեան Գաղղիացւոց . — Կարեւոր թղթակցութիւն գործակալաց Միաբանութեան ընդ Գերապայծառ Սուքիաս Սոմալի, և նորա ընդ նոսա . — Առանձնագրութիւն ինչ ի մէջ Գեր. Սոմալի և ի մէջ Հ. Սարգսի Թէոդորեան .

ՊԱՏՃԷՆ ԱՂԵՐՍԱԳՐՈՅՆ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ ԱՌ ՈՍՏԻԿԱՆՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԱՂՂԻԱՑԻՈՑ

Առ Ոստիկան արտաքին գործոց .

« *Մեծապատիւ Ոստիկան .*

« *Ներքոյ գրեալ գործակալք Գեր. Սուքիասայ Սոմալեանի Արքեպիսկոպոսի Սիւնեաց ընդհանրական Աբբայի և Առաջնորդի Միաբանութեան միանձանց Հայոց Վենետկոյ, պատիւ անձանց համարին առաջի առնել Ձերումդ Վսեմութեան զառաջիկայս .*

« *Յամին 1701 հիմնեցաւ յԱրեւելս Միաբանութիւն Հայոց Մխիթարեան վանական և ազգասէր խորհրդով ծաւալելոյ յաշխարհին զշահս օգտից ուսման : Այս ընկերութիւն կազմեալ յարանց նշանաւորաց հմտութեամբ և վաստակօք, յառաջադէմ զարգացաւ ի սակաւ ժամանակի և անդէն իսկ յամին 1717 հաստատեցան Մխիթարեան միանձունք ի Վենետիկ յուսումնական երկրին Իտալիոյ, ուր երթեալ էին խնդրել յԵւրոպական քաղաքակրթութենէ զհանգիստն և զանդորրութիւն զոր չէր գտեալ նոցա յԱրեւելս :*

« Արդ՝ ընդ հովանեաւ լուսաւոր Թոյլտուութեան Պետութեանն ոչ յայլ ինչ պարապէին, բայց ի ժամանել աղնիւ արգասեացն որում ցանկային, այն իսկ է, բարոյական դաստիարակութեան իւրեանց աշխարհին, և մեծաւ եռանդեամբ ի նոյն փասապէին ի Հայ լեզու թարգմանելով զպիտանի գրուածս որ զգիտութեանց և զարուեստից ։

« Թէպէտ և յօտար երկրի հաստատեալք, և զօդիւ երախտագիտութեան կապեալք ընդ Պետութեանն Վենետկոյ, սակայն ոչ մոռացան երբէք Մխիթարեանք զծագումն իւրեանց, այլ համարեցան յաչս անձանց և օտարաց հպատակ Օսմանեան Պետութեան. և ցանգ զաշակերտս իւրեանց ընտրեցին յազգակցացն իւրեանց հպատակելոց Օսմանեան Պետութեան, և օգնականութեամբ և առատաձեռնութեամբ Տաճկաստանի և եթ կարացին կալ յակատանի ։

« Մի միայն և անփոփոխ կէտ նպատակի միաբանութեանն լեալ էր բարոյական բարեկարգութիւն աշխարհին Հայոց, և ի նոյն աշխատ եղեւ ամենայն ջանիւք, առանց խառնելոյ ամենեւին ի դէպս քաղաքականս որ պատահեցին առաջի աչաց իւրոց ։ Այսու զգօն գնացիւք, յորմէ ո՛չ երբէք խոտորեցաւ, արժանի եղեւ նա պաշտպանութեան ամենայն Տէրութեանց որ յաջորդեցին իրերաց ի տեսչութեան գաւառանցն Վենետկոյ, և այսու խոհական անկողմնակցութեամբ արժանի գտաւ պատուոյն, որով կայսրն Գաղղիացւոց Նաբոլէոն Պոնափարթ ի բառնալ անդ իւրում զկրօնաւորական միաբանութիւնս Վենետկոյ, կամեցաւ առանձին փձռով յապահովլի կացուցանել իւրով յաղթական ձեռամբն զգոյութիւն Միաբանութեան Մխիթարեանց ։

« Դիպուած ինչ անակնկալ ի վերայ հասեալ յետ ամաց ինչ, նոր իմն զօրութիւն ազդեաց ի գործս նոցա (*) ։

(*) Դիպուածն և բարեպատեհ զիպուածն էր հաստատութիւն երկուց ազգային վարժարանաց, Ռափայէլեան և Մուրատեան. այլ երանի՛ թէ Մխիթարեան միաբանութիւն ըստ գիտաւորութեան հանդուցեալ բարերարացն ի գործ եդեալ էր զայն

Աւա՜ղ բախտին Հայոց, սակս տգիտութեան Առաջնորդաց իւրոց . . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

« Ի 20 ապրիլի 1816 ամին մեռանէր ի Մադրաս փառաւորեալ ոմն հայկազն, Պարոն Սամուէլ Մկրտիչ Մուրատեան, ծնեալ յՆւղոլֆա, որոյ կամեցեալ գործակից լինել մարդասիրական փառաւոր Մխիթարեանց, եթող ի ձեռս նոցա կտակաւն գրեցելով ի 27 մայիսի 1815 ամին, գումար ինչ դրամոյ ոչ փոքր, որով կամէր զի կանգնեսցի վարժարան մի, և ի նմին դաստիարակեսցին որբ և աղքատ մանկունք ազգին Հայոց: Պարոն Մուրատ հրահանգեալ էր առ ոտս միոյ ուրումն ի միանձանց Մխիթարեանց, և ի նմանէ ուսեալ գիտէր զօգուտն մեծամեծս, և զանչուհասէր և զեռանդուն ջանս Միաբանութեանս: Եւ առ ի գլուխ հանելոյ զազնուական խորհուրդս մտացն ուղեւորեցաւ ի վանս Հայոց ի Վենետիկ, և առաւել եւս հաստատեալ ի կարծիսն, որ զնոցանէ, կամեցաւ յանձն առնել նոցա զկատարումն վեհանձնական առաջարկութեանց իւրոց:

« Պարոն Սամուէլ Մկրտիչ Մուրատեան պատուիրեաց Մխիթարեանց, զի հրիտակաւն իւրով գնեսցին կալուածք գետնոյ՝ յորում կողման Եւրոպայ և պատշաճ համարիցին, և ետ նոցա իշխանութիւն ընդարձակ յոյժ, ի սահմանել զտեղի վարժարանին որ ի պէտս հրահանգաց հայկազն մանկտւոյն: Ետ նոցա և իշխանութիւն հրահանգելոյ և տնտեսելոյ զվարժարանն, առանց ներքոյ արկանելոյ զնոսա քննութեանց և համարատուութեանց:

« Յետ հնգետասանամեայ աշխատութեանց և վիճից կարաց միաբանութիւնն արդարադատ վճռով գերագոյն Ատենին Մադրասայ ի ձեռս բերել զհրիտակն թողեալ վասն դպրոցին որբ և աղքատ մանկանց ազգին Հայոց. և ըստ տենչանաց կտակագրին գնեաց այնու կալուածս ի գաւառս Վենետկոյ, և ինքնին մատակարարեաց զնոսին իբրեւ հրիտակակատար ազատ և ինքնիշխան, իբրեւ հպատակ Օսմանեան Տէրութեան, ընդ պաշտպանութեամբ օրինաց պետութեան տեղւոյն. և ապա պահելով միշտ զանթերի իւր ազատութիւն գործոյ, հաստատեաց առ ժամն ի Պատաւիոն զվարժարանն հիմնեալ առ առաձեռնութեամբ Պարոն Սամուէլի Մուրատեան,

և կանոնաւորեաց զմատակարարութիւն և զհրահանգս Նորին ինքնիշխան ազատութեամբ, առանց բնաւ դնելոյ Նմին զկապանս անյեղլի կանոնաց ։

« Ցայս հանգամանս գտանին արդ իրքն ։

« Իսկ զորդիս իղձ լինի Մխիթարեան միաբանութեան փոխադրել ի Գաղղիա զվարժարանն Պատաւինի և հաստատել ի Փարիզ ։ Եւ բազմատիկ են շահք օգտից որ դըր-դեն զսա ի Նոյն ։ Կեդրոն է Փարիզ, յորմէ ճառագայթէ լոյս գիտութեան և քաղաքական կրթութեան ։ Աստանօր գաղղիական բարբառ որ այնչափ տարածեալ է յաւուրս մեր, զի անհրաժեշտ հարկաւ պիտանի է ամենեցուն, անխառն է յամենայն օտարոտի գրուցաց ։ Աստանօր փայլեն և ամենայն հանճարք գերագոյնք, և գերահռչակ մատենագիրք և ուսումնականք դարուս մերոյ, և Մխիթարեանք ախորժ հաճութեամբ վկայեն պատուականութեան Նոցին, թարգմանելով զընտիր ընտիր մատեանս Նոցին, զորս և ծաւալեն իբրև զսերմանիս բարեբերս ընդ ամենայն կողմանս Հայաստանի ։

« Գիտակ իսկ է Միաբանութիւնն, զի ի սիրտս ազգին Հայոց քաղցր հնչէ միշտ անունն Գաղղիոյ, և ազգովին յարեալ է ի սէր Նորին ։ Գիտակ իսկ է, եթէ քանի վեհանձնութեամբ սովոր է Գաղղիա աապնջական լինել օտարաց ։ Սմին իրի լի վստահութեամբ մատուցեալ հայցէ ի Նմանէ ըն-դունել ի գիրկս իւր զորս որ իւրեանց անձնանուէրն եսանդեամբ և սրտիւք արդէն որդիք են Նորա ։

« Յաղագս այսորիկ, Գերապայծառ Արքեպիսկոպոս Սիւնեաց, Ընդհանրական Աբբայ և Առաջնորդ Միաբանութեան Մխիթարեան միանձանց որ ի Վենետիկ, հայցէ ի Պետութենէդ Գաղղիացւոց ի ձեռն գործակալաց իւրոց ի Ներքոյ ձեռնագրելոց.

« Ա. Զհրաման հաստատելոյ ի Փարիզ վարժարան մի սահմանեալ ի հրահանգս հայկազն մանկանց և եթ ։ Սովիմբ Գաղղիա անքակտելի զօդիւք երախտագիտութեան յինքըն ձգեսցէ զուղղափառ ժողովուրդս Արևելից ։ Վասնզի

մանկտույն առաւելապէս ուղղեսցին յուսումն գիտութեանց և լեզուաց որ նպաստ լինիցին յառաջադէմ զարգանալոյ ազգային կրթութեան Հայոց, հայրենասիրութիւն մեծ և գովելի, յոր ազգօղագոյնս եւս աշխատեսցին, յորժամ դարձ արարեալ յաշխարհս իւրեանց ծաւալեսցեն ի մէջ ազգակցացն զպտուղս հրահանգացն զոր ուսեալ իցեն։

« Բ. Ջաղատութիւն վարժարանին, որ փոխադրեսցի ի Փարիզ, յօրինաց Համալսարանին, որով աշակերտք յայնժամ եւեթ հպատակեսցին սահմանաց Համալսարանին, յորժամ կամիցին ընդունել զաստիճանս հրահանգաց նորին։ Մեծապէս կարեւոր է պայմանս այս հայցեալ. քանզի վարժարանս այս հիմնեալ գոլով սակս առանձինն ինչ նպատակի, որ այն իսկ է օժանդակել բարոյական վերանորոգութեան Հայաստանի, պատշաճ և անհրաժեշտ կարեւոր է յանձն առնել զտեսչութիւն նորին Մխիթարեանց Հայոց որ լի բովանդակ ճանաչեն զպէտս եղբարցն իւրեանց Արեւելեայց։

« Ակն ունիմք, զի Պետութիւնդ Գաղղիացւոց ըստ իւրումն լուսաւոր և բարեսէր իմաստութեան հաճեսցի ընդունել և կատարել զհայցուած Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ։

« Լի վստահութեամբ ի բարեգթութիւն ձեր, ներքոյ գրեալքս պատիւ անձանց համարիմք լինել,

« Մեծապատիւ Նախարար,

« Վսեմութեանդ Ձերում

« Ի Փարիզ. յ30 Նոյեմբեր. 1844.

(Մատուցեալ յ2 Դեկտ.)

Ամենախոնարհ ծառայք

« Հ. Ս. Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. Հ. Ց. Վ. ՍՈՐԿՈՒՋԵԱՆ. »

Առնէ պատասխանի Գեր. Սոմալ վերոյիշեալ Թղթոյ գործակալաց, օրինակ զայս.

« Վերապատուելի վարդապետաց մերոց Հ. Սարգսի և Հ. Յովհաննու ողջոյն ի Քրիստոս ։

« Ցանկացեալն ի մէնջ գիր ձեր գրեալ ի 24 դեկտ. անցելոյ ամին, ահա եհաս ի մուտս Նորոյ տարւոյս, զոր և ձեզ ահա ոչինչ դանդաղիմ ընդ աստ եղբարցս շնորհաւորել երկնաձիր առատ օրհնութեամբ ։ Որ և մխիթարեաց զմեզ ոչ սակաւ գէթ յայն թէ ողջ իցէք, և սկիզբն արարեալ էք գործոյն յոյր սակս առաքեցայք ։

« Վայրապար էր գլխովին կասկածն ձեր զյաջող ելից ինչ աստ իգալ առ մեզ յանցելումն հարցաքննութեան ինչ գրոյ ի պետութենէս յաղագս Ռ. վարժարանին, որ և ի զուր խափան լեալ է ձեզ ի գործել փութով ։ Այն զի բանք յուսացուցինչք ի գրի անդ քաղցրածորեալք նիւթ եղեն մեզ ամենեցուն աստ յաւէտ քրքիջս բառնալոյ, քան թէ բարեմտութեամբ ինչ հաւատալոյ պատճառս ։

« Զայս և դուք մարթ էիք դիւրաւ գուշակել յեղանակէ իմոյ գրութեանս յայնժամ յ7 Նոյեմբերի. զի աստի անդ. Գերմանացին աստ տակաւին ննջէ, մերթ ընդ մերթ զարթուցեալ՝ տեղեկութիւնս խնդրէ նորս, զարդիս և զԽափալեան դպրոցէն, որպէս թէ առ ի դիւրաւ վախճան տալոյ Մ. գործողութեանն ։ Յագեալ եմք, և մեք, սիրելիք, ի լսելոյ յուսադրականս և ոչինչ իրականս. թող բարեկամք բարեկամաց զճանապարհայն հանդիպեալք ի քաղաքիս իրերաց լիցին աւետատուք, թէ ահա ընդ հուպ յաջողելոց են իրք ձեր ի Վեննայէ ։

« Յիշեմ ես թէ կարեկից բարեկամն ձեր ֆաջախորհուրդ, խոստանայր ձեզ երբեմն յամեցուցանել զաւուրս ինչ հնգետասան միայն առ ի տալ գիւր կարծիս, որպէս զի դուք նովին ժամանակ գտջիք գործելոյ զոր ինչ ձեզ յունկանէ Թելադրէր ։ Այլ ահա անցին ի վերայ ամիսք, և ամն բոլորեցաւ, և ոչինչ

վճարեցաւ ի դանդաղ Գերմանացի ատենէն յաջ կամ յահեակ ։

« Զոյլոց երկչոտ երկիւղածութիւն ի ծանր իրս յայսմիկ ձեզ էր պարտ առաջի աչաց ունել, սիրելիք, որ ի գլուխ գործոյն կայք, և ի բուռն ձեր է ահա վստահացեալ Հոգի միաբանութեանս, և խորհել հանապազ թէ գործն, յոր բուռն առնելոց եմք ի շահ և յօգուտ յանգիցի՞ ոչ կրօնիս միայն այլ և ազգիս, որոյ ի լուսաւորութիւն կարգեալ եմք եթէ ի բնէ, և եթէ ի դիտաւորութենէ կտակողին ։

« Զայս խորհելով մեր ահա, եթէ յառաջ և եթէ զկնի, որպէս և դուք իսկ յայնժամ ի Լոնտրայէ գրեցիք առ մեզ, համաձայն և մեք ի խորհուրդս ձեր ընտրեցաք ունել գոնէ առ այժմ զերրորդական ինչ տեղի այդր ի Փարիզ, զի որք յառաջադէմքն իցեն յաստի ի կրկին դպրոցս մեր, այդր յուղարկեալք՝ վարժիցին ի հրահանգս բարձրագոյն ուսմանց. ա՛ղէ ակն արկջիք ի գրեալն յայնժամ միաբանական մեր խորհրդով ։ Քանզի այսու ճանապարհաւ և եթ մարթի ըստ իմում տկար կարծեաց հեռագոյնս դնել ի բազմադէմ վնասուց, զորս և ձեզ ոչինչ դժուարին է գիտել, եթէ զկրօնս մեր ըստ վիճակին, և եթէ զազգն ըստ քաղաքականին ։ Կրօնիս վնաս մեծ եւս եղիցի, քան թէ ազգին. վասն զի սա, զոր Տէր մի՛ արասցէ, քակտեսցի, դպրոցքն յո՞յր ձեռս անկցին. և զի՞նչ շահիցի յայնժամ ազգս համօրէն ։

« Զայսոսիկ յիշել անգամ մահ է ինձ ցաւոտ ծերունւոյս, այլ բռնադատիմ իբրև գլուխ ի զգուշութիւն ձեզ գրել, բայց և գիտեմ թէ առաւել քան զոր գրեմս դուք ձեզէն խորհիք և ըստ այնմ առնէք յամենայնի զընթացս ձեր, որպէս զի մի փոխանակ զարտեւանունս մեր յարդարելոյ զաչս հանիցեմք, կամ թէ առ խուսելոյ ի տարափոյ Գերմանացւոյն խիստ կարկտի պատահիցիմք ։ Տէր է իմ յոյս և օգնական որ ոչ ամօթ արասցէ ոչ զիս և ոչ զձեզ ի քսաններորդի ամի թշուառ Աբբայութեանս իմում ։

« Պատասխանիդ դպրոցն փոքր ածու ինչ էր, սիրելիք, բայց տեսէք զպտղաւէտութիւն նորա ըստ գիտման կտակողին, որ

ոչ այլ ինչ էր, բայց եթէ ծառայել ի համօրէն ազգիս գլոյս գիտութեան և հայեցի բարբառոյ : . . .

« Ի Վենետիկ. 5 յունվար. 1845.

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

« Արքեպիսկոպոս և Աբբայ. Մխ. Միաբ. »

Առնէ Հ. Սարգիս պատասխանի վերոյիշեալ թղթոյ Գեր. Սոմալի, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Ահա ինկիզբն և այս նամակի Վեհիդ տեսանի համաութիւն հաւանութեան կամաց ձերոց ընդ առաջարկութիւնս մեր. իսկ ապա, իցե՞ն և նշմարանք անգամ նոյն կամաց ձերոց, և ո՞չ ընդհակառակն այնմ գլխովին . . . թէպէտ և տուաք մեք իմիասին պատասխանի այսմ նամակի Վեհիդ, այլ ոչ բովանդակապէս ամենայն բանից որ ի նմին, վասն որոյ կամիմ ես այժմ առանձին լնուլ զայն իսմին :

« Արդ՝ հարցանեմ ես խոնարհութեամբ, թէ չգրեցա՞ք մեք աստի և չծանուցա՞ք Վեհիդ ըստ ժամանակին, թէ առ ի հասանել նպատակի մերում, պաշտպանութեան մեզ ի տէրութենէս աստի ընդդէմ բռնութեան տէրութեանդ այդի, ըստ խորհրդոյ քաղաքագէտ արանց, և ըստ բնական խելաց, պարտ է մեզ յանուն Մուրատի գպրոցն կոչել, և ոչ անորոշ և կամ յանուն միաբանութեանս. և չառաքեցա՞ք այդր զպատճէն գրով հայյուածոյ մերոյ ի տէրութենէս ի գիտութիւն ձեզ և միաբանութեանս :

« Եթէ այդչափ սարսափեալ էք այժմ ի յիշատակութենէ անուան Մուրատեան դպրոցին ի Գաղղիա, ընդէ՞ր ոչ յայնժամ ազդ արարէք և խափանեցէք, և կամ տհաճութիւն ինչ ընդ այն գրուածն ցուցիք, այլ ընդ հակառակն հաւանութիւն ընդ այն լռութեամբդ, ասելով թէ, « Զունէր գրեալն « ձեր պէտս պատասխանւոյ, զի կանուխ գրեցելոյս էր պա-

“ տասխանի, և ապաքէ զի դարձցին անդրէն ի Փարիզ դնա-
“ ցեալքն ի Լոնտոն, միայն լսել ի ձէնջ զուրախականս յա-
“ ղագս գործոց ձերոց այդր : ”

“ Հարցանեմ ես զարձեալ. Մի թէ չէ՞ր այդ երկչոտ եր-կիւղածութիւն այլոյ առաջի աչաց մերոց, և չէ՞ր այն պատ-ճառ զանգաղելոյ մեր և յապաղելոյ ատտ մատուցանել զգրով հայցուածս առ ոստիկան արտաքին գործոց տէրութեանս, կիզօ. ապա ընդէ՞ր զխոովին վայրապար ասէք զկասկածն մեր զյաջող ելից ինչ այդր և ի զուր խափան լեալ մեզ այն ի գոր-ծել աստ փութով, և ընդէ՞ր զարմանան ոմանք այդր ընդ զանդաղութիւն մեր այսր. ապա չէ՛ պարտ, Գեր. Տէր, երկչոտ երկիւղածութիւն զայս կոչել, այլ չկամութիւն ոմանց այդր զանազան կերպարանօք :

“ — Ա՛ղէ, ասէք, ակն արկջիք ի գրեալն յոյնժամ միա-
“ բանական խորհրդով, երրորդական տեղի ինչ և ո՛չ Մու-
“ րատեան անուամբ դպրոց ի Փարիզ հաստատել : Քանզի և
“ այսու ճանապարհաւ և եթ մարթի հեռագոյնս գնել ի բաց-
“ մադէմ վնասուց, էթէ զկրօնս մեր ըստ վիճակին, և եթէ
“ զազգն ըստ քաղաքականին : ” Անհանչանակութիւն բանին երկչոտ երկիւղածութեան, և հակառակութիւն բանից աստա-նօր միանգամայն տեսանին. զի բազմադէմ վնաս կրօնիս, համարիք զեղծումն բարեկարգութեան մերոցն աստ եկելոց, որպէս և յայտնապէս ասէք, և մի միթուէք ի յաջորդ թուղթն ձեր, և որպէս յայտ է ի քաղաքական վնասուց ազգին, յու-սանելնոցա լաւ զեւրոպական զխտութիւնս, արհամարհեն զՀայն և զՀայաստան : Եւ եթէ չեն ձեզ ընդ այս կամք, ապա ընդէ՞ր ակնարկել տայք մեզ ի գրեալն յայնժամ յառաջարկութիւն մեր : Տեսանէ՞ք, Տէր իմ, զնշանակութիւն երկչոտ երկիւղա-ծութեան, և զհակառակութիւն բանից միանգամայն :

“ — Որպէս զի մի՛ փոխանակ զարտեւանունս յարդարելոյ
“ զաչս հանիցեմք, ասէք, կամ թէ առ խուսելոյ ի տարափոյ
“ Գերմանացւոյն խիստ կարկտի պատահիցիմք : ” Այլ եթէ հաճեսցի Տէրդ և հատարակութիւնս, դեռ կայ ժամանակ, և դիւրին է յոյժ զայդ ընտրել, . . . թէպէտ և պարտ էիք զայդ

յառաջագոյն մտածել, առանց այսչափ աշխատութեան և տառապանացս ։

“ — Պատուխանիդ դպրոցն փոքր ածու ինչ էր, բայց տեսէք զպտղաբերութիւն նորա ըստ դիտման կտակողին ։ ” Եթէ Տէրդ շատ համարի զփոքր ածուն զայն ի լուսաւորութիւն ազգիս, տեսցուք թէ բաւական և շատ համարիցի՞ն զայն հակառակորդք մեր, և թողցե՞ն զմեզ հանգիստ ի պետութեանդ. և ո՛չ միայն հակառակորդք մեր, այլ և բարեկամքըն մեր, և նոքին իսկ մերքն, առիցե՞ն և կարիցե՞ն վկայել ըստ խղճի մտաց, թէ ըստ չափու եկամտիցն իցեն և արդիւնքն որ անտի ։

“ — Երկիւղ իմն է ինձ ասել, ասէք, թերեւս և իրաւացի, թէ ազգային մանկտին մեր յորժամ լաւ վարժիցին Եւրոպական ուսմամբք, արհամարհիցեն զՀայն և զՀայաստան միանգամայն ։ ” Առ այս հարցանեմ ես նախ՝ թէ մերքն որք այդր, վարժեա՞լք իցեն քաջ Եւրոպական ուսմամբք թէ ոչ ։ Եթէ այո, ապա ընդէ՞ր զՀայն ոչ արհամարհեն (*). և եթէ ոչ, ընդէ՞ր զՀայաստան արհամարհեն. քանզի ոչ ոք յերբարցս, որ միանգամ անդստին ի մանկութենէ իւրմէ նուիրեալ է զանձն ի մխիթարութիւն ազգին իւրոյ, փափաքի անգամ մի և եթ տեսանել զՀայաստան զհայրենի աշխարհ իւր ։

“ — Յետ զճաշակ առնլոյ ուրուք անդորր կենաց յարեւմուտս, յիշիցէ՞ արդեօք զհայրենիս իւր ։ ” Ունիմք մեք օրինակ և ապացոյց այժմ յաշակերտաց երկուց դպրոցացս այսր, և զայն աչօք իսկ մերովք տեսաք միանգամ և երկիցս ։ Զի յո՞ր դպրոց տեսեալ իցէ ոք առաւել անդորրութիւն և փափկութիւն կենաց, քան ի դպրոցս մեր, մանաւանդ ի Ռափայէլեան դպրոցն. և այն որբ և աղքատ և տառապեալ ազգիս մանկանց. սակայն և այնպէս՝ չկամեցան նոքա սպասել անդ

(*) Հարցական միանգամայն և հեգնական են աստ բանք թէ չէին նոքա վարժեալք Եւրոպական ուսմամբք, վասն այնորիկ արհամարհէին զՀայն և զՀայաստան, որպէս և արդեամբք իսկ ցուցին ի 1853 ամին, գրպարտելով զազգն իւրեանց, և ընդունելով կամաւ և առաւել ևս խստութեամբ զգերութիւն իւրեանց . . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

մինչեւ ցլրումն հինգերորդ ամի ուսման իւրեանց, այլ անհամբերութեամբ եւ ապստամբութեամբ դարձան ի հայրենիս իւրեանց, թէպէտ եւ խելամուտ էին ողորմելութեան անտի կենաց։ Ապա մի՛ լիցի Տեառնդ իմում կասկած եւ երկիւղ ընդ այս գուշակութիւնդ։

« Հարցանեմ ես երկրորդ. Եթէ հայազգի պատանեակք որք ուսանին աստ ի դպրոցս Գաղղիացւոց, դարձին ի Պոլիս եւ բանայցեն անդ ընդարձակ արտաքարս մշակութեան, դըպրոցս բարձրագոյն ուսմանց, փոքր ածուն Պատաւխոնիս առնմին զի՞նչ երեւեսցի, եւ չափաւոր ուսեալքն ի դպրոցս մեր զի՞նչ անդ մշակեսցեն։ Կարծեմ թէ պրաս եւ հազար, եւ թերակատար հայացի բարբառ. քանզի զայս միայն կարասցեն նոքա անդ մշակել։

« Զայսոսիկ տեսեալ մեր՝ խորհեցաք դարման տանել վնասուց եւ հեռագոյնս զմեզ ի վտանգէ նախատանացս դնել, մօտ յաղբիւր այսր գիտութեանց եւ առ ջահն լուսաւորութեան ըդդըպրոցն մեր հաստատել։ Զայսմանէ թէպէտ ի նախընթաց թուղթս մեր յիշատակեալ եւ տուեալ եմք տեղեկութիւն, այլ Տէրդ մեր՝ բազմադէմ վնաս վիճակի կրօնից եւ քաղաքականութեան ազգիս զայս կարծէ, եւ զփոքր ածուն զայն Պատաւխոնի՝ ի սնունդ եւ յաճումն համօրէն ազգիս բաւական եւ շատ համարի . . . վասն այսորիկ ցաւեցաք եւ ցաւիմք կըրկնակի աստի եւ անտի, տեսանելով զվրիպումն ի յուսոյ բարեաց եւ փառաց միանգամայն (*)։

« Մնամ

« Արհիապատիւ Տէրութեան Ձերում

« Ի Փարիզ. 3 մայիսի. 1845.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

(*) Զբարեաց ազգին հայոց եւ զփառաց միաբանութեան իւրոյ խորհի եւ հոգայ միշտ Հ. Սարգիս, եւ ընդ խափան եւ կորուստ նոցին բողոքէ եւ ցաւի յոյժ... այլ աւա՜ղ, զի ոչ միայն ոչ ծանեաւ զայն միաբանութիւն, այլ եւ ապերախտս հատոյց ընդ այն . . . .

(Ծանօթութիւն Հեղինակին։)

Ի ժամանակի անդ և ի բարեպատեհ իմն ժամու գրին թուղթ գործակալքն առ Գեր. Սուքիաս Սոմալ, միանգամայն և իբրև պատասխանի բանից ինչ թղթոյ նորին, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Ցանկալի էր մեզ յոյժ տալ յաւուրս յայսոսիկ և զաւետիս ընդունելութեան խնդրոյ մերոյ, բայց ոչ ըստ կամաց և պաշտօնէից տէրութեանս անգամ անկանի այն, ոչ սակս դժուարութեան իրացն, այլ սակս կարի իմն զբաղմանց Ոստիկանի արտաքին գործոց յայլ կարեւոր գործս, որ մի ի վերայ միոյ խառն կուտեալ են յայսոսիկ աւուրս, մանաւանդ ի բանիլ խորհրդարանաց ի մուտս նորոյ տարւոյս: Բայց վստահ առնեմք զՏէրդ և զյարգոյ Հարս մեր, զի չիք ուստեք ինչ դըժուարութիւն վասն իրացս ո՛չ ի կողմանէ Ոստիկանին արտաքին գործոց, և ո՛չ ի կողմանէ խորհրդարանին ուսմանց: Քանզի ի ձեռն հաւատարիմ արանց որոնեցաք զգուշութեամբ զբերանս արանցդ, որք ո՛չ միայն գիւրին յոյժ համարին զիրսն, այլ և փառս անձանց և աշխարհին իւրեանց զբեն ունել ի մայրաքաղաքիս զկեդրոն լուսաւորութեան և դաստիարակութեան ազգի միոյ զոր առ պատուականս ունին յոյժ, և այն ի ձեռս միաբանութեանս, զոր ի ծայրս համարին հասեալ քաղաքականութեան և գիտութեան, լինելով միջնորդ միութեան արեւմտից ընդ արեւելից (*), տարածելով զլոյս գիտութեան առաջնոյն ի մէջ երկրորդին, համազգեաց իւրոց:

« Զայս ամենայն ակնկալութիւն բարեաց տեսեալ մեր

(*) Զայսպիսի վարկ ազգին Գաղղիացւոց որ զՄխիթարեան միաբանութենէն, զայսպիսի ակնկալութիւն նորին անտի, ոչ ի միոյ, այլ ի բազում բերանոյ լսէ Հ. Սարգիս ի Փարիզ, և ընթերցեալ իսկ էր ի թուղթս երեւելի Գաղղիացւոց ոմանց, յորս ակնարկէ Գեր. Սուքիաս Սոմալ ի հետագայ պատասխանին իւր այսպէս.

« Քանզի ի բազում ժամանակաց հետէ զոն առ իս հաւաստի ցոյցք և յոլով
« զրուցատիք զրաւոր և բերանացի յիմաստուն ազգէդ զմերմէ Մխիթարեան
« միաբանութենէ: »

Ահա զայսոսիկ յիշեցուցանէ Հ. Սարգիս Գեր. Սոմալի և Միաբանութեան իւրոյ. առ ի փութացուցանել զնոսա յորոշումն կարեւոր խնդրոյն. միաբան հա-

աչօք բացօք, տակաւին անգործ կացաք, ոչ զի բարի ինչ է անգործութիւն, այլ զի ջանացաք համոզել զմեզ, թէ և հակառակ փորձառութեանս մերում, զի թերևս նշոյլ ինչ բարեաց ծագեսցէ այտի, և յայնժամ ազատացեալ մեք ի հոգոց միոյ կողման՝ հանդարտագոյն և միաբան հաճութեամբ ամենեցուն առնէաք քայլափոխս, որպէս և մինչև ցայս վայր:

« Այլ ըստ բանից Վենհիդ ամիսք անցին և ամն բոլորեցաւ և ինչ ոչ վճարեցաւ այտի, և այս կամ առ դանդաղութեան նոցա կամ առ ակնածութեան ի Դրանէն, և կամ զի տեսանիցեն, թէ յինչ աւարտեսցին իրքդ ի մերմէ կողմանէ: Անշուշտ սպասեն նոքա զի մեք իրաւախոհ լիցուք ընդ Յովհաննու Մուրատեան, և զերծցին նոքա ի խոստմանէ հաճելոյ զկամս նորա, և կամ զի մեք այլուր փոխադրեսցուք ըզդպրոցն: Յետինս այս անշուշտ է, որ առաւել քան զամենայն պատճառս տուեալ ի մէնջ կապէ զձեռս նոցա, ըստ վկայելոյ և ուրումն ի բարեկամաց մերոց:

« Իսկ եթէ առաջիկայս յայլափոխ իցանէ և յօգուտ յանգիցի, ոչ կրօնից միայն, այլ և ազգիս: Այս է հարցումն ծանր և կարեւոր, որ բազում մտածութեանց և պատասխանատուութեան ի ներքոյ արկանէ զմեզ երկոսեանս, որ ըստ բանի Տեառն իգլուխ կամք ծանր գործոյս, և իձեռին մերում է վտանգեալ հոգի միաբանութեանս: . . . Այլ մեք համարձակիմք խոնարհութեամբ հարցանել զՏէրդ մեր հոգեւոր և զՅարգոյ Հարս և եղբարս մեր, թէ ո՞յք ոմանք իցեն Թէոդորեանն և Սորկուճեանն, և եթէ յիւրեանց ինչ կամաց ձեռն արկին ի գործս մեծ, թէ ի հրամանէ Հօրդ հասարակաց և ի միաբան հաճութենէ համօրէն ուխտիս:

« Բայց ճանաչեմք զչափ անձանց մերոց, թէ ծառայք ան-

ւանութեամբ հաստատել զՄուրատեան վարժարանն ի Փարիզ, և ի շարժել զնոսա ի փոյթ գիտութեան և քաղաքավարութեան ըստ վարկման և ակնկալութեան ազգին Գաղղիացւոց, և ի չսպասել ևս մխիթարութեան յԱւստրիոյ տէրութենէն, դադարելոյ նորա ի պահանջմանէ իւրմէ. ի տիրելոյ Մուրատեան վարժարանին: . . .

(Ծանօթութիւն Հեղինակին:)

պիտանք եմք և յետինք յորդիս Մխիթարայ, և թէ գործ ինչ պիտանի և օգտակար գործեսցի ի ձեռս մեր, այն շնորհք են Աջոյն որ հովանի է միշտ տանն Մխիթարայ, և որ առ ի լաւ ևս ցուցանել զկար զօրութեան իւրոյ, առնու ի ձեռին զա-նարգագոյնս և զանպիտանս։ Գաւազանն Եղիսէի ի ձեռին Գեեզեայ զմեռեալս յարուցանէր։

« Իսկ առ երկրորդ հարցումն, թէ յիւրեանց իսկ հաճոյից ձեռն արկին ի գործս այս մեծ և ծանր, թէ այլազգ, այն յայտնի է Սրբութեանդ և Յարգոյ միաբանիցս, յակն ար-կանել յանցս հնգից ամաց վերջնոց։ Ի բանից աստի ամե-նայն ոք ակն յայտնի տեսանէ, թէ ոգի և կամք հասարա-կութեանս համակամ էր ի ձեռնարկս մեծ և ծանր, որպէս անդ ուրեմն յիրս Ռափայէլեան խնդրոյն։ Աստի ակն ունիմք անշուշտ, նոյն յաջող ելք և առաւելագոյն փառք պահեալ են մեզ ի վերուստ յիրս յայտոսիկ, եթէ ձայն բազմաց ձայն իցէ Աստուծոյ։

« Զի՞նչ զարմանք են, եթէ նեղութիւնք և վիշտք տակաւին կայցեն մեզ առաջի. զի մեծամեծ բարիք ոչ յաջողեն առանց ծանր ճգանց։ . . . Այսու մխիթարեսցուք և քաջալերեսցուք զանձինս, զի ոչ ի մէնջ առթեցաւ այն, այլ ի կրից և ի նա-խանձու օտարաց։

« Ոչ եթէ առ ամբարտաւանութեան ինչ և կամ վասն իւիք գալոյ ընդ Տէրութեան միում՝ մնացաք և մնամք անփո-փոխ ի վերայ իրաւանց մերոց, այլ զի մի՛ թուլութեամբս կո-րուսանիցեմք զիրաւունս աղքատաց ազգիս և միաբանութեանս իսկ, և ժառանգիցեմք զմեղադրութիւն յաջորդաց մերոց։ Աշխարհ ամենայն վկայէ իրաւանց մերոց և անիրաւ պահան-ջմանց Պետութեանդ. ուստի մի՛ երկմտեսցուք բնաւ, թէ ար-դարութիւնն կանուխ կամ անագան յաղթանակեսցէ։

« Մնամք

« Ի Փարիզ. 14 յունվարի. 1844.

« Խ. Ծ. Հ. Ս. ԹԷՈԴ. Հ. Յ. ՍՈՐԿ. »

Առնէ պատասխանի Գեր. Սոմալ վերոյիշեալ թղթոյ գործակալաց, օրինակ զայս.

« Վերապատուելի վարդապետաց մերոց Հ. Սարգսի և Հ. Յովհաննու խնդալ ի Քրիստոս.

« Զբազմաթերթ գիր ձեր տուեալ ի 14 սորին ամսոյ ի Փարիզ, ընթերցայ աստ ըստ ժամուն բազում հաճութեամբ, և օրհնեցի զձեզ զոյգ ընդ եղբարցս որ խուռն ժողովեալ էին առ ի մաղթել յերկնից զերագալոյր բարեխօսութիւն անուանակից սըրբոյս, որում կարօտ էի յոյժ և կարօտիմ առաւել քան յանցեալսն վասն իմ և վասն անբաւ դժուարակնճիռն գործոց Միաբանութեանս։ Որոց գլուխ թերեւս համարիցի ահա այսօր գործողութիւնն, զոր դուք ի գլուխ բազմօք դիւրացուցանէք ի կողմանէ Պետութեանդ, ընդ որ հաւանիմ և ես. քանզի ի բազում ժամանակաց հետէ գոն առ իս հաւաստիցոյցք և յօյով դրուատիք գրաւորք և բերանացիք յիմաստուն ազգէդ ըղմերմէ Մխիթարեան միաբանութենէ, զորս ցայսօր ոչ ի վեր հանեալ էի ումեք աստ ի վանս, որպէս զի մի ընդ այն գրգռիլիցի փոփոխամիտ երիտասարդական նորասիրութեանն։

« Բայց եթէ բազում բարիք գալոց են մեզ անտի որպէս ասէքդ, ընդ այդ ես հաւանիմ, եթէ մեք ըստ օրինի շարժիցիմք, որպէս զի մի՛ առ ի ձեռս բերելոյ զազատութիւն մի տուժիցիմք զայլ ազատութիւն առ ի բարւոք անտեսել զներքին կառավարութիւն կրօնից. քանզի արդէն տեսանեմ ի բազում թերութիւնս ըստ վիճակիս որոց դարման երկնչիմ թէ յոյժ դժուարին լիցի յաւուր միում։ . . .

« Արդ զի այս երից և չորից մանրամասն յուշ առնէք մեզ զանցեալ վէպս, սկսեալ ի ձուոյ, որպէս ասի, որպէս զի մի՛ ի մոռացօնս երբէք մեզ լինիցին ի գործողութեանս յայսմիկ, ապա հարկ համարիմ և ես զնոյն առնել ձեզ առ տեղեաւս, առ ի յիշեցուցանել ձեզ վերստին զժողովական վէպս մեր, մինչչեւ ձեր մեկնեալ աստի, և զկրուածս ձեր միաբանական այտի ի Լոնտրայէ։

« Այլ արդ ի հերուն 14 ապրիլի եղեւ ժողով ԺԻ վարդապետաց առ. ի քննել և որոշել զնպատակ ճանապարհորդելոյ ի Լոնտոն, որ և կայ ահա արձանագրեալ առ իս այսպէս.

« Զայսոսիկ յետ տեղեկանալոյ նոցա զեկուցենն մեզ զի
« նորոգ վանական ժողովով յետինն որոշումն տացի փո-
« խադրութեանն եթէ հարկ ի վերայ կայցէ փոխադրելոյ ո՛ւր և
« ո՛րպէս ։ »

« Արդ ի չյաջողել ապա իրաց Յովհաննու Մուրատեան ի Լոնտոն, գրէ Հ. Սարգիս ի 27 օգոստոսի անտի առաջարկութիւն ինչ այսպիսի ։ . . . Ահա ի վերայ այս առաջարկութեան գրեցաւ ձեզ ի հերուն ի 15 սեպտ. թէ հաճեալ հաւանեցան ընդ խոհական առաջարկութիւնն հիմնելոյ ի Գաղղիա ոչ վարժարան Մուրատեան, այլ երկրորդ իմն Նմին Նպաստամատոյց, որպէս այն որ ի Պօլիս ։

« Այս առաջարկութիւն ձեր ազատ թուեցաւ և մեզ յամենայն վտանգէ. զի եթէ յաջողեսցին ատ իրք մեր, և Պետութիւնն կատարեսցէ զխոստումն իւր, որով յուսացուցանէ ազատ զմեզ կացուցանել ի պահանջմանցն, տակաւին պիտանի լիցի մեզ օժանդակ վարժոցդ ընդդէմ ամենայն դաւադրութեանց . . . և սկսջիք խնդրել տեղի ինչ չափաւոր ինչ վարժարանի ըստ պատշաճի դիտաւորութեանս մինչեւ լիցի մեզ խորհել զկարեւորաց ի կատարումն առաջարկութեանդ և յընտրութիւն մանկանց փորձելեաց այդր և գրել առ ձեզ ։ . . . Այժմ դիտաւորութեան մերում ներհակ թըւեցաւ ահա ի մատուցեալ աղերսագրիդ յիշատակ բացարձակ փոխադրութեան դպրոցին ։ Այլ թերեւս այնպէս պատշաճեալ իցէ բանին առ տեղեաւն յընդհանրի, որպէս և կամեցաք հաւատալ. քանզի և զկնի տեսաք զի ի բովանդակութեան խնդրոյն պարզապէս տեղի խնդրի ի Գաղղիա, վասն դպրոցին ։

« Այլ թէ ո՛րպէս լիցի այն մեզ պահեալ է գիտել. ըստ այսմ և դուք ունիք առնել քայլափոխս յիրոդ յայդոսիկ ոչ ինչ շեղելով ի հասարակաց մեր և ձեր կանխագէկոյց առաջարկութենէն ։ Նովիմ ահա և եթ յուսալի է կատարել բա-

նին Հ. Սարգսի, զոր յուսիմ յառաջնում գրին, ասելով.» Եւ « առ այս գործ անդ՝ չգիտեն ի մէնջ բազում անձինք, այլ « չատ է մի և առաւել երկու ի խնամակալ և ի հովիւ նոցին. « քանզի չկարօտին և նոքա ի մէնջ վարժապետի, ուսեալ և « վարժեալ գոլով ի սկզբունս գիտութեան և ի բնիկ բար- « բառն:» Զայս քաջ ի մտի ունել պարտ է մեզ եթէ ի սկըզբանս և եթէ ի կատարածի վասն բազում օգտից, զորս չկարծեմ և ի ձէնջ զանխուլ լինել ամենեւին:

.: Ի Վենետիկ. 25 յունվար. 1845.

« Խ. Ծ. ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

« Արքեպիսկոպոս և Աբբայ Մխի.»

Առնէ պատասխանի Հ. Սարգիս վերոյիշեալ Թղթոյ, օրինակ զայս.

« Գերապատիւ Տէր.

« Ահաւասիկ ի վերջին յայս Նամակի Վեհիդ յայտնին և պատճառքն հակառակութեան բանից և անհաստատութեան մտաց այտի. այս է, նախ՝ երկիւղ ձեր եղծանելոյ բարեկարգութեան կրօնիս հեռանալով ոմանց ի վանաց այտի և գալով աստ ի Փարիզ. և երկրորդ՝ պակասութիւն անձանց միաբանութեանս ի գործ յայս պաշտաման: . . .

« Հարցանեմ ես նախ թէ երկիւղս այս ձեր՝ նորո՞գ ծնաւ ի միտս, թէ կայր յառաջագոյն: Եթէ նորոգ, ապա ընդէ՞ր մնայք այժմ յաջող ելից խնդրոյս աստի. զի զի՞նչ մխիթարութիւն լիցի ձեզ անտի: Եւ եթէ յառաջագոյն, ապա զիմ՞րդ որոշեցէք և հաստատեցէք լուլի և ոչ միով պակաս քուէիւք փոխադրել զդպրոցն ի Գաղղիա կամ յԱնգղիա. մի՞ թէ զփոխադրութիւն դպրոցին և մանկանցն նորին և ե՞թ խմանայիք առանց պաշտօնէից ոմանց ի մէնջ այտի. և երկրորդ՝ պակասութիւն անձանց միաբանութեանս ա՞յժմ ունիք, թէ արդէն ունէիք: Եթէ այժմ, մնա՞յք դուք, ուստի՞ և ե՞րբ լընուլ զպակասութիւնս զայս. և եթէ ոչ մնայք դուք այժմ,

ապա որպէս յանձին կալայք զայսպիսի ծանր և կարեւոր գործ հասարակաց ազգիս : . . . Մի թէ դիտաւորութիւն և կամք բարերարին ըստ կարողութեան և ըստ կամաց միաբանութեա՞նս իցեն . . . և կամ եկամուտն արծաթոյ հրիտակի նորին ըստ փոքու ածուոյ դպրոցին մանկա՞նցն իցէ ։

« Իսկ եթէ երկիւղ ձեր ի տեղւոջէ աստի իցէ, ապա գիա՞րդ ի 1822 ամին յորժամ Յովհաննէս Մ. եկն ի Վենետիկ և առաջարկեաց միաբանութեանս հաստատել զդպրոցն ի Գաղղիա, և միաբանութիւնս հաւանեցաւ ընդ այն, և եթէ կացեալ էր նա ի բանս խոստման իւրում, խնդրել ի Պետութենէս տեղի դպրոցին և պատրաստել զայն աստ, զի՞նչ ունէր առնել ընդ այն միաբանութիւնս . կամէ՞ր նա ի հաւանութենէ կամաց իւրոց, տալով և նմա զայժմու տուեալ մեզ պատճառն. և եթէ մերժէր նա զայն և պնդէր զկարծիս և զորոշումն իւր հաստատել այսր զդպրոցն, հրաժարէ՞ր միաբանութիւնս ի յանձնառութենէ անտի ազգային բարեաց, նախադասելով նմին զերկիւղ իւր և զկասկած : . . .

« Թողի՛ց յիշատակել աստ և զերբեմն որոշումն ի ժամանակի Արքայութեան Ստեփաննոսի Մելքոնեան հաստատել աստ վանս, եթէ խռովութիւն Գաղղիոյ և փոփոխութիւն տէրութեանս չէին խափան լեալ : Ապա ընդէ՞ր իցէ երկիւղ ձեր այս ի տեղւոջէ աստի :

« Տեսանէք, Գեր. Տէր, զի նա և ի պատճառս իսկ հակառակութիւն բանից կայ յամենայնի, և ահա վասն այսորիկ դանդաղէի ես այդր ելանել ի ճանապարհ գնալ ի Լոնտոն, մինչեւ չեղեւ ԺԲ վարդապետաց ժողովն և չորոշեցաւ անդ նպատակ ճանապարհորդութեան մերոյ, թէպէտ և ի վերայ այսր ամենայնի՝ տուաւ ապա նմին նորոգ մեկնութիւն, յաւելլով անդ վերջին հատուածոյ բանիցս որով և եղան կապանք ոտից և ձեռաց մերոց մինչեւ յայտնեցաւ այժմ և պատճառ նորին. քանզի գուշակէի ես զայս գնացս նորա, փորձ գոլով իմ ի գործս յայս, ի նմանօրինակ անցս որք անցին ընդ իս երբեմն ի Հնդիկս, և աւասիկ այն .

« Յամին 1824, յորժամ հաճեցաւ հաւանեցաւ հասարա-

կութիւնս առաջարկութեան խնդրոյ Յովհաննու Մուրատեան վերստին առաքել գիս ի Մատրաս վասն բանի հրիտակի դպրոցին, տուաւ ինձ յայնժամ այտի գիր գործակալութեան՝ և այն եթէ իրաւախոհութեամբ ընդ կտակակատարս զգործն աւարտել, և եթէ դատաստանաւ զիրաւունս աղքատաց ազգիս ի նոցանէ պահանջել ։ Ի գրի անդ գործակալութեանս ամենայն քահանայք որք ի վանս էին, ձեռօք իւրեանց ստորագրեցին ։

« Ապա յետ երից ամաց անտի ի 1827, յաւարտել իմ զբան հրիտակի դպրոցին ընդ կտակակատարսն իրաւախոհութեամբ, և ի պահանջել նոցա յինէն նորոգ և ըստ կանոնի Անգղիացւոց գիր գործակալութեանս, խնդրեցի ես զայն այտի, և ընկալայ զայն առանց ինչ ընդդիմութեան, ստորագրեալ և անդ ամենայն քահանայք որք ի վանս, և ապա զկնի միոյ ամի անտի, ի յարուցանել Մուրատեանց ընդդէմ ինձ վէճ յատենի անդ, հարկ եղեւ ինձ վերստին խնդրել այտի գիր գործակալութեան, զորոյ օրինակն անտի առաքեցի այդր ի լեզու Անգղիացի, առ ի թարգմանել և յօրինել զայն ըստ բնիկ ոճոյ մերոյ, որ և կատարեցաւ այտի յօժարութեամբ և առաքեցաւ ինձ այն յերկս օրինակս հետ զհետէ, և յորում նոյնպէս և նոյնչափ ստորագրութիւն ձեռաց քահանայից, հանդերձ վկայութեամբ Հիւպատին Անգղիացւոց ի Վենետիկ, ի հաստատութիւն վաւերականութեան նորա ։

« Ահա տեսաւ, զի ի միջոցի հինգ ամաց երեք գիր գործակալութեան տուաւ ինձ հետ զհետէ ի Հասարակութենէս, յորս կայր ինձ տուեալ բացարձակ իշխանութիւն պահանջել ի կտակակատարաց զիրաւունս աղքատաց ազգիս, կամ իրաւախոհութեամբ և կամ դատաստանաւ, դիմելով յատեանս Անգղիացւոց ի Մատրաս և յայլուր ի տէրութեան նոցա ։ . . .

« Տեսցին ապա զկնի միոյ ամի անտի, ի 1829, և այն յետ փառաւոր յաղթութեան իմոյ և նպաստաւոր մեզ վճռոյ յատենէ անտի, և բանք կրկին նամակաց այտի, որոց մին առ իս և միւսն առ Պօղոս Լազարովիչ, և երկոքին եւս առ նա ուղղեալք, և յերկոսին եւս ստորագրութիւնք ձեռաց

քահանայից մերոց այտի, հանդերձ հասարակաց մեծ կըն-
քով, յառաւել իմն հաստատութիւն ընդդէմ ինձ յայտարա-
րութեան, իբրեւ սանձ յանդգնութեանս իմում, կասել և
չգործել իմ այնուհետեւ, չդիմել յատեան արդարութեան և
չպահանջել ի Մուրատեանց զիրաւունս աղքատաց ազգիս,
« Հակառակ գոլով այնր եկեղեցական և մանաւանդ կրօնա-
« ւորական վիճակի մերոյ. և եթէ Ատեանն եւս ինքնին պա-
« հանջիցէ ի Նոցանէ զվաշխ դրամագլխոյ հրիտակին, և
« առեալ զարծաթն յանձնիցէ ի ձեռս իմ, յետս դարձուցից
« ես զայն Մուրատեանց, քանզի չկամի միաբանութիւնս
« դատաստանաւ և խստութեամբ վարիլ ընդ ժառանգս բա-
« րերարին : . . . Եւ ոչ այսչափ միայն, այլ և հրաժարելով
« հրաժարի միաբանութիւնն ի պահանջմանց անտի, և խոս-
« տանայ յետս դարձուցանել նոցա զընկալեալ արծաթն զմի
« միլիոն ֆրանքս : »

« Ընթերցեալ Պօղոս Լազարովիչի զթուղթն հիացաւ ընդ
հակառակութիւն բանիցն որ ի նոսին, և ասաց զայս բանս
յանդգնութեան, թէ « Գուշակէ ինքն, զի ոչ գոյ գլուխ
« ի վանս Սրբոյն Ղազարու : Ո՞չ յիշէն զբանսն որք ի գրի
« գործակալութեանդ. ա՞յս է քաջալերութիւնն զոր տան
« անդ գործակալին իւրեանց, և այն զկնի մեծի և փառաւոր
« յաղթութեան : »

« Իսկ ես, թէպէտ և ցաւեցայ ընդ գրութիւն միաբանու-
թեան, և առաւելապէս ընդ յանդգնութիւնն Լազարովիչի,
և ընդ անկանելն ի ձեռս նորա այնպիսի վնասակար գրութեան,
այլ ոչ ցուցի նշան խռովութեան մտաց ընդ այն, և առ ի պա-
հել զպատիւ Միաբանութեանս, ասացի նմա, թէ տեսութիւն
մտաց միաբանութեանս խորին է յոյժ, որ ապա իմասցի : Եւ
այսպէս ասացեալ՝ լռեցուցի զնա ի խիստ քննութենէ անտի
իւրոյ, որ զմիաբանութենէս, և ջանացայ այնուհետեւ հանել
ի ձեռաց նորա զթուղթն զայն վնասակար, զոր և հանի դէպ
ինչ պատեհաւ. զի եթէ անկեալ էր թուղթն այն ի ձեռս Մու-
րատեանց, վճարեալ էր վասն իմ և աղքատաց ազգիս ամե-
նայն :

« Եւ արդ՝ հարցանեմ ես առ տեղեաւս, թէ կա՞յր համաձայնութիւն բանից գրոյ գործակալութեան իմոյ և բանից թղթոյն ընդ միմեանս . . . և թէ՝ խոհեմութի՞ւն էր զայնպիսի գրուած ի ձեռս օտարի և այնպիսի օտարի հաւատալ : . . . Թէպէտ և արարի ես յայնժամ ըստ հրամանի միաբանութեանս, կոչելով յետս յատենէ անտի զգանգատագիրն իմ, չպահանջելով ի Մուրատեանց զիրաւունսն աղքատաց ազգիս, զվաշխն դրամագլխոյ հրիտակին, իբրեւ երկու միլիոն փրանք, այլ թէ զի՞նչ օգուտ նոցա եղեւ անտի, և զի՞նչ փառք միաբանութեանս յաւելան, զայն թողում քննել :

« Իսկ ես այսչափ միայն ասացից, թէ արդիւնք բանից թղթոյն այնորիկ են, որով չարչարիմք մեք այսօր, մնալով արծաթոյն այնորիկ ի ձեռս Յովհաննու Մուրատեան . . . և ահա նմանօրինակ անցք այժմ ի գործառնութեանս, թէ և հանգամանք գործոյն զանազան :

« Կնքէ Տէրդ իմ զնամակ իւր այսու բանիւ . « Զայս քաջ « ի միտ ունել պարտ է մեզ, եթէ ի սկզբանս և եթէ ի կա- « տարածի վասն բազում օգտից, զորս չկարծեմ և ի ձէնջ « զանխուլ լինել ամենեւին : » Արդարեւ զանխուլ են ի մէնջ բազում օգուտքն, ասացեալքն Վեհիդ : « Այլ թէ ո՞րպէս լի- « նիցի այն, (խնդրեալ անդէն առս զպրոցիս,) մեզ պահեալ « է գիտել : Ըստ այսմ և դուք առնել ունիք քայլափոխս « յիրիդ յայդմիկ, ո՛չինչ շեղելով ի հասարակաց մեր և ձեր « կանխաղեկոյց առաջարկութենէն : »

« Արդարեւ ձեզ պահեալ է գիտել, այլ մեք զայս միայն կարեմք առնի գուշակել, թէ՝ « Նովիմբ ահա և եթ յուսալի « է հաւաստիլ բանին Հ. Սարգսի զոր յաւելու յառաջնում « գրի անդրում . Եւ առ այս գործ անդ չպիտին ի մէնջ բա- « զում անձինք, այլ շատ է մի, և առաւել երկու : Ահա գուշակեմք մեք առնի, թէ միայնակ կամք Վեհիդ է պահել միայն զդպրոցն Պատաւինի, վասն որոյ չկամի զի յանուն Մուրատի խնդրեսցի առնի զպրոցն, այլ երկրորդական ինչ, որպիսի է ի Պոլիս, և այն եւս, եթէ հարկն պահանջիցէ, և եթէ հաճոյ ձեզ թուիցի, այլ ոք Հ. Անանիա և առա կարգեսցի . և թէ

ամենայն գրութիւնք մեր աստի մինչեւ ցարդ և տուեալ պատճառքն որք ի նոսին ոչինչ համարեալ են ի Ձէնջ ամենեւին, և վասն այսորիկ ազդ առնէք մեզ չերեւի մեզ բնաւ ի կանխագեկոյց առաջարկութեանն. և հաստատութիւն այսմ ահա ստէպ ստէպ յիշատակութիւն ի թուղթսն Վեհիդ առ մեզ զարդեանց բարեաց որ ի փոքու ածուին Պատաւինիդ, իբրեւ ի մխիթարութիւն մերում սրտի, և իբրեւ մոռացումն այլ բարեաց որոց ակն ունիմք մեք աստի:

«Այլ թէ ընդէ՞ր իցեն այս կարծիք Վեհիդ, չունելով և Ձեր յոյս ընդ յաջող ելս խնդրոյն որ ի տէրութենէդ այտի, և հաւանելով Ձեր եւս ընդ այս, թէ «Բազում բարիք զհետ գալոց «են մեզ ի պետութենէս աստի.» վասն զի կասկածի Տէրդ թէ «Գուցէ խուսեալ ի տարափոյ, ի գերութենէ Գերմանաց«ւոյդ, պատահիցէ խիստ կարկուտ» ազատութեան Գաղղիացւոյն, որով և զեղծանիցին թերեւս ոմանք ի մերոցն այտի, հեռանալով ի վանաց Սրբոյն Ղազարու, և չազդելով նոցա զօրութիւն սրբութեան Նորա....

«Այլ հարցանեմ ես աստ խոնարհութեամբ և ցաւօք սրտի, թէ կասկածելդ այդ, թերեւս զեղծանելոյ ոմանց ի մերոցն այտի, լիցի՞ խափան օգտից բազմաց և բարեաց հասարակաց: Ուրեմն խափանեսցի նաւարկութիւնն, գուցէ ալեկոծութեան պատահեալ՝ վտանգիցին ոմանք ի ծովու, և դադարեսցի պատերազմն ի պաշտպանութիւն հայրենեաց, գուցէ անկանիցին ոմանք ի մարտի.... Եւ չիցե՞ն այս կարծիք գուշակ և յայտնի նշանակ վրիպելոյ իմ ի յուսոյ բարեաց ազգիս և փառաց Հասարակութեանս:

«Ահա յիշատակութիւն ժողովականն վկայից, վանական և ԺԲ վարդապետաց ժողովոց մերոց եղելոց այդր ի վանս, և ահա պատճէնք և նշանական բանք թղթոց Վեհիդ առ մեզ ի Լոնտոն և ի Փարիզ, և թղթոց մերոց առ Վեհդ ի Վենետիկ, հանդերձ կարեւոր և խոնարհ քննութեամբ, որովք յայտնապէս տեսանի, թէ յի՛նչ միտս էր յայնժամ միաբանութիւնս յորժամ մեկնեցաք մեք այտի, և յի՛նչ կամս եղեւ զկնի հաստանելոյ մեր ի Լոնտոն, և անտի մինչեւ ցայսօր ժամանակի...

և թէ՝ չէ իմ այլ ինչ առաջարկեալ Վենիտ ի Լոնտոնէ և այլ
ինչ ի Փարիզէ, որպէս ի դէմս իմ հարկանէք, ասելով.
“ Ա՛ղէ ակն արկջիք ի գրեալն յայնժամ միաբանական խոր-
“ հրդով : ”

“ Առ այս համարձակիմ և ես ասել. Ա՛ղէ չիցէ՞ մեր յա-
ռաջագոյն ծանուցեալ Վենիտ ի Թուղթն մեր որ ի 27 սեպտեմ-
բերի 1844, և տուեալ անդ զպատճառսն կարևոր վասն Նը-
պատակի պաշտպանութեան ի բռնութենէ Աւստրիոյ տէրու-
թեան, որ և տուաւ մեզ աստ ի քաղաքագէտ արանց: Եւ չիցէ՞
մեր տուեալ այդր ըստ ժամանակին զպատճէն աղերսագրին
որ աստ առ Ոստիկան արտաքին գործոց: Եթէ չէին տուեալ
պատճառքն մեր բանաւոր, և եթէ չէր աղերսագիրն մեր Ձեզ
հաճոյ, ընդէ՞ր ոչ ազդ արարէք մեզ յառաջագոյն, որպէս և
երբեմն ի Լոնտոն թէպէտ և չկայր անդ հարկաւորութիւն,
քանզի չկայր ի 22 յուլիսի նորին ամի գրեալ Թուղթն մեր
նոր ինչ առաջարկութիւն. այլ ընդհակառակն արարէք
այսր Թղթոյ միրոյ պատասխանի այսպէս. “ Գրեալն ձեր
“ ի 27 սեպտեմբերի չունէր ինչ պէտս պատասխանւոյ, զի
“ իմ կանուխ գրեցելոյս էր պատասխանի, և սպասելի զի դարձ-
“ ցին անդրէն ի Փարիզ գնացեալքն ի Լոնտոն: Արդ զի դար-
“ ձան, մնամք լսել ի ձէնջ զուրախականս յաղագս գործոց
“ մերոց այդր, քանզի Գերմանացին տակաւին ննջէ:

“ Արդ ի բանից աստի Վենիտ զի՞նչ իմացեալ լինի. ո՞չ
ապաքէն հաճութիւն հաւանութեան ընդ տուեալ պատճառսն
և ընդ աղերսագիր մեր որ առ Ոստիկանն Կիզօ. ապա ընդէ՞ր
ի դէմս իմ հարկանէք զառաջարկութիւն իմ, ակնարկել տալ
ինձ յայնժամու գրեալն... Եւ աղէ՛ յիշեցէք զորոշումն վա-
նական ժողովոյն մերոյ որ ի 1841 ամին, ուր հաստատեցաւ
լուլի քուէիւք այսպէս. “ Եթէ յամառիցի Աւստրիոյ Տէրու-
“ թիւնն ի կարծիս պահանջման իւրոյ յայն, փոխադրեսցէ
“ միաբանութիւնն զՄ. վարժարանն ի սահմանս հզօր ինչ
“ պետութեան, Անգղիոյ և կամ Գաղղիոյ: ” Եւ հաստատու-
թիւն այսմ շա՛տ լիցի առ տեղեաւս գրով վկայութիւն Հ. Ներ-
սէսին մերոյ, որոյ զարմացեալ մտօք և խոհական դատմամբ

գրէ առ իս ի Տրապիզոնէ այսպէս . « Ցանկայի գիտել եթէ
« արդեօք ի գլուխ ելանէ դատդ և զերծանիք անտի. լսեմ
« ի Վենէտ, թէ երրորդական դպրոց մի շինել կամիք, երկու
« առաջինքն և երրորդ մի այդր ի Փարիզ վասն բարձրագոյն
« ուսմանց ։ Զգիտեմ երկրորդ կամէր տեսել ըստ առաջին
« միաբան խորհրդոյ ուխտիս զՄուրատեանն այդր փոխադրե-
« լոյ, թէ արդարեւ միւս եւս ։ Թէպէտ և ինձ տկարամտիս և
« երկուց կառավարութիւն դժուարին թուէր, և դիւրին և
« հզօր ի մի խառնել զերկուսն որ յանհնարից դատեալ եղեւ.
« սակայն որ ջանայքդ այլ եւս բազմացուցանել քան զերկուս,
« ի հարկէ նորանոր յաջողուածոյ և դիւրութեանց բացեալ
« են ճանապարհք ։ »

« Տեսանէք զմիաբան խորհուրդս և զորոշումն ուխտիս
յայսմ ի սկզբան անդ . յիշեցէք եւս և զորոշումն ժԲ վար-
դապետաց ժողովոյ մերոյ այդր, որ ի 1844 ամին, և յոր եղեւ
հաճութիւն հաւանութեան կամաց հասարակաց փոխադրելոյ
զՄ. դպրոցն ի Գաղղիա, և այն ըստ մեծագոյն մասին կար-
ծեաց աստ ի Փարիզ. և հաստատութիւն այսմ գիր գործա-
կալութեան մերոյ յանդիման լինելոյ տէրութեանս, և խընդ-
րելոյ ինմանէ աստ տեղի դպրոցիս, և թուղթք յանձնարա-
րութեան որ ի բարեկամաց մերոց այդր առ երեւելի ոմանս
այսր և մասնաւորաբար թուղթն ընծայութեան տուեալ մեզ
ի Պարոն Ռիօյէ առ Պարոն Կիզօ. և այս թուղթ հայթայթե-
ցաւ մեզ այդր ձեռամբ և թելադրութեամբ Հ. Ռափայէլի ։ Ըն-
դէ՞ր զայս ամենայն ի մոռացօնս արկեալ Վենիդ և իբր ոչ
ինչ համարեալ՝ զառաջարկութիւնն իմ միայն, և զայն ոչ
իրաւամբք ի դէմս իմ հարկանէ ։

« Իսկ զհակառակութենէ նորոգ յաւելեալ և պայմանաւոր
բանից որ ի վերջին հատուածս արձանագրութեան ԺԲ վար-
դապետաց ժողովոյն մերոյ այդր, արդէն ի սկզբանէ անտի
հերքեցաք, ասելով թէ մի տացի այդ վերջին պայմանաւոր
հատուածն կարծեաց հասարակաց, այլ մասնաւորաց, որպէս
կամեցան կարծել, և կամին զայն հասարակաց ընծայել ։

« Վասն որոյ աղաչեմ զՏէրդ հանել տաջիք զայդ յարձա-

նազրութենէ այտի, և կամ ի դէմս մեր մի՛ ես հարկանել զայն . . . և ահա պատասխանի բովանդակ բանից թղթոյ Վեհիդ, տուելոց մեզ ի 5 և ի 25 յունվարի տարւոյս, զոր թէպէտ երեք ամսօք յառաջ պարտ էր հատուցանել, այլ յապաղեցի ցարդ սակս այլ և այլ պատճառաց տուելոց ինմին, և զոր ընթեռնուլ աղաչեմ զՁեզ, բազում աղերսարանօք և թախանձանօք, և ընթեռնուլ տալ յականջս Յարգոյ միաբանիցդ որք այդր ի վանս. ապա վերստին վանական ժողով այդր առնել, և տալ մեզ այսր որոշ և հաստատուն հրաման, որպէս զի գիտասցուք մեք թէ զի՛նչ ունիմք խօսել ընդ Ոստիկանի արտաքին գործոց տէրութեանս, և զի՛նչ արժան իցէ գործել. քանզի ահա ի 27 ամսոյն ապրիլի, յաւուր Աշաճաւորի, տեղեկացաք մեք ի բանից թղթոց բարեկամաց մերոց, զի Ոստիկան ուսմանց Պարոն Սալվանտին հաճեալ հաւանեալ է յոյժ ընդ խնդիր աղերսագրին մերոյ, ազատ զմեզ՝ և զդպրոցս ճանաչելով ի պարտուց օրինաց և կանոնաց համալսարանի տէրութեանս, հանդերձ բազում գովութեամբ զմիաբանութենէս, և խոստմամբ պաշտպանելոյ զմեզ յամենայնի, ի նպաստ լուսաւորութեան ազգիս և յաւելումն փառաց ազգին Գաղղիացւոց ։

« Եւ գրէ նա զայս առ ոստիկան արտաքին գործոց, Պարոն Կիզօ, ի պատասխանի թղթոյ Նորին գրելոյ ի 12 փետր. որ և արտացէ յայտնիկ աւուրս պատասխանի ընդունելութեան աղերսագրին մերոյ, իբրև վճիռ տէրութեանս ։ . . . Լուեալ մեր զայս յաջող մեզ լուր, փոխանակ ուրախանալոյ, տխրեցաք յոյժ անհնարին տարակուսանօք, գիտելով զտրամադրութիւն մտաց Ձերոց այդր, և չգիտելով թէ ո՛րպէս յանդիման լիցուք մեք սոցա աստ, և թէ զի՛նչ պատասխանի տացուք սոցա ի հարցանել մեզ, թէ զի՛նչ այլ ունիմք խնդրել ի Պետութենէս, և կամ զի՛նչ ունիմք այժմ առնել, ո՞ւր և յո՞րպիսի տեղւոջ ի քաղաքիս ցանկամք զդպրոցն հաստատել, և թէ քանի՞ մանկունս ունիմք այսր ածել, և ե՞րբ սկիզբն առնել դաստիարակութեան նոցա, և այլն ։

« Պարտ և հարկ է մեզ զճշմարտութիւնն խոստովանել նո-

ցա, զհլութիւն մեր յայս ամենայն, որպէս զի մի՛ երեւի-ցիմք յաչս Նոցա խաբեբայք ոմանք և մերժիցիմք անտի ի բաց, պատասխանելով Նոցա զտուեալն ի Վեհէդ հրամանն, թէ չկարեմք մեք այսուհետեւ այլ ինչ քայլափոխ մի առնել, առանց Նորոգ հրամանի Առաջնորդին մերոյ, որում միայն պահեալ է գիտել զայս ամենայն :

« Եւ եթէ ասիցեն մեզ, թէ ո՛րպէս տուեալ է Նա ձեզ այսպիսի գիր գործակալութեան, ահա անդ լիցի մեզ անհնարին տագնապ. զի եթէ և յայսմ խոստովանեսցուք զճշմարտութիւն, Նախատինք մեզ և ձեզ լիցին առ հասարակ. իսկ եթէ այլ ընդ այլոյ ինչ պատասխանի տացուք, երեւիցիմք յաչս Նոցա արհամարհ. ահա մխիթարութիւն գործակալացս, և փառք Միաբանութեանդ : . . . Դեսպանք Թագաւորաց, Նա և ի միապետական իշխանութեանն, գիտեն զկամս իշխանաց իւրեանց. իսկ գործակալք Հասարակապետութեանս ոչ գիտեն զկամս Հորդ հասարակաց . . . զի Ձեզ միայն պահեալ է այն . . . զոր թէպէտ և գուշակեմք մեք ի բանից Թղթոյդ, բայց ոչ կարեմք ասել զայն այլոց . . .

« Այլ զիարդ և իցէ, աղաչեմք յոյժ զՏէրդ մեր, զի շնորհ արարեալ զերծուսջիք զմեզ ի տագնապէ աստի և ի Նախատանաց, որոշելով ժամ մի յառաջ վանական ժողովով որ ինչ հաճոյ իցէ Ձեզ և Հասարակութեանս : Վանական ժողովով ասեմք, զի որպէս որոշմամբ Նորին շարժեցաք մեք ի գործս յայս, Նոյնպէս և որոշմամբ Նորին կամիմք դադարել ի գործոյ աստի . և որպէս հաճութեամբ Հասարակութեանս արարաք զճանապարհորդութիւնս, Նոյնպէս և հաճութեամբ Նորին ցանկամք դառնալ յետս, չունելով մեր այլ ինչ ցանկութիւն. զի եթէ ի սկիզբն գործոյս այսչափ անհամութիւն, ապա ո՛րչափ լիցի ի կատարածի սորին : . . .

« Այլ և խնդրեմք զի ի հրամանագրի անդ որ առ մեզ աստ, լիցին քանի մի անձանց ի մերոց աստի ստորագրութիւնք ձեռաց, որպէս երբեմն ի գրի անդ որ առ իս ի Մատրաս, զոր վերագոյն յիշատակեցի, և այս ի յայտարարութիւն կամաց Հասարակութեանս, և ի միայնակ ինձ մխիթարութիւն, որ

ի գործս յայս վասն իբրեւ երեսուն . . . և ահա այսու ակնկալութեամբ և բաղում խոնարհութեամբ մնամ միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ Ջերում

« ի Փարիզ. 23 Մայիս. 1845.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

« Յ. Գ. Մինչչեւ էր իմ կնքեալ զթուղթս, ահա ընկալայք այսօր յոստիկանէ արտաքին գործոց տէրութեանս զպատասխանին աղերսագրի մերոյ, մատուցելոյ նմա յ30 Նոյեմբերի անցելոյն ։ Զպատճառ այսչափ յապաղման խնդրոյս ծանուցեալ եմք վեհիդ յառաջագոյն. ապա չմնայ ինձ արդ այլ ինչ գրել, բայց եթէ զպատճէն պատասխանւոյ նորին ի սմին ծրարեալ առաքել այդր յընթերցումն և ի գիտութիւն վեհիդ և Համարակութեանս, յորում տեսանէք զվարկն մեծ և զակնկալութիւնն Գաղղիացւոց որ ի Միաբանութենէս, և զկատարումն ցանկութեան մերոյ յամենայնի, և առաւել քան զհայցուածն մեր . . . և մնալ մեր այսր ի Ջենջ որոշման և կարգաւորութեան, և վերստին աղաչել զՏէրդ, առնել զայն համարակաց հաւանութեամբ, հաստատուն և որոշ բանիւք, և որչափ հնար իցէ փութով, որպէս զի զերծցուք մեք ի հոգոյ աստի ։

ԳԼՈՒԽ Ժ.

Առանձնագրութիւն ի մէջ Գեր. Սոմալի և ի մէջ Հ. Սարգսի։

Գրէ Գեր. Սոմալ գիր առանձին առ Հ. Սարգիս ի Փարիզ, օրինակ զայս.

« Գործողութիւնդ այդ մեծ, զոր դուք թերեւս դիւրին կարծիցէք, ինձ թուի լինել տիմիար փիրինձի, որ տակաւին բազում ջրոց պէտս ունի առ ի քաջեփ լինել և գալ ի ճաշակ ։ »

Պատասխանի Հ. Սարգսի առ այս բանս նորա.

« Զգործողութիւնս այս մեծ դիւրին կարծէաք մեք երբեմն, հաւատացեալ թէ որոշումն ժողովոյ մերոյ այդր հաստատուն մնայր, որպէս պարտ և արժան էր ։

ԳԵՐ. ՍՈՄԱԼ. « Զայս դուք դիք ի մտի, թէ ցորչափ կենդանի են ոտոխք մեր՝ եթէ այդր և եթէ այլուր, մեզ հանգիստ երբէք ոչ լինիցի յերեսաց հանապազօր տառապանաց պատճառելոց ի կրկին դպրոցացս ։ »

Հ. ՍԱՐԳԻՍ. « Համատառութեամբ եղեալ էաք մեք ի մտի, և օր ըստ օրէ առաւել ևս հաստատիմք ի նոյն միտս, թէ ցորչափ սատանն չար տանդ Մխիթարայ բունեալ կայ ի Վիեննա, և ցորչափ Միաբանութիւնս մեր չկամի զդպրոցն ի սահմանս յայլ հզօր և յազատ Պետութեան ումեք փոխադրել, և պաշտպանութիւն իւր անտի ունել, ոչ միայն չլինիցի նմա հանգիստ յերեսաց հանապազօր տառապանաց պատճառելոց ի կրկին թշնամեաց՝ յոտոխաց և ի նախանձորդաց իւրոց, այլ և չկարիցէ նա հասանել երբէք նպատակի իւրում, լուսաւորել զազգն իւր ։ »

ԳԵՐ. ՍՈՄԱԼ. « Եթէ կամիք զճշմարիտն լսել յինէն, ոչ բարւոք արարէք, սիրելիք, զի յայսպիսի փափուկ դէպս ծանր իրողութեան Համարակութեանս, ընդհարայք յայտնապէս ընդ միումն սատ, ընդ Հ. Ռափայէլի Թրենց, որ ի սպառ սառուցեալ է արդ յընդխառնելոյ յիրս ինչ Համարակութեանս ։ Եւ ահա այս է պատճառ, զի ոչ գրեաց նա առ ձեզ ըստ ժամուն զգրուածոյ անտի, որ ի Ռափայէլեան հայէր վարժարան. նմին անկ էր հաղորդել ձեզ այդր զխմաստ նորին ։ »

Հ. ՍԱՐԳԻՍ. « Եթէ պարտ է ամենայն մարդոյ զճշմարիտն յօժարութեամբ լսել յընկերէն, առաւել ևս մեզ, և զայն ի հասարակաց Հօրէն, ընդ այս չէ պարտ վեհիդ երկբայիլ ։ Ապա մնայ մեզ խոնարհութեամբ հարցանել, թէ հայրական ազգարարութիւն Ձեր, մեղադրութիւնդ զմէնջ, արդարացի իցէ. և թէ՛ առ մե՞զ ի դէպ և արժան էր, թէ առ այլ ոք զայն առնել ։

« Ահա ընդ այս կարեւոր և հարկ համարիմ զգնացս մեր որ ընդ միոյդ այդր, և զգնացս նորա ընդ մեզ այսր, առան-

ձին առանձին, և ընդ համօրէն հասարակութեանս յանդիման առնել աստ, թէպէտ և ի ձոշոյ ախյէք սխալ և զայս գրուածս իմ, թէպէտ և յանդուգն և անախորժ լսելեացդ լիցին բանքս իմ: Քանզի պարտ է զպատմութիւն ինչ ի ծագմանէ անտի սկսանել, և զի՝ ճշմարտութիւնն համարձակ է, և ձայն նորին չէ ախորժակ:

« Արդ՝ յամին 1835, յորժամ դարձայ ես ի Հնդկաց, հանդիպեցայ ես զմա ի Մեսրոպեանն. անդ զոր ինչ միանգամ ցանկացաւ դա, գնել մատեանս վասն դպրատան վանացս և վասն իւր առանձինն, զայն ամենայն յօժարութեամբ կատարեցի ես ի լրումն ցանկութեան դորա, հանդերձ այլ կարեւոր պիտոյիւք:

« Ապա ի 1836 ամին՝ ի հաստատել Ռափայէլեան դպրոցին, և ի կարգել իմ անդ ուղղիչ ի վեհէդ, և դորա վարժապետ ուսմանց ըստ ընտրութեան իմում, գիտեցի ես, զի ցուցանէր դա յօժարութիւն և փափագ, ունել ի ձեռին իւրում զարծաթն և զհաշիւն դպրոցին այնորիկ, և ես յանձնեցի նմա զայն, առ ի քաջալերել զնա ի գործս հասարակութեան. և այնպէս զամս իբրեւ երկու, ցորչափ կացի ես անդ ուղղիչ, չեղեւ երբէք դորա տրտունջ և գանգատ ինչ զինէն:

« Եւ ապա ի 1838 ամին, յորժամ կամեցաւ վեհդ փոխադրել զպաշտօնն իմ ի Պատաւիոն ի Մուրատեան վարժարանն, եցոյց դա տհաճութիւն ընդ փոփոխութիւնն այն, երկուցեալ չունել զնոյն ազատութիւն զոր ունէր յինէն, և զոր բերանով իւրով խոստովանեցաւ դա բազում անգամ, ի քննել ումանց զգնացս իւր:

« Յամին 1840, ի փոխադրել Աղանուրեանց ի Վենետկոյ ի Պատաւիոն, և ի պատեհ առնուլ իմ զայն՝ կամեցայ ընդ կահ կարասիս նոցա անցուցանել անդ առանց մաքսի հատուցման զՖիզիքական գործիսն Մ. վարժարանին, և զառանձին մատեանս իմ, որք տակաւին ի Ռափայէլեան դպրոցի կային: Խնդրեաց դա յինէն թողուլ ինձ զայն անդ ի հաշիւ Ռափայէլեան դպրոցին, զիջայ ես կամաց դորա, զերկոսին դպրոցս հասարակաց ազգիս գիտելով:

« Ի նմին ամի, ի գալ Աղեքսանդր Ռափայէլի ի Վենետիկ, և ի պնդել նորա հանել զդա ի պաշտօնէ անտի դպրոցին, ո՞րք պաշտպան կացին դմա. ո՞չ ապաքէն ես միայն երկիցս և երիցս իջի ի Պատաւիոնէ ի Վենետիկ առ ի խորհել և ի հնարս գտանել զերծուցանել զդա յորոգայթից Աղեքսանդր Ռափայէլի. քանզի իբրև պատգամաւոր ի դիմաց վեհիդ գնացեալ առ նա՝ անկանի ի հաղբս նորա, խոստանայ գրով իւրով տալ նմա հաշիւ և կարգել զնա ի կարգաւորութիւն դպրոցին. ո՞վ եգիտ զհնարմն այն պայմանաւոր հաշուին, որով զերծաւ դա ի վնասակար խոստմանէ անտի իւրոյ։ Ո՞չ ապաքէն ես, թէպէտ և այս ամենայն ջանք և աշխատութիւն իմ էին առ ի պահել զիրաւունս և զպատիւ հասարակութեանս, միանգամայն և զդորայն։

« Քանզի դժկամութիւն Աղեքսանդր Ռափայէլի ընդ դընացս դորա էր, և զդա միայն կամէր հանել ի պաշտօնէ անտի. և զի կարեմ ասել, թէ ի պատճառս դորա կորոյս Հասարակութիւնս զերեմնամեայ բարեկամութիւնն Աղեքսանդրի, և զայլ բազում ակնկալութիւն բարեաց հասարակաց ազգիս. թո՛ղ զհակառակութիւն նորա որ ընդ հակառակորդաց միաբանութեանս, յորոց տառապեցաք և տառապիմք եւս։

« Յետ անցից այսոցիկ, կամէր Վեհդ վասն երկուց դըպրոցացս մի ուղղիչ զխս կարգել. ո՞չ ես էի, որ խորհուրդ ետու զդա կարգել անդ զի մի՛ ծանր թուիցի դմա այս. և այնպէս արարիք։

« Ի միջոցի եօթնամենայ ժամանակի կալոյ մեր ի Վեննա, ընդ դմա եղեն թղթակցութիւնք մեր, հաղորդելով դմա զամենայն խորհուրդս մեր և զգրուածս, և հաւատալով թէ ընթեռնոյր դա զայնս և ծանուցանէր այդր որոց պէտք էին, թէպէտ և վրիպեցաք ի կարծեաց անտի։

« Դարձեալ մեր ի Վեննայէ, զառաջին տեսութիւն ընդ դմա արարաք։

« Յելանել մեր ի ճանապարհ գալ ի կողմանս յայսոսիկ, երկիցս չոգաւ դա ի Պատաւիոն յուղարկաւորել զմեզ անտի, և յանձնել մեզ զնել նմա ինչ ինչ ի Լոնտոն և ի Փարիզ՝ և

առաքել առ նա ըստ ժամանակին, և այսպէս դրկախառն համբուրիւ մեկնեցաք ի միմեանց ։

« Հասեալ մեր ի Լոնտոն՝ երկրորդ հոգ մեր եղեւ յանձնարարութիւն զորա, զոր և կատարեցաք յօժարութեամբ ։ Նոյնպէս և աստ ի Փարիզ, զո՛ր ընկալեալ դորա գոհ եղեւ ընդ այն յոյժ, հանդերձ գրով շնորհակալութեան ։

« Ահա այսչափ և այսպիսի եղեն գնացք մեր ընդ դմա ի սկզբանէ անտի մինչեւ ցայսօր ժամանակի ։ Երբեւի՞ անդ յայտնեապէս և կամ ի ծածուկ՝ ընդհարկանել մեր ընդ դմա ։ . . . Տեսցի արդ և գնացք դորա ընդ մեզ ի սկզբանէ անտի մինչեւ ցայժմ, նոյնպէս կարգաւ ։

« Վասն բանի խնդրոյ Պօղոս Լազարովիչի ընդ Միաբանութեանս՝ հարկ եղեւ ինձ իջանել ի Պատաւիոնէ ի Վենետիկ ի դպրոցի անդ Ռափայէլեան, առ ի պատրաստել զպատասխանին զանգատագրոյ Լազարովիչի ։ Կայր ի գրուածս յայն թուղթ մի անգղիարէն. խնդրեցի ես ի դմանէ մեկնել զայն բերանով Խոտալցի փաստաբանին մերոյ. ետ դա պատասխանի, թէ նախ չունի ինքն ժամանակ. և երկրորդ՝ թէ չկամի խառնիլ ի բանս Մ. վարժարանին ։ Դարձեալ հարկ եղեւ ինձ յանդիման առնել դատաւորի ատենին զբնագիր հաւատոյ մեր, յոր և կայր վերոյիշեալ անգղիարէն թուղթն. վասն որոյ խնդրեցի ի դմանէ գնալ ընդ իս անդ, գուցէ հարցանիցի զանգղիարէն թղթոյն. զնոյն ետ ինձ դա պատասխանի, զոր ինչ յառաջագոյն ։ Եւ այս վէճ յառաջ էր քան զվէճն Աղեքսանդր Ռափայէլի, յոր ես այնչափ աշխատ եղէ ի պաշտպանել զդա, չխնայելով բնաւ զայս գնացս դորա ։

« Գնեցաւ երբեմն ձեռամբ դորա գրեան ինչ Խոտալցի ի Պէտս Մ. վարժարանին. ամիսս ինչ յապաղեցաւ հատուցումն գնոյ նորին իբրեւ 300 ֆրանք. բազում անգամ գանգատեցաւ դա և մեղադրեաց զիս ընդ յապաղումն այնորիկ ։ Եւ ահա ամք եօթն են, զի յապաղէ դա հատուցանել զգին մատենիցս և գործեաց իբրեւ 30,000 ֆրանք, և ես մինչեւ ցարդ ո՛չ գանգատեցայ և ո՛չ խնդրեցի ի դմանէ զայն, և դա լռէ և ոչինչ զգայ բնաւ ։

« Իբրեւ դարձաք մեք ի Վեննայէ և հարցաք զդա՝ թէ զիա՞րդ էր վերջին մեր գրուածն զոր տուաք խորհրդականացն ի Վեննա, և զպատճէն նորին տուաքեցաք այդր յընթերցումն զորա, և տա ի ցուցանել զայն Պրամպիլայի խորհրդականին մերոյ, ասաց դա, թէ դեռ ո՛չ ընթերցեալ էր զայն, և ոչ այլոց ցուցեալ. քանզի չկամի ինքն այլ ինչ խորհել, բայց ի ճանապարհորդութենէ իւրմէ, ժամ մի յառաջ գնալ ի Պօլիս ի լնուլ զցանկութիւն ծնողաց իւրոց. զի ամենազգած սիրտ իւր չկարէ այլ եւս խառնել թախանձանաց նոցա, և զի՛ չկամի լսել այսուհետեւ խորհրդոյ ումեք խափանելոյ զինքն յառաջադրութենէ անտի իւրոյ . . . Թէպէտ և յետ սակաւ ինչ աւուրց անտի կասեցաւ դա ինքնին յառաջադրութենէն անտի իւրոյ տեղեկանալով զօրարմեղի վիճակէ ծնողաց իւրոց ի Թղթոյ Հ. Աղեքսանդրի: Եւ ահա գնացք դորա այսչափ և այսպիսի են ընդ մեզ առանձինն առանձինն:

« Տեսցի այն և ընդ համօրէն հասարակութիւնս:

« Զամս քսան և հինգ սնեալ և ուսեալ է դա ի վանս սրբոյն Ղազարու, և ապա կոչեալ յամենայն արտաքին զբաղմանց և աշխատութեանց. զի՞նչ գրաւոր վաստակ իւր մինչեւ ցարդ: — Համառօտ հայերէն բառարան մի, և այն եւս թերակատար, վնասեալ Հասարակութեանս 6,000 ֆրանք (*): — Հարցանեմ եւ արդ. Ո՞ր ջեղբարցս ընդհարաւ երբէք ընդ դմա, զի սառուցաւ դա յաշխատութենէ անտի իւրոյ: — Ո՛չ ոք յեղբարցս: — Ապա ընդէ՞ր թերակատար եթող դա զայն: — Վասն զի ոչ յօգուտ հասարակութեանս ձեռն արկ դա յայն, այլ վասն փառասիրութեան իւրոյ, և վասն այնորիկ գործ իւր իբրեւ զաշտարակն Բաբելոնի յիշատակ ամբարտաւանութեան միայն մնայ . . .

(*) Թողումք յիշել զանպիտան և զվնասակար աշխատութիւն նորա, զբանի մի ճառսն, խօսեցեալ ընդ ժամանակս ժամանակս ի հանդէսի քննութեան աշակերտաց Ռափայէլեան վարժարանին, և ապա ի լոյս ընծայեալ. յորս ոչ միայն լի են ճամարտակութիւն և նսեմութիւն բանից, այլ և դառնութիւն մաղձից ժայթքեալ ընդդէմ հայաստանեաց եկեղեցւոյ, ըստ կարծեաց յիսուսեան կրօնաւորաց, զորոց վարկ մեծ ունէր և յորս յոյժ յարեալ էր:

(Ծանօթութիւն Հեղինակին:)

« Այնու միով յառաջ խոնարհեալ էր դա յոգիս ծնողաց իւրոց գնալ ի Պօլիս առ ի մխիթարել զնոսա, և ամենազգած սիրտ իւր ոչ կարէր այլ եւս խառնել թախանձանաց նոցա. Ա՛ որ ի մէնջ խափան եղեւ յառաջադրութեան իւրոյ, և զի՞նչ պատճառ յանկարծ փոխութեան մտաց իւրոց. ո՞չ ապաքէն կարի իմն անձնասիրութիւն իւր, որ հզօրագոյն է ի դա քան զսէր ծնողաց իւրոց. Տեսէ՛ք՝ զի՞րդ խոստացաւ ամենազգած սիրտ ծնողասէր զաւակին՝ ի լսել զաղքատութիւն նոցա ի բանից Թղթոյ Հ. Աղեքսանդրի (*).

« Դժկամակն դա ի սկզբանէ մինչեւ ցարդ ընդ շինութիւն Պօլսոյ դպրոցին, և վայրապար ծախք համարի զայն, վասն որոյ և զլանայ հատուցանել զմասն ծախուց նորին, զորոշեալն ի խնամակալաց ժողովոյն. Վասն զի եթէ հատուցէ նա զմասն ծախուց շինուածոյն այնորիկ, պակասիցի նմա նիւթ շռայլութեան իւրոյ. վասն այնորիկ զլանայ զայն ասելով. « Թող այժմ հատուսցի այն ի Մ. վարժարանէն, մինչեւ « խորհեսցի ինքն և տեսցէ զայն ապա. »

« Հակառակի դա ամենայն ոգւով փոխադրութեան Մ. վարժարանին ի Փարիզ, և վասն այսորիկ զամենայն հնարս հնարի առ ի խափանել զայն, մերթ յուսով յաջող ելից խնդրոյս ի Վիեննայէ, և մերթ երկիւղիւ վնասուց որ ի տէրութենէզ, կասեցուցանէ զձեզ տալ մեզ ասա որոշ և հաստատուն

(*) Զանձնասէր բարս և զանդառնալի գնացս Հ. Ռափայէլի Թրենց տեսեալ Գեր. Սամալի զանգատի ի Թուղթս իւր առ Հ. Սարգիս, զոր և յիշատակեալ եմք յընթացս պատմութեանս.

Թէպէտեւ տեսանէ զայն և Գեր. Հիւրմիւզ ի տեսչութեան նորա որ ի Ռափայէլեան վարժարանի, ի բազում միաբանութեան և ի հանել զնա ի պաշտօնէ անտի, այլ պաշտպանէ նմա յայնժամ, կարգելով զնա վերստին ի պաշտօնն յայն, և ապա տեսուչ Մուրատեան վարժարանին ի Փարիզ ընդդէմ իրաւանց և արդարութեան, վասն զի համախոհ էր կամաց իւրոց.

Թէպէտ և նա ոչ սիրելի լինի Հ. Ղեւոնդեայ Ալիշանի, և գնացք նորա ատելանեալ նմա, սակայն յետ մահու նորա զամբաստանեալն և ներբողական ճառիւ յարգէ և ի դաս սրբոց դասէ զնա, վասն զի յաջորդէ զտեսչութիւն Մուրատեան վարժարանին....

Արդարութիւն և ճշմարտութիւն յանձնասիրութենէն յաղթեալ լինին....

(Ծանօթութիւն Հեղինակին.)

հրաման, և զայս ոչ միայն այգր բերանով, այլ և գրով առ մերսն ի Պօլիս, մինչև չփոխել զնոսա։

“ Այլ թէ ընդէ՞ր այս հակառակութիւն դորա ։ — Վասն զի նախանձի դա ընդ գերազանցութիւն տեղւոյ Մ. վարժարանին, և համարի թէ առաւերածս ածէ այն գպրոցին իւրոյ և և փառացն. և ապացոյց կարծեացս, ահա չհակառակիլ դորա երբեմն խորհրդոյ փոխադրութեան Մ. վարժարանին ի Քարփուկզին, այլ մանաւանդ հաճիլ ընդ այն, որպէս յայտ է ի բանից թղթոյ իւրոյ առ իս ի Վիեննա ։

“ Եւ ահա այս անարգ նախանձն է պատճառ, զի “ Ոչ “ գրեաց դա առ մեզ ըստ ժամուն գգրուածոյ անտի, որ զի “ ի Ռափայէլեան հայէր վարժարան, և ոչ հաղորդեաց մեզ “ զիմաստ նորին ։ ” Քանզի գիտէր դա, թէ նպատակ գրուածոյն այնորիկ և հարցման տէրութեան էր հնարս գտանել առ ի հաստատել զանկլաւ վճիռ իւր. վասն այնորիկ առանց մեզ հաղորդելոյ և խորհուրդ ինչ հարցանելոյ արար վեր ի վերոյ ինչ պատասխանի խնդրոյ տէրութեանդ, զանց զկաբեւորօն արարեալ, չյիշելով անդ և զպատճառսն յապաղման կամաց բարերարին զամս քառասուն, և զնպաստաւոր մեզ վճիռն Լորս Քանչէլէրին, այլովքն հանդերձ. և այսմ կարծեացս ապացոյց, ահա անդադար գրութիւն դորա որ առ Հ. Յովհաննէս սատ, խնդրելով ի նմանէ զայս ինչ գրեան և զայս ինչ գործիք Փիզիքական ըստ քմաց իւրոց, և ըստ ցանկութեան այլոց ։

“ Եթէ ... Յայտնապէս ընդհարկանիլն մեր ընդ դմա իցէ “ պատճառ չգրել առ մեզ զայնմանէ ըստ ժամուն, ” ապա զի՞րդ գրեաց և գրէ դա միշտ առ սա զայլ իրաց ըստ ժամուն ։ Ապա յայտ է, թէ նախանձն է դորա և հակառակութիւնն ընդ փոխադրութիւն Մուրատեան վարժարանին ի Փարիզ պատճառ այնմ ։

“ Բայց դիցուք թէ ընդհարեալ իցէ մեր ընդ դմա, և մեք զայն կամ ոչ իմացաք, և կամ իմանալ ոչ կամեցաք. հարցանեմ ես արդ՝ թէ ունիցի՞ դա իրաւունս, զի սակս գժտութեանն որ ընդ երկուս ոմանս [illegible] ընդխառնիլ

« յիս ինչ Հաստատակութեան իւրոյ. « և թէ՝ չէ՞ր պարտ և արժան Վենետիկ հարցանել և խրատել զդա... մի՛ թէ հեռի աստ ի Փարիզ էր դա, և զօրութիւն սրբութեան ձերոյ չազդէ՞ր ինչ ի դա :

« Հարցանեմ ես դարձեալ՝ թէ գործառնութիւնն Ռափայէլեան դպրոցին չիցէ՞ Հաստատակութեանս... այս զիա՞րդ ասէ Տէրդ, թէ « սատուցեալ է դա խաղաղ ընդդիմանիլ յիս ինչ « Հաստատակութեանս : » Արդեօք ի բանից աստի Վենետիկ հետևի, զի հրաժարեալ իցէ Հաստատակութիւնս յիրաւանց ատոր մատակարարութեան դպրոցին, և թողեալ իցէ զայն ի կամս և յիշխանութիւն դորա, իբրև պաշտօնատկանք և ժառանգութիւն դմա սեպհական, անուանակից գոլով բարերարին և որդեգիր ժառանգի նորին Աղեքսանդրի, և զուցէ մերձաւոր ազգական Հ. Նիկողայոսի Բուզայեան, որ վասն դորա աշխատեալ իցէ ի Մադրաս և ի Լոնտոն զամս քսան :...

« Ապա ուրեմն արդարանայ դա յամենայնի ի գնացս իւր ընդ մեզ և ընդ Հաստատակութիւնս, ի դժկամակել ընդունել զԼէհաստանի Հայ մանկունս ի դպրոցն իւր, և ցանուլ ինձ ընդ այն. — ի զլանալ զմասն ծախուց դպրոցին Պոլսոյ. — ի դրել յընկերութիւն զանազան օրագրոց ի ցոյցս մարդկան. — ի գնել նորատիպ մատեանս, ոչ ի դաստեարս մանկանց, այլ ի պարծանս ի մէջ ընկերութեան, թէ գիտէ ինքն զանուանս այնչափ մատենից. — յաւելուլ օր ըստ օրէ զփիլիքական գործիսն ոչ ի պէտս իւր, այլ ի խընդրոյ Ծանդէզլէպեայ, և ի հմտութիւն նորին : Իսկ վասն իւր, չմտ է զի անուն միայն Հ. Ռափայէլի Թրենց ի տպագրեալ տետրակս Ծանդէզլէպեայ երեւեսցի. և ոչ այնչափ միայն, այլ և մանաւանդ Անգղիարէն օրագիր զելեքտրական փորձոյ ի Լոնտոնէ բերել տալ ամսեան ամսեան, և թարգմանել զայն ի լեզու Իտալական ի գիտութիւն Ծանդէզլէպեայ :...

« Այլ եթէ յանձնիցի դմա այսմ ի վանացս գրաւոր աշխատութիւն ինչ յակնարկել յայն, չառնու դա զայն յանձն, ասելով թէ չունի ինքն պարապ ժամանակ... և իրուի՝ քանզի

ծախէ դա ժամս երկու ի լուացումն մօրուաց և հերաց իւրոց աղնիւ օծանօք և մշկահոտ ծաղկանց ջրով. և զի ժամս չորս ծախէ դա յայցելութիւն և յընդունելութիւն բարեկամաց իւրոց, պատուելով զնոսա օշարակօք և զանազան քաղցրաւենեօք, որպէս զի հաճոյ և սիրելի լիցի նոցա. վասն այսորիկ բազում անգամ չգտանի դա ի սեղանի ի ժամու ճաշուն հասարակաց, այլ ապա առանձին ճաշէ և առանձին ինչ կերակրով, հանդերձ ախորժաշարժ համեմիւք Գաղղիոյ. Թէպէտ մի փոքրիկ շիշ նոցին 5 ֆրանք արժիցէ, չէ դմա ինչ փոյթ: Առ ինչ իցէ արծաթն դպրոցին, եթէ ոչ վասն քմաց իւրոց:

« Այլ թէ ո՞ւր իցէ դա այսպէս վարժեալ. ի տան հօր իւրոյ մուշտակարարի՞, թէ ի կրօնաւորական վանս Արքայի... ի դըպրոց աղքատ մանկանց ազգիս... և թէ ընդէ՞ր իցեն անդ այսպիսի փափկութիւն կենաց և անխնայութիւն արծաթոյ աղքատաց, վասն զի ըստ բնական բարուցն փափկասէր և անձրնդիւր գոլով դորա, և զի եկամուտ դպրոցին ի ձեռս իւր թողլով բացարձակ, վարէ դա կեանս որպէս և ախորժէ, և ծախէ զարծաթն որպէս և կամի, առանց հարցանելոյ և պահանջելոյ ի դմանէ հաշիւ. և վասն այսորիկ եղեալ է դա ի մոլի՝ թէ որպէս ըստ անուանակցութեան, նոյնպէս և ըստ իշխանութեան տէր է ինքն ընչից դպրոցին և կարգաւորութեան նորին : . . .

« Ահա այս է պատճառ « խափանելոյ դորա արդ « յընդխառնիլ յիրս ինչ Հասարակութեանս, » և ոչ « ընդհարկանիլն մեր ընդ դմա, » որպէս և տեսէք ի գնացս մեր ընդ դմա, և ի գնացս դորա ընդ մեզ և Հասարակութեանս :

« Թէրեւս յանդուգն և կարի խիստ թուիցի Վեհիդ դատաստանն իմ ընդ գնացս դորա. . . այլ մի՛ կարծիցէ, զի ես իցեմ միայն որ զդա այսպէս ճանաչեմ և դատիմ. զի զորս ոչ կարծէք, և որք ոչ խօսին յանդիման ձեր, այսպէս և առաւել ճանաչեն և դատին զդա : . . .

ԳԵՐ. ՍԱՄԱԼ. « Իսկ այլ ոմն զոր ունիք ձեզ սատ բանա-

կատար, Հ. Գաբրիէլ Այվազովսքի, ոչ թուի և նա բարեկամ գոլ ընդ նմա, թէպէտ և առ երեսս ձևացեալ ։ »

Հ. ՍԱՐԳԻՍ. « Հարցանեմ ես նախ՝ թէ այսպիսի բարուք և գնացիւք անձինն ո՞ կարէ ի ներքուստ բարեկամ լինել . . . երկրորդ՝ թէ զի՞նչ կամի վեհդ ինձ ազդ առնել, բանակատար մեր այդր գնա կոչելով . . . . » Ունի՞ արդեօք Հ. Յովհաննէս այլ ինչ գործառնութիւն և թղթակցութիւն ընդ նմա, բաց ի բանէ նոր աշխարհացուցին և իւրոյ տպարանիդ, և ո՞չ իցեն այսօքիկ գործառնութիւն հասարակաց . . . ապա ընդէ՞ր բանակատար մեր այդր կոչիցի նա ։ Կարծեմ ես թէ այլ ինչ միտս ունիցի անուանակոչութիւնս այս, որ և յաջորդ բանիւք վեհիդ առաւել եւս յայտնի, և անտի ինձ նիւթ գուշակութեան և քննութեան մատակարարի ։ . . .

ԳԵՐ. ՍՈՄԱԼ. « Սովին այսուիկ ահա, քանզի չիք ինչ ի ծածուկ, խիթալի լեալ է և անձն սորա յաչս ոմանց ի միաբանից աստ որք արդէն ընդ ակամբ հայէին ի նա վասն պաշտօնի վերակացութեանն ։ »

Հ. ՍԱՐԳԻՍ. « Ահա ի բանից աստի վեհիդ գուշակեմ ես զայս, թէ բանակատար կոչեցեալ անձն, ըստ ազատ ճանաչման իւրում, և անփոփոխ մնացն, տացեալ իցէ զկարծիս իւր համարձակ որ զբանէ խնդրոյ փոխադրութեան վարժարանիս, և այս գնացք նորա՝ յանդիմանութիւն ինչ ակար և անհաստատ մտաց ոմանց այդր երեւեալ՝ անհաճոյ և խիթալի լինեի յաչս նոցա, իբրև կուսակից մեզ աստ գոլով նորա ։ . . .

« Եւ ահա զայս այսպէս գուշակեալ՝ հարցանեմ արդ՝ թէ կարծեցեալ ոմանք ի միաբանից աստի, « Որք արդէն ընդ « ակամբ հայէին ի նա վասն պաշտօնի վերակացութեանն, » տակաւին ո՞չ ծանեան յարգանաց անտի նորին զակարութիւն իւրեանց ։ . . . Ո՛չ ապաքէն արդարանայ այժմ Տէր Թէոփիլէ Թխսեան ի զանգատ իւր, թէ « Նախանձ ծերոց ընդ յառաջադիմութիւն երիտասարդաց՝ է մին ի պատճառաց ապերախտութեան վանացս ։ » Արդարև անզգամելի կիրք ծերոց, և մանաւանդ Մխիթարեան ընարելոց ։ . . .

« Իսկ Հայրդ հասարակաց ընդ այս անպատեհութիւնս ոչ

բացագանչութիւն և ոչ հոգւոյ ինչ հանէ, որպէս ընդ երկայնութիւն ներոցն ամաց և ընդ ոչ կրկին փիլոն ի հրապարակս քաղաքիդ՝ երկնղուշիս կարգաց . . . այլ ընդ այս անդանօթան և սոփորական բանիւք՝ այսպէս և այսչափ միայն ասէ.
« Տեսէք արդ՝ թէ յայտնի յուզմունս կրից՝ որպէս մարթ է
« ինձ տկարիս և հիւանդիս գործել ինչ գործ հանդարտ
« սրտիւ և անայթաք ։ »

« Արդարեւ կարեկից եմ յոյժ վեհիդ, և ցաւիմ յոյժ ընդ դժբաղդութիւն Հասարակութեանս . . . սակայն չկայցէ այնմ հնար և դարման. և չիցէ՞ այս նախատեսեալ ի սահմանադրութեանս, տալով Արքային խորհրդականս, ի խորհել և ի գործել զիրս Հասարակութեանս, և մանաւանդ ի դէպս նորին հիւանդութեան ։

« Այլ ասիցէք արդեօք, թէ պակասի այժմ թիւ խորհրդականացդ, և միացեալքն ծեր են յոյժ և անկարողք ի խորհուրդ և ի գործս հասարակաց ։ Ասեմ ես. թէ ընդէ՞ր զթիւ նոցին ոչ լնուք, և ի տեղի յոյժ ծերոց և անկարողաց զփոխանակս և զկարողս ոչ կացուցանէք ։

« Ասիցէք, թէ ի վանս չգտանին յարմար անձինք ի պաշտօնն յայն, խակ ի Պօլսոյ կոչել զոմանս դժուարին է յոյժ, վասն զի չկամին նոքա գալ, և չկարեն ի վանս կալ, որպէս և փորձիւ տեսաք ։

« Ապա զի՞նչ պարտ է առնել ի կարեւոր գործս հասարակութեանս, թողո՞ւլ զայն անտէր և տարտամ. և կամ ի յանձնանս կրից տկարաց ամանց զգածեալ և Ձեր տկարութեամբ նոցա և զայլ ի զայլ գո՞րծ գործել . . . ապա զի՞նչ մաբանիցի բանս այս ընդ բանիցն այնորիկ, « թէ ո՞ է մին այն,
« որոյ խորհրդով չարժիցի Հասարակութիւն մի բովանդակ,
« որ միաբանականն է և ոչ անհատական ։ » Մի՛ թէ չշարժեա՞ց և չշարժէ՞ տակաւին մին այն զբանի մի տկար և զանհատական մտօք ամենս այսր, որով և կամեցայց զՁեզ տալ մեզ սատ որոշ ինչ հրաման, և որով կարէաք մեք գործել զարժանն. և մի՛ թէ չիցէ՞ առաւել ծանր և վտանգաւոր բարոյական հիւանդութիւնն Հասարակութեան միոյ քան զբնական հիւանդու-

թիւնն բոլոր անգամոց և գլխոյ իւկ նորին . . . և չհամարիցի՞ք զՎիտան որ ստոր մեծապէս քան զոր երեւակայէք հաստանել նմա ի տէրութենէ այտի : . . . Եւ եթէ « Յայգպիսի յուզ-
« մունս կրից անմարթ իցէ Վեհիդ գործել ինչ գործ հան-
« դարտ արտի և անսայթաք , » ապա զիա՞րդ զարմանայք և մեղադրէք զմեզ , զի յապաղեցաք տալ աստ զաղերսագիր մեր Ստեփանի արտաքին գործոց տէրութեանս , և յապաղեմք ցարդ տալ Ձեզ այգր լուր ինչ ուրախական . որո՞վ անկեղծութեամբ մնայիք դուք այսմ , և կամ զինչ իրաւամբք մեղադրէք զմեզ յայսմ : . . .

Կնքէ Գեր. Սոմալ զբանս առանձնագրութեան իւրոյ այլաբանութեամբ այսպէս .

« Մի խորհիք՝ սիրելիք , զի յամենեցուն ի սիրտս առիւծ բազմի , որք թուին թէ հեզագոյնք իցեն և իմաստունք , մարթին յաւուր միում այլազգ փոխել . սմին իրի չէ պարտ վըստահիլ ի մարդ ոք մեղի , այլ միայն յԱստուած որ անփոփոխն է ի բարին :

Պատասխանէ Հ. Սարգիս այս վերջին բանից առանձնագրրութեան Գեր. Սոմալի , այսպէս .

« Երանի՜ թէ ի սիրտս յամենեցուն առիւծ մեծահոգի բազմէր , և ոչ կատու նախանձոտ և ապերախտ ննջէր . և թէ հեզագոյնքն որչափ և այլազգ փոխիցին , սակայն սիրելի և պիտանի ամենեցուն լիցին . իսկ անձնասէրքն և նախանձոտքն ոչ երբէք . և թէ՝ այս , որք թուիցին հեզագոյն և իմաստունք մարթին յաւուր միում յայտնի և համարձակ խօսել և հարցանել զիրաւանց ազգատոց ազգիս և միաբանութեանս միանգամայն , վասն որոյ չէ պարտ ի քրթմնջօղաց զանգիտել և ոչ զհամարձակախօսս ատգտանել : Կնքեցից և ես արդ զբանս առանձնագրութեանս իմոյ , և զայս ոչ այլաբանութեամբ , այլ յայտնաբանութեամբ , հանդերձ յիշատակութեամբ և քննութեամբ այլ բանից թղթոց Վեհիդ , թէ ասկս նախանձու և տկարամտութեան ոմանց կասեցաւ Հայրդ հաստարակաց նախադասել զկարծիս բարձից և
« հեռագոյնս զնել զՀաստատակութիւնս ի վանդէն . » և

թէ՝ ի հաճութիւն կամաց ումանց, և ի հանդարտութիւն մըտաց ձերոց բաւական և շատ համարիք զփոքրիկ ածուն զայն Պատաւիոնիդ, ոչ ինչ փոյթ զկամաց և զփափաքանաց այլոց բազմաց արարեալ, և ոչ խակ զգործունեայ կենաց ժիրաժիր երիտասարդաց հոգ տարեալ. և թէ՝ յանձն առնուք լուելեայն գլխանել կամաց Աւստրիոյ տէրութեան, նախադասելով զանհոգութիւն և զհանդարտութիւն մտացդ ազատութեանս և ամենայն իրաց հասարակաց բարեաց ազգիս . . .

« Եթէ իրաւեկ և գուշակ էր Աւստրիոյ տէրութիւնն այդ կամացդ, վաղու եւս զկամս իւր կատարեալ էր, և Գեր. Ազարեան ցանկութեան իւրում հասեալ։ Աւա՜ղ զուր ջանիցս և ընդունայն աշխատութեանս, հանդերձ տառապանօք և նախատանօք. և հաստատութիւն կարծեացս, ահա կրկին և կրկին յիշատակութիւն որ ի Թուղթս Վենետիկ, զմեծամեծ և զզարմանալի արդեանց փոքու ածուին, և այն իբրև ի մխիթարութիւն՞սրտի մերոյ և ի համոզումն մտացս, զի մի զայլ ինչ խորհեսցուք և գործեսցուք մեք աստ ի Փարիզ. Թէպէտ և ի սոյն յայս, հակառակութիւն բանից և ցաւք սրտի անպակաս են. և յիրաւի՝ քանզի մերթ զերկուս ոմանս յաշակերտաց Մ. վարժարանին ի կարգս զՀայ արհամարհողաց դնէք, և մերթ զնոսին վարժապետ հայերէն լեզուի ի դպրոցս Հայոց ի Պոլիս կարգեալ ասէք. և զի և ոչ մի ի նոցանէ օգնական կարգեալ Հ. Անանիայի ի դպրոցն մեր, ընդ է՞ր այլք միայն ծանիցեն զյարգ աշակերտաց դպրոցիս և վայելեսցեն զարդիւնս նորա. առ ինչ շինուածն այն մեծ և հոյակապ և ի ծախըս նորին արծաթ այնչափ։ — Առ ի լնուլ միայն զցանկութիւն Հ. Անանիայի, և ոչ առ այլ ինչ վախճան։

« Գրեցի ես աստի առ Հ. Եսային ի Պատաւիոն, և ազդ արարի նմա զի խորհեսցին այդր խնամակալքն և առաջարկեսցեն Վենետիկ առաքել զոք այտի ի Պոլիս վարժապետ ի դպրոց մեր անդ. և ըստ իմում առանձին կարծեաց ի պաշտօն յայն անդ զՀ. Պետրոս յարմար դատեալ յիշեցի ի Թուղթս. արար ինձ նա պատասխանի զայս. » Գեր. Աբբայն դժուարի յղել « զՀ. Պետրոս ի Պոլիս վասն դպրոցի որ անդ, և ակն ունի

« վերստին կարգել զնա ուսուցիչ Մ. վարժարանին ։ » Բարի են կամք վեհիդ վերստին կարգել զնա անդ. իսկ վասն դպրոցին Պոլսոյ չիցէ՞ կարեւոր և հարկ առաքել անդ զոք, և ո՞ւմ իցէ անկ զայնմանէ խորհիլ և հոգալ ։ Տեսանէք Գեր. Տէր, զանփութութիւնն որ զբարեաց հասարակաց ազգիս ։

« Մխիթարէք զմեզ առատ տալով տեղեկութիւն զՀ. Ներսէսէ և զգործառնութենէ նորա որ ի Տրապիզոն, այլ ոչ յիշէք բնաւ և զանուն անգամ ընկերի նորին Հ. Գրիգորի ։ Առ ինչ վախճան հատուցին դպրոցքն և զծախս ճանապարհի նորա, զի դարձցի նա յետս ի ճանապարհէն ի Պոլիս, որպէս լուաք մեք անտի ։ Ասիցէք արդեօք, թէ տեսեալ ձեր զծախսն ճանապարհի նոցա ծանր՝ թեթեւացուցէք զայն, միոյն և եթ ճանապարհորդելով ։

« Գիտեմք թէ այդպէս իցէ. այլ չէ՞ր բարւոք և կարեւոր զի անդ ի Տրապիզոն զոք ի մէնջ ունել, այն զի և փափաքէին այնմ ազգայինքս որ անդ. միթէ չեղե՞ւ մեզ բաւական խրատ և ցաւ սրտի կորուստ պատեհութեան Զմիւռնիոյ, և նեղութիւնն մերոցն անդ ... տեսանէ՞ք դարձեալ զանփութութիւն զկամաց և զփափաքանաց բազմաց և զսիրոյ հայրենեաց ... ապա ընդէ՞ր իցէ վեհիդ երկիւղալից կարծիքն այն, թէ « Ազ-
« գային մանկտին մեր յորժամ լաւ վարժիցին եւրոպական
« ուսմամբք, արհամարհիցեն զՀայն և զՀայաստան միան-
« գամայն. առ որ առ ձեռն օրինակ, այս և այս անուն աշա-
« կերտք Մ. վարժարանին ։ »

« Ոչ ապաքէն առ ձեռն օրինակ ի Մխիթարեանցս է, ի կարծեցեալ հայրենասիրացս ... և այն ոչ գուշակութեամբ, այլ ճշմարտութեամբ. ահա հաստատութիւն կարծեացս որ զխորհրդոյ և զկամաց վեհիդ, և պատճառք յապաղելոյ և լռելոյ մեր առ ի գործ դպրոցին, զամիսս տասն ի քաղաքիս զուր պանդխտելով, հանդերձ վայրապար ծախիւք ի վնաս աղքատաց ։ Եւ ահա այս ամենայն գնացք են գուշակք և յայտնի նշանակք վրիպելոյ իմ ի յուսոյ բարեաց ազգիս և փառաց հասարակութեանս. ապա չմնայ ինձ այսուհետեւ այլ ինչ մխիթարութիւն բայց ի հրաժարելոյ յընդունայն և

ի ջուր աշխատութենէս, և ի դադարելոյ ի կղզւոջ սորայն Ղազարու, ի բնակարանս ծերոց և հիւանդաց, և բաց յաղօթելոյ վասն բարւոք վախճանիս։...

« Իսկ ձեռագրութիցն և խմբատնոցն պարտ է ըստ օրինակի քերցն Ղազարու նախ ի տանդ և այցելութեան Տեառն ակն ունել, ոչ զի յարուցէ նա զՂազարն, զՄխիթար Աբբահայրն ասեմ ի գերեզմանէն, այլ զհոգի նորա զգեցուցէ յաջորդաց նորին, որպէս զի ըստ դիտաւորութեան հիմնադրին և ըստ ցանկութեան բարերարաց կարասցեն գործել գործ։

« Գիտեմ զի յանդուգն և խիստ թուիցին բանքս Տեառնդ իմում, որպէս զբանս Յովաբայ որ երբեմն առ Դաւիթ արքայ, այլ չէ ինձ փոյթ, շատ է ինձ զի լուիցէ Տէրդ բանից ծառայի իւրոյ, և մխիթարեսցէ և քաջալերեսցէ զորդիս իւր բանիւք և արդեամբք անսալով խորհրդոց և կարծեաց նոցա, և մի խստութեամբ պատասխանի արասցէ, և արհամարհեսցէ զկարծիս և զխնդրուածս բազմաց, որպէս Ռոբովամ զպատգամաւորսն Իսրայէլի. զի ունիմք և մեք զօրինակ նորին, և զարդիւնսն որ ի գնացից անտի, զհակառակութիւնսն ասեմ որ ի նախանձորդացս։ Ապա մի « ընդունայն զրգիռ փոփո-
« խամիտ երիտասարդական նորասիրութեան զգրաւոր և
« զբերանացի դրուատիս որ յիմաստուն ազգէս » Գաղղիացւոց, համարեսջիք և թագուսջիք ի լսելեաց ուսումնասէր երիտասարդացդ. այլ մանաւանդ ընթերցջիք զայն յականջս նոցա և խրախուսեսջիք զնոսա. զի արդեամբք ցուցցեն զայն. և մի կարծէք, զի թագուցանելով զայն նոցա շիջանիցի ոգի նորասիրութեան յերիտասարդական հասակի։...

« Ահա ունիմք աստ զօրինակն, զՏէր Թէոփիլէն Թխսեան. թէ և խենթուկ ոմն է սա, բայց գիտասջիք, զի յայնպիսի դարու եմք այժմ, զի խելօքն եւս զնոյն արասցեն... ապա խոհեմութիւն առաջնորդաց անդ է, զի զակամայն կամաւոր առնել, և զչափազանցն չափաւորել խոհական և իմաստուն կանոնօք. ապա թէ ոչ՝ վնասն հասարակաց լիցի, ոմանց լքանելով և ոմանց յանդգնելով։...

« Միթէ և կարծիքն իմ յայսմ ընդունայն գրգիռ փոփոխամիտ երիտասարդական նորաձեւութեանն իցեն. և միթէ այժմ հասակն իմ ուսեալ երիտասարդական իցէ քան զայն զոր քանի ամօք յառաջ ունէի, յորժամ ընտրութիւն տեղւոյ դպրոցին յիշխանութեանս իմում և ի կամս էր ապաստան. այն զի և նոցին իսկ կուսակալաբար կամք էին ի Գաղղիա հաստատել զդպրոցն, ընդէ՞ր կամեցայ ես յայնժամ զի այդր յԻտալիա և մօտ վանացս լիցի այն, և ընդէ՞ր այժմ այլակի են կարծիքն իմ ։ — Վասն զի ճանաչումս այս և փորձառութիւնս, որ ընդ անարգ գնացս տէրութեանդ չունէի յայնժամ, և վասն զի հանգամանք Եւրոպիոյ պետութեանց և վիճակ ազգին մերոյ այլազգ են այժմիկ, զոր և պատմեցաք և զոր ազդեցաք վեհիդ, եթէ բերանով այդր և եթէ գրով աստի, այլ ազդեցութիւն պատմութեանս սակաւ ինչ ժամանակ տեւեալ, իսկ արդիւնք գրութեանս, ոչինչ բնաւ ի միտս ձեր տեղի կալան. զի կամ չիմանալոյն արարեալ ոչ արժանի համարեցայք պատասխանի նոցին առնել, և կամ երկիւղալից խորհրդածութիւնք ընդ ձեռնարկս մեր այսր, և յիշատակութիւն զարգեանց փոքրիկ ածուոյ Պատաւինիդ արարէք. Թողից աստ զզանցառութիւնն որ ընդդէմ օրինաց նամակագրութեան, յոր միանգամ և եթ պակասեալ մեր՝ մեղադրեցայք ի վեհէդ ։

« Դիցուք թէ և կարծիք մեր յայսմ ընդունայն գրգիռ փոփոխամիտ երիտասարդական նորասիրութիւնք իցեն, հարցանեմ ես արդ՝ թէ քանի՞ հանդարտաբարոյ, խոհական և փորձ ծերք կան այժմ ի վանս մեր, և թէ քանի՞ ամս այլ եւս ապրիցին, և թէ՝ ո՞յք ունին ապա յաջորդել ։ Ո՞չ ապաքէն նորաւէր կարծեալ երիտասարդք այդոքիկ ։ . . . Եւ զի՞րդ քաղաքավարիցին նոքա ։ Ո՞չ ապաքէն ըստ ճանաչման իւրեանց ։ Եւ զինչ դատաստան արասցեն զգնայից նախորդաց իւրեանց։ — Մեղադրութիւն և ստգտանք անգործունեայ կենաց նոցա և վնասուցն որ անտի ։

« Այլ ասիցէք արդեօք, թէ յետ քանի մի ամաց, կամ չիջանիցին ողիք երիտասարդական նորասիրութեան, և պակա-

սիցին այսպիսի կարծիք ի վանս, և կամ առաքեսցին նոքա ի Պօլիս և անդ զբաղեալ նոցա ի գործս առտնին և ընտանեաց իւրեանց՝ մոռասցին զայնպիսի կարծիս, և այնպէս հանդարտեսցին լսելիք ձեր ի շշնջմանէ ոմանց և միտքդ ի հոգոց նոցա։

« Այո՛ այդ միայնակ հնար չիջուցանելոյ զոգին երիտասարդական նորասիրութեան։ Բայց հարցանեմ ես դարձեալ՝ թէ այդու քաղաքավարութեամբ հասանիցէ՞ միաբանութիւնս նպատակի իւրում, և կրկին նպատակին, լուսաւորելոյ զազգն իւր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, չիջուցանելով զաշխուժութիւն ոգւոյ երիտասարդաց իւրոց... և թէ՝ այժմեան վիճակ Հասարակութեանս և յանձնառութիւն պարտուց պաշտաման իւրոյ՝ նո՞յն իցեն որպէս էին ամօք յառաջ, ոչինչ փոյթ զպիտանութենէ կարեւոր անձանց ունելով. և թէ՝ յարգոյ ծերունիքդ այդքիկ ժողովքին և կոչին ի վեհէդ երբեմն երբեմն ի խորհուրդ խօսել և հարցանել ի Ձէնջ զկարեւոր իրաց հասարակութեանս, և զյառաջադիմութենէ նորին. և թէ կայցէ՞ ոք ի միջի նոցա առ որ դիմիցեն երիտասարդքն մեր և բանայցեն նմա զսիրտս իւրեանց, և լուիցէ՞ նա բանաւոր կարծեաց և խնդրոյ նոցա, և զեկուցէ՞ զայն վեհիդ, և անսայցէ՞ք բանից նորա, որպիսի ոք էր երբեմն հանգուցեալ Հ. Գաբրիէլ Աւետիքեան առաքինի և իմաստուն այրն, և զգուշաւորն ի պահպանութիւն կրօնաւորական կարգաց և կանոնաց, չպակասելով երբէք ի պարտս իւր. և յայր ամենայնի վերայ հոգ ունէր նա և փոյթ զերիտասարդաց և զյառաջադիմութենէ Հասարակութեանս, ոչ միայն զներկայէն այլ և զապագայէն խորհէր և հոգայր նա նախահայեաց տեսութեամբ։ Քանզի յիշեմ ես, քանի՛ հակառակ էր նա նորոգ շինուածոյ ի վանս, դիտելով նորա զփոփոխութենէ քաղաքական իրաց Եւրոպիոյ, և յիշելով զառ ի հարկէ ընտրութիւն կղզւոյդ. վասն այսորիկ չկամէր ընդունայն ծախս այդր առնել և զարծաթն ի տիղմս թաղել, թէպէտ և զամենայն կեանս իւր այդր էր անցուցեալ, և զոսկերս իւր այդր ցանկայր թողուլ։ Անպաշար մնաց ճանաչումն, և նախահայեաց տեսութիւն։...

« Իսկ ազնուական զգացողութիւն նորա և ջանքն ի պահել զպատիւ Հասարակութեանս և ի պաշտպանել զիրաւունս նորա այնչափ էին, մինչև կամէր նա արդարացուցանել զգնացս հնգեքին հատելոցն ի մէնջ առաջի Հռովմայ, և զհամարձակ գրուածն զայն, զվճռաւն հաւատոյ, պաշտպանել ընդդէմ այնչափ հակառակորդաց մերոց:... Ահա այսպիսի ազնուական զգացումն ունէր այրն առաքինի և ճշմարիտ կրօնաւորն Մխիթարեան ուխտիս ։

» Եթէ կենդանի էր նա այսօր և տեսանէր զանիրաւութիւնն և զնախատինսն որ ի տէրութենէ այտի առ միաբանութիւնս, զի՞նչ ինչ կարեւոր խորհուրդ և որոշումն հաստատուն կամաց ոչ առնէր ցարդ: Աւա՜ղ զի զրկեցաք մեք յայսպիսի առնէն, վասն այսորիկ և տառապիմք և չարչարիմք ի զուր. և վասն այսորիկ միայն իրաւունս ունիմք ասել, թէ « Ի քա- « ներորդ ամի թշուառ Աբբայութեանս » և ոչ վասն այլ ինչ պատճառաց ։

« Եթէ չունիմ ես զառաքինութիւն և զիմաստութիւն հանգուցելոյն ի Քրիստոս, որով ազդէին արդեօք բանքս ի միտս վեհիդ, հատուցանեմ այսու գրութեամբս զվերջին պարտս իմ իբրև զորուպ ոք ի միաբանիցդ, թէպէտ և կամէի ես երեք ամօք յառաջ հատուցանել զայս պարտս խղճի մտացս, այլ յապաղեցի ցարդ՝ կասեալ ի բանից անտի վեհիդ, թէ « Այսոքիկ դարձեալ իմ առանձնական մտածմունք. » քանզի կարծեալ իմ, թէ իբրև առանձնական մտածմունք չէին այնք խափան հասարակաց որոշմանն, և իբրև պատգամ ի բերանոյ ամենեցուն կասեցուցանել զմեզ առ իսպառ ի գործս դպրոցին ։

« Բայց իբրև տեսի ես, թէ օր ըստ օրէ առանձնական մտածմունքն սաստկացան, և հաստատութիւն առին, (քանզի փոխանակ պատասխանի առնելոյ վեհիդ նշանական բանից թղթոյ Հ. Յովհաննու, հարցանէք ցնա տարակուսանօք, թէ տուեալն ի Ձէնջ այտի թուղթն, որ ի 25 յունվարի տարւոյս, ժամանեա՞լ իցէ անկորուստ ի ձեռս մեր աստ, որով յիշեցուցանէք մեզ, թէ պատասխանի բանից թղթոյն նորա անդ է,)

յայնժամ հարկաւորեցայ ես գրել զթուղթն զայն երկայն և խնդրել ի վեհէդ ընթեռնուլ զայն ուշադրութեամբ, և ընթեռնուլ տալ յականջս միաբանիցդ այդր. և ապա առնել վանական ժողով և հաւանութեամբ նորին տալ մեզ սաստ որոշ և հաստատուն հրաման, հանդերձ քանի մի ստորագրութեամբ անդ. որպէս զի ի դարձին մերում այդր, հարցանողացն, թէ առ ինչ փախճան արարաք մեք զճանապարհորդութիւնս, և ընդէ՞ր դարձաք յետս ունայն, կարասցուք առնել նոցա համառօտ պատասխանի, և մի՛ պարտաւորեցիք միոյ միոյ իւրաքանչիւր նոցա ընթեռնուլ զամենայն թուղթսն որ այտի և որ աստի, որով խիստ քննութեամբ և կամ զայթակղութեամբ մնաց տկարաց ոմանց լիցուք մեք պատճառ ։

Ահա այս էր նպատակ թղթոյս այնորիկ, և ոչ այլ ինչ փախճան. քանզի չեն ինձ կամք ի դրութիւնս իմ անդ առիպելոյ զՏէրդ զիջանել ի կարծիս մեր, չունելով իմ յայն իշխանութիւն. և ոչ համոզել զՁեզ, չունելով յոյս ակնկալութեան, և լքեալ զոլով իմ հոգւով և մարմնով ։ Վասն որոյ աղաչեմ զՏէրդ իմ առնել զայս անթերի և փութով ի միանակ մխիթարութիւն տառապելոյս և լքելոյս, և մնամ

Արհիապատիւ Տէրութեանդ Ձերում

« Ի Փարիզ. 23 մայիսի. 1845.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԺԱ.

Պատասխանի Ոստիկանի արտաքին գործոց առ աղերսագիրն գործակալաց. — Թուղթ գոհութեան Գեր. Սուլթանի առ գործակալս ընդ ընդունելն ուրախութեամբ աղերսագրի նոցա. — Վանական ժողովոյ հաւանութիւն ընդ փոխադրութիւն Մ. վարժարանին ի Փարիզ. — Թղթակցութիւն գործակալաց ընդ Գեր. Սուլթանի վասն տեղւոյ և կարեւոր իրաց վարժարանին ի Փարիզ. — Կոչ Հ. Սարգսի ի վանս վասն կարգաւորութեան վարժարանին. — Խնամակալաց ժողով ի վանս վասն պաշտօնէից Մ. վարժարանին ի Փարիզ. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Գեր. Սուլթանի վասն կոչման իւրոյ ի վանս և յապաղման նորին.

ՊԱՏՃԷՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ ՈՍՏԻԿԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԵԼՈՅ ԱՂԵՐՍԱԳՐԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

« ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ.

« Քաղաքական Տեսչութիւն.

« Փարիզ. 19 մայիս. 1845.

« Պարոնայք.

« Իմաստ Նամակին զոր պատիւ ինձ արարեալ գրեցէք յ30 Նոյեմբերի անցելոյն, է հայցուած հրամանի փոխադրելոյ ի Փարիզ զվարժարանն զոր Միաբանութիւնն ունի ի Պատաւիոն և հաստատելոյ զայն ի Գաղղիա ամենեւին անկախ ի Համալսարանէն Արքունի :

« Այս խնդիր մեծապէս ընդունելի գտաւ որպէս արժան իսկ էր :

« Արքունական Պետութիւն քաջահմուտ և խրատալի

պատճառաց մեծարանացն զոր ամենայն ոք ունի առ Միաբանութիւն Մխիթարեան կրօնաւորաց գիտաւորութեանն բարւոյ որով շարժի, և օգտակար և պատկառելի, վաստակոցն որովք վաստակէ ի քաղաքակիրթ հրահանգս ազգին ։ Գաղղիա որ իբրև պաշտպան ուղղափառութեան յարեւելս, վաղ իսկ փոյթ յանձին կալեալ է սակս օգտի ազգին Հայոց, մտադիւր սիրով ի գէպ վարեսցէ զպատեհս ամենայն յորս կարող իցէ նորանոր հաւաստիս ընձեռել նմա զիւրոյ օրինաւոր և իրաւացի սիրոյն ։

« Գիտէք իսկ, Պարոնայք, զի Արքունական պետութիւնն գիջեալ ի խնդիրն զոր արարէք առ իս, հաւանէր ընդ փոխադրութիւնն ի Փարիզ վարժարանին ձերոյ որ ի Պատաւիոն, որպէս զի աստէն կայցէ մնասցէ անկախ ամենեւին ի Համալսարանէն ։

« Վարժարանդ այդ մնասցէ ըստ ամենայնի ընդ իշխանութեամբ և իրաւասութեամբ հանրական Առաջնորդի Միաբանութեան ձերոյ և վայելեսցէ յամենայն ազատութիւն ուսմանց տեսչութեան, և կանոնական և տնտեսական մատակարարութեան, որպէս հաճոյ թուիցի ձեզ ։

« Մի միայն յարաբերութիւն նորին եղիցի ընդ Ոստիկանին հասարակաց ուսման, և ըստ այսմ մասին ուրախ եմ զի մարթիմ տալ ձեզ բացատրութիւն ինչ որովք փարատին երկբայութիւնք ամենայն, և խափանին ամենայն մեկնաբանութիւնք ։ Քանզի և ոչ այլ ինչ եղիցի յարաբերութիւնն այն, եթէ ոչ նոյն ինքն պաշտպանութիւնն զոր վարժարանդ արդ եկեալ խնդրէ ի Գաղղիա ։

« Ոստիկանն ուսման հասարակաց միջնորդ և եթ եղիցի բնական և բարեխէր ընդ Արքունականն Պետութիւն և ընդ Միաբանութիւնդ ։ Առ նա կարող է դիմել դա զի ի լինել հարկին ընկալցի զօգնականութիւն օրինաց և զնպաստ երաշխաւորութեանց ազատութեան և ապահովութեան յոր ամենայն ոք ունի իշխանութիւն վայելելոյ ի Գաղղիա ։ Միաբանութիւնդ այժմէն կարող է վստահ լինել յանյեղլի խնամակալութիւն սորա ։ Միով բանիւ, Պարոնայք, անկախութիւն լի բովանդակ

Հայկազեան վարժարանիդ ըստ դպրոցական, տնտեսական և կանոնական մասանց, յարաբերութիւն ընդ դա և ընդ Ռափիկանն ուսման հասարակաց, յայն ինչ դէպս միայն, յորս պաշտպանութեան իրիք լինիցին պէտք, զոր և Ռափիկանն ցանգ փութասցի ընձեռել նմին ։ Այսուհետև պարտին լինել հիմունք հաստատութեան այդր վարժարանի ի Գաղղիա ։

« Չիք երկբայութիւն զի յայսմ պայմանի վարժարանին ոչ գոյ բնաւ ինչ որ ոչ համաձայն իցէ խնդրոյ Գեր. Արքեպիսկոպոսին Սիւնեաց ։

« Ընկալարուք, Պարոնայք, զհաւաստիս մեծարանաց իմոց.

« ԿԻԻԻՁՈՅ. »

Ընկալեալ գործակալաց զվերոյիշեալ պատասխանին աղերսագրի իւրեանց յՌափիկանէն արտաքին գործոց Պետութեան, հանդերձ հաւանութեամբ Ռափիկանի հասարակաց ուսման, ուրախութեան և գոհութեան զՏեառնէ յոյժ, որ յաջողեաց նոցա զայն, բայց միանգամայն և կասկածին ընդ հաճութիւն նորին միաբանութեան իւրեանց, զմտաւ ածեալ զապստամութիւն մտաց նորին որ ընդ գործառնութիւնն այն ցայն վայր. սակայն ի վերայ այսր ամենայնի առաջին փաղփաղակի զպատճէն նորին առ Գեր. Սոմալ, հանդերձ գրով իւրեանց հասարակաց և առանձինն, և առանձնագրով Հ. Սարգսի, զորս վերագոյն յիշատակեցաք, և որոց առնէ պատասխանի Գեր. Սոմալ, օրինակ զայս.

« Ցարգոյ և Պատուական հարց մերոց Վ. Հ. Սարգսի և Հ. Յովհաննու խնդալ.

« Աւետաւոր և ցանկալի վճիռ Գաղղիական պետութեանդ հասեալ ի ձեռս իմ յ30 մայիսի, բերկրեցոյց զմեզ յո՛յժ յո՛յժ, և գոհութիւնս մատուսաք տեառն Բարձրելոյն, որ անքուն պահապանն է տանս Մխիթարայ, և հզօր աջով Մօրն իւրոյ առաջնորդէ մեզ միշտ ի բարին և յօգտակարն ։ Անդէն և անդ եսու զայն թարգմանել ի Հայ բարբառ և ընթերցեալ յունկն սաստ եղելոց ամենեցուն, զօրինակն առե-

տաքեր թղթովք հանդերձ առաքեցի ի գիւղն և ի Հռովմ, ի տեսանել Վանդ զանխոնջ աշխատութիւն ձեր պսակեալ այսպիսի մեծապարգև յաջողութեամբ ։ Ոչ սպասէի բնաւ ընդունել ընդ աւետաւորին զարդէն կորի անագանեալ պատասխանին ձեր առ թուղթն իմ գրեալ առ ձեզ ի 25 յունվարի տարւոյս, և ոչ իսկ կարծէի թէ գտանիցի այնչափ նիւթ պատասխանւոյ, զի յցցէ էջս 27, և կամ գրեսցի յամիսս երիս...

« Եւ սակայն երկայնամիտ յօժարութեամբ պարտ անձին վարկուցեալ ընթեռնուլ զայն ծայր ի ծայր, առ այժմ ասացից, զի աւելորդ համարիմ, մանաւանդ թէ անհնարին, մի առ մի պատասխանի առնել երկայն նամակիդ. քանզի ի վերայ սովորական տկարութեանս որ յամսոյ հետէ աւելի քան զոր յայլ եղանակս տանջեաց զիս, ոչ պակասեն և նորանոր ցաւք մարմնոյ և նեղութիւնք արտաքինք, յորոց մի է և պատրաստութիւնս ի պատասխանել քննչաց դատին նախահօրն մերոյ, որ այս երկրորդ անգամ եկեսցեն այսր յառաջիկայ երկուշաբթիս ի հարցանել զիս առանձինն (*) ։

« Զայս միայն հարկ համարիմ ծանուցանել Արգոյ Հարցդ, զի գլխաւոր պատճառ այլ ընդ այլոյ իմացուածոյ թղթակցութեանց մերոց երկուստեք, այն եղեալ է, զի դուք յետ ընդունելոյ զգրեալն մեր ի 15 սեպտեմբերի անցելոյն, թուղթ յստակ և որոշ ըստ ամենայն բանիցն և բառից, ոչ նովին յստակութեամբ գրեալ էք առ իս զպատասխանին ի 27 նորին ամսոյ, այս ինքն, չասէք ի նմա որոշակի թէ ոչ է հնար « երրորդական իմն տեղի ստանալով ի Փարիզ՝ զերծանել մեզ « ի պահանջմանց Աւստրիացւոյն, այլ հարկ է և զՄուրատեանն ողջոյն փոխադրել ի Գաղղիա. ապա թէ ոչ, Գաղղիացին ոչ կարէ պաշտպանել դպրոցին որ իցէ ի Պատաւիոն յանուն Մուրատի ։ »

(*) Ի ժամանակաց ինչ հետէ իցձ լինէր միաբանութիւնն ի կարգս Երանկեաց դառնալ տալ զՄխիթար աբբայ. ամէն իրի ոստիկանք ի Հռովմայ զահէն կացեալ ի քննել զվարս Մխիթարայ, հարցանէին զամենեսին որ գիտէին ինչ զնմանէ, և յաւուրն նշանակեալ ի վեր անդր էր նոցա հարցաքննել զՍուքիաս աբբայ Սոմալեան.

(Ծանօթութիւն Հեղինակին.)

« Իմ գոլով յայնժամ ի մահճս առ խօթութեանս, և զբա-ղեալ եւս ի հոգս նորոց եկաւորելոյն ի Պօլսոյ որ մազապուրծ գերծեալ էին ի նաւաբեկութենէ, ոչ կարացի այլ ինչ նշմարել ի մթին թղթի ձերում, բայց եթէ զպատասխանի գրելոյն ի մէնջ ի 15 սեպտեմբերի, և զխնդութիւն ձեր ընդ այն որո-շումն վանացս, որ և ձեր իսկ առաջարկեալ էր ինձ թղ-թով ի Լոնտոնէ, և վասն այսորիկ ահա նոր իմն թուեցաւ յաղերսագրի անդ՝ ոչ միայն Առաջակայից, այլ և ինձ գլ-խովին, բառն այն փոխադրել, և սովին խորհրդով հարկ հա-մարեցայ ես գրել զթուղթն որ ի 25 յունվարի: Տեսանէք ապաքէն սիրելիք, զի եթէ ստէպ ստէպ և յատուկ թղթակցու-թեամբ քաջ իմանայաք երկուստեք զմիտս իրերաց, ոչ ար-դեօք ի գրուածս իմ հակառակութիւնս բանից նշմարէիք, և ոչ զուր տարապարտուց տագնապէիք, թէ հասարակութիւնս անձանաչող իցէ վաստակոց բազմարդիւն գործակալացդ ի-րոց, կամ թէ կասկածի ինչ ընդ հպատակութիւն ձեր և ընդ հասարակասիրութիւնն:

« Զիարդ և իցէ, վախճանն ի բարին հանգեցաւ փառաւո-րապէս. և այս չափ է յուրախութիւն մեզ և ձեզ առ հասա-րակ: Վանական ժողով գումարել անհնար է ինձ ցամիս մի. զի ահա դեռ եօթն աւուրք են յորմէ հետէ ի գեղջ է մասն ինչ ուխտիս, ընդ դառնալ նոցա փութացայց գումարել և գրել առ ձեզ զվճիռն յանդորրութիւն սրտից ձերոց: Բայց քանզի ըստ ստուգագոյն և առանձին տեղեկութեանց իմոց, յետ տեսանելոյ զայսպիսի վճիռ տէրութեանդ՝ անշուշտ հա-ւանեսցի ժողովն վանական ընդ փոխադրութիւն Մուրատեան վարժարանին Պատաւինի ի Փարիզ, վասն որոյ դուք բար-ւոք առնէք պատրաստել այդր տեղի և առ այն վերաբերեալս, միանգամայն ի ձեռս բերել զամենայն կարելի առանձնաշնոր-հութիւնս, որպէս առնէք: Ողջ լինել ցանկամ

« Հայրութեան Ձերում, աղօթարար ծառայ

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ.

« Արքեպիսկոպոս և Աբբայ. »

Թէպէտ և կարէր Հ. Սարգիս վերստին առնել պատասխանի վերոյիշեալ թղթոյ Գեր. Սոմալի, յիշեցուցանելով նմա զբանս թղթոյ իւրոյ գրելոյ առ նա ի Փարիզէ ի 27 սեպտեմբերի 1844 ամին, յորում յստակ և որոշ ծանուցանէ նմա, թէ պարտ և հարկ է փոխադրել զՄ. վարժարանն ի Փարիզ, և թէ՝ « չէ հնար երկրորդական իմն տեղի ի Փարիզ ստանալ՝ զերծանել ի պահանջմանց Աւստրիացւոյն, » ըստ խորհրդոյ աշխարհագէտ արանց. այլ լաւ է կարեկից լեալ տկարութեան նորա, որպէս և ինքնին խոստովանի: . . .

Առնէ միայն պատասխանի վերոյիշեալ գոհութեան և շնորհակալութեան թղթոյ նորա, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր մերոյ խոնարհ համբոյր Աստուածարեալ Աջոյն.

« Ոչ մխիթար և քաջալեր բանք պատասխանւոյ Գաղղիացւոց Պետութեանն որ առ մեզ, Արհիապատիւ Տէր, այնչափ իմն մխիթարեցին և քաջալերեցին զմեզ ի գործս յայս, որչափ ինչ գոհութիւն մտաց և բերկրութիւն սրտի Ձերոյ և Ուխտիդ որ ընդ այն այդր: Եւ յիրաւի՝ քանզի որչափ և մեծապայծառ յաջողութեամբ պսակիցի ուրեք և ուստեք անխոնջ աշխատութիւն պաշտօնէից Հասարակութեանս, սակայն չհամարի նոցա այն ի մխիթարութիւն և ի քաջալերութիւն, ցորչափ չգիտեն և կամ տարակուսին նոքա, թէ ծառայութիւնն այն իւրեանց, հաճո՞յ իցէ Հօրդ հասարակաց և համօրէն եղբարցս:

« Զայս այսպէս հաւատացեալ մեր և հաւաստարիմ վեհիդ առարեալ չկարծեմք մեք, թէ երկար գրութիւնս, անագանեալ պատասխանիս սաստ աւելորդ և անդէպ էր ընդ աւետաւորին ուղղեալ. զի յիշատակութիւն անցիցն անցելոց, թէպէտ և ի ժամուս աւելորդ և անախորժ եւս լսելեացն թուիցի, այլ կարեւոր յոյժ և օգտակար ապագայ իրացս լիցի, եթէ ի յոգի առնու գրութեանս՝ և ոչ ի բանս քննութեանն հայեսցի, և զի ի յոգի առնու գրութեանս, ոչ այլ ինչ կայ, բայց եթէ ցանկու-

թիւն բարեաց հասարակաց, հանդերձ ամենայն հպատակութեամբ Վեհիդ կամաց. և զայս այսպէս հաստատեալ՝ եկեացուք այժմ ի բանս կարեւոր գործոյս աստ ։

« Արդ՝ յետ գտանելոյ ըստ խնդրոյ և ցանկութեան մերում պատասխանի ի Գաղղիացւոց պետութենէն, թէպէտ և պարտ իսկ էր մեզ ի շնորհակալիս աւանդանելոյ Տէրութեանս մատչել, բայց պատշաճ համարեցաք, զի թղթովք ի դիմաց Վեհիդ լցցուք զայն, որոյ և մնամք օր ըստ օրէ. և յետ այնորիկ զհետ լիցուք մեք աստ ինչ ինչ առանձնաշնորհութեան, ըստ պիտոյից և ըստ յաջողութեան ։

« Վասն տեղւոյ դպրոցիս՝ յարմար և յաջող մեզ պարտ է լինել ի կողմանս ուսումնարանաց, ուր վարժապետք ուսմանց և արուեստից մերձ են. վասն որոյ խորհիմք և ի խնդիր եմք գտանել պատշաճ ինչ բնակութիւն անդ, և առ ժամս ի վարձու կալեալ մինչեւ ըստ պատեհի և ժամանակաւ կարասցուք ստանալ սեփական տեղի ։

« Պատրաստութիւն տեղւոյ դպրոցին և կարեւոր կարասեաց նորին մեծ և ծանր է մեզ աստ, այլ մեծապէս և ծանրագոյն հոգք մեր են զեկելոց այսր անձանց, զմանկանց և զդաստիարակէ նոցին, հայեցեալ ի հանգամանս մեր, ի կարծիս ասեմ բարեկամաց մերոց և թշնամեաց ։ . . . Բարեկամք մեր աստ վարկ մեծ ունին զմիաբանութենէս, և ակնկալութիւն բազում բարեաց հասարակաց ազգիս ի նմանէ . . . իսկ ցանկութիւն թշնամեաց՝ յայտնի է ի գործոց նոցա, և յայտնագոյնս եւս լիցի, եթէ պակասիցիմք մեք ի պարտս մեր ։ . . . Վասն այնորիկ պէտք և կարեւոր պէտք են մեզ զամենայն փոյթս մեր և զջանս ի կիր առնուլ ի գործս յայս, զոնէ ի սկզբանն անդ, յընտրութիւնն ասեմ մանկանց և դաստիարակի նոցա, որպէս զի մի՛ տեղի տացուք տրտմութեան բարեկամաց մերոց, և ուրախութեան հակառակորդաց ։ Զի սոքա յետինքն ցորչափ կենդանի են չդադարին երբէք ի հակառակութենէ իւրեանց, գրգռեալ միշտ ի նախանձորդաց մերոց... բայց ի տեսանել բարեկամաց մերոց զարդիւնս մեր, պաշտպանեսցեն մեզ յամենայն ուրեք և ի դէպս, և վասն այսորիկ

պարտին մերքն ի Պօլիս բազում զգուշութեամբ և անաչառութեամբ առնել զընտրութիւն մանկանցն, յոր և պակասեցան ցարդ, եթէ անփութութեամբ, և եթէ աչառութեամբ, այլովք ն հանդերձ :

« Թիւ մանկանց պարտ է լինել երեսնիւ չափ, զի երեւեսցի ինչ յաչս սոցա, որք ակն ունին հարիւրաւորի : Են են առ այս ընտրութիւն և կարծիք կարեւորք, զորոց լիցին ապա խորհուրդ և որոշումն ինչ : Նոյնպէս պարտ է վանացն նուիրել և զոհել զառանձնական շահն և զանձնական դիւրութիւն իւր, գոնէ առ ժամանակ մի, տալով աստ ի գործս յայս զքանի մի գործունեայ և յարմար անձինս, զի պար մեր այժմ ոչ յանկեան ուրեք Վենետկոյ է, այլ ի տեսարանի Փարիզու :

« Գիտեմ զի ընդ այս տագնապիցի Վեհդ սակաւիկ մի, հայեցեալ յանրաւականութիւն անձանց միաբանութեանս, այլ մեք յուսացեալ եմք ի Տէր և յողորմութիւն Նորա, որով յաջողեցաւ հաստատութիւն կրկին դպրոցացս, լցուսցին Նովաւ և կարօտութիւն Ձեր ի գործս Նոյին : Իսկ թէ ոյք կարեն յարմար լինել ի պաշտօնս յայս, տացուք մեք զխոնարհ կարծիս մեր ապա. միայն յառաջագոյն պարտ է Վեհիդ գրել առ մերսն ի Պօլիս, զի պատրաստեսցեն նոքա անդ մանկունս ըստ վերոյիշեալ թուոյ և հանգամանաց, և դիցեն զնոսա ի ճանապարհ ըստ ժամանակին :

« Զունելով այլ ինչ ի ժամուս բաց ի խոնարհ մաղթանացս առ Աստուած վասն երկար և առողջ կենաց Վեհիդ և վասն յաջողութեան ամենայն գործոց ձերոց ի պարծանս Հասարակութեանս և ի պայծառութիւն ազգիս, և մնալով միշտ

« Արհիապատիւ Տէրութեանդ ձերում

« Ի Փարիզ. 16 յունիս. 1845.

« Խ. և ամենահնազանդ որդիք

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ

ԵՒ

« Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՈՐԿՈՒՃԵԱՆ. »

Առնէ պատասխանի Գեր. Սոմալ վերոյիշեալ թղթոյ գործակալաց, օրինակ զայս.

« Յարգոյ և պատուական վարդապետաց մերոց Հ. Սարգսի և Հ. Յովհաննու խնդալ.

« Առ ի պատասխանի առնել գրեցելումդ ի 16 անցելոյն, Մնայի դարձին մերոցն ի գեղջէ. և ահա ի գալն Նոցա յերկրորդում աւուր անընդմիջապէս որ օր տօն էր այցելութեան Տիրամօրն, յաջողելով Տեառն եղեն վանական ժողով անձանց քսանից և երկուց, ուր յետ մաղթելոյ զայցելութիւն մայրենի խնամոց Սրբուհւոյ Կուսին ի ժողովականս, ընթերցաւ բարձրաձայն վճիռն Գաղղիական ի լուր ամենեցուն:

« Խօսեցեալ ապա առն առն իւրաքանչիւր զիւր կարծիս, խնդիրն ի վախճանի յերկուս վերածեցաւ: Նախ՝ թէ այժմ արդեօք փոխադրեսցի՞ Մ. վարժարանն ի Փարիզ. և երկրորդ՝ թէ ոչ այժմ, այլ փոքր մի ժամանակ եւս անագանեսցի: Սմին իրի և հարկ եղեւ քուէարկութեան, և ել թիւ քուէիցն 17 այո՝ այսինքն թէ այժմ փոխադրեսցի, և 5 ոչ, այս ինքն թէ անագանեսցի. և այսպէս խաղաղութեամբ արձակեցաւ ժողովն:

« Միայն աղաչեցին ծերքն և խնդրեցին գիտել այտի նախ՝ թէ արդեօք ի ժամ փոխադրութեանն պաշտպան կայցէ՞ Գաղղիացին, եթէ յանկարծ հակառակիցի Պետութիւնս. և երկրորդ, թէ արդեօք պաշտպանիցէ՞ Գաղղիացին և կալուածոց վարժարանիս այժմ և առ յապայն ընդդէմ կարծեցեալ բռնութեան Աւստրիացւոյս ի վերայ Նոյին դրդեալ ի գրգռմանէ դարձեալ Մուրատին և խորհրդակցի Նորա: Զայս երկու ինչ մարթիք անձամբ տեղեկանալ այդր և տալ մեզ այսր տեղեկութիւն ի հանդարտութիւն սրտի ծերունեաց մերոց:

« Կարեւորագոյնն այժմ է ներկայութիւն ձեր աստ առ մեզ, գո՛նէ միոյդ, թէ չէ մարթ երկոցունցդ միանգամայն լինել, և այն հարկաւ գլխաւորիդ վիճակիցի որ ուղղիչ կարգեալ է վարժարանին. որպէս զի անձամբ խօսեսցուք աստ զկարեւո-

րացն ի կանգնումն հին վարժարանին ի նոր տեղւոջ ի համբաւատենչ մայրաքաքիդ ։ Քանզի հարկ է մինչեւ ձեռնարկեալ ի գործ, զգործիսն պատրաստել, նոր կարգս սահմանել ի վարչութիւն, ի զգեստս եւ յուսմունս, այլովքն հանդերձ ։ Այլ զոր ասէքդ զթուոյ մանկանց կոչելեաց ի Պօլսոյ եւ զընտրութենէ նոցին, եւ զժամանակէ եղելոց, զայդ ամենայն առնել անկ է ահա ուղղչի վարժարանին եւ խնամակալաց ժողովոյն որք քաջ խելամուտ են հանգամանաց կարեւորացն առ այն ։ Բայց ի գրել ձեր ի Պօլիս, պիտի պատուիրել, զի պատրաստութիւնն լինիցի լռիկ առանց ասելոյ ինչ մանկտւոյն, որպէս յայլ նուագս, զի մի՛ յառաջ քան զժամանակ ուղւոյ լինելոյ՝ աստանդական լիցին մանկունքն, եւ չկարասցեն մերքն ազատաբար ընտրել զոր կամին, եւ առանց ինչ գլխացաւս ունելոյ ի ծնողաց նոցա ։ Սմին իրի դժուարին թուի ինձ եւ բազմաթիւ ընտրութիւնն ի սկզբանս. զի առ ի լրացուցանել զթիւն սպրդին ի ներքս եւ անպիտանքն, որք չլինիցին ձեզ ընդունելիք ։

“ Զայլոց կարեւորաց, մանաւանդ թէ կարեւորագունից խօսեսցուք աստ անձամբ ։

“ Զունելով այլ ինչ ի ժամուս, կնքեմ կարօտագին ողջունիւ համօրէն միաբանիցս, եւ հայրական առատ օրհնութեամբս ողջ ցանկամ լինել

“ Հայրութեան Ձերում, աղօթարար ծառայ

“ Ի Վենետիկ. 4 յուլիս. 1845.

“ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ.

“ Արքի եպիսկոպոս եւ Աբբայ. ”

Առնէն պատասխանի գործակալքն վերոյիշեալ թղթոյ Գեր. Սոմալի, օրինակ զայս.

“ Արհիապատիւ Տեառն Տեառն եւ Գերապայծառ Հօր մերոյ խոնարհ համբոյր Աստուածարեալ Աջոյ.

“ Զցանկալի նամակ Արհիապատուութեան Ձերոյ, չնոր-

հետ ի 4 յուլիսի, ընկալաք ի 11 սորին ամսոյ, և քաջալերեցաք առաւել ևս ընդ վերստին հաստատութիւն հաւանութեան Վեհիդ և համօրէն ուխտիս, փոխադրելոյ զՄ. վարժարանն այսր ի Փարիզ. և ընդ այս մեծապէս գոհութիւն և փառս մատուցաք վերին տեսչութեան։ Միայն ցաւեցաք սակաւիկ մի և ցաւիմք տակաւին ընդ կարծիս ոմանց այդր, որք կամեցան և կամին դարձեալ, զի ոչ այժմ, այլ փոքր մի ժամանակ ևս անագանեսցի փոխադրութիւն Մուրատեան դպրոցին։

« Զգիտեմք մեք արդեօք, ակնկալութիւնն յաջող ելից խնդրոյս ի Վեննայէ՞, թէ երկիւղ բռնութեանն անտի իցեն պատճառք դանդաղութեան կամաց դոցա։ Եթէ առաջինն, չիցէ՞ բաւական երեքամեայ ակնկալութիւն մեր գտանել անտի իրաւունս և արդարութիւն. և դարձեալ դիցուք թէ ի վախճանի հասանիցիմք այնմ, բռնադատեալ զիջանիցի յանիրաւ պահանջմանց իւրոց անտի, զի՞նչ պարտ և պատշաճ իցէ մեզ առնել յայնժամ ըստ կարծեաց դոցա. կասի՞լ մեզ ի գործոյ աստի և երևել յաչս Գաղղիացւոց պետութեան իբրև արք փոփոխամիտք և անհաստատ ի խորհուրդս, ի բանս և ի գործս իւրեանց։ Եւ եթէ երկրորդն, ահա ամք հինգ են, զի կրկին և կայսերական վճռով ի ներքոյ եմք հրամանի համար տալ տէրութեանդ, և զի մեք չհնազանդեցաք ցարդ հրամանի նորին, և ազդեցաք ևս բանիւք ի Վեննա, թէ չկարեմք մեք և չկամիմք երբէք հնազանդիլ հրամանի վճռոյն այնորիկ, ընդէ՞ր չեղև մեզ ցարդ բռնութիւն ինչ անտի. վասն զի չունի նա իրաւունս բռնանալոյ մեզ, զի հպատակ եմք Օսմանեան Տէրութեան։ Զայսմանէ բազում անգամ գրեալ և խելամուտ արարեալ եմք, բայց քանզի որպէս յառաջագոյն ասացաք, չեն ուշ եղեալ ոմանք այդր բանից գրութեանս մերոյ, և ոչ իսկ նշանական բառին դիպուածական, որ ի վճիռն Պետութեանս։ Ապա աւելորդ, մանաւանդ թէ ծաղրական է վերստին ընդ այն հարցանել և խնդրել ինչ ի պետութենէս։

« Որպէս ի նախընթաց թղթի մերում ասացաք թէ հոգ

պատրաստութեան տեղւոյ դպրոցիս մեծ և ծանր է մեզ յոյժ ատա, արդարև տեսանեմք զայն օր ըստ օրէ ։ Վասն որոյ և տագնապիմք յոյժ. և ահա վասն այսորիկ յապաղեցաք տալ պատասխանի Թղթոյ Վեհիդ, գրելոյ ի 4 յուլիսի, մնալով մեր տալ ընդ նմին և որոշ ինչ տեղեկութիւն զայսմանէ, և այս է պատճառ յապաղման դարձի մերոյ այդր, ըստ հրամանի Վեհիդ ի խորհել զկարեւորացն. յորժամ հոգասցի աստ զտեղւոյ դպրոցիս, լիցի և դարձն միոյն ի մէնջ այդր ։

« Բայց յառաջ քան զայս ամենայն կարծեմք մեք, Գեր. Տէր, թէ կարեւորագոյնն ի գործս է հոգն որ զդպրոցէն մերոյ ի Պօլիս. զի ակնկալութիւն ապագայ բարեաց ի բարեկարգութենէ անտի պարտ է սկիզբն առնուլ, թողեալ և զայլ բազում բարիս, զոր կարօտեալ ազգն մեր կարէ և անդ օգտիլ ։ Վասն որոյ աղաչեմք զՎեհդ, զի փութասցի նախ առաքել անդ զմի ոք ի մէնջ այտի ի դաստիարակ և ի վարժապետ ուսմանց, ըստ երբեմն խորհրդոյ և որոշման խնամակալաց ժողովոյն, և ըստ արդէն ծանուցանելոյ մերոցն ի Պօլիս. և զի այնպիսի ոք լիցի առաքեալն անդ, որ վարժ և փորձ իցէ դաստիարակութեան և ուսման մանկանց ։ Մեք ըստ առանձին և խոնարհ կարծեաց մերոց ի պաշտօն յայս յարմար զՀ. Պետրոս տեսանեմք, որ և ծանօթ գոլով կարողութեան և բարուց աշակերտաց իւրոց եւելոց ի Մ. վարժարանէն, յորոց կարէ ընտրել և առնուլ յիւր օգնական, այլ և պատրաստել մանկունս երկուց վարժարանացս ըստ պիտոյից և ըստ ժամանակին ։

« Կնքեմք զԹուղթս կարօտագին ողջունիւ առ համօրէն Հարս և Եղբարս, և մնամք միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ Ձերում

« Ի Փարիզ. 26 յուլիս 1845.

« Խ. և ամենահնազանդ որդիք

« Հ. Ս. Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ

ԵՒ

« Հ. Յ. Վ. ՍՈՐԿՈՒՃԵԱՆ. »

Առնէ պատասխանի Գեր. Սամալ վերոյիշեալ թղթոյ գոր-ծակալաց, օրինակ զայս.

« Յարգոյ և պատուական Հարց մերոց Վ. Հ. Սարգսի և Հ. Յովհաննու խնդալ.

« Ընկալեալ զգրեալդ ձեր ի 26 անցելոյն, և խելամուտ լեալ անտի արդի հանգամանաց իրաց մերոց այդր, առեմ փութալի է առ ժամս յարմարել այդր տեղի դպրոցի, եթէ վարձու իցէ, և եթէ չափաւոր գնոց ինչ գնելով. որպէս զի փութով պատսպարիցիմք ի քաղաքիդ մինչև ձմերոյն ի վե-րայ հասեալ, որ ահա չէ հեռի ի մէնջ: Երկրորդ անգամ, զի փութով թումբ և պատուար ամբարձցուք ընդդէմ խառնակ զրուցաց սփռելոց աստ ի քաղաքիս, որովք կարծեմ խաղ առնել զմեզ Գերմանացին, և զի եթէ հնար ինչ իցէ, ի նոր ինչ ծուղակ ըմբռնեսցէ զմեզ ոսոխիմն մեր . . . եթէ յանկարծ դիւրահաւան գտանիցիմք:

« Իսկ յաղագս երթի Հ. Պետրոսի ի Պօլիս առ ի կալ անդ վարժապետ ուսմանց ի նորակերտ դպրոցի մերում, յիշեմ և ես զի ձեր վաղնջուց խորհուրդ էր այն միաբան, և մեզ հաճելի: Բայց իմ տարակուսեալ երբեմն, թէ արդեօք միաբանիցի՞ սա ընդ Ճէլալեանին ի պաշտաման անդ, թէ և չխառնիցի բնաւ ի վարչութիւն արտաքին իրաց դպրոցին, զոր Ճէլալեանն ունի ցայսօր բազում գովեստիւ նորոգ ականատեսից, հարցի զկարծիս Հ. Գէորգայ, և նա պատասխանի արար ինձ, թէ « Դուք Լաւագոյն ևս քան զմեզ ճանաչէք զբնաւորութիւն « եկաւորիդ, որ փոքր մի յամառ թուի և չմիաբանի ընդ « այլս: Բայց եթէ և չյարմարիցի կալ ի դպրոցին, սակայն « գալուստ նորա այսր ոչ անշահ եղիցի վասն այլ ինչ պաշ- « տամանց, զի քաջուսումն է և ծանրակաց: »

« Ահա այս եղև պատճառ զի յամեցաւ երթ նորա և մնաց դարձի իւրում այսր, զի վերստին խորհելով, ի դէպ անկցի քարն, որպէս և զիարդ հնար իցէ ի նպատակ անդր, յոր դիմէքդ հասուցանել վասն օգտի դպրոցաց: Այլ զի յուսա-ցուցանէք այժմ զփութով դարձ ձեր այսր, գէթ միայն ի ձէնջ,

որ կարեւորագոյնն է յոյժ սակս այլ ինչ բազում գործառնութեանց, մնասցուք և եւս գյետին որոշումն տալ իրացս բերան ի բերան խօսելով ։

“ Զունելով առ այժմ այլ ինչ, կնքեմ կարօտագին ողջունիւ լրութեան Աստուածապաշտ ուխտիս, և հայրական առատ օրհնութեամբս ողջ ցանկամ լինել

“ Հայրութեան Ձերում,

“ Ի Վենետիկ. 5 օգոստոս. 1845.

“ Խ. Ծ. ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

“ Արքի եպիսկոպոս և Աբբայ. ”

Ասնեն պատասխանի գործակալքն վերոյիշեալ Թղթոյ Գեր. Սոմալի, օրինակ զայս.

“ Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր մերոյ խոնարհ համբոյր Աստուածարեալ Աջոյն.

“ Զցանկալի Նամակ Գերապայծառ Հօրդ, շնորհեալ ի 5 օգոստոսի տարւոյս, ընկալաք ի 11 սորին ամսոյս, և ծանեաք ի նմին զտեսութիւն մտաց Վեհիդ, և զազգարարութիւն առ մեզ խոհական յոյժ և կարի իմաստուն. այլ երանի՜ թէ ընդունայն ակնկալութիւն և տարտամութիւն մտաց ոմանց այդր չէին լեալ խափան երբեմն այնմ, զի պատսպարեալ էաք մեք ցարդ ի քաղաքիս մինչչեւ կրկին ձմերայնոց, բնականին և բարոյականին ի վերայ հասեալ, որոց ձայն և նշան չեն հեռի յականջաց և յաչաց մերոց ։ Զի ահա լուաք և ընթերցաք զհամբաւեալն երբեմն այդր, զկարծեցեալ յաջողակ մեզ վճիռն ի Վիեննայէ, ընդ որ մեք ոչ զարմացաք և ոչ նոր ինչ զայն համարեցաք, գիտելով մեր քաջ և արդէն խելամուտ գոլով այնմ յերկուց ամաց հետէ, և խելամուտ արարեալ մեր զայն Հատարակութեանս եթէ բանիւք բերանոյ և եթէ բազում անգամ գրութեամբ. այլ միայն նորոգեցան ցաւք մեր արդ ընդ թարեմութիւն ոմանց այդր, չասացից և ընդ այլ ինչ ։ . . . Ընդունայն ակնկալութեամբ և տարտամու-

Թեամբ մտաց խւրեանց պատճառք եղեն կորստեան ժամանակի և գանգատութեան մերոյ ի գործս յայս մեծ և կարեւոր, և յաւելլոյ մեզ հոգ մտաց և ձեզ տագնապ սրտի. և միայն թէ խելամուտ լիցին դոքա և իմիտ առցեն աստ, թէ քանի՜ վնասակար իցէ անհամաձայնութիւն մասնաւորաց ի խորհուրդս և ի կարծիս հասարակաց, թէպէտ և սխալք թուիցին այնք, զի համաձայն կարծիք հասարակաց դիւրաւ դարման տանին նաև իրօք սխալանաց: Գոնեայ զգուշասցին նոքա այսուհետեւ չըլըքուցանել զսիրտս և զձեռս աշխատողաց ի գործս հասարակութեան:

« Տեղեկութիւն զտեղւոյ դպրոցին մերոյ աստ, թէպէտ և տուաւ Վեհիդ առանձինն, տացուք և ի սմին և զայս ինչ տեղեկութիւն զայնմանէ, թէ որոնեցաք մեք դարձեալ յայն և յայլ գանազան թաղս, և չգտաք պատշաճագոյն մեզ տեղի բնակութեան, քանզի զծանուցեալն յառաջագոյն որոյ գինն 400,000 փրանք, և որոյ Տէրն բացակայ է աստի, զի յամաց հետէ գնացեալ բնակի ի Հելվետիա, յանձնեալ զայն նոտարի ուրուք ի վաճառել:

« Արդ՝ փորձեալ մեր աստ զամենայն, և հայեցեալ ի հանգամանս մեր այժմեան, որ ի մէջ երկուին Տէրութեանց, Աւստրիոյ և Գաղղիոյ, որոց մին առիթս խնդրէ անիրաւութեան, անդադար զրգռեալ ի հակառակորդաց, և միւսն մնայ տեսանել ի մեզ գործս ըստ համբաւոյն և ըստ իւրում ակնկալութեան, պարտ և հարկ է մեզ ըստ այնմ չարժիլ երեւիլ յաչս սորա ինչ, և չտալ տեղի բռնութեան դորա. գնել զպատշաճ տունս զայս, և ժողովել անդ փաղփաղակի մանկունս աստի և անտի յազգէս իբրեւ քառասնիւ չափ: Վասն որոյ փութասցէ Վեհդ ըստ կանուխ խոհական տեսութեան իւրում առաքել զմի ոք ի մերոցն այտի ի Պօլիս, զի ժողովեսցէ անտի մանկունս ընտրանօք որչափ մարթ և հնար իցէ, և ածցէ զնոսին այսր փութով առանց դանդաղելոյ, զի գործելոյ է այժմ ժամանակս և ոչ խորհելոյ և խօսելոյ ընդ միմեանս բերանով. զի ըստ կարծեաց և ըստ խրատու քաղաքագէտ սրանց, բարեկամաց մ'րոց աստ, որոց հաղորդեցաք զվերստին

խլրտումն տէրութեանդ, խորհուրդ եղաւ մեզ այսպէս, թէ պարտ է մեզ ժամ մի յառաջ գնել պատշաճ ինչ տեղի դպրոցիս, և ածել անդ փոփոխակի մանկունս բաւական թուով, որպէս զի լուեալ զայն Աւստրիացւոյ դադարեսցի յանիրաւ պահանջմանց իւրոց անտի, և եթէ յանդգնեսցի նա ի բռնութիւնն, տեսեալ Գաղղիացւոյն զհաստատութիւն դպրոցիս ի տէրութեան իւրում, պաշտպանեսցէ մեզ հարկաւ: Եւ ահա վասն այսորիկ պարտիմք մեք փութալ ի գործս, մանաւանդ և որչափ ինչ արծաթ հաւաքեալ կայցէ ի կալուածոց դպրոցիս անցուսցի այսր ըստ ժամանակին ի գին նորոգ բնակութեան և ի ծախս կահուց և կարասեաց նորին:

« Ասացաք մանկունս ժողովել աստի և անտի յազգէս. քանզի Գաղղիացիք ցանկան և աւն ունին զի յամենայն կողմանց և ի գաւառաց ազգիս ածցին այսր մանկունք, որպէս զի առ հասարակ լուսաւորեսցին, և անուն իւրեանց յամենայն ուրեք սփռեսցի յարեւելս, և զի կարծեն սոքա թէ առանց խաբելոյ ընդունիմք մեք ի դպրոցս մեր և զմանկունս ի հերձեալ Հայոց (*), տեսանելով զմանկունս նոցա աստ յանձնեալ ի ձեռս եկեղեցական դաստիարակաց. վասն ամենայն ակնկալութեան և կարծեաց սոցա, կարեւոր և հարկ համարիմք մեք ունել զօք ի մէնջ աստի ի Տրապիզոն, ուր ժողովեսցէ մանկունս յազգայնոցս ի քաղաքաց քաղաքաց Հայաստանի և վարժեսցէ զնոսա ի կարեւոր սկզբունս գիտութեան, և զընտիրսն ի նոցանէ առաքեսցէ ի Պօլիս, և անտի ուղղեսցին այսր ըստ ժամանակին. և ի գործս այս պաշտամանն յարմար դատեմք մեք զՀ. Պետրոս Մինասեան, զոր և թէպէտ երբեմն ի Պօլիս յարմար դատեցաք առաքել, բայց այժմ հայեցեալ ի հանգամանս գործոյս, անդ ի Տրապիզոն առաւել հարկաւոր տեսանեմք զառաքելութիւն նորին:

« Իսկ յաղագս կարծեաց սոցա, ընդունելութեան մանկանց ի հերձելոց ազգիս, կարեւոր է մեզ պատկառ կալ և ոչ

(*) Գաղղիացիք չկարեն կարծել բնաւ թէ խտրութիւն կրօնի որ ի մէջ ազգի մի կարիցէ խափան լինել երբէք ընդունելութեան հասարակ մանկանց նորին յազգային դպրոց:

(Ծանօթութիւն հեղինակին:)

զայն արհամարհել . բայց բազում զգուշութեան և խոհեմութեան պէտք են մեզ յայսմ, խորհել Վեհիդ ընդ որոց պարտ է խորհել և հաղորդել զայն Հ. Գէորգին ի Պօլիս, զի հոգասցէ նա զայնմանէ անդ , առաքելով և ի նոցանէ մանկունս ընտրանիք յամենայն մասանց, և զնոսին ոչ ուղղակի առ մեզ, այլ առ Պարոն Յակոբ Կրճիկեան, թարգմանն դեսպանի տաճկաց, որոյ են այս խոհական կարծիք և խորհուրդ ընդ մեզ ։

« Իսկ ի պաշտօն անդ ժողովելոյ մանկունս ի Պօլսոյ ևածելոյ զնոսին այսր ի Փարիզ , և վարժապետելոյ նոցին կարծեմք մեք յարմար զՀ. Ստեփաննոս Եզըճեան, զոր և թողումք ազատ ընտրութեան և հաճութեան կամաց Վեհիդ և հաստատակութեանս, որոց ամենեցուն ողջոյն սիրոյ և յարգութեան մատուցեալ՝ մնամք միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ Ջերում

« Ի Փարիզ . 21 օգոստ. 1845.

« Խ. ծառայք

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ԵՒ

« Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՈՐԿՈՒՃԵԱՆ. »

Առնէ պատասխանի Գեր. Սոմալ վերոյիշեալ թղթոյ գործակալաց , օրինակ զայս .

« Յարգոյ և պատուական հարց մերոց Վ. Հ. Սարգսի և Հ. Յովհաննու խնդալ .

« Ընդ առնուլ մեր զգրեալդ ի 21 անցելոյն , նոյն հետայն ժողով արարեալ , զի չէր ժամանակ դանդաղանաց, անդէն և անդ որոշեցաք զի Հ. Պետրոս ի Տրապիզոն երթիցէ ։ Հայր Գէորգ առեալ անտի ի Պօլսոյ զմանկունս պատրաստեալս ածցէ այսր ի Մխիթարեան , և Հ. Ստեփաննոս անտի առեալ զնոսա դէպ ուղիղ ի Մարսիլիա բերցէ այդր ի Փարիզ ։

« Նմին Հ. Գէորգայ յանձնեցաք գարձեալ գտանել յարմար մանկունս և ի Հայակողմանց ընդ ծածուկ ի ձեռն Պար-

տիզպանեանի, կամ Զամուրճեանի, և ուղղել զնոսա այդր ի վերայ Պարոն Յակոբայ Կրճիկեանի սակս պէս պէս նկատմանց որ թուի թէ չեն և ի նմանէ զանխուլ, զի զայս խորհուրդ տայ ։ Մեզ թերևս զգուշալի ոչ յաղագս այլ ինչ իրաց, բայց եթէ զի մի ի հաչակել ձայնին, մերոց չմնայցէ տեղի ի վարժարանիս (*) ։

“ Յանկայք ունել և մանկունս յայլ և այլ կողմանց Ասիոյ, և ահա մանուկ մի այժմէն կայ ընդ ձեռամբ Հ. Անանիայի ի Պօլիս, առաքեալ ի Նոր Ջուղայէ վասն վարժարանիդ, և է որդի Դեսպանին Պարսից Հայազգի ։

“ Այսոքիկ լաւ խորհուրդք են, սիրելիք, յոյր սակս լինի ահա և ուղեւորութիւն Հ. Պետրոսի, և Հ. Ներսէս խոստանայ զընտիրս՝ յորժամ գտցէ մանկունս յոր և է զաւառս, առանց ինչ զմեզ հարցանելոյ յառաջագոյն, յղել ի Պօլիս ։

“ Բայց սակայն ոչ բարիոք յաջողեսցին այս ամենայն, եթէ ոչ՝ ծախս բազումս առնելով, և զժամանակս դպրոցական կարգին սահմանելով. սմին իրի ահա գրեցի այդր յանցելումն զի գոնէ մինչ ի ձեզ նշ աստ լինէր, մանաւանդ Հ. Սարգիս. զի անձամբք խորհրդակցեալք ընդ միմեանս գործէաք զպատշաճն և զկարելին ։ . . .

“ Հայրութեան Ձերում

“ Ի Վենետիկ. 7 սեպտ. 1845.

“ Խ. Ծ. ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ,

“ Արքի եպիսկոպոս և Աբբայ. ”

(*) Ի բանից աստի Գեր. Սոմալի երկու ինչ յայտնապէս ցուցանին, մին է երկւղ Մխիթարեան միաբանութեան որ ի չարախօսութենէ աշակերտաց Ծառալոցին, թէ անխտրաբար վարին Մխիթարեանք ընդ բաժանեալ Հայսն. և միւսն է իրաւունք ժառանգութեան համօրէն ազգիս, թողեալ կտակաւ ի հանգուցեալ Սամուէլ Մուրատէ, և այս առաւելութեամբ, ըստ առաւելութեան մեծագոյն մասին ազգիս, հայելով ի բանս, թէ “ մերոց չմնայ տեղի ի վարժարանիս ։ ”

(Ծանօթութիւն Հեղինակին ։

Ի բանից վերոյիշեալ թղթոյ և պատասխանւոյ Նորին յայտնապէս իմացեալ լինին կամք և ցանկութիւն Հ. Սարգսի, և համաձայնութիւն և հաճութիւն ընդ այն Գեր. Սուքիաս Սոմալի, հայեցեալ յընդունելութիւն մանկանց ազգիս Հայոց առ հասարակ և յամենայն կողմանց Ասիոյ ի վարժարանն Մուրատեան ։ Աւա՜ղ զրկանացս անտերունչ և դժբաղդ ազգիս, վախճանելով ճանաչողին, հալածելով պաշտպանողին գիրաւունս աղքատաց Նորին ։ . . .

Առնէ Գեր. Սոմալ պատասխանի և առանձին թղթոյ Հ. Յովհաննու, որ գրէ զվարձելի և զգնելի բնակարանաց ի պէտս Մ. վարժարանին, և զվարժապետէ Նորին, օրինակ զայս․

« Սիրեցեալդ Հ. Յովհաննէս.

« Մինչչեւ ընկալեալ իմ զգրեալդ ի 11 անցելոյն, իմ արդէն միով աւուրբ յառաջ տուեալ էր քեզ գիր, վասն որոյ և ոչինչ հարկ վարկայ փութով զՆորին պատասխանն գրել․ այն զի և չունէր և պէտս պատասխանւոյ․ քանզի ամենայն բանք ի Նմա իմում կանխաւ գրելոյն էին պատասխանի, և պարզաբար վէպք զվարձելի և զգնելի բնակարանաց ի պէտս վարժարանին որոց զինք զի յանչափս ձգէին, ես փութացայ աւասիկ յաջորդ թղթով զեկուցանել ձեզ թէ որչափ իցեն առ մեզ դրամք զի գիտասցուք ապագային Նախատես լինելով գործել զոր ինչ գործելոց եմք դուք այդր և մեք աստ ։ Այսպիսի իրաց ահա ցանկան կանխատես լինել և որք հանդերձեալ են ի պաշտօն ինչ վարժարանիդ մտանել մինչչեւ շարժեալ ի տեղւոջէս ։ Սմին իրի ահա և վաղիւ ժողով գումարելոց է աստ ի խնամակալուաց, յորում քննեսցին տասն գլուխս բանից, զոր առաջի առնէ ինձ Եզրճեան, և են այսոքիկ.

« Ա. Զի՞նչ իցէ պաշտօնն Հ. Ստեփաննոսի․ վարժապետ միայն, եթէ և դաստիարակ ։

« Բ. Որպիսի՞ իցէ իշխանութիւն ուղղչին ի վերայ վարժապետին ։

« Գ. Ո՞րչափ իցէ իշխանութիւն վարժապետին, ի հոգալ զուսումնական պէտս անձին և մանկանց ։

« Դ. Ցո՞ր վայր ձգեսցի պաշտօն վարժապետին, և յաւարտ սահմանեալ ամացն ուստի՞ սպասեսցէ հրամանի, կամ յում՞ մէ՞ առցէ զհաստատութիւն. ի ժողովո՞յ խնամակալաց, եթէ յԱբբահօրէն ։

« Ե. Ո՞յր իցէ խնամ ունել արտաքին պիտոյից մանկանց ։

« Զ. Ո՞ իցէ կանոնադիր դպրոցին. ժողո՞վ խնամակալաց, եթէ Աբբահայրն, և ժողով Առաջնակայից ։ Դարձեալ՝ եթէ յիրս իրս տարաձայնեսցին տեսուչն և վարժապետքն, ո՞ կացցէ ի մէջ նոցա դատաւոր. ժողո՞վ խնամակալաց, եթէ Աբբահայրն ։

« Է. Վարժապետք բնական և մեքենական գիտութեանցն և տնտեսականին, և այլն, ի մերո՞ցն (*), եթէ յարտաքնոցն վարձու ։

« Ը. Զո՞ր լեզուս ուսանիցին ի Մ. վարժարանին ։

(*) Թէպէտ և խոստովանեալ եմք անկեղծաբար, և ցուցեալ հաւաստեօք զանբաւականութիւն Մխիթարեանց ի դաստիարակութիւն բարձրագոյն ուսմանց, և կարեւոր գիտութեանց. և զի ցուցեալ եմք նոցա զհնարսն ի լինել զթերութիւն և զպարտս իւրեանց, սակայն ինքնահաճ կամք և չար անձնասիրութիւն ոմանց անտի անտես արարին և առնեն զայն յաչաց և ի մտաց իւրեանց, հանդերձ զմէնջ մեղադրութեամբ ։

Ից.՞ առաւել ինչ ցաւալից քան զչճանաչել մարդոյ զկար զօրութեան իւրոյ. չիցէ՜ այս թերութիւն Մխիթարեանց ։

Ո՞չ ապաքէն ընդ դարման այսր թերութեան նոցա և ընդ անուղղութիւն մատակարարութեան էին մեծ և հակառակութիւն մեր ընդ Գեր. Հիւրմիւզի... և ո՞չ ապաքէն այսօրիկ եղեն պատճառք վտարանդելոյ զմեզ բռնութեամբ ի Մ. վարժարանէն ․․․․

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

« Թ. Գնացեն ի գիւղ ։

« Ժ. Մ՚յր առաջի լինիցին քննութիւնք տարեկան ուսմանց և պարգևաբաշխութիւնք ։

« Լուայ ի թղթոյ Հ. Եսայեայ եթէ Հ. Սարգիս խորհիցի յառաջիկայ հոկտեմբեր ամսեան աստ լինել . ո՛ տայր թէ վաղագոյն ևս եկեալ էր, զի նորին ներկայութիւն յոյժ կարևոր էր ի ժողովիս ։

« Հ. պետրոս եւ յուղի անցեալ չոգենաւաւ ։

« Կացուցաւ ի վանս ըստ բազմաժամանակեայ ըղձութեանց օրինաւոր ատեան քննութեան գրոց տպագրելեաց . տեսցուք արդ զարդիւնս ։

« Ընկալեալ աստ ամենեցուն զսիրոյդ ողջոյն փոխադարձեն զնոյն մեծաւ կարօտիւ, և ես ողջունելով զարգոյ գործակիցդ քո զՀ. Սարգիս, հայրական առատ օրհնութեամբս

« Ողջ ցանկամ լինել

« Հայրութեան քում

« Ի Վենետիկ. 23 սեպտ. 1845.

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ

« Արքի եպիսկոպոս և Աբբայ. »

Ահա սկսանին կարծեցեալ իրաւունք պահանջանաց մասնաւորաց ի պաշտօնս յայն նորոգ հաստատելոյ Մ. վարժարանին ի Փարիզ, վասն որոյ և դժուարութիւն վարչութեան նորին, և մնասակարութիւն որ անտի կարօտելոց ազգին : . . . Վերագոյն ի պատասխանի այս բանից առանձնագրութեան Գեր. Սուքիաս Սոմալի, թէ « Իսկ այլ ոմն (Հ. Գաբրիէլ) զոր ու-« նիք ձեզ աստ բանակատար, ոչ թուի և նա բարեկամութեամբ « զօլ ընդ նմա (Հ. Ռափայէլի), թէպէտ և առ երեսս ձեւացի, « սովին այսուիկ ահա, քանզի չիք ինչ ի ծածուկ, խիթալի

« լեալ է և անձն սորա (Հ. Գաբրիէլի) յաչս ոմանց ի միա-
« բանից աստ, որք արդէն ընդ ակամբ հայէին ի նա վասն
« պաշտօնի վերակացութեանն »: Թէպէտ և Հ. Սարգիս բա-
րեմտութեամբն իւրով ջատագովէ և պաշտպանէ զնոսա (զՀայր
Յովհաննէս և զՀ. Գաբրիէլ) ի բանս յայս, սակայն տեսանէ
աստանօր, զի ծածուկն յայտնի, և հաստատի կարծիքն ոմանց,
որոց խիթալի լեալ էր նա: Քանզի Հ. Յովհաննէս առաջարկէ
զընտրութիւն Հ. Ստեփաննոսի ի պաշտօնն յայն, և թելադրու-
թեամբ Հ. Գաբրիէլի առաջարկէ նա զայս տասն գլուխ բանից,
և այս առ ի տկարացուցանել և ոչնչացուցանել զիշխանու-
թիւն ուղղչին, Հ. Սարգսի. և հաստատութիւն այսմ ահա տե-
սանեն ի սմին արդիւնքն հետ դհետէ:...

Գրէ դարձեալ Հ. Սարգիս թուղթ ի գլխաց երկոցունց առ Գեր. Սոմալ, վասն խնդրոյ գնելի պալատանն, և վասն յապաղման իւրոյ դառնալոյ ի Վենետիկ, ըստ հրամանի նորին, և վասն այլ ինչ ինչ կարեւոր խնդրոց, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Որպէս ձեռնարկութիւնս այս ծանր որ զկարեւոր գործոյս աստ, զհոգոյ սեմք տեղւոյ դպրոցիս, կարօտէր երբեմն խորհրդոյ Հասարակութեանս և հաճութեանն որ ի Զէնջ այտի, կարօտի նոյնպէս այժմ և լրումն նորին, ժամանակի և համբերութեան, որ ի հաւանութենէ կամաց Տանուտեառն, որ ի բացեայ է ի քաղաքէս աստի, բնակեալ ի Հելվետիա:

« Ահա և այս երկրորդ անգամ է, զի գրով խօսիմք մեք ընդ նմա և ջանամք հաւանեցուցանել զնա տալ մեզ զտուն իւր 300,000 ֆրանքով, ընդ որ պահանջէ նա 360,000 ֆրանք, թողեալ զծախսն փոխադրութեան մուրհակին և միջնորդին, որ արժիցէ մեզ իբրեւ 34,000 ֆրանք: Եւ ահա ընդ այս մեծ գումարն արծաթոյ զարհուրեալ և տարակուսեալ մեր, մնացաք խորհրդոյ այտի, վասն որոյ և չփոթութիւնն այն և աւելորդ գրութիւնն աստի և այտի, որպէս թէ չիմացաք զմիտս իրերաց, թէպէտ և բազումք և ճարտարապետն մեր ինքնին գլխովին, որ ըստ խնդրոյ մերոյ գնացեալ քննեաց զայն, ասաց մեզ թէ

արժէ տունն այն 400,000 ֆրանք, ամրակառոյց և ի լաւակողմն գոլով քաղաքիս, միայն սակաւիկ մի հեռի է ի դպրոցաց համալսարանին, թէպէտև զայս հեռաւորութիւն բարւոք զատին մեզ ոմանք, հայեցեալ ի հանգամանս մեր։... Եւ ահա վասն այսր յապաղման գործոյս՝ յապաղի և դարձն իմ այդր. բայց յուսամ թէ մինչև ցելս Նոյեմբերի տարւոյս պատրաստեսցայց ի վանս յաջողելովն Աստուծոյ և աղօթիւք վեհիդ։

« Ընդ լուր առաքելութեան Հ. Պետրոսի ի Տրապիզոն ուրախացաք մեք աստ յոյժ. ո՜ տայր զի և ի Զմիւռնեայ և ի կարին լսէաք զառաքելութենէ և այլոց յեղբարցս այտի, մանաւանդ յայսմ ժամանակի ի կարևոր պէտս դպրոցացս և յօգուտ կարօտելոյ ազգիս, և առաւելապէս ի Պոլիս ի գործ անդ դպրոցիս, և ոչ զմի ոք, այլ երկուս ոմանս կարևոր և հարկ է առաքել անդ։ Այո՛ Գեր. Տէր, կարևոր և հարկ է զդըպրոցէ անտի փոյթ ունել նախ, և ապա զդպրոցէս աստի հոգալ, և արդասեաց ակնունել. քանզի ոչ միայն ի բարւոք կարգաւորութենէ և ի բարգաւաճութենէ անտի դպրոցին չլիցին զուր աշխատութիւն և վայրապար ծախք աստի և այտի դպրոցացս, որպէս և եղեն մինչև ցարդ, այլ և զօրավիգն և պատսպարան մեզ ընդդէմ հակառակորդացս լիցի։

« Բայց պարտ է գնացելոցն անդ տնակեայց և համախոհք լինել, որպէս զի արդիւնքն որ անտի փութով երևեսցին, ոչ միայն ըստ չափու մեծի ծախուցն որ ի կառուցումն դպրոցին այնր և ըստ վախճանի բարերարին, այլ և յօգնականութիւն Հ. Անանիայի և ի դարման տկարութեան Նորին... և զի փութալ պարտ է ի գործդ յայդ, որպէս զի ի սկիզբն գարնայնոյ՝ եկելոց այսր մանկանցն անտի փորձիւ և ընտրութեամբ լիցի, և մի՛ վարկպարազի և ակնառութեամբ ի վնաս աղքատաց ազգիս և ի նախատինս հասարակութեանս. ահա զայսմանէ աղաչեմ զՏէրդ հոգ ունել յառաջ քան զդարձն իմ այդր և զայլ ինչ իրաց կարևորաց խորհել և հոգալ. զի այս է կարևորագոյնն ի հոգս մեր և ի գործս, հայեցեալ ի հանգամանս իրացն որ ի ներքոյ և որ արտաքոյ։...

« Պատմեցաք մեք աստ ոմանց աշխարհատես արանց զեր-

քեմ երբեմն պահանջումն տէրութեանդ. ասասցին նոքա մեզ թէ չէ պարտ անտի զանգիտել, այլ խորագիտութեամբ պատասխանի առնել, մինչև հրատարակեսցի այսր հաստատութիւն զպրոցիս ։ Բայց կամիմք մեք խօսել զայսմանէ ընդ որոց պարտ է խօսել և հարցանել, թէ զի՞նչ պարտ իցէ մեզ առնել ի խոստանալ այտի տէրութեանդ. ուստի անվեհեր լիցի վեհդ և Հաստարակութիւնս, որոց ամենեցուն ողջոյն յարգանօք մատուցեալ, մնամք միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ Ջերում

« Խ. և ամենահնազանդ որդիք

« Ի փարիզ. 18 հոկտ. 1845.

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ԵՒ

« Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՐԿՈՒՃԵԱՆ. »

Առնէ պատասխանի Գեր. Սոմալ վերոյիշեալ թղթոյ գործակալաց, օրինակ զայս.

« Յարգոյ և Պատուական հարց մերոց Վ. Հ. Սարգսի և Հ. Յովհաննու խնդալ.

« Մինչդեռ մնայի հասանելոյ կենդանի թղթոյ, եհաս ահա միւսանգամ միաբանական գիր ձեր անկենդան, գրեալ ի 18 այսր ամսոյ, և զեկոյց մեզ համառօտիւ զանկատարութիւն գործոյ գնելի պալատանն, սակս չմիաբանելոյ ձեր դեռ ևս ի գինահատութեան ։

« Մեծ գումար արծաթոյն զարհուրեցուցեալ զձեզ ասէք, յայն սակս և մերում խորհրդոյ սատի կարօտեալ ։ Աւ ի՞նչ արժիցէր արդեօք մեր խորհուրդ կամ հաճութիւն, երբ դուք լաւ ևս քան զմեզ գիտէք զՄ. վարժարանին կարօղութիւն, ի ստանալ ինչ մի և ի պահպանել զայն։ Եթէ զարդարն կամիցիք լսել, Ջեր ճարտարութեան գործ լինելոյ է զսակուն աճեցուցանել և բաւական առնել առ ամենայնն. որպէս զի մի՛ և մեք յապագային զարհուրիցիմք, և պարտական պատաս-

խանւոյ լինիցիմք թէ ոչ մարդոյ ումեք, բայց անշուշտ խղճի մտաց մերոց, որ անանջրպետն է ի մէնջ թէ շռայլեցաք ։ Միւս առաջարկութիւն ձեր յղելոյ զոմանս աստի ի Պօլիս առ ի բարիոք տնտեսութիւն անտի դպրոցին, ոչ անպատշաճ ինչ, մանաւանդ թէ և կարևոր, այլ ի հանգամանս գնացելոցն զերկուս և եթ յիշէք կարևորս ի գրիդ, այն է՝ զի իցեն տնակեացք և համախոհք. ես յաւելից զերկուս ևս. զի և բաւականք ի վարժապետութիւն մանկտւոյն, որ սակաւուց է, և ազատք ի հոգոց անձանց ապրուստի, զի տնակեացք լինելոց են ։

“ Մեք առ այժմ զՀ. Ստեփանն ըստ առաջին որոշմանս մերոյ յղեսցուք անդ, զի գոյ արդ բաւական ժամանակ մինչև ցգարունն, և ինքն անձամբ ընտրեսցէ զայդր ածելի մանկունսն, ընդ նմին և մանր զննեսցէ զելս և զմուտս դպրոցին, առ որ բաւական է նա ամենայն իրօք, և զրոյց արասցէ առ մեզ, զի գիտութեամբ և հասուն խորհրդով գործեսցուք զոր ինչ գործելոցն եմք, ի բարեկարգութիւն այնր դպրոցի, և մի՛ շտապմամբ, որպէս զի մի՛ յետոյ ի զուր ստրջասցուք հանդերձ աւելորդ տուժիւք արծաթոյ ։

“ Յելս գալոյ ամսոյ խոստանաս աստ ի վանս պատարագել. համառօտ ես կարող էիր ասել Հ. Սարգիս, թէ յայսմ ամի չյաջողի գալուստ իմ այդր. քանզի յառաջիկայս ահա ձմեռն է և ուղևորութիւնն տարժամական, և ի լրումն տարւոյս մի ամիս և եթ մնայ յանցանել յաջորդին ։ Այլ ո՞ տայր մեզ ժամ մի յառաջ տեսանել զմիմեանս, և խորհել և խօսել զայլ ևս կարևորաց ի շինութիւն միաբանութեանս և յօգուտ ազգիս ։

“ Զունելով այլ ինչ ի ժամուս, ընդ կարօտագին ողջունի բոլոր միաբանիցս Հայրական առատ օրհնութեամբս ողջ ցանկամ լինել

“ Հայրութեան Ջերում

“ Ի Վենետիկ. 30 հոկտ. 1845.

“ ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ

“ Արքեպիսկոպոս և Աբբայ. ”

Առնէ պատասխանի Հ. Սարգիս վերջիչեալ թղթոյ Գեր. Սամայի, օրինակ զայս.

„ Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր իմոյ համբոյր Սրբանեալ Աջոյ.

„ Ասպաքէն կամ էր ինձ և փափաքելի յոյժ, ոչ միայն յերս նոյեմբեր ամսոյս, այլ և ի սկիզբն ապրիլի ամսոյս զտանալ այդր անխափան. բայց որպէս կատարումն կարեւոր և ծանր գործոյս, զատացումն առեմ տեղւոյ դպրոցիս, չեղեւ ըստ կամաց մերոց, նոյնպէս և լրումն փափաքմանցս, դարձի իմոյ ըստ ցանկութեանս. ապա չկարէի ես ի նախընթաց թուղթն մեր հաւաստօտիչ առել թէ յայտ առնի չյաջողի գաւառն իմ այդր. զայս այսպէս հաստատելով արարեալ՝ եկից արդ ի պատասխանել և այլ նշանակեան բանից նամակի վեհիդ։

„ Եթէ զարդարն կամիցիք լսել, ձեր ճարտարութեան գործ „ լինելոց է զսակաւն աճեցուցանել, և բաւական առնել առ „ ամենայնն, որպէս զի մի և մեք յատազային զարհուրիցիմք „ և պարտականն պատասխանւոյ լինիցիմք, թէ ոչ մարդոյ „ ումեք, այլ անշուշտ խղճի մտաց մերոց, որ անանջրպետն է „ ի մէնջ, թէ չօայլեցաք ։ ” Եւ եթէ ներեսցէ Տէրդ իմ խոնարհ համարձակութեանս լսիցէ և լինէն զարդարն, զբուն պատճառն առեմ զարհուրելոյ մերոյ, և կարօտելոյս խորհրդոյ և հանճութեան ձերոյ ի ձեռնարկս յայս մեծ և կարեւոր ։

„ Արդ՝ զարհուրել մեր և տարակոյս ոչ այնչափ ընդ մեծ գումարն արժաթոյ գնոյ պալատանն են, և ոչ ընդ կարօղութիւն Մ. վարժարանին, քանզի յիշեմք մեք քաջ զկարծիսն ճարտարապետաց որ վասն ծախուց կառուցանելի շինուածոյն Պատաւինի, որ հասանէր ց500,000 Աւստրիական լիրէ. այլ որչափ ընդ համաձայնութիւն կարծեաց միաբանութեանս և ընդ կարօղութիւն նորին. այս է, թէ կամիցի՞ և կարիցէ՞ արդեօք միաբանութիւնս ըստ գնոյ պալատանն և ըստ չափու աշակերտելոցն բաւական և յարմար անձինս մատակարարել ի պաշտօնն անդ, և պաշտօնեայք վարժարանին վարիցին ընդ

մինեանս միաբան խորհրդով, և աշխատիցեն ընդ առանց ինչ կարծեցեալ իրաւանց իւրեանց ։

„ Ահա ընդ այսոսիկ են երկիւղն մեր և տարակոյս, և յայս տեղս կարօտացաք և կարօտիմք խորհրդոյ և հաճութեան վեհիդ ի ձեռնարկս յայս մեծ և կարեւոր, յիշելով զերբեմն անհամաձայնութիւն կարծեաց ոմանց այդր, և նշմարելով այժմ զանհաստատութիւն մտացնոցա ընդ հաստատութիւն վարժարանիս այսր. և ահա յայսմանէ աստի զհետ եկեսցեն յապագայս և անշուշտ խնդիր անհրաժեշտ և քննութիւն խիստ, որք անանջրպետք լիցին ի պատւոյ և ի պարտուց խղճի մտաց Հասարակութեանս . . . ապա երկիւղ մեր և տարակոյս և կարօտեալս խորհրդոյ և հաճութեան վեհիդ ոչ են փայրապար ։

„ Զայսոսիկ և առաւել քան զսոյնս և առաւել եւս յայտնութեամբ կամէի բերանովս Տեառնդ իմում խելամուտ առնել, քանզի դժուարին է յոյժ զամենայն ինչ գրովս հաստուցանել, ակնածեալ յամենայն ուստեք . . . վասն որոյ և փափաքէի և փափաքիմ ժամ մի յառաջ դառնալ այդր ի խորհել և ի խօսել զկարեւորացն ։

„ Թէպէտ և ի ձեռն միջնորդի հարցաք և ծանեաք զվերջին կամս տանուտեառն, բայց կամեցաք ուղղակի գրով մերով յորդորել զնա ի նուազեցուցանել զգին տանն. Մնամք այժմ պատասխանւոյ անտի, զոր և յուսամք գտանել մինչեւ ցելս նոյեմբերի ամսոյ, միանգամայն և ակն ունիմք մխիթար բանից անտի յառաւել եւս քաջալերութիւն մեզ և յորոշումն խնդրոյս ։ Վասն որոյ աղաչեմ զՏէրդ զի ուշի ուշով քննեալ զբանս սակաւատող բայց կարեւոր գրութեանս, և զի քաջ կշռադատեալ զամենայն հանգամանս գործոյս, տացիք մեզ աստ խորհուրդ և զհաճութիւնդ, և մի՛ շատ համարիջիք ասել, թէ „ Առ ինչ արժիցէր արգեօք մեր խորհուրդ և հաճութիւն, ” այլովքն հանդերձ ։ Բազում և կարօտագին յարգանօք ողջոյն համբուրէն Հարց և Եղբարց ուխտիս մատուցեալ, Մնամ միշտ

„ *Արհիապատիւ Տէրութեանդ Ջերում*

„ Ի Փարիզ . 18 *Նոյեմբ* . 1845 ։

„ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ. ”

ԳԼՈՒԽ ԺԲ.

Հաստատութիւն Կայսերական վճռոյ ընդդէմ միաբանութեան տալ հաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին. — Տագնապ Գեր. Սոմալի ընդ այն. — Կոչ Հ. Սարգսի ի վանս խորհել զայնմանէ. — Թուղթ քաջալերութեան Հ. Սարգսի առ Գեր. Սոմալ, և տեղեկութեան զտեղւոյ վարժարանին, և ազգարարութեան հասուցանել անդ մանկունս ի Պօլսոյ. — Պատճէն Կայսերական վճռոյ. — Պատասխանի նորին ի Միաբանութենէ.

Յայսմ ժամանակի վերստին հաստատի կայսերական վճիռն որ ընդդէմ միաբանութեան՝ տալոյ նորա հաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին ։ Լուեալ զայն արտաքուստ Գեր. Սոմալի անհնարին տագնապի ընդ այն և գրէ թուղթ առ Հ. Սարգիս ի Փարիզ, կոչելով զնա ի Վենետիկ խորհել զայնմանէ և առնել պատասխանի Աւստրիոյ պետութեան, օրինակ զայս ․

« Վ. Տեառն Տեառն Հ. Սարգսի վարդապետի ողջոյն սիրոյ ի Քրիստոս .

Ի Վենետիկ. 4 դեկտ. 1845.

« Ոչինչ ընդհատ տեսի աղա ի մերմէս և զձեր դատաստան զնորոգ կայսերական վճռոյ մանաւանդ թէ յայտարար պատասխանւոյ առ մեր յետին բողոքն առ Կայսրն, թէ անդարձ է առաջին վճիռ իւր, և ցորչափ նա յուժի կայ, ո՛ վստահացուսցէ զմեզ, թէ չելանիցէ այն յաւուր միում յանկլթար գործադրութիւն հանդերձ դժոխըմբեր և անվերջանալի պայքարմամբ ընդ Մուրատին, ում համարձակութիւն շնորհի աղա հարկանել ընդ մեզ երբ և կամիցի ։ Երանի՛ թէ նմին միայն շնորհէր, և չանկանէր ի կարգ և Պարոնին շնորհիլ վասն Ռա-

փակեալն վարժարանին, որպէս սպառնացեալ էր նորա մեզ մինչ դեռ աստ էր, և եթէ ոչ սխալիցիմ, սոյն այս ամօք թե֊ լադրութիւն է խորհրդականի նորա ի Վիեննա ։

« Արդ քանզի անագանի դեռ եւս այդր կարեւոր գործադ֊ րութիւնն գնոց առնլոյ զպալատն, հրաման տամ քեզ բա֊ ցարձակ զի ընդ առնուլ քո զթուղթս առանց հայելոյ ի դժըն֊ դակութիւն ձմերային եղանակիս, զոր ոչն կամէաք, փութասցիս գալ այսր, որպէս զի մարթասցուք միաբան և հաստատուն խորհրդով պատասխանի առնել պետութեանս զպաշտաձն և զհաստուն ։

« Զեւ է տակաւին եկեալ առ մեզ գիր յաղագս այսր ի Տէ֊ րութենէս որոշ պայմանադրութեամբ աւուրց ի պատասխա֊ նել. և լսեմք թէ ի պատրաստիլ է անդ յաւուրց բազմաց, և ընդ հուպ եկեսցէ անշուշտ ։ Զէ նոր ինչ սիրելիք դէպքս զի շփո֊ թիցիմ, այլ վաղ կանխատեսեալ ի մէնջ, և սպասեալ իսկ. այլ ես ուրախ եմ զի ի դէպ ժամու պատահի այն, որպէս զի հաստա֊ հիմն մարթասցուք առնել արդ ըզ ի մէնջ խորհեցեալն ։ Զերկա֊ րեմ զբանս, զի կարճոյ դիպայ ժամանակի, վասն որոյ երկնաւոր օրհնութեամբ և սիրոյ ողջունիւ կնքեմ զգիրս առ սրդոյ գոր֊ ծակիցն քո առ Հ. Յովհաննէս, և զհասարակաց մեր աղօթս տալով քեզ ի զօրավիգ ճանապարհիդ, մնամ հայրական առատ օրհնութեամբս ցանկալի տեսոյ քում առ մեզ ։

« Ողջ լեր ։

« Հայրութեանդ քում աղօթարար ծառայ

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ

« Արքեպիսկոպոս և Աբբայ. »

Առնէ պատասխանի Հ. Սարգիս վերոյիշեալ թղթոյ Գեր. Սոմալի, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր իմոյ խոնարհ համբոյր Աստուածարեալ Աջոյ.

« Զցանկալի նամակ Արհիապատիւ Տեառնդ, շնորհեալ

ի 4 դեկտեմբերի տարւոյս, ընկալայ ի 11 սորին ամսոյս, և քաջալերեցայ ոչ սակաւ, նախ՝ ընդ անվթար տեսութիւն մտաց Վեհիդ, որ զնորոգ վճռոյն և զհետեւանաց նորին, և երկրորդ՝ ընդ անվեհեր արիութիւն սրտի Ձերոյ, չզիջանելով երբէք անիրաւ պահանջմանց Պետութեանդ ։ Շնորհ յոյժ ունիմ Աստուծոյ որ զօրացոյց և զօրացուցանէ միշտ զՀայրդ հասարակաց, և աղաչեմ զնա զի զօրացուսցէ և զորդիսդ առհասարակ, հանդերձ գործունեայ կամօք ։

« Ահա այսու քաջալերութեամբ և բարեյոյս ակնկալութեամբ այսր ի Զէնջ որոշեցաք մեք աստ վախճան տալ կարեւոր գործոյս, ստացման սեմ տեղւոյ վարժարանիս, թէպէտ և յամառեալ կայ ցարդ տանուտէրն ի պահանջումն իւր և յառձեան պատրաստ դրամոյ հատուցումն. այլ ըստ հաւանական կարծեաց ոմանց, զիջանիցի նա կամաց մերոց, ժամանակաւ հատուցման մեծագոյն մասին արծաթոյ. ընդ սոյս է կասեալն մեր ցարդ յաւարտել զգործն, և ընդ սոյս մնամք մեք օր ըստ օրէ վերջին պատասխանւոյ նորին անտի. և վասն այսորիկ յապաղեսցի դարձն իմ այդր մինչեւ ցելս ամսոյս, թէպէտ և դժնդակութիւն եղանակիս առաւել եւս ծանրասցի, այլ կատարումն հրամանին Վեհիդ և օժանդակութիւն աղօթից ձերոց թեթեւացուսցեն և քաղցրացուսցեն զամենայն ։

« Եւ ահա յայս հոգս և ի ջանս եմք մեք աստ, քանզի ըստ խորհրդոյ քաղաքագէտ արանց կարեւոր և հարկ է մեզ, հայեցեալ յայժմու հանգամանս մեր, արժանի ինչ աչաց հասարակաց երեւեցուցանել աստ, և այն որչափ հնարաւոր իցէ ժամ մի յառաջ, ստանալ մեր զտեղիս և ժողովել անդ բաւական մանկունս ի համօրէն ազգէս, առանց ինչ խտրութեան ըստ ընդհանուր տեսութեան բարերարին և ըստ ցանկութեան Գաղղիացւոց ազգին. վասն որոյ մնայ Վեհիդ այժմ ազդ առնել վաղվաղակի մերոցն ի Պօլիս, զի փութասցին հասուցանել այսր մանկունս քանիս չափ, յաւելլով ի նոսին և զպատրաստեալսն որ ի Զմիւռնիոյ ։

« Թէպէտ և ցանկայի և ակն ունէի ես զՏօն Ծննդեան Փրկչին մերոյ յայսմ ամի ընդ Եղբարս այդր ի միասին կատա-

րել, և զկենդանի ձայնիւ օրհնութիւն Հօրդ Հասարակաց լսել, բայց չափեալ իմ զժամանակն ընդ գործոյս, դժուարին տեսանեմ հասանել այնմ. վասն որոյ դարձեալ ի հեռուստ աստի զցանկութիւնն իմ նուաստ գրութեամբս լցից, շնորհաւորելով Տեառնդ իմում և Հօրդ հասարակաց զհրաշափառ Ծնունդ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի և զանօրէնութիւն Նորին որ ի մուտս նորոգ տարւոյն, մաղթելով Ձեզ ի նմանէ քաջող-ջութիւն և անդորրութիւն կենաց հանդերձ յաջողութեամբ ամենայն գործոց ձերոց յօգուտ ազգիս և ի պայծառութիւն ուխտիս, որոց ամենեցուն ողջոյն գրկախառն համբուրիւ մատուցեալ՝

« Մնամ միշտ

« Գերապատուածառ Հայրութեանդ Ձերում

« Ի Փարիզ. 18 դեկտ. 1845.

« Խ. Ծ. և ամենհնազանդ որդի

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Առնէ պատասխանի Գեր. Սոման վերոյիշեալ թղթոյ Հօր Սարգսի, օրինակ զայս.

« Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի սիրելւոյ ողջոյն խանդակաթ ի Քրիստոս.

« Ընկալեալ զմաղթողականդ որ ի 18 ամսոյս, որպէս միով աւուրբ զկնի և զգործակցիդ քո զՀ. Յովհաննու, ի միում յայտնիկ փոխադարձեմ երկոցունցդ միանգամայն զիմ հայրական օրհնութիւն, մաղթելով նայսպէս ի նորածին մանկացելոյն զլիութիւն ամենայն բարեաց կարեւորաց ի կեալ և ի բարւոքն կեալ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

« Թէպէտ և ես նոյնհետայն գրեցի առ մերսն ի Պօլիս

վասն եկաւորելոցն այդր մանկտւոյն, բայց գիտել պարտ է ձեզ զի իմ բանք յաղագս այդր ոչ ազդողագոյնք են ի լսելիս նոցա յետ միանգամ այրելոյ բերանոյ նոցա, մինչեւ ոչ ունիցին այտի հաստատութիւն առ յինէն գրելոցս։ Սմին իրի լաւ լինի զի դուք այտի ուղղակի գրեսջիք առ նոսա, և որոշ ծանուսջիք զհանգամանս եկաւորելոցն, զպատրաստութիւն բնակարանին նոցա ի տեղիդ, և զայլ կարեւորս վերաբերեալս առ այն, զի եկեալքն նոյնհետայն հանգիցեն, և սկսանիցեն յառաջ տանել զընթացս ուսումնարանին։

« Լսեմ ես զի պատրաստեալքն ի Զմիւռնիայ յապաժամ հռչակմանէ անդր Հ. Պետրոսին ցրուեալք են արդ խուսաքանչիւր ի գործս արհեստից և յայլ ուսումնարանս զետեղեալք առ ի չլինելոյ ժամավաճառք և անպիտանք։ Զեն ինչ յոյժ հոգալի թէ ի Հայակողմանց մեզ պակասիցին մանկունք յուսումն մերոյ դպրոցաց (*). ըստ իս խիթալի է եւս թէ այնչափ բազմասցին՝ մինչեւ և մերակողմանցն չմնալոյ տեղի ի դըպրոցս մեր, որ հակառակն է գլխովին դիտման կտակողին։

« Յայտարար պատասխանի առ յետին վճիռն կայսերական, աՀա մատուցանի այսօր առ կառավարութիւն քաղաքիս. տեսցուք թէ զի՞նչ ազդեսցէ ի լսելիս որոց սատ, և որոց ի Վիեննա. զի անշուշտ անդր գնասցէ, անտի առնուցու միւսանգամ պատասխանի։

(*) Ի գնալ Հ. Պետրոսի Մինասեան ի Պոլիս յամին 1843, և յանցանել ընդ Զմիւռնեայ, հռչակէ նա անդ զմօտակայ բացումն Մուրատեան վարժարանին ի Փարիզ, և յորդորէ զազգայինս անդ պատրաստել մանկունս յղելոյ անդ յուսումն և ի դաստիարակութիւն։

Թէպէտ և յօժարին ազգայինքս անդ յղել զմանկունս իւրեանց ի Մ. վարժարան, և պատրաստեն մանկունս հնգետասանիւ չափ, այլ կասին ապա ի յօժարութենէ իւրեանց, ոչ յապաժաման հռչակմանէ անտի, ըստ որում կարծէ Գեր. Սոմալ, այլ յազգարարութենէ առաջնորդի տեղւոյն որ ի ժամանակի անդ, զի մի՛ Հռովմէադաւան լիցին մանկունքն, որպէս լուաք յոմանց անտի եկելոց, սակայն ի վերայ այսր ամենայնի յղին անդ մանկունք անտի եօթն։

Աստանօր ցուցանէ Գեր. Սոմալ զիրաւունս ժառանգութեան համօրէն ազգիս որ ի Մ. վարժարանին, հանդերձ երկիւղիւ, չմնալոյ տեղւոյ ի Մ. վարժարանին վասն Հռովմէադաւան մանկանց, զոր հակառակ դիտման կտակողին ասէ, վասն համօրէն ազգին ճանաչելով և խոստովանելով զգլխաւորութիւն կտակողին։

(Ծանօթութիւն Հեղինակին.)

« Արք աշխարհագէտք, և իրաւանց հմուտք թէպէտ և վստահացուցանեն զմեզ զառաջինն թէ ոչինչ բռնութիւն մարթ իցէ լինել ի վերայ կալուածոց վարժարանին, բայց ի կնիք բանին վարանին իմն և նոքա, մարթի եւս ասելով թէ հրէշքն ծնանիցին, որպէս թէ բռնութիւնն օրինադրութիւնս մեր եղիցի։ Այս վարանումն նոցա՝ թերեւս անհիմն, բայց սակայն անհանգստէ զիս ի միայնութեան սենեկիս և ոչ կարեմ այլում ումեք ի վեր հանել զայս, յորմէ չիք ինչ օգուտ, այլ ձեզ աճապարիկ յայտնեմ զի մարթասջիք և այժմ նախատես լինել, և զառաջս առնուլ վնասուն որ յառժամայն դադարմանէ եկամտիցն, որք ծախել ունին ի պահպանութիւն մանկտւոյն և ի պայմանադրեալ հաստուցումն ստանալի պալատանն։

« Արիասջիք և մի ինչ կքանիցիք ի դժուարինս և յանյոյս կարծեցեալս, զի մեծ է Տէր յոր միայն եմք ապաւինեալք, և ի հզօր պաշտպանութիւն Տիրամօրս, առ որում կացցէ բարեխօս մեծն Մխիթար։

« Զքաղաքականս մեր թողում գրել Հ. Գաբրիէլին, և ես փոխադարձ մաղթողական ողջունիւ բոլոր Աստուածապահ ուխտիս և հայրական առատ օրհնութեամբս

« Ողջ ցանկամ լինել

« Հայրութեան քում

« Ի Վենետիկ. 29 դեկտ. 1845.

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ

« Արքեպիսկոպոս և Աբբայ. »

ՊԱՏՃԷՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՎՃՌՈՅ ՈՐ ԸՆԴԴԷՄ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Թ. 24278
2440

Առ Միաբանութիւն Վ. Հարց Մխիթարեանց Ս. Ղազարու.

*« Ըստ ակնարկութեան վճռոյ կայսերական գերագոյն գա-
հերիցու պետութեանս, տուելոյ ի 6 ամսոյս, Թ. 5157, ազդ
առնեմք Միաբանութեանդ, զի վեհափառ ինքնակալն առանց
յետս կոչելոյ զկայսերականն իւր վճիռ որ ի 10 յունիսի 1843,
պատշաճ վարկաւ թոյլ տալ զի ըստ շնորհելոյն յիւրմէ կար-
կարգաւորութեան որ ի 4 հոկտեմբերի տարւոյս, « Խնամք
« Պաշտօնէից կարգելոց ի տեսչութիւն մատակարարութեան
« Մուրատեան հրխտակին ամփոփեսցին ի պահանջել ամ
« ըստ ամէ զհաւաստիս գոյութեան կամ անքոյթ զետեղման
« դրամագլխոյ հրխտակին և եկամտից նորին, եւս և ի հըս-
« կել, զի յաղագս մատակարարութեան և ի գործադրու-
« թեան հասից այնր հրխտակի ի կողմանէ Միաբանութեանն
« Մխիթարեանց մի՛ լիցի ինչ զեղծումն և կամ անկարգութիւն։
« Միանգամայն և թողցի ի կամս որդւոյ և կտակակատարի
« բարերարին, Յովհաննու Մուրատի, զնացուցանել առաջի
« Աւստրիական ատենից զիրաւունս իւր զոր ունիցի արդեօք
« զօրութեամբ պայմանագրաց հաստատելոց ընդ Մխիթա-
« րեան Հարց կամ կտակի ծնողի իւրոյ։ » Այսչափ ինչ
ի պատասխանի գրոյն տուելոյ առ կառավարութիւն գաւա-
ռիս ընդ թուահամարաւ 24101, որոյ և հաւաստիքն դարձու-
ցանին յետս ի կայսերական կուսակալութենէ աստի։*

« Վենետիկ. 9 Նոյեմ. 1845.

*« Կայսերական պալատանն խորհրդական և արքունի
կուսակալ գաւառիս*

« ԹՈՒՌՆ. »

ՊԱՏՃԷՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՎԵՐՈՅԻՇԵԱԼ ՎՃԻՌՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

« Վենետիկ. 18 դեկտ. 1845.

« Միաբանութիւն Հայոց Մխիթարեանց Վենետկոյ որ հըպատակ է Օսմանեան տէրութեան, և որում կտակարարն Սամուէլ Մուրատ հպատակ Անգղիական տէրութեան, յանձն արարեալ էր հիմնել ուր և պատշաճ թուեսցի ինքեան յօգուտ աղքատաց Հայոց սփռելոց յարեւելս, դպրոց մի դարմանելի հասիւք կալուածոց որ գնելիք իցեն յոր կողմն և իցէ Եւրոպայ, և որում տուեալ էր զանսահման իշխանութիւն ի վերայ ամենայնի որ ինչ անկ իցէ այնմ դպրոցի, կամելով միայն զի յոր և իցէ դէպս հակառակութեան կախեալ կայցէ զօրինաց և զկանոնադրութեանց Անգղիացւոց, և ոչ այլոց ազգաց: Ծանոյց նա մեծարգոյ Պետութեան տեղւոյս ի 10 յուլիսի 1833, եթէ ահա ուր ուրեմն յետ այնչափ վաստակոց հանդերձի կանգնել ի Պատուայի քաղաքի զվերոյիշեալ դպրոցն որ համարեսցի իբրեւ ճիւղ մի կամ դուստր վանուց սրբոյն Ղազարու, վասն որոյ և հաղորդ արտօնութեանց նորին և ազատութեանց:

« Մեծարգոյ պետութիւնն գրեաց պատասխանի ի 18 յուլիսի, թէ ընկալաք զծանօթութիւնն տուեալ ի Միաբանութենէդ, և բացայայտ բանիւք ասէր թէ այսպէս իսկ համարեսցի դպրոցն, որպէս ասէքդ: Սովին դիտաւորութեամբ, և աներկբայ վստահութեամբ, թէ ոչ ներքոյ անկանի և ոչ կարասցէ ներքոյ անկանել սահմանադրութեանց Աւստրիական դպրոցաց այս վարժարան յառնէ օտարական հիմնեալ, յօտար ձեռս աւանդեալ, և ի պէտս օտարաց կարգեալ, Միաբանութիւնն եդ ի մտի աստէն հիմնել զայն, և ծանոյց զորոշումն իւր: Եւ յայնժամ և եթ, յորժամ աներկմիտ վստահութիւն իւր, օրինակ միւսոյ Ռափայէլեան վարժարանի

(Նոյնպէս հիմնելոյ ի Միաբանութենէս յԱւստրիա, և ոչ երբեք արկելոյ յԱւստրիական պետութեան ընդ հսկողութեամբ կամ ընդ խնամակալութեամբ,) վերստին հաստատեցաւ յայտնապէս ի պատասխանւոյ պետութեանս, Միաբանութիւնս մեր էարկ զհիմունս նորոյ դպրոցին, և եդեալ էր ի մտի յառաջ վարել զայն: Նա վարեաց իսկ յառաջ զգործ իւր պատուելագոյն վստահութեամբ, տեսեալ զի գործ Մեծարգոյ Պետութեանն ընդ ամս բազումս համաձայն և յարմար էր վերջիշեալ պատասխանւոյն:

« Այլ իբրև փոխեցան կարգաւորութիւնք և հրաւիրեցաւ Միաբանութիւնս ի պահպանութիւն սահմանադրութեանց որովք վարին դպրոցքն հիմնեալք յԱւստրիացի հպատակաց, դադարեցոյց Միաբանութիւնս անդէն և անդ զամենայն շարժմունս իւր, զի մի՛ գուցէ արատեսցէ իւիք զայն անկախութիւն, ընդ որոյ ապահովութիւնն ստուգապէս չտային նմա տեղի երկմտելոյ, իսկութիւն հրիտակին, կամք բարերարին, օտար հպատակութիւն իւր և ապաւէնն յայտարարութեանց պետութեանս:

« Առ ի ձեռս բերելոյ զյետս կոչումն այսպիսի կարգանաց, ոչ զանց արար Միաբանութիւնս զյոյժ իսկ ակնածու և եռանդուն աղերսանօք. բայց նորոգ հրատարակեալ վճիռն կայսերական որ ի 4 հոկտեմբերի տարւոյս, եբարձ ի նմանէ զյոյս լսելի լինելոյ աղաչանաց իւրոց:

« Մեծապէս ցաւելով զի ոչ կարէ յանձն առնուլ զայն և միանգամայն կատարել զպարտս եդեալս նմա ի կտակողէն, և պահպանել զսեպհական ազատութիւն իւր օտար հպատակութեան, զհաստատեալն անընդհատ վայելիւք իւր ի հարիւր և յիսուն ամաց հետէ, ծանուցանէ արդ Միաբանութիւնս Մեծարգոյ Պետութեանդ եթէ զօրութեամբ իւրոց միշտ անարատ պահելոց իրաւանց, և սակս փոփոխութեան կարգադրութեանցն Աւստրիական պետութեան, դիմեաց սա առ Պետութիւնն Գաղղիոյ, հայցելով զհիւրընկալութիւն սակս Մուրատեան Վարժարանին: Գաղղիական պետութիւնն արժանաւորեաց ընդունել սիրով զխնդիր սորա և խոստացաւ զան-

թերի ազատութիւն, որոյ վասն և ոա փոխադրեաց արդեամբք և խրատամբք զվարժարանն Մուրատեան ի Գաղղիա անդստին ի մայիս ամսոյ տարւոյս ։

« ՍՈՒՔԻԱՍ ՍՈՄԱԼ

« *Արքեպիսկոպոս և աբբայ Մխիթարեան Միաբանութեան Վենետիկոյ.* »

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատասխանի թղթոյ Գեր. Սոմալի, տուեալ ի Հ. Սարգսէ. — Պատճառ յապաղման դառնալոյ Հ. Սարգսի ի Վենետիկ. — Տեղեկութիւն զառաջնմանէ տեղւոյ Մ. դպրոցին, և զպաշտպանութենէ նորին ի Գաղղիական տէրութենէն. — Հնարք գործակալաց յազատել զատուցուածս վարժարանին ի բռնութենէ Աւստրիոյ. — Ջանք գործակալաց հաստատել տալ զընդունելութիւն Մ. վարժարանին ի Փարիզ վճռով արքային. — Ստացումն տեղւոյ Մ. վարժարանին ի Փարիզ և ամէք նորին. — Մահ Գեր. Սուքիաս Սոմալի. — Կոչ Հ. Սարգսի ի վանս յընտրութիւն նորոգ Աբբայի. — Դարձ Հ. Սարգսի ի վանս.

Ահա է պատասխանի Հ. Սարգսի վերոյիշեալ թղթոյ Գեր. Սոմալի, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր իմոյ խոնարհ համբոյր Սրբազնեալ աջոյ.

« Հանգամանք իրացս, հայեցեալ ի գնացս պետութեանց, հարկաւ անմեղադիր առնեն զիս ընդ յապաղումն դարձին իմոյ այդր, ըստ հրամանի վեհիդ, այլ և ընդ լռութիւն գրութեանս, ի պատասխանի վերջին գրութեան Ձերոյ, չունելով իմ այլ ինչ գրել ի լուծումն վարանման ոմանց այդր, որ ընդ մարթելի հրէշ ծնունդ Աւստրիոյ պետութեան... և ի հանդարտութիւն մտաց Ձերոց որ ընդ երկիւղն այն, բայց եթէ

յապաղել զդարձն իմ այդր, և զառաջս առնուլ այսր կարծեցեալ վնասուն նախահայեաց տեսութեամբ, ըստ ազդարարութեան Ձերոյ ։

« Ահա յետ եօթնամսեայ որոնման պատշաճաւոր տեղւոյ դպրոցիս, և յետ բազում խորհելոյ ընդ քաղաքագէտ արանց, բարեկամաց մերոց, մանր և քաջ զամենայն հանգամանս կշռադատեալ՝ որոշեցաք ի վարձանի առնուլ զյառաջ ծանուցեալ պալատն Մարքէս Նիքօլայի, և ընդ այն կանուխ հատուցաք 60,000 ֆրանք, մինչև քննեցին մուրհակք տանն ձեռամբ Նօտարի. ապա հատուցաք զբոլոր գումարն, զ300,000 ֆրանք, հանդերձ կարեւոր ծախիւք, որք և լցին ընդ ամենայն իբրև 400,000 ֆրանք։ Բայց յանձնեցաւ մեզ խոկոյն պալատն, յոր և կարեմք բնակիլ ի գալոյ եօթնեկի, ընդ պատրաստելս զկարեւորսն մեզ երկուս ի բնակութիւն. և ահա հոգացաք օգնականութեամբն Աստուծոյ և աղօթիւք Ձերով զմին ի կարեւորաց գործոյս ։ Մնայ մեզ այսուհետև հոգալ և զմիւսն ի կարեւորագունիցն, զպաշտպանութիւնն առնել աստի տէրութեանս, որ ի դէպս արդեօք անխրաւ բռնութեան այսր, և որում զհետ եմք յայսմիկ աւուրս, և զոր յուսամք յաջողել դարձեալ օգնականութեամբն Աստուծոյ և աղօթիւք Հասարակութեանս. յետ այնորիկ ելից ի ճանապարհ դառնալ այդր վաղվաղակի, որ և լիցի ի սկիզբն գալոյ փետրվարի։

« Յուսամ զի քաջալերեալ իցէ այժմ սիրտ վեհիդ և համօրէն ուխտիս, անակնկալ այցելութեամբ Աստուծոյ որ ի ձեռըն փոխանորդին իւրոյ Քահանայապետին Հռովմայ (առաքելով միաբանութեանս պարգեւ զմարմարեայ արձան իւր.) արդարև քաջալերութիւն սրտի մեզ ամենեցուն, միանգամայն և ակնածութիւն ոչ սակաւ հակառակորդաց մերոց. Թողից առել զխոստովանութիւն պաշտօնէից տէրութեանդ ընդ խոհական և իմաստուն գնացս Ձեր, հայեցեալ ի փոխադրութիւն Մ. վարժարանին ի Փարիզ, և թողից յիշատակել աստ զակընկալութիւն բազումբարեաց ազգիս և պայծառութեան ուխտիդ, որ ի հաստատութենէ աստի վարժարանիս ողորմութեամբն

Աստուծոյ և ժամանակութեամբ աղատամիտ ազգին Գաղղիացւոց։ Ահա այսու քաջալերութեամբ սրտի և յուսով բարեաց մնամ միշտ

« Արհիապատիւ Տէրութեանդ ծառայ

« Ի Փարիզ. 31 յունվար. 1846.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թէպէտ և Մխիթարեան Միաբանութիւն ի Վենետիկ արդարապէս և աներկիւղ առնէ պատասխանի վերոյիշեալ կայսերական վճռոյ, սակայն կասկածի և երկնչի ի բռնութենէն Աւստրիոյ Տէրութեան, որպէս տեսանի ի Թուղթն Գեր. Սոմալի որ առ Հ. Սարգիս, գրեալ ի 29 դեկտեմբերի 1845, և յորում ազդ առնէ գործակալացն նախատես լինել և զառաջս առնուլ վնասուն, որ յառաջանային դադարմանէ եկամտիցն։

Ահա ընդ այն կասկածն և երկիւղ Գեր. Սոմալի, և ընդ ազդարարութիւն նորա, խորհուրդ հարցանեն գործակալքն ի Փարիզ յաշխարհագէտ արանց, բարեկամաց իւրեանց, յորոց մին խորհուրդ տայ նոցա այսպէս. « Պարտ է, ասէ, գտանել ձեզ աստ զհաւատարիմ և զմտերիմ ոք, և անցուցանել յանուն նորա զստացուածս Մուրատեան Վարժարանին իբրեւ վաճառեալ նմա, և այնպէս զերծանի այն ի բռնութենէն Աւստրիոյ տէրութեան։ » Եւ յասել գործակալացն թէ չկարեն գտանել զայնպիսի ոք անդ, ասէ նա ցնոսա, թէ գտանէ ինքն զայնպիսի ոք, յոր և վստահ է յոյժ, և արարեալ ընդ նմա այնպիսի ինչ, և նա է փաստաբանն իւր, այս ինչ անուն Գաղղիացի… և ի տարակուսիլ գործակալացն ընդ այն, երկնչելով ի վտանգաւոր հետեւանացն անտի, ասէ նա ցնոսա. « Առ ի միամտութիւն ձեզ, կարէք առնել և ստանձին գրուած մի, յորում խոստովանեալ և հաստատեալ ի նմանէ, թէ վաճառումն այն ոչ իրօք եղեալ է, այլ գրով միայն, և այն եւս առ ի զերծուցանել ի բռնութենէ Աւստրիոյ տէրութեան։ » Ընդ այս պայմանն հաւանին գործակալքն և անցուցանեն յանուն նորա զստացուածս Մ. վարժարանին,

և զգրուածն զայն աւանդեն ի տուն արձանագրութեանց Գաղղիացւոց տէրութեան։

Նոյնպէս փոյթ կալնուն գործակալքն ի Փարիզ, գրով, իբրև վճիռ ինչ արքային Գաղղիացւոց, Լուի Ֆիլիպի, հաստատել զընդունելութիւն Մ. վարժարանին ի Փարիզ, զոր և ի ձեռս բերեն տպա, յամսեան յուլիսի 1846, և զորոյ պատճէն յաւելցուք ի սմին։

Եւ որպէս վերագոյն յիշատակեցաւ ի թուղթն Հ. Սարգսի առ Գեր. Սոմալ, թէ որոշեն ի վախճանի գործակալքն ստանալ զպալատն Մարքէս Նիքօլայի, և թէ կանխիկ հատուցանեն ընդ այն 60,000 ֆրանք, մինչև քննեցին մուրհակքն տանն ձեռամբ նոտարի, ապա հատուցեն զբոլոր գումարն զմնացեալ 300,000 ֆրանք, յետ անցուցանելոյ զպալատն յանուն Մուրատեան վարժարանին, իբրև ստացուած նորին, ըստ տիտղոսի ստացուածոցն որ ի Պատաւիոն։ Եւ ահա կատարի այն յեւս Յունվարի 1846 ամին, զոր և անդէն վաղվաղակի գրեալ ծանուցանեն Գեր. Սոմալի ի Վենետիկ, և զոր լուեալ նորա ի մահիճս հիւանդութեան իւրոյ՝ հանեալ զձեռսն ի վեր գոհանայ զՏեառնէ, և օրհնէ զնորոգ գնեալ պալատն, զվարժարանն Մուրատեան. և ապա յետ սակաւ ինչ աւուրց վախճանի անձն առաքինի ի նմին իսկ աւուր, յորում գնացեալ գործակալաց բնակել ի պալատի անդ, ի 11 փետրվարի 1846 ամի։

Իբրև բնակեն գործակալքն ի նորոգ ստացեալ պալատն, սկսանին նոքա այնուհետև խորհել և կարգաւորել զայն ի բնակութիւն մանկանց վարժարանին, վերածել ի նմա ինչ ինչ, վասն որոյ հարցանեն ի ճարտարապետէն թէ քանի՞ ծախք ընդ այն ամենայն լիցին, որպէս զի ըստ այնմ արասցեն զայն. խնդրէ ճարտարապետն ժամանակ, առնել ընդ այն մանրամասն հաշիւ և տալ նոցա տեղեկութիւն։

Մինչդեռ պարապին գործակալքն ի գործն յայն, ահա հասանէ լուր մահու Գեր. Սուքիաս Սոմալի, տուեալ զայն գրով ի տեղապահէն, ի Հ. Մկրտիչ Աւգերեան, միանգամայն և կոչումն Հ. Սարգսի ի փոխս յընտրութիւն նորոգ Աբբայի։

Յաւէտ նոքա յոյժ ընդ լուրն այն, և մասնաւորապէս Հայր Սարգիս, յիշելով զայնչափ ցանկութիւն հանգուցելոյն ի տեսանել զինքն և ի խորհել ընդ իւր գիրաց կարեւորաց վարժարանին և Միաբանութեանն, և զգրկումն իւր ի յաջողութենէ անտի ։ Յայնժամ փութացուցանէ Հ. Սարգիս զճարտարապետն տալ նմա զխնդրեալ տեղեկութիւնն որ զծախուց շինուածոյ և նորոգութեան տանն ։ Տայ նմա նա զայն, և ասէ, թէ աւելեօք արարեալ է ինքն զհաշիւն զայն, զի մի՛ յետոյ ամաչեսցէ յաւաւելուլ ծախուցն որ ընդ այն, և լինին ծախքն այնք ընդ ամենայն 38,000 ֆրանք, զոր ի կրկին օրինակ տայ Հ. Սարգիսն առնել, զմին առեալ տանի ընդ իւր ի վանս ցուցանել անդ, և զմիւսն թողու առ Հ. Յովհաննու, զի ըստ այնմ արասցէ նա զշինուածն և զնորոգութիւն տանն, և ըստ գիտութեան և ձեռամբ ճարտարապետին հատուսցէ գործաւորաց զվարձս աշխատութեան նոցա ։

Հաւանի ընդ այն Հ. Յովհաննէս Սորկուձեան, և խոստանայ առնել զայն ըստ ամենայնի, և փութացուցանէ զՀայր Սարգիս դառնալ ի վանս ժամ մի յառաջ, առ ի հոգալ զարծաթոյ, որ ի հատուցումն մնացեալ մասին գնոյ տանն և նորոգութեան և կահուց նորին, այլ և զկարգաւորութենէ վարժարանին. մանաւանդ թէ ընդ այս՝ ամօք ինչ յառաջ փութացուցանէ զնա գնալ ի վանս, որպէս զի ըստ հաճոյից իւրեանց ընտրեսցէ զպաշտօնեայսն. և ընդ այս այնչափ՝ մինչեւ Տէր Թէոփիլէն Թխսեան զգացեալ՝ ասէ ցՀ. Սարգիս առանձինն, թէ « Հ. Յովհաննէս Սորկուձեան կամի հեռացուցանել զքեզ աստի, որպէս զի ըստ քմաց իւրոց և ցանկութեան վարեսցի ։ » Ճանաչումն նորա սխալ ոչ լինի, զոր և ծանուցաք ի տեղւոջ իւրում ։

Ի վախճանի որոշէ Հ. Սարգիս դառնալ ի Վենետիկ յամսեան ապրիլի 1846 ամին. և աւուրբք ինչ յառաջ խնդրէ ի Հ. Յովհաննէ զհաշիւ ծախուց իւրեանց արարելոց ի Լոնտոն և ի Փարիզ զամս երկու. խոստանայ նա տալ զայն, բայց ոչ կատարէ զխոստումն իւր, առելով թէ չկարաց աւարտել զայն, և թէ առաքեսցէ նմա զայն ապա, ընդ հատանել նորա

ի վանս, թէպէտ և պակասի նա յայն եւս լաւ առողջութեան իւրում։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Հրաման վեշտասաներորդ Գրիգոր Պապին դարձուցանել վերըստին ի Պատուշիոն զՄ. վարժարանն. — Հնազանդին միաբանութեան հրամանի նորին. — Թուղթ ազդարարութեան Հ. Յովհաննու առ Հ. Սարգիս ի Վենետիկ ի խափանել զհրամանն այն. — Ժամանել Հ. Սարգսի ի վանս, և ջանք նորա ի չկատարել զայն հրաման. — Հոգ Հ. Սարգսի հայթայթել արծաթ ի հատուցումն տեղւոյ վարժարանին, և առաքել զոր օգնական Հ. Ստեփանի ի Փարիզ. — Ժամանումն Հ. Ստեփանի ի Փարիզ հանդերձ 35 մանկամբք. — Արկածք վնասուց ուրումն ի մանկանց անտի. — Գնացք Հ. Յովհաննու և Հ. Ստեփանի ընդ Հ. Սարգսի.

Յայսմ ժամանակի մինչդեռ Հ. Սարգիս ի ճանապարհի էր ի գնալն ի վանս, գտանէ Հ. Յովհաննէս գիր մի ի վանաց ի Հ. Գաբրիէլէ, յորում ծանուցանէ նմա, թէ Սրբազան Պապն Հռովմայ Գրիգոր վեշտասաներորդ, կոչեցեալ իցէ զՀ. Եդուարդ Հիւրմիւզեան, և հարցեալ ցնա թէ ընդէ՞ր միաբանութիւն նորա փոխադրեալ իցէ զՄ. վարժարանն ի Պատուիոնէ ի Փարիզ, և թէ՝ ոչ բարւոք արարեալ է նորա զայն. վասն որոյ դարձուսցէ նա զայն վերստին ի Պատուիոն, քանզի այն են կամք իւր և հրաման։ Լուեալ Հ. Եդուարդայ զայն հրաման ի Պապէն սաստանի և գրէ վաղվաղակի ի վանս առ Տեղապահն Հ. Մկրտիչ Ալգերեան։

Առեալ Տեղապահին զայն գիր Հ. Եդուարդայ՝ ժողովէ զքանի մի անձինս ի միաբանից ի ծերագունից անտի, և ընթեռնու նոցա զայն։ Խորհին և որոշեն նոքա թէ պարտ է հնազանդիլ հրամանի Պապին, և դարձուցանել վերստին զՄ. վարժարանն ի Փարիզէ ի Պատուիոն։ Վասն որոյ պատա-

րատեն նորա պատասխանի հպատակութեան կամաց Արքազան Պապին և առնեն զայն ի ծածուկ, պատուիրելով մինանց չյայտնել զայն Հ. Սարգսի, յորժամ գայցէ նա ի վանս, հասեալ գոլով նորա արդէն ի Պատուախն ։

« Իմացեալ զայս ամենայն Հ. Յովհաննու ի թղթոյ անտի Հ. Գաբրիէլի, խռովի յոյժ, և գնայ առ Նուիրակն Պապին որ ի Փարիզ, Մոնսինեօր Ֆօրնարի, պատմել նմա զայն, թերևս տեղեկասցի ինչ ի նմանէ, հաղորդեալ նմա զայն ի Հռովմայ ։ Զարմանայ Նուիրակն ընդ այն լուր և քաջալերէ զնա չխռովիլ բնաւ, և չզիջանել կամաց Պապին, մանաւանդ թէ Մէթէրնիկին. զի ի ստիպմանէ նորին, ասէ, հրամայէ ձեզ զայն Արքազանն ։ Քաջալերեալ Հ. Յովհաննու ի բանից Նուիրակին, և առեալ գրէ թուղթ մի երկայն զայրացեալ սրտիւ առ Հ. Սարգիս ի վանս, օրինակ զայս.

« Յարգոյ և Վերապատուելի Հայր և Նժդեհակից Եղբայր ·

« Ընկալայ ըստ ժամանակին զշնորհեալդ ի Լիոնէ ի 6 ամսոյս և տխրեցայ յոյժ ընդ վիշտս կրեալս ի ճանապարհին. այլ երանի թէ լինէր այն վերջին ի վշտաց բազմաշխատ Հօրդ, այլ աւա՜ղ, բազում վիշտ և կիրք անհնարինք ելցեն ընդ առաջ Ձեր, այն ինչ հասեալ ի դուրս Մենարանիս ։

« Ես այլ յայլմէ եղեալ եմ և չգիտեմ զորմէ՝ խորհրդոյ բուռն հարկանել. զի ի խորս թշուառութեան արկին զմիաբանութիւնս ծերունիք մեր, մանաւանդ թէ բանսարկուք ոմանք, որոց անուն չէ անծանօթ Վերապատուութեանդ ։ Այսպէս չկարացին և ոչ զամիսս երկուս պահել անխռովս զմիաբանութիւնս որբացեալ ի Հօրէ, այրք խորհրդակորոյս, յորոց ի ձեռս հաւատացեալ էն զանձինս, զփառս և զօգուտ իւրեանց անհատք միաբանութեանս ։ Այլ անօգուտ համարիմ զհառաչանս և զկոծ անգործունեայ, եթէ ոչ սթափեալք փութացեմք զառաջն առնուլ զանհնարին չարեաց և զյետին կործաման Ուխտիս, և զանհնարին վնասուց ազգիս. ի յետինն պարտ է փորձել փորձ, և չկորուսանել և ոչ վայրկեան մի. ուստի

աղաչեմ զՎերապատուութիւնդ, նա երդմնեցուցանեմ զքեզ յանուն Աստուծոյ և վասն փառաց միաբանութեան և վասն սիրոյ ազգիս, փութալ ժողովել զհամախորհուրդ եղբարս և յորոց ի սիրտ դոյ նշոյլ ինչ զգացողութեան, և առաջի առնել յարգոյ (խորհրդակորոյս) ժողովոյդ զիրաւացի բողոք և զգանգատանս միաբանութեանս ։

« Ա. Զի այդպէս գաղափարար և անխորհուրդ արարեալ են զբացորոշութիւնն ձեռնթափ լինելոյ ի սկսեալ գործոյ, հպատակելով կոյր զկուրայն անարդար և բռնաւորական պահանջմանց Քափէլլարեայ, (մականուանեալ Պապին)։

« Բ. Զի զայդպիսի գործ ծանր և դժուարին միայն առաջնկայք բացորոշեալ են, երբ վանական ժողովով և ի կենդանութեան Աբբային հաստատեալ էր միաբանութիւնս, նա և զթեթև ինչ խնդիրս Մ. վարժարանիս ։

« Գ. Զի ոչ են հարցեալ զկարծիս և զհաւանութիւն ժողովոյն խնամակալաց զոր նոքին իսկ առաջնկայք հաստատեալ էին և յանձն արարեալ նմա խորհել զօգուտն և զբարգաւաճանս դպրոցաց և ազգին ։

« Դ. Զի ոչ հարցին զկարծիս մեր, եղելոցս առս, որոց տուեալ էին զանուն և զպաշտօն գործակալութեան և զմխաբան հաւանութիւն ուխտիս, տուեալ հրաման խօսել ընդ պետութեանս վասն փոխադրութեան դպրոցին, գնել զտուն, և տալ հրաման ի Պօլիս վասն դադարման մանկտւոյն ։

« Ե. Ոչ սպասեցին գոնէ առուրս ինչ դարձի Վերապատուութեանդ, որ ես ի գրիս առ Վ. Հ. Տեղապահն ի 12 մարտի ասացեալ էի թէ եկանէք ընդ հուպ ի ճանապարհ ։

« Զ. Զի զայդպիսի իրս չկարէին նոքա բացորոշել առանց Աբբայի, և այսու պատճառանօք յերկարել զպատասխանին ։

« Այս ամենայն պատճառք վասն վանական բարեկարգութեան. զի միաբան հաւանութեամբ արարեալ, եթէ չար ինչ պատահիցէ, զոր ամենայայնի տեսանեմ, չմնայցէ տեղի քըթմնջմանց և արհամարհութեան աւագաց, և պատճառք կուտելոյ զանէծս ի գլուխս նոցա ։ Ասացից արդ համառօտիւ և զչար հետևանս անխորհուրդ յանձնառութեան դոցա ։

Եթէ միանգամ զիջանեցիմք կամ տեղի տայցեմք միջնորդութեան Քափէլլարեայ, պարտ է կատարել ըստ ամենայնի զկամս Աւստրիացւոյն. և այս յայտնի է ի բանից նորին իսկ միջնորդի յասելն. «Եթէ Աւստրիա կամիցի եւս գիտել ընդ-
« հանրապէս զի կամք կտակողին կատարի՞ թէ ոչ, եկամուտ-
« քըն պահի՞ն անմնաս թէ ոչ, և թէ դպրոցն զարգանա՞յ թէ
« ոչ, մինչեւ ցայս վայր չգտանեմ անիրաւ զպահանջումն նո-
« րին.» ասէ (Պապն Հ. Եդուարդի)։ Հարցանեմ թէ զի՞նչ ինչ պահանջէր ի հինգ ամաց հետէ Աւստրիա ի մէնջ աւելի քան զայս. Ե՞ր վասն և մեք ընդդէմ դարձաք նմա զամս հինգ և փոխեցաք ստա զվարժարանս ։

« Այլ որպէս յայլ ամենայն գործողութիւնս մեր անխորհուրդ եմք և բերեալ ըստ բաղդի, որպէս և այժմ յետ մաքառմանս ամենայն արիութեամբ և զերծանելոյ ի ձեռաց թշնամեաց մերոց և դաւաճանաց, վերստին մատնեմք զանձինս կոյր զկուրայն ի ձեռս Քափէլլարեայ, որոյ զեղծեալ իշխանութեամբ ահ արկանէ անմիտ գործակալիդ (*) ի Հռովմ, և նա ի ձեռն անձնապարծ դասակցաց իւրոց խռովէ զծերսն և ահացուցեալ համոզէ զնոսա իչարիս անձանց և միաբանութեանս ։

« Դարձեալ զարմանամ յոյժ յոյժ, զի գործդ այդ մեծ և դժուարին այդպէս փութով վճարեալ (հակառակ առաջնոց թղթոց իւրեանց, մանաւանդ գրեցելումն յ30 մարտի, առաքագրութեամբ Տեղապահին, և վեց առաջակայից,) հաւատացեալ են ի Հ. Եդուարդ, որ արդէն միամիտ և փանկած ումն է, և յայտնի եցոյց յիւրս յայտմիկ թէ ո՛րչափ իցէ խորագիտութիւն նորա և արիութիւն, և ի սկզբանէ հետէ հակամէտ զանձն եցոյց ի կամս Քափէլլարեայ, զի մի՛ զրկիցի յեպիսկոպոսութենէ ի Հռովմ և ի վանս, եթէ միաբանու-

(*) Եթէ ընդ վերստին փոխադրութիւն Մ. վարժարանին ի Պատաւիոն զայրացեալ Հ. Յովհաննու անմիտ կոչէ զՀ. Եդուարդ և զգասակիցս նորա անձնապարծս, ապա զի՞նչ պարտ էր կոչել զնոսա, որք կամէին փոխադրել զայն ի Հռովմ....
(Ծանօթութիւն Հեղինակին։)

թիւնս վասն յետին դժբաղդութեան իւրոյ ընտրեսցէ զնա Աբբայ ։

« Խոստանան իմաստուն ծերունիքդ հանել զՔափէլլարի, այս է՝ զԱւստրիա, (առանց իրիք պայմանի.) հարցանեմ թէ չէ՞ր արժան պահանջել նախ գրով, թէ զի՞նչ պայման արասցէ մեզ Աւստրիացին ի կալն մեր յետս ի Գաղղիոյ. կոչիցէ՞ յետս կայսրն զերկուսին վճիռս իւր Նոր վճռով, հրատարակելով առաջի իշխանութեանց զանմեղութիւն մեր ։ Այնինչ յայսպիսեաց աստի , այլ աղա թուրքայ՝ ի միոյ ծայրէ ի միւս ծայրն փոխել առանց կշռելոյ զհետեւանս և չարիս որ յանկոպարւոր յանձնառութենէն , ի հաճելոյ առնել զկամս Քափէլլարեայ ։

« Եւ զի՞նչ արասցէ Նա. ասասցէ ի միտս իւր թէ արդէն ճանաչէի զՄխիթարեանս լինել միամիտս և փաճրասրիքս, այլ այժմ քաջ ի միտ առի զի անմիտք են և ի սպառ զուրկ ի խորհրդոց. և առ երեսս ասասցէ, պռավի պռավի, գիտէի զի հաբաղատ և (կոյր) հնազանդ որդիք են սրբոյ գահուն, և այլն և այլն. և թերեւս յղեսցէ միւս այլ փար իմն գայթակղութեան իբրու զառաջինն (*), և զդաւաճանս հայրենեաց պատուեսցէ եպիսկոպոսութեան աստիճանաւ ։ Եւ ապա հրաւէր տացէ Աւստրիոյ առնել զամենայն կամս իւր ի վերայ մեր. զի յայժմ հետէ արասցեն Մխիթարեանքդ զոր միանգամ հրամայես, զի ես կապեցի զնոսա առաքելական իշխանութեամբ, և դու մի առ մի խողխողեա՛ զպատճառամիտս , և արա զնոսա կուր անյագ որովայնից ։ Եւ արծուին գիշատիչ հասցէ ի վերայ միաբանութեանս , (հանդերձ գործակցօք և խորհրդակցօք,) ի միում ձեռին սուր և ի միւսումն խաչ՝ առ ի զոհել

(*) Ակնարկէ ի կճեայ անդրին Գրիգորի վեշտասաներորդի, զոր նա ինքն առ կենդանութեամբ իւրով պարգեւեալ էր Մխիթարեան Ուխտին որ ի Վենետիկ, իբրեւ յիշատակ սիրոյ իւրոյ առ նա, որոյ ընկալեալ բազում խնդութեամբ՝ ի մատենադարանի իւրում մեծաւ հանդիսիւ երեւելի արանց, բաց ի Գերապայծառ Սուքիաս Աբբայէն, սակս ծանր հիւանդութեան իւրոյ, որ և վախճանի զկնի քանի մի աւուրց ։

(Ծանօթութիւն՝ հեղինակին ։)

զանմեղս անյագ ցասման իւրոյ. և եթէ խլրտիցի ոք և դանդաղեսցի խոնարհեցուցանել զպարանոց իւր ընդ որովն, ցուցցէ զխաչն ասելով. Հնազանդեա՛ հրամանաց գլխոյն եկեղեցւոյ. ապա թէ ոչ՝ հերձուածող և հերետիկոս կոչեսցիս, և ծիծաղեսցին զքեւ Քօլէճցիք։ Եւ այսպէս մի առ մի արասցէ զամենեսեան էջ նահատակս կոյր հնազանդութեամբ Քափէլլարեայ զեղծելոյ իշխանութեամբն իւրով։

« Իսկ ես Նուազ չար համարէի զլինելն սրախողխող, այլ անագորոյն պետութիւնդ զոր ամենայն կատատամահ արասցէ զմիաբանութիւնս առանց զրուելոյ ի՛ կենաց, որպէս զի մեք և յաջորդք մեր հատուցանիցեմք զտոյժս անխոհեմութեան վնասակար արանց ոմանց և խորհրդակորոյս ծերոց։

« Ո՛հ. աւա՜ղ կուրութեանս, չկարծէի երբէք, եթէ յայդ աստիճան անմտութեան հասցեն արքդ և պառակտեսցեն զմիաբանութիւնս ի բազում ծուէնս։

« Ես աւուրբք յառաջ խօսեալ եմ ընդ պարծենկոտ բարեկամին մերոյ, և ի ձեռն նորա խօսեցայ անձամբ ընդ Ներքին խորհրդականին Տ. և ետու գրուած համառօտ, իբրու թէ լսեմք, զի Աւստրիային Հնարի արգելուլ զհաստատիլս աստէն, և ջանայ միջնորդ ունել զՊապն։ Ակն ունիմք, զի պետութիւնս բարեխօս լիցի իւրովսանն և ոչ թողուցու կրել զվնաս զայս մեծ արծաթոյ, համբաւոյ և օգտի միաբանութեանս և ազգիս, և այլն. և սոքա տացեն բարբառել խոհեմութեամբ զդեսպան իւրեանց։

« Կնքեմ զգիրս զի անձուկ է ինձ ժամանակս. Ներեա՛ անյարթ և փութով գրութեանս։

« Ողջ լեր ի պարծանս միաբանութեանս.

« Ի Փարիզ. 13 ապրիլ 1846.

« Քոյին

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՈՐԿՈՒՃԵԱՆ. »

ժամանէ Հ. Սարգիս ի Վենետիկ ի վանս Սրբոյն Ղազարու, և գտանէ անդ զՄիաբանութիւն իւր պատրաստ յընտրութիւն նորոգ Աբբայի. իսկ զՏեղապահն նորին զՀ. Մկրտիչ Աւգերեան ծերացեալ յոյժ և ցնդեալ մտօք, մինչև մոռանալ նաւ զասացեալն իւր և զլուեալն յայլոյ զկնի միոյ վայրկենի, վասն որոյ հարցանէ ցՀ. Սարգիս երիցս հետ զհետէ, թէ ուստի՞ գայ, և առ ի՞նչ իցէ եկեալ ։

Յետ երից աւուրց ժամանելոյ Հ. Սարգսի ի վանս, գտանէ անդ զվերոյիշեալ թուղթն Հ. Յովհաննու. և ընթերցեալ զայն զարմանայ և ցաւի յոյժ, տառապեալ ընդ լռութիւն միաբանից իւրոց, ծածկելով ի նմանէ զայն, և հարցեալ յոմանց անտի ստուգէ զգրեալն Հ. Յովհաննու ի Փարիզ. միանգամայն և իմանայ զգլխաւորան խորհրդոյն այնորիկ ; յորոց մի և առաջին Հ. Եղիա Թովմաճանեան լինի. հարցանէ ցնա զայնմանէ և խնդրէ տեսանել զօրինակ գրով պատասխանւոյն զոր ունէին տալ Սրբազանին, Գրիգոր Պապին ։ Թէպէտ և զառաջինն չկամի Հ. Եղիա ցուցանել նմա զայն, ասելով թէ չգիտէ ո՛ւր իցէ այն, բայց ի ստիպել զնա Հօր Սարգսի, հանէ նա յայնժամ ի ծոցոյ իւրմէ զայն և ընթեռնու յականջս նորա, և ասէ թէ այն ի՛նչ պատրաստեալ էր այն ։ Քննեալ Հ. Սարգսի զթուականն, ասէ ցնա թէ աւուրբք ինչ յառաջ գրեալ էր այն, և թէ ընդէ՞ր թագուցեալ էին ի նմանէ զայն. ապա խօսի նա զարժանն, յանդիմանելով զնա ընդ այն յանդուգն և վնասակար խորհուրդ և որոշումն. լռէ Հ. Եղիա և չկարէ արդարացուցանել զանձն ի խնդիրն և յորոշումն ։

Իբրև լսեն այլ համախոհք Հ. Եղիայի զյանդիմանութիւնն Հ. Սարգսի ընդ յանդուգն և վնասակար խորհուրդ և որոշումն իւրեանց՝ ամաչեն, տարակուսին և հարցանեն ցՀայր Սարգիս, թէ զի՞նչ պարտ իցէ նոցա առնել առ ի դարման տանել սխալանաց իւրեանց. տայ նա նոցա խրատ զայս և այսպիսի բանիւք, թէ պարտ է ժողովոյն ազգ առնել գրով գործակալին իւրոյ ի Հռոմ, զի ծանուսցէ նա խոնարհութեամբ Սրբազան Պապին, թէ « Միաբանութիւն իւր յօժար և պատ-

« բաւ է հպատակել հրամանի Սրբութեանդ, փոխադրել
« վերստին զՄ. վարժարանն ի Պատուխոն, բայց քանզի դոր-
« ծողութիւն նորին այն ի Փարիզ այնչափ յառաջացեալ և
« հաստատեալ է անդ՝ մինչև առանց անպատիւ լինելոյ միա-
« բանութեանս առաջի Գաղղիացւոց տէրութեան և ազգի
« նոցին միանգամայն, և առանց խղճի մտաց որ ընդ կորուստ
« մեծագումար արծաթոյ աղքատաց ազգին, ծախելով ի գին
« տեղւոյ վարժարանին և կահուց նորին, չկարէ նա արդա-
« բանալ առաջի աշխարհի, և հանգչիլ ի միտս իւր, բայց եթէ
« հրատարակել Գաղղիացւոց տէրութեան թէ Սրբազանն ոչ
« կամի ընդ հաստատութիւն Մ. վարժարանին ի Փարիզ,
« անպատշաճ և վնասակար խել զայն համարելով, վասն այ-
« նորիկ փոխադրեցաւ վարժարանն այն ի Պատուխոն: »

Գիտեմ և հաւատի եմ, ասէ Հ. Սարգիս, զի Սրբազանն
ակն ածէ յոյժ ի Գաղղիացւոց արքայէն և յայսպիսի յայտա-
րարութենէն, և կասի ի պահանջմանէ անտի իւրոյ։ Եւ լինի
այնպէս։ Քանզի ընդ լսել Պապին զայն բանս ի բերանոյ գոր-
ծակալի միաբանութեան, փոխէ զկարծիս իւր և զհրամանն,
պատասխանելով Մէթէրնիկի, թէ խնդիրն այն քաղաքական
է և ոչ եկեղեցական, վասն որոյ չկամի ինքն խառնիլ յայն։
Դադարի այնուհետև Մէթէրնիկ ի հնարիմաց բռնութենէ
իւրմէ, և իբրև եղանէ ակնկալութիւն վեճժխնդրութեան
Յովհաննու Մուրատի ի տէրութենէ անտի։

Ի ծանուցանել անդ գործակալի Միաբանութեան, Հօր
Եգուարդայ, զվերոյիշեալ ազդարարութիւնն որ առ Սրբա-
զանն, յաւելու նա յայն, իբրև շնորհուկս իմն առնելով նմա,
թէ « Միաբանութիւն իւր կամէր զառաջինն ի Հռովմ հաս-
տատել զՄ. վարժարանն։ » Ասէ ցնա Սրբազան, թէ « Չէ
ի Հռովմ տեղի աշխարհական դպրոցի, այլ եկեղեցականի։ »
Զայս բանս Հ. Եգուարդ բերանով իւրով պատմէ ի վանս,
սակայն ի վերայ այսր ամենայնի ոչ դադարի նա և եղբայր
նորա Գեր. Գէորգ, և զաակից նոցա Հ. Ռափայէլ Թրենց
փոխադրել զՄ. վարժարանն ի Հռովմ, որպէս յայտնապէս
տեսանի ի բանս և ի գործս նոցա անտի մինչև ցվերջն, զոր

և ցուցցուք ապա ըստ կարգի պատմութեանս. և այս կամք նոցա, փոխադրելոյ զՄ. վարժարանն ի Հռովմ, առ ի հաճոյ լինել Պապին և ի պատուիլ անտի տիտղոսիւ. Թէպէտ և նախատինս վայելեցին անտի ցարդ և վայելեսցեն միշտ ի հատուցումն անիրաւութեան իւրեանց առ որբ և աղքատ մանկունս համօրէն ազգիս:

Յետ վճարելոյ Հ. Սարգսի զվերոյիշեալ խնդիրն որ ընդ Պապին Հռովմայ, ապա ի խնդիր լինի արծաթոյ ի հատուցումն մնացեալ գնոյ տանն ի Փարիզ, և ի ծախս նորոգութեան նորին, որում սպասէ Հ. Յովհաննէս անհամբերութեամբ և անդադար գրութեամբ առ նա, զոր և հոգայ նա, ըստ բանից գրութեան իւրում, որ ունի այսպէս:

« Վերապատուելի Հայր և սիրեցեալ Եղբայր.

« Ըստ նախընթաց գրութեանս իմում, ահա հոգացայ ես առատ զարծաթոյ, որ ի լրումն գնոյ պալատանդ, և վասն այլ կարեւոր պիտոյից զորին, փոխ առեալ մեր աստի և անտի, ի Ճուանելեայ 125,000 ֆրանք, 5½ առ 100 վաշխիւ. և ի Ռափայէլեան վարժարանէն 50,000 ֆրանք, 5 առ 100 վաշխիւ. իսկ յեկամուտից Մ. վարժարանին 25,000 ֆրանք և եթ գտաւ ի ժամուս, ընդ ամենայն 200,000 ֆրանք. և ահա ընդ այս առաք մեք վերստին ի Հօլմէն և այլ նոյնչափ գումար արծաթոյ հրամանագիր մի, զոր գտանէք ծրարեալ ի թղթիս, և զոր յանդիման սրարեալ սեղանաւորի նորին սղդը ընդունիք ի նմանէ զարծաթն յերկու կամ յերիս նուագս, ըստ պահանջելոյ պիտոյից իրացդ:

« Իսկ զայլ կարեւոր իրաց, զսպասուց սահմ մատուանդ և զզգեստուցդ, հոգասցայց ի գալոյ եօթնեկի, յանձնելով զայն Ֆրանքեթթեայ ըստ կանոնի վաճառական օրինաց, որպէս գի անխափան և անվտանգ ժամանեսցէ ի ձեռս ձեր սղդր: Հոգասցայց ապա պարապով և զայլ կահուց զպրոցիդ յորժամ առջիք դուք հրաման ի պետութենէդ առանց ինչ մաքսի մուծանելոյ նոցին ի քաղաքդ: Մնամ ես արդ լսել ի ձէնջ զպատրաստութենէ տեղւոյդ, և զանվտանգ ժամանել Հ. Ստեփանի,

և մանկտւոյն որ ընդ նմա այդր, այլ և զկարօտութենէ ձերոյ փութով օգնականի. քանզի յետ բազում բանից խօսելոյ իմ յականջս ծերունեաց մերոց հազիւ ուրեմն կարացի հաւանեցուցանել զնոսա տալ զոք օգնական Հ. Ստեփանի զՀ. Տիմոթէոս Թնկրեան. զի ընտրութիւն ուղղչին և գալուստ Նորին այդր անագանեսցի արդեօք մինչև ցելս օգոստոսի. ուստի մնամ ակնարկութեան ձերում, փութով կամ հանգստեամբ յղելոյ զնա այդր ։

« Զընդունելութենէ խնդրոյ մերոյ յարքայէդ և զհաստատութենէ Նորին լուաք, բայց ոչ տեսաք ցարդ զյայտարարութիւնն ի լրաթուղթս տեղւոյդ ։

« Մնամ

« Վերապատուելի Հայրութեանդ

« Վենետիկ․ 16 մայիսի․ 1846․

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Ցելս մայիսի 1846 ամին ժամանէ ի Փարիզ Հ. Ստեփաննոս Եզըճեան, հանդերձ 35 մանկամբք ածեալք ի Պօլսոյ յաշակերտութիւն Մ. վարժարանին ։ Ցերկրորդում իսկ աւուր ժամանելոյ Նոցա անդ պատահի ցաւալից արկած մի. քանզի ի խաղալ մանկանցն ի պարտիզի վարժարանին զվնասակար խաղն Նետաձգութեան, հարկանէ Նետն զակն միոյ ի մանկանց անտի, Յակոբայ Զամչեան, և կուրացուցանէ զմի ակն Նորա, Թէպէտ և ի Նախընթաց աւուրն տեսեալ ուրումն ի բարեկամաց զայն վնասակար խաղ մանկանց ազդ առնէ վերակացուի Նոցա արգելուլ զայն, այլ Նորա ոչինչ փոյթ կալեալ զայնմանէ, մինչև պատահի ցաւալից արկածն ։

Հասանէ ցաւալից լուրն այն ի Վանս և ցաւին ընդ այն ամենեքեան. իսկ Հ. Անանիա Ճէլալեան յայնժամ բանայ զբերան իւր և զանգատի զանփութութենէ Հ. Ստեփաննոսի Եզըճեան. « Քանիցս անգամ, ասէ, կոչեցի զնա գալ ի դպրոցն Պօլսոյ ի փորձել և յընտրել զառաքելի մանկունսն ի Փարիզ, և Նա հազիւ երկու անգամ և եթ եկն անդ և վեր ի վերոյ իմն

քննեաց զնոսա. քանզի ի Միջագիւղ առ ծնողս իւր բնակէր, և հիւանդ զինքն ցուցանէր. և ահա այս մնաս յայտնապէս արդիւնք են անփութութեան նորա:»

Սոյն այս Հ. Ստեփան Եզրճեան է, զոր ըստ խնդրոյ Հօր Սարգսի, առաքէ Գեր. Սոմալ ի Պօլիս ընտրել մանկունս վասն Մ. վարժարանին ի Փարիզ, և ածել զնոսին անդ և լինել նոցա վարժապետ և դաստիարակ. և սոյն այս Հ. Ստեփան է, որ տասն գլուխս բանից պայմանաց յանդգնաբար առաջարկէր Գեր. Սոմալի, զոր վերագոյն յիշեցի. «Ա. Թէ Ջինչ իցէ պաշտօն իւր. վարժապե՞տ միայն, եթէ և դաստիարակ միանգամայն,» այլովքն հանդերձ:... Արդարեւ յոյժ ընդունակ և քաջ վարժապետ և դաստիարակ միանգամայն:... Եւ սոյն այս Հ. Ստեփաննոս Եզրճեան է, որ միաբանի ընդ Հ. Յովհաննու Սուրկուճեան, և գրէ ի վանս առ դասակից և պաշտպան իւր Հ. Գաբրիէլ Այվազեան, զի խօսեսցի ընդ նորոգ ընտրեալ Աբբային չառաքել վերստին ըզՀայր Սարգիս Թէոդորեան ի Փարիզ խառնիլ ի գործ Մ. վարժարանին:... Հատուցումն արդար երախտագէտ մտաց ի հոգեհարազատ եղբարց:...

Որ զկրաւունս իւր կարի իմն պահանջէ յայլոց, չճանաչէ նա երբէք զպարտս իւր առ այլս, և մանաւանդ նա, որ չէր բնաւ փորձ ի գործս վարժարանին և չունէր արժանիս ինչ յայն երբէք: Իսկ զդատաստանն զնացից Հ. Յովհաննու Սուրկուճեան ընդ Հ. Սարգսի Թէոդորեան, տեսցեն վերծանողքն յընթացս պատմութեանս, և ի թուղթսն Հ. Եսայեայ Մըրզաքեան դասակցի նորին զորս յիշատակեսցուք ի սմին կարգաւ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ընդհանուր ժողով ի վանս Սրբոյն Ղազարու յընտրութիւն նորոգ Աբբայի. — Բնաւորութիւն բարուց Հ. Գէորգայ Հիւրմիւզեան. — Առաջարկութիւն նորոգ սահմանադրութեան. — Վկայութիւն Հ. Սարգսի ընդ ընտրութիւն Հ. Գէորգայ. — Ընտրութիւն նորոգ Աբբայի. — Ընտրութիւն Աթոռակալի և Առաջակայից Աբբայի. — Թուղթ Հ. Սարգսի առ Հ. Յովհաննէս. — Պատասխանի Հ. Յովհաննու առ Հ. Սարգիս. — Պատճէնք հրովարտակաց Աբբային Գաղղիացւոց ի հաստատութիւն Մ. վարժարանին ի Փարիզ. Պատճէն պատասխանւոյ աղերսագրի գործակալաց տուելոյ յատկանէն արտաքին գործոց պետութեանն. — Սխալանք ինչ ի հրովարտակս յայն յանզգուշութենէ Հ. Յովհաննու. — Վէճ անտի.

Յամսեանն մայիսի և յունիսի 1846 ամին ժամանեն ի կողմանց կողմանց անձինք Միաբանութեանն ի Վենետիկ ի վանս Սրբոյն Ղազարու յընտրութիւն նորոգ Աբբայի: Ի ժամանել անդ Հ. Գէորգայ Հիւրմիւզեան՝ ընդ առաջ ելանեն նմին ըստ սովորութեան ամենք յերիտասարդ քահանայից անտի ի պատուել զնա քաղաքավարութեամբ. այլ նա առանց ողջունելոյ և հայելոյ անգամ յերեսս նոցա անցեալ գնայ յեկեղեցին, և ընդ այն անսովոր քաղաքավարութիւն նորա գոռոզ ոք համարին զնա, և սկսանին տարակուսիլ ընդ ընտրութիւն նորա:

Յետ երկուց աւուրց անտի, իբրև խօսք լինէին զհանգուցեալ Գեր. Սուքիաս Սոմալէ, յասել Հ. Սարգսի թէ տարաւ նա երկար և ծանր հիւանդութեան, ասէ Հ. Գէորգ, թէ բարեբաղդութեամբ վախճանեցաւ նա. ապա թէ ոչ, Միաբանութիւնն յառաւել եւս անկարգութիւն անկանէր. զարմանայ Հ. Սարգիս ընդ անզգայութիւն նորա: Եւ իբրև խօսք լինէին զխնամակալաց ժողովոյն, որ ի բարեկարգութիւն վարժարանաց, ասէ Հ. Գէորգ, թէ առաջին անկարգութիւն և

անմտութիւն այն է, զի Նախագահ ժողովոյն այնորիկ չէ Արքայն. և թէպէտ Հ. Սարգիս ցուցանէ Նմա զբանաւոր պատճառսն, այլ Նա չհաւանի բնաւ. վասն որոյ ցաւի Հ. Սարգիս ընդ յանդգնութիւն Նորա և լռէ, զի ընդդէմ իւր էր այն։

Ի խօսել միաբանից ումանց ի մէջ իւրեանց զընտրութենէ Նորոգ Աբբայի, և ի յիշատակել զանուն Հ. Գէորգայ, ասէ Հ. Դաւիթ Ճերմակեան, թէ ամբարտաւան և զրպարտուկ ոմն է Նա. յասել Նորա զայս բանս, մտանէ անդ Հ. Գէորգ, և փոխեն Նոքա անդէն զխօսակցութիւն իւրեանց։ Տեսեալ Հ. Սարգսի զայս ամենայն Թերութիւնս Հ. Գէորգայ, միանգամայն և իմացեալ ցկարծիս հասարակաց որ զնմանէ, առ պակասութեան այլ արժանաւոր անձին ի Միաբանութեան, խորհի զարման ինչ տանել այնմ. քանզի ըստ կանոնի սահմանադրութեան որ ոք պակաս քան զքառասուն և առաւել քան զվաթսուն ամս հասակի ունիցի չկարէ մտանել ի թիւս ընտրելոց. և զի Աբբայութիւն մշտնջենաւոր է, մինչև ցմահ. Կամի Նա հանել տալ ի սահմանադրութենէ Միաբանութեան զայսոսիկ խափանարար և զմնասակար կանոնս, և գրելով ի Նոյն կամս զբազումս ի միաբանից իւրոց առաջարկէ Նոցա զայն։ Հաւանին ընդ այն գրեթէ ամենեքեան, և մանաւանդ ծերունին Հ. Մատթէոս Մաղաքեան, որ և կոչէ զՀ. Սարգիս ի խուց իւր առանձինն, և ընթեռնու յականջս Նորա զգրուած մի որ զխնդրոյն այնր, և յորդորէ զնա յառաջ տանել զայն. քանզի ասէ, թէ մշտնջենաւոր Աբբայութիւն Ստեփաննոսի Մելքոնեան պատճառ եղև երկպառակութեան և բաժանման միաբանութեանս, կամակոր գոլով Նորա ի կարծիս իւր։

Գուշակելով Հ. Գէորգեայ Հիւրմիւզեան զնախահայեաց տեսութիւնն այն, զի Նախ խափան լիցի այն ընտրութեան իւրոյ յԱբբայութիւն, և ապա ռանձ համարձակութեան իւրոյ յայն, թէպէտ և ցուցանէ Նա զհաճութիւն ընդ առաջարկութիւնն այն, բայց միանգամայն պատճառելով զդժուարութիւն, զկարճութիւն ժամանակի ժողովելոյն անդ, որոյ հարկ էր փութով դառնալ ի տեղիս իւրեանց, ընտրեսցի ասէ Նախ Աբբայն, ապա պարապով որոշեսցի և խնդիրն այն սահ-

մանագրութեան։ Հուանեալ միամտաց կարծեաց Նորա, միայ խնդիրն այն անկատար, որ և Միաբանութեան փնասակար, որպէս և տեսաւ և տեսանի ցարդ։

Իբրեւ մերձենայ օրն ընտրութեան Նորոգ Աբբայի, գնան երիտասարդ քահանայք մի առ մի առ Հ. Սարգիս հարցանել զկարծիս Նորա որ զՀ. Գէորգայ Հիւրմիւզեան. զի տեսանելով Նոցա զգառողութիւն Նորա կասկածէին զնմանէ, իբրեւ զբռնաւորէ։

Թէպէտ և Հայր Սարգիս առաւել քան զնոսա տեսեալ էր զգառողութիւնն Նորա, և յուսահատեալ գրեթէ խպառ ընդ ակնկալութիւն բարեաց որ ի Նմանէ, սակայն հայեցեալ ի ցաւալից հանգամանս Միաբանութեան, ի պակասութիւն արժանաւոր անձին յԱռաջնորդութիւն Նորա, միանգամայն և ի խնամս վերին Տեսչութեան յանձն արարեալ զհոգս հասարակաց՝ փարատէ ի մտաց Նոցա զկասկածն՝ բարւոք վկայելով զնմանէ, ըստ բարեմտութեան իւրում, թէպէտ և տարջանայ և ցաւի ընդ այն ապա, այլ անագան և անդարման (*)։

Եւ իբրեւ հասանէ օր ընտրութեան Նորոգ Աբբային, որ հանդիպի յ2 յուլիսի 1846 *ամի, ժողովին միաբանք յաւանդատուն եկեղեցւոյ, և արկանեն վիճակ ի վերայ քանի մի*

(*) *Առաւելութիւն արժանաւորութեան Հ. Գէորգայ յառաջնորդութիւն Մխիթարեան ուխտին՝ յէնի նախ՝ ազգասիրութիւն Նորա, պաշտպանութիւն առնել ուղղափառութեան Հայաստանեաց եկեղեցւոյ. երկրորդ՝ առնչութիւն Նորա ընդ ազգատեաց աշակերտս Ծաւալոցին Հռովմայ, ընդ Հասունեանս. երրորդ՝ ուսումնասիրութիւն Նորա, որ առաջին է ի կարեւոր հանգամանս առաջնորդի միաբանութեան, թողեալ զհաւանութիւն Նորա որ ընդ փոփոխութիւն սահմանադրութեան, հայեցեալ ի ժամանակաւոր առաջնորդութիւն Աբբային, և յայլ կարգաւորութիւն։ Ահա վասն այսոցիկ համոզի Հայր Սարգիս և համոզէ զայլս ի միաբանից իւրոց ընտրել զնա առաջնորդ ուխտին։*

Բայց ըստ դժբախտութեան ուխտին և ազգիս միանգամայն, տկարամտութիւն, կողմնաւոր բարք և փառասիրութիւն Նորա յաղթեն ազգասիրութեան, առնչութեան և ուսումնասիրութեան Նորա համայն, որպէս տեսաւ և տեսանի յընթացս պատմութեանս. և ահա վասն այսոցիկ տարջանայ և ցաւի Հ. Սարգիս ապա ընդ ընտրութիւն առաջնորդութեան Նորա։

Խոստովանի և աւազէ զայն Նա ինքն Գեր. Հիւրմիւզ ի ժամանակի յանդիմանութեան։ Տե՛ս յէջ 370 *Գ. հատորոյ։*

(*Ծանօթութիւն Հեղինակին։*)

անձանց, և աՀա եղանէ վիճակ արքայութեան Հ. Գէորգայ Հիւրմիւզի և Համարի նա ընդ Նախնի Աբբայս Մխիթարեան Միաբանութեան որ ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու ։

Ապա յետ երկուց աւուրց անտի ժողովին անդ դարձեալ միաբանք յընտրութիւն Աթոռակալի, ուր ընտրէ Աբբայն ինքնին իւր Աթոռակալ զՀայր Սարգիս Թէոդորեան, և առաջարկէ ժողովոյն Հաստատել զայն քուէիւք, զոր և Հաստատէ ժողովն Միաբանութեան լիովի քուէիւք ։ Թէպէտ և պաշտօնն այն ընդդէմ կամաց Հ. Սարգսի լինի, գուշակելով նորա զՀնարիմացութիւն Աբբային, որ և կատարի ոչ յետ բազում աւուրց անտի, Թէպէտ և այն՝ ոչ ի մխիթարութիւն և ի պատիւ իւր և իւրոցն լինի, այլ ի գայթագղութիւն այլոց, և ի նախատինս իւր և իւրոցն յաւիտեան, որպէս տեսցի ի սմին Հետզհետէ յընթացս պատմութեանս ։

Եւ ապա լինին Հանդէսք Աբբայութեան յեկեղեցւոջ և ի սեղանատանն. յեկեղեցւոջ լինի պատարագ Աբբայական, ուր առնէ Աբբայն ատենախօսութիւն ինչ, ըստ սեպՀական իւրում բնաւորութեան որդեակս իւր կոչելով զմիաբանսն առ Հասարակ, յորս տիք Հայր և պապ իւր կային, և արժանեօք յոյժ առաւել քան զինքն ։ . . . Արդարանայ յայնժամ Հայր Դաւիթ Ճերմակեան ի կարծիս իւր որ գնըմանէ . . . և այլք ոմանք ի միաբանից զարմանան և ցաւին ընդ այն, բայց անազան և փայրապար. և ի սեղանատանն, ճաշեն անձինք իբրեւ 100, և ուր երգին զանազան տաղք, յօրինեալք և արտասանեալք ի միաբանից անտի և յայլոց ոմանց ։ Յետ այնորիկ ի նմին աւուր ընդ երեկս ժողովին միաբանք յընտրութիւն Առաջակայից Աբբային, և ի վաղիւ անդր յառաջարկութիւնս բարեկարգութեան վանաց ։

Յետ Հանդիսից անտի գրէ Հ. Սարգիս Թուղթ առ Հայր ՅովՀաննէս ի Փարիզ, ստիպելով զնա առնել զարձանագրութիւն գնեալ տանն, և տալ զՀաշիւ զանազան ծախուց եղելոց

ձեռամբ Նորա. միանգամայն և տայ Նմա տեղեկութիւն զհանգիտէ ընտրութեան Արքային, և զայլ ինչ ինչ կարեւոր գիտելեաց, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր, և սիրեցեալ Եղբայր.

« Յետ երկար ակնկալութեան և զանազան խորհրդածութեան ընկալայ երէկ ի ձենջ այսր պատասխանի կրկին թղթոց իմոց, գրելոց ի 16 և յ30 մայիսի անցելոյ, թէպէտ և այն ևս ոչ հանգուցիչ մտացս, չաւարտելով ձեր տակաւին զկարեւորագոյնն և զծանրն ի գործառնութիւնդ, զարձանագրութիւնն ասեմ տանդ, միալով ձեր ի զուր ընդունել աստի զտիտղոսն ստացման Նորին, որ ըստ օրինաց և ըստ խորհրդոյ Հիւպատիդ Գաղղիացւոց յիշատակեալ կայ ի գրի այդ գործակալութեանդ և տուեալ ձեզ այդր ըստ ժամանակին, և յոր կարծեմ չիցէք ակնարկեալ և ոչ ցուցեալ զայն Նօտարի տանուտեառն, որ փութացուցանէ զձեզ և իրաւամբք ի կատարումն Նորին:

« Աղաչեմ զձեզ փութաջիք աւարտել զայն ժամ մի յառաջ, զի մի յաւելցին մեզ հոգ և վնաս, և չաւարտելով ձեր ցարդ զհաշիւ յանձնարարեալ իրացն Աղանուրի զոր անդադար պահանջէ յինէն, հանդերձ մեղադրանօք ընդ յապաղումն Նորին, և զոր խնդրեցի ի ձէնջ մասնաւորաբար ի Նախընթացն իմ. աղաչեմ զձեզ դարձեալ առաքել ինձ զայն անյապաղ, զի զերծայց ես ի թախանձանաց Նորին:

« Առաքեսջիք նոյնպէս և զհաշիւ զանազան յանձնարարեալ իրաց, որպէս զի կարացից ի ձեռս բերել զծախեալ արծաթն ի ձէնջ որչափ հնարաւոր իցէ. զի կարօտիմք մեք յոյժ արծաթոյ ի կարեւոր պէտս դպրոցիդ և ի հաստատումն պարտուց Նորին որ սպառափեցուցանէ զմեզ զամենեսեան, և որ են 200,000 ֆրանք, 5½ առ 100 վաշխիւ, թողից ասել և զանհնարին տագնապն մեր ի հայթայթելս ասա զարծաթն, և զհոգս հատուցանելոյ զայն ըստ ժամանակին. վասն որոյ պէտք են բազում խոհեմութեան և կարի իմն զգուշութեան ի տնտեսութիւն վարժարանիդ, ապա թէ ոչ՝ ամօթ մեծ և խայտառակութիւն լիցի մեզ անհրաժեշտ, ասկս անակնկալ և խափա-

նարար պատճառացն, զոր գրով ծանուցանել ձեզ այժմ դժուարին է ինձ յոյժ, այլ հատուցից զայն ապա բերանով ։

« Զարժանաւոր ընտրութիւն Առաջնորդի ուխտիս իմացեալ էք ցարդ ի Թղթոյ Հ. Գաբրիէլի. իմասջիք և ի Թղթոյ իմոյ աստի և զփառաւոր հանդէս Աբբայութեան Նորին որ կատարեցաւ երէկ յեկեղեցւոջ և ի սեղանատուն, ուր յետ ճաշնաւոր պատարագին և գեղեցիկ արարողութեանցն ճաշեցին ուրա խութեամբ անձինք առաւել քան զ100, և ուր երգեցան զանազան տաղք ըստ պատշաճի, և ըստ արժանաւորութեան, յօրինեալ և արտասանեալ ի բանաստեղծից մերոց և յայլոց ոմանց ։ Մնայ այսօր ընդ երեկս ժողովել հասարակութեանս յընտրութիւն Առաջակայից Աբբային, և վաղիւն յառաջարկութիւնս բարեկարգութեան վանացս. յետ այնորիկ եւցէ ի ճանապարհ Հ. Տիմոթէոս գալ այդր յօգնականութիւն Հօր Ստեփանի ։

« Ապա չմնայ ինձ այլ ինչ ծանուցանել ի ժամուս, բայց եթէ զմխանգամ և զերկկրս աղդարարեալս վերստին ազդ առնել ձեզ. այսինքն, զփութով աւարտումն արձանագրութեան տանդ, ըստ տիտղոսի յիշատակելոյ ի գրի այդր գործակալութեանդ, հանեալ զայն ի մուրհակաց ստացուածոց վարժարանիդ, և յարմարեալ ի Հիւպատէ Գաղղիացւոց որ ի քաղաքիս, զոր և ուրոյն նշանակեալ ծրարեմ ի սմին, յառաւել իմն զգուշութիւն և յաներկբայութիւն ձեզ ։ Եւ զանյապաղ առաքումն հաշուի յանձնարարեալ իրաց Ազանուրի, և այլոց մասնաւորաց ոմանց, նոյնպէս և զհաշիւ ծախուց որ ի Նորոգութիւն և ի կահ կարասի տանդ, և զերկամեայ առանձին ծախուց մերոց այդր և ի Լոնտոն ։

« Ողջունեալ սիրով զամենայն բարեկամս մեր այդր, և առանձինն զՎ.Վ. Հարս Աղեքսանդր և Ստեփան, մնամ

« Վերապատուելի Հայրութեանդ

« Ի Վենետիկ. 6 յուլիս. 1846.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Զկնի ընտրութեան և հաստատութեան Առաջակայից Արքայ-ին, առաքի Հ. Տիմոթէոս Թնկըրեան ի Փարիզ յօգնականութիւն Հ. Ստեփանի Եղբեան ։

Թէպէտ և ըստ խնդրոյ գործակալաց միաբանութեան շնորհէ Գաղղիացւոց Պետութիւնն զհաստատութիւն Մ. վարժարանին ի Փարիզ, և զանկախութիւն նորին յիշխանութենէ համալսարանին, այլ ցանկան գործակալքն և զհետ լինին հաստատել տալ զայն հրովարտակաւ Արքային Լուի-Ֆիլիպի, որ և յաջողի ի 23 ապրիլի 1846, յետ մեկնելոյ անտի Հ. Սարգսի ի Վենետիկ յընտրութիւն նորոյ Աբբայի ։

ՊԱՏՃԷՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻՆ

« ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆ

« Ուսման հասարակաց

« Թիւյլրի. 23 ապրիլ. 1846.

« Ամենեցուն այժմուցս և ապագայից ողջոյն.

« Տեսեալ զաղերսագիրն մատուցեալ ի ձեռն Պարոնայց Սարգսի և Սորկուճի, գործակալաց Հայկական ճեմարանի Մխիթարեանց որ ի Վենետիկ, որով խնդրի հրաման փոխադրելոյ ի Փարիզ զվարժարանն կանգնեալ ի ճեմարանէ անտի ի Պատուիոն, ընդ անուամբ Հայկազեան վարժարանի Սամուէլի Մուրատայ, և հաստատելոյ զճեմարանն զայն (*) ընդ լոկով իշխանութեամբ և իրաւասութեամբ Առաջնորդի Հայոց Մխիթարեանց ։

« Ըստ տեղեկութեանն տուելոյ մեզ ի մերմէ ոստիկանէն

(*) Թարգմանութիւն հրովարտակիս բառական է, վասն որոյ և անախորժելի, կամեցեալ արգեօք թարգմանչին պահել ճիշդ զ՚բնական բառս և զբացատրութիւն Գաղղիացւոց լեզուին, չառնէ փոյթ զհայկաբանութենէն . . . . Սակայն իմաստք սորին յայտնի են, հրաման փոխադրելոյ զՄ. վարժարանն ի Փարիզ, և առանձնաշնորհութիւն նորին ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

յԱտենագրէ պետութեանս իբաժնի ուսման հասարակաց, պատուիրեցաք և պատուիրեմք զաւաջիկայդ.

ՅՕԴՈՒԱԾ Ա.

« Հիմնարկութիւն ի Փարիզ Հայկազեան վարժարանի միոյ ընդ անուանակոչութեամբ Հայկազեան վարժարանի Սամուէլի Մուրատայ, խնամօք և ծախուք հայկական ճեմարանին Մխիթարեանց որ ի Վենետիկ, շնորհեսցի ։ »

ՅՕԴ. Բ.

« Այս վարժարան կարգեալ է ընդ առանձին պաշտպանութեամբ Պետութեան Գաղղիացւոց ։

ՅՕԴ. Գ.

« Սահմանադրութիւն նորին, հանդոյն Բրիտանական վարժարանացն հաստատելոց ի Գաղղիա, արտաքոյ է Համալսարանին Գաղղիոյ, ըստ դպրոցական, տնտեսական և կանոնական տեսչութեան ։ »

ՅՕԴ. Դ.

« Այն աշակերտք և եթ ընդունելի լիցին անդր որք հայկազունք իցեն, և ընտրեալք յԱռաջնորդէն Մխիթարեանց Վենետկոյ, կամ յԵրեսփոխանէ նորա ։

« Առաջնորդին և երեսփոխանին նորա միայն պահեալք են իրաւունք անուանելոյ և ամենայն իշխանութիւն տնտեսելոյ և կանոնաւորելոյ զվարժարանն ։ »

ՅՕԴ. Ե.

« Վարչութիւն և ներքին տեսչութիւն վարժարանին կատարեսցի ի ձեռն երեսփոխանի ուրուք Առաջնորդին Մխիթարեանց Վենետկոյ զոր նա ինքն անուանեսցէ առ այս, և որ ընկալցի զյորջորջումն վերատեսչի Հայկազեան վարժարանին Սամուէլի Մուրատայ ։ »

ՅՕԴ. Զ.

« Ընդ ատարեալ ներքին կարգաւորութեան վարժարանին,

և յամենայն նուագս յորս հրաւիրեսցի վերատեսուչն, յղեսցէ առ Ռոտիկանն մեր Ամենադպիր պետութեան ի տեսչութեան ուսման հասարակաց, զցուցակս յայտարարս. Ա. եկամտից վարժարանին. Բ. կարգաւորութեան ուսմանց. Գ. անուանց վարժապետացն. Դ. Անուան, հասակի և տեղւոյ ծննդեան միոյ միոյ յաշակերտացն մտելոց ի վարժարան անդր, և հետզհետէ, ըստ ամենայն պարապութեան տեղւոյ, եթէ ի կարգի վարժապետաց և եթէ ի կարգս աշակերտաց՝ անուանց ընտրելոցն ի փոխանակել ի տեղի նորա ։

Ամենայն ընդունելութիւն Գաղղիացի աշակերտաց հակառակ է իմաստից այսմ արտօնութեան, և ընդ ազդ լինելն խափանեսցի յառնելոյ զկատարումն ։ ”

ՅՕԴ. Է.

“ Ռոտիկանին մերում Ամենադպրի պետութեան ի բաժնի ուսման հասարակաց յանձն է գործադրութիւն Հրովարտակիս այսորիկ ։ ”

“ Տուաւ յԱպարանս Թիւյլըրի, ի 23 ապրիլ 1846.

“ Ձեռնագրեալ, ԼՈՒԻ-ՖԻԼԻՊ.

“ Հրամանաւ Արքայի

“ Ռոտիկանն Ամենադպիր պետութեան ի բաժնի ուսման հասարակաց.

“ Ձեռնագրեալ, ՍԱԼՎԱՆՏԻ.

“ Վասն բացատրութեան,

“ Պաշտօնեայն Աղերսագրոց,

“ Գլուխ Քարտուղարաց

“ ՌԱՎԷՍՈՆ. ”

ՊԱՏՃԷՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ ՈՍՏԻԿԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ, ԱՌ ՀԱՅՑՈՒԱԾՆ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

« ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ.

« Քաղաքական Տեսչութիւն.

« Փարիզ. 14 մայիս. 1846.

« Պարոնայք, ի Նամակին որով մեծարեցէք դուք զիս ի 26 մարտի անցելոյ, հայցեցէք զընդունելութիւն Արքունական հրովարտակի որով ունիցէք իշխանութիւն հիմնել ի վերայ բացարձակ ազատութեան ի Համալսարանէն, հաստատելոյ զվարժարանն զոր բանայք արդ ի Փարիզ ի դաստիարակութիւն մանկանց ազգին ձերոյ ։ Այս հայցուած ձեր կատարեցաւ, և ես փութամ առաքել առ ձեզ զբացատրութիւն Հրովարտակին Արքունի տուելոյ ի 23 ապրիլի, ըստ տեղեկութեան յօրինելոյ յՈստիկանէն ուսման հասարակաց, ընդ որում խօսեցեալ էր իմ զայսմանէ ։ Ընթերցեալ զայս հրովարտակ՝ հաստատութեամբ ծանիջիք զի լի՛ բովանդակ ունի զամենայն երաշխաւորութիւն որում ըղձանայցէք ։

« Արդէն իսկ գիտէիք զի վարժարանն որում տուեալ լինի երաշխաւորութիւնս այս, եղիցի ընդ պաշտպանութեամբ պետութեան Գաղղիոյ ։ Այս գործ՝ որ պարզապէս շնորհ իմն է ի կողմանէ պետութեանս, յայտնապէս նշանակեալ է ի Հրովարտակին, և ընդ աւարտել կարգաւորութեան Հայկազեան վարժարանին պարտիք թղթել առ ոստիկանն ուսման հասարակաց, որ ի բնէ իսկ պաշտպան է ամենայն ուսումնական և մատենագրական վարժոցաց Գաղղիոյ, և ծանուցանել նմա թէ ո՛ իցէ վերատեսուչ վարժարանին ։ Եւ սա պարտի յիւրմէ կողմանէն տալ նմա տեղեկութիւնս տնտեսականս, դպրոցականս, և թէ ո՛յք իցեն անձինք վարժարանին, ըստ նշանակելոյն ի Չ. յօդուածի Հրովարտակին ։

« Այսպիսի յարաբերութիւնք ընդ վարժարանդ այդ և ընդ պետութիւնն յորս ի խնամ վայելէ դա, այնչափ բնականք

են և վայելուչք ըստ ամենայն մասանց, զի չէ խակ հարկ մեկնաբանել զիրսն, և յոյժ հաւաստի, զի Հայկազեան վարժարանն մեծապէս գոհ լիցի ընդ այն:

« Իսկ ինձ, Պարոնայք, յինէն կողմանէ խնդակից մնայ լինել ընդ ձեզ սակս բարեյաջող ելից այսր գործոյ որ գերագոյն իմն յեղանակաւ օգտակար է բարոյական յառաջատուութեան ազգի միոյ, որում Գաղղիա մտադիւր սիրով ընծեռեսցէ ցանգ զպաշտպանութիւնն զորոյ բազում անգամ տուեալ իսկ է նմա յայտնապէս և ազդողաբար զփորձ:

« Ընկալարուք, Պարոնայք, զնուէր մեծարանաց իմոց:

« ԿԻՒԻԶՈՅ.

« Առ ՊՊ. Ս. Վ. Թէոդորեան և Յ. Վ. Սորկունեան:

Երկրորդ Հրովարտակն Արքունի տուեալ ի պալատն որ ի Նէօյլի, ի 11 յունիսի 1846, նման է առաջնոյն, միայն Բ. յօդուածն եղեալ է այսպէս.

« Այս վարժարան կախեալ է ընդ առանձինն հովանաւորութեամբ պետութեան Գաղղիացւոց, սահմանեալ է ի լինել ուսումնարան օտար ի պէտս հասարակաց օգտի, և մնայ բոլորովին ազատ ըստ ուսմանցն և կարգաւորութեանց, որպէս և ըստ մատակարարութեան: »

ՅՕԴ. Գ.

« Այն աշակերտք և եթ ընդունելի լիցին անդր որք հայկազունք իցեն և ոչխարք յԱռաջնորդէն Մխիթարեանց Վենետկոյ, կամ յերեսփոխանէ նորա: »

ՅՕԴ. Դ.

« Տնտեսական իշխանութիւն, տեսչութիւն և պահպանութիւն վարժարանին ողջոյն յանձնեալ են Երեսփոխանի ուժեք Առաջնորդին Մխիթարեանց Վենետկոյ: Երեսփոխանին անուն պատուոյ է՝ Վերատեսուչ Հայկազեան վարժարանին Սամուէլի Մուրատայ: »

ՅՕԴ. Է.

« Ոստիկանին մերում Աստենադպրի պետութեան ի բաժնի ուսման հասարակաց յանձն է գործադրութիւն Հրովարտակիս այսորիկ ։ »

« Տուաւ ի պալատն որ ի Նէօյլի. ի 11 յունիսի. 1846.

« Պարոնայք.

« Ի 14 մայիսի անցելոյ յղեալ էի առ ձեզ զբացատրութիւն Արքունի Հրովարտակին, որոյ վախճան էր հրաման տալ հաստատութեան ի Փարիզ Հայկազեան վարժարանին ։

« Կարգաւորութիւն ինչ այն գրուածոյ ոչ ըստ բաւականին համաձայն թուելով ձեզ լիուլի անկախութեան յորս պարտ կալ մնալ վարժարանն այն ըստ դպրոցական, տնտեսական և կանոնական մասանց, Ոստիկանն ուսման հասարակաց հաճեցաւ զիջանել խնդրանօքն ձերովք որ առաջի արարան նմա, և մատուցանել Արքայի զայլ հրովարտակ նոր, զոր և Վեհափառ Արքայն ստորագրեաց ի 11 անցելոյ ամսեան ։ — Ընդ սմին հասուցանեմ առ ձեզ զբացատրութիւն նորին, և տեսջիք ի նմա զնորոգ առհաւատչեայ բարեհաճութեան տեսչութեանն Արքայի առ ազգդ ձեր, և խնամոյն զոր ունի ի վերայ վարժարանին զոր եկեալ էք հաստատել ի Գաղղիա այնպիսի օգտակար և միանգամայն պատուաւոր նպատակաւ ։

« Ընկալարուք, Պարոնայք, զհաւաստիս մեծարանաց իմոց ։

« Փարիզ. 8 յուլիսի. 1846.

« ԿԻԻԶՈՅ. »

Որպէս վերագոյն ծանուցաք, թէ ի ժամանակի յորում տուեալ լինի գործակալաց Հրովարտակն Արքունի, ըստ հայցուածոյ նոցա, չգտանի Հ. Սարգիսն ի Փարիզ, այլ ի Վենետիկ. Հ. Յովհաննէս միայն գտանի անդ, որ և չհաճի ընդ առաջին հրովարտակն Արքունի, ըստ ճանաչման իւրում ոչ բաւական համարեալ ի նմին զազատութիւն վարժարանիս յիշխանութենէ Համալսարանին. վասն որոյ ջանայ ձեռամբ

Տէկուանժի երկրորդել տալ զայն Արքային, Թէպէտ և չլինի զանազանութիւն ինչ յերկրորդին, որպէս տեսանի անդ. այլ չիմանայ նա և չջանայ ուղղել տալ ի հրովարտակի անդ զանուղիղ և զվնասակար բանսն որ ի Յօդ. Ա. թէ՝ « Խնամօք և « ծախիւք Հայկական ճեմարանին Մխիթարեանց.» Եւ ի հրատարակել հրովարտակին այնորիկ ի լրագիրն Փարիզու, առաքէ Հ. Յովհաննէս զօրինակ մի անտի ի Վենետիկ ի վանս Սրբոյն Ղազարու, յընթերցումն միաբանութեան իւրոյ։

Ընթերցեալ զայն միաբանից՝ հաճին յոյժ ընդ այն, բայց տեսեալ Հ. Սարգսի ի հրովարտակի անդ զվերոյիշեալ բանս « Խնամօք և ծախիւք Հայկական ճեմարանին Մխիթարեանց,» չհաճի ընդ այն բանս հրովարտակին, գուշակելով թէ ծագեսցի անտի վէճ ի Յովհաննէ Մուրատեան, որպէս և ծագի իսկ։ Քանզի ընթերցեալ նորա զայն՝ խռովի յոյժ, որպէս թէ անիրաւութեամբ յափշտակեալ էր միաբանութեան զարդիւնս բարերարին, հօր իւրոյ. վասն որոյ առնէ նա ընդ այն բանս խիստ քննութիւն և հրատարակէ զայն ի լրաթուղթս Փարիզու։ Ապա ի ժամանակի հասարակապետութեան Գաղղիացւոց պատեհ առեալ նորա զայն՝ հանել տայ ի նախագահէ անտի հակառակ հրովարտակ և վճիռ, պարտաւորելով զՄ. վարժարանն լինել ընդ իշխանութեամբ Համալսարանին Փարիզու և հաշիւ տալ տէրութեան անդ։

Թէպէտ և բողոքէ Հ. Սարգիս ընդդէմ վճռոյն այնորիկ, թէպէտ և չստիպէ Քավէնեաք հպատակել վճռոյ իւրոյ, այլ ոչ կոչէ նա յետս զվճիռ իւր զայն. վասն որոյ և չդադարի Յովհաննէս Մ. ի վիճոյ իւրոյ որ ընդ միաբանութեան, ձեռամբ Արքեպիսկոպոսին Փարիզու, որում յանձնէ զհոգ խնամակալութեան Մ. վարժարանին, և որ կոչէ զՀ. Յովհաննէս Սորկուճեան հարցանել և պահանջել զկատարումն կամաց Յովհաննու Մուրատեան, իբրև կտակակատարի բարերարին։

Թէպէտ և Հ. Սարգիս թելադրէ Հ. Յովհաննու, թէ զինչ պարտ էր նմա առնել ընդ այն պատասխանի, և թէ որով մարթ էր դադարեցուցանել զԱրքեպիսկոպոսն ի պահանջանաց անտի, սակայն չանսայ նա բանից թելադրութեան նորա,

գնելով ի մտի, թէ ինքն առաւել քան զնա խելամուտ էր խնդրոյն այնորիկ և օրինաց Գաղղիացւոց. վասն որոյ չարչարի նա ի զուր զամս իբրեւ երկու հանդերձ վայրապար ծախիւք, մինչեւ դէպ լինի նմա դառնալ ի Վենետիկ, և թողուլ զհոգն այն Հ. Սարգսի, որ տայ համառօտ ինչ պատասխանի Հարցման Արքեպիսկոպոսին Փարիզու, և դադարեցուցանէ զնա ի պահանջանաց անտի իւրոց ։ Քանզի ցուցանէ նմա զդաշնագիրն որ ի մէջ իւր և ի մէջ Յովհաննու Մուրատեան, որով չկարէր նա պահանջել ինչ ի միաբանութենէն. զոր տեսեալ Արքեպիսկոպոսին Փարիզու, փոխէ իսկոյն զկարծիս իւր ընդ այն, ասելով թէ վճարեալ էր այնու ամենայն վէճ, և ազդարարելով զայն Յովհաննու Մուրատեան. և ոչ այսչափ միայն, այլ և ասէ Հ. Սարգսի, թէ այնուհետեւ ինքն լիցի փաստաբան ի պաշտպանել զնա ընդդէմ հակառակորդին իւրոյ. և յետ աւուրց ինչ անտի գնայ նա ի Մուրատեան վարժարանն և տեսեալ զբարեկարգութիւն նորին՝ հաճի յոյժ ընդ այն, և օրհնեալ զաշակերտս վարժարանին դառնայ անտի հանդերձ բազում գովութեամբ ։

Ահա սխալանք որ յանզգուշութենէ Հ. Յովհաննու, ի բանս հրովարտակին, թէ « Խնամք և ծախիւք ճեմարանին Մխի- « թարեանց որ ի Վենետիկ. » և ահա դարման սխալանաց նորին որ ի զգուշութենէ Հ. Սարգսի . . .

ԳԼՈՒԽ ԺԶ.

Առաջարկութիւն Հ. Սարգսի վասն կարգաւորութեան Մ. վարժարանին. — Մերժողական պատասխանին Աբբային ընդ այն. — Ժողով Առաջակայից վասն խրաց Մ. վարժարանին. — Մերժումն կարծեաց Հ. Սարգսի և յանդիմանութիւն ի միոյ առաջակայից. — Պահանջումն հաշուին ծախուց ի Հ. Յովհաննէ, և յանդիմանութիւն ընդ այն ի Հայր Ստեփանէ. — Խորհուրդ Հ. Սարգսի գնալ ի փարիզ առնուլ հաշիւ ի Հ. Յովհաննէ. հաւանութիւն ընդ այն Աբբային և թուղթ նորա առ Հ. Յովհաննէս. — Խորամանկ և անկատար հաշիւ ծախուց տուեալ ի Հ. Յովհաննէ. — Պատուէր Աբբային առ Հ. Սարգիս ի ժամու մեկնելոյ նորա ի վանաց.

Յետ աւուրց ինչ ընտրութեան Աբբային և հաստատութեան առաջակայից նորին, ասէ Հ. Սարգիս Աբբային թէ պարտ էր խորհել զկարգաւորութենէ Մ. վարժարանին։ Ասէ ցնա Աբբայն առանց ինչ ակնածութեան. « Մերքն անդ ի Փարիզ, Հ. Յովհաննէս և Հ. Ստեփան, ոչ կամին զի դարձցիս դու անդ և խառնիցիս ի գործս Մ. վարժարանին։ » Լուէ յայնժամ Հ. Սարգիս և չասէ ինչ բնաւ, խելամուտ լեալ ի բանից նորա և յեղանակէ անտի խօսիցն, թէ վճարեալ էր այնուհետև վասն իւր ամենայն, ճանաչումն արժանեաց իւրոց ի նորոգ Աբբայէն և մխիթարութիւն ի միաբանից անտի նորին։... Ահա հաստատութիւն գուշակութեան Հօր Սարգսի որ զպաշտօնէ Աթոռակալութեան իւրոյ։... Եւ յետ երկուց աւուրց անտի, ի ժողովի առաջակայից խնդիր եղեալ զյարմարութենէ Հ. Յովհաննու ի պաշտօն գործակալութեան Մ. վարժարանին ի Փարիզ, ասէ Հ. Սարգիս, թէ ունի Հ. Յովհաննէս ծանօթութիւն գործոյ, այլ չճանաչէ նա ըզյարգ արծաթոյ։ Ոմն յառաջակայից անտի Հ. Գաբրիէլ Այ-

վաղեան պաշտպանեալ նմա՝ ստգտանէ զՀ. Սարգիս, որպէս թէ աղարտէր նա զհամբաւ արդիւնական անձին այնորիկ. լուէ Հ. Սարգիս և ընդ այն, գիտելով թէ դեռ չճանաչէր նա զՀ. Յովհաննէս Սոլկուճեան : . . .

Իբրև զամս երկու խնդրի ի վանաց հաշիւ ծախուց գործակալաց, արարեալ նոցա ի ճանապարհի, ի Լոնտոն և ի Փարիզ, և ծախքն այն լինին ձեռամբ Հ. Յովհաննու, յորմէ խնդրէ զայն Հ. Սարգիս բազում անգամ, և նա յապաղէ տալ սնոտի պատճառանօք և ապա խոստանայ առաքել առ նա ի վանս ընդ հասանել նորա անդ : Եւ իբրև ամիսս երեք անցանեն անտի, և չկատարէ նա զխոստումն իւր, յայնժամ գրէ Հ. Սարգիս թուղթ առ նա ի Փարիզ և ստիպէ զնա առաքել զայն. ընդունի պատասխանի ոչ ի նմանէ, այլ ի Հ. Ստեփանէ, և ոչ առ ինքն ուղղակի, այլ առ Հ. Գաբրիէլ Այվազեան, այսպէս. « Ոչ բարւոք արարէք, յոյժ չար գործեցէք, ստիպէք զՎ. Հ. Յովհաննէս տալ զհաշիւ առանձին « ծախուցն, զայնպիսի այր որ զբաղեալ է յոյժ ի կարևոր « գործս հասարակաց : »

Ընկալեալ Հ. Սարգսի զայսպիսի պատասխանի անտի, ասէ ցԱբբահայրն, թէ որովհետև պատասխանատու գոլով իւր արարեալ ծախուցն և չգիտելով թէ ե՛րբ և զի՛արդ տացէ Հ. Յովհաննէս զհաշիւ ծախուցն այնոցիկ, հարկ համարի ինքն գնալ ի Փարիզ ուսանել ընդ նմա զայն, և ապա դառնալ ի վանս :

Հաւանի Աբբահայրն ընդ այն, յետ առաջարկութեան և հաւանութեան առաջակայից իւրոց. վասն որոյ և յաւելու ի թուղթն իւր որ առ Հ. Յովհաննէս և զայս հատուած բանից. « Իսկ ուղղիչ դպրոցիդ առ ժամանակեայ եկեսցէ ընդ « հուպ Աթոռակալն մեր Վ. Հ. Սարգիս, որոյ տեղեակ գո- « լով և ծանօթ ամենայնի՝ տեսեալ զհաշիւս զելից և զմտից « դպրոցիդ և զգրամականն ամենայն ի կարգի եդեալ դարձ- « ցի այսրէն, մինչև իմ դարձեալ ի Հռովմայ խորհեսցուք « յայնժամ զայլ ոք հաստատագոյն կարգել ուղղիչ : Զայս « այսպէս հարկեցաւ արդ առնել Հասարակութիւնս յետ

« յերկար խորհրդոց և երկուստեք ընդդիմախօսութեանց : »

« Վենետիկ. 16 յուլիս 1846.

« Ն. Ծ. Հ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Ընդհանրական Աբբայ Մխիթ. Ուխ. »

Յաւուրսն յայնոսիկ լինին տրտունջ և գանգատ զՀ. Ռափայէլէ ի մատակարարութիւն Ռափայէլեան վարժարանին, որպէս թէ ըստ քմաց իւրոց ծախէր և վատնէր նա զարծաթն աղքատաց : Լուեալ զայն Նորոգ Աբբային համարի զայն լրումն կամաց իւրոց. վասն որոյ հրամայէ համարձակ ելանել խակոյն Հ. Ռափայէլի ի պաշտօնէ անտի ուղղութեան, և ի տեղի նորա կարգէ զՀ. Սամուէլ Սամսարեան, առանց հարցանելոյ առաջակայից իւրոց : Եւ յասել ցնա Հ. Սարգսի թէ պարտ էր խորհրդով և հաւանութեամբ առաջակայից առնել զայն, ասէ նա, միթէ չունի՞ ինքն այնչափ իշխանութիւն առնելոյ զայն : . . . Իսկ յասել նորա դարձեալ թէ ծանր թուեսցի այն Հ. Ռափայէլի, ասէ ցնա Գ. Գէորգ. Ոչ ծանր թուեսցի նմա այն, քանզի ունի ինքն կարգել զնա յայլ բարձրագոյն պաշտօն : Ահա կրկին հաստատութիւն գուշակութեան Հ. Սարգսի որ զպաշտօնէ Աթոռակալութեան իւրոյ :

Յետ քանի մի աւուրց ընտրութեան և հաստատութեան Նորոգ Աբբային, որոշէ նա հանդերձ հաւանութեամբ Հասարակութեան, գնալ ի Հռովմ ձեռնադրիլ եպիսկոպոս. վասն որոյ առնու ընդ իւր զՀ. Եդուարդ զեղբայր իւր, և զՀ. Ռափայէլ զդասակից իւր, և այն ինչ հանդերձի նա ելանել ի ճանապարհ, ահա գտանէ Հ. Սարգիս թուղթ ի Հ. Յովհաննէ, յոր և ծրարեալ առաքէ նմա զայնչափ խնդրեալ և զակնկալեալ հաշիւն ծախուց իւրեանց, և յորում լինի և հաշիւն ծախուց յանձնարարեալ իրաց Հ. Ռափայէլի. զոր տեսեալ նորա աչքի ընդ տարապայման ծախսն, և ասէ թէ պարտ էր քննել զայն մի առ մի ապա :

Իմացեալ զայն աբբային՝ առաւել եւս հարկ համարի զերթն Հ. Սարգսի ի Փարիզ, բայց պայմանաւ և պատուիրանաւ .

այս է, չխառնիլ նորա յայլ ինչ գործ Մ. վարժարանին ի Փարիզ, այլ միայն ի դրամականն իւր, ի քննել և ի պատրաստել զհաշիւն ցայն վայր եղեալ ծախուց ։

Այլ թէ զինչ լինի պատճառ փութալոյն Հ. Յովհաննու առաքելոյ զհաշիւն զայն, գուշակել գուշակեն զայն ամենեքեան որ ի վանս. քանզի արարեալ էր նորա զայն, առ ի խափանել զերթ Հ. Սարգսի ի Փարիզ. և թէ առ ի՞նչ այն պատուէր Աբբային առ Հ. Սարգիս ։ — Առ ի պահել Հ. Ռափայէլի խառնիլ ի գործ Մ. վարժարանին, զոր աւուրք ինչ յառաջ յայտնապէս ասէ, թէ « ի բարձրագոյն պաշտօն ունիմ ես « կարգել զնա. » և վասն այնորիկ հանէ զնա ի պաշտօնէ Ռափայէլեան վարժարանին որ ի Վենետիկ ։ . . . Վերծանողաց թողում առնել քննութիւն և դատաստան զգնացից նորոգ Աբբային յայսմ, և զգնացից Հ. Յովհաննու Սորկուճեանի ի Հնարս իւր ։ . . .

ԳԼՈՒԽ ԺԷ.

Դարձ Հ. Սարգսի ի Փարիզ. — Հանգամանք սենեկի նորա ի Մ. վարժարանին. — Խօսակցութիւն Հ. Սարգսի ընդ Հօր Յովհաննու. — Թուղթ խնդակցութեան Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ ի Հռովմ. — Ժամանումն Գեր. Հիւրմիւզի ի Փարիզ. — Գտանէ նա պատուանշան յարգոյական Գաղղիոյ, և տեսութիւն նորա ընդ նմա. — Պահանջէ նա ի Հ. Յովհաննէ զհաշիւ ծախուցն. — Ծածուկ խորհուրդ նորա ընդ Հ. Աղեքսանդրի վասն ուղղչի վարժարանին. — Նշանական թուղթ Հ. Սրապիոնի առ Հ. Սարգիս. — Կամք Հ. Յովհաննու դնել զտունն ի գրաւ և ընդդիմութիւն Հ. Սարգսի ընդ այն. — Խնդիր Հ. Սարգսի ի Գեր. Հիւրմիւզէ. — Նշանական թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Հ. Եսայեայ Մզրաքեան.

Ի 10 օգոստոսի 1846 ամի ելանէ Հ. Սարգիս ի ճանապարհ գնալ ի Փարիզ, և ժամանէ անդ ի 20 նորին ամսոյ, և ի մէջ գիշերի մինչդեռ ի քուն էին իւրքն ամենեքեան։ Տեսանէ ի սենեկի իւրում զամենայն ինչ վեր ի վայր, զգզրոցզգեստուց իւրոց և գրուածոցն բացեալ և խառնեալ, զմահիճս իւր անյարդար և առանց պաստառի, յարդարէ զայն ըստ կարի, և ընկողմանի ի նմին խոնջեալ և զարմացեալ միանգամայն ․ ․ ․ ․

Ի վաղիւ անդր ընդ առաւօտն տեսեալ զնա Հարց Յովհաննու և Ստեփանի՝ այլայլին, բայց վեր ի վերոյ խնդան ընդ գալուստն նորա։

Գտանէ նա անդ և զՀ. Աղեքսանդր Պէշիկթաշլեան, գնացեալ ի Փարիզ յանձնարարութեամբ Յակոբայ Ջէլէպւոյն, գտանել գործաւորս վասն գործարանին ապակւոյ ի Պօլիս։

Տեսեալ Հ. Սարգսի զսենեակն Հ. Յովհաննու յարդարուն ամենայն սարօք, կանխեալ նորա ասէ, թէ յարդարեալ է իւր

զայն վասն ընդունելութեան հիւրից, երթեւեկելոցն ի վարժարանն, թէպէտ և կրկին դահլիճքն որք ի տանն յարդարեալ լինին վասն նոցա. թող զսենեակն որ առ դրանն։

Ի հարցանել Հ. Սարգսի ցՀ. Յովհաննէս, թէ ընդէ՞ր չկամէր նա զդարձն իւր ի Փարիզ, և զխառնիլն ի գործս անդ Մուրատեան վարժարանին, պատասխանէ նա երդմամբ թէ, չէր իւր գրեալ ընդ այն առ Աբբային։ Ասէ ցնա Հ. Սարգիս. Այո՛ չէր քո գրեալ ընդ այն, այլ Հ. Ստեփան Եզըճեան. բայց ի դիմաց ձեր երկոցունցդ էր գրեալն այն։ Եւ պապանձեալ լռէ նա յայնժամ։

Տեսանէ Հ. Սարգիս ի կարգադրութիւնն յայն նորոգ շինուածոցն, զոր միաբան հաւանութեամբ որոշեալ էին, և գրով ճարտարապետին հաստատեալ, յառաջ քան զդարձ իւր ի Վենետիկ, և ասացեալ էր նմա առնել զայն ըստ ամենայնի. այլ նա զմի մասն միայն անտի արարեալ էր, և զայն ըստ քմաց իւրոց։ Հարցանէ ցնա զպատճառն, և նա պատասխանէ թէ ժամանակն չէր բաւեալ և զմիւս մասն առնել, հաստանելով ի վերայ մանկանցն եկելոցն ի Պօլսոյ. և թէ՝ երկուցեալ ի ծանրութենէ ծախուցն՝ կասի անտի։ Ասէ ցնա Հ. Սարգիս, թէ նորոգութիւնն այնր մասին չէր ինչ խափան մանկանցն, և թէ՝ չէր պարտ նմա երկնչիլ ի ծանրութենէ ծախուցն, ծանուցեալ զոլով արդէն ճշգիւ և գրով ճարտարապետին. և թէ՝ զինչ լցէ այն և այն անվայելուչ նորոգութիւն զոր արարեալ էր նորա անդ. . . . Լռէ նա և չունի առնել ինչ պատասխանի։

Իսկ առաջին տեսութիւն և խօսակցութիւն Հ. Աղէքսանդրի Պէշիքթաշլեան, որ ընդ Հ. Սարգսի ի Փարիզ և յանդիման ոյլոց՝ այս լինի, թէ ընդէ՞ր ընտրէ Միաբանութիւնն զՀայր Գէորգ Հիւրմիւզ Աբբայ, զայրն միամիտ և անյարմար ի պաշտօնն յայն Աբբայութեան։

Սխալեալ է յոյժ, ասէ, Միաբանութիւնն յընտրութիւն իւր յայն։ . . .

Լուեալ Հ. Սարգսի զձեռնադրութիւն Աբբային ի Հռովմ յաստիճան եպիսկոպոսութեան, գրէ առ նա թուղթ խնդակ-

ցութեան, ըստ պատշաճի ի դիմաց իւրայնոց ամենեցուն որ ի Փարիզ, օրինակ զայս.

« *Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր կարօտագին ողջոյն, և խոնարհ համբոյր Աստուածաբեալ աջոյն.*

« *Աւետաւոր և ցանկալի լուրն որում սպասէաք մեծաւ փափաքանօք լսել այտի, ահա աւետարանեցաւ մեզ այսօր ի վանացս անտի, զոր և լուեալ բերկրեցաք մեք ի հոգի և ի մարմին առ հասարակ, և գոհութիւն և փառս յոյժ յոյժ մատուցաք վերնախնամ Տէսչութեան, որ պաշտպանութեամբ Ամենօրհնեալ Կուսին առատացուցանէ առ որդեգրեալսն նորա, առ Ուխտս Մխիթարայ զշնորհսն ողորմութեան իւրոյ յամենայնի և յամենայն տեղիս: Այպա չմնայ մեզ այսուհետեւ ինչ, Արհիապատիւ Տէր, ի լրումն ըղձից մերոց և ուրախութեանս, բաց ի ցանկալի տեսութենէ Ձերոյ աստ առ մեզ, և ծնրադրական համբուրից անձամբ ձոնելոց Աջոյդ սրբութեան, զոր և այժմ ի հեռուստ աստի գրովս մատուցեալ՝*

« *Մնամք միշտ,*

« *Գերապայծառ Տէր,*

« *Ձերումդ Արհիապատուութեան*

« Ի Փարիզ. 27 *օգոստ.* 1846.

Խ. *ծառայք և ամենահնազանդ որդիք*

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ.
« Հ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ՊԷՇԻՔԹԱՇԼԵԱՆ.
« Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՈՐԿՈՒՃԵԱՆ.
« Հ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՋՐՃԵԱՆ.
« Հ. ՏԻՄՈԹԷՈՍ ՏՐՆԿՐԵԱՆ. »

Այս յետ աւուրց ինչ անտի ժամանէ անդ ի Հռովմայ նո-

րոգ Աբբայն, զարգարեալ հայրապետական փառօք, և ընդու-
նին զնա իւրքն որք ի Փարիզ խնդութեամբ յոյժ, և ածեն այսր
և անդր յայցելութիւն բարեկամաց և երևելի արանց քաղա-
քին ։ Հայթայթեն նմա և պատուոյ նշան յարքայէն Գաղ-
ղիացւոց յորժէ խնդրեն և հրաման գնալ յայց, և որ ընդունի
զնա ի պալատն Սէն-Քլու ։ Այլ դժբաղդութեամբ չկարէ ընդ-
հանրական Աբբայն Մխիթարեան Միաբանութեան մատուցա-
նել շնորհակալութիւն Արքային և առնել պատասխանի հարց-
ման նորին, անծանօթ գոլով Գաղղիացւոց և Իտալացւոց
լեզուաց. ընդ որ ամաչեն յոյժ Հարք Սարգիս և Յովհաննէս
որք ընդ նմա լինին, և լնուն զպակասութիւն նորին ։ . . .

Եւ ապա սկսանի Գեր. Հիւրմիւզ խնդրել ի Հ. Յովհաննէ
զհաշիւ ծախուց եղելոց ձեռամբ նորա ի ճանապարհի, ի Լոն-
տոն և ի Փարիզ զամս երկու ։

Առեալ նորա զայն ի նմանէ՝ ցուցանէ Հ. Սարգսի և հար-
ցանէ ցնա զուղղութենէ նորին ։ Ցուցանէ նմա Հ. Սարգիս
զզանազանութիւն ծախուց գլխոյ միոյ և եթ անտի, զծախուց
զգեստուց իւրեանց արարելոց ի Լոնտոն և ի Փարիզ, յորս
չլինի զանազանութիւն ոչ ի քանակն, ոչ ի տարազն և ոչ
յորակութիւն նոցին, սակայն զանազան լինին ծախք զգեստուց
նոցա ի միմեանց՝ քանզի իբրև 800 ֆրանք առաւել լինին
ծախքն զգեստուց Հ. Յովհաննու, քան զգեստուց Հ. Սարգսի.
այլ թէ ընդէ՞ր, ինքն միայն գիտէր զպատճառն ։ . . . Թէպէտ
և տեսանէ Գեր. Հիւրմիւզ զզանազանութիւնն զայն մեծ, և
անտի գուշակէ և զայլ ծախսն արարեալ ձեռամբ նորա, սա-
կայն ոչինչ փոյթ արարեալ լռէ ։ . . .

Իսկ զծախսուց նորոգ շինուածոյ վարժարանին չառնէ Գեր.
Հիւրմիւզ քննութիւն, դեռ չպատրաստելով Հ. Յովհաննու
զհաշիւն զայն, զոր պատրաստէ նա և ցուցանէ Հ. Սարգսի
ապա, յետ երից ամսոց անտի, և յետ բազում անգամ խնդրե-
լոյ ի նմանէ. և ծախքն լինի 74,350 ֆրանք, թէպէտ և ըստ
լիուլի հաշուի ճարտարապետին և վասն բոլոր շինուածոյն
այնորիկ պարտ էր լինել 38,000 ֆրանք, սակայն վասն կիսոյ
և եթ շինուածոյն ցուցանէ նա զայնքան ծախուց հաշիւ. թէպէտ

և քննէ Հ· Սարգիս զհաշիւ նորա ձեռամբ այլ ճարտարապետի, և գտանէ զայն տարապայման յոյժ և անհաւատալի, որպէս և զտարապայման ծախս կահուց վարժարանին... այլ զինչ կարէր առնել նա, կարգելով Գեր· Հիւրմիւզի զՀայր Յովհաննէս բացարձակ գործակալ Մ· վարժարանին, և փաստաբանի նորա ի վանս, Հ· Գաբրիէլի, պաշտպանելով զնա, իբրեւ զմիայնակ արդիւնական անձն ի հասարակութեանն, և ստգտանելով զՀ· Սարգիս իբրեւ զաղարտիչ համբաւոյ նորա, յասելն թէ « ունի նա ծանօթութիւն գործոյ, այլ չճանաչէ « զկարգ արծաթոյ․ » վասն այսորիկ լռէ Հ· Սարգիս ի ժամուն և ցաւի ընդ այն ։

Իսկ զկարգաւորութենէ վարժարանին ոչինչ կամի Գեր· Հիւրմիւզ խօսել ընդ Հ· Սարգսի, այլ ընդ Հ· Աղեքսանդրի միայն առանձին, և նա իմացուցանէ Հ· Սարգսի զկամս նորա, կարգել անդ ուղղիչ զՀ· Ռափայէլ Թրենց ։ Զայն կամս նորա իմանայ և ինքն Հ· Սարգիս ի բանից բերանոյ նորին, յասել մի անգամ և երկիցս, թէ « չունի ինքն զայլ ոք ի միաբանից « յոր կարիցէ վստահ լինել ի գործս Մ· վարժարանին, բաց « ի Հ· Ռափայէլէն․ » և թէ՝ « հմուտ և վարժ ոք պիտոյ է « յայն պաշտօն իբրեւ զՀ· Ռափայէլ ։ » Եւ յորժամ հարցանէ ցնա Հ· Սարգիս զկարգաւորութենէ վարժարանին, ասէ նա, թէ « Զկարէ ինքն որոշել ինչ, յառաջ քան զդառնալ « իւր ի վանս և իմանալ զկամս Հասարակութեանս ։ » Այլ սակայն Հ· Սարգիս մին էր ի հասարակութենէ անտի, և յառաջակայից իւրոց և Աթոռակալ իւր առանձին ։ . . .

Յետ քանի մի աւուրց հասանելոյ Գեր· Հիւրմիւզի ի Փարիզ գտանէ Հ· Սարգիս գիր մի յանձնարարութեան և ամբաստանութեան ի Պօլսոյ գրեալ ի Հ· Սրապիոնէ, օրինակ զայս.

« Մեծապատիւ Տ· Ս. Աթոռակալ վարդապետի ողջոյն ։

« Աբրահամ Աղայ Ալլահվէրտեան լսելով թէ Յարդութիւնդ գնացեալ է ի Փարիզ, ոչ կարաց լռել թախանձանաց որդւոց իւրոց, եդ ի ճանապարհ զերկս որդիս իւր գալ և բնակել ի դպրատան մերում, ապաւինեալ ի հայրագութ

խնամս ձեր, և Հայր մանկանց պատուիրեալ է խստիւ չհեռանալ ի դպրատանէն և ոչ ժամ մի առանց հրամանի ձերոյ: Գիտեմ թէպէտ ծանրութիւն է ձեզ, բայց տասնապատիկ օգուտ հասարակութեան յամենայն կողմանէ լինին, նա և ամենայն ազգականօք վահան ընդդէմ թշնամեաց մերոց:

« Եկեսցուք ի պատմել զանխոհեմ գործս Ճէլալեանին: Ի մեկնելն հարց մերոց աստի վասն ընտրութեան Աբբայի, յանձնեցաւ Հ. Բարսեղի հաւանութեամբ ամենեցուն սենեակ գրեանց և դաստիարակութիւն մանկանց, և սա չունելով զօք աստ և տեղի բնակութեան կրէր տառապանս, և ես հաւանութեամբ հարց մերոց ասացի նմա բնակել ի միում ի սենեկաց ի վերին դստիկոնի դպրատան, զի դատարկ էր այն որպէս և այժմ. ընդ գալ Հ. Անանիայի իսկոյն ի նմին աւուր պէս պէս նախատական բանիւք արտաքսեաց զնա ի բնակութենէ անտի և փակեաց զամենայն սենեակսն, զի մի ոք ի մերայնոց կարող լիցի անդ մուտ ունել. բոլոր հարք մեր ամենեքեան վշտացեալ ընդ այսպիսի գործ առնս, գիս մեղադրեն թէ ընդէ՞ր լռես, և Հ. Անտոնիոսն եւս ասէ, զքեզ մեծաւոր ճանաչէ հասարակութիւնն, կարես առնել զոր ինչ կամիս. բայց չգիտեն, զի յանլուր յականջս հեղուլ զբան է յափունս ծովու սերմանել. ուստի խնդրեմ եթէ դեռ է այդր Գերապայծառ Աբբահայրն ծանուսջիք նմա, զի ժողովուրդն եւս լուեալ ասեն ոչ կարծէաք թէ Աբբացիք այսպէս անգութ իցեն. հարք մեր զայս խնդրեն կարծեմ, թէ գրով բողոքեսցեն. խնդիր մեր ամենեցուն այս է, ազատ մնասցեն այն սենեակք վերին դստիկոնի ի ձեռս հասարակութեան. իսկ դպրատունն թող ինքն կառավարեսցէ որպէս և կամի, զի չիք այլ ինչ դեղ. տեսցուք թէ զինչ ասէ Գեր. Աբբահայրն. խնդրեմ ներել ձանձրացուցիչ գրուածոյս, զի վշտացեալ սրտիւ գրեմ, և այն յօգուտ հասարակութեան:

« Ողջ լինել մաղթեմ Վ. Հայրութեանդ

« Ի Պոլիս. 16 սեպտ. 1846.

« Ն. Ծ. Հ. ՍՐԱՊԻՈՆ Պ. Կ. Մխ. »

Ընթեռնու Հ. Սարգիս զվերոյիշեալ թուղթն յականջս Գեր. Գէորգ Հիւրմիւզի, և լռէ ի նմանէ բանս անհաւատալի և սարսափելի լսելեաց, զոր և յիշել ասա ամաչեմ, վատահամբաւելով և դատապարտելով նորա զՀ. Բարսեղ Մարտիրոսեան, և գովելով և արդարացուցանելով զՀ. Անանիա Ճէլալեան, թէպէտ և Մխծաւորն Հ. Սրապիոն և բոլոր հարքն որք ի Պօլիս բողոքեն զանպատեհ գնացից Ճէլալեանի, թէպէտ և ժողովուրդն գայթագղեալ ընդ այն գնացս նորին։ Այլ թէ ընդէ՞ր այսպիսի դատաստան ի գերագահ դատաւորէն, ի Գեր. Գէորգ Հիւրմիւզէն։ Վասն զի Հ. Անանիա Ճէլալեան կեղծաւոր և շողոքորթ բարուք իւրովք կուրացուցեալ էր զաչս փառասէր դատաւորին։... Ո՞չ ապաքէն սոյնպիսի բարուք և Հ. Յովհաննէս Սորկունեան զերծաւ ի քննութենէ տուեալ հաշուի ծախուց իւրոց, թէպէտ և զՀ. Սարգիս վասն այնորիկ առաքէ նա ի Փարիզ, և ինքն ևս գնայ անդ ի պահանջել և ի քննել զայն անաչառութեամբ։...

Տեսեալ Հ. Սարգսի զայսոսիկ՝ արդարացուցանէ յայնժամ զՀ. Աղեքսանդր Պէշիկթաշլեան ի կարծիս իւր և ի դատաստան որ զնորոգ ընտրեալ Աբբայէն։...

Ի խորհել և ի խօսել Հ. Յովհաննու ընդ Գեր. Հիւրմիւզի գրաւական գնել զտունն և գտանել անտի արծաթ ի հատուցումն ծախուց շինուածոյն, ասէ Հ. Սարգիս Գեր. Հիւրմիւզի ի ծածուկ, չհաւանիլ ընդ այն կարծիս Հ. Յովհաննու Սորկունճի, զի մի լիցի այն օրինակ չար յետագայիցն։ Հաւանի նա բանից նորա, և այնպէս առանց որոշելոյ ինչ զիրաց վարժարանին դառնայ ի Վենետիկ, յուսացուցանելով զամենեսեան որոշել զիրսն ի վանս խորհրդով և հաւանութեամբ հասարակաց։

Ի ժամու մեկնելոյ Գեր. Հիւրմիւզի ի Փարիզէ, ասէ ցնա Հ. Սարգիս առանձինն, եթէ չիցեն կամք հասարակութեան կարգել զինքն վերստին ի պաշտօնն ուղղչի Մ. վարժարանին, յոյժ շնորհակալ լիցի նմա, վասն ազատելոյ զինքն ի հոգոց անտի և ի խղճէ մտաց. իսկ եթէ կամիցի նա հաստատել զինքն ի նոյն գործեալ, խնդրէ ի նմանէ խոհարհութեամբ,

ծանուցանել նմա յառաջագոյն, թէ զինչ և ո՛րչափ ինչ իցէ սահման իշխանութեան իւրոյ ի պաշտօնն յայն, որպէս զի գիտասցէ, թէ կարիցէ՞ արդեօք խոստանալ հաստատկութեան զկատարումն նորին. քանզի չկամի ինքն և չկարէ իսկ ընդդէմ ճանաչման իւրում և փորձառութեանն առնել ինչ։

Աւէ ցնա Գեր. Հիւրմիւզ նախ՝ թէ զիա՞րդ լինիցի այն յայնչափ հեռաւորութենէ անտի, և ապա՝ թէ զոր ինչ որոշեսցէ հաստատկութիւն պարտ է զայն առնել։ Եւ այսպիսի համառօտ և հատու բանիւք կարճէ նա զխնդիրն և մեկնի անտի։

Բայց յառաջ քան զդառնալ Գեր. Հիւրմիւզի ի Վենետիկ, գտանէ Հ. Սարգիս ի Պատաւիոնէ թուղթս երկու գրեալ առ նա ի Հ. Եսայեայ Մղրաքեան, որով ազդ առնէ նմա թէ զինչ ինչ քննութիւն և դատաստան առնեն ոմանք յեղբարցն որ ի վանս դրնաւորութենէ և զգնացից նորա ի Մուրատեան վարժարանին, որոց առնէ պատասխանի Հ. Սարգիս մի առ մի, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր և սիրեցեալ Եղբայր.

« Ի Փարիզ. 28 սեպտ. 1846.

« Երկոքին նամականին Ձեր, գրեալք ի 28 օգոստ. և ի 1 սեպտ. տարւոյս, թէպէտ և պատասխանիք էին թղթոյ իմոյ գրելոյ առ ձեզ ի ճանապարհէ և աստի, սակայն են են ի նոսին ինչ ինչ կարծիք և դատաստանք ոմանց այդր յեղբարցս որք ընդ գնացս իմ, և որք արժանի յինէն պատասխանւոյ, և զորս թէպէտ կամք էին ինձ փութով հատուցանել, այլ յապաղեցի ցարդ խորհրդով, մնալով գալստեան Վեհին մերոյ այսր ի հաստատութիւն բանիցս ճշմարտութեան։

« Արդ՝ պատասխանին իմ ընդ կարծիս և ընդ դատաստան ոմանց այդր յեղբարցս, որք խօսեալ են, ասէք, Արբային, թէ և իմ դիւրաւ յարմարիցի անկարգութեանց եղելոց ի Փարիզ, եթէ ի զգեստս և եթէ ի վանուցն դրամոց, և թէ առանց հրամանի իմոյ ոչ կարէր դնել Հ. Յովհաննէս զայն

քան անօգուտ մատեանս, և ծախել փայրապար զգրամն. և թէ՝ Հ. Յովհաննէս տուեալ է զհաշիւ ինչ մինչ ցվերջն անցեալ տարւոյ, և ի հաշուին յայն գոն և ծախք գնալոյ ի Թէատրոն ընդ իս, և այլն և այլն։ . . .

« Ասեմ ես առ այս, թէ ի հաշուի անդ իմում որ վասն առանձին ծախուց իմոց եղելոց ձեռամբ իմով ի Լոնտոն և ի Փարիզ, յայտնապէս և պարզ տեսանի, թէ առ ինչ և ո՛րչափ դրամ ծախեալ իցեմ ես, եթէ վասն բնակութեան և կերակրոյ իմոյ, եթէ վասն զգեստուցս և գրեանցս, և եթէ վասն տեսարանաց իմոց առանձինն, զոր և ուրոյն ուրոյն նշանակեալ իմ յընդհանուր հաշուի մերում ցուցի ես Վեհին աստ, և զորոյ պատճէն ետու նմա, զի բերեալ այդր ցուցցէ դոցա. և յորժամ տեսեալ և քննեալ դոցա զայն, յայնժամ կարծիցեն և դատիցին ո՛րպէս և ո՛րչափ կամիցին։

« Իսկ վասն ընդհանուր և առանձինն ծախուց եղելոց ձեռամբ Հ. Յովհաննու, նա ինքն է պատասխանատու, անգիտացեալ և անկարացեալ իմ իմանալ և քննել զայն։ . . . Այլ թէ ասիցէք՝ որպէս և ասացիք ինձ երբեմն այդր, թէ ընդէ՞ր յանձնեցի ես զարծաթն ի ձեռս Հ. Յովհաննու, և թողի ըզծախսն մեր ի կամս նորա, ասեմ ես, որպէս և ասացի ձեզ երբեմն, թէ խոհեմութիւն իմ և փորձառութիւնս այնպէս պատշաճ և հարկ համարեցան, հայեցեալ ի վիճակն մեր, և ի հանգամանս գործոյս այսր. և այդր. և հաստատութիւն բանիցս, ահա երաշխաւորեսցեն ձեզ գնացք Վեհին մերոյ ընդ նմա այսր, և ընդ կուսակցի նորա այդր, կարի իմն ակնածութեամբ և խոհեմութեամբ վարելով ընդ նոսա։

« Տեսջիք նախ զարդիւնս գործոյ անաչառ և խիստ քննողաց, ապա մեղադրեսջիք զթուլութիւնն իմ. ահա աւուրք հնգետասան են զի Վեհն մեր հասեալ կայ աստ, և խնդրէ անդադար հաշիւ ի նմանէ. սակայն չետես նա զայն ցարդ։

« Այսչափ ինչ պատասխանի բանից առաջին նամակի ձերոյ շատ լիցի ի ժամուս։

« Իսկ յաղագս բանից վերջին նամակի ձերոյ, թէ և ունիմ ես բազում ինչ տանել պատասխանի, բայց գիտեմ զի չլիցի

ոյն ի մխիթարութիւն ցաւագին սրտի ձերոյ, և ի հանդարտութիւն խռովեալ մտացդ, չասացից թէ և անախորժ արդեօք լսելեացդ: Այլ այսչափ միայն ասացից, թէ մնամ ես աստ համբերութեամբ տակաւին, յուսալով դարման գտանել անուղղութեան, զոր ազդ արարեալ իմ արդէն զա՛ն այդր և այսր, որոց և որում հարկ է ազդ առնել:… Իսկ եթէ վրիպեցայց ի յուսոյ աստի՝ չլսելով և արհամարհելով նոցա առհասարակ զխորհուրդն իմ, եղեալ և հաստատեալ եմ ի մտի հրաժարելով հրաժարիլ յամենայն գործառնութենէ վարժարանիս մինչ իսպառ, և մեկուսանալ ի տեղւոջ ուրեք առ ի չտեսանել զդպրոցս և ի չլսել զանուն նորին անգամ, զի գո՛նէ հանդարտութեամբ հոգւոյ և մարմնոյ անցուցից զսակաւիկ մնացորդ կենացս,… զուր ջանք և անօգուտ վաստակ զերեսնամեայ և զոգւով չափ աշխատութիւնս կարդալով:

« Ահա զայս խորհիմ և ի սոյն միտս եմ այժմիկ, ակնկալեալ ի վերուստ այցելութեան:…

« Զեղբայրական ազդարարութիւն ձեր որ առ Հ. Յովհաննէս արարեալ ի նամակիդ, չկամեցայ ես ցարդ յայտնել նմա, ճանաչելով քաջ զբնաւորութիւն նորա. քանզի ոչ միայն չզգաստասցի նա յազդարարութենէդ անտի, այլ և խռովեսցի և ժանտասցի առաւել ևս, որ արդէն դժգմնեալ իմն է ընդ բանաւոր խնդիրն հաշուի ծախուցս որ ի նմանէ, և ընդ չճանաչումն մեր մեծի արդեանց իւրոց և աներախտիք ի մէնջ զայն համարեալ: Որչափ ևս առաւել՝ ի լսել զայսպիսի ազդարարութիւն, և զայն ի գաւակցէ իւրմէ, և զայն յայտնապէս առ իս, և ոչ առ ինքն ի ծածուկ գրեալ: Ահա վասն այսորիկ ոչ պատշաճ վարկայ յայտնել նմա զայն, այն զի և թողեալ էր ձեր զայն ի կամս իմ:

« Եթէ ունիցիք ինչ զնմանէ և կամ զայլոց ումեքէ գրել առ իս, նշանակեսջիք զայն ի պիտակ ինչ առանձին և ծրարեսջիք ի նամակիդ, զի ընթերցեալ իմ զայն պատառեցից ապա. քանզի չներէ վիճակ մեր աստ չընթեռնուլ յականջս մերոցն զեկեալ թուղթս այսր, մանաւանդ որ զխնդրոյ ինչ իցէ, որպիսի էր այս պատասխանին ձեր, վասն որոյ հար-

ցանէր միշտ Հ. Յովհաննէս, թէ ետո՞ւք, և զի՞նչ տուք պատասխանի թղթոյս ։

« Մնամ միշտ

« Վերապատուելի Հայրութեանդ

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Առնէ պատասխանի Հ. Եսայի վերոյիշեալ թղթո՛յ Հօր Սարգսի, օրինակ զայս.

« Ընդ առնուլ զգիր վերապատութեանդ փութամ տալ պատասխանի. բայց բազում և յոյժ բազում ցաւօք սրտիս, ոչ այնու տղայական բանիւ և լի կրիւք, որպէս գրէր ոմն երբեմն (Հ. Ստեփան առ Հ. Գաբրիէլ,) թէ « ոչ բարւոք « արարիք, յոյժ չար գործեցիք. » ընդէ՞ր, վասն զի անապարեցաք հասու լինել ելից և մտից դրամոց մերոց ։ Ընդէ՞ր դրամօք վարժարանին գնեցան զարդք և պիտոյք վանաց, տպարանին, և այլ ամենայն իրաց որ ոչ վերաբերի առ Մուրատեան վարժարանն ։ Արդ ո՞վ կարիցէ մաքրել զայդ հաշիւ ընդ վանաց ընդ տպարանին. միթէ ո՞չ բողոքիցէ առ Աստուած աղաղակ անիրաւ գործադրութեան մերոյ այս դրամոցս ։

« Արդ խնդրեմ ի վերապատուութենէդ ընթեռնուլ զայս երկտողս առաջի Հ. Յովհաննու միայն, զի ծանիցէ, թէ մեր հաշիւ պահանջելով ի նմանէ ոչ էին կամք զօղ երեւեցուցանել զնա, այլ գիտել զելեւմուտս մեր ։ . . .

« Դարձեալ խնդրեմ ասել նմա, եթէ միաբանութիւնս համեցի յանձնել Հ. Յովհաննու զվարժարանդ իբրեւ ուղղի կամ իբր հոգաբարձուի, յայնժամ արդարեւ, շիջուցէ զծրագ տպարանին և վառեսցէ զծրագ վարժարանին ։

« Ես ըստ տկար մտածութեան իմոյ այժմէն գուշակեմ, թէ ծրպիսի խառնակութիւն հաշուի ունիցի ծագել ի Հոգաբարձու լինելոյ Հ. Յովհաննու, զորոյ զկատարածն ոչ ոք կարողասցի մաքրել և պարզել ։ Արդ իսկ տեսանեմ զի ի սուղ

ժամանակի անցոյց նա զվեց հազար ֆրանքս վարժարանիս ի վերայ տպարանին մերոյ, ի վերայ վանացս և Ռափայէլեան վարժարանին ։ Ո՞վ կարասցէ արդ պահանջել ինչ, այսպէս իմասջիք ապա և զապագայ գործողութեանց մերոց ։ Մեք աստ ծանր վաշխ հատուսցուք, և այդր անխնայ վատնեսցին դրամք, վասն հաճոյից, արդարեւ խիղճ մաքուր և ընտիր վարչութիւն ։

« Թէ և ինձ չէ անկ խրատտու լինել ձեզ, այլ յիշեցուցանեմ ձեզ, զի վերապատուութիւնդ զհետ լիցի գաղտնի գիտել, թէ արդեօք հատուցեա՞լ իցէ զդրամն այնոցիկ ընդ որս առեւտուր արարեալ իցէ Հ. Յովհաննէս. քանզի կասկածեմ թէ չիցէ հատուցեալ զբազում դրամն որոյ վասն հաշիւ ցուցանէ իբր հատուցեալ ։ . . .

« Բատվա. 11 Հոկտ. 1846.

« Հ. ԵՍԱՅԻ ՄԶՐԱՔ . »

« Այժմ միայն կամիմ գրել զաստիկ տխրութիւն իմ ընդ այժմեան վիճակ վերապատուութեանդ և բոլոր միաբանութեանս ։ Արդարեւ չունիմ բանս արժանաւորս ի մխիթարութիւն սրտի ձերոյ, այլ միայն գիտեմ քաջ թէ բարեկամական բանք դիւր են սրտի վշտացելոյ, վասն այսորիկ համարձակիմ գրել զերկտողս ։ Այնպէս ինձ թուի թէ յաղթանակեալ ի միաբանութեանս դաւաճանութեան և խաբէութեան ։ . . . Ոչ այդպէս ոչ կարէ ի միաբանութեանս յաղթանակել այդպիսի ապօրինաւոր գործոյ. իսկ եթէ թշուառաբար ճշմարտեալ իցէ այդպիսի անիրաւութիւն ի վերայ մեր, յայտնի նշան է թէ մերձ եմք ի կործանումն և ի քակտումն, այլ տակաւին չէ արժան յուսահատիլ. ժամանակ է արդ լռութեան և համբերութեան(*).

(*) Անհաւատայցէ՞ ոք արդեօք անպատեհ վարչութեան Գեր. Հիւրմիւզի և ցաւալից հետեւանցն որք անտի. քակտման աւեր Մխիթարեան Ուխտին ։ . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

մի կարծիցէ վերատեսչութիւնդ թէ ի միաբանութեանս որք ուղղութեամբ սրտի խորհին ոչ հասկանայցեն զեղեալսն և զորս գործեն ոմանք ։

« Նպատակ և գիտումն ոմանց աստի և ոմանց այտի այն է ի տիրապետել և իշխել ի վերայ ամենեցուն և ի գերութիւն վարել զբոլոր միաբանութիւնս (*) , և այս ամենայն գիտումն սոցա և դոցա յայտնի երեւի ի գրուածոց որ առ միմեանս. և ընդէր Հ. Սորկունն ոչ հանէ ի վեր և ընթեռնու առաջի ձեր զայն, և պահանջէ ի ձէնջ տեսանել զգրուածս իմ ։ . . . Այո՛ պարտական եմք հնազանդել հրամանաց վեհագունի, այլ ոչ բնաւ բռնաւորական դաւաճանութեան և քսութեան ։ Մի՛ կարծիցէ վերատեսչութիւնդ թէ զոր գրեմս ի մտաց իմոց հանճարեմ. այլ ունիմ երաշխաւոր բանիցս ։

« Առ այժմ եթէ վերատեսչութեանդ չէին կարեւոր գործողութիւնք ի Փարիզ վասն Ազանուրեանց, խորհուրդ տայի յինէն կողմանէ յանձն առնուլ առաւել դառնալ ի վանս քան մնալ այդր անգործ մերձ արդիւնաշատ անձինս ։ Արժան էր քաջ հասու լինել բնաւորութեան Հ. Սորկունձին, որոյ ոչ գոյ քարաքթեր, (բոյս բարուց) ։ Ո՞չ յիշիցէք զանբիծաբիւն նորա (հակակրութիւն,) առ Գաղատացիս, և այժմ զիա՞րդ բոլորովին միացեալ է ընդ Գաղատացւոյն, Հ. Ստեփաննին ։ Արդ կարէք ըմբռնել ո՞րպէս համապատասխանէ նախընթաց խոհեմութեան և փորձառութեան ձերում ։ Հ. Սորկունձն զոհէ զամենայն իւր զօսանաց և զուարճութեան իւրում, այդ է նշան բնաւորութեան նորա ։ Կամիմ ի վերջ բանիս ծանուցանել զնշանաւոր խօսք ինչ Բալֆի Քաղաքապետին որ ի խօսելն ի վերայ Գալրոցիդ ասացեալ է , թէ Աւստրիայն ոչ ննջէ, այլ

(*) Ակնարկէ ի Հ. Ռափայէլ Թրենց և ի Հ. Գաբրիէլ Այվազեան, որոց խորհրդով վարի Գեր. Հիւրմիւզ ։ Հ. Ռափայէլ վերատեսին կարգի տեսուչ ի Ռաֆայէլեան վարժարանին, ի նախատինս և ի ցաւս սրտի Հ. Սամուէլի Սամսարեան . . . և Հ. Գաբրիէլ ջանայ կարգել տալ զՀ. Յովհաննէս Սորկունձին տեսուչ Մ. վարժարանին, ըստ ցանկութեան Հ. Ստեփաննոսի դասակցի իւրոյ, հանելով անտի զՀ. Սարգիս, զի համարձակ վարեսցին նոքա անդ . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

դիցէ ի գործ զամենայն ջանս իւր մինչեւ զարձուցէ յԻտա-
լիա զդպրոցդ, եւ այլն եւ այլն ։

« Բատվիա. 19 Հոկտ. 1846.

« Հ. ԵՍԱՅԻ ՄՋՐԱՔ. »

Առնէ պատասխանի Հ. Սարգիս Թղթոցս, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Զնամականին Ձեր, գրեալ ի 11 և ի 19 Հոկտեմբերի անցելոյ, ընկալայ ըստ իւրաքանչիւր ժամանակին, մխիթարեցայ միանգամայն և ցաւեցայ ։ Մխիթարեցայ ընդ կարեկից և քաջալեր բանս ձեր, որով կարեկից լինիք ցաւոցս և քաջալերէք զիս յուսով ուղղութեան իրաց հասարակութեան, և ցաւեցայ ընդ ամենայն վնասն, բնականն և բարոյականն, որք եղեն և լինին մեզ և ազգիս առհասարակ, և ընդ որս չկամիմ ես աստ մի առ մի և երկար առնել պատասխանի, հաստուցանելով իմ զայն կարծեմ ըստ բաւականին և ըստ պատշաճի ։ Մնայ ինձ ի սմին առնել քանի մի և եթ կարեւոր բանից Թղթոցդ պատասխանի ։

« Կամիք դուք գիտել՝ թէ ի մէջ 36 մանկանց դպրոցիս, քանի՞ք ի նոցանէ թոշակաւորք իցեն ։ Նօթն միայն կարծեցեալ թոշակաւորքն են, և որոց ամենեցուն տարեկան թոշակք հազիւ հասանեն ցէ,000 ֆրանք ։ Այլ թէ հաստուցե՞ն միշտ և անթերի զայն ծնողք նոցա, չկարեմ ես երաշխաւոր լինել այսմ, ճանաչելով քաջ զընաւորութիւն ազգիս Պօլսոյ, և փորձ իսկ գոլով անփութութեան և առատաձեռնութեան, չասացից և այլ ինչ, եղբարց մերոց ի Պօլիս և այդր ։ Ահա ձեզ կարծեմ բաւական տեղեկութիւն և մխիթարութիւն, ապա ըստ այսմ աշխատեցէք այդր ։

« Զծրարեալն ի Թղթիդ զ5,000 ֆրանքի պատոփրանագիրն ընկալայ և յանձնեցի զայն Հ. Յովհաննու, ըստ հրամանի Վեհին մերոյ ։ Այլ զի՞նչ իցէ այդ 5,000 ֆրանքդ առ հաստուցանելի պարտուց դպրոցիս. զի 50,000 ֆրանքաց պէտք են աստ։ Եւ սակայն մի՛ զարհուրիք, սիրելի, և մի՛ վհատիք ընդ լուր

մեծագումար արծաթոյ, զի չէ այս ի զուր վատնել, այլ ի կարեւոր պէտս ծախել, թէպէտ և անփորձութեամբ և անզգուշութեամբ, հայեցեալ ի հանգամանս մատակարարին և ժամանակին ... Այլ զարհուրեսջիք ընդ պատճառն անուղղութեան այնորիկ, ... որով լքումն սրտի և ձեռաց միանգամայն, և որոց անհնարին է տանել զարման, թէպէտ և ծանիցին վէրքն և պատիցին այնք աղխիւ պատատուաւ, (Ուղղիչ անուամբ սեմ,) հայեցեալ ի ճանաչումն մտաց և ի փորձառութիւն վիրաւորելոյն : ...

« Զայսմանէ յայտնապէս և համարձակ գրեցի ես առ որ պարտ էր գրել, բանադատեալ ի խղճէ մտացս որ ընդ անիրաւութիւն աղքատացս ազգիս. և ընդ ամենայն վնաս հասարակութեան, թէպէտ և ծանր թուիցի համարձակութիւնս, այլ չէ ինձ փոյթ. զի չկամիմ և չկարեմ իսկ ընդդէմ ճանաչմանս խմում և փորձառութեանս առնել ինչ, նախադասելով զհանդարտութիւն մտացս և զառանձնութիւն կենացս, մանաւանդ յայսմ հասակիս և յայսպիսի հանգամանս գործոյս :

« Ահա նշանակեալ խօսքն քաղաքապետին Բալֆիա, զոր ծանուցիք ինձ ի թուղթն ձեր, արդեամբք կատարին, պատահեալ Յովհաննու Մ. բանալ զառաջեաւ մեզ վերստին զհին տեսարանն, և զոր ոչ միայն պարտ էիք դուք ծանուցանել և վէհին մերոյ, այլ և քաջիկ խելամուտ առնել նմա զգօրութիւն բանից Բալֆիա, որպէս զի նախահայեաց տեսութեամբ խորհէր նա և հոգայր ըստ ժամանակին զապահովութենէ ստացուածոց Մ. դպրոցիս, և մի զչնչոյն պարապիլ և հոգալ ի ժամուս, զգրաւոր կանոնացն սեմ դպրոցիս և զպահպանութենէ նորին, անփորձ գոլով իւր և իւրոցն հանգամանաց տեղւոյս դպրոցացն և վիճակի պաշտօնէից նոցին : Թողից սել և զայլ ցաւալեացն, որք լքուցիչ են սրտից և ձեռաց և խափան հասարակաց բարեաց. և ահա վասն այսորիկ լքեալ կամ այժմիկ մինչեւ ոչ տեսից արդեամբք զուղղութիւն իրաց հասարակաց ազգիս՝ ոչինչ համարեցայց զանուն ուղղութեան. և վասն այսորիկ չյայտնեցի ես զայն ցարդ այլոց, և չկամեցայ և չկարեմ իսկ առնել ինչ, ընդդէմ գոլով այնր ճանաչ-

մանս խնամ և փորձառութեանս, որպէս և չարարի ցարդ զարժան պատասխանին ամբաստանական թղթոց մերոցն առ խս ի Պօլսոյ, և անիրաւ պահանջմանց նոցա որ ի մէնջ անտի, մնալով պատասխանւոյ բանաւոր առաջարկութեանս և կարեւոր պայմանացս որք ի վանացս այտի ։

« Այլ դու հաստարակաւէր և կարեկից եղբայր իմ, քաջալերեաց, և մի՛ վհատիր բնաւ ընդ ծանրութիւն պարտուցս և մի՛ ցաւիր ընդ եղեալ ծախսն, զի որպէս ասացի ոչ ի զուր վատնեալ են այնք, այլ ի կարեւոր պէտս ծախեալ և զաժէք տանս առաւելացուցեալ. զի յո՛ր և իցէ ժամանակի եթէ կամիցիմք վաճառել զայս, գտցուք 500,000 ֆրանք անշուշտ ։ Ապա ջանացարուք դուք հայթայթել աստի և անտի արծաթ առ ի հատուցանել զպարտսն, վաճառելով զանպտղաբեր կալուածս դպրոցիս, և եթէ այս դժուարին իցէ, գոնեայ գրաւեսջիք զնոսին թեթեւ ինչ շահիւք, մանաւանդ ի հանգամանս յայս յորում կամք մեք այժմիկ, հայեցեալ ի տրամադրութիւն հակառակորդին մերոյ աստ, և ինչանական բանս Բալֆիս. քանզի որպէս գուշակեմք մեք ի բանից քննութեան Յովհաննու Մուրատեան որ ի հրովարտակի անդ Գաղղիացւոց Արքային, թէ «Ծախսք Մխիթարեանց հաստատեցեալ դպրոցս այս ի Փա-«րիզ, » Կամի նա հրատարակել աստ իրաւաբանական օրինօք զանիրաւութիւն Միաբանութեանս յափշտակելով զորդիսն այլ և բողոքել այդր առ Տէրութիւնդ ի խափանել զվաճառումն կալուածոց դպրոցիս, և զընդունելութիւն եկամտից նոցին ։

« Ապա նախահայեաց տեսութեան պէտք են մեզ յապահովել զկալուածսն այդր, անցուցանելով զայն այոր, որչափ հնարաւոր իցէ առ ի զերծուցանել զդպրոցս ի պարտուց իւրոց, զոր յիշխանութեան և ի ձեռս մեր ունիմք առանց երկիւղի ։ Ահա այս են կարեւոր խորհուրդ քաղաքագէտ արանց բարեկամաց մերոց աստ ի Փարիզ ։ Մնամ

« Վերապատուելի Հայրութեանդ

« Փարիզ. 18 նոյեմբ. 1846.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Ի բանից վերոյիշեալ թղթոց Հ. Եսայեայ յայտնապէս իմանին Հակառակորդք Հ. Սարգսի. առաջին լինի Գեր. Հիւրմիւզ, որ կամի զգաստակից իւր զՀ. Ռափայէլ կարգել ուղղիչ վարժարանին և երկրորդ լինի Հ. Յովհաննէս Սորկուճեան, որ կամի ինքն լինել ուղղիչ և գործակալ անդ, կալեալ իւր կուսակից զՀ. Ստեփանն, և ունելով պաշտպան ի վանս զՀ. Գաբրիէլ Այվազեան : Այլ թէ ընդէ՞ր և որո՞վ իրաւամբք հակառակ ոմանք լինին սոքա Հ. Սարգսի : . . . Վասն զի անձնասիրութիւն չար և կողմնասէր բարք չճանաչեն երբէք զիրաւունս և զարժանիս այլոց :

Իսկ Հ. Սարգիս տեսեալ զապերախտութիւն և զնախանձ մանաւորաց ոմանց՝ ցաւի միայն ընդ վնաս հասարակաց, որ յանպատեհ գնացից նոցա : . . .

ԳԼՈՒԽ ԺԸ.

Կարօտութիւն Հ. Յովհաննու ի հատուցմանն պարտուց վարժարանին. — Կամք նորա դնել ի գրաւի զտունն ի գտանել արծաթ. — Կամք Հ. Սարգսի հարցանել ընդ այն զկամս հասարակութեան. — Յայտնութիւն ծածուկ խորհրդոյ Հօր Սարգսի ընդ այն. — Թուղթ գանգատանաց Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ. — Խիստ պատասխանի Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս. — Համարձակ պատասխանի Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ. — Թուղթ յանդիմանութեան Հ. Սամուէլի առ Հ. Սարգիս. — Անաչառ պատասխանի Հ. Սարգսի առ Հ. Սամուէլ.

Յետ երկուց աւուրց մեկնելոյ Գեր. Հիւրմիւզի ի Փարիզէ դառնալ ի Վենետիկ, ասէ Հ. Յովհաննէս ցՀ. Սարգիս, թէ կարօտի ինքն արծաթոյ ի հատուցումն պարտուց վարժարանին : Ասէ ցնա Հ. Սարգիս, թէ չունի ինքն արծաթ ի վանաց զի տացէ նմա զայն : Ասէ ցնա Հ. Յովհաննէս. Ապա ուրեմն

Հարկաւորիմք ի վախճանի դնել ի գրաւի զտուկս, և գտանել ընդ այն արծաթ վաշխիւ ուստեք. և յասել Հ. Սարգսի թէ ընդ այն գործ պարտ էր նախ հրաման ունել ի վանաց, ասէ Հ. Յովհաննէս, թէ խօսեցեալ իցէ ինքն զայնմանէ ընդ Գեր. Հիւրմիւզի, և նորա զբացարձակ ընդդիմութիւնն Հ. Սարգսի յառաջ բերեալ իցէ ընդ այն գործ ։ Զարմանայ յոյժ Հայր Սարգիս և ցաւի ընդ յայտնութիւն ծածուկ ազդարարութեան իւրոյ առ Գեր. Հիւրմիւզ. վասն որոյ գրէ առ նա գիր, գանգատելով զայնպիսի քաղաքավարութենէ նորին առ ինքն, հանդերձ կարեւոր ազդարարութեամբ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Զկարեւոր պէտս և զկարօտութիւն վարժարանիս աչօք իսկ ձերովք տեսէք աստ, և հոգ տանել այնմ թէպէտ և ջանացայք, այլ ոչ հանդուցիք զմիտս կացելոցն այսր, մանաւանդ զՀ. Յովհաննու, յորոյ վերայ միայն թողեալ են ամենայն հոգք դպրոցիս, և որոյ տագնապեալ յոյժ ընդ պահանջմունս պարտուցն եղելոց, և տարակուսեալ ընդ մատակարարութիւնն անհրաժեշտ և անակնկալ ծախուցն, չգիտէ զինչ առնել, այլ խնդրէ յինէն խորհուրդ, մանաւանդ թէ օգնութիւն ընդ այն. և ի պատասխանել իմ նմա՝ թէ չունիմ ես արծաթ դպրատանդ ի ձեռին զի տաց քեզ, ասաց ինձ նա. Ապա ուրեմն հարկ է մեզ զտուկս ի գրաւի դնել, և ընդ այս արծաթ գտանել ։ Եւ յասել իմ, թէ պարտ է մեզ ընդ այս գործ հրաման ի վեհէդ առնուլ, ասաց ինձ նա թէ խօսեցեալ իցէ ինքն զայսմանէ ընդ ձեզ աստ, և Ձեր զբացարձակ ընդդիմութիւնն իմ միայն յառաջ բերեալ իցէ ընդ այս գործ ։

« Զարմացայ ես յոյժ և ցաւեցայ ընդ այս բանս, և յիրաւի՛ քանզի չյիշեմ ես բնաւ, թէ բացարձակ ընդդիմացեալ իցեմ ես երբէք ընդ արարս ինչ Հասարակութեանս, բայց եթէ առաջեալ իցեմ երբեմն զնուաստ կարծիսն իմ ընդ այն, չարժեալ ի պարտուց պաշտամանս և ի խղճէ մտացս, հանդերձ բանաւոր կարծեցեալ ինձ պատճառօք. որպէս ի խնդիրս յայս, առելով

իմ վեհիդ, թէ՛ ոչ պատիւ համարիմ հասարակութեանս, զգրաւականներն տանս այսորիկ. և թէ ոչ բարի օրինակ լիցի այս յապանկելոցն, այլ ջանասցուք ասացի, գումար ինչ արծաթոյ յայլուստ հայթայթել, որպէս ջանացայ ես և հայթայթեցի գումար ինչ արծաթոյ որ ի գնոյ գոհարայ Պարոն Աղանուրի, և որով ստացաք զմուրհակ տանս, ըստ մարթելոյ ժամանակիս և ըստ կարի իմում:

« Ահա այսպէս և այսչափ էր միայն բացարձակ կարծեցեալ ընդդիմութիւն իմ ի խնդիրս յայս, և Ձեր յայնժամ հաւանեալ ընդ այն կարծիսն իմ, բայց յորժամ լուայ և ծանեայ, թէ կարծիքն իմ ոչինչ թուեցեալ են յաչս ձեր, և խիստ այն հանգամանաց Հ. Յովհաննու, տագնապեալ նորա յոյժ ընդ պահանջս պարտուց, եղի ի մտի լռել այսուհետեւ, և ոչ զկարծիս իմ ասել ումեք. զի թէպէտ իմացեալ զանպիտանութիւն իմ ի գործս յայս դադարեցեայ ես աստի, այլ ոչ գիտէի թէ խոտելի իցեն և կարծիքն իմ անգամ:... Վասն որոյ խնդրեմ նախ ի Վեհէդ թողութիւն անգիտութեանս յայսմ, և ապա գրով և որոշ բանիւք հրաման ընդ այս գործ, որպէս կամք և հաճոյ իցեն Ձեզ, զի զերծցի նա ի նեղութենէ իւրմէ, ի պահանջմանց ասեմ պարտուց դպրոցիս և ես ի թախանձանաց նորա, և ի կարծեալ բացարձակ ընդդիմութեանն յայս:...

« Եւ ահա յանցիցս անցելոց հաստատելով հաստատիմ ես ի միտս, զոր և յայտնեցի վեհիդ ի ժամու մեկնելոյ Ձեր ի մէնջ աստի, և զոր երկրորդել այժմ կարեւոր համարիմ, այս է. Եթէ չիցեն կամք հասարակութեանս կարգել զիս վերստին ի պաշտօն վարժարանիս, յոյժ յոյժ շնորհակալ եղէց նմա, վասն ազատելոյ զիս ի հոգոց աստի և ի խղճէ մտացս. իսկ եթէ կամիցի նա հաստատել զիս դարձեալ ի նոյն, խնդրեմ ի նմանէ խոնարհութեամբ, ծանուցանել ինձ յառաջագոյն, թէ զինչ և որչափ ինչ իցէ սահման իշխանութեան իմոյ ի պաշտօնիս յայս, որպէս զի գիտացից, թէ կարիցե՞մ ես արդեօք խոստանալ հասարակութեանս զկատարումն նորին. ապա թէ ոչ՝ հրաժարեցայց ես անտի առանց ինչ տատանմանելոյ հրամանի նորին. քանզի չկամիմ ես և չկարեմ իսկ ընդ-

գէմ ճանաչմանս խնամ և փորձառութեանս առնել ինչ. մանաւանդ յայսմ ժամանակի, յորում տեսանեմ ես յայտնապէս նոր ճանաչումն և զանազան ոգիք, թէպէտ և ոգիքս այսոքիկ չարժեալ և համարձակեալ իցեն ի նոր ճանաչմանէ անտի, որպէս և ճանաչումն այն՝ պատճառ իւր գտեալ և իրաւունս համարեալ զշարժումն և զհամարձակութիւնն ոգւոց անտի... թէպէտ և երկրքեան եւս վասն բարւոյ հասարակաց կործիցին գործել։... Այսչափ ինչ չմնա լիցի ի ժամուս խնամոուն մոաց։ Մնամ միշտ Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 16 Հոկտ. 1846.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Առեալ Գեր. Հիւրմիւզի զվերոյիշեալ թուղթն Հ. Սարգսի, զայրանայ յոյժ յոյժ ընդ համարձակութիւն բանիցն ճըշմարտութեան, և առնէ անդէն պատասխանի նմին, յորում և ցուցանէ յայտնապէս զկնիք բարուց իւրոց, և որով տայ գուշակել նմա զանտի հետեւանսն, որպէս տեսանին հետզհետէ և կատարին ի վախճանի... և որ ունի օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վեր. Տեառն Հ. Սարգսի Աթոռակալ վարդապետի սիրելի ողջոյնիւ խնդալ։

« Յետ տասնօրեայ յամրընթաց և տաղտկալի ուղեւորութեանս, հազիւ ուրեմն յերեկն ընդ երեկս հասեալ ողջամբ մտի ի վանս, ուր ընդ այլ բազմաթերթ նամականին մատուցաւ ինձ և թուղթ Վերապատուութեանդ, գրեալ ի 16 Հոկտեմբերի, զոր և ընթերցեալ, թէպէտ խոնջ տակաւին և վաստակ ի տառապանաց ուղւոյն և տարայնդեալ մտօք, այլ վասն կարեւորութեան իրացն փութամ տալ պատասխանի, պատուիրեալ զի ընթերցջիք զայն և յունկն Վ. Հ. Յովհաննու առանց ծածկելոյ ի նմանէ և գրախեց մի։

« Արդ գիտասջիք նախ՝ զի ոչ Վերապատուութեանդ միայն, այլ և իմ և բովանդակ Հասարակութեանս բացարձակ և ամենաբացարձակ կամք են և պատուէր և հրաման սաստիկ՝ մի

գնել ի գրաւի զտուն դպրոցիդ և ոչ ընդ զանկի միոյ, և Վերապատուութիւնդ յանցաւոր համարեցի առաջի միաբանութեանս, եթէ և Ձերովդ այդր ելով ի գրաւի դիցի տունդ ։

„ Երկրորդ՝ ասացեալ է իմ, ոչ ժխտեմ, ասացեալ է իմ Վ. Հ. Յովհաննու, զի Վ. Հ. Սարգիս հակառակի ի գրաւի գնելոյ զտունն. բայց ոչ ցայս վայր, այլ յաւելեալ է իմ յառաջ բերել և զպատճառսն ցուցեալս ի Վերապատուութենէդ, զորս կամ մոռացեալ իցէ նորա, և կամ լռեալ ։ . . .

„ Բայց ես ընդ այն զարմանամ, զի երկու աւուրբք յառաջ այդր առ Ձեզ գոլով իմ, և գրով և բանիւ պատուիրեալ ըզ-գարձումն մուրհակացն հնդետասան հազար ֆրանքին, և ոչ ոք ի ձէնջ ասաց ինչ. և այն ինչ զատ արտաքս եղեալ իմ ի տեղւոջէդ, և ահա տեսարան նոր բացեալ ինձ այդր զա-ռաջեաւ ։ Եթէ այսպէս և այլ ամենայն պատուէրքն իմ կա-տարեցան և կատարին, յայժ բարիոք և ի կարգի իցեն թերևս այդր ամենայն, բայց ոչ ըստ խորհրդոյ, ըստ կարծեաց և ըստ հաճութեան Միաբանութեանս ։

„ Զարմանամ. զարձեալ թէ Վ. Հ. Յովհաննէս որո՞վ սիր-տոսիւ կարիցէ խնդրել ի Ձէնջ արծաթ ի պէտս ծախուց, զի գիտէ և պարտի գիտել քաջ, թէ ոչ գործակալ, ոչ արկղա-պետ և ոչ իսկ գոնեայ ուղղիչ առժամանակեայ էք դպրոցիդ. նմին իրի այսր ի վանս գրեալ եր զկարօտութիւն իւր և մեալ արծաթոյ կամ պատասխանւոյ ։

„ Զայսոսիկ ի սակաւոլ ժամու գրեալ, վաղիւն կամ ի միւ-սում աւուր կոչեցից ժողով ի խորհուրդ և յորոշումն կարե-ւորագոյն և ոգեսպառ իրաց մեծի դպրոցիդ, զոր վասն սա-րակք թղթոյ տեղացեալք ի Պօլսոյ սասանեցուցեալ էին աստ զընթերցողսն ։

„ Ողջ մաղթեմ լինել Վերապատուութեանդ, և ողջու-նեալ զորս ընդ ձեզն են, մնամ Արգոյ Վերապատուութեանդ

„ Վենետիկ. 24 հոկտ. 1846.

„ Խ. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

„ Արքեպիսկոպոս և Աբբայ. ”

Ընկալեալ Հ. Սարգսի զվերջիշեալ պատասխանին Գեր. Հիւրմիւզին՝ ընթեռնու յունկն Հ. Յովհաննու, ըստ պատուիրանի նորա, որպէս զի ծանիցէ և նա զբացարձակ կամս և զսահման իշխանութեան իւրոյ ցոր վայր հասանէր, և որպէս զի ըստ այնմ շարժեսցի ամենայն ոք ի բանս և ի գործս, հայեցեալ յիշխանութիւն իւր։

Զարմացեալ Հ. Յովհաննու ընդ փոփոխութիւն մտաց և հակառակութիւն բանից Գեր. Հիւրմիւզի՝ ասէ, եթէ ունէր նա իրաւունս, առ իս պարտ էր գրել զայս թուղթ, և ոչ առ քեզ, որ հակառակ էիր միշտ ի գրաւական դնելոյ զտունս. ապա արդարանայ այժմ Հ. Աղեքսանդր ի ճանաչումն իւր և ի դատաստանն զոր յայտ արար առ հրապարակաւ, թէ «Սխալեալ է միաբանութիւնս յընտրութիւն իւր, ընտրելով «զմիամիտ և զանբանական ոք առաջնորդ իւր.» և բանդատեալ նորա յարդարութենէն յայտնէ նմա յայնժամ զճշմարտութիւնն, զգաղտնի խոստումն Գեր. Հիւրմիւզի առ ինքն այսպէս.

«Զի թէպէտ Հ. Սարգսին զանազան պատճառանօք ընդդիմանայ բացարձակ ի գրաւի դնել զտունս, ասէ, այլ ես ընդ հասանելս ի վանս, առաքեցից անտի հրաման ի գրաւի դնել զտուն զպրոցիս ի գտանել փոխ արծաթ։»

Իմացեալ Հ. Սարգսի զայն, անհնարին ցաւի, և խռովալ կորուսանէ զլոյս ակնկալութեան բարեաց հասարակաց, և մխիթարութեան իւրոյ ի նմանէ, տեսանելով ի դնացս նորա զայսպիսի քաղաքավարութիւն. և մինչդեռ այսպիսի ցաւօք և յուսահատութեամբ կայ անդ Հ. Սարգիս, և չգիտէ, թէ զի՞նչ արժան իցէ այնուհետեւ առնել թղթոյ նորին պատասխանի, միանգամայն և մնայ որոշման ժողովոյն զոր խոստանայ ծանուցանել նմա անդէն. և ահա գտանէ և այլ թուղթ մի ի նմանէ, յորում խառնեալ լինի լեղի ընդ քաղցու, քանզի ժողովեալ նորա զցնդեալ միտս իւր՝ խելամուտ լինի ի բանից գրութեան Հ. Սարգսի, թէ անմարթ էր նմա ի ժամուն յայն զկամս իւր կատարել, այս է, զՀ. Ռափայէլ Թրենց ուղղիչ Մուրատեան դպրոցին կարգել. վասն որոյ ժողովով առաջա-

կացից լուրս և հաւանութեամբ նոցին կարգէ զՀ· Սարգիսն ուղղիչ դպրոցին այնորիկ, հանդերձ հաստատութեամբ վերոյիշեալ գաղտնի խորհրդոյ լուրս և խոստմանն որ առ Հայր Յովհաննէս, այս է, հրամանաւ և գրով գործակալութեան ի գրաւ գնելոյ զտուն դպրոցին, թէպէտ և հակառակ առաջին բացարձակ և անհնարացարձակ հրամանի իւրոյ և բովանդակ հասարակութեան... որ ունի օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վ· Տեառն Սարգսի վարդապետի ողջոյն սիրոյ ի Քրիստոս.

« Որպէս նախընթացիւս գրեալ էի առ Վերապատուութիւնդ, ժողովեալ իմ զառաջակայսն ի խորհուրդ վասն իւրոյ Փարիզեան դպրոցիդ, հաստատեցաւ ի ժողովին, զի Վերապատուութիւն ձեր լիցի ուղղիչ դպրոցիդ, ի ձեզ յանձնելով Միաբանութեանս զամենայն զբամական իրսն և զհաշիւ ելի և մտի, զորոց զհամարն ի ձէնջ միայն խնդրեսցէ յայսմ հետէ առանց լսելոյ բողայս կամ պատճառանս ։ Ի ձեզ յանձնէ դարձեալ և զհոգ և զխնամ պահպանութեան կանոնաց եղելոց ընդհանուր ժողովով, զորս և յղեցից ընդ հուպ ։ Ի ձեզ դարձեալ և զառանձին հոգս ծառայից, զկերակրոց և զայլոց ամենայնի որպէս ինչ սահմանեն կանոնք ուղղին ։

« Իսկ Վ· Հ· Յովհաննու գործ լիցէ, իբրև գործակալի ընդ ձեռամբ և ընդ հրամանաւ ձերով հոգալ արտաքոյ զպէտս դպրոցիդ, գնելով ըստ ժամանակին և ուստի պարտն իցէ՝ յարմար գնով զամենայն պարէնս ուտելեաց և ագանելեաց, զի մի ի ձեռս ծառայից մնացեալ իրքդ՝ տուժեսցի դպրոցդ, և զգնելոցն ամենայնի ցուցեալ զհաշիւ ընկալցի զգինսն ի վերապատուութենէդ ։ Դարձեալ պաշտօն նորա իցէ լսել զխոստովանութիւն մանկանց և խնամս ունել հոգևորի նոցա ։

« Այսպէս յերկուս բաժանեալ գործառնութեանց, Վերապատուութեանդ գլխաւ մարթ իցէ ներքնոյն ուշ ունել առտնին բարեկարգութեան դպրոցիդ, և նմա արտաքնոյն. յայտ է, զի որպէս խնդրէ և ակն ունի հաստատութիւնս մի-

աբանական սիրով համաչունչք և միախորհուրդք ի փառս Աստուծոյ և միոյ հասարակաց Մօրս մերոյ Մխաբանութեանս, որոյ չիք մեծագոյն ցաւ, բայց զհարազատ որդւոցն հերձուած ։

« Առաջին գործ իցէ Վերապատուութեանդ դարձուցանել զմուրհակսն (յանուն դպրոցիդ,) ոյր վասն յաւելում առաքել դարձեալ ի հպոյ փրանքս իբրեւ 6,000, և նոյնչափ եւս հայթայթեսցի յետ միոյ ամսոյ ։

« Ամենեքեան ի վանս քաջառողջ են և ողջունեն զՎերապատուութիւն ձեր, և զորս ընդ ձեզ են. ընդ որս և ես ողջ մաղթելով լինել,

« Մնամ Վերապատուութեան ձերում

« Խ. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ ԵՒ ԱԲԲ.

« Անձկութեամբ մեծաւ յնամ լսել ի Վերապատուութենէդ և զկատարումն աւանդելոցն յինէն գրով յելս իմ այտի, որ են՝ Մատամ *** չմտանել ի դպրոցն, զգաղատացին *** ի բաց հանել ի ծառայութենէն, այլովքն հանդերձ ։

« Վենետիկ. 29 Հոկտ. 1846 ։

Իսկ զհաստատութենէ և զպաշտօնէ Հ. Ստեփաննոսի չասնէ նա ինչ յիշատակութիւն ի թղթի անդ իւրում, հաստատեալ և որոշեալ նորա զայն ինքնին յառաջագոյն, և պաշտպանեալ նմա ի վանս Քարտուղարի նորոգ Աբբային, դասակցի իւրոյ, Հ. Գաբրիէլի, անկախ լինել նորա յիշխանութենէ ուղղին, բաւական գոլով նորա առ դաստիարակութիւն մանկանց դպրոցին և առ ամենայն գիտութիւն նոցին . . .

Գտանէ Հ. Սարգիս ծրարեալ ի նմին զգաղղիարէն գիր գործակալութեան իւրոյ և Հ. Յովհաննու, առ ի գրաւականել զտուն դպրոցին, որ ունի օրինակ զայս.

« Կարգել և գրաւականել, եթէ հրամանատարքն պատշաճ

դատիցին, զտունն որ ի փողոցի Պարոն անուանեալ, 12 թը֊ուանշանաւ, յապահովութիւն փոխոցն ։ »

Ընկալեալ Հ. Սարգսի և զվերոյիշեալ երկրորդ թուղթն ի Գեր. Հիւրմիւզէ, հանդերձ գրով գործակալութեան, առնէ նա յայնժամ երկոքին թղթոցն միանգամայն մի և զարժանն պատասխանի, օրինակ զայս .

« Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր իմոյ ողջոյն խոնարհութեան .

« Առեալ անագան ուրեմն զցանկալի լուրն ողջամբ հասանելոյ Գերապայծառ Հօրդ ի վանս, հանդերձ սիրտ իմ ի հոգոց անտի, այլ ցաւեցայ ընդ լուր վշտաց և տառապանաց կրելոց Ձեզ ի ճանապարհին, և առաւել ևս ցաւեցայ և ցաւիմ յոյժ ընդ բանս խռովեալ մտաց Վեհիդ որք ի զարհուրեցուցիչ կարծեցեալ թղթոց տարափանմանն տեղացելոց ի Պօլսոյ և սասանեցուցանելոց զընթերցողսն այդր ի վանս ։

« Այո՛ Գերապայծառ Տէր, ընդ այս առաւել ցաւեցայ և ցաւիմ ես յոյժ յոյժ, քան ընդ կրեալ վիշտ և տառապանս ճանապարհին, որք հանգստեամբ մարմնոյ մոռացեալ լինին, իսկ վէրք սրտի՝ ոչ երբէք այնու բուժին, և հաստատութիւն այսմ, ահա այն յարդեանց բանից թղթոցդ գրելոց առ իս ի 24 և ի 29 ամսեան անցելոյ, զոր և ցուցից և խելամուտ արարից զՁեզ ի սմին, յառաջ բերելով զբանս թղթոցդ մի առ մի, և քննելով զայն անաչառութեամբ, շարժեալ միայն ի ցաւոց սրտիս որ ընդ ամենայն վնասն հասարակութեանդ ։

« Արդ գիտասջիք նախ՝ աստ, զի ոչ Վերապատուութեանդ
« միայն, այլ իմ և բովանդակ Հասարակութեանս կամք են
« և պատուէրք և հրաման սաստիկ մի՛ դնել ի գրաւի ըղ֊
« տուն դպրոցիդ, և ոչ ընդ դանկի միոյ, և Վերապատ֊
« ուութիւնդ յանցաւոր համարեսցի առաջի միաբանութեանս,
« եթէ և ձևրով այդր նյով ի գրաւի դիցի տունդ ։ »

« Հարցանեմ ես արդ, թէ ուստի իցէ այդ երկիւղ Ձեր,

կամելոյ իմ զտունս ի գրաւի դնել, վասն որոյ և ի ձէնջ այսչափ սաստիկ հրաման առ իս եղանէ. ի պատճառս՞ց արդեօք կարծեացս տուեալ իմ այսր. ահա դուք ինքնին վկայէք ի թղթի ձերում, թէ ոչ էին ինձ կամք ընդ այն բնաւ. կամ ի բանից թղթո՞յ իմոյ գրելոյ առ Ձեզ ի 16 անցելոյ. ո՞չ ապաքէն յայտ արարեալ եմ ես անդ զկամս ընդ այս գործ այսու բանիւք, թէ « Եղի ի մտի լռել այսուհետև և ոչ ընդ« կարծիս իմ ումեք ասել : » Ապա յայտ է ի բանիցս աստի, թէ չկայր ի կողմանէ իմմէ ոչ երկիւղ և ոչ կասկած ձեզ ի գործս յայս ձեռնամուխ լինելոյ իմ... ապա ոչինչ հարկ ի վերայ կայր, Գեր. Տէր, խռովեալ մտօք և այնպիսի տագնապաւ զայս թուղթ գրել Ձեր առ իս, և ի զուր ցաւեցուցանել զսիրտ իմ:... Տեսանէ՞ք զհաստատութիւն որ յարդեանց բանից առաջին հատուածոյ թղթոյդ. ցուցից Ձեզ զայն և յոյլ հատուածոյ նորին կարգաւ:

« Երկրորդ՝ ասացեալ է իմ, ասէք, ոչ ժխտեմ, ասացեալ « է իմ Վ. Հ. Յովհաննու, զի Վ. Հ. Սարգիս հակառակի « ի գրաւի դնելոյ զտունդ, բայց ոչ ցայս վայր, այլ յաւե« լեալ է իմ յառաջ բերել և զպատճառսն ցուցեալս ի Վե« րապատուութենէդ զորս կամ մոռացեալ իցէ նորա և կամ « լռեալ: »

« Հարցանեմ ես և ընդ այս. արդ եթէ հաւանեալ էիք դուք ընդ տուեալ պատճառսն իմ և հաստատեալ ի կամս և ի բացարձակ կամս ձեր, որպէս և յայտ առնէք բանիւք թղթոյդ, հա՞րկ էր արդեօք զհակառակութիւն իմ ընդ այն ծանուցանել Հ. Յովհաննու.... Կարծեմ թէ չկայր ինչ հարկ, և ոչ իսկ վայել և պատշաճ: Ապա զի՞նչ օգուտ անտի, եթէ ոչ տհաճութիւն Հ. Յովհաննու որ ընդ իս, և իբրաւամբք արդեօք, տագնապեալ նորա ի պահանջողաց պարտուց դըրբոցիս, և զիս պատճառ այնմ համարեալ, զոր և գուշակեցի ես յայնժամ ի գլխոց նորա, և զոր ստուգեցի ապա ի բանից իւրոց: Տեսանէ՞ք զարդիւնս բանից թղթոյ ձերոյ առ իս, տեսջի՞ք այժմ և զայլ մեծամեծս և զարմանալիս անտի, որք ի միկիթարութիւն և ի քաջալերութիւն սրտիս:

« Բայց ես ընդ այն զարմանամ, աւէք, զի երկու աւուրբք
« յառաջ այդր առ ձեզ գոլով իմ, և դրով և բանիւ պատ-
« ուիրեալ զարձումն մուրհակացն հնգետասան հազար ֆր-
« րանքի, և ոչ ոք ի ձէնջ ասաց ինչ, և այն ինչ զոտս
« որտաքս եդեալ իմ ի տեղւոջէդ, և ահա տեսարան Նոր
« բացեալ ինձ զառաջեաւ։ Եթէ այսպէս և այլ ամենայն
« պատուէրք իմ կատարեցան և կատարին, յոյժ բարւոք և
« ի կարգի իցեն թերեւս այդր ամենայն, բայց ոչ ըստ խոր-
« հրդոյ, ըստ կարծեաց և ըստ հաճութեան միաբանու-
« թեանս։ »

Արդարեւ Գեր. Տէր, տեսանեմ և ես զի տեսարան Նոր բացեալ ձեզ այսր զառաջեաւ, և զի տեսիլն և արարողքն որք ի մէն անախորժ և անհաճոյ են ձեզ ամենեւին... այլ թէ իցե՞ն, և զի՞նչ իցեն իրաւունք և պատճառք տհաճութեան ձերոյ յայսմ, համարձակիմ ես արդ հարցանել և քննել զայն անաչառութեամբ. բայց աղաչեմ մի ինչ ծանր թուեսցին Ձեզ համարձակութիւնն իմ և անաչառ քննութիւնս, որք վասն բարւոյ հասարակութեանդ են միայն, և ոչ առ յանդգնութեանս, կամ առ մնապարծութեանս ինչ։

Եւ արդ հարցանեմ Ձեզ նախ՝ թէ նա որ զամս եօթն աշխատեցաւ օգտով չափ ի ձեռս բերել զարծաթն դպրոցիս, և ամենայն զգուշութեամբ և չահեկանութեամբ անցոյց զայն ի ձեռս միաբանութեանդ, և թէ նոքա որք ի քսան ամաց հետէ բազում հոգովք և տառապանօք աշխատ եղեն և լինին յարդ, դնելով զարծաթն զայն ի վերայ բեղմնաւոր երկրի, և հաստատելով նախ այդր և ապա այսր զդպրոցս, և պատճառք փոխադրութեան սորին, առ ի պահել զիրաւունս և զպատիւ Հասարակութեանդ, ի Ներկայութեան հանգուցեալ Գեր. Սուքիաս Սոմալի և պատուիրանօք նորի՞ն կատարեցին նոքա զայն ամենայն։ ... Ջկար զօրութեան և յարմարութեան հանդուցելոյն ի գործս յայս դպրոցիս գիտել գիտեն ամենեքեան, նոյնպէս և զխոնարհութիւն նորա, զվստահութիւն նորա յայլս, և զճանաչումն արժանեացն այլոց առանց խտրութեան։ Նւ միթէ ըստ խորհրդոյ, ըստ կարծեաց և ըստ

հաձուրեան միաբանութեանց վճարեցաւ գործն այն։... Իսկ թէ զինչ կարեւոր խորհուրդ, ո՞րպիսի օգտակար կործիք, և քանի՞ համութիւն միաբանութեանդ ի խնդիրն հրատակի դպրոցիս, և այն յետ երեքամեայ վիճոյ դատաստանի և փաստուոր յաղթութեանս... ահա ունիմ ես զհաւաստին ի ձեռինս, ի յիշատակ արդեանց իւրոց ի գործս յայս... Նոյնպէս և զհաւաստիս կարծեաց և վարկի հանգուցելոյն որ զմէնջ ի խնդիրն փոխադրութեան դպրոցիս, և զոր յիշատակեցից ի պատմութեան վարժարանիս, առ ի ծանուցանել զարգիւնան իւրաքանչիւր։...

․․ Երկրորդ՝ եթէ Նոքա որք զայնչափ և զայսպիսի կարեւոր և մեծամեծ գործս սկսան և կատարեցին, և որք զամենայն ինչ եթէ այգր և եթէ այսր բազում աշխատութեամբ և արիութեամբ քաջիոք և ի կարգի եղին, ընդէ՞ր սիրտք և ձեռք նոցա բոլորովին լքեալ կան այժմիկ, միանգամայն և անպիտանացան նոքա ի գործս յայս աւանիկ։... Եւ վասն է՞ր չեղեն և չեն վեհիդ հաճոյ արարք նոցա ցարդ, այլ և կասկածէք իսկ զքաջիոք կարգացն որ ի նոցանէ առտ։... Վերստին աղաչեմ զՁեզ, Գեր. Տէր, ներել դարձեալ կարի իմն համարձակութեանս, որ վասն բարւոյ Հասարակութեանդ է, և վասն վնասուց նորին, որք եղեն ցարդ և որք լիցին ապա անհրաժեշտ... վասն զի չափաւոր է տեսութիւն ձեր որ զայլոց, և չափազանց վարկդ որ զձերն, և զդատակցացդ միայն... վասն այսորիկ անհաճոյ են Ձեզ արարքն այլոց և անպիտան խորհուրդ և կարծիք նոցա միանգամայն... և վասն այսորիկ լքումն սրտի և ձեռաց նոցա, և վնաս անշուշտ բարեաց հասարակաց ազգիս։ Եւ այսմ հաստատութիւն, ահա դանդաղութիւն ձեր ցարդ ի կամաւոր որոշումն ուղղի դպրոցիս. վասն զի չկարէք դուք զայլ ոք յարմար և արժանի տեսանել ի պաշտօնս յայս, բաց ի քոյոցդ... թէպէտ և ծածկէիք դուք զայս զանազան կերպարանօք, մերթ խոհական կարծեցեալ ականածութեամբդ յայլոց ումանց, և մերթ ցուցանելով թէ չկամիք դուք յանձնէ ձերմէ առնել ինչ, այլ զամենայն ինչ խորհրդով աստաջակայիցդ, որպէս և ասացիք ինձ այգր

և այսր միանգամ և երկիցս։ . . . Թէպէտ և ես լուեցի յայնժամ համբերութեամբ, բայց համարձակիմ այժմ հարցանել խոնարհութեամբ, թէ չէ՞ր և չիցե՞մ ես մին ի կարծեցեալ առաջակայիցդ. ապա ընդէ՞ր ոչ հարցէք յինէն խորհուրդ և կարծիք ընդ այս . . . մանաւանդ թէ գինքնամատոյց կարծիսն իմ և գկարեւոր խորհուրդս ընդ այլ իրս արհամարհեցիք և խոտան համարեցայք։ . . . Թէպէտ և այս այսպէս, այլ տակաւին զարմանայք դուք զանգատելով իմն ի թղթիդ որ առ իս այսպէս. «Բայց ես ընդ այն զարմանամ, զի երկու աւուրբք յա-« ռաջ այգր առ ձեզ գոլովն իմ, ոչ ոք ի ձէնջ ասաց ինչ։ »

« Դարձեալ՝ զի եթէ չկամիք դուք յանձնէ ձերմէ առնել ինչ, այլ խորհրդով առաջակայիցդ, ապա զիա՞րդ հանիք դուք լոկ հրամանաւ ձերով զուղղիչն Ռափայէլեան վարժարանին ի պաշտօնէ անտի խրմէ։ Ո՞ր առաջակայի խորհրդով արարիք դուք զայն, և կամ վասն ինչ պատճառաց հանիք զնա անտի։ Եթէ իրաւացի են պատճառքն այնոքիկ, ապա զիա՞րդ խորհիք և կամիք դուք կարգել զնա ի նոյն պաշտօն և ի ծանր քան զայն։ . . . Եւ այսմ եւս հաստատութիւն, ահա ազդարարութիւն իմ առ ձեզ յայնժամ, թէ պարտ էր ձեզ ընդ այս կամքդ ակն ածել ի քննութենէ ոմանց. այլ զի՞նչ արարիք ինձ պատասխանի. Նեղանալով իմն ասացէք. «Միթէ ակն « ածիցե՞մ ես և չկարիցե՞մ առնել ինչ ըստ կամաց իմոց։ » Թէպէտ և կարէի ես յայնժամ և ի դէպ իսկ էր առել ձեզ, թէ՝ ապա զիա՞րդ խոհական կարծեցեալ ակնածութեամբդ յոմանց զանգատեցայք ցարդ որոշել զայլ ոք ուղղիչ դպրոցիս . . . բայց լուեցի ես համբերութեամբ տեսանել զվախճանն . . . և տեսի ես զայն կարի տրտմութեամբ։ . . . Տեսանէ՞ք դուք, Գեր. Տէր, զհաստատութիւն բանիցս ճշմարտութեան։ . . .

« Սակայն և այնպէս, կասկածէք դուք տակաւին ընդ բարիոք կարգաւորութիւնն անառաջնորդ վարժարանիս, ասելով, « Եթէ այսպէս և այլ ամենայն պատուէրքն իմ կատարեցան « և կատարին, յոյժ բարիոք և ի կարգի իցեն թերեւս այգր « ամենայն։ » Ասեմ ես, թէ ընդ այն մի՛ ինչ տարակուսիցէք, եթէ և այլ ամենայն պատուէրքդ այսպէս լիցին։ . . .

« Յառաջ բերից արդ և զայլ հատուած բանից Թղթոյդ և քննեցից զայն ըստ կարգի բանիցս ։

« Զարմանամ զարձեալ, ասէք, Թէ Վ. Հ. Յովհաննէս որով
« տիտղոսիւ կարիցէ խնդրել ի ձէնջ արծաԹ ի պէտս ծա-
« խուց. զի գիտէ և պարտի գիտել քաջ, Թէ ոչ գործակալ,
« ոչ արկղապետ, և ոչ իսկ գոնեայ ուղղիչ առժամանակեայ
« էք դպրոցիդ. Նմին իրի այսր ի վանս գրելոց էր զկարօտու-
« Թիւն իւր, և մնալ արծաԹոյ կամ պատասխանւոյ։ »

« Զարմանամ և ես Գեր. Տէր, ոչ այնչափ ընդ մոռացուԹիւն ձեր, որ զփոխանակ ուղղչի պաշտօնիս, գիտելով իմ քաջ, Թէ յոչ կամացդ ետուք ինձ զպաշտօնն զայն, Թողեալ զամփոփելդ այնր ապա... այլ ընդ յիշատակուԹիւնդ զայնմանէ, գրով իսկ ծանուցեալ ձեր մերոցն աստ. վասն որոյ չէր պարտ զայն ի Թիւս պակասեալ տիտղոսացս դնել և յիշատակել բնաւ. Թողից ասել և զայլ հանգամանացս որ ի գործս և ի պաշտօնս յայս, Թէ և ոչ արդեամբք, և ըստ տեսուԹեան ձերոյ, այլ գոնէ ըստ տեսուԹեան և ըստ կարծեաց հասարակաց։ Շատ համարիմ ընդ այս այսչափ միայն առնել պատասխանի, զի որպէս ի մի բառն սորին բովանդակին ամենայն հատուածոյ բանից հոգին, նոյնպէս և սովաւ հաստատի ճշմարտուԹիւն բանիցս բովանդակ պատասխանւոյս ։

« Եկից ապա յառաջ բերել զվերջին հատուած բանից Թղթոյ վեհիդ, որ ունի այսպէս.

« Զայսոսիկ ի ստիպող ժամուս գրեալ, վաղիւն կամ ի միւ-
« սում աւուր կոչեցից ժողով ի խորհուրդ և յորոշումն կա-
« րեւորագոյն և օգտակար իրաց մեծի դպրոցիդ, որ վասն
« տարափք Թղթոց տեղացեալք ի Պոլսոյ, ստամնեցուցեալ
« էին զընԹերցողսն ։ » Թէպէտ և որպէս վերագոյն ասացի Թէ բովանդակ հոգին ամենայն բանից Թղթոյ վեհիդ ի մի յայն բառն բովանդակեալ, և իմ ընդ այն և ընդ ամենայն միանգամայն հատուցեալ, աւելորդ էր ինձ արդեօք առնել և այս վերջին բանից Թղթոյդ պատասխանի. սակայն՝ բռնադատեալ ի խղճէ մտացս և ի ցաւոց սրտիս չկարեմ լռել ընդ անիրաւուԹիւնս որ վասն աղքատաց ազգիս և ընդ ամենայն միասն

Հաստատկութեանս. վասն որոյ կամիմ հարցանել և քննել զայս անաչառութեամբ ։

«. Արդ՝ հարցանեմ նախ՝ թէ զի՞նչ իցեն օգտակար իրք մեծի դպրոցիս, և թէ ընդէ՞ր օգտակար իցեն այնք. և թէ յորո՞ց, և առ ի՞նչ իցեն տարափք թղթոց գրեալք առ ձեզ ի Պօլսոյ. և թէ՝ ընդէ՞ր սատանեալք իցեն ընթերցողքն ։ Կարծեմ ես, թէ օգտակար իրք մեծի դպրոցիս, ակնածութիւն վեհիդ իցէ յընտրութիւն ուղղի նորին, ըստ տեսութեան և ըստ փորձի ձերում, և գժուարութիւնն բարեկարգութեան տեղւոյս, ըստ կարծեաց և ըստ պատուիրանաց ձերոց ։ ... Եւ տարափք թղթոցն ի Պօլսոյ, ամբաստանութիւնք զվերակացուաց դըպրոցիս, գրեալք ի մերայնոցն անտի, լուեալք զայն ի խրմար ապաստարէ մանկանց եկելոց այսր, իբրեւ ի հաստատարեմ և յառաքինի տանէ, և ընթերցեալ մերոցն այդր՝ սատանեալք իցեն յոյժ, և հաւանեալ վեհիդ ընդ այն խռովիք յո՛յժ յոյժ, վասն որոյ և գրէք առ իս տագնապաւ զայս և զայսպիսի թուղթ ։ ... Թողից սակս և զայլ պատճառս այսպիսի գրութեանդ առ իս ։ Այո՛ զայսոսիկ կարծեմ, Գեր. Տէր, օգտակար իրք մեծի դպրոցիս ... չունելով ձեր ցարդ զայլ ինչ տեսութիւն յայն, և զայլ ինչ փոյթ և հոգ ընդ այն ։ ... Ահա բովանդակութիւն խնամոց օգտակար բանին, միանգամայն և ամենայն բանից թղթոյդ ։ Մնայ ինձ արդ մի առ մի մանր հարցանել և առնել նոցին զարժան պատասխանին, հանդերձ բանաւոր առաջարկութեամբ և կարեւոր պայմանօք ։

«. Եւ արդ՝ հարցանեմ ես նախ՝ թէ ուստի՞ էր սրդչափ ակնածութիւն Ձեր, և յորո՞ւմ դժուարութիւնդ, վասն որոյ զանգատեցէք ի չորից ամսոց հետէ որոշել զք ի մէնջ ուղղիչ դպրոցիս ։ ... Եթէ յառաջակայից էր այդ ակնածութիւնդ, ո՞չ ապաքէն նոյն առաջակայքդ են յորոց ակնածէիք երբեմն որոշել զայն ոք, զոր և որոշեցէք այժմ ։ ... Եւ եթէ դժուարին էր ձեզ մինչեւ ցարդ գյարմար և զբաւական ոք գտանել և կարգել յայս պաշտօն, վասն որոյ և հարկաւորեցայք ի փոխճանի զանյարմարն և զանբաւականն վերստին հաստատել ի նոյն, ըստ խնամոց բանից գրութեան ձերոյ առ իս որ

ի 24 և ի 29 անցելոյն, ո՞չ ապաքէն բաւրք լինէր, որպէս և խոհեմութիւնն իսկ ցուցանէր, տանել ձեր զայդ մինչեւ անհամեալ էր ամենայն ինչ, և կամ զոնեայ աւուրբք ինչ յառաջ մինչեւ գրեալ էիք առ իս զմխիթար և զքաջալեր թուղթդ որ ի 24 անցելոյն, թէպէտ և յայտնի են այսօցիկ պատճառքն, և ես հատուցի ընդ այն ըստ բաւականին ։

« Երկրորդ՝ միթէ արժա՞ն էր մերոցն ի Պօլիս հաւատալ չարախօսութեանցն որ ի բերանոյ խռժար սպասաւորի միոյ վարեցելոյ սատի վասն անօրէն գործոյ իւրոյ. և թէ՝ զի՞նչ չարախօսութիւնքն անօրինին իցեն զվերակացուէ դպրոցիս, լուարուք զգրութիւն Հ. Անանիայի Ճէլալեան, որ ունի այսպէս։

« — Չի խոտիւ պատուիրեալ իցէ աստ մանկանց դըպրո-
« ցիս, զօր ամենայն անձամբ յարդարել զիւրաքանչիւր ան-
« կողինս ծանուծս և մեծամեծս, և վերակացուի նոցա ոչ
« երբէք փոյթ է նմա վասն կերակրոյ մանկանցն, և այլն ։
« Ընդ առաւօտս շրջեալ ի սենեակս մանկանցն տայ նոցա
« յարդարել զանկողինս իւրեանց և զյարդարելոցն հարցեալ
« և իմացեալ զի մանկագունից ոմանց օգնեցին ծառայքն,
« զայրանայ, կշտամբէ և պատուհասէ. ի ծառայութիւն և
« ի բեռնակրութիւն դաստիարակին դոքա, սակայն ոչ բիրտ
« զօրականք, և ոչ գեղջուկ նաւաստիք, թշուառական դերիք
« ազգի մարդկութեանս ոչ բռնադատին ի տեարցն յայդպիսի
« ծառայութիւն յայն մատաղ տիս ։

« Այլ զայս ի լռելոյ գիտեմ, թէպէտ և յականատեսից. իսկ
« զոր ասելոցս եմ, վկայեն համօրէն մերքն տաղտկացեալք
« ի քրթմնջանաց ծնողաց մանկանցդ և ի սուտ համբաւոյ
« հիւանդութեան և մահու ոմանց ի նոցանէ. քանզի յորմէ
« հետէ մանկտիդ զոսս իւր եդ ի Փարիզ, միանգամ և եթ
« ընդ Եանքօ սպասաւորի և ի յորդորանաց նորա, նամականի
« արար առ իւրսն ։ . . . Ի զուր զամօթալին չքմեղութիւն դնել
« մեզ առաջի տեարց մանկանցն, թէ քանզի շնորհեցաւ մեզ
« ձրի առաքել զնամականին, յամենայն թղթաբերս սակաւ
« տան նոցա զի մի տմարդութեամբ ինչ ազահել կարծի-
« ցիմք ։ »

« Ահա չարախօսութիւնքն անօրինին Եանկօֆ, և պատկառելի չքմեղութիւն Հ. Անանիայի։ Իսկ ի Հ. Միքայէլէ գիտեմ զինչ առ Ձեզ գրեալ, թէպէտ և չընթերցայք զայն առաջի իմ, առ ի չլսել յինէն զարժանն ընդ այն դատաստան։

« Եւ միթէ վայել իսկ էր նոցա առեալ գրել ձեզ զայս և զայսպիսի ինչ, հանդերձ խիստ և յանդուգն քննութեամբ, և կամ պա՞րտ էր մերոցն այդր յընթեռնուլ զայն հաւատալ և սատանիլ ընդ այն… և մանաւանդ վեհիդ արժա՞ն էր արդեօք հաւանիլ այնմ և խռովիլ այնչափ՝ մինչև խռովեցուցանել և ցաւեցուցանել զիս այսչափ։ Ականատես գոլով ձեր համգամանաց տեղւոյս և վիճակի մանկանց դպրոցիս,… ընդէր ոչ այդպէս դիւրաւ հաւանեցայք դուք զանգատանաց գրութեանն որ ի մերոցն իսկ անտի, ընդ անպատեհ գնացս Հ. Անանիայի, որով վարեալ էր նա ընդ Հ. Բարսղի, և մանաւորապար գրութեանն Հ. Սրապիոնի, որ զգոյշ է յոյժ ի բանս իւր և հաւատարիմ ի գրութիւնն։ Այլ խոհեմութեամբ պարտ վարկայք լռել ի ժամուն մինչև ստուգել զճշմարտութիւնն. և երանի՛ թէ այնչափ միայն, և ոչ զանհաւատալին մտաբերէիք և զՀ. Անանիայն արդարացուցանէիք։

« Տեսանէ՞ք Գեր. Տէր, զարդիւնս չափաւոր տեսութեան ձերոյ որ զայլոց, և չափազանց վարկիդ որ զքոյոցդ և զոր ընդ այն համարձակութիւնս, բռնադատեալ ի խղճէ մտացս և ի ցաւոց սրտիս որ ընդ միաս Հասարակութեանդ։

« Այլ գիտեմ զի առիցէք, որպէս և առացիք ինձ երբեմն այդր և այսր, և որպէս լուայ ապա ի թղթոյ Հ, Անանիայի, թէ ծնողք են գործակալ և ոչ յանձնչանեից ումանց, վասն որոյ ի լսել ուստեք յորոց և իցէ անձանց զկարօտութիւն ինչ և զնեղութիւն մանկանց իւրեանց, խռովին ցաւին և ի տրտունջ զմէնջ բերին, հանդերձ ծանր մեղադրանօք. և թէ մերոցն որք ի Պօլիս տեսեալ միշտ զխռովութիւն և զցաւս սրտից նոցա, և լուեալ անդադար զտրտունջ և զգանգատ ի բերանոյ նոցա զմէնջ, չկարեն տանիլ և տաղտկանան յոյժ ընդ այն. և զի չունելով բաւական պատճառս յարդարացուցանել զերդարս իւրեանց, զվերակացուն դպրոցիս, բողքեն գրով

առ Մեծաւորն իւրեանց ի վանս, զի դարման տարեալ Նորա պակասութեանն որ ի վարժարանս, ազատեսցին ինքեանք ի քրթմնջմանց տեարց մանկանց ։

« Ասեմ ես առ այս նախ՝ եթէ արդարեւ ծնողք մանկանց դպրոցիս ոչ յաննշանից ումանք են, ապա զի՞արդ ի կարգս աղքատաց դասեցին զնոսա, ձրի ամենեւին դաստիարակել զմանկունս նոցա ի դպրոցիս աղքատաց, և ո՞րպիսի խղճիւ մտաց վկայեցին որք վկայեցին, թէ չկարեն նոքա և ոչ զքառորդ մասն տարեկան ծախուց մանկանց իւրեանց հատուցանել, մանաւանդ թէ և ումանք ի նոցանէ և ոչ զկարեւոր զգեստիկս մանկանց իւրեանց կամեցան հայթայթել ։ Ապա յայտ է, զի աչառութեամբ և խաբէութեամբ ընտրեալք և վկայեալք են սոքա, վասն որոյ և անիրաւութիւն յամենայն կողմանց, յափշտակելով սոցա զիրաւունս այլոց, զորս և զաղքատ մանկանց կարօտելոյ ազգիս ։

« Երկրորդ՝ եթէ տեղեակ լիցին մերքն հանգամանաց դպրոցացն որք ի Փարիզ, և վիճակի մանկանցն որք ի նոսին, թէ ո՞րպիսի են բնակարանքն, կերակուրքն զգեստք, և պաշտօնք նոցին. և եթէ անտեղեակ են այսոցիկ, որպէս և գիտեմ, մոռացեա՞լ լիցին արդեօք զվիճակ մանկութեան իւրեանց որ երբեմն այգր ի վանս։ Միթէ սպասաւո՞րքն յարգարէին զանկողինս իւրեանց... և մի՞թէ փառաւո՞ր էին բնակարանք և զգեստք, և առաւել կերակուրք իւրեանց քան զսոցայն ։

« Ամենեքեան որ ի քաղաքացւոց և յերեւելեաց աստի, որոց միանգամ դէպ եղեւ տեսանել զվարժարանս, զարմացան ընդ կոկմութիւն ամենայն իրաց և ընդ լռութիւն ամենայն պիտոյից մանկանց սորին, և գովեցին զմեզ յոյժ ։ Իսկ ի հարցանել ումանց ցմեզ զտարեկան թոշակէ իւրաքանչիւր մանկանց դպրոցիս, և ի պատասխանել մեր թէ ձրի ուսանին մանկունքն ի սմին, զարմացան նոքա ընդ այն առաւելապէս, և ասացին՝ թէ յայսպիսի դպրոցի և ի Փարիզ քաղաքի, առ սակաւն պարտ է հատուցանել իւրաքանչիւր մանկանն 4,000 ֆրանք ի տարւոջն ։

« Այլ ոչ գիտեն նոքա, թէ ծնողք մանկանց դպրոցիս ոչ

միայն չէին գոհ ընդ այն, այլ և խռովին և ցաւին ընդ վիճակ որդւոց իւրեանց աստ, և ի տրտունջ զմէնջ բերին, հանդերձ ծանր մեղադրանօք. և զի՛ մերքն որք ի Պօլիս, և որք ի Վենետիկ, հանդերձ Առաջնորդաւն իւրեանց կարեկից լինին ցաւոց նոցա, և խրատուն տանն նոցա յառաւելլինչ պահանջանս իւրեանց ի մէնջ ։ Իսկ թէ զինչ պատճառ այսոցիկ, սասցից զայն աստ ։

« Երրորդ՝ եթէ այսչափ ամենազգած են սիրտք մերոցն, մինչև չկարեն տանիլ խռովութեան և ցաւոց սրտից այլոց, ապա զիա՞րդ այնչափ խիստ եղեն այնք ի խոցել զսիրտս եղբարց իւրեանց, վերակացուաց դպրոցիս... և եթէ չունին դոքա պատճառ յարդարացուցանել զեղբարս իւրեանց, ունէի՞ն ապա բաւական խրատուն դատապարտելոյ զոսա... և այն՝ ամբաստանութեամբ խրվար սպասաւորի միոյ վարեցելոյ աստի վասն անօրէն վարուց իւրոց, որոյ ոչ միայն չէր պարտ հաւատալ բանից, այլ և ոչ արժան էր ի բերան անգամ առնուլ զայն, թո՛ղ թէ ի գիր անցուցանել և այդր բանիւք առ Ձեզ առաքել, հանդերձ բարդութեամբ նախատական (բարբարոս և անօրէն վարուք,)... որովք ապա յայտ առնեն դոքա, թէ քանիո՞ն իցեն տեսութիւն և վարկ իւրեանց որք զվերակացուաց դպրոցիս, զեղբարց իւրեանց ։

Թողից ասել զչափոյ սիրոյ իւրեանց, և որով յայտնի ցուցանեն դոքա, որպէս և ծնողք մանկանց դպրոցիս, այնչափ պահանջանօք իւրեանց, թէ հանդուցեալ բարերարն թողեալ իցէ զհրիտակն դպրոցիս իբրև սեփական ժառանգութիւն ուղղափառաց ազգիս Պօլսոյ, և զայն՝ ազգականաց, բարեկամաց, և ծանօթից մերոյն միայն, և ոչ որբ և աղքատ մանկանց համօրէն ազգիս, որ յամենայն տեղիս. և թէ՝ վերակացուք դպրոցիս արծաթագին ծառայք իցեն աստ ի ծառայել հաճոյից նոցա ։ Ահա այս են պատճառք, Գեր. Տէր, այսչափ պահանջանացն ծնողաց մանկանց դպրոցիս, և այսպիսի գնացից մերոցն ընդ վերակացուան վարժարանիս, վասն որոյ ցաւիմ անհնարին, և առաւելապէս, զի տեսանեմ զՁեզ հաւանեալ ընդ այն, խրատուն տալով նոցա ի պահանջս իւրեանց, և ի մեղադրութիւնն որ զմէնջ աստ ։

« Եւ եթէ այսոքիկ այսպէս, որպէս և յայտնի և արդեամբք տեսանի, ապա վճարեալ է այսուհետև ամենայն ինչ ի գործս յայս որ վասն իմ ։ Այո՛ Գեր. Տէր, վճարեալ է ամենայն ինչ ի գործս յայս որ վասն իմ. քանզի չիմացայ ես և չիմանամ ընաւ այսպէս զկամս հանգուցեալ Բարերարին դպրոցիս. և զի չաշխատեցայ ես օգւով չափ վասն հաճոյից կամաց քանի մինչաւ նաւոր արանց Պօլսոյ, և ոչ վասն գտանելոյ մերոցն անդ շնորհս և պատիւ առաջի այլոց, ազգականաց և բարեկամաց իւրեանց... այլ վասն որբ և աղքատ մանկանց համօրէն ազգիս Հայոց, ըստ կամաց հանգուցեալ Բարերարին. զոր և ազդեցի վեհիդ բանիւք և գրով, որպէս յայտնապէս երևի ի Նախընթաց Թուղթն իմ առ Ձեզ, գրեալ ի 16 անցելոյն, և ոչ թէ կարծեցեալքն ի Ձէնջ պատճառանքն և բաղայքն, զոր և ակնարկէք ի Թղթի Ձերում որ առ իս... և ոչ թէ յանկութիւն ուղչութեան դպրոցիս, զոր անագան ուրեմն հարկաւորեցայք յանձնել ինձ, որպէս գուշակեմ ի բանից Թղթոյդ գրելոյ առ իս ի 29 անցելոյն ։

« Ահա լրումն պարտուց խղճի մտացս, և հաստատութիւն ցուցոյ սրտիս, իրաւամբք և անաչառ քննութիւնս, որ ընդ անիրաւ գնացսն, յիրաւունս որբ և աղքատ մանկանց կարօտելոյ ազգիս, և ընդ ամենայն վնասն որք եղեն և որք լիցին Հաստարակութեանս ։ Ապա մնայ ինձ արդ լնուլ և զվերջին պարտսն իմ, ըստ ճանաչմանս խմում և ըստ փորձառութեանս, որ ի գործս յայս, զբանաւոր առաջարկութիւնս առեմ և զկարևոր պայմանսն, զորս վերագոյն ասացի առաջի առնել վեհիդ, և որք են այսոքիկ, թէ Ոչինչ զրաւոր կանոնք և բերանով պատուէրք, բաց յԱստուածադիր օրինաց, և պատուիրանաց, արդիւնաւորեցան երբէք առ մարդիկ, առանց փորձառութեան զրողաց և տուողաց նոցին, և առանց պահելոյ զնոսին ։ Եւ յիրաւի՝ քանզի զի՞որդ կարիցէ ընախօս ոք սահման ինչ տալ ծանու խիկք, եթէ չէ իւր առեալ զփորձ ծանուցեանն, և կամ ո՞րպէս կարիցէ աշխարհագիր ոք զքաղաք ինչ նկարագրել ճշգիւ, եթէ չէ իւր տեսեալ երբէք զքաղաքն զայն ։

« Դարձեալ՝ զինչ արդիւնք բերիցեն կանոնքն և պատուէրքն, եթէ չպահիցին այնք, և այն՝ կամ յանպատշաճութենէ իսկ կանոնացն, և կամ ի զանցառութենէ պահողաց նոցին : Եւ դարձեալ՝ ո՞րպէս յուսայ կանոնադիրն թէ պահիցին կանոնք իւր և պատուէրքն, եթէ չհաւատայ ինքն և չվստահի յանձն պահողի նոցին, և եթէ պահիցին այնք, մի՛ տացէ նա զար-գիւնսն կանոնաց իւրոց և պատուիրանաց, այլ պահողի նոցին. ապա աւելորդ են կանոնք իւր և պատուէրքն այնպի-սւոյն, և մանաւանդ՝ յորժամ վստահ եւս իցէ նա ի գնացս պահողին այնոցիկ :

« Իսկ եթէ չպահիցին կանոնքն և պատուէրքն առ անպատ-շաճութեան, հայեցեալ ի հանգամանս տեղւոյն և ժամանա-կին, և կամ առ զանցառութեանն, հայեցեալ ի գնացս պա-հողին, ապա աւելորդ և վնասակար եւս են կանոնքն և պատուէրքն. և յիրաւի՝ քանզի արհամարհութիւն լինի կանո-նադրին, և ստունգանութիւն չպահողին, վասն որոյ և վնա-սակար, որպէս և աչօք իսկ տեսի, և փորձիւ գիտեմ. վասն այսորիկ յիշեցի ձեզ երբեմն առ զասացեալն, թէ « Գիրն « սպանանէ, այլ հոգին կեցուցանէ. » Թէպէտ և Վեհդ զվկա-յութիւնս այս ոչ ի դէպ վարկաւ, և ոչ ընդ բանս իմ հաճե-ցաւ :... Ահա բառ այսմ օրինակի արդիւնաւորեցին, կամ ոչ, գրաւոր կանոնք ձեր և պատուէրքդ որք այսր վասն այսր վարժարանիս որ ի հեռաւոր և անծանօթ ձեզ տեղւս :

« Զքանաւոր առաջարկութիւնս իմ այսպիսի օրինակօք առաջի եդեալ Վեհիդ, եկից այժմ ի կարեւոր պայմանսն, որք են այսոքիկ :

« Արդ՝ եթէ Գեր. Տէրդ, և Ցարգոյ առաջակայքդ եդեալ և հաստատեալ իցէք ի մտի, թէ վարժարանս այս որ ի Փարիզ, և որ շարաթու ճանապարհաւ հեռի է ի Վենետկոյ, պա՞րտ իցէ վարել յամենայնի ըստ գրաւոր կանոնաց և պատուի-րանաց սահմանելոց ի Ձէնջ այտի, առանց փոփոխելոյ յուղղէ դպրոցիս և ոչ նշանախեց մի անտի, և կամ տնօրինելոյ ինչ ինչ ի նոսին, ի պահանջել խոհեմութեան և հարկին. և եթէ տրասցէ նա զայն, արդարեւ պարտաւո՞ր լիցի առաջի աչեղ

առեններն... և թէ տայցէք դուք միշտ իրաւունս ծնողաց մանկանց դպրոցիս ի պահանջս իւրեանց որք ի մէնջ առնի և հաւատայցէք բանից անզգամաց... և գրիցէք խռովեալ մտօք թուղթ յանդիմանութեան առ ուղղիչ վարժարանիս :

Եթէ արդարեւ այսպէս պարտ իցէ, Գեր. Տէր, և այսպէս լիցի այսուհետեւ, ապա յայտ ուրեմն է, որպէս և կարծէիք արդէն, թէ ուղղիչ դպրոցիս անյարմար և անբաւական ոք է ի պաշտօնս յայս, և թէ չունիք դուք բնաւ վարկ զնմանէ, և ոչ վստահութիւն ինչ յուղղութիւն նորա... և ապա անօգուտ են և վնասակար եւս կանոնք ձեր և պատուէրքդ վասն դպրոցիս, որպէս և վերագոյն ցուցի օրինակօք... և յաւելից եւս ասել, ի կանուխ ազդարարութիւն և յառաւել իմն զգուշութիւն Ձեզ, զի զեղծցի նա այնու, և յաւելցին ձեզ առաւել հոգք և ցաւք, ընդ ողեսպառ իրս մեծի դպրոցիս:... Իսկ եթէ վստահ իցէք ի նա, զոր չտեսի ցարդ, ապա աւելորդ են կականոնքն ձեր և պատուէրքդ... և ահա յղումն վերջին պարտուցս, ըստ ճանաչմանս իմում և ըստ փորձառութեանս ի պաշտօնս յայս դպրոցիս :

« Թէպէտ և զայս կարեւոր պայմանքս ակնարկեալ եմ ես ըստ բաւականին ի նախընթացն իմ, որում և մնայի, կամ ըստ ցանկութեանս և կամ ըստ խնդրոյս գտանել ի ձէնջ պատասխանի, այլ Գեր. Տէրդ, պատճառանօք և բաղայք կարծեցեալ զայն ոչ կատարեցէք, ոչ զցանկութիւն իմ և ոչ զխընդիրս. վասն որոյ հարկաւորեցայ ես երկրորդել ձեզ զայն ի սմին, հանդերձ օրինակօք և առաւել յայտնի և պարզ բանիւք, զոր և աղաչեմ ուշադրութեամբ ընթեռնուլ, և լնուլ կատարել զցանկութիւնն իմ, զազատութիւնս ի հոգոց առնի, և կամ զխնդիրս, ըստ վերոյիշեալ բանաւոր առաջարկութեանս և կարեւոր պայմանացս : Քանզի որպէս ի նախընթաց թուղթն իմ առացի թէ չկամիմ և չկարեմ իսկ ընդդէմ ճանաչման մտացս և փորձառութեանս առնել ինչ բնաւ. և վասն այսորիկ չկամեցայ ես ցարդ յայտնել առ այլոց զպաշտօն ուղղչութեանս, մինչեւ ոչ հանդուցջիք զմիտս իմ բովանդակ, և այն՝ գրով և որպէս հաճոյ իցէ Ձեզ և Հասարակութեանդ :

« Ապա չմնայ ինձ ընդ այս այլ ինչ ի ժամուս գրել, բայց եթէ վերստին և կրկին կրկին թողութիւն ի Վեհէդ խնդրել ընդ կարի համարձակութիւնն որ յայս գրութիւնս, և որ, որպէս տեսցի, և դարձեալ ասեմ, լոկ վասն բարւոյ հասարակութեանդ է, և վասն կարեւոր բարեաց կարօտելոյ ազգիս, զոր ակն ունէի և ունիմ տակաւին, ողորմութեամբն Աստուծոյ և ջանիւք Ձերով տեսանել յաւուրս Առաջնորդութեանդ, և ի կենդանութեանս, եթէ ծանեայք զիս արդեօք ցարդ, և եթէ հաւատայցէք արդ ճշմարիտ բանիցս։

« Ահա այսու բարեյուսութեամբ և բազում սիրով ողջունեալ զհամօրէն Վ. Հարս և եղբարս կրօնիս, մնամ միշտ

« Արհիապատուութեանդ

« Ի Փարիզ. 21 Նոյեմբ. 1846.

Խ. և անպիտան ծառայ

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Կարեւոր յաւելուած.

« Յապաղեցի ցարդ զպատասխանիս, մնալով այտի գրաւոր կանոնաց վարժարանիս, խոստացելոց ի Վեհէդ. բայց տեսեալ զի անազանի այն, և զի մի՛ այլ ինչ կարծիցի յապաղել սորին, փութամ առաքել, միանգամայն և ազդ առնել Ձեզ ըստ ժամանակին, թէ տեսարանն հին վերստին բացեալ լինի մեզ զառաջնեաւ։ Քանզի լուաք աստ զի Յովհաննէս Մուրատեան պատրաստի ի դատ մտանել ընդդէմ միաբանութեանս, խափանելով զվաճառումն տպագրածոց գրոցիս, և զընդունելութիւնն եկամտից նորին արդեօք։

« Ահա այս են ոգեսպառ խրթ մեծի դպրոցիս, և ոչ թէ հոգքն որք զչնչին կրաց. տեսէք զինչ ունիք առնել պատասխանի գանգատոյ նորին, որով կարիցէք զառաջն առնուլ չարեացն որք անտի։

« Յիշիցէք արդեօք զիրաւացի տհաճութիւն իմ որ ընդ բանս այն հրովարտակին Գաղղիացւոց արքային, թէ « Ծա-

« խիւք միաբանութեանս հաստատեցաւ սատ ի Փարիզ Մուրատեան վարժարանն. » և ընդ որ թէպէտ ոմանք ի մէնջ այդր ոչ խորհրդածեցին ինչ զայնմանէ, և այլ ոմանք հաճեցան ընդ այն։

« Խմանամք այժմ զբանաւոր պատճառսն հոգալոյս զհաստատութենէ մուրհակի տան դպրոցիս... և զտկար Նախատեսութիւն իմ՝ որ ի թերթի թղթոյ յիշատակարանի անդ յանձնարարութեանդ, յոր յաւելուլ եառ ձեզ զկարեւոր բանսն, զոր և պարտիմք դնել ի մուրհակի տանս, որպէս են ի մուրհակսն կալուածոց սորին. քանզի Նախատեսութեամբ մերով և արդարութեամբս միայն կարեմք յաղթել հակառակորդացս, և ոչ այլ իւիք, որովք և ողորմութեամբն Աստուծոյ յաղթեցի ես երբեմն ի Հնդիկս, թէպէտ և միայնակ և առանց օգնականի ուրուք յեղբարցս, չասացից թէ հանդերձ նոցին հակառակութեամբն։

« Այսօրէնկ բանքս թէթեւ ինչ թուեցան և թուեսցին արդեօք Վեհիդ, գուցէ աւելորդ և ընդունայն եւս, չունելով ձեր ի մտի ոչ զյիշատակս անցեալ նեղութեանցս, և ոչ ի սրտիդ զերկիւղն ապագայ հոգոցս. այլ հոգ ձեր և երկիւղ այն են միայն, չլսել զտրտունջն և զգանգատն ի ծնողաց մանկանց դպրոցիս։ Բայց ոչ գիտէք զի ընդ այդ և այդպիսի հոգ և երկիւղ՝ են տրտունջն և գանգատն հակառակորդաց մերոց. և զի նեղութիւնք որք անդադար հասանեն մեզ ի նոցանէ, հատուցմունք են անուղիղ մատակարարութեանս յիրաւունս աղքատաց ազգիս, հատուցեալ ի նոցունց Տեառնէ։

« Ներեսջիք՝ դարձեալ աղաչեմ, զի ի ցաւագին սրտէ և ի տագնապեալ մտաց են բանքս, և պատճառքն յայտնի և ցաւք անդարմանելի, հայեցեալ ի մատակարարութիւն վարժարանիս։ Վասն այսորիկ և վասն անդադար հակառակութեան Յովհաննու Մուրատի ընդ մեզ, կարեւոր և հարկ համարիմ ես ի տխպ արձանացուցանել զպատմութիւն վարժարանիս, համդերձ հաւաստեօք, սկսեալ ի սկզբանէ անտի ծանօթութեան համ գուցեալ բարերարին Սամուէլ Մուրատի ընդ Մխիթարեան միաբանութեանս, մինչեւ ցայս օր ժամանակի. որպէս զի

գիտասցեն ամենեքեան թէ զի՞նչ իցեն պատճառքն հաստատելոյ բարերարին ի ձեռս Միաբանութեանս զհրիտակն ողորմութեան որ վասն դպրոցին որբ և աղքատ մանկանց Ազգիս Հայոց, և թէ զի՞նչ կամք և դիտաւորութիւն նորա. և թէ զի՞նչ անցք անցին ընդ մեզ և ընդ ժառանգս և կտակակատարս նորա որ վասն բանի պահանջանաց և պահպանութեան իրաւանց աղքատաց ազգիս. և թէ քանի՞ ջանիւք և ոգւով չափ աշխատութեամբ ի ձեռս բերաւ արծաթն այն հրիտակին, և՛ հաստատեցաւ դպրոցս նախ ի Պատաւիոն, և ապա ի Փարիզ. և պատճառ փոխադրութեան նորին անդ. զի մի՛ դիպուածով ինչ յաջողութիւն սորին կարծիցի, և երազ ինչ վայելուչ պալատիս թուիցի, որպէս թուեցաւ ումեմն յորժամ ետես զայս, առանց յիշելոյ ինչ զաշխատութիւն աշխատաւորացն:

« Զայս ասեմ ոչ եթէ գովեստ ինչ և վարձս ի մարդկանէ պահանջել կամիմ, այլ զչափաւոր տեսութիւն ոմանց որ զայլոց և զարժանեաց նոցա կամիմ ցուցանել: Իսկ եթէ զի՞նչ հետեւանք յայսպիսի տեսութենէ, զայն այլոց թողում գուշակել: Այլ երանի՛ թէ մինչեւ ցայս վայր դադարեսցի պատմութիւնս, և մի՛ հանապազորդեսցի այսպէս. քանզի այն ոչ ի պատիւ այլոց, և ոչ ի մխիթարութիւն ինձ լիցի: Ի հաստատութիւն բանիցս ճշմարտութեան, զոր և ազդեցի Վեհիդ ի սմին համարձակութեամբ, յաւելից Ձեզ աստ և զապացոյց նոցին օրինակաւ միով:

« Արդ՝ այս ինչ անուն պատանին, քաջուշեղն և առաքինին կարծեցեալ յաշակերտսն Ռափայէլեան վարժարանին այդր ի Վենետիկ, զկնի ելանելոյ ի վարժարանէդ, որ ահա ամք չորք են և աւելի, թողեալ է բոլորովին և արհամարհեալ զխորհուրդն խոստովանութեան և զտեսութիւն պատարագին, հանդերձ անպատեհ վարուք իւրովք վարելով ի Պօլիս, զոր ականատեսքն պատմեն և զոր ինքն եւս ոչ ուրանայ, իբրեւ փառք ազատամտութեանն իւրոյ համարեալ զայն: Ի գալ նորա այսր ի Փարիզ՝ անցանէ ընդ Վենետիկ, և աւուրս քանի մի անդ կացեալ չհանդիպի բնաւ ի վանս մեր, և ոչ իսկ

ի Ռափայէլեան վարժարանն, ուր զամս հինգ սնեալ և դաստիարակեալ էր, և այն ձրի ամենևին։ . . . Թէպէտ և ըստ դիպաց իմն հանդիպի Հ. Ռափայէլի ի փողոցի ուրեք Վենետկոյ, այլ չտայ Նմա ծանօթս, ըստ պատմելոյ իւրոյ ինձ և յանդիմանելոյ յինէն վասն անզգացողութեան և ապերախտութեան իւրոյ։

« Հասեալ Նորա այսր ի Փարիզ, և ի զրոյցս երբեմն ի մէջ ազգայնոցս աստ որ զմէնջ և զդպրոցաց մերոց այսր և այդր, պախարակէ Նա զայնս առհասարակ, և Նախատանօք խօսի զմէնջ, և մասնաւորաբար զՀ. Ռափայէլէ, զվարժապետէն և զվերակացուէն իւրմէ, որ ամենայն հոգովք և բազում խնամօք տածէր և դաստիարակէր զՆա, և որ այնչափ վարկ առաքինի վարուց ունէր զՆմանէ, մինչև վճէր ընդ ումեմն և համարձակէր ասել, թէ՝ « Ի մէջ ոսկի ափոյ պահել զՆա և իբ-
« րև զուրբ արժան էր յարգել զՆա։ »։ Եւ ի յանդիմանել զՆա ումանց յազգայնոցս աստ, սակս ապերախտութեան իւրոյ, ուսանելով ի դպրոցն Ռափայէլեան, ասէ Նա, թէ ինքն ոչինչ ուսեալ է անդ, այլ զժամանակ իւր վայրապար ծախեալ, ընդ որ ցաւի յոյժ։

« Սա այս ապաշնորհ և անմիտ պատանին եկեալ է աստ իբրև ուսանելոյ աղագաւ զարուեստ բժշկութեան ի համալսարանի քաղաքիս. վասն որոյ հայր Նորա խոստացեալ է և առաքէ Նմա ամի ամի իբրև 4,000 ֆրանք վասն ծախուց իւրոց աստ. Թէպէտ և սա ոչ ուսանի ինչ և ոչ փոյթ ունի զուսմանէ, այլ վատնէ զարծաթն ի տեսարանս և յայլ անարժան տեղիս։

« Երկու եղբարք սորա միանգամայն դաստիարակեցան ի դպրոցս աղքատաց ազգիս, մին ի Մուրատեանն որ ի Պատուիոն, և միւսն ի Ռափայէլեանն ի Վենետիկ, և երկոքին ևս ձրի, առանց ինչ հատուցանելոյ, որոց մին այժմ ի Լոնտոն է և հայր Նորա առաքէ Նմա ամի ամի արծաթ ի ծախս հաճոյից Նորին. և միւսն աստ ի Փարիզ է, որում, որպէս ասացի, առաքէ հայր Նորա իբրև 4,000 ֆրանք վասն այսպիսի ծախուց Նորա։

« Ասիցէ ոք արդեօք՝ թէ ի ժամանակի անդ հայր Նորա չէր

բաւական, և ոչ զմիայն տարեկան ծախս դպրոցին հատուցանել, սակս անյաջողութեանն որ ի վաճառական գործառնութեան իւրում: Ասեմ ես, թէ ոչ այդպէս. քանզի ի ժամանակի անդ՝ երէց որդին նորա շրջէր յԵւրոպա ի Թրեստ, ի Վենետիկ, և յայլուր, և ծախէր և վատնէր զարծաթն նորա խենէշութեամբ իւրով: Այլ վասն զի բարեկամ էր նա Հ. Անանիայի, վասն այնորիկ ձրի ընկալեալ եղեն նոքա երկոքեան եղբարքն ի դպրոցս աղքատաց ազգիս, որպէս և մեծագոյն մասն մանկանց դպրոցիս յայնժամ, և մինչեւ ցայս օր ժամանակի:

« Ահա յօրինակէ աստի տեսանէք զյայտնի ապացոյցն հաստատութեան բանիցս ճշմարտութեան, որ յաղագս անուղիղ մատակարարութեանս մերոյ յիրաւունս որբ և աղքատ մանկանց կարօտելոց ազգիս, և վասն ամենայն վնասուց հասարակութեանս որ յայսպիսի մատակարարութենէ, արդար հատուցումն մեզ ի Տեառնէ նոցա, փոխանակ երախտեացս ապերախտիս, նախատինս և արհամարհութիւն գտանել յաշակերտացս, և փոխանակ հանգստեան մեզ յաշխատութենէս, անդադար վէճ և նեղութիւն ի հակառակորդացս, որպէս և տեսանէք այսօր. թէպէտ ընդ այս չէ ինչ փոյթ ումանց ի մերոյն, զի որք ցարդ չարչարեցան, չարչարեսցին եւս, շատ է զի ինքեանք շնորհս և պատիւ ի նշանաւոր արանց յազգականաց և ի բարեկամաց իւրեանց գտցեն ի Պօլիս: . . . Թողլ՛ց ասել զչափոյ գիտութեան մերոյ և փորձառութեանս ի դաստիարակութիւն մանկանց, որք և արդիւնք են չափաւոր տեսութեան ումանց որ զայլոց, և չափազանց վարկի որ զանձանց իւրեանց, և ահա աստի ամենայն վնասք Հասարակութեանս և Ազգիս միանգամայն: »

Առեալ Գեր. Հիւրմիւզի զվերոյիշեալ պատասխանին ի Հ. Սարգսէ, խռովի ընդ այն անհնարին, և այնչափ վիրաւորեալ նորա ի բանից անտի ճշմարտութեանն, մինչեւ ոմն ի կարեկից առաջակայից իւրոց, Հ. Սամուէլ Սամուրեան, մխիթարէ զնա, յանձն առնլով գրել Հ. Սարգսի թուղթ յան-

դիմանութեան և զգաստութեան, առ ի խնդրել ի Գեր. Հիւրմիւզեն թողութիւն ընդ համարձակ գրութիւն իւր այն։... Այլ թէ զի՞նչ լինին բանք Թղթոյ Հ. Սամուէլի, ահա տեսանին այնք մի առ մի բերեալք ի պատասխանին Հ. Սարգսի, որ ունի օրինակ զայս․

« Յարգոյապատիւ Հայր.

« Զզուցալից Թուղթ ձեր, գրեալ յ2 դեկտեմբերի ամսոյս, ընկալայ յ9 սորին ամսոյ, և ընթերցեալ զայն՝ չզարմացայ ես այնչափ ընդ խռովութիւն մտաց ձերոց, որ ընդ համարձակութիւն բանից պատասխանւոյ իմոյ տուելոյ Թղթոյ Վեհին մերոյ, գիտելով իմ քաջ թէ ծանր է յոյժ լուր ճշմարտութեան ի լսելիս ոմանց, մանաւանդ Վեհագունից. և թէ ըստ կանխակալ սովորութեանն, օրէնք և պարտք են կրօնաւոր հպատակելոցն, չխօսել և չգրել ինչ համարձակ, թէպէտ և ճշմարիտ իցեն բանք նոցա, այլ լռել և հպատակիլ յամենայնի առաջնորդին իւրեանց կոյր հնազանդութեանն․.. և թէ են են ոմանք անտի, որք առ կարճատես անձնասիրութեան և առ ժամանակեայ անձնդիւրութեան իւրեանց՝ ոչինչ փոյթ և հոգ ունին զպատուոյ և զվնասուց Հասարակութեան և Ազգին իւրեանց. .. այլ որչափ զարմացայ ես ընդ խելամտութիւնդ ներհակախօսութեանցս, որք ի պատասխանին իմում անդ, և որոց յիրաւի չէ տարեալ արտի ձերոյ առնել մի առ մի պատասխանի ։

« Կարծեմ ես, Վ. Հայր, թէ յոյժ բարւոք առնէիք դուք ցուցանել ինձ զհակառակութիւն միոյ և եթ բանից, որ ի գրուածն իմ յայն, և այն առաւել դիւրին էր Ձեզ արդեօք, քան զայսչափ յերկար գրութիւնդ, և ինձ յառաւել իմն մխիթարութիւն, քան զտարապարտ կարծիս Ձեր և ըղկասկածդ, որ գրեցադիր ինձ ունաից այսր կամ այդր, յորոց շարժեալ կարծէք բերել իմ ի գրութիւն յայն... և եթէ՝ ի խելամտութենէ այտի ձերոյ՝ և ի կարծեացդ, աւելորդ էր ինձ դրոյդ առնել պատասխանի. այն զի և ասէք իսկ, թէ զի՞նչ և տեսցից ես, ոչինչ ճանաչել զձեզ պատճառանք վշտանալոյս ։

Այլ դի մի կարծիցէք, թէ չունիմ ես բանաւոր պատճառ, կամ այլ նոր և զօրաւոր պատճառք վշտանալոյս, և կամ արհամարհեմ ես զեղբայրական ազդարարութիւնդ, վասն որոյ արարից ամենայն բանից թղթոյդ պատասխանի, թէպէտ և անագան, նեղեալ և խափանեալ իմ ի ծանր ինչ հարրգխոյ։

« Արդ՝ հարցանեմ Ձեզ նախ՝ թէ զի՞նչ իմանայք դուք զՏիպոքրիզմօ (տիրապետական վարչութիւնն,) և թէ ո՞րպէս չէ այն ի միջի ձերում. եթէ իմանայք դուք զբացարձակ իշխանութիւնն, ասեմ ձեզ, թէ էր և է այն արդ ի միջի ձերում, և առաւել սաստիկ յոյժ. զոր և ցուցից ձեզ կարգաւ ի սկին յարդեանց անտի գործոց եղելոց ցարդ. և եթէ չէ՛ այն, ըստ կարծեաց ձերոց, ապա ո՞ր ազգ վարչութեան իցէ ի միջի ձերում. Սահմանադրակա՞նն, զոր և Վ.եհն մեր ինքն ի խօսս իւր բազում անգամ գովէր և քան զայլ ամենայն վարչութիւնս նախադասէր։ Ընդ այս և իմ հաւանեալ և բանից նորին հաւատացեալ՝ գրեցի առ նա համարձակութեամբ զճշմարտութիւնն, և զայն ոչ կարծեօք, այլ հաւաստեաւ և հաստատութեամբ... և այն ինչ մնայի գտանել ի նմանէ պատասխանի մխիթար ըստ վստահութեանս իմում, ահա եհաս վշտալից թուղթ ձեր, յոր և ծանուցանէք զանհնարին խռովութիւն մտաց նորա, և այն այնչափ սաստիկ յոյժ, մինչև չժուժել սրտի ձերոյ տեսանել զնա ձեռնթափ և յուսահատ, և ի ցաւս համակեալ. և տկարութիւն նորին ցարդ ծածկեալ, ահա այժմ ի վեր երևալ, չդնելով ինչ կերակուր ի բերանի, և չգիտել ձեզ զիարդ մխիթարել զնա։

« Արդարև անհնարին ցաւ ձեզ և հասարակութեանս առհասարակ, ըստ նկարագրութեան ձերոյ, ունելով Առաջնորդ մի այնպիսի որ ի լրոյ անգամ համարձակ գրութեան, թէպէտ և ճշմարտութեան, յայսպիսի ազետալի վիճակ հասանէ և հասուցանէ զմիաբանութիւնս։... Երկրորդ՝ թէ զի՞նչ իմանայք դուք զօրէնսդրական վարչութիւնն, մանաւանդ և Վ.եհն մեր որ ջատագով էր նմին. չգուցէ՞ անդ ազատութիւն հպատակացն, թէպէտ և յոչ կամաց, այլ ըստ ճանաչման միտայ խօսել և գրել համարձակ, առանց երկիւղի և ակնածու-

թեան զվարչութենէ, զգնացից և զբարուց վարչաց իւրեանց, որպէս տեսանեմք այսօր ի հզօր և ի բարգաւաճ Պետութիւնս Եւրոպայ, զի՛րդ համարձակ խօսին և գրեն և ի տիպ արձանացուցանեն զվարչութեանց, զգնացից և զբարուց ոչ միայն զպաշտօնէից պետութեան, այլ և զիշխանացն և զթագաւորացն իսկ, որոց պատիւ և իշխանութիւն ոչ իբրև զԱռաջնորդին մերոյ, այլ ժառանգութեամբ և զօրութեամբ են ։ Սակայն նոքա ոչ խռովին, ոչ ձեռնթափ լինին և ոչ ի գրօսանաց իւրեանց դադարին, թող թէ ի կարևոր կերակրոյ զրկիլ սակս համարձակ գրչացն որք ընդդէմ իւրեանց ։ Եւ եթէ չէ այս և այսպիսի վարչութիւնն միաբանութեանս, ապա ո՞րն և ո՞րպիսի իցէ այն. ապա յայտ է, թէ Տիրապետականն, զի այս ազգ վարչութեան է անհաճոյ կամաց և ծանր լսելեաց՝ խօսել և գրել ուրուք ի հպատակաց համարձակ ըստ ճանաչման իւրում մտաց. որպէս և յայտնապէս երևի յարդեանց բանից գրութեան իմոյ և յազդուութենէ անտի որ ի սիրտ Վեհին մերոյ, և այն այնչափ յոյժ սաստիկ, մինչև վնասել առողջութեան իւրում, և յաւելուլ ցաւս Հասարակութեան մերում ։

« — Համարելով, ասէք, գտանել ի դմա զանտարբերութիւն « ինչ յայսպիսի բանս. » այսինքն, գրել իմ առ դա համարձակ զճշմարտութիւնն և լռելով զօրս ընդ այն, որպէս և գրեցի յայն երբեմն առ Հանգուցեալ Սոմալեան, զոր դուք այժմ ծածկեալ վերս կոչէք, չգիտեմ զի՞նչ մտօք . . . և զոր քննեալ ձեր յայնժամ և գտեալ ի նմին բազում հակասութիւնս բանից, և սպասէիք ի դէմս իմ հարկանել ի գալըստեան իմում այդր : . . . Թէպէտ և եկի ես այդր և խնդրեցի ի ձէնջ ցուցանել ինձ զայն, այլ տեսի և ոչ մի ինչ . . . դիւրին է ասել թէ ի գրուածս այլոց հակառակութիւն բանից գոյ, այլ գործ է ցուցանել զայն ։

« Այլ ես հարցանեմ ձեզ այժմ, թէ զի՞նչ իմանայք դուք ներհակախօսութիւն ասելով ի գրուածս իմ. թերևս կամիք ասել, թէ ի բերանոյ իմմէ լուեալ ձեր երբեմն գովեստ վասն անձին Վեհիս, և այժմ զհակառակն տեսեալ ձեր ի գրուածս

իմ որ առ Նա, ապա և ներհակախօսութիւնս։ Հարցանեմ ես դարձեալ, ուրեմն կամի՞ք դուք զի ասացից ես թէ սխալեալ իցեմ ես յառաջ, գովելով իմ զՆա… ոչ այդպէս. գովեալ եմ ես զՆա ճանաչելով զարժանաւորութիւն Նորա, և գովեմ զՆա այժմ եւս Նովին ճանաչմամբս… իսկ գրուածն իմ առ Նա, ոչ ըստ տարապարտ կարծեաց ձերոց՝ հակառակ ինչ իցէ բերանով ասացելոյս, այլ ըստ պարտուց պաշտամանս, ի կարեւոր ազգարարութիւն և յաւելուլ իմն կատարելութիւն Նորին։

« Այլ ասիցէք արդեօք, մի թէ ինձ միայն առնել զայնպիսի ազգարարութիւն։…

« Ասեմ ես, թէպէտ և ըստ բանից ձերոց, գուցէ արտաքոյ իսկ ակնկալութեան և այլոց, առ ի չգտանել վեհին մերոյ զոք յերկրորդ իւր կարգել բաց յինէն. ապա և ինձ անկանէր առնել Նմա զայնպիսի ազգարարութիւն… Թողից ասել և զայլ հանգամանսս։…

« Ասեմ ես դարձեալ, եթէ արդարեւ ըստ ճանաչման և ըստ դատման ձերոյ, ներհակախօսութիւնք իցեն ի գրուածս իմ, և եթէ ի գրգռութենէ այլոց բերեալ իցեմ ես յայն գրութիւն, և եթէ ջերմութեան և խռովեալ սրտի պարտ էր տալ զգրութիւնս, ապա ընդէ՞ր վեհն մեր խռովեալ իցէ այնչափ, մինչեւ ձեռնթափ և յուսահատ և ի ցաւս հասանեալ. քանզի կարէր Նա զհակառակութիւն բանիցս ցուցեալ արդարացուցանել զինքն, և կամ հայրաբար Ներողամիտ լինել, գրգռութեան, ջերմութեան գլխոյ և խռովութեան սրտի տալով զհամարձակ գրութիւնս, ըստ խրատու ձերոյ, թէ՝ « Ոչինչ համարելի են երբեմն խռովեալ « սրտի գրութիւնք։ » Եւ մանաւանդ ըստ իմաստուն կանոնի Վեհիս տուելոյ երբեմն ի թուղթն իւր առ այլ ոք ասա, թէ « Է՛ ուրեք, զի իրացն հարկ և հանգամանք ժամանակին ստի֊« պեն գրել խուն ինչ խստութեամբ, և ըստ այնմ առնուլ « պատասխանի, զի և այն ինձ իցէ կարեւոր։ »

« Տեսանէ՞ք Վ. Հայր, թէ ի բանս որո՞յ իցեն ներհակախօսութիւնք։… Քանզի կամիք դուք մոռանալ տալ ինձ զանցեալն, միանգամայն և կամիք յիշեցուցանել ինձ զայն, հան֊

գերձ տարապայման պահանջմամբդ, որ և ընդդէմ ճանաչման մտացս և արդարութեանն իսկ ։

« Ահա ցուցի ձեզ զՏիրապետական վարչութիւնն ի սեփական կնքոյ անտի իւրոյ, որպէս և զսահմանադրականն յիւրոյ անտի, և զտարապարտ դատաստան ձեր ընդ գրուածս իմ, և զիրաւունս իմ ի պարտուց պաշտամանս ։ Մնայ ինձ այժմ ցուցանել ձեզ զՏիրապետական վարչութիւնն որ ի միջի ձերում յարդեանց անտի գործոց իւրոց ցարդ, և զիրաւունս վշտանալոյս, և զպատճառս համարձակ գրութեանս որ առ Վեհն մեր ։ Թէպէտ և երկրորդումն լիցի գրուածոյս առ նա, և ինձ արդեօք աւելորդ աշխատութիւն, բայց առ ի լնուլ զցանկութիւն ձեր, համառօտեցից զայն աստ վերստին, յաւելլով յայն և զնորոգ հաստատութիւնն, զոր արդարութիւնն մատակարարէ միշտ բանից ճշմարտութեան ։

« Արդ՝ գիտեմ ես զի յիշէք դուք զերբեմն ընտրութիւնս այդր ի պաշտօն փոխանակ ուղղի, զոր և ոմանք յեղբարցս այտի առաւել մեծ համարէին, և զիշխանութիւնս առաւել ընդարձակ քան զուղղին իսկ, իբրև փոխանակ Աբբայի և վերադիտողի ընդհանուր գործառնութեան դպրոցիս ։ Բայց գիտասջիք, զի արդեամբք ի վախճանի յայսմ ամփոփեցաւ մեծ և ընդարձակ իշխանութիւնն այն. քանզի ի վերջնում աւուր մեկնելոյ Վեհին մերոյ այտի գնալ ի Հռոմ, զայս պատուէր ետ ինձ կրկին և կրկին, « Չխառնիլ իմ բնաւ
« ի գործ դպրոցիս, հայեցեալ ի վիճակ մանկանց նորին, այլ
« միայն ի դրամական իրան, այսինքն, ի քննել և ի պատրաս-
« տել զհաշիւն եղեալ ծախուցն ։ »

« Ահա առաջին պաշտօն մեծարանացս, և նշան և արդիւնք բացարձակ իշխանութեան նորա... Թէպէտ և ասէք, « Զի
« զամենայն գրուածս իւր և զխորհուրդ առաջի առնէ ձեզ,
« և երկնչի իսկ ի ստուերէ իւրմէ, զի մի վշտացուցէ զձեզ,
« և թէ զի ոչ է արդ Տիրապետական վարչութիւն ի միջի
« մերում ։ » Այլ ես ասացի նմա « Բարի է՝ այնպէս արարից ։ »
Եւ արարի, չխառնելով իմ բնաւ ի գործն հայեցեալ ի մանկունս դպրոցիս, և չխառնիմ մինչև ցարդ ։

« Յետ քանի մի աւուրց հասանելոյ իմ աստ, եկն եհաս և
վէհն մեր դարձեալ ի Հռովմայ : Տեսեալ նորա զդպրոցս
թէպէտ և հաճեցաւ յոյժ ընդ պայծառութիւն սորին, և
ասաց միանգամ և երկիցս զարմացմամբ իմն, թէ իբրև երազ
իմն թուի իւր այսպիսի փառաւոր տեղի ունել մեզ և այն
ի Փարիզ քաղաքի, . . . այլ ոչ արար նա, զո՛նէ առ քաղա-
քավարութեան, յիշատակութիւն ինչ զործաւնեաց վաստա-
կաւորաց Նորին բնաւ : . . . Իսկ ընդ կարգաւորութիւն վար-
ժարանիս չհաճեցաւ նա, ցաւելով միշտ ընդ վիճակ մանկանց
դպրոցիս, որպէս թէ ըստ արժանւոյն չկային հոգ զկերակ-
րոյ Նոցա, և ոչ փոյթ զայլ կարեւոր պէտոյից Նոցին, և սաւ-
լով երբեք երբեք, թէ ոչ անճշանից սրդիք են Նոքա թէպէտ և
ի կարգս ազքատաց համարեալ զՆոսա ոչինչ հատուցանեն
Նոքա : . . և յասելն իմ թէ դեռ սկզբումն է, այլ տակաւ առ-
ցէ դպրոցս կարգաւորութիւն, ասաց Նա . « Էֆէնտիմ հը-
« մուտ և վարժ ոք պիտոյ է յայսպիսի պաշտօն, որպիսի ոք
« է Հ. Ռափայէլ : »

« Քանիցս անգամ որ զկարգաւորութենէ դպրոցիս խըն-
դիր եղեւ աստ ի միջի մերում, գրեթէ միշտ զՀ. Ռափայէլն
միայն ի պաշտօնն յայն յարմար և բաւական ճանաչէր Նա,
թէպէտ և Հ. Աղեքսանդր անյարմար և անբաւական ի պաշ-
տօն Առաջնորդութեան կոչէր զՆա, և զայս առաջի բազմաց
և բազում անգամ, մինչեւ խրատել իմ զՆա սաելով, թէ
չէր վայելուչ և պատշաճ զվարկ Նորա Նուաստացուցանել
առաջի այլոց, մանաւանդ յետ ընտրութեան հասարակաց
հաւանութեամբ : Սակայն յարգոյ էր Նա և հաճոյ յաչս Նորա,
և գովեալ ինմանէ, ասելով մեզ առանձինն, թէ « Զարմա-
« Նալի և մեծ խելք ունի Նա և ճարտար յամենայնի : » Եւ ահա
ձեզ կրկին և կրկին պաշտօն յարգանաց, և ճանաչումն
Նորա որ զոմանց և զվարկն որ զիւրոցն . . . թէպէտ և
Վերապատուութիւնդ սաէ, թէ « Ծանր թշնամանադիր բա-
« Նիւք զաաակցաց պաշտպանի անուամբ, Նշաւակեալ եմ
« զՆա առաջի ամենեցուն, անփոյթ և անգէտ կոչելով զՆա
« և զիւրան, և յանուանէ իսկ զոմանս : »

« Կարծեմ ես, թէ և մի ի ներհակախօսութեանցս այս իցէ, որպէս թէ ճանաչէի ես երբեմն այդր զՀ. Թափաէլն յարմար և բաւական ի պաշտօնս յայս, և հրաւիրէի զնա ընդունել զայն, և այժմ զընդհակառակն ճանաչեմ զնա : . . . Ոչ այդպէս Վ. Հայր, մեղանչէք դուք մեծապէս ի խելամտութիւն ձեր և ի դատաստանդ որ ընդ բանս գրուածոյ խմոյ. զի ես զնա որպէս յառաջ ճանաչէի նոյնպէս և այժմ ճանաչեմ, վարկ մեծ ունելով զնմանէ, հանդերձ եղբայրական աղգաբարութեամբ, եթէ գրով և եթէ բերանով յանդիման նորա, և զայն յառաջ խմ կատարելութիւն նորին և յօգուտ Հասարակութեանս։ Զնոյն և յայժ տաւելութեամբ ունիմ զՎեհէն մերոյ, հանդերձ բազում սիրով և մեծաւ յարգանօք. այլ բանք իմ և ցաւք սրտիս են ընդ հնարիմաց քաղաքավարութիւն և ընդ արհամարհութիւնն բանից և գործոց նորա որք զայլոց, և ընդ նախադասութիւնն իւրոցն միայն, որ ոչ արժան և վայել է հօր հասարակաց, . . . և որք յքուցիչ են ձեռաց և սրտի այլոց և վնաս Հասարակութեանս, որպէս տեսաք և տեսանեմք ցարդ . . . և ահա ընդ այս անաղարտելի ճշմարտութիւն բանիցս, ներհակախօս և զրպարտիչ, և հայհոյիչ եւս կարծէք զիս :

« Իսկ իբրեւ խորհուրդ և խնդիր եղեւ ընդ Վեհին մերոյ աստ վասն հատուցման պարտուց դպրոցիս և վասն գրաւականելոյ զտունս ի դտանել փոխ արծաթ, աստցի ես նմա առանձինն, թէ ոչ ի պատիւ Հասարակութեանս համարիմ ես զգրաւականել տանս, և ոչ բարի օրինակ լիցի այս գործ յապա եկելոցն . . . այլ ջանասցուք, ասացի, գումար ինչ արծաթոյ յայլուստ հայթայթել, որպէս և ջանացայ ես և հայթայթեցի զայն ի գնոյ գոհարից Պարոն Աբրահամ Աղանուրի, որով ստացաք զմուրհակս տան դպրոցիս, և նա հաւանեցաւ ընդ խորհուրդն իմ.

« Անցին ապա ի վերայ բանիցս աւուրք ինչ, և մինչեւ եհաս օր մ. կնիելոյ Վեհին աստի. տեսեալ իմ ցայն վայր և փորձեալ միանգամ և երկիցս՝ թէ չկամի նա բնաւ խորհուրդ ինչ յինէն հարցանել վասն ընտրելի ուղչին դպրոցիս և

վասն կարգաց և կանոնաց Նորին, մանաւանդ թէ զինքնամատոյց խորհուրդն իմ ընդ այն արհամարհեաց, բայց ի միոյն զոր վերագոյն յիշեցի, և նոր բարեմտութեամբս կարծէի թէ չէր արհամարհեալ, թէ և վրիպեցայ և անտի եւս ապա։

« Թէպէտ և գիտէի ես յայլուստ, ի Հ. Աղեքսանդրէ, զորոշումն կամաց Վեհին մերոյ ընդ այն, բայց խորհեցայ, զի մի արդեօք ակնածութիւն ինչ յինէն ունիցի ընդ որոշումն այնր կամաց իւրոց, որպէս թէ փափաքէի ես պաշտօնին այնորիկ, վասն որոյ ասացի ցնա առանձինն զայս. « Եթէ չի-
« ցեն կամք Հասարակութեանս կարգել զիս վերատին ի պաշ-
« տօն տեսչի դպրոցիս, յոյժ յոյժ շնորհակալ եղէց Նմա
« վասն ազատելոյ զիս ի հոգոյ աստի և ի խղճէ մտացս. իսկ
« եթէ կամիցի նա հաստատել զիս ի նոյն, խնդրեմ ի Նմա-
« նէ խոնարհութեամբ ծանուցանել ինձ յառաջագոյն թէ
« զինչ և որչափ ինչ իցէ սահման իշխանութեան իմոյ ի պաշ-
« տօնս յայս, որպէս զի, գիտացից, թէ կարիցեմ ես արդեօք
« խոստանալ Հասարակութեանս զկատարումն նորին. քանզի
« չկամիմ ես և չկարեմ իսկ ընդդէմ ճանաչմանս իմում և
« փորձառութեանս առնել ինչ։ »

« Վեհն մեր ետ այս բանիս պատասխանի Նախ՝ թէ զիարդ լինիցի այն յայսչափ հեռաւորութենէ անտի աստ. և ապա թէ՝ զոր ինչ որոշեացէ հասարակութիւնն պարտ է առնել զայն. և այսպիսի համառօտ և հատու բանիւք կարճեաց զխընդիրս։

« Յետ երկուց աւուրց մեկնելոյ Վեհին մերոյ աստի, ստիպեալ Հ. Յովհաննու ի պահանջողաց պարտուց դպրոցիս՝ խնդրեաց յինէն արծաթ ի հատուցումն. և ի պատասխանելն իմ թէ չունիմ արծաթ ի ձեռին, ասաց նա, ուրեմն հարկաւորիմք գրաւականել զտուն դպրոցիս առ ի գտանել փոխ արծաթ. և յասելն իմ՝ թէ ընդ այն պարտ էր հրաման խընդրել այտի ի վանացս, ասաց նա, թէ խօսեցեալ է ինքն աստ Վեհին մերոյ զայսմանէ, և նա զբացարձակ ընդդիմութիւն իմ ընդ այն յառաջ բերեալ իցէ։ Ընդ այս զարմացայ և ցաւեցայ ես, յայտնելով Վեհին մերոյ զծածուկ խորհուրդն իմ. վասն

որոյ գրեցի առ նա թուղթ, գանգատելով զայնմանէ, և ազդ առնելով նմա զպատճառն այնպիսի քաղաքավարութեան նորա։ Դժուարեալ նորա ընդ այն, արար ինձ պատասխանի յանդիմանութեան։

« Եւ արդ հարցանեմ ձեզ նախ՝ թէ ընթերցա՞ւ Վեհն մեր յունկն ձեր զթուղթն իմ զայն. և թէ առաջի արա՞ր ձեզ զպատասխանին իւր առ այն. քանզի ասէք, թէ՝ « Ջամե-
« նայն գրուածս իւր և զխորհուրդս առաջի առնէ մեզ, և
« երկնչի խսկ և ի ստուերէ իւրմէ, զի մի վշտացուսցէ զոք։ »
Երկրորդ՝ եթէ լուա՞յք դուք զբանս թղթոյ իմոյ և զբանս պատասխանւոյ նմին, համարեցա՞յք և դատեցա՞յք դուք զայն պատշաճ և արժան պատասխանի այնր թղթոյ իմոյ. բայց ո՞րպիսի կարծեօք և զի՞նչ իրաւամբք։ Ասացէք ինձ, աղաչեմ, միթէ ե՞ս էի որ կամէի զրաւականել զտուն դպրոցիս։ . . Ո՞չ ապաքէն Հ. Յովհաննէս կամէր միայն, և ես հակառակ էի կամաց նորին, որպէս և Վեհն մեր ինքնին վկայէ ի թուղթն որ առ իս, թէ ոչ կամէի ես ի գրաւի դնել զտունս. ապա ընդէ՞ր առ իս գրէ նա զգիր յանդիմանութեան իւրոյ, և ոչ առ Հ. Յովհաննէս Սորկուճեան. . . և ո՞րպիսի խելամտութեամբ, կամ զի՞նչ իրաւամբք անաչառ և քաջ խորհրդականքդ պատշաճ և արժան դատեցայք զայն, առ իս գրել զգիր յանդիմանութեան։

« Ընթերցայ ես զայս թուղթ յանդիմանութեան յունկն Հ. Յովհաննու, ըստ պատուիրանին Վեհին, թէ՝ « Պատ-
« ուիրեալ՝ զի ընթերցջիք զայն և յունկն Վ. Հ. Յովհաննու,
« առանց ծածկելոյ ի նմանէ և գրախեց մի։ » Ջարմացեալ և ապշեալ Հ. Յովհաննու ընդ այն և այնպիսի գրութիւն, ասաց անաչառութեամբ. Եթէ ունէր իրաւունս Վեհն մեր գրել զայս թուղթս՝ պարտ էր առ իս գրել և ոչ առ քեզ, որ ի սկզբանէ հետէ մինչև ցայժմ յայս կարծիս էք, չդնել զտուն դպրոցիս ի գրաւի։ Եւ այնչափ գայթագղեալ նորա ընդ այս քաղաքավարութիւն Վեհին մերոյ, մինչև յայտնեաց ինձ զգաղտնի խոստումն նորա առ ինքն, այսպէս. « Զի թէ-
« պէտ Հ. Սարգիս զանազան պատճառանօք բացարձակ ընդ-

« զխմանայ ի գրաւ դնել զտուն, այլ եւ ընդ հաստնելս իվանս
« տասքեցից բացարձակ հրաման ի գրաւի դնել զտունդ ։ »

« Ապշեալ և իմ և առաւելապէս ընդ այս անհաւատալի քաղաքավարութիւն Վեհին մերոյ, ոչ կարէի համոզէն ի վերայ կալ բանիցն ճշմարտութեան. քանզի չկարէի հաւատալ, թէ զի՞րդ հնարաւոր իցէ այսպիսի քաղաքավարութիւն յայսպիսի անձնէ, մանաւանդ այնպիսի բանիւք գրութեան նորա, իբրեւ յայտարարութիւն ի նմանէ, որպէս տեսանի ի թուղթն իւր առ իս, զոր յիշատակեցից աստ ։

« Զաւուրս իբրեւ եօթն երազ իմն թուէին ինձ բանքն յանդիմանութեան թղթոյն, չիմանալով զպատճառսն առ իս գրելոյն և ոչ առ Հ. Յովհաննէս, և չգտանելով ի թուղթն իմ որ առ Վեհս այնպիսի բանս՝ արժանի այնպիսի պատասխանւոյ... բայց եթէ զայսոսիկ բանս՝ որ ի վերջն թղթոյս, թէ « Մա-
« նաւանդ յայսմ ժամանակի, յորում տեսանեմ ես յայտնա-
« պէս նոր ճանաչումն և զանազան ոգիք, թէպէտ և այս ոգիք
« շարժեալ և համարձակեալ իցեն ի նոր ճանաչմանէ անտի...
« որպէս և ճանաչումն այն պատճառ իւր գտեալ և իրաւունս
« համարեալ զշարժումն և զհամարձակութիւնն ոգւոց անտի.
« թէպէտ և երկոքեան եւս վասն բարւոյ հասարակաց կար-
« ծիցին գործել ։ » Զայսոսիկ բանս կարծեցի ես պատճառս յանդիմանութեան ինձ, թէպէտ և ճշմարտութիւն, այլ թերեւս համարձակութիւն ի թուղթս հպատակի միոյ առ բացարձակ իշխանութեամբ Առաջնորդ իւր, թէպէտ և ծերագոյն իցէ հպատակն ա՛ն և աթոռակցութեան անուամբ պատուեալ յԱռաջնորդէն ։

« Իսկ թէ առ ի՞նչ իցէր պատուէրն այն Վեհին մերոյ առ իս, ընթեռնուլ իմ յուղկն Վ. Հ. Յովհաննու զրուղըն իւր առանց ժամկեղոյ և գրախեց մի, յայտնի է պատճառն, առ ի ցուցանել և նմա զզօրութիւն բացարձակ իշխանութեան իւրոյ որ ի վերայ ամենայն հպատակաց իւրոց, մանաւանդ ի նախարարութեան Արքայութեան իւրում, ըստ օրինակի արեւելեան Առաջնորդաց, ... թէպէտ և կարծէք դուք, թէ՝ երկնչի խոկ և խառնել իւրն, զի մի վտանգուցի զոք...

« Թէպէտ և կարծիքս իմ ոչ փոյթապատ և ոչ ի դերևելին, հաստատեալ արդեամբք որ ըստ օրէ, այլ համբերեցի տակաւին աւուրս քանի մի կարծելով եւս թէ գրուածն այն յանդիմանական գուցէ տարացնդեալ մտօք գրեալ, ըստ բանից իւրոց, յորժամ ամփոփեսցին միտք նորա, ուղղեսցէ նա զայն արդեօք, այլ վրիպեցայ ես ի կարծիս յայս. քանզի զկնի եօթն աւուրց՝ եհաս և երկրորդ Թուղթ նորա, որ նովին հոգւով էր գրեալ, թէպէտ և լեղի ընդ քաղցու խառնեալ ... Իբրև տեսի թէ չմնաց ինձ ակնկալութիւն ինչ մխիթարութեան, հարկաւորեցայ ես յայնժամ ի խղճէ մտացս որ ընդ անիրաւութիւն աղքատաց, և ի ցաւոց սրտիս որ ընդ ամենայն վնաս հասարակաց, առնել պատասխանի երկոքին Թղթոց Վեհին մերոյ, ոչ առ ի նշաւակել զնա առաջի ամենեցուն, որպէս դուք տարապարտ կարծէք, ... այլազգ առնել նմա թէ չէն այն գնացք իւր Հօր հասարակաց, և թէ այնպիսի գրուածք չտան քաջալերութիւն իւր հպատակաց, այլ լքուցիչք են սրտի և ձեռաց, և վնաս միաբանութեան իւրոյ և ազգիս առհասարակ.

« Ահա այս էին պատճառք յապաղելոյ իմ զպատասխանիս, ընդ որ դուք մեծապէս զարմացեալ էք, և նպատակ յերկար և համարձակ գրութեանս, ընդ որ դուք այդչափ գայթագղեալ էք... և ահա մինչև էր հասեալ Թղթոյս ի ձեռս Վեհին մերոյ այդր, գրեաց նա առ իս և այլ Թուղթ մի, յորում կայր ծրարեալ գիր գործակալութեան մերոյ աստ, և յոր այլ հաւաստիք ի հաստատութիւն բանիցս ճշմարտութեան, որպէս վերագոյն ասացի, թէ « Մատակարարէ զայն միշտ « արդարութիւնն. » և այս է օրինակն հաւատեաց իբարբառ Գաղղիացի, « Կարգել և գրաւականել, եթէ հրամանատարքն պատշաճ դատիցին զտունն որ ի փողոցի Մօնսիէօ « անուանեալ, Թ. 12. յապահութիւն փոխոյն. » Զոր կարէք համեմատել ընդ բնագրին որ ի վերջընթեր յօդուածս գրոյ գործակալութեան մերոյ. բայց կարիցէ՞ք դուք համեմատել զայս ընդ յանդիմանական գրոյ Վեհին մերոյ առ իս, թէ « Գիտասջիք նախ՝ զի ոչ վերապատուութեանդ միայն, այլ

“ և իմ և բովանդակ Հասարակութեանս բացարձակ և ամե-
“ նաբացարձակ կամք են և պատուէր և հրաման սաստիկ մի՛
“ դնել ի գլուխ զտուռն գալոցին և ոչ ընդ դանկի միոյ, և
“ վերապատուութեանդ յանցաւոր համարեցի առաջի մխա-
“ բանութեանս, եթէ և ձեռամբ այդր եղով ի գլուխ դիցի
“ տուռնդ : ”

“ Տեսանէ՞ք զգեղեցիկ համաձայնութիւնն որ ի մէջ երկուց գրով հրամանաց Վեհին մերոյ տուելոյ ինձ յանուն միաբանութեանս : ... Երէկ յանցաւոր համարէի ես առաջի միաբանութեանս, երբ և իմ այսր եղով ի գլուխ դնէր տուռն. իսկ այսօր առանց ինչ յանցանաց կարող եմ դնել զտուռնս ի գլուխ ձեռամբ իսկ իմով, եթէ պատշաճ դատեցայց, և յաւուել ինձ հաստատութիւն սերկեանս հրամանին, ոչ միայն յանուն միաբանութեանս, այլ և հաստատութեամբ ձեռաց անդ անձանց երեւելեաց տուեալ լինի ինձ հրամանս այս : ...

“ Ով մեծի և հիանալի փոփոխութեանս : ...

“ Եւ արդ ո՞ւր գիցուք, և կամ զի՞նչ համարեսցուք զբացարձակ և զամենաբացարձակ կամսն և զպատուէրսն և զհրամանսն սաստիկ Վեհին մերոյ և բովանդակ Հասարակութեան նորա : ... Զիցե՞ն այս արդիւնք բացարձակ իշխանութեան նորա. և զի՞արդ ասէք դուք, “ Զի ոչ է արդ Տիրապետական
“ վարչութիւն ի միջի մերում : ” Եւ չիցէ՞ այս կատարումն կամաց Վեհիս, և խոստման իւրոյ որ առ Հ. Յովհաննէս, թէ
“ Զի թէպէտ Հ. Սարգիս զանազան պատճառանօք բացար-
“ ձակ ընդդիմանայ ի գլուխ դնել զտուռնս, այլ ես ընդ հա-
“ սանելս ի վանս առաքեցից բացարձակ հրաման ի գլուխ
“ դնել զտուռնդ : ”

“ Հարցանեմ ձեզ, եթէ այս էին յառաջագոյն կամք իւր, ապա զի՞արդ իրաւունս տայ ինձ ի կարծիս իմ բանիւք և գրով, իբրեւ յայտարարութիւն կամաց իւրոց և Հասարակութեանս. և կամ ընդէ՞ր առ իս գրեացէ նա գիր յանդիմանութեան իբրեւ հակառակ կամաց իւրոց և Հասարակութեանս : ... Տեսանէ՞ք զհակառակութիւն բանից և գործոց իւրոց միանգամայն, և զանիրաւ յանդիմանութիւն նորա որ առ իս միայն,

արհամարհելով զկարծիս իմ բանիւք, և նախատելով զիս գրով և գործով իւրով... և ձեր զայսոսիկ կամ ոչ իմացեալ և կամ ոչինչ համարեալ՝ զարմանայք, զայթագղիք և յողի խոցիք ընդ համարձակ գրութիւն բանիցս ճշմարտութեան, կայծակնահար և երկայնաբան միայն կոչելով զայն։

« Դարձեալ՝ եթէ արդարեւ ըստ բանից ձերոց՝ « Զա-
« մենայն գրուածս իւր և զխորհուրդս առաջի առնէ ձեզ և
« երկնչի իսկ և ի ստուերէ իւրմէ զի մի՛ վշտացուցէ զքեզ. »
ապա զիա՞րդ ոչ տեսիք և ոչ իմացայք զայս յայտնի հակառակութիւն բանից և գործոց ի գրուածս և ի գնացս նորա։... Եւ եթէ տեսիք և իմացայք, ընդէ՞ր ոչ խելամուտ արարէք նմա զայն, առ ի պահել գոնէ զպատիւ նորա և հաստատութեանս... և ապա ընդէ՞ր ծանր իցէ ձեզ և լսել անգամ, թէ՝
« Անփորձ և անտեղեակ էք հանդամանաց տեղւոյ դպրո-
« ցաց։ » Եւ դարձեալ՝ եթէ « Գողտրիկ սիրտ ձեր ամենեցուն
« չժուժայ տեսանել զՎեհն իւր ձեռնթափ և յուսահատ ընդ
« լուր բանիցս ճշմարտութեան, և այն ի նախագրունս Ար-
« քայութեան նորա, » ապա զիա՞րդ ժուժեաց նոյն սիրտ ձեր ամենեցուն չիմանալ զարհամարհութիւն եղբօր ձերոյ և լռել ընդ անիրաւ յանդիմանութիւնն որ առ նա, և այն ոչ ի նախագրունս պաշտօնի նորա, այլ յերեսնամեայ աշխատութեան և տառապանաց նորա յայն։

« Ապա բացարձակ և ամփական իշխանութեամբ է այդ վարչութիւն միաբանութեանս, թէպէտ և ասէք դուք, « Զի
« ոչ է արդ Տիրապետական վարչութիւն ի միջի մերում. »
Այլ ես ասացի և ասեմ դարձեալ, թէ է՛ր և է՛ այն ի միջի մերում, և առաւել եւս սաստիկ այժմիկ, որպէս և տեսանի յարդեանց գործոցն։ Քանզի ե՞րբ տեսիք դուք այսպիսի գնացս և այսչափ կարծեալ պահանջմանս յառաջնորդութեան հանգուցեալ Սուքիաս Սոմալի։ Վարեցա՞ւ նա ընդ ումեք ի հպատակաց իւրոց այսպիսի հնարիմաց քաղաքավարութեամբ... գրեա՞ց նա առ ոք ի մէնջ այսպիսի անիրաւ յանդիմանութիւն... և խռովեցա՞ւ նա ընդ լուր բանից ճշմարտութեանն որ ի հպատակաց իւրոց, նա և ի մանկագունիցն անգամ.

և այն յետ այնչափ ամաց Աբբայութեան և փորձառութեան իւրոյ ։ . . .

« Թողից ասել և զայլ գովելի հանգամանաց նորա ։ . . .

« Ո՞չ յիշէք դուք զարհամարհութիւնն որ ի կարծեցեալ երկիւղածէ անտի, ի Հ. Ոսփակէլէ, ընդ գրաւոր կանոնս հանգուցելոյն, և զայն հրապարակաւ, և լու ի լու բազմաց, թէ « Քառակուսի պարտ է հաստանել զկանոնս նորա և « և ի գործ ածել, և այլն ։ » Թէպէտ և կանոնքն այնորիկ յանդիման եղեն խնամակալաց ժողովոյն, և որոց քննեալ զայն ուշի ուշով ընդունելի եղեն, նա և նմին իսկ արհամարհողին, Հ. Ոսփակէլի, թէպէտ և լուեալ զայն հանգուցելոյն, այլ ոչ խռովեցաւ բնաւ և զայրացաւ ընդ արհամարհութիւն և ընդ յանդգնութիւն հպատակին այնորիկ ։ . . .

« Իսկ սա ընդ լուր բանիցս ճշմարտութեան խռովի յոյժ և անհնարին զայրանայ ։ . . .

« Եւ ո՞չ յիշէ նա ինքն՝ զարհամարհել իւր զխնամակալաց ժողովոյն, և այն յառաջ քան զընտրութիւն իւր ի վիճակ առաջնորդութեան, յորժամ իբրև զմի ի կրտսերաց էր ։ Զի՞-որդ անմիտ կոչէր նա զժողովն զայն, վասն զի ըստ կարծեաց իւրոց, նախագահ ժողովոյն այնորիկ պարտ էր Աբբայն լինել. և զայս ասաց նա միանգամ և երկիցս, և յանդիման իմ և յերեսս իսկ, վասն զոլոյ իմ նախագահ ժողովոյն այնր, թէպէտ և ընտրութեամբ քուէից և հաւանութեամբ Աբբային ։ Սակայն ի վերայ այսր ամենայնի անմիտ կոչեաց նա զժողովն զայն համարձակ առանց ինչ ակնածութեան, և ոչ ոք խռովեցաւ և ասաց ինչ նմա ընդ արհամարհութիւնն իւր այն ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և ցուցանէր նա միշտ ի խօսս իւր տհաճութիւն և արհամարհութիւն ընդ վարչութիւն հանգուցեալ Սոմալի, և այս ի բազմաց գիտեալ և վկայեալ . . . և այժմ զի գրեցի ես առ նա զճշմարտութիւնն համարձակ, խռովի և զայրանայ յոյժ ընդ համարձակ գրութիւնս ։ . . . Իսկ թէ զի՞նչ իցեն պատճառք այս հակառակ միմեանց բանից և գործոց նորա, և թէ ընդէ՞ր ։ — Վասն զի որպէս ասացի և ցուցի իսկ, « Զախաւոր է տեսութիւն նորա որ զայլոց, և

« չափազանց վարկն որ զանձնէ խորհէ և զգաստկացն իւրոց
« միայն. » և վասն այնորիկ լքումն սրտի և ձեռաց այլոց եղ-
բարց և վնաս հասարակութեանս և Ազգիս առ հասարակ ։

« Թէպէտ և ոչ նմա, և ոչ ձեզ փոյթ է զվնասուց հասարա-
կաց, որպէս և յայտ է ի բանից թղթոյ ձերոյ առ իս, զի
չառնէք դուք զայնմանէ խնչ յիշատակութիւն, զանարդար
մատակարարութեանն ասեմ որ զիրաւանց աղքատաց տառա-
պելոց Ազգիս՝ զորմէ այնչափ երկար և ցաւագին սրտիւ յիշա-
տակեալ էի ի գրուածն իմ յայն, այլ հոգք ձեր միայն, են զի-
րաւանց բացարձակ իշխանութեան Արքային, և զկարճատես
անձնասիրութենէ և զառժամանակեայ անձնդիւրութենէ ձե-
րոյ, զի մի պակասիցին և խռովիցին այնք ։ . . .

« Առնումք մեք աստ օր ըստ օրէ լուր յազգայնոցս որք ի զա-
նազան կողմանս. յԵգիպտոսէ գրեալ էր Արթին Պէյ առ անե-
րորդին իւր աստ, խնդրելով ինմանէ տեղեկութիւն զհանգա-
մանաց դպրոցիս, թէ զի՞րդ և ո՞րպէս ըստ համբաւոյն և ըստ
ակնկալութեան Ազգիս իցէ այս արդեօք. որպէս զի ըստ այնմ
տացէ ինքն տեղեկութիւն ազգայնոցս անդ, և յայլ կողմանս
որ կամին խմանալ զայն ։ . . . Հայազգի երիտասարդք որք ու-
սանին աստ ի զանազան դպրոցս Գաղղիացւոց, հետաքննին
են յոյժ խմանալ և տեսանել զկանոնն և զկարգ վարժարանիս,
թէ ըստ արդի ոճոյ և ըստ վերջին փորձոյ երեւելի վարժա-
պետաց Փարիզո՞յ իցեն այնք ։

« Իսկ օտարազգիքն որք միանգամ այց առնեն դպրոցիս
և որք հանդիպին մեզ աստ և անդ, հարցանեն զմեզ նախ ըղ-
նպատակ փոխադրելոյ մեր զդպրոցս աստ, և ապա զոլին
զայն և քաջալերեն զմեզ բազում յուսադրական բանիւք, որ-
պէս թէ ժամանդակութեամբ Պետութեանս և ուսումնական
ընկերութեանց տեղւոյս Լուսաւորիչ լիցուք մեք ոչ միայն
ազգին Հայոց, այլ և համօրէն արեւելեան Ազգացն, այլովքն
հանդերձ ։ . . . Այլ աւա՜ղ ակնկալութեան ազգայնոցս, և
վարկի օտար ազգաց զմէնջ միանգամայն, ոչ գիտելով նոցա,
զի Առաջնորդ ուխտիս, ըստ դժբաղդութեան մերոյ և ազգիս,
Այնչափ ձեռնհասք և յուսահատ ի ցաւս նամակաց, մինչեւ

չցնել կերակուր ի բերանի. և առաջակայք նորին այնչափ տարակուսեալք, մինչեւ չգիտեն թէ զիարդ կարիցեն մխիթարել զնա ։

« Այլ թէ զի՞նչ պատճառք թշուառութեանցս այսոցիկ ։

« Վասն զի՝ մի ոմն ի հպատակաց Նորա գրեալ լիցէ առ Նա համարձակ զճշմարտութիւնն ։ . . . Իսկ թէ ընդէ՞ր առաջակայք Նորա տարակուսեալք՝ ոչ գիտեն մխիթարել զՆա ։ Պատճառքն այսորիկ կրկին ։ Նախ՝ վասն զի բացարձակ լինելով իշխանութիւն առաջնորդի Նոցա, չհամարձակին Նոքա խօսել Նմա ըզճշմարտութիւնն, այլ ըստ ասիական անարգ քաղաքավարութեան խոնարհեալ գլխով իրաւունս տան Նմա յամենայնի ։ Եւ երկրորդ, կրօնաւոր գոլով Նոցա ըստ սահմանադրութեան իւրեանց, առեալ զայն ի սահմանադրութենէն Յիսուսեանց(*), պարտ է կրօնաւորաց հնազանդ լինել Առաջնորդին իւրեանց կոյր հնազանդութեամբ. վասն այնորիկ ոչ տուեալ լինին երբէք իրաւունք հպատակացն, թէպէտ և բիւր իրաւունս ունիցին Նոքա, թէ՝ յառաւելութիւն հասակին և ի ճանաչումն մտաց, և թէ՝ ի փորձառութիւնս գործոց և յօրդիւնս մեծամեծ իրաց, չհամարին ինչ այնոքիկ և չդնին բնաւ ի կշիռս ընդ իրաւանց Առաջնորդին իւրեանց, զի իրաւունք Նորա ծանրագոյն են միշտ քան զամենայն իրաւունս Նոցա ։ Վասն որոյ ի հպատակաց հնազանդութիւն միայն պահանջի, և այն՝ կոյր հնազանդութիւն, ըստ սահմանադրութեան Յիսուսեանց,

(*) Սահմանադրութիւն Մխիթարեան ուխտին ի սկզբան անդ համառօտութիւն ինչ կանոնաց լինի, հայրական խրատք և պատուէրք հիմնադրին իւրոյ Մխիթարայ, տուացեալ նորա զայն ի փորձոյ. և առեալ ինչ ինչ ի Սահմանադրութենէն Բենեդիկտեան կրօնի, և այնու վարի մինչև ցվախճան հիմնադրին ։

Յաջորդ նորին Ստեփաննոս Մելքոնեան՝ այր անփորձ և յամառ գոլով՝ բաժանէ անդէն զմիաբանութիւնն յերկուս, ի Վենետկեան և ի Տրիեստեան անուանեալք, և ըստ բնաւորութեան իւրում սեփականէ զսահմանադրութիւն յիսուսեան կրօնին, թարգմանել տալով զայն ի հայ լեզու, և առաքելով ի Հռովմ ի հաստատել անտի, թէպէտ և Հռովմ ոչ հաստատէ զայն ըստ բախտին միաբանութեան, ազատ թողլով զնա յանտանելի պարտուց անտի, ի բռնաւորական իշխանութենէ Աբբային ասեմ, և ի կոյր հնազանդութենէ հպատակի նորին, որպէս ի յիսուսեան Կրօնին ։

և ոչ բանիւ հնազանդութիւն ըստ վարդապետութեանն առաքելոյն Պօղոսի, թէ՝ “ Պարտ է բանիւ հնազանդել ։ ”

“ Թողի՛ց ասել և զայլ զանազան և մանաւոր պատճառսն, հայեցեալ ի զանազան վիճակ և ի նպատակ մանաւորաց ոմանց, որք ըստ հանգամանաց ժամանակին և ըստ դիւրութեան անձին ձեւանան և շարժին ի բանս և ի գործս լեզեանց, ըստ որում ասէք, թէ՝ “ Երբեմն ի փոփոխել “ ժամանակին, այլ ազգ պարտ է գործել և յարմարել “ զանձն խոհեմութեամբ, ” յորոց և մի ոմն իբրեւ միջնորդ խաղաղութեան, և իբրեւ կարեկից ցաւոց կրօնակից և դասակից եղբօրն, ջանայ դարման տանել վիրացն, ոչ գիտելով, թէ վէրքն վիրօք ոչ բժշկին, այլ առաւել եւս զայրանան. քանզի Առաջնորդ իւր զիրաւունս նորա առ ոտն կոխեաց արհամարհոտ լռութեամբն իւրով ։ Իսկ սա կամի, զի նա զիրաւունս իւր իբրեւ զանիրաւութիւն խոստովանեսցի ։ . . .

“ Հարցանիցէ ոք արդեօք խաղաղարար միջնորդին և կարեկից դասակցին, թէ պա՞րտ իցէ հպատակին այնորիկ զիրաւունս իւր իբրեւ զանիրաւութիւն խոստովանել՝ առ ի յարմարել զանձն խոհեմութեամբ, թէպէտ և ընդդէմ բանի մարդկութեան ։ . . .

“ Ահա այս է, Վ. Հայր, ճշգրիտ նկարագիր վիճակի և կարծեաց մերոց այժմիկ ։ Իսկ թէ զի՞նչ լիցի այսուհետեւ, ձեզ թողում գուշակել, զի չկամիմ ես ի ժամուս առաւել ինչ ասել ։ . . .

“ Ի պատրաստել իմ զպատասխանիս, եհաս և այլ գիր մի կարճ ի Վեհէն առ իս, իբրեւ ի պատասխանի երկար թըղ-

Յաջորդ նորին Ստեփաննոս Ագոնց այր գիտնական և խոնարհ, ոչ բնաւ ի կիր արկանէ զայն բռնաւորական իշխանութիւն, անվաւեր սահմանադրութիւն ուխտին իւրոյ ։

Յաջորդ նորա Գեր. Սուքիաս Սոմալ՝ այր հեզ և ուսումնասէր նոյնպէս ոչ ի կիր արկանէ երբէք զայնպիսի իշխանութիւն ։

Յաջորդ նորին Գեր. Հիւրմիւզ, այր զոռոզ և փառասէր ի կիր արկանէ զայն բռնաւորական իշխանութիւն, և թշուառացուցանէ զՄխիթարեան միաբանութիւնն, ըստ վկայելոյ և բողոքելոյ բազմաց իսկ ի միաբանից անտի ։

(Ծանօթութիւն հեղինակին ։)

թույս խմոյ գրելոյ առ նոսա։ Ահա օրինակ համառօտ թղթոյդ։

“ — Յ․ Վ․ Տ․ Հ․ *Սարգսի վարդապետի ողջոյն․*

“ *Գրեալքն ի Վերապատուութենէդ ի 21 Նոյեմբերի ըն-*
“ *թերցեալ ի ժողովի առաջակայից, այսչափ միայն պատ-*
“ *շաճ դատեցան տալ պատասխանի։*

“ *Նախ՝ Փանզի առանց կանոնաց անհնարին է յաջողել*
“ *բարեկարգութեան յամենայն ժամանակի, նմին իրի իսկ*
“ *և միաբանութիւնս անդստին ի սկզբանէ հարկ համարեալ*
“ *էր սահմանել կանոնս ինչ և վասն մերոյն դպրոցաց, ոչ*
“ *վասն ժամանակակցաց միայն, այլ և վասն ապագայ եկե-*
“ *լոցն, զի գիտասցեն պաշտօնեայք թէ զինչ պարտք իւրեանց*
“ *իցեն, և յո՛ր ինչ ազատութիւն իւրեանց սահմանիցի։ Նմին*
“ *իրի իսկ յղեցան ձեզ կանոնքդ, որոց և Վերապատու-*
“ *թիւնդ սպասել աւէ։*

“ *Երկրորդ՝ եթէ գուցէ ինչ ի կանոնսն հակառակ բանի*
“ *և կամ հանգամանաց տեղւոյդ, և կամ վնասակար, խո-*
“ *հեմութեան Տեսչին իցէ հարկաւ գրել և ծանուցանել զայն.*
“ *իսկ զթեթեւ ինչ իրս ինքնին իսկ ըստ պահանջելոյ հարկին*
“ *տնօրինել։*

“ *Երրորդ՝ ի պատասխանի ցանկութեանդ և կամ խնդ-*
“ *րուածոյդ չառ համարի Միաբանութիւնս զտուեալն առ*
“ *Ձեզ ի 29 Նոյեմբերի, որով կացոյց զՎերապատուութիւնդ*
“ *ուղղիչ դպրոցիդ ըստ եդելոցն կանոնաց, զորս չունելով*
“ *ձեր յայնժամ ի ձեռին, յաւելեալ էր և պայմանս ինչ, յո-*
“ *րոց մարթի իմանալ Վերապատուութիւնդ թէ զո՛ր վարկ*
“ *կալեալ իցէ Միաբանութիւնս զՁէնջ։*

“ *Ողջունիւ սիրոյ Միաբանիցս ողջ լինել մաղթեմ*

“ *Յարգոյապատիւ Վերապատուութեանդ*

“ *Վենետիկ․ 9 դեկտ․ 1846․*

“ *Խ․ և Անարգ ծառայ*

“ Գ․ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԻՒՐՄԻՒԶ

“ *Արքեպիսկոպոս և ընդհանրա․ Արք․* ”

“ Ահա այս և այսչափ միայն է պատասխանին զոր եա Վեհն երկար թղթոյ իմոյ առ Նա, և ես պատշած դատիմ տալ ի սմին և այնմ պատասխանի, միանգամայն և այլ մնացեալ բանից թղթոյ ձերոյ, այսպէս ։

“ Ասեմ նախ՝ թէ գրուածն ոչ առ ժողովն Առաջնակայից էր ուղղեալ, այլ առ Վեհն մեր, և բանից թղթոյ իւրոյ էր պատասխանի. ապա Վեհին մերոյ պատշած և պարտ էր առնել դորս պատասխանի, և այն հանդերձ հաւաստեաք և հաստատութեամբ, որպէս գրուածն իմ առ Նա, և ոչ թէ Նախ արհամարհոտ լռութեամբ և ապա հարեւանցիկ ինչ բանիւք և ի կողմանէ Առաջնակայից իւրոց առնել ինձ պատասխանի, ըստ օրինակի բացարձակ իշխանաց և թագաւորաց, որոց անախորժ է լսել զձայն ճշմարտութեան ։ . . .

“ Երկրորդ՝ չասացի ես թէ չեն պիտոյ կանոնք դպրոցիս, այլ այնպիսի կանոնք որք պատշաճիցին հանգամանաց ժամանակին, և տեղւոյս, և վիճակի պաշտօնէից դպրոցիս, և այն փորձառութեամբ լինի, և ոչ տեսական գիտութեամբ, նայելով ի սենեկի վանացդ գրել կանոնս վասն Փարիզոյ դպրոցին. որպէս և յաջողութիւն բարեկարգութեան յամենայն ժամանակի, ոչ թէ գրաւոր կանոնօք լինի, այլ խոհական գնացիւք պաշտօնէից դպրոցին, որպէս և աչօք տեսի և փորձիւ գիտեմ ։ Եթէ անփորձ է ինքն և չգիտէ զայս, ցուցից ես Նմա, թէ գրեթէ և ոչ մի ի գրաւոր կանոնաց դպրոցիս պահեցաւ մինչեւ ցարդ անարատ, և այն՝ այդր մերձ վանացս. և վասն այսորիկ արդարանայ արդեօք երկիւղածն այն երբեմն ի համարձակ բանս իւր, ասելով բազում անգամ, թէ “ Քառակուսի պարտ է հատանել զկանոնսն և ի գործ ածել ի պէտս ։ ” . . . Այլ չգիտեմ, թէ ընդէ՞ր լռեալ կայ այժմ նոյն երկիւղած և համարձակ անձն այն ։ . . .

“ Գուցէ ա՛յլ իմն երկիւղածութեամբ ։ . . .

“ Եւ վասն այսորիկ ասացի և ասեմ, թէ պարտ է պաշտօնէիցն հաւատալ և ի նոսին վստահ լինել, քան ի գրաւոր կանոնսն ապաւինիլ, և անտի յաջողութեան և բարեկարգութեան ակն ունել ։

« Երրորդ՝ հարցանեմ ձեզ, թէ չիցէ՞ հակառակ, եթէ ոչ բանին, այլ նպատակին, կանոնն այն, թէ պարտ է մերոցն աստ կրել զպէմն աշխարհիկ առ արտաքս, իսկ ի տանն ըզ-պէմն կրօնիս։ Զգուշութիւն պարկեշտութեան մերոցն աստ առ արտաքս պարտ է լինել թէ ի ներքս ի տանն։... Եթէ առ արտաքս կրել զայն չիք ինչ երկիւղ անպարկեշտութեան, իցէ՞ արդեօք երկիւղն այն ի ներքս ի տանն. և զի՞նչ վախճանն, եթէ ոչ հետաքննութեան և զանազան կարծեաց պյլոց տեղի տալ։

« Ասիցէք արդեօք, թէ կանոն կրելոյ զպէմն կրօնիս ի տան, խորհրդով և նախատեսութեամբ եղեալ է, որպէս զի մի՛ մոռասցին մերքն աստ զվիճակ իւրեանց, և մի՛ օտարասցի նո-ցա պէմն կրօնիս։ Ասեմ ես, ապա ընդէ՞ր այդ խորհուրդ և նախատեսութիւնն ոչ եղեն և ոչ լինին վասն մերոցն որք ի Պօլիս և յայլուր։...

« Իսկ զի՞նչ ասացից զմօրուաց և զաշխարհիկ զգեստուց մերոցն աստ, որ աշխարհականաց միայն է ներեալ և ոչ եկե-ղեցականաց. և այս ևս ոչ միօրինակ ի մեզ, այլ զանազան, որք և առիթ հարցման և քննութեան բազմաց, չունելով մեր տալ նոցա բանաւոր ինչ պատասխանի, բաց ի կամաց կանո-նագրաց մերոց, առանձնացելոց ի վանս։ Եւ չիցէ՞ կանոնդ այդ վնասակար, յորժամ չպահիցի այն, հայեցեալ ի վիճակ մերոց աստ, որոց յամենայնում աւուր հարկ է յաճախ ելա-նել արտաքս ի կարեւոր պէտս դպրոցին։ Պարտակա՞ն իցեն նոքա ըստ կանոնի ձերոյ յամենայն նուագս փոխել զզգեստս իւրեանց. և եթէ չարասցեն նոքա զայն, առունդանո՞ղ լիցին հրամանի ձերոյ... և աՀա վնասակարութիւն. քանզի ըստ վճռոյ ձերում, պարտական լիցի ուղղիչ դպրոցիս աՀեղ Աստե-նին։... Տեսանէ՞ք զվնասակարութիւնն որ ի զգոյշ և ի նա-խատես կանոնէդ։

« Հարցանեմ դարձեալ՝ չիցէ՞ իմ զայմանել առ Վեհն մեր գրեալ և օրինակօք ցուցեալ, և նորա զայն ոչինչ համարեալ արհամարհոտ լռութեամբն իւրով։... Ապա զի՞նչ մնայ այսու-հետեւ խոհեմութեան Տեսչին գրել հարկաւ և ցուցանել զայն...

բայց եթէ սպասել վերստին գալստեան Նորա այսր, զի տեսեալ և խմացեալ անձամբ իւրով տնօրինեսցէ զայն, որպէս և տնօրինեաց յառաջին գալստեան իւրում այսր ։ Վասն որոյ հարցանեմ ես, թէ կանոնն որ վասն տարազու զգեստուց մերոցն սստ, որոշեալ և հաստատեալ յընդհանուր ժողովոյ, զի՞րդ փոխեցաւ ապա, և ջնջեցաւ այն ։ Մինթէ վերստին ընդհանուր ժողովո՞վ եղեւ փոփոխութիւն կանոնին այնորիկ ։ . . .

« Գիտեմ զի ասիցէք, թէ ոչ ընդհանուր, այլ վանական ժողովով եղեւ այն ։

« Այլ ես ասեմ, թէ և ոչ այդպէս, այլ հաճութեամբ և հրամանաւ Վեհին միայն եղեւ այն. և հաստատութիւն բանիցս, ահա զոր ինչ միանգամ որոշեաց նա սստ, զնոյն և հաստատեաց այդր ։ . . .

« Գիտեմ դարձեալ՝ զի ասիցէք, թէ տեսեալ Վեհին մերոյ այսր աչօք իւրովք զհարկաւորութիւն փոփոխութեան այնորիկ՝ առաջարկեաց այդր ժողովոյն, և ժողովն հաւանեալ բանից Նորա՝ որոշեաց զայն այնպէս ։

« Ասեմ ես, եթէ ժողովդ հաւանեցաւ բանից Վեհիս, վասն տեսանելոյ Նորա աչօք իւրովք զհարկաւորութիւնն փոփոխութեան այնորիկ, ապա ընդէ՞ր բանից իմոց ոչ հաւանեցայք դուք, որ ոչ միայն աչօք իմովք տեսեալ էի, այլ և փորձիւ գիտէի ի բազում ամաց հետէ զհարկաւորութիւնն այնորիկ, և առաջարկութիւնն իմ եղեւ ձեզ յառաջ քան զորոշումն և զհաստատութիւն կանոնին յընդհանուր ժողովէ անտի, զոր և տնօրինել յետոյ դժուարին էր յոյժ, և այն վասն փոքր ինչ ժամանակի ասացի տանել մերոցն սստ զտարազ աշխարհիկ զգեստուց. ընդ որ ոչ միայն չհաւանեցայք դուք, այլ և գայթագղեցայք. և ապա զի՞րդ այս այսպէս դիւրաւ որոշեցաւ այժմիկ ։

« Տեսանէ՛ք զզօրութիւնն բացարձակ իշխանութեան Նորա, և զառաւելութիւնն սաստկութեան ։

« Այլ դուք կարծեցէ՛ք որպէսախորժէք, ասելով, զի չէ արդ Տիրապետական վարչութիւն ի մէջի մերում ։

« Իսկ առ վերջին յօդուած բանից թղթոյ Վեհին մերոյ

այս է իմ պատասխանին, թէ ցանկութիւն իմ կամ խնդրուածս, պարտ էր և է լինել ըստ յառաջագոյն տուեալ յինէն բանաւոր առաջարկութեանս և կարեւոր պայմանացս. ապա չէ Նորա կատարեալ զխնդրուածս իմ, և ապա մնամ ես ի նոյն կամս և ի ճանաչումն մտացս, չկարելով առնել ինչ ամենևին : . . . Եւ թէ՝ տուելոցն առ իս ի 24 և ի 29 հոկտեմբերի արարեալ եմ ես այնց պատասխանի, հանդերձ հաւաստեօք և հաստատութեամբ, ապա մնամ ես միշտ անտի պատասխանւոյ, և այնպիսի պատասխանւոյ, որպիսի էր գրուածն իմ. և ապա չեմ ես դեռ կացուցեալ ուղղիչ դպրոցիս, ըստ տուելոյ ինձ ի 29 հոկտեմբերի, և ըստ եդելոց կանոնաց Նորին : . . . Եւ թէ՝ զչափ վարկի միաբանութեանս որ զինէն խմացեալ էի արդէն և ճանաչէի քաջ, և որ առաւել էր քան զարժանաւորութիւնս իմ . . . բայց ըստ բաղդին իմոյ, վարկն այն Նորա մինչև ցյուլիս տարւոյս տևեաց . . . իսկ յետ այնորիկ, Վեհն մեր ինքնին գիտէ, թէ ուստի՛ և զիա՛րդ նուազեաց և ի սպառ պակասեաց այն ։ « Եկաց այլ թագաւոր որ ոչ ճանաչէր զՅովսէփ ։ » Եւ թէ՝ Նորոգ տիտղոսիւ ստորագրութիւնն որ յայս թղթի իւրում, չէ հանդէտ այնմ որ ի թղթի իմում. քանզի այնմ ինքն էր պատճառ, իսկ այսմ ես ոչ բնաւ . . . ապա չունի իրաւունս ինձ հաւատարիլ ։

« Ահա բանք վերջին թղթոյ Նորա և պատասխանին իմ, որպէս և բանք առաջին թղթոյ Նորա և պատասխանին իմ, երկար գրուածս որ առ Նա, և զոր երկրորդեցի ձեզ ի միւն համառօտիւ, և որով կարէք դուք այժմ քաջիկ դատել, թէ գնացք Նորա և թուղթք առ իս իցե՞ն արդեօք Հօր հասարակաց, մանաւանդ ի նախադրութեան Արքայութեան իւրում, թէ հնարիմաց քաղաքագիտի և բացարձակ իշխանի ։ Եւ թէ՝ գնացք իմ ընդ Նմա և պատասխանին իմ առ Նա, նշաւակողի՞, յոգի խոցողի՞ և ներհակախօսի՞ իցեն, թէ ճշմարիտ բարեկամի Նորա և հասարակութեանս, և անաչառ արդարախօսի յիրաւունս աղքատաց ազգիս ։

« Աղաչեմ զձեզ, քաջ քննել և կշռադատել զիրաւունս

յերկուց կողմանց՝ խելամուտ լինիք դուք Վ. Հայր, և յորդոյ Առաջնակայք բանիցն ճշմարտութեան ։ . . . Քանզի չբաւակա-նանամ ես և չլռեմ ընդ այսչափ և այսպիսի քննութիւն և դատաստան ձեր ։ Ապա թէ ոչ, բողոքեմ ես առ համօրէն Միաբանութիւնս որ այդր և որ յամենայն տեղիս . . . և եթէ նոքա չկամիցին անաչառութեամբ դատել, պաշարեալ ի կան-խակալ սովորութենէ, ի կոյր հնազանդութենէ ասեմ, գիտեմ ես յայնժամ թէ զիա՛րդ ունիմ ես զգրուածս իմ և զդնացս արդարացուցանել (*), պահելով միշտ զպատիւ միաբանու-թեանս, և զիրաւունս աղքատաց ազգիս ։

« Զգիտեմ ես արդեօք եթէ իցէ՞ն յընկերութեան միոյ այս-պիսի ինչ իրաւունք, զի ուրումն ի նոցանէ յետ երկոտասա-նամեայ ոգւով չափ աշխատութեան ի գործ ինչ օգտակար ազգին իւրոյ և ընկերութեանն, և յետ քսանամեայ փորձա-ռութեան իւրոյ ի գործն յայն հանդերձ բազում տառապանօք ի հակառակորդացն աստի և անտի, չունիցի նա այնուհետև իրաւունս խառնելոյ բնաւ ի գործն յայն. և ոչ այսչափ մի-այն, այլ և ի տալ նորա երբեմն ընդ այն կարեւոր խորհուրդ՝ մերժիցի այն, հանդերձ գրով յանդիմանութեան, և այն ի նախագահէ անտի ընկերութեան, որոյ ոչ աշխատութիւն և ոչ փորձառութիւն յայն, և յարդարացուցանել նորա զինքն ընդ անիրաւ յանդիմանութիւնն անաչառ և համարձակ գրու-թեամբ, յանցաւոր համարիցի նա և դատապարտ լիցի ի ժո-ղովոյ անտի ընկերութեան ։ . . .

« Ո՞չ ապաքէն այս է համառօտութիւն բանից գրութեանս իմոյ, և ի սոյն յայսմ ճշմարտութիւն իրացն ։ Եթէ այս և

(*) Ահա ըստ վերոյիշեալ ազատութեանն, որ ի 267 էջ ծանօթութեան, վարի ատտանօր Հ. Սարգիս, ազատ գոլով նորա ի կոյր հնազանդութենէ բռնաւոր իշ-խանութեան բողոքէ առ համօրէն միաբանութիւն Մխիթարեան, միանգամայն և ակնարկէ զհրատարակումն պատմութեանս այսորիկ, եթէ ակնառութեամբ և կանխակալ սովորութեամբ չկամիցի միաբանութիւն անսալ բանից ճշմար-տութեան, որով և լիցի պատճառ զեղծման Առաջնորդին յիշխանութեան ի-րում, և թշուառութեան միաբանութեան, որպէս և եղեւ ։ . . .

(Ծանօթութիւն հեղինակին ։)

այսպէս իցէ, ապա ընդէ՞ր վենն մեր յոգի խոցիցի, և Աստուածայք նորա ընդ այն ցաւիցին ։ . . . Եւ եթէ ծանր թուեցաւ Նմա լսել զձայն ճշմարտութեան ըստ սովորութեան բացարձակ իշխանաց, ընդէ՞ր և ձեզ ծանր թուիցի այն ։ . . . Արարի՞ ես արդեօք անդ յիշատակութիւն ինչ զչափոյ գիտութեան և փորձառութեան ձերոյ ի հրահանգս մանկանց դպրոցիս ։ . . . Ո՞չ ապաքէն յարդեանց անտի գործոց հաստատեցի զայն հանդերձ օրինակաւ, յանուանէ իսկ յիշատակելով ։ Թէ առ ի մխիթարե՞լ զնա ցաւակից եղէք նմա. միթէ այդու կարացի՞ք մխիթարել զնա ։ . . . Ո՞չ ապաքէն առաւել ես սաստկացուցիք զցաւս Նորա, հանգոյն բարեկամացն Յովբայ, զորս բժիշկս մեղանչականս կոչէ երանելին, չխօսելով Նոցա զճշմարտութիւնն ի ցաւս Նորա ։

« Նոյնպէս և դուք այժմ պատճառ լինիք զեղծման դորա յիշխանութեան իւրում և ի կարծեցեալ պահանջանսն, յամենայնի իրաւունս տալով դմա, և կամ ակնածելով չխօսել զճշմարտութիւնն ։ Թողի՛ց ասել զընական և զբարոյական վնասուցն որք և զհետ գան յայդպիսի քաղաքավարութենէ, որպէս և զհետ եկին անտի երբեմն և բերին վնաս Միաբանութեանս և ազգիս միանգամայն. զոր և յիշատակեցից իսկին ապա ։ Կամ թէ յառաւել իմն սիրոյ և յարգանաց ձերոց որ առ Նա պա՞րտ համարեցայք ծածկել զթերութիւն Նորա ։ . . .

« Երբեմն գրելով իմ զայն առ Նա համարձակ, ատեա՞մ և անարգե՞մ ես զնա ։ . . . Ո՞չ ապաքէն դուք ինքնին յայտնապէս վկայէք առաջի ամենեցուն և առաջի իսկ Աստուծոյ թէ բազմապատիկ գովեստ լուեալ էք յինէն վասն արժանաւոր անձին Վեհիս ։ Ապա զիա՞րդ փոխեցայ ես յանկարծակի ի մտաց անտի և ի զգայութեանցս միանգամայն, և այս՝ զկնի այսչափ վարկի և մտերմական սիրոյ նորա առ իս, մինչեւ չգտանել զայլ ոք յերկիրորդ իւր կարգել բաց յինէն, նախադասելով այլոց արժանաւորաց, և գուցէ արտաքոյ իսկ ակնկալութեան այլոց, այլ և զկնի կացուցանելոյ զիս ուղղիչ դպրոցիս ։ . . . Երբեմն կամ մոլորեալ իցեմ ես ի դրդուութենէ ուրուք այլոյ կամ աստի,

ըստ տարապարտ կարծեաց ձերոց, և կամ ի սաստկութենէ կրից ամբարտաւանութեանս շարժեալ վշտացայ, ընդ ոչ անմիջապէս ընտրութիւնս յուղղութիւն տեղւոյս. թէպէտ և այս մեծաւ փօլիթիքայիւ.

« Այլ տարապարտ են և այս կարծիքդ. Զպատճառ վըշտանալոյս ցուցեալ եմ ես յառաջագոյն ի գրուածն իմ որ առ Վենս, և այժմ որ ի սմին առ ձեզ, և յերկոսեանն ես հանդերձ հաւաստեօք և հաստատութեամբ. Այսպէս մնայ ինձ միայն ցուցանել ձեզ աստ, թէ զի՞րդ և ո՞րպիսի են սէր և յարգանք իմ առ Վենս. Արդ՝ սկզբամբ և վախճանաւ են սէր և յարգանք իմ առ Նա. սիրեմ և յարգեմ ես զՆա, վասն զի գլուխ է Նա Միաբանութեանս. և միաբանութիւնս լուսաւորիչ է կարօտելոյ ազգիս. . . .

« Ահա սկզբունք իմ և վախճանն որով սիրեմ և յարգեմ զԱռաջնորդն ուխտիս և զուխտս միանգամայն, և ահա վասն այսօրիկ գրեմ ես անաչառ և համարձակ զթերութենէ և ըզ-սխալանաց Վենին մերոյ, վասն զի ցաւիմ ես ընդ վնաս հասարակութեանս և Ազգիս, գիտելով իմ չափ և փորձ իսկ գոլով, զի թերութիւն և սխալանք անդամոյ միոյ ի միաբանիցս չբերեն այնչափ ինչ վնաս միաբանութեանս և ազգիս, որչափ ինչ բերեն այնք գլխոյ նորին, որպէս և բերին և բերեն ցարդ վնաս որ ի թեթեւ ինչ կարծեցեալ թերութենէ հանգուցեալ Ստեփաննոս Մելքոնեանի, զի յամառեալ նորա ի նախադասութիւն կարծեաց իւրոց, քիրաւունս առաջնորդութեան իւրոյ, և զակնածութիւն և զձեռնտուութիւն քանի մի ոմանց օժանդակ իւր գոլով՝ արար զոր ինչ կամեցաւ. . . . Թէպէտ և ամենեքեան նոքա շարժէին յայնժամ ի նախանձու բարեկարգութեան, այլ թէ զի՛նչ մխիթարութիւն անտի ակնածուացն այնոցիկ . . . ահա զրկումն յեղբարց իւրեանց, ի բաղում և յերեւելի անդամոց միաբանութեանս (*) . . . և զի՞նչ

(*) Ակնարկէ ի ցաւալից և ի վնասակար բաժանումն Թրիեստեան միաբանութեան, որ հակառակ եղեւ և է միշտ Վենետկոյ միաբանութեան. . . .

(Ծանօթութիւն Հեղինակին.)

ձեռնտուացն այնոցիկ . . . ահա հակառակ հատուցումն . . . թե֊րեւս յարդարութենէն . . . զի մին անտի իբրեւ յաքսորս վախճա֊նեցաւ ցաւօք և հեծութեամբ (*), հալածեալ ի հայրենեաց և յեղբարց իւրոց, և պաշտպանութիւն ոչ ուստեք գտեալ, և ոչ իսկ յԱռաջնորդէն իւրմէ, զորոյ իրաւունսն այնչափ իմն նա֊խանձաւորութեամբ պաշտպանեալ էր ինքն . . . և միւսն թէպէտ և զամս բազումս գործակալ ի վանս կացեալ, այլ ի վախճանի ի տան աշխարհականի միոյ ի Վենետիկ ողորմելաբար մեռաւ(**), առանց վերջին թոշակի և մխիթարութեան ուրուք յեղբարց իւրոց : . . . Թողից յիշատակել աստ զմխիթարութիւնն և զայ֊լոց ոմանց ակնածողաց և վրէժխնդրողացն այնոցիկ, և զգայ֊թագղութիւն և զվնաս Ազգիս որ ի բաժանմանէ անտի : . . .

« Ահա ի ցաւալից անցիցս անցելոց և յօրինակէ անտի խրատեալ իմ, սկզբամբք և վախճանաւ սիրեմ և յարգեմ զԱռաջնորդն ուխտիս, ոչ ի պատիւն որ ի նմանէ հայելով, և ոչ զգիւրութիւն անձինս խնդրելով, այլ զպատիւն Հասա֊րակութեանս և զօգուտն ազգիս միայն. վասն որոյ և անկողմ֊նաւոր բարուք և աննախանձութեամբ զարդարութիւնն սիրեցի և սիրեցից, զճշմարտութիւն գրեցի և գրեցից միշտ. թէպէտ և արհամարհեցայց ի Վենէս, թէպէտ և մեղադրեցայց և դա֊տապարտեցայց յԱռաջակայից նորա, չէ ինձ փոյթ երբէք. քանզի չկամիմ և չկարեմ իսկ ընդդէմ ճանաչմանս և փորձա֊ռութեանս առնել ինչ, առանց սկզբանց և վախճանի սիրել և յարգել զօք, թէպէտ և առաջնորդն Միաբանութեան իցէ, թէպէտ և Միաբանութիւնս գլխովին իցէ :

« Ապա մի տարապարտ կարծիցէք՝ թէ ի գրգռութենէ ումեք աստի կամ այտի չարժեալ բերի ի գրութիւնն որ առ Վենէս . . . և մի ամբարտաւանութեան ոգւոյ և խռովութեան մասաց տաջիք զգրութիւնս, այլ ի ցաւոց սրտիս, որ ընդ թե֊

(*) Հ. Մկրտիչ Մաղաքեան, տարագրեալ ի Բիւզանդիոյ ի Թեսաղոնիկէ ի ձեռն Աբրահամ աղայի Խուլէլեան : (Ծ. Հ.)

(**) Հ. Ստեփան Ասլիկեան, ապաստանեալ ի տան Սեղբոսեան Յովհաննէս աղայի ի Վենետիկ :

(Ծանօթութիւն Հեղինակին :)

ութիւն Վենիս, և ընդ վնասն որ անտի հասարակութեանս և Ազգիս միանգամայն, և վասն ճշմարիտ սիրոյ և մեծի յարգութեան իմոյ որ առ Վէհն մեր և առ Միաբանութիւնս ։ Ապա մի՛ վայրապար յոգի խոցիցի Վէհն մեր և Առաջակայք նորա խռովիցին ընդ համարձակ գրութիւնս, այլ զոգի գրոցն իմացեալ՝ բժշկեսցին և մխիթարեսցին Նոքա առ հասարակ . . . և մի՛ ի կարծիս իւրեանց յամառեալ կայցեն՝ բռնական և չատ համարելով զտուեալն առ իս ի 28 հոկտեմբերի, և զկանոնս իւրեանց վասն դպրոցիս, արհամարհելով զբանաւոր առաջարկութիւնս և զկարեւոր պայմանս լուութեամբն իւրեանց ։

« Այլ գիտասցեն և քաջ ի միտ առցեն, թէ դպրոցս այս աստ ի Փարիզ, փորձաքար լիցի բուն իսկ արժէից միաբանութեանս, և պատճառ կամ փառաց Նորա, եթէ գիտասցէ Նա որպէս պարտ է ընթանալ, և կամ Նախատանաց անշուշտ, եթէ ընթասցի Նա այնպէս որպէս ընթացաւ ցարդ . . . զի քաղաքս այս ոչ է Վէնետիկ կամ Պատաւիոն , և ոչ իսկ Կոստանդնուպօլիս ։

« Եւ ահա ասացի զամենայն, թէ և կրկնութեամբ բանից, այլ ոչ հակառակութեամբ նոցին, զոր և աղաչեմ ուշադրութեամբ ընթերցջիք, խելամուտ լինելով քաջ մտաց գրուածոյս, և ընթեռնուլ տաջիք զայս Առաջակայիցն , այլ և Վէհիս եթէախորժէք ։ Հաւաստի եմ և ես, զի յամենայնի ըստ կամաց իմոց և լինէին միայն իմանայք զամենայն գրեալսն իմ, և ոչ ըստ խորհրդոյ և ի թելադրութենէ այլոց, և զայս ամենայն, որպէս բազում անգամ ասացի, ի ցաւոց սրտիս որ ընդ թերութիւն Վէհիս, և ընդ վնասն որ անտի վասն բարեաց հասարակաց. և յուսամ ատի, զի լաւագոյն եւս ծանեայք, թէպէտ և ոչ զառաքինի, այլ զանյիշաչար սիրտն իմ, որով և Յեամ միշտ

« Յարգոյապատիւ Հայրութեանդ

« Ի Փարիզ. 31 դեկտ. 1846.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թուղթ գանգատանաց Հ. Սարգսի առ Հ. Եսայի. — Յանդուգն և քննողական պատասխանի Հ. Եսայեայ առ Հ. Սարգիս. — Թուղթ չքմեղութեան Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս. — Պատասխանի Հ. Սարգսի առ թուղթն այն Գեր. Հիւրմիւզի և քննութիւն ընդ տուեալ կանոնս նորա. — Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, վասն հոգոց դպրոցին որ ի Պօլիս. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Գեր. Հիւրմիւզի, վասն բանի խնդրոյ երրորդական դպրոցի.

Որպէս վերագոյն յիշատակեցաք՝ թէ տեսեալ Հ. Եսայեայ զհնարիմաց քաղաքավարութիւն Գեր. Հիւրմիւզի, և զապերախտութիւն Հարց Յովհաննու և Ստեփաննոսի առ Հ. Սարգիս, ծանուցանէ նմա զայն գրով, և խորհուրդ տայ կարեկցաբար առանձնանալ նորա ի վանս, միանգամայն և զանգատի զշռայլութենէ և զանիրաւ մատակարարութենէ Հ. Յովհաննու, ցուցանելով զկնիք բարուց նորա... և թէ՝ առնէ Հայր Սարգիս թղթոյ նորա պատասխանի քաջալերելով զնա չհամարել կորուստ ինչ զարծաթն այն որ ի գին տեղւոյ դպրոցին, և արդարացուցանելով զինքն ընդ անիրաւ կարծիս և մեղադրութիւն ոմանց ի վանս, միանգամայն և խնդրելով ընթեռնուլ յունէն նոյա զթուղթ իւր, և տալ ընդ այն զկարծիս իւր և զանաչառ դատաստանն։

« Այլ իմացեալ Հ. Եսայի և զխիստ պատասխանին Հօր Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, և զկասկածն ոմանց, որպէս թէ ինքն իցէ գրգռեալ զՀ. Սարգիս առնել նորա այնպիսի խիստ պատասխանի, լռէ և չառնէ պատասխանի թղթոյ Հ. Սարգսի ըստ խնդրոյ նորա։ Վասն որոյ գրէ առ նա Հ. Սարգիս թուղթ

ըստ յետագայ օրինակիդ, առ հարցանել ի Նմանէ զպատճառ զանցառութեան Նորա ։

« Վերապատուելի Հայր և սիրեցեալ Եղբայր.

« Երկար գրոյ իմոյ, տուելոյ Ձեզ ի 18 Նոյեմբերի անցելոյ, ընկալայ ի ձէնջ համառօտ ինչ պատասխանի ։ Կարծեմ թէ կարի իմն զբաղեալ իցէք ի գործս պաշտօնի ձերոյ, կամ ոչ արժան համարեցայք առնել այնպիսի բանից պատասխանի, թէպէտ և զդատաստանն որ ընդ այն՝ հաճութեան կամացդ թողի. և կամ արդեօք ընթերցեալ ձեր զգրուածս յունկն մերոցն ի վանս, և նոցա ի խստութենէ բանից անտի գրուածոյս, տարապարտ ինչ կարծիք զձէնջ կալեալ իցեն, … որպէս թէ պատասխանի գրուածոյ ձերոյ իցէ գրուածն իմ այն, և իբրև ի բանից ձերոց գրգռեալ և բերեալ իմ յայնպիսի գրութիւն, և ձեր յայնմանէ զգուշացեալ լռէք. քանզի նըշմարեմ ես զայս ի թուղթն Հ. Սամուէլի որ առ իս, և որում ետու զարժան պատասխանին ։

« Այլ զոր ինչ և իցէ պատճառ այսպիսի պատասխանւոյդ, կարծեմ թէ մեղանչէք ընդդէմ օրինաց Նամակագրութեան, չառնելովդ ամենևին յիշատակութիւն ինչ զկարևորացն որ ի բանս թղթոյ իմոյ առ ձեզ. և թէ՝ չէ պարտ ճշմարիտ հասարակասիրի ի բանս և ի կարծիս մասնաւորաց հայիլ, այլ զիրաւունս հասարակաց քննել… և յորժամ զայս այսպէս արասցէ, չմնայ ապա տեղի ակնածութեան յումեքէ ։ Սակայն ակն ունիմ ես տակաւին լնուլ ձեր զերկոսինն, զօրէնսն և զպարտսն միանգամայն ։

« Ի Փարիզ. 26 դեկտ. 1846.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Տեսեալ Հ. Եսայի թէ յաղթարարութենէ անտի խրոյ առ Հ. Սարգիս ի Փարիզ հակառակութիւն ծագեցաւ, և ինքն ընդ այն մեղադրեցաւ իբրև բանսարկու ոք, լռէ առ ժամանակ մի, բայց իբրև սախպի ի Հ. Սարգսէն՝ առնել հարցման

նորա պատասխանի, հարկաւորի նա յանժամ և առնէ պա-
տասխանի, օրինակ զայս.

« Գերյարգոյ և Վերապատուեալ Տէր.

« Աղաչեմ զՁեզ ընդէ՞ր ստիպէք զիս ի գրել և յիշեցու-
ցանել զանհաճոյսն ։ Զի՞նչ օգուտ տեսաք մեք ցարդ ի գրելոյ.
ո՞չ ապաքէն ի զուր և ի կսկծեցուցիչ գրուածոց ձանձրա-
ցեալ և յղփացեալ եմք ։ . . .

« Այլ յոյժ զարմանամ և ցաւիմ ի վերայ այլ ընդ այլոյ
գրութեան Վերապատուութեանդ, և Վ. Հ. Յովհաննու.
կանխաւ ասէիք, թէ ա՛յնքան նոր է պալատդ, մինչև չկարօ-
տի և ոչ բեւեռի միոյ, և այժմ ծախեցիք 60,000 ֆրանք
ի նորոգութիւն նմին. կամ չիք ի ձեզ խոհական կառավա-
րութիւն, և կամ խաբել ջանայք զմիաբանութիւնս, և մեք
պարտաւորեալ եմք այժմ հատուցանել վաշխս ի տարւոջն
15,000 ֆրանք ։

« Եթէ վարեալ էր ձեր խոհականութեամբ, փոխանակ
այլոց տալոյ զվաշխս՝ կարէիք ծախել զայն ի վերայ պալա-
տիդ ։

« Ահաւասիկ եղեալ անիրաւութիւն աղքատաց ազգիս ։

« Կարեկցաբար ցաւիմ յոյժ ի վերայ ճակատագրին Հօր
Յովհաննու. քանզի որպէս լսեմ, խեղճն տագնապի և նեղի
յոյժ ի պարտատեարցն. այդպէս երբեմն տագնապէր ի Վե-
նետիկ մինչ տպարանապետ էր ։ Ո՜վ զերիմաստդ, ընդէ՞ր
յառաջագոյն ոչ խորհեցար, թէ չիք մեր կարողութիւն. զի
մեք ամաւ յառաջ ծանուցեալ եմք ձեզ զկարողութիւն և ըզ-
գումար դրամոցն մերոց, և այժմ յանհնարին տագնապս
արկեր զմեզ ։ Մի՛ ասեր բնաւ թէ արարի զամենայն ըստ խոր-
հրդոյ Վ. Հ. Սարգսի. զի եթէ հաճեալ էիր և հաւանեալ
խորհրդոյ նորա, ընդէ՞ր առիթ ետուր այնքան անհամու-
թեանց, և այլն, և այլն. քանզի չկամիմ յիշել զգուեկլիս ։ . . .

« Ո՜վ Հ. Յովհաննէս, կամ խոհեմութեամբ վարեսջիր և կամ
ի բաց կաց ի պաշտօնէդ, և մի՛ խայտառակեր զմեզ յանդի-

ման աշխարհի։ Ձե՞ս դու այն անձն որ ի տարւոջն 6,000 ֆը-ռանք ծախեցիր վասն անձինդ, և խառնեալ չփոթեցեր զհաշիւ տպարանին ընդ հաշուի աղքատաց ազգիս։ Եթէ ունէր դրամս տպարանդ, ընդէ՞ր ոչ փոխանակագիր արարեր ի վերայ վանաց. իսկ եթէ չունէր, զոր քաջ գիտես թէ չունի, ընդէ՞ր յանդգնեցար առնել զայդ գործ։ Ահաւասիկ եղեալ անիրաւութիւն աղքատաց ազգիս։ Ես չասեմ բնաւ և ոչ ընդ միտս իմ, թէ չարութիւն կամ անզգամութիւն կայցէ ի գործս ձեր. քա՛ւ լիցի. այլ զայս միայն ասեմ, զի եթէ անխոհեմութեամբ իցէ գործդ և եթէ չարութեամբ, վնաս մի և նոյն է։...

« Մնամ

« Գերայարգոյ Վերապատուութեանդ

« Բատւիայ. 7 յունվար. 1847.

« Անձնանուէր

« Հ. ԵՍԱՅԻ ՄԶՐԱՔ. »

Թէպէտ և լռէ Հ. Եսայի առնել պատասխանի հարցման Հ. Սարգսի, անօգուտ համարելով յիշեցուցանել զանհաճոյսն, այսինքն զանպատեհ գնացս ոմանց ընդ նմա՝. Թէպէտ և ասէ թէ ձանձրացեալ և յափրացեալ էր ինքն ի դառն և ի կսկծեցուցիչ բանից, սակայն նորօք վարի ինքն ընդ Հօր Յովհաննու, և յայտնէ զծածուկ խորամանգութիւն նորա որ ընդդէմ Հ. Սարգսի։...

Արդ՝ տեսեալ ուր ուրեմն Գեր. Հիւրմիւզի զխալանս իւր, զարդիւնս ասեմ գոռոզ և անիրաւ բանից գրութեան իւրոյ որ առ Հ. Սարգիս, խոնարհի ակամայ և ջանայ արդարացուցանել զինքն ընդ այն կարծեցեալ պատճառաւ. և պատրուակեալ բանիւք գրէ թուղթ առ Հ. Սարգիս, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի ողջոյն.

« Մինչև ցայժմ ակնկալեալ պատասխանւոյ թղթոյն իմոյ գրեցելոյ 19 դեկտեմբերի անցելոյն, իբրև վրիպեցայ ի յու-

սոյս, խոււն ինչ ոգի առեալ ի մեծէ վհատութենէս և ի կա-
րեվէր ցաւոց սրտիս գամ ի գրութիւն թղթոյս ։

“ Ցաւեաց և ցաւէ ինձ յարդ մեծապէս՝ զի այնպէս այլ
ընդ այլոյ տուեալ է իմաստս Վերապատուութեանդ թուղթն
իմ գրեալ ի 24 հոկտեմբերի անցելոյն, զոր ոչ եթէ յարհա-
մարհութիւն Ձեզ և ի յանդիմանութիւն՝ որպէս կարծին՝ գը-
րեցի, այլ մանաւանդ յարդարացուցումն և ի պատիւ ։ Ո՞չ
ապաքէն ի պատասխանի էր այն գրեցելումն ի Վերապատ-
ուութենէդ ի 16 Նորին ամսոյ, յորում յետ առաջի առնելոյ
Ձեր զբանս Վ. Հ. Յովհաննու վասն ի գրաւի դնելոյ զտունդ
և յետ հետեւեցուցանելոյ ի բանից անտի Նորա՝ թէ իմ
արհամարհեալ իցէ զՁեզ և զկարծիս Ձեր, յաւելուք.
“ Վասն որոյ խնդրեմ ի Վեհէդ... գրով և որոշ բանիւք ընդ
“ այս պատասխան ։ ” Եւ իմ այն ինչ հասեալ ի վանս և ըն-
թերցեալ զթուղթդ՝ չկարեմ ասել թէ որպէս խռովեցայ ընդ
անակնկալ բանսն. զի իմ եթէ արհամարհեալ էր զկարծիս
Վերապատուութեանդ՝ ընդէ՞ր ապա յայն հաստատեալ փու-
թացայ գրել առ Հ. Նսայի և ամենայն ջանիւք ետու բերել
զգումարն զայն ըստ բանից Վերապատուութեանդ, և ի մեկ-
նելն իմում այտի դարձեալ յանդիման իսկ երկոցունցդ՝ թէ
յիշիցէք՝ ասացի ընդ այլ բանս իմ զի և ես փութացայց ըստ
խոստմանս իմում՝ յղել ամսոյ ամսոյ զհինգ հազար ֆրանքսն.
և թէ արդարեւ արհամարհեալ էր իմ զկարծիս Ձեր, ո՞ ստի-
պէր զիս կալ ի կարգադրութիւնսդ ։

“ Ցայտօնիկ հայեցեալ և ի տարապ եւս գրութեանս թղթոյդ,
և զայն եւս ընթերցեալ, զոր յաւելուքն զհնի թէ “ Ագիքս
“ այս շարժեալ և համարձակեալ իցեն ի Նոր ճանաչմանէ
“ անտի, ” ասեմ. Ա՞ զիարդ զինչ և ուստի՞ այլ ընդ այլոյ և
ծայրակտուր զբանս իմ լուեալ և խռովեալ, զթուղթդ զայդ
գրեցէք առ իս. խռովեցայ և ես ընդ եղեալսն և փութացայ
ըստ խնդրոյդ տալ զհրամանն, ոչ առ Վ. Հ. Յովհաննէս
գրելով՝ զի մարթ էր թերեւս կասկածել Վերապատուու-
թեանդ, թէ և այլ ինչ առ Նա և այլ առ Ձեզ գրիցեմ. այլ
առ Վերապատուութիւնդ գրեալ՝ պատուիրեցի ընթեռնուլ և

յունկն նորա ։ Եւ որպիսի՞ ինչ հրամանքն էին. յարհամարհութի՞ւն կարծեաց Վերապատուութեանդ, թէ ընդհակառակն պատուելով զկարծիս Ձեր և վերագրելով իբրեւ զիմ և զՄիաբանութեան կարծիս՝ յասելս, թէ ոչ Վերապատուութեանդ միայն, այլ և իմ և Միաբանութեանս կամք են. և այն՝ ոչ վեր ի վերոյ և առ ականէ՝ այլ բացարձակ կամք, որով ասել կամէի՝ թէ զայն ինչ, զոր Ձեզ միայնոյ վերագրէ Վ. Հ. Յովհաննէս, ոչ այդպէս է, այլ և ես և Միաբանութիւնս համակամք եմք ընդ Վերապատուութեանդ. և թէ յանցանք իցեն՝ և ի մեր եւս վերայ առնումք զայն. և առաւել քան զայս զի՞նչ կարէի պատուել և մեծարել զկարծիս ձեր ։

« Եւ զի ի տարագէ գրութեան թղթոյ Վերապատուութեանդ ոչ ես միայն, այլ առաւել քան զիս երկեան այլք, մի՛ գուցէ շարժեալ ոգիքն համարձակեալ և եւս սրասցեն ինչ ընդդէմ կամաց Միաբանութեանս, և Ձեր չեւ եւս ունելով զիշխանութիւն Ուղղչութեան լռեսջիք. վասն այն յաւելու հատուածն այն խիստ թուեցեալ՝ թէ « Եւ Վերապատուութիւնդ « համարեսցի յանցաւոր, եթէ և Ձերովդ այդր « լինելով » և այլն. որով իշխանութիւն իմն առեալ Վերապատուութեանդ կարէր ամենայն հոգւով հակառակ կալ՝ ասելով, թէ չկարեմ և ես միաբանել յայդ խորհուրդ և յանցաւոր համարիլ առաջի Միաբանութեանս ։

« Բայց զայն ինձ ի յանցանս դրէ Վերապատուութիւնդ, զի զընդդիմանալն Ձեր և զհակառակիլ կարծեաց Վ. Հօր Յովհաննու ծանուցեալ իցեմ Նմա, որով և պատճառք լեալ տհաճելոյ Նորա ընդ Ձեզ ։ Առ որ ասացից Նախ՝ եթէ այս պատճառք իցեն տհաճելոյ Նորա ընդ Ձեզ, պատրաստ եմ ո՛ր և է օրինակաւ քաւել զայն և հաշտեցուցանել զնա ընդ Վերապատուութեանդ ։ Բայց ներեսցի ինձ ասել եւս. զի թէ հակառակել կարծեաց ուրուք և ընդդիմանալ բանաւոր պատճառօք, և այն ի Միաբանութեան ուրեք՝ որպիսի մերս է, և ի խնդիր ինչ այսպիսի՝ պատճառք իցեն տհաճելոյ, ապա բազումք իցեն ի մեզ այսպիսի յանցաւորք. նա ես իսկ և Միաբանութիւնս, որք ընդ կարծիս Ձեր միաբանք հակառակ

կայաք և կամք ներհակ կարծեացն. իսկ եթէ ոչ՝ զիմ՞րդ մարթ էր ինձ կասկածել, թէ ի բանից անտի և եթ տհաճել կարիցէ ընդ Ձեզ Վ. Հ. Յովհաննէս ։ Թողից ասել՝ զի մեք երեքեան էաք յայնժամ երիցագոյնք այդր, յորոց Վ. Հ. Յովհաննու կարծիք էին և կամք ի գրաւի դնելոյ զտուննն. համարեաց թէ և ես իսկ ի նոյն կարծիս էի անպիտան համարեալ և արհամարհեալ զխորհուրդ Ձեր և զխրատ. արդ եթէ և Վերապատուութեանդ միաբան ընդ մեզ լինէին կարծիք, հարկ էր ինձ ապա ի գործադրութիւն խորհրդոյն փութալ. իսկ եթէ ոչ՝ ի հակառակէն իմացուցանել իւիք Հ. Յովհաննու, զի և Ձեզ հակառակ է խորհուրդն այն վասն այս և այն ինչ պատճառաց ։

« Սակայն առաւել քան զամենայն ստուարագոյն յանցանք են իմ վերջին հատուած թղթոյս, որով աանց իսկ ամօթոյ համարձակեալ յուշածեմ զամփոփելն իմ զիշխանութիւն Վերապատուութեանդ յասելս՝ (ոչ պարզաբար թէ Վ. Հայր Յովհաննէս ընդէ՛ր խնդրիցէ ի ձէնջ արծաթ, որ ոչ Աւգղիչ էք և այլն,) այլ թէ՝ « Զարմանամ թէ Վ. Հ. Յովհաննէս « որո՛վ տիտղոսիւ խնդրիցէ ի Ձէնջ արծաթ. զի գիտէ և « պարտի գիտել քաջ և այլն. » զի՞նչ իցեն և առ ի՞նչ յաւելուած բանիցդ՝ « Գիտէ և պարտի գիտել քաջ ։ » Եթէ յիշէ Վերապատուութիւնդ զամենայն ասացեալսն յինէն՝ բազում ինչ կարէ գուշակել և իմանալ, զոր ինձ չմարթէ ասել և գրել ։

« Սակայն հարցից՝ ընդէ՞ր ամփոփեցի ես յայնժամ զիշխանութիւնդ. յարհամարհութի՞ւն ձեզ, ի նախատինս և ի վնա՞ս, թէ մանաւանդ յառաւելագոյն օգուտ և ի փառս. առ ժամանա՞կ մի՝ թէ մշտնջենաւոր ։ Եւ թէ յարհամարհութիւն Ձեզ արդարեւ, որպէս համարիքդ արդ, ընդէ՞ր ոչ առ ժամայն չասացէք ինձ ընտանեբար որպէս զայլ ինչ բազում. յայտ է ապա թէ և Վերապատուութիւնդ ուղիղ իմացաւ յայնժամ զմիտս իմ. և ընդէ՞ր այժմ այլ ընդ այլոյ իմացեալ և խռովի և յարհամարհութիւն իւր առնու, զոր ես մանաւանդ ի զերծուցանել զՁեզ համարէի գրել՝ ոչ ինչ խիղճ ունելով ընդ իւրդ ։

« Բայց ընդէ՞ր ոչ առ ժամայն վաղվաղակի կարգեցի ըզ-Ձեզ ի պաշտօնդ. և զի՞նչ. կամէ՞ր Վերապատուութիւնդ, զի զոր խաղաղութեամբ և վայելչաբար եղեւն արդ և վճարեցաւ՝ խռովութեամբ առնէի յայնժամ և անալի օրինակաւ. կամ զամենայն ինչ գիտէ Վերապատուութիւնդ՝ և չկարէ յայն-ժամ ասել զայդ այդպէս, և կամ թէ չգիտիցէ՝ հաւատասցէ բանիցս, զի որ գլուխն է կարգեալ անարժանաբար, կարիցէ գիտել ինչ մի աւելի՝ զոր չգիտիցեն այլք ։

« Ցայս վայր ի բացայայտութիւն իմաստից Թղթոյն իմոյ այնորիկ յերկարաբանեալ՝ չկամիմ տալ պատասխանի գրե-ցելոցն առ ի Ձէնջ ի 21 Նոյեմբերի, զույց ի պատճառաբա-նելս իմում ստգիւտ ինչ Թուեցայց արկանել զՎերապատ-ուութեամբդ, յորմէ յոյժ հեռի եմ և կամօք և սրտիւ ։ Կալցի զայս Վերապատուութիւնդ որպէս և ախորժէ, ոչ զայրանամ և ոչ ցասնում, այլ վշտանամ միայն և ցաւիմ՝ զի վրիպակ կարծեօք ամբոխեալ Վերապատուութեանդ, և ոչ անսայթաք ընթացին իրք միաբանութեանս և դպրոցիդ, ընդ որս մեծա-պէս փոյթ է ինձ ։ . . . .

. . . .

. . . .

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 9 յունվարի. 1847.

« Ն. Ծ. Հ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Ընդհանրական Աբբայ. »

Ահա ըռելեայն իմն յայտնէ Գեր. Հիւր. ի Թղթի իւրում և զայլ խափանարարսն յապաղելոյ իւր զորոշումն ուղղի Մու-րատեան վարժարանին, զՀայրս Յովհաննէս և զՍտեփան ի Փա-րիզ, և զփաստաբան Նոյա զՀ. Գաբրիէլ ի վանս ։ . . .

Առնէ պատասխանի Հ. Սարգիս վերոյիշեալ Թղթոյ Գեր. Գէորգ Հիւրմիւզի, Թէպէտ և քաղաքավար, այլ մերկ և առանց պատրուակի բանիւք, հանդերձ վերստին երկրորդե-

լով զբանաւոր առաջարկութիւն իւր և զկարեւոր պայմանն, որ վասն դպրոցին ի Փարիզ, օրինակ զայս .

« Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր իմոյ խոնարհ համբոյր Աստուածարեալ Աջոյն .

« Ցանկալի Նամակ Վեհիդ, գրեալ յ9 յունվարի տարւոյս, ընկալայ ի 17 սորին ամսոյս, և մխիթարեցայ փոքր ինչ յիրաւացի ցաւոց սրտիս, և քաջալերեցայ յիսպառասպուռ վհատութենէ անձինս ։ Շնորհ յոյժ ունիմ այնմիկ՝ որ մխիթարեաց և քաջալերեաց զիս այսչափ ինչ ։ . . .

« Երանի՛ թէ սխալեալ էի և իցեմ տակաւին ի կարծիսն իմ որ ի նախընթաց թուղթսն իմ առ Վեհդ. այո՝ բիւր անգամ երանի՛ տաց անձին, եթէ սխալեալ իցեմ ես ի կարծիսն իմ որ անդ. զի մնայր և մնայցէ ինձ արդեօք յոյս մխիթարութեանս, գիտելով իմ չափ, զի սխալումն անգամոյ միոյ Միաբանութեանս՝ չբերէ այնչափ ինչ վնաս հասարակութեանս, որչափ ինչ բերէ այն նորին իսկ գլխոյն, որպէս և տեսաւ երբեմն, և որպէս կրեաց զայն և կրէ ցարդ միաբանութիւնս ։

« Զայս այսպէս հաւատարիմ արարեալ՝ ապա չկամիմ ես ի վերայ բուն կամ այլընդայլոյ իմաստից բանից թղթոյ Վեհիդ վիճել, թէպէտ և ունիմ ի ձեռին և այլ նորոգ հաւաստիս... այլ այսչափ և եթ ասացից, զի եթէ արդարեւ այդ և այդպիսի էին իմաստք բանից թղթոյ Վեհիդ, որպէս և բացատրէք, ապա ընդէ՞ր այսչափ ժամանակ, իբրեւ ամիսս երիս, զայդ յապաղեցէք. թողից ասել զանուայրաք ընթացից իրաց միաբանութեանս, և դպրոցիս, ընդ որս մեծապէս փոյթ է և ձեզ . . . աՀա ընդ այս այսչափ ինչ միայն, իբրեւ լռութեամբ իմն անցեալ՝ եկից արդ ի կարեւորագոյնն մեր խնդիր, ի բանաւոր առաջարկութիւնս ասեմ, և ի կարեւոր պայմանն, զոր ի նախընթաց թուղթն իմ առաջի արարի Վեհիդ, և խնդրեցի առնել նոցին պատասխանի, և զոր ոչ կատարեցէք մինչեւ ցայսօր ժամանակի, մերթ իբրեւ անպատշաճ ինչ համարելով, և մերթ չկամելով բնաւ իսկ յիշատակութիւն ինչ զայն-

մանէ առնել. և ահա վասն այսորիկ յապաղեցի և ես ցարդ-առնել պատասխանի Թղթոյ Վենիդ, չկամելով և չկարելով և իմ ևս ընդդէմ ճանաչմանս և փորձառութեանս այլ ինչ գրել և առնել, բայց եթէ զնոյն բանս վերստին երկրորդել, որպէս և այժմ հարկաւորիմ զայն առնել իբրև պատասխանի Թղթոյ Վենիդ. վասն որոյ ասեմ նախ՝ թէ չէ իմ ասացեալ ի նախընթաց գրուածն իմ, թէ չեն պիտոյ կանոնք դպրոցիս, այլ թէ՝ այնպիսի կանոնք պիտոյ են, որք պատշաճիցին հան-գամանաց ժամանակիս և վիճակի պաշտօնէից դպրոցիս. և թէ՝ այսպիսի կանոնք փորձառութեամբն լինին, և ոչ տեսա-կան գիտութեամբ, և կամ փորձառութեամբ որ ի նորըն-ծայարանի վանացս, գնել ըստ այնմ կանոնս և փարիզու դպրոցին.

« Երկրորդ՝ յաջողելն բարեկարգութեան յամենայն ժամա-նակի, ոչ թէ գրաւոր կանոնօքն լինի, այլ խոհական գնա-ցիւք պաշտօնէից դպրոցին, որպէս և աչօք իսկ տեսի և ի փոր-ձոյ գիտեմ. և եթէ Վենդ անփորձ իցէ և չգիտիցէ զայս, կարող եմ ես ցուցանել, թէ գրեթէ և ոչ մի ի գրաւոր կանո-նաց Ռափայէլեան դպրոցին պահեցաւ անարատ, և այն մերձ այդր վանացս. վասն այսորիկ արդարանայր արդեօք երկիւ-ղածն այն երբեմն ի համարձակ բանս իւր, ասելով բազում անգամ, թէ « Քառակուսի պարտ է հատանել զկանոնսն. » և այլն և այլն.

« Բայց չգիտեմ, թէ ընդէ՞ր լռեալ կայ այժմ համարձակ և փորձ անձն այն, (Հ. Ռափայէլ,) գուցէ այլ իմն երկիւղա-ծութեամբ, այլ շա՛տ է զի յօգուտ և ի փառս լիցի այն... և վասն այսորիկ ասացի և ասեմ դարձեալ, թէ պարտ է Վենիդ և հասարակութեանս պաշտօնէից դպրոցին հաւատալ և ի նոսին վստահ լինել, քան ի գրաւոր կանոնսն ապաւինիլ, և անտի յաջողել բարեկարգութեան երբէք ակն ունել.

« Երկրորդ՝ հարցանեմ ես, թէ չիցէ՞ հակառակ թէպէտ և ոչ բանին, այլ բուն իսկ նպատակին՝ կանոնն այն, թէ պարտ իցէ մերոյն աստ կրել արտաքոյ աշխարհիկ սքեմն, իսկ ի ներքս ի դպրոցիս պահեսցեն միշտ զձեւ զգեստուց վանացս.

Արդ զգուշութիւն պարկեշտութեան մերոյն աստ՝ արտաքս պարտ իցէ լինել թէ ի ներքս. եթէ արտաքս կրել զայն չէք ինչ երկիւղ անպարկեշտութեան, իցէ՞ արդեօք երկիւղն այն ի ներքս ի դպրոցին. և զի՞նչ նպատակ նորին, եթէ ոչ տեղի տալ հետաքննութեան և զանազան կարծեաց այլոց։ Ասիցէք արդեօք, թէ խորհրդով և նախատեսութեամբ եղեալ իցէ կանոնն այն, զի մի՛ մտասցին մերքն աստ զվիճակ իւրեանց, և մի՛ օտարասցի նոցա բոլորովին զգեստ վանացս։

« Ասեմ ես, ապա ընդէ՞ր նախատես խորհրդով կանոնդ այդ ոչ եղաւ և չդնի վասն մերոցն որք ի Պոլիս և որք այլուր։...

« Զորրորդ՝ չիցէ՞ կանոնս այս վնասակար, յորժամ չպահիցի այն, հայեցեալ ի վիճակ մերոցն աստ՝ որոց հարկ լինի յաւուր երկիցս և երիցս ելանել արտաքս ի կարեւոր պէտս դպրոցին, պարտական լիցին նոքա ըստ կանոնի ձերում յամենայն նուագս փոխել զզգեստս իւրեանց. ապա թէ ոչ՝ ստուգանող լիցին նոքա հրամանի ձերում, և ահա վնասակարութիւն. և եթէ լռեսցէ ընդ այն ուղղիչն, պարտական լիցի նա Անեղ Աստենին, ըստ վճռոյ ձերոյ։... Տեսանէք զվնասակարութիւնն որ ի զգոյշ և ի նախատես խորհրդով եղեալ կանոնէդ այտի։

« Դարձեալ՝ չիցէ՞ իմ զայսմանէ գրեալ առ Վեհդ և օրինակք ցուցեալ, և Ձեր ցարդ լռեալ։ Ապա զի՞նչ մնայ այսուհետեւ խոհեմութեան Ձերին գրել հարկաւ և ցուցանել զայն... բայց եթէ՝ սպասել վերստին գալստեան Ձերոյ այսր, զի տեսեալ ձեր անձամբ տնօրինեսջիք զայն, եթէ գտանիցէք ինչ իրս ի կանոնսն հակառակ բանի կամ հանգամանաց տեղւոյս և կամ վնասակար. որպէս և տնօրինեցիք զայն յառաջին գալստեան ձերում այսր։

« Եւ դարձեալ՝ չխօսեցա՞յ ես զայսմանէ բերանով այդր ի վանս, եթէ՛ մանաւանդ առանձին առանձինն, և եթէ՛ ի ժողովի անդ առաջի բազմաց, որք ոչ միայն չհաւանեցան բանիցս, այլ գրեթէ գայթագղելով գայթագղեցան։ Մի թէ չէ՞ր իմ աչօքս տեսեալ և փորձ իսկ անձամբ եղեալ այնմ

զամս բազումս։ Ապա ի զուր է գրել ուղղչին և ցուցանել այդր զհանգամանս տեղւոյս և զվիճակէ մերոյն այսր. քանզի չհասանէին նոքա բանից գրութեան նորա, և ոչ իսկ առնէին ինչ պատասխանի։

« Իսկ զբերեւ ինչ իրս, առէք, ինքնին իսկ, ուղղչին, ըստ պահանջել հարկին տնօրինել. այս ինքն, կարէ նա տնօրինել զփոխադրութիւն կոհ կարասեաց աստի անդ, որպէս տնօրինէ հանդերձապետն վանացս զայն ի պահանջել հարկին։ Ահա այսպիսի և այսչափ է իշխանութիւն Տեսչին դպրոցիս, ըստ կանոնի ձերոյ։...

« Իսկ պատասխանին իմ վերջին յօդուածոյ բանից Թղթոյ Վեհիդ, այս է, թէ ցանկութիւնն իմ և կամ խնդիրս պարտ էր լինել ըստ բանաւոր առաջարկութեանս և կարեւոր պայմանացս, որք ի գրուածն իմ առ Վեհդ, և ընդ որ լսեալ ձեր խսպառ մինչեւ ցարդ, չկատարեցէք զխնդիրն իմ բնաւ. ապա մնամ ես ի նոյն կամս և ի ճանաչումն մտացս, չկարելով և իմ առնել ինչ աստ ամենեւին... և ապա չեմ ես կարգեալ ուղղիչ դպրոցիս, ըստ տուելոյն ինձ ի 29 հոկտեմբերի անցելոյն, և ըստ եղելոյ կանոնաց նորին։

« Ահա ի կամացս աստի և ի ճանաչմանէ մտացս կարէք այժմ խելամուտ լինել Գեր. Տէր, թէ զինչ էին պատճառք այնչափ վշտանալոյս. յապաղո՞ւմն ընտրութեանս ի պաշտօն ուղղչին, թէ այլ ինչ արդեօք, զոր լսէք ամենեւին. և թէ՝ զչափ վարկին Միաբանութեանս որ զինէն իմացեալ էի ես և քաջ ճանաչէի, զի առաւել էր քան զարժանաւորութիւն իմ, այլ ըստ բաղդին իմոյ՝ վարկն այն նորա մինչեւ ցյուլիս տարւոյս տեւեաց, իսկ յետ այնորիկ՝ չգիտեմ թէ ուստի՞ և զիա՞րդ նուազեաց և խսպառ պակասեաց այն։... Եւ ահա ի ժամանակէ անտի՝ ընդ պակասիլ վարկին, սկսաւ շարժումն այն զանազան ոգւոց, զոր Վեհդ այլազգ իմացեալ մեկնէ, որպէս և նոր ճանաչումն, որ ի գրի իմում։...

« Թէպէտ և չէին և չեն ինձ բնաւ կամք, որպէս և վերագոյն ասացի, առնել ինչ յիշատակութիւն զցաւալեացն որ ի նախընթաց գրուածն իմ, դուցէ և ի յիշատակելս իմում

ոխակալ և գկծեցուցիչ ըզ համարեցայց, յորոց հեռի եմ ի բնուստ, և զգուշանամ յոյժ իբրեւ ի վնասակարաց հոգւոյ և խաղաղութեան հասարակաց, և յորոց Տէր պահեսցէ. այլ որպէս յառաջ պարտաւորեցայ ես յարդարութենէն և ի խղճէ մտացս խօսել համարձակ զճշմարտութիւնն, նոյնպէս և այժմ հարկաւորիմ անտի յիշատակել և կամ բացատրել զնոյն, ի պատասխանի բանից կրկին Թղթոյ Վեհիդ, յորս յիշատակեալ և իմացեալ էիք այլազգ զբանս նախընթաց գրուածոյս. միանգամայն և ի քաջիկ խելամուտ առնել զՎեհդ և զԱռաջակայդ հանդամանաց տեղւոյս և վիճակի մերոյն աստ. որպէս զի ըստ այնմ և ըստ ժամանակին գիտասջիք խորհել և գործել զարժանն, յանսայթաք ընթացս իրաց Միաբանութեանս և դպրոցիս, ընդ որս մեծապէս փոյթ և հոգք են ձեզ, և մեզ ամենեցուն առհասարակ: ...

« Զի որպէս երբեմն ումեք այդր ազդ արարի, նոյնպէս և այժմ ազդ առնեմ Վեհիդ, թէ դպրոցս այս մեր որ աստ ի Փարիզ լիցի փոքրաքար բուն իսկ արժէից միաբանութեանս, և պատճառ, կամ փառաց, եթէ գիտասցէ որպէս պարտ իցէ ընթանալ, և կամ նախատանաց նորա, եթէ ընթասցի այնպէս, որպէս ընթացաւ ցարդ. զի աստ ոչ է Վենետիկ, և Պատաւիոն, և ոչ իսկ Կոստանդնուպօլիս: ... Եւ առ Ձեզ, Գերապայծառ Տէր, բովանդակ պատասխանին իմ կրկին նամակացդ առ իս, յորմէ ակն ունիմ ես զի ծանիջիք զիս, թէ և յոչ իմիք պիտանի, այլ գոնէ իբրեւ ազդարար փառաց և նախատանաց Հասարակութեանդ, այլ և ակն ունիմ հանդիպել խնդրոյս, նախ թողութիւն ի Վեհէդ ընդ համարձակ գրութիւնս իմ առ Ձեզ, և երկրորդ՝ մխիթար պատասխանւոյ բանաւոր առաջարկութեանս և կարեւոր պայմանացս, և որով մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 20 յունվար. 1847.

« Խ. Ծ. և ամենահնազանդ որդի

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Առեալ Գեր. Հիւրմիւզի զվերոյիշեալ պատասխանին Հօր Սարգսի, դադարէ խսպառ ի պատճառանաց յարդարացուցանել զինքն, և ի պահանջմանէ տալոյ կանոնս դպրոցին, թողլով զայն ուղչին։ Տեսեալ զայն Հ. Սարգսի մխիթարի ընդ յաղթութիւն ճշմարտութեան որ ի բանս իւր, և քաջալերի ի խոնարհութենէ Գեր. Հիւրմիւզի, որ ի գնացս նորա, որում շնորհակալ լինի ապա, ՝և յորմէ ակն ունի մխիթարիլ և ես։ Վասն որոյ սկսանի խորհել և հոգալ զյառաջադիմութենէ վարժարանին, ըստ դիտաւորութեան Բարերարին, գանգատել զգնացից խափանարարաց, և դարման տանել վնասուցն, վասն որոյ գրէ թուղթ առ Գեր Հիւրմիւզ, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Հոգ մտաց որ զիրաց հասարակաց, եթէ կանուխ և թէ անագան բերէ մխիթարութիւն սրտի հոգածի. որպէս և տեսանի այժմ յարդեանց բանիցս ճշմարտութեան... թէպէտ և հակասութեան և յանդգնութեան ետուն զայն երբեմն ոմանք այդր յեղբարցս, կարճմտութեամբ և ակնառութեամբ դատելով զայն։

« Այլ շնորհ յոյժ ունիմ առաքինութեան Վեհիդ, որ մխիթարեաց և քաջալերեաց զիս ըստ բաւականին, և ակն ունիմ զի մխիթարեսցէ և քաջալերեսցէ զիս խսպառ, կատարելով զխնդրուածս իմ բովանդակ։

« Աւելորդ վարկանիմ յիշեցուցանել Վեհիդ զնպատակն Բարերարին դպրոցիս, այլ և կարևոր և հարկ համարիմ յուշ առնել Ձեզ զեղանակն որով մարթ է հասանել նպատակին, և զխափանումն նորին, որ յինքնահաճ մտաց և յանձնասէր կամաց ուրումն, (Հ. Անանիայի Ճելալեան,) թէպէտ և այն ի խնամակալաց ժողովոյն որոշեցաւ, թէպէտ և այնմ յերկուց դպրոցացս հարիւր հազար ֆրանք օժանդակեցաւ, այլ արդիւնքն որ անտի, ըստ պայմանաց և ըստ ակնկալութեան չերևեցան ցարդ ի միջի. վասն զի ինքնահաճն և անձնասէրն այն՝ կամի ինքնին վարել զդպրոցն զայն, առանց ուրուք

ի մէջ խառնելոյ յայն, թէ՛ ի հրահանգս մանկանց, և թէ՛ յընտրութիւն նոցին:... Եւ հաստատութիւն այսմ, ահա տըգիտութիւն մանկանց եկելոցն ի դպրոցս, յորոց բազումք տըգէտք են վերծանութեան անգամ. և ահա... ոմանք ՚ի նմանէ նոցին, զորս և ի կարգ աղքատ մանկանց դասեալ առաքեաց ի դպրոցս, զրկելով զաղ[ք]ատս յիրաւանց իւրեանց:

«Դպրատունս այս որ ի Փարիզ արժէ մեզ այսօր 600,000 ֆըրանք, որոյ տարեկան շահն 30,000 ֆրանք. յաւելեալ անդ զտարեկան ծախսն դպրոցիս 42,000 ֆրանք, ընդ ամենայն բովանդակի 72,000 ֆրանք. բաժանեալ զայն ի վերայ 36 մանկանց դպրոցիս, իւրաքանչիւր մանկանն լինին ծախք ի տարւոջն 2,000 ֆրանք և առաւել ևս:

«Իսկ օգուան որք յայսչափ ծախուցս ստոի զամս հինգ, ուսանել մանկանց դպրոցիս զսկզբունս երկուց կամ երեք լեզուաց, և ինչ ինչ գիտութեանց միայն, զորս ի դպրոցն Պօլսոյ կարեն ուսանել սակաւիկ ինչ ծախիւք, և առաւելագոյն շահուք, բազմութիւ մանկանց միանգամայն ուսանելով՝ և յընտրելագունից անտի ի դպրոցս այսր առաքելով, ի հրահանգս բարձրագոյն գիտութեանց և կարեւոր արուեստից:...

«Ահա այսու նպատակաւ և այսպիսի պայմանօք հաւանեցաւ ժողովն խնամակալաց օժանդակել նմա, Հ. Անանիայի, զայնչափ գումար արծաթոյ, 100,000 ֆրանք, և ոչ թէ զինչպիտութեան կամաց նորին հաճեցաւ նա թողուլ զայն... և ահա այս էր մի և գլխաւոր ի վշտացն սրտիս, ակնարկելոյ ի նախկին գրուածս առ Վեհդ, զորմէ չառնէք ինչ յիշատակութիւն ի պատասխանին Ձեր, զերկրորդական իմն դպրոցէն միայն յիշատակելով. վասն որոյ հարկաւորիմ ես այժմ վերստին յիշեցուցանել Ձեզ զայս պարզ բանիւք ի բարւոք խելամտութիւն:

«Արդ՝ ըստ ճանաչմանս իմում և ըստ փորձառութեանս յայս զամս երկոտասան, մի միայն եղանակ որով մարթ է հասանել նպատակի Բարերարին և վախճանի միաբանութեանս, է նախակրթութիւն մանկանց ազգիս ի հայրենիս անդ իւրեանց, ի Պօլիս և յայլ քաղաքս յորս բնակին Հայք. այս է,

նախ հրահանգել մերոցն անդ զմանկտին ի սկզբունս կարեւոր լեզուաց և գիտութեանց, և ապա զընտրելագոյնսն ի նոցանէ առաքել աստ ի դպրոցս յուսումն բարձրագոյն գիտութեանց և կարեւոր արուեստից, յորս զամս հինգ հրահանգեալ դարձցին ի հայրենիս իւրեանց ի լուսաւորութիւն կարօտելոյ ազգիս, որ է իսկ նպատակ Բարերարին և վախճան միաբանութեանս։

« Ասիցէք ինձ արդեօք, թէ չունի Միաբանութիւնս բաւական և յարմար անձինս առաքել և կարգել ի գործ յայսպիսի. և թէ՝ առաքելոցն այնոցիկ պիտոյ են ծախք ապրանաց, պարապելով նոցա միայն ի վարժապետութիւն մանկտւոյն, և թողլով զպաշտօն իւրեանց։

« Ասեմ ես առ այս նախ՝ եթէ միաբանութիւնս ճանաչէ քաջ զկարեւորութիւն և զօգտակարութիւն գործոյ այսպիսիկ՝ ունի նա բաւական և յարմար անձինս կարգել յայս։ Երկրորդ՝ եթէ մերքն խոստովանահայրութեամբն չկարեն գտանել զծախս ապրանաց իւրեանց, չկարիցեն նոքա գտանել զայն վարժապետութեամբն իւրեանց, ի վարձուց աշակերտացն։ Երրորդ՝ եթէ արդարեւ չկարեն նորա գտանել զայն անտի, տացի նոցա այն ի դպրոցացս. և եթէ ծանր թուիցի այս խզճի երկիւղածաց ոմանց, որպէս թէ յարծաթոյ աղքատաց ազգիս ծախիցի ի պէտս մերոցն, այլ գիտասցեն նոքա, զի ի ծախուց անտի առաւել շահ լիցի աղքատաց ազգիս և օգուտ հասարակաց, կարծելով այնուհետեւ վայրապար և անկրաւ ծախուցն որք վասն անընդունակ և աշառանօք ընտրեալ մանկանցն եկելոց ի դպրոցս, և հրահանգելով անդ բազմաթիւ մանկանց կարօտելոյ ազգիս աստ և անդ։

« Ասիցէք ինձ դարձեալ՝ թէ յանձն առնուցո՞ւն մերքն զայնպիսի պաշտօն. և կամ՝ յարատեւիցե՞ն ի նմին. և թէ՝ չառնիցե՞ն և նոքա աշառանօք ընտրութիւն մանկանց։

« Ասեմ ես և առ այս, եթէ վրիպեցայց ես և ի յուսոյ աստի, ապա վճարեալ է ամենայն ինչ վասն դպրոցացս... և ապա ունելով ունիցին իրաւունք ժառանգք բարերարաց դատապարտել զմեզ առաջի աշխարհի, իբրեւ զանկարող և զանիրաւ

մատակարար խրատուց աղքատաց ազգիս, եթէ մատակարա-րեսցուք մեք զայն որպէս մատակարարեցաք ցարդ, ունելով մեր ի ձեռին առաւել քան զերկու միլիոն ֆրանք, և գտանելով անտի շահ ի տարւոջն 100,000 ֆրանք, որք յամս հընգետասան առնէ մի միլիոն հինգ հարիւր հազար ֆրանք։

« Իսկ արդիւնքն որք անտի զի՞նչ. մինչև ցայսօր ժամանակի աշակերտք յիսնիւ չափ թերակատար ուսմամբք և ան հրահանգ վարուք ելին ի դպրոցէս, և ելցեն առաւել միշտ այնպիսի ոմանք, եթէ նոյնպիսի կալցուք մեք եղանակ ի գործս, թէպէտ ի Փարիզ ի կեդրոն իմաստութեան հաստատեալ եմք զդպրոցս, թէպէտ 72,000 ֆրանք ծախեմք ընդ այն ի տարւոջն, և ծախեցաք անդ զամս հինգ 360,000 ֆրանք, յուսուցանել մանկանց դպրոցիս զսկզբունս երից լեզուաց և ինչ ինչ գիտութեանց միայն։

« Իսկ զկնի հնգամեայ աշխատութեան և այսչափ ծախուց արծաթոյ, տեսցուք թէ քանի՞ ոմանք գտանիցին ի նոսա ընդունակ ուսմանց, և թէ կամիցին նոքա կալ առ այլ ևս ամս հինգ ի կատարելագործել զուսումն իւրեանց։... Կարծեմ ես, թէ յոյժ սակաւ ոմանք գտցին ի նոցանէ, ճանաչելով իմ զբնաւորութիւն ազգայնոցս մանկտւոյն ի Պօլիս, միանգամայն և կարեկից գոլով նոցա. զի ծանր է յիրաւի՝ զամս տասն զրկել ի մխիթարութենէ ընտանեաց իւրեանց։ Ապա կարևոր և հարկ է կալնուլ մեր զվերոյիշեալ եղանակն, նախակրթել զմանկունսն ի հայրենիս իւրեանց, ի Պօլիս և յայլ քաղաքս։

« Նոյնպէս կարևոր և հարկ է մեզ առնել յայտարարութիւն վասն դպրոցիս, յայտ առնելով ամենեցուն զնպատակ հանգուցեալ Ռաֆայէլին, և զկանոնս դպրոցի նորին։ Թէպէտ և ամօք ինչ յառաջ արարաք յայտարարութիւն ինչ վասն երկուց դպրոցացս, սակայն պակասին անդ կարևոր պայմանք, զոր պարտ է յաւելուլ ի սմին և հաստատուն պահել։

« Ամենայն նորոգ բացեալ դպրոց առնէ ի սկզբան անդ յայտարարութիւն, եթէ՛ ի գիտութիւն հասարակաց, և եթէ՛ ի նպաստաւորութիւն իւր, յաւակնութիւն թոշակաւոր աշա-

կերտելոց, թէպէտ և յայսմանէ չունիմք մեք ակնկալութիւն մխիթարութեան, հայեցեալ ի չքաւորութիւն մանաւանդ թէ ի ժլատութիւն ազգիս յայս գործ. չատացից և զայլ պատճառսն. այլ գոնեայ առ ի կարծել զլեզուս հակառակորդացս, որք ջանան յամենայն տեղիս աշխատութիւն հասուցանել մեզ:

„ Ահա ի 5 փետրվարի տարւոյս աւարտեցաք բովանդակ զստացումն պալատիս, անցուցանելով 'զմուրհակ Նորին յանուն Մուրատեան դպրոցին, և հաստատելով զայն ի դիւանի արձանագրութեան, յոր և ծախեցաք 30,000 ֆրանք: Վասն որոյ խնդրեմ ի Վեհէդ հասուցանել այսր արծաթ ըստ ժամանակին 30,000 ֆրանք, ի հատուցումն այսորիկ և այլ պարտուց դպրոցիս, որ ի Նորոգ շինուածս Նորին, զի մինչև ոչ հանգեայց ի հողոց աստի չկարեմ ես ուշ դնել առտնին գործոյն, և համար տնտեսութեան տալ Վեհիդ, որպէս արժան և պարտ իսկ է, չգիտելով իմ ցարդ զելս Նորին... եթէ ոչ կայցէ այդր յարկեղն այսչափ գումար արծաթոյ, պարտ է հայթայթել զայն ուստեք:

„ Զայսմանէ գրեցի ես երբեմն առ Հ. Եսային իբրև առ գործակալ, այլ Նա արար ինձ պատասխանի յանդուգն բանիւք. տեսեալ իմ զկարձմտութիւն Նորա՝ լռեցի ես այնուհետև գրել առ Նա ինչ... ցաւելով միայն, զի այսպիսի գործակալ ունի Մուրատեան դպրոցն. և ծանուցանելովս Վեհիդ, զի մի՛ յուսով Նորին մնասջիք, այլ կարգեսջիք ընդհանուր գործակալ զՀ. Անտոնիոս ըստ յառաջագոյն խորհրդոյ, զի գործն մեծ է և կարևոր, որ դմա հաւատացեալ է, և ինքն անկարող և անխոհեմ:

„ Նոյնպէս հոգ տարջիք բազմացուցանելոյ անձանց ի միաբանութեանս, զորմէ բազում անգամ խորհուրդ և կարծիք եղեն, և վասն որոյ համարձակիմ յիշեցուցանել Վեհիդ և զխոնարհ կարծիսն իմ:

„ Արդ՝ ըստ ճանաչմանս իմում, դիւրին եղանակ հասանելոյ և այս Նպատակի մերում, է դարձեալ, Նախ հրահանգել և կրթել մերոցն ի Պօլիս մանկունս և վասն փանացս առան-

ձինն զամս իբրեւ հինգ, և ապա զընտրելագոյնսն ի նոցանէ առաքել այդր ի վանս, ուր զամս երիս ի Նորընծայարանի և զամս երիս ի վարժարանի կրթել, և ապա զուշիմագոյնսն ի նոցանէ աստ ի Փարիզ առաքել, եթէ ի կատարելագործել զուսումն իւրեանց, և եթէ ի վարժապետել աշակերտաց դըպրոցիս. և այսպէս զամս հինգ ուսեալ և ուսուցեալ այսր՝ դարձցին այդր ի վանս մեր ի ծառայութիւն Հասարակութեանս։ Յուսամ ես զի միանձն ի նոցանէ մեծասան անձանց գործս տեսցէ և պատիւ Միաբանութեանս և օգուտ ազգիս բազում արասցէ։

« *Ահա յիշատակեցի Ձեզ վերստին զկարեւորն ի խընդրուածս իմ, և երկրորդեցի ի սմին զխոնարհ կարծիս իմ. մնամ տեսանել զկատարումն սոցին ի Վեհէդ. և զայն ոչ խոստմամբ բանից, այլ արդեամբք գործոց, առաքել փութով այտի ի Պօլիս երկուս և երիս ժիրաժիր երիտասարդս յեղբարցս, ի հրահանգել և ի կրթել անդ մանկունս վասն դըպրոցիս և վասն Նորընծայարանի վանացս առանձինն, և հատուցանել աստ արծաթ ըստ ժամանակին ի հատուցումն մընացեալ պարտուց դպրոցիս, հանդերձ այլ կարեւոր հոգողութեամբ յիշատակեալ յընթացս գրութեանս։*

« *Մնամ միշտ*

« *Արհիապատուութեան Ձերում*

« *Ի Փարիզ. 7 մարտի. 1847.*

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Յայսմ ժամանակի Յակոբ Ձէլէպին Տիւզեան ի Պօլիս խորհի ընդ ազգայնոցս ոմանց դպրոց մի հաստատել անդ ծախիւք իւրեանց. վասն որոյ գրէ առ Գեր. Հիւրմիւզ, ի Վենետիկ, զի գրեսցէ նա առ իւրսն ի Փարիզ գտանել զոք քաջ վարժապետ Գաղղիացի լեզուին, միանգամայն և բուական տեսչութեան դպրոցի, և հարցանել զտարեկան վարձուց նորին։ Որոնեալ գտանէ Հ. Սարգիս ի Փարիզ զխնդրեալն նորա, և

գրեալ ծանուցանէ Գեր. Հիւրմիւզի, հանդերձ կարեւոր ազդարարութեամբք, այսու բանիւք.

« Վասն բանի խնդրոյ Յակոբայ Զէլէպւոյ, հարցեալ տեղեկացայ զի գտանին աստ ի քաղաքիս կարող և բաւական անձինք, որք ի գործս տեսչութեան դպրոցի վարժեալք ի համալսարանի և վկայեալք յառաջնորդէ Նորին, և տարեկան վարձ աշխատութեան ուրուք ի նոցանէ 3,000 ֆրանք, և այն ի քաղաքիս. իսկ յօտար երկրի՝ 5,000 ֆրանք, թողեալ ըզծախս ճանապարհին, կերակրոյ և բնակութեանն։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և պահանջէ նա ունել զայլ ոք իւր օգնական, երկրորդել աշակերտաց զդասն և խօսել ընդ նոսա ի վարժութիւն Գաղղ. լեզուի, և յուղիղ արտաբերութիւն, որում պարտ է հատուցանել վարձ 2,500 ֆրանք, հանդերձ ծախիւք ճանապարհին, կերակրով և բնակութեամբ։

« Ահա այսչափ ինչ որչափ ի բանից թղթոյ Վեհիդ իմացեալ տեղեկացայ զայսմանէ... այլ չիմացայ զպատճառսն, թէ ուստի՞ շարժեալ Զէլէպւոյն բերի ի խորհուրդս յայս և ի գործ մեծ, ունելով մեր արդէն դպրոց ի Պօլիս, որում կարող է նա օժանդակ լինել։ Կարծեմ ես, զի տեսեալ նորա զանպտղութիւն դպրոցին մերոյ անդ՝ շարժեցաւ ի կարեկցութիւն կարօտեալ ազգիս, և ի յանդիմանութիւն մեզ արդեօք որ ընդ մատակարարութիւնս։... Ցա՛ւ է, զգաստասցուք ի յանդիմանութենէ աստի, և մի՛ մնասցուք նախատանացն որ անտի։

« Զայսմանէ բազում անգամ խօսեցեալ իմ եղբարցս բերանով և գրով առ հանգուցեալ Սոմալեան, առաքել զոմանս ի մերոցն այստի ի դպրոցն Պօլսոյ, սակայն բանքն իմ չեղեն լսելի, ակնածեալ մինչ աստի և անտի։... Իսկ թելադրութիւն իմ զհոգոյ գործակալի ստացուածոց դպրոցիս, ոչ ըզպակասութենէ կարեւոր պիտոյից վարժարանիս է, այլ զիմաստուն տնտեսութենէ և զնախահայեաց տեսութենէ նորին է, զոր պահանջէ պաշտօնն այն, մանաւանդ յայսմ ժամանակի և ի հանգամանս յորում կամք մեք։

« Վարժարանս ի բացեայ է անտի, և նա միայնակ և ինքնագլուխ անդ, և այնպիսի գլխով զոր քաջ ճանաչեմ։ Աղաչեմ Տէր, մի՛ այլազգ իմասջիք զբանս, և մի՛ զբազում դժուարութիւնս զոր յայլուստ կրել ամէք մեծ ինչ քան զհոգս այս համարեսջիք, զի մեծագոյն հոգոց և կարի իմն զգուշութեան պէտք են մեզ ի գործս յայս։

« Եթէ խորհրդով և բանիւք միայն վճարիցին կարեւորագոյն հոգք Հասարակութեանս, արդարեւ, այժմուս սակաւքս ընկճեալք ընդ ծանր բեռամբք տկարացուք խոպառ։ Զգիտեմ զինչ այլ ասացից, բայց եթէ անարժան բերանովս առ Աստուած աղօթեցից, զի նա ինքնին ողորմութեամբն իւրով՝ տկարութեան մանաւանդ թէ տարտամութեանս մերում հասցէ։

« Զյայտարարութիւն վարժարանիս պատրաստիմք յերիւրել և առաքել Ձեզ ի քննութիւն և ի հաստատութիւն. չամ է զի ըստ գրութեանն և գործն լիցի ջանասէր և անաչառ կամօք։

« Ի Փարիզ. յ31 մարտի, և ի 17 ապրիլի. 1847.

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Գրէ Գեր. Հիւրմիւզ թուղթ առ Հ. Սարգիս, որով ծանուցանէ նմա զանյաջողութիւն ելից իւրաց խորհեցելոց դպրոցին ի Ցակոբայ Ձէլէպւոյն, և յազգայնոցս Պօլսոյ. և զդժուարութիւն կարծեացն որ զկարեւոր հոգոց Հասարակութեան զերբորդական տեղւոյ դպրոցի մանկանց վանացս, զոր ոմանք ի վանս կամին ունել, որոց առնէ պատասխանի Հ. Սարգիս, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Արդ՝ առ անյաջող ելս իւրաց խորհեցելոց դպրոցին ի Պօլիս, սակս՛ երանի՛ թէ իմացեալ ազգայնոցս զկար զօրութեան իւրեանց՝ ծանիցեն զարդիւնս աշխատութեան մերոյ և զյարգ դպրոցացս՝ օժանդակելով նոցին, եթէ ոչ արծաթով, գոնէ

պաշտպանութեան ոգւով ընդդէմ հակառակորդաց մերոց. և երանի՜ թէ փոյթ կայցին մերքն որք անդ ի Պօլիս չթողուլ զգըլրոցս անդ ի կամս հաճութեան միոյ և եթ ուրուք (Հ. Անանիայի)։ Իսկ յաղագս դժուարութեան կարծեացս, հաստատելոյ ի Պօլիս զերրորդական տեղի կրթութեան ուսանողացն մերոց, ասացի և ասեմ դարձեալ զխոնարհ կարծիսն իմ, թէ դիւրագոյն և օգտակարագոյն այն է մեզ ի բազում գլխոց, Նախ՝ զի Նուազին ծախքն վայրապար երթևեկի և անպիտան մանկանց, երկրորդ՝ զի դադարին մեղադրութիւն և տրտունջ զմէնջ որ ընդ անպիտանութիւն յետս դարձելոց մանկանց, որպէս եղեն մինչև ցարդ։ Երրորդ՝ զի ազատութեամբ և ճանաչմամբ լինի ընտրութիւն վիճակի մանկանց մտելոց ի կրօնս, հասանելով նոցա յարբունս հասակի իւրեանց, և փորձ գոլով մեր բնական և բարոյական բարուց նոցին։ Չորրորդ՝ զի բնակարան նոցա ի Պօլիս լինի միանգամայն և պատսպարան մերոցն անդ ի խորհուրդ մտանելոյ զիրաց կարևորաց, ի պահպանութիւն զրաւոր աշխատութեան իւրեանց, և ի պարապումն յայն երբեք երբեք. զի մի խափան օտարացի նոցա գրականութիւն, սեպհական փառքն Հասարակութեանս։...

« Թողի՛ց ասել զառաւելութենէ յարգանաց ժողովրդեանն առ մերսն, զի չյաճախելով նոցա շատ ի տունս աշխարհականաց, ուր հարկաւ զաւելորդսն խօսիցին և զանպատշաճն լսիցեն։ Հինգերորդ՝ որ և մեծագոյնն է գլուխ բանից, զի ծախքն որ ի շինուածս բնակութեան նոցա անդ ի Պօլիս ոչ վայրապար լիցին, այլ օգտակար միշտ, եթէ ի պէտս բնակութեան մերոցն, և եթէ ի վարձու տալ զայն այլոց. չմտէ զի ի պատշաճ տեղւոջ կառուցի այն։

« Այլ ոչ նոյնպէս լիցի այն այդր ի կղզւոջդ ի տիղմս լճակի Վենետկոյ թաղելով զարծաթն, և շահն որ անտի այնչափ լիցի, ցորչափ այդր բնակիցիմք, և չգիտեմք քանի ժամանակ, հայեցեալ յընդհանուր փոփոխութիւն Եւրոպիոյ վարչութեան, և ի հանգամանս Օսմանեան պետութեան, յոր ամենայն ինչ կերպարանափոխ լինի. ապա նախահայեաց տեսու-

թեան պէտք են մեզ ի գործս, զի մի յետոյ ընդ վայրապար ծախսն զղջասցուք։ . . .

« *Ահա զայսոսիկ իմ կշռադատեալ և ՝մտաւ ածեալ՝ հաստատիմ միշտ ի սոյն յայս կարծիս և պարտ անձինս համարիմ երկրորդել Ձեզ զնոյն, այլ արասցէ Տէրդ որպէս և կամի։ Նոյնպէս և զհոգոց կալուածոց դպրոցիս ասացի երբեմն զկարծիս իմ, և այժմ ասացից այսչափ միայն, թէ մի թէթեւ խնչ և երկրորդական ի հոգս հասարակութեան զայն համարեսջիք. զի ոստիքն մեր ոչ ննջեն, այլ արթունք են և յամենայն ուրեք ի հնարս մեքենայագործութեան կան։ Պատճառ կարօտութեան մերոյ այսօր ուսումնական անձանց ի վանս և ի դպրոցս, է անփութութիւն զկարեւոր ուսմանց երխասարդաց մերոց ըստ ժամանակին, զորմէ պարտիմք առաւելապէս փոյթ ունել, հայեցեալ ի հանգամանս ազգիս և ի պարտս մեր։*

« *Մնամ*

« *Արհիապատիւ Տէրութեան Ձերում*

« Ի *փարիզ*. 30 *ապրիլ*. 1847.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ Ի.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն յայտարարութեան Մ. վարժարանին. — Պատասխանի Հ. Սարգսի վասն երրորդական դպրոցի վանուց. — Թուղթք Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն Ռափայէլեան դպրոցին. — Տեղեկութիւն զհանգամանաց Հօր Սամուէլի, և Հօր Վարդանայ և զմահուանէ նոցա. — Թուղթ ցաւակցութեան և ազդարարութեան Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ.

“ Արհիապատիւ Տէր.

“ Ահաւասիկ առաքեմ Վեհիդ զյայտարարութիւն Մ. վարժարանին, զոր կարեւոր համարեցաք հրատարակել, և զոր մեզ հրամայեցէք յերիւրել. և ահա զոր ինչ ըստ ճանաչմանս մերում և ըստ փորձառութեանս կարեւոր դատեցաք յիշատակել՝ նշանակեցաք համառօտիւ, թողլով հաճութեան կամաց Վեհիդ և ընտրութեան խնամակալաց ժողովոյն զեղչել և կամ յաւելուլ անդ առաւել ինչ ո՛րպէս և զի՛րդ պատշաճ դատիցիք: Յա՛տ է՝ զի կարեւորագոյն գիտելիք ի նմին գտանիցին, զի պայմանքն որք անդ՝ անխախտ երեւեսցին, հայեցեալ ի ճանաչումն և ի բնաւորութիւն ազգիս, որ առատ է յանպէտսն և ռիշդ ի պիտանիսն:

“ Մնամ

“ Արհիապատութեան Ձերում

“ Ի Փարիզ. 27 ապրիլ. 1847.

“ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

Պատասխանի թղթոյ Գեր. Հիւրմիւզի տուեալ ի Հօրէ Սարգսէ վասն բանի յայտարարութեան Մ. վարժարանին,

և վասն բանի երրորդական դպրոցի վանացն, օրինակ զայս.

« Ջցանկալի Նամակ Վեհիդ գրեալ ի 1 յունիսի, ընկալայ յ7 սորին ամսոյ, հանդերձ յայտարարութեամբ վարժարանիս, յոր միւսանգամ ակնարկեալ մեր խնամով խմն յաւելաք և յապաւեցաք ինչ ինչ կարեւորագոյն, ըստ նպատակի հանդուցեալ բարերարին, և ըստ հանգամանաց բարուց աշգիս, որոց փորձ եմք և լինիմք միշտ յամենայն դէպս, որպէս և յայսոսիկ աւուրս ընդ նորոգ առաքելոց մանկանցն ի դըպրոցս, և զոր վերստին առաքեմք այդր ի քննութիւն և ի տպագրութիւն ։

« Յաղագս բանի խնդրոյ երրորդական տեղւոյն ասացի ես գլխնարհ կարծիս իմ, հայեցեալ յընտրութիւն օգտակարագոյն մասին, մեզ և ազգիս առ հասարակ ։ . . . Իսկ յաղագս յերից կողմանց դժուարութեանցն որ ի կատարումն նորին, և զորս մի առ մի յառաջ բերէք, ասեմ նախ՝ թէ չհարցաւ յինէն երբէք զհնարս իւրացն ցուցանել, այլ ծանուցանել միայն ընտրութիւն Ձեր ընդ այն ։ Եւ երկրորդ՝ թէ չհանարիմ ես իմն ունել Ձեզ առաւելութեանն զկարեւոր արժարն առնել զոր կամիք, այլ համարեցայ և համարիմ միշտ, թէ վայրապար է և ի զուր թաղել ի տղմի կղզւոյդ թէ և սակաւիկ ինչ արծաթ, տեսանելով իմ զփոփոխութիւն աշխարհիս ։ . . .

« Լուեմ ես սակս ինչ զդժուարութեանն որ ի կողմանէ բարեկարգ տեսչութեանն, և յանձն առնլոյ մերոցն նստել անդ, գիտելով չափ, թէ քննութիւն պատճառաց սորին յաւելուցանս սրտի, և թէ՝ « Առաւելութիւն բանից պատերազմող է « լսելեաց ։ » Ապա բարւոք է ընդ այս լռել և զհոգ ամենայն իրաց Հասարակութեանս Աստուծոյ յանձն առնել ։

« Մնամ

« Արհիապատութեանդ

« Ի Փարիզ. 9 յունիս. 1847.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Դպրոցն Ռափայէլեան որ ըստ բանից կտակի Բարերարին և ըստ հաւանութեան Լօւտ Քանչելէրի Անգղիոյ հաստատի ի Վենետիկ յամին 1836, ի պալատի Քափէզարօ անուանելոյ ։ Ի վարձու կալեալ զայն 10 ամաւ, 2,500 ֆրանք ի տարւոջն, իբրեւ լրանայ տասն ամն՝ տէր պալատանն կամի վաճառել զայն, և խնդրէ ընդ այն 200,000 ֆրանք ։ Թէպէտ և պալատն այն արժէր առաւել քան զմի միլիոն ֆրանք, բայց չէր յարմար վասն դպրատան, և 30 մանկանց դպրատանն, ունելով մեծամեծ դահլիճս և սենեակս, և չունելով փոքրիկ ինչ պարտէզ ի զբօսանս մանկանց, այլ և առիթ գոլով աւելորդ ծախուց. քանզի պարտ էր ծախել 1,000 ֆրանք ի տարւոջն առ ի պահպանել զայն. և այս էր մի ի տհաճութեանց և ի գանգատանաց Աղէքսանդր Ռաֆայէլի ընդդէմ Միաբանութեան ։

Թէպէտ և Հ. Սարգիս պատշաճ և օգտակար տեսանէ ըզփոխադրութիւն դպրոցին այնորիկ ի Պատաւիոն, ի հին դըպրատուն Մուրատեան որ դատարկ կայր յայնժամ, և զոր առաջարկէ Նորոդ Աբբային Գէորգ Հիւրմիւզի, և Նորա հաւանեալ ընդ այն, այլ Հ. Ռափայէլ Թրենց արհամարհէ զայն, զՊատաւիոն քաղաքն, յորում է մին և առաջինն ի համալսարանաց Իտալիոյ, ախոռ ձիոց անուանելով զայն ։

« Թէպէտ և Հ. Սարգիս ցաւի ընդ կարճատես անձնասիրութիւն Նորա, սակայն ըստ յանձնարարութեան Աբբային ի խնդիր լինի Նորոդ տեղւոյ դպրոցին ի Վենետիկ և գտանէ զպալատն Զենոբեան անուանեալ, զոր և գնեալ ապա, և յոր հաստատեալ կայ այսօր Ռափայէլեան վարժարանն. Թէպէտ և ընդ այս եւս ոչ հաւանեցաւ զառաջինն կարճատես և անձնասէրն այն... այլ յամառեալ մնայ ի կամս ցանկութեան իւրոյ, ի գնել զպալատն Քափէզարօի, Նորոգելով զվարձ Նորին ամ մի եւս, և յուսայուցանելով զտէրն ի գնել զայն ապա, մինչեւ յաւելուն այլք, հնարիւք տեառն, զգին պալատանն, և անկարանայ Նա կատարել զկամս իւր, առանց հաւանութեան Հասարակութեան, վասն որոյ գրէ Գեր. Հիւրմիւզեան առ Հ. Սարգիս հարցանել զկարծիս Նորա և որոց անդ ընդ

այն, և որում առնէ պատասխանի Հ. Սարգիս, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Փութանակի գրութիւն Վենհիդ զայս նուազ և սկիզբն նորին բերին ինձ զառաջինն կարծիք իմն նորոգ ցաւալեաց, այլ ծանեայ ապա զի տագնապողական էր այն։

« Արդ՝ յերից խորհրդոց և ի զանազան կարծեաց մերոցն այդր որ ընդ փոխադրութիւն Ռափայէլեան դպրոցին, դիւրագոյն միաբանութեանս և չահեկանագոյն աղքատաց ազգիս, թուի և մեզ այսր, որպէս և Վենհիդ երբեմն, փոխադրութիւն նորին ի Պատաւիոն ի Պալատն Զաքքօի, (ի հին դպրատունն Մուրատեան,) հայեցեալ ի հանգամանս իրաց մերոց և յօգուտ հասարակաց, և ոչ ի դիւրութիւն և ի հաճոյս կամաց մասնաւորաց։

« Եւ յիրաւի՝ քանզի դիւրագոյն է յայժ զթիւս մանկանց դպրոցիդ նուազել, զերիցագոյնսն ի հայրենիս իւրեանց դարձուցանել, և զկրտսերագոյնսն անդ ի Պատաւիոն զետեղել, և չահեկանագոյն, 40,000 ֆրանք միայն յայն ծախել, կառուցանելով անդ և այլ քանի մի սեննակ ի բնակութիւն նորոգ եկելոց մանկանց։ Թողից ասել և զդիւրութենէ պաշտօնէիցն, զոլով միշտ անդ գործակալի դպրոցիս և սպասաւորաց նորին, այլ և զչահուց որ վասն կարեւոր պիտոյից մանկանց դպրոցիդ, և վասն առողջութեան նոցին, այլուստ հանդերձ։

« Իսկ հաճութիւն Անգղիացւոց պետութեան և հաւանութիւն Պարոն Աղեքսանդր Ռափայէլի ընդ այս փոխադրութիւն, չեն ինչ դժուարին, ցուցանելով նոցա զբանաւոր պատճառսն. այն զի և Պատաւիոն արուարձան ինչ համարի Վենետկոյ, և զի Պարոն Աղէքսանդրն հաւանեալ էր արդէն ընդ այս փոխադրութիւնն, որպէս եցոյց ինձ երբեմն երբեմն, Թողից ասել զդժկամակութենէ նորին որ ընդ պալատն Փափէզարօի, սակս աւելորդ մեծութեան նորին, և սակս պա-

կառուցման կարեւորագոյնին անդ, փոքրիկ պարտիզի ի մխիթարութիւն մանկանց դպրոցին։

« Մեք պատճառս տուաք նմա ցարդ, ասելով թէ առժամանակեայ է այն, մինչեւ գտցուք պատշաճ ինչ տեղի այնմ. հաւատացեալ նորա բանից մերոց լռեաց, և արդ՝ յորժամ լուիցէ նա թէ գնեցաք մեք զայն ի մշտնջենաւոր բնակութիւն դպրոցին, զի՞նչ ասիցէ և զի՞րդ վարիցի այնուհետեւ ընդ միաբանութեանս։

« Թէպէտ և արհամարհելով արհամարհեցին զնա ոմանք ի մէնջ երբեմն, և զբարիսն նորա ոչինչ համարեցան, և համարիցին այժմ արդեօք զակնկալութիւն ապագայ բարեացն որ ի նմանէ, այլ ես ոչ կարծեմ թէ համարիցին զայն այնպէս ամենեքին, որք միանգամ զբարիսն հասարակաց նախադասեցին և նախադասեն միշտ դիւրութեան անձանց և հաճութեան կամաց իւրեանց։

« Հայեցեալ՝ ասացի, ի հանգամանս իրաց և յօգուտ հասարակաց և ոչ ի դիւրութիւն և ի հաճոյս կամաց մասնաւորաց. արդ՝ հարցանեմ ես ցայնոսիկ որք հաճեալ հաւանեալ են գնել զպալատն Քափէզարօի 200,000 և աւելի փրանքս, թէ ուստի՞ հայթայթիցէք դուք զայդչափ գումար արծաթոյ։ . . .

« Պարտ է զի փոխ ուստեք առնուցուք և վաշխ նորին 6 առ 100 ամի ամի հատուցանիցէք, հանդերձ կրկնաժէք դրամականաւ . . . և թէ՝ մինչեւ ցե՞րբ կարիցէք զպարտիսն զայն հատուցանել. կարծեմ թէ յետ քսան և աւելի ամաց, պահելով ի դպրոցիդ հնգետասան մանկունս և եթ, և խնայելով յոյժ ի մատակարարութիւն նորին։

« Իցէ՞ն այսօրիկ յօգուտ հասարակաց, թէ ի դիւրութիւն և ի հաճոյս կամաց մասնաւորաց . . . և թէ՝ չլինիցի՞ն ընդ այս խիստ քննութիւն ի հակառակորդացս, և վերստին հարցումն ի Լօռտ Փանչէլէրէն, որում տուաք մեք երբեմն պատասխանի և արդարացուցաք զմեզ առաջի նորա, ասելով թէ պատճառք սակաւաթիւ մանկունս ունելոյ մեր ի դպրոցդ կրկին էին. մի՝ զի Պարոն Աղէքսանդր յապաղեաց առաքել մեզ զարծաթն, զեկամուտն Ռափայէլեան վարժարանին, և միւս՝

զի հաւաքեմք յեկամտէն գումար ինչ արծաթոյ ի պէտս կառուցման և կամ ի գին տեղւոյ դպրոցին։ Այժմ զինչ պատճառս ունիմք տալ նմա։

« Իսկ հակառակորդացս ասէաք մեք յառաջ. Թէպէտ և պալատս այս մեծ է յոյժ և աւելորդ արդեօք վասն 30 մանկանց միայն, բայց վարձ սորին սակաւ ինչ է, 2,500 ֆրանք. և այժմ զի՞րդ կարեմք մեք զայս ասել, առաւելեալ վարձու սորին հնգապատիկ 12,000 ֆրանք, և այս վասն 15 մանկանց զամս քսան։

« Այլ ասիցեն ոմանք ի մէնջ այտի, թէ ընդէր և մեք աստ ի Փարիզ այսպիսի մեծ և թանգագին պալատ գնեցաք, վասն որոյ և ընդ պարտիւք և ծանր տոկոսեօք արկաք զմիաբանութիւնս։

« Ասեմ նախ՝ թէ հանգամանք դպրոցիս և քաղաքիս զանազան են յոյժ ի հանգամանաց դպրոցիդ և քաղաքիդ, որպէս յայտ է ամենեցուն, և աւելորդ երկրորդել զայն։

« Երկրորդ՝ դիցուք թէ սխալեցաք մեք ի գործս մեր յայս, պա՞րտ իցէ արդեօք և արժան զի սխալիցիք և դուք ի գործդ յայդ ձեր, դնելով մեղս ի վերայ մեղաց, ծանրացուցանելով զբեռինս միաբանութեանս, ընդ որով արդէն ընկճեալ՝ չգիտէ զի՞րդ և ե՞րբ կարիցէ թեթեւանալ անտի. զի փոխանակ թեթեւացուցանելոյ զծանրութիւն բեռին նորա, փոխադրելով զդպրոցդ ի Պատաւիոն սակաւ ծախիւք, և օժանդակելով դպրոցիս, պտղաբերելով զանպտուղ ստացուած սորին, զդատարկ պալատն, քանզի եթէ հանգիստ, և եթէ փառք և նախատինք, որք յերկուց դպրոցացս, բովանդակ միաբանութեանս են, վասն որոյ պարտին ուղղիչք երկուց դպրոցացս ջանալ թեթեւացուցանել զծանրութիւն միաբանութեանս և զպատիւ նորա պահել յամենայնի և յամենայն ուրեք։

« Ահա զայս այսպէս գրտացի և գրտեմ ես միշտ, առանց քեզ և քո ոգւով շարժեալ երբէք. և ահա այսպիսի են խորհուրդ և խոնարհ կարծիք մեր աստ, իմ և գործակցաց իմոց Վերապատուելի Հարց որ ընդ այս, և զոր խոհականութիւն

Վեհիդ հաճեցաւ հարցանել, իմանալ և ի մէնջ աստի ։ Իսկ եթէ այլազգ իցեն խորհուրդ և կարծիք բազմաց այդր որ ընդ այս, ըստ որում և գրէք, կարծեմք մեք, թէ պարտ է զի խընդիրս այս վանական ժողովով որոշեսցի, չլինելով ոմանց ի խընամակալաց ժողովոյն այդր ի միջի, և ծանր գոլով խնդրոյն և ոչ թեթեւ ինչ ։ . . .

« Մնամ

« Գեր. Տէրութեանդ Ջերում

« Ի Փարիզ. 26 սեպտ. 1847.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Դարձեալ վասն նոյն բանի խնդրոյ և վասն անիրաւ մատակարարութեան իրաւանց աղքատաց ազգիս գրէ Հ. Սարգիս առ Գեր. Հիւրմիւզ, այսպէս.

« Արհիապատիւ Տէր.

« Զցանկալի նամականին Վեհիդ ընկալայ ըստ ժամանակին, և ծանեայ ի բանից անտի զդադարումն խորհրդոց և կարծեաց որ ընդ ստացումն Քափէզարոի պալատանն, թէպէտ և միշտ ի նոյն կարծիս ստանալ տեղի դպրոցիդ այդր ի Վենետիկ, թէպէտ և ոչ այնչափ թանգագնոյ, այլ ոչ գիտեմ թէ քանի հազար եւս ի վերայ 100,000 ֆրանքաց պարտաւորիցէք յաւելուլ, առ ի կառուցանել զդպրոցդ ի պատշաճ ինչ տեղի, ունելով մեր զփորձ նորին այսր և այդր ։ . . .

« Եւ չգիտեմ ես դարձեալ՝ թէ ուստի՞ հայթայթիցէք զայդչափ գումար արծաթոյ, և կամ ե՞րբ հատուցանիցէք զայն հանդերձ տոկոսեօք, և թողից յիշատակել վերստին զխիստ քննութիւնն որ ի հակառակորդացս, որք ոչ են ի քուն, այլ միշտ արթուն, և անդադար ի յոյզ և ի քննութիւն. յորոց

ազատ և զերծ լինէիք արդեօք, եթէ ի Պատաւիոն գդպրոցդ փոխադրէիք ։ Ցուսամք մեք աստ տակաւին, զի յորժամ խնդիրս այս ի ժողովն վանական մատուցի, օգտակարագոյնն համարակաց, ազգասաց ազգիս, ընտրեսցի ։

« *Իսկ առանձնական կարծիքս իմ և դատաստանն որ ի Թուղթս իմ երբեմն, զմատակարարութենէ իրաւանց ազգասաց ազգիս էին և են միշտ, որ ի ձեռս մերոցն ի Պօլիս և յայլուր, և որում ոչ պատասխանւոյ ի Վենէտ միայն և միամ այլ դարմանոյ Նորին ի Ջէնլ ։ Եւ եթէ անհնարին ասիցէք զայն, հայեցեալ ի կարօտութիւն անձանց միաբանութեանս և ի հանդամանս նոցին, որպէս և ազդեցիք և ազդէք ինձ երբէք երբէք, ցաւեցայ և ցաւիմ ես ընդ այն, զուցէ և բոլորովին վհատեալ լռեցից խապառ ։ . . .*

« *Ահա յայս ունէր ակնարկումն բանից Թղթոյս, և ի սոյն է հարեւանցի յիշատակութիւնս. այսչափ ի ժամուս չատ համարեալ կնքեցից զԹուղթս, և մնացից միշտ*

« *Գերապայծառ Տէրութեանդ*

« Ի Փարիզ. 13 Հոկտ. 1847.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ. »

Ահաւասիկ՝ որպէս ի նախագրութեան այսր գլխոյ նշանակեցաք, տամք տեղեկութիւնս ինչ զհանգամանաց և զմահուանէ Հարց Սամուէլի և Վարդանայ ։

Հ. Սամուէլ Սամսարեան ի գնել գետին վասն Մ. վարժարանին՝ աշխատի նա յոյժ. և կարգի նորին գործակալ, զոր և վարէ ըստ կարի իւրում զամս հինգ և աւելի. և իբրև վախճանի՝ Հ. Յակոբոս Ճէլէլեան, գործակալն վանաց, կարգի նա ի տեղի նորա, և վարէ զայն զամս տասն ։ Եւ իբրև ընտրի Աբբայ Գեր. Հիւրմիւզ, և հանէ զՀ. Ռափայէլ Թրենց ի պաշտօնէ տեսչութեան Ռափայէլեան վարժարանին, (դիտաւորութեամբ կարգելոյ զնա տեսուչ Մ. վարժարանին,) կար·

գէ զՀ. Սամուէլ Տեսուչ Ռափ. վարժարանին, զոր վարէ նա ամիսս ինչ միայն. քանզի ի չյաջողել դիտաւորութեան Արքային կարգել զՀ. Ռափայէլ Տեսուչ Մ. վարժարանին, հնարիմացութեամբ իմն վերստին կարգէ զնա Տեսուչ Ռափայէլեան վարժարանին ։ Եւ ոչ այսչափ միայն՝ այլ և հանէ զնա ի պաշտօնէ գործակալութեան վանաց, զոր վարէր նա յամաց հետէ ամենայն հաւատարմութեամբ. և այս ըստ խորհրդոյ Հ. Գաբրիէլի Այվազեան որ կամի կարգել տալ ի պաշտօնն յայն զդասակից իւր զՀ. Գրիգոր Ալէպսօն, զանկարգ և զանհաւատարիմ անձն, վասն որոյ և հատանի ապա ի միաբանութենէն և մեռանի յարբեցութենէն ի կողմանս Կիլիկիոյ ։

Ընդ այն հնարիմաց քաղաքավարութիւն Գեր. Հիւրմիւզի և անընտրող միտս նորա անհնարին վիրաւորի սիրտ Հ. Սամուէլի ։

Տեսեալ Հօրն հասարակաց զորդին ի հանգամանս յայն, կամի մխիթարել զնա, և առաջարկէ նմա գնալ յԱնկոնայ իբրեւ հոգեւոր հայր քանի մի Գաղատացի կուսանաց անդ. ընդ այս առաջարկութիւն առաւել եւս վիրաւորի սիրտ նորա, և վարակի ախտիւ դալկան ։ Առ ի փարատել ինմանէ զայն՝ առաքէ զնա ի տուն գեղջ վանաց յօդափոխութիւն, ուր յետ աւուրց ինչ վախճանի և թաղի անդ ։

Ահա արդասիք չափազանց վարկի Գեր. Հիւրմիւզի որ զդասակցէն իւրմէ, զՀօրէ Ռափայէլէ, որում զոհէ զՀայր Սամուէլ զդասակիցն Հ. Սարգսի, և զնա ինքն Հ. Սարգիսն ապա ։ . . .

Իսկ Հ. Վարդան Յովհաննէսեան Վանեցի և դասակից Հ. Սարգսի, ամօք ինչ յառաջ առաքի քարոզիչ ի Փեթրովարատին, ուր կացեալ նորա զամս քսան և չորս, և պարապեալ միշտ յուսումնականութիւն, յօրինէ բազում գիրս ուսումնականս, և հայթայթէ ջանիւք իւրովք և աշխատութեամբ հաւաքումն ինչ ուսումնական գործեաց, ապա վախճանի նա անդ ։ Զգրուածս նորա բերել տայ Արքայն ի վանս, և պահէ զայն յանկեան ուրեք իբրեւ զգործ անպիտան. վասն զի չէ նա դասակից իւր ։ Իսկ զգործին՝ սեպհականէ

Հ. Ալեքսանդր Պէշիկթաշլեան ի Պոլիս, զորմէ ոչինչ փոյթ առնէ Արքայն. վասն զի և Նա դասակից իւր է։...

Եւ ահա արգասիք նոր ձանձրման և զանազան ոգւոց, շարժելոց և հաւանարձակելոց ի նոր ձանձրմանէ անտի։ Կայցէ՞ անկեղծութիւն մխիթարութեան ազգիս աստի։

Վասն այսորիկ գրէ Հ. Սարգիս Թուղթ ցաւակցութեան և ազգարարութեան առ Գեր. Հիւրմիւզ, զի զգուշասցի Նա ի պահպանել զինչս Հասարակութեան, և մի թողցէ սեպհականել զայն մասնաւորի ուրուք անտի. միանգամայն և յայտնէ զծածուկ ընթացս Նորա առ ի կատարել զկամս Հ. Ռափաէլի. վասն որոյ և դանդատի ընդ արհամարհութիւն օգտակարագոյն խորհրդոց տուելոց ի բազմաց, և ընդ աւելորդ և անօգուտ ծախսն, խափանարար յառաջադիմութեան մանկանց դպրոցին, բայց իրաւունս տայ Նմա ի պահանջումն հաշուի ծախուց Մ. վարժարանին, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ցաւոց էր մեզ արդեօք ամս այս, զրկելով մեր միանգամայն յերից սիրելեացս, այլ այսու միայն մխիթարիմք, գիտելով թէ այս էին կամք վերին, որում պարտիմք հնազանդիլ, և զհոգս մեր նմին յանձն առնել, որ գիտէ զրկանացս փոխարինել յարուցանել մեզ նորոգ սիրելիս։ Ըստ պատուիրանի Վեհիդ և ըստ պարտուց եղբայրութեանս մատուցաք վասն հոգւոյ հանգուցելոյն երիս պատարագս, մաղթելով Նմա ի Տեառնէ հանգիստ յաւիտենական, և մխիթարութիւն սրտի և երկարութիւն կենաց Հօրդ հասարակաց։

« Յուսամ զի հոգացեալ իցէք ըստ ժամանակին զյապահովութենէ առանձին իրաց հանգուցելոյն Հ. Վարդանայ, որ ի Վարատին, զուսումնական գործեաց և զմատենից Նորին, որ չեն չնչին արժէիւք։

« Բարւոք է խորհուրդ Վեհիդ, հայեցեալ ի գնացս Պարոն Աղեքսանդրի և քաղաքավարութիւն Ձեր որ ընդ Նմա ընտանեկան թղթովք, բայց պարտ է յայն եւս զգուշութեամբ

վարել, զի մի՛ պատճառս ինչ գտեալ վերստին զայրասցի. քանզի լուաք մեք աստ յայսոսիկ աւուրս ի Պարոն Հիթէ, թէ տակաւին ի նոյն կամս գոլով Ձեր այդր ստանալ զպալատն Քափէզարօի, զի խնդրեալ էք ի Նմանէ փոխ արծաթ, և ի չյաջողել այնր՝ կամեցեալ էք ի ձեռն նորին հանել ի դրամագլխոյ դպրոցիդ 8,000 լիրէ ստեռլին, խոստանալով հատուցանել զայն առ սակաւ սակաւ, ի միջոցի տասն ամաց:

« Ահա ընդ այս կամս ձեր և ընթացս զայրասցի Նա անշուշտ, թէպէտ և քաղցրութեամբ դիշիք դուք առաջի նորա զիրաւունս ձեր, այլ Նա ընդ այն ոչ համոզեսցի, մանաւանդ յորժամ իմասցի, թէ այս կամք և ընթացք ոչ հաւանութեամբ հասարակաց են, այլ ցանկութեամբ մասնաւորաց, չասացից թէ մասնաւորի ուրուք, Հ. Ռափայէլի Թրենց, և այն առանձին և ծածուկ:

« Արդ ըստ կարծեաց մերոց աստ, կամ չէր հարկ զհոգոյ տեղւոյ դպրոցիդ Նմա գրել, և կամ պարտ էր զայս կամս ձեր և զընթացսդ Նմա ծանուցանել, հանդերձ կարեւոր պատճառօք. և ահա այս է Գեր. Տէր, և խորհուրդ իմ ի խնդիրս յայս, թողից ասել և զայլ անախորժ հետեւանացն որք աստի, յորոց ծագեցան և ծագին միշտ լքումն սրտի և վնաս հասարակաց, արհամարհելով զօգտակարագոյն խորհուրդն տուեալ ի բազմաց, և խափանելով զյառաջադիմութիւն մանկանց վարժարանիդ, աւելորդ և անօգուտ ծախիւք:

« Պահանջել Վեհիդ յինէն զհաշիւ մատակարարութեան վարժարանիս, ոչ միայն իրաւունս ունիք, այլ և ընդ այն հոգալ պարտ իսկ էք, խղճի մտաց և պատուոյ ձերում և Հասարակութեանդ հաւատացեալ գոլով սրբազան աւանդին, իրաւանց սեմ աղքատաց ազգին... Թէպէտ և գիտիցէք թէ առնեմ ես աստ զամենայն կարեւոր և զպատշաճ խնայութիւնս, բայց գիտասցէ Վեհդ զի չտեսի ես ցարդ զհաշիւ մատակարարութեան վարժարանիս, հայեցեալ ի հանգամանս նորին, որպէս և ծանուցեալ է Ձեզ Հ. Յովհաննէս, և ի վիճակն իմ որ աստ:

« Մնամ ես համբերութեամբ տեսանել զայն յելս ամսոյս,

ըստ խոստման Հ. Յովհաննու, և առաքել Ձեզ զպատճէն նորին, հանդերձ կարեւոր տեղեկութեամբ և առանձին դաստատանաւ :

« *Մնամ միշտ*

« *Գերապայծառ Տէրութեանդ*

« Ի Փարիզ. 13 *դեկտ*. 1847.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԻԱ.

Պատճառ յապաղման տալոյ զհաշիւ ժամուց Մ. վարժարանին. — Պատճառանք ընդ անկարգութիւն մանկանց վարժարանին. — Ցանդիմանութիւն ընդ այն. — Հաշիւ ժամուց վարժարանին. — Առաջարկութիւն ի բաց արձակել զանպիտան մանկունս ի վարժարանէն. — Մեղադրութիւն ընդ այն. — Գանգատ ընդ մեղադրութիւնն այն. — Անկարգութիւն մանկանց վարժարանին. — Արձակումն նոցա ի վարժարանէն. — Հրաժեշտ Հ. Սարգսի ի պաշտօնէ տեսչութեան. — Հրաժեշտ Հ. Տիմոթէոսի ի պաշտօնէ իւրմէ, և խնդիր դառնալոյ ի վանս. — Յուսահատութիւն և հրաժեշտ Հ. Ստեփանի ի պաշտօնէ իւրմէ, և խնդիր դառնալոյ ի վանս. — Քննութիւն և դատաստան ընդ գնացս նորա.

Ի յապաղել Հ. Յովհաննու տալ զհաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին, յապաղէ և Հ. Սարգիս տալ պատասխանի թղթոյ Գեր. Հիւրմիւզի, և խնամակալաց ժողովոյն, միալով տալ զայն ի միասին ընդ հաշուի մատակարարութեան դպրոցին։

Անբաւականութիւն, անփորձութիւն և տգիտութիւն վարժապետաց դպրոցին, մանաւանդ կարծեցեալ Ուսուցչապետին, Հ. Ստեփանի պատճառք լինին ծուլութեան, լքման, և ըմբոստանութեան աշակերտաց Մ. վարժարանին։

Առ ի արդարացուցանել Հ. Ստեփանի զինքն ընդ այն, գրէ թուղթ առ դասակից իւր և պաշտպանն ի վանս, տալով զայն ամենայն յապաղման բաշխից մրցանակաց աշակերտացն, և պատճառք այսմ անհոգութիւն Հ. Սարգսի և զբաղումն Հ. Յովհաննու յայլ գործս. վասն այսորիկ գրէ թուղթ Հայր Սարգիս առ Գեր. Հիւրմիւզ, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր .

« Ներեսցէ ինձ Վեհդ ընդ այս նուազ յապաղումն պատասխանւոյս , վասն բանի փոխանակագրոյն , յղելոյ այսր յ9 ամսոյս , և ժամանելոյ այսր ի 16 սորին , պատճառաւ ակնկալութեանս տալոյ Ձեզ միանգամայն և զհաշիւ մատակարարութեան վարժարանիս , գոնէ զընդհանուրն ի ժամուս , ապա զմանրն. այլ ըստ սովորական բաղդիս ոչ յաջողեցաւ ինձ այն , սակս սովորական պատճառանացն որ ի Հ. Յովհաննէ ; վասն որոյ համբերութեան պէտք են մեզ դարձեալ . . . և վասն այսորիկ չկարեմ ես առնել պատասխանի և բանից թղթոյ խնամակալաց ժողովոյն . զի մինչեւ ոչ տեսից գոնէ զընդհանուր հաշիւ ծախուց վարժարանիս , երկուց նախընթաց ամացն , չկարեմ յանձն առնուլ կամ խոստանալ զսարւոյս տալ ձեզ հաշիւ , չգիտելով իմ ցարդ , թէ պարտիք վարժարանիս որք սոտ՝ հաստուցման բովանդակն՝ թէ ոչ . . . զի մինչեւ ոչ աւարտեսցի այն , չկարեմ և չկամիմ ես ընդխառնիլ ի գործս , և տալ Ձեզ հաշիւ , և այս իրաւամբք՝ որպէս տեսցի ապա ;

« Նոյնպէս և վասն բանի բաշխից մրցանակաց աշակերտացն վարժարանիս , չեղէ և չեմ ես պատճառ յապաղման նորին , չխառնելով իմ ցարդ ի գործս վարժարանիս , սակս վերոյասուեալս պատճառաց ;

« Սակայն չգիտեմ ես արդեօք , թէ ի յապաղմանէ սատի եղիցի՞ զքումն մանկտւոյն , և կամ ծուլանալոյ և ընթացանութեան պատճառ . . . եթէ վարժապետքն զպարտս իւրեանց արարեալ իցեն ;

« Մնամ միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ . 22 փետր. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ . »

Առնէ պատասխանի թղթոյս Գերապայծառ Հիւրմիւզ, օրինակ զայս․

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրալիր և մեծարանաց ողջունիւ խնդալ․

« Թուղթ Վերապատուութեանդ գրեալ ի 22 փետրվարի հանգուցեալ գիս լիով ժամանելոյ նախընթաց փոխանակագրոցն ի ձեռս Ձեր, այլովն ամենայնիւ յաւել յառաւել ինչ հոգս ։ Զի՞նչ նշանակիցեն բանքդ « Զկարեմ ես և չկամիմ « ընդխառնիլ ի գործս… և այս իրաւամբ որպէս տեսցի « ապա… չխառնելով իմ ցարդ ի գործ վարժարանիս ։ » Իսկ ընդէ՞ր ապա կացոյց Միաբանութիւնս զՎերապատուութիւնդ Տեսուչ վարժարանիդ և առ Ձեզ յղէ զարծաթն ։

« Զի՞նչ նշանակիցեն դարձեալ բանքդ « Եթէ վարժապետք « նոցին զպարտս իւրեանց արարեալ իցեն․․․․ » Կցկըտուր և անյայտ բանքդ խորհել տան ինձ արդարեւ և սիրտ ի թնդոջ ելից իրացն սպասել և լուսանալոյ մթին բանիցդ ։

« Ուրախ եմ վասն այնր զի աղմուկ տեղւոյդ հանդարտեալ փութով և յանդորրու կայցէք ։

« Մաղթեմ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ․ 7 մարտի․ 1848

« Ն․ Ծ․ ԳԷՈՐԳ Վ․ ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ Աբբայ․ »

Յետ աւուրց ինչ վերոյիշեալ գրութեան տայ Հ. Յովհաննէս Սորկունեան ընդհանուր ինչ հաշիւ երկամեայ ծախուց Մ․ վարժարանին ի Փարիզ ։ Ակնարկեալ յայն Հ. Սարգսի զարհուրի․ և ծրարեալ զայն ի թղթի առաքէ ի վանս առ Գեր․ Հիւրմիւզ, հանդերձ յիշատակութեամբ երբեմն ազդա

բարութեան իւրոյ, և կարեւոր առաջարկութեամբ ի ժամուն, օրինակ զայս ․

« Գերապայծառ Տէր ․

« Ահա յետ երկուց ամաց և յետ բազում անգամ պահանջմանց, առաքեցի Վենետիկ յերէկ զընդհանուր հաշիւ ծախուց վարժարանիս, զոր ետ ինձ Վ. Հ. Յովհաննէս գործակալն մեր աստ. իսկ զմանր հաշիւ ծախուցն, առաքեցից Ձեզ ապա, ըստ բանից խոստման Նորին. և ապա չմնայ ինձ ի ժամուս առնել ինչ քննութիւն և դատաստան ընդ այս, ըստ բանից խոստմանս իմում երբեմն, չունելով իմ ի ձեռին զմանր հաշիւ ծախուցն և զհաւաստիս Նորին, մանաւանդ թէ և աւելորդ իսկ համարիմ ես արդ զայն. և յիրաւի՝ քանզի զի՞նչ օգուտ և մխիթարութիւն մեզ այժմ ի քննութենէ և ի դատաստանէ անտի լիցին, եթէ ոչ վրդովումն մտաց և վէրք սրտի, զի գնացելոյն չիք ինչ դարձ:...

« Այլ միայն հարեւանցի իմն յիշատակել առ տեղեաւս ըզկարեւոր և զանօգուտ ազդարարութիւնն իմ երբեմն ոչ աւելորդ և անդէպ համարիմ, և զայս՝ առ յապագայ զգուշութիւն միայն և ի յարդարացուցումն գնացիցս, հրաժարելովս ցարդ խառնիլ ի գործ վարժարանիս, խելամուտ գոլով իմ հետեւանացն... և զնոյն կալայց գնացս, եթէ նոյնպէս ընթասցին իրքն, որպէս ընթացան ցարդ... մանաւանդ թէ և ի սմին յանուանէ Աւգչի եւս հրաժարեցայց. զի ոչ խիղճ մըտացս, որչափ և ընդարձակ կարծիցի, և ոչ պատիւ անձինս, որքան և նուաստ համարիցի, չներեն ինձ բնաւ տանել ըզտխտղոսս այս, և զի հեռացայց աստի՝ ի չտեսանել անգամ զանուղղութիւն իրաց վարժարանիս. քանզի աղքատաց են իրաւունքն, և Միաբանութեանս է հաւատացեալ աւանդն սրբազան և մատակարարութիւն Նորին:

« Գիտեմ ես, զի տեսեալ Վենետիկ զանակնկալ հաշիւ ծախուց վարժարանիս՝ յիշեցուցէ ինձ վերստին զայն բանս երբեմն գրութեանս, թէ՝ « Խնդրեմ ի Վենէտ հասուցանել այսր

« արծաթ ըստ ժամանակին, իբրեւ 30,000 ֆրանք միանգա-
« մայն, ի հաստուցումն այսոցիկ եւ այլ պարտուց դպրոցիս,
« որ ի շինուածս եւ ի կահս նորին: »

« Արդարեւ այսպէս հաւատացեալ էի ես յորժամ գրեցի առ Ձեզ զայս, հաւատայեալ իմ բանից Հ. Յովհաննու, զոր հարցանելով հարցի ես, թէ այնչափ գումար արծաթով, 30,000 ֆրանքով, մարթ էր հատուցանել զբովանդակ պարտսն եւ փակել զհաշիւ վարժարանիս, եցոյց նա ընդ այն հաւանութիւն յայնժամ. բայց յորժամ եհաս այսր արծաթն, եւ իբրեւ անցին աւուրք ինչ, եւ ի խնդրել իմ հաշիւ ի նմանէ, ասաց ինձ նա, թէ անմարթ էր նմա տալ զհաշիւն, կարօտելով իւր տակաւին արծաթոյ ի հատուցանել զբովանդակ պարտսն եւ փակել զհաշիւ ծախուցն:

« Ասացի ցնա, գոնէ ցուցցէ ինձ՝ թէ քանի՛ եւս մնացեալ իցեն պարտիքն, առ ի գիտել միայն զայն: Խոստացաւ նա ցուցանել ինձ զայն, բայց ըստ սովորութեան իւրում յապաղեաց, մինչեւ եկն այսր Պարոն Յովհաննէս Տատեան, յորոյ գործս պատաղեալ՝ զմերն եթող խապառ, եւ մինչչեւ մեկնեալ Նորա աստի եւ ստիպեալ յինէն անդադար, մանաւանդ թէ տագնապեալ իսկ ի հանդամանաց ժամանակիս, ետ նա ինձ հաշիւ ուրեմն զընդհանուր զայդ հաշիւ, եւ եցոյց ինձ յայնժամ ըղմնացեալ պարտսն, զոր տեսեալ ապշեցայ, մանաւանդ յայսմ տագնապ ժամանակիս, յոր պիտոյ էր ունել մեզ ի ձեռին բաւական գումար արծաթոյ, ի կարեւոր պէտս ծախուց դպրոցիս, կամ գոնէ ազատեալ էաք ի հոգոյ պարտուց:

« Ահա պատասխանի յիշատակեալ եւ յիշատակելի արդեօք ի Վենէտ բանից յառաջագոյն գրութեանս. եւ ահա Ձեզ բնական վիճակ վարժարանիս... տացէ Տէր գի մի՛ եւ բարոյականն սորին սոյնպէս լիցի:

« Ի բանից աստի եւ ի թղթոյ Հ. Յովհաննու իմանայ Վենէտ եւ ժողովն խնամակալաց զայժմեան վիճակ վարժարանիս եւ զկարօտութիւն սորին. վասն որոյ աւելորդ համարիմ առաւել ինչ գրել... բայց միայն կարեւոր դատիմ խնդիր ինչ աստանօր առաջի առնել, այս է. Եթէ Տէր մի՛ արասցէ, իբ-

ռովութիւնն այսր և անդր ճարակեսցին, և երթևեկ թղթոց և անցք դրամոց խափանեսցին այսր, զի՞նչ պարտ իցէ մեզ առնել. զմանկունս դպրոցիս պահել, հանդերձ աճիւ և դողութեամբ, ծանր ծախիւք, պարտիւք և տոկոսեօք, (և եթէ կարիցեմք զայն գտանել. քանզի ամենեքեան սկսեալ են կրծկել զձեռս իւրեանց և չտալ ումեք փոխ արծաթ, չգիտելով զելս իրացն և զվախճան իւրեանց,) թէ արձակել զոսա ի հայրենիս իւրեանց, որպէս և արձակեցին ոմանք աստ զաշակերտս իւրեանց, և որպէս բազում ազնուականք որ ի քաղաքիս արձակեցին զծառայս և փաճառեցին զկառս և զերիվարս իւրեանց, առ ի խնայել զծախսն և յամփոփել զինքեանս ։

« Թէպէտ և ի դէպս յայս պիտոյ է մեզ դարձեալ արծաթ իբրև 20,000 ֆրանք ի ծախս ճանապարհի մանկանց. արդարև խնդիր կարևոր, դժուարին և ծանր յոյժ, և մեզ պէտք են նախահայեաց տեսութեան և խոհական ընտրողութեան… խորհեսցի քաջ Վեհդ և ժողովն խնամակալաց, և հոգասջիք զայսմանէ ըստ ժամանակին ։ . . .

« Այսչափ ինչ ի ժամուս շատ համարիմ ի լուսաւորութիւն կցկտուր և անյայտ կարծեցեալ բանից թղթոյս, ակնարկելոյ ի Նամակի Վեհիդ, այլ և ի քաջալերութիւն արդեօք բնդոչ սրտի Ձերոյ, առ ի քաջ խորհել և զարժանն գործել. զի առաւել քան զայս գրել, չներեն ինձ՝ ոչ հանգամանք ժամանակիս, և ոչ խոհեմութիւնն իսկ, հայեցեալ ի ներքին և յարտաքին հանգամանս իրաց և կարծեաց. մանաւանդ կանխակալ և կողմնաւոր կարծեաց, որք եղեն և են պատճառք ամենայն անուղղութեան և նեղութեանս արդ, թէպէտ և ծանիցեն որպէս և ծանեան ոմանք այժմ զայն, այլ յոյժ անագան ։

« Շչունչ երկպառակ կարծեաց և երկիւղից սաստկանան ի քաղաքիս օր ըստ օրէ. վասն որոյ ըստ խորհրդոյ դեսպանին Տաճկաց և այլոց ի բարեկամացս եդաք և մեք ի վերայ դրան վարժարանիս զդրօշակս երկուց պետութեանց, զՕսմանեանն և զՖրանսիականն, ի զգուշութիւն և ի պաշտպանութիւն հիւրընկալութեան… այլ մեզ առաւելս-

պէս աղօթից Հասարակութեանս պէտք են, վասն որոյ աղաչեմ անպակաս արասջիք զայն ։

« Կնքեմ զթուղթս ողջունիւ սիրոյ և յարգութեան առ համօրէն Վ. Հարս և Եղբարս, և մնամ միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի փարիզ. 15 մարտ. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վ. Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Ազատութեամբ Մեդիոլանու ի բռնակալ մագլաց Արծուոյն՝ համարձակեալ ճանապարհի սուրհանդակացն, ի վերջնում աւուր անցելոյն հասին այսր միանգամայն թուղթք գրեալք այտի յ13 օրէ մարտի, ընդ որս ընկալայ և ես՝ ի տըրտմութիւն սրտիս՝ զերկոսին թուղթս Վերապատուութեանդ ի 14 և ի 15 Նորին ամսոյ, հանդերձ երկամեայ հաշուեգրովք վարժարանիդ ։ Այլ որպէս Վերապատուութեանդ վայրապար թուի արդ դատել և կամ ասել ինչ ընդ այնոսիկ, նոյնպէս վայրապար և անօգուտ թուի ինձ՝ չասացից թէ և վնասակար՝ բան առ բան առնել պատասխանի գրեցելոյդ. այլ ընդ կարեւորագունիցն և եթ որ ի նոսա հատուցից զպատասխանին ։

« Ընդ խորհուրդն ցրուելոյ զմանկտիդ յիւրաքանչիւր տեղիս՝ ոչ հաճեցաւ աստի ժողովս. զի մանկտին մեր ոչ իբրեւ զայլոց վարժարանաց տեղւոյդ ի շրջակայ վայրաց են հաւաքեալ, զորս դիւրին իցէ և անաշխատ ցրուել յիւրաքանչիւր տեղիս և ապա միւսանգամ հաւաքել. և եթէ դժուարին իցէ ի պատճառս խռովութեանց քաղաքիդ և համայն իսկ Եւրոպայ անցուցանել աստի այդր արծաթ ի պահպանութիւն և

ի յանձանձանս վարժարանիդ, ո՛րպէս մարթ իցէ զքսան հազար ֆրանքսն՝ զծախս ուղեւորութեան նոցա, որպէս առ Վերապատուութիւնդ անցուցանել միանգամայն։ Թողից առել զայլ եւս բազմապատիկ անտեղութիւնս իրացդ։ Իսկ և յայլուստ՝ ոչ ի խուռն քաղաքիդ է վարժարանդ և ընդ ոտիւք ամբոխին, և ոչ դարձեալ դպրոց համազգի նոցա մանկտւոյ, և ոչ իսկ մթերեալ արծաթով և կամ ճոխ կարասեօք համբուեալ՝ ի գրգիռ աւարառութեան սրիկայից, զի կասկած երկիւղի ի վերայ կայցէ. այլ այնու ամենայնիւ և խնամօքն Աստուծոյ զերծ թուի ի վտանգաց։

« Իսկ վասն ոգեպահիկ ամսականի արծաթոյն ընդ որ հոգայք, ահա վեց հազար ֆրանքք զորոց գրէր Վերապատուութիւնդ առ օրին հատուցան աստ առ Հօլմ, որք ընդ 4025 ֆրանքացն յղելոց ի մարտի գումարին իբրեւ ի տասն հազար ֆրանքս, և յղեսցին այլ եւս ի հպոյ, զի աստի սեղանաւորք և վաճառականք խոստանան մեզ զհնարս յղելոյ միշտ արծաթոյն։ Իմ և ի Պօլիս գրեալ է, զի փոխանակ այսր առ մեզ անցուցանելոյ զարծաթն հաւաքեալ յարկղ Հասարակութեանս, այդր առ ձեզ առաքեսցեն ապահով փոխանակագրովք, և զհետ եւս նմք և այլոց եւս հնարից՝ առ հատուցանելոյ ձեզ ըստ ժամանակին զկարեւոր արծաթն ոգեպահիկ, զի մի սովամահ լինիջիք։ Եւ Ձեզ մնայ այդր զկարեւորն ձեզ գումար արծաթոյ խնայութեամբ բազմաւ ի վար արկանել յապրուստ մանկտւոյդ, և մի՛ ի հատուցումն բազմագումար պարտուցդ սպառել, մինչեւ ժամ առեալ և պարապ և խաղաղութիւն, և ի հատուցումն նոցին խորհեսցուք։ Քանզի գիտէք և զաստի յեղափոխութիւնսն և զյոյզս խռովութեանց. և զի՛ ի նմանօրինակ վիճակի կայ և քաղաքս և աշխարհ. և զի՛ արկղ վարժարանիս յութ և տասն ամսոց հետէ լիրէ Աւստրիականս 164,000 անցուցեալ այդր միայն, դատարկ է ամենեւին, և յայսպիսում ժամանակի չմարթէ դարձեալ միւսանգամ կալուածս վաճառել և կամ փոխ առնուլ ուստեք. զի՞նչ թէ պատերազմ եւս ի վերայ հասեալ, և դադարեսցին եկամուտք ի կալուածոց։ Վասն որոյ դարձեալ միւսանգամ

թախանձանօք պատուիրեմ, բազում զգուշութեամբ և խնամութեամբ գլղեալ արծաթն ի վար արկանել։

« Զայսօսիկ վասն դրամական իրաց վարժարանիդ հաստատեալ ցայս վայր՝ ներեսցի ինձ դարձեալ միւսանգամ հարցանել՝ թէ զինչ նշանակիցեն հակիրճ բանքդ սակաւ ասիւք, այլ լի բազմախուռն տխուր և ձախողակ իմաստիւք, թէ « Ահա « ձեզ բնական վիճակ վարժարանիս, տացէ Տէր զի մի և « բարոյական սորին սոյնպէս լիցի։ » Զինչ մարթ իցէ ինձ հակիրճ բանիւքդ իմանալ և կամ առնել, բայց ցաւս ի ցաւոց վերայ յաւելուլ ի սրտի և հեծել։ Ա՛հ, ոչ ակն ունէի ի Վերապատուութենէդ լսել զայս, յետ գրեցելոյն առ իս ի վեշտասան ամսոց հետէ։ . . .

« Սիրալիր ողջունիւ ամենեցուն մաղթեմ ողջ լինել

« Ցարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 4 ապրիլ. 1848.

« Ն. Տ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Եւ ոչ այսչափ միայն պատասխանի տայ Գեր. Հիւրմիւզ առաջարկութեան բանից Հ. Սարգսի, այլ և առօրայի զմտաբերել նորին անգամ հասմարի, ի թուղթն իւր առ Հ. Յովհաննէս, զոր իմացեալ Հ. Սարգսի՝ առնէ ընդ այն պատասխանի, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Յետ բազում հոգոց և տարակուսանաց ընդ անխափան ժամանումն թղթոյս այդր, ահա անագան ուրեմն ի 10 ամսոյս հանդեաւ սիրտ իմ ի հոգոց անտի, տեղեկացեալ զայն յայլուստ։ Ապա ի 15 ամսոյս ընկալայ զցանկալի պատասխանին նոցին ի Վենէտ, յոր և խոստանայք լնուլ զկարեւոր պէտս վարժարանիս ամենայն խնամով և լաւ ժամանակին,

թէպէտ և հաստուցեալն ի Ձէնջ այդր 6,000 ֆրանք, ընկալաք ցարդ այսր զփոխարէն 2,000 ֆրանք և եթ, չկարելով սեղանաւորիդ գտանել այլ փոխանակագիր այտի այսր։ Լուծանէք միանգամայն և ի նմին նամակի Ձերում զկարծիս դրութեան և տարակուսանաց իմոց, որք ի դէպս վերջին հարկաւորութեանն մերում աստ, արձակեցոյ զմանկունս դպրոցիս ի հայրենիս իւրեանց, և զայն խորհրդով և հրամանաւ յարգոյ ժողովոյդ։ Վասն որոյ հանդերձ սիրտ իմ ի հոգոց անտի, հաստուցանելով իմ զպարտս խղճի մտացս, թէպէտ և չհամոզեցաւ միտք իմ ընդ այն, հայեցեալ ի տարակուսական յայս բանս նամակի Վենետ., թէ՝ « Եւ զի՞նչ՝ թէ պատերազմ եւս « ի վերայ հասեալ և դադարեսցին եկամուտք ի կալուածոց. » որ և չմիաբանին արդեօք ընդ « խորհրդով և հրամանաւ « որոշման յարգոյ ժողովոյդ։ »

« Իսկ յաղագս տարակուսական հարցման Վենետ., և յաւելեալ ցաւոց սրտի Ձերոյ, որ ընդ հակիրճ բանիս սակաւ ասիւք ի նախընթաց թուղթն իմ, հարցանեմ ես նախ՝ հանդերձ հայցմամբ թողութեան, թէ զի՞նչ օգուտ հասարակաց, և ո՞ր մխիթարութիւն մանկանց յազգարարութենէ անտի իմոյ եղեն ցարդ. բայց եթէ պատճառք տհաճութեան և խիստ դատաստանաց, որպէս տեսաւ և տեսանի արդ։...

« Ապա ընդունայն և ի զուր է այսուհետև առնել ինչ ազգարարութիւն և կամ տալ նմին մեկնութիւն, չասացից թէ և վնասակար իսկ. և յիրաւի՝ քանզի զի՞նչ տհաճութեան խիստ քննութեան պատճառք կային ի պայմանաւոր կարծիսն իմ և ի վերջին հարկաւորութեանն մերում աստ յաղմկեալ և յալէկոծեալ քաղաքիս... և ընդէ՞ր այնչափ իմն տհաճեալ և գայթագղեալ Ձեր ընդ այս պայմանաւոր առաջարկութիւն իմ, մինչև ամօրագործ զմտաբերել նորին անգամ համարել։

« Հարցանեմ ես երկրորդ՝ թէ ուստի՞ այսօրէկ յառաջ գան, յորպիսի՞ ոգւոյ և ի ճանաչմանէ մտաց այսպիսի դատաստան... ո՞չ ապաքէն ի հակառակութենէ ոգւոյ ումանց ընդ փոխադրութիւն վարժարանիս... և ի նուաստ վարկէ Ձերոյ զինէն որ ի գործ յայս պաշտամանն։... Այո՛ յայտնանէ

ասափ յառաջ զան այսոքիկ, վասն որոյ և լքումն ձեռաց և սրտի և վնաս յամենայնի։

« Թէպէտ և բողոքեցի ես ընդ այս, անաչառ և ձիգ գրութեամբս, և յայտ արարի զնոյն ի զանազան Թուղթս իմ առ Վեհդ՝ համառօտ բանիւք ազդարարութեանս, այլ Վեհդ՝ մերթ իբր չիմացեալ զմիտս հակիրճ բանիւք գրութեանս, խնդրեաց և խնդրէ յինէն ընդ այն մեկնութիւն. և մերթ ցաւեալ և հեծեալ ընդ այն, ասէ ինձ զայս բանս.
« Ա՛հ, ոչ ակն ունէի ի Վերապատուութենէդ լսել զայս,
« յետ գրեցելոյն առ իս ի վեշտասան ամաց հետէ։ »

« Ընդ որ և ես ասեմ, և կարի իրաւամբք, թէ չմնայի ես բնաւ և ոչ իսկ ակն ունէի երբէք, ընդ այս պայմանաւոր առաջարկութիւնն իմ դժկամակել Ձեր այսչափ, մինչեւ ամօթալի ինչ զննաբերել նորին համարել, հանդերձ խիստ դատաստանօք ոմանց որ ի յարգոյ ժողովոյդ, և այս՝ յայսմ քննութեան ժամանակի, յոր համօրէն Եւրոպա ի յոյզ և ի ծուփս կայ։...

« Ասեմ եւս՝ թէ մխիթարութիւնն իմ, վեշտասան ամսոյ հետէ գրութեանս՝ է ի գիտակցութիւն մտացս, և փոխարէն իրաւանցս՝ ի կարծիս յետնոցն, հաւանեալս եմ ասիցն թէ՝
« Զիրաւունսն զոր զլանան մեզ երբեմն ժամանակակիցք մեր,
« գիտեն յետինքն հատուցանել մեզ զայն։ »

« Թողի՛ց և զարդիւնս իրացն, որով և արդարացայց ապա, թէպէտ և այն եւս ոչ ի մխիթարութիւն սրտիս։...

« Ահա մեկնութիւն հակիրճ բանիւք, սակաւ ասիւք գրութեանս, խնդրելոյ յինէն Տէրութեանդ։...

« Կարեւոր համարիմ և զայս ինչ ծանուցանել, իբրեւ ի լուծումն տարակուսանաց ոմանց այդր, որ ընդ կարծիս արձակելոյ մանկանց դպրոցիս ի հայրենիս իւրեանց. այսինքն թէ՝ իմ միա՞յն էին այս կարծիք, թէ այլոց եւս յեղբարցս աստի։

« Արդ՝ հայեցեալ իմ ի հանգամանս քաղաքիս և ի վիճակ մեր աստ և այդր, պարտ խղճի մտացս վարկայ առաջի առնել Ձեզ զայս կարծիս իմ և իմանալ զկամս Ձեր այդր, առանց հաղորդելոյ զայս եղբարցս աստ զառաջինն, բայց իբրեւ տա-

բածեցաւ խռովութիւն յամենայն մայրաքաղաքս Եւրոպիոյ, և խափանեցաւ երթեւեկ Նամակաց, և իբրեւ տուաւ մեզ ատ խորհուրդ ի բարեկամացս յապահովել զմեզ ըստ ժամանակին, գոնէ զերիցագոյնսն հասակաւ ի մանկանցս արձակել ի տեղիս իւրեանց, զի վտանգ է Նոցա ասացին յայսպիսի ժամանակի, կամայ և ակամայ յարելոյ Նոցա ի խուժանն և վնասելոյ անտի։... Զայս լուեալ մերոցն սկսան հոգալ և խորհիլ ընդ իս զայսմանէ, տարակուսեալ միանգամայն՝ թէ զիա՞րդ կարէաք զայն առնել առանց հաւանութեան Վեհիդ և Հասարակութեանս։

„ Յայնժամ հաղորդեցի ես Նոցա զգրութիւնն իմ առ Վեհդ և զկամս ձեր հարցեալ ընդ այն։ Ցուցին Նոքա հաճութիւն ընդ Նախատեսութիւնն իմ, և մնային ընդ իս լսել զհաճութիւն կամաց ձերոց որ ընդ այն, և ահա լուաք զոհաճութիւն ձեր, հանդերձ մեղադրանօք և խիստ քննութեամբ։

„ Մնամ միշտ

„ Գերապայծառ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 18 ապրիլ. 1848.

„ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

Թուղթ Գեր. Հիւրմիւզի գրեալ առ Հ. Սարգիս ի Փարիզ, օրինակ զայս.

„ Յարգոյապատիւ և Վ. Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

„ Ահա դարձեալ յղեմ առ Վերապատուութիւնդ փոխանակագիրս կրկին, մին 4,000 Ֆրանքաց, և միւսն 665. ընդ ամենայն չորս հազար վեց հարիւր վաթսուն և հինգ Ֆրանքաց, ամօրեայ պայմանաւ ժամանակի, այս է, հատուցանելի ի 11 մայիսի, զոր թախանձանօք մեծաւ յանձն առնեմ դարձեալ Վերապատուութեանդ ունել առ իւր, և ի կարեւոր ժամանակին տալ զայնս ի դուրս։ Զի՞նչ ևս կարիցեմ առ-

նել ես ի դարման չարեաց դպրոցիդ, և ընդէ՞ր Վերապատուութիւնդ թողեալ լքեալ զամենայն և յիս միայն ըստանձնէ։ Եթէ խնայէ արդարև յինչս աղքատաց, զամենայն փոյթ և զհնարս պարտի ի վար արկանել, զի մի՛ վայրապար ծախիցին։ Հապա ժրացի և Վերապատուութիւնդ և միաբան գործեսցուք զօգուտ աղքատաց զազգին և զմիաբանութեանս։

« Ողջունիւ սիրոյ վանականացս ամենեցուն մաղթեմ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 13 ապրիլ. 1848.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդհանրական Աբբայ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ Թղթոց Հ. Սարգսի, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վ. Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Ընկալեալ և զերկոսին Թուղթս Վերապատուութեանդ գրեալսն յ18 և ի25 ապրիլի ծանեայ զժամանել փոխանակագրոցն յղելոց այդր ի ձեռս Ձեր, և հեամ ընդունել զլուրն ժամանելոյ միւսոյ ևս փոխանակագրոյն հազար ֆրանքաց։

« Յառաջնումն ի Թղթոյդ ստգտանէ զիս Վերապատուութիւնդ զի ամօթապարտ ասացեալ եմ զխորհուրդ ցրուելոյ զմանկտի վարժարանիդ. բայց իմ ի պատասխանիս լոկոյ Առաջարկութեանդ և հարցման՝ չիք այլ ինչ գրեալ առ Վերապատուութիւնդ՝ բայց զի ոչ հաճեցաւ ընդ այն ժողովս վասն այս ինչ և այն պատճառաց։

« Իսկ զի յետ այնորիկ առ այլ ոք գրելով յաւելեալ եմ զամօթապարտ բառդ, չէր պարտ Վերապատուութեանդ խռովել ընդ այն, գուշակելով՝ թէ այլ ինչ ուրեմն պատճառք

*իցեն իւրայդ, և զի՞ թէ՛պէտ առ հարկի, թէ՛պէտ առ չքաւո-
րութեան արծաթոյ՝ սակայն առժամայն ցրումն մանկտւոյն
ոչ ի պատիւ էր մեզ, և թէ Փրանքք 25 կամ 30 հազար պատ-
բաստ և ի պահեստի կայլին այդր կամ աստ՝ և ոչ Վերա-
պատուութիւնդ, որպէս կարծեմ, հարկաւորէր առնել զայդ
առաջարկ։*

*‹‹ Իսկ յերկրորդումն ի թղթոյդ առակաւոր բանիւք ասէք,
զի ‹‹ Եթէ ըստ առածին վտանգ իցէ նաւու միոյ՝ ունել երկուս
‹‹ նաւավարս, քանի՜ եւս չիցէ այն՝ եթէ չորք լիցին նաւա-
‹‹ վարք նորին։ . . . ›› Ճշմարտութեամբ են բանքդ, եթէ ար-
դարեւ չորք հաւասարազօր և համապատիւ պետք իցեն և
ուղղիչք միոյ նաւու. բայց և յամենայն մեծամեծ և յարքունի
նաւս նաւապետք են և երկրորդ նաւապետք և համարակալ և
առագաստապետ, և տնտես, որոց իւրաքանչիւր գործ և
պաշտօն որոշեալ գոլով և սահմանեալ յօրինաց և ի կանո-
նաց, չլինի ինչ վտանգ ի ճահ ճեմելոյ նաւուն։ Այսպէս է
իմանալ և զդպրոցէդ և զՄխիթարանութենէս իսկ, որում թէ-
պէտ ապիկարս եմ և արհամարհ չգիտեմ ո՞րպէս և ո՞րպիսի
անհմտութեամբս իմով գտանիցիմ իբրեւ գլուխ, բայց են
ի նմա և առաջակայք և խնամակալացն ժողով և գործակալ և
ուսուցիչք, առանց որոց չիցէ օրէն և մարթելի գործել ինչ
ինձ։ Եւ իցէ՞ օրէն վասն այսորիկ թողուլ լքանել զամենայն,
թէպէտ և կշտամբիցիմ եւս ուստեք և անգոսնիցիմ։ Ընդ աղօ-
թից և առ Աստուած ապաւինութեան՝ և երկայնամիտ համ-
բերութեան մեզ պէտք են, զոր մաղթեմ վասն իմ և վասն
Վերապատուութեանդ։*

*‹‹ Սիրալիր ողջունիւ ամենեցուն որ աստ են մաղթեմ
ողջ լինել*

‹‹ Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

‹‹ Վենետիկ. 8 մայիս. 1848.

‹‹ Ն· Տ· ԳԷՈՐԳ Վ· ՀԻՒՐՄԻւԶ

‹‹ Արքեպիսկոպոս և ընդ· Աբբայ· ››

Թէպէտ և ճանաչէ Գեր. Հիւրմիւզ զկարեւոր ազգարարութիւն Հ. Սարգսի, բայց անագան և ոչ բովանդակ, թէպէտ և խոստովանի զտկարութիւն իւր, չկարել միայն դարման տանել չարեացն, այլ ոչ միշտ և ճշմարտութեամբ, որպէս և տեսանի ի բանս թղթոց իւրոց, զորս յառաջ բերէ Հ. Սարգիս մի առ մի, և որոց առնէ զարժանի պատասխանին, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ընկալայ դարձեալ զցանկալի և զնպաստամատոյց Նամակ Վեհիդ, հանդերձ փոխանակագրովն 4,665 փրանքաց, և քաջալէր բանիւք:

« Շնորհ յոյժ ունիմ խնամոտ մտաց Հօրդ հասարակաց, որով մխիթարէք և քաջալերէք զիս աստ յանմխիթար վայրիս և ի տագնապ ժամանակիս :..:

« Երանի թէ կարէի ես փոխարինել այսմիկ, թեթեւացուցանել գոնէ սակաւիկ մի զծանրութիւն հոգոց Ձերոց. այլ ցաւիմ յոյժ զի բռնադատեցայ միշտ ի խղճէ մտացս յաւելուլ Ձեզ զայն անախորժ գրութեամբս, վասն որոյ խնդրեմ թողութիւն ակամայ համարձակութեանս:

« Զյղեալ արծաթն, թախանձանօք մեծաւ յանձն առնէք ունել իմ առ իս և ի կարեւոր ժամանակի տալ զայն ի դուրս, և յաւելուք ասել ինձ զայս բանս. « Զինչ կարիցեմ առնել ես
« ի դարման չարեաց դպրոցիդ. և ընդէ՞ր Վերապատուու-
« թիւնդ թողեալ լքեալ զամենայն և յիս միայն ըստանձնէ:
« Եթէ խնայէ արդարեւ յինչս ազքատաց, զամենայն փոյթ
« և զհնարս պարտի ի վար արկանել զի մի վայրապար ծա-
« խիցին: »

« Ասեմ ես առ այսոսիկ բանս Վեհիդ, երանի թէ դարման չարեաց դպրոցիս, նիւթական պահպանութիւն լինէր արծաթոյն առ իս, և ոչ բարոյական նուաստութիւնն որ ըղձակէ անձինս, և բաժանումն իշխանութեանս որ ի գործ պաշտաման սորին, և յիրաւի՝ զի եթէ ըստ առածին, վտանգ

իցէ նաւու միոյ ունել երկուս նաւավարս, քանի՛ եւս չիցէ այն, եթէ չորք լիցին նաւավարք նորին։

« Ահա ըստ այսմ օրինակի և յայսմանէ աստի ՚ամենայն անուղղութիւն որ ի մեաս դպրոցիս, լքումն սրտի և ձեռաց իմոց, կարծեցեալ իրաւունք և դժգոհութիւն այլոց, որպէս և լուայք և ցաւեցայք արդեօք. վասն զի ուր ոչ գոյ ուղղութիւն իրաց, անդ է մեաս հասարակաց, և տրտունջ և ցաւ մանաւորայ։

« Թէպէտ և նախատես և փորձ գոլով իմ այսոցիկ, բայց բանք իմ դժբաղդութեամբ չեղեն լսելի, մանաւանդ թէ և անհաճոյ իսկ թուեցան, սակս զանազան պատճառաց, ըստ իւրաքանչիւր տեսութեան մտաց և հաճութեան կամաց։...

« Իբրեւ տեսեալ իմ զայս ամենայն սկսայ յայտ առնել գրովս չխառնիլ բնաւ ի գործ դպրոցիս, թէպէտ և չկասեցայ երբէք ի կարեւոր ազդարարութենէ որ առ եղբարս այսր, և որ առ Վեհդ այդր, ըստ ճանաչմանս իմում և ըստ խղճի մտացս. և իբրեւ այս եւս ընդունայն և ի զուր եղեւ, մանաւանդ թէ և միասակար եւս և ի դայթագղութիւն ոմանց, եդի ի մտի այնուհետեւ լռել և զայն խոպառ, և զամենայն ինչ վերին տեսչութեան յանձն առնել, զհոգս աղքատաց աղգիս և զպատիւ միաբանութեանս։

« Եկից արդ ի պատասխանիս կարեւոր բանից ակնարկելոց ի նամակի Վեհիդ, յորում ոչ իրաւացի համարիք զգանգատն իմ, որ զամօթապարտ կարծեացս, զարձակելոյ մանկանց դըպրոցիս. ընդ այն, ասէք, չէր պարտ ինձ խռովիլ, գուշակելով, թէ այլ ինչ ուրեմն պատճառք իցեն իրաց։

« Ասեմ ես, եթէ արդարեւ այլ պատճառք էին իրացս, կարծեմ ես, թէ պարտ էր Վեհիդ զայն համարձակ ասել, որում զինչ և արժան էր ասել, որով խմանայր իւրաքանչիւր ոք զսխալանս կարծեաց իւրոց և զպակասութիւնն որ ընդ պատիւ Հասարակութեանս։... Եւ եթէ ի հետեւեալ բանից նամակի Վեհիդ յայտնապէս տեսանի, զի առ իս էին բանքն, գրելով Ձեր այսպէս. « Թէ՛պէտ առ հարկի, թէ-

« պէտ առ չքաւորութեան արծաթոյ, սակայն առժամայն
« ցրումն մանկտւոյդ ոչ ի պատիւ էր մեզ, և ոչ Վերապատ-
« ուութիւնդ որպէս կարծեմ, հարկաւորէր առնել զայդ
« առաջարկ : »

« Ապա մնայր ինձ յայնժամ խոովիլ, և չմնայր այլ պատճառ գուշակելոյ ընդ այն, և չմնայ ինձ այժմ ասել ինչ ընդ այս, բայց եթէ ապագայիցն թողուլ և արդեանց իրացն, որք յայտնելոց են զկարեւորութիւն կարծեացս, և զհարկաւորութիւն առաջարկիս, թէպէտ և այն եւս ոչ ի մխիթարութիւն, այլ ի ցաւս սրտիս :

« — Բայց և յամենայն մեծամեծ և յարքունի նաւս, ասէք,
« Նաւապետք են և երկրորդ Նաւապետք... այսպէս է խմա-
« նալ և զգպրոցէդ և զմիաբանութենէս իսկ, որում թէ-
« պէտ ապիկարս եմ և արհամարհ չգիտեմ ո՛պէս և ո՛րպիսի
« անհմտութեանմբս իմով գտանիցիմ իբրեւ գլուխ, բայց
« են ի նմա և առաջակայք և խնամակալացն ժողով, և գոր-
« ծակալ, և ուսուցիչք, առանց որոց չիցէ օրէն և մարթելի
« գործել ինձ ինչ. և իցէ՞ օրէն վասն այսորիկ թողուլ քա-
« նել զամենայն, թէպէտ և կշտամբիցիմ եւս ուստեք և ան-
« գոսնիցիմ : »

« Առ այսոքիկ բանս Վեհիդ ասեմ եւ նախ՝ թէ արդարեւ այսպիսի ճանաչումն և օրէնք են առ Եւրոպացի ազինս, այլ թէ իցե՞ն սոյնք և առ Ասիացիս. գործ է գտանել, թէպէտ ի մէջ Եւրոպացւոց բնակեալ իցեն ի դարուց հետէ։ Երկրորդ՝ թէ իրաւունքս այս տուեա՞ն մեզ ի Ջէնջ զառաջինն ճանաչմամբ մտաց և յօժարութեամբ սրտի, որով իմանայր արդեօք իւրաքանչիւր ոք ի մէնջ զսահման իշխանութեան իւրոյ :...

« Ա՛հ, Գեր. Տէր, բռնադատէք զիս յիշեցուցանել Ձեզ վերստին զանախորժն որ ի Թուղթս իմ երբեմն :... Այո՛ այսոքիկ եղեն և ե՛ն պատճառք ամենայն անուղղութեան որ ի վարժարանիս, և դժգոհութեան պաշտօնէից սորին առհասարակ. քանզի ուր ոչ դոյ արդարութիւն, ճանաչումն սահմանաց և արժանեաց նոցին, անդ և ոչ ումեք մխիթարութիւն և գոհութիւն ...

« Զայսօրիկ տեսեալ իմ յառաջագոյն՝ ազդ արարի բերանով և գրով որում արժան և հարկ էր ազդ առնել, այլ ունկնդրութիւն բանիցս չեղեւ բնաւ երբէք, մանաւանդ թէ արհամարհութիւն նոցին իսկ եղեւ. տեսեալ իմ զայն լքաւ սիրտ իմ և ձեռքս խառնիլ ի գործ վարժարանիս այնուհետեւ :

« Երրորդ՝ թէ յարգելով յարգեմ ես զգլուխդ իբրեւ արժանաւոր անձն և հասարակաց հաւանութեամբ ընտրեալ Առաջնորդ ուխտիս, և առ պատուականս ունիմ զհամօրէն հոգեհարազատս, իբրեւ կարեւոր և պիտանի անձինք ի գործ Հասարակութեանս : Բայց հարցանեմ ես խոնարհութեամբ, թէ դոքա ամենեքեան առհասարակ խելամո՞ւտ իցեն իրաց և հանգամանաց վարժարանիս. և թէ ունիցի՞ն ամենեքեան հաւասար արժանիս և իրաւունս խառնելոյ ի գործառնութիւնս և կարծիս տալոյ զկարգաւորութենէ սորին, մինչեւ չկարիցէ Վեհդ առնել ինչ զանազանութիւն ի նոսին, այս է, մինչեւ առանց որոց չիցէ օրէն և մարթելի Ձեզ գործել ինչ :...

« Դիւրին լինէր արդեօք տալ հարցմանս իմում պատասխանի, եթէ չէին նոր իմն ձանձրոյթն և զանազան ոգիք ի միջի, բերեալ և ոգիքս այս շարժեալ և համարձակեալ իցեն ի նոր ձանձրացմանէ անտի :...

« Չկամիմ ես ի մանաւորսն իջանել, զկարծեցեալ իրաւանցն և զարժանեացն պաշտօնէից զպրոցիս տալ ի ժամուս, քանզի չներեն ինձ հանգամանք ժամանակիս և խոհեմութիւնն իսկ զամենայն ինչ միանգամայն տալ և զբովանդակն վճարել... Թո՛ղ զի արդիւնք իրացն ինքնին իսկ յայտնի են, և յայտնեսցին օր ըստ օրէ :

« Այլ այսչափ միայն կամիմ ծանուցանել Տեառնդ իմում, թէ չէ այդ բաւական և մխիթար պատասխանի բանից նախընթաց թղթոց իմոց. և թէ՝ բանք նոցին ոչ կշտամբութեան և անզուսպութեան էին, քա՛ւ լիցի, այլ ազդարարութեան և յայտարարութեան, զոր և վերստին երկրորդեմ աստ ի հաստատութիւն մտացս, և յազատութիւն երաշ-

խաւորութեանս որ ի գործ դպրոցիս։ Ահա այսու կամօք և այսպիսի հանգամանօք

« Մնամ միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ

Ի Փարիզ. 25՛ապրիլ և 20 մայիս. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Յետ վերոյիշեալ թղթոց և պատասխանեաց որք աստի և անտի, գրէ դարձեալ Գեր. Հիւրմիւզ թուղթ առ Հ. Սարգիս, յորում յայտնապէս տեսանի արհամարհութիւն ազդարարութեան և առաջարկութեան նորա, տալով անդ հաւանութիւն առաջարկութեան Հ. Ստեփանի արձակելոյ զմանկունս ի հայրենիս իւրեանց, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Թուղթ Վերապատուութեանդ գրեալ ի 21 մայիսի ծանոյց ինձ զժամանել երկրորդի եւս փոխանակագրոյ հազար ֆրանքացն։ . . . .

. . . .

. . . .

« Յերկարել պատերազմացն աստ և խռովութեանց քաղաքիդ այդր՝ միւսանգամ առաջի արարի խնամակալաց ժողովոյս զառաջարկութիւն Վերապատուութեանդ ցրուելոյ ըզմանկտի վարժարանիդ և զանհրաժեշտ հարկն զոր ցուցանէր Վերապատուութիւնդ. և հուսկ ուրեմն հաւանեցաւ ժողովն թեթեւացուցանել միայն զվարժարանդ, ի բաց արձակելով զանպիտանսն և զվնասակարագոյնս ի մանկտւոյդ՝ որով ըստ կրկին զլխոյ օգտեսցի վարժարանդ։ Այլ զի ծանր են իրքդ՝ զոր առնել ստիպիմք, և դժպհի մանաւանդ ծնողաց և մերձաւորաց յետադարձիցն, յիմաստութիւն Ձեր և

ի խոհեմութիւն առնեմք ապաստան այնու օրինակաւ առնել զկրան և զընտրութիւն մանկտւոյն, զի նուազագոյն գէթ՝ որպէս մարթն է՝ ամօթս մեր և վտանգ եղիցի։ . . . . .

. . . .

« Սիրալիր ողջունիւ վանականացս ամենեցուն՝ մաղթեմ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 2 յունիս. 1848.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում յիշատակէ զանպատշաճ գնացս նորա ընդ իւր ի սկըզբանէ անտի, զդիտաւորութիւն և զնպատակ Բարերարին, և զպարտս միաբանութեան իւրոյ, հայեցեալ ի նպատակն յայն, և զանուղղութիւն մատակարարութեան վարժարանին, հայեցեալ յընտրութիւն մանկանց և պաշտօնէից նորին, և յանհընարին ծախսն որ ի վնաս աղքատաց ազգիս, ապա հրաժարելով հրաժարի և ի սին յանուանէ տեսչութեան իւրոյ, հանդերձ բողոքմամբ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ընկալայ զցանկալի նամակ Վեհիդ, և ընթերցայ զայն զարմացմամբ և տրտմութեամբ միանգամայն. զարմացմամբ, զի ոչ առնէք բնաւ յիշատակութիւն ինչ ընդ նախընթաց գրելոյն իմ. և տրտմութեամբ, զի անազան ուրեմն և յետ բազում վնասուց լսելի լինին Ձեզ բանք իմ, չասացից թէ վկայութեամբ այլոց, և աղաղակաւ քարանց, մանկանց ասեմ դպրոցիս։ . . .

« Թէպէտ երկու ամօք յառաջ՝ մինչդեռ այդր իսկ էի, խելամուտ եղէ, զի որ վասն իմ ի գործ այսր դպրոցիս վճարեալ էր, լսելով զչկամութիւնն որ ընդ տեսչութիւն իմ աստի, և տեսանելով զլուելեան հաւանութիւն ձեր որ ընդ այն այտի:... Թէպէտ և եդի ի մտի ապա, և օր ըստ օրէ փորձիւ ի նոյն հաստատեալ՝ լռել իսպառ և չազդել ինչ ևս, տեսանելով յայտնապէս զարհամարհութիւն ազդարարութեանս,... այլ կարեկցութիւն կարօտելոյ ազգիս, և նախանձ փառաց հասարակութեանս, վասն որոյ զամս երեսուն ոգւով չափ աշխատեալ, ետուն ինձ մոռանալ զնախատինս և զարհամարհութիւն բանիցս:

« Ահա սոյն այս պատճառք, Գեր. Տէր, ստիպեն զիս այսօր բերել յայս գրութիւնս, յիշեցուցանելով Վեհիդ և խնամակալաց ժողովոյն զբազում անգամ ասացեալ կարծիսն իմ որ ի գործս հասարակաց, ի սրբազան պաշտօնն որ ի հանգուցեալ Բարերարաց կտակաւ մեզ հաւատացեալ. այս է, թէ պարտ է Միաբանութեանս ժողովել նախ աստի և անտի յամենայն կողմանց Ասիոյ ընտրանօք որբ և աղքատ մանկունս յազգէս Հայոց ի Պօլիս, և անդ՝ զամս երեք դաստիարակել և մարզել զնոսա ի սկզբունս կարեւոր գիտութեանց, այսինքն, յընթերցումն և ի գրութիւն Հայ և ի Գաղղիացի բարբառ, ի գիտութիւն քրիստոնէական վարդապետութեան, քաղաքավարութեան, սուրբ գրոց և ազգային պատմութեան, թուաբանութեան, աշխարհագրութեան, և ուրուագրութեան. և ապա ի նոցանէ, ամենայն կարեւոր ընտրութեամբ, իբրեւ զմի ի հարիւրէն ընտրեալ, զուշիմսն, զբարեվարսն, զքաջառողջսն, և զճշմարիտ տնանկսն զվկայեալսն ի բազմաց, և առանց ինչ աչառանաց, և շահասիրութեան մերոցն, առաքել այսր ի վարժարանս, ուր զամս հինգ դաստիարակեալ և մարզեալ յԵւրոպացի քաջ վարժապետաց յընտիր քաղաքավարութիւն, ի բարձրագոյն գիտութիւնս և ի կենցաղօգուտ արուեստս, դարձցին ի հայրենիս իւրեանց ի լուսաւորութիւն ազգիս, ըստ նպատակի Բարերարացն:

« Երկրորդ՝ թէ պարտ է Միաբանութեանս զայնպիսի ան-

ձինս կարգել ուղղիչ վարժարանացս, յորոց ճանաչումն, ի փորձն, և ի գնացսն վստահ իցէ ինքն, և թողուլ ընտրութեան և հաճութեան կամաց նորին զայլ պաշտօնեայս վարժարանացս, տալով զնոսին իբրև օգնական և ընկեր նորա, և ոչ իբրև ուրոյն ուրոյն սեպհական իշխանութեամբ և անկախ ի նմանէ, որպէս կարգեցան ցարդ և տեսան արդիւնքն որ ի կարգաւորութենէ անտի և ի կարծեցեալ իրաւանց նորին։

« Այլ ասիցէ ոք արդեօք, որպէս և ասացաւ երբեմն, թէ նախ՝ միաբանութիւնս չունի բաւական և յարմար անձինս ի գործ յայս պաշտամանն, և թէ՝ եղեալքն ևս՝ չառնուն յանձն ամենեքեան զհոգս զայս և զաշխատութիւնս. և երկրորդ՝ զի ոչ գոյ այնպիսի անձն յոր կարիցէ միաբանութիւնս վստահ լինել բոլորովին, և խոհեմութեան նորին թողուլ զամենայն ինչ... Թո՛ղ զի և այլ պաշտօնեայք չկամին բնաւ կախումն ինչ ունել յուղղչէ անտի, այլ յԱռաջնորդէն իւրեանց միայն, վասն որոյ հարկաւորի միաբանութիւնս որոշել զիւրաքանչիւր պաշտօն և զիշխանութիւն նոցա ի գործս վարժարանացս, և զորոշումն գլխաւոր իրաց թողուլ ի կամս Առաջնորդին իւրոյ։

« Առ այսոսիկ ասացի ես երբեմն, և ասացից ևս այժմիկ. Եթէ չունի Միաբանութիւնս բաւական և յարմար անձինս ի գործ յայս պաշտաման, և եթէ եղեալքն չառնուն յանձն ամենեքեան զհոգս այս և զաշխատութիւնս, ապա մի՛ ակնկալցի միաբանութիւնս տեսանել անտի առաւել արդիւնս քան զեղեալսն ցարդ։ Եւ եթէ արդարև ոչ գոյ այնպիսի անձն յոր կարիցէ միաբանութիւնս վստահ լինել բոլորովին և խոհեմութեան նորին թողուլ զամենայն ինչ, ապա բարւոք առնէ միաբանութիւնս և պարտ իսկ է ըստ պատշաճ իւրում և ըստ խղճի մտաց խոստովանել զանբաւականութիւն իւր յայս գործ պաշտաման, և հրաժարիլ կամաւ ի մատակարարութենէ անտի, զի մի՛ յառաւել իմն նախատինս լիցի նմա պաշտօնն այս, և յանհնարին վնաս աղքատաց ազգիս, և մինչչև բողոքեալ իցէ նոցա առ հակառակորդն և հանեալ զայս բռնի ի ձեռաց իւրոց։

« Գիտեմ զի ծանր են Ձեզ յոյժ բանքս, և անհաւատ արգեօք, հայեցեալ ի վարկն որ զգրողէս, և ծանրագոյն՝ զայսչափ ամս տառապելոյս, այլ ոչ անհաւատ, հայեցեալ յաղագս քարանց, մանկանցն ասեմ դպրոցիս, և ի դատաստանս Եւրոպացի վարժապետաց նոցին: Քանզի տղքին իսկ մանկունք դպրոցիս համարձակ դէմ յանդիման մերոցն աղաղակեն, թէ « Զգիտէք և չկարէք դուք վարժարան վարել, « յանձնեսջիք զայն Եւրոպացւոց, որ գիտակ և փորձ են « կարգաց և կանոնաց դպրոցաց: »

« Լուա՞յք զաղաղակ քարանց, մանկանց դպրոցիս . . . լուարո՞ւք և զդատաստանս Եւրոպացի վարժապետաց նոցին, որք ասացեալ են մերոցն աստ յայտնապէս, թէ « Բարւոք « առնէք արձակել զմանկունս, զի դժուարին է ձեզ վարել « զնոսա: » Թէթե՞ւ ինչ թուիցին Ձեզ այսոքիկ բանք, և անհաւա՞տ հետեւանք սոցին:

« Ահա բանն յայն սահման եհաս, մինչեւ հարկաւորիլ ուսուցչապետին վարժարանիս յառաջ քան զհասանել այսր հրամանին ձերոյ այտի արձակել զքանի մի ի մանկանց աստի, զվնասակարագոյնն և զանպիտանն ի նոցանէ թուով եօթն, և մնալ աւուրս ինչ թերեւս զգաստութեան այլ վնասակարաց և անպիտանեաց անտի, որք նոյնչափ և աւելի են թուով, ըստ վկայութեան և ըստ կարծեաց իւրոց. ապա թէ ոչ՝ արձակեսցէ և զնոսա ի բաց:

« Հարցանեմ ես արդ ցաւագին սրտիւ, թէ որո՞յ կարծիք ամօթապարտ իցեն: . . .

« Նախատեսեալ իմ զանհրաժեշտ հետեւանս անուղղութեան վարժարանիս, խորհեցայ ես դարման տանել այնմ փոքրագոյն վնասուք, սրբել զվարժարանս ի վնասակարագոյն և յանպիտան անձանց, և այն գեղեցիկ իմն պատրուակաւ, պատճառաւ խռովութեան Գաղղիոյ և Իտալիոյ, և դժուարութեան անցուցանելոյ այտի այսր արծաթոյ, . . . պահելով միանգամայն և զպատիւ Միաբանութեանս, և խնայելով յինչս աղքատաց ազգիս, հատուցանելով զմնացեալ պարտիս դպրոցին:

« Զայս խորհուրդ իմ զառաջինն ոչ հաղորդեցի մերոցն աստ, մնալով հաճութեանն որ այտի․ բայց իբրեւ սաստկացաւ շշուկն մարտի յԻտալիա եւ խռովութեան այսր, եւ յապաղեաց գալ մեզ այտի թուղթ, յայնժամ հաղորդեցի ես մերոցն աստ զտեսութիւն մտաց իմոց, եւ զգրութիւնն իմ առ Ձեզ։ Հաճեցաւ ընդ այն Հ. Յովհաննէս եւ գովեաց զնախատեսութիւնս իմ, հայեցեալ ի հանգամանս վարժարանիս, զոր լռէր ցայն վայր խոհեմութեամբ։

« Իսկ Հ. Ստեփանն հաճեցաւ եւ ոչ հաճեցաւ ընդ այն, տարակուսեալ չգիտէր զի՞նչ որոշել, մերթ ասէր, թէ պա՛րտ է ուրեմն զբոլոր մանկտին ի բաց արձակել, եւ մերթ թէ՝ ըզկրտսերսն միայն ի Նոցանէ։

« Տեսեալ իմ զշփոթութիւն Նորա, ասացի ցնա, թէ չեն ինձ կամք ոչ զբոլորն եւ ոչ զմասն ի մանկանցդ արձակել ի բաց, այլ ի վերջին հարկաւորութեանն պարտ է զփոքրագոյնն ի չարեացն ընտրել, եւ թէ՝ կարծիքն իմ եւ առաջարկութիւնս թողեալ են հաւանութեան եւ որոշման վանացս, տեսցո՛ւք զի՞նչ պատասխանի եկեսցէ անտի։ Լուեալ Նորա զայս, լռեաց, բայց տեսի զի անհաճոյ էին Նմա կարծիք իմ եւ առաջարկութիւնս։ Իմանայ զայս խորհուրդ իմ եւ Հ. Տիմոթէոս Թընկրեան, եւ հաճի ընդ այս յոյժ յոյժ․ այլ թէ ընդէ՞ր այսչափ հաճութիւն Նորա, ծանուցաւ այն յելից իրացն։

« Եւ իբրեւ ընկալայ պատասխանի պայմանաւոր հարցմանս ի Վենէտ, եւ այնպիսի պատասխանի, . . . լռեցի ես այնուհետեւ եւ չխօսեցայ ինչ բնաւ զարձակմանէ մանկանց դըպրոցիս, խրատեալ իմ ըստ բաւականին, մինչեւ բացաւ պատբուարկ հարկին, ցաւալից տեսարանն, յանդգնութիւն մանկանց դպրոցիս, եւ յայտնեցաւ ինձ այս ի Հ. Ստեփանէ կամայ եւ ակամայ, հանդերձ սնոտի պատճառանօք, որպէս թէ զզուեալ մանկանց յանպիտան կերակրոյ, եւ յոյժ տանջեալ ի սովոյ՝ ցայն վայր յանդգնութեան եւ լրբութեան հասեալ իցեն։

« Ասացի ցնա, թէ « Սնոտի են պատճառանքն, գիտելով « իմ թէ ո՛րպիսի եւ ո՛րչափ կերակուր մատակարարի Նոցա,

« և եթէ պակասեալ յայն ես երբեմն, սակայն չէր պարտ
« Նոցա յայս աստիճան յանդգնութեան հասանել... այլ
« գիտեմ ասացի գրուն պատճառս անշահութեան Նոցա, զոր
« և ազդեցի քեզ բազում անգամ, այլ ոչ փոյթ եղեւ քեզ
« ընդ այն: Հարցի քեզ երբեմն երբեմն, թէ զիա՞րդ ընթա-
« նան Նոքա. Բարւոք, ասէիր միշտ. զիա՞րդ այսպէս յան-
« կարծակի յուսացան. ոչ կամեցար անգամ մի և եթ խորհել
« և խօսել ընդ իս մինչեւ ցարդ զհանգամանաց Նոցա, մանա-
« ւանդ թէ թագուցանէիր յինէն զայն... Թէպէտ իմանայի
« ես զայն, լսէի ականջօք զանքաղաքավար խօսակցութիւն
« Նոցա ընդ միմեանս, և տեսանէի աչօք զանօպայ վարս Նո-
« ցա յամենայնի... և իբրեւ խորհեցայ ես դարման տանել
« վնասուց, զվնասակարագոյնն և զանպիտանն ի բաց ար-
« ձակել պատեհութեամբ իմն և գեղեցիկ պատրուակաւ, պա-
« հելով միանգամայն զպատիւ մեր և զվարկ վարժարանիս,
« այլ դու ոչ հաճեցար ընդ այն, և խափան եւս եղեր այնմ
« արդեօք (ձեռամբ Հ. Գաբրիէլի ի վանս): Զմնայ ինձ արդ
« ընդ այս ինչ առնել, ասացի, այնպիսի գտանելով իմ պա-
« տասխանի ի վանացս, բայց եթէ իբրեւ առանձին ոք զկար-
« ծիս իմ քեզ ասել, այս է, գրեսջիր առ Վեհն մեր,
« ծանուցանելով Նմա զհանգամանս վարժարանիս, որպէս և
« գիտես, և խնդրելով ի Նմանէ որոշումն և հրաման ընդ
« այն: »

« Հաւանեցաւ Նա բանիս և գրեաց առ Ձեզ զոր ինչ գր-
րեաց, առանց ասելոյ ինձ ինչ. բայց որպէս վերագոյն յի-
շատակեցի, զի մինչեւ առեալ ի Ձէնջ պատասխանի գրու-
թեան իւրոյ՝ ի բաց արձակեաց ի վարժարանէս եօթն յաշա-
կերտաց Նորին, ընդ որ ես ոչինչ ասացի, որպէս և ընդ ար-
ձակումն Երամեան մանկան, չասացի ես ինչ բնաւ, և ընդ որ
և ոչ խորհուրդ յինէն եհարց, և ոչ էած առ իս զմանուկն
տալ ողջոյն հրաժարական ըստ աշխարհի քաղաքավարու-
թեան:...

« Ահա Վեհիդ ընդարձակ մեկնութիւն հատուցանեմ բանից
ազդարարութեանս, որ ի նախընթաց թուղթն իմ առ Ձեզ,

և յորոց կարծեմ թէ չէր պարտ Վեհիդ, բաց յայսցանէ, այլ ինչ գուշակել (*). ապա թէ ոչ՝ պարտ էր, գոնէ անգամ մի զիմաստս նոցին յինէն հարցանել :...

« Հարցանեմ ես դարձեալ և զյարգոյ ժողովդ խնամակալաց, թէ ընդէ՞ր զառաջինն ոչ հաւանեցաւ պայմանաւոր առաջարկութեանս, հանդերձ խիստ դատաստանօք, ապա հուսկ ուրեմն հաւանեցաւ այնմ հանդերձ հզօրագոյն պատճառաւ առաջարկութեանս, և անհրաժեշտ հարկիւ ցուցեալ իմ ի ցըրուել զմանկունս . . . այն է, անկարգութիւն վարժարանին, և անուղղութիւն և անհաստատութիւն մանկտւոյն, մինչեւ երկնչիլ մեզ զի յարեսցին ի խռժանն ապստամբ . . . առանց վերստին իմ զայն առաջարկելոյ, և զվերոյիշեալ հզօրագոյն պատճառսն և զանհրաժեշտ հարկն ի թղթի իմում բնաւ յիշատակելոյ : . . .

« Ապա յայտ իսկ է ի բանից սոյն թղթոյ Վեհիդ, և ինչնաց այլուստ, թէ ոչ առաջարկութեանս իմոյ, այլ առաջարկութեան այլոյ, Հ. Ստեփանի, հաւանեցաւ յարգոյ ժողովդ և բանից գրութեան նորին միայն հաւատացեալ՝ հրաման ետ թեթեւացուցանել զպատիժս, ի բաց արձակել զմնասակարագոյնսն և զանպիտանսն ի մանկանց անտի. թողի՛ց ասել զկարկատուն պատճառէն :

« — Ցերկարել պատերազմայն սոսա և խռովութեանց քա-
« ղաքիդ այդր, միւսանգամ առաջի արարի, ասէք, խնա-
« մակալաց ժողովոյս զառաջարկութիւն Վերապատուու-
« թեանդ ցրելոյ զմանկտնի վարժարանիս : » Ո՛չ ապաքէն

(*) Ո՞չ ապաքէն զանպատեհ գնացից Հ. Ստեփանի, այս է, զանհաստատութենէ մտաց և զինչպիսութենէ կամաց նորին (որ նախ ընդ ոչ արձակումն և ապա ընդ ինքնակամ արձակումն անպիտան մանկանց վարժարանին) էին յայտնապէս բանք թղթոյ Հ. Սարգսի. ընդէ՞ր հատուածիր զայն տաէ, և իբրև չիմանալոյն առնէ Գեր. Հիւրմիւզ. վասն զի զասակից և փաստաբան Հայր Ստեփանի, Հ. Գաբրիէլ պաշտպանէր զնա միշտ առաջի Գերապայծառ Հիւրմիզի... և վասն զի չկամէր բնաւ իրաւունս տալ բողոքական բանից Հ. Սարգսի, որ զանուղիղ մատակարարութենէ Մ. վարժարանին, և հաստատութիւն այսմ, անհա յամառութիւն նորա ինոյն միտս, յետ բացատրելոյ Հ. Սարգսի զհատուածիր կարծեցեալ բանս թղթոյ իւրոյ :

(Ծանօթութիւն Հեղինակին.)

տուեալ յոյս զոյ այժմ կարծելոյ պատերազմացն այդր և խռովութեանց այսր, քան յայնժամ, ի սկիզբն մարտի . . . ապա պա՛րտ իցէ ինձ, Գեր. Տէր, ի բանից առաջին թղթոյ Ձերոյ ա՛յլ ինչ գուշակել քան զգուշակեալն իմ յայնժամ, և զյայտնի տեսեալսն իմ անդ, զարհամարհութիւն ազգարարութեան իմոյ և կարծեացս : . . .

« Եթէ այսպիսի՛ եղեն և են միշտ տեսութիւն Վեհիդ և հաճութիւն խնամակալաց ժողովոյն, ապա յո՞րպիսի իմաստութիւն իմ և ի խոհեմութիւն առնէք ապագային զընտրութիւն արձակելոյ մանկանց դպրոցիս : Ո՛չ ապաքէն պարտ էր առնել և զայն ես ի նորին միայն, որոյ առաջարկութեանն հաւանեցայք, և որոյ գրութեան միայն հաւատացիք, արհամարհելով միշտ զկարեւոր ազդարարութիւնս իմ, և ստգտանելով զօգտակար առաջարկութիւնս : . . . Եթէ ըստ բաղդին իմոյ չունիմ ես զօք այդր փաստաբան ի պաշտպանել զիրաւունս իմ, ունիմ ես արիութիւն ըստ կարի իմում տանիլ անիրաւութեան :

« Յո՛ւշ լիցի դարձեալ մխիթարար ասացեալն ուրումն, զոր վերագոյն յառաջ բերի . . . այլ և առածն այն, որ յոյժ ի դէպ է մեզ արդ .

> *« Երկու նաւապետք ի միում նաւի,*
> *« Վըտանգեն ըզնաւն ի ճանապարհի : »*

« Եւ արդ՝ առ ի փախճան տալ անախորժ և ընդունայն ցարդ գրութեանս, աղաչեմ զԳեր. Տէրդ և զյարգոյ ժողովն խնամակալաց, բառնալ յինէն և զսին անունն ուղչի վարժարանիս, և չառաքել առ իս այսուհետեւ զփոխանակագիրսն արծաթոյ որ ի ծախս վարժարանիս, և յոր միայն կացեալ է պաշտօնն իմ աստ . . . քանզի որպէս երբեմն ասացի, դնոյն և այժմ երկրորդեմ, հանդերձ նորոգ հաստատութեամբ, թէ « Ձի ոչ խիղճ մտացս, որչափ և ընդարձակ կարծիցի, և ոչ « պատիւ անձինս, որքան և նուաստ համարիցի, չներեն ինձ « բնաւ տանել զտխտղեսս զայս . և զի հեռացայց աստի առ

" ի չտեսանել զանուղղութիւն վարժարանիս, աղքատաց ազ-
" գիս պղով իրաւունքն, և միաբանութեանս հաւատացեալ
" այն իբրև աւանդ սրբազան: "

" Եւ յիրաւի՝ քանզի որո՞վ խղճիւ մտաց և ո՞ր երեսօք կարիցէ ոք տանել զանուն ուղղի աղքատաց դպրոցիս, որոյ մանկունքն նախ վարկպարազի և աչառանօք ընտրին... և ապա հետզհետէ իբրև խեռ և անպիտան ի բաց արձակին, հանդերձ անհնարին և վայրապար ծախիւք, որք ի վնաս աղքատաց ազգիս և ի նախատինս միաբանութեանս: Ահա ծախք վասն գնացեալ եօթն մանկանց՝ զամս երկու եղեն իբրև 30,000 ֆրանք. նոյնչափ եւս լիցին և վասն միւս եօթն գնացելոյն, որովք լինին 60,000 ֆրանք, և որք որպէս թէ ի ծով ամային, հանդերձ չարախօսութեամբ և նախատանօք, մանաւանդ յորժամ քննեցին մանկունքն և տեսցին թէ չգիտեն նոքա և երկու բառ ուղիղ Գաղղիարէն խօսել, թէպէտ և զամս երկու ի Գաղղիա և այն ի Փարիզ կացին:

" Այլ թէ զի՞նչ և այսմ պատճառ, յայտնի է ամենեցուն, եզական վարչութիւն մեր... և ահա ընդ այս չարաչար մատակարարութիւնն էին երբեմն զանգատելս և խղճելս իմ, հարեւանցի իմն ակնարկեալ ի թուղթս որ ընդ հաշուի տուելոյ Ձեզ զծախուց դպրոցիս, թէպէտ և Վեհդ մասնաւորաբար առեալ զբանս, գործակալին տալով զայն:... Եւ տանիցի այսոցիկ խիղճ մտաց և ամօթ երեսաց վարչի վարժարանիս...

" Ապաքէն հեռանայի ես աստի և մեկուսանայի ուրեք առ ի չտեսանել զանուղղութիւնս և ի չլսել անգամ զանուն դըպրոցիս, զո՛ր ջանք և անօգուտ վաստակ զերեսնամեայ տառապանօք աշխատութիւնս կարգալով... եթէ չակնածէի ի խիստ քննութենէ օտարաց և ի չարախօսութենէ հակառակորդացս, (զոնէ ես այսպէս կարծեմ եթէ դուք ոչ կարծէք այսպէս,) յօժարութեամբ հեռանայի աստի:

" Ահա աստի Վեհիդ և յարգոյ ժողովոյ զամենայն և վճարեցի զբովանդակն միանգամայն, զհանգամանաց վարժարանիս հասարակաբար և զվիճակէ իմմէ մասնաւորաբար. խորհեսջիք և արասջիք որպէս արժան և հաճոյ համարեսջիք, չհա-

մարելով զխս այսուհետեւ և ոչ սին անուամբ ուղղիչ վարժարանիս և ոչ յիմիք պիտանացու ի գործս Նորին։ . . . Եւ ահա այսու ճանաչմամբ մնաց և յայտարարութեամբ կամաց ողջունել զհամօրէն Վ. Հարս և Եղբարս ուխտիս,

« *Մնամ միշտ*

« *Գեր. Տէրութեանդ*

« Ի փարիզ. 18 *յունիս*. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ Թղթոյ Հ. Սարգսի, յորում ցուցանէ զանհնարին տրտմութիւն իւր ընդ ցաւալից տեղեկութիւնն որ զՄ. վարժարանէն, և խոստովանի զօգուտն և զվնասն որ անտի, թէ ազգիս և թէ միաբանութեան, և խոստանայ դարման տանել այնմ, հանդերձ յանձնարարութեամբ, օրինակ զայս.

« *Ցարգոյապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջոյնիւ խնդալ.*

« *Ընկալեալ զԹուղթ Վերապատուութեանդ գրեալն յ18 ամսոյս՝ իրաւունս տամ զարմանացդ վասն չառնելոյս ինչ յիշատակութիւն գրեցելոյն ի Ձէնջ յ30 ապրիլի ի պատասխանի հարցմանցն իմոց զամբաստանութեանց եպիսկոպոսի տեղւոյդ, բայց մարդկօրէն մոռացութեանս իմոյ տացէ զայն Վերապատուութիւնդ, և բազմահոգ զբաղանաց ժամանակիս։* . . . .

. . . .

. . . .

« *Իսկ ընդ ցաւալից տեղեկութիւնս որ զվարժարանէդ թէպէտ և կարեւէր հարեալ եմ, բայց բարւոք արար Վերապատուութիւնդ մեկն և յայտնի գրեալ զամենայն. իսէ*

թէ կանուխ ևս արարեալ էր զայդ, զի կանխագոյն և դարմանն ըստ ազդեցութեանդ լինէր։ Եւ արդ ակն ունիմ զի զայլ ևս՝ զթուեցեալսն Ձեզ դարմանս ի բարեկարգութիւն վարժարանիդ գրեսջիք յայտնապէս, զի ըստ այնմ ի դալ հասանել յամենայնի պատասխանւոյ ժողովական թղթոյն գրեցելոյ ի 4 ամսոյս՝ մարթասցուք խորհել ինչ զկարեւորագոյն իրացդ յոր հաստատեալ է ոչ միայն օգուտ ազգիս և համբաւ կրօնիս, այլ և անկումն և կամ կանգնումն Միաբանութեանս, մանաւանդ ի բազմավտանգ ժամանակիս՝ յորում մոլեգնեալ իմն թուի Հասուն ի Պօլիս, և սպառնայ և նիւթէ զամենայն չարիս ածել ի գլուխս մեր։

« Վասն փոխանակագրոյ յղելեաց գրեցի առ Վ. Հ. Յովհաննէս, զի ի 5 յառաջիկայ ամսոյս հասանէ պայմանեալ ժամանակ երկրորդի վեցամսականի Ռափ. վարժարանիս, և գրեսցի առ Հիթ առնուլ զայն և անցուցանել այդր առ Ձեզ.

. . . .

. . . .

« Սիրալիր ողջունիւ վանականացս ամենեցուն՝ մաղթեմ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Ի Վենետիկ. 30 յունիսի. 1848.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Առաքէ Գէր. Հիւրմիւզ փոխանակագիր մի ի Փարիզ յանուն Հ. Սարգսի, հանդերձ Նամակաւ ազգարարութեան, որում առնէ նա զարժանի պատասխանին, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Որչափ և ջանացայ ես ցարդ հատանել զառիթս ընդունայն հոգոց որ զկրաց վարժարանիս, յայտ առնելով Վեհիդ

զանգործութիւնն իմ յայն, և հրաժեշտ տալով յանուանէ ուղղչի անտի անգամ, այնչափ տեսանեմ ես յաւելեալ ինձ զուր ցաւք սրտի ընդ այն, մնալով Ձեր միշտ ի նոյն տեսութիւն մնաց, և վարակեալ նովին զանազան ոգւովք կամաց, որովք և անուղղութիւն յիրաւունս աղքատաց։ Ո՞չ ապաքէն ծանուցի ես Վեհիդ զհանգամանս մնացս ի նախընթաց թղթի իմում որ ի 18 յունիսի, և աղաչեցի զՁեզ և զժողովդ չհամարել զիս այսուհետև պիտանի յիմիք, յիրս վարժարանիս, ցուցանելով անդ յերկար և հաւաստի բանիւք զիրաւացի պատճառն։ . . . Արդ ընդէր բնաւ յանուն իմ դարձեալ առաքեցէք զփոխանակագիրն հազար ֆրանքի, և ինձ ազդ առնէք ըստ հրաման Ձեր որ առ Պարոն Հիթ, անցուցանել նորա այժմ 200 լիրէ ստերլին։

«Եթէ ի կրումն իցէ այս բազում անգամ աղաչանացս, ի հատուցումն ասեմ պարտուց դպրոցիս, ապա ընդէր 200 լիրէ ստերլին միայն կամիք ի դրամոյ անտի անցուցանել այժմ, և ոչ զբովանդակն և միանգամայն։ Եւ եթէ ի կարեւոր պէտս վարժարանիս իցէ միայն արծաթն այն, կարծէք թէ հատուցեալ իցեն բովանդակ պարտիք դպրոցիս, և կամ համարիք թէ չստիպեն և չտագնապեն անդադար պարտատեարք զգործակալն մեր աստ, յետ երկու և առաւել ամաց համբերութեան, և թէ չծանուցա՞ւ Ձեզ զայսմանէ բազում անգամ։

«Կարծեմ ես, ըստ ակնարկութեան ուրումն այտի ի թղթի խւրում առ Հ. Ստեփաննոս, զի չկամիք դուք ունել մեր աստ ի ձեռին արծաթ առաւել քան զկարեւոր պէտս դպրոցիս, կասկածելով զի մի՛ արդեօք այնու ի բաց արձակեսցուք աստի ըստ քմաց մերոց զմանկունս վարժարանիս։ . . .

«Բայց գիտասջիք, որպէս և յառաջագոյն ծանուցի, զի արձակեալքն աստի մանկունք, ոչ ըստ կամաց մերոց արձակեցան նոքա աստի, զի կամէաք մեք մնալ հրամանի Ձերոյ, այլ ըստ առանձին կամաց և ըստ փութոյ ուսուցչապետին և դաստիարակի նոցա, Հ. Ստեփանի միայն։ . . .

«Թողի՛ց ասել, զի եթէ կամք իցեն մեզ և զայլ մնացեալ ստահակ և զանպիտան մանկունս վարժարանիս ի բաց արձա-

կել, կարեմք մեք զայն առնել, պայմանաւ հատուցանել ըղծախս ճանապարհի նոցա ի Պօլիս. սակայն որպէս ոչ կամեցաք և ոչ կամիմք առանց հրամանի ձերոյ առնել զայն, ապա ի զո՛ւր է ընդ այս կասկածելդ, առ սակաւ սակաւ զարծաթն զայն ասա անցուցանելով:

« Զայսոսիկ ոչ էին ինձ կամք գրել, վճարելով իմ արդէն զամենայն, և յառաջադրելով դադարել խօսու յայսպիսի գրութենէ, եթէ չէր Ձեր ընդ այս առ իս ինչ գրեալ, և զիս յոչկամացս ի ճշմարտութիւն բանից ստիպեալ:... Եւ արդ՝ վերստին աղաչեմ զՁեզ հանդերձ թախանձանօք չստիպել զիս դարձեալ յայս ազգ գրութիւն, չգոլով ոչ Ձեզ և ոչ ինձ ի մխիթարութիւն, այլ մանաւանդ թէ ի նորոգութիւն հնացեալ ցաւոց:

« Ողջունեալ զհամօրէն Վ. Հարս և Եղբարս,

« Մնամ միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի փարիզ. 16 յուլիս. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Տեսեալ ուսուցչապետին Հ. Ստեփանի Եզրճեան, թէ արհամարհի յաշակերտաց իւրոց, կշռեալ նոցա զգիտութիւն իւր ի պաշտօնն յայն, հազիւ ուրեմն երեւի նոցա, առանձնանայ ի սենեկի իւրում, իբրեւ նեղեալ ի յօդացաւութենէ, թողլով զպարտս պաշտաման իւրոյ ի վերայ Հ. Տիմոթէոսի Թընկըրեան, և նորա անփորձ և անհամբեր գոլով խուովի անդադար և զայրանայ յոյժ ընդ ստահակութիւն աշակերտացն, և ի վախճանի յուսահատեալ յուղղութենէ նոցին՝ հրաժարի ի պաշտօնէ անտի, և գրէ առ Գեր. Հիւրմիւզ, խնդրելով հրաման դառնալոյ ի վանս:

Իբրեւ մնայ ուսուցչապետն և դաստիարակն, Հ. Ստեփան առանց օգնականի, խորհի սրբել զվարժարանն, արձակէ զստահակսն և զանպիտանսն յաշակերտաց անտի. և իբրեւ

չկարէ այնու եւս դարման տանել անկարգութեան աշակերտացն, յուսահատեալ հրաժարի և ինքն ի պաշտօնէ իւրմէ, և գրէ նոյնպէս առ Գեր. Հիւրմիւզ, խնդրելով հրաման դառնալոյ ի վանս : ...

Ահա արդիւնք ինքնահաճութեան, որ պահանջէր նախ ըդկարծեցեալ իրաւունս իւր ի պաշտօնն յայն, առանց ճանաչելոյ զպարտս իւր յայն, (Տես ի ԺԱ. գլուխն.) և ապերախտութեան, որ չկամէր ընդ տեսչութիւն Հ. Սարգսի: (Տե՛ս ի ԺՋ. գլուխն.)

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թուղթ Նախագահին խնամակալաց ժողովոյն առ Հ. Սարգիս և առ ընկերս նորա վասն նորոգ կարգադրութեան Մ. վարժարանին. — Հ. Սարգիս կարգի յառաջին պաշտամանն իւրում, հանդերձ ընդհանուր տեսչութեամբ. — Հ. Գաբրիէլ Այվազեան կարգի ուսուցչապետ, և օգնական նմա Հ. Ամբրոսիոս Գալֆայեան. — Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հօր Սարգսի. — Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի. — Ժամանել Հ. Գաբրիէլի ի Փարիզ հանդերձ Հ. Ամբրոսիոսիւ. — Գնացք Հ. Գաբրիէլի որ ընդ Հ. Սարգսի. — Ծանաչումն և վարկ Հ. Սարգսի որ զՀ. Գաբրիէլէ. — Յաղագս Հ. Գաբրիէլի ի մասնաւորի, և վասն հրատարակութեան ամբաստանական թղթոց նորա զՀ. Սարգսէ. — Պատճէնք նամակացն այնոցիկ. — Վրիպիլ Հ. Սոփիանի յակնկալութենէ իւրմէ, և գժտիլ ընդ Հ. Գաբրիէլի և դառնալ ի Վենետիկ. — Մեղմելի գնացք Հ. Յովհաննու որ ընդ Հ. Սարգսի և ընդ Հ. Գաբրիէլի. — Անօգուտ կարգադրութիւն ժողովոյն.

Իմացեալ Գեր. Հիւրմիւզի զամենայն անպատեհութիւն որ ի Մ. վարժարանին ի Փարիզ, և ընկալեալ զվերոյիշեալ անաչառ և համարձակ գրութիւն Հ. Սարգսի՝ տագնապի յոյժ, և ջանայ դարման տանել այնմ ըստ կարի, և ըստ սովորական իւրում վարչութեան:... Կարգէ նա զՀ. Գաբրիէլ ուսուցչապետ Մ. վարժարանին, միանգամայն և դաստիարակ: Յանձն առնու նա զայն հանդերձ պայմանաւ, եթէ տացի նմա օգնական Հ. Ամբրոսիոս, թէպէտ և կրտսերագոյն յաշակերտս նորա, թէպէտ և յաւելումն նախանձու երիցագոյն աշակերտաց նորին, և պատճառ ցրտանալոյ ի սիրոյ նոցին, սակայն չլինի նմա փոյթ. զի սիրէ նա զնա առաւել քան զամենեսին: Սովորական տկարութիւն վերակացուաց, թէպէտ և անտի ոչինչ մխիթարութիւն նոցա, և ոչ օգուտ միաբանութեան, որպէս միշտ տեսաւ:...

Առաքեալ այսպէս Գեր. Հիւրմիւզի զՀ. Գաբրիէլ ի Փարիզ ի Մ. վարժարանն, համարի թէ շատասցի Հ. Սարգիս այնու, և դադարեսցի ի գանգատելոյ զանուղղութենէ մատակարարութեան Մ. վարժարանին, և յանձն առնուցու վերստին զտեսչութիւն նորին, սակայն սխալի նա ի կարծիս իւր, որպէս և տեսցի ի սմին կարգաւ։

Ահաւասիկ թուղթ Նախագահի խնամակալաց ժողովոյն առ Հ. Սարգիս և առ ընկերս նորա ի Փարիզ վասն կարգաւորութեան Մ. վարժարանին, որ ունի օրինակ զայս.

« Մեծարգոյ Հարց և Եղբարց պաշտօնատեարց Մուրատեան վարժարանին ողջոյն և սէր բազմասցի·

« Ըստ խնդրոյ և ըստ առաջարկութեանն զոր արար ժողովս խնամակալաց թղթովն որ յ12 յունիսի, ընկալեալ զմիոյ միոյ ի ձէնջ զպատասխանի և ի քնին առեալ զամենայն գրեալսն, հարկ համարեցաւ առնել զյետագայ կարգաւորութիւնս՝ յառաւելագոյն օգուտ վարժարանիդ։

« Եւ նախ զՎ. Հ. Սարգիս վարդապետ հաստատեալ յառաջին պաշտամանն իւրում յանձն առնէ ի նա զընդհանուր տեսչութիւն վարժարանիդ։ Իսկ Վ. Հ. Յովհաննէս մտադիր լիցի պաշտաման խոստովանահայրութեան, և ազատեցեալ ի տնտեսական հոգոց դպրոցիդ, վանականացն մտադիր լիցի գործոց և յանձնարարութեանց Տատեանին։

« Եւ զի Վ. Հ. Ստեփաննոս հրաժարէ ի պաշտամանէ ուսուցչապետութեան և այլում ուսուցչապետի կարօտի դպրոցդ՝ յանձն առնու ահա Միաբանութիւնս առնել զոհ մեծ յղելով յայդ գործ զկարեւորն ինքեան զՎ. Հ. Գաբրիէլ, օգնութեամբ այլում ևս ի կրտսերագունիցն քահանայից Պ. Հօր Ամբրոսիոսի, և ընդ երկուսն զոր յղէ դարձուցանէ այսրէն միայն զՎ. Հ. Ստեփաննոս։ Եւ դարձեալ քանզի ոչ սակաւ և Պ. Հ. Տիմոթեայ աշխատութիւնն նուաղէ օգնականութեամբ աստի եկելոյն, որոյ վասն պատշաճ և կարեւոր վարկաւ ժողովս զկալ նորա յիւրում պաշտամանն։

« Ի վերջոյ փափաքելի էր ժողովոյս ըստ Նախնի գրելոյն քննել այդր պարապով զկանոնս վարժարանիդ յղեալս աստի, և զտեսութիւն ձեր ըստ բազմամեայ փորձոյ յաւելեալ ի նոյն, յղել այսրէն զի հաստատեալ սահմանեսցին ի մշտընջենաւոր բարեկարգութիւն վարժարանիդ ։

« Ողջունիւ Հարցդ և Պատուական Եղբարց ձեզ

« Ջերում Վերապատութեան

« Վենետիկ. 22 յուլիսի. 1848.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և Նախագահ. »

« Քարտուղար ժողովոյ

« Հ. ՀԱՄ. ԹԷՐՃԻՄԱՆ. »

Պատասխանի Նախագահի խնամակալաց ժողովոյն տուեալ Թղթոյ Հ. Սարգսի, օրինակ զայս.

« Գերյարգոյ և Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Սարգսի վարդապետի խնդալ.

« Ի Թղթոյ Վերապատուութեանդ գրեցելոյ ի 18 յունիսի խելամուտ լեալ ժողովոյն որպէս պարտն է հանգամանաց վարժարանիդ, փութացաւ աշա մատուցանել ըստ իւրում կարի զդեղ դարմանոյն ըստ այժմեան հանգամանաց և կարօտութեանց միաբանութեանս, որով ոչինչ երկմտիմք զի և Վերապատուութիւնդ վստահ գոլով ի փոյթ և ի խնամս ժողովոյս յօգուտ և ի զարգացումն և ի փառս վարժարանիդ, ոչինչ երկբայեսցի զի զոր կարէր Միաբանութիւնս արար զամենայն ։ Եւ յանձն առնուցու զարձեալ Վերապատուութիւնդ ի մասնաւորի զտեսչութիւն մատակարարութեան վարժարանիդ,

յորս ի գրութիւնս և ի հաշիւս մարթ իցէ Ձեզ ունել զմտադիւր ձեռնտուութիւն եկուորիդ Վ. Հ. Գաբրիէլի:

« Մեծայոյս է ժողովս, զի փոփոխութեամբքս այսոքիւք ուղղեսցին իրք վարժարանիդ յանդորրութիւն սրտի Ձերոյ և մեր և յօգուտ տառապելոյ ազգիս, որ միակ վախճանն է մեծի Բարերարին:

« Ողջ լինել մաղթեմք Ձեզ ի Տեառնէ, և մնամք

« Ձերումդ Վերապատուութեան

« Վենետիկ. 24 յուլիս. 1848.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և Նախագահ. »

« Քարտուղար ժողովոյն

« Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ԹԷՐՃԻՄԱՆ. »

Առնէ Հ. Սարգիս պատասխանի վերոյիշեալ թղթոյ համդերձ քննութեամբ զպաշտօնէ և զարժանեաց ուսուցչապետին, և զկանոնաց վարժարանին, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Զշնորհալից գրեալն, որ ի Գեր. Նախագահէդ խնամակալայ ժողովոյն, և ի Պատուական Քարտուղարէ նորին, ընկալայ ըստ ժամանակին, և մխիթարեցայ ընդ այն ըստ բաւականին. . . Շնորհ յոյժ ունիմ քննութեան և կարգաւորութեանն որ ի Ձէնջ վասն վարժարանիս, և հաստատութեանդ որ ընդ այն միշտ, և որով ազատ առնէք զիս բոլորովին յընդունայն հոգոց աստի, և ի տանջանաց խղճի մտացս. . . ապա չմնայ ինձ ընդ այս գրութիւն Ձեր այլ ինչ պատասխանել, բայց եթէ զբանս գրութեանց մերոց քննել և տեսանել, թէ համաձայն իցեն այնք միմեանց. այս է, թէ ըստ բանից ազ-

դարարութեան իմոյ և ըստ տեսութեան մտացս, խելամուտ
լեա՛լ իցէ Ձեր որպէս պարտն է հանդամանաց վարժարանիս,
փութացայք մատուցանել ըստ կարի Ձերում զդեղ դարմանոյն…
և թէ կարօտիցի՞ դպրոցս ուսուցչապետի ուրուք ի ձէնջ այ-
տի, մինչև յանձն առնուլ միաբանութեանս առնել զոհ մեծ, յղել
յայս գործ զկարեւորն ինքեան զՎ. Հ. Գաբրիէլ Այվազեան ։…

« Արդ՝ ըստ տեսութեանս իմում և ըստ բազմամեայ փոր-
ձոյս, ազդ արարի ես գրովս որ ի 18 յունիսի անցելոյ, թէ
պարտ է միաբանութեանս ժողովել նախ աստի և անտի յա-
մենայն կողմանց Ասիոյ ընտրանօք որբ և աղքատ մանկունս
յազգէս ի Պօլիս, և անդ զամս երեք դաստիարակել և մարզել
զնոսին ի սկզբունս կարեւոր գիտութեանց, և ապա ի նոցանէ
ամենայն կարեւոր ընտրութեամբ, իբրև զմին ի հարիւրէն
ընտրեալ, զուշիմագոյնն, զբարեվարսն, զքաջառողջն, և ըղ-
ճշմարիտ տնանկն, զվկայեալն ի բազմաց ի վերայ պատուոյ
իւրեանց և խղճի մտացն, առանց ինչ աչառութեան և շահա-
սիրութեան մերոյն, առաքել անտի այսր ի վարժարանս, ուր
զամս հինգ դաստիարակեալ և մարզեալ յԵւրոպացի քաջ
վարժապետաց յընտիր քաղաքավարութիւն, ի բարձրագոյն
գիտութիւնս և ի կենցաղօգուտ արուեստս՝ դարձցին ի հայ-
րենիս իւրեանց ։

« Երկրորդ՝ թէ՝ պարտ է Միաբանութեանս զայնպիսի անձն
կարգել ուղղիչ վարժարանիս, յորոյ ճանաչումն, ի փորձն և
ի գնացսն վստահ իցէ ինքն, և թողուլ ընտրութեան և հաճու-
թեան կամաց նորին զայլ պաշտօնեայս վարժարանիս, տալով
զնոսին ընկեր նմին, և ոչ ուրոյն ուրոյն սեփական իշխանու-
թեամբ և անկախ ի նմանէ, որպէս կարգեցան ցարդ և տե-
սան արդիւնքն որ ի կարգաւորութենէ անտի, և ի կարծե-
ցեալ յիրաւանց նոցին ։

« Ահա այսոքիկ են բանք ազդարարութեան իմոյ, ըստ տե-
սութեան մտացս և ըստ բազմամեայ փորձոյս, զոր ետու Ձեզ
գրովս երբեմն, հանդերձ առարկութեամբ և լուծմամբ անդ,
զոր առ երկարութեան աւելորդ համարիմ երկրորդել աստ ։

« Եւ արդ՝ հարցանիմ ես խոնարհութեամբ թէ համաձայն

իցեն բանիցս այսոցիկ բանք գրութեան Ձերոյ որ առ իս ի 24 յուլիսի անցելոյ... ապաքէն ոչ բնաւ, որպէս յայտ է ի կարգաւորութենէ անտի որ ի Ձէնջ զվարժարանէս, հաստատեալ Ձեր միշտ ի նոյն տեսութիւն մտաց ձերոց, և արհամարհեալ զխմս լաւութեամբդ խայտառ։...

« Ապա առ ի՞նչ իցեն, պարապով քննել իմ այսր զկանոնս վարժարանին, յղեալս այտի, և զտեսութիւնս իմ ըստ բազմամեայ փորձոյ յաւելուլ ի նոյն յղել այդրէն զի հաստատեալ սահմանեսցին ի մշտնջենաւոր բարեկարգութիւն վարժարանիս։... Քանզի չունիմ ես այլ տեսութիւն մտաց ըստ բազմամեայ փորձոյս, բայց ի վերոյիշատակելոցն, և զի չգիտեմ ես զայլ դեղ դարմանոյ հիւանդութեանց վարժարանիս, բաց ի դեղոյ անտի, և ոչ զայլ եղանակ հասանելոյ նպատակին, կատարելոյ զպարտս սրբազան պաշտաման մերոյ, յանդորրութիւն սրտի Ձերոյ, և յօգուտ տառապելոյ ազգիս, որ միակ վախճանն է մեծի Բարերարին։

« Յուշ լիցի Վեհիդ յիշատակեալն իմ Ձեզ աստ երբեմն, թէ « Գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ։ » Թէպէտ և արհամարհեցէք դուք յայնժամ զվկայութիւն իմ, իբր անդէպ ինչ ի խնդիրս, այլ յարդեանց իրացս՝ կարի ի դէպ ելանէ մեզ այժմիկ։

« Եկեսցուք արդ ի քննութիւն ուսուցչապետին վարժարանիս, և տեսցուք նախ՝ թէ զի՞նչ ինչ գիտութիւն ունի նա. ուսուցանել մանկանց վարժարանիս, զգեղեցկագրութիւն, զուղղագրութի՞ւնն, զզանազան լեզո՞ւսն, զուսումնականութի՞ւնն, զբնագիտութի՞ւնն, այլովք հանդերձ։ Ո՞չ ապաքէն զայս ամենայն գիտութիւնս Եւրոպացի վարժապետք ուսուցանեն մանկանցս, իւրաքանչիւր ուսման առանձին վարժապետ կալեալ ի վարձու։ Ապա զի՞նչ մնայ ուսուցչապետին մերոյ ուսուցանել մանկանց դպրոցիս։ Զհայերէն լեզուն միայն, և այն զհասարակն, և երանի՛ թէ զայնչափ ուսեալն են՝ չմոռանային նոքա, ելեալքն ի վարժարանէս. զի տեսի ես աստ զոմանս ի նոցանէ, որոց դէպ եղեւ հանդիպիլ, և ընդ որոց հարկ թղթել, գրեթէ բոլորովին մոռացեալ էին խօսել

և գրել զՀայերէն լեզուն ։ Ահա արդիւնք ուսուցչապետին մերոյ ի վարժարանս ։

« Եւ արդ հարցանեմ ես, թէ այսմ և եթ մասին և այսչափ միայն գիտութեան չիցէ՞ բաւական ո՛ և իցէ ի մէնջ, և տկարագոյնն անգամ ի հայկական բարբառս լինել նոցին վարժապետ ։ Ապա ընդէ՞ր բնաւ Միաբանութիւնս զոր մեծ արասցէ յղելով յայս գործ զկարեւորսն իւրեանց զՎ. Հ. Գաբրիէլ Այվազեան ։ . . .

« Հարցանեմ ես դարձեալ, թէ զի՞նչ իցեն արդիւնքն և կարծեցեալ իրաւունքն վարժապետիդ այդորիկ, զի զանուն ուսուցչապետի կրեսցէ և իշխանութիւն առանձինն ունիցի ի վերայ մանկանց վարժարանիս ։ . . . Արդիւնք կարեւոր ուսմանց Եւրոպացի վարժապետաց են, մանաւանդ թէ շնորհաց հանդուցեալ Բարբերարին, որպէս վերագոյն ցուցաւ, իսկ իւրն սակաւիկ ինչ և դիւրամոռաց, որպէս ի վեր յիշատակեցաւ ։

« Եթէ կարգաւորութիւնն ուսման մանկանց և յառաջադիմութիւն նոցին յայն, և ի բարեկիրթ վարս, դմա միայն յանձն իցէ, ապա զի՞նչ մնացէ Տեսչին, կայցէ՞ նմա և այլ գործ ի վարժարանիս ։ Ոչինչ ։ . . . Եւ եթէ չիցէ Տեսուչն այնպիսի անձն, յորոյ ճանաչումն, ի փորձն, և ի գնացս վստահ իցէ Միաբանութիւնս, ապա ընդէ՞ր վերստին հաստատեցի նա անդ, և ընդհանուր տեսչութեան անուն տացի նմա ։

« Տեսանէք զանհամաձայնութիւն գրութեանց մերոց ընդ միմեանս, և զզանազանութիւն տեսութեանցս յիրերաց . . . Ապա զի՞րդ ասէք, թէ ի թղթոյ իմոյ գրեցելոյ ի 18 յունիսի, խելամուտ լեալ իցէ Ձեզ որպէս պարտն է հանգամանաց վարժարանիս, փութացայք մատուցանել ըստ կարի Ձերում զդեղ դարմանոյն ։

« Աւելորդ համարիմ և ընդունայն իսկ գիտեմ առնել ի սմին քննութիւն զթերութենէ մասնաւորաց, պաշտօնէից վարժարանիս, խելամուտ գոլով թերութեան կանոնաց սորին, . . . յառաջ եկեալ այնց ի սկզբանց անտի, ի նոր ճանաչմանէ և ի զանազան ոգւոց անտի ։ . . .

« Զայսոսիկ այսպէս յանդիման կացուցեալ Գեր. Նախագա-

հիդ և յարգոյ ժողովոյն, ապա չմնայ ինձ ի սմին այլ ինչ ազդ առնել, բայց եթէ վերստին զՁեզ աղաչել, բառնալ յինէն և զայս անուն ընդհանուր Տեսչի, զի որպէս իմացայք ի բանից նախընթաց գրութեանս, և որպէս իմանայք ի բանից աստի, անմարթ և անհնարին է ինձ զայս անուն կրել, հայեցեալ ի զանազանութիւն տեսութեանց և կարծեաց մերոց ի գործս վարժարանիս ։ Վասն որոյ խնդրեմ զի այլազգ տնօրինեսջիք զկարգաւորութիւն իրաց սորին, և այլ հրահանգօք յղեսջիք այսր զառաքեալսն, եթէ կարեւոր և հարկ համարիք առաքել զդոսա այսր և առնել փոխոխութիւն ի պաշտօնեայս սորին. զի ես այսպէս կարծեմ և ի փորձոյ գիտեմ, թէ փոփոխութիւն պաշտօնէից չառնէ կամ յոյժ սակաւ առնէ փոփոխութիւն պաշտամանն. երանի թէ այնչափ միայն, և ոչ յոռեգոյն եւս, հայեցեալ ի սկզբունս մեր և ի դաստիարակութիւն վանացս... և երանի՛ թէ յառաջագոյն ծանուցեալ էիք զկամս ձեր մինչ-չեւ ծանուցեալ էիք զայն այլոց աստ. և կարծեմ թէ արժան այն էր, ծանուցանել ինձ զայն յառաջագոյն, զոր ոչ արժան համարեցայք առնել ։ Եւ ահա վասն այսորիկ անմարթ է ինձ յանձին կալնուլ զպաշտօնս զայս, ընդհանուր տեսչութեան ։ Տացէ՛ Տէր զի այս կարծիք իմ և կասկածս ընդունայն լիցին, զի յայսմ է մխիթարութիւն իմ ։

« Ի բանից աստի իմոց և ի գործոյս, յուսամ զի քաջ խելամուտ լիցին ամենեքեան, թէ չէին և չեն ինձ կամք հրամանատարութեան, ընդհանուր տեսչութեան վարժարանիս, այլ բարեկարգութեան և յառաջդիմութեան սորին, առանց ակնկալութեան համարելոյ զիս պիտանի ումեք ի գործս Հասարակութեանս ։

« Այսօր ի բաց արձակեցան ի վարժարանէս, և այլ վեց ստահակ և անպիտան մանկունք. իցի՛ւ թէ վերջին լիցին նոքա ի վնասակարսն աղքատաց ազգիս, և ի կարեւոր խրատ միաբանիցս ։ Մնամ Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 4 օգոստ. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

« Յ. Գ. Իմացեալ ի նամակէ Վենետիկ զխափանումն առաջին օրինակի Թղթոյս, կարեւոր համարեցայ գաղափարել զայս և առաքել այդր ընդ այլ ճանապարհ ։ Թէպէտ և ցաւիմ ես ընդ յապաղումն գրոյս, այլ միանգամայն և մխիթարիմ, չլինելով գրութեանս խափանարար ինչ պատճառ գալստեան այսր Վ. Հ. Գաբրիէլի, զի գուցէ այլազգ իմացեալ նորա զմիտս բանից գրութեանս, որ զուսուցչապետէն վարժարանիս, ակնածեալ կասէր ի գալոյ այսր ։

« Յուսամ զի ժամանեսցէ Թուղթս այս անխափան ի ձեռս Վենետիկ, և հանգուսցէ զիս պատասխանի սորին, հանդիպել իմ խնդրոյս, և ազատիլ ի հոգոց աստի դպրոցիս ։ Իսկ Եթէ ասիցէք, որպէս և ասաց Հ. Գաբրիէլ, թէ զի՞րդ լինիցի այս, զի ցորչափ աստ ի վարժարանիս կայցէ իմ՝ դժուարին է զայլ ոք ուղղիչ կարգել աստ ։

« Ասեմ ես առ այս, թէ ծանուցի Ձեզ նախընթաց գրովս զպատճառ մնալոյ իմ աստ, այս է, յաղագս ակնածութեանն որ ի հակառակորդացս, ըստ կարծեաց իմոց, և ընդ այս եւս ընդկարծիս ձեր խնդրեցի գիտել, թէպէտ և չընկալայ ցարդ ի Ձէնջ պատասխանի ։ . . . Արդ զնոյն վերստին խնդրեմ գիտել, այս է, եթէ չիցէք և Դուք ի սոյն յայս կարծիս ակնածութեան, յօժար և պատրաստ եմ ես ժամ մի յառաջ հեռանալ աստի ։

« Ասաց նա դարձեալ՝ թէ հաճութիւն կամաց և իշխանութիւն տուեալ իցէք նմա ի բաց արձակել ի վարժարանէս զըստահակսն և զանպիտանսն ի մանկանց աստի, թէպէտ և հընգիւ չափ միայն մնացէ ի քառասուն մանկանցն ։ Եւ ես ասեմ արդ՝ թէ ունիք իրաւունս ընդ այս որոշումն Ձեր, յաղագս բարեկարգութեան վարժարանիս. բայց հարցանեմ խոնարհութեամբ, թէ հաճութիւն կամաց և իշխանութեան տուեալ նմա այժմ, համաձայնիցի՞ն երբէք ընդ տհաճութիւն կամաց Միաբանութեանս, և ընդ խիստ յանդիմանութիւն Ձեր առ իս երբեմն ընդ պայմանաւոր հարցումն և կարծիս իմ ի բանս յայս, և այն ի դէպս հարկաւոր . . . և եթէ չունիցի՞մ ես իրաւունս հրաժարելոյ ի պաշտօնէ տեսչութեանս, վասն հակառակութեան բանից և գործոց այտի ։ . . . 15 սեպտ. 1848 . »

Յետ օգոստոսի 1848 ամի, ժամանէ Հ. Գաբրիէլ Վ. Այվազեան ի Փարիզ, հանդերձ Պ. Հ. Ամբրոսիոսիւ Գալֆայեան, իբրեւ ուսուցչապետ և դաստիարակ մանկանց Մուրատեան վարժարանին, հանդերձ աւանձին հրահանգօք, զոր հետղհետէ յայտ առնէ ։

Ընդունի զնա Հ. Սարգիս սիրով ըստ սովորութեան իւրում, թէպէտ ճանաչէր և ի փորձոյ գիտէր զհակառակութիւն նորա որ ընդ ինքն. սակայն ոչինչ համարի զայն հայելով ի պիտանութիւն նորա, վասն բարեաց հասարակաց, և համարելով զհակառակութիւն նորա յանճանաչողութենէ և ի կանխակալ սովորութենէ. վասն որոյ երկայնմտութեամբ համբերէ մինչեւ ճանաչել նորա զինքն ի փորձոյ, թէպէտ և ճանաչէ նա զինքն անտի այլ անագան և անդարման, յետ մեծապէս սխալելոյ և մեղանչելոյ նմա ի զուր ... թէպէտ և խոստովանի նա զսխալանս իւր և յետս կոչէ զայն բանիւք և գրով, սակայն ի ստորատանաց և ի դատաստանաց հասարակաց ոչ ազատի ։

Աստանօր վերծանողք պատմութեանս խնդրիցեն արդեօք գիտել՝ թէ առ ինչ ակնարկիցին բանքս . Սակայն ի ստորատանաց և ի դատաստանաց հասարակաց ոչ ազատի ։ ... Թէպէտ և յիշատակութիւնն զոր գամք առնել աստ՝ անախորժ է մեզ և յոչ կամաց, սակայն հաւանեալս գոլով չտերիւրել երբէք ի ճշմարտութենէն յընթացս պատմութեանս, և ոչ առ մի ոք երբէք ակնառութեամբ գնալով մեր ցարդ՝ առնեմք զյիշատակութիւնս աստ. այն զի յիշատակեալ այս արդէն այլուստ և հրատարակեալ տպագրութեամբ, այն է քանի մի նամականին Գաբրիէլ վարդապետի Այվազեան գրեալ երբեմն ի 1848 և 49 ամի առ Առաջնորդ իւր Գեր. Գէորգ Հիւրմիւզեան ի Վենետիկ, և հրատարակեալ այն ի Պարոն Միքայէլ Նալբանդեանէ յԵրկու տող անուանեալ տետրակի իւրում ի Փարիզ քաղաքի յԱրամեան տպարանի ի 1861 ամի ։ Խնդրիցեն դարձեալ վերծանողք պատմութեանս արդեօք, թէ ուստի՞ և զիա՞րդ ունէր Պ. Մ. Նալբանդեան զնամականիս այսորիկ. ահա տամք տեղեկութիւն ըստ բանից պատմութեան նորին իսկ Նալբանդեանի, որ ետ մեզ բերանով իւրով աստ

ի Փարիզ. և զայս ստնեմք այնչափ յօժարութեամբ, որ քանզի հարկ է ինձ յանձնէ ի բաց քերել զամենայն կասկածանս անգիտաց և չարակամից, թէ իմ իցէ մատուցեալ Պարոն Նալբանդեանի զօրինակս Նամականւոյն այնորիկ յորոց չունէի ես և ոչ վանկ մի առ իս ։ Ահաւասիկ որ ինչ լեալն է ։ . . .

Գնացեալ Պարոն Մ. Նալբանդեանի երբեմն ի Պօլիս՝ հանդիպի անդ Գեր. Եդուարդ Հիւրմիւզի, և առնու ի ձեռանէ նորին զպատճէնս Նամականւոյն այնորիկ, յետ խօսակցութեան և քննութեան զգնացից Հ. Սարգսի Թէոդորեան, և Հ. Գաբրիէլ Այվազեան ։ . . .

Թէպէտ և Հ. Սարգիս, որպէս վերագոյն ասացաք, ճանաչէր և ի փորձոյ գիտէր զհակառակութիւն Հ. Գաբրիէլի որ ընդ ինքն, սակայն ոչ կարծէր թէ և զայնպիսի Նամականի գրէր նա առ Առաջնորդ իւր ի Վենետիկ, մանաւանդ տեսանելով զհաճութիւն և զհաւանութիւն նորա ընդ անաչառ և երկար գրութիւն իւր առ Գեր. Գէորգ Հիւրմիւզ, զորս և ընթեռնոյր յականջս նորա . . . Թողումք ասել զգովեստից նորա որ ընդ այնս ։ . . .

Իսկ ընդ հետեւեալ բանս. Երանի՛ թէ չխաչէր նա վերստին և առաւել քան զառաջինն, տեսցեն վերծանողքն ի պատմութեան Հայկազեան վարժարանին ի չորրորդում մասին մատենիս, և գտցեն զարժանն ։ . . .

Ահաւասիկ Պատճէնք յիշատակեալ Նամականւոյն Հօր Գաբրիէլի Այվազեան առ Գեր. Հիւրմիւզ ։

Պատճէն առաջին նամակին.

« Աստուածապատիւ Հոգեւոր Տէր.

« Փարիզ. 18 Նոյեմբեր. 1848.

« . . . .

. . . .

; . . . . Վ. Հ. Ստեփանոս արդ հասեալ իսկ իցէ այդր, զի ըստ գրելոյ իւրոյ առ Հ. Յովհաննէս յ8 սորին ամսոյ մեկնելոց էր նա ի Լիվոռնոյէ ։ Ի նմանէ տեղեկա-

ցեալ իցէ Տէրդ և բազում ինչ իրաց Վարժարանիս և խնլամուտ լեալ, թէ ո՛րչափ վայրապար զանգիտեաց ժողովս մեր երկիցս անգամ ընդունելոյ զհրաժեշտ Թարմատար տեսչին, (Հ. Սարգսին Թէոդորեան,) և ո՛րպէս յանօգուտս, մանաւանդ թէ ի վնաս եւս իրաց Վարժարանիս, յանձն արար ի նա ընդ տեսչութեանն և զանուն մատակարարութեան դրամոց ։

« Եւ արդ եթէ զեղեալն չիցէ խոհեմութիւն փոփոխել, առանց կարեւոր ինչ պատճառաց, սակայն թուի ինձ թէ զարժանն պատասխանի առ գրեալն ի Նմանէ (զորս ընթերցաւ ինձ) պարտ է կշռել աներկիւղ և անպատրուակ բանիւք և անժխտելի փաստիւք ։ . . . .

. . . .

. . . .

« Ն. Տ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ. »

Պատճէն երկրորդ նամակին.

« Փարիզ. 17 դեկտեմ. 1848.

« . . . .

. . . .

. . . . Մի ինչ միայն Գեր. Տէր, որ փոքր մի տագնապէ զմիտս իմ, այն է, զի առ հարկի այժմու հանգամանաց Վարժարանիս ինձ անկ է ուղղակի պատասխանատու լինել առաջի միաբանութեանս ոչ միայն զդաստիարակութենէ և զհրահանգաց մանկտւոյն, այլ գրեթէ և զընթացից վարժարանիս առ հասարակ. ուր եթէ կայր ոք տեսուչ արդեամբ և ոչ անուամբ լոկով որպէս զարդիս (Հ. Սարգսին,) իմ պատասխանատուութիւն ընդ նորա ձեռն լինէր և զհանրական տեսչութենէ Վարժարանիս նա տայր պատասխանի ։ . . .

« Սմին իրի և զամենայն հոգս պիտոյից մանկտւոյն, զկերակրոց սանմ զզգեստուց և զգրոց և որ այլն եւս, իմ յան-

ձին կալեալ է, թէպէտ և դրամոց մատակարարութիւն լիբովանդակ ի ձեռս Հ. Յովհաննու կայ.

« Զայսոսիկ հարկ համարեցայ զեկուցանել Վեհիդ, զի ի փորձոյ ուսեալ կարծեմ, թէ որ անուանեալ տեսուչն է Վարժարանիս պատճառանս խնդրէ անմեղադիր առնելոյ զիւրն անգործութիւն, և զանկարողութիւն զմեօք արդեօք և զՁեօք մանաւանդ արկանելով զամենայն զխոսս սակաւ զարգացման վարժարանիս, ըստ իւրոցն խելաց.

« Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ. »

Պատճէն երրորդ նամակին.

« Փարիզ. 19 յունվար. 1849.

« Վ. Հ. Սարգիս մեծաւ անհամբերութեամբ թուղթ սպասել այսր թղթոյ, յորմէ իմանամք, թէ աւուրբք յառաջ գրեալ է առ Ձեզ. անշուշտ Նամակ ըստ ոճոյ առաջնոց նամակացն իցէ և այդ, որպէս գուշակեմ. իմ տենչ այն է, զի մի բնաւ խռովեսջիք այլ խոհական խորհրդով և ազդու պատճառաբանութեամբ կշռիցէք Նմա զպատասխանին, ըստ իմաստութեան ձերում.

« Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ. »

« Յ. Գ. Արդ իսկ կոչեցայ ի Վ. Հ. Յովհաննէ ի սենեակ Վ. Հ. Սարգսի և տարեալ և ցուցեալ էր սորա Նմա զմանրամասն հաշիւ ամենայն ելից և մտից Վարժարանիս, հանդերձ առանձին բովանդակութեամբն և կշռով և ընդունելութեան մուրհակօք.

« Վ. Հ. Յովհաննէս ընթերցաւ և բացատրեաց մի առ մի զկարեւորագոյնս ի հատուածոցն, և ապա ասէր. Ահա և հաշուեմատեանս ողջոյն, տեսէք, քննեցէք և ըստ այնմ գրեցէք առ Գեր. Աբբ. և յղեցէք զբովանդակութիւնդ.

Վ. Հ. Սարգիս հարեւանցի և եթ ակն արկեալ ի մատեանն ասէ, զայդ առ քեզ կալջիր և զհամառօտութիւնն տուր ինձ զի յղեցից ի Վանս։ Յաւել Վ. Հ. Յովհաննէս. Բայց կամիմ գիտել, թէ ո՛ կալցի զհաշիւս այս Նորոյ տարւոյս. զի ես ոչ եւս կարեմ վարել զպաշտօն, զոր հասարակութիւնն առեալ է յինէն. իմ պաշտօն այսուհետեւ խոստովանահայրութիւն և եթ է։ Ասէ Վ. Հ. Սարգիսն. Ո՛չ, ո՛չ կալ դու զհաշիւն դարձեալ, որպէս յառաջ, մինչեւ տեսից թէ զինչ պատասխանի եկեսցէ ի Վանաց առ թուղթսն իմ։ Եւ Վ. Հ. Յովհաննէս ել ընդ իս ի սենեկէն նեղասրտեալ ընդ մեղմեխ գնացս առնն։

« Իսկ հաշուեմատեանն զոր տեսի, ամենայն մանր մանր տեղեկութեամբ հանդերձ գրեալ է, որպիսի ոչ զվանացն տեսեալ է իմ և ոչ Ռափայէլեան Վարժարանին, զի օրինակ իմն և անուանք իւրաքանչիւր մատենից գնելոց, մի առ մի գրոշմեալ են ի նմա, որպէս և այլ պաշարք և նիւթք լիպրէ‐իւքն և չափովք և թուովք ըստ մուրհա·կացն ընդունելութեան նշանակեալ մի ըստ միոջէ։ Տեսցուք եթէ Վ. Հ. Սարգիս ա‐րասցէ՞ նոյնպէս (եթէ ի ձեռս նորա մնասցէ հաշուեմատեանն) որպէս յոխորտայ ի լինել խօսից։ . . . .

. . . .

. . . .

« Ն. Տ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԲԻ. »

Պատճէն չորրորդ նամակին.

« Փարիզ. 29 յունվարի. 1849.

« Զշնորհեալն ի Վենէտ ի 17 ամսոյս՝ ընկալաք յերկին հանդերձ օրինակաւ թղթոյն (Հ. Սարգսին,) որոյ իմաստ ոչ ինչ անծանօթ էին մեզ . . . գտեալ զայն անձնական և անարժան կրիւք անիմանալի խառնախօսութեամբ և յանդուգն ասացուածովք։

« Զոմանս առաջարկութեանց նորա, որ իրաւացի թուին և մեզ գիտեմք, զի և միաբանութիւն ճգնի տակաւ արդիւնացուցանել ըստ կարի և ըստ ներելոյ ժամանակիս, և զոմանս, յորոց մի է և յանձն առնել զտեսչութիւն վարժարանիս ի ձեռս գաղղիացւոյ ուրուք, ոչ միայն համարիմք ի նախատինս ուխտիս, որպէս ասէ նա, այլ և ի վնաս մեծ վարժարանիս և ազգային կրթութեան զորոյ զօրինակն ունիմք և ի վերայ դպրոցին Լազարեանց, սմին իրի և անգործադրելի ամենեւին ։

« Իսկ թէ զի՞նչ պատասխանի արժան իցէ գրել առ նա, մեր կարծիք այս են . . . խայտառակել միանգամայն զգնացս նորա յիրս վարժարանիս, ոչ միայն յերկուց ամաց հետէ, այլ և անդստին յամէն, յորում կարգեցաւ նա ուղղիչ Ռափայէլեան վարժարանին և ապա այսմ ի Պատաւիոն ։

« Բայց քանզի այր է սա անխիղճ և կատաղի, լաւ եւս թուի գրել Ձեզ առ նա պատասխանի զգուշաւոր բանիւք . . . (թէ) բարւոք թուեցաւ մեզ և ժողովոյս զի որովհետեւ ինձ անմարթ է վասն հանգամանաց ժամանակիս գալ այդր, Վերապատուութիւնդ ի մեղմանալ օդոց փութասցի անյապաղ գալ այսր ի Վենետիկ ։ . . . Եթէ յանձն առնուցու նա գալ, բարւո՛ք է, զի և վարժարանս զերծանի միանգամ ի տարտամ տեսչութենէ աստի որով սա զանուն եւեթ տեսչի ունելով զամենայն պատասխանատուութիւն յանձնէ ի բաց քերէ, որպէս միշտն և միանգամայն թշնամութեան աչօք հայելով միշտ և յանպարսաւ ընթացս վարժարանիս, և անդադար հակառակութեամբն ընդ վանացն ջլատէ զձեռս վաստակաւորաց ։ Իսկ եթէ յապաղելով գչուն (որպէս հաւանական թուի) չկամիցի ելանել աստի, գէթ չկարէ այլ եւս յայտնապէս քրթմնջել ոչ առ մեզ և ոչ առ Ձեզ ։ . . . .

. . . .

. . . .

« Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ. »

Պատճէն ձեռագրոյդ նամակին.

« Փարիզ. 19 մարտի. 1849.

« . . . . *Զազդեցութիւն գրոյն Ձերոյ առ նա (առ Հ. Սարգիս,) չկարեմք հաւաստեաւ գուշակել. զայս տեսանեմք և իմանամք՝ զի ուրախ է նա և առաւել եւս քան զսովորականն, և պատրաստ է դարձեալ պատասխանի, որպէս թերեւս գուշակէիք ընդ մեզ, ոչինչ անգիտանալով զանհանդարտ և զկռուասէր բարս նորա և զդատարկապորտ շատխօսութիւն։*

« Բարւոք և յոյժ իմաստութեամբ գրեալ էր Ձեր զթուղթն ըստ ամենայն մասանցն. բայց զարմացաք յոյժ, թէ ընդէ՞ր ոչ իշխեաց և ոչ կամեցաւ արդոյ ժողովն երկտող ինչ յիշատակ առնել ի թղթին զյանձնելոյ նորին դարձեալ զամենայն զգործ և զմատակարարութիւն վարժարանիս ի ձեռս Վ. Հօր Յովհաննու, և զհրաժարական բանիցդ զորս ստէպ կրկնէ նա ի թուղթս իւր։

« Գիտեմք իսկ զի վրիպակ մեծ է զոր գործեաց ժողովդ մեր, տալովն ի ձեռս Հ. Սարգսի զամենայն իշխանութիւն տեսչութեան և գործակալութեան, ընդդէմ խղճի իւրոյ և ճանաչման իւրացն, գիտելով չափ զոգորմելի անկարողութիւն և զխռովարար բարս անգործ առնն. բայց քանզի նա հրաժարեաց կամակար ի յանձնառութենէ գործոյն, ժողովդ հի՞մ լռիցէ։ . . .

« Յայսմ ամենայնի մխիթարութիւն մեծ է ինձ զի այս կռիւք և խռովութիւնք (որ թուի թէ ոչ դադարեսցին իսկ մինչեւ իսպառ այսպիսի հնարիւք) ոչինչ բնաւ ամենեւին խափան լինին ներքին բարեկարգութեան և յառաջադիմութեան վարժարանիս գլխովին։ . . . .

« Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ. »

Պատճէն վեցերորդ նամակին.

« . . . .

. . . .

. . . . *Վ. Հ. Սարգիս Թուի թէ չեւ եւս աւարտեալ է զերկուսին թուղթս իւր բազմիջեանս, զորս անձանձրոյթ համբերութեամբ գրէ, որպէս կարծեմ, յայգուէ մինչեւ ցընդերեկս, զի յետ վերծանութեան լրագրոց, զուարճութիւն մեծ թուի նմա և գործ կարեւոր վիճաբանել ընդ մեծի և ընդ փոքու զհնոտի խնդրոց և զանցելոց սուտ կամ սնոտի վարկածից. բայց ընդ մեզ (գէթ առ երեսս) բարւոք վարի.* . . .

. . . .

. . . .

« Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ. »

Յետ նամակացդ հրատարակութեան Տէր Գաբրիէլ վարդապետ յօղուած մի երեւեցոյց ընդդէմ հրատարակողի նամականւոյն, ի Մասեաց Աղաւնւոյն թիւն մայիսի 1861 ամին, յորում արդարացուցանէ զանձն ընդ ակամայ գրութիւն թղթոցն այնոցիկ, զոր և մեք յաւելումք տպագրել այսր յամբողջութիւն պատմութեանս, և զի ընթերցողք մեր տեսցեն զարդարութեան նորա հաւաստիս։

« Առ Տ. Յ. Գ. *իկ.*

« . . . . Ձեր պատուական նամակին հետ ընդունեցանք աշխարհածանօթ շաղակրատի մը Երկու տողը. յորում եթէ երկու հարիւր ծռութիւն և ստութիւն կայ ըսեմք, չափազանցութիւն մը ըրած չեմք լինիր. Ուրախ եմք որ դուք ալ ուրիշ ամենայն ճշմարտասիրաց հետ այնպէս դատեցիք և հասկըցաք այն երկու տող ըսուած տետրակին բազմաթիւ բարբանջմունքը ընդդէմ բոլոր ազգիս ընդհանրապէս, մանաւանդ ընդ-

դէմ եկեղեցականաց առ հասարակ, ընդդէմ Պօլսոյ Կրօնական ժողովոյն, և ընդդէմ քանի մի պատուաւոր անձանց. ուստի և արժան չհամարելով այս տեղ զանոնք հերքելու ելնել, միայն ձեր Նամակին մէջի երկու մտերմական հարցմանցը կպատասխանեմք համառօտիւ ։

“ Նախ՝ ամենայն կերպով իրաւունք ունիք զարմանալու և ըսելու որ “ Եթէ յիրաւի վաւերական կամ գէթ անխարդախ “ են տետրակին մէջ յիշուած Նամակները (զոր չեմք կարծեր), “ ինչ աստիճանի հասած է ուրեմն Գ. Հիւրմիւզին ոխակա- “ լութիւնն, մանաւանդ թէ . . . թիւնը, որ ատենով իրեն “ հաւատարիմ ատենադպրէն, խորհրդականէն ու հլու հպա- “ տակէն առանձնաբար առ ինքն գրուած Նամակաները՝ կառ- “ նու կըմատնէ այն անձին ոխերիմ թշնամիներուն ձեռքը ” և այլն ։ Մեք այսքանը միայն աւելցընեմք ձեր իրաւացի խորհրդածութեանը վրայ, որ Մխիթարեանց մեծաւորին այդ . . . գործողութիւնն ընելու մի միայն Նպատակն էր անշուշտ՝ Հայր Սարգիս Վ. Թէոդորեանին ու այն Նամակները գրողին մէջ գժտութիւն ձգել ։ Բայց ի զուր. Հ. Սարգիս Վարդապետը արդէն շատ լաւ տեղեկացած էր և գիտէր թէ այնպիսի Նամակները ի՛նչ ազդեցութեամբ և որո՛յ թելադրութեամբը գրուած էին այն միջոցներուն ։ . . . Ոխակալութիւնը չէ թողուցած Մխիթարեանց մեծաւորին մտածել այդ գործողութեան ժամանակը թէ հապա ի՞նչ մեծամեծ վնասներ կրնային ծագիլ իրեն և իւր միաբանութեանը՝ եթէ յանկարծ այն հին ատենադպիրն ալ ելնէր տպագրութեամբ հրատարակէր Նորա և քանի մը գլխաւոր միաբաններուն առ ինքն գրուած . . . Նամակները . . . բայց . . . ”

Յառաջ քան առնել զարժանն պատասխանի անարժան բանից թղթոյ Հ. Գաբրիէլի, կարեւոր համարիմք յիշատակել առ համառօտիւ զգնացս Հ. Սարգսի և զգնացս Նորա ընդ միմեանս, սկսեալ 1835 ամէն, յորում դառնայ Հ. Սարգիս ի Մադրասէ ի Վենետիկ և ճանաչէ զնա անդամ միաբանութեան, մինչեւ ցամն 1854, յորում ելանէ Հ. Գաբրիէլ ի Մու-

բատեան վարժարանէն և բաժանի ի Մխիթարեան միաբանութենէն. զամս իննեւտասն ։

Արդ՝ սնեալ Հ. Սարգսի գյառաջադիմութիւն Հ. Գաբրիէլի յուսումն և զաշխատութիւն նորա ի գործս հասարակաց՝ վարկ մեծ կալնու զնմանէ, և յառաջեցուցանէ զնա ի կարեւոր պաշտօնս, ըստ պատեհի և ըստ պիտոյից, որպէս Քարտուղար խնամակալաց ժողովոյն. որպէս խմբագիր Բազմավէպ օրագրին, որում և օժանդակէ կարեւոր մատենիւք ի պէտս այնորիկ, և որպէս վերակացու նորընծայից միաբանութեան, ընդդէմ կամաց ոմանց անտի, առ որ ակնարկեն բանք Գերապայծառ Սոմալի, « Խիթալի լեալ է անձն սորա (Հ. Գաբրէլի) « յաչս ոմանց ի միաբանից աստ որք արդէն ընդ ակամբ « հայէին ի նա վասն պաշտօնի վերակացութեանն ։ » Տե՛ս յէջ 129. Բ. հատ. պատմութեանս ։

Իբրեւ ուսուցչապետ և դաստիարակ կարգի Հ. Գաբրիէլ ի Մուրատեան վարժարանի ընդունի զնա Հ. Սարգիս քաղաքավարութեամբ և մտերմութեամբ, ըստ սովորութեան իւրում, թէպէտ և տեսանէ յանդգնութիւն և մեղմխութիւն ի գնացս նորա, այլ չիմանալոյն առնէ, տալով զայն անճանաչողութեան և կողմնաւոր բարուց նորա, մնալով ճանաչողութեան և ուղղութեան նորա ։

Իբրեւ կոչի Հ. Յովհաննէս ի Վենետիկ, առ ի տալ համար տնտեսութեան իւրոյ, յանձնէ նա առ ժամայն զպաշտօն իւր, զգործակալութիւն Մ. վարժարանին, Հ. Գաբրիէլի. և իբրեւ չկարէ վերստին հասանել յիշխանութիւնն յայն, սակս անհաւատարմութեան իւրոյ, մնայ պաշտօնն այն ի ձեռս Հ. Գաբրիէլի, ըստ ցանկութեան նորա, և ըստ հաւանութեան Հ. Սարգսի, վստահացեալ ի հաւատարմութիւն նորա ։

Ծախէ Հ. Սարգիս ի քսակէ իւրմէ 7,000 ֆրանք ի փորագրութիւն և ի ձուլումն հայկական տառից հնարելոց ի Հայր Գաբրիէլէ, և յանձնէ զայն ի ձեռս և ի կամս նորա բոլորովին ։

Ծախէ եւս Հ. Սարգիս ի քսակէ իւրմէ 12,000 ֆրանք ի տպագրութիւն վարուց Քրիստոսի, աշխատասիրութեան Հօր Գաբրիէլի, ի քաջալեր նմին ։

Ջատագովէ Հ. Սարգիս երկար երկար գրութեամբ իւրով Հ. Գաբրիէլի, վասն բանի Նամակի Նորա հրատարակելոյ յԱրշալոյս Արարատեան, որպէս տեսանի յէջս 258-278. ի Գ. Հատ. պատմութեանս ։

Պաշտպանէ Նմա Հ. Սարգիս զամս երկուս ընդդէմ անիրաւ հրամանին Գեր. Հիւրմիւզի, որ կամէր հանել զնա ի պաշտօնէ անտի, սակս գրութեան Նորա որ յԱրարատեան Արշալուսոյ ։

Իբրեւ սաստկանայ հրամանն այն առ Նա, հարկաւորի յայնժամ Հ. Սարգիս թողուլ զնա ելանել ի Մ. վարժանէն, բայց ոչ թողու զնա անխնամ և անգործ, զի զետեղէ զնա ի տան Արթին Պէյի, և հայթայթէ Նմա 10,000 ֆրանք դրամագլուխ ի Պարոն Եդուարդ Ռաֆայէլէ, ի մշտնջենաւոր ծախս տպագրութեան օրագրին Մասեաց Աղաւնւոյ, և ի յիշատակ բարերարին, թէպէտ և Հ. Գաբրիէլ յամս երկուս ծախէ ի տպագրութեան յայն զբովանդակ դրամագլուխն, և անհետ առնէ յօրագրէն անտի զանուն Բարերարին՝ առանց ինչ երաշխաւորութեան ։... Ահա գնացք Հ. Սարգսի որ ընդ Հ. Գաբրիէլի, զամս իննեւտասն ։

Յիշատակեսցուք աստ և գնացս Հ. Գաբրիէլի որ ընդ Հօր Սարգսի, սկսեալ ի ժամանակէ անտի, յորում յառաջեցուցանէ սա զնա ի կարեւոր գործս և ի պատուաւոր պաշտօնս հասարակաց, և յորում տեսուչ լինի սա Ռաֆայէլեան վարժարանին ի Վենետիկ, և Մուրատեան վարժարանին ի Պատաւիոն, և վարէ զպաշտօն իւր անդ խնամով և զգուշութեամբ. իսկ Նա անճանաչող միօք և կոխնաւոր բարուք վարի ընդ սա, պաշտպանելով չողոքորթին իւրում, Հօր Յովհաննու՝ ի շռայլութեան, և դասակցաց իւրոց, Հարց Գրիգորի և Ստեփանի յանկարգութեան և յանպիտանութեան, և ըստգտանելով զսա, ի խօսել անաչառութեամբ, զարժանեաց միոյն, և ի խրատել և ի դատել իրաւամբք զմիւսս ։

Եւ այս գնացք Նորա ընդ սա, յայտնապէս տեսանին յԱրբայութեան Գեր. Հիւրմիւզի, որ իբրեւ զնա անճանաչող միօք և կողմնաւոր բարուք վարի ընդ սա, և որ անսայ խրատու Նորա, թէպէտ և այլ գիտաւորութեամբ, կարգելոյ զՀ. Ռափա-

յէլ ուղղիչ Մ. վարժարանին ի Փարիզ, ընտրէ իւր աթոռակալ զՀ. Սարգիս, առ ի պահել զնա ի վանս ։ Զայս խրատ Հօր Գաբրիէլի վկայեն աշակերտք նորա ապա, և ըստգտանեն զնա իբրեւ զպատճառ ամենայն չարեաց ։ Եւ ահա գնացք Հ. Գաբրիէլի որ ընդ Հ. Սարգսի, զամս իններտասն ։

Թէպէտ և Հ. Գաբրիէլ աչօք տեսանէ զհոգայողութիւն Հ. Սարգսի որ զվարժարանէն, և ականջօք լսէ զբողոքական գրուածս նորա որ առ Աբբայն և իրաւունս տայ նմա, սակայն ի վերայ այսր ամենայնի նոյնպէս վարի ընդ նմա կանխակալ սովորութեամբ իւրով, մինչեւ կոչի անտի Հ. Սորկունին ի վանս, ի տալ զհաշիւ մատակարարութեան իւրոյ, ուր և յայտնի պատրուակ չարաչար վատնութեան արծաթոյ աղքատաց ազգին ։ Յայնժամ ճանաչէ նա զՀ. Յովհաննէս Սորկունեան, և զՀ. Սարգիս Թէոդորեան ի բանս և յիրաւունս իւրեանց, բայց անագան և անդարման, որպէս և վերագոյն ասացաք ։

Զայսոսիկ յիշատակութիւնս որք զգնացից նոցա ընդ միմեանս՝ չմտ համարիմք մեք յարժանն պատասխանի անարժան բանից Թղթոց Հ. Գաբրիէլի, թողլով վերծանողաց պատմութեանս առնել ընդ այս դատաստան ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ. — Պատասխանի Գեր. Հիւրմիւզի առնեալ թղթոյ նորա. — Երկրորդ օրինակ թղթոյ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն դիտաւորութեան Բարեբարին, և պարտուց Միաբանութեան. — Ճանաչումն Հ. Սարգսի և փորձ նորա ի շուաշորել զազգն. — Հաստատութիւն և վախճան խնամակալաց ժողովոյն. — Քանիութիւն եկամտից վարժարանին, և աշակերտաց նորին զանս քան. — Պատճառ ցաւոց սրտի Հ. Սարգսի. — Անբաժանութիւն Միաբանութեան ի գործ Մ. վարժարանին. — Նախատինք Միաբանութեան յազգայնոց վասն բերութեան Մ. վարժարանին. — Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս. — Տարեկան հաշիւ ծախուց վարժարանին. հանդերձ առանձին գրով և կարեւոր քննութեամբ.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, իբրև պատասխանի թղթոյ նորին, և ի վերստին հաստատութիւն ճանաչման և կամաց իւրոց, օրինակ զայս

« Արհիապատիւ Տէր.

« Զցանկալի գրեալն Վեհիդ, որ ի 5 հոկտեմբերի, ընկալայ ի 17 սորին ամսոյ: Պատճառ կասելոյ իմ յերկուց ամսոց հետէ ի սովորական գրութենէս առ Վեհդ, յայտնի է ինքնին. զի զի՞նչ էր նպատակ ցայնվայր գրութեանս առ Տէրդ, բայց եթէ առ ի դարման տանել թերութեան վարժարանիս, անուղղութեան ասեմ որ ի պաշտօն անդ մատակարարութեանս մերոյ: Արդ եթէ ի բանից ցայնվայր գրութեանս « խելամուտ « եղեալ Ձեր որպէս պարտն էր հանգամանաց վարժարանիս, « փութացայք մատուցանել ըստ կարի Ձերում զդեղ դարմա-

նոյն, ապա այսուհետեւ աւելորդ է ընդ այն գրութիւնս, այլ պիտոյ է լռութիւն բաւականութեամբն հանդերձ ։ Իսկ եթէ ոչ՝ հայեցեալ ի չափ խելամտութեան և ի կար զօրութեան Ձերոյ ընդ հանգամանս վարժարանիս, ապա վայրապար է և ի զո՛ւր այսուհետեւ ընդ այն գրութիւնս, այլ պիտոյ է դարձեալ լռութիւն հանդերձ բազում համբերութեամբ, մինչեւ ամենայն ոք ի մէնջ ինքնին և քաջիկ խելամուտ լիցի այնմ յելից և յարդեանց իսկ իրացն, թէպէտ և անագան, թէպէտ և այն ոչ ումեք ի մխիթարութիւն, . . . և մինչեւ հանդարտեսցի Եւրոպա, հաստատութիւն առեալ նորոգ վարչութեան իւրաքանչիւր ազգաց, յայնժամ տաց Վեհիդ գրով և մեկին յոյժ զվերջին կարծիսն իմ որ յաղագս բանի վարժարանիս, և որոշեցից զպարտս պաշտամանս, եթէ տացէ Տէր ինձ մինչեւ ցայն վայր կենդանութիւն ։ . . .

« փոխադարձ ողջունիւ առ համօրէն Վ. Հարս և Պ. Եղբարս

« Մնամ միշտ

« Արհիապատուութեան Ձերում

« Ի Փարիզ. 20 հոկտ. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրալիր ողջունիւ խնդալ.

« Թուղթ Վերապատուութեանդ գրեալ ի 20 հոկտեմբերի թէպէտ և առաջնոյն մասամբ հանդոյց զիս զեկուցանելով զընդունելութիւն փոխանակագրոյն յղելոյ աստի 10 հազար ֆրանքաց և 166 ստերլինիցն, բայց յետնով մասամբն տրտմեցոյց զիս ոչ սակաւ, ցուցեալ ինձ դարձեալ զդժգոհութիւն

Ձեր ընդ անուղղութիւն մատակարարութեան վարժարանիդ ։

« Ցաւ է ինձ զի ի վերայ ամենայն ջանիցս մերոց և հնարից դարձեալ դժբախտ գտանիմք վրիպեալք ի ցանկութենէս մերմէ, որ էր դիւրել տեսչութեան Ձերում յանսայթաք ուղղութիւն իւրաց վարժարանիս ։ Յայն սակս իսկ զՎ. Հայր Գաբրիէլ յղեցաք, պատուիրեալ նմա՝ Ձերովդ խորհրդով և համախոհութեամբ գործել զամենայն, և միաբան խորհրդով և ջանիւ վաստակել ի զարգացումն վարժարանիդ, և յուսամ զի ոչ թերասցի նա յայնմ ։ Յայն սակս և զայլ փոփոխութիւն արարաք, և յուսամք իսկ տակաւին՝ զի և առաւելագոյն խնամով Վերապատուութեանդ առ սակաւ սակաւ յարդարեալ ուղղեսցի ամենայն. զի բազում ինչ զօրութիւն է և ժամանակին զդժուարինսն դիւրելոյ և զանհնարինսն հնարաւոր առնելոյ ։

« Մի՛ ապա լքանիցի և Վերապատուութիւնդ, և յուսահատ լինիցի, այլ զօրացուսցէ մանաւանդ և զլքեալ սիրտս, և մեք ոչ դանդաղեսցուք փութով որպէս մարթն է՝ ի չարեաց ժամանակիս՝ աստի և կամ ի Պօլսոյ ուր գրեցաւ հաստուցանել և զ20,000 ֆրանքսն ի հատուցումն մնացորդ պարտուց վարժարանիդ, որով և Վ. Հ. Յովհաննէս զերծցի ի ծանր հոգոյն ։

« Սիրալիր ողջունիւ վանականացս ամենեցուն մաղթեմ յամենայն սրտէ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 6 Նոյեմբ. 1848.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Երկրորդ օրինակ Թղթոյ Հ. Սարգսի գրելոյ առ Գեր. Հիւրմիւզ վասն դիտաւորութեան Բարերարին և պարտուց միաբանութեան, այլովքն հանդերձ.

« Գերապայծառ Տէր.

« Թէպէտ և ծանուցաւ Վեհիդ երբեմն տրտմութիւն իմ և մխիթարութիւնս միանգամայն որ ընդ խափանումն ուրեք թղթոյս՝ գրեցելոյ ի 4 օգոստոսի անցելոյն, և պատճառ կասելոյս տալոյ Ձեզ զերկրորդ օրինակ նորին, սակայն կարեւոր և հարկ համարիմ այժմիկ առաքել Ձեզ զպատճէն այնորիկ, հանդերձ յաւելուածով, ընդարձակ և մեկն բանիւք, տեսանելով ցարդ զդերեւ ակնկալութիւն իմ այտի, ի խելամտութիւն բանիցս, և զընդունայն ջանս Ձեր յանձայրաք ուղղութեան իրաց վարժարանիս:

« Արդ՝ ըստ դիտաւորութեան հանդուցեալ Բարերարին դպրոցիս, Սամուէլ Մուրատի, և ըստ բացայայտ բանից կտակի նորին, խօսեցայ ես այդր բազում անգամ ընդ որոց պէտք էին խօսել, և գրեցի ես աստի միանգամ և երկիցս առ որ կարեւոր և հարկ էր գրել, թէ պարտ է Միաբանութեանս ժողովել զորբ և զաղքատ մանկունս ազգիս յամենայն կողմանց, և ոչ ի Պօլսոյ միայն և կամ զմեծագոյն մասն անտի. և թէ՝ զայն ընտրանօք և անաչառութեամբ՝ և ոչ փարկպաբազի և աչառանօք և շահասիրութեամբ, որպէս և տեսաւ ցարդ և վկայեցաւ ի բազմաց. վասն այսորիկ և անուղղութիւն ի մատակարարութեանն որ ի գործս յայս սրբազան պաշտամանս, և վասն այսորիկ ոչինչ օգուտ մասնակցաց բարեաց Բարերարին, և ոչ պատիւ մատակարարաց նորին. և յիրաւի՝ քանզի ուր ոչ գոյ արդարութիւն, անդ և ոչ ումեք ինչ Մխիթարութիւն:...

« Խօսեցայ ես ընդ մերոյն այդր և գրեցի աստի առ Վեհդ, թէ պարտ է Միաբանութեանս ժողովել զմանկունս ազգիս յամենայն կողմանց ի Պօլիս, և անդ զամս երիս դաստիարակել և մարզել զնոսա ի բարեկիրթ վարս և ի սկզբունս կարեւոր գիտութեանց յիշատակելոց անդ. վասն այսորիկ հարիւր հազար ֆրանք առաքեցաւ ի Պօլիս ի կառուցումն դպրոցին անդ, և երկու հազար ֆրանք տուաւ ամի ամի Հ. Անանիայի Ճէլա-

լեան իբրեւ վարձ աշխատութեան իւրոյ անդ, թէպէտ և առաքեալ մանկունքն անտի ցարդ՝ ոչ միայն անկիրթ էին վարուք և տգէտ կարեւոր սկզբանց գիտութեան, այլ և ոմանք ստահակ բարուք, կէսք անպիտան ուսման, և այլք անծանօթ հայերէն վերծանութեան և խօսակցութեան անգամ, և վասն այսորիկ հարկ եղեւ և լինի միշտ զատահակսն և զանպիտանսն ի բաց արձակել աստի, հանդերձ վայրապար ծախուք և անիբաւ գանգատանօք ծնողաց նոցին, . . . և մնացելոցն զամս երեք զայն ինչ ուսուցանել, զոր ինչ պարտ էր ի Պօլիս ուսուցանել, և զայն թեթեւ ինչ ծախուք, իսկ աստ ծանր ծախուք, 2,000 ֆրանքով ի տարւոջն, որ զամս երեք առնէ 6,000 ֆրանք վասն միոյ կարծեցեալ աշքատ մանկան : . . . Տեսանէ՛ք զանուղղութիւն ի մատակարարութեան որ ի գործս յայս որբազան պաշտաման իւրում ։

« Գրեցի ես աստի առ Վեհդ ըստ ճանաչմանս իմում, հաստատելոյ ի գիտաւորութիւն Բարերարին, լուսաւորելոյ զազգս առ հասարակ, և ըստ բազմամեայ փորձոյս, թէ պարտ է զի մանկունք վարժարանիս զամս հինգ դաստիարակեսցին և մարզեսցին յեւրոպացի քաջ վարժապետաց յընտիր քաղաքավարութիւն, ի բարձրագոյն գիտութիւնս, և ի կենցաղօգուտ արուեստս. վասն այսորիկ հինգ հարիւր հազար ֆրանք ծախեցան ի գին պալատանս, և ութսուն հազար ֆրանք տարեկան ծախքն են վանսն քառասուն մանկանց ։

« Այս կարեւոր առաջարկութեանս իմոյ, ոմանք, դուցէ բազումք ի միաբանիցս ոչ հաւանեցան և չհաւանին ցարդ, թերեւս յեցեալ նոցա յիշխանութիւնն յայն տուեալ միաբանութեանս ի նորին իսկ Բարերարէն դպրոցիս, և ի վարկն բաւականութեան որ զինքեանց յայս մեծ և կարեւոր գործ ի լուսաւորութիւն ազգիս առհասարակ, ըստ դիտաւորութեան Բարերարին, թէպէտ և իշխանութիւն միաբանութեանս ի գործս յայս սահմանեալ է ի բացայայտ բանից կտակին, իբրեւ զիշխանութիւն կտակակատարաց նորին, այս է, « Մի՜« նորդութեամբ և ըստ խորհրդոյ Միաբանութեանս զետին « զնեսցեն նոքա և կառուսցեն զդպրոց նորա ։ » Ըստ որում

իմացաւ և բարձրագոյն Ատեան Անգղիացւոց ի Մատրաս, մանր քննելով զբանս կտակի Բաբերարին, և զրկեաց զկտակակատարսն յիշխանութենէ անտի, այսինքն խառնելոյ յայն, տեսանելով զպակասիլ նոցա ի պաշտօն յայն իւրեանց, թէպէտ և բաւականութիւն միաբանութեանս ի գործս յայս մատակարարութեան յայտնի է ի քսանամեայ արդեանց անտի իւրոց : . . .

« Այլ որպէս բնածին հակառակասիրութիւն միոյ ի կտակակատարաց անտի, չթողու զնա դադարել ի վնասակար միջոյ իսկզբանէ մինչև ցայսօր ժամանակի և յամենայն տեղիս, նոյնպէս և կարճատես անձնասիրութիւն ոմանց ի մերոցն այտի չտայ նոցա ճանաչել զանբաւականութիւն իւրեանց յայս գործ մեծ և ծանր յոյժ, վասն որոյ և վնաս բարեաց հասարակաց ազգիս և նախատինք միաբանութեան մերոյ : . : .

« Գիտեմ զի անախորժ և ծանր թուիցին բանքս լսելեաց ոմանց յեղբարցս, մանաւանդ այնոցիկ որոց ախորժելի են միայն քաղաքավար և շողոքորթ բանք օտարականաց հանդիպելոց ի վանս, որով մոռացեալ նոցա զտկարութիւն իւրեանց, առ ամենայն ինչ բաւական և չա՛փ համարին զինքեանս : . . .

« Ասիցեն նոքա արդեօք, ապա զի՞նչ պատիւ մնայցէ միաբանութեանս ի գործ յայս դպրոցիս, և կամ չիցէ՞ նմա ամօթ մեծ թողլով զայն պատիւն այլոց : . . .

« Ասեմ ես առ այս նախ՝ թէ պաշտօն միաբանութեանս ի գործս յայս վարժարանիս է մատակարարութիւն սորին յանձնեալ ի Բաբերարէն, մանաւանդ թէ յակամայ կամաց կտակակատարաց նորին, և ջանիւք Հ. Սարգսի Թէոդորեանի : . . . Ապա պատիւ միաբանութեանս է իբաւուք մատակարարութիւն իւր :

« Երկրորդ՝ թէ արդարև յաւելումն փառաց լինէր միաբանութեանս, եթէ բաւական էին իւրքն յայս գործ պաշտաման. այլ դժբաղդութեամբ անբաւական գոլով նոցա յայս պաշտօն, ապա հարկաւ պարտ է նմա թողուլ զայս պատիւ այլոց : Եւ եթէ ամօթ մեծ համարի նա թողուլ զայս պատիւ

այլոց, և կամիցի առ փառասիրութեան տրկանել և զայս պատիւ զիւրեւ, գիտասցէ նա զի կորուսցէ և զիւրն իսկ, զպատիւ մատակարարութեան իւրոյ, և զի պտղէ ընդ այն նախատինս անիրաւութեան, տրկանելով զինքն ընդ խիստ քննութեամբ այլոց, և վատնելով զժամանակ իւր, և զիրաւունս որբ և աղքատ մանկանց ազգիս : . . .

« Հարցանեմ ես արդ՝ եթէ բաւական և չատ համարին նոքա զինքեանս յայս գործ մեծ և ծանր, ընդէ՞ր աստ ի Փարիզ այսչափ ծանր ծախիւք, և վասն սակաւաթիւ մանկանց հաստատեցին զվարժարանս. զի զոր ինչ ի Փարիզ կարող են նոքա առնել, արասցեն զայն ի Պօլիս, սակաւ ինչ ծախիւք և վասն բազմաթիւ մանկանց : Եւ եթէ կարօտութիւն նոցա յայս գործ՝ միայն զվարժապետաց օտար լեզուաց իցէ, դիւրին է յոյժ զայն կարօտութիւն լնուլ, ածելով անդ վարժապետս օտար լեզուաց թէպէտ և կրկին վարձիւք, բայց բազում չահիւք, զբազմաթիւ մանկունս ուսուցանելով անդ : Գիցուք թէ բովանդակ ծախք մանկանց դպրոցին անդ ի Պօլիս լիցին 25,000 ֆրանք. իսկ աստ ի Փարիզ ծախք վարժարանիս են 80,000 ֆրանք :

« Ահա զանազանութիւն ի տարեկան ծախսն 55,000 ֆրանք. իսկ զանազանութիւն ի գիտութիւնս մանկանց ոչ գոյ, զի աստ և անդ նոյն է, ի բաւականութիւն մերոցն գոլով ապաստան. զի որչափ ինչ աստ բաւական են նոքա ուսուցանել մանկանց, նոյնչափ և անդ, և առաւել բազմաթիւ մանկանց, որպէս և օտար լեզուաց վարժապետքն. ապա ընդէ՞ր վայրապար և ի զուր ծախեսցան և ծախեսցին ամի ամի 55,000 ֆրանք. և որպէս թէ ի ծով ամանայցի այսչափ գումար արծաթոյ յընչից աղքատաց կարօտելոյ ազգիս, և ի սրբազան աւանդէ հաւատացելոյ միաբանութեանս . . . տեսանէ՛ք զանուղղութիւն ի մատակարարութեան Միաբանութեանդ, որ ի գործս յայս սրբազան պաշտաման իւրում : . . .

« Ո՞չ պարտ իցէ արդեօք և արժան, զի ի զուր վատնեալ այս արծաթ, 55,000 ֆրանք, ի կարեւոր պէտս ծախիցի, յօգնութիւն կարօտելոյ ազգիս լիցի, դպրոցք ի գլխաւոր քա-

զորս Հայաստանի հաստատիցին՝ որով և լոյս գիտութեան ընդ համօրէն ազգս Հայոց ծաւալեսցի, ըստ դիտաւորութեան հանգուցեալ Բարերարին : . . .

«« Եթէ ասիցէք, թէ չունիք այդր ի վանս բաւական անձինս և ոչ ի Պօլիս յօժարական՝ որ ի մէնջ յայս գործ դպրոցին, ասեմ ես, գո՛նէ ի փարձու կալեալ զոմանս յաշակերտաց անտի յեկելոց ի վարժարանէս, և յանգործ կացելոց ի Պօլիս, առաքեսջիք աստ և անդ ի վարժապետութիւն մանկանց կարօտելոյ ազգիս. զի որչափ և փոքր կարծիցէք դուք զօգուտն որ անտի, այնչափ մեծ համարիմ ես զայն, առ կորստեամբ ի զուր վատնեալ արծաթոյն : Եւ եթէ դժուարին և անմարթ թուիցի ձեզ այս գործ, գո՛նէ նախահայեաց տեսութեամբ դարման տարջիք ապագայ վնասուց հասարակաց, աճեցուսջիք զթիւ Նորընծայիցդ, օժանդակութեամբ մասամբ ինչ կորուստական արծաթոյն, որպէս զի ժամանակաւ պիտանի լիցին նոքա կարօտելոյ ազգիս : . . .

«« Իսկ եթէ գտանիցին ոմանք յեղբարցս այտի, որոց կարծեցեալ խիստ բարոյականն և ամենափափուկ խիղճ մտացն չկարիցեն միաբանիլ խորհրդոյս, որպէս երբեմն և յայսպիսի ինչ խնդիրս . . . ասեմ ես, ապա ո՞ր թոյլ բարոյականն և ո՞ր ընդարձակ խիղճ մտացն կարիցեն միաբանիլ ընդ այսպիսի մատակարարութիւն միաբանութեանս, որ ամի ամի 55,000 ֆրանք ի ծով ամայէ անհոգութեամբ և անբաւականութեամբ իւրով : . . . Թողից ասել և զմնացելոյ անտի արծաթոյն, զ25,000 ֆրանքէն ծախելոյ ի Տրապիզոն ձեռամբ Հ. Պետրոսի, որ ոչ ըստ այնմ եցոյց նա ցարդ արժանիս ինչ ի գործ յայն հասարակաց ազգիս, սակս անբաւականութեան և անփորձութեան իւրոյ յայն : . . . Տեսեալ իմ երբեմն զանուղղութիւն մատակարարութեանս այսորիկ՝ խորհեցայ և ջանացի դարման տանել վնասուն որչափ հնար էր, ժողով ինչ խնամակալաց կարգել ի քննութիւն ելից և մտից երկուց վարժարանացս, և ի յառաջադիմութիւն նոցին, զոր և առաջարկեցի հանգուցեալ Գեր. Սոմալի, և ոմանց յեղբարցս այտի պաշտօնէից դպրոցացս և վանացս : Հաւանեցաւ հանգուցեալն ա-

ռաջարկութեանս, և աստ կարգել և ի գործ դնել իմ զայն փութով ։ Հաւանեցան ընդ այն և եղբարքս անձինք եօթն ։ Սահմանեցի ես ընդ նոսա քանի մի կարեւոր կանոնս, զոր և հաստատեաց հանգուցեալն, և զոր որոշեցաք մեք ամենեքեան պահել ամենայն պահպանութեամբ ։ Նոյնպէս ընտրեցաւ Նախագահ ժողովոյն նուաստութիւնս հաւանութեամբ հասարակաց և հաստատութեամբ հանգուցելոյն, որպէս և փոխանորդ նախագահին ընտրեցաւ Հ. Ռափայէլ, և քարտուղար ժողովոյն Հ. Գաբրիէլ, և այնպէս ընթացաւ ժողովն այն տարի մի ըստ սահմանեալ կանոնացն. բայց դժբաղդութեամբ ոչ հանապազորդեցաւ գործադրութիւն նորին, գնալով իմ և Հ. Յովհաննու ի Վիեննա՝ և մնալով անդ ամիսս եօթն, ապա ի Լոնտոն և ի Փարիզ, ուր կայաք ամս երկու ։

« Իբրև կոչեցայ ես աստի ի վանս վասն ընտրութեան Նորոգ Աբբայի՝ դէպ եղև խօսել զայսմանէ ընդ ումեք յեղբարցս եկելոց ի Պօլսոյ, չհաճեցաւ նա ընդ ժողովն այն, և մանաւանդ ընդ ընտրութիւն Նախագահի նորին, զոր և գործ անպատշաճ և անմիտ կոչեաց, զի Աբբային միայն պատշաճի պաշտօնն այն, ասաց և ոչ այլոյ ումեք ի Միաբանութենէս ։ Թէպէտ և ասացի ես ցնա զպատճառսն այնորիկ, զժողովելն մեր երբեմն ի Վենետիկ և երբեմն ի Պատաւիոն, ի դպրոցս, և զդժուարութիւն գնալոյ անդ հանգուցելոյն սակս հիւանդութեան իւրոյ, և թէ՝ առանց գիտութեան և հաւանութեան նորին ոչինչ որոշէր ժողովն, սակայն ի վերայ այսր ամենայնի՝ անմտութեան ետ նա զընտրութիւն այն, և զայս յանդիման ինձ ասաց, թէպէտ և աստիճան իմ և նորայն կարի յոյժ զանազան էր յայնժամ, եթէ՛ հասակաւ և կարգաւ, եթէ փորձիւ և արժանեօք ի գործս վարժարանին ։

« Թէպէտ և չզարմացայ ես ընդ այն, ճանաչելով զատխորութիւն Ասիացւոց՝ առ որս պատիւն ոչ յարժանեացն չափի, այլ յանուանէ իշխանութեան ճանաչի, . . . այլ ցաւեցայ և ցաւիմ տակաւին, տեսեալ զի սնեալն յԵւրոպա Ասիական վարի սովորութեամբ, և զի չտեսանելով ցարդ իմաստութիւն ինչ ի պատշաճ կարծեցեալ կարգաւորութենէ անտի Նախա-

գահութեան իւրոյ, . . . նախանձայոյզ գոլով միայն պատուոյ իշխանութեան, և ոչ յառաջադիմութեան վարժարանացս ։

« Թողից առնել աստ քննութիւն զօգտից և զվնասուց որ ի նախագահութենէ այլոյ և Աբբային . . . դարձայց վերստին ի հարցուած բանից կարեւորաց, ի խելամտութիւն հասարակաց ։

« Արդ հարցանեմ ես դարձեալ, եթէ խիղճ մտաց միաբանութեանս չստգտանիցէ զնա ընդ այսպիսի մատակարարութիւն իւր ի գործս այս աղքատաց ազգիս, չկարծիցէ՞ նա՝ թէ յաւուր միում լիցի ընդ այս ուստեք քննութիւն, և պահանջիցի ի նմանէ, գոնէ ընդհանուր ինչ հաշիւ, ի հանդարտութիւն սրտի կտակակատարի հանգուցեալ Բարերարին, որ ի խնդիր է այժմ եւեթ մխիթարութեան, որում և իրաւունս տան ամենքեան ։ . . .

« Եւ արդ՝ եթէ հարցանիցէ զնա Պետութիւնս, թէ քսանամեայ շահիւք դրամագլխոյ հրիտակին, որ իբրեւ երկու միլիոն ֆրանք լինի, քանի՞ մանկունս հրահանգեաց և մարզեաց նա ի գիտութիւնս, և թէ զի՞նչ ինչ գիտութիւն ուսոյց նա նոցին . . . և յորժամ պատասխանի տայցէ նմա միաբանութիւնս, թէ այնչափ գումար արծաթով քառասուն մանկունս մարզեաց ի կարեւոր սկզբունս գիտութեանց, ո՞չ հիացի արդեօք Պետութիւնս, և չկասկածիցէ՞ ընդ մատակարարութիւն միաբանութեանս որ ի գործ յայս սրբազան, իրաւանց աղքատաց ազգիս . . . և չլինիցի՞ զամագիտ կտակակատարն յայս պատասխանին միաբանութեանս, բողոքելով առ Պետութիւնս խնամակալ լինել այսուհետեւ իրաւանց աղքատաց ազգիս (*), և հրատարակելով զայն ի մէջ օտար ազգաց և յազգի մերում, յաղարտել զհամբաւ միաբանութեանս, յոր և սկսեալ

(*) Թէպէտ և բողոքէ երբեմն Յովհաննէս Մուրատ առ Աւստրիոյ տէրութիւն, այլ այն ի վրէժխնդրութիւն միաբանութեան, չմուծանելոյ նորա և զանուն իւր ի մուրհակս տացուածոց Մ. վարժարանին, ըստ դաշնադրութեան. Թէպէտ և չարժի նա այս ի խնդրոյ Հ. Սարգսի պաշտպանել զվարժարան հօր իւրոյ ի բռնութենէ Պապին, և արկանել զայն ընդ խնամակալութեամբ Գաղղիոյ տէրութեան, այլ յետսամիտ խորհրդով և տնկակից խորամանգութեամբ զնորին հակառակն առնէ, զայն հռովմայ պապին մատնէ ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

է արդէն նուազել վարկին միաբանութեանս, և այս այնչափ մինչեւ համարձակին ոմանք անտի յանդիման մեզ ասել, թէ ազգս չսպասէ ի միաբանութենէս այլ գիտութիւն, բաց ի հայերէն լեզուէն, և յայն եւս ընտրութիւն առնեն, ընդ հայերէն Վ. Հ. Արսէնի միայն հաճին (*), և հաստատութիւն այսմ ահա յանցեալ ամեան հասին այսր ի Պօլսոյ մանկունք յազգէս հնդետասան, ի մարզս գիտութեանց, հանդերձ երկու վերակացուովք, որք և զետեղեցին զմանկունս ի զանազան դպրոցս Գաղղիացւոց :

« Թէպէտ և բազում աշխատութեամբ, և յինչ ինչ անկիւնս քաղաքիս, և ի խնամս անծանօթ արանց յանձնելով զնոսին, այլ ոչ կամեցան և ոչ զմին ի նոցանէ ի վարժարանս մեր դնել, թէ և ընդ գիրս տեղւոյս և ընդ շինուած պալատանս յոյժ յոյժ հաճեցան : Վասն զի չունին նոքա վարկ զմէնջ, իբրեւ փորձ ի դաստիարակութիւն մանկանց, և իբրեւ բաւական մարզել զնոսա ի գիտութիւնս. և ընդ այս խտրութիւն նոցա որ ի մէնջ, զարմացան և ոմանք ի Գաղղիացւոց աստի և ի ծանօթից մերոց. . . քանզի Ստեփան Պէյն համարձակ զկարծիս իւր յանդիման Վեհիդ ասաց աստ ի Փարիզ. « Զի « եթէ դուք գիտութեամբ Ձերով կամիք վարել զդպրոցդ, « բարւոք առնէք զայդ ի Պօլիս տարեալ հաստատել : »

« Ահա այսպիսի համարումն ունի վարժարան մեր աստ, առ օտարս և առ ազգայինս, զորոյ ընդհակառակն կարծէաք մեք. քանզի ակն ունէաք օժանդակութիւն ինչ մեծի ծախուցս ի թոշակաւոր մանկանց անտի գտանել, այլ և բազում

(*) Այլ երանի՜ թէ Հ. Արսէն ի կարեւորագոյնն և յօգտակարագոյնն պարապեալ էր, ի քերականս և ի բառգիրս Յոյն, Լատին, Իտալ և Գաղղ լեզուաց, և ի գրականութիւն նոցին, որք ի նպաստ ուսումնասէր մանկանց և մատենագիր արանց ազգիս Հայոց :

Այլ աւա՜ղ, անտի փառասիրութիւն յաղթէ ճշմարիտ ազգասիրութեան . . . զի զի՜նչ փառք իցեն նմա, և զի՜նչ օգուտ ազգիս ի բանաստեղծութենէ հայկայ, և ի թարգմանութենէ գործոց Հոմերի, Վիրգիլեայ, Միլտոնի, Դիմոսթենեայ, Կիկերոնի, Մասիլիոնի, և Պոսուէի, անծանօթ գոլով ազգիս գրականութեան նոցին, ծանօթութեամբ նորին կարիցէ նա առնուլ ճաշակ և օգուտ ինչ ի գործոց անտի :

Երանի՜ թէ Գեր. Եդուարդ չէր ծախեալ զանգին ժամանակ իւր յանդիտան և և ի վնասակար խնդիրս խծբծաց, յառաւել իմն կամակոր իշխանութիւն զահին Հռովմայ, և յանհնարին զայթագղութիւն լուսաւորչեայցս

(Ծանօթութիւն Հեղինակին :)

մխիթարութեան հանդիպել՝ յընտանեկան սիրոյ և ի ցանկալի
միաբանութենէ ազգայնոցս . . . այլ վրիպեցաք յակնկալու-
թենէ աստի յայսմանէ, այլ և մեղադրանաց և նախա-
տանաց արժանի եղաք : . . . Վասն որոյ արդարանայ ասա-
ցեալն ուրումն ի մէնջ, Հ. Եսայեայ Մզրաքեան, թէ « Հինգ
« հարիւր հազար ֆրանք ծախեցաք մեք ի Փարիզ, առ ի խայ-
« տառակել զմեզ յաշխարհի (*) : »

« Եւ ահա այսոքիկ են, Գերապայծառ Տէր, պատճառք
ցաւոց սրտիս և լքման ձեռացս և անդադար բողոքանացս, զոր
մերթ չիմանալոյն արարեալ՝ և մերթ արհամարհեալ, չարա-
րէք բանիցս պատասխանի, և զոր արարէք այս վերջին նամա-
կաւդ, զանգատանաց է այն, և սնոտի մխիթարութեան,
զանգատելովդ այսպէս, թէ » Ընդէ՞ր ի վերայ ամենայն ջանիցդ
« և հնարից դարձեալ դժբաղդ գտանիք, վրիպեալք իւրան-
« կութենէդ, որ էր զիւրել տեսչութեանս խմում յանսայ-
« թաք ուղղութիւն իրաց վարժարանիս : Յայն սակս յղեցէք
« զՎ. Հ. Գաբրիէլ : »

« Առ որս այս է իմ պատասխանին, թէ ազգարարութիւն
բանից թղթոյս, և բողոքն իմ առ Ձեզ արդ, ոչ էին երբէք
զպակասութենէ անձանց պաշտօնէից վարժարանիս, այլ զթե-
րութենէ վարչութեան սորին, վասն որոյ և անուղղութիւն ի մա-
տակարարութեան իրաւանց աշքատաց ազգիս : Ապա չէր հարկ
փոփոխութիւն պաշտօնէից առնել ի վարժարանիս, այլ պարտ
էր ուղղութիւն առնել ի վարչութեան սորին և ի մատակա-
րարութեանն, առ ի հասանել նպատակին, լուսաւորել զազգս
առհասարակ ըստ գիտաւորութեան հանգուցեալ Բարերարին,
և թէ ընդ գալուստն այսր Վ. Հ. Գաբրիէլի, թէպէտ և ու-
րախ եմ, որպէս և յառաջն ասացի, բայց ցաւիմ, զի թողեալ
նորա այդր զընտանի մշակութիւն այգւոյ իւրոյ, եկն այսր
աշխատել յայգւոջ այլոց, զոր վարձկանօք մարթ էր մշակել,

(*) Իցէ՛ թէ արդարանայր և ի գործ իւր, ի պաշտօն գործադրութեան Մ. վար-
ժարանին, և չգնայր ի Հնդիկս ի խնդիր կարծեցեալ ժառանգութեան, և մեռա-
նէր անդ անյուսութեամբ :

(Ծանօթութիւն Հեղինակին :)

և զայն առաւել շահեկանութեամբ և մեծաւ վարկիւ, զոր ոչ սակաւ շահ ազգիս գրեմ, և ոչ փոքր պատիւ միաբանութեանս համարիմ ։ . . .

« Այլ թէ իցէ այլ պատճառ փոփոխութեան պաշտօնէից վարժարանիս, զոր ես ոչ գիտեմ, և ոչ իսկ ցանկամ գիտել, չյուսալով և անտի ինչ մխիթարութիւն սրտիս . . . և ապա ի դէպ է ինձ արդ՝ անմխիթար սրտիւ և իրաւամբք գանգատել, թէ ընդէ՞ր ի վերայ ամենայն ջանիցս իմոց և հնարիցս դարձեալ դժբաղդ գտանիմ, վրիպեալ ի ցանկութենէ իմմէ, որ էր խելամուտ առնել զձեզ թէ յորո՞չմ իցեն անսայթաք ուղղութիւն իրաց վարժարանիս, և պարտիք և պատիւ միաբանութեանս ի գործ յայս պաշտաման իւրում, յայն սակս իսկ այսչափ ջանիցս մինչեւ ցարդ առ Ձեզ գրութիւնս . . . և թէ ընդէ՞ր ոչ ոք ի Ձէնջ ընդ վայրապար ծախսն, որ ի վնաս իրաւանց աղքատաց ազգիս ցաւեցաւ և ցաւի ցարդ . . . և զի ոչինչ փոյթ է ումեք ի ձէնջ զյառաջադիմութենէ վարժարանիս . . . ըղպատճառսն պարտ է աստանօր անաչառութեամբ քննել ։

« Վասն զի ոչ ոք ի Ձէնջ գիտէ, թէ քանի՛ վշտօք, որպիսի՛ տառապանօք և ոգւով չափ աշխատութեամբ ի ձեռս բերեալ իցեն իրաւունքն աղքատաց ազգիս . . . վասն այսորիկ ոչ ինչ ցաւ է ումեք ի Ձէնջ ընդ վնաս և ընդ կորուստ նոցին ։ . . .

« Թէրեւս ծանր և խիստ թուիցին բանքս լսելեաց ոմանց այդր, և մանաւանդ ուրումն այտի, որ այնչափ նախանձայոյզ և ցաւած սրտիւ կերպարանէ զինքն ընդ վայրապար և ընդ կարեւոր իսկ ծախս վարժարանիս, մինչեւ զբուն վաստակաւորն խաբեբայ և գող անուանէ, և մինչեւ քուն անգամ յաչաց իւրոց հատանել (ժամս եօթն և եթ ննջել.) և ի հասարակաց զգայութենէն թափուր գոլով ամենեւին, միայն ի սէր տեսութեան և շօշափման ոսկեդրամոյ զակատեալ, կառօք և երիվարօք աստ և անդ թափառել ։ . . Երանի՛ կալուածոցն դպրոցիս, զի այսպիսի խնամակալ ունի ։ . . .

« Չկամեցայ ես ի ժամուն յախուռն և անմիտ բանից նորին առնել պատասխանի, թողլով զայն յայլում ժամանակի . յորժամ հանդէս քննութեան իւրաքանչիւր գործոց լիցի,

յայնժամ ցուցից ես, թէ ո՛ իցէ խաբեբայ և գող (*), և ո՛ իբրև զիշամեղու զվաստակս այլոց ուտէ և վաստակօք նորին կառօք և երիվարօք յօրանայ : . . .

« Սակայն ես ոչինչ զարմացայ ընդ յանդուգն և ապաշնորհ գրութիւնն նորա, զմտաւ ածեալ զվարկն գլխոյ նորին որ զինէն երբեմն, և զայն գրով հաստատեալ. հարկաւ և անգամ նորին, ի նոյն տեսութիւն արհամարհութեան առ ընկերն բերի. . . և յիրաւի՝ քանզի յորմէ հետէ այնպիսի վարկ ի գլխոյ նորին ստացայ, և իբրև զստարոտի ոք յաչս նորին համարեցայ, չհաղորդելով ինձ բնաւ զլուրս վանացս :

« Նոյնպէս և անգամն այն վարեցաւ ընդ իս, չտալով ինձ բնաւ ինչ տեղեկութիւն զհանգամանաց կալուածոց վարժարանիս, անմասն և անարժան զիս այնմ համարեալ, թէպէտ և միջնորդութեամբ և վկայութեամբ իմով տուաւ նմա պաշտօնն այն, . . . ըստ աշխարհի սովորութեան քաղաքավարեալ նորա, փոխանակ երախտեաց ապերախտիս հատուցեալ երախտաւորին : . . .

« Յիշելով յիշեմ ես արդ զբանս հանգուցեալ Գեր. Սուքիաս Սոմալի, զոր ասաց ինձ երբեմն, յամին 1835, յորժամ դարձայ ես ի Հնդկաց և հանդիպեցայ նմա ի Պատաւիոն :
« Եթէ չէր իմ, ասաց, Աբբայ Միաբանութեան ի ժամա-
« նակիս, չտեսանէիր դու այսօր աստ զվարժարանս այս.
« (զարդիւնս բազմամեայ և ոգւով չափ աշխատութեանս.)
« քանզի հակառակ էին այսմ, գրեթէ ամենեքին, վասն որոյ
« ե՛րթ աղօթս արա վասն իմ : »

« Եւ հաստատութիւն այս բանիս ճշմարտութեան, ունէի և ունիմ ես ի ձեռինս զհաւաստին, հաստատեալ ի միաբանութենէս, որ և մնացէ յիշատակ յազգի մերում յաւիտեան, ի պատիւ և ի նախատինս իւրաքանչիւր : . . .

« Իսկ թէ ընդէ՞ր ոչինչ փոյթ ունէք ի Ջէնջ գյառաջադիմութենէ վարժարանիս, քննեցից և զորին պատճառն նոյնպէս անաչառութեամբ. վասն զի անփորձ են այնմ. և յիրա-

(*) Ցուցանէ զայն Հ. Անանիա Ճելալեան ի տեսանել զխառնիխուռն հաշիւն գործակալութեան Հ. Նաւյեայ, որում և վկայէ Գեր. Եդուարդ ի թուղթն իւր.
(Ծանօթութիւն Հեղինակին.)

ւի քանզի յո՞ր և ի քա՞նի՞ վարժարանս իցեն յածեալք, և զո՞ր կանոնս և զկարգս նոցին քննեալ, և կամ զթերութիւնն որ ի նոսին և զյառաջադիմութիւն նոցին իմացեալ. այլ ի վանս սրբոյն Ղազարու, իբրև ի կղզւոջ երանելեաց բնակեալք… և իբրև Պղատոնք և Արիստոտէլք ոմանք դաս աշակերտաց իւրեանց տուեալ, գովին ի նոցանէ, առանց բանից ինչ քննութեան, վարդապետին գոլով ասացեալն… և յորժամ յիշատակութիւն ինչ զանուանէ Միաբանութեանս ի մատենի ուրուք Եւրոպացւոց տեսեալ՝ յայնժամ ի կարգս համալսարանաց Եւրոպայ զվանս իւրեանց դասեն (*), և եթէ ոմանք ի նոցանէ մուրացածոյ բանիւք տետրակ ինչ յօրինեալ իցեն, ի թիւս քաջ մատենագրաց Եւրոպացւոց զանձինս համարին։ Եւ կամ ո՞ւր և ընդ որո՞վ վարչութեամբ իցեն քաղաքավարեալ. ի Պօլիս, ուր ազատութիւն կարծեաց և տրամաբանութիւն մնաց արգելեալ են իսպառ, միայն ի խծբիծս արարողութեան և ի խնդիրս սնոտի բանից շաղեալ, և կամ ի հոգս պիտոյից իւրեանց պատողեալ՝ անփոյթ լինին զհոգոց հասարակաց, և մոռանան եւս զսակաւիկ ինչ զուսեալսն ի վանս… Եւ եթէ ասիցեն ինձ, թէ և դու զի՞նչ գիտես, և թէ ո՞ւր վարժ և փորձ եղեր վարչութեան վարժարանի, ասեմ ես, զի քըն-

(*) Մի զարմասցին աստանօր վերծանողք եւ ստգտանիցեն արդեօք զՀ. Սարգիս ընդ համարձակ և ամաչեցուցիչ բանս նորա որ առ միաբանութիւն իւր… Քանզի տեսեալ նորա զյամառութիւն ինքնահաճութեան ոմանց անտի ի գիտութիւն իւրեանց և ի վարչութիւն վարժարանի, և զանփութութիւն նոցա զառաջադիմութենէ նորին, ուստի ակնունի լուսաւորութեան ազգին, զգաստացուցանէ զմիտս նոցա ի թմբրութենէ և յանփութութենէ անտի… Այլ նոքա ոչ միայն չզգաստանան, այլ և խորհուրդ մտասակար և վրէժխնդրութեան ի միտս իւրեանց յղանան. Փոխադրել խորհին զՄ. վարժարանն ի Հռովմ և հանել զՀայր Սարգիս ի պաշտօնէ անտի տեսչութեան.

Իմացեալ զայս Հ. Սարգսի և հաւատաւոք տեղեկացեալ՝ բողոքէ գրով առ Գեր. Հիւրմիւզ և աղաչէ զնա դադարել անտի, թէպէտ և ուրանայ նա զայն, թէպէտ և զիջանի նա երբեմն ողոք պատասխանեօք և հաւանողական խոստմամբ, սակայն չդադարի նա անտի գործոյ, չարժեալ և թելադրեալ յիւրոցն և յայլոց ոմանց կատարել զկամս իւր մտասակար….

Ողբալից վիճակ միաբանութեան, ունելով այսպիսի Աբբայ և խորհրդականք յեղծումն և ի նախատինս իւր, թէպէտ և տեսանէ նա զայն և ցաւի ընդ այն, այլ ոչ ջանայ զարման տանել այնմ, կաշկանդեալ գոլով կոյր հնազանդութեամբ. «Համաւր կուրութեան չիք բժշկութիւն.»

(Ծանօթութիւն Հեղինակին.)

նեցի ես զանձն իմ և ծանեայ թէ ոչինչ գիտեմ . . . և զի յանփորձ վարչութենէ սատի վարժարանիս, խելամուտ եղէ քաջ, թէ չեմք մեք բաւական ի վարչութիւն վարժարանիս, որ ի շուտաւորութեան ազգի մերոյ առհասարակ հաստատեալ է (*). այլ կարօտիմք մեք իմաստուն առաջնորդի ուրուք Եւրոպացւոյ, առն միոյ փորձի ի վարչութիւն վարժարանի . . . վասն որոյ չամաչեմ ես խոստովանել զտգիտութիւն իմ՝ այլ մանաւանդ պարծիմ ընդ այն, չմեղանչելով ճշմարտութեան և արդարութեան, որք պահանջին ի գործ յայս, ի պաշտօն տեսչութեանս : . . . Այլ ամաչեմ և ցաւիմ ես մեծապէս ընդ յանձնապաստանութիւն այնոցիկ, որք առանց քննութեան, զանձինս առ իմաստունս ունին, և բաւական առ ամենայն ինչ զինքեանս համարին . . . և ցաւիմ ասացի, զի յանձնապաստութիւն նոցա խափան եղեւ ցարդ և լիցի միշտ յառաջադիմութեան վարժարանիս, որով և վնաս կարօտելոյ ազգիս և նախատինք Միաբանութեանս : . . .

«Գիտեմ դարձեալ՝ զի անաչառ այս իմ քննութիւն, թէ և ճշմարտութիւն, ծանր յոյժ և խիստ թուեսցի ոմանց, մա-

(*) Ընդդէմ ինքնահաճ կամաց նոցա որ ի վարչութիւն վարժարանի, զնէ Հայր Սարգիս զխոնարհ խոստովանութիւն տգիտութեան իւրոյ ի պաշտօնն յայն. այլ աղդէ նոցա այս և ոչինչ, որպէս թէ յականջս մեռելոց իցէ խօսեցեալ ...

Ողբալից հանգամանք մարդոյ, յորժամ կրիւք ինքնահաճութեան վարակեալ է նա, կափուցանէ զաչս ի չտեսանել զթերութիւն իւր, և խնու զականջս ի չլսել զճշմարտութիւն, զի ծանր են նմա այնք և անախորժ, և ատելի է նա որ յանդիմանն առնէ նմա զայնս ...

Աստանօր ի դէպ համարիմք քննել զպատճառ այսր ախտի տիրելոյ միաբանութեան Վեննեկոյ. Առաջին է, առանձնութիւն նորա ի վանս իբրեւ յանապատի բնակեալ և անհաղորդ յեւրոպացի գիտնոց և իմաստնոց, և անծանօթ զրոց նոցա, թէպէտ զատանին այնք ի զրանոց նորա ... թէպէտ և հարիւր յիսուն ամք բնակութիւն նորա է յեւրոպայ. Երկրորդ՝ գիտութիւնն նորա ի լեզուն հայկական, թէպէտ և ոչ ամենեքեան կարեն պարծիլ յայն, սակայն այնու հասարակ հպարտանան և արհամարհեն զայլս .... «Գիտութիւն հպարտացուցանէ.» Այլ զմբախտութեամբ ոչ զոյ սէր որ շինէ, ըստ բանից առաքելոյն ....

Ահա այսոքիկ են պատճառք ինքնահաճ կամաց նորա որ ի վարչութիւն վարժարանի, և արհամարհութեան կարծեաց Հ. Սարգսի, խոնարհ խոստովանութեան նորա յայն առեմ. թողումք առել զանձնասիրութենէ, զփառասիրութենէ և զվատութենէ ոմանց ի միաբանութեան Մխիթարայ, որ արգել և խափան եղեն լուսաւորութեան ազգին հայոց, ըստ զիտաւորութեան հանգուցեալ Սամուէլ Մուրատի, և ըստ ազատ չափ աշխատութեան Հ. Սարգսի Թէոդորեան.

(Ծանօթութիւն հեղինակին.)

նաւանդ նոցա որոց հզօր է անձնասիրութիւնն . . . այլ չէ ինձ փոյթ . զի եթէ հզօր իցէ անձնասիրութիւն նոցա, հզօրագոյն եւս գիտեմ զճշմարտութիւնն, յորմէ ոչ ստերիւրեցայց ես երբէք . զի եթէ՛ կանուխ և թէ՛ անագան՝ յաղթող լիցի նա և մխիթարեսցէ զիս յաւուր միում ի կենդանութեանս : . . .

« Ասիցեն արդեօք, թէ որչափ ինչ ինքեանք գիտեն, ուսուսցեն զայն մանկանց վարժարանիս, և այն շատ է նոցա : Ասեմ ես, եթէ ծախիւք միաբանութեանս հաստատեալ էր վարժարանս, և եթէ այս ի Պօլիս էր, կարեն թերեւս զայս ասել : Բայց քանզի ծախիւք այլոց է, և այսպիսի ծախիւք, և ի Փարիզ, ապա չունին իրաւունս զայս ասել . և զի գիտասցեն եւս թէ տեսարանն իւրեանց ոչ ի սրահի վանացս է, ուր սակաւ և ներողամիտ են քննիչքն, այլ ի հրապարակի քաղաքիս, ուր բազում և խիստ են քննիչքն : . . .

« Ասիցեն ի վախճանի . Ապա զի՞նչ լիցի պաշտօն անձանց միաբանութեան ի վարժարանիս . և զի՞նչ իշխանութիւն նոցա աստ : Ասեմ ես, թէ զպաշտօնէ և զսահմանէ իշխանութեան Տեսչի վարժարանիս որպէս և զհանգամանաց նորին յիշատակեալ եմ ի նախընթաց թուղթն իմ ըստ բաւականին, վասն որոյ և աւելորդ համարիմ երկրորդել զայն իսմին :

« Իսկ պաշտօն այլ անձանց միաբանութեանս ի վարժարանիս, այս և այսպիսի լիցի, ըստ ճանաչմանս իմում և ըստ բազմամեայ փորձոյս : Նախ՝ պարտ է նոցա խոնարհութեամբ և ջանիւք ուսանել զայն ամենայն գիտութիւնս ի Գաղղիացի վարժապետաց աստի, զոր ինչ ուսուցանելոց են նոքա կարգաւ աշակերտաց վարժարանիս, և ապա երկրորդել զայն օր ըստ օրէ աշակերտացն, մեկնելով նոցա զիմաստս բանից և զնշանակութիւնս բառից ի մեր յատուկ ոճ և ի լեզուս, որպէս զի քաջիկ խելամուտ լիցին նոցին աշակերտքն, և որպէս զի կարող լիցին նոքա հաղորդել զայն ապա այլոց, ազգայնոց իւրեանց ի հայրենիս, որով և տարածեսցի լոյս գիտութեան ի մէջ ազգիս առհասարակ, որչափ մարթ իցէ միանգամայն և պատրաստեսցին նոքա այսր թարգմանել և յօրինել ի գրոց և յաշխարհիկ մեր բարբառ զուսումնական

գրեանս ի պէտս դպրոցաց որք յամենայն տեղիս, և տպագրեսցին գրեանքն այնք ծախիւք վարժարանիս, և վաճառեսցին ի հաշիւ սորին, մինչև ի ձեռս բերցին ծախք նոցին, ապա վաճառեսցին ի հաշիւ միաբանութեանս, ի վարձ վաստակաւորաց իւրոյն ։ . . .

“ Ահա պաշտօն այլ անձանց միաբանութեանս ի վարժարանիս և արդիւնք նոցին, որ ոչ փոքր օգուտ լիցի ազգիս, և ոչ սակաւ փառս յաւելցի միաբանութեանս, բայց ըստ ճշմարիտ ասիցն, թէ “ Նախ պարտ է ուսանել և ապա ու-
“ սուցանել ։ ” Եւ թէ՝ “ Նախ պարտ է սերմանել և ապա
“ հնձել ։ ”

“ Այլ թէ զո՞րպիսի անձինս պարտ իցէ Միաբանութեանս առաքել այսր ի գործ պաշտամանս այսորիկ, ասացից և զայն ։ Պարտ է միաբանութեանս զայնպիսի անձինս առաքել, որք կարողութիւն և կամս ունիցին ուսանել, և երկայնմտութիւն ուսուցանելոյ ։ Իսկ զորս համարի թէ բաւական գիտութիւն ունին ուսուցանելոյ, առաքեսցէ ի Պօլիս, որպէս զի պատրաստեսցեն նոքա անդ մանկունս առաքելոյ ի դպրոցս, և որպէս զի մի՛ այսուհետև անկիրթ և անծանօթ սկզբանց գիտութեան մանկունք եկեսցեն այսր, և մի վայրապար ծախք լիցին վասն նոցա ի վնաս աղքատաց ազգիս, և ի նախատինս միաբանութեանս, որպէս և եղեն ցարդ ։ . . .

“ Եւ արդ՝ եթէ հաւանեսցի միաբանութիւնս այս առաջարկութեանս, և հաճեսցի այսպէս կարգաւորել զվարժարանս, այնուհետև ոչ բարեկամք և ոչ թշնամիք իւր իսկ քննիչ լիցին մատակարարութեան իւրոյ որ ի գործ յայս վարժարանիս, և մեղադրիցեն զնա թէ ընդէ՞ր աստ ի Փարիզ այսչափ ծանր ծախիւք հաստատեաց նա զվարժարանս, տեսանելով զարդիւնս նորին, զոր չէր մարթ յայլ ուրեք ունել, և ոչ ազգայինքս եւս արհամարհեսցեն զվարժարան մեր, զետեղելով զմանկունս իւրեանց ի դպրոցս Գաղղիացւոց, որ արդարեւ ոչ սակաւ նախատինք են մեզ այսօր, եթէ ունիմք զգացողութիւն, տեսանելով նոցա զվարժարան մեր աստ ոչինչ ընդհատ ի վարժարանաց Գաղղիացւոց, թէ՛ զանազան

գիտութեամբք, և թէ՛ Գաղղիացի քաջ վարժապետօք, և առաւել ևս, ուսմամբ ընիկ բարբառոյ իւրեանց, և հայրօրինակ խնամակալութեամբ ձերով, զորս չկարեն նոքա յայլ ուրեք և յօտարաց գտանել, որով և նպաստ մեծ լինի աղքատաց ազգիս, թօշակօք նոցին, և որով յաւելցին արդիւնք և փառք միաբանութեանս, միաբանելով զբաժանեալսն ի միմեանց ։

“ Ահա այսու խորհրդով և այսպիսի ակնկալութեամբ հաստատեցաւ վարժարանս այս ի Փարիզ, այլ դժբաղդութեամբս խորհուրդն այն և ակնկալութիւնն ի դերեւ ելին ցարդ, սակս վերոյիշեալ խափանարար պատճառաց, յառաջ եկելոց յանձնաւէր կամաց . . . և ահա հատուցի զամենայն ըստ խոստմանս իմում, խելամուտ արարի զՎեհդ, թէ յորում իցեն անսայթաք ուղղութիւն իրաց վարժարանիս, և պարտիք և պատիւ Միաբանութեանս, որ ի գործ յայս պաշտաման իւրում, ընդարձակ, մեկն, և անաչառ բանիւք, բռնադատեալ յարգարութենէն և ի սիրոյ ազգիս և Միաբանութեանս ։ . . . Արնամ արդ պատասխանւոյ և որոշ պատասխանւոյ ի Վեհէդ այտի, այո՛ և կամ ոչ, բանից առաջարկութեանս, որով և դադարեսցին այսուհետեւ կամ իրաւացի դանգատանքս իմ որ զՁէնջ անդադար, և կամ ընդունայն գրութիւնս որ զայսմանէ խոպառ ։

“ Թէպէտ և ոչ էին ինձ կամք զայս թուղթս այժմ և այսպէս գրել, այլ կամէի տակաւին սպասել՝ մինչեւ տեսութեան մտացս, և բանիցս ճշմարտութեան, արդիւնք իրացն ինքնին վկայէին, որպէս և ի նախընթաց թուղթն իմ համառօտ ինձ ակնարկեցի, և որպէս հաւանեալս եմ զի վկայեսցեն, հայեցեալ ի հանդամանս իրացս և ի վիճակն Եւրոպիոյ ։ Բայց քանզի ոչ միայն չկամեցայք Դուք իրաւունս տալ արդարացի դանգատանացս, այլ և դանգատիք և ցաւիք ևս ընդ այն, վասն որոյ հարկաւորեցայ ես կանխել բերել ի գրութիւնս, թէպէտ և չտեսից և աստ ևս ինչ մխիթարութիւն. չա՛տ է զի չպակասեցայ ես ցարդ լնուլ զպարտս իմ և զվերջինն արդեօք որ ընդ այս ։ . . .

« Չունելով այլ ինչ կարեւոր ի ժամուս, բայց ի սիրոյ և ի յարգանաց ողջունելս առ համօրէն Վ. Հարս և Պատուական Եղբարս, և բայց յառ Աստուած մաղթանաց, որ ի մուտս նորոգ տարւոյն, մաղթելով ինմանէ քաջողջութիւն և երկարութիւն կենաց Հօրդ հասարակաց, և յաջողութիւն ամենայն իրաց միաբանութեանս, և որով

« Մնամ միշտ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի փարիզ. 20 դեկտեմ. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՐԵԱՆ. »

Առաքէ Հ. Սարգիս ընդ վերոյիշեալ Թղթոյ, և զտարեկան հաշիւ ծախուց վարժարանին առ Գեր. Հիւրմիւզ, հանդերձ առանձին գրով և կարեւոր քննութեամբ, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Ահաւասիկ առաքեմ Վեհիդ և զայս ամի տարեկան հաշիւ ծախուց վարժարանիս տուեալ ինձ ի գործակալէն ի Հ. Յովհաննիսէ, հանդերձ հաւաստեօք նորին, զորոյ արդ զհամառօտ պատկերն ծրարեալ ի սմին առաքեմ Ձեզ ի քննութիւն և ի խելամտութիւն հանգամանաց վարժարանիս:

« Ոչ կամիմ ես առնել ընդ այս քննութիւն ի մասնաւորի, որպէս և ոչ կամեցայ առնել զայն զհաշուէն Նախընթաց ամաց. այլ միայն՝ որպէս արարի երբեմն ի Թուղթս իմ քննութիւն ինչ ընդհանրականապէս, առնեմ զնոյն այժմ ի սմին նոյնպէս. Թէ յամս երկուս և կէս ծախեալ են ի վարժարանիս 200,000 ֆրանք, վասն ուսմանց 27 եւեթ մանկանց (*)

(*) Ի տարապայման ծախուց սատի, և ի լռութենէ Հ. Սարգսի, յայտնապէս իմանի զանգատ նորա որ զմատակարարութենէ Հ. Յովհաննու Սուրկունեան.

կարժեցեալ աղքատաց ազգիս որ ի Պօլսոյ, և թէ՝ ուսմունք սոցա աստ ի Փարիզ, ոչինչ ընդհատ են յուսմանց անտի, որ երբեմն ի Պատաւիոն. . . միայն զանազանութիւնն է ի տեղիս և ի ծախս նոցին, և ի պատասխանատուութիւն մեր աշխարհի. . . Թողի՛ց քննել և աստ գխղճէ մտաց, որ ըստ չափու ճանաչման և ըստ փորձոյ է իւրաքանչիւր ի մէնջ : . . . Ապա քննեսցէ և արասցէ ամենայն ոք որպէս և գիտէ, զի ես ըզպարտս իմ լիով հատուցի, խելամուտ առնելով զՁեզ բազում անգամ թէ զի՛նչ են կամք հանգուցեալ Բարերարին, ղուաաւորրութիւն հաւմօրէն ազգիս, և թէ յորո՞ւմ իցեն պարտիք և պատիւ Միաբանութեանս ի գործ յայս վարժարանիս, յողղիղ մատակարարութիւն. զորմէ գրեցի ես ձիգ և համարձակ, և որում մնամ որոշ պատասխանւոյ : . . . Ապա աւելորդ համարիմ ծանուցանել, թէ քանի՛ գումար արծաթոյ պէտս ունի վարժարանս այժմիկ, զի իմանայք դուք զայն ի տուեալ հաշուէն, և ի մնացեալ պարտուցն, այլ և յօրըստօրէական ծախուց վարժարանիս ։

« Մնամ

« Արհիապատուութեան Ձիրում

« Ի Փարիզ. 21 դեկտ. 1848.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Գ. Հիւրմիւզի առ Հ. Ս. յարդարութիւն անձին ։

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջոյն.

« Զթուղթ Վերապատուութեանդ գրեալն ի 21 դեկտեմբերի անցելոյն թէպէտ և ընկալայ ըստ ժամանակին

ապա չմնայր ընաւ տեղի Հ. Գաբրիէլի Այվազեան զովելոյ զՀ. Յովհաննէս ի մատակարարութիւն իւր անդ, և ստգտանել զՀ. Սարգիս ի լաւութիւն յայն. . . . Տես և յէջ սորին 360 ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

ի սկզբն ամսոյս, բայց հուպ ընդ հուպ հիւանդութիւն հասեալ ի վերայ՝ արկ զիս անզգայ յանկողին, և չեթող ինձ պարապ խորհելոյ ի պատասխանի նորուն: և արդ թօթափեալ զանկողին՝ ըստ կազդուրել տակաւ առողջութեանս ի քնին առեալ զգրեալսդ և ի ժողով խնամակալաց հանեալ՝ փութացայց տալ զպատասխանին որպէս արժան և օգտակար թուեսցի ժողովոյս: Նմին իրի հարկ համարեցայ զերկտողս զայս գրել արդ, մինչև ժամ առից պատրաստել զպատասխանին. քանզի և տկարութիւնս դեռ ևս, և յաճախաւոր գործք միաբանութիւնս չներեն ինձ ըստ ամենայն ցանկութեան սըրտիս փութալ ի նոյն:

« Զայս ևս եթ առ տեղեաւս պատշաճ համարիմ ծանուցանել, զի ոչ որպէս կարծէ Վերապատուութիւնդ՝ օտարոտի համարելով զՁեզ չհաղորդիցեմ զվիճակ վանացս. զի թէ զթուղթս իմ յակն արկանիցէք զգրեալսն յերկուց և աւելի ամաց հետէ՝ տեսանիցէք գրեալ ի նոսա զամենայն կարեւոր և զվանական լուրս: Բայց յորմէ հետէ ստգտանաց միայն դառն թուղթս սկսայ առնուլ, չկարէի հարկաւ զարտաքնոց լրոց առնել խօսս. և զի յաճախագոյն ընկալեալ թուղթս յայլմէ՝ ի տալ նմա զպատասխանին՝ առ նա և զլուրսն գրէի, համարելով զի և վերապատուութիւնդ ընթեռնուցու, որպէս և ընթերցեալ իսկ է:

« Զայս համառօտիւ ծանուցեալ՝ աւարտեմ զթուղթս սիրալիր ողջունիւ համօրէն Հարցս վանականաց և Պատուական Եղբարց, և փոխարէն առ Աստուած մաղթանացդ վասն երկարութեան կենացս՝ շնորհակալու սրտիւ մաղթեմ և ես ի Տեառնէ, բազմապատիկ յաւելուածով շնորհել զնոյն Վերապատուութեանդ՝ յօգուտ միաբանութեանս և յուրախութիւն ինձ, որ եմ

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 31 յունվար. 1849.

« Ն. Տ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

ԳԼՈՒԽ ԻԴ.

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ խնամակալաց ժողովոյն ի վանս. — Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, իբրեւ նախագահի խնամակալաց ժողովոյն.

Առեալ Գեր. Հիւրմիւզի զվերոյիշեալ Թուղթն առաջարկութեան Հ. Սարգսի՝ տագնապի յոյժ, և չգիտէ զի՞նչ առնել նմին պատասխանի. վասն որոյ յապաղէ զայն ամիսս ինչ. ապա ուր ուրեմն առնէ պատասխանի ինչ ինչ բանից ի դիմաց խնամակալաց ժողովոյն, թէպէտ և այն թելադրութեամբ իւրով, և ինչ ինչ ի դիմաց իւրոց առանձին, և այն ամենայն՝ իբրեւ լուծումն երկմտութեան Հ. Սարգսի, որ ընդ ճանաչումն իւրեանց:

Առնէ Հ. Սարգիս պատասխանի նոցա առանձին առանձին, մի առ մի յառաջ բերելով զբանս նոցա. և ցուցանելով զհակասութիւն նոցին հանդերձ հաւաստեօք և ապացուցիւք, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տեառն և Վ. Հարց Յարգոյ խնամակալաց « խնդալ.

« Յետ երից ամսոց գրութեանս իմոյ առ Գերապայծառ Տէր մեր, ապա անագան ուրեմն Յարգոյ ժողովդ խնամակալաց կամեցաւ ինքնին առնել նմին բան առ բան պատասխանի, և լուծանել զերկմտութիւնս իմ. իսկ պատճառ անագանելոյն դժանր խօթութիւն Վեհին մերոյ ասէ:...

« Շնորհ ունիմ կամակար մտաց Յարգոյ ժողովդ, և առաւել եւս ունէի արդեօք, եթէ արդարեւ լուծեալ էր զերկմտութիւնս իմ, և ոչ առաւել եւս հաստատեալ զայնս. Այլ

գոհութիւն անպակաս խնամոց Տեառն մատուցանեմ, որով փարատեցաւ արդ ժանր խորշակին Վեհին մերոյ իսպառ ։

„ — Զբանս կտակի Բարերարին և մեք ընդ Ձեզ իմա-
„ նամք, ասէք, մեր ջան և կամք եղեն միշտ լրումն տալ բա-
„ նից Բարերարին, հասարակաց տալով վայելել զարդիւնս
„ բարերարութեան նորա ։ ” Այսմ ես, թէպէտ և զբան կը-
տակի Բարերարին և դուք ընդ իս իմանայք, վասն զի չկարէ ոք զայն այլազգ իմանալ, բայց լրումն տալ նմին, լուսաւորել զկարօտեալ ազգն մեր առհասարակ, ըստ կամաց Բարերարին, չեղեն ձեզ ցարդ ջան և կամք գործունեայ. և յիրաւի՛ քանզի զո՞ ոք ի ձէնջ առաքեցիք ցարդ արտաքոյ Պօլսոյ, կամ առ ո՞ գրեցիք ի Հայաստան առաքել մանկունս ի վարժարանս Մուրատեան ։ . . .

„ Եթէ զառաքելոյ Հ. Պետրոսի ասիցէք ի Տրապիզոն, ո՞չ ապաքէն յետ բազում բանից իմոց այդր և գրութեանս աստի առ հանգուցեալ Գեր. Սոմալ հայր կարացի հաւանեցուցանել առաքել զնա ի Պօլիս վարժապետ դպրոցին մերոյ անդ, և իբրև լուայ զդժկամակութիւն ոմանց ի մերոցն անդ այլ և այլ կերպարանօք, գրեցի ես յայնժամ առաքել զնա ի Տրապիզոն ի վարժապետել անդ և անտի մանկունս առաքել այսր ի վարժարանս ։ . . .

„ Եւ եթէ զմանկանց Զմիւռնիոյ ասիցէք, այն ըստ դիպաց ինչ եղեւ, յանցանել Հ. Պետրոսի ընդ քաղաքն այն և ի խօսել ընդ ծնողս նոցա ։ Նոյնպէս և զմանկանց որք ի զանազան գաւառաց, զորոց յիշէք ի գրիդ, նոքա ամենեքեան ըստ դիպաց և ինքնեկք են, և ոչ ի ջանէ և ի կամաց ձերոց ։ Որպէս և յայտարարութիւն վարժարանիս ի ջանից իմոց եղեւ երբեմն այդր, և ապա ի գրութենէս աստի հրատարակեցաւ այն ի մէջ ազգիս. ապա չեղեն ձեզ ցարդ ջան և կամք գործունեայ լրումն տալ բանից կտակի Բարերարին ։ . . .

„ — Զգիտեմք, ասէք, ո՞րպէս ծանեաւ Վերապատուու-
„ թիւնդ, թէ աչառութեամբ և խարէութեամբ ընտրեալ են
„ մանկունք վարժարանիդ, և իբրև հաստատ ի կարծիս իւր
„ այնպէս դատի զընտրողսն, և այնու համարի զնոսա անի-

“ րաւ, անխիղճս, արժարոյ Բարերարին խորողս և գրկողս
“ աղքատաց : ” Առ այս տարակոյս ձեր և գայթագղութիւն արդեօք... պարտ է նախ զպատճառ գրութեանս քննել, և ապա յարդեանց իրաց և ի վկայից զկարծիսն իմ հաստատել :

“ Արդ՝ ի 21 Նոյեմբ. 1846 ամի գրեցի ես առ Վեհս այսպէս.

“ — Այլ գիտեմ զի ասիցէք, որպէս և ասացիք ինձ եր-
“ բեմն այդր և այսր, և որպէս լուայ ապա ի Թղթոյ Հ. Անա-
“ նիայի, թէ ծնողք են գործավարութ և ոչ յանձնչանից ումանց,
“ վասն որոյ ի լսել ուստեք, յորո՛ց և իցէ անձանց զկարօ
“ տութիւն իւր և զնեղութիւն մանկանց իւրեանց, խռովին ցա-
“ ւին, և ի տրտունջ զմէնջ բերին, հանդերձ ծանր մեղադրա-
“ նօք :... Ասեմ ընդ այս և ես, եթէ արդարեւ ծնողք ման-
“ կանց դպրոցիս ոչ յանձնչանից ումանց են, ապա զիա՞րդ
“ ի կարգս աղքատաց դասեցիք զնոսա, ձրի ամենեւին դաս-
“ տիարակելով զմանկունս նոցա ի դպրոցիս աղքատաց. և
“ ո՞րպիսի խղճիւ մտաց վկայեցին որք վկայեցին, թէ չկարեն
“ նոքա և ոչ զքառորդ մասն տարեկան ծախուց մանկանց
“ իւրեանց հատուցանել, մանաւանդ թէ և ոմանք ի նոցա-
“ նէ և ոչ զկարեւոր զգեստիկ մանկանց իւրեանց հոգալ...
“ ապա յայտ է թէ աչառութեամբ և խաբէութեամբ ընտրեալ
“ և վկայեալ են նոքա... վասն որոյ և անիրաւութիւն յամե-
“ նայն կողմանց, յափշտակելով սոցա զիրաւունս որբ և աղ-
“ քատ մանկանց կարօտելոյ ազգիս : ”

“ Ահա այս էր պատճառ գրութեանս անդ : Եկից այժմ ի հաստատել զայն յարդեանց և ի վկայից :

“ Զբանս իմ նախ ընդհանուր առնուք, վասն մանկանց դպրոցիս անխտիր ասացեալ, ապա ի մասնաւորսն իջանէք, և այն հաւաստի գիտութեամբ, իբրեւ քաջ տեղեակ վիճակի իւրաքանչիւր ծնողաց մանկանց վարժարանիս : Իջանեմ և ես ընդ Ձեզ այն, չափաւոր գիտութեամբս և հաստատութեամբ վկայից, որք երբեմն այդր և որք այսր այժմ, և ասեմ թէ Փրեանց եղբարբն յորժամ ի դպրոցս առաքեցան՝ հայր նոցա

չէր յողորմ վիճակի, որպէս դուք ասէք. և հաստատութիւն այսմ, ահա չեւ էր անցեալ ամի միոյ, առաքեաց նա անտի զերէց որդին իւր յԵւրոպայ ի զննին քաղաքաց, որ խենէչութեամբ իւրով բաւական արծաթ վատնեաց աստ և անդ, և դարձաւ ի Պօլիս... և ահա վկայ բանիցս Լազարովիչեանք՝ որք այն ինչ թողեալ էին զՊօլիս, և քաջ տեղեակ վիճակի հօր նորա, ազգական գոլով նմա, և որք զարմացեալ և գայթագղեալ էին ընդ այն, թէ զիա՞րդ ձրի ընկալեալ էր մեր զնոսա ի դպրոցս աղքատաց, բաւական ճոխ ճանաչելով զհայր նորա, և որք ընդ այն միանգամ և երկիցս հարցին ցմեզ հանդերձ մեղադրանօք....

« Թողի՛ց ասել զեղծմանէ կանոնին վարժարանացս, յոր պատուիրեալ է չընդունել երկուս եղբարս ձրի ի դպրոցս... և թողի՛ց ասել զմտերիմ բարեկամութենէ Հ. Անանիայի ընդ Փրեանի, և զմխիթարութենէ որ ի տան անտի, ըստ վկայելոյ Փրեան եղբարցն.... Այլ և ի բաց թողից զվկայութիւն մանկանց ոմանց, ասելով թէ ընտրութիւն իւրեանց ընծայիւք եղեալ իցէ, մխիթարելով զՀ. Անանիայ Ճէլալեան.... Թէպէտ և բանից նոցա չէ պարտ յամենայնի հաւատս ընծայել, այլ և ոչ յամենայնի անհաւատ լինել, ճանաչելով զՀ. Անանիայն, և փորձ գոլով բնաւորութեան և ճարտարութեան նորա....

« — Զվիճակ Նրամեանի ինն ամօք յառաջ ճանաչէ վկայն,
« ասէք, այլ արդ խպառ կործանեալ է։ »

« Ասեմ ես, թէ ո՛վ իցէ ինն ամօք յառաջ վկայն այն, ես զնա ոչ ճանաչեմ, այլ զոր ինչ գիտեմ յարդեանց իւրացն գիտեմ, և ի նորոգ վկայից հաստատեմ, զի բաւական կարողութիւն ունի նա. քանզի ծախեաց նա 1850 ֆրանք ձեռամբ Ռուբէն Մանասեանի աստ և ձեռամբ վաճառականի ուրուք ի Մարսիլիա, դարձուցանել յետս զորդին իւր աստի ի Պօլիս. և սակայն վարժարանիս զամս երկու և ոչ 200 ֆրանք կամեցաւ հատուցանել....

« Ահա կործանեալն խպառ ըստ քաջիկ ծանօթութեան ձերոյ, և անծանօթ ինձ բոլորովին....

« Սոյնպէս վկայեն և զվիճակէ միւս Երամեանի, որ առաքեաց ապա զորդին ի վարժարանս միջնորդութեամբ Հ. Աղեքսանդրի, որ և կարծէ թէ կարող է նա հատուցանել զտարեկան ծախս մանկան իւրոյ, այլ մեք ընկալաք ցարդ և ոչինչ անտի :...

« Եւ սոյնպէս վկայեն ծանօթքն զվիճակէ Տուազեանի, և Կիւզալեանի, որք ոչ հատուցանեն ինչ բնաւ վասն տարեկան ծախուց որդւոց իւրեանց աստ: Իսկ Աղնաւուրեան՝ որ չկամի հատուցանել ինչ և ոչ աղքատ համարիլ, առելով այլոց՝ թէ հատուցանէ ինքն ի տարւոջն 5,000 ղուրուշ վասն ծախուց որդւոյ իւրոյ աստ: Եւ գործ Խոռմարեան եղբարց, թէ և յառաջնորդութեան խնդրով, առէք, այլ միջնորդութեամբ Հ. Անանիայի վճարեցաւ, ի դարձին նորա աստի ի Պօլիս ընդ Զմիւռնեայ, այլ թէ զինչ աւարտեալ իցէ նա ընդ Խումարեանի, ես ոչ գիտեմ. այլ այսչափ միայն գիտեմ, զի մինչեւ ցարդ վասն միոյ որդւոյն միայն և վեցամսական չնչին ինչ հատոյց նա:

« Թողից յիշատակել աստ և զայլ մանաւորաց, և զանընդունակ մանկանց որք ի վնաս աղքատաց ազգիս և ի նախատինս վարժարանիս. քանզի չէ Ձեզ հաճոյ յիշատակութիւն այսպիսի բանից: Զայս միայն հարեւանցի իմն առ տեղեաւս ծանուցանեմ, զի ոմանք ի ծնողաց մանկանց վարժարանիս առաքեն երբեմն երբեմն, ոմանք 30, ոմանք 50, և ոմանք 100 ֆրանք վասն առանձին գրեանց և գործեաց ինչ ի գրօսանս մանկանց իւրեանց: Ապա չեն նոքա այնչափ աղքատ, մինչեւ չկարել հատուցանել զքառորդ մասն ծախուց որդւոց իւրեանց:

« Ահա արդիւնք իրաց և հաստատութիւն բանից և կարծեաց իմոց, որ զընտրութենէ մանկանց դպրոցիս:

« Յաւելից ձեզ աստ և զայլ հաստատութիւն և նորոգ վկայք բանիցս ճշմարտութեան:

« Յայսմ ամի եկն այսր ի Պօլսոյ Պարոն Սրապ Մանասեան՝ հանդերձ կնաւ իւրով տեսանել զորդին իւր որ ի դպրոցիս, տեղեկանալ անձամբ անձին զվիճակէ նորին աստ, գործէ այլ

ընդ այլոյ լուեալ էր ի Պօլիս ի բերանոյ և ի գրութենէ հակառակորդաց մերոց աստի և անտի։

« Իբրեւ ետես նա աչօք իւրովք զվիճակ համօրէն մանկանց վարժարանոս և լուաւ ականջօք իւրովք ի բերանոյ նոցա զգոհութիւնն որ ընդ վիճակ իւրեանց, զարմացաւ միանգամայն և զայրացաւ ընդ չարախօսութիւնն հակառակորդացս. և այնչափ՝ մինչեւ չկամեցաւ նա տեսանել անգամ զոմն ի չարախօսացս, որ թէպէտ բարեկամ էր նմա, և մինչեւ բերանով իւրով խոստովանել, թէ պիտոյ է իւրաքանչիւր մանկան վարժարանիս ի տարեկան ծախս 2,000 ֆրանք, հայեցեալ ի հանգամանս կենաց և ուսմանց նորին։ Եւ իբրեւ իմացաւ նա թէ ի մէջ 27 մանկանց վարժարանիս երեք միայն են, որոց ծնողք հատուցանեն զտարեկան ծախս նոցա, և յայն եւս մին միայն 1,000 ֆրանք հատուցանէ, իսկ միւս երկուքն հազիւ 500 ֆրանք, զարմացաւ նա յոյժ, և ասաց թէ ճանաչէ ինքն քաջ, զի գտանին անձինք եօթնիւ չափ ի ծնողս մանկանց վարժարանիս, որք կարող են հատուցանել 2,000 ֆրանք ի տարեկան ծախս մանկանց իւրեանց. իսկ մնացեալքն ոմանք 1,000 ֆրանք, ոմանք 500, և այլ ոմանք 300 ֆրանք կարող են հատուցանել։

« Ասաց նա եւս՝ և իրաւամբք, եթէ ի Պօլիս էին մանկունքս այսոքիկ՝ ծնողք իւրեանց չկերակրէին և չզգեցուցանէին ըզսոսա՝ հանդերձ ծախիւք դպրոցին որ անդ. զնոյն ծախս սոցա հատուսցեն աստ գոնէ։ Իսկ ի լսել նորա՝ թէ հարկաւորիմք մեք յրուել զմանկունս սակս սակաւութեան արծաթոյ՝ պատճառաւ խռովութեան Իտալիոյ և անհնարին հարկաց եղելոց ի վերայ կալուածոց վարժարանին, խռովեցաւ նա և ասաց, թէ անիրաւութիւն մեծ լիցի այնու աղքատաց ազգիս, զըրկելով զնոսա ի կարեւոր ուսմանց, չհատուցանելով հարուստ ծնողաց զծախս մանկանց իւրեանց, և Ձեր անփոյթ գոլով չպահանջել ի նոցանէ զայն։... Խօսեցայց ես, ասաց, ընդ հարուստ ծնողս մանկանց վարժարանիդ, և ստիպեցից զնոսա հատուցանել զծախս մանկանց իւրեանց աստ, առ ի պահել ձեր զդպրոցդ և ի չզրկել զաղքատ մանկունս յիրաւանց

իւրեանց, ի կարեւոր ուսմանց։ Ահա այսպիսի եղեն բանք և դատաստան Պարոն Սրապի որ գհանգամանաց դպրոցիս։

« Իսկ ընդ յապաղումն պարտուց իւրոց, Թոշակի որդւոյ իւրոյ, պատճառ զանփութութիւն մերոյն տայց, մանաւանդ Հ. Անանիայի, զորմէ արար յիշատակութիւն զանգատանօք իմն, որպէս թէ հարցեալ իցէ ցնա թէ զի՞նչ իցեն պարտիք իւր՝ տարեկան ծախք մանկան իւրոյ, և նորա պատասխանեալ իցէ նմա, թէ « Ի մէջ բարեկամաց չէ պարտ ընդ այսպիսի ինչ հոգալ։ »

« Սակայն ի վերայ այսր ամենայն հաստատութեան և վկայութեան կարծեացս որ զընտրութենէ մանկանց փարժարանիս, Յարգոյ ժողովդ խնամակալաց զարմանայ միայն։ « Զարմանամք, ասէք, զի գիտելով Վերապատուութեանդ զան« չահասէր անաչառութիւն մեր, համառօտ ընծայէք բանից « այնոցիկ, զորոց գխորհուրդ թերեւս ճանաչէք իսկ ոչ։ »

« Այլ ես հարցանեմ Ձեզ, թէ ուստի՞ խմացայք դուք զաղ-ճանկութիւն և զհարպառ կործանումն տան նոցա. յարդեանց իրա՞ցն, թէ ի վկայից, անծանօթ գոլով ձեր գործառնութեանց նոցա, և անձանց իսկ գլխովին, բայց ի Նախագահէդ։ . . . Ապա զի՞րդ ծանեայք դուք զվիճակ նոցա։ Իսկ եթէ ի վկայից, ընդէ՞ր վկայքդ այդոքիկ հաւատարիմք իցեն, և վկայքս այսոքիկ անհաւատարիմք։ . . . Եւ թէ անշահասէր անաչառութեա՞մբ իցեն քննութիւն և դատաստան ձեր որ ընդ բանս գրութեան իմոյ, թէ ակնածութեամբ և թեւադրութեամբ իցեն այնք։ . . . Ապա ոչ լուծիք դուք զերկմտութիւնս իմ, այլ առաւել եւս հաստատեցիք զայն։ . . .

« Իսկ յաղագս վկայութեան անձինն այնորիկ որ ի խնդիրս յայս, որ խորհրդով մերով, ասէք, ըստ կանոնաց ժողովոյ խնամակալաց առաքեցաւ յայնժամ ի Պօլիս յընտրութիւն մանկանց, չմտ համարիմ ես զբանս նորին իսկ Հ. Անանիայի, զոր խօսեցաւ և վկայեաց այդր առաջի ոմանց, թէ « անձն այն, Հ. Ստեփան, սակաւ անգամ երեւեցաւ ի դըպ- « րոցն Փէրայ, և ի քննութիւն մանկանց անդ, սակս հեռա- « ւորութեան տեղւոյ նորա և սակս հիւանդութեան իւրոյ։ »

“ — Ցիշիցէ անշուշտ Վերապատուութիւնդ, ասէ, թէ
“ դպրոցին շինուած աւարտեցաւ յամի 1845, և մանկունք
“ ցրուեալք ի գիւղս գիւղս տակաւ ժողովեցան անդ :”

“ Այո՛ յիշեմ ես զայն, այլ և յիշեմ միանգամայն զի շինուածն այն պարտ էր աւարտիլ ի սկիզբն 1844 ամին, ըստ բանից գրութեան Հ. Անանիայի, և այն կիսով չափ պակաս ծախիւք. և զի շինուածն այն չէր պարտ խափան լինել կրթութեան մանկանց, յայլ ուրեք և առժամանակեայ վարձու բնակութեամբ, ըստ բանից խոստման Հ. Անանիայի, և ըստ տարեկան վարձուց Նորա և ծախուց դպրոցին այնորիկ, հաստուցելոց ի վարժարանէս : Եւ զի զմանկունս աղքատաց պարտ էր Նմա Նախակրթել անդ վասն վարժարանիս, որք միշտ ի քաղաքի անդ բնակին, և ոչ զմանկունս նշանաւոր ոմանց, որք ի գիւղս գիւղս ցրուեալք զրօսնուն : . . . Տեսանէ՞ք զհակառակութիւն բանից և գործոց ի մատակարարութիւն աղքատ մանկանց վարժարանիս :

“ — Ձեր հրաման էր յայնժամ, ասէ, ածել քառասնիւ
“ չափ մանկունս ի Փարիզ :”

“ Ա՛ռ ո՞ լցէ այն հրաման մեր տուեալ. առ հանգուցեալ Գեր. Սոմալ Եփ. նս, թէ առ մերսն ի Պոլիս : Ահա բանք Թըղթոյ իմոյ գրելոյ առ հանգուցեալն ի 18 դեկտ. 1845 : “ Վասն
“ որոյ մնայ այժմ Վեհիդ ազդ առնել փաղփաղակի մերոցն
“ ի Պոլիս, զի փութասցին հասուցանել այսր մանկունս քանի
“ մի իբրեւ քսանիւ չափ, յուեալով ի Նոսին և զպատրաստեալ-
“ սըն ի Զմիւռնեայ, ըստ տեղեկութեան տուելոյ մեզ ի Հայր
“ Պետրոսէ անտի :”

“ Տեսանէ՛ք զկարծեցեալ զօրաւոր պատճառսն ձեր յարդարացուցանել զՀ. Անանիայ, ի գործ յայն պաշտաման իւրում, և ի լուծանել զերկմտութիւն իմ որ ընդ այն :

“ Գեր. Տեառն մերոյ վարկ մեծ է զՀ. Անանիայէ, լսելով իմ բազում անգամ ի բերանոյ Նորա զայս բանս, թէ “ Զու-
“ նիմք մեք ի միաբանութեանս զայլ ոք իբրեւ զՀ. Անանիա
“ բաւական և յարմար ի պաշտօնն անդ դպրոցիս :” Զնախանձեցայ և չնախանձիմ ես բնաւ ընդ վարկն մեծ որ զնմա-

նէ, այլ ցաւեցայ և ցաւիմ ես ընդ պակասութիւն այնպիսի անձինն ի միաբանութեանս, և ընդ նախատինս այլոց, չունելով նոցա զայն կատարելութիւն, մանաւանդ թէ զայն վարկն որ զնմանէ ։

“ Թէպէտ և աւելորդ և անարժան արդեօք յիշատակել և աստ, բայց հետեւեցայց ձեզ և զնչինսն յիշատակել ։ Արդ՝ ի ցուցանել երբեմն Հ. Անանիայի զհաշիւ ծախուց իւրոց եղելոց ի դպրոցի Պօլսոյ, եցոյց նա զայն երիս զանազան ի միմեանց հաշիւս. և ի յանդիմանել մեր զնա ընդ այն, բաւականացաւ նա ի վախճանի հատուցանել նմա ընդ որ և հաճէաք ։ . . .

“ Ահա բաւականութիւն և յարմարութիւն, և ճարտարութիւն նորա ։ . . .

“ — Ապաքէն յիշիցէ Վերապատուութիւնդ,ասէք, զդի-
“ տումն կառուցանելոյ մեր զնախակրթարանն ի Փերայ, և
“ թէ որչափ զրոյցք եղեն վասն այնորիկ յայնժամ ի ժողովի
“ խնամակալաց ։ ”

“ Թէպէտ յիշեմ ես զայն ամենայն, և զվճիռ նորին, որ և անցուցաւ յարձանագրի անդ, այլ կատարումն նորին չտեսի ես ցարդ, սակս անփութութեանն որ այտի, և դժկամակութեանն որ անտի ։ Ահա ընդ այս է գանգատելն իմ որ ի գրութեանս առ Ձեզ ։ . . .

“ Թէպէտ և առաքեցիք անդ ի դպրոցն Փէրայ զՀ. Աբրահամ, այլ անազան յոյժ, և գործ նորա անդ ոչ սակաւ հակառակութիւն կրեաց. և զի չէ բաւական ընդ այն գործ մի և երկու անձանց ի մէնջ այտի, այլ պիտոյ է անդ և Եւրոպացի վարժապետի ի նախակրթութիւն Գաղղիարէն լեզուի, որպէս զի եկեալքն աստ կարիցեն վաղվաղակի սկիզբն առնել բարձրագոյն գիտութեանց և կարեւոր արուեստից. և զի մնացեալքն անդ ծանօթասցին բաւականապէս լեզուաց Եւրոպացւոց ի կարեւոր պէտս իւրեանց անդ ։

“ — Հաւանեցաւ ժողովս, ասէք, ի վարձու ունել զոմանս
“ յաշակերտաց ելելոց ի վարժարանացս, և առաքել աստ և
“ անդ ի վարժապետել . Թէպէտ և ոչ անզերծ իցէ այդ առա-

« Ջարկդ ի բազում դժուարութեանց, բայց մարթ է ևս գը-
« տանել այնց հասուն խորհրդով․ իսկ զգործադրութիւն
« խորհրդոյն եթող դիպան ժամու։ »

« Ասեմ ես, եթէ ժողովդ ծանօթ և փորձ էր վիճակի և կարօտութեան ազգիս արդեօք, և եթէ արդարեւ չափն և կարծիք էին նմա յղումն տալ բանից կտակի Բարերարին, չմնայր ցորդ անգործ այս, և ոչ իսկ կարօտ էր առաջարկիս այժմ, թող թէ դժուարութիւնս և բազում դժուարութիւնն ի մտի դնել, և զգործադրութիւնն խորհրդոյն ի դիպան ժամանակի թողուլ։ . . .

« Այո՛ յորժամ դէպք ժամանակին պահանջեսցեն և պարտաւորեսցեն զնա մատակարարել արդարութեամբ զիրաւունս աղքատաց ազգիս, որպէս և դէպք ժամանակիս այսօրիկ պարտաւորեն զպետութիւնս Եւրոպայի ճանաչել զիրաւունս ազգաց անհաւասարակ, առանց ինչ զանազանութեան։ . . . Բայց գիտասջիք, զի որպէս նոցա այժմ, նոյնպէս և Ձեզ յայնժամ, ոչ ի պատիւ լիցի այն։

« — Շնորհ բազում ունիմք, ասէք, զի փոյթ մեծ է ձեր
« յաճումն մանկտւոյ Ներքնծայարանի։ Այլ բազում տհա-
« ճութեամբ ընթերցաք ի գրի ձերում զբանն զի ասէք․ Աճե-
« ցուցջիք զթիւ ներքնծայիցդ օժանդակութեամբ մասամբ ինչ
« կորստական արծաթոյն։ »

« Ասեմ ես, եթէ պարզաբար և առանց ինչ պատճառաց ասացեալ էր իմ ի գրութիւնս՝ թէ արծաթով Մ. վարժարանին աճեցուսջիք զթիւ ներքնծայիցդ, թերևս ունէիք իրաւունս տհաճութեամբ ընթեռնուլ ի գրի իմում զայն բանն, մանաւանդ թէ պարտէիք հարցանել ինձ զայն տարակուսանօք, թէ զիա՞րդ համաձայնիցի այն ընդ պարտուց պաշտաման ձերոյ, որ ի պահպանութիւնն յայն սրբազան աւանդին և յուղիղ մատակարարութիւն նորին։ . . .

« Բայց քանզի յաւելեալ էր իմ անդ զբառս մասամբ ինչ կորստական արծաթոյն, ապա չկայր ձեզ իրաւունս տհաճութեամբ ընթեռնուլ զբանն զայն գրութեանս, և ոչ բնաւ հարկ, այնչափ երկար բանիւք ցուցանել ինձ զկարծեցեալ անարա-

տութիւն խղճի մտաց ձերոց յայն, և զբարոյական գիտութիւնս ձեր ի խնդիրս յայս: Եւ եթէ կարծէիք դուք թէ վերոյիշեալ պատճառօքդ լուծեալ էիք զերկմտութիւնս իմ ընդ մատակարարութիւն վարժարանիս, չունելով ձեր անդ կորուստ ինչ արծաթոյ անփութութեամբ և անփորձութեամբ ձերով, . . . ապա աւելորդ էր զայսր գլխոյ բանէ գրութեանս առնել յիշատակութիւն, բայց եթէ առ ի հենգնել արդեօք զփոյթն իմ մեծ որ ընդ աճումն մանկանց նորընծայարանիդ բանիւդ շնորհակալութեան . . . .

« Թէպէտ և ինչանակութենէ բառից գրութեանս յայտնի են իմաստք բանիցս, որպէս ցուցի վերագոյն, բայց գիցուք թէ պարզաբար եւս էր ասացեալ իմ անդ, թէ աճեցուցի՞ք զթիւ նորընծայիցդ օժանդակութեամբ արծաթոյ Մ. վարժարանին, մեղուցեա՞լ էր իմ արդեօք իրաւանց ազքատաց ազգիս՝ աւանդեալ ձեզ ի Բարերարէն, և անարատութեան խղճի մտաց ձերոց . . . .

« Քննեցից ես աստանօր զխնդիրս այս երեք եղանակաւ. ներքադրուրբեամբ, իրաւամբք, և արդեամբք:

« Նախ՝ ներքադրուրբեամբ, հայեցեալ ի վախճան կամաց Բարերարին, որ է լուսաւորութիւն ազգին առհասարակ. արդ հարցանեմ ձեզ Նախ՝

« Եթէ Բարերարն ի կենդանութեան իւրում կամեցեալ էր զայս ցանկութիւն իւր կատարել, և յանձնեալ էր նա զարծաթն միաբանութեանս, և միաբանութիւնս ասացեալ էր նմա, թէ յօժարութեամբ յանձն առնու ինքն զմատակարարութիւնն զայն, բայց չունի բաւական անձինս ի գործն յայն, ի լուսաւորել զհամօրէն ազգ իւր, զի՞նչ ասէր նմա Բարերարն. ո՞չ ապաքէն՝ թէ Աճեցուցէք զթիւ անձանցդ (*) : Եւ եթէ

(*) Այո՛ ասէր նա նմա զայս անշուշտ, և հաստատութիւն այսմ, առհաւատչեայ ազատամիտ խոստումն նորա առ միաբանութիւն, վասն ծախուց տպագրութեան Նեսերիոսի պատմութեան, 20,000 ֆրանք, վասն ծախուց տպագրութեան Անգղիարէն և Հայերէն բառարանաց 20,000 ֆրանք, և վասն ծախուց տպագրութեան ընդհանուր աշխարհագրութեան 40,000 ֆրանք. ընդ ամենայն 80,000 ֆր. և զայս մեծ գումար արծաթոյ խոստանայ նա ի ժամանակի յորում ճոխութիւն նորա ոչ էր ինչ մեծ, և կատարէր նա զայն արդեամբք, եթէ կարծեցեալ բարի

ասէր ցնա Միաբանութիւնս՝ թէ չունի ինքն կարողութիւն արծաթոյ յաճեցուցանել զթիւ անձանց իւրեանց, կասէ՞ր արդեօք Բարերարն ի ցանկութենէ անտի իւրմէ, զլանալով Միաբանութեանս գումար ինչ արծաթոյ անտի, յաճեցուցանել զթիւ անձանց նորա ։ Ապաքէն ոչ բնաւ, այլ օժանդակելով օժանդակէր նմա, առ ի հասանել նպատակի իւրում, լուսաւորելոյ զազգս ։

« Ահա քննութիւն ենթադրութեանն, հայեցեալ ի փախձան կամաց Բարերարին. ապա չէր իմ մեղուցեալ իրաւանց աղքատաց ազգիս ։ . . .

« Երկրորդ՝ իրաւամբք, հայեցեալ ի վարձս աշխատութեան պաշտօնէից դպրոցին, հարցանեմ ձեզ արդ՝ թէ կայցէ՞ ի կըտակի անդ Բարերարին չհատուցանել վարձս աշխատութեան պաշտօնէից դպրոցին իւրոյ, այլ ձրի աշխատիլ նոցա անդ ։ Ոչ բնաւ ։ Եւ թէ չունի՞ն նոքա իրաւունս գտանել վարձս աշխատութեան իւրեանց որ ի դպրոցին ։ Ունին նոքա զայն, և ամենայն իրաւամբք, որպէս և համօրէն ամենեքեան, որք միանգամ տեսին զդպրոցս, և ի հարցանել զվարձուց մերոց անդ, և ի լսել ի մէնջ թէ ձրի աշխատիմք ի դպրոցս, զարմացան նոքա և գրեթէ չկարացին հաւատալ ։ . . .

« Իսկ արդ՝ եթէ Միաբանութիւնս փոխանակ վարձուց աշխատութեան իւրոցն ծախիցէ սակաւիկ ինչ գումար արծաթոյ անտի յաճեցուցանել զթիւ անձանց իւրոցն, և այն ի նպաստ իսկ վարժարանիս, առ ի հասանել նպատակի Բարերարին, ի լուսաւորել զազգս ամենայն ուրեք, մեղիցէ՞ իրաւանց աղքատաց ազգիս, աւանդեալ ձեզ ի Բարերարէն, և անարատութեան խղճի մտաց ձերոց ։ Ոչ բնաւ ։ Ապա չէր իմ մեղու-

Նախանձ Աղեքսանդր Ռաֆայէլի չլինէր այնմ խափան . . . որպէս տեսանի յառաջին հատոր պատմութեանս, յէջ 62-6 ։

Ապա չզլանայր նա միաբանութեան գումար ինչ արծաթոյ յաճեցուցանել զթիւ անձանց նորա, առ ի հասանել նպատակի իւրում, լուսաւորելոյ զազգս հայոց, հաւատացեալ և հաստատեալ ի միտս արդէն. թէ Մխիթարեան միաբանութիւն որ ի Վենետիկ, ոչ այլ ինչ խորհի և գործէ, բայց եթէ ի լուսաւորել զազգն իւր իւր համօրէն ։ . . .

Աւա՜ղ վրիպանաց ակնկալութեան նորա ։ . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

ցեալ, եթէ պարզապէս ասացեալ էի զբանն զայն ի գրութեանս իմում առ ձեզ։... Եւ ահա քննութիւն իրաւանց, հայեցեալ ի վարձ աշխատութեան պաշտօնէից վարժարանիս։

« Երրորդ՝ արդեամբք, կամ օրինակօք, հայեցեալ ի պարտս պաշտաման ձերոյ որ ի մատակարարութեան Մ. վարժարանին։... Տեսեալ իմ երբեմն ի Պատաւիոն, զի մերքն որք ի վարժարանի անդ՝ արհամարհեալ իմն լինէին յաչս աշակերտաց իւրեանց, սակս անծանօթութեան Իտալ. և Գաղղ. լեզուաց, և մանաւանդ առաջի Եւրոպացի վարժապետացն անդ, վասն այսորիկ խօսեցայ ես նախ ընդ հանգուցեալ Գեր. Սոմալի դարման տանել թերութեանն այնորիկ, առաջարկելով նմա Եւրոպացի վարժապետս Իտալ. և Գաղղ. լեզուաց ածել ի վանս, յուսուցանել նոցա զայն նորընծայից և վարժարանցւոց մերոց անդ։

« Հաւանեցաւ հանգուցեալն առաջարկութեանս, բայց վասն ծախուցն դժուարութիւն եցոյց, չունելով միաբանութեանս կարողութիւն հատուցանել զծախս վարժապետացն այնոցիկ։ Ասացի ես ցնա, թէ վարժարանացս անկանի հատուցանել զայն ծախսն, գոլով օգտիցն ի նպաստ նոցա։

« Հաւանեցաւ նա և ընդ այն, ապա խօսեցայ ես զայսմանէ ընդ Հ. Ռափայէլի, ուղչի Ռափայէլեան վարժարանին ի Վենետիկ։ Չկամեցաւ նա բնաւ հաւանիլ այնմ, հատուցանել զմասն ծախուցն այնորիկ, իբրեւ 12 ֆրանք յամսեան, ասելով թէ « չներէ նմա խիղճ մտաց իւրոց, զաւանդեալ արծաթն « Բարերարին զարտուղաբար ի պէտս ազգին վարել, » թէպէտ և նոյն խիղճ մտացն ներէր նմա բերել տալ յԱնգղիոյ նովին աւանդեալ արծաթով Բարերարին ելեքտրական օրագիր ի պէտս Ծանդէպքեայ բարեկամին իւրոյ, և զանազան մատեանս ի Գաղղիոյ և յԱնգղիոյ, և զայն ոչ ի պէտս վարժարանին, այլ ի տեսութիւն հետաքննութեան իւրոյ միայն . . . այլ և մեծագին սպասք մատրան վարժարանին, ոչ ի շինութիւն մանկանց, այլ ի մխիթարութիւն իւր առանձինն։ Թողից ասել զշռայլութենէ որ ի տիպս փառաւոր և գունագոյն թըղթոց գրելոյ առ ընկերս իւր, և աշակերտացն առ ծնողս իւրեանց, և այլն, և այլն։

« Հարցանեմ ձեզ արդ՝ թէ ո՞ ի մէնջ մեղուցեալ իցէ իրաւանց աղքատաց ազգիս, և անարատութեան խղճի մտաց ձերոց :...

« Տեսանէ՛ք զի կարծեցեալ լուծումն երկմտութեանս, և հենգնական շնորհակալութիւն ձեր առ իս, ո՛ւր տարեալ հասուցին զբանս,... բռնադատեալ զիս յոչ կամացս առնել զանաչառ քննութիւնս, զոր ոչ ումեք ի մխիթարութիւն գիտեմ, բայց եթէ ճշմարտութեան :...

« Աղաչեմ զյարգոյ ժողովդ, զի խորհեսցի նախ՝ թէ զի՛նչ, և ապա թէ առ ո՛ ունի գրել, և քննութիւն բանից գրութեան նորին առնել :... Թէպէտ ունիմ ես վարկ զՁէնջ, ըստ իւրաքանչիւր կարողութեան շնորհելոյ ձեզ ի Տեառնէ, այլ ոչ համարիմ ես թէ ծանօթ և փորձ իցէք դուք իրաց վարժարանիս և հանգամանաց նորին : Վասն որոյ նախ ծանօթասջի՛ք այսոցիկ անձամբ և փորձիւ, ապա գրեսջի՛ք զայսմանէ առ իս համարձակութեամբ (*), և մի՛ թելադրութեամբ այլոյ և ակնածութեամբ ուստեք բերջի՛ք ի գրութիւնդ, մանաւանդ յորժամ գրութիւն ուրուք չէ ուղղակի առ ձեզ գրեալ :...

(*) Համարիցի արդեօք բան ինչ մեծամտութեան քան զարժանն ցուցանէ աստանօր Հ. Սարգիս. քննեսցուք զարժանիս և զիրաւունս նորա, և ժողովոյն ի խնդիրս յայս :

Արժանիք Հ. Սարգսի ի խնդիրս յայս, է չորեքտասանամեայ ոգւով չափ աշխատութիւն, որով ի ձեռս բերէ զժառանգութիւն աղքատաց ազգին իւրոյ, և իրաւունք նորա, երեքտասանամեայ փորձն որ ի տեսչութեան Ռ. և Մ. վարժարանաց. սակայն ի վերայ այսր ամենայնի խոստովանի նա խոնարհութեամբ զանբաւականութիւն իւր ի պաշտօնն յայն տեսչութեան, վասն որոյ խնդրէ զհմուտ ոք Դաղղիացի իւր օգնական. ահա արժանիք և իրաւունք Հ. Սարգսի ի խնդիրս յայս :

Անձինք ժողովոյն երիկեան ոմանք գոլով և չունելով ինչ արժանիս ի միաբանութեան, այլ և անփորձ են նոքա իրաց հասարակաց, ոմն առ ի հաճոյ լինել Մեծաւորին, և այլ ոմն առ կոյր հնազանդութեան, հաւանին ամենքեան ամենայն բանից գրութեան Մեծաւորին իւրեանց և ստորագրեն զայն... և ահա արժանիք և իրաւունք ժողովոյն ի խնդիրս յայս :

Իսկ նախագահ ժողովոյն Գեր. Հիւրմիւզ առնէ զոր ինչ կամի, և տայ զայն կամաց և որոշման միաբանութեան իւրոյ, ահա ընդ այսպիսի անձինս լինի կենցաղավարութիւն Հ. Սարգսի զամս տասն. համարիցի՞ ես բան ինչ մեծամտութեան քան զարժանն զոր ցուցանէ Հ. Սարգիս ի խնդիրս յայս, և պա՞րտ էր նմա լռել և չյանդիմանել զնոսա այսպիսի պատասխանեաւ :...

Թողումք մեք զայս ի դատաստան վերծանողաց պատմութեանս, հատուցանելով զպարտս մեր կարեւոր ծանօթութեամբ :

(Ծանօթութիւն Հեղինակին :

« — Վասն Տրապիզոնի դպրոցին, ասէք, թուի թէ վրի-
« պակ ինչ լուեալ իցէք ։ »

« Ասեմ ես, թէ կարծիքն իմ զայնմանէ, ոչ ի լրոյ են՝ յոր մարթ էր ինձ սխալիլ, այլ գործեանց իրաց, յորոց տեսանեմ զկամս և զփոյթ ձեր որ ընդ այն ։ Ծանեայ ես աստ ի բանից թղթոց ոմանց զհակառակութիւն հակառակորդաց մերոց ի խափանել զՀ. Պետրոս դառնալ ի Տրապիզոն . այլ նորա երկայնմտութեամբն իւրով յաղթեալ նոցա դարձաւ անդ, առանց ուրուք ի ձէնջ օգնականութեան, խորհրդոյ և քաջալերութեան անգամ .

« Արդ եթէ լքեալ էր նորա ի ջանից և ի կամաց դառնալոյ անդ, ո՞չ ապաքէն կորուսանէաք մեք զտեղին զայն, և ամենայն վաստակ և ծախք մեր ի դերեւ լինէին, չկամելով այլոյ ուրուք ի ձէնջ գնալ անդ ։ Եւ եթէ այլ խորհուրդ և կամք իցեն ձեզ ընդ այն, ես զայն ոչ իմացայ ցարդ. ապա չեմ սխալեալ ի կարծիս իմ յայն ։ . . .

« — Ձեր ցաւագին և զգաստ ասացուածս, ասէք, յա-
« զագս խնամակալաց ժողովոյ, բաղում կարեկցութեամբ
« ընթերցաք ։ »

« Ասեմ ես, թէ լաւութիւն և օգտակարութիւն խնամակալաց ժողովոյն ոչ ի նախագահութիւն և ոչ ի հաստատութիւն նորին, այլ յարդիւնս իրաց, ի յառաջադիմութիւն վարժարանացս . ի պակասիլ սորին, ի զուր և ընդունայն են ամենայն խորհուրդ և ջանք ։ Ապա չիմանամ ես զկարեկցութիւն Ձեր ընդ ցաւագին և դառն կարծեցեալ ասացուածս իմ ։

« — Եթէ անունն այն Եղբայր, ասէք, յիշատակեալ ի ձէնջ
« ի գրի, ոչ հաճեցաւ ընդ նախագահութիւն ստարի, այն
« չհաւանութիւն ոչ երբէք յանձն ձեր հայի, որպէս թէ ար-
« համարհելով զձեզ, այլ որոյ և իցէ ։ »

« Ասեմ ես, թէ յիշատակեալ իմ անդ զտհաճութիւն եղբօրն այնորիկ որ ընդ ժողով խնամակալաց, և մանաւանդ ընդ նախագահութիւն նորին, էր իբրեւ հաստատութիւն բանից գանգատանացս, որ ընդ անփութութիւն յառաջադիմութեան վարժարանացս, և ոչ զարհամարհանացս որ ի նմա-

նէ, եթէ չէր իմ տեսեալ զայն ի բազում դէպս... Ապա չկարէ արդարացուցանել զնա յայսմ, թէպէտ և չհաւանութիւն նորա չհայիցի յանձն իմ միայն, այլ որո՛յ և իցէ։

« — Եւ թերեւս զուցեն նորա չհաւանելոյն պատճառք.» ասէք, զոր և ջանայք ցուցանել, նախ՝ ի տուեալ պատճառացս, որ ի գրի իմում անդ, թէպէտ և այն պատճառքն էին առ ի համոզել զնա, որ սեւեռեալ էր յոյժ յայնժամ ի կարծիս իւր, և ոչ կամէր զայլոց իրաւունս ընդունել, այն ինչ եկեալ ի Պոլսոյ և Արեւելեան գաղափարօք լցեալ, և այլ տեսութեամբ արդեօք... այլ ոչ թէ՝ յորոց վերայ հասեալ էր իմ և այնու կամեցեալ էի ասել. զի եթէ Աբբայն չէր հիւանդ, նմա անկանէր նախագահութիւնն. և հաստատութիւն այսմ, ահա վերջին բանքս որ ընդ այս խնդիր ի նմին գրիս անդ, թէ « Թողում ես աստ առնել քննութիւն զօգտից և « զվնասուց որ ի նախագահութենէ այլոյ և Աբբայի լինին։» զորմէ չառնէք յիշատակութիւն... Ապա՝ յիրաւանց Տեսչութեան դպրոցիս ջանայք ցուցանել այսպէս.

« — Քանզի և դպրոցին տեսչութիւն ի նա է հաւատա- « ցեալ, ասէք, և պարտ է, զի ամենայն խորհրդոյն պատ- « ճառաց ինքնին խելամուտ իցէ նախագահելովն ի ժողովի։»

« Առ այս ի դէպ համարիմ ես առնել աստ քննութիւն ամենայն ճշդութեամբ և անաչառութեամբ, ըստ բանից, ըստ իմաստից և ըստ նպատակին. վասն որոյ ասեմ նախ՝ թէ իրաւունք մատակարարութեան, կամ որ նոյն է, Տեսչութեան դպրոցիս, Միաբանութեանս հաւատացեալ է ի Բարեբարէն, ըստ բանից կտակի նորին։ « Միջնորդութեամբ « Մխիթարեանց միաբանից Վենետկոյ կամիմ կառուցանել զդըպրոցս։» Եւ ըստ այսմ բանից կտակի նորին յանձնեաց ինձ Ատեանն Անգղիացւոց զարծաթն հրիտակի ողորմութեան, քննելով նախ՝ թէ Միաբանութիւնս մի բարոյական մարմին իցէ. և ապա զայլ կարեւոր հանգամանս նորին, զիրաւունս և զիշխանութիւնս ընդունելութեան արծաթոյն։ Ապա Միաբանութեանս պարտ է զի ամենայն խորհրդոյն պատճառաց ինքնին խելամուտ լինել, զի իրաւամբք և իշխանութեամբ հաւա-

տացեալ է նմա ի Բարերարին, և հաստատեալ այն յԱնգլի-ացւոց Ատենէն ի Մատրաս, քննութեամբ և վճռով Նորին:...

« Ասիցէք արդեօք, թէ զանազանութիւնս բառից լցէ, և իմաստակական:...

« Ասեմ ես. ոչ այդպէս. յորժամ համեմատեսջիք զբանս կտակի Եդուարդայ Ռափայէլի ընդ բանից կտակի Սամուէլ Մուրատի, տեսանէք յայնժամ զզանազանութիւնս որ ի նո-սին: Քանզի Եդուարդ Ռափայէլ թողեալ է զհրիտակն զայն վասն դպրոցի աղքատ մանկանց ազգիս, իբրև վարձ աշխա-տութեան Հ. Նիկողայոսի Բուզայեան. վասն որոյ և ի խնամս Նորին թողեալ է զտեսչութիւն դպրոցին իւրոյ, և Նորա զի-րաւունս իւր զայն թողեալ է ապա Աբբային իւրոյ և յա-ջորդաց Նորա, կտակաւ իւրով և հաստատութեամբ Վենետ-կոյ Տէրութեան: Ապա թէ ոչ՝ չունէին յայն իրաւունս, ոչ Աբբայք վանացս, և ոչ իսկ Միաբանութիւնս:

« Զայս այսպէս ճանաչէր հանգուցեալ Գեր. Սուքիաս Սո-մալ, որ ի 1836 ամին՝ իբրև հաստատեցաւ Ռափայէլեան վարժարանն ի Վենետիկ, կոչեաց զիս հանգուցեալն և ասաց ինձ այսպէս. « Որովհետև ինձ պատկանի ուղղակի Տեսչու-« թիւն Ռափայէլեան դպրոցին, և ես զքեզ կամիմ փոխանակ « իմ տեսուչ կարգել անդ: »

« Այլ ոչ նոյնպէս ասաց ինձ հանգուցեալն յորժամ Տե-սուչ կարգեաց զիս Մուրատեան վարժարանին յամին 1837. այլ ասաց ինձ, թէ « Ժողովն առաջակայիցս որոշեաց զքեզ « Տեսուչ Մուրատեան վարժարանին: »

« Այլ և ոչ նոյնպէս է և հրիտակն ողորմութեան, թողեալ ի Սամուէլ Մուրատէ. զի թողեալ է այս ի նպաստ լուսաւո-րութեան որբ և աղքատ մանկանց ազգիս, միջնորդութեամբ Միաբանութեանս:

« Ապա Միաբանութիւնս ունի յայն ուղղակի իրաւունս Տեսչութեան, և ոչ սոսկ Աբբայն որպէս կարծէք: Իսկ իրա-ւունք Աբբային յայն է անուղղակի, ի կողմանէ միաբանու-թեանս, Առաջնորդ գոլով Նորին: Զայս այսպէս քննեալ ըստ բանից կտակի Բարերարին և ըստ հաստատութեան Անգլիաց-

ւոց Ատենին, եկից արդ ի քննութիւն իրաւանց նախագահու-թեան խնամակալաց ժողովոյն. այս է, թէ նախ՝ որո՞ւմ անկ իցէ նախագահութիւն նորին. Արքային, թէ որո՞յ և իցէ անձին ի Միաբանութենէս ։ Եւ երկրորդ՝ թէ յորո՞ւմ իցէ օգուտն, և յորո՛ւմ վնասն, ըստ ակնարկութեանս իմում որ երբեմն ի Թուղթս ։

« Արդ՝ տեսանի յամենայն վարչութիւնս ազգաց Եւրոպաց-ւոց, յորս օրէնք ժողովրդեան իշխեն, և ոչ բացարձակ կամք միոյ ի ժողովրդենէ անտի, զի սեննակ հասարակաց և զանա-զան խորհրդարանք ժողովոյ հաստատեալ են, և յորս առան-ձինն առանձինն նախագահ կարգեալ են, և զի ամենայն ժո-ղովոց ոչ թագաւորն, կամ ժամանակաւոր իշխանն անդ նա-խագահ անուանի, և ոչ յանդիման լինի նա անդ անձամբ՝ բաց ի միոյ նուագէ ի տարւոջն, յաւուր բացման սենեկի հա-սարակաց, ուր գնացեալ ծանուցանէ խորհրդականաց, նախ զհանգամանս վարչութեան անցելոյ ամին, և ապա հրաման տայ նոցա ժողովել և խօսել զիրաց վարչութեան ։ Բայց ունի նա և առանձին խորհրդականս, որովք որոշէ և հաստատէ ըզ խնդիրսն զեղեալսն ի սենեկի հասարակաց և ի խորհրդարանս զանազան ժողովոց ։

« Եւ արդ՝ եթէ վարչութիւն Միաբանութեանս այսպէս է, որպէս և ասէք, թէ վարչութիւն մեր չէ բացարձակ կամօք Առաջնորդին Տիրապետական, ապա նախագահութիւն խնա-մակալաց ժողովոյն չէ անկ Աբբային մերոյ, այլ այլում ումեք ի Միաբանութենէս. բայց Աբբային մերոյ անկանի, ըստ օրի-նակի վերոյիշեալ իշխանի զխնդիրս խնամակալաց ժողովոյն որոշել և հաստատել, որպէս և լինէր ի ժամանակի նախա-գահութեան իմոյ, և որպէս յիշատակեալ եմ ի Թուղթն իմ յայն այսպէս. « Առանց գիտութեան և հաւանութեան Աբբային « ոչինչ որոշէր և հաստատէր ժողովն այն խնամակալաց ։ »

« Ընդ այս կարգաւորութիւն հաճ և հաւան էին ամենե-քեան, հանդուցեալ Աբբայն և Առաջնակայք նորա. և այս կարգաւորութիւն՝ իմաստուն դատեալ էր յայնժամ յամենե-ցունց, ապա անմիտ դատեցաւ ի միոյ յեղբարցս, Հ. Գէոր-

զայ, թէպէտ և չառնէք դուք զայսմանէ յիշատակութիւն.
վասն զի չգտանէք ի սմին Նպաստաւոր ձեզ ինչ քննութիւն։

« Այսչափ ինչ շատ լիցի յաղագս անկի Նախագահութեան
խնամակալաց ժողովոյն. քննեցից զօգտիցն և զվնասուցն որք
անտի։

« Արդ՝ ի Նախագահութեան այլոյ ուրուք ի միաբանութե-
նէս ամենայն ոք ի ժողովի անդ կարէ ազատաբար խորհել և
համարձակ խօսել զիրաց վարժարանացս, զթերութենէ և ըզ-
յառաջադիմութենէ նոցին. քանզի հաւասար ընդ հաւասարի
խորհի և խօսի, և ոչ ուստեք ակնածէ։ Նոյնպէս և ի թըղ-
թել ընդ այն, զկարծիս իւր ամենայն ոք համարձակ գրէ, և
կարծեաց այլոց համարձակ առնէ պատասխանի, և այնպէս
ի բացակայութեան Աբբային պատիւ նորա պահի, և ազդո-
ղութիւն բանից նորա յորոշումն խնդրոյն առաւել եւս լինի։

« Ահա օգուտն որ անտի, ի Նախագահութենէ այլոյ ու-
րուք։

« Քննեցից և զվնասն որ ի Նախագահութենէ Աբբային.
քանզի ի ժողովի անդ ոչ ոք կարէ ազատ կամօք խորհել և
համարձակ խօսել զիրաց վարժարանացս, զթերութենէ և ըզ-
յառաջադիմութենէ նոցին, ակնածելով ի Մեծաւորէն, ըստ
օրինաց կրօնաւորաց, չգոլով ուրուք տէր իւր կամաց, և ըստ
սովորութեան արեւելեան հպատակաց. մանաւանդ յորժամ
մեծագոյն մասն ի ժողովականաց անտի երիտասարդք իցեն
հասակաւ և անծանօթ իրաց վարժարանացս. զի զոր ինչ և
ասիցէ մեծաւորն հաստատեսցեն նոքա զայն, կամ լռելեան
հաւանութեամբ, և կամ Այո՛ այնպէս է ասելով։ Նոյնպէս և
ի գրութիւնն որ առ այլ ոք ի պաշտօնէից վարժարանիս. զի
զոր ինչ և թելադրիցէ մեծաւորն, ստորագրեսցեն նոքա անդ
առանց երկմտութեան, հնազանդելով կամաց նորին առանց
ընդդիմութեան. և եթէ տեսեալ ուրուք զանուղղութիւն մա-
տակարարութեան վարժարանցս, անաչառ և համարձակ գը-
րութեամբ ազդ առնիցէ Մեծաւորին, իբրեւ յանդուգն և
անհնազանդ ոք յաչս նորա համարեսցի. վասն որոյ և զայ-
թագղութիւն և բամբասանք ի մէջ համակրօն եղբարց, և ըն-

քումն սրտի և ձեռաց գրչին, և ահա վնասն որ անտի։

“ Ապա չկարեն լուծանել զերկմտութիւնս իմ այս բանք գրութեան ձերոյ։...

“ — Եթէ այն կարծիք առանձնական՝ իցէ միոյ ուրուք խնա-
“ մակալաց, չկարէ զօրել, ասէք, մինչև ոչ հաւանեսցի այնմ
“ մեծ կէս մասն ժողովոյն, որ յայնժամ ոչ մնայ առանձնա-
“ կան կարծիք, այլ հանրական և ընդունելի։ Եթէ Արքային
“ իցէ, դարձեալ ոչ զօրէ, մինչև ոչ հաւանեսցի ժողովն։ ”

“ Ո՞չ ապաքէն բանք իցեն այսոքիկ, չկատարելով ար-
դեամբք ինչ։ Ապա չկարօտի այլ ևս պարզաբանելոյ զայն
կարգ բանին, թէ

“ — Այլ և մեղադրանաց և նախատանաց եղաք արժանի,
“ սակս անմիաբանութեան կարծեաց մանաւորաց, որ խա-
“ փան է միշտ բարեաց հասարակաց։ ”

“ Իսկ առ այն զոր ասէք թէ՝ “ Քանզի այդ ժողով հաս-
“ տատեցաւ և յընդհանրական ժողովոյ ի 11 յուլիսի 1846,
“ և պահի ցարդ անթերի, որ և յառաջադիմութեան վարժա-
“ րանացս մեծապէս խնամ ունի։ Այս վերստին հաստատու-
“ թիւնն նշանակէ թէ ընդունելի գտաւ այն և սիրելի։ ”

“ Ասեմ ես նախ՝ թէ բանն իմ որ ի թուղթն յայն չէ ընդ-
հաստատութենէ խնամակալաց ժողովոյն, ոչ յառաջ և ոչ
զկնի. այլ զանփութութենէն որ ընդ այն, և հարեւանցի իմն
զնախագահութենէ նորին, յորմէ օգուտն և վնասն տեսա-
ցարդ։...

“ Երկրորդ՝ պահելով իմ միշտ զվարկ և զյարգ ընդհանրա-
կան ժողովոյն, հարցանեմ ձեզ նախ՝ թէ քանի՞ ոմանք և ո՞յք
էին ի ժողովլի անդ առաւել քան զվանական ժողովոյն. զի
չորք էին միայն և ոչ աւելի, և զի երկուքն ի նոցանէ ոչ այլ
ինչ խորհէին, բայց եթէ ժամ մի յառաջ դառնալ ի տեղիս
իւրեանց, մին ի Հունկարիա, միւսն ի ցանկալին իւր հայրե-
նիս ի Պօլիս, և երրորդն՝ քաղաքոյ գործոյ ցանկալով փութայր
ի Հռովմ հասանել։

“ Ահա այնչափ անձինք էին առաւել անդ, և այսպիսի
խորհրդով։...

« Հարցանեմ ձեզ երկրորդ՝ թէ զպատշաճողութենէ Նախագահութեան Նորին, թէ ո՞ւմ անկ էր. Արքայի՞ն թէ այլում ումեք, և զօգտից և զվնասուց որք անտի՝ եղե՞ւ խնդիր անդ։ Ոչ բնաւ։ Ապա անտի պարտ է կշռել զընդունելի գտանել և զմերժելի լինել նորին։...

« — Վասն որոյ աղաչէ ժողովս զՎերապատուութիւնդ,
« ասէք, ոչինչ հոգալ ընդ այն և ոչ վհատիլ. քանզի չէ ար-
« ժան, ասէք, թէ դոյզն և աննշան բանք զխիթ արկութեան
« ձերոյ ընկճեսցեն։ »

« Ասեմ ես, թէ այդ՝ ոչ հոգայի ընդ այն, եթէ տեսանէի զգործունեայ կամս և ջանս ձեր ընդ յառաջադիմութիւն վարժարանիս, և չվհատէի արդեօք, եթէ բանիցս ազդարարութեան ի միտս ձեր կայր տեղի երբէք, որպէս և տեսանի այժմ ի բանից պատասխանւոյ ձերոյ, որք չեն դոյզն և աննշան բանք, ի չվհատել զխիթս սպառսպուռ։

« Թողի՜ց ասել և զայլ պատճառսն որք ծանր են յոյժ ձեզ լսել։...

« — Գիտէ և Վերապատուութիւնդ, ասէք, թէ Միաբա-
« նութիւնս կերեւալ չէ զարծաթ Բարերարին կամ զողա-
« ցեալ։ »

« Հարցանեմ ձեզ, թէ ի մատակարարութեան արծաթոյ Բարերարին ուտե՞լն և զողանա՞լն լիցին միայն յանցանք, և ոչ անփութութիւն ընդ այն և անփորձութիւն ի գործս, չիցե՞ն նոյնպէս յանցանք ի մատակարարութեան անդ. ապա չէ այդ բաւական պատասխանի բանից գրութեան իմոյ... և իբրև հաստատութիւն այնմ յաւելուք ասել, թէ

« — Եւ մատակարարութիւն նորին ըստ տեսչութեան դը-
« րամոյ, և հաստատութեան վարժարանի միաբան և ձե-
« ռովք իւր խորհրդով գործեցաւ ցարդ, խորհրդով հաստա-
« տութիւնն ի Պատաւիոն, խորհրդով փոխադրութիւնն ի Փա-
« րիզ, խորհրդով ուսմանց կարգաւորութիւն, խորհրդով և
« ամենայն ինչ։ »

« Ի բանից աստի կարծեցեալ հաստատութեան ձերոյ, հետևի թէ ես եմ ապա երաշխաւոր բովանդակ մատակարա-

րութեան այսօրիկ, վասն որոյ և պատասխանատու նոցա՝ որք պահանջիցեն զհամար տնտեսութեան վարժարանին։...

« Դիցուք թէ այդպէս իցէ, ես եմ պատասխանատու... բայց հարցանեմ ձեզ նախ՝ թէ զի՞րդ միաբանիցէք այս բանք ձեր բանիցն այնոցիկ, որով ասէք, « Քանզի և դպրոցին տես- « չութիւն յԱբբայն է հաստատեալ։ » Զի եթէ յԱբբայն է հաստատեալ, ապա նա է պատասխանատու, և ապա ի նը- մանէ և ոչ յինէն պարտ է պահանջել զհամարն։

« Տեսանէ՛ք զհակառակութիւն բանից գրութեան ձերոյ ընդ միմեանս, յորժամ կամիք փախչիլ ի պատասխանատու- ութենէն։...

« Երկրորդ՝ համարիցի՞ք թէ պատասխանատուութիւն իմ յայն, ազատ կացուցէ զձեզ ի պատասխանատուութենէ ան- տի ձերոյ։... Ո՛չ ապաքէն միաբանութեանս յանձնեալ է աւանդն ի Բարերարէն, և հաստատեալ յԱնգղիացւոց Ատե- նէն։...

« Երրորդ՝ զի՞նչ ունիցիք դուք ասել ինձ յայնժամ, կամ զի՞նչ կարիցեն ինձ առնել պահանջողքն, յորժամ ցուցից ես թէ հաստատութիւն վարժարանին ի Պառուզին, ի բացակա- յութեան իմում իցէ. և թէ՝ հաստատութիւն նորին ի Փարիզ ի բռնութենէ Աւստրիոյ Տէրութեան, և հաճութեամբ հաւա- նութեամբ հասարակաց եղև. և թէ՝ ընդ կարգաւորութիւն ուսմանց չեմ ես հաւանեալ ի սկզբանէ հետէ, և ընդ անուղ- ղութիւն մատակարարութեան վարժարանիս բողոքեալ եմ միշտ, ցուցանելով նոցա զգրուածս իմ և զպատասխանին ձեր։...

« Տեսանէ՛ք և զկարծեցեալ հաստատութիւն բանից պա- տասխանւոյ ձերոյ յարդարացուցանել զձեզ։

« Եւ ապա երկուցեալ ձեր, թէ չգուցէ այդ բաւական պա- տասխանի յարդարացուցանել զձեզ, յայլ իմն հզօրագոյն պատասխանի լինիք ապաստան, ի գիտակցութիւն մտաց ձե- րոց, ասելով այսպէս. « Եթէ միաբանութիւնս պահանջիցի « ի կտակատարէն, և եթէ ոչ, ունի նա իւր դատաւոր « որ քննէ զնա, այն է միայն խիղճ, որում պատասխանա-

“ տու է Մեծաւորն, խնամակալք և պաշտօնատարք իւրա-
“ քանչիւր վարժարանաց: ”

“ Կարծիցե՞ք դուք թէ բաւականասցի կտակակատարն ընդ այս վերջին պատասխանին ձեր: Սխալիք դուք յոյժ յոյժ, և յիրաւի՝ քանզի նա, և բազումք յաշխարհականաց այնչափ կորուսեալ են այժմ զվարկն որ զեկեղեցականաց, և մանաւանդ զկրօնաւորաց, մինչև առաւել հաւատս ընծայեն աշխարհիկ արանց քան եկեղեցականաց, զորս համարին՝ պարապորդս, կերող և արբեցող, տգէտ և անկարող իմիք.... Ապա չէ այդ վերջին ապաստան յոր կարիցէք զերծանիլ ի ձեռաց նորա:

“ Իբրև համարեցայք թէ ետուք բաւական և զարժան պատասխանին հարցման կտակակատարին, ապա դարձուցանէք զբանս ձեր առ իս գրութեամբդ այսպէս.

“ — Եթէ տեսչութիւն գործոյս անկատար էր ցարդ, կա-
“ տարելոյն եղիցի յայսմ հետէ, մերով փորձառութեամբ
“ և գործունեայ ջանիւ. եթէ նուազեցաք յիմիք, ձեռն ի գործ
“ տուեալ և յայսմ հետէ ջան ի գործ դիցուք յառաւել օգուտ
“ ազգիս, հեռաւորքդ խորհրդով, և մերձաւորքս մտադիւր
“ աջակցութեամբ: ”

“ Առ այս ասեմ նախ՝ թէ հակառակութիւն բանից գոյ դարձեալ ի գրութիւն ձեր. վասնզի սակաւիկ մի յառաջ ասացէք՝ թէ ժողովդ խնամակալաց յառաջադիմութեան վարժարանացս մեծապէս խնամ ունի. ապա ասէք՝ եթէ նուազեցաք յիմիք:... Ապա ասեմ, թէ նուազեցայք դուք ոչ յիմիք միայն, այլ ի բազում իրս, որ ի լրումն բանից կտակի Բարեբարին... և թէ արհամարհեցէք ցարդ զխորհուրդ իմ բովանդակ որ յառաւել օգուտ կարօտելոյ ազգիս:...

“ — Այս անդաստան ազգիս մեծ է, ասէք, բազում մշա-
“ կաց կարօտ և բազմազոյն քրտանց. մի՛ զսակաւուցս դաս-
“ տակս ջլատեսցուք, սակս դուզնաքեայ դժկամակութեանց
“ ինչ ի վնաս կարօտելոյ ազգիս: ”

“ Ասեմ ես, այո՝ այս անդաստանս ազգիս մեծ է և ընդարձակ, բայց դուք տեսութեամբ ձերով, կարճատես անձնասի-

րութեամբ, ամփոփեալ էք զայն ընդ հորիզոնիւ Պօլսոյ . . . և մնակաց կարօտ և բազմագոյն քրտանց, այլ դուք շատ համարիք յայն զմի մնալ, զՀ. Աբրահամ, և զքրտունս նորա, որով և չըստեք զդաստակն այնորիկ, որ կորզեաց ի բերանոյ աւխծուց զնունդ մնաց որբ և աղքատ մանկանց կարօտելոյ ազգին իւրոյ, և լքուցանէք զսիրտ նորա որ զամս երեսուն ի սոյն վաստակեցաւ, սակս անաչառ բանից գրութեան նորա յօգուտ նորին իսկ կարօտելոյ ազգին իւրոյ : . . .

« — Թերութիւնք անգոյք և մանունք բանակռուութեամբ
« ստուար երեւին և ոչ ուղղին. առ ուղղութիւն նոցին հա-
« մակամ գործունէութիւն պիտի : »

« Ասեմ ես. այո՛ զի երկու միլիոն ֆրանք դրամագլուխ ի ծախս թերակատար ուսմանց քառասուն ևեթ կարծեցեալ աղքատ մանկանց Պօլսեցւոց միայն, թերուցիչք անգոյք և մանունք են յաչս ձեր, և ազգարարութեամբս իմով ստուար երեւին, բայց չազդեն այնք բնաւ մտաց ձերոց : Առ ազդուութիւնն, անձամբ փորձ ի վաստակս պիտի : . . . Ապաքէն ի դէպ եղանէ առակն այն ռամիկ, թէ՝ « Կամ ծեծ չես կերած և
« կամ համբանք չգիտես : » և զի արդարանայ ասացեալն իմ ուրեք, թէ ի կղզւոջ Երանելեաց բնակեալ՝ ոչ իմանայք ըղձչուառութիւն ազգիս : . . .

« — Վայրապար ճգնիք, ասէք, ցուցանել թէ ազգն չունի
« զմէնջ համարումն յուսումնական և ի տնտեսական կառա-
« վարութեան : »

« Ասեմ ես. այո՛ վկայելով և իմ ի փորձոյ, թէ վայրապար է խրատ այնոցիկ, որոց եղեալ ի մտի թէ չունին ինչ պակասութիւն . . . վասն որոյ և ընդ այս ընդունայն ազդարարութիւն իմ խնդրեմ ի ձէնջ թողութիւն : . . . Այլ այսչափ միայն կամիմ ծանուցանել ձեզ, թէ չէին ինձ կամք ի գրութիւնս իմ անդ սրտաբեկ զձեզ առնել, ոչ վարկիւ զձէնջ ազգիս, և կամ վարկիւ նորին զձեզ ամբարտաւանացուցանել. զի զհամարումն և զոչ համարումն տգիտաց ես ոչինչ համարիմ՝ քան զնոցին իսկ իմաստնոց. և թէ՝ չեն անդ բանք իմ նախադասելոյ զդպրոցն Եգիպտացւոց դպրոցին մերոյ, այլ թէ

ազգային մանկունք եկեալք յԵգիպտոսէ զետեղեցան նոյնպէս ի դպրոցս Գաղղիացւոց ։

« Այպա աւելորդ էր համեմատութիւն ձեր որ ընդ դպրոցն մեր և ընդ դպրոցն Ափրիկեցւոց, և քննութիւն ձեր որ ընդ այն վայրապար, չունելով ինչ պատճառ ։ . . .

« — Դպրոցին վարչութիւն բազմապատիկ է, ասէք, վար-
« չութիւն ի դրամական իրս, վարչութիւն ուսման, և այլն,
« և ընդհանուր վարչութիւն դպրոցացս, զորս խնամակալքս
« ունիմք ։ Արդ զորո՞յ վարչութենէ իցեն դանգատք ձեր. ասա-
« ցէք համարձակ, զի ըստ այնմ ուղղեսցին ։ »

« Ասեմ ես, թէ չէր պարտ ձեզ ընդ այս տարակուսիլ և զիս հարցանել, տեսանելով ձեր զկնի բառին վարչութիւն զբուն անուղղութիւն ի մատակարարութիւն իրաւանց ազդատաց ազգիս, կամ որ նոյն է, ընդհանուր վարչութիւն դպրոցացս, իբրեւ պատճառ ամենայն մասնաւոր և թերի վարչութեան . . . վասն այսորիկ չգանգատեցայ ես երբէք զյոռութենէ վարչութեան մասնաւորաց, գիտելով զպատճառն յառաջ եկեալ ի թերութենէ ընդհանուր վարչութեան դպրոցացս, որպէս և ակնարկեալ եմ և յայլ թուղթս իմ ։ . . .

« Ահա ասացի ձեզ զայն վերստին և մեկին, բայց չգիտեմ, թէ զիա՞րդ ուղղեսցի այն, չընդունելով ձեր բնաւ՝ թէ կայցէ թերութիւն ինչ յընդհանուր վարչութիւն դպրոցացս, զոր խնամակալքդ ունիք ։ . . .

« — Եւ ի ստորեւ յասել անդ, թէ զվարժարանին զառտը-
« նին կառավարութիւն պարտ է յանձնել ի ձեռս Գաղղիաց-
« ւոյ ուրուք, յայտ առնէք թէ ձեր դանգատ վասն առտնին
« վարչութեան է, որ վասն և հրաժարիք իսկ ի պաշտօնէն,
« անբաւական զանձն համարեալ ։ Եւ ի բազում ուրեք անխ-
« բառ վարչութիւն ասելով իմանայք զընդհանուր վարչու-
« թենէ ժողովոյն, թէ ընդէ՞ր ցարդ անխրաւեալ իցէ՝ չտալով
« ի ձեռս ուղչին զամենայն իշխանութիւն դպրոցական, ըզ-
« ներքին տնտեսութիւն ի դրամական գործս, զուսումնական
« կառավարութիւն, և ոչ թողեալ զբովանդակ կառավարու-
« թիւն ի ձեռս նորա ։ »

“ Առ այս հաստուած բանից գրութեան ձերոյ պարտ է ինձ յառաջ բերել և զհաստուած բանից գրութեանս իմոյ, և տեսանել թէ կայցե՞ն ի նմին այնպիսի բառք և իմաստք բանից, որպիսի են ի գրութիւնս ձեր յայս :... Ահա՛ բանք գրութեան իմոյ՝ որ վասն Գաղղիացի վարժապետին և որ վասն ուղչի վարժարանին, ունելով այսպէս.

“ — Պա՛րտ է, զի մանկունք վարժարանին զամս հինգ դաս-
“ տիարակեսցին և մարզեսցին յԵւրոպացի քաջ վարժապետէ,
“ յընտիր քաղաքավարութիւն, ի բարձրագոյն գիտութիւնս,
“ և ի կենցաղօգուտ արուեստս. և թէ՝ կարօտիմք մեք իմաս-
“ տուն առաջնորդի ուրուք Եւրոպացւոյ, առ միոյ փորձի
“ ի վարչութիւն վարժարանի : ”

“ Արդ կայցե՞ն ի սմին բառք զառնելն կառավարութեան վարժարանին, զոր պարտ է յանձնել ի ձեռս Գաղղիացւոյ ուրուք. և կամ տայցե՞ն բանքս այնպիսի իմաստք, որպիսի տուեալ էք դուք նոցին, թէ զուսմանց են բանքս և զարտաքին քաղաքավարութենէ մանկանց ....

“ Հաստատեսցի այս և ի բանից գրութեանս որ յաղագս ուղչի վարժարանին, գրելով այսպէս.

“ — Պարտ է Միաբանութեանս զայնպիսի անձն կարգել
“ ուղղիչ վարժարանայս, յորոյ ճանաչումն, ի փորձ, և
“ ի գնացս վստահ իցէ ինքն, և թողուլ ընտրութեան և հա-
“ ճութեան կամաց նորին զայլ պաշտօնեայս վարժարանացս,
“ տալով զնոսին իբրև օգնական և ընկեր նմին, և ոչ իբրև
“ ուրոյն ուրոյն սեպհական իշխանութեամբ և անկախ ի նը-
“ մանէ, որպէս կարգեցան ցարդ և տեսան արդիւնքն որ
“ ի կարգաւորութենէ անտի և ի կարծեցեալ իրաւանց նո-
“ ցին : ”

“ Նա արդ՝ գտանիցի՞ն յայտնիկ բանս գրութեան իմոյ բառք և իմաստք բանից հրաժարելոյ ուղղիչն յառանձին վարչութեանն և յանձնել զայն ի ձեռս Գաղղիացւոյ ուրուք .... Ո՞չ ապաքէն զուսումնական կարգաւորութենէ և զարտաքին քաղաքավարութենէ մանկանց են բանքս ....

“ Եւ եթէ չիցէ այսպէս, ապա ընդէ՞ր վերստին և կրկին

օրինակել և տուեալ ինձ ձեզ վերոյիշեալ հատուած կամ գլուխ բանիցն, այլ և յիշատակեալ իբանս որ զՆերսէսի վարժապետէն . . .

« Եւ հետեւիցի՞ ի գանգատանաց իմոց, որ ընդ անուղղու-թիւն մատակարարութեան, կամ ընդհանուր վարչութեան վարժարանացս, պահանջումն ուղղին, ունել ի ձեռին իւրում զամենայն իշխանութիւն դպրոցական՝ և զբովանդակ կառավա-րութիւն զներքին և զարտաքին : . . .

« Ապաքէն ոչ բնաւ : . . .

« Ապա ուստի՞ հնարիցէք դուք զայսոսիկ աւելորդ բանս, և ընդէ՞ր ետուք այսպիսի իմաստս բանից գրութեան իմոյ : Եւ եթէ այսպէս իմացայք դուք զբանս գրութեան իմոյ, որպէս և մեկնէքդ, . . . ապա առ ի՞նչ աղաչիցէք զիս մեկնել ձեզ զայն, թէ զորո՞յ վարչութեանն է թողութն իմ, և թէ յորո՞ւմ ինձ ան-սայթաք ուղղութիւն վարժարանին, որպէս զի ժողովդ ըստ այնմ կարասցէ որոշել ինչ. քանզի պարտ էիք որոշել ինչ մանաւանդ թէ որոշեալ իսկ էք, արհամարհելով զամենայն առաջարկութիւնս իմ զարմանալի քաղաքավարութեամբդ, Ցարգոյապատիւ և Վերապատուելի բարիք (*)... այլ և պարտ էիք վճիռ Վատիկանեան ընդդէմ ինձ հանել, կամելով իմ յափշտակել զիրաւունս իշխանութեան ձերոյ հաւատացելոյ ի Բարերարէն : . . .

(*) Որք միանգամ ոչ ճանաչեն զմեղմեխ բարս և զանպատեհ գնացս Գերապայ-ծառ Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի ի սկզբանէ հետէ, վայրապար քննութիւն հա-մարիցին զքաղաքավար բանից նորա տատանօք, և տարապարտ զուշակութիւն զվատիկանեան վճռոյն. բայց իբրև ճշմարտի քննութիւնն, և իբրև կատարի գուշակութիւնն ո՞չ ապաքէն արդարանալով արդարանայ Հ. Սարգիս ի բանս իւր այս :

Իսկ զի՞նչ ասասցուք զարհամարհութենէ առաջարկութեան նորա որ ի ժողո-վոյն. ո՞չ ապաքէն պտուղ իցէ այս ինքնահաճ կամաց և անճանաչող մտաց նո-րին . . . և չիցէ՞ այս պատճառ տգիտութեան ազգիս, և նախատանաց միաբա-նութեան. և այս յետ հաստատելոյ նորա յՆերսէսեան զամս հարիւր յիսուն, և այս յետ ունելոյ նորա ի ձեռին իւրում երեք միլիոն փրանք գլուխ դրամոյ թո-ղեալ ի բարերարաց վասն լուսաւորութեան համօրէն ազգիս. չահ դրամագլխոյն այնորիկ զամս երեսուն բերէ չորս միլիոն փրանք. քանի՞ մանկունք զատոխ-րակեցան այնու, և զի՞նչ օգուտ եղեւ ազգին հայոց, ըստ դիտաւորութեան բարերարաց, և ըստ ակնկալութեան Հ. Սարգսի, վասն որոյ զամս չորեքտասան

“ — Կարի ի խոր խոցեալ վիրաւորեցաք, ասէք, ընդ բանս
“ ուրումն, որ գող և խաբեբայ անուանեալ ասէք, զձեզ ։
“ Եթէ ճշմարիտք իցեն բանք ուրումն, արդարեւ յանդուգն
“ են և անիրաւք, և մեզ անհնարին վիշտ ։ ”

“ Ասեմ ես, թէ ճշմարտութիւն բանիցս է ի հաւաստիսն զոր
ունիմ ի ձեռինս, և զոր պարտ էիք նախ տեսանել, ապա
գցաւս ձեր ընդ այն ցուցանել և զպատճառսն քննել, թէ
ուստի՞ յառաջ գայցէ այն, և թէ զի՞րդ հնար իցէ դարման
տանել այնմ. քաղաքավար բանի՛ւք միայն, թէ արդեամբք
իսկ ։

“ Թէպէտ և առաջինն կարեւոր է յընկերութիւն մարդկան,
բայց կարեւորագոյն զերկրորդն գիտեմ ի միաբանութեանս,
զի այն է զօդ և հոգի նորին. ի պակասիլ այնորիկ, չկարէ
առաջինն պահել զնա յակաստանի . . . զի եթէ պակասեալ
համարիցիք զիս յառաջինն, չկարէք ցուցանել զի պակասեալ
իցեմ ես յերկրորդն. քանզի իւրաքանչիւր բանք իմ ի գրութիւնս
առ այլս, ըստ իւրաքանչիւր արժանեացն են կշռեալք ։ . . .
Ապա ցանկալի էր և ինձ, զի զամենայն ինչ ամենեքեանդ
գիտէիք, և այնպէս առնէիք դատաստան . . . ապա թէ ոչ՝
սխալիք դուք յայն, որպէս սխալեցայք յայլ բանս գրութեան
ձերոյ ։ . . .

“ — Թողեալ, ասէք, զհեգնական բանս Վերապատուու-
“ թեանդ որ յաղագս ուսումնական կարողութեան Միա-
“ բանիցս, քանզի անհնարին է մեզ առանց շառագունելոյ

ոգւով չափ աշխատութեամբ վաստակեցաւ . . . ահա վասն այսորիկ էր առա-
ջարկութիւն նորա առ ժողովն ի դարման տանել վնասուն, և ահա զայս առա-
ջարկութիւն նորա արհամարհէ նա, հանդերձ ստորանօք ։ . . .

Մեղուցեա՞լ իցէ Հ. Սարգիս ցաւելով ընդ վնաս ազգին, ընդ նախատինս միա-
բանութեան, և ընդ վրիպումն ակնկալութեան իւրոյ ։ . . . Դատեցին վերծանողք
պատմութեանս ։ . . .

Ասիցեն արդեօք, թէ կամք էին Գեր. Հիւրմիւզի հանելոյ զՀ. Սարգիս ի պաշ-
տօնէ անտի տեսչութեան, կարող էր նա առնել զայն Մեծաւոր գոլով նորա ։

Ասեմք այո՝ կամք էին նմա ի սկզբանէ հետէ առնել զայն, բայց չունէր նա
զեռ ատար կամաց իւրոց ի Հռովմայ, վասն որոյ կասէր ի ձեռնարկութենէ
անտի. ապա չէր վայրապար բողոքն Հ. Սարգսի որ ընդ զնացս Գեր. Հիւրմիւզի,
և ոչ տարապարտ զուշակութիւն նորա որ զվատիկանեան վճռոյն ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

“ ընթեռնուլ զայն և պատասխանել ։ ” Թէպէտ և բանք իմ առ ձեզ ոչ են հեզնական, որպէս և կարծէքդ. քանզի անձնասիրութիւնն որչափ և նուազ իցէ յոք, չներէ նմա զանձն իւր հեզնել, եթէ համարիցիք ղիս արդեօք անձն ոք ի միաբանիցդ ։ . . .

Սակայն ասեմ ես, և իրաւամբք, և փորձիւ իսկ, թէ լաւ է շառագունել ձեզ ի վանս, քան արտաքոյ վանացդ, ի մէջ ուսումնական ընկերութեան, որպէս և շառագունեցան ոմանք յեղբարցդ . . . զի շառագունել ձեզ այդր՝ չբերէ ձեզ ամօթ առաջի օտարաց, և ոչ վնաս ինչ ազգաստաց, այլ զնախանձ ձեր շարժէ ի գիտութիւնս, և զջանսդ առաւելու յառաջադիմութիւն վարժարանացս. իսկ այլուր շառագունելդ՝ ձեզ ամօթ և այլոց վնաս ։ . . . Ցուշ լիցի ձեզ ասացեալն իմաստնոյն.
“ Լաւ են հարուածք բարեկամի, քան զկամակոր համբոյրս
“ թշնամւոյ ։ ” Ապա ոչ են հեզնական, այլ կարեկից սրտի և քաջալեր բանք, եթէ կամիք արդեօք հաւատալ ։ . . ,

“ — Անցցուք, ասէք, յայն բան զի ասէ. Առ ուղիղ վար-
“ չութիւն վարժարանիս կարօտիմք մեք իմաստուն առաջ-
“ նորդի Եւրոպացւոյ, որ փորձ իցէ ի վարչութիւն դպրոցի ։
“ Վերապատուութիւնդ յընթացս գրոց իւրոց բովանդակ
“ գանգատեցաւ զընդհանուր տեսչութենէ Աբբային կամ
“ խնամակալաց ժողովոյն, զակնառու ընտրութենէ մանկանց,
“ զուսմանց նոցա, զվարկմանէ մերոցն ընդ դպրականսդ, և
“ Աբբային զձէնջ, և այլն. և ապա յայն հանգոյց զբանն, թէ
“ կարօտի վարժարանս Եւրոպացի առաջնորդի. և չգիտեմք
“ թէ որպէս միաբանիցին այսոքիկ ։

“ Եթէ գանգատանք Վերապատուութեանդ ցարդ զներքին
“ տեսչութենէ վարժարանիդ էին, մարթ էր յայնժամ հե-
“ տեւեցուցանել ։ Բայց եդեալ եւս թէ զներքին տեսչութենէ
“ էին, յանձն առնելով զվարժարանդ ի ձեռս Գաղղիացւոյ,
“ լիցի՞ դարման չարեացն, զորոց բողոք կալաւ Վերապա-
“ տուութիւնդ,

“ Եթէ այդչափ անիրաւ ոմանք իցեմք, չկարիցե՞մք յայնժամ
“ եւս ակնառութեամբ և խաբէութեամբ ընտրել զմանկունս.

« մի թէ այնու մանկունք անկարգ և անկանոն քաղաքին Պօլսոյ
« ուսցին զըղձացեալն մեր ուսումն ի Պօլիս. բժշկեսցի՞ վա-
« րումն և վարկ մերոյն ընդ վարժարանայսդ: Այն զի յա-
« ռաջմնէ հետէ չորք միայն տեսուչք եղեն մերոյս վարժա-
« րանաց, յորոց և մի Վերապատուութիւնդ ճանաչի, որ
« ի բազում ամս ստացաւ ապաքէն ի Պատուելոյն և այդր
« ի Փարիզ զփորձ և զճանաչումն: Եթէ չափաւորութիւն ձեր
« անխտրաւ զօրով յանձն խոստովանի զտկարութիւն և զան-
« կարողութիւն, կարիցէ՞ այլազգ խորհել զբովանդակ միաբա-
« նութենէս: »

« Ոչ կարծէի ես բնաւ, թէ կարեկից և քաջալեր բանք գը-
րութեանս իմոյ առ ձեզ այնչափ չառագունէին զձեզ, մինչև
մոռացուցանել զայլ ամենայն ազդարարութիւնս և զառա-
ջարկութիւնս իմ որք ի նմին իսկ գրութեանս իմում առ ձեզ.
և այնչափ չփոթէին զձեզ՝ մինչև չիմանալ ձեզ զանհետեւո-
ղութիւն և զհակառակութիւն բանից որ ի գրութիւնս ձեր:

« Արդ հարցանեմ ձեզ նախ՝ թէ զանգատանք միա՞յն են
ի գրութեանս իմ անդ, և ոչ դարման ինչ ընդ այն:... Ո՞չ
ապաքէն իւրաքանչիւր թերութեան յիշատակելոյ յինէն անդ՝
յիշատակեալ է և դարման նմին, որպէս աչառանօք ընտրու-
թեան մանկանց, անաչառ ընտրութիւն նոցին. թերութեան
ուսմանց մանկանց դպրոցին ի Պօլիս, փոյթ մերոյն զայնմա-
նէ. կարօտութեան ուսման մանկանց ազգիս ի Հայաստան,
վարժապետել աշակերտաց յելելոց ի վարժարանացս. պակա-
սութեան վարկին ձերոյ զմէնջ, վստահութիւն ձեր ի մեզ:

« Եւ ապա վասն բարձրագոյն գիտութեանց և կարեւոր
արուեստից աշակերտաց վարժարանիս, տեսեալ իմ թէ չու-
նիմք մեք զօք ի մէնջ առ այն բաւական, զոր և ցուցից ձեզ
ապա, առաջարկեցի ձեզ դարման տանել թերութեանն
այնմիկ, առնելով մեզ աստ օգնական զհմուտ և զփորձ ոք
վարչութեան վարժարանի, զԳաղղիացի ոք ատոր, և այնպէս
դարման տանելով իւրաքանչիւր մասնաւոր թերութեան,
դարման տանէր և ընդհանուր թերութեան, անուղիղ մատա-
կարարութեան, կամ տեսչութեան վարժարանիս, որ Աբբային

կամ ձեզ պատկանելոյ: Կայցե՞ն յայսոսիկ անմիաբանութիւն բանիցս ընդ միմեանս: ... Ոչ ընաւ: Ապա ընդէ՞ր ասէք, թէ չգիտեմք թէ ո՛րպէս միաբանիցին այսոքիկ: ... Տեսանէ՞ք զարդիւնն որ ի զուր շառագնելոյ և ի չփոթելոյ ձերոյ, և զփոխարէնն կարեկից և քաջալեր բանիցս առ ձեզ: ...

« Երկրորդ՝ թէ կայցե՞ն ի բանս գրութեան իմոյ այնպիսի բառք և այնպիսի իմաստք բանից որպիսի դուք հնարէք և տայք նոցին: ... Հարցանեմ ձեզ արդ՝ թէ յո՞ր բառից և իբանից գրութեանս իմոյ իմացայք դուք, թէ կամիմ ես յանձնել զվարժարանս և զմանկունս առհասարակ ի ձեռս և ի կառավարութիւն Գաղղիացւոյ, ... և մինչեւ զտեսչութիւն անգամ յանձնել օտարի ... և հետևեցուցանել անտի ասելով այսպէս. « Քանզի վախճան Բարերարին ի յանձնել զտեսչու-
« թիւն դպրոցին Միաբանութեանս և ոչ այլում, այն է յազ-
« գասիրութիւն կրթել զմանկտին: »

« Ոչ ապաքէն յիշատակելով յիշատակեալ եմ ես անդ ըզսեփհական իշխանութիւն Տեսչի վարժարանիս որ ի մէնջ, ի խօսել իմ զպաշտօնէն ա՛յլ պաշտօնէից վարժարանիս ... և կամ յո՞ր բանից գրութեանս իմոյ գուշակէք դուք, թէ կամիմ ես, զի ամենայն ուսմունք և կրթութիւնք ի լեզու Գաղղիացի լիցին, և հայերէն դպրութիւն մնասցէ մեկուսի: ... Ոչ ապաքէն յիշատակեալ եմ ես զայսմանէ որոշակի ի խնդիրս պաշտաման վարժապետացն որ ի մէնջ, և աւանդել զվախճանէն նորին. առ ի պահել աշակերտաց վարժարանիս զլոյս գիտութեան յազգն մեր ի բնիկ իւր լեզուն, ըստ դիտաւորութեան Բարերարին:

« Տեսանէ՞ք թէ քանի՛ օտար և հակառակ են բանք պատասխանւոյ ձերոյ բանից գրութեանս իմոյ, և եթէ յայլուստ ինչ իմացայք արդեօք, պարտ էիք հարցանել ինձ և ստուգել զայն, և ոչ զբանս գրութեան իմոյ այլ ընդ այլոյ մեկնել և թիւր հետևանս անտի գուշակել: ...

« Ահա այս են արդիւնք խնամակալաց ժողովոյն, և գործունեայ ջան նորին ի լրումն բանից կտակի Բարերարին... և ահա աստի կարէք դուք իմանալ և կշռել զօգուտն

և զմնան որ ինախադահութենէ անտի նորին, պատկանելոյ Արքային :

„ Երրորդ՝ թէ յարմարիցին այժմիկ բերեալդ ինձ այն օրինակք վարժարանին Մոսկովայ և վարժոցին Պէպէկի, որոց մին ընդ բռնակալ տէրութեամբ է, և միւսն ի շնորհս և ի կամս Լազարեան կրօնաւորաց . . . և թէ հաստատութիւն իցէ կարծեաց ձերոց, յառաջագոյն ծանօթութիւն լեզուի Գաղղիացւոց իցէ պատճառ ազգասիրութեան, օրինակ բերելովդ ինձ երկուս ոմանս յաշակերտաց Պատաւիոնի, յառաջագոյն ծանօթ եղելոց լեզուին Գաղղիացւոց, անտես արարեալ ձեր զազգասիրութիւն աշակերտաց ոմանց Ռափայէլեան վարժարանին, որք ոչ իսկ ծանօթ էին Գաղղ. լեզուին, և հրաժարեալք ապա յազգասէր վարժապետաց այտի մերոցն. թողից ասել զվարուց նոցին առաքինի և սուրբ կարծելոցն, ըստ բանից տեսչի Ռափայէլեան վարժարանին, Հօր Ռափայէլի: Ապա չէ այդ հաստատութիւն կարծեաց ձերոց :

„ Չորրորդ թէ չկայցէ՞ հակառակութիւն բանից և գործոց ի պատասխանին գրութեան ձերոյ, որպէս և յայսոսիկ բանս ձեր. „ Բայց յայլոյ կողմանէ, ասէք, թէ առաջնորդք
„ վարժարանիդ կայցին իւրեանց խորհրդականս ի փորձառու
„ Գաղղիացւոց ուսմանց և առանին տնտեսութեան : Դար-
„ ձեալ յոր գիտութիւն անբաւական իցեն մերքն ի վարժա-
„ պետել, կայցին զառաջինն Գաղղիացի վարժապետք, և
„ մերքն ուսցին քաջ զնոյն ուսմունս առ ի վարժապետել այլոց
„ դասուց, որով ոչ սակաւ խնայութիւն գործեսցի արծա-
„ թոյն : ”

„ Ո՞չ ապաքէն հակառակ էն այս վերջին բանք ձեր առաջին բանից գրութեան ձերոյ, մերժելով զառաջարկութիւնս իմ ընդ այս բոլորովին. և առաջարկութիւն բանից իմոց ոչ աւելի և ոչ պակաս էր քան զայս բանս ձեր վերջին . . . և հակառակութիւն գործոց ասացի. քանզի ասէք, թէ, „ Մեք յայլ և
„ այլ քաղաքաց և կողմանց զմանկտին ժողովելով հրաժան-
„ գեմք զնոսա միաբանել ընդ միմեանս, և մի խորշել յիրերաց.
„ ուսուցանեմք նոցա զօրէնս ազգասիրութեան, սիրել զազգն

« թէ և տառապեալ անհրահանգ և տգէտ, և յորդորեմք
« զնոսա ձեռնտու լինել ազգին առ ի հանել զնոսա ի տառա-
« պանաց ։ »

« Եւ ո՞չ ապաքէն արդիւնք այս բանից ձերոց չերեւեցան
ցարդ, ապացուցեալ իմ զայս վերագոյն, և մին ի գանգատա-
նացս զայսմանէ է ի գրութիւնս իմ առ ձեզ, և իրաւամբք.
ապա հակառակութիւն է և յայսմ ի գրութիւն ձեր. Թողի՛ց
ասել և զպատճառանացդ որ ընդ հակառակութիւն Պատրիար-
գին Հայոց ի խափանել զմուտ մանկանց նոցա ի դպրոցս ։

« — Անշուշտ, ասէք, բազում առաւելութեամբ գոհ լի-
« ցին Բարերարք վարժարանացս, և ազգս, ընդ ազգասի-
« րութիւն աշակերտացս, քան ընդ ո՛ր և է ուսումն ։ Լա՛ւ
« է սակաւուսումն ոք ազգասէր քան բազմահմուտ ոք ազգա-
« տեաց ։ »

« Առ այս կամագուշակ և առակաւոր բանս գրութեան ձե-
րոյ, հարցանեմ ձեզ նախ՝ թէ զի՞րդ գիտէք դուք զգոհ լինել
Բարերարաց վարժարանացս և ազգիս առհասարակ, նստե-
լով ձեր ի կղզւոջ սրբոյն Ղազարու. միթէ գնացեա՞լ իցէ ոք
ի ձէնջ ի Մատրաս, և գրուած ինչ ի մէջ գրուածոց Բարերա-
րին գտեալ, յորում նշանակեալ իցէ նա զկամս իւր ։ . . .

« Զայսպիսի գրուածս ես միայն գտի անդ, և առեալ զգա-
ղափար նորին բերի ի վանս, յոր և կան բազում կանոն և
պայման դպրոցի, և ըստ այնմ ասացին ինձ կտակակատարքն
ունէր Բարերարն յօրինել զգրաւոր կարծիս իւր և ծրարել
զայն ի կտակի իւրում, այլ ոչ յաջողի այն սակս հիւանդու-
թեան և մահու նորա ։ . . . Այլ թէ անյաջողութիւն այն ի դըժ-
բաղդութիւն կտակատարաց և ազգիս լինի, եթէ ի բարե-
բաղդութիւն միաբանութեանս, քննել զայս աստ յերկար լի-
ցի, և առ տեղեաւս ոչ ի դէպ. Թողի՛ց զայն յայլում ժամա-
նակի և պատեհութեան ։

« Եւ կամ շրջեա՞լ իցէ ձեր ընդ Հայաստան և իմացեալ
զկամս ազգիս, և տեսեալ զկարօտութիւն նորա. միայն զՊօ-
լիս ճանաչէք, և զազգայինս որ անդ, և ի նոսին եւս զուղ-
ղափառս միայն, զծանօթս և զբարեկամս ձեր . . . ապա ոչ

կարէք ասել, թէ « Բարերարք վարժարանացս և ազգս գոհ « իցեն ընդ այս և ընդ այսպիսի տեսչութիւն ձեր ։ »

« Երկրորդ՝ թէ բազմահմտութիւն իցէ պատճառ ազգատեացութեան ուրուք, քան սակաւատեսութիւն. եթէ առաջինն ըստ կարծեաց ձերոց, ապա Գաղղիացիք Անգղիացիք և Գերմանացիք ազգատեացք են, զի սոքա են հմտագոյնք ի մէջ ազգաց Եւրոպայ ։ . . . Ո՞չ ապաքէն երկրորդն է պատճառ այնմ, որ և յայտնապէս տեսանի այժմ յԵւրոպայ . . . և ո՞ւր թողցուք զճշմարիտ ասացեալն մեծին Պաքոնի, ընդ որ հաւանեալ են ամենեքին, թէ « Դուզնաքեայ իմաստասէրն անաստուած « լինի, իսկ խորին իմաստասէրն Աստուածապաշտ (*) ։ » Ապա ոչ է ճշմարիտ ասացեալդ ըստ ինքեան, և ոչ խնդրոյս ինչ պատկան ։ . . .

« Իսկ որ առաւել ապշութեան մնաց և ցաւոց սրտի արժանի, են են ապաքէն այս բանք գրութեան ձերոյ . « Արդ՝ « զայդ գործ, այսինքն յանձնելոյ զՄուրատեան վարժարանն « ի կառավարութիւն Գաղղիացւոյ, վնասակար թուեցաւ, և « ճանաչէ ժողովս ազգիս ։ »

« Եւ ես հարցանեմ ձեզ արդ՝ թէ զի՞նչ նոր ժողով իցէ այդ՝ յորոյ անուն պատգամ և վճիռ տայք դուք ինձ այտի . . . քանզի մինչեւ ցարդ յանուն խնամակալաց ժողովոյն խօսէիք և որոշէիք ինչ, այժմ յանուն ժողովոյ ազգին խօսիք և վճռէք ։

« Ապաքէն ես ոչ գիտէի ցարդ, զի ազգս իրաւունս ունի խառնել ի գործս յայս վարժարանիս, և քննութիւն և դատաստան առնել զգնացից իմոց որ ընդ այս ։

« Արեմն պարտ է ինձ այսուհետեւ նմա՛ տալ զհամար ցայսվայր գործառնութեանս և կարծեաց իմոց որ յիրաւունս աղքատաց իւրոց այժմիկ, որպէս զի մի՛ այլ ընդ այլոյ ինչ իմացեալ ի ձէնջ զգործոց և զկարծեաց իմոց, համարիցի զիս

(*) Ի հաստատութիւն այսմ տացուք աստանօր զօրինակ մի, զերեւելին յայժ ի բնախօսս զՆեւտոն որ ի բանս և ի գիրս իւր, յորժամ զանուն Աստուծոյ կոչէր՝ խոնարհեցուցանէր զգլուխ իւր յերկրպագութիւն նմին, խոստովանելով զնա աբարիչ հրաշալեացն որք ի բնութեանն և ընդ որս հիանայր և սքանչանայր ։

Թողումք յիշել զայլ օրինակսն որք ի հին և յարդի բնախօսս ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

ազգատեաց ոք և վնասակար մանկանց իւրոց, օտարացուցանելով իմ զնոսա ի հայրենեաց իւրեանց, որպէս դուք համարիք զիս այսօր, ցուցեալ զայն յայտնապէս ի բանս պատասխանւոյ ձերոյ առ գրութիւնս իմ (*) . . . .

« Տեսանէք արդ թէ ո՛ւր տարեալ հասուցանեն յոչկամացս զյանդգնութիւն բանիցս և զանզգամութիւնս միանգամայն, կարծեցեալ իրաւունք ձեր և զօրաւոր պատճառքդ, յարհամարհել խսպառ զկարծիս իմ ի խնդիրս յայս, և առ ոչինչ համարել զարդիւնս իմ, զոգւով չափ աշխատութիւնս յօգուտ ազգիս և ի փառս Միաբանութեանս . . .

« Ո՛չ ապաքէն արդարանայ ասացեալն իմ վերագոյն, թէ զարդիւնս բանից կարեւորագոյն գիտեմ ի Մխիթարեանս, և ոչ զքաղաքավար բանս. և յիրաւի՝ քանզի զի՞նչ պատիւ և մխիթարութիւն ինձ իցեն քաղաքավար բանք ձեր այսօրիկ, չասացից թէ հեգնական, Վերապատուելի և Յարգոյապատիւ բարեկամքդ, . . . մինչդեռ արդեամբք նախատէք և ցուցուցանէք զսիրտ իմ անհնարին . . . զի եթէ կշիռ ծանրութեան բանից խորաքննիչ՝ բացուած այն է, զի լսողն գիտէ և ոչ որ ասէն, ապա և զկշիռ ծանրութեան ցաւոց կրողն միայն գիտէ և ոչ որ ներգործէն . . . .

« Նզովելով նզովէի զարդեօք զօրն, յորում մխեցայ ես ի գործս յայս, եթէ . . .

« Որ ունի միտս իմանայ և որ ունի զգայութիւն զգայ, թէ

(*) Եթէ համարիցին ատտանօր չարաչար մեկնել Հ. Սարգսի զբանս խնամակալաց ժողովոյն, ունիմք մեք արդարացուցանել զնա հաւաստեօք բանիւք թղթոյ Հ. Ռափայէլի առ Գեր. Եղուարդ ի Փարիզ, որ ունի օրինակ զայս . « Զայս մի- « այն սաէպ զմտաւ ածեմ, մի գուցէ զխաւարքս թոյլք գտեալ ի գործն Աստուծոյ, « և ոչ արժանի վստահութեամբ խրախուսեալք ի նա, մերով վհատութեամբ « պատճառք կամ տածիչք լինիցիմք թերութեանց եղելոց ։

« Այս մտածութիւն ոչ խսպառ հանգուցանէ զմիտս իմ ի վերայ վարժարանիդ, « զի զպէտոյս նորա յայտնապէս տեսեալք և ձեռնթափ լինիցիմք ի դարմանելոյ, « զի ոչ միայն անիրաւեմք առ ծնողսն այնոցիկ որ զծախսն հատուցանեն զաստիարակութեան նոցա, այլ առաւել անիրաւիմք առ Աստուած, զի ոչ զուն « գործեմք մերովսանն հատատուն սկզբամբք զփրկութիւն հոգւոյ նոցա արկանել յանստերիւր պողոտայ ։ » (Հ. Ռափայէլ Վ. Թրեանց ։)

Անհաւասիկ հաւաստիք արդարանալոյ Հ. Սարգսի ի մեկնութիւն իւր ատտանօր ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

զի՞նչ կամիմ ասել, և զինչ պարտ էր ինձ առնել, հայեցեալ ի բանս ձեր և ի գնացուդ որ ընդ իս այսօր։ . . .

« Զայս այսպէս և այսչափ միայն խելամուտ արարեալ, դարձայց ի կարգ բանին, ի պատասխանիս ձախողակի կարծեաց ձերոց որ զխնդրոյ առաջարկութեանս իմոյ, հարցանել ձեզ, թէ ընդէ՞ր այս ամենայն հակառակութիւն բանից և գործոց ձերոց ընդ այս առաջարկութիւն իմ։ . . .

« Մի թէ մեղա՞յ ես յայսմ, զի խօսեցայ զճշմարտութիւն, զանբաւականութիւն ասեմ միաբանութեանս ի գործ յայս մեծ և կարեւոր, որ ի լուսաւորութիւն ազգիս առհասարակ, ըստ գիտաւորութեան հանգուցեալ Բարերարին, Սամուէլ Մուրատի։

« Այո՛ ասէք, մեղանչես դու, զի Նախատես զբովանդակ Միաբանութիւնս, տկար և զնա իբրեւ զքեզ կարծելով. « Եթէ « չափաւորութիւն ձեր անվստահ գոլով յանձն իւր խոստո- « վանի զակարութիւն և զանկարողութիւն, կարիցէ՞ այլազգ « խորհել զբովանդակ Միաբանութենէս։ »

« Քննեցից ես զայս խնդիրս անաչառութեամբ, և տեսից զիրաւունսն. վասն որոյ հարցանեմ ձեզ նախ՝ թէ զօ՞ր բարձրագոյն գիտութիւնս, և զի՞նչ դեղարուեստս կամիք դուք զի ուսանիցին աշակերտք վարժարանիս ի Փարիզ... զուսումնականութի՛ւն, զբնագիտութի՛ւն, զքիմիական և զմեքենական արուե՞ստս։

« Երկրորդ՝ թէ ո՞վ ոք ի միաբանիցդ գիտէ և կարող է զմի ի գիտութեանց և յարուեստից աստի ուսուցանել աշակերտաց վարժարանիս։ Ապաքէն և ոչ ոք. զի չէ ոք ի միաբանիցդ ուսեալ զայն ի վարժապետէ ուրուք, ապա և չկարէ նա ուսուցանել զայն աշակերտաց վարժարանիս. և ոչ միայն զբարձրագոյն գիտութիւնս և զգեղարուեստս չգիտէ ոք ի միաբանիցդ և չկարէ զայն ուսուցանել աշակերտաց վարժարանիս, այլ և ոչ զառաջին սկզբունս ուսմանց ամենայն ոք ի միաբանիցդ ուսեալ է կարգաւ և կարող է ուսուցանել զայն այլոց կարգաւ։

« Թէպէտ և գիտիցեն զայն ոմանք, այլ ի միտս իւրեանց,

և ոչ ի խելամտութիւն այլոց . և ահա վասն այսորիկ ի մէջ բոլոր միաբանիցդ սակաւ յոյժ ոմանք գտանին որք կարող են ուսուցանել զայն այլոց, և զայն չափաւորապէս ։

« Գիտեն միայն միաբանքդ, թէպէտ և ոչ ամենեքեան, քնտիր առնել ի մէջ շարագրութեանց մերոց ի հայկաբանութեան, արհամարհելով զվկայութիւն այլ մարդկան որ ընդ այն, իբրև շաղփաղփ և ժանժաղ մտաց բանք, և պանծալ յայն . . . թէպէտ և այդ պանծալի գիտութիւն չունի սատ պիտանութիւն, որում և դուք ինքնին վկայէք, յասել անդ, թէ « Ուսուցա-
« նեմք մանկտւոյն զհայերէն, ոչ զի անթերի հայկաբանք
« իցեն, այլ ծանօթ լինել լեզուի իւրեանց ։ »

« Յիշեմ ես քաջ, զի ոմն յիմաստնոց ձերոց այտի, սկըսեալ է ի տասն ամաց հետէ յօրինել համառօտ ինչ Թուաբանութիւն ի պէտս աշակերտաց իւրոց, և զի տեսի ես աչօք իմովք ի վերայ գրասեղանոյ նորին քսան և աւելի հատոր Թուաբանութեան յօրինեալ ի զանազան հեղինակաց և ի լեզուս, յօժանդակիլ անտի . սակայն չերևեցաւ ցարդ Թուաբանութիւնն այն ։ . . .

« Թողի՛ց յիշել զհմտութենէ վարժապետաց վարժարանացս, որք ի սկզբունս անգամ ուսմանց, զվաղուեան զասն զոր ունին տալ աշակերտաց իւրեանց, այսօր ինքեանք ուսանին, և իբրև զառաջինն յայն պարապեալ նոցա . . . և Թողի՛ց յիշատակել զծաղրականն զայն առակն որ առ զեռավարժ մանկունս վարժարանիս, որոց տարակուսեալ յինչ ինչ բանս և հարցեալ ընդ այն զվարժապետն, լսեն ի նմանէ պատասխանի թէ պարտ է զգիրսն քննել ։ . . .

« Ահա կարողութիւն և բաւականութիւն բովանդակ միաբանիցդ ի բարձրագոյն գիտութիւնս և ի գեղարուեստս, զորս կամիք զի ուսանիցին աշակերտք վարժարանիս ։ Կարիցէ՞ ոք ի ձէնջ հակառակիլ ապացուցական բանիցս այսոցիկ ։ . . .

« Ապաքէն և ոչ ոք բնաւ ։ . . .

« Ապա ընդէ՞ր այսչափ ցասուցեալ էք ընդ իս, զի խօսեցայ ես զայս ճշմարտութիւն գրութեամբս առ ձեզ, զանբաւականութիւն մեր այժմ ի գործ յայս մեծ և կարևոր որ ի յու-

սաւորութիւն ազգին մերոյ հաստատեալ է, և զկարօտութիւն մեր աստ իմաստուն առաջնորդի միոյ Գաղղիացւոյ, առն միոյ ի վարչութիւն վարժարանի : . . .

“ Տեսանե՞ք զգրաւհետ վարիլ ձեր յոյս և զտարապարտ բարկանալդ ինձ :

“ Իսկ զի՞նչ ասացից զբարոյական գիտութենէն, զքաղաքավար կրթութենէ ասեմ աշակերտաց վարժարանիս, զոր դուք դիւրին ինչ համարիք, ի փորձս մերոցն միայն թողեալ : Ո՞րբ և յո՞ր ընկերութիւն փորձ եղեն մերքն յայն : . . . Ի միաբանութեանս միայն և ի հրահանգս կրօնաւորական : Իսկ աշակերտաց վարժարանիս կարգեալ գոլով ի վիճակ աշխարհական, ապա պիտոյ է սոցա և այլ այնպիսի դաստիարակ որ փորձ իցէ այնմ առ ի կրթել զսոսա յայն, թէ ո՞րպէս պարտ իցէ սոցա կենցաղավարիլ ընդ զանազան աստիճան մարդկան, եթէ ի խօսս, և եթէ ի շարժմունս, յորս անփորձ են մերքն և անծանօթ այնմ : Եւ ահա վասն այսորիկ եւս գրեցի առ ձեզ, թէ կարօտիմք մեք աստ իմաստուն առաջնորդի, փորձ առն միոյ Եւրոպացւոյ ի վարչութիւն վարժարանի, ընդ որ ձեր նախ հակառակեալ, և ապա ակամայ հաւանեալ :

“ — Յարգոյապատիւ Հայր, ահաւասիկ մերս առձեռն
“ պատասխանի կարեւոր հատուածոց թղթոյ ձերոյ գրելոյ
“ ի 20 դեկտ. որպէս դուք յազգասիրութենէ շարժեալ գրե-
“ ցէք զոր գրեցէքդ, այսպէս և ժողովս պատասխանի ի նոյն
“ հոգւոյ գիտասջի՛ք : ” Ասէք :

“ Այո՛ առձեռն պատասխանի, յետ երից ամսոց խորհրդակցութեան, և այն ոչ ամենայն բանից թղթոյս պատասխանի, այլ կարեւոր կարծելոցդ միայն, զի մնացելոյն անտի չէր ձեզ ձեռնտու և ոչ հաճոյ տանել պատասխանի : Այլ ես արարի պատասխանի գրեթէ ամենայն բանից թղթոյ ձերոյ գրելոյ յ7 մարտի, և այն առանց քաղաքավար բանիւք, զարդիւնս բանից կարեւորագոյն համարեալ քան զսին բանս քաղաքավարութեան : . . .

“ Սակայն զարմանամ ես, թէ զի՛արդ նովին հոգւով, որով ես շարժեալ գրեցի, արարեալ իցէ՛ք դուք պատասխանի. քան

զի ես յազգատեաց հոգւոյ շարժեալ գրեցի զոր գրեցի, որ-
պէս և ցուցանէք դուք ի գրութիւն ձեր, հանդերձ վճռով
ազգին ։ Ապա զիա՞րդ մարթ իցէ ազգասիրացդ նովին հոգւով
առնել բանից թղթոյ իմոյ պատասխանի . . . զգուշացարուք
հաւատարիլ ինձ յայսմ ընդունայն, զի մի նովին քննու-
թեամբ և ընդ վճռով ազգին անկանիցիք և դուք ։ . . .

« Հեզնութիւն բանից չիցէ ձեզ արդեօք ախորժելի, սա-
կայն ի գրութիւն ձեր յաճախ գտանի ։ « Վիշտ մեծ է մեզ,
« ասէք, զի ի մէջ վանականացդ անկեալ է հոլութիւն սի-
« րոյ, ի պատճառս ոչ բարւոք իմանալոյ զմիտս իրերաց, յոր-
« մէ առաջ գայ խստիւ քննել զգործս միմեանց ։ »

« Ասեմ ես, թէ հոլութեան սիրոյ պատճառն՝ չէ ոչ բար-
ւոք իմանալոյ զմիտս իրերաց, այլ չկամիլ իմանալ զայն, չկա-
միլ ճանաչել զիրաւունս և զարդիւնս այլոց ։ . . . Վշտանա՞յք
ընդ այս երբէք, թէ առաւել ես խստանայք ։ . . .

« — Եթէ ոչ կանխեալ զառաջս այսօրիկ ունիցիմք, ասէք,
« յայտ է թէ և յետ այսօրիկ նոյն եղիցի, և այնու վարժա-
« րանացս չգործեմք օգուտ և զմիաբանութիւնս ի կործա-
« նումն երագեմք ։ »

« Ասեմ ես, եթէ ոչ ջանայցէք դուք զպատճառս հոլու-
թեան սիրոյ, զոր վերագոյն ասացի, բառնալ ի միջոյ, ոչ մի-
այն յետ այսօրիկ նոյն եղիցի, այլ և ցրտագոյն ևս արդեօք,
և այնու ամենայն ինչ հարկաւ եղծանիցի (*)․ զի սիրով և ար-
դարութեամբ ամենայն ինչ եղեալ է և լինի յաշխարհի . . .
ապա պարտ է իւրաքանչիւր զգուշանալ ի կողմանէ իւրմէ չլի-
նել պատճառ չարեաց, վնասուց ասեմ հասարակաց ։ . . .

« — Արդ չիք այլ դարման բժշկութեան իրացս, ասէք,
« եթէ ոչ, Արգոյ Հայր, յարուցեալ եկեսցես առ մեզ, զի բե-
« րանացի իմացուսցուք զմիտս և զսիրտս իրերաց, և խոր-
« հեսցուք քաջ զօգուտ վարժարանացս և ուխտիս, և եղբայ-
« րասցուք ընդ միմեանս սիրով, որով միայն է անսայթաք

(*) Ո՛չ ապաքէն ամենայն ինչ եղծանելով եղծաւ, ի պակասել խաղաղ սիրոյ և արդարութեան, և ի կատարել միայն կամաց և ցանկութեան Գեր. Հիւրմիւզի ։
(Ծանօթութիւն Հեղինակին ։)

« ընթանալ իրաց վարժարանիդ և յառաջադէմ զարգա-
« նալ: »

« Առ այս կարծեցեալ դարման բժշկութեան իրացս ասեմ ես նախ՝ եթէ այսչափ գրութիւնս իմ առ ձեզ ցարդ, թողեալ զերանով խօսակցութիւնս այդր և այսր, չարարին այնմ ինչ ազդեցութիւն, և եթէ յետ այսչափ բանից գրութեանց իմոց չիմացաք մեք զմիտս և զսիրտս իրերաց, ծանիցո՞ւք զայն բերանացի խօսելով ընդ միմեանս: . . . Զի եթէ իցեն ճանաչումն մտաց և զգացողութիւն սրտից, որպէս պարտ և արժան է լինել ի մէջ հոգեհարազատաց, ծանիցեն և ազդիցեն այնք գըրութեամբ և ի հեռուստ. իսկ եթէ պակասիցեն այնք, զըժբաղդութեամբս, ոչ միայն չլիցի դարման բժշկութեան իրացս, բերանացի խօսելովս, այլ և զայրասցին վէրքն և յուսահատիցի բժշկութիւնն, դնելով ձեր ի մտի, թէ չունիք դուք ինչ թերութիւն յընդհանուր տեսչութեան ձերում որ ի գործ այսր վարժարանիս, և թէ՝ ամենայն ինչ ձեզ միայն անկանի խորհել և որոշել, իսկ այլոց մեքենապէս գործել, զկամս ձեր կատարել:

« Երկրորդ՝ զի ոչ գիտեմ զանձին իմոյ՝ թէ պակասեալ իցեմ երբէք ի խորհելոյ զօգուտն վարժարանացս և ուխտիս, և կամ թերացեալ կամաւ ի սիրոյ եղբարցս, հայեցեալ յօգուտն հասարակաց, նախադասելով իմ զայն միշտ . . . ապա ոչ կարծեմ ես, թէ զգալուստն իմ այդր և բերանացի խօսելս դարման տարցի բժշկութեան իրացս, և կամ այնու անայրաք ընթացին իրք վարժարանացս և յառաջադէմ զարգասցի այս, գիտելով իմ քաջ զներքին և զարտաքին խափանարար պատճառսն:

« Ներքին է՝ տեսութիւն մտաց ձերոց. զի որպէս վերագոյն ասացի, եղեալ էք դուք ի մտի՝ թէ ձե՛զ միայն անկանի խորհել և որոշել զիրաց վարժարանիս, տուեալ ձեզ այն իբրև իշխանութիւն սեփական ի Բարերարէն և յաղագս միանգամայն, և թէ դո՛ւք միայն ճանաչէք զկարեւոր պիտոյս և զօգուտն ազգիս, իբրև ճշմարիտ ազգասէր, որպէս և ցուցանէք ի բանս գրութեան ձերոյ: . . . Իսկ արտաքին է՝ սակաւութիւն անձանց

միաբանութեանս, մանաւանդ թէ անփոփոխութիւն նոցա գիրաց վարժարանիս և յառաջադիմութենէ սորին, որպէս և ցուցեալ եմ ի գրութիւնս իմ առ ձեզ: Գաղղիական իմ այդր և բերանացի խօսելս բարձցեն զխափանարար պատճառս զայսոսիկ:... Ոչ բնաւ:...

« Ասիցէք արդեօք, եթէ զայս այսպէս ճանաչելով իմ, ապա ընդէ՞ր իցեն այսչափ գրութիւնս իմ:

« Ասեմ ես, թէ վասն երկուց պատճառաց. մի՝ ի լնուլ զպարտս իմ բովանդակ, զպատուոյ ասեմ և զխղճի մտացս. և միւս՝ առ ի թողուլ յետնոցս զճանաչումն և զկարծիս իմ զոր կալայ ես ի գործս այսր վարժարանիս, ի ցրումն քանից կտակի հանգուցեալ Բաբերարին, ի շռայլորութիւն կարօտելոյ ազգիս առհասարակ, որպէս զի ծանիցեն յետինք և գատիցեն և տայցեն իրաւունս, թէ ո՞րոց ճանաչումն և կարծիք ուղիղ իցեն. Նոցա՞, որ զամս հնգետասան ի գործ այսր վարժարանի ծանօթ և փորձ իցէ, թէ Նոցա, ո՞րք անծանօթ և անփորձ են այսմ. և թէ՝ ո՞րոց խորհուրդ և գործ ազգասիրի իցեն. Նոցա՞ որ զամս հնգետասան ընդ ծով և ընդ ցամաք տառապեալ իցէ, զամիսս ութևտասն ի մէջ ալեաց Ովկիանու, և զամս երեքտասան ի Հնդիկս յարեւակէզ քաղաքի բնակեալ, և ի մէջ հակառակորդաց ոգւով չափ աշխատեալ, և զաւուրս հարիւր ի բանտի կացեալ՝ առ ի ձեռս բերել և ի պահպանել զիրաւունս որբ և աղքատ մանկանց ազգին իւրոյ և զպատիւ միաբանութեան իւրոյ, ըստ վկայելոյ անաչառ դատաւորաց Անգղիացւոց յատենի անդ ի վճիռս իւրեանց, թէ Նոցա՞, որք չիցեն բնաւ երբէք աշխատեալ և ոչ փոյթ անգամ կալեալ զայնմանէ, տեսանելով զի յամս քան՝ երկու միլիոն ֆրանք եկամոք, մանկունք քառասուն և այն ի Պօլսոյ միայն, ի սկզբունս գիտութեանց կրթեալք, և յայն եւս, ոմանք ի Նոցանէ թերակատար ուսմամբք յետս առաքեալք:... Սակայն ի վերայ այսր ամենայնի, արհամարհեալ Նոցա զաղգարարութիւն և զառաջարկութիւն Նորա ի յառաջադիմութիւն վարժարանին, այլ և յանդիմանեալ և նախատեալ զնա իբրև զազգատեաց ոք, և իբրև վնասակար ազգին, ստարա-

ցուցանել խորհելով զմանկունս ազգին ի հայրենեաց իւրեանց, և անպատուելով զմիաբանութիւն իւր, խօսելով նմա զճշմարտութիւն, վասն որոյ վճիռ բացարձակ և խիստ ընդդէմ Նորա հանեն, հաստատեալ զայն և յանուն ազգին իւրեանց յառաւել իմն հաստատութիւն դատապարտութեան նորա : . . .

« Ահա վասն այսորիկ գրեցի զոր ինչ գրեցի առ ձեզ ցարդ, հաւանեալ միշտ ասացելոյն, թէ « Զիրաւունսն զոր զլանան « մեզ երբեմն ժամանակակիցք մեր, գիտեն յետինք հատուցանել մեզ զայն : » Եւ ահա այսու մխիթարութեամբ տանիմ ես ամենայն բանից զրպարտութեանցն որ ի գրութիւնս ձեր առ իս, իբրև կարծեցեալ լուծումն երկմտութեանս իմոյ ի խնդիր վարժարանիս : . . .

« Փոխադարձ ողջունիւ և յարգութեամբ ողջունեալ զհամօրէն Վ. Հարս և զՊատուական Եղբարս,

« Մնամ

« Յարգոյապատուութեան Ձերում

« Ի Փարիզ. 25 ապրիլ. 1849.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Ահաւասիկ Պատճէն վերոյիշեալ պատասխանւոյ խնամակալաց ժողովոյ տուեալ թղթոյ Հ. Սարգսի, զոր և ամբողջ յաւելումք աստ ի գիտութիւն վերծանողաց պատմութեանս, և որ ունի օրինակ զայս.

« Գերյարգոյ և Վերապատուելի Տեառն Տեառն Հօր Սարգսի Վարդապետի խնդալ.

« Վենետիկ. 6 մարտի. 1849.

« Ձգիր Վերապատուութեանդ գրեալ ի 20 դեկտեմբերի 1848 ամին յանուն Գեր. Տեառն, ընթերցաւ ժողովս մտադրութեամբ, և ինքնին կամեցաւ թէպէտ և անագան, տալ բան առ բան պատասխանի, և լուծանել զերկմտութիւնս ինչ

վերապատուութեանդ ։ Իսկ ցարդ ակամայ անագանելոյն պատճառ եկաց ծանր խօթութիւն Գերապայծառ Տեառն որ արդ փարատեցաւ իսպառ ։

« Արդ նախ յուշ ածէք մեզ զբան կտակի Բարերարին թէ
« — Պարտ է Միաբանութեանս ժողովել զորբ և զաղքատ
« մանկունս ազգիս յամենայն կողմանց, ոչ ի Պօլսոյ միայն, այլ
« և յամենայն կողմանց, ուր ուրեք և սփռեալ իցէ ազգս ։ »
Զբան կտակի բարերարին և մեք ընդ ձեզ իմանամք . մեր ջան և կամք եղեն միշտ լրումն տալ բանից Բարերարին՝ հասարակաց տալով վայելել զարդիւնս բարերարութեան Նորա ։

« Եւ զի նախ ի Պօլսոյ սկսաք ժողովել զմեծ մասն մանկանց, այնու ինչ ոչ յանցեաք ընդդէմ կտակի Բարերարին ։ Եթէ մեր դիտաւորութիւն էր միշտ ի Պօլսոյ առնուլ զմանկունս, և ոչ յայլ քաղաքաց որպէս կտակն պատուիրէ, իրաւացի էին զանգատանք Ձեր, և մերս իսկ խիղճ դատախազ կայր այնմ ։ Թող զի ցարդ ոչ ի Պօլսոյ միայն ընկալան, այլ և յայլոց քաղաքաց, յորոց ձեռնհաս եղեաք, որպէս ի Տրապիզոնայ, ի Զմիւռնոյ, յԻլովայ, ի Դաւրիժոյ և ի Պուքրէշտէ ։

« Ապաքէն գիտէ Վերապատուութիւնդ թէ ո՛րպէս մանկունք ընտրեալք յԵւդոկիա, ի Կուտինա, յԱրթուին, ի Կիւմիւշխանա, յԱնկիւրիա, և ի Միրտին արգելան յառաջնորդաց տեղւոյն, մինչեւ վերջնոյն նզովս իսկ կարդալ ծնողաց որք յանձն առասցեն մեզ զմանկունս իւրեանց ։ Գիտէք և զանցս չորեքտասան մանկանց Զմիւռնիոյ, ո՛րպէս ընտրեցան ի Վ. Հ. Պետրոսէ յաշակերտութիւն վարժարանիդ, և ո՛րպէս արգելեան ի Մատթէոս պատրիարգէ զի մի հաւատափոխ զնոսա արասցուք ։ Այլ թէ ընդէ՛ր զմեծ մասն մանկանց ի Պօլսոյ ժողովեցան, չէք ինչ անծանօթ . քանզի էր մեր անդ դպրոց փոքրիկ, ուստի մեր կամք էին առնուլ ընտրանաւ զմանկտին յաշակերտութիւն վարժարանացս ։ Երկրորդ զի կամեցաք զառաջինն զճիգն մեր ի Պօլիս թափեալ իբրեւ ի գլխաւոր քաղաք Ասիակողմանցն, անտի տակաւ տարածանիլ և յայլ քաղաքս ։ Որոյ վասն նախ ի Պօլիս կառուցաք զնա-

խակրթարան յընտրութիւն մանկանց, և այժմ ի Տրապիզոն պատրաստեմք այլ նախակրթարան ։ Վստահ լիցի Վերապատուութիւնդ, զի չեն կամք Միաբանութեանս զրովանդակ գումար Բարերարին ի Պօլսեցիս առեալ թափել, քանզի այն և ինորին կամաց և մտաց յոյժ հեռի է ։

« — Պարտ է, ասէք, ժողովել զմանկունս ընտրանօք և անա-
« չառութեամբ, և ոչ աչառանօք որպէս և տեսաւ և վկայեցաւ
« ցարդ ի բազմաց ։ » Դարձեալ և յայլում գրի (21 Նոյեմբ. 1846) « Աչառութեամբ և խաբէութեամբ ընտեալ են,
« ասէք, մանկունք Փարիզի ։ » Զգիտեմք որպէս ծանեաւ Վերապատուութիւնդ, թէ աչառութեամբ և խաբէութեամբ ընտրեալ իցեն մանկունք վարժարանիդ, և իբրև հաստատ ի կարծիս իւր այնպէս դատի զընտրողումն. և այնու համարի զնոսա անիրաւս, անխիղճս, արծաթոյ Բարերարին խորողս, և զրկողս աղքատաց ։

« Որ խորհրդով ձերով ըստ կանոնաց ժողովոյ խնամակալուաց առաքեալ յայնժամ ի Պօլիս յընտրութիւն մանկանց, աստ առ մեզ է. որ երդնու թէ ակնառութիւն երբէք յընտրութեանն արարեալ չէ ։ Քանզի ի քառասուն մանկանց զորս տարաւ նա ի Փարիզ ոչ ոք է իւր եղբայր, կամ ազգական, կամ բարեկամացն որդի. այլ ի յառաջագոյն ժողովեալ մանկանցն ինքնին ընտրեաց ։ Զունէր չահ ինչ անտի ակնառելոյն. մանաւանդ թէ անաչառելոյն յաչաց անգամ բազմաց ելեալ ։ Զեմոյծ նա ի դպրոցդ զորդիս մեծատանց յանուն աղքատի, որպէս ցուցանեն և վկայագիրքն տուեալք յարուեստակցաց իւրաքանչիւր ծնողաց, որք բաղում տուեալութեամբ քան զմեզ կարեն գիտել զարուեստակցաց իւրեանց զկար ։

« Եթէ այդչափ վստահ իցէ Վերապատուութիւնդ ի բանս իւր, ցուցցէ զբազում վկայսն զհաւատարիմս, զի և մեք ծանիցուք զընտրողացն զյանցանս ։ Բան Վերապատուութեանդ ընդհանուր է, վասն ամենայն մանկանց անխտիր ասացեալ. վասն որոյ և բազմացն վկայութիւն անշուշտ զշատից իցէ ։ Իսկ եթէ ընդհանուր ասութեամբ զումանս ի մանկանց ակնարկիցէք, կամիմք յանուանէ ճանաչել զնոսա ։ Եթէ վկայու-

թիւն բազմաց վասն Աղնաւորեանին իցէ, գիտասջիք զի նոցայն դատաստան ըստ վաղեմի համբաւոյն է, և տան նորա այժմու հանդամանք առաջին համբաւոյն համեմատ ոչ գտանի՝ անանկացեալ գոլով ի սպառ, և մօր նորա հոգին կարելով լնուլ զկարեւոր պէտս տանն ։

« Այլ թէ ընդէ՞ր ազգակիցք նորա չլնուցուն զթոշակ մանկան, քանզի չմարթէ ինչ պահանջել իրաւամբ, գիտասջիք զի նոքին և ոչ դանկ մի անցուցանեն ի ծախս տան մանկանն. և չքաւորութիւն միոյն այնու պակասիցի՞ ։

« Եթէ վասն Փիրեան եղբարցն իցէ, գիտասջիք զի հայր նոցա յորժամ զորդիսն յղեաց յողորմ վիճակի էր, բայց ապա չգիտեմք որպէս արար իւր բաղդ, ընդ որ և Պոլսեցիք իսկ զարմացան . . . .
. . . . և յայնմ հետէ ոչ զոք յորդւոց նորա էառ Միաբանութիւնս ։

« Եթէ վասն Երամեան Ջենորին իցէ բանն, գիտեմք զվկայողն, որ հօր մանկան զվիճակ յառաջ քան զինն ամ ճանաչէ. և թէ յայնժամ աղքատ չէր, այլ արդ ի սպառ կործանեալ ։

« Իսկ եթէ բան վկայողին վասն Խումարեան եղբարց և Մանասէի իցէ, նոցայն գործ յառաջնորդութեան ձերում և ի ձէնջ աւարտեցաւ, զոր Վերապատուութիւնդ լաւ քան զմեզ ճանաչէ ։ Զարմանամք, զի գիտելով Վերապատուութեանդ զանշահասէր անաչառութիւն մեր, հաւատս ընծայէք բանից այնոցիկ զորոց գիտորհուրդ թերեւս ճանաչէք իսկ ոչ ։ . . .

« Գանգատէք թէ յետ այնքան դրամս ծախելոյ ի կառուցումն դպրոցին Փէրայ տակաւին մանկունք բերեալք անտի անկիրթք իցեն և տգէտք ի կարեւոր գիտութեանց ։ Յիշիցէ անշուշտ Վերապատուութիւնդ, թէ դպրոցին շինուած աւարտեցաւ յամի 1845, և մանկունք ցրուեալք ի գիւղս գիւղս տակաւ ժողովեցան անդր. և ի սկիզբն 1846 ամին մեկնեցան ընտրեալքն ի Փարիզ, յորոց ոչ սակաւք յառաջացեալք էին ըստ բաւականին, կրթեալ գոլով նոցա յառաջագոյն ի փոք-

ընկ վարժոցի մերում. բայց թէ կային ի նոսա և Սակաւուսմունք ոմանք, չէին ինչ զարմանք, քանզի անմարթ էր նոցա զարգանալ ի սակաւ ամիսս ։

“ Ձեր հրաման էր յայնժամ ածել քառասնիւ չափ մանկունս ի Փարիզ. և զի յայնմ նորակերտ դպրոցի անմարթ էր նոյնչափ մանկունս կիրթս գտանել, ընտրողացն ջան եղեւ զի գէթ և մանկունք ուշիմք դպրոցացն Իւսկիւտարայ, Սամաթիոյ, Օրթագեղջ, և այլոց ազգային դպրոցաց մայրաքաղաքին և Զմիւռնիոյ մուծցին ի դպրոցս մեր. այլ որպէս գիտէք խափանեաց Մատթէոս պատրիարգ զառաքումն մանկանց ։ Սակայն մեր ջան և փոյթ լիցի, զի որ յետ այսորիկ գալոց են մանկունք ուսեալք իցեն ըստ բաւականին ։

“ Զիմանամք զբանս Վերապատուութեանդ զի ասէ, թէ Միաբանութիւնս չիցէ հաւանեալ այնր առաջարկին, զոր արարեալ է ձեր աստ. իբր զի մանկունք որ հանդերձեալ իցեն գալ ի վարժարանս մեր, ուսցին նախ զնախակիրթ գիտութիւնս ի Պօլիս, և ապա եկեսցեն ի Փարիզ ի զարգացումն բարձրագոյն գիտութեանց ։

“ Ապաքէն յիշիցէ Վերապատուութիւնդ զգիտումն կառուցանելոյ մեր զնախակրթարանն ի Փերա և թէ որչափ զըրոյցք եղեն վասն այնորիկ յայնժամ ի ժողովի խնամակալուաց յառաջնկայութեան Ձերում ։ Եւ այս է վճիռ ժողովոյն յԱրձանագրի գործոց ժողովոյ.

“ — Կանգնեսցի ի Պօլիս դպրոց մի կամ երկու, յորս վար-
“ ժեսցին մանկունք տեղւոյն և այլոց քաղաքաց ի նախկին
“ սկզբունս գիտութեանց, և ապա ընտրելագոյնքն ի նոցանէ
“ ընտրեսցին և եւս, և հետզհետէ այսր առաքեսցին ուսա-
“ նել զբարձրագոյն ուսմունս և զլեզուս և զգեղարուեստս ։ ”
Յամին 1843. 31 մարտի, որ և ստորագրեցաւ ի ձէնջ իբրեւ նախագահ ժողովոյ խնամակալուաց ։

“ Յետ այնորիկ սահմանեաց ժողովս զկարգ ուսմանց և զուսանելիս ի դպրոցին Փերայ, զի այնու բազումք միանգամայն օգտեսցին և ընտիրքն միայն յայսոսիկ կողմանս եկաւորեսցին, զի այնու խնայեսցի արծաթ Բարերարին ։ Արդ հետ-

ըղձեալ կանոնաւորին անդ ուսմունք, և միաբանութիւնս յղեաց անդր զՎ. Հ. Աբրահամ, յաւելեալ առաքել և զայլ որք յօգնականութիւն նմա, որով յուսայ ժամանել ըղձից խորոյ ածելով ըստ ժամանակին ի վարժարանս մեր մանկունս չափաւորապէս ուսեալս, ընտրելագոյնս և հասակեայս, ուր և վարժեսցէ զնոսա ի կենցաղօգուտ գիտութիւնս. և առ այս վախճան փոխադրեաց զվարժարանդ ի Փարիզ :

« Զոր առէք վասն ի վարձու ուսելոյ զոմանս յաշակերտաց եղելոց ի վարժարանացս և առաքել աստ և անդ ի վարժապետել հաւանեցաւ ժողովս, թէպէտ և ոչ անզերծ իցէ և այդ առաջարկ ի բազում դժուարութեանց, բայց մարթ է եւս զըտանել այնց հասուն խորհրդով. իսկ զգործադրութիւն խորհրդոյն եթող գիպան ժամու :

« Շնորհ բազում ունիմք զի փոյթ մեծ է ձեր յաճումն մանկանց Նորընծայարանի : Այլ բազում տհաճութեամբ ընթերցաք ի գրի ձերում զբանն զի առէք . « Աճեցուսջիք զթիւ Նո-
« րընծայիցդ օժանդակութեամբ մասամբ ինչ կորստական
« արծաթոյն Մուրատեան վարժարանի : »

« Յարգոյ Հայր, այս արծաթ Բարերարին աւանդ է մեզ յանձնեալ ինմանէ. և առ ի անկորուստ պահելոյ զնոյն պարտ է անմիջապէս և ուղղապէս վարել ի պէտս ազգին, և ոչ զարտուղաբար. ապա թէ ոչ, այսօրեայ սակաւ վրիպումն ի մեծագոյնն ածէ վնաս, և զմեզ յաչս անձին և աշխարհի մեղապարտս երևեցուցանէ :

« Հաւատարմութիւն մեր պարտք են և նովաւ օրհնեսցին յԱստուծոյ գործք մեր : Եթէ արծաթ պակասէ ի մեր պէտս, յանհնարինս մեղանչեմք զաղքատացն բաժին ի մեր պէտս վարելով : Եթէ ձեռնհաս եմք յայլոյ կողմանէ լցուք զմեր կարօտ, ապա թէ ոչ յուսասցուք յԱստուած որ ոչ զանց արասցէ զմեօք :

« Եթէ մեք այսօր սակաւուք վրիպիմք, յետինքս մեծաւ. զի զմեզ ունին առաջիկայ օրինակ : Թող զի ունիմք ի ձեռին արծաթ բաւական, զոր առատաձեռնեաց ոմն մերոյ Ուխտիս սիրող, ի կառուցումն երրորդի դպրոցի ի վանս, և յաւելլոյ

թուոյ մանկանց ։ Բայց վասն չարութեան ժամանակիս չկարացաք ցարդ ի գործ դնել զկամս Բարերարին, սակայն յաւարտ գործոց մարտին կառուցուք զայն տեղի յաջողելով Տեառն (*) ։

« Վասն Տրապիզոնայ դպրոցին թուի թէ վրիպակ ինչ լուեալ իցէ․ քանզի ըստ առաջարկութեան եղելոյ ի Վ․ Հայր Պետրոսէ Մինասեան, և ըստ խորհրդոյ ձերոյ որ ընդ աբբային մինչդեռ այժմ ի Փարիզ էր, և հաստատութեամբ ժողովոյ խնամակալաց կարգեցաւ նմա տարեկան հազար հինգ հարիւր Աւստրիական լիրէ ի ծախս տուրնջենական դպրոցի, մեծագունին չգոլով ձեռնհաս Միաբանութեանս կամ

(*) Ի վաղուց հետէ ի ժամանակէ անտի Ստեփաննոս Մելքոնեան Աբբայի, կամի միաբանութիւն ունել դպրոց մի ի Վենետիկ ի դաստիարակութիւն մանկանց ազգիս հասարակ, և անտի առնուլ ապա զկոչեցեալսն ի կրօն իւր․ և այնր կամաց նորին հակառակեալ Աբբային՝ խռովի միաբանութիւնն և յերկուս բաժանի, ի Վենետիկեան և ի Թրիեստեան ։

Թէպէտ և զայն կամս ունի միշտ միաբանութիւն, բայց չունելով արծաթ բաւական կասի ի կատարմանէ անտի, և մնայ օժանդակութեան ուստեք ։

Ի 1847 ամի գնացեալ Յակոբայ Ջէլէպւոյ Տիւզեան ի Վենետիկ և իմացեալ զայն կամս միաբանութեան՝ նպաստամատոյց լինի այնր կամաց նորին 50,000 փրանքով ։

Ծանուցանէ զայն գրով Գեր․ Հիւրմիւզ Հ․ Սարգսի ի Փարիզ ։ Իմացեալ սորա զայն, խորհուրդ տայ նմա հատուցանել ի ժամուն այնու արծաթով զպարտս Մ․ վարժարանին, ապա առնուլ զայն յեկամուտ նորին, հանդերձ շահիւ․ ոչ անսայ Գեր․ Հիւրմիւզ այնր խորհրդոյ Հ․ Սարգսի, այլ դնէ զարծաթն զայն ի շահու ի Վենետիկ ։

Ի 1848 ամի, ի ժամանակի հասարակապետութեան Վենետկոյ և ի կարօտութեան նորին խնդրի փոխ արծաթ և ի Մխիթարեան միաբանութենէ, թէպէտ և նախ զլանայ զայն Գեր․ Հիւրմիւզ, ասելով թէ չունի արծաթ, բայց գիտելով պետութեան թէ ունէր նա արծաթ և եդեալ էր ի շահու ուրեք ի Վենետիկ, հարկաւորի նա հանել զայն անտի և տալ փոխ պետութեան․ ի կործանել պետութեան կորուսանէ միաբանութիւն զարծաթն զայն 50,000 փրանք ։

Ահա պտուղ չանսացութեան խորհրդոյ Հ․ Սարգսի, և ինքնահաճութեան Գեր․ Հիւրմիւզի․ . . և ահա հատուցումն արդեօք կողմնաւոր բարուց և ապաշնորհութեան նորա․ զի ծախք ապագրութեան նոր բառգրքին Հայկազեան լեզուի առատաձեռնեալ լինի ի Յարութիւն Ամիրայ Պեզճեանէ յառաջ քան զվախճան նորա, յետ վախճանին զանբաւականութիւն արծաթոյն պատճառեալ Հայր Գէորգայ Հիւրմիւզի ի Պոլիս, ընծայել տայ զայն յանուն Յակոբայ Ջէլէպւոյ, հանդերձ ընծայականաւ ի ճակատ բառգրին . . . որ և ոչ դանկ մի ընծայեալ էր ի պէտս այնորիկ ։ Թողումք ասել զանհաւատարիմ բարեկամութենէ և զապաշնորհութենէ Գեր․ Հիւրմիւզի որ ընդ տանն հանգուցեալ Աբրահամ Աղանուրի, յորմէ բազում ինչ գտեալ և զյիշատակ նորին անհետ արարեալ ի զայթագղութիւն և յատկութիւն տան նորա ։ . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

վարժարանիդ, և զնոյն անխափան հատուցանեմք ցարդ ։

« Յարգոյապատիւ Հայր, զձեր ցուագին և զգառն առաքուածս յաղագս խնամակալաց ժողովոյ, բաղում կարեկցութեամբ ընթերցաք ։ Ո՞չ գիտէ զօգտակարութիւնս Նորին, և կամ ո՞ կարասցէ յուրաստ գալ, թէ ձերովդ խոհական խորհրդով հաստատեցաւ այն ։ Լաւութիւն և օգտակարութիւն նորա ոչ ի նախագահութիւնն է, այլ ի հաստատութիւնն, և ձերդ արգիւնք յայն, որոյ զյարգ նուաղէ ոչ՝ ոչ գոհակալութիւն մեծաւորին և ոչ այլոյ ուրուք ,

« Եթէ անանունն այն եղբայր յիշատակեալն ի ձէնջ ի գրի ոչ հաձեցաւ ընդ նախագահութիւն օտարի, այն չհաւանութիւն ոչ եթէ յանձն ձեր հայր, որպէս թէ արհամարհելով զձեզ, այլ որոյ և իցէ. և թերեւս գուցէն նորա չհաւանելոյն պատճառք ։ Յորոց վերայ թուի հասեալ և Վերապատուութիւնդ իսկ, զի ի պատճառ նախագահելոյ այլոյ ուրուք և ոչ Աբբային յաւելեալ էք զժողովելն մեր երբեմն ի Պատուախն և երբեմն ի Վենետիկ, և զդժուարութիւն գնալոյ անդ հանգուցեալ Աբբային սակս հիւանդութեան իւրոյ. ապա այնու կամեցեալ էք ասել, զի եթէ Աբբայն չէր հիւանդ, նմա անկանէր նախագահութիւնն. քանզի և դպրոցին տեսչութիւն ի նա է հաւաստացեալ, և պարտ է զի ամենայն խորհրդոցն պատճառաց ինքնին խելամուտ իցէ նախագահելովն իժողովի ։ Զայդ չհաւանութիւն նորա մի՛ արհամարհութիւն համարիք, այլ լոկ կարծիք անձնական. և պարտ և պատշաճ է ազատական կարծեաց մարդոյն շնորհել ակնածութիւն ։

« Իսկ թէ նա չհաւանեալ իցէ և ընդ ժողովոյն հաստատութիւն, ի զուր է. քանզի այդ ժողով հաստատեցաւ վերստին և յընդհանրական ժողովոյ ի 10 յուլիսի 1846, և պահի ցարդ անթերի, որ և յառաջադիմութեան վարժարանոյս մեծապէս խնամ ունի ։ Այս վերստին հաստատութիւն նշանակ է թէ ընդունելի գտաւ այն Միաբանութեանս և սիրելի ։ Վասն որոյ աղաչէ ժողովս զՎերապատուութիւնդ ոչ ինչ հոգալ ընդ այն և ոչ վհատել, քանզի չէ արժան եթէ դոյզն և աննշան բանք զսիրտ արութեան ձերոյ ընկճեսցեն ,

« Հարցանէք.

« Զկարծիցն՝ Միաբանութիւնն թէ յաւուր միում լիցի
« քննութիւն մատակարարութեան, և պահանջիցի ի Միաբա-
« նութենէ գոնէ ընդհանուր ինչ հաշիւ ի հանդարտութիւն
« սրտի կատակատարին : »

« Պատասխանեմք.

« Գիտէ և Վերատեսչութիւնդ թէ Միաբանութիւնս կերեալ չէ զարծաթ Բարերարին կամ գողացեալ : Եւ մատակարարութիւն Նորա ըստ տեսչութեան դրամոց և հաստատութեան վարժարանի միայն և ձեռովդ իսկ խորհրդով գործեցաւ ցարդ . խորհրդով հաստատութիւնն ի Պատուիոն, խորհրդով փոխադրութիւնն ի Փարիզ, խորհրդով ուսմանցն կարգաւորութիւն, խորհրդով և ամենայն ինչ :

« Եթէ Միաբանութիւնս պահանջիցի ի կատակատարէն և եթէ ոչ, ունի նա իւր դատաւոր որ քննէն զնա, այն է մտացն խիղճ. որում պատասխանատու է մեծաւորն, խնամակալք, և պաշտօնատեարք իւրաքանչիւր վարժարանաց : Եթէ տեսչութիւն գործոյս անկատար էր ցարդ, կատարելագոյն եղիցի յայսմհետէ մերովս փորձառութեամբ և գործունեայ ջանիւ. եթէ Նուազեցաք յիմքս, ձեռն ի ձեռն տուեալ և յայսմ հետէ ջան ի գործ դիցուք յառաւել օգուտ ազգիս, հեռաւորքդ խորհրդով և մերձաւորքս մտադիւր աջակցութեամբ : Այս անդաստան ազգիս մեծ է, բազում մշակաց կարօտ և բազմագոյն եւս քրտանց. մի՛ զսակաւուցս դատակ ջլատեսցուք սակս գուշնաքեայ դժկամակութեանց ինչ ի վնաս կարօտելոյ ազգիս : Թերութիւնք անգոյք և մանունք բանակռուութեամբ ստուար երեւին և ոչ ուղղին. առ ուղղութիւն Նոցին համակամ գործունէութիւն պիտի :

« Վայրապար ճգնիք ցուցանել թէ ազգն չունի զմէնջ համարումն յուսումնականս և ի տնտեսական կառավարութեան (*) : Կամէաք իմանալ եթէ զազգն առելով զո՞ իմանայք :

(*) Այո՛ յառաջ քան զամս յիսուն ազգս Հայոց դեռ չունելով ծանօթութիւն լեզուաց և գիտութեանց Եւրոպացւոց՝ համարումն մեծ ունէր զԶէնջ . . . յետ

Եթէ ազգն եւս էր արդարեւ այսինքն Հայք համօրէն, սակայն չէր արժան մեզ այնու սրտաբեկիլ, կամ յուսել նոցա համարումն մեծ ամբարտաւանիլ. քանզի մեք ճանաչեմք քաջ որպէս ուխտիս հասարակ, նոյնպէս և իւրաքանչիւր անձանց մերոց զգիտութեանն չափ և զկարողութիւն ի կառավարութեան առանձին գործոց և ի վարչութեան վարժարանաց, մանաւանդ այնոցիկ որք յամաց հետէ ի գործ տեսչութեան վարժարանացս կացին։

« Եթէ լեալ իցեն և ոմանք արդարեւ, որպէս ասէք, որ ի գովեստ Եւրոպացի ճանապարհորդաց ամբարտաւանեալ իցեն, այն զնոցա զայն ժամու զտկարութիւն յայտ առնէ։ Միաբանութիւնս մեր շնորհս ազգին մեծապէս ունի, որ միշտ կարեկիր աչօք հայեցեալ է ի մեր վերայ իբրեւ ի ճշմարիտ սիրողս իւր ի չարչարեալս վասն իւր (*), ի բամբասեալս վասն իւր, և ի վաստակաւորս վասն իւր։ Այս է ահա միակ մխիթարութիւն մեր՝ աշխատիլ և բիւր չարակրութիւն գելանիլ վասն

այնորիկ արհամարհութիւն մեծ կալաւ զՁէնջ, ծանօթանալով լեզուաց և գիտութեանց Եւրոպացւոց. և յառաջ քան զամս երեսուն կարծէր ազգս Հայոց թէ կարող էիք դուք ի վարչութիւն ազգային վարժարանի, և հաւատարիմ ի տնտեսութիւն նորին. յետ այնորիկ ետես նա յայտնապէս զտկարութիւն և զանհաւատարմութիւն ձեր յայն. . . .

Կարիցէ՞ք դուք զայսոսիկ ուրանալ, և յայսոսիկ արդարանալ երբէք առաջի ազգին. ոչ բնաւ. . . .

Այո՛ իմանամք մեք, որպէս և դուք իմացեալ էք, զՀայս համօրէն, որոց մեծ և միամիտ համարմամբ ամբարտաւանեցայք դուք, և ի կորուսանել Ձեր զայն համարումն նոցա, տակաւին ոչ ծանեայք զչափ գիտութեան և կարողութեան ձերոյ ի վարչութիւն առանձին գործոց ձերոց և ի վարչութիւն ազգային վարժարանաց, որպէս տեսաւ ցարդ, տեսանի արդ, և տեսցի ապա ի վնաս աղքատաց ազգիս և ի նախատինս ձեր յաւիտեան. . . .

Զչափ գիտութեան Ուխտիդ հասարակ՝ քննեալ և ցուցեալ եմք յառաջագոյն ի 425 էջ սորին, վասն որոյ և աւելորդ երկրորդել զայն աստ. . . .

Արդարեւ ճշմարիտ է ասացեալդ, զի ազգս Հայոց միշտ կարեկից աչօք հայեցեալ է ի վերայ ձեր իբրեւ ի ճշմարիտ սիրողս իւր. և հաստատութիւն այսմ, ահա զրով պաշտպանութիւն նորա ի լրագիրս Պոլսոյ և Զմիւռնիոյ ի ժամանակի հրատարակման Զարմառեննին աշակերտաց Ծաւալոցին ընդդէմ միաբանութեան և առատաձեռն նուէր նորա զոր խոստանայ նա ձեզ, ըստ բանից գրութեան Հ. Աղեքսանդրի, որ ի 274 էջ սորին.

(Ծանօթութիւն Հեղինակին.)

(*) Այլ ճշմարի՞տ իցէ՝ զի չարչարեալ, բամբասեալ, և վաստակեալ իցէք դուք վասն ազգին. քննեսցուք մեք զայս հաւաստեօք. Ուստի՞ չարչարեցայք և բամ-

ազգին ։ Եթէ ցարդ չմարթացաք զանբաւ ըղձից մերոց զկատարումն յազգի անդ գործել, ջանասցուք այսուհետեւ առաւելութեամբ հանդերձ օգնական լինել սառապելոյն ։

« Իսկ Պոլսոյ մանկանցն Հայոց զստեղումն յայլ և այլ դպրոց Գաղղիացւոց ի հարկէ իրացն էր, այսինքն սակս արգելման պատրիարգին, որպէս կանխեցաք ասել ։ Սակայն եթէ զստեղումն մանկանց յայլ և այլ դպրոցս զնուազութիւն համարման ազգին յայտ առնիցէ, այլ փոխանն գործոյն հաստատեսցէ զստուգութիւն կարծեաց նոցա ։ Միաբանութիւնս մեր որ ի քաջութիւն և ի ջան պաշտօնատեարցդ հաստատցաւ ըդգործ վարժարանիդ, ակն կալեալ մնայ մեծաւ վստահութեամբ ի նոցին աշխրջութիւն, ի ձեռս նոցա է ունայնացուցանել զայդ վարկ ։ Եթէ քաջիկ կրթեսցեն զմանկունս ի բարի վարս, ի կենցաղօգուտ մակացութիւնս, յարուեստս, ի լեզուս, ի հայերէն դպրութիւն, և յազգասիրութիւն, ահա ընդունայնացաւ նոցին թիւր կարծ ։

« Եթէ գիտէք զթերութիւնս մերոցս վարժարանաց, ապաքէն չիցեն ձեզ անծանօթ և վարժարանաց Գաղղիացւոց ընդհանուր թերութիւնք ինչ, զորոց և ինքեանք իսկ Գաղղիացիք դժգոհք են. եթէ գիտէք զնոցին լաւութիւն, չիցեն ձեզ անծանօթ և մերոցս դպրոցաց լաւութիւնք ինչ քան զնոցայն ։

« Իսկ ընդ Եգիպտացի Հայ մանկանց զստեղումն ի դըպրոցի Եգիպտացւոց, մի՛ ինչ զարմանայք. քանզի յայտ է թէ Ստեփան Պէյի վկայութիւն ոչ ինչ պատ մեր եղիցի, զի նախանձորդ եմք փառաց իւրոյ ։ Վերապատուութիւնդ իսկ

րասեցայք դուք վասն ազգին. Ո՞չ ապաքէն ի նախանձորդաց ձերոց, աշակերտաց Մաւալոցին կրեցիք դուք զայս . . . և ո՞չ ապաքէն առ փառասիրութեան ձերոյ վտատակեցիք դուք յայն. հաստատութիւն այսմ, ահա խորհուրդ ձեր և գործ, զի խորհեցայք դուք փոխադրել զՄ. վարժարանն ի Հռովմ, առ ի զերծանել ի չարչարելոյ նախանձորդաց ձերոց, և ի պատուիլ ի Հռովմ և ի Պօլիս. հաւաստիք այսոցիկ տեսանին ի 20-30 էջս երկրորդ մասին պատմութեանս ։

Եւ գործ ձեր, զի արարիք դուք յայտարարութիւն առ Պապն Հռովմայ, թէ ազգն Հայոց հերետիկոս է, և եկեղեցի նորին արտաքոյ է ճշմարիտ եկեղեցւոյն Քրիստոսի. և հաւաստիք այսմ, տեսանին ի 224-38 էջս, և ի 4-5-6-7. 415 էջս երկրորդ մասին պատմութեանս . . . և ահա խորհուրդ և գործ յայտ առնեն զչարչարանս, զբամբասանս, և զվստակ ձեր, թէ ուստի՞ և առ ինչ իցեն այնք ։

(Ծանօթութիւն հեղինակին ։)

գիտէ քաջ զի եթէ ներքին վարչութիւն մերոյս վարժարանի վատ է, Եգիպտացւոցն քան զմերն վատթար ։ Վասն խառնակ վարչութեան նորա լուաք բազում ինչ. գիտեմք և զապըստամբութիւն աշակերտացն, զարտաքսելն զվարժապետս իւրեանց ի տանէ, զաւեւանկութիւն յԱմերիկա, զխարդախումն փոխանակագրոյ, զպարտսն, զախտաւորութիւն նոցա ի վարս, զհիւանդութիւնսն հանապազորդ և զկորստումն, և այս ամենայն ընդ առաջնորդութեամբ Գաղղիացւոյ ։ Իսկ ի մերումս գոհութիւն Աստուծոյ, զի ոչինչ յայսպիսեաց պատահեաց տակաւին, և Տէր մի արասցէ. և պատահեալքն առայնոքիւք թեթեւ ինչ են ։ Տեսանէք ապա զի մանկունք առաքեալք յԱրթին Պէյէ ոչ եթէ առ լաւութիւն Եգիպտացւոցն դպրոցի անդ զետեղեցան, այլ զի այն լաւ վկայեցաւ և մերն յոռի ։

« Իսկ թէ չունիցին ոմանք և համարումն հայերէնագիտութեան մերոյ և ընդ լեզու Հ. Արսէնի միայն հաճիցին, օն թողէք ի բաց զշաղփաղփ և զծանծաղ մարդկան զվկայութիւն, գիտեմք մեք ընտիր առնել ի մէջ շարագրութեանց մերոց (*) ։

« Ալիշի Վերապատուութիւնդ պարզաբանել զայն կարգբանի, զի ասէ. « Այլ և մեղադրանաց և նախատանաց եղեալք « արժանի սակս անմիաբանութեան կարծեաց մասնաւորաց, « որ խափան է միշտ բարեաց հասարակաց ։ » Կամէաք գիտել թէ ո՞ր այն կարծիք մասնաւորաց իցէ որ խափան լեալ իցէ բարեաց հասարակաց ։ Եթէ այն կարծիք առանձնական

(*) Ո՞չ ապաքէն ինքնահաճութիւն նախագահի ժողովոյդ, յորժամ ի Պոլիս էր դա, եղեւ պատճառ լքուցման սրտից և ձեռաց ոմանց ի վանս ի մատենագրութիւն իւրեանց ։ . . . Գիտէ դա ընտիր առնել ի մէջ շարագրութեանց, խիստ դատաւոր լինել բանիւք ի գրուածս այլոց, այլ ցուցանել զայն նոցա օրինակաւ, չգիտէ բնաւ ։ . . .

Պանծայ դա ընդ հայկաբանութիւն իւր և իրաւամբք արդեօք, եթէ ցուցանէր զայն արդեամբք, և եթէ պարծի դա ընդ թարգմանութիւնն հնախօսութեան, ամենասակաւ աշխատասիրութիւն գոյ դորա յայն, և ընդ այն եւս շնորհ կալցի աշխատասիրութեան հարազատին իւրոյ ։ Եւ ո՞չ ապաքէն այդ բնաւորութիւն և կողմնասէր բարք դորա են պատճառք վնասուց աղքատաց ազգին, և ակարութեան Մխիթարեան ուխտին ։ . . . Թողումք ասել զփառասիրութենէ դորա և զչարեացն որք ծագեցան անտի. և որք յայտնապէս տեսանին իսկ ։

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

իցէ մեր ուրուք խնամակալուաց, չկարէ զօրել, մինչեւ ոչ հաւանեսցի այնմ մեծ կէս մասն ժողովոյ, որ յայնժամ ոչ մնայ առանձնական կարծիք, այլ հանրական և ընդունելի։ Եթէ Աբբայի իցէ, դարձեալ ոչ զօրէ, մինչեւ ոչ հաւանեսցի ժողովն։ Իսկ եթէ պաշտօնատեարց դպրոցին մեք չգիտեմք։ Վասն որոյ որպէս ասացաք մեկնեսցէ Վերապատուութիւնդ ի պատասխանւոջ իւրում. զի եթէ գուցէ արդարեւ այնպիսի ինչ, բարձցուք ի միջոյ, և այնու զխափանումն բարեաց հասարակաց (*)։

« Ասէք. « Ազգարարութիւն բանից Թղթոյս և բողոքն իմ « առ ձեզ ցորդ ոչ էին երբէք զպակասութենէ անձանց « պաշտօնէից վարժարանիս, այլ զթերութենէ վարչութեան « սորին։ » Դպրոցին վարչութիւն բազմապատիկ է. վարչութիւն ի դրամական իրս, վարչութիւն ուսման, վարչութիւն առտնին իրաց, որոց առանձին են պաշտօնատեարք, և ընդհանուր վարչութիւն դպրոցաց զոր խնամակալքս ունիմք։ Արդ զո՞յ վարչութենէ իցեն գանգատանք Վերապատուութեանդ. ասասցէ համարձակ զի ըստ այնմ ուղղեսցին։ Յասելն թէ բանք ձեր ոչ զպաշտօնատեարց են, հաւաստէք թէ ձեր գանգատ և ո՛չ զյոռութենէ գործոց նոցա է։ Եւ ի ստորեւ յասել անդ թէ զվարժարանին զառտնին կառավարութիւն պարտ է յանձնել ի ձեռս Գաղղիացւոյ ուրուք, յայտ

(*) Զկարծեաց Գեր. Հիւրմիւզի, որ յանուն ժողովոյ կոչի, բողոքէ առ Հայր Սարգիս, և թէ զիա՞րդ խափան է այն բարեաց հասարակաց. թէպէտ և ցուցեալ է նա զայն ի սմին հանդերձ հաւաստեօք, սակայն չիմանալոյն արարեալ հարցանէ և մեկնութիւն բանից գրութեան նորին խնդրէ առ ի զարման տանել խափանման բարեաց հասարակաց։

Ո՛չ ապաքէն բազում անգամ բողոքեալ է Հ. Սարգիս զանուղիղ վարչութենէ Մ. վարժարանին, և ծանուցեալ է զպատճառ խափանման բարեաց հասարակաց ազգիս, և զդարման այնորիկ ցուցեալ, որպէս տեսանին ի 371-86 էջս սորին։

Եւ յիրաւի՝ քանզի թերութիւն վարժարանին էր ի վարչութեան Գեր. Հիւրմիւզի, որ անիրաւութեամբ մատակարարէ զայն, ընդդէմ զխտաւորութեան հանգուցեալ բարերարին, որ թողեալ է զհրիտակն ողորմութեան ի լուսաւորութիւն համօրէն ազգին հայոց, և Գեր. Հիւրմիւզ սեպհականէ զայն Հռովմէադաւան ազգատեաց ոմանց....

Ո՛չ ապաքէն զրպարտութիւն և հակառակութիւն բանից են ասանօր. եթէ իցէ առաջարկեալ Հ. Սարգիս յանձնել զառտնին վարչութիւն Գաղղիացւոյ ուրուք, և ունել իւր զբովանդակ վարչութիւն վարժարանին, միանգամայն և

առնեք թէ ձեր գանգատ վասն ատենին վարչութեան է, այլ վասն և հրաժարիք իսկ ի պաշտօնէն անբաւական զանձն համարելով : Եւ ի բազում ուրեք անիրաւ վարչութիւն ասելով իմանայք զընդհանուր վարչութենէ ժողովոյն, թէ ընդէ՞ր ցարդ անիրաւեալ իցէ չտալով ի ձեռս ուղղչին զամենայն իշխանութիւն դպրոցական, զներքին տնտեսութիւն, զդրամական գործս, զուսումնական կառավարութիւն, և ոչ թողեալ զբովանդակ կառավարութիւն ի ձեռս Նորա. վասն որոյ դարձեալ աղաչի Վերապատուութիւնդ մեկնել մեզ զի վասն որո՞յ վարչութեան են բողոքք իւր, և յորում իցէ անսայթաք ուղղութիւն իւրայ վարժարանին, որպէս զի ժողովս ըստ այնմ կարասցէ որոշել ինչ (*) :

« *Կարի ի խոր խոցեալ վիրաւորեցաք ընդ բանս « ուրումն « որ գող և խաբեբայ անուանեալ ասէ.ք զձեզ, զբուն իսկ « զվաստակաւորն* : (*) » *Եթէ ճշմարիտ իցեն բանք ուրումն, արդարեւ յանդգունք են և անիրաւք, և մեզ անհնարին վիշտ : Եւ ցաւեցաք յոյժ յոյժ, զի առաւել բարւոյն տենչ պատճառ լեալ է ի մէջ համասուն եղբարց սիրելեաց արկանել երկպառակութիւն : Շնաւորութեան է մեզ արգոյ Հայր, որ զբուն սիրելիս թշնամիս կարծեցուցանէ, զճշմարիտն սուտ, զբարին չար, և զուղիղն թիւր, որ զիւրաւ պատահէ յետ միանգամ ի գժիտ գալոյ ընդ միմեանս : Դարձեալ ոչ բարւոք բացատրութիւն իմաստից ի գիրս երկաքանչիւր կող-*

հրաժարիլ ի պաշտօնէն անբաւական զանձն համարելով . . . ահա այսպիսի քաղաքավարութեամբ վարի Գեր. Հիւրմիւզ ընդ Հ. Սարգսի. և զայս խորհրդով ժողովոյ խնամակալաց վարժարանին ցուցանէ : . . .

(Ծանօթութիւն Հեղինակին :)

(*) Եթէ արդարեւ կարի ի խոր խոցեալ վիրաւորէր Գեր. Հիւրմիւզ ընդ յանդուգն բանս Հ. Եսայեայ գործակալի ստացուածոց Մ. վարժարանի ընդդէմ Հ. Սարգսի բուն վաստակաւորի Նորին, ընդէ՞ր ոչ խրատէր զյանդուգն և զադարեցուցանէր զնա յայնպիսի գրութեանց անտի. ապա յայտ է զի հաճոյ էր Նմա յանդգնութիւն Նորա : Եւ ապա արդարանայ Հ. Սարգիս ի բանս իւր որ ի 223 էջ ասէին թէ տեսանեմ ես յայտնապէս Նոր ճանաչումն և զանազան ոգիք, թէպէտ և այս ոգիք շարժեալ և համարձակեալ իցեն ի Նոր ճանաչմանէ անտի, որպէս և ճանաչումն այն, պատճառս իւր գտեալ և իրաւունս համարեալ զշարժումն և զհամարձակութիւնն ոգւոց անտի. թէպէտ և երկոքեան եւս վասն բարւոյ հասարակաց կարծեն գործել :

(Ծանօթութիւն Հեղինակին :)

մանց և թերի խմացումն պատճառք լեալ են անկարեկից մօռք խօսելոյ և վարելոյ ընդ միմեանս ։

« Արդարեւ ըստ ասելոյ Վերապատուութեանդ ի խօսս քաղաքավարութեան պարտք են զգուշութեամբ ընդ ընկերին խօսել և զարժանին պատիւ մատուցանել իւրում աստիճանի, մանաւանդ ընդ վեհագունին ոք քան զինքն թէ լինի խօսակից ։ Զկարծիս մեր և զպատճառս ասել հարկաւորիմք ի խղճէ մտաց, այլ ի խղճէ միանգամայն և ի պատշաճից հարկաւորիմք ըստ արժանապատուութեան լսողին յարմարել զբանս. բայց և այս ստոյգ է, զի իւրաքանչիւրում չերեւի իւրն, կամ ոչ որչափ են երեւի. զկշիռ ծանրութեան բանից իւրաքանչիւր բազում այն է զի լսողն գիտէ և ոչ որ ասէն ։ Վասն որոյ յոյժ ցանկալի էր մեզ, զի և Վերապատուութիւնդ ոչ նովիմբ վարէր բանիւք զոր ստգտանէ յայլում ։

« Թողեալ զհեգնական բանս Վերապատուութեանդ որ յաղագս ուսումնական կարողութեան միաբանիցն, քանզի անհնարին է մեզ առանց շառագնելոյ ընթեռնուլ զայնս և պատասխանել, անցցուք յայն բան զի ասէ. « Առ ուղիղ վար-
« չութիւն վարժարանիս կարօտիմք իմաստուն առաջնորդի
« Եւրոպացւոյ, որ փորձ իցէ ի վարչութիւն դպրոցի ։ »

« Վերապատուութիւնդ յընթացս գրոց իւրոց բովանդակ գանգատեցաւ զընդհանուր տեսչութենէ Աբբային կամ խնամակալաց ժողովոյն, զակնառու ընտրութենէ մանկանց, զուսմանց նոցա, զվարկմանէ մերոյն ընդ դպրոցականս և Աբբային զձէնջ և այլն. և ապա յայն հանգոյց զբանն թէ կարօտի վարժարանս Եւրոպացի առաջնորդի, և չգիտեմք թէ որպէս միաբանիցն այսոքիկ ։ Եթէ գանգատանք Վերապատուութեանդ ցարդ զներքին տեսչութենէ վարժարանիդ էին մարթ էր յայնժամ հետեւեցուցանել ։ Բայց եղեալ եւս թէ զներքին տեսչութենէ էին, յանձն առնելով զվարժարանդ ի ձեռս Գաղղիացւոյ լինիցի՞ դարման չարեացն, զորոյ բողոք կալաւ Վերապատուութիւնդ ։

« Եթէ այդչափ անիրաւք ոմանք իցեմք, չկարիցե՞մք և յայնժամ եւս ակնառութեամբ և խաբէութեամբ ընտրել

զմանկտին (*) . մի թէ այնու մանկունք անկարգ և անկանոն քաղաքին Պօլսոյ ուսցին զըղձացեալն մեր ուսումն ի Պօլիս . բըժըշկեսցի՞ վարումն և վարկ մերոցն ընդ վարժարանեաւդ ։ Այն զի յառաջնմէ հետէ չորք միայն տեսուչք եղեն մերոցս վարժարանաց, յորոց և մի Վերապատուութիւնդ ճանաչի որ ի բազում ամս ստացաւ ասպարէն ի Պատաւիոն և այդր ի Փարիզ զփորձ և զճանաչումն ։ Եթէ չափաւորութիւն ձեր անվստահ գոլով յանձն խոստովանի զտկարութիւն և զանկարողութիւն, կարիցէ այլազգ խորհել զրովանդակ միաբանութենէս ։

« Արդ վայր գործ, այսինքն յանձնելոյ զՄուրատեան վարժարանն ի կառավարութիւն Գաղղիացւոյ փառաւոր Թուեցաւ ճանաչէ ժողովս այդիս (**)։ Քանզի փախճան Բարերարին ի յանձնել զտեսչութիւն դպրոցին Միաբանութեանս և ոչ այլում, այն է յազգասիրութիւն կրթել զմանկտին, և այնու ոչ միայն կամակարս պատրաստել զնոսա յուսումն Հայկականս բարբառոյ և պատմութեան, այլ և ի ձեռն նոցա յորդոր լինել և այլոց ազգայնոց յազգասիրութիւն, և յայս իսկ ուսուցանեմք մանկտւոյն զհայերէնն, ոչ զի անթերի Հայկաբանք իցեն, այլ զի յուսանելն զիւրեանց լեզու, ողի ազգա-

(*) Զակնառութեամբ և զխաբէութեամբ ընտրութիւն մանկանց Մ. վարժարանին ցուցեալ եմք արդէն ի սմին, հանդերձ հաւաստեօք, ի 244-253-393. էջս ։

(**) Հ. Սարգիս խոնարհութեամբ խոստովանեալ է զչափաւորութիւն իւր ի վարչութիւն վարժարանի . և զայն զկնի տասնամեայ փորձոյ ի պաշտօնն յայն. և յայտնապէս ցուցեալ է զանբաւականութիւն միաբանութեան յամենայն ազգ գիտութեան, հանդերձ հաւաստեօք, ի 425 էջ ։ Սակայն ինքնահաճութիւն Գեր. Հիւրմիւզի ամօթ համարի խոստովանել զճշմարտութիւն ։ Ո՞չ ապաքէն այս թերութիւն նորա է պատճառ եղծման Մխիթարեան միաբանութեան . . . և ո՞չ ապաքէն արժանի է ցաւոց ազգս Հայոց, ունելով նորա առատաձեռն բարերարս, և ազգային վարժարանս երկուս ի մէջ Եւրոպիոյ և ի տասն և ինն երորդ դարու . . . և չունելով մխիթարութիւն ինչ ի նոցունց անտի ։ . . .
Եթէ յաջողութիւնս այս առ Մխիթարայ Աբբայիւ լեալ էր, բազում մխիթարութիւն ազգիս Հայոց լինէր. և պատիւ մեծ միաբանութեան ։ Առ՛ղ գրկանացս ։
Թողումք աստ զժբաղդութենէ ազգիս, ունելով նորա ի ժամանակիս զայնպիսի ընդհանուր Առաջնորդ, յորմէ ոչ միայն չունի մխիթարութիւն ինչ, այլ և տրտմութիւն բազում, որպէս տեսանի ի բողոքս ազգիս հասարակ. այլ ի դէպ և կարի ի դէպ եղանէ նմա ողբն Խորենացւոյ ։ . . .

(Տանօթութիւն Հեղինակին ։)

յին արծարծեսցի ի Նոսա և Թափանցանց յերակունս Նոցա եղիցի ։

« Գիտէ քաջ Վերապատուութիւնդ եթէ ի յանձն առնել մեր զվարժարանդ ի ձեռս Գաղղիացւոյ և ամենայն ուսմունք և կրթութիւնք ի լեզու Նոցին եղիցին, և հայերէնս դպրութիւն մնասցէ մեկուսի իբրև երկրորդական ինչ անախորժ ուսումն. քանզի միանգամ հարեալ մանկանց ի գեղ Գաղղիականին, այնուհետև արհամարհեսցեն զընիկն բարբառ և զազգ, ուրասցին զանուն անգամ հայոյն, տեսեալ յազգի անդ իւրեանց ոչ այլ ինչ բայց միայն խեղճութիւն (*) ։

« Ապաքէն և փորձիւ իսկ ուսեալ է Վերապատուութիւնդ ի Պատաւիոն, զի որք զԳաղղիական լեզուն ուսեալ էին յառաջ քան զմտանել իւրեանց ի վարժարանդ, Նոքին էին որ միշտ արհամարհէին զազգ իւրեանց, Նոքա որ բազում դժուարութեամբ ուսանէին զհայկականն բարբառ, ոչ միայն զգրաբառն այլ և զաշխարհիկն, և ընդ վարժապետս իւրեանց հանապազ մարտնչէին վասն այնորիկ ։ Մեք յայլ և այլ քաղաքաց և կողմանց զմանկտին ժողովելով, հրահանգեմք զնոսա միաբանիլ ընդ միմեանս և մի խորշիլ յիրերաց. ուսուցանեմք նոցա զօրէնս ազգասիրութեան, սիրել զազգն թէ և տառապեալ անհրահանգ և տգէտ, և յորդորեմք զնոսա ձեռնտու լինել ազգին առ ի հանել զնոսա ի տառապանաց ։

« Սակայն մի՛ համարիք թէ թեթև ինչ աշխատութեամբ հեղումք զսկզբունս զայսոսիկ ի միտս մանկանց, քաջածանօթ

(*) Կայցե՞ն ի թուղթս Հ. Սարգսի, որ ի 334-419-էջս սորին այսպիսի կամք և առաջարկութիւն, յանձնելոյ զվարչութիւն Մ. վարժարանին Գաղղիացի վարդապետի ուրուք. ոչ ընաւ. ապա ուստի՛ հնարեալ իցէ զայս Գեր. Հիւրմիւզ... ի գլխոյ իւրմէ անշուշտ, առ ի մերժել զբանաւոր առաջարկութիւն Հ. Սարգսի և ի կատարել զկամս իւր . . . և զ՞ինչ արդիւնք ի կամաց իւրոց. ահա տեսանեն այնք . . . վնաս ազգիս և Նախատինք միաբանութեան . . . այլ և ցաւ սրտի Հ. Սարգսի յերկուց կողմանց ։ . . . Աւա՜ղ այնչափ աշխատութեան և ընդունայն ակնկալութեան Նորա ։ . . .

Յարիցէ՞ արդեօք արժանաժառանգ յաջորդ Մխիթարայ, վերականգնեսցէ՞ միաբանութիւն նորա, ճանաչելով քաջ զպարտս պաշտաման իւրոյ, զուղիղ և զհաւատարիմ մատակարարութիւն յազգային վարժարանս ։ . . .

Այսոքիկ են միայնակ ցանկութիւն և մխիթարութիւն Հ. Սարգսի. կատարեսցի՞ և մխիթարեսցի՞ նա յաւուր միում ։ . . .

(Ծանօթութիւն հեղինակին ։)

գոլով մերոյս ազգային գիւրութեք ընութեան, որպէս անաշխատ յարի յօտար ազգս, մանաւանդ որոց համբաւ չքեղ է ։ Եւ թուի մեզ թէ յանձն առնելով զվարժարանս և զմանկունս առ հասարակ ի ձեռս Գաղղիացւոց, գաղղիասէրս գնոսա գործեմք և ոչ հայասէրս, և հանեմք զնոսա յազգէն, որով ոչ եթէ օգուտ գործի, այլ զեան մեծ ի կործանումն ազգին ։ Անշուշտ բազում առաւելութեամբ գոհ լիցին Եւրերարք վարժարանացս և ազգս ընդ ազգասիրութիւն աշակերտացս, քան ընդ որ և է այլ ուսումն ։ Լաւ է սակաւուսումն ոք ազգասէր քան բազմահմուտ ոք ազգատեաց ։

« Եւ մի համարիցի Վերապատուութիւնդ թէ ընդ Գաղղիացւովք ազգասէր լիցին մանկունք, որպէս առաջի աչաց մերոց ունիմք բազում օրինակս ։ Ահա վարժարանն Լազարեան Իշխանաց ի Մոսկու յանձնեալ ի ձեռս Ռուսաց, որոց աշակերտք եղին յազգութենէ, որպէս և իրաւամբք գանգատէին իշխանքն Եւրերարք վարժարանին ։ Ահա և վարժոց Պեպեկի ի Պօլիս, որոց աշակերտք ոչ չատ ինչ ուսանին, և Գաղղիացւոյ անուամբ պարծին՝ արհամարհեալ զիւրեանց ամենայն ։ Նոյն լիցի և մերն եթէ յանձնեսցի ի ձեռս Գաղղիացւոյ ։ Վասն այսր ամենայնի պատճառաց չկարաց հաւանել ժողովս ընդ առաջարկդ ։

« Բայց յայլոյ կողմանէ չեմք ներհակ թէ առաջնորդք վարժարանիդ կայցեն իւրեանց խորհրդականս ի փորձառու Գաղղիացւոց վասն ուսմանց և առնին սնտեսութեան ։ Դարձեալ յոր գիտութիւն անբաւական իցեն մերքն ի վարժապետել, կալցին զառաջինն Գաղղ. վարժապետք, և մերքն ուսցին քան զնոյն ուսմունս առ ի վարժապետել այլոց դասուց, որով ոչ սակաւ խնայութիւն գործեսցի արծաթոյն ։

« Ցարգոյապատիւ Հայր ահաւասիկ մերս առձեռն պատասխանի կարեւոր հատուածոց Թղթոյ Ձերոյ գրելոյ ի 20 դեկտ ։ Որպէս դուք յազգասիրութենէ շարժեալ գրեցէք զոր գրեցէքդ, այսպէս և ժողովոյս պատասխանի ի նոյն հոգւոյ գիտաջիք ։ Բայց ի գլխաւոր հատուածոց զոն և այլք՝ զորոց անմարթ է զպատասխանին ի գրի առնուլ բովանդակել ։

« Վիշտ մեծ է մեզ զի ի մէջ վանականացս և վարժարանեայսդ անկեալ է հովութիւն սիրոյ ի պատճառս ոչ բարւոք իմանալոյ զմիտս իրերաց, յորմէ յառաջ գայ խստիւ քննել զգործս միմեանց ։ Եթէ ոչ կանխեալ զառաջս այսորիկ ունիցիմք, յայտ է թէ և յետ այսորիկ նոյն եղիցի, և այնու վարժարանացս չգործեմք օգուտ և զմիաբանութիւնս ի կործանումն երագեմք ։ Արդ չիք այլ դարման բժշկութեան իրացս, եթէ ոչ՝ զի դու Արդոյ Հայր, յարուցեալ եկեսցես առ մեզ, զի բերանացի իմասցուք զմիտս և զսիրտս իրերաց, և խորհեսցուք քաջ զօգուտ վարժարանացս և ուխտիս և եղբայրասցուք ընդ միմեանս սիրով, որով միայն է անսայթաք ընթանալ իրաց վարժարանիդ և յառաջադէմն զարգանալ ։

« Ողջունիւ համօրէն եղբարց ողջ լինել ըղձանամք Արդոյ Վերապատուութեանդ.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« *Արքեպիսկոպոս և նախագահ ժողովոյն.* »

« Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ԹԷՐՃԻՄԱՆԵԱՆ

« *Քարտուղար ժողովոյն.* »

Առնէ և Գեր. Հիւրմիւզ պատասխանի ինչ ինչ բանից թղթոյ Հ. Սարգսի, իբրեւ առանձնաբար առ ինքն պատշաճեալքն, որում առնէ և Հ. Սարգիս առանձին պատասխանի, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ցանկալի նամակ Վեհիդ, գրեալ ի 6 մարտի անցելոյ, ընկալայ ի 20 նորին ամսոյ, հանդերձ ծրարելովն ի նմին պատասխանեաւն որ ի ժողովոյդ խնամակալաց, իբրեւ լուծումն երկմտութեանս իմոյ ի խնդիր վարժարանիս, թէպէտ և թուղթն իմ առ Ձեզ և ոչ առ ժողովդ էր գրեալ ։ . . . Վասն այսորիկ հարկաւորեցայ ես առնել այնմ վերստին պատաս-

խանի, ըստ բանից գրութեան խնամակալաց ժողովոյն, թէ-պէտ և են ինչ ինչ ի գրութեանս իմում անդ, որք պատկանին իբրև պատասխանի և բանից մասնաւոր գրութեան Վեհիդ, բայց միան անտի և այլ ինչ ինչ բանք, որոց պարտիմ առնել և ուրոյն պատասխանի ի լուծումն ամենայն տարակուսանացդ որ ի հաւաքականի և ի մասին կարծեցեալ բանս գրութեան իմում առ Ձեզ... և վասն այսորիկ նախ թողութիւն ի Վեհէդ խնդրեմ ընդ անախորժ յիշատակութիւն անցիցն անցելոց, զոր յոչկամաց պարտաւորիմ ես արդ վերստին յիշատակել, և ապա ընդ համարձակութիւն բանիցս, զորս չկարեմ լռել, առանց մեղանչելոյ ճշմարտութեան:

« Երանի՛ թէ պահպանեալ էր տակաւին լռութիւնն այն, որ պահպանեցաւ ցարդ խոհականութեամբ, ըստ վկայութեան ձե-րում:...

« Արդ՝ պարտ է ինձ նախ զպատճառ արհամարհութեանս որ ի ձէնջ ի սկզբանէ հետէ և յարդեանց բանից և ի գործոց քննել: Յիշիցէ Տէրդ իմ ապաքէն, զի յետ երկուց աւուրց ընտրութեան ձերոյ Յառաջնորդութիւն ուխտիս, հարցեալ իմ ձեզ զպաշտօնէից վարժարանիս, ետուք ինձ անդէն պատաս-խանի թէ, « Մերքն որ ի Փարիզ չկամին ընդ տեսչութիւնդ « վարժարանիս: » Բարի է ասացի ես, և լռեցի համբերու-թեամբ, իմանալով զլռելեան հաւանութիւն ձեր յայն, յառ-ձեռն պատրաստ պատասխանւոյդ:...

« Եւ արդ՝ հարցանեմ ես Վեհիդ, թէ ի կամաց երկուց սմա՞նց կախեալ էր չկամիլն ընդ տեսչութիւն իմ վարժարա-նիս, և ոչ ի կամաց ժողովոյ առաջակայիցդ:... Ապա ընդէ՞ր լռեցէք դուք յայնժամ գրել առ նոսա ուղղակի կամ անուղ-ղակի ձեռամբ պատգամաւորի նոցա զայս բանս զոր գրէք այժմ առ իս, առ ի խելամուտ առնել ինձ, թէ զամենայն ինչ ըստ հաճութեան ժողովոյ առաջակայիցդ հարկ էր ձեզ առնել առանց տէրօրէն կառավարութեան, ունելով բանիցդ այսպէս.

« — Քանզի չէր ինձ մարթ, ասէք, եզական և տէրօրէն « կառավարութեամբ գործել ինչ, ապա հարկ էր զամենայն

“ ինչ ըստ թուեցելոյ ինձ խոհեմութեանն առնել խորհրդով
“ և հաճութեամբ ժողովոյ առաջնակայիցն, և ոչ կարէի բըռ-
“ նութեամբ եւս խնուլ զբերան ուրուք ։ ”

“ Ապա՛ որպէս խցէք զբերան իմ առձեռն պատրաստ
պատասխանեաւդ, թէ, “ Ձկամին մերքն ի Փարիզ զքեզ Տե-
“ սուչ վարժարանիս ։ . . . ” Եւ ապա յայտ է, թէ ունէիք
դուք այլ ճանաչումն և այլ կամք, զոր և ցուցից բանիւք և
որդեամբք, և հաստատեալ ականատես և ականջալուր վկա-
յիւք ։ . . .

“ — Բայց մեծագոյն գանգատ և առաւելագոյն տրտունջ
“ Վերապատուութեանդ, ասէք, ընդ ճանաչումն իմ է և
“ ընդ վարկ որ զձէնջ, յորմէ շարժեալ և համարձակեալ են
“ ոգիք ընդդէմ ձեր, և այն սկսեալ յերկրորդ օրէ յուլիսի
“ 1846 ամին ։ Այլ գիտէ և Վերապատուութիւնդ, զի մին-
“ չեւ ցայն օր չէր մեր երկոցուն ուրեք երբէք կացեալ ի միա-
“ սին, որով կարէր ծանօթ գոլ ինձ Վերապատուութիւնդ,
“ որպէս և ես չէի արդեօք ծանուցեալ առ ի Ձէնջ. ապա
“ զիա՞րդ մարթ էր անգոյ ճանաչմանս իմում եղծանել զայլոց
“ ճանաչումն և զվարկ և զրգռել ի նոսա զայն զորմէ գան-
“ գատէք ։ ”

“ Թողեալ իմ քննել զանհետեւողութիւնն որ ի բանս ձեր
յայս, հարցանեմ ես Վեհիդ, եթէ մինչեւ ցայն վայր չէր
մեր երկոցուն ուրեք երբէք կացեալ ի միասին, որով կարէր
ծանօթ գոլ իմ ձեզ, և ձեր ինձ արդեօք, չէ՞ին նոյնպէս ծանու-
ցեալ Ձեզ և արարքն իմ և վաստակս ի գործ այսր վարժա-
րանիս մինչեւ ցայն ժամանակ . . . ապա առ ի՞նչ էին այն
բանք գովեստից ձերոց որ զինէն երբեմն գրեալ ի Պօլսոյ յետ
դարձին իմոյ ի Հնդկաց, նոյնպէս և գրեալդ աստի առ իս
ի Վեննա ։ . . .

“ Եւ եթէ չէին ձեզ բաւական այնչափ ծանօթութիւն և
այնպիսի խելամտութիւն առ ի խնուլ զբերան ուրուք կամ
ոմանց, էի՞ն ձեզ ծանօթ նոքա որք ոչ կամէին ընդ տեսչու-
թիւն իմ . . . և ունէի՞ն նոքա առաւել քան զիս արժանիս և
իրաւունս ի պաշտօն յայս վարժարանիս . . . վասն այնորիկ

լուեցէք դուք յայնժամ և չգրեցէք ինչ առ նոսա, ի խելամուտ առնել և զնոսա, թէ հարկ էր ձեզ զի զանձանց ինչ բառթուշեցելոյ ձեզ խոնարհութեան առնել խորհրդով և համոզութեամբ ժողովոյ առաջակայիցդ . . . այլ ինձ միայն արարէք անդէն և անդ պատասխանի ի խնուլ զբերան իմ վաղվաղակի . . . և ապա յայտ է թէ ունէիք դուք այլ իմն ձանձրութիւն և այլ կամք, և թէ ի յոռութենէ ձերոյ անտի շարժեցան և համարձակեցան զանազան ոգիք, և արարին զոր ինչ արարին . . . Թէպէտ և այն ոչ ումեք ի մխիթարութիւն : . . .

« Յիշեցէ՞ք արդեօք և զբանսն որ ի ժողովի այդր առաջակայիցդ երբեմն, ի խօսել զտնտեսական իրաց վարժարանիս, և ի լինել յիշատակութիւն և խիստ քննութիւն զմատակարարութենէ Հ. Յովհաննու, ասացի ես զայս բանս. « Թէ-
« պէտ և ծանօթ է նա արտաքին գործոյ, բայց անծանօթ է
« կարգի արծաթոյն, և անփոյթ ի տալ և յառնուլ անգամ
« զհաշիւ ծախուց ըստ ժամանակին : » Զի՞նչ արար ինձ պատասխանի ոմն յառաջակայիցդ այտի, թէ ադարտել ունիմ զհամբաւն արդիւնաւորի առն Հ. Յովհաննու, . . . ասելով իմ զայս : . . . Եւ ի զարմանալ իմ ընդ անակնկալ և ընդ տարապարտ յանդիմանութիւն նորա առ իս, մնայի արդարացուցման ի ձէնջ ըստ պատշաճի և ըստ արդարութեան . . . սակայն չբացէք դուք զբերան ձեր, և չասացէք ընդ այն բնաւ ինչ . . . վասն որոյ և նորա առաւել ևս համարձակեալ խօսեցաւ ընդ իս խստութեամբ, այլ և իրաւունս համարեցաւ զրով ազդ առնել որում պատշաճ դատեցաւ. և վասն այնորիկ հովութիւն սիրոյ ի մէջ եղբարց, և լքումն սրտի ի գործ հասարակաց : . . .

« Դարձեալ՝ չիցէ՞ այս յառաջ եկեալ ի նոր ձանձրութենէ ձերոյ և ի պակասութենէ որ զինէն վարկման, տալ ձեր համարձակութիւն երիտասարդ քահանայից, անծանօթ և անփորձ եղելոց իրաց վարժարանիս, ի քննել զգրուածն իմ որ առ ձեզ, և առնել նմին պատասխանի, և այնպիսի պատասխանի (*) : . . .

(*) Եթէ Հ. Սարգիս տասնամեայ փորձառութեամբ իւրով ի վարչութիւն

« Տեսանէ՛ք թէ զիա՛րդ մարթ է անգոյ ձանձրանան ձերում եղծանել զայլոյ ձանձրութն և զվարկն որ զինեն, և զգուել ի նոսա զայն ոգին զորմէ զանգատէի :...

« Զայսոսիկ այսպէս յիշատակեալ և հաւատարիմ արարեալ Վեհիդ, եկից այժմ ի հաստատութիւն բանիցս այսոցիկ, և նախ ի բանից իսկ ձերոց, զոր միանգամ և երկիցս ասացիք ինձ այդր և այսր, թէ

« — Բայց ի Հ. Ռափայէլէ չունիք դուք յայլ ոք վստահու-
« թիւն, զի յոր պաշտօն և կամիցիք կարգել զնա, հնազան-
« դի նա կամաց ձերոց, և առնէ զայն ըստ ցանկութեան ձե-
« րում : »

« Երկրորդ՝ յականատես և յականջալուր և ի խորհրդական վկայէ. քանզի ի ժամանակի անդ, յորում Վեհդ և Հ. Աղեքսանդր աստ առ մեզ ի Փարիզ էիք, տեսանէի ես զի գնայիք դուք յաճախ ի սենեակ Հ. Աղեքսանդրի, որ կից սենեկի իմում՝ էր և խօսէիք ընդ նմա, թէպէտ լսէի ես զխօսս ձեր որ զկարգաւորութենէ վարժարանիս, բայց որոշ ինչ ոչ իմանայի զայնմանէ, մինչև Հ. Աղեքսանդր ինքնին ծանոյց ինձ զայն, զորոշումն կամաց ձերոց, կարգել աստ ի Փարիզ զՀ. Ռափայէլ տեսուչ վարժարանիս. և զայս խորհուրդ և զկամս ձեր ոչ յայտնեաց ինձ նա բայց յորժամ իմացաւ յի-

վարժարանի, տակաւին խոնարհութեամբ խոստովանի զանբաւականութիւն իւր յայն և առաջարկէ կարգել անդ զՆմուտ ոք Գաղղիացի, իբրև օգնական իւր, կարէ՞ն երիտասարդ քահանայքն այնոքիկ որք անփորձ էին վարչութեան վարժարանի առնել այսպիսի համարձակ և յանդուգն պատասխանի գրութեան Հ. Սարգսի, վասն որոյ մեղադրէ և յանդիմանէ զնոսա հանդերձ իրաւամբք, և եթէ թելադրութեամբ և գրութեամբ իսկ Առաջնորդի իւրեանց արարեալ էին նոքա այսպիսի պատասխանի բանաւոր առաջարկութեան Հ. Սարգսի, արժան էր նոցա սորկապէս և անքննաբար հաւանութիւն տալ կամաց Առաջնորդի իւրեանց, Գեր. Հիւրմիւզի.

Ո՞չ ապաքէն այսպիսի կոյր հնազանդութեամբ, և ընդդէմ ճանաչման և խղճի մտաց ստորագրեցին նոքա ապա զգրպարտութեան յայտարարութիւնն որ առ Պապն Հռովմայ, և որով ատելութիւն ազգիս ընդ միաբանութեան, և բաժանումն անտի չորից անձանց ի վնաս և ի նախատինս նորին յաւիտեան....

Եւ ո՞չ ապաքէն այս ամենայն արգասիք են վրէժխնդրութեան, փառասիրութեան և ինքնահաճութեան Գեր. Հիւրմիւզի....

(Ծանօթութիւն Հեղինակին.)

նէն, թէ չունէի ես փափաք Տեսչութեան վարժարանիս՝, որպէս և ձեզ յայտ արարի ապա ։ Տես յէջս 215-6.

« Ահա հաստատութիւն բանիցս, յականատես, յականջալուր և ի խորհրդական վկայէ, ի Հ. Աղեքսանդրէ Պէշիկթաշլեանէ, թողից ասել և զհաստատութենէ բանիցս որ ի խորհրդակցութենէ ձերոյ և ընդ այլոց ոմանց և յայլ ուրեք, ի Հռոմ ։ . . .

« Գիտեմ ես և զխափանաբար պատճառսն կատարելոյ խորհրդոյ և որոշման կամաց ձերոց, և զակամայ որոշումն ձեր ի կարգել զիս անուամբ և եթ տեսուչ վարժարանիս . . . ապա չզօրեցին և չզօրեն բնաւ համոզել զիս ամենայն պատճառք տուեալք ինձ ցարդ գրութեամբ ի ձէնջ, և յիրաւի՝ քանզի զիա՞րդ կարացից համոզիլ, ի հարցանել իմ ձեզ աստ միանգամ և երկիցս, զկարգաւորութենէ վարժարանիս և ըզպաշտօնէից սորին, զայս միշտ և այնչափ միայն արարէք ինձ պատասխանի, թէ « Չկարեմ ես որոշել ինչ և ասել քեզ « ի ժամուս մինչեւ ոչ դարձայց ի վանս և իմացայց զկամս « Միաբանութեանս ։ » Թէպէտ ի նմին ժամանակի խորհէիք, խօսէիք և որոշէիք զայնմանէ ընդ Հ. Աղեքսանդրի դասակցին ձերոյ, մանաւանդ թէ և որոշեալ իսկ էիք զայն յառաջագոյն ի վանս և ի Հռոմ, որպէս վերագոյն յիշեցի ։

« Թէպէտ և կարէի ես յայնժամ հարցանել ձեզ, թէ զի՞նչ իմանայք Միաբանութիւնս ասելով. զքանի՞ զայն ծե՞րսն որք ոչ զհանգամանս գիտեն վարժարանիս, և ոչ փոյթ ինչ նոցա զայսմանէ, թէ զքանի՞ զայն երիտասարդ քահանայս որք անծանօթ և անփորձ են բոլորովին իրաց վարժարանիս(*)... և թէ առանց իմանալոյ զկամս նոցա չկարէ՞ք դուք որոշել ինչ, ըն-

(*) Զանփութութիւն ծերոցն ի վանս որ զհաստատութենէ Մ. վարժարանին ի Փարիզ և զյառաջադիմութենէ նորին ծանուցեալ եմք ի թուղթս մեր առ Գեր. Սուքիաս Սոմալ, որպէս և զհակառակութիւն Հ. Ռափայէլի ընդ այն ի սկզբանէ հետէ ։ . . .

Իսկ զանծանօթութիւն և զանփորձութիւն երիտասարդ քահանայից ի վարչութիւն վարժարանի ծանուցեալ՝ եմք յառաջարկութիւնս մեր առ Գերապայծառ Հիւրմիւզ ։ . . .

(Ծանօթութիւն հեղինակին ։)

դէ՞ր ոչ հարցանէք զկամս մեր սատ եղելոյս, չորից անձանց,
մանաւանդ զկամս այնորիկ, որում պատիւ Աթոռակալու-
թեանդ ետուք դուք։ Սակայն ես ոչ հարցի զայս Վեհիդ, գի-
տելով չափ թէ փախուստ էր պատասխանին ձեր այն, և թէ
կամէիք դուք դառնալ ի վանս առ ի հաստատել զորոշումն
կամաց ձերոց ժողովով առաջակայիցդ, և ապա չզօրէ և հաս-
տատութիւն ձեր որ ի վկայականէ արձանագրութեան ժողո-
վոյն։

« Հարցի ես ըստ հրամանի Վեհիդ զԱտենադպիրն արձա-
նագրութեան ժողովոյն, զՀ. Գաբրիէլ, և նա վկայեաց թէ
ոչ գիտէր զայնմանէ, բայց ինիւթապէս օրինակելոյ զայն
յարձանագրի անդ, ապա նման է վկայականդ այդ վկայա-
կանի բժշկաց տուելոյ ի շնորհս կերպարանեալ հիւանդաց,
առ ի զերծուցանել զնոսա ի ծանրութենէ բեռանց հասա-
րակաց։ . . .

« Գիտելով իմ քաջ զներքին և զարտաքին պատճառսն
թողլոյ Հ. Ռափայէլի Թրենց զպաշտօն տեսչութեան Ռաֆա-
էլեան վարժարանին, զներքին պատճառսն հատուցի վերագոյն,
իսկ զարտաքինն լուեալ իմ ի բերանոյ իսկ Վեհիդ, և զայն
յառաջ քան զխորհելդ ի Հռովմ գնալ։ Քանզի ասացիք ինձ
թէ կամիք դուք բացարձակ հանել զՀ. Ռափայէլ ի պաշտօնէ
անտի տեսչութեան, լսելով ձեր զգանգատանս և զարտունջս
ի բերանոյ բազմաց որ ընդ մատակարարութիւն նորա անդ,
միանգամայն և տալով ձեր եւս իրաւունս գանգատանաց այ-
լոց, գոնէ ցուցանելով ձեր զայն։ . . .

« Եւ յասել իմ Ձեզ թէ ծանր թուեսցի նմա այն, հա-
նելն ի պաշտօնէ անտի, այլ բարւոք լիցի զգուշացուցա-
նել զնա յայն այսուհետեւ, ասացիք ինձ թէ ոչ այդ-
պէս, այլ պարտ է հանել զնա անտի, և ոչ ծանր թուեսցի
նմա այն. քանզի գիտեմ ասացիք յայլ կարեւորագոյն պաշտօն
կարգել զնա։ . . .

« Թողից ասել և զհնարիմաց գիտող վերստին հաստատե-
լոյ Հ. Ռափայէլի ի պաշտօն անդ տեսչութեան Ռաֆայէլեան
վարժարանին, և զմահացուցմանէ կամաց հանդուցեալ Հօր

Սամուէլի, հանելով զնա ի պաշտօնէ անտի տեսչութեան, և զցաւալից հետեւանացն որ անտի, զտխրութենէ, զհիւանդութենէ և զմահուանէ նորին ասեմ ։ . . . Ապա չեմ ես սխալեալ ի կարծիս իմ և ի դատաստանս որ ընդ այս ։ . . .

« Աղաչեմ զՁեզ Գեր. Տէր, մի՛ ի կարգս անփորձ միաբանից դիցի՛ք զիս ։ Թէպէտ և աստիճանաւ գերագոյն էք յոյժ քան զիս, այլ ոչ հասակաւ և փորձիւ . . . և մի՛ այնչափ տգէտ համարիջիք զիս, թէպէտ և չկարիցեմ ես իբրեւ զՁեզ ընտրու-թիւն առնել ի հայկաբանութիւն, այլ կարեմ հասկացուցանել զմիտս իմ այլոց գրութեամբս, չատ է զի չհնարիցեն այլք յաւելուլ բառս ի գրութիւնս իմ, և չտայցեն բանիցս այլ իմաստս, և կամ այլ ընդ այլոյ չմեկնիցեն զայն (*) ։ . . .

« Շնորհ յոյժ ունիմ կարեկից բանից Վեհիդ որ ընդ վիշտս իմ, նա և ընդ տարապարտուց կարծեցեալդ վիշտս իմ, զոր իբրեւ յանկեղծ մտաց և ի սրտէ Հօր հաստարակաց պարտ է ինձ հաւատալ ։ . . .

« Բայց յաղագս տարակուսանաց բանից գրութեանդ որ ընդ արհամարհութիւնս իմ ի Ձէնջ, ասեմ, թէ ե՞րբ և ո՞ր բանք գրութեանս իմոյ ընդունելի եղեն Ձեզ երբէք ։ Ո՞չ ապաքէն զամենայն ազդարարութիւնս իմ առ Ձեզ և զբովանդակ առաջարկութիւն բանիցս արհամարհեցիք ի սկզբանէ անտի մինչեւ ցարդ, և հաստատութիւն այսմ, ահա վերջին պատասխանին ձեր, ո՛ յանուն ժողովոյ խնամակալաց առ գրութիւնս իմ առ ձեզ. յոր ոչ միայն արհամարհէք զամենայն բանս իմ որ զկրաց վարժարանիս, այլ և դատապարտէք զիս իբրեւ զազգատեաց ոք և զճնաակար ազգիս, օտարացուցանել կամեցեալ իմ զմանկունս նորա ի հայրենեանց իւրեանց, և իբրեւ անարգող միաբանութեանս, անբաւական համարեալ զնա ի բարձագոյն գիտութիւնս և ի գեղարուեստս, աւելորդ բառս հնարելով ի գրութիւնս իմ, և ձախողակի իմաստս Նը-

(*) Սակայն ի վերայ այսր ամենայնի, հնարէր և յաւելոյր Գեր. Հիւրմիւզ, այլ բառս և իմաստս ի գրութիւն Հ. Սարգսի, որոյ զժուարեալ ընդ այն, յանդիմանէ զնա հաւաստեօք ։

(Ծանօթութիւն Հեղինակին)

մին տալով . . . վասն որոյ և վճիռ բացարձակ և խիստ յա-
նուն ժողովոյդ, յերեկեան ոմանց դատաւորաց իմոց, այլ և
յանուն ազգիս ընդդէմ ինձ տայք անդ . . . ապա տարակու-
սիք դեռ, թէ ե՛րբ և որո՛վ արհամարհեցիք զբանս իմ և ոչինչ
համարեցայք զիս : . . .

“ Յետ բազում տարակուսանաց այսր և անդր յածեցու-
ցանելոյ զկարծիս ձեր, ի գտանել ինչ որ ստգտանիցէ զՁեզ
արդեօք յարհամարհութիւն ինձ երբէք, գուշակէք ապա ինչ
մի, թէպէտ և պատճառ այնմ եւս գրութիւնք իմ լեալ իցեն,
որ ունի այսպէս.

“ — Յորս գլխաւորագոյն արդեօք այն իցէ, ասէք, զի
“ ի գրելս առ Հ. Յովհաննէս, վասն պարզ առաջարկութեանդ
“ ցրուելոյ զվարժարանդ, յաւելեալ եմ զբառս ամօթապարտ,
“ զձեզ այնու արհամարհել կամելով. առ որ թէպէտ և յա-
“ ռաջագոյն տուեալ է իմ պատասխանի, բայց թուի թէ
“ Վերապատուութիւնդ կամի ունել ինչ ի ձեռին որով կըռ-
“ փահարել զիս. ապա թէ ոչ՝ այս ինչ յայտնի է զի թէ և
“ յանցուցեալ իցեմ բառիւն, պատճառ այնմ լեալ են գրու-
“ թիւնք Վերապատուութեանդ, զմտակարարութենէ Հօր
“ Յովհաննու, ընդ որ և զայրացեալ իմ, որպէս և յառաջն
“ գրեցի, զի յայն էարկ զմեզ : ”

“ Ասեմ և ես առ այս. Թէպէտ և միանգամ և երկիցս
ծանուցեալ եմ Վեհիդ զձախողակի մեկնութիւն ձեր տուեալ
բանից առաջարկութեան իմոյ անդ, բայց թուի թէ Գեր.
Տէրդ չիմանալոյն առնէ զայն, առ ի հաստատել զկարծիս
իւր : Վասն որոյ հարկաւորիմ ես այժմ վերստին բերել աստ
զառաջարկութիւնն իմ այն, և քննել զայն ըստ բառից և
ըստ բանից, և տեսանել թէ իցե՞ն արդեօք իրաւունք ի բանս
յայն գրութեան Վեհիդ :

“ — Բայց միայն կարեւոր համարիմ խնդիր ինչ աստանօր
“ առաջի առնել. այս է, եթէ Տէր մի՛ արասցէ, խռովութիւնն
“ այսր և անդր ճարակեսցի, և երբեւէք թղթոց և անցք դըր-
“ բանոց խափանեսցին իսպառ, զի՞նչ պարտ իցէ մեզ առնել
“ աստ. զմանկունս զպրոցիս պահե՞լ, հանդերձ ահիւ և դո-

« զուլթեամբ, ծանր ծանր ծախիւք և պարտիւք և տոկոսեօք,
« և եթէ կարիցեմք զայն գտանել . (քանզի ամենեքեան սկը-
« սեալ են զձեռս իւրեանց կծկել, չտալ ումեք փոխ արծաթ,
« չգիտելով զելս իրացն և զվախճան իւրեանց,) թէ արձակել
« զնոսա ի հայրենիս իւրեանց, որպէս և արձակեցին աստ
« ոմանք ի տեսչաց զաշակերտս իւրեանց, թէպէտ ի դէպս
« յայս պիտոյ է մեզ արծաթ իբրեւ 20,000 ֆրանք ի ծախս ճա-
« նապարհի նոցա, այլովքն հանդերձ : Արդարեւ խնդիր կա-
« րեւոր, դժուարին և ծանր յոյժ, և մեզ պէտք են նախա-
« հայեաց տեսութեան : . . . Խորհեսցի քաջ Տէրդ և ժողովն
« խնամակալաց, և հոգասջիք զայսմանէ ըստ ժամանակին : »

« Ահա այս էր առաջարկութիւնն իմ արարեալ յայն-
ժամ :

« Եւ արդ՝ հարցանեմ Ձեզ նախ՝ թէ առաջարկութիւնս իմ
այս պա՞րզ իցէ թէ պայմանաւոր : Ո՞չ ապաքէն պայմանաւոր,
եթէ Տէր մի արասցէ . . . ապա ընդէ՞ր հնարեալ իցէք զբառդ
պարզ առաջարկութիւն : . . .

« Երկրորդ՝ թէ իցէ՞ն ի մին ինձ կամք բացարձակ ցրուել
զմանկունս և փակել զվարժարանս, թէ միայ խորհրդոյ, որոշ-
ման և հրամանի ձերոյ այսր : . . . Ապա ընդէ՞ր այլ իմաստք
տայք բանից գրութեան :

« Իսկ թէ չէին ինձ բնաւ կամք ցրուել զմանկունս և փա-
կել զվարժարանս, այլ ի մաքրել միայն զստահակսն և զան-
պիտանսն ի մանկանց աստի, ահա երկոքին վկայքն, Հ. Յով-
հաննէս և Հ. Ստեփան, յորմէ խնդրեցի տալ ինձ գրով զան-
ուանս նոցին, զոր և ետ ինձ նա, և յոր ակնարկեալ իմ,
տեսի զի կային անդ և անուանք պիտանի և զգաստ մանկանց,
ասացի ցնա, թէ չեն ինձ կամք զբոլոր մանկունս արձակել,
այլ զստահակսն և զանպիտանսն միայն, առ ի մաքրել զվար-
ժարանս և ի թեթեւեցուցանել ի ծանրութենէ ծախուցս
յայսմ քննութեան ժամանակի (*) . . . և ընդ այս եւս, ասացի,

(*) Ի ժամանակին յորում հանգամանք Եւրոպիոյ վարչութեանց ընդ զանա-
զան քննութեամբ էին, խռովութիւն և փոփոխութիւն յամենայն տէրութեան
լինէին, վասն այնորիկ դժուարութիւն փոխանակութեան արծաթոյ, և վասն
այսորիկ հարկ էր չափաւորել զծախս Մ. վարժարանին, չափաւորելով զթիւ

պարտիմք միայն որոշման և հրամանի ի վանացս . . . և զայս կամս իմ և զմիտս առաջարկութեանս իմոյ ծանուցեալ եմ Վեհիդ միանգամ և երկիցս ի զանազան թուղթս իմ : Ապա ընդէ՞ր վերստին զնոյն բանս կրկնէք ի թուղթն ձեր այս, ցրուել զմանկունս և փակել զվարժարանս : . . .

« Տեսանէ՛ք Գեր. Տէր, զի չիմանալոյն առնէք զբանս գրութեան իմոյ, առ ի հաստատել զկարծեցեալ իրաւունս որ ի բանս գրութեան ձերոյ, և ի զուր դատիք զիս, թէ կամիմ ես ունել ինչ ի ձեռինս, որով կռփահարել զձեզ :

« — Զայս չկարելով ժխտել և Վերապատուութեանդ,
« ասէք, հարկաւորի այլ իմաստս տալ նախկին գրեցելոյն :
« Եւ զի ակներեւ կացցէ ճշմարտութիւն բանիցս, աճապարեալ? —
« գրեալն ի Վերապատուութենէդ յայլ և այլ թուղթս
« իւր : »

« Ասեմ ես և ամենայն վստահութեամբ, թէ ոչ ի նախընթաց թուղթս, և ոչ յայլ յառաջագոյն գրեալսն իմ առ ձեզ, կարիցէք երբէք գտանել զայսօրիկ բառս կամ բանս, այսինքն, գանգատել և խղճել իմ զչարաչար մատակարարութեան Հ. Յովհաննու, բայց եթէ զանուղղութենէ մատակարարութեան վարժարանիս, այսինքն զընդհանուր տեսչութենէ վարժարանիս, զոր և դուք քաջ իմացեալ էք և որում վկայէք իսկ ի պատասխանիս ձեր որ ի դիմաց ժողովոյն, այսպէս.

« — Վերապատուութիւնդ յընթացս գրոց իւրոց բովան-
« դակ գանգատեցաւ զընդհանուր տեսչութենէ Աբբային
« կամ խնամակալաց ժողովոյն, զակնառու ընտրութենէ ման-
« կանց, զուսմանց նոցա, և զվարկմանէ Աբբայի զձէնջ : »

« Արդ՝ ուստի՞ հնարեցէք զայսօրիկ բառս և զբանս, և ընդէ՞ր, ասացէք աղաչեմ : . . . Ապա չէ իմ երբէք հարկաւորեալ այլ իմաստս նախկին գրութեանս տալ, որպէս դուք կարծէք. քանզի գիտացի և գիտեմ ես, թէ զինչ և առ ո՛

աշակերտաց Նորին, մանաւանդ զթիւ անպիտանեացն առ յայս հայի բանն յայսմ քննութեան ժամանակի . . .

(Ծանօթութիւն Հեղինակին :)

ունիմ գրել. և յայսմ այնչափ, մինչև չզանգիտեմ, և չասմաչեմ բնաւ, եթէ հարկն պահանջիցէ, զգրելոյն իմ ի տիպ արձանացուցանել, ի քննութիւն և ի դատաստան աշխարհի որ զգնացից իմոց և զկարծեաց ի գործ այս վարժարանիս, յիրաւունս սեպեմ աղքատաց ազգիս : . . .

« Բայց չգիտեմ արդեօք թէ զսոյն այս իմ համարձակութիւն ունիցի՞ք և դուք ի սմին, բաց յանարատութենէ խղճի մտաց ձերոց յոր միայն էք ապաստան, թէպէտ և չզօրէ այդ այնչափ առաջի մարդկան, այլ Աստուծոյ միայն, և այն ևս յորժամ անյաղթելի իցէ ստգիտութիւնն, յոր ոչ զձերն գիտեմ այնպէս (*) . . . քանզի գիտէք դուք քաջ զամենայն, և խելամուտ էք ամենայնի : . . .

« Բայց ե՞ն են խափանարար ինչ պատճառք զորս չկամիք իմանալ և բառնալ ի միջոյ . . . և ապա ոչ միայն չեկաց ակներեւ ճշմարտութիւն բանից ձերոց ի ցուցանել զայլեւայլութիւն բանից գրութեանս իմոյ, այլ և ոչ ստուեր անգամ նորին երեւեցաւ : . . .

« Ներեսջի՛ք համարձակութեանս, Գերապայծառ Տէր, աղաչեմ զձեզ : . . .

« — Բայց ընդ դժպատեհ թշնամական բանս անգամոյն « այնորիկ զորմէ գրէք, վիշտ մեծ է և ինձ, սակք. եթէ սաստ « էր ստիպէի զնա փութով ի հատուցումն : » Այլ ինձ առաւել վիշտ է, Գեր. Տէր, զի թողեալ ձեր զկարեւոր և զծանր զայն գործ մատակարարութեան, որում երաշխաւոր է բոլոր Միաբանութիւնս ըստ պատուոյ իւրում և ըստ խղճի մտաց, ի ձեռս և ի կամս անձին միոյ, որում պակասի խոհեմութիւն և զգայութիւն, առանց խմանալոյ և քննելոյ ձեր զհանգամանս կալուածոց վարժարանիս և զարարս նորա, մանաւանդ յայսմ ժամանակի, յորում ընդհատեալ է հաղորդութիւն ձեր ընդ նմա : . . . Թէպէտ և ազդ արարի ես Վեհիդ երբեմն և զդարմանոյ սորին խորհեցայ, այլ ըստ սովորութեան ձե-

(*) Այո՛ գիտէին նոքա զամենայն, և խելամուտ էին ամենայնի, այլ ինքնահած կամք Նախագահին, և կոյր հնազանդութիւն ժողովոյ նորին խափան էին ուղիղ մատակարարութեան վարժարանին :

(Ծանօթութիւն Հեղինակին :)

րում զխորհուրդն իմ որհամարհեցիք, զՊօլսեցւոց միայն հոգալով ։

« Մ՞չ ապաքէն ազդ արարեալ եմ Վենետ. զգնացս Նորա ի Թուղթն իմ առ ձեզ, գրեալ յԴ մարտի, այսպէս. « Զպար- « տուց վարժարանիս գրեցի ես երբեմն առ Հ. Եսայի իբրեւ « գործակալի, հանդերձ բանաւոր պատճառօք, այլ Նա արար « ինձ պատասխանի յանդուգն և յախուռն բանիւք. տեսեալ « իմ զկարճմտութիւն և զանզգայութիւն Նորա՝ լռեցի ես այ- « նուհետեւ ի գրելոյ առ Նա ինչ ։ »

« Ընդէ՞ր չստիպեաց զՆա Վենետ փութով ի հատուցումն, մինչ- դեռ երթեւեկէր Նա այդր, և չէր յաւելեալ Նորա առաւել եւս զյանդգնութիւն (*) իւր ուղղակի և անուղղակի գրու- թեամբ իւրով առ իս, և մինչեւ բռնադատեալ էր զիս առնել զարժան պատասխանին : . . .

« Իսկ յաղագս բանի պահանջմանս որ ի Ռափայէլեան վար- ժարանէն, ասեմ, թէ ոչ գոյ վրիպակ ի գրութիւնս, այլ չա- փազանց վստահութիւնն իմ յեղբարս, ըստ սրտի իմում ճա- նաչելով և զսիրտ այլոց, և վրիպեցայ : . . . Թողում ես այժմ զայս իրաւունս որոշման Վենետ. կամ 2,000 ֆրանք պարտի հատուցանել ինձ Ռափայէլեան վարժարան, և կամ 1,500 ֆր- րանք, կորուսանելով իմ անդ 500 ֆրանք, իբրեւ վարձ համ- բերութեանս, չպահանջելով իմ զայն ի ժամանակին, տասն ամօք յառաջ ի Հ. Ռափայէլ Թրենց, և չլինելով իբրեւ զՆա ճիշդ ի պահանջումն և զայն յեղբարցս և ոչ յօտարաց : . . .

« — Զայս և եթ առ տեղեաւս պատշաճ համարիմ ծանու- « ցանել, ասէք, զի ոչ որպէս կարծէ Վերապատուութիւնդ « օտարոտի համարելով զձեզ չհաղորդիցեմ զվիճակ վանացս. « զի թէ զԹուղթս իմ յակն արկիցէք զգրեալսն յերկուց և « աւելի ամաց հետէ, տեսանիցէք գրեալ ի Նոսա զամենայն « կարեւոր և զվանական լուրս. բայց յորմէ հետէ ստգտանաց « միայն գառն Թուղթս սկսայ առնուլ, չկարէի հարկաւ « զարտաքնոց լրոց խօսս առնել ։ »

(*) Ընդ այս յանդգնութիւն հատուցեալ եմք ի 452 էջ սորին ։
(Ծանօթութիւն Հեղինակին

« Զայս և եթ հարցանեմ ես Վենիգ, նախ՝ թէ երբ սկսայք առդատանաց դառն թուղթս առնուլ յինէն. ո՞չ ապաքէն ըստ բանից պատասխանւոյ ձերոյ ի սկզբանէ հետէ, զկնի դարձին ձերոյ աստի ի Վենետիկ: Ապա հարկաւ չկարէք զարտաքնոց ղրոց խօսս առնել. ապա աւելորդ լիցի յակնարկել իմ զգրեալսդ յերկուց և աւելի ամաց հետէ. զի չկարեմ ես դըտանել ի նոսին զարտաքնոց լուրսն, որպէս և Տէրդ ինքնին վկայէ, և որպէս ես ինքնս քաջ գիտէի, վասն որոյ և ոչ վայրապար ասացի, թէ « օտարոտի ոք համարեալ եմ յաչս « ձեր : »

« Երկրորդ՝ զի՞նչ իմանայ Վենէգ առդատանաց դառն թուղթս ասելով... զանաչառ պատասխանի՞սն իմ որ առ խիստ գրութիւն ձեր, ... թէ զարդարութիւն բանից որ ընդ իրաւունս աղքատաց ազգիս, ... և զոր դառն առդատանս ձեզ համարիք, և զիս իբրև թշնամի և ոչ բարեկամ ձեզ կարծէք: ... Եթէ լռէի ես արդեօք ի խօսելոյ ձեզ զճշմարտութիւն, բարեկամ համարէիք զիս ձեզ և ոչ թշնամի և ընտանի թշնամի, որ դժնդակ է քան զարտաքին թշնամին: ... Ապա ընդէ՞ր տարակուսիք դուք, չյիշելով ձեր բնաւ թէ արհամարհեալ իցէք ընդ բանս իմ և զիս գլխովին... քանզի յորժամ դառն առդատանս համարիք զգրութիւնս իմ առ ձեզ, ապա հարկաւ արհամարհէք զայն, իբրև ոգւով թշնամութեան գրեալ իցէ այն:

« Եւ ապա զի՞որդ ասէք յայլ ուրուք, թէ « Վիշտ մեծ է
« մեզ զի ի մէջ վանականացս և վարժարանեայսդ անկեալ
« է հովութիւն սիրոյ, ի պատճառս ոչ բարւոք իմանալոյ զմիտս
« իրերաց, յորմէ յառաջ գայ խստիւ քննել զգործս միմեանց:
« Եթէ ոչ կանխեալ զառաջս այսորիկ ունիցիմք, յայտ է
« թէ յետ այսորիկ նոյն եղիցի, և այնու վարժարանացս
« չգործեմք օգուտ և զմիաբանութիւնս ի կործանումն երա-
« գեմք: Վասն որոյ և յայդմ մեծապէս իրաւունս տուեալ
« Վերապատուութեանդ, ասէք, յորդորեմք եւս մի՛ դնել
« զայն ի սրտի իւրում, և մի՛ լքանիլ վասն այնորիկ, նա և
« ոչ իկարծիս այլոց արհամարհանաց ձեռնթափ լինել իգոր-
« ծել զօգուտ միաբանութեանս և վարժարանիդ: »

« Տեսանէ՛ք, Գեր. Տէր, թէ զիա՛րդ արդարանամ ես ի կար-
ծիս իմ յայս, թէ « կարեւորագոյն են արդիւնք բանից ի մէջ
« միաբանութեանս, քան զքաղաքավար խօսս, և զքարոյա-
« կան խրատս ։ »

« Թէպէտ և տրտունջ իմ իրաւացի էր և գրութիւնս ոչ
վայրապար, սակայն ի վերայ այսր ամենայնի, ըստ ազգա-
բարութեան Վեհիդ յակն արկի ես զբովանդակ թուղթսն
զգրեցեալսն ի ձէնջ առ իս ցարդ, և որք են թուով 55 և ոչ
աւելի, որոց 20 գրամական իրայն են միայն, և 13 խառն
են նախ գրամական իրաց, և ապա պատասխանի թղթոյն
իմոց. իսկ մնացեալ 22 թուղթքն են զկարգաց և զկանոնաց
վարժարանիս, զխնդրոյ տեղւոյն Ռափայէլեան վարժարանին,
զպրոցէն մերոյ ի Պոլիս, և զպայմանէ այդր մեծարու հիւ-
րոյն Յակոբայ Զէլէպւոյն և Պարոն Յովհաննէս Տատեանին,
առանց ծանուցանելոյ ինձ զխոստացեալ օժանդակութիւնն որ
ի միոյն, և զպարգեւսն որ ի միւսոյն, . . . և առանց ծանուցա-
նելոյ ինձ զփոփոխութիւն վերակացուի Նորընծայարանի վա-
նացս և տեսչի Ռափայէլեան վարժարանին ։

« Այս չեն պատճառք ստգտանաց դառն թուղթք իմ, չհա-
րելոյ ձեր հարկաւ զարտաքինս ցրոց խօսս առնել . . . այլ այն
է պատճառն զոր վերագոյն ասացի բանադատելոյ ի ճշմար-
տութենէն, և բանադատիմ ես անտի ասել և առաւել ես,
թէ և յոչ կամաց, թերեւս դարման տարցի իրացն, հովու-
թեան սիրոյ որ ի մէջ վանականաց և վարժարանեայս, և զա-
ռաջսն կալցի չարեացն, ըստ ձերոց կանխաժանաց ։ . . .

« Մինչդեռ աստ ի Փարիզ էր Հ. Աղեքսանդր Պէշիկթաշ ընդ
Ալլահվէրտեան Պարոնայս, իբրեւ կարծեցեալ Մենտովր (*)
նոցին, գրէր Վեհիդ առ նա թուղթս, տալով նմա զկարեւոր
լուրս վանացդ, և կարօտելով խորհրդոյ և խելաց նորին, որ
յաղագս տեղւոյ Փիզիքական գործեաց, և ձեռագիր մատե-
նից, զի գրեալ էիք առ նա այսպէս. « Պարտ էր ձեզ աստ

(*) Զգնացից և զարժանեաց կարծեցեալ Մենտորին պարտ է հարցանել ի Պա-
րոնաց որոց առաջնորդէր նա ի ճանապարհորդութեան Եւրոպիոյ ։ . . .
(Տանօթութիւն Հեղինակին ։)

« լինել սիրելի, և զայսցանէ ընդ ձեզ խորհել և կարգաւո-
« րել։ . . . Նոյնպէս և Հ. Ռափայէլ Թրենց գրէր առ Նա
թուղթ և փափաքէր յայժ տեսութեան նորա այսպիսի բա-
նիւք. « Սիրելի փութասջիք գալ այսր զի մխիթարեսցայց ձեօք,
« զի չունիմ աստ ինչ մխիթարութիւն (*)։ . . .

« Բողոքեմ ես արդ ի ճշմարտութենէն միանգամայն և յարդարութենէն, քննել աստ զգնացս, զգործս և զարժանիս Հ. Աղէքսանդրի, և տեսանել թէ արդարև խելացի և մխիթար անձն իցէ Նա, և թէ իրաւամբք և արդարութեամբ սիրէք և յարգէք դուք զՆա։

« Արդ՝ յորժամ դարձայ ես ի Հնդկաց ի Լոնտրա՝ չգտի զՀ. Աղէքսանդրն անդ, զի գնացեալ էր ի Մանչիսդեր ի զընՆին մեքենայից անդ, թէպէտ իմացեալ էր ի թղթոյ իմմէ զժամանելն իմ և Աղանուրեանց իբերան Թամիզ գետոյն, և յանձնեալ Նմա պատրաստել մեզ օթեւան։ Յետ երկուց աւուրց հասանելոյ մեր ի Լոնտոն դարձաւ Նա անդ, և ոչ ուրախութիւն ինչ եցոյց ընդ դարձն իմ ի Հնդկաց, մանաւանդ թէ տրտմութիւն ընդ այն, խորհելով զկարճութիւն ժամանակին և զդարձ իւր ի վանս։ . . . Զայս զգացողութիւն Նորա իմացեալ Ռափայէլեանց պատմեցին ինձ ծիծաղելով։

« Հարցեալ իմացայ՝ զի ունէր Նա տակաւին ի ձեռին իւրում 5,000 լիրէ ստերլին, զոր պարտ էր անցուցանել ի Վենետիկ, պատճառէր թէ չգտանէր փոխանակագիր։ Գտի ես զայն վաղվաղակի ձեռամբ Ալէփսոնի, և ստիպեցի զՆա անցուցանել և զայն ի Վենետիկ, թէպէտ և ընդդէմ կամաց իւրոց, և զայն ոչ միանգամայն։ . . .

« Եւ իբրև խնդրեցի ի Նմանէ զհաշիւ արծաթոյն անցուցելոյ իմ ի ձեռս Նորա ի Հնդկաց յապաղեաց Նա տալ ինձ զայն իբրև զաւուրս 40. և ապա եցոյց ինձ հաշիւ յոր պակասէր 400 լիրէ ստէրլին զոր չգիտէր թէ ուր ծախեալ էր. և յետ բազում ընդունայն քննութեան և աշխատութեան ընդ

(*) Սակայն զսա այս մխիթարիչ իւր ոչ կամեցաւ Նա ապա պաշտօնակից իւր ունել ի Մ. վարժարանի, երկնչելով ի համարձակութենէ Նորին առաջի աշակերտաց իւրոց։ . . .

(Ծանօթութիւն Հեղինակին։)

Ալէփոնի, որոյ զարմացեալ և գայթագղեալ էր ընդ անկարգութիւն հաշուի նորա : . . .

« Եւ իբրեւ տեսի զանհնարութիւն գտանելոյ նորին, և զամօթ մեր յայլոց, լցի ես զպակասութիւն նորին, և ցուցի Ալէփոնի, թէ գտաւ կորուստ այն ուստեք : Թողից ասել զառանձին ծախուց նորա որ ի Լոնտոն, զի զամս երիս ծախէ նա 1,000 լիրէ ստէրլին. և թողից ասել զծախուց գործեացն որ ի պէտս իւր, և զոր ունի այժմ ի Պօլիս :

« Իսկ զի՞նչ ասացից զՎնասակարութենէ նորին որ ընդ բոլոր հասարակաց ազգիս և միաբանութեանդ, հայեցեալ ի գիտաւորութիւն Պարոն Աղէքսանդր Ռափաէլի, որում խափան եղեւ նա անպատեհ գնացիւք իւրովք. և ոչ միայն խափան եղեւ բարեացն այնոցիկ, այլ և վնասակար իրաւանց աղքատաց ազգիս. քանզի յանցուցանել Պարոնին ձեռամբ նորա արծաթ ի վանս 120,000 ֆրանք, ծախէ նա անտի 20.000 ֆրանք ի հաճոյս կամաց իւրոց, և զոր հատոյց Մուրատեան վարժարանն : . . . Սակայն ի վերայ այսր ամենայնի պարծելով պարծի նա առաջի Ալահվէրտեանց, թէ քանի խնայութեամբ անցուցեալ իցէ ինքն ի Լոնտոն, յաւուր 3 ֆրանք հազիւ ծախեալ իցէ անդ, զոր պատմեցին ինձ նոքա և հարցին թէ արդարեւ այնպէս խնայութեամբ անցուցեալ իցէ նա անդ, ճանաչելով զանմիտ շռայլութիւն նորա. այլ իմ պահելով զպատիւ միաբանութեանս չցուցի նոցա զհաշիւ ծախուց նորա զոր ունէի ի ձեռին : . . .

« Իբրեւ դարձայ ես աստ վերստին յամին 1846, գտի զնա բնակեալ ի վարժարանիս. և իբրեւ յիշատակութիւն եղեւ զընտրութենէ նորոգ Աբբայի Միաբանութեանս, ասաց նա յայտնի ի լուր ամենեցուն, թէ « Ոչ բարւոք ընտրութիւն « արարեալ է միաբանութիւն, ընտրելով զմիամիտ ոմն Աբ- « բայ վանացս (*) : » Զայսն և առաւել եւս ասացեալ է Ալ-

(*) Ընդ այս հատուցեալ եմք յառաջագոյն ի 193 էջ սորին. հատուցուք և ապա ի հետեւեալ ծանօթութեան ի 466-7-8 էջս :

(Ծանօթութիւն Հեղինակին.)

լաՀվէրտեանց ի լուր ազատութեան Վենետկոյ, թէ “ ուրախ “ է ինքն ընդ ազատութիւն Վենետկեցւոց, զի բարգաւաճին “ Նոքա. այլ ցաւի, զի չունի միաբանութիւնս Աբբայ, որ “ կարիցէ երեւեցուցանել զարժանաւորութիւն միաբանու- “ թեանս: ”

“ Պատմեցից ձեզ և զայլ այլանդակ մտածութիւն և խօսակցութիւն Նորա Հրապարակաւ. քանզի ի լինել յիշատակութիւն կարեկցութեան զտանէ ձերոյ, զտարաժամ մահուանէ եղբարցդ, ասաց Նա յանդգնութեամբ և անգթութեամբ, թէ “ ըստ արդարութեանն է թշուառութիւնն տանն “ այնորիկ. “ և թէ “ դեռ սակաւ է Նմա այն, սակս վնա- “ սուցն զոր Հասոյց երէց եղբայր ձեր ուղղափառաց ազգին, “ պատճառ լեալ Նորա Հալածանաց և թշուառութեանց “ Նոցա: ”

“ Թէպէտ և լուեալ էի ես զայս երբեմն յայլուստ, այլ ոչ կարծէի լսել զնոյն և ի բերանոյ սիրելւոյդ: . . .

“ Ասաց Նա դարձեալ (*), թէ “ Ջկամի ինքն երթեւեկել “ շատ առ ընտանիս ձեր, չկարելով տանել անապարծ բա- “ նից Նոցա որ ընդ արժանաւորութիւն եղբարց իւրեանց “ ի միաբանութեանս: ” Թողից պատմել Ձեզ և զանպատեհ խօսակցութիւն և զգնացս Նորա աստ ի դայթագղութիւն ազգայնոց, զոր կարէք Հարցանել ի Հ. Ստեփանէ յականջալուր վկայէ: . . .

“ Եւ արդ՝ Հարցանեմ ես Վեհիդ կարեկցաբար և ցաւօք սրտի, թէ ո՞ իցէ որ կուսակալէ զՁեզ, և շառագունեցու-

(*) Մի արդեօք պարծանք փարիսական, բանսարկութիւն սատանայական, և խոստութիւն տարապայման թուիցին ասոանօր բանքս, Հարկ Համարիմք տալ այսմ ծանօթութիւն: Ի ժամանակի գալստեան Հ. Գէորգայ Հիւրմիւզի ի Վենետիկ յընտրութիւն Նորոգ Աբբայի, ցուցանէ Հ. Սարգսի ոսկիս իբր Հազար ֆրանքի, և տալ պարծանօք իմն. “ Ահա արդիւնք վաստակոց իմոց, զոր բերեալ յանձնեմ միաբանութեան, ըստ ուխտիս աղքատութեան: ”

Իսկ Հ. Աղեքսանդր Պէշիքթաշ յետ վաճնելոյ զայնչափ արծաթ ի Լոնտոն ի գործակալութեան Մ. Հրիտակին, պարծի առաջի այլոց թէ բազում խնայութեամբ անցուցեալ է ինքն ի Լոնտոն, առաւ երկու շլէնիս ապրեալ է. և յետ պարծելոյ առաջի իւրոցն, թէ զասնն զոր շինեալ է ի Պոլիս վասն շահու միաբանութեան իւրոյ է. և տալ այլոց թէ վասն ընտանեաց իւրոց է շինեալ որ

ցանէ զմխաքանս. Եւ, եթէ սիրելեայն ձեր Հ. Աղեքսանդր, և մխիթարիչն Հ. Ռափայէլի : . . .

« Թողից իբրև զանդէպ ինչ յիշատակել աստ զՋատագովութիւն և զվկայութիւն իմ որ զՁէնՋ առ երիտասարդ քահանայս ի վանս ի ժամանակի ընտրութեան ձերոյ յԱբբայութիւն : . . . Յիշատակեցից աստ զարժանիսն մեր, զնորայն և զիմս առանձինն առանձինն որ ի միաբանութեանս :

« Արդ՝ յետ ծախելոյ նորա զայնչափ արծաթ ըստ հաճոյից կամաց իւրոց ի Լոնտոն և ի Փարիզ, ընկալաւ նա ի բարեկամաց միաբանութեանս ինչ ինչ ընծայս, որպէս ի Պարոն Աղանուրէ գոհար ակ մի, և ի Պարոն Յովհաննէս Տատեանէ 500 ֆրանք, և յորդւոյ նորա երկու մատանիս և ոսկի շղթայ մի ժամացուցի, զորոց ծանրութիւն մեք և վարժարանս կրեաց, . . . իսկ ինքն զընծայսն որ ի նոցանէ վայելեաց, և զոր եդեալ ի վերայ իւր շրջի պանծանօք, և զամենայն արդիւնս աշխատութեան իւրոյ ի պէտս ընտանեաց իւրոց ծախէ, և տուն վասն նոցա ի Պօլիս շինէ յօժիտ դստեր եղբօր իւրոյ պատրաստեալ, ըստ բանից բերանոյ իւրոյ : Սակայն պատուական է նա ի խորհրդակցութիւն ձեզ այսր և այդր, և մխիթար այլում, Հ. Ռափայէլի Թրենց : . . .

« Իսկ արդիւնք աշխատութեանս իմոյ որ ի միաբանութեանս այսօքիկ են ուղղակի և անուղղակի, ձեռամբ այլոյ,

ընդդէմ էր այն ուխտին իւրում, չկարելով տալ այլոյ զարդիւնս վաստակոց իւրոց, նուիրեալ զոլով այնր միաբանութեան իւրոյ, ըստ սահմանադրութեան նորին :

Զայսոսիկ ի դէպ համարի Հ. Սարգիս յիշատակել աստանօր իբրև ի յանդիմանութիւն պարծանաց Դեր. Հիւրմիւզի, որ ի չնչին յարդիւնս վաստակոց իւրոց, 2,000 ֆրանքաց, և չափազանց վարկի նորա որ զՀ. Աղեքսանդրէ : . . .

Իսկ ասացեալն Հ. Աղեքսանդրի, որ ընդդէմ Դեր. Հիւրմիւզի ոչ ի ծածուկ ինչ լինի, այլ հրապարակաւ, լուեալ նորա զայն արդէն ի բերանոյ այլոց, զարձելոց ի վանս, ապա չէ այս բանսարկութիւն, այլ յանդիմանութիւն :

Ապա չեն այս բանք Հ. Սարգսի պարծանք փարիսական, իբրև 200,000 ֆր. արդիւնս վաստակոց բերելով ի վանս, ոչ բանսարկութիւն որպէս և ցուցաք վկայիւք. և ոչ տարապայման խստութիւն, ազատամիտ զոլով Հ. Սարգսի յազգահութենէ, որպէս և արդեամբք եցոյց . . . այլ յանդիմանութիւնք են Դեր. Հիւրմիւզի :

(Անօթութիւն Հեղինակին :)

վասն վարձուց աշխատութեան իմոյ ի գործ հրխակի Մուրատեան դպրոցին ընկալեալ միաբանութիւնս,

	ֆրանք
Որով գնեաց զարտավարսն որ ի Կանպարայ անուանեալ գիւղն	125,000
Վասն ֆիզիքական գործեաց ի պէտս վանացս ետու	11,000
Վասն որմոյ Նորոգ գետնոյ վանացս ետու . .	9,000
Վասն կապարեայ տառից տպարանի, և գրեան գոատան վանացս	5,000
Վասն մարմարեայ արձանի մեծին Մխիթարայ Աբբային ետու	1,700
Վասն զանազան ընծայից, մատանւոյ, ժամացուցի, ոսկի շղթայից և այլն և այլն Գեր. Սոմալի,	6,000
Վասն ինչ ինչ Նորոգութեան Նորընծայարանի վանացս ետու	300
Իսկ անուղղակի ընծայքն որ ի Պարոն և ի Տիկին Աղանուրէ ձեռամբ իմով, ...	25,000
Բովանդակ	183,000

« Եւ սակայն ի վերայ այսր ամենայնի չեղէ և չեմ ես արժանի խորհրդակցութեան Ձերոյ, և ծանուցանելոյ ինձ անգամ զշինուածոյն որ վասն գործեաց և գրեանց գնեալք յարգեանց աշխատութեան իմոյ ։ . . .

« Եւ արդ՝ ուստի՞ յառաջ գայցէ այսչափ զանազանութիւն ճանաչման և զգայութեան ։ . . . Կարծեմ ես ի կանխակալ սովորութենէ, ի հոգւոյ պաշտպանութեան դասակցաց . . . Թէպէտ և սոփցէ Վ.ենգ., թէ հակառակ իցէ ինքն այսպիսի ոգւոյ, և թէ ջանայ բառնալ ի միջոյ միաբանութեանս զայսպիսի վնասակար ոգիս. Թէպէտ և հաւատամ ես բանից ձերոց իբրև Հօր հասարակաց, բայց քանզի կանխակալ սովորութեան գոլով երկրորդ բնութիւն, վասն որոյ հա-

կկք դուք յայն՝ առանց խմանալոյ . . . առա՛ղ տկարութեան մարդոյ : . . .

« Ահա ասացի զամենայն Գեր. Տէր, իբրեւ պատասխանի բովանդակ գրութեան ձերոյ, և իբրեւ դարմանն իրաց հովուական սիրոյ որ ի մէջ վանականացդ և վարժարանեայցս . . . եթէ ազդեցէ դարմանս վիրացն, տալով ձեր տեղի բանիցս ճշմարտութեան, մխիթարեցայց ես ընդ այն. իսկ եթէ զայրացին վէրքն, արհամարհելով ձեր միշտ զբանս իմ, արդարացայց ես ընդ վերագոյն ասացեալսն. « Երանի՛ թէ պատ-
« ուեալ էր տակաւին լռութիւնն այն որ պատուեցաւ խոհա-
« կանութեամբ : » Այլ ես յուսացեալ եմ յողորմութիւնն Աստուծոյ և յառաքինութիւն Վեհիդ մխիթարիլ ընդ այս, որով մնամ

« Գեր. Տէրութեանդ

« Ի Փարիզ. 29 ապրիլ. 1849.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԻԵ.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն բանի պահանջմանն վաշխի հրիտակին Մ. վարժարանին. — Տեղեկութիւն զպահանջմանէ Տիկնոջ Աղանուրի յեղբօրէ իւրմէ ի Պ. Յովհաննէս Մուրատէ. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Յովհաննու Մ. վասն բանի պահանջմանն քեռն նորա. — Թուղթ շնորհակալութեան Տիկնոջ Աղանուրի առ Հ. Սարգիս վասն աւարտելոյ զպահանջումն իւր. — Օգուտն Մ. վարժարանին յաւարտմանէ պահանջմանն անտի.

« Գերապայծառ Տէր.

« Իմացեալ իցէ Վեհիդ զաւարտումն խնդրոյ Աղանուրեանց որ ընդ Մ. Յովհաննու, կարեւոր համարիմ ծանուցանել Ձեզ զիրաւունս Նոցա և զպատճառս զլացման և յապաղման հատուցանելոյ նորա զայն, և զոր անտի օգուտն Մուրատեան վարժարանին : . . .

« Հանգուցեալ Սամուէլ Մուրատ նշանակեալ պահէ ի հաշուեմատենի իւրում հաշիւ մի յանուն և ի նպաստ դստեր իւրոյ Մարեայ Թէրէզայ Տիկնոջ Աղանուրի, 10,000 հուն, կամ 35,000 ռուփի, որ առնէ իբրեւ 90,000 ֆրանք : Զայն գումար արծաթոյ խոստանան կտակատարքն Նորա Եդուարդ և Յովհաննէս Մուրատեան հատուցանել քեռն իւրեանց Տիկնոջ Աղանուրի, պահելով զհաշիւն այն նոյնպէս ի հաշուեմատենի անդ, և բարդելով ամ ըստ ամէ զտոկոսական վաշխն, որ զամս 14 բովանդակի 240,000 ֆրանք :

« Բայց իբրեւ պարտաւորեցան կտակակատարքն հատուցանել զհրիտակն դպրոցին և իբրեւ քննեցին զվիճակ իւրեանց և տեսին զայն ոչ բաւուք, սկսան զլանալ զիրաւունս քեռն իւրեանց, պատճառելով թէ հայր նոցա ի կտակի անդ իւրում

տաէ, թէ « Այսու 200,000 ռուփով վերջացի ամենայն պա-« հանջ դատեր իւրոյ։ » Վասն այնորիկ ծագեցաւ ատելու-թիւն ի մէջ հարազատաց եւ տեւեաց այն զամս երկու, մին-չեւ ցժամանակ վերջին հիւանդութեան եւ մահու մօր Նոցա Աննայ Տիկնոջ, որ կամեցաւ հաշտեցուցանել զնոսա, հա-տուցանելով իւր զմասն պահանջման դատեր իւրոյ, իբրեւ 30,000 ռուփի, կամ 75,000 ֆրանք։

« Թէպէտ եւ Պարոն Աղանուր բաւականացաւ ընդ այն ի ժամուն, բայց զկնի մահուան զոքանչի իւրոյ կամեցաւ պահանջել ի Մուրատեանց զմնացեալ մասն իւրոց զ70 հա-զար ռուփին. եւ ի հակառակել Մուրատեանց, ասելով թէ մայր իւրեանց հատուցեալ եւ աւարտեալ էր զայն, ի մատու-ցանել Աղանուրի զխնդիրն առաջի ատենին եւ ի կորուսա-նել զիրաւունս իւր անդ, առաւել եւս սաստկացաւ ատե-լութիւն ի մէջ նոցա, եւ տեւեաց այն զամս երիս եւ աւելի, մինչեւ տարեալ իմ զվերջին յաղթութիւն ի վերայ Մուրա-տեանց եւ սպառնացեալ նոցա պահանջել զվաշխն հրիտակի դպրոցին։

« Զարհուրեալ յայնժամ Մ. Յովհաննու, խոստացաւ Աղա-նուրեանց առնել հատուցումն իրաւանց նոցա, կարծելով թէ միջնորդութեամբ եւ բարեկամութեամբ նոցին ընդ իս, կասեցուցանէր զիս արդեօք ի պահանջմանէ անտի վաշխի հրիտակի դպրոցին, անգիտելով թէ կասիլ իմ անտի ոչ ի նոցանէ կարէր լինել, այլ ի միաբանութենէս, եւ թէ այն ամօք ինչ յառաջ եղեալ էր... քանզի ի 1829 ամին գրեալ էր առ իս միաբանութիւնս այսպէս.

« — Զգիմել իմ յատեան արդարութեան եւ չպահանջել « ի Մուրատեանց զիրաւունս աղքատաց ազգիս, հակառակ « գոլով այնր եկեղեցական եւ մանաւանդ կրօնաւորական վի-« ճակիս. եւ եթէ Ատեանն եւս ինքնին պահանջիցէ զայն ի նո-« ցանէ, եւ առեալ զարծաթն յանձնիցէ ի ձեռս իմ, յետս « դարձուցից ես զայն նոցա. քանզի չկամի միաբանութիւնս « դատաստանաւ վարիլ ընդ ժառանգս բարերարին։ »

« Թէպէտ եւ ի միջոցի երից ամաց սկսեալ ի 1826 էն մին-

չեւ ՚ի 1829 առաքեալ էր ինձ նոյն միաբանութիւնս երեք գիր գործակալութեան, յորս ստորագրեալ էին նոյն աստուածաբան վարդապետք յատուկ ձեռօք իւրեանց, և կնքեալ նովին կնքով հասարակութեանս, և յորս տայր ինձ բացարձակ իշխանութիւն պահանջել ՚ի մնջրատեանց զիրաւունս աղքատաց ազգիս, կամ իրաւախոհութեամբ և կամ դատաստանաւ դիմելով յատեանն Անգղիացւոց ՚ի Մադրաս և յայլուր որ ընդ իշխանութեամբ Անգղիացւոց Տէրութեան : . . .

« Իբրեւ կամէր Յովհաննէս Մ. բողոքել յԱտեանն թագաւորին Անգղիացւոց ՚ի Լոնտրա, ընդդէմ վճռոյ դատաւորաց Մադրասու որ ՚ի Նպաստ մեզ, ազդ արարի ես Նմա ձեռամբ բարեկամին իւրոյ Գաղղիացի ուրումն, թէ ոչ էի ես խիստ ՚ի պահանջումն վաշխի հրխտակին, և թէ դոյր հնարաւորութիւն իրաւախոհութեան մեր ընդ միմեանս : . . . Քաջալերեալ յայնժամ Յովհաննու Մ. ՚ի բանից անտի, ցանկացաւ տեսանել և հաշտիլ ընդ իս, և հաշտեցաւ հանդերձ ամենայն խոնարհութեամբ, և յայտնեաց ինձ զկիձակ իւր և զհանգամանս եղբօր իւրոյ, որ էր յայնժամ յԵւրոպա :

« Թէպէտ և ինձ պատուիրեալ էր միաբանութիւնս, որպէս վերագոյն յիշեցի, չպահանջել զայն իրաւունս աղքատաց ազգիս, այլ ջանացայ ես որչափ հնար էր, ՚ի ձեռս բերել ինչ, յառաւել իմն օգուտ կարօտելոյ ազգիս, այլ եւս 250,000 ֆրանք, հանեալ ՚ի ձեռաց նորա յաւելի ՚ի դրամագլուխն հրխտակի գպրոցին իբրեւ շահ նորին, առանց ինչ յիշատակելոյ ՚ի նորոգ դաշնագրին, որ ՚ի մէջ իմ և կտակակատարաց :

« Եւ իբրեւ խաղաղութեամբ աւարտեցաւ խնդիր մեր այն որ զիրաւանց աղքատաց ազգիս, ապա խնդիր եղեւ զիրաւանց Աղանուրեանց. վասն այնորիկ խօսեցայ ես ընդ Յովհաննու Մ. անաչառութեամբ, իբրեւ խաղաղարար և բարեբար համբէն տանն Մուրատեան : . . . Հաւանեցաւ Նա բանիցս և խոստացաւ հատուցանել զիրաւունս քեռն իւրոյ, զ70,000 ռուփին, 175,000 ֆրանք, և զայն զկնի աւարտելոյ բանի հրատակի գպրոցին, հաստատելոյ նորոգ դաշինն որ ՚ի մէջ իմ և նորա :

« Թէպէտ և գործառնութիւն իմ ընդ նմա աւարտեցաւ, առեալ իմ ի ձեռաց նորա, զ100,000 ռուփին, և հաստատեալ զնորոգ դաշնագիրն, թէպէտ և հաշտեցան հարազատքն ընդ միմեանս, ուղղակի խոստմամբ հատուցանելոյ զիրաւունս նոցա, բայց հատուցումն արծաթոյն յապաղեցաւ զանազան պատճառանօք, մինչև մերձեցաւ ժամանակ մեկնելոյ մեր, իմ և Աղանուրեանց ի Հնդկաց յԵւրոպա, յամին 1835։ Յայնժամ Յովհաննէս Մ. կամեցաւ խաղ ինչ խաղալ ընդ իս ըստ սովորութեան իւրում. քանզի առաջարկեաց ինձ նա տալ նմա մուրհակ ինչ այսպիսի պայմանաւ.

« — Եթէ պարտաւորեսցին կտակակատարքն յապայ հա-
« տուցանել զվաշխ հրիտակի դպրոցին, այն 70,000 ռուփին
« մացէ ի հաշիւ վաշխին այնորիկ։ » Որում ետու ես պատասխանի, թէ խնդիրն հրիտակի դպրոցին չունի յարաբերութիւն ինչ ընդ խնդրոյ պահանջման իրաւանց քեռն իւրոյ, ապա չկարէի ես այսպիսի մուրհակ տալ նմա, և յանդիմանեցի զնա յիշեցուցանելով նմա զխոստումն իւր, հանդերձ սարսափելի երդմամբ չվարել ընդ իս մեղմեխանօք։

« Եւ իբրև յայն եւս չյաջողեցաւ նմա, ապա ի վերջնում աւուր մեկնելոյ մեր ի Մադրասէ, եկն նա առ իս և առաջարկեաց ինձ զայս, թէ կարճ գոլով ժամանակին և չունելով իւր առձեռն պատրաստ դրամ հատուցանել քեռն իւրում զ70,000 ռուփին, գոնէ էական մասն խնդրոյն աւարտեսցի ստորագրելով Աղանուրեանց զմուրհակն ընդունելութեան արծաթոյն, և դիցի մուրհակն այն ի ձեռս ընտանեաց իւրեանց Յովհաննու Յարութենի, իբրև աւանդ, մինչև անցուսցէ ինքն զարծաթն յԵւրոպա ի ձեռս քեռն իւրոյ. քանզի չկամի ինքն զի քոյր իւր տրտմութեամբ սրտի բաժանեսցի յիւրմէ։

« Թէպէտ և զառաջինն հրաժարեցայ ես խառնիլ յայն, զգուեալ ընդ մեղմեխ գնացս նորա, բայց իբրև շատ թախանձեաց զիս նա, զիջայ կամաց նորա, հաւանեցուցանելով զԱղանուրեանս ստորագրել զմուրհակն զայն ընդունելութեան արծաթոյ։ Յետ չորից ամսոց նաւարկութեան ժամանեալ մեր ի Լոնտոն և կացեալ անդ ամիսս երկս, չտեսաք և չլուաք

ինչ զառաքմանէ արծաթոյն որ ի Յովհաննու Մուրատէ. վասն այնորիկ գրեցի ես առ նա ի Լոնտոնէ, յիշեցուցանելով նմա զվերստին պակասիլ իւր ի խոստմանէ անտի: Անցին ապա ամք երեք և չառաքեաց նա զարծաթն զայն, և ապա ուր ուրեմն գրեաց Յովհաննէս Յարութիւն առ Պարոն Աղանուրն որ ի Վենետիկ, թէ չունի Յովհաննէս Մ. կամս տալոյ զարծաթն զայն. և թէ զի՞նչ ունի ինքն առնել. առաքե՞լ նմա յետս զմուրհակն զայն ընդունելութեան, թէ պահել տակաւին: Խորհուրդ ետու ես Աղանուրի բերել տալ զայն անտի, որպէս և արար և պահեաց զայն այլ եւս զամս իբրեւ չորս:

« Եւ իբրեւ դէպ եղեւ ինձ գնալ ի Լոնտոն յամին 1844, առի ես ընդ իս զմուրհակն զայն ընդունելութեան արծաթոյ, և հարցի անդ զկարծիս Անգղիացի փաստաբանի միոյ, թէ մա՞րթ էր դատաստանաւ պահանջել զայն ի Յովհաննու Մուրատէ. եւ փաստաբանն զկարծիս իւր գրով, թէ ամենայն իրաւամբք մարթ էր պահանջել, և թէ չկարէր Յովհաննէս Մ. հակառակիլ այնմ բնաւ, զոր և ծանուցի ես Աղանուրեանց ի դարձին իմում ի Պատաւիոն, յամին 1846. Թէպէտ և Տիկին Աղանուր չկամէր դատ վարել ընդ եղբօր իւրում, այլ համբերէր խաղաղութեամբ զիրն վճարել. ի նոյն միտս և իմ գոլով խրատ ետու նմա անպակաս առնել զգրութիւն իւր առ Յովհաննէս Մ. արար նա այնպէս, և ընկալաւ անտի ի վախճանի պատասխանի թէ պատրաստ է ինքն հատուցանել նմա զարծաթն զայն, վասն որոյ կացուցէ զոք ի կողմանէ իւրմէ գործակալ առ ի յաւարտել ընդ նմա զգործն զայն:

« Առաքեաց ինձ այսր Տիկին Աղանուրն գիր գործակալութեան յաւարտել ընդ Յովհաննու Մ. զբանն: Վասն այնորիկ գրեցի ես աստ համառօտ գիր մի առ Յովհաննէս Մ. ծանուցանելով նմա զկամս քեռն իւրոյ, և հարցանել թէ ե՞րբ հաճոյ և յաջող էր նմա տեսութիւն մեր ընդ միմեանս: Արար ինձ նա պատասխանի նախ՝ թէ կամի ինքն գիտել, թէ ի գրի անդ գործակալութեան կայցէ՞ և ստորագրութիւն Պարոն

Ազանուրի . ծանուցի նմա թէ կայր անդ և ստորագրութիւն նորա . ապա խնդրեաց նա յինէն համբերել առուրս հընգետասան մինչև դառնայր այսր քեռին իւր Աղեքսանդր Ռաֆաէլ : Թէպէտ և դարձաւ քեռին իւր այսր , սակայն չկամեցաւ նա տեսանել զիս և խօսել և աւարտել զբանն , այլ գրով և ի ձեռն Աղեքսանդր Ռաֆաէլի ծանոյց ինձ զայս , թէ ըստ յայտարարութեան կամաց եղբօր իւրոյ Եդուարդայ չկարէ ինքն զբովանդակ 70,000 ռուփին հատուցանել քեռն իւրում , այլ զկէսն միայն զբաժինն իւր 35,000 ռուփի միանգամայն և նամակ մի բաց գրեալ ի Գաղղ. լեզու և ուղղեալ առ քոյր իւր , զոր կամէր ընթեռնուլ իմ նախ և ապա առաքել նմա ի Պատաւիոն :

“ Դարձեալ իմ յօթեւանս՝ արարի պատասխանի նամակի Մ. Յովհաննու ձիգ սկսեալ ի սկզբանէ անտի խառնելոյ իմ ի խնդիրն յայն քեռն իւրոյ , յիշեցուցանելով նմա զերդմամբ խոստումն իւր , որ ընդ հատուցումն այնր իրաւանց նորին , և որ ընդ խարդախ գնացս իւր ընդ իս , հանդերձ խիստ բանիւք յանդիմանութեան , և ի փոխանակ կնքեցի զթուղթս այսոքիկ բանիւք :

“ — Եւ մինչդեռ մնայր քոյր ձեր և մնայ տակաւին բարե-
“ մտութեամբն իւրով կատարման խոստմանդ , ոչինչ ընդ
“ հաւատարմութիւն հարազատիդ կասկածեալ , ահա բայց
“ դուք յանկարծակի առաջի նո՛ր իմն տեսարան , արդարա-
“ ցուցեալ զառակն զայն , թէ՝ Ափրիկէ նորանոր ծնանի ,
“ ցուցանելով ձեր զանմիտ ինչ յայտարարութիւն կամաց եղ-
“ բօրդ , և զհաւանութիւն ձեր և զերկիւղ խղճի մտացդ ընդ
“ այն : . . .

“ Եւ ահա արարի ես այնմ պատասխանի , յիշեցուցանե-
“ լով ձեզ իբրև ականջալուր վկայ , զամենայն բանս և ըզ-
“ գործս ձեր ի խնդիրս յայս , հանդերձ անաչառ քննութեամբ ,
“ և նկարագրելով ձեզ իբրև ականատես և հանդիսական
“ զհին տեսարանդ , զերևեցուցեալն ի ձէնջ երբեմն ի Մատ-
“ րաս : . . .

“ Ապա չմնայ ինձ այլ ինչ ընդ այս յիշեցուցանել , բայց

« եթէ իբրեւ առանձին ոք և իբրեւ ճշմարիտ բարեկամ, առ
« իրաւախոհական առաջարկութիւնն ձեր, զայս և այսչափ մի-
« այն ասել ։ Արդ՝ եթէ զբովանդակ անցս որք անցին ընդ
« խնդիրս այս կամիցիք դուք և կարիցէք ուրանալ, ասեմ
« ձեզ, թէ ի զո՛ւր է իրաւախոհական առաջարկութիւնդ, զի
« անաչառ ատենի արդարութեան միայ այնուհետեւ զխըն-
« դիրս այս քննել և իրաւունս առնել ։ ... Իսկ եթէ ընդունի-
« ցիք դուք զայն անարատութեամբ խղճի մտացդ, ասեմ ձեզ,
« թէ աւելորդ է իրաւախոհութիւնն, զի ի մէջ հարազատաց
« սիրոյ պէտք են, և ոչ իրաւարարաց ։ ...
« Ահա վերջին յայս կարծիս էի՛ն և ե՛ն միշտ յոյս ակնկա-
« լութեան իմոյ և ցանկութիւն սրտիս, որով միամ

« Ազնուութեան Ձերում

« Ի Փարիզ. 15 Հոկտ. 1845.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

« Յետ տասն աւուրց անտի գրութեանս՝ արար նա այնմ պատասխանի, յորում ծանուցանէր նախ՝ թէ աւուրք չորք հազիւ բաւական լեալ իցեն նմա ընթեռնուլ զայնչափ երկար թուղթն իմ և խելամուտ լինել խուկեալ բանիցն որ ինմին, և թէ այն ամենայն բանք ոչ այլ ինչ իցեն, բայց եթէ անիրաւ մեղադրանք նմա և եղբօր իւրում, կերպարանօք բարեկամութեան և ոչ խոկութեամբ գրեալ. և թէ գովելի զգուշութիւնն այն որ ի մէջ մեր արգելու զինքն յամենայն հաղորդակցութենէ ընդ միմեանս ։

« Արարի ես գրութեան նորին պատասխանի խիստ բայց համառօտ, օրինակ զայս.

« Ազնիւ Պարոն.

« Ըստ բաւականին ծանօթ գոլով Ձեր հայերէն լեզուին և քաջածանօթ նիւթոյ պատասխանւոյս, կարծեմ թէ ոչ աւուրք այլ ժամք չորք չա՛տ էին ձեզ յընթերցումն գրութեանս իմոյ,

և ի խելամտութիւն բանիցս որ ի նմին. այլ զի՞նչ և իցէ պատճառ տհաճութեանդ ընդ երկար գրութիւնս՝ համառօտիւ հատուցից ձեզ զայս վերջին պատասխանիս ։

« Արդ՝ եթէ համարեցայք դուք և համարիք ևս զբարեկամութիւն իմ առ ձեզ կերպարանօք և ոչ իսկութեամբ, չզարմացայ և չզարմանամ ես ընդ այն համարումն, գնելով ձեր ի մտի դժբաղդութեամբ, թէ չունիք դուք զօք բարեկամ յաշխարհի, որպէս և գանգատէիք ինձ ընդ այս երբեմն ի Հնդիկս, և որպէս գանգատեալ էք աստ և Պարոն Աղեքսանդրի քեռւոյ ձերոյ. այլ ցաւիմ ես միայն, զի այս գանգատանացդ, դժբաղդ կարծեացդ ասեմ, ոչ գոյ դեղ և դարման, քանզի ըստ առածին « Կամաւոր հիւանդութեան չիք բժշկութիւն ։»

« Եւ եթէ զյայտնի և զկարգաւոր յիշատակութիւն բանիցս ճշմարտութեան խաղուռմն և չփոք ինչ համարիք, և զայն կարի իմն անիրաւ մեղադրանք քեզ և եղբօրդ կարծէք, արդիւնքն իրացն անցիցն անցելոց և հաւաստիք նոցին կան և են իմիջի, որպէս և կենդանի և հաւատարիմ վկայքն ։ . . . Ապա ի զո՞ւր է հակառակիլ բանիցս ճշմարտութեան, և ինձ աւելորդ երկրորդել զայն, և ապա չմնայ ինձ ի սմին այլ ինչ հատուցանել, բայց եթէ զայս միայն վերստին ձեզ ազդ առնել, թէ չկամեցայ և չկամիմ ես զնամակ ձեր զայն քեռն ձերում առաքել, և ոչ պատճառս հատանելոյ ձեր զիրաւունս նորա ծանուցի և ծանուցից նմա, տուեալ իմ ձեզ արդէն և զիմ բանաւոր պատճառս ։

« Ապա ձեզ մնայ այսուհետև ուղղակի գրել առ քոյրդ զոր ինչ կամք և հաճոյ իցեն ձեզ գրել, միանգամայն և ազդ առնել նմա, զա՛յլ ոք գործակալ, յորմէ չկայցէ ամենազօրեղի զգուշութիւն խորշելոյ ձեր յամենայն հաղորդակցութենէ նորին, ի դիմաց իւրոց յանդիման ձեզ աստ կացուցանել ։ . . .

« Եւ միայն յուշ առնեմ ձեզ զչար գուշակութիւն քեռան ձերոյ Պարոն Աբրահամ Ազանուրի, զոր պատմեաց ինձ Պարոն Աղեքսանդր Ռափայէլ, և զոր հարկաւ պատմեալ իցէ և ձեզ, թէ Անիծեալ արծաթն պատճառ լիցի մահուան կնոջ իւրոյ ։ . . .

« Այլ իմ ողորմութեանն Աստուծոյ և արդարութեան նորին թողեալ զամենայն,

« Մնամ

« Ազնուութեան Ձերում

« Ի Փարիզ. 25 Հոկտ. 1845.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

« Ահա ազդեցութիւն այսչափ և այսպիսի գրութեանս իմոյ առ նա յետ չորից ամաց. քանզի յ2 ապրիլիս այն ինչ ի հանդէս քննութեան աշակերտաց վարժարանիս էի, ազդ եղեւ ինձ յանկարծակի, թէ Պարոն Յովհաննէս Մուրատ եկեալ աստ կամի խօսել ընդ իս. ելեալ իմ անտի գնացի ընդ առաջ նորա և ողջունեալ զնա ընկալայ քաղաքավարութեամբ։

« Ասաց նա ինձ անդէն, թէ եկեալ է ինքն հարցանել յինէն ինչ մի, թէ արդարեւ քոյր իւր Մարիայ Թէրեզայ այնչափ իմն հարեա՞լ իցէ յարծաթն այն, մինչեւ հոգալ և ցաւիլ նորա ընդ այն յոյժ. քանզի յիշեմ ես, ասաց, զայն բանս վերջին գրութեան ձերոյ առ իս, թէ պատճառ մահու լիցի նմա արծաթն այն. այս բանս ձեր ազդու էր յոյժ մտաց իմոց, մինչեւ լուայ յայսօսիկ աւուրս թէ քոյր իմ սաստիկ հարեալ իցէ յարծաթն այն, զոր ես ոչ կարծէի, առատամիտ ոք ճանաչելով իմ զնա. և արդ չկամիմ աստ պատճառ լինել ցաւոց սրտի քեռն իմոյ, զոր սիրեմ յոյժ արենակից իմ գոլով. պատրաստ եմ հատուցանել նմա զարծաթն զայն։

« Ասացի ցնա թէ որպէս ճանաչէիք զքոյր ձեր նոյնպէս առատամիտ ոք է նա միշտ, իսկ հոգ և ցաւ սրտի նորա, ոչ ընդ զրկումն արծաթոյն այնորիկ են, այլ զի համարի նա թէ խաբեալ իցէ ինքն ի հարազատէն իւրմէ, զոր ոչ կարէր հաւատալ, վստահացեալ միշտ ի սէր հարազատութեան և ի սրբազան խոստումն ձեր, որպէս և ես վստահացեալ էի ի սկզբունս կրօնին զոր ունէիք և ունիք դուք։ . . .

« Ասաց նա երդմամբ՝ թէ ոչ իբրեք զմտաւ ածեալ իցէ ինքն

խառել զքոյր իւր, զլինալ նմա զարծաթն զայն, թէ և յա֊պաղեաց զհատուցումն նորին ասկս յոյատարարութեան կա֊մաց եղբօր իւրոյ Եդուարդայ ։ Բայց արդ կամի աւարտել զայն ընդ իս, միայն խնդրեմ ասաց չպահանջել յիւրմէ զվաշխ զլամադրոյն. քանզի չկարէր զայն ի ժամու հատուցանել, կորուսանելով 500,000 ֆրանք, պատճառաւ փոփոխութեան տէրութեանս, թողեալ զյայտարարութիւն եղբօր իւրոյ որով պատուիրէ չհատուցանել զբաժին իւր, զ35 հազար ռուփին ։ Սակայն ի վերայ այսր ամենայնի ասաց կամի ինքն հատուցանել զբովանդակն զ70,000, այլ և խոստանայ հա֊տուցանել զվաշխ նորին յորժամ յաջողեսցի նմա ի գործս իւր ։ Յայնժամ խօսեցայ ես նմա զարժանն, խրատելով և յանդիմանելով զնա մտերմաբար, այնչափ ազդեալ նմա բա֊նիցս, մինչև աղաչել զիս չյիշել զանցեալսն, այլ ներկային դարման տանել, թէ երբ յաջողէր ինձ աւարտել ընդ իւր զբան Ալանուրեանց ։

« Ասացի ցնա թէ երբ և կամի ինքն և այսօր իսկ ։ Ասաց նա թէ այսօր չկարէ լինել, քանզի պարտ է նմա նախ զար֊ծաթն պատրաստել, առնուլ զայն ի սեղանաւորէն իւրմէ ։ Ասացի. Ուրեմն ի վաղիւն և ես ինքն եկից առ ձեզ ։ Ասաց նա. Բարի է, մնամ ձեզ վաղիւն ի 11 ժամու առաւօտեան ։

« Ի հարցանել նորա զպալատէս, և ի տալ իմ նմա տեղե֊կութիւն զայնմանէ, ասաց նա թէ ճանաչէր ինքն զայս, կա֊մեցեալ առօք ինչ յառաջ գնել ։ Ասացի ցնա. Ուրեմն համա֊ձայն են կարծիք մեր յայս ։ Եւ ի ցուցանել իմ նմա զմատուռն հաճեցաւ նա ընդ այն յոյժ, և եհարց զանուն սրբոյն որում նուիրեալ է ։ Ասացի ցնա, թէ անուանակից սրբոյդ Յովհան֊նու Մկրտչին, և ոչ սրբոյն Սարգսի զօրավարին ։ Ժպտեցաւ նա ընդ այն, քանզի իմացաւ թէ զի՛նչ կամէի հասկացուցա֊նել նմա ։

« Հարցի ես ցնա, թէ գիտէ՞լ էր զանունն որ ի վերայ դրան վարժարանիս եդեալ էր ։ Այո՛ ասաց, գիտեալ էր ։ Ասացի. Ապա ուրեմն ճանաչեմք մեք զիրաւունս Բարերարին, և նախանձայոյզ եմք փառաց նորին ։ Այս յիշատակ հանգու֊

ցեալ հօր ձերոյ, ասացի, անմահ փառք են նմա, և այս միայն յամենայն քրտնաջան վաստակոց նորա մնացէ յաւիտեան ։ Յուշ լիցի քեզ, ասացի, վախճան եղբօրդ Նդուարդայ և միճակ տան նորա. զի եթէ և արծաթն հրիտակի դպրոցին թողեալ էր նմա ի ժառանգութիւն, ո՞ւր երևէր այն այսօր (*) ։

« Ազդեալ բանիցս ճշմարտութեան մտաց նորա, եցոյց նա ընդ այն հաւանութիւն . . . և ի հրաժարել նորա յինէն թողութիւն խնդրեաց ընդ խափանումն գործոյս և ընդ կորուստ ժամանակին, որ ի հանդէս քննութեան մանկանց վարժարանիս։ Ասացի ցնա՝ թէ այս ցանկալի այցելութիւն իւր՝ մի ի կարևոր գործոցս գիտեմ ես, և ոչ խափան ինչ նոցին և կորուստ ժամանակին ։ . . .

« Ի վաղիւ անդր յ3 ապրիլի, գնացի ես առ Յովհաննէս Մ. ըստ ժամադրութեանն, որ և մնայր ինձ ի բնակութեան իւրում ի պանդոկի ուրեք. և յետ հարցանելոյ զողջունէ միմեանց, սկսաք խօսել զբանէ խնդրոյ Աշանուրեանց ։ Թէպէտ և ջանացայ ես հաւանեցուցանել զնա, գոնէ զմասն ինչ ի խոստացեալ վաշխից դրամագլխոյն հատուցանել, այլ նա զնոյն պատճառն զկորուստ արծաթոյն իւրոյ երկրորդեաց,

(*) Ի միջոցի տասն ամաց վատնեն որդիք Սամուէլ Մուրատի զկէս ժառանգութեան իւրեանց, վասն որոյ չլանան կատարել զկամս հանգուցեալ հօր իւրեանց, զկառուցումն աղքատաց դպրոցին ։ Ի ստիպել զնոսա Անգղիացւոց օրինաց կատարել զայն զարհուրին նոքա. քանզի պարտ էին հատուցանել զդրամագլուխն հանդերձ վաշխիւն, չորս միլիոն ֆրանք. եթէ հատուցանէին զայն, մնայր նոցա գրեթէ ոչինչ. վասն այնորիկ խնդրեն նոքա ի Հ. Սարգսէ աղաչանօք և թախանձանօք ազատել զինքեանս ի խստութենէ օրինաց՝ աւարտել զայն իրաւախոհութեամբ, հատուցանել զդրամագլուխն միայն իբր երկու միլիոն ֆրանք ։ Կարեկից լինի նոցա Հ. Սարգիս, աւարտելով զայն իրաւախոհութեամբ ։

Իբրև ազատին նոքա ի խստութենէ օրինաց անտի, սկսանին այնուհետև նենգութեամբ վարիլ ընդ Հ. Սարգսի, առ ի հանել ի ձեռաց նորա զկէս արծաթոյն, և յընդդիմանալ նորա այնմ, դատ դնեն ընդ նմա զրպարտանօք և ի բանտ արկանեն զնա ։

Ի յաղթել նորա դատաստանի, և ի պահանջել ի նոցանէ զվաշխս դրամագլխոյ հրիտակին, դարձեալ աղաչեն զնա խնայել ինքեանց, որոց վերստին կարեկից լինի նա անոխակալութեամբ ։

Յետ ամի միոյ երէց եղբայրն Նդուարդ Մուրատ վատնէ զբոլոր ժառանգութիւն իւր խենէշութեամբ, և ընդ պարտիւք անկեալ՝ մեռանի տրտմութեամբ . . .

Ահա յայսմ պատեհի ի դէպ համարի Հ. Սարգիս յուշ առնել զայս ամենայն եղբօր նորա Յովհաննու Մուրատի, որոյ հաւանեալ ընդ այն՝ հրաժարի ի նմանէ քաղաքավարութեամբ ։

(Ծանօթութիւն հեղինակին ։)

միանգամայն և յիշեցոյց ինձ զբաւականութիւն Աղանուրեանց ընդ դրամագլուխն, ըստ վկայութեան Աղեքսանդր Ռաֆայէլի. որպէս և հաստատեաց զայն ապա առատամիտ Տիկին Աղանուրն Թղթով իւրով առ եղբայր իւր Յովհաննէս Մ. որ հատոյց միայն զդրամագլուխն զ70,000 ռուփին. ի 7 հազար լիրէ ստէրլին հաշուեալ, և լիր. ստէր. 25 ֆրանք. որոյ բովանդակն եղեւ 175,000 ֆրանք, և զոր յանձնեաց ինձ իբրեւ գործակալի Աղանուրեանց, առեալ յինէն զմուրհակն ընդունելութեան արծաթոյն և զգիր գործակալութեանս ։

« Եւ այսպէս աւարտեցաւ բանն աղանուրեանց ընդ Յովհաննու Մուրատի, և զոր վաղվաղակի գրեալ ծանուցի Աղանուրեանց ի Պատաւիոն, և խնդրեցի ի նոցանէ ծանուցանել ինձ փութով զկամս իւրեանց և զպատուէր, թէ երբ և ո՛ւմ կամին յանձնել իմ զարծաթն, և որո՛վ ապահով և յաջող եղանակաւ հասուցանել իմ զարծաթն այն ի ձեռս նոցա յիտալիա ։

« Որպէս և ազդ արարի Վ.եհիդ գրութեամբ այլոյ, հատուցանել զպարտս վարժարանիս այսու արծաթով, որով թեթեւանայր վարժարանս ի ծանրութենէ պարտուցն, նախ յաւելի շահու անտի, որ ի տարւոջն առնէ իբրեւ հազար ֆրանք, և երկրորդ՝ ի վնասուցն որ ի բռնադատեալ վաճառմանէ իրաց վարժարանիս ի պահանջել պարտատեարց ըզպարտս ըստ ժամանակին, յորժամ չկարէաք հատուցանել զայն ։ Թէպէտ և այսօրիկ ոչինչ համարեցան յաչս ձեր, ասելով, թէ Զի՛նչ օգուտ իցէ մեզ ազատիլ ի միոյ պարտապանէ և այլ միւսոյ պարտական լինել ։

« Ահա զանազանութիւն ճանաչման և կարծեաց մերոց ի խնդիր վարժարանիս, յիրաւունս ասեմ աղքատաց ազգիս. և ահա վասն այսորիկ չկամեցայ ես ընդ այս ուղղակի առ ձեզ գրել, երկուցեալ մի գուցէ արհամարհիցէք զազգաբարութիւնս, և զայս տեսութիւն իմ ասացի ես մերոցն աստ յառաջագոյն, զոր և հաստատեցէք, ոչ մեծ ինչ համարելով զայն ։ . . .

« Անցուցի ես զարծաթն Աղանուրեանց ի Պատաւիոն ի վե-

բայ նոցա ի 15 մայիսի անցելոյ. պահեալ ի 175 հազար ֆրանքէն 25,000 ֆրանք ի պէտս ծախուց վարժարանիս ըստ հրամանի Վեհիդ և ըստ հաւանութեան Հ. Եսայի, և այս պահեալ անտի արծաթն հազիւ բաւեսցէ ծախուց վարժարանիս մինչև ցվերջ սեպտեմբերի տարւոյս։

« Այս մնայ ձեզ հոգալ և զմնացեալ երից ամսոյն, այլ ևս 10,000 ֆրանք, եթէ հաճոյ և կամք իցեն ձեզ և խնամակալաց ժողովոյդ համապազորդել զընթացս վարժարանիս. քանզի լուայ ես ուստեք, ի բանից իսկ գրութեան ձերոյ, թէ տարակուսիք դուք այժմ ընդ համապարզորդութիւն սորին սակս պակասութեան արծաթոյ և դժուարութեան անցուցանելոյ զայն աստ ի խռովութեան ժամանակիս, ընդ որ ես այսչափ միայն ասեմ ի ժամուս, թէ զգուշացարուք զի մի՛ ստգտանիցիք և դուք իսկ բանիւք ձերովք, ամօթապարտ խորհրդով, որով ստգտանեցէք զիս երբեմն ի սկզբան անդ խռովութեան. և զի այն կարծիքն իմ յայնժամ պայմանաւ էին և ոչ գրութեամբ, որպէս ձերդ են այժմիկ։ . . .

« Յետ աւարտելոյ մեր զբանն Ազանուրեանց, սկսայ խօսել զբանազան իրաց, հարցանելով իմ Յովհաննու Մ. զհանգամանաց նորա և զընտանեաց իւրոց, և նորա տալովն ձեզ տեղեկութիւն զնոցանէ ընտանեբար։

« Թէպէտ և յայս երկու և երեք անգամ տեսութեան և երկար խօսակցութեան իմոյ ընդ նմա ջանացայ ես միշտ մերձեցուցանել զխօսս առ գնացս իւր որ ընդ մեզ, հայեցեալ առ բողոքն իւր որ ի Վիեննայ և ի Փարիզ, այլ նա մերթ չիմանալոյն արար, և մերթ խնդրեաց յինէն թողուլ զայն յետոյ։

« Եւ ահա այսպէս խաղաղութեամբ աւարտեցաւ խնդիրն Ազանուրեանց, և այսպիսի խօսակցութիւն իմ ընդ Յովհաննու Մ. որ ի զարմացումն մերոյն աստ, և Մանաւանդ Տիկնոջն Ռափայէլի, որ զաղտնի ինչ խորհուրդ գուշակեաց զայն, գիտելով չափ զչկամութիւն նորա ընդ հաստատումն այն և ընդ հակառակութիւն ընդ իս, և այսչափ ընտանութեամբ վարիլ ընդ իս։ Եւ յիրաւի՝ քանզի նա որ երբեմն յետ այնչափ քաղաքավար թղթակցութեան և երից անգամ գնալոյ իմ առ նա

չկամեցաւ տեսանել զերեսս իմ անգամ, զինչ այժմ զկնի այսչափ խիստ զրուցեանս առ նա, անձամբ գալ առ իս և այսչափ ընտանութեամբ վարիլ ընդ իս ։ Վասն այսորիկ գաղտնի ինչ խորհուրդ կարծի այս, տեսցուք թէ զինչ ծնանիցի անտի, և ահա նշան ինչ տեսաւ ըստ գուշակութեան. քանզի ընկալայ թուղթ մի ի Պարոն Աղեքսանդր Ռաֆայէլ, յորում հատուած մի նշանաւոր բանից գրեալ կայ այսպէս.

« Լուայ աստ անբաւ ուրախութեամբ սրտի զխաղաղութեամբ
« աւարտել դրամական գործողութեան որ ընդ մէջ Պարոն
« Յովհաննու Մ. և ընդ քեռն իւրոյ. սերմն սերմանեալ ուր
« ուրեմն երբեք զպտուղ. լաւ է անագան քան ոչ երբէք ։ . . .

« Յոյժ և յոյժ ուրախանամ, հանաւ չարն ի միջոյ նո-
« ցանէ ։ . . .

« Ո՛հ թէ և կնճռեալ դատն ձերնմին յաջողութեամբ ի վե-
« րուստ հատանէր ։ »

« Արդ՝ եթէ գաղտնի ինչ խորհուրդ կայցէ յայս և եթէ չկայցէ ինչ ես ոչ գիտեմ, այլ զոր յեկից իրացն յայտնապէս տեսանեմ, զի բանք զրուցեանս իմոյ, թէպէտ և խիստ և անախորժ լսելեաց, այլ ազդեցին սրտի հակառակորդացս ։

« Իսկ ազգարարութիւնք իմ, թէպէտ և կարեկցութեամբ մտաց և յօգուտ հասարակաց . . . այլ չազդեցին բնաւ ի միտս սիրելեացս ։ . . .

« Սակայն ի վերայ այսր ամենայնի, եթէ առաջարկիցէ ինձ ինչ որ ընդդէմ իցէ իրաւանց աղքատաց ազգիս և միաբանութեանս, գիտացի և գիտեմ ես առնել զարժան պատասխանին ։ Իսկ եթէ իրաւացի ինչ առաջարկիցէ, թողում ես զայն խնամակալաց ժողովոյն առնել ընդ այն պատասխանի ։

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 13 յունիս. 1849.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ շնորհակալութեան Տիկնոջ Ազանուրի առ Հ. Սարգիս Վ. Թէոդորեան ի Փարիզ.

« *Գերյարգոյ և Արժանապատիւ Տեառն Վ. Հ. Սարգիս Վարդապետի և սիրելի բարեկամին մերոյ կարօտագին սիրով ողջոյն և համբոյր Աջոյն ։*

« *Զաւետաբեր նամակ Արգոյ Վերապատուութեանդ ընկալաք ի 12 ամսոյս և ուրախացաք ընդ անակնունելի լուրդ, որ երազ ինչ թուէր մեզ ։ Եւ նախ գոհանամք զխնամոց Բարձրելոյն որ հաճեցաւ յայսմ մասին գթութեան աչօք ակնարկել ի մեզ, քաղցրացուցանելով միանգամայն զսիրտ եղբօր իմոյ ի հատուցանել ինձ զարդար իրաւունս իմ. և երկրորդ բոլոր ընտանեօք մատուցանեմք անկեղծ սրտիւ զշնորհակալիս մեր առ Վերապատուութիւնդ որ ճշմարիտ բարեկամութեան ոգւով վառեալ հուսկ ապա ի կատարումն ածիք զայդ հարկաւոր գործողութիւն, որոյ բարի վախճանն յուսահատեալ թուէր մեզ ։ . . .*

« *Եւ որպէս Վերապատուութիւնդ ուղիղ ճանաչմամբ ոչ վրիպեցաւ ի կարծիս իւր զեղբօրէն իմմէ, նոյնպէս և մեք համարձակիմք ասել, թէ և բարի ճանաչումն մեր ոչ սխալեցաւ ընտրելով զՎերապատուութիւնդ գործակալ ի յանդ հանել զիրդ վայելուչ օրինակաւ, որոյ վասն խորին ճանաչմամբ շնորհ ունիմք հայրական սիրոյդ ։ Ըստ խրատու ձերոյ գրեմք գիր շնորհակալութեան առ Պարոն Աղեքսանդր և առ Մատամ Ռափաէլ. իսկ առ եղբայրն Յովհաննէս յետ շնորհակալութեան կամիմ ծանուցանել քաղցրութեամբ, թէ ոչ միայն պահանջող չեմ արդար իրաւանց իմոց, այլ և առատասիրտ շնորհելով նմա զվաշխն այնքան ամաց ։*

« *Զեօթն հազար լիրէ ստէրլինս որ կան յաւանդ առ Վերապատուութեանդ, կամիմք անցուցանել առ մեզ և զնել յեկամուտս. ապա աշխատութիւն յանձն առեալ փութասջիք անցուցանել աստ առ մեզ յաջողակ և ապահով փոխանակագրովք ի վերայ Թրեստի ։ Ի փոխանակի յանձնեմք քոյ խո-*

հականութեանդ Ձերում առնել զարժանն և զշահաւորն ։

« Արդարեւ՝ Վերապատուեալ Հայր վարդապետ, այդ հաստուցումն պարտուց եղբօր իմոյ Պարոն Յովհաննու մեծ բարերաղդութիւն համարելի է, նկատմամբ գերդաստանին մերոյ, որ ողորմութեամբն Աստուծոյ երթալով աճէ և բազմանայ, այլ գճշմարիտն ասելով, ոչինչ Թուի այդ արծաթ յաչս մեր գոլով ի ցաւալից պարագայս յայսոսիկ աւուրս, որ տագնապէ և ճմլեցուցանէ զսիրտ մեր, զծանր հիւանդութիւնն ասեմ Վիրգինեայ դստերն իմոյ . վասն որոյ չուարեալ եմք յոյժ, և յահի մեծ կամք թէ գուցէ աղետալի լինիցի վախճան նորա ։ Ապա խնդրեմք զուրբ աղօթս Ձեր անպակաս առնել ի մէնջ, զի գուցէ գթութեան աչօք ակնարկեսցէ ի մեզ Տէր ։

« Բազում սիրով և յարգութեամբ ողջունեն զՁեզ Պարոն Աբրահամ կողակիցն իմ և բոլոր որդիքն իմ, և Մնամ

« Գեր. Վերապատուութեանդ

« Խոնարհ աղախին

« Բասովայ. 14 ապրիլ. 1849.

« ՄԱՐԻԱՑ ԹԷՐԵԶԱՅ ԱՂԱՆՈՒՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԻՁ.

Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Գեր. Հիւրմիւզի, և ընդ զանազան անձինս միաբանից նորին, հանդերձ կարեւոր բացատրութեամբ բանից իւրաքանչիւր թղթոց.

Թուղթ Հ. Սարգսի առ Հ. Եսայի, յորում շնորհակալութիւն մատուցանէ Տիկնոջ Աղանուրի, ընդ փոխատուութիւն արծաթոյ ի հատուցումն պարտուց Մ. վարժարանին, ցաւի ընդ խռովութիւն Իտալիոյ, ծանուցանէ նմա զկարօտութիւն

արծաթոյ որ ի ծախս վարժարանին, և գանգատի զրացար-ձակ իշխանութենէ խնամակալաց ժողովոյն, և զարհամար-հութենէ առաջարկութեան իւրոյ ի Պեր. Հիւրմիւզէ, և բոտ-գտանէ զճանաչումն նորա որ ընդ օգուտ փոխառեալ արծա-թոյ յԱղանուրեանց, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Ջցանկալի պատասխանին Ձեր ընկալայ և մխիթարեցայ ոչ սակաւ ընդ կամակատարութիւն և միջնորդութիւն Ձեր, տալով ինձ կարեւոր տեղեկութիւն զհանգամանաց բարեկա-մաց մերոց և զվիճակէ ձերոյ այդր, և թեթեւացուցանելով զծանրութիւն հոգոցս, կատարմամբ խնդրոյս, որ յառատա-միտ կամաց Ազնիւ Բարեպաշտ Տիկնոջ Աղանուրի, որում հատուսցէ Տէր ամենառատ ողորմութեամբն իւրով, երկրաւոր և երկնային պարգեւօք, և որում մատուցից ի դիմաց իմոց զշնորհակալիս հանդերձ բազում ողջունիւ։

« Ցաւալից հանգամանք Իտալիոյ յայտնի են ամենայն աշ-խարհի, և մեզ կարի յոյժ զգալի, կցորդ գոլով մեր ցաւոց և նեղութեանց նորին։ Տէր ինքն այց արասցէ նեղելոցն, և փրկեսցէ յանիրաւ բռնաւորաց։...

« Թէպէտ և ինձ ոչ անկանի տալ և պահանջել ուղղակի համար զելից և զմտից վարժարանիս, հրաժարեալ իմ արդէն ի մատակարարութենէ սորին, սակս բացարձակ վարչութեան խնամակալացն, բայց կալով իմ սոտ ակամայ, ակնածեալ միայն ի խիստ քննութենէ հակառակորդացս, և տալով Վեհիս անուղղակի և ընդհանուր հաշիւ զծախուց եղելոց ի վարժարանիս, հարկաւորիմ արդ ծանուցանել Վերապատ-ուութեանդ թէ անցուցեալն ի ձէնջ այսր արծաթ 25,000 Փր. հաշիւ բաւեաց մինչեւ ցարդ։

« Ապա կարօտի սա վերստին արծաթոյ 20,000 Փրանքի վասն կարեւոր ծախուց իւրոց, որք լիցին մինչեւ յեւս տար-ւոյս, զամիսս հինգ, և հարցանել թէ ունիք այժմ ի ձեռին այսչափ գումար արծաթոյ անցուցանել այսր ըստ ժամանա-

կին. տալ թէ ոչ՝ ծանուցի՞ք մեզ առ և ի վանս զկարեւորսն, որպէս զի գիտասցէ ամենայն ոք, թէ զի՞նչ ունի առնել։ Քանզի ամաւ միով յառաջ՝ յորժամ յարեաւ խռովութիւն առ ի պետութեանս և ճարակեցաւ այն յայլ պետութիւնս Եւրոպայ, ազդ արարի ես Վեհին՝ ի վանս նախահայեաց տեսութեամբ հոգալ զներկայ և զապագայ վիճակէ վարժարանիս, և հարցի ի նմանէ թէ զի՞նչ պարտ էր մեզ առնել, յորժամ խափանիցի խաղաղ երթևեկ նամակաց, և սպառիցի արծաթն որ ի կարեւոր պէտս վարժարանիս, և յորժամ ի վերջին նեղութիւնն հասանիցիմք, պա՞րտ էր արդեօք զմանկունս դպրոցիս ի բաց արձակել, թէ ոչ։...

« Արար նա ազդարարութեանս և հարցմանս այսորիկ պատասխանի, թէ մի՛ ինչ հոգայցէ գործակալն, քանզի ջանալով ջանայ խնամակալաց ժողովն հայթայթել զկարեւոր ծախս վարժարանին զիա՛րդ և իցէ եղանակաւ. և թէ՝ այլազգ խորհող և կարծող ընդ այս անօրապարտ է... Թէպէտ և խորհուրդ իմ և կարծիքս պայմանաւոր էին, և որոշման նորին թողեալ... Թէպէտ և զկնի միոյ ամսոյ ազդարարութեանս և հարցմանս, հարկաւորեցաւ հրաման տալ ի բաց արձակել զստահակսն և զանպիտանսն ի մանկանց վարժարանիս, հընգետասանիւ չափ, զորս կամէի ես ամաւ միով յառաջ ի բաց արձակել գեղեցիկ պատրուակաւ, պատճառաւ խռովութեան Պետութեանց, որով և պահէր համբաւ վարժարանիս։ Ահա արդիւնք բացարձակ վարչութեան խնամակալաց ժողովոյն որ ի գործ վարժարանիս։...

« Յաջողութիւն ելից իրաց Աղանուրեանց, աւարտումն դրամական գործառնութեան ընդ Յովհաննու Մուրատեան, որով յաջողեցաւ ձեզ հատուցանել զպարտս վարժարանիս, զերծանելով ձեր ի հոգոց անտի, դիւրութեամբ իմն և առանց ինչ վնասուց և նախատանաց, պարտաւորութեան առնել վաճառելոյ զինչս վարժարանիս, և որով յառաջ տարաւ ցարդ դպրոցս օժանդակութեամբ արծաթոյ անտի։ Կամեցայ ես յիշեցուցանել Վեհին մերոյ զայս յաջողութիւն, գրութեամբ այլոյ ուրուք ի մէնջ առնի. արար նա նմա պատասխանի, թէ

« Չէ մեծ ինչ զերծանիլ ի պարտուց միոյ, և պարտական « լինել միւսոյ: » Եւ ահա ճանաչումն նորա ընդ այս և առ ոչինչ համարեալ զզանազանութիւն հազար փրանքի ի տարւոջն, թողեալ զհոգ և զնախատինս: . . .

« Մնամ

« Վերապատուելի Հայրութեանդ

« Ի Փարիզ. 28 յուլիս 1849.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Սարգսի արարեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում ցաւակից լինի նմա որ ընդ անպատեհ գնայս ոմանց ի միաբանից, և խորհուրդ տայ դարման տանել այնոբիկ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ջցանկալի նամակ Վեհիդ՝ գրեալ ի 25 հոկտ. անցելոյ, ընկալայ յ2 ամսոյս, և մխիթարեցայ ոչ սակաւ, թէպէտ և այն ոչ անխառն ի տրտմականէն, հայեցեալ յանպատեհ գնացս և ի կարեւոր հոգս մասնաւորաց որ ի միաբանութեանս, զգնացից ասեմ Հ. Գրիգորի Ալէփանի և Հ. Պետրոսի Մինասեան, թէպէտ և այս ոչ նոր ինչ և օտար է միաբանութեանս, և ոչ առանց վերնախնամ տեսչութեան, որ գիտաց և գիտէ խառնել միշտ զուրախականն ընդ տրտմականին, ի մխիթարութիւն և ի զգուշութիւն սմին. չա՛տ է զի գիտասցէ և սա օգտիլ յերկոցունց անտի: . . .

« Ցաղագս բանի պաշտպանութեան Հ. Պետրոսի, կարծեմ ես թէ կարող է միաբանութիւնս այսչափ ինչ եւս առնել, կրկին և նախահայեաց տեսութեամբ, այս է, առաքել յառաջագոյն և զա՛յլ ոք յիւրոցն ի Տրապիզոն, իբրև օգնական և փոխանորդ նմին միանգամայն, և Հ. Պետրոսի հրատարակել անդ թէ ունի ինքն դառնալ ի վանս ըստ հրամանի Վեհիդ,

յետ ընտելացուցանելոյ զփոխանորդ իւր անդ, մինչեւ եկեալ վճիռն ի Սրբազանէն. եթէ Նպաստաւոր լիցի Նմա վճիռն այն, մնասցէ Նա անդ ցորչափ պէտք իցեն և հաճոյ Ձեզ. իսկ եթէ ընդհակառակն, դարձցի Նա յայնժամ ի վանս, ըստ յառաջագոյն յայտարարութեան իւրոյ, և այնպէս ոչ անպատուութիւն ինչ Նմա լիցի և ոչ յաղթութիւն իմն հակառակորդացս տացի։ . . .

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 5 Նոյեմբ. 1849.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս, որում ծանուցանէ զհատումն Հ. Գրիգորի Ալէփսոնեան ի միաբանութենէն վասն անպատեհ վարուց իւրոց, և զանգատի զանխոհեմ գընացից Հ. Պետրոսի Մինասեան ի Տրապիզոն, օրինակ զայս.

« Ցարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Մինչչեւ ընկալեալ զպատասխանի Նախընթացիս՝ յաւելում գրել և զայս, ծանուցանելով վերջապէս զցաւալից հատումն Ալէփսոնին ի միաբանութենէս վանական ժողովով. և արդ տեսցուք թէ զի՞նչ արասցէ և զո՞ր ճանապարհ կալցի։ Իցի՛ւ թէ չտայր մեզ տուժել այլ եւս։

« Ոչինչ Նուազ հոգոյ են մեզ պատճառք յաւուրս յայսոսիկ իրք Հ. Պետրոսի ի Տրապիզոն, ուր փոխանակ ուսուցանելոյ զմանկտին յոր առաքեցաւն, ի կառուցումն ձեռնարկեալ դպրոցին յաճախէ իւր պարտս բազումս, 15 առ հարիւր շահով. և երեսուն հազար դահեկանաց սակեալ զշինուածն, և դահեկանս 150,000 ծախեալ ցարդ, և դեռ անկատար է շինուածն, և այսօր ստիպի ինքն ելանել անտի, քանզի և

Նոճն (*) ի Պօլսոյ գրեալ է թուղթ առ ժողովն սուրբ, զի թէ ոչ փութով հանցի անտի Հ. Պետրոս՝ հարկաւորի ինքն ղաւաւովք և զօրականօք հանել. և մեզ հարկ է արդ հատուցանել ըղպարտս նորա, զի մի՛ գէթ ամենակործան շահիւքն ընկճեսցուք։

« Գիտէաք, թէ բարեմիտ կամ միամիտ ոմն է Հ. Պետրոս. այլ թէ և այսպէս անխորհրդաբար գործող ոչ յաջ հայելով և ոչ յահեակ, ոչ կարծէի։ Այժմ յառաջիկայ եօթնեկիս յղեմք մեք աստի զՀ. Մելգոն երթալ ընդ Վ. Հ. Աբրահամու ի Պօլիս, և անտի ընդ նմա կամ ընդ Վ. Հ. Անանիայ անցանել փութով ի Տրապիզոն, տանելով ընդ իւրեանս արծաթ (հայթայթեալ ուստեք ի փոխ առանց շահու,) որչափ բաւական իցէ ի հատուցումն պարտուցն որ անդ ի Տրապիզոն, և հատանելով որչափ մարթ է ի վաշխիցն, այնպէս մաքրել ըղպարտս նորա. և առ ինքն Հ. Պետրոս գրեցաւ դառնալ այսրէն անյապաղ։ Տէր օգնական լիցի մեզ ի մեծի նեղութեանս մերում։ . . .

« Մաղթեմ ողջ լինել Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 22 Նոյեմբ. 1849.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ.

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում ցուցանէ զհոգ իւր որ ընդ կատարումն կամաց Բաբերարին և ընդ պարտս միաբանութեան, և զդժուարութիւն ընդ այն սակս անօգնականութեան իւրոյ, և միայն օգնականութեան։ Որոշէ զպահանջումն արծաթոյ Հ. Սարգսի որ վասն գնոյ գրոց իւրոց ի Ռափայէլեան վարժարանէն. ծանուցանէ զբռնաւորութիւն Գեր. Հասունի, հալածելով զՀ. Պետրոսն ի Տրապիզոնէ, և զյուսահատութիւն ի բողոքելոյ առ

(*) Յովհաննէս եպիսկոպոս Սէրվիճեան։

Պայն, սակս նկուն և անձնատուր լինելոյ Նորա կարգինալաց իւրոց բռնաւորաց Հռովմայ, օրինակ զայս.

«Յարգոյապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խընդալ.

«Պարապ առեալ ի կարեւորագոյն ստիպող գործոց և ի գրութեանց փութամ ի պատասխանի թղթոյ Վերապատուութեանդ գրեցելոյ ի 22 հոկտեմբերի. Զկատարումն հանդիսի պարգեւաբաշխութեան վարժարանիդ միամբ լսել և ուրախակից լինել ընդ Ձեզ.

«Իսկ ի կատարելապէս լրումն կամաց հանգուցելոյն Բարերարին և պարտուց միարանութեանս արդարեւ հոգ մեծ է ինձ. այլ զի լինել և եթ ինչ ոչ վճարի եթէ ոչ և ամենեքեան միով հոգւով նահատակեսցուք, վասն որոյ նախ քան զամենայն յայն խորհել ինձ պարտ է և ջանալ, զի ամենեցուն մեր մի կամք իցեն, մի սիրտ և մի խորհուրդ, և ի հնարս իրացդ ցանկայի լսել զխորհուրդ Վերապատուութեանդ.

«Ընթերցայ և զթուղթդ յղեալ ընդ Պ. Հ. Տիմոթեայ, այլ չկամիմ տալ այնմ գրով պատասխանի հաւանեալ իմաստուն խրատու Վերապատուութեանդ պատուելոյ զլռութիւն, որ յոյժ հաճոյ թուեցաւ ինձ. Եթէ լիցի մեզ տեսանել զիրեարս՝ ի բանից ծանիցուք յայնժամ զմիտս իրերաց. Միայն քանզի կարօտ պատասխանւոյ էր ինմա պահանջք Վերապատուութեանդ ի Ռափայէլեան վարժարանէն վասն գրոցն Ձերոց թողլոց ի նա՝ զորոյ յիս յանձն առնէք զդատաստան, ինձ այնպէս թուի արդարացի, Ձեզ թողուլ զ500 ֆրանքսն, որպէս խնայելով յինչս աղքատաց, և վարժարանին հատուցանել զմնացորդ պահանջիցն Ձերոց զ1,500 ֆրանքսն. Յուսամ զի և Վերապատուութեանդ ոչ անհաճոյ լիցի այս դատաստան. Զայս վճարեալ, մատեայց արդ յայլ կարեւոր լուրս՝ թէպէտ և ոչ համօրէն ուրախալիս.

«Հասուցն երթեալ ի Նէապոլիս՝ ձեռամբ Ֆրանսոնեայ առ-

նու ի Սրբազանէն զհրաման ելից Վ. Հ. Պետրոսին մերոյ ի Տրապիզոնէ և յամենայն իսկ սահմանաց Թեմին իւրոյ . և զի ի կողմանէ Սրբազանին եկն առ մեզ հրամանն , չիք այլ եւս հնար հակառակելոյ այնմ . զի և ոչ իսկ յայսմ հետէ յուսալ մարթ է ի Սրբազանն , որոյ գամ մի նկուն լեալ առաջի ծիրանաւորաց վասն չանսալոյ խորհրդոց նոցա , այժմ անձնատուր է ի նոսա ։ Նմին իրի և մեք զոր կարեմք զայն արասցուք , զայլ ոք ջանալ յղել անդր փոխանակ Հ. Պետրոսի ։

« Այսորքիկ են ահա կարեւորագոյնքն ի վանական լրոց , իսկ ի քաղաքականաց չիք ինչ նոր ամենեւին , այլ տխուր խաղաղութիւն և զօրահատոյցք ։

« Ողջոյն սիրալիր ի վանականացս ամենեցուն , ընդ որոց մաղթեմ և ես ողջ լինել Ցարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 9 նոյեմբ. 1849.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄՈՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի , յորում ցաւի ընդ հանգամանս Միաբանութեանն ի Պօլիս և ի Հռովմ , և ցուցանէ զպատճառն , նոյնպէս և զպակասելոյն նորա իպարտս իւր լրումն տալ կամաց Բարերարի գպրոցին ։ Անօգուտ համարի երկրորդել եւս զխորհուրդ իւր վասն այնր , և բաւականանայ ընդ որոշումն նորա որ զգնոյ գրոց իւրոց վաճառելոյ Ռափայէլեան վարժարանին , օրինակ զայս .

« Գերապայծառ Տէր.

« Ցուսով իմն խնդութեան ընկալայ զնամակ Վեհիդ , զգըրեալն յ9 նոյեմբերի . և ընթերցայ զայն տխրութեամբ ինչ

որտի, հայեցեալ ի հանգամանս մեր որ ի Պօլիս և ի Հռոմ. Թէպէտ և յերկոսին տեղիս ունիմք մեք զօրավիգն օգնականութեան, գործունեայ անձինս և բարձրագոյն աստիճանօք, փոխանորդի պատրիարգի և եպիսկոպոսի պատուեալք, (Հայր Բարսեղն ի Պօլիս և Գեր. Եղուարդն ի Հռոմ,) այլ ոչ ուստեք մեզ ինչ մխիթարութիւն. և զի՞նչ պատճառ այսմ, ասացից ես զայն համարձակ և ցաւագին սրտիւ. վասն զի ոչ սկըզբամբք գործեաց և գործէ միաբանութիւնս, և վասն զի չունի նա նախահայեաց տեսութիւն:...

« Թէպէտ և ծանր իցեն բանքս լսելեաց նորա, և անհաճոյ արդեօք համարձակութիւնս, այլ մերկապարանոց է ճշմարտութիւնն և անպատկառ ի բերանս և ի գրուածս ոգւով ցաւագնելոց. վասն որոյ ներեսցէ նա համարձակութեանս և գործեսցէ այսուհետև սկզբամբք և նախահայեաց տեսութեամբ:

« Այսչափ ինչ հասարակաբար ասացեալ՝ եկից արդ ասել մասնաւորաբար ընդ բանս գրութեան Վեհիդ, որ ունի այսպէս.

« — Իսկ ի կատարելապէս լրումն կամաց հանգուցելոյ Բա-
« րերարին և պարտուց Միաբանութեանս արդարև հոգ
« մեծ է ինձ, այլ զի ինեւ և եթ ինչ ոչ վճարի, եթէ ոչ և ամե-
« նեքեան միով ոգւով նահատակեսցուք. վասն որոյ նախ
« քան զամենայն յայն խորհել ինձ պարտ է և ջանալ զի ամենե-
« ցուն մեր մի կամք իցեն, մի սիրտ և մի խորհուրդ. և ի հնարս
« իրացդ ցանկայի լսել զխորհուրդ Վերապատուութեանդ: »

« Ասեմ ես առ այս նախ՝ թէպէտ և հոգ մեծ իցէ Վեհիդ ընդ այն, սակայն չվճարիցի ինչ, չլիցի լրումն կամաց հանգուցելոյ Բարերարին, և պարտուց միաբանութեանդ, չունելով ձեր գործունեայ կամ և ջան ընդ այն, և չառնելով երկիւղած մատակարարութիւն ի սրբազան աւանդն յայն:...

« Երկրորդ՝ ո՞չ ապաքէն լուայք բազում անգամ բերանով և գրով զխորհուրդն իմ ի հնարս իրացն. և եթէ՝ չեղեւ այն հաճոյ կամաց ձերոց, օգուտ ինչ իցէ երկրորդել իմ զայն վերստին:... Պատուեսցի դարձեալ խոհական շուրթիւնն, և հնարք իրացն ի խնամս Աստուծոյ արասցին ապաստան:...

« Շնորհ ունիմ խոստախոհ մտաց Վեհիդ, հայեցեալ ի խնդիր պահանջմանս, որ ի Թոփալեան վարժարանէն։ Յուսականացեալ եմ ընդ դատաստան ձեր, թողուլ իմ 500 ֆրանք, իբրեւ խնայելով յինչս աղքատաց, թէպէտ եւ առատաձեռնութիւնս այս ոչ ի քաջէ հարստի, այլ ի քաջէ աղքատ կրօնաւորի, եւ ի պէտս աղքատաց ազգին։ . . .

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 19 Նոյեմբ. 1849.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի վերոյիշեալ թղթոյ Հ. Սարգսի արարեալ Գեր. Հիւրմիւզի, յոր թէպէտ ընդունի զպակասիլ միաբանութեան ի նախահայեաց տեսութիւն, այլ ոչ իւր, տալով զայն ինքնօրէն գնացից հպատակելոյն. եւ խնդրէ վերստին զխորհուրդ եւ զկարծիս Հ. Սարգսի, յուղիղ մատակարարութիւն ընչից աղքատաց, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ եւ Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ եւ մեծարանաց ողջունիւ խնդալ։

« Ընկալեալ զթուղթ Վերապատուութեանդ գրեալն ի 19 Նոյեմբերի, չկարեմ ասել թէ մխիթարութեամբ սրտի ընթերցայ զայն, ոչ ընդ համարձակութիւն բանից Վերապատուութեանդ տհաճելով՝ որպէս կարծէք, այլ զի ոչ մխիթարական էին բանքն։ Բազում ուրեք թերեւս պակասի միաբանութիւնս ի նախահայեաց տեսութենէ ի գործս իւր՝ ոչ ժխտեմ, բայց թէ ներեսցի ասել եւ ինձ, ուրեք եւս ոչ ի նորա տեսութենէն է, այլ յինքնօրէն գնացից հպատակելոյն զի ձախողեն իրք նորա։ Սակայն եւ այնպէս ազդեցութիւն Վերապատուութեանդ օգտակար լիցէ միշտ եւ պիտանի առ արթնութեամբ եւս յառաջակայն վարելոյ։

« Ստգտանէ զիս Վերապատուութիւնդ վասն չունելոյս գործունեայ կամս և շահ և չառնելոյս երկիւղած ձեռնակարարութիւն ի սրբազան ատանցն: Այդ բանք հարկաւ վրդովել ունին զխիղճ մտաց իմոց և անհանգստել զիս. զի կատարած իրացն ոչ թեթեւ ինչ է, այլ յաւիտենական կորուստ հոգւոյ իմոյ որում ինչ ոչ փոխարինեսցէ:

« Նմին իրի առ ի գիտել և իմանալ լաւ եւս թէ յորո՛ւմ իմիք պակասիցիմ և անիրաւիցիմ և թէ զի՞նչ առնել պարտ իցէ՝ գրեցի առհա առ Վ. Հ. Յովհաննէս, զի ընկալեալ զկարծիս եղելոցդ այդր ամենայն փաստիւք և պատճառօք՝ փութասցի գալ այսր, զի բերան ի բերան խօսեցեալ և իմացեալ զմիտս և զպատճառս իրերաց՝ միաբան խորհրդով գործեսցուք զօգուտն յուղղութիւն մատակարարութեան ընչից աղքատաց:

« Հապա հաղորդեսցէ Նմա Վերապատուութիւնդ զամենայն զոր խորհի և զոր օգուտ համարի ի հնարս իրացն, և ի մեկնել Նորա այսր՝ վստահ եմ զի Ձերովդ արթուն հսկողութեամբ ոչինչ սայթաքեսցէ մատակարարութիւն կամ տնտեսութիւն վարժարանիդ: . . .

« Ի վախճան բանիցս սիրալիր ողջունիւ վանականացս ամենեցուն մաղթեմ ողջ լինել Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 7 դեկտ. 1849.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ.

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի վերոյիշեալ Թղթոյ Գեր. Հիւրմիւզի արարեալ Հ. Սարգսի, որով հաստատէ զբանսն որ ի նախընթաց պատասխանին իւր, յաւելեալ խելամուտ առնէ զպատճառն ձախողելոյ իրաց միաբանութեան, թէպէտ և հաւանի վերստին երկրորդել զկարծիս իւր որ ընդ ուղիղ մատակարարութիւն ընչից աղքատաց ազգին, բայց գուշակէ զանյաջողութենէ Նորին, և յայտնապէս խելամուտ առնէ թէ ուստի կա-

*խի անսայթաք տնտեսութիւն վարժարանին, այլովքն հան-
գերձ, օրինակ զայս ·*

« Գերապայծառ Տէր ·

« Ապաքէն և ոչ ես յօժար մտօք և մխիթար սրտիւ գրեցի զոր միանգամ գրեցի առ Վեհդ ի Նախընթացն իմ, այլ յոչ-կամաց և ի ցաւոց սրտիս բերի յայն, հայեցեալ ի ցաւալից հանգամանս միաբանութեանդ յամենայն ուրեք, որպէս յար-գեանց և յելից իրացն երեւի . . . ապա չկարեմ ես կարծել թէ տհաճեալ իցէք արդեօք ընդ համարձակութիւն բանիցս այսոցիկ : . . . Այլ թէ ուստի՛ իցեն պատճառք ձախողելոյ իրաց միաբանութեանս, յինքնօրէն գնացից հպատակելո՞ցն, թէ ի պակասութենէ հասարակաց խնամոց Առաջնորդին, այ-լովքն հանդերձ, . . . պայմանէ չկամեցայ ես առնել քննու-թիւն ի Նախընթացն իմ, և ոչ իսկ ի սմին կամիմ առնել, թողլով իւրաքանչիւր ճանաչման և գիտակցութեան մտաց քննել և առնել զարժանն : . . .

« Յաղագս բանի կարծեացս որ ընդ ուղիղ և երկիւղած մա-տակարարութիւն ընչից՝ աղքատաց, թէպէտ և տուեալ եմ զկար-ծիս իմ, եթէ բանիւք բերանոյ և եթէ երկար գրութեամբ, բայց քանզի կամք են Վեհիդ տալ իմ զայն վերստին, և ի ձեռն Վ. Հ. Յովհաննու, զոր և վասն այնորիկ կոչէք այդր անխափան, տաց և զայն ի կատարումն կամաց ձերոց : . . . Տացէ Տէր և ի լրումն ըղձիցս, ի մխիթարութիւն կարօտելոյ ազգիս առհասարակ, և ոչ ի զուր և փայրապար լիցին աշխա-տութիւն և ծախք ճանապարհին միանգամայն ։

« Իսկ յաղագս բանի վստահութեան ձերոյ որ ընդ անսայ-թաք տնտեսութիւն վարժարանիս, արթուն հսկողութեամբ իմով, ասեմ ես, թէ ոչ յարթուն հսկողութենէ իմմէ կախեալ կայ այն, այլ ի ջանից և յաշխատութենէ եղբարցս աստ, որոց յանձն է հոգ մանկանց դպրոցիս, և որոց չպակասին ջանք և փոյթ զայնմանէ, և ի խնամակալութենէ Ձերմէ, հասուցանել այսր արծաթ ըստ ժամանակին ի կարեւոր ծախս սորին, որ

և կարօտի այժմ 15,000 ֆրանքաց ի հատուցումն մնացեալ պարտուց, և այսր ամի ծախուց, և 4,000 ֆրանք ամոյ ամ-սոյ և կանխիկ գալոյ ամին ։ Եթէ զայսմանէ խնամ կալջիք փութով և անխափան, կարէք վստահ լինել ընդ անսայթաք տնտեսութեան վարժարանիս ։

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 17 դեկտ. 1849.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի արարեալ Թղթոյ Հ. Սարգսի, որով խոստովանի արդեօք անկեղծութեամբ զպակասութիւն իւր ի պաշտօնն յայն Առաջնորդութեան, ցուցանելով պէտս աղօթից նորա յօժանդակութիւն իւր, և զնոյն խնդրելով ի Տեառնէ զի մի՛ զուր աշխատութիւն և վայրապար ծախք լի-ցին ընդ կոչ Հ. Յովհաննու ի վանս. խնդրէ ի նմանէ ցուցա-նել միշտ զկարծիս իւր ի դարման ուղղութեան իւրաց վար-ժարանին, և խոստանայ առնել զհնարաւորսն, և հաստուցա-նել նմա արծաթ ամոյ ամոյ ֆրանքս 4,000 կանխիկ, օրի-նակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Ընկալեալ զշնորհագիծն Ձեր որ ի 17 ամսոյս՝ շնորհ ու-նիմ նախ յաղագս կարեւոր ազդեցութեանդ ի քննութիւն պարտուցս, որոց որչափ և զգուշացայց գիտեմ, տակաւին զի պակասիմ ի բազումս, և մանաւանդ յայսպիսում բազմա-յոյզ ժամանակի յոյժ դիւրին է ինձ սխալիլ և վրիպիլ, նմին իրի իսկ և աղօթիցդ սատարութեան ունիմ պէտս զի մի՛ նըն-ջեցից ի մահ ։

« Վասն գալստեան այսր Վ. Հ. Յովհաննու զնոյն խըն-դրեմ և ես ի Տեառնէ ընդ Վերապատուութեանդ, զի մի՛ ի զուր և վայրապար աշխատութիւն լիցին և ծախք ։ Նա ըստ

տկար տեսութեանս իմոյ ջանամ և հնարիմ առնել զոր կարեմ. այլ յաջողութիւն ի Նմանէ է, որ տայ, թէ կամի, խորհուրդս խորհրդականաց և կամ բառնայ զմիտս ի հանճարեղաց, վասն որոյ խնդրեմ դարձեալ ի Վերապատուութենէդ, զի որչափ և ի նուագս նուագս ըստ այլեւայլ հանգամանաց իրացն և ժամանակաց ցուցեալ իցէք զկարծիս ձեր բանիւ և գրով, մի զանց առնիցէք և արդ ըստ հանգամանաց ժամանակիս ցուցանել վերստին զոր ինչ պատշաճ և օգտակար համարիք ի դարման ուղղութեան իրաց վարժարանիդ, և ես որչափ յիս է՝ ջանացայց առնել զհնարաւորն :

« Այլ թէ ի կատարումն գեղեցիկ առացելոյդ պակասին հնարք, և յայնս ներողամիտ կարեկցութեամբ երկայնամիտ լիցի Վերապատուութիւնդ, գիտելով չափ՝ զի ոչ կամք և իղձք պակասին, այլ զօրութիւն: Եւ վասն խնդրելոյ արծաթոյդ խօսեցայց վաղիւ ընդ Վ. Հ. Եսայեայ և փութացուցից զնա հաստացանել Ձեզ ամսոյ ամսոյ փրանքս 4,000 կանխիկ, նոյնպէս և ի հատուցումն մնացելոցն դեռ ևս յառաջնմէ պարտուց որչափ և բաւական գտցի ձեռն նորա յղեսցէ անյապաղ :...

« Շնորհակալու մօք և սրտիւ ընկալայ և զտօնական բարեմաղթութիւնդ. լուիցեն երկինք արժանահայց աղօթիցդ, և տացէն ինձ կեալ արդարև ի փառս Աստուծոյ և յօգուտ միաբանութեանս և ազգիս. և թէպէտ ամսաօրեայ յոյժ իցեն այնպէս կեանք իմ, համարեցայց զիս երկայնակեաց : Խսկ ես խնդրեմ փոխարէն ի գլուխ տարւոյս սալ Վերապատուութեանդ պարագայց ամաց լիութիւն պարառութեամբ ամենայն բարեաց և առատապէս օրհնութեամբ երկնից, զոր մաղթեմ միշտ

Յարգօյապաշտի Վերապատուութեանդ

« Վենետիկ. 25 դեկտ. 1849.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի առ Հ. Եսայի Մզրաքեան, յորում ցուցանէ զհակառակութիւն բանից նորին որ յերկոսին թուղթս իւր գրեալ ի զանազան ժամանակս, օրինակ զայս.

“ Վերապատուելի Հայր.

“ Ջյանկալի միանգամայն և զանակնկալ թուղթ ձեր գրեալ ի 6 փետրուարի տարւոյս, ընկալայ ի 12 սորին ամսոյս, և ցաւեցայ յոյժ ընդ այնչափ դառնանալ հոգւոյդ մինչեւ ըզփոքրագոյնն ի չարեաց զմահդ համարել . . . և առաւել ևս ցաւեցայ ընդ հակառակութիւն բանից և կարծեաց յիշատակելոց ի սմին օրինակ զայս.

“ — Առաջարկութիւն ձեր, ասացէք երբեմն, որ յաղագս
“ զարձուցանելոյ զմանկտին դպրոցիդ ի հայրենիս իւրեանց,
“ յերեսաց խռովութեանց ժամանակիս և նուազութեան դրա-
“ մոց, արդարացի թուի ինձ և բանաւոր, և այնու առաւել,
“ զի չէք յոյս և ակնկալութիւն առնլոյ դրամս ի փոխ յումե-
“ քէ. և զի ըստ կարի մերում և առաւել քան զկար մեր
“ բեռնաւորեալ եմք ընդ պարտիւք, և զսակաւ արծաթն զոր
“ ըստ կարի հաւաքեմք ի կալուածոց վարժարանիդ հազիւ
“ թէ բաւէ չարաչար հարկապահանջողութեան Աւստրիոյ.
“ Ես ըստ տկար ճանաչմանս գուշակելով զայսոսիկ ամա-
“ յառաջ ի ժողովի՝ առաջարկեցի ի վանս, ապա ի խափա-
“ նել երթեւեկութեանց ի զանազան նուագս գրեցի առ որ
“ արժան էր, թէ ի բազում պատճառաց արժան է դադարե-
” ցուցանել զՓարիզեան դպրոցն, և այլն. այլ ոչինչ լսելի
“ եղեն բանք իմ. քանզի այլ փոլիթիքայ և այլ սիսթէմս
“ տիրէ այժմ ի վանս.

“ Բատվա. 11 օգոստ. 1849.

“ Հ. ԵՍԱՅԻ ՄԶՐԱՔ. ”

“ — Իսկ յասել թէ ի սկզբնաւորել խռովութեան Իտալիոյ
“ արժան էր փութանակի ի բաց արձակել զմանկտին վար-

“ ժառանիդ ի հայրենիս, կարծեմ թէ այդպիսի գործողու-
“ թեամբ ոչ այլ ինչ առնէաք, եթէ ոչ՝ զնախընթաց պակա-
“ սութիւն մեր ծածկել մեծագոյն եւս յանցաւորութեամբ.
“ և արդարեւ այդու եղանակաւ ի ծայրն կատարելութեան
“ հասուցանէաք զքաջ և զխոհական մատակարարութիւն
“ մեր, քանզի 20,000 ֆրանքօք հազիւ թէ կարողացաք բերել
“ զմանկունս յարեւելից ի Գաղղիա, և չեւ ուսեալ նոցա զծե-
“ քենայս Գաղղիացւոց, վատնելով այլ եւս 20 հազար ֆրանք
“ յղել զնոսա ի հայրենիս իւրեանց ։

“ Եւ միաբանութիւնս մեր ոչ հաւանելով այդպիսի խորհրդոյ
“ յանցաւոր է առաջի ումանց . . . համառօտիւ ասացից և զայս,
“ թէ խեղճ ողորմելի Աբբահայրն մեր բուռի բե չունիցի բնաւ
“ իշխանութիւն ի վերայ հպատակաց իւրոց յառաջնորդել
“ նոցա յուղիղ պողոտայն կամ դարման տանել անկարգու-
“ թեանց ծագելոց ի միաբանութեանս, որպէս յայտ է ի գոր-
“ ծողութիւնս Հ. Պետրոսի որ ի Տրապիզոն, և Ալէփսոնի
“ ի Վէնետիկ. որչափ ջանահնար եղեւ աբբայն զառաջս
“ առնուլ անձնոնի անկարգութեանց, խորհրդով առաջակայից,
“ ի վերայ այսր ամենայնի յանդիմանութիւնս ցաւագինս
“ կրեաց նա ի հպատակաց իւրոց ։ Տեսցէ Տէր և ողորմեսցի
“ մեզ ։

“ Բաստիայ. 6 փետր. 1850.

“ Հ. ԵՍԱՅԻ ՄՋՐԱՔ. ”

“ Տեսանէ՛ք զհակառակութիւն բանից և կարծեաց ձեր յերկուսին թուղթս ։

“ Գրեցից ես առ Գեր. Աբբահայրն մեր փութալ դարման տանել թշուառութեանցս այսոցիկ, զառաջս առնլով չարեացն, յորս մտաբերէք դուք այսպիսի այլանդակ տրամաբանութեամբ, և մնամ ցաւագին սրտիւ

“ Վերապատուեալ Հայրութեանդ

“ Ի Փարիզ. 15 փետր. 1850.

“ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

Թուղթ Հօր Սարգսի վարդապետի Թէոդորեան՝ զոր գրէ նա ի պատասխանի Նամակին Գերապայծառ Տեառն Գէորգեայ Հիւրմիւզեան Արքայի գրեցելոյ ի Նմանէ ի քսան և հինգ դեկտեմբերի 1849 ամին, յորում յիշեցուցանէ դարձեալ զսրբազան պարտս Միաբանութեան, հայեցեալ ի լրումն կամաց Բարերարին, լուսաւորել զազգս առհասարակ, զորմէ գանգատի միշտ, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Զխորհրդական և զօրհնութիւնաբեր Նամակ Վեհիդ, շնորհեալ ի 26 դեկտեմբերի անցելոյն, ընկալայ յ2 յունվարի տարւոյս, և մխիթարեցայ և խնդացի շատ ի պանդխտութեանս.

« Շնորհ յոյժ ունիմ հայրական և առատաձեռն օրհնութեանդ, և աղաչեմ զԱստուած անպակաս առնել ինձ զայս, պահելով զՀայրդ հասարակաց միշտ քաջառողջ կենօք և երկար ամօք ի մխիթարութիւն և ի խնդութիւն ինձ և համօրէն ուխտիդ և ի պայծառութիւն ազգիս առհասարակ.

« Իսկ յաղագս խորհրդական բանից Նամակի Վեհիդ, այս է իմ խոնարհ պատասխանին. Եթէ արդարեւ լցեալ էր Միաբանութեանս զպարտս սրբազան պաշտաման իւրոյ, զլրմանէ ասեմ կամաց հանգուցեալ Բարերարին, լուսաւորելով զազգս առհասարակ, ապաքէն չմնայր մեզ երբէք տեղի գանգատելոյ զմիմեանց, և կամ ընդ այն դժուարելոյ, և զի չկարօտէր Վեհդ այժմիկ տկար աղօրից խնոց ի սատարութիւն արքնութեան իւրոյ, և առանձին կարծեացս ի դարման ուղղութեան իւրաց վարժարանին. քանզի ճանաչէր իւրաքանչիւր ոք ի մէնջ զպարտս պաշտաման իւրոյ, և գիտէր ինքն լնուլ զայն. և եթէ յիրաւի՝ ծանուցեա՞լ իցէ միաբանութիւնս զպակասիլ իւր յայն, և կամիցի՞ արդեօք դարման տանել այնմ արդեամբք. տաց և ես վերստին և կրկին կրկին զկարծիսն իմ ընդ այն՝, ըստ ճանաչմանս իմում և ըստ փորձառութեանս, բերանով և գրով ի ձեռն եկաւորելոյն այդր Վ. Հ. Ցովհան-

նու, և յուսով ապագայ մխիթարութեան, թէպէտ և անա-գան։...

« Մնամ

« Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 10 յունվար. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վ. Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրալիր ողջոյն մեծարանաց։

« Յապաղեցի զայս նուագ զթուղթս՝ խափանեալ ի ցաւոց ստամոքացս որ տանջէր զիս յոյժ յաւուրս յայսոսիկ. բայց ընկալայ զթուղթ Վերապատուութեանդ գրեալն ի 10 ամսոյս ի մխիթարութիւն ինձ։

« Իրաւունք են յոյժ Վերապատուութեանդ յասելն՝ թէ կամք Բարերարին է լուսաւորել զազգս առ հասարակ, և առ այդ պարտ էր մեզ ոչ այդր ի Փարիզ, այլ ի Պօլիս զդպրոցդ կառուցանել, որպէս վեշտասան ամօք յառաջ գրեալ էր իմ զայդ ի Պօլսոյ և չեղէ յայնժամ լսելի։ Եւ արդ հաստատեալ այդր դպրոցիդ՝ կարիցեմք այժմ վաղվաղակի փոխադրել զարձեալ այլուր, և յաւելուլ պարտս ի վերայ պարտուց, և իրաւամբք իսկ զատափետիլ յոտխաց։

« Իսկ եթէ զայժմեան եկամուտս կալուածոցն կլանէ բովանդակ այտի վարժարանդ, բ՚ւ մարթասցուք զարգացուցանել զդպրոցն Կոստանդնուպօլսոյ, որ մինչեւ երեկօթիւք լեալ ոչ բարեկարգեսցի և ոչ արասցէ զարդիւնս որում ցանկամք և Վերապատուութիւնդ և մեք։

« Այս նուազութիւն արծաթոյ է որ կաշկանդէ զձեռս իմ ի յլրումն կամաց Վերապատուութեանդ. ապա թէ ոչ այսօր

իսկ առէի՝ ի վերայ դպրոցին մերոյ որ ի Պօլիս, ամբառնալ և միւս եւս դասիկոն ի Ննջարան մանկանց, և զյարմարագոյնս ի մանկանցն ունել անդ երեկօթիւք ։ Գոցէ Վերապատուու-թիւնդ զհնարս իրացն և ես արարից զայն ոչ մտադիւր և եթ՝ այլ և մեծաւ խնդութեամբ, զի այն է և իմ ցանկու-թիւն ։

« Ցանկամ ողջ լինել

« Ցարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 21 յունվարի. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՄԻՒՋ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Հ. Եսայեայ, յո-րում հերքէ զկարծիս և զքննութիւն նորա, և զանյարմարու-թիւն բերեալ օրինակին, այսպէս.

« Վերապատուելի Հայր.

« Ըստ գրութեան Վեհին մերոյ պարտ էիք դուք առաքել մեզ սաս 15,000 ֆրանք ի հատուցումն մնացեալ պարտուց վարժարանիս. ահա անագան ուրեմն ի 15 ամսոյ առաքե-ցիք մեզ այսր 5,000 ֆրանք միայն, և այն հանդերձ սովորա-կան ձեր խելամտութեամբ, խիստ քննութեամբ զնաստակարա-րողեանն և զկառավարողեանն վարժարանին, օրինակ բերելով ձեր այսմ զվտարանչողիւն Խոսկացոց, որոց ոչ ձանաչեալ, անէք, զկար զօրողեանն իւրեանց և կորուսին զամենայն ։

« Առ այս բանս ձեր, և ես ըստ խելամտութեանս խմում առնեմ զայս պատասխանի, թէ ոչ անբաւականութիւն կառա-ւարութեան Խոսկացւոց է պատճառ խայտառակելոյ և կորու-սանելոյ զամենայն, այլ անմիաբանութիւն և անձնասիրու-թիւն ոմանց ի նոցանէ, որպէս և վկայէ բոլոր Եւրոպա ։

« Նոյնպէս և անհամաձայնութիւն կարծեաց և կարծու-

թիւն տեսութեան ոմանց ի մերոցն այտի երբեմն պատճառք եղեն կարօտութեան և նեղութեան մերոյ աստ այժմիկ, ի մատակարարութիւն և ի վարչութիւն վարժարանիս, որպէս յայտ է յելից իրացն և խոստովանեալ ի ճշմարտասիրաց ։...

« Իցի՜ւ թէ ճանաչէր իւրաքանչիւր ոք զխաչանս իւր և զարման տանէր այնմ, համաձայն կարծեօք և կարեկից մտօք ։

« Ապա չէ յարմար բերել օրինակդ, և չեն տուեալ պատճառդ բուն իսկ պատճառ թշուառութեան Իտալացւոց այդր, և կարօտութեան մերոյ այսր ։

« Մնամ

« Վերապատուելի Հայրութեանդ

« Ի Փարիզ. 16 յունվար. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԻԷ.

Խորհուրդ և առաջարկութիւն փոխադրութեան Մ. վարժարանին ի Կոստանդնուպօլիս. — Վստահութիւն Հ. Սարգսի ի քանս թղթոց Գեր. Հիւրմիւզի և Հ. Արսէնի Բագրատունւոյ. — Դժուարութիւնք ընդ այն. — Լուծումն դժուարութեանցն այնոցիկ. — Եղանակ և պայմանք ի գործ դնել զայն. — Պատեհութիւն վաճառելոյ զտունն Մ. վարժարանին. — Հոգ զպարտուց նորին. — Թղթակցութիւն Հ. Սարգսի և Գեր. Հիւրմիւզի վասն խնդրոյն այնորիկ.

Տեսեալ Հ. Սարգսի զծանր ծախսն Մ. վարժարանին ի Փարիզ, և զչնչին արդիւնսն որ անտի, հոգայ միշտ զարման տանել այնմ, խորհի փոխադրել զՄ. վարժարանն ի Պօլիս ։ Յայտնէ նա զխորհուրդ իւր Հարց Յովհաննու Սորկուճի, և Գաբրիէլի Այվազեան. իբրև հաւանին նոքա ընդ այն՝ գրէ

նա յայնժամ առ Գեր. Հիւմիւզ ի վանս, ծանուցանելով նմա զխորհուրդն իւր զայն, վստահացեալ ի բանս պատասխանւոյ նորին զոր վերագոյն յիշատակեցաք, և ի բանս Թղթոյ Հօր Արսէնի Բագրատունւոյ, գրելոյ առ ինքն, Հ. Սարգիս, երբեմն, զոր այժմ ի դէպ համարիմք յիշատակել աստ, և որ ունի օրինակ զայս.

« Վերապատուելի Տեառն Հօր Սարգսի վարդապետի հոգեհարազատ սիրելւոյ ողջոյն և սէր և խնդալ.

« Վաղուց ցանկայի գրել առ Սիրելի եղբայրութիւնդ ի շնորհաւորել զյաջող դարձ Ձեր և խնդալ ընդ ամենայն անցեալ և ներկայ բարեբախտութիւնդ, որ ոչ այնչափ ձեր են որչափ ազգիս. այլ չպարապեցի մինչև ցայսօր. ընկալցիս զուղերձ սրտիս, ոչ ընդ յամելն նայելով, այլ ընդ անկեղծութիւնն։

« Դու այժմ հանգեար եղբայր յալէտանջ հոգոցդ և կրից ի խաղաղ նաւահանգիստդ. աղօթեցես որպէս արժանն է և մեզ զնոյն հանգարտութիւն, որ ծփիմքս ի ծով ամեհի ալեաց և վայրենի խթից, յորոց յանդորր հանել զնաւ իմաստութեանս՝ վերին այցելութեանն կարօտ գոյ.

« Ընկալայ բազում անգամ զողջոյնդ սիրոյ յեղբարց, ցանկայի և յեղբայրութենէդ լսել զողջոյն ձեր և զընտանի խօսս. այսուհետև յուսամ արժանի լինել։

« Երկոտասանամեայ անջատելոյս չիք սպառուած չիք յագուրդ այսպիսի բանից, վասն որոյ սակաւուքս շատացեալ առ ժամս, եկեսցուք ի կարեւորն զոր խոստացեալ էի գրել առ սիրելութիւնդ.

« Ի մէջ այլ և այլ հոգոց որոց տագնապիմք աստ, մեծագոյն այն է, թէ զիա՞րդ շահեսցուք զազգն ի մեր կոյս, ի կողմն Միաբանութեանս, որ այն ինքն է ասել, ի կողմն ազգային հոգւոյ և փութոյ և ի սէր ազգայնոց իրաց եկեղեցականաց և արտաքնոց։

« Այժմ մի և միայն գործի և հնարք թուեցաւ մեզ՝ աստ

ի Պօլիս կառուցանել զազգային դպրատունն մեր. ի նոյն՝ յորդորէին զմեզ և յորդորեն ցարդ ամենայն բարեկամք մեր յեկեղեցւոյ և յաշխարհէ, ասելով թէ չիք այլ հնար այժմ յանկացեալ նպատակի հասանելոյ, բայց եթէ տիրելով ուսմանն և կրթութեանն ազգին (*), որ այլազգ չմարթի լինել, բայց միայն զազգային դպրատունն ի ձեռին ունելով։

« Եւ թէպէտ այդր եւս լինելով դպրոցին տիրել թուիցիմք կրթութեան, այլ այդր կարի թուով մանկունք դաստիարակիցին, և գուցէ զազգայինն հոգի եւս առաւել մերկասցին ոմանք ի մէջ օտարածնաց պանդխտելով. և յորժամ՝ աստ ազգն կառուսցէ իւր ազգային դպրատուն, որպէս ցանկան և խորհին՝ և առնիցեն անշուշտ, յայնժամ կարի իմն սակաւադոյնք առաքեսցին այդր մանաւանդ աստի ի Պօլսոյ, ուր բազմութիւն է ուղղափառաց, և ուր առաւել կարօտութիւն է ազգային հոգւոյ և կրթութեան քան այլուր։

« Են և այլ եւս բազում պատճառք և փաստք և բանք բանականք՝ որ յորդորեն զմեզ յայս խորհուրդ, զորս և երբեմն միաբանական գրութեամբ աստի այդր առաքեցաք ի քննութիւն և ի վճար այսր մեծի դատի, և գուցէ տեսեալ

(*) Թէպէտ և այս կարծիք, հաստատելոյ զՄ. վարժարանն ի Պօլիս, լինի խսկզբան անդ, ի ժամանակի խորհելոյ հաստատել զայն ի Պատաւիոն, բայց զանազան դիտաւորութեամբ և վախճանաւ, անձնասիրութեամբ և չահասիրութեամբ։

Մխիթարեանքն որք ի Պօլիս, որոց առաջնորդ և փաստաբան լինի Հ. Գէորգ Հիւրմիւզեան, որ և խնամակալ տանն եղբօր իւրոյ, և որ վարկ մեծ ունի յազգայնոցս անդ, կամի ընդ հաստատութիւն Մ. վարժարանին ի Պօլիս, և ջանայ ամենայն փաստիւք համոզել զԳեր. Սուքիաս Սոմալ և զմիաբանս որք ի Վենետիկ։

Իսկ սոքա այլ դիտաւորութեամբ և վախճանաւ կամին ընդ հաստատութիւն նորին ի Պատաւիոն, մերժ զոլով այնր վանաց և վայելելով զայն վանականաց զանազան պատճառօք։ . . .

Իսկ կարծիքն զոր ունի ապա Հ. Սարգիս, ընդ հաստատութիւն Մ. վարժարանին ի Պօլիս և դիտաւորութիւն և վախճան նորին այլ ազգ լինին Բոլորովին, որպէս և տեսանին ի 371-86 և ի 512 էջս սորին։ . . .

Եթէ ըստ այնմ արարեալ էր, ունէր արդեօք Հ. Արսէն Բագրատունին ակնկաութիւն ցանկացեալ բարեացն որք անտի. թողումք ասել զհակառակութենէ բանից և գործոց նորին հայեցեալ ի դիմադրութիւն Զարամատենին։ . . .

Տիրեա՛ց միաբանութիւն իւր այնպիսի գրութեամբ իւրով ուսման և կրթութեան ազգին, թէ արհամարհեցաւ ի նմանէ. . . ողբալի վիճակ միաբանութեան, ունելով նորա այսպիսի Առաջնորդ և խորհրդական։ . . .

(Ծանօթութիւն Հեղինակին.

իսկ իցես ։ Առ ժամն չեղեն լսելի բանք մեր․ և մեք ամօթով իմն եմք առաջի ազգին, իբրև թէ զմեր շահն նոքա խորհեալ իցեն, և մեք չիմացեալ և անփոյթ արարեալ ։

« Յակոբ չէլէպին ի բազում դէպս զայս ինձ ի դէմս հարեալ
է, և վասն այդր իրի յոյժ դժգմնեալ և խոժոռեալ է այրն ընդ
մեզ, և արդարանալ Թուի յասելն, թէ « Այդ Պատաւինի
« դպրոց ոչ այլ ինչ առնելոց է ազգիս, քան թէ բազմացու-
« ցանել իմաստակս, զէվզէկս, որ եկեալ այսր և այնուր ան-
« կատար կամ սնոտի ուսմամբն առ ամենայն ինչ անպիտան
« եղեալ, զգուրս իմ բախելոց են՝ թէ զիս ի փողերանոցն ա՛ռ,
« կամ թէ զիս ի գործ ինչ դիր զի կերայց հաց ։ Փոխանակ զի
« թէ աստ լինիցի դպրոցն, վեցամեայ կամ եօթնամեայ մտանէ
« մանուկն, և չորեքտասանամեայ կամ եւս նուազ ամօք
« ելանէ և մարթի գնալ յարուեստ ինչ և ի ձեռագիտութիւն
« և շահել զկեանսն ։ »

« Այսոքիկ և սոցին նմանք բովանդակ գտանին ի Հօրէն Գէորգայ երկար աւանդեալ և ցուցեալ զօգուտն և զվնաս այսր խորհրդոյ ի վերոյիշեալ միաբանական գրին, զոր տեսցես և ուշիւ որոճեսցիս, թէ չեւ ես արարեալ ։ Այսմ չիք ինչ երկբայութիւն ըստ ոմանց և կամ ասել ըստ բազմաց ։

« Բայց ես և այլ իմն խորհիմ (*) . հայեցեալ ի մեծ հարկաւորութիւնն շահելոյ մեզ զՀռոմ, և այնու զբարի վարկումն ազգին ի մեզ յանկուցանելոյ, և խնլոյ խսպառ զամենայն պղտոր աղբիւրս զրպարտանաց և հրապուրանաց, քան ի Պօլիս, Թե-

(*) Խորհուրդ Քերականի և Քերթողի այլ իմն է անշուշտ ի խորհրդոյ Բարոյականի և Քաղաքավարի, որպէս և աստանօր տեսանի ։ Միտք Հ. Արսենի աղխաղխեալ է հայկական բառիւք, և յիշողութիւն նորա աւլցեալ քերթողական առասպելօք․ չունի նա բնաւ յիշել զերբեմն վրիպումն ակնկալութեան բարեացն որ ի Պապէն Հռովմայ, ի հիմնեալ դպրոցէ Ծաւալոցին արծաթով հայոց ազգին և ի վնաս նմին ․ ․ ․ և դեռ ոչ է իմացեալ զխորթութիւն իւր և զհարազատութիւն Գեր. Հասունի : ․ ․ ․

Թէպէտ և իմացաւ նա զայն ապա, այլ կանխակալ սովորութիւն և մարդկային ակնածութիւն խափան լինին ազատութեան նորա, պահեն զնա ի ստրկութիւն Պապին Հռովմայ . Թէպէտ և հարազատ որդիք նորա նշկահեալ արհամարհեն զնա իբրև զրանաւոր ոք, այլ խորթ որդիք նորա կայր հնազանդութեամբ հպատակին նմա ։ Ո՛չ ապաքէն ողբալի է վիճակ Մխիթարեան միաբանութեան, ունելով այսպիսի Առաջնորդ և խորհրդական ․ ․ ․ ․

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

ըեւս օգտակարագոյն թուի ինձ ի Հռոմ կառուցանել զայդ դպրատուն, որպէս և երբեմն ցանկացեալ են Հռոմայեցիք և առաջարկեալ, և շնորհս եւս խոստացեալ (*), և ընդ չլինելն խոժոռեալ ։

« *Միով բանիւ, երկոցուն դպրոցացդ ի Պատաւիոն և ի Վենետիկ լինել՝ ամենեւին անօգուտ է, թէ և ոչ վնասակար, դէթ ազգին. վասն որոյ ընտրելի է ձեզ մի յերից աստի մեծահոգի մտածութեամբ.*

Կամ զմին ի Հռոմ դնել՝ զմիւսն ի Պօլիս.

Կամ զմին ի Հռոմ՝ զմիւսն ի Պատաւիոն.

Կամ զմին ի Պօլիս՝ զմիւսն ի Պատաւիոն ։

« *Զայսոսիկ առ արհիապատիւ Վեհն գրելի էր արդեօք, այլ ոչ համարձակեցայ. կամեցայ զսիրելի եղբայրութիւնդ մինչնորդ առնմա կացուցանել, զի քաղցրացուսցես քով իմաստութեամբդ զիմ բանքս յունկն Ներողութեան Նորա, և զի վաստակք քո և ճգնութիւնք ի վերայ մեծի օգտիդ, փոխանակ պերճախօսութեան եղիցին յայս դատ մեծ ։*

« *Շնորհ արարեալ գրեսցես պարապով զերկայն իրիս այսորիկ զհին և զնոր ելս, թէ ուր իցէ և ուր կալոց իցէ ։*

« *Ողջունիւ սիրոյ ամենեցուն, . . . մնամ սիրելութեանդ*

« *Պօլիս. 13 ապրիլ. 1836.*

« Խ. Ծ. Հ. ԱՐՍԷՆ Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. »

(*) *Որպէս երբեմն ցանկութիւն Հռովմայեցւոց տիրելոյ ամենայն ազգաց անյագ էր յոյժ, և խոստումն շնորհաց նոցա առ նոսա վնասակար էր, զի բաժանումն արկանէր այն ի մէջ նոցա ։ « Բաժանեա՛ զի տիրեսցես ։ » Ըստ Մաքավէլեայ ։ Նոյնպէս և այժմ, թէպէտ և կրօնիւ քրիստոնեայք են նոքա, սակայն ցանկութեամբ և բռնութեամբ նոյն Հռովմայեցիք են, և չար եւս քան զնոսա. և հաստատութիւն այսմ, տես վկայութիւն Պաքքօլօ Եպիսկոպոսին Իտալացւոյ զամս յիսուն ի Հռովմ կացելոյ. « Փանզի գիտեմ ես, ասէ, և փորձ իսկ քա- « ղաքավարութեան Հռովմայ, զի որչափ ոք խոնարհի նմա, այնչափ առաւել « արհամարհէ նա զնա ։ Ո՞չ յիշէք, ասաց, թէ քանի՛ Արքեպիսկոպոսք և Արդոյ « ծերունի քահանայք չոքան յարեւելից ի Հռովմ, և ո՞րպէս վարեցաւ նա ընդ « նոսա... զուռզութեամբ միայն, որ սեպհական է նմա ։ »*

Թէպէտ և այս վկայութեան նորա ականջալուր լինի և Հ. Արսէն Բագրատունի, թէպէտ և լսէ զայս և Հ. Գէորգ Հիւրմիւզ, սակայն երկոքին եւս կամին ապա հաստատել զՄ. վարժարանն ի Հռովմ, զոհել Ծուալոցին զիրաւունս աղքատաց ազգին, առ ի հաճոյ լինել Պապին, և ի յաղթել ոտոխաց իւրեանց, Հասունեանց ։ . . .

Ահա օրինակ գրոյ Հ. Արսէնի, յոր տեսանի խորհուրդն հաստրակաց ի Պօլիս, և յոր վստահացեալ Հ. Սարգսի՝ հաստատի ի խորհուրդ իւր, փոխադրելոյ զՄ. վարժարանն ի Պօլիս. և ահա առանձին կարծիք Հ. Արսէնի, փոխադրելոյ զայն ի Հռոմ, որոց առնէ յայնժամ Հ. Սարգիս բացասական պատասխանի, սակս այլևայլ պատճառաց, որք և յիշատակին ի պատասխանին Հ. Արսէնի և որք հերքին ի նմանէ, օրինակ զայս.

« Վերապատուելի Տեառն իմոյ և եղբօր սրտակցորդ սիրելւոյ Հօր Սարգիս վարդապետի ողջոյն հարազատական սիրոյ ի Տէր.

« Ցեւանդ ընկալայ զշնորհագիծդ որ ի 5 ամսոյս ։ Թողեալ զկյագուրդ սրտիցս ի դէմ յանդիման տեսութիւն՝ զոր Տէր յաջողեսցէ բարեխօսութեամբ ձերով, փութամ ի պատասխանիս Թուեցեալ իրաւանցն Մուրատեանց ի չկառուցանել զդըպրոց իւրեանց ի Կոստանդնուպօլիս ։

« Այլ յառաջ զայս հարցանեմ. ըստ իմոց տեղեկութեանցս, Մուրատեանքդ իրաւամբք առենի գրկեալ էին ի կտակակատարութենէ և յամենայն արդարացի կարծեցեալ պահանջմանց իւրեանց. արդ զի՞ է զի միւսանգամ օրէնսդիր լինին դոքա Միաբանութեանս ։

« Զո՞ր նենգ կամ զի՞նաս տեսեալ են ցայժմ ի Պօլսեցւոցս, զի կասկածեն զմէնջ զայդ անձնասիրութիւն (*)։ Եթէ զդպրոցն ի Պօլիս կանգնելն ասել էր թէ այլ ուստեք մի՛ առցին ման-

Ահա սոքա են կարծեցեալ աւանդապահ և հաւատարիմ մատակարարք Մ. վարժարանին, և լուսաւորիչ ազգին հայոց ։ Աւա՜ղ բաղդի նորին . . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

(*) Զո՞ր հաւատարմութիւն կամ զօգուտ տեսեալ են ցայժմ ի Պօլսեցեացդ, ցուցէք դուք . . . իսկ զընդհակառակն ցուցաք մեք ի սմին հաւաստեօք, զոր և երկրորդել ստէ ի դէպ համարիմք ։ Ընտրութիւն մանկանց Մ. վարժարանին, ո՛չ ապաքէն ի սկզբանէ անտի մինչև ցայժմ աչառութեամբ և չահասիրութեամբ եղեւ և է ի Պօլսեցեացդ այտի . . . ընտրելով զնոսա ի Պօլսեցի ազգայնոցս միայն . . . և ո՛չ ապաքէն ընդդէմ է այս զիտաւորութեան բարերարին ։ Ապա իրաւամբք կասկածեն զձէնջ զայս անձնասիրութիւն. Թողումք ասել զփաստակար խորհրդոյ փոխադրութեան Մ. վարժարանին ի Հռովմ, և զմատ-

կունք, յայնժամ յիրաւի պարտաւորէաք․ իսկ թէ Պօլիս խնդրի իբրեւ տեղի մերձաւորագոյն կեդրոնի վարատեալ ազգիս, թո՛ղ և զայլ փաստսն, զի՞նչ մեղ իցէ այդ ։ Ապաքէն ոչ Պօլսեցի էր և Հայրութիւնդ, որ ամօթ համարեցաւ միաբանութեանս զայդ պայման՝ մերժելով զՊօլիս և եթ յարմարաւոր տեղի լինելոյ դպրատանն, և հակառակ եկաց չանցանել պայմանիդ ի գիր ։ Ոչ Պօլսեցի էր և Պուրխեանն, որ ձեռնագրեաց զմիաբանական Նամակ մեր ի խնդիր հաստատութեան առաջարկելոյ իրիդ ։

« Սակայն իցէ որպէս զիարդ ինչ և է, ըստ գրոյ սիրելի եղբայրութեանդ՝ որ վասն Պօլսի ինչ էր աՀա վճարեալ է․ զմին Լօռտ Զենսլըրն արգիլեալ է, և զմիւսն ամենիմաստ և ամենարդար Մուրատեանքն ։

« Իսկ վասն Հռովմայ զի՞նչ բանք իցեն և փաստք՝ որով զմիտս իմ ընդ հակառակսն շրջել խոստանայք, բայց ոչ տեէք զրովանդակն, այլ զերկուս միայն, ի հարկէ զօրաւորագոյնս, դժուարութիւն անձանց ի բաւականութիւն հեռաւոր վայրին, և զօգոյն անպիտանութիւն ։ Բայց աՀա երկու անձինք վաղուց նուիրեալ են ի Միաբանութենէս յայն քաղաք․ եթէ միւս այլ յաւելուցու, կարծեմ բաւական լինել ի պէտսն․ և փոխարէն շահի Միաբանութիւնս զհայթայթանս երիցն միանգամայն ։ Իսկ օդք քաղաքին այնորիկ, որպէս ես ինձէն զփորձ առի, չեն միօրինակ․ որչափ ի խոնարհ և զնստագոյն տեղիսն ջերմայոտ է և վնասակար, նոյնչափ ի բարձունս բլրոցն և դարեւանդաց որ ի քաղաքին և որ ի շրջակայ գիւղօրէսն, զով, քաղցրախառն և առողջ և զուարճալի ։

« Զայսոսիկ գրեցի, թէ մարթ է ումեք և զայս մտածել ի վերայ գրելոցդ, և ոչ եթէ փոփոխումն տալ առնել այլազգ խորհելոցն և հաստատելոց ։ Մեր կամք և ջանք էին և են առաւելագոյն օգուտ ազգին և Միաբանութեանս, որպէս տեսեալ ես ի հարկէ և ի փաստից միաբանական գրոյ մերոյ,

Նուէթնէ նորին ի ձեռս Ծաւալոցին ։ Զայսոսիկ ոչինչ համարի Հ. Արսէն Բագրատունի ըստ ծանուցման իւրում ։ . . .

(Ծանօթութիւն Հեղինակին ։)

զոր աղաչեմ միասնգամ ուշով և պարապով յակն արկանիցէք. բայց և գիտասջիք, զոր գուցէ ոչն գիտէիք, թէ ոչ իմ է շարադրած նամակն այն։ Զայս ասեմ, զի երբեմն օգտէ ի հաւանողութիւն գիտելն, թէ զո՛յր բանս ընթեռնուցու ոք։

« Որչափ զվայրէ վարժոյացդ ոչ յոյժ գոհ և հաճ թուիցիմ և ես, մանաւանդ ոմանց, նոյնչափ խրախ եմ ընդ ընտրութիւն պետաց և վարչաց և ուսուցչաց և համօրէն ամենայն գործակալաց երկուքանչիւրոցն, և խնդակից եմ նոցին. եւս առաւել զի լսեմ թէ անկեղծ եղբայրութինդ ընդ պատուական Հօրն Ռափայէլի կարգեալ էք ի վերայ Ռափայէլեան վարժարանիդ որ ի Վենետիկ. Տէր զօրացուսցէ զձեզ, և արգեամբք եկից իրայն հաւանեցուսցէ զանհաւան ազգս ընդ բարին իւր։

« Ողջ լեր և ողջունեա՛ զամենեսեան։

« Ն. եղբայր քո

« Պօլիս. 24 օգոստ. 1836.

« Հ. ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. »

Ահա օրինակ և պատասխանւոյ Հ. Արսէնի, յորում ստգրտանէ նա զկստակսկատարսն ընդ կասկածանսն որ զնենգոյ և զմասու իւրոյն ի մատակարարութեան Մ. վարժարանին, չըտեսանելով զանձնասիրութիւն իւրոյն, որ յայտնապէս տեսանի... և զօգոյն Հումայ միայն զփորձ առեալ էր նորա, անփորձ զոլով բռնաւորութեանն որ անդ։

Իսկ Գեր. Հիւրմիւզ Թէպէտ և հաւանի խորհրդոյ Հ. Սարգսի, փոխադրութեան վարժարանին, բայց ցուցանէ դժուարութիւնս ընդ այն, որում առնէ Հ. Սարգիս պատասխանի, լուծանելով զդժուարութիւնսն զայնոսիկ, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Թէպէտ և Վենզ տալով տայ ինձ իրաւունս ի բանս որ զինդրոյ լուսաւորութեան ազգիս առհասարակ, բայց կամաց

Բարերարին դպրոցիս, « Այլ պարտ էր մեզ, ասէք, ոչ ի Փա-
« րիզ, այլ ի Պօլիս զդպրոցս կառուցանել, որպէս վեշտա-
« սան ամօք յառաջ գրեալ էր իմ զայդ ի Պօլսոյ, և չէղէ
« յայնժամ լսել. և արդ հաստատեալ այդր դպրոցիդ, կա-
« րիցե՞մք այժմ վաղվաղակի փոխադրել դարձեալ այլուր,
« և յաւելուլ պարտս ի վերայ պարտուց, և իրաւամբք իսկ
« դատափետիլ յոսխաց: »

« Առ այս ասեմ նախ՝ թէ վեշտասան ամօք յառաջ յոյժ այլազգ էր վիճակ Պօլսոյ քան զարդի վիճակ նորին, զազատութենէ քրիստոնէից ասեմ, այլովքն հանդերձ... և երկրորդ՝ զի միաբանութիւնս չէր յայնժամ փորձ, ոչ բռնութեանն որ ի տէրութենէ Աւստրիոյ, և ոչ վնասուց որք անտի, սակս փոխադրութեան վարժարանիս ի Փարիզ, և սակս ծանր ծանր ծախուց սորին աստ և սակաւ օգտից աստի. ապա ունէր միաբանութիւնս իրաւունս արդեօք յայնժամ չլսել Ձեզ: Այլ արդ՝ յետ այսպիսի փոփոխութեան Պօլսոյ, և յետ այսչափ փորձառութեան Միաբանութեանս, ընդէ՞ր չկարիցէ այժմ վաղվաղակի փոխադրել դարձեալ այլուր զդպրոցս:...

« Յաւելուղ, ասէք, պարտս ի վերայ պարտուց. և ընդէ՞ր յաւելցին պարտքն, յորժամ նոյն արծաթն որ ի Փարիզ ծախի, ծախիցի ի Պօլիս. և զի՞նչ իրաւամբք դատափետիցի յոռխաց, յորժամ ի պաշտպանել զիրաւունս աղքատաց ազգիս ի բռնութենէ Աւստրիոյ փոխադրեաց զդպրոցն ի Փարիզ, և յորժամ եւես ի փորձոյ զսակաւ օգուտն ազգին իւրոյ որ անդ ի Փարիզ, փոխադրեաց զայն ի Պօլիս, յառաւել ևս օգուտ ազգին իւրոյ առհասարակ:... Ապա ոչ պարտս ի վերայ պարտուց յաւելցին, և ոչ ոստիքն մեր կարիցեն իրաւունս ունել դատափետելոյ զմեզ. Թողից ասել և զայլ պատճառսն և զիրաւացի պատճառսն:

« Վասն այնորիկ հարկաւորի միաբանութիւնս փոխադրել զդպրոցս այլուր, որպէս առ պակասութեան եկամտից վարժարանիս իբրև կիսով չափ, սակս խռովութեան Իտալիոյ և առաւելութեան հարկացն, և թողից ասել զպակասութենէ ազատութեան մերոյ աստ, տուեալ մեզ երբեմն ի Պետութե-

նէս և գլացեալ զայն այժմ Հաստրակապետութեան, այլ և նորոգ և անխրաւ պահանջումն Արքեպիսկոպոսին քաղաքիս։

«Ահա այսոցիկ չէր փորձ միաբանութիւնս, և չկարէր նախատես լինել։ . . . Զայսոսիկ տեսեալ իմ հոգայի միշտ և խորհէի ընդ եղբարս աստ, թէ զինչ պարտ էր մեզ առնել և իւր աղագս գտանել, ահա ժամանեաց գիր Վեհիդ առ իս, որով քաջալերեալ մեր՝ որոշեցաք միաբան խորհրդով առաջի առնել Ձեզ զկարծիս մեր, այսպէս.

«Եթէ արդարև ունի միաբանութիւն մեր գործունեայ կամս կատարելոյ զկամս Բարերարին, ի լուսաւորել զազգն առհասարակ, այնպիսի զօրաւոր պատճառս ունի փոխադրելոյ զվարժարանս այժմէն ի Պօլիս զօրպիսի վերագոյն յիշեցի, մինչև ոչ ոք յիրաւախոհից կարող է չտալ մեզ իրաւունս։

«Առաջին և գլխաւոր պատճառն է, զի պակասելով եկամտից վարժարանին, ոչ կարեմք յաւելուլ զթիւ աշակերտաց նորին աստ. իսկ եթէ զայն ծախս և զայն աշխատութիւն ի Պօլիս ամփոփեսցեմք, զկրկին բազմութիւն աշակերտաց կարեմք ունել անդ. թող զթոշակաւորսն, զորս անշուշտ դիւրին լիցի մեզ անդ գտանել։ Յայնժամ և պարտք վարժարանիս փոխանակ յաւելլոյ, որպէս աստ, նուազին, գուցէ և բոլորովին հատուցանիցին, եթէ յաջողեսցի մեզ վաճառել զտունս այս աստ։ . . .

«Զայլ նիւթական և գրտրոյական օգուտն գտանել վարժարանիս ի մէջ ազգայնոցս, ամենայն ոք կարող է դիւրաւ ի միտ առնուլ, հանդերձ յաջողութեամբ վաճառանն տեղ, որ կարևոր է մեզ, մանաւանդ յայսմ ժամանակի։ Միայն թէ ի գործառնութիւն այսր խորհրդոյ, ամենահարկաւոր թուի մեզ աստ՝ նախ ի սկզբան անդ զամենայն գաղտնութիւն ի կիր առնուլ։

«Երկրորդ՝ ի գալ այդր Վ. Հ. Յովհաննու ընդ հուպ, յետ խօսելոյ ընդ նմա զամենայնէ, առաքել զնա անյապաղ ի Պօլիս իբրև ի տեսութիւն ազգականաց իւրոց անդ, և նա գնացեալ խօսեսցի զիրացս զաղտ ընդ խոհականագոյնսն

ի մերոցն, և ընդ Տիւզեանս, և ընդ Ռէշիտ և Ալի փաշայս, և խնդրեսցի յՕսմանեան պետութենէն արքունի հրովարտակ ազատութեան վարժարանիս յամենայն իշխանութենէ պատրիարքին և նախագահին, և յորժամ հաստատեսցէ անդ զամենայն ինչ որպէս արժան է, ծանուսցէ Ձեզ, և հրաման լիցի կանգնել զերրորդ յարկն ի վերայ այժմու դպրոցին։ Եւ յաշնան տարւոյս մանկունք վարժարանիս դարձուսցին ի Պօլիս, ոմանք իբրև աւարտեալք զուսմունս իւրեանց, և ոմանք իբրև անդ աւարտելիք, և յաջողագոյնքն ի նոցանէ հինգ կամ վեց զետեղեսցին աստ յայլևայլ դպրոցս ուսանել զարուեստ ինչ կամ զբարձրագոյն գիտութիւնս, ընդ հովանաւորութեամբ միոյ ի մէնջ։

« Իսկ Մուրատեան վարժարանս ըստ ամենայնի և ամենայն սարօք փոխադրեսցի ի Պօլիս, և անդ ուսցին յինէն չափ աշակերտք երեկօթիւք զայն ամենայն զոր ուսանէին աստ։

« Զայլ հանգամանաց այսր գործոյ բերան ի բերան խօսեսցի այդր Վ. Հ. Յովհաննէս։

« Եթէ անհնար լիցի ընդունել մեզ ի Պօլիս զազատութիւնս և զպաշտպանութիւնն, զոր խնդրեմք, յայնժամ թերևս լաւ համարեսցուք առ հարկի կալ մնալ աստէն։

« Ահա այսքիկ են պատասխանի բանից նամակի Վեհիդ, միանգամայն և կարծիք մեր աստ ամենեցուն, հայեցեալ ի խնդիրն լուսաւորելոյ զազգն առհասարակ ըստ կամաց Բարերարին և ըստ ցանկութեան մեր ամենեցուն։

« Իսկ յաղագս երթին Հ. Պետրոսի ի Հռոմ, չգիտեմ զինչ ասել. կարծեմ ես, թէ ի զուր լիցի աշխատութիւն նորա, ճանաչելով քաջ զկողմնաւոր բարս պաշտօնէից Ծաւալոյին։ Փրկեսցէ Տէր զամենայն ի ձեռաց նոցա։ . . .

« Մնամ

« Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 4 փետր. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, վասն բանի վաճառման տան, տեղւոյ Մ· դպրոցին ի Փարիզ, և պատեհութեան նորին, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Երկու դժուարութիւնք կային ի նախընթաց նամակի Վեհիդ, հայեցեալ ի յրումն կամաց Բարերարին դպրոցիս, ի լուսաւորել զազգս Հայոց առհասարակ։

« Առաջինն էր, վերստին և փութով փոխադրել վարժարանիս սակս անյնածութեանն որ յասրխայս, զոր և լուծի պատասխանեաւս։

« Երկրորդն էր, նիազութիւն արծաթոյ, վասն հոգալոյ զերեկօթեայ վարժարանէն ի Պօլիս. աՀա զայս ևս լուծանեմ ի սմին պատեհութեամբ ինչ։

« Յեւս անցեալ ամսեան ընկալաք յանկարծ տոմսակ մի ի միջնորդէ ուրուք որ հարցանէր զմեզ, եթէ վաճառէաք ըզպալատս, զի միաբանութիւն ինչ կուսանաց կամի գնել զայս։ Զառաջինն չկամեցաք մեք առնել նմա պատասխանի, կասկածելով թէ մի գուցէ խորամանգութեամբ իցէ հարցումն այն, խորհրդով արդեօք Յովհաննու Մ. և կամ արքեպիսկոպոսի քաղաքիս, ի հնարել ինչ ընդդէմ մեզ։ Բայց յորժամ ընկալայ զվերջին նամակ Վեհիդ և ծանեայ անտի զկամս Ձեր, և զդժուարութիւն եկից իրայս, քաջալերեալ իմ յայնժամ առացի Վ. Հ. Յովհաննու գնալ անձամբ տեղեկանալ զայնմանէ, խմանալ թէ արդարեւ գոյ խնդրող պալատանս։

« Գնացեալ նորա տեղեկացաւ, զի խսկապէս ցանկան կուսանք ոմանք գնել զայս, ի բնակութիւն միաբանութեան իւրեանց, որք և բնակին այժմ ի վարձու կալեալ տան միոյ։ Եւ ի հարցանել միջնորդի ցՀ. Յովհաննէս, թէ ունէաք կամս վաճառելոյ զտունս, պատասխանէ սա, թէ չունիմք կամս վաճառելոյ զայս, բայց եթէ սակս նուազութեան եկամտից վարժարանիս, ի պատճառս խռովութեան Իտալիոյ. սակայն ի վերայ այսր ամենայնի պարտ է մեզ աւէ նախ հարցանել զկամս միաբանութեանս, և երկրորդ՝ եթէ տացի մեզ

այնչափ արծաթ որչափ ինչ տուեալ էրք ի գին պալատանս և ի նորոգ շինուածս նորին։

« Ցուցանէ միջնորդն դժուարութիւն ինչ վասն արծաթոյն, ասելով թէ հարուստ են կուսանքն և յոյժ հարեալ ի սէր պալատանս։

« Այսչափ ինչ տեղեկացեալ Հ. Յովհաննու, գնայ ապա հարցանել խորհուրդ ի Նօտարէ միումէ, թէ զինչ պէտք իցեն մեզ ի գործառնութիւն յայս։ Ասէ նա, թէ պիտոյ է մեզ օրինաւոր գիր գործակալութեան ի միաբանութենէս, զոր և յօրինէ ինքն ըստ օրինաց տեղւոյս, և զոր գտանէք ծրարեալ ի սմին։

« Արդ՝ եթէ հաճոյ իցէ Վեհիդ և միաբանութեանս այս գործառնութիւնս, գաղափարել տաջիք զայս Գաղղիացւոց Հիւպատոսին որ ի քաղաքիդ, և հաստատեսջիք զայն առաջի նորա, առաքեսջիք մեզ ըստ ժամ մի յառաջ, զի առանց այսր չկարեմք մեք ի դաշինս մտանել և որոշել ինչ։ Իսկ եթէ անհաճոյ իցէ Ձեզ այս գործ՝ ծանուսջիք մեզ նոյնպէս փութով, զի ըստ այնմ տացուք նոցա պատասխանի։ Բայց կարծեմք մեք ասել թէ յաջողագոյն է մեզ յոյժ պատեհութիւնս այս, մանաւանդ յայսմ ժամանակի, յոր կիսով չափ նուազեալ է գին տանց։ Մնամ

« Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 9 փետր. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս, յորում ցուցանէ զդժուարութիւն փութով որոշման փոխադրելոյ զՄ. վարժարան ի Պոլիս, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Ընկալեալ զթուղթ Վերապատուութեանդ գրեալն ի 4 ամսոյս որ աւուրբք ինչ անագանեալ է յուղւոջ, մինչդեռ փութայի տալ ինչ պատասխանի, հուպ ընդ հուպ եհաս և

գրեալն յԹ ամսոյս հանդերձ օրինակաւ թղթոյ գործակալութեանն զոր խնդրէք փութով ի փաճառումն պալատանդ ։

« Գիտէ Վ.երապատուութիւնդ և որք այդր են, թէ որչափ ցանկալի և ըստ սրտի իմում է խորհուրդդ և առաջարկ կանգնելոյ դպրոց երեկօթիւք ի պօլիս, և խոստովանիմ իսկ, զի ամենակարեւոր են մեզ իրքդ՝ զոր թէ և ոչ այժմ՝ սակայն յաւուր միում հարկ է մեզ յարդիւնս ածել զայն ։ Բայց և զայն գիտէ Վ.երապատուութիւնդ, զի ոչ դիւրաւ եղեւ փոխադրութիւն դպրոցիդ այդր, այլ բազում և բազմամեայ խորհրդովք և մեծամեծ ժողովովք. և զիա՞րդ մարթ իցէ ինձ արդ յերկուս աւուրս շտապաւ և հապճեպ խորհրդով բառնալ զայն անտի և փոխադրել այլուր ։

« Նմին իրի տացին ինձ գէթ աւուրք ինչ մինչեւ ժողովեալ զՄիաբանութիւնս առաջարկեցից զայն և տաց ժամանակ խօսելոյ և քննելոյ երկուստեք զիրսն և այնպէս խորհրդով որոշելոյ զիրսն ։ Քանզի որչափ և լուծանէ Վ.երապատուութիւնդ զներհակ առարկութիւնսն և զդժուարութիւնս իրացն, սակայն ծանր է յոյժ խնդիրն և առաջարկ, և ի բազում գլխո ց կրէ դժուարութիւնս և առաջի առնէ մեզ խորհելիս ։

« Զայս հարկ համարեցայ փութալ և ծանուցանել Վ.երապատուութեանդ, զի ի յամել պատասխանւոյս զաւուրս ինչ, մի՛ այնպէս թուեսցի թէ անհոգանայցեմ ինչ ի խորհել կամ ի գործել զիրացդ։ Իցի՜ւ թէ կանխեալ և փութացեալ էր Վ. Հ. Յովհաննու գալ այսր, զի օգտակար յոյժ լինէր արդ ի ժողովս ներկայութիւն նորա, և երկուստեք բանիւք քաջ լուսաբանէր խնդիրն ։ . . . .

. . . .

. . . .

« Մաղթեմ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վ.երապատուութեանդ

« Վ.ենետիկ. 16 փետր. 1849.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ.

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի ՚առ Գեր. Հիւրմիւզ վասն բան խնդրոյ փոխադրութեան վարժարանին ի Պօլիս, և վասն վաճառման տանն որ ի Փարիզ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Զցանկալի Նամակ Վեհիդ, գրեալ ի 16 փետր. ընկալայ ի 21 սորին ամսոյ, և ընթերցեալ զայն զարմացաք մեք ամենեքեան, ոչ այնչափ ընդ կարծիս խնդրոյն դժուարութեան, փոխադրութեանն ասեմ վարժարանիս այլուր, գիտելով մեր քաջ, թէ կարօտի այն հասարակաց հաւանութեան և ժամանակի, և կարեւոր պայմանաց եդելոց ի մէնջ, այլ որչափ ընդ անհոգութիւնդ կարօտութեանս մերոյ աստ և դարմանոյ նորին յաջողելոյ մեզ այժմ ինքնին, զոգցես ի մասնաւոր խնամոց բարձրելոյն, տեսանել զմեր կարօտութիւն : . . .

« Ապա աւելորդ համարիմք մեք արդ հարցանել Վեհիդ, թէ քանի՛ և զի՛նչ իցեն ի բազում գլխոց կրկլի կարծեցեալ դժուարութիւնք, թէպէտ և երկու էին միայն գլխաւորքն, առաջարկեալ ի Ձէնջ և լուծեալ ի մէնջ... և ապա այս է միայնակ և կարեւոր խնդիր մեր ի ժամուս, հոգ և դարման տանել կարօտութեանս մերում :

« Եւ եթէ ոչ բարւոք և որոշ բացատրեալ իցէ մեր զխնդիրս ի Նախընթաց Թուղթն իմ, բացատրեսցուք մեք զայս ի սմին առաւել մեկին ի խելամտութիւն Ձեզ յամենայնի. վասն այսորիկ պարտ է մեզ ի սկզբանէ անտի սկսանել, թէ զի՛նչ էր պատճառ փոխադրելոյ վարժարանիս ի Պատաւիոնէ ի Փարիզ, և թէ զի՛նչ վախճանաւ ծախեցաք մեք աստ 500,000 ֆրանք ի գին պալատանս, այլովքն հանդերձ : . . .

« Արդ՝ պատճառ փոխադրելոյ մեր աստ զՄուրատեան վարժարան, էր նախ ազատութիւն մեր ի բռնութենէ Աւստրիոյ պետութեան, որպէս և գիտեն ամենեքեան ի միաբանութեանս, բաց ի սակաւ ոմանց, որոց կարծիք են միշտ եղական... և վախճան ծախելոյ մեր աստ զայս մեծ գումար արծաթոյ՝ էր նախ ակնկալութիւն մեր գտանել Թոշակաւոր

մանկունս ի վարժարանս, որով թեթեւանային ծախք սորին, այլ դժբաղդութեամբ, անհոգութեամբ սանմ մերոցն վրիպեցաք ի յուսոյ անտի ։ Եւ երկրորդ՝ ենթադրութիւն մեր, վասն որոյ ծախեցաք 100,000 ֆրանք ի շինուած դպրոցին Պօլսոյ, մարզել աստ ի վարժարանս Փարիզոյ զսկզբունս գիտութեանց ուսեալ մանկունս ի դպրոցն Պօլսոյ, և յայսմանէ եւս վրիպեցաք դժբաղդութեամբ, սակս անհոգութեան և գինչպիտութեան կամաց ուրումն, Հ. Անանիայի Ճելալեան ։...

« Իսկ պատճառ խորհելոյ մեր այժմ փոխադրել զվարժարանս ի Պօլիս, է նախ՝ մատակարարել ազգիս առհասարակ զշնորհս Բարերարին, որպէս և Տէրդ ինքն իսկ ցանկայ. և երկրորդ՝ չբաւել եկամտիցն մարզել աստ մանկունս և ոչ երեսուն, սակս ծանրութեան հարկաց կալուածոց վարժարանիս յերեսաց խռովութեան Իտալիոյ, թէպէտ զամս երիս աստ, այլ Աստուած գիտէ թէ ե՞րբ այն թեթեւասցի... և սակս պարտուց սորին որք հասանեն արդ ց350,000 ֆրանք, և վաշխ նոցին 18,000 ֆրանք ի տարւոջն, որով և յաւելցին պարտք սորին ամ ըստ ամէ. զի տարեկան ծախք վարժարանիս, վասն 25 և եթ մանկանց են 50,000 ֆրանք ի տարւոջն, իսկ եկամուտք կալուածոց սորին 40,000 ֆրանք, ըստ վկայելոյ և յայտարարելոյ միանգամ և երկիցս գործակալի կալուածոց Հ. Եսայեայ ։

« Ապա յաւելցին պարտք վարժարանիս ամ ըստ ամէ 10,000 ֆրանք, հանդերձ վաշխիւն. և եթէ այսպէս ընթանալով ընթասցի գործն, հարցանեմ ես Վեհիդ թէ ո՞ւր հասեալ հանգիցի բանն ։... Ո՞չ ապաքէն յետ սակաւ ամաց բովանդակ եկամուտք կալուածոց վարժարանիս հատուսցին ի վաշխս պարտուց սորին, որպէս իրաւամբք կարծէ զայսմանէ Հ. Եսային, թէպէտ և ոչ իրաւամբք խորհի նա զդարմանոյ իրաց սորին ։...

« Եւ եթէ կամիցիք պակասեցուցանել զթիւ մանկանց վարժարանիս, և մինչեւ ցկիսով չափ, սակայն և այնպէս ոչ նուազիցին ծախք սորին, բայց ի սակաւիկ ինչ զանազանութենէ որ ի ծախս կերակրոյ և զգեստուց. թողից ասել ըզ-

քննութենէ և զգատաստանէ հակառակորդացս և բարեկամաց մերոց իսկ, զոր և առնեն արդէն, ասելով թէ յայսպիսի մեծի պալատանն պարտ է լինել հարիւր և առաւել մանկանց:

« Եւ արդ՝ ընդ այս ամենայն, զոր ի սմին այսպէս մեկին բացատրեցաք, պա՞րտ իցէ Վեհիդ անհոգ լինել, և ոչ ժամ մի յառաջ դարման իրացս տանել, վաճառել զպալատս, և հատուցանել զպարտս վարժարանիս միով մասամբ արծաթոյն որ ի գնոյ պալատանս, և միւս մասամբն տուն ինչ ի Պօլիս գնել, և կամ զդպրոցն որ անդ ընդարձակել, յերեկօթեայ վարժարան, եթէ հաճոյ իցէ այս հասարակութեանս, և զայս պարապով, երկար քննութեամբ և հասուն խորհրդով, աւուրբք և ամսօք, ժամանակաւ, ըստ գրութեան ձերոյ, հանդերձ կարեւոր պայմանօք եղելովք ի մէնջ և առաջարկելով Ձեզ ի թուղթն որ ի 4 ամսոյս, և ոչ յերկուս աւուրս շտապաւ և ճապճեպ խորհրդով բառնալոյ զայն անտի և փոխադրել յայլ ուր, ըստ բանից գրութեան ձերոյ:

« Իսկ եթէ ոչ հաճեսցի հասարակութիւնս ընդ այս, և կամ չյաջողեսցի նմա անդ ի Պօլիս, ըստ ցանկալի պայմանաց իւրոց, և կամիցի աստ ի Փարիզ պահել զվարժարանս, ի վարձու կալցի տուն մի, որոյ տարեկան վարձ լիցի 5,000 ֆրանք վասն բնակութեան 25 մանկանց, և ոչ 25 հազար ֆրանք, որ է շահ դրամագլխոյ պալատանս, թող ըզհարկսն և զյապահովութեան ծախսն սորին որ լինի ի տարւոջն 3,000 ֆր. և որով ընդ ամենայն 28,000 ֆր. ի տարւոջն:

« Ասացաք վերագոյն, թէ յաջողեալ է մեզ այժմ ի մասնաւոր խնամոց բարձրելոյն, և յիրաւի՝ քանզի որպէս ի նախընթաց թուղթս յիշեցաք, աւուրբք ինչ յառաջ քան զառաջարկել մեզ Վեհիդ ինքնին զդժուարութիւն փոխադրութեան վարժարանիս յայլ ուրեք, առաջարկեցին մեզ աստ կուսանք ոմանք վաճառել իւրեանց զպալատս, համարելով թէ յոյժ մեծ է այս վասն 25 մանկանց վարժարանիս, և մեր կասկածեալ զառաջինն զգանազան հակառակ կողմանց, չտուաք նոցա ինչ պատասխանի, մինչև եհաս թուղթն առաջարկութեան Ձերոյ:

« Յայնժամ քաջալերեալ մեր անտի պնեա եղաք տեղեկանալ, թէ ո՞յք իցեն կուսանքն այնոքիկ, և թէ արդարև ունիցին նոքա կամս և կարողութիւն գնելոյ զպալատս. և ահա տեղեկացաք զի էին նոքա կուսանք ի կարգէ սրբոյն Բենետիկտոսի, և ունէին ընդարձակ վանատուն ի թաղըլ անուանեալ տեղին, որ ի քաղաքիս, և սակս վերջին փոփոխութեան Պետութեանս, հանին զնոսա անտի, կարգելով զտեղին նոցա ի պէտս զինուց պահապան զօրաց քաղաքիս, և այժմ բնակին նոքա ի վարձու կալեալ ինչ տան առանձին։

« Վասն որոյ խնդրեն զյարմար ինչ տեղի զոր մերն համարին, ոչ միայն ըստ յարմարութեան, որ նման է վանատան իւրեանց, այլ և ըստ գեղեցիկ և ըստ սքանչելի դիպուածոյն. զի առաջին տէր և կառուցանող պալատանս, Դքսուհին Կոնտէ, և հիմնադիրն և բարերարն իւրեանց, վասն այսորիկ սատտիկ խմն հարեալ է նոցա ի սէր պալատանս, առ ի պահել զյիշատակ բարերարին իւրեանց, և ի վայելել զնորին իսկ բնակութիւն, յոր բնակէր և ննջէր Դքսուհին, և վասն այսորիկ որչափ ինչ գին պահանջեցաք, 500,000 ֆրանք, հաւանեցան ընդ այն, հանդերձ պայմանօք. այսինքն՝ .

« Նախ՝ պարտին հատուցանել զմի մասն գնոյ պալատանս, և զմիւս մասն ի յանձնել մեր նոցա զտունն։

« Երկրորդ՝ տալ մեզ ժամանակ ամիսս վեց մինչև գլուցուք մեք այլ տեղի բնակութեան։

« Եւ երրորդ՝ չպահանջել ի մէնջ վաշխ վասն յառաջագոյն հատուցեալ արծաթոյն։

« Յանձն առին նոքա զայս ամենայն յօժարութեամբ, և զայս յայամ ժամանակի, յորում բազում մեծամեծ և հոյակապ պալատք եղեալ կան ի վաճառ կէս գնով, և չիք որ գնող, սակս փոփոխութեան տէրութեանս, և առ երկիւղի քաղաքական խռովութեան, և ի յանդման բնակութեանց։

« Զիցէ՞ այս գեղեցիկ և սքանչելի դիպուած և յաջողութիւն մեզ ի մասնաւոր խնամոց Բարձրելոյն... ապա մնացէ՞ Վեհիդ սակաւին տարակուսիլ, չառաքել մեզ փութով զիր գործակալութեան։ ... Մեք ընդ այս ոչ տարակուսիմք, տե-

զեկանալով Վեհիդ զհանգամանաց վարժարանիս, և ունելով փոյթ մատակարարել համօրէն ազգիս զՆորհս Բարերարին ի յլրումն կամաց Նորին.

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 23 փետր. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս, յորում ծանուցանէ զրացասական կամս վանական ժողովոյն որ ընդ առաջարկութիւն վաճառելոյ զպալատն և փոխադրելոյ զՄուրատեան վարժարանն ի Պօլիս, և ցուցանէ զկարևորութիւն գնալոյ Հ. Յովհաննու ի վանս վասն խնդրոյն այնորիկ, օրինակ զայս.

« *Յարգոյապատիւ և Վ. Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրալիր ողջոյն մեծարանաց.*

« *Որպէս կանխեցի գրել նախընթացիւս՝ զառաջարկութիւն ձեր որ վասն փոխադրութեան վարժարանիդ ի Կոստանդնուպօլիս առաջի արարի ժողովոյ խնամակալաց, տուեալ Նոցա ժամանակ խորհելոյ և խօսելոյ համարձակ. և տեսեալ զի Նոցա ամենեցուն միտք և խորհուրդք ի հակառակն կոյս միտէին՝ հանի զիրսն և ի ժողով վանական, և այն իսկ խօսեցեալ յերկար և զերկուստեք պատճառսն համոզիչս ի մէջ առեալ՝ հուսկ ուրեմն միաձայն քուէարկութեամբ ժողովանականացն ժխտողական եղ որոշումն, որպէս երևի այն և ի թղթոյ ժողովոյն զոր ահա ծրարեմ ի սմին.*

« *Յորմէ երևի զի կամ չէ խելամուտ լեալ ժողովոյն որպէս պարտն է զօրութեան փաստիցն Ձերոց, և կամ զի աւելի յոյժ քան զոր ի Ձեզն՝ առնեն ի մեզ ազդեցութիւն վտանգի փոխադրութեանդ՝ և երկիւղ յաղթական օգտութեանցն.*

Այլ վասն կարեւոր է յոյժ փութով գալուստ այսր Վ. Հօր Յովհաննու, զի կենդանի բարբառով խօսեցեալ երկուստեք՝ կա՛մ Նա ինքն զժողովականացն յաղթահարեսցէ զմիտս, եւ կա՛մ բանից ժողովոյն ինքն տուեալ տեղի որոշեսցի փութով խնդիրն մեծ եւ ծանր ։ . . . .

. . . .

. . . .

« Զայլ ինչ չունիմ գրել ի ժամուս, բայց սիրալիր ողջունիւ Յարգոյ Վ. սրտակցացդ ցանկամ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 21 փետր. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ.

« Արքեպիսկոպոս եւ ընդ. Աբբայ. »

ԳԼՈՒԽ ԻԲ.

Բողոք Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ ընդդէմ յանդուգն գրութեանց Հ. Եսայեայ առ ինքն. — Անփոյթ լինի ընդ այն Գեր. Հիւրմիւզ. — Առնէ Հ. Սարգիս զարժան պատասխանին գրութեանց նորին.

Հ. Եսայի Մզրաքեան գործակալ կալուածոց Մուրատեան վարժարանին ի Պատուիոն, զամս երիս ոչ դադարէ ցաւեցուցանել զսիրտ Հ. Սարգսի անիրաւ եւ յանդուգն բանիւք գրութեան իւրոյ։ Բողոքէ ընդ այն Հ. Սարգիս առ Գեր. Հիւրմիւզ, առաքելով Նմա զպատճէնն նամակաց Հ. Եսայեայ եւ խնդրէ առնել իրաւունս անաչառութեամբ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Յերից եւ առաւել ամաց հետէ ջանացայ ես յամենայնի

խաղաղութիւն ընդ եղբարս ունել որ ի գործ յայս վարժա-
րանիս, խոհեմութեամբ վարեալ ընդ նոսա, մերթ չիմանալոյն առնելով զխիստ քննութիւն և զանիրաւ դատաստան ուրումն որ զգնացիցս, և մերթ չպատասխանելով յախուռն և յանդուգն բանից գրութեան նորին որ առ իս. սակայն ի վերայ այսր ամենայնի չէթող նա զիս երբեք ի լռութիւն խաղաղութեան կալ, բռնադատեալ շարժել զգրիչս յարժան պատասխանին թղթոց իւրոց, զորոց զպատճէնս տեսանէք ի սմին, բերեալ ի հաւաստի գիտութիւն Ձեզ և ի քննութիւն անաչառ, մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 15 փետր. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Եւ յանփոյթ լինել Գեր. Հիւրմիւզի զայսմանէ՝ հարկաւորի Հ. Սարգիս առնել զարժան պատասխանին թղթոց Հ. Եսա-յեայ Մգրաքի, մի առ մի յառաջ բերելով զամենայն բանս թղթոց նորա և յանդիմանելով զնա, հանդերձ քննութեամբ որ զթերութենէ վարչութեան Գեր. Հիւրմիւզի, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Ըստ անդադար պահանջանացդ, և ըստ երբէք երբէ.ք խոստմանս, ահա զամ հատուցանել զբովանդակ պարտիսն իմ միանգամայն, պատասխանել ամենայն բանից գրութեանցդ որ առ իս. հայեցեալ ի խնդիր մատակարարութեան վարժա-րանիս, ունելով բանից առաջին գրութեանդ այսպէս.

« — Աղաչեմ զՁեզ, ընդէ՞ր ստիպէ.ք զիս ի գրել և յիշե-
« ցուցանել զանհաճոյականսն, զի՞նչ օգուտ տեսաք մե.ք
« ցարդ ի գրելոյ... ո՞չ ապաքէն ի զաւն և ի կսկծեցուցիչ
« գրուածոց ձանձրացեալ և յափրացեալ եմք: »

« Արդարեւ արարք և աղաղակ Հրէի, որ հարկանէ զդյլազ-գին և աղաղակէ, թէ ընդէ՞ր հարկանէ զինքն: ... Ո՛չ ապա-

քէն զատնութիւն և կծուութիւն բանից որ զայլոց ի Թուղթս ձեր զտանին, գրեալք ի սեպտեմբերի և ի հոկտեմբերի 1846 ամի, և զոր ոչ արժանի պատասխանւոյ արարի, համարելով զայն յանհաստատ և ի կասկածոտ մտաց յառաջ եկեալ: Իսկ ի Թուղթն իմ որ առ Ձեզ ոչ այնպիսի բանք գոն բնաւ ամենևին, այլ տեղեկութիւն միայն, ըստ խնդրոյ ձերոյ, և հարևանցի իմն ակնարկութիւն բանից որ ընդ լքումն սրտիս ի գործ յայս վարժարանիս, և քաջալեր բանք առ ձեզ, չհամարել զարծաթն ի կորուստ, զոր տուաք ի գին պալատանս և ի նորոգութիւն սորին: Ահա այսպիսի բանիւք և իմաստիւք գրեալ էր Թուղթն իմ առ ձեզ:

« — Արդարև պատրաստեալ էի, ասէք, զպատասխա-
« նին Նամակի ձերոյ, յորում ծանուցանել փութայի մի առ
« մի զհակառութիւնս զոր խորհեալ և գրեալ էիք ի Նմին,
« այլ իբրև լուայ զբանս վերջին Նամակի ձերոյ որ առ Գե-
« րապայծառ Արքահայրն, որ լի է, ըստ դատմանս իմում
« անատեղութեամբ և անհամութեամբ, յայն աստիճան զաւ-
« նացեալ էր ոգի իմ, մինչև խորհէի առեալ զգլուխ իմ
« փախչել յանկիւնս ուրեք աշխարհի, առ ի չլսել և զանուն
« անգամ Հայոյ: »

« Թէպէտ վայրապար և յախուռն խօսակցութեանդ փորձ էի բազում անգամ, այլ ոչ գրութեանդ, և այն յայսպիսի պատեհութեան: . . . Եւ արդ՝ հարցանեմ ձեզ նախ՝ թէ ըզբանս վերջին Նամակիս որ առ Գեր. Արքահայրն, ուստի լուայք դուք. ի Նմանէ՞ թէ յայլ ուստեք: Եթէ ի Նմանէ, լուիջիք արդ և զբանս պատասխանւոյ Նորա որ առ իս, և որ ունի օրինակ զայս.

Յարգոյապատիւ և Վերապատուելի Հ. Սարգսի վարդապետի սիրելիր ողջունիւ խնդալ.

« Ցաւեաց և ցաւէ ինձ յարդ մեծապէս, զի այնպէս այլ ընդ այլոյ տուեալ է իմաստս Վերապատուութեանդ Թուղթն իմ գրեալ ի 24 հոկտեմբերի անցելոյն, զոր ոչ եթէ յարհա-

մարհութիւն Ձեզ և ի յանդիմանութիւն, որպէս կարծին, գրեցի, այլ մանաւանդ յարդարացումն և ի պատիւ,...

« Ողջ լինել մաղթելով

« Յարգողապատիւ Վերապատուութեանդ

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

« Ահա պատասխանին թղթոյ իմոյ, լի եղեռոյ անտանելու-բեամբ և անհամբերեամբ ըստ դատման ձերոյ ։

« Ասիցէք արդեօք ըստ կարծեաց ձերոց, թէ առ խոհեմու-թեան և խաղաղութեան տուեալ իցէ նա այսպիսի պատաս-խանի ։ . . .

« Ասեմ ես, եթէ վերագոյնն այսպէս պարտ համարեցաւ վարիլ ընդ իս, չէ՞ր պարտ ստորագունից նոյնպէս վարիլ, ճանաչելով զչափ անձինց և զաստիճանց ըստ ամենայն բ-նի։

« Հարցանեմ ձեզ երկրորդ՝ թէ յո՞ր անկիւնն աշխարհի կա-միք դուք փախչիլ, առ ի չլսել և զանուն անգամ Հայոյ ։

« Կարծեմ ես թէ ի Տփխիս, որպէս ապերախտ Հրէայք, որք կամէին դառնալ յԵգիպտոս, յիշելով զսոխն և զխստորն, զախորժելին քմաց իւրեանց, յափրացեալք ի մանանայէն, յերկնային պարգևէն. նոյնպէս և ձեր յիշելով արդեօք զեր-բեմն զուարճութիւնդ որ ընդ վրացի քահանայս, նստեալ ի գուլիթ եկեղեցւոյն պատմէին քեզ առասպելս ըստ քմացդ ։ Բայց ոչ յիշէք դուք, զի գտանին անդ և Հայ, զորոյ և զա-նուն անգամ ոչ կամիք լսել . . . և զի չգտանին ձեզ անդ կաք և երփվարք, որպէս այդր ի Պատաւիոն, յոր եկեալ շրջիք ի զբօսանս աչացդ, այլ և ոչ տեսութիւն ոսկեզբանից ի զու-արճութիւն մտացդ և ի ծախս զինչպիսութեան կամացդ . . . քանզի ոչ գոն անդ կղուածք Մ. վարժարանին, բայց եթէ հոգալով ձեր զայսմանէ վրացի նախատանութեամբդ ։ . . .

Ով մեծի ապերախտութեանս. զնորհս Հայոյ վայելելով վայելէք, և զանուն նորին ապարանելով ապարանէք ։ . . ։ Գի-

տէր ես զի խչամեղուն զարգիւնս վաստակաւոր մեղուաց ուտէ, այլ ոչ գիտէի թէ նա և զվաստակաւորսն չարաչար խայթէ։ Տեսանէ՞ք, վայրապար և յախուռն գրութիւնդ ո՞ւր տարեալ հասուցանէ զանաչառ քննութիւնս։

« — Քանզի այնու գրուածովդ ոչ այլ ինչ արարէք, ասէք,
« միայն յայտնեցէք նախ զմեծ հակառութիւն բանից ձերոց,
« թէ զի՞նչ խորհէիք յՒտալիա և այժմ զի՞նչ խորհիք ի Փա-
« րիզ։

« Երկրորդ՝ զառն նախատինս հասուցանէք՝ որոց պաշտ-
« պան և ջատագով կայիք վասն ձեր։

« Եւ երրորդ՝ զորոց ատգտանօք խօսէիք յայտնեցէք զար-
« գար զօլն նոցա։

« Զայսոսիկ երիս խօսս իմ կարեմ զօրաւոր փաստիւք ապա-
« ցուցանել ձեզ, այլ ոչ կամիմ թշնամանալ ընդ ումեք, զի
« չէ զիւրին յետ վիրաւորելոյ բժշկելն։ »

« Առ այս անոճ գրութիւնդ և կարծեցեալ զօրաւոր փաստդ՝ ասեմ նախ թէ պատասխանին թղթոյս տուեալ ի Վենէն, բաւական և շատ է ձեզ ի յանդիմանութիւն, և ի յայտարարութիւն խորհրդոց իմոյ այդր յՒտալիա և այսր ի Փարիզ։

« Երկրորդ՝ թէ արդեանք իրաց ինքնին վկայեն կարողութեանս իմում, որ ի գործս յայս. ապա չունիմ ես կարօտութիւն պաշտպանի և ջատագովի ումեք յայն, և ապա չեմ ես պատճառ կարծեցեալդ դառն նախատանաց նոցին։ . . .

« Եւ երրորդ՝ թէ զորոց ատգտանօք խօսէի ես երբեմն այդր, խօսիմ ես նոյնպէս և այժմ աստ, և զայն ուղղակի դէմ յանդիման իսկ նոցա, և ոչ ընդ ակն ածեմ, բայց իրաւամբք և արդարութեամբ, չզլանալով ումեք զարժանն, ըստ արդեանց իւրաքանչիւր գործոց իւրեանց, որպէս և յայտ է ի բանից այն թղթոյ իմոյ որ առ ձեզ, գրեալ ի 18 նոյեմբերի 1846 ամի.
« Թէպէտ և անփորձութեամբ և անզգուշութեամբ, հայե-
« ցեալ ի հանգամանս մասնաւորացն և ժամանակիս. » Որով յայտ է, թէ ես ոչ արդարացուցանեմ զոք յամենայնի, այլ և ոչ իբրև ՝ ձեզ զատապարտեմ զոք յանիրաւի վայրապար և

յախուռն գրութեամբ, չճանաչելով զեօթնամեայ վաստակս առն, որ ի պաշտպանութիւն իրաւանց աղքատաց ազգիս և միաբանութեանդ. զի եթէ չէր նորա ընդ իս զամիսս եօթն ի Վիեննա առ դրունս իշխանաց տառապեալ, բանիւք բերանոյ և գրով վիճեալ, և եթէ չէր նորա զնոյն ջանս և աշխատութիւն ընդ իս ի Լոնտոն և ի Փարիզ յանձն առեալ, համարէի՞ք դուք արդեօք բացարձակ գործակալ կալուածոց Մ. վարժարանին. ոչ բնաւ, ոչ երբէք:...

" Յուշ լիցի ձեզ նշանաւոր խօսքն Բալֆի քաղաքապետին Վիեննայոյ, որոյ ի խօսել զդպրոցէս առաջեալ իցէ, թէ
" Աւստրիայն ոչ ննջէ, այլ դիցէ ի գործ զամենայն ջանս իւր
" մինչեւ դարձուսցէ յԻտալիա զդպրոցս, և այլն և այլն:"

" Զարհուրեալ ձեր յանժամ ի սպառնալեաց բանից նորին՝ փութացայք ծանուցանել ինձ զայն գրով, որ ի 11 հոկտեմբերի 1846. վասն որոյ և մեր փութացեալ ի թերեւս հանել զբանս սպառնալեաց նորա՝ հաստատեցաք ըստ զվարժարանս արդեամբք գործոց, գնելով զպալատս ի ստացուածս վարժարանիս: Ապա յետ սակաւ ամսոց պաշտպանելոյ զիրաւունս աղքատաց ազգիս և միաբանութեանդ ի բռնութենէ Աւստրիոյ տէրութեան, մոռացայք դուք բոլորովին զամենայն վաստակս վաստակաւորացս, գրելով առ իս զայս գիր անխնայ բանիւք:...

" Ո՛վ մեծի ապերախտութեանս և անհնարին անզգայութեանս:...

" Ապա չկարէք դուք զայսուիկ երկս անհիմն, վայրապար և տարապարտ խօսս ձեր ապացուցանել. և ապա կամեցայք դուք արդեամբք իսկ և համարձակ թշնամանել զմեզ, խոցոտելով զսիրտս մեր ամենեցուն առհասարակ, զոր արդարեւ ըստ վկայելոյ խղճի մտացդ, չէ դիւրին բժշկել, յետ վիրաւորելոյն. քանզի բժիշկ էք դուք մեղանչական, և ոչ վիրաւոր ի դարման:...

" — Այլ յոյժ զարմանամ և ցաւիմ, ասէք, ի վերայ այլ
" ընդ այլոյ գրութեան Վերապատուութեանդ և Վ. Հ. Յով-
" հաննու: Կանխաւ, ասէիք, թէ այնքան նոր է պալատն,

“ մինչեւ չկարօտի և բեւեռի միոյ, և այժմ ծախեցիք “ 60,000 ֆրանք ի նորոգութիւն նորին. կամ չիք ի ձեզ խո- “ հական կառավարութիւն և կամ խաբել ջանայք զմիաբա- “ նութիւնս: ”

“ Իսկ ես ոչ բնաւ զարմանամ ընդ տգիտութիւնդ ի բանս յայս, ճանաչելով քաջ զկարճմտութիւնդ յուշագրութիւն կարեւոր իրաց հասարակաց, որպէս և բազում անգամ տե-սաւ ի ժողովի անդ խնամակալաց, յոր և ոչ քառորդ մի ժա-մու կամէիք և կարէիք իսկ ուշ դնել բանից առաջարկու-թեանց անդ, մնալի ինչ պատճառս տուեալ՝ մեկնէիք անտի շտապաւ, վայրապար ծախս ճանապարհի առնելով, երթեւե-կելով ի Պատաւիոնէ ի Վենետիկ: Ընդէ՞ր միոյ եւեթ բանից թղթոյ մերոյ ուշ եդեալ էք, և ոչ միւս բանիցս որ ի թղթի անդ, թէ՝ կարօտի պալատս սակաւ ինչ ծախուց, յարմարելոյ զայն ի դպրոց, զորոյ զպատկերն ես անձամբս ածի ի վանս, գծագրեալ այն ի Գաղղիացի ճարտարապետէն, հանդերձ ծախիւք հաշուին, որ ընդ ամենայն լինէր 38,000 ֆրանք, և ցուցի ես զայն ոմանց ի վանս, և թողի զերկրորդ օրինակն նորին անդ:... Ապա չիք այլ ընդ այլոց ինչ ի գրուցիցն մեր, այլ թերութիւն ի ծանօթութեան ձերում:...

“ Բայց ես յոյժ յոյժ զարմանամ և հիանամ իսկ ընդ յան-դուգն և ժպիրհ համարձակութիւնդ յասելդ. Կամ չիք ի ձեզ խոհական կառավարութիւն, և կամ խաբել կամիք զմիաբա-նութիւն: Վասն որոյ հարցանեմ ես ձեզ նախ՝ թէ որո՞յ ջա-նիւք և աշխատութեամբ ստացաւ միաբանութիւնդ զարծաթն կալուածոց վարժարանիս. անխոհեմի՞ և խաբերայի՞ ուրուք: Եթէ ի գործառնութեան երկու միլիոն ֆրանքի, և յայն մի-այնակ, և անբաւ հեռաւորութեամբ ի վանաց իւրոց՝ խոհա-կան և հաւատարիմ գտաւ նա, գտանիցի՞ արդեօք անխոհեմ և խարդախ ի գործառնութեան 60,000 ֆրանքի, և յայն ընկերաւ և ի մօտոյ:

“ Հարցանեմ ձեզ երկրորդ՝ թէ զի՞նչ իցէ պաշտօն ձեր ի գործ յայս վարժարանիս, և զի՞նչ իշխանութիւն ձեր աստ: Ո՞չ ապաքէն գործակալութիւն կալուածոց վարժարանիս միայն,

այսինքն ժողովել զեկամուտն և յանձնել զայն ուղղին ի մատակարարութիւն վարժարանիս ։ Ապա որո՞վ իրաւամբք և իշխանութեամբ քննէք դուք զգործ ուղղին և դատիք զնա այսպէս ։ . . . Տեսանէք դուք զյանդուգն և զժպիրհ համարձակութիւն ձեր և զեղծումն յիշխանութեանդ ։ . . .

« Համարիցի՞ք դուք արդեօք թէ եկամուտ կալուածոց վարժարանիս արդիւնք վաստակոց ձեր իցեն ։ Ո՞չ ապաքէն արդիւնք վաստակոցն նոցա են, որոց ոգւով չափ աշխատութեամբ ի ձեռս բերին զգրամագլուխն կալուածոց վարժարանիս, և որոց բազում զգուշութեամբ եդին զայն ի վերայ գետնոյ, և ետուն զարտորայսն ի վարձու վարձաւորաց ։ Եւ դուք այժմ առանց ինչ աշխատութեան յարդիւնս նոցա վայելէք, և զարդիւնականն՝ չարաչար դատիք և անհնարին նախատէք ։ . . .

« Այլ և ո՞չ համարիցիք դուք թէ պաշտօնդ այդ և եղբայր ոք ի վանացս կարիցէ պաշտել, նստելով ի պալատանն Զաքքօի և ընդունելով զարծաթն ի ձեռաց Խտալացի գործակալաց, և առնելով Խտալացի գրագրին նշանակել զայն ի հաշուեմատենին, և գնալով երբեմն կառօք յայց անդաստանաց և ի տեսութիւն արմտեաց ։ . . .

« Եւ երանի՛ թէ ունէիք դուք սակաւիկ ինչ ծանօթութիւն երկրագործութեան, կամ գոնէ չվնասէիք պտղաբերութեան կալուածոց՝ ագահութեամբ և բնածին կծծութեամբդ, . . . և ընդ որ լուայ երբէք երբէք զբանաւոր գանգատ յԽտալացի գործակալաց, և ընդ որ թէպէտ կարէի ես ազդ առնել ձեզ այլ ոչ արարի, ակնածելով մի՛ արդեօք ծանր թուիցի ձեզ իրաւունս տալ նոցա . . . սակայն դուք առանց ակնածութեան, մանաւանդ թէ յանդուգն ժպրհութեամբ նախատէք զիս ի պաշտօն իմ յայս ։

« — Եւ մեք պարտաւորեալ եմք այժմ, ասէք, հատուցա-
« նել վաշխս 15,000 ֆրանք ի տարւոջն. եթէ ձեր վարեալ
« էր խոհականութեամբ, փոխանակ այլում տալոյ զվաշխս՝
« կարէիք ծախել զայն ի վերայ պալատիդ ։ Ահաւասիկ եղեալ
« անիրաւութիւն աղքատաց ազգիս ։ »

« Յորժամ ոք ագահութեամբ լցեալ է և ի կրից շարժեալ

բերի ի գրութիւն, հարկաւ առանց հետեւանաց և հակառակութեամբ բանից լինի գրուածնորին, որպիսի է և այս գրուած ձեր ։ Եւ յիրաւի՝ քանզի նախ ասացիք, թէ պատրաստեալ էիք զպատասխանին նամակին իմոյ . . . այլ իբրեւ լուայք զբանս վերջին նամակին իմոյ առ Գեր. Աբրահամն, յայն ատենն զառնացեալ էր ոգի ձեր, մինչեւ խորհէիք փախչիլ յանկիւն ուրեք աշխարհի ։ Ապա մոռացեալ ձեր զայն՝ սկսայք ցուցանել մի առ մի զկարծեցեալ հակասութիւն բանից իմոց, որպէս ի բանս յայս . « Եթէ վարեալ էր ձեր խո-« հեմութեամբ՝ փոխանակ այլում տալոյ զվաշխս կարէիք, » և այլն ։

« Արդ հարցանեմ ձեզ, եթէ չէր մեր գնեալ զպալատս՝ պարտաւորեա՞լ էիք դուք հատուցանել վաշխս 15,000 ֆրանք ի տարւոջն ։ . . .

« Տեսանէք զանհետեւողութիւն և զհակառակութիւն բանից ի գրուածի ձերում ։ . . .

« Ապա ես ասեմ, և իրաւամբք, եթէ խոհականութեամբ շարժեալ էր ձեր երբեմն ի խնդիր փոխ արծաթոյն, մեք այժմ ոչ ի նեղ մտեալ տագնապէաք և պարտաւորեալ հատուցանէաք 6 առ 100 վաշխ ի տարւոջն. և զայս անխոհեմութիւն ձեր՝ գրագիրդ իսկ պատմեաց ինձ այդր, հանդերձ մեղադրանօք. քանզի գնացեալ ձեր ի Վեննետիկ յայտնեցիք զկարօտութիւն մեր երբայեցի սեղանաւորին, և նա միջնորդաց ոմանց, յորոց բերանոյ ի բերան եհաս լուրն այն առ օրին ի Պատաւիոն, և դժուարացոյց զգործն, ծանոյց հասարակաց զպարտիս մեր հանդերձ ոչ վարկիւ որ զմէնջ ։ . . . Եւ եթէ ըստ ժամանակին փոյթ կալեալ էր ձեզ անցուցանել այսր արծաթ ի շահեկան փոխանակագիրս, մեք ոչ պարտաւորէաք առս վաճառել զփոխանակագիրսն զեղչմամբ, և ոչ 6 առ 100 փոխ արծաթ առնուաք, որով առաւելան ծախք վարժարանիս և չաւարտեցաւ ցարդ հատուցումն պարտուց սորին ։ . . .

« Ահաւասիկ եղեալ սեփհականութիւն աղքատաց ազգին և նախատինք հասարակութեան, յառաջ եկեալ ի անգիտութենէդ որ ի գործ անտեսական, և ի հակառակութենէ կամացդ որ

ընդ մեզ աստ։ . . . Տեսանէ՞ք թէ ուստի՞ իցէ անխոհեմութիւն, և ուստի՛ անիրաւութիւն աղքատաց ազգիս, ոյլովքն համ-գերձ։ . . .

« Զայս թերութիւն վնասակարութեանդ ի սկզբանէ անտի տեսի ես, այլ լռեցի առ խոհեմութեան և խաղաղութեան. և ոչ այսչափ միայն, այլ և քաջալեր և քաղաքավար բանիւք գրութեանս յորդորեցի զձեզ չվնասել ընդ ծանրութիւն ծա-խուց գնոյ սեւեռ վարժարանիս, որք ոչ ի կորուստ են, այլ ի շահեկան առացուածս սորին։ . . .

« Բայց դուք ոչ զխոհական լռութիւն իմ ծանեայք և ոչ զխաղաղութիւն յեղբարս համարեցայք ինչ առնելով թղթոյ իմոյ պատասխանի յանդուգն համարձակութեամբ, վայրա-պար և յախուռն բանիւք գրութեանդ։ . . .

« — Յիշեցէ՞ք արդեօք, ասէք, թէ ցարդ անցուցեալ եմք
« ի Փարիզ 500,000 ֆրանք, յոր յաւելեալ զայժմեան պարտս
« մեր՝ կարէք ըմբռնել զսարսափելի մեծութիւն գումարիդ։
« Եւ պատճառ այնքան անհնարին ծախուցն ոչ այլ ինչ է,
« բայց միայն անխոհեմութիւն, որ է ասել, ոչ մտածել
« զապագայն. և երկրորդ՝ ունայնասիրութիւն, իբրու զի
« կամեցայք երեւելի լինել առաջի Գաղղիացւոց և այն ի Փա-
« րիզ։ »

« Յիշեցէք և դուք արդեօք զգրով յայտարարութիւն իմ երբեմն որ առ հանգուցեալ Գեր. Սոմալ, որով ծանուցի նմա և միաբանութեանս զգին պալատանս, ուրոյն ուրոյն նշանա-կելով այսպէս, 360,000 ֆրանք ի գին պալատանս, և 30 հա-զար ֆրանք ի ծախս դարձուցանելոյ յանուն վարժարանիս զմուրհակն պալատիս, ընդ ամենայն 390,000 ֆրանք։ Եւ խնդրեցի ի նմանէ զհասարակաց հաւանութիւն ընդ այն վա-նական ժողովով և քուէարկութեամբ, զորոց և զհաւանութիւն կամաց ընկալայ հանդերձ գրով գործակալութեան ի գնել զպալատս։

« Այս չեմք անխոհեմութեամբ, այսինքն առանց մտա-ծութեան գործեալ, և ոչ ըստ փցուն կարծեացդ, առ ու-նայնասիրութեան զպալատս գնեալ, այլ ի պաշտպանութիւն

իրաւանց աղքատաց ազգիս և միաբանութեանս որ ի բռնութենէ Ասորիացւոյն, հաւատոյ տալով Գաղղիացւոյն, թէ փոխադրութիւն վարժարանիս ըստ հաստատութեամբ և մըշտընջենաւոր է, և յերեւելի յիշատակ Բարերարին, ընդ երախտագէտ մտաց մերոց ։

« — Ես չասեմ բնաւ և ոչ ընդ միտս իմ խորհիմ, ասէք, « թէ չարութիւն կամ անզգամութիւն կայցէ ի գործս ձեր․ « քաւ լիցի, այլ զայս միայն ասեմ, զի եթէ անխոհեմութեամբ « իցէ գործդ և եթէ չարութեամբ, վնաս մի և նոյն ։ »

« Եւ ոչ ես ասեմ և բնաւ խոկ խորհիմ, թէ առ թշնամութեան է գրութիւնդ․ քաւ լիցի, այլ առ անզգայութեանդ և անմտութեանդ խոկ, չունելով ձեր բնաւ զգայութիւն և միտս հասարակաց ։

« Ընդ այս միայն ցաւիմ և մեծապէս ցաւիմ, զի այսպիսի անձին հաւատացեալ է գործս այս հասարակաց․ և յիրաւի, քանզի եթէ ընդ համասուն եղբարսդ և ընդ միայնակ վաստակաւորսն յայս գործ վարժարանիս այսպիսի անպատեհ գնացիւք, անզգայութեամբ և անմիտ գրութեամբ վարիք, ապա որպիսի ընդ այլս, ընդ Իտալացի գործակալսն, ընդ վարձաւորն և պաշտօնեայս տէրութեանդ ընդ որոց հարկ է ձեզ ունել գործառնութիւն, և որոց լեզուին, դժբաղդութեամբ չունիք բաւական ծանօթութիւն, ոչ գրով և ոչ բերանով, որպէս պարտն է և պէտք են գործակալիդ (*) ։ . . .

(*) Խիստ յոյժ և տարապարտ բանք համարեցին արդեօք ի պատասխանիս յայս, վասն որոյ հարկ համարիմք ծանուցանել ըստ զպատճառսն, զթերութիւն և զվնասակարութիւն Հ. Նաայեայ ի պաշտօն գործակալութեան, և զյանդուգն գրութիւն նորա առ Հ. Սարգիս տեսուչ Մ․ վարժարանին ։

Զամս հինգ վարէ նա զպաշտօն գործակալութեան կալուածոց Մ․ վարժարանին խորհրդով և գիտութեամբ Հ. Սարգսի ։ Իբրեւ փոխադրի Մ․ վարժարանն ի Պատաւիոնէ ի փարիզ, վարէ նա զայն պաշտօն ըստ ճանաչման և բնաւորութեան իւրում, վասն որոյ վնասէ աղքատաց ազգին, թողլով նախ անխնամ և անպըտուղ զարտորայս, առ տգիտութեան և կծծութեան իւրում, ըստ վկայելոյ վարձաւորաց և այլ գործակալաց անդ, երկրորդ՝ չճանաչելով զթերութիւն և զվնասակարութիւն իւր ի պաշտօնն յայն, յանդգնի գրել գիր յանդիմանութեան և գրպարտութեան առ Հ. Սարգիս, իբրեւ առ գող և վատնիչ ընչից աղքատաց ազգին, և ընդ այն բողոքէ առ Աստուած Տէր նոցին ։

Առ այն յանդուգն և անիրաւ գրութիւն նորա առնէ Հ. Սարգիս պատասխանի ամօք բանիւք և հաւաստեօք, ցուցանելով նմա զօգտակար արար իւր, զգնումն պալատանն որ ի Փարիզ, և որում տան այլք զնոյն գին յայնժամ, և այժմ

« Արդարեւ ցաւոց և ողբոց են համպամանք իրաց հասաւ֊
րակաց, կալուածոց վարժարանիս : . . .

« — Յայն աստիճան դառնացեալ է հոգի իմ, ասէք, մին֊
« չեւ հատեալ է քուն յաչաց իմոց : »

« Այո՛ հաւաստամ բանիցդ ըստ չափու զգայութեանդ, զի
եօթն և եթ ժամս ննջէք ի գիշերի, և երկու ժամ միայն ի ցերե֊
կի, հանդերձ խռկալով : . . . Բայց զարմանամ ես, զի տեսեալ
միաբանութեանս զձեզ յայս աստիճան դառնութեան հոգւոյդ
ոչ արգահատէ ձեզ, հանելով զձեզ ի պաշտօնէ այտի : . . .

« — Մի՛ համարիք, ասէք, թէ ոչ ջանայցեմ և ես ի վաճա֊
« ռել զտունս և զկալուածս ինչ. այլ եթէ ոչ յաջողին իրքն,
« զի՞նչ կարեմ առնել, առ ո՞ զխմեսցուք թէ եկայք գնեցէք : »

« Հաւատայի ես արդեօք բանից գրութեանդ, եթէ գործքդ
ոչ զհակառակն ցուցանէին, վաճառելով ձեր ոչ ջանիւքդ,
այլ ըստ զիպաց 20,000 ֆրանքի գետին կալուածոյն, և զը֊
նելով ձեր ջանիւքդ այլ գետին փոխանակ այնր : Թէպէտ և
աղդ առնէ ձեզ միաբանութիւնս անցուցանել զարծաթն զայն
առ ի հատուցումն պարտուց վարժարանիս, այլ դուք ոչ
անսացեալ էք բանից նորա, տնօրինելով զայն ըստ հաճոյից
կամաց ձերոց : . . .

ունել, Իբրեւ չհամոզի նա ընդ այն, և երկրորդէ զյանդուգն գրութիւն իւր
բազում անգամ, յայնժամ բողոքէ Հ. Սարգիս գրով առ Աբբայն Գեր. Հիւրմիւզ,
և խնդրէ ի նմանէ խրատել զնա. և իբրեւ չառնէ զայն Աբբայն ըստ արժանւոյն
և Հ. Ներսէս հանապազորդէ զնոյն, յայնժամ ստիպի Հ. Սարգիս յարդարութե֊
նէ առնել զվերոյիշեալ պատասխանին, և զայն ոչ ի վրէժխնդրութենէ անձին,
այլ ի լաւութիւն Նորին, որում և հանդիպի, առնելով Նորա այնմ զգզջական
պատասխանին, որպէս և տեսանի ի սմին :

Ահա պատճառք այսպիսի պատասխանւոյ Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Հօր
Ներսէսի, և հաստատութիւն այսոցիկ պատճառաց ահա վկայութիւն Հ. Անանիայի
որ ի Թուղթն իւր առ Հ. Սարգիս. « Զթողլով Հ. Ներսէսի և յիշատակութիւն
« անգամ զկարեւոր գործառնութեանց իւրոց, այլ զամենայն ինչ խառն
« ի խուռն անկարգաբար թողեալ մեկնի տասի գնալ ի Հնդիկս : »

Եւ վկայութիւն Գեր. Եդվարդի, որ ունի այսպէս. « Սքանչելիք ինձ եղեն
« ի Տեառնէ, զիել Հ. Ներսէսի ի պաշտօնէ գործակալութեան : »

Թողումք յիշատակել աստ զվնասակար գործակալութիւն Նորա որ ի խնդիր
Աղամալեան ժառանգութեան, և զցաւալից հետեւանսն որ անտի, զվայրապար
ծախսն առեմ գնալոյ Նորա ի Հնդիկս, և զողբալի մահ Նորին որ ի տրտմութենէ
և յարբեցութենէ պատահի, և այս ամենայն ի չանսալոյ Գեր. Հիւրմիւզի խոր֊
հրդոյ Հ. Սարգսի, որպէս տեսանի ի սմին . . . .

(Ծանօթութիւն Հեղինակին :)

« Տեսանէ՛ք արդ զհակառակութիւն բանից և գործոց ձե-
րոց ընդ միմեանս, զհանդերձ ստախօսութեամբդ։ . . .
« — Զայսօսիկ համարձակ գրեցի, ասէ՛ք, վստահանալով
« ի ներողամտութիւն ձեր. քանզի ի քաղաքիդ ի քամերայս
« խօսին համարձակ վասն օգտի ազգին իւրեանց, եւս առա-
« ւել մեք վասն օգտի վարժարանիս և միաբանութեանս
« պարտական եմք առնել զայն. և եթէ գիտէ՛ք յիմ վերայ
« վնասակար ինչ աղաչեմ զձեզ գրեցէ՛ք անխնայ։ »

« Ահա այսոքիկ և այսչափ է բովանդակութիւն բանից գը-
րութեանդ առ իս, տուեալ յ7 յունվարի 1847 ամի . . . և
ահա նովին համարձակութեամբ, որով համարձակեցայք դուք
գրել առ իս, արարի և ես գրութեանդ պատասխանի, վստա-
հացեալ ոչ ի ներողամտութիւն ձեր և ի կարծեցեալ աղա-
չանսդ՝ գրեցի անխնայ, այլ յանաչառ քննութիւնն և ի դա-
տաստան Վեհին մերոյ, որում ետու զպատճէնն թղ-
թոցդ և պատասխանեացս. զի ընթերցեալ նորա զայնս՝
արասցէ ինձ իրաւունս, ոչ ի վրէժխնդրութիւն անիրաւու-
թեանն որ ի ձէնջ առ իս, տուեալ իմ զայն յառաջագոյն
անզգայութեան ձերում, այլ ի դարման վնասուց Մ. վարժա-
րանին և միաբանութեանս, զառաջս առնուլ չարեացն, խա-
փանման ասեմ յառաջդիմութեան վարժարանիս և լքման
ձեռաց և սրտի պաշտօնէից սորին։ . . .

« — Քանզի ի քաղաքիդ, ասէք, ի քամերայս խօսին հա-
« մարձակ վասն օգտի ազգին իւրեանց, եւս առաւել մեք
« վասն օգտի վարժարանիս և միաբանութեանս պարտական
« եմք առնել զայն։ » . . .

« Առ այս ասեմ ես նախ՝ եթէ ի քաղաքիս լինիցի այդպի-
սի որ իբրեւ զձեզ համարձակախօս, կամ ի մենամարտու-
թիւն հրաւիրի, և կամ ի յիմարանոց դնի, իբրեւ յիմար ոք.
թէպէտ և առաջինն չէ ձեզ մարթ, այլ երկրորդն հնարաւոր
է, ունելով ձեր օրինակ երկուս յեղբարցդ այդր, որք ոչ
վնասակար իմիք և ումեք են երբէք։ . . .

« Եւ երկրորդ՝ երանի՛ թէ համարձակախօսութիւն բանից
գրութեան ձերոյ յօգուտ վարժարանիս և միաբանութեանս

լեցի, և ոչ ի վնաս նոյին աւհասարակ, հայեցեալ յարդիւնս գործոց համարձակախօսիդ : . . .

« Զայս պատասխանիս թէպէտ և ամօք յառաջ, ըստ ժամանակին, արարի, այլ յապաղեցի առաքել ձեզ, ակն ունելով թերևս զգաստութեան ձերոյ, յետս կոչելոյ զանմիտ գրութիւնդ խոհական իմն այլ գրութեամբդ, և կամ գոնէ լռութեամբդ, չնորոգելով ձեր զնոյն վէրսն, չհանապազորդելովդ զնոյն յանդուգն գրութիւնդ : Բայց դժբաղդութեամբ վրիպեցայ ես յայս ամենայն ակնկալութեանցս. քանզի ոչ միայն ուղղակի գրութեամբդ առ իս, զորոյ հատեալ էի զաւիթն, երկար լռութեամբս ընդ ձեզ, այլ և անուղղակի գրութեամբդ որ առ այլ ոք յեղբարցս աստի, ստգտանելովդ զիս ի դրամական գործառնութիւն Աղանուրեանց, յաւելեալ էիք անդ զայս բանս.

« — Առիթ առեալ ի ներկայ գրութենէս հարկ համարիմ
« անձինս ծանուցանել Վերապատուութեանդ, զի երեք ամք
« են յորմէ հետէ կանգնեցաւ վարժարանդ ի Փարիզ, որոյ
« վասն ծախեալ եմք ցարդ լիրէ Աւստրիական ոչինչ նուազ
« քան զմի միլիոն, զոր կարեմք քաջ ապացուցանել, եթէ
« հարկն պահանջեսցէ : »

« Ասեմ ես և առ այս, թէ զպարտս պաշտամանդ լնուլ պակասի ձեզ առիթ, իսկ զանպատեհսն երկրորդել՝ չպակասի ձեզ պատեհութիւն, զոր և հարկ անձինդ համարիք. այո՛ վկայեմ և ես՝ իբրև կնիք սեպհական բնաւորութեանդ : . . . Ո՛չ ապաքէն յամենայն թուղթս ձեր զայն այս վայրապար բանս յեղյեղեալ էք. ընդէ՞ր և ի դմին երկրորդէք, վասն զի չարարի ես նոյին պատասխանի . . . ահա արարի զայն ի վախճանի, բռնադատեալ ի ձէնջ որպէս և տեսանէք . . . ապա աւելորդ համարիմ երկրորդել զնոյն աստ, այլ միայն արարից համառօտ իմն ակնարկութիւն զանազանութեան որ ի հաշիւն ձեր և ի մերն, վասն ծախուց վարժարանիս ցարդ :

« — Ոչինչ նուազ քան զմի միլիոն լիրէ Աւստրիական ծա-
« խեալ եմք, ասէք, վասն վարժարանիդ : »

« Եւ մեք ընկալեալ եմք ի ձէնջ ցարդ՝ ոչ աւելի քան զ691,736 ֆրանք Գաղղիական . Իսկ թէ այսչափ ֆրանք որչափ

մրէ Աւստրիական տանէ, զայն ձեզ թողում հաշիւ տանել, և յաւելուլ անդ և զայլ ծախսն զոր մեք ոչ գիտեմք, և բարդել ի վերայ որպէս և կամիք : . . .

« Իսկ թէ տարեւորական ծախքն վարժարանիս գերազանցեն քան զհնգտաս ոսկին, այն ձեզ ոչ անկանի մեզ գրել, և զկարծեցեալ հօգդ որ ընդ այն մեզ աստ ցուցանել, այլ նմա որում պատշաճ և հարկ է, ըստ պատուոյ և ըստ խղճի մտաց քննել և հոգալ : . . .

« Բայց ձեզ զայս միայն հարցանեմ, թէ ստէպ ստէպ յիշատակութիւնդ որ զմեծ գումարէ արծաթոյն, բերիցէ՞ արդեօք ձեզ ինչ պարծանս, և մեզ նախատինս, որպէս թէ արդիւնքն ի վաստակոց ձերոց իցեն, և ծախքն ի մէնջ և վասն մեր իցեն : . . . Ո՞չ ապաքէն արդիւնքն ի վաստակոց այլոց են, և ոչ ի ձերոց բնաւ, և ծախքն ի հարկէ լինին և վասն մանկանց վարժարանիս, ըստ կտակի հանգուցեալ Բարբերարին : Ապա մի՛ արդեամբք վաստակոց այլոց պարծիք, ի վերայ քսակի փարոյ այլոյ զանգակով, . . . և մի՛ տարապարտ հպարտացեալ ի վերայ ընկերացդ խիզախէք, վայրապար և յախուռն բանիւք գրութեամբդ : . . .

« Եթէ ունիք ինչ արդիւն վաստակոց ի գործ յայդ պաշտամանդ՝ զայն ցուցջիք մեզ, յորժամ հանդէս քննութեան լիցի . . . և եթէ ունիմք մեք թերութիւն ինչ ի մատակարարութեանս մերում աստ, յայտնեսցի այն ապա անաչառ քննութեամբ . . . Թողից ասել և զայլ արդեանց վաստակոցդ որք ի Հայաստան, ի Վիրս և ի Խրիմ, և զոր ի Հ. Մինասէ պարտ է հարցանել և գիտել : . . .

« — Արդ եթէ ներէք համարձակութեանս, ասէք, և իրա-
« ւունս տայք խօսելոյ համարձակ իւրաքանչիւր զկարծիս
« իւրեանց, տեսանեմ քաջ զի չիք համեմատութիւն ընդ ողոր-
« մելի վիճակ ազգիս, և ընդ արտաքին երեւոյթ փառաւո-
« րութիւն վարժարանիդ, եւս առաւել չիք և ոչ մի բաղդա-
« տութիւն ընդ գլխոյ դրամոյ Մ. վարժարանին և ընդ եղեալ
« ծախսն ի սակաւ ժամանակի : »

« Ասիմ ես, թէ ներել համարձակութեանդ և իրաւունս

տալ համարձակ խօսելոյ իւրաքանչիւր զկարծիս իւր, տուան երբեմն այնք, յամին 1838, ի վանական ժողովի անդ : Արդ՝ եթէ քաջ տեսանէք դուք թէ չիք համեմատութիւն ընդ վիճակ ազգիս, և ոչ մի բաղդատութիւն ընդ գլխոյ դրամոյ Մ. վարժարանին, ընդէ՞ր յայնժամ հաւանեցայք և դուք բանիւք և քուէիւք ընդ կառուցումն նորոգ վարժարանին ի Պատուխան, որ յոյժ առաւել փառաւոր լինելոց էր քան զայս ի Փարիզ, և յոր սոյնչափ արծաթ ունէր ծախել, և առաւել արդեօք, այն զի և գիտէաք իսկ, եթէ կամէաք ապա վաճառել զայն, և ոչ կէս արծաթոյն կարէաք ի ձեռս բերել, այլ ոչ նոյնպէս ի դէպս սորին. զի որպէս ասացի երբեմն, զնոյն ասեմ և այժմ և հաւաստեաւ, թէ ե՛րբ և կամիցիմք մեք վաճառել զպալատս գտցուք զծախեալ արծաթն մեր զոր ծախեցաք յայս :

« Եւ արդ՝ եթէ հաւանեցայք դուք յայնժամ ընդ կառուցումն վարժարանին այնչափ գումար արծաթով, ներեսցի՞ այժմ փոփոխութեան մտացդ, մանաւանդ թէ յանդգնութեանդ որ ընդդէմ կարծեաց հասարակաց. ոչ բնաւ . . . քանզի յանհաստատ մտաց և յարհամարհոտ բարուց յառաջ գայ խռովութիւն ի միաբանութեանս. Թողի՛ց յիշատակել աստ և զայլ բանաւոր պատճառսն : . . .

« — Եւ որքան խորին և անհաս լինիցին, ասէք, խոնարհ
« մտաց իմոց պատճառաբանութիւն և խրատունք Վերապատ-
« ուութեանդ յայսմ գործառնութեան, ի վերայ այսր ամե-
« նայնի ողբամ և ցաւիմ ես զաղետալի վիճակ ազգիս, զի
« այն փոքր մխիթարութիւնն զոր ունէր վայելել զաստիա-
« րակութիւն Հայ մանկտւոյն, կամ հանդերձեալ վերածել
« յոչինչ և կամ ի մխիթարութիւն անզգալի : »

« Գիտելով գիտեմ և ես և հաւանեալս եմ ի փորձոյ իսկ, թէ ոչինչ բանաւոր պատճառք և զօրաւոր խրատունք կարացին և կարեն երբէք ազդել կամակոր մտաց և անձնասէր կամաց այնորիկ, որոյ միայնակ մխիթարութիւն է տեսութիւն և շօշափումն ոսկեդրամոյ, և որոյ զուարճութիւն է կառօք շրջել ի ցերեկի, և զգիշերն անցուցանել ի զբօսանս ի թղթախաղու և ի խօսս զուեշտարար . . . և թէ պատճառ վերածելոյ փոքր

այն մխիթարութիւն Հայ մանկտւոյն յոյժ է, և այն, է մարչութիւն մատակարարութեան խնամակալաց ժողովոյն, յորոյ մի և ի կարևոր անդամոց դուք ինքնին էք . . . վասն որոյ ի սկզբանէ հետէ բողոքեցի ես բազում անգամ, եթէ բերանով այդր և եթէ գրով աստի, յայտ առնելով զանուղղութիւն նորին . . . ապա ընդ այսպիսի մատակարարութիւն պարտ է ողբալ և ցաւել, որ ի վնաս աղքատաց ազգիս և ի նախատինս միաբանութեանս : . . .

« — Եւ ցաւիմ դարձեալ, ասէք, զի զդառն անձուկն և
« զժոխային վիշտս զոր կրեմ արդ ի պատճառս կարօտու-
« թեան դրամոց, գուշակէի ես երեք ամօք յառաջ, վասն
« որոյ և այսր և անդր աղաղակէի ի վանս առ ի զառաջս ու-
« նել այսոցիկ հետևանացս, զոր պարտ է յիշել և Վերա-
« պատուութեանդ, և սակայն ցարդ ոչինչ դարման մատուցաւ
« իրացն : »

« Գուշակելով գուշակէի և ես զանձկութիւն այժմեան վիճակիս և զանախորժ դրութիւնն որ կայ ի միջի, ի փորձոյ գիտելով իմ զանկարողութիւն ձեր ի գործ յայդ պաշտամանդ, և քաջ ճանաչելով զչափ զգայութեանդ որ առ ընկերսդ . վասն այսորիկ ազդ արարի որում պարտ էր ազդ առնել դարման տանել թերութեանս այսմիկ, սակայն ոչ յաջողեցաւ այն, սակս պակասութեան անձանց ի միաբանութեանս, և ահա ընդ այս պակասութիւն ցաւ է ինձ յոյժ և վիշտ անհնարին, և ոչ ընդ կարօտութիւն դրամոց, վասն որոյ զդառն անձուկն և զժոխային վիշտս կրեմ կերպարանօք, ոչինչ երկրայելով իմ թէ ունիք բաւական արծաթ ի ձեռինդ ի մխիթարութիւն անձինդ : . . .

« Ապա մի՛ այսր և անդր աղաղակէք և գրէք առ ի զառաջս ունել հետևանացս այսոցիկ . . . այլ փոյթ լերուք ընդ պակասութիւնն անձանց միաբանութեանս ի պաշտօնդ յայդ, զի յայնմ է մխիթարութիւն ձեր . . . և շնորհ կալջիք բնութեանն որ ազատ կացուցեալ է զձեզ ի զգայութենէ հասարակաց . . . զի այնու ոչ իմանայք զխոցել և զցաւս ընկերացդ . . . Թողի՛ց յիշատակել սաստ. և զդարման իրացս, զոր երկու ամօք յառաջ խորհե-

ցայ մատուցանել, զթեթեւութենէ ծախուց վարժարանիս ասեմ, պատճառաւ խռովութեան Եւրոպայ. ընդ որ և դուք զառաջինն հաւան դասայք գրութեամբդ, որ ի 11 օգոստոսի 1849 ամի, բայց յետոյ զհակառակ կողմն կալայք փոփոխութեամբ մտացդ և հակառակութեամբ բանիցդ որ ի 16 փետրուարի 1850 ամին, և զոր ի դէմս ձեր հարի համառօտ ինչ պատասխանեաւ, որ ի 6 մարտի նորին։

« Իսկ զի՞նչ ասացից զվերջին և զկարեւոր դարմանոյ իրացս, որ ինքնին ընդ առաջ եկն մեզ, զպատեհութիւն վաճառման և շահեկան վաճառման տանս ասեմ, որ յայնմ ժամանակի, ընդ որ ոչ միայն և դուք չգտայք հաւան, այլ և զավորական քաղաքավարութիւնդ ոչ թողիք ի բաց, գրելով առ իս թուղթ առաւել եւս անմիտ և յանդուգն բանիւք, որոց արարի ես ի սմին զարժան պատասխանին . . . ապա քաջայայտ է ցայս վայր գնացիցդ թէ չէ ձեզ բնաւ փոյթ, ոչ զմխիթարուբենէ դաստիարակութեան Հայ մանկտւոյն, և ոչ զաղետալի վիճակն ազգին, զորոյ և զանուն անգամ չկամիք դուք լսել . . . և ոչ զօգտէ և զպատուոյ միաբանութեանդ, զոր մերթ մեղադրէք և մերթ ջատագովէք, ըստ շարժման կրիցդ և ըստ փչման հողմոյ անհաստատ և յեղյեղուկ բարուցդ . . . այլ փոյթ է ձեզ միայն զգլխութենէ անձինդ և զզուարճութենէ մտացդ զորս վերագոյն յիշատակեցի, և հաստատութիւն սյսմ ահա բանք վերջին նամակին ձերոյ գրելոյ առ իս ի 22 փետրուարի անցելոյ, յետ դառնալոյդ ի վանական ժողովոյ և լսելոյ ձեր անդ ի թղթոյ իմմէ աստի զկարեւոր դարման իրաց վարժարանիս : . . .

« — Պատճառ փոփոխութեան կարծեաց իմոց այն է, ասէք,
« զի յառաջն կարծէի ես, թէ այս անիծեալ խռովութիւն
« Իտալիոյ ունիցի տեւել 10 կամ 12 ամս . և դարձեալ կար-
« ծէի ես, թէ Գաղղիացիքդ ըստ խոստման իւրեանց ունիցին
« օգնել Իտալացւոց եղբարց իւրեանց . արդարեւ յայնժամ
« ամք 20 չբաւէին ի հանդարտութիւն Իտալիոյ . այլ այսօրիկ
« կարծիք իմ իբրեւ ստուեր ոչնչացան և Իտալացիք հանդոյն
« երկչոտ նապաստակաց մոռացան զքաջարտութիւն իւ-

« բեանց, որով յոխորտային յառաջն. վասն որոյ ես ընտրելի
« դատեցայ և դատիմ զկարծիս և զորոշումն միաբանու-
« թեանս, և յայս գործ գովելի համարիմ զանձն իմ զի ոչ
« յամառեալ կամ ի կարծիս : »

« Կարծիցէ՞ք դուք արդեօք թէ վերոյիշեալ պատճառդ արդարացուցէ զձեզ յայն . . . այլ ես ոչ կարծեմ բնաւ . մանաւանդ թէ յաւելուլ գիտեմ ձեզ և այլ ինչ մեղադրութիւն . և յիրաւի՝ քանզի հարցանեմ ձեզ թէ զի՞նչ հաստատութեամբ կարծէիք դուք, թէ խռովութիւն Իտալիոյ ունէր տե-ւել ամս 10 կամ 12. ի պատմութեանց Իտալիո՞յ, զորմէ չունիք և ոչ սակաւիկ ինչ ծանօթութիւն, չունելով ձեր ախորժ պարապիլ ի գիրս, թէ ի տիփլոմաթիքական գիտութենէ՞դ, որ զիտալացի գործակալաց և վարձաւորաց է միայն . . . և դարձեալ՝ ընդէ՞ր կարծէիք դուք, թէ Գաղղիացիքս օգնէին խոստացուցող եղբարց իւրեանց, արդարեւ յայնժամ ամք 20 չքաշէին ի հանդարտութիւն Իտալիոյ :

« Ո՞չ ապաքէն յառաջնում նուագի, յամին 1796 զամիսս վեց չատ եղեն Գաղղիացւոց տիրել բովանդակ Իտալիոյ, և ի հանդարտութեան պահել զայդ... տեսանէ՛ք զանծանօթութիւնդ պատմութեան Իտալիոյ, թէպէտ և յԻտալիա բնակիք յ30 ամաց հետէ : Եւ զի այդ՝ կարծիք ձեր իբրեւ ստուեր ոչնչացան. վասն զի անհիմն էին և չունէին ինչ հաստատութիւն, իբրեւ եղջերուաքաղք մնացդ, հանգոյն երկչոտ նապաստակաց, որոց նմանեցուցանէք զԻտալացիս . . . և տեսանէք զի չարդարացայք դուք յայսմ, այլ մանաւանդ յաւելիք ձեզ այլ մեղադրութիւնս, զտգիտութիւնդ պատմութեան Իտալիոյ, և զանհանդէտ նմանութիւնդ բերեալ Իտալացւոց : . . .

« —Վասն որոյ ես ընտրելի դատեցայ և դատիմ, ասէք,
« զկարծիս և զորոշումն միաբանութեանս : » Ապա ընդէ՞ր յանդգնեցայք դուք երբեմն բամբասել զՄիաբանութիւնդ՝ ասելով . « Քանզի այլ փօլիթիքա և այլ սիսթէմա տիրէ
« այժմ ի վանս : » Եւ ապա յանդուգն և անընտրաբար է դատաստան ձեր զկարծեաց և զորոշմանէ միաբանութեանդ : . . .

« — Եւ յայս գործ գովելի համարիմ զանձն իմ, ասէ,
« զի ոչ յամառեալ կամ ի կարծիս ։ »

« Այո՛ փոփոխական էք ի կարծիսդ եւ յեղյեղուկ եւ հակառակարան ի գրութիւնդ. այլ պարտաւելի էք դուք յամենայնի, եւ ոչ յիմիք գովելի բնաւ ։

« — Եւ դարձեալ Վերապատուութիւնդ գրէ ինձ ի յան-
« ցանս զասելն իմ թէ հպատակութիւն պակասի ի միաբա-
« նութեանս. եւ երանի թէ, իցի՜ւ թէ սուտ լինէին բանք իմ,
« եւ ոչ տառապէր միաբանութիւնս ի կարօտութենէ եւ ի չը-
« քաւորութենէ ի պատճառս զանազան անձանց եւ չհեծէր
« ընդ պարտիւք ։ Այժմ պարտիւք հայթայթէ զապրուստ
« իւր խեղճ միաբանութիւնս եւ ունի պարտս ի Թրեստ,
« ի Պօլիս կամ ի Տրապիզոն, եւ ի Վենետիկ. եւ որք ունին
« սիրտ զգայուն չկարեն անտարբեր աչօք տեսանել ի վանս
« զմատաղերամ՝ մանկտին 9 կամ 10 ամաց որք թողեալ ըզ-
« ծնողս եւ զհայրենի բնակութիւն իւրեանց յօտար երկրի
« ճշտութեամբ յոյժ եւ անձկութեամբ հազիւ առնուն զապ-
« րուստ իւրեանց ։ Ամէն ասեմ որ զայսոսիկ տեսանելով իմ
« ոչ կարեմ լռել եւ անզգայ մնալ ։ »

« Հարցանեմ ես ձեզ նախ՝ թէ կարօտութիւն եւ չքաւորութիւն միաբանութեանս արդարեւ ի պակասութենէ հպատակութեան իցէ, եւ թէ ո՞յք իցեն այդ զանազան անձինք, որոց պատճառաւ հեծէ ընդ պարտիւք միաբանութիւնս, եւ թէ ընդէ՞ր ունիցի միաբանութիւնս պարտս ի Պօլիս կամ ի Տրապիզոն եւ ի Վենետիկ . . . քանզի պակասութիւն հպատակութեան՝ միայն ի գնացս Հ. Գրիգորի Ալէփանի գիտեմ ես, եւ զնուան որ ի Նմանէ, պարտքն որ ի Թրեստ, իբրեւ 3,000 ֆր. տառապիցի՞ արդարեւ միաբանութիւնդ ի կարօտութենէ եւ ի չքաւորութենէ, ի պատճառս անձինն այնորիկ, եւ հեծիցէ՞ ընդ այդչափ պարտիւք 3,000 ֆրանքաց . . .

« Իսկ պակասութիւն հպատակութեան այլ անձանց ի միաբանութեանդ Հ. Պետրոսի եւ Հ. Յովհաննու ակնարկէք դուք ի գրութիւն ձեր, եւ զնուան որ ի Նոցանէ, պարտիքն որ ի Պօլիս եւ ի Վենետիկ. իցէ՞ այս պակասութիւն հպատակութեան ի միա-

բանուորեանց, թէ պակասութիւն առաջնորդութեան անդ, և թէ պարտիքս այսքիկ, իցե՞ն պարտիք միաբանութեանդ, թէ պարտիք Մ. վարժարանին. և թէ այս վերջնոյն իցեն, որպէս և են իսկ, ապա անտեղի է և անդէպ կրկին միջարկութիւնդ, երանի՛ թէ, իցի՜շ թէ. և ապա սուտ են բանք ձեր, թէ տառապի միաբանութիւնդ ի կարօտութենէ և ի չքաւորութենէ ի պատճառս զանազան անձանց և հեծէ ընդ պարտիւք. և յիրաւի՝ քանզի եթէ միաբանութիւնդ հոգ տարեալ էր ըստ ժամանակին իւրոց Տրապիզոնի, առաքելով անդ և զայլ ոք, յիմանալ և ի քննել զգործ Հ. Պետրոսի՝ ոչ ծանրանային այնչափ պարտիք վարժարանիս . . . Թողի՛ց ասել զհալածմանէ Նորին անտի, որ ի Նախատինս միաբանութեանդ և ի խնդութիւն թշնամեաց իւրոց, և յաւելեալ եւս վնաս վարժարանիս, ծախելով անդ զայնչափ արծաթ առանց ինչ օգտի աղքատաց ազգիս: . . .

« Եւ եթէ միաբանութիւնդ չէր եղեալ յարկեղ խնայութեանն որ ի Վենետիկ զ50,000 Ֆրանքն, զպարգեւսն Յակոբայ Զէլեպւոյ, այլ անցուցեալ էր զայն առ ի հատուցումն պարտուց վարժարանիս, չպարտաւորէր յոչնչանաց փոխ առնուլ զայն այժմ Վենետկոյ Հասարակապետութեան և կորուսանել զայն անդ ի վերստին տիրապետութեան Աւստրիոյ: Եւ ահա վասն այսորիկ տառապի նա ի կարօտութենէ և ի չքաւորութենէ և պարտիւք հայթայթէ զապրուստ իւր այժմիկ. այլ և ոչ պարտիք վարժարանիս միայն ցարդ առանց հատուցման և լինէին պատճառք դառնութեան հոգւոյդ և անմիտ զրութեանդ առ իս:

« Եւ թողի՛ց ասել զպակասութենէ նախահայեաց տեսութեան ի Միաբանութեանդ, նախ ի խնդիրն յայն յետս կոչմանն Հ. Պետրոսի ի Տրապիզոնէ. զի ի տեսանել զջանս հակառակորդաց իւրոց հալածելոյ զնա անտի, պարտ էր նմա ազդ առնել Հ. Պետրոսի հրատարակել ի Տրապիզոն թէ կոչեցեալ է ինքն յԱբբայէն դառնալ ի վանս, յետ կարգաւորելոյ զգործառնութիւն իւր անդ: Եթէ ելանէր հրաման ի գահէն Հռովմայ յետս կոչման նորա չլինէր այն բռնի և նախատական, հրատարակելով իւր զայն յառաջագոյն. և եթէ չելանէր

անտի հրամանն այն, Մնայր նա անդ, հանդերձ ընկերաւ միով այլով, և զայս խորհուրդ ետու ես նմա գրով աստի յառաջագոյն, այլ չեղև լսելի և ոչ պատասխանւոյ արժանի։ ...

« Եւ երկրորդ՝ ի լուր և ի պատրաստութիւն պաշարման քաղաքին Վենետկոյ պարտ էր միաբանութեանդ նախահայեաց տեսութեամբ, և մասնաւորաբար ձեզ որ մի ի հարկաւոր անդամոց էք նորա և փորձ տնտեսական իրաց, և որ մանանանդ այդչափ զգայուն սիրտ ունիք, մինչեւ չկարեք անտարբեր այժմ տեսանել ի վանս զմատաղերամ մանկտին 9 կամ 10 ամաց, որք թողեալ զծնողս իւրեանց, այլովքն հանդերձ, այո՛ պարտ էր ձեզ առաքել զմեծագոյն մասն միաբանիցդ հանդերձ բոլոր նորընծայիւք ի Ցիէսսօ գիւղն, ուր է տուն վանացս, և ուր ամենայն ինչ, ապրուստ դիւրագնի էր յոյժ ի ժամանակի պաշարման Վենետկոյ, քանզի յիշատակ նեղութեան և զզման չառնելոյ զայն երբեմն կայ ի միտս բազմաց այդր ի վանս։ ...

« Եւ թողից ասել զխորհրդոյս զայնմանէ, որ շահեկան և օգտակար էր երկոքին վարժարանացս միանգամայն, զընակութենէն ասեմ Ռափայէլեան աշակերտացն ի Պալատն Զաքքօի ի Պատաւիոն, և որոյ կատարումն ի կամս Առաջնորդիդ է միայն թողեալ, ըստ կտակի Ռուզայեանի. այն զի և ոչ միաբանութիւնդ խորհրդոյս այնորիկ հակառակ եկաց ի ժողովի անդ որ ընդ այն, այլ ոմն ի նոցանէ, վասն կարճատես անձնասիրութեան իւրոյ։ ...

« Այլ և թողում ես ի քննութիւն մտանել աստ զծախուց դպրոցին Պօլսոյ, զորոյ զծանրութիւն Մ. վարժարան միայն կրէ ըստ բանից գրութեանդ, և ոչ Ռափայէլեանն, որ հաւասարապէս զկարծեցեալ անտի պտուղն վայելէ։

« Արդ՝ ո՞ւմ իցէ այդ պակասութիւն. հպատակութեա՞ն, թէ վարչութեան։ Եւ ընդէ՞ր գործակալդ և նախանձայոյզ գործակալդ Մ. վարժարանին չառնէ ինչ փոյթ զայսմ անուղղութենէ ... տեսանէ՞ք դուք զպակասութիւն վարչութեան և ոչ հպատակութեան ի միաբանութեանդ ... ապա յայտնապէս տեսանի թէ անտեղի և անդէպ է կրկին միջարկութիւնդ,

երանի՛ թէ, իցիւ թէ, և սուտ են բանք ձեր, թէ տառապի միաբանութիւնն ի կարօտութենէ և ի չքաւորութենէ ի պատճառս զանազան անձանց և մեծէ պարտիւք ։ . . .

« Հարցանեմ ձեզ երկրորդ՝ թէ այդ զգայուն սիրտ ձեր և որ չկարէ չիրաւի լսել և անզգայ մնալ ի տեսանելդ զկարօտութիւն և զչքաւորութիւն միաբանութեանդ և զողորմելի ապրուստ նորընծայից նորին, այլովքն հանդերձ, քանի՞ ինչ արծաթ յառանձին քսակէդ օժանդակեցէք ցարդ միաբանութեանդ… քանզի Նախորդ ձեր, որ երկիւղածութեամբ և խղճահարութեամբ իւրով շահեցաւ այտի յարտօրէից վարժարանիս իբրև առանձին արդիւնք աշխատութեան և ճարտարութեան իւրոյ 10,000 ֆրանք, և զայն յամս երկուս, ապա դուք որ չունիք զնորին թերութիւն, զխղճահարութիւն ասեմ, և ունիք առաւել ճարտարութիւն և սէր արծաթոյ, և ամք առաւել ի պաշտօնդ յայդ, պարտ է ունել ձեզ սեպհական արդիւնս վաստակոցդ յոյժ յոյժ առաւելութեամբ քան զնորին ։

« Եւ եթէ չիցէք դուք օժանդակեալ միաբանութեանդ յառանձին արծաթոյդ, որպէս և հաւանական է, ճանաչելով իմ քաջ զանարգ կծծութիւնդ և զարծաթասէր բարսդ, ապա չունիք դուք կարեկից միտս և զգայութիւն հասարակաց, և ապա կեղծաւորութեամբ է բովանդակ գրութիւնդ, իբրև ի պաշտպանութիւն իրաւանց միաբանութեանդ, և աղքատաց ազգիս. վասն որոյ ցաւիմ ես յո՛յժ յոյժ ընդ ընտրութիւն միաբանութեանդ և ընդ ականկալութիւն աղքատաց ազգիս, զի զայսպիսի անմիտ փաստաբան և վնասակար պաշտպան ընտրեալ են ի պաշտպանութիւն իրաւանց իւրեանց, և ողբամ զտգէտ փաստաբանդ զի յանձն առեալ էք պաշտպանել զայսպիսի տկար դատաստան ։

« Մնայ ինձ արդ քննել անաչառ զգնացս տառապելոյ, հալածելոյ և դատափետելոյ առն, Հ. Պետրոսի Մինասեան, զոր այդչափ մեղադրանօք և արհամարհանօք յիշէք ի թուղթն ձեր, և այլ նմանիքդ ի թուղթս իւրեանց որ առ իս ։

« Այլ թէ ընդէ՞ր այդ խիստ դատաստան ձեր. վասն զի ծախեալ է նա ի Տրապիզոն 20,000, ֆրանք ի շինուած դըպ-

բոցին. ո՞չ ապաքէն և Հ. Անտոնիոս ձեռագրեալ ծախուց ի Պօլիս 120,000 ֆրանք ի շինուած դպրոցին. և զի՞նչ առաւել պտուղ տեսայք դուք անտի ի վեց ամաց հետէ, զոր չտեսիք ի դպրոցէն Տրապիզոնի ի միոյ ամէ հետէ ։ . . . Վասն զի ծախքն Հ. Անտոնիայի վասն Պօլսեցւոց են եղեալ, վասն ազգականաց և բարեկամաց միաբանութեանդ, և վասն զի Հ. Անտոնիոս այր խորամանգ է, գիտէ նա ընդ ձեռ հնարիւք վարել և ի վերայ մօրուաց ձերոց ծիծաղել ։ . . .

„ Իսկ ծախքն Հ. Պետրոսի են եղեալ վասն Տրապիզոնեցւոց, վասն Հայոց Փոքուն Ասիոյ, որ ըստ վճռոյ Հ. Անտոնիայի, բովանդակ Հայք Փոքր Ասիոյ չեն արժանի այնչափ արծարոյ... և վասն զի Հ. Պետրոս այր պարզ է, չգիտէ նա հնարիւք արծաթ ի ձեռաց ձերոց հանել, վասն այնորիկ դատափետին ի ձէնջ իբրեւ վատնիչ արծաթոյ աղքատաց ազգին ։ . . .

„ Եւ դարձեալ՝ այրս այս տառապեալ՝ թէպէտ և միամտութեամբ թէպէտ և անխոհեմութեամբ ծախեալ իցէ 20 հազար ֆրանք, և զայն ոչ վասն անձին իւրոյ կամ վասն ազգականաց իւրոց, իբրեւ զայլս . . . այլ վասն լուսաւորութեան կարօտելոյ ազգիս, ըստ գիտաւորութեան Բարերարին ։ . . .

„ Այլ գիտասջիք զի եկեսցէ ժամանակ և հասեալ իսկ է, զի գործն միամիտ և անխոհեմ առնդ այդորիկ պտղեսցի փառօք, և յիշատակ դորա անմոռաց մնասցէ յազգէ յազգս... վասն զի դա ոչ զդիւրութիւն և զզուարճութիւն անձին իւրոյ խնդրեաց և խնդրէ երբէք, իբրեւ զայլս յեղբարց, այլ զօգուտ հասարակաց միայն ։ . . .

„ — Երկնչիմ յոյժ, ասէք, թէ մի՛ գուցէ արկածք Վեննայի
„ կրօնաւորաց, որոց հասին ի Թրեստ, հասցեն և ի մեր վերայ ։ ”

„ Այլ ես ասեմ թէ ոչ երկնչիմ ես յայսպիսի արկածից, որք կորուստ բերեն ընչից, և ոչ զմիաբանութիւն քայքայել զրուեն, այլ մանաւանդ առաւել ևս հաստատեն, որպէս տեսաք ի Թրեստացի կրօնաւորսն, որք առաւել ևս հաստատեցան ի Վեննա. այլ երկնչիմ և զարհուրիմ ես ի ժանտ լեզուէ և ի յանդուգն գրութենէ, որպիսի ձերդ են, որք զզօդ սիրոյ համասուն եղբարց խզել հատանեն, և զսիրտ և զձեռսն-

ցս լքուցանեն, վասն որոյ և անհնարին միտս հաստատակաց։ Ահա յայսպիսի արկածից երկնչիմ և դողամ ես յոյժ։

« — Եւ դարձեալ յանցաւոր եմ առաջի ձեր, ասէք, զի հա-
« մարձակութեամբ խօսիմ ի վերայ մատակարարութեան վար-
« ժարանիդ. բայց աղաչեմ լուարուք ինձ Վերապատուելիդ
« իմ, լերուք անաչառ դատաւոր ըստ բնածին բարոյիցդ. ո՞չ
« ապաքէն ամաւ յառաջ և բազում անգամ իբրև գործա-
« կալ և իբրև ի պաշտօնէս ծանուցի ձեզ զանձկութիւն
« եկամտից վարժարանիդ ի բազում գլխոց պատճառելոյ.
« և մի թէ չէ՞ր արժան մատակարարութեան տեղւոյդ սակա-
« ւիկ ինչ խնայելով վարիլ և փոքր մի նուազեցուցանել ըզ-
« ծախսդ, զոր օրինակ, փոխանակ 53,000 ֆրանքաց, առ-
« նել 50,000 ֆրանք, թէ հնար էր. այլ ընդհակառակն եղեալ
« են ծախք տարւոյս 69,502 ֆրանք։ »

« Առ այս կեղծաւոր և հեգնական բանս գրութեանդ ասեմ՝ ես թէ յանցաւոր եք առաջի իմ, ոչ զի համարձակութեամբ խօսիք ի վերայ մատակարարութեան վարժարանիս, այլ տգիտութեամբ և անիրաւութեամբ խօսիք դուք. և յիրաւի՝ քանզի համարիք թէ ծախքս այսպիսի որ լինին աստ վասն մեր և ի վերայ մեր լինին... ո՞չ ապաքէն վասն մանկանց վարժարանիս լինին. և զի համարիք դուք թէ ոչ զգամ ես բնաւ զծանրութիւն ծախուցս այսոցիկ։

« Ո՞չ ապաքէն երկու ամօք յառաջ ազդ արարի ես որում պարտ էր, թէ սպառափելի են ծախք վարժարանիս, 65 հազար ֆրանք, յաւելեալ իմ անդ և զշահ դրամագլխոյն որ ի գին պալատիս, 25,000, ընդ ամենայն 80,000 ֆրանք ի տարւոջն ծախքն։ Ահա անիրաւութեամբ խօսել ձեր. և տգիտութեամբ ասացի, զի խառնէք դուք զնախընթաց ամի ծախսն ընդ ծախուց վերջին ամին, և հասուցանէք զայն 69,502 ֆրանք, և ահա վասն այսորիկ յանցաւոր եք դուք առաջի իմ, վասն արդարութեան և ճշմարտութեան։

« — Ահաւասիկ Վերապատուելիդ իմ, ասէք, ծանուցա-
« նեմ զայսպիսի պարտաւորեալ ի պաշտօնէս. իսկ եթէ դուք
« ցասնուք ի վերայ իմ և համարիք զիս գիրի արջառ, և ոչ

« պատշաճաւոր համարիք ինձ խօսել զայսպիսիս, ծանուցէք
« ինձ աղաչեմ զի և ես գիտացից զի՞նչ պարտ իցեմ առնել ։
« Եւ եթէ ոք մտաբերեսցէ վրէժխնդրութեան ոգւով վարիլ
« ընդ իս, և ես ողորմելաբար և խոնարհութեամբ դիմեցից
« առ այն որ Տէրն է որբոց և աղքատաց ։ »

« Այո՛ ծանուցիք ինձ ցարդ զանիրաւութիւն և զտգիտութիւն ձեր գրութեամբդ, զոր և սեպհական պաշտօն ձեզ համարիք, և ես ընդ այս ոչ ցասնում. և ոչ գերի արջառ զձեզ համարիմ, այլ ցաւիմ միայն, զի պաշտօնեայ էք դուք այսպիսի պաշտաման, և զի զբանականդ առնէք դուք անբանից նման ։ . . .

« Իսկ եթէ ազատ արջառ զձեզ համարիք ածելով եղջիւր, շարժելով զգրիչդ ընդդէմ ինձ, գիտացի և գիտեմ ես պաշտպանել զիս անվկանդ վահանաւ, պատշաճ բանիւք և արժան պատասխանեօք . . . ապա չմնայ ինձ այլ ինչ ձեզ ծանուցանել, զի գիտասջիք և գիտէք դուք թէ զի՞նչ պարտ իցէ ձեզ առնել, յետ վիրաւորելոյ զսիրտ իմ, և լքուցանելոյ զձեռս անպատեհ բանիւք գրութեանդ ։

« Ապա երկուցեալ ձեր յարգար վրէժխնդրութենէն, յարժան պատասխանւոյս առեմ, ողորմելի դիմօք, բայց ոչ խոնարհ, այլ ամբարտաւան ոգւով, առ որբոց և աղքատաց տէրն դիմեք, բողոքէք ընդդէմ ինձ իբրև վասնչի յիրաւանց որբոց և աղքատաց. և ահա ծայրագոյն անմտութիւն և վերջին անըղգամութիւն երևելին յայտնապէս յայս գրութիւնդ ։

« Եւ յիրաւի՝ քանզի յետ իմանալոյ ձեր ի գրութենէս առ Գեր. Արքահայր մեր ի վանս, թէ զկարծեցեալն ի ձէնջ, զապարտիելի մեծ գումարն արծաթոյ և զայնքան անհնարին ծախսն զոր արարաք մեք առ անխոհեմութեամբ, այսինքն առանց մտածելոյ զապագայն, ի գնել և նորոգել զպալատս, յաջողեալ մեզ այժմ ի ձեռս բերել, վաճառել զպալատս... ի հաստատութիւն բանիցս գրութեան որ առ ձեզ երբեմն, թէ « Մեծագումար արծաթս այս չէ
« ի զուր վատնեալ, այլ ի կարևոր պէտս ծախեալ, և զաժէք
« տանս առաւելացուցեալ. զի յո՛ր և իցէ ժամանակի կամիցիմք
« վաճառել զայս, գտցուք մեք ընդ այս 500,000 ֆրանք ։ »

« Ո՞չ ապաքէն ծայրագոյն անմտութեան և վերջին անզգա-

մութեան է այդ գրութիւնդ, յետ իմանալոյ ձեր զայս մեր յաջողութիւն, որով կարեմք մեք դարման իրացս մատուցանե՛լ, զոր յամենայն թուղթս ձեր պահանջելով պահանջէք ի մէնջ գտանել։

« Եւ ահա հատուցի զբովանդակ պարտիս իմ միանգամայն, արարի պատասխանի ամենայն բանից գրութեանդ, ըստ անդադար պահանջմանդ, և ըստ չափու որով չափեցէք, թէպէտ և ընդդէմ կամացս, վկայեալ յերեքամեայ լռութենէս. և յիրաւի՝ քանզի եթէ չէր ձեր հանապազորդեալ ի գրութիւնդ նովին և առաւել ևս համարձակութեամբ, լռէի ևս արդեօք համբերութեամբ, մինչև արդարութիւնն ինքնին առնէր իրաւունս, որպէս և ակն ունիմ զի արասցէ նա զայն ըստ ժամանակին ։

« Մնամ Վերապատուելի Հայրութեանդ

« Ի Փարիզ. 8 մարտի. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕԴՈՐԵԱՆ. »

Աստանօր ի դէպ համարիմք յիշատակել զնամակ մի գրեալ ի խնամակալաց ժողովոյն որ ի Վենետիկ առ վարդապետս որք ի Փարիզ, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուեալ Հարք.

« Որչափ գեղեցիկ և օգտակար է խորհուրդ և առաջարկութիւն Հարցդ զոր առնէք վասն փոխադրելոյ զՄուրատեան վարժարանդ այտի ի Կոստանդնուպօլիս ի մէջ ազգիս ուր յաճախաւոր մանկտւոյն կրթութեամբ հասարակաբար և օգտութեանց լիցին արդասիք, սակայն դոյնչափ ևս խիթալի և բազմավտանգ թուին մեզ իրքդ ի ժամանակի աստ յայսմիկ ։

« Ի փոխադրելս մերում զայդ աստի այդր՝ բռնագոյն ի վերայ կայր մեզ հարկ, և փոխադրութիւնն իսկ ի լաւէն ի լաւագոյնն էր տեղի իմաստութեան և ուսմանց և հաճոյ յոլովագունից ազգիս և նմին իսկ հզօրագունին յոտնս մեր Յովհաննու Մուրատայ, որ անդստին ի սկզբանէ ցանկայր հիմնելոյ դպրոցիդ ի Գաղղիա՝ վասն որոյ և չկարէր հակառակիլ այնմ. այլ արդ յայժմեան փոխադրութեանդ ա՛յլ ազդ է ամենայն ։ Տեղի յոր փոխադրի

վաւթարագոյն համարեալ յոյժ յաչս Եւրոպացւոց . . . . հարկ ոչ այնպէս բռնագոյն ստիպէ զմեզ դեռեւս, և թէ ստիպեսցէ իսկ փոխագրութեամբս այսուիկ ոչ եթէ զերծանիցիմք ի վըտանգէն՝ այլ մեծագունին եւս երթիցեմք դիմագրաւ : . . . .

« Զգիտեմք նախ զի հաճեսցի կամ կարասցէ Տէրութիւնն Օսմանեան տալ մեզ զհրովարտակն զայն ազատութեան ըստ պայմանացն զոր Գաղղիացւոց հրովարտակաւ տուեալ մեզ զամենայն ազատութիւն դրժէ արդ : . . . .

. . . . Այսօր Ռէշիդ և Ալի բարեկամք մեր և ծանօթք ունին զտեսչութիւն պետութեանդ . այլ վաղիւ ո՛ գիտէ ո՞յք ոմանք փոխանակեսցեն զնոսա թշնամիք մեր և բարեկամք սուխայն մերոյ, որոյ սատարք լիցին և ձեռնտուք ի նուաճել զմեզ :

« Գիտէք զիարդ ոխերիմ թշնամի է մեր Նախագահն որ և մինչ այդր ի Փարիզ ի կործանումն ջանայ վարժարանիդ . թշնամի է և Պատրիարքն և ընդ նոսա միաբանք են արդ զըլխաւորք ազգիս մինչեւ Աբրահամ Աղայ եւս , և ի մեր կողմն յետ մահուան Չէլէպւոյն չիք ոք զօրաւոր . և Յովհաննէս Մուրատ ոխերիմ թշնամին մեր կենդանի կայ դեռեւս , և որ այդր զպետութիւնդ գրգռեաց և զեպիսկոպոս քաղաքիդ ընդդէմ մեր , ո՞չ գրգռեսցէ նոյնպէս զՕսմանեան պետութիւնն և զՆախագահ . . . . և թէ սոքա ամենեքին միաբանեսցին ի վերայ մեր զի՞նչ եղիցի մեզ . զի ի մէջ ազգին և ի խուռն թշնամեաց եղիցուք անդ : Ընդ Գաղղիացւոցդ զէթ մարթ է մեզ կռուել և մաքառել օրինօք , և են իսկ իրաւունք ի ձեռին մերում կռուելոյ ընդ նոսա , այն զի օտարք եմք և հիւրք և չեմք նոցա հպատակք , և թէ կարի յոյժ նեղիցեն զմեզ ի նոցանէ , կարեմք թողուլ զնոսա և երթալ այլուր . բայց ընդ օսմանցւոյն իցէ՞ մեզ հնար մաքառել օրինօք , և ի կամելս մերում թողցէ՞ մեզ փոխագրել այլուր , զի նոցա հպատակք եմք , և արծաթն թողեալ վասն ազգին : Իսկ զի՞նչ վասն Նախագահին ասել իցէ . եթէ այդր եպիսկոպոսին գոյզն պահանջք երկեցուցանեն զմեզ , զի՞նչ ոչ արասցէ ընդ մեզ Հասունն որ առաւելագոյն յոյժ քան զեպիսկոպոսդ համարի ունել իշխանութիւն ի վերայ մեր ի Պօլիս , և որ այժմէն յա-

մաւեալ պնդեալ է տիրել իվերայ ամենայն դպրոցաց ։ Եւ չարնեւս այն է, զի զոր բռնութեամբ պետութիւնն առնել ոչ կարէ, ընդ ձեռն Հռովմայ զոր կամին արասցէ. և զինչ առնել իցէ մեզ յայնժամ ։ Վասն այսր ամենայնի խնթայի թուի մեզ արդ այդ հապճեպ և հանրական փոխադրութիւն վարժարանի յայտնապէս ի Պօլիս. այլ մեղմով և սակաւուք սկսանելով ։ Նմին իրի ոչինչ հակառակիմք, թէ իցէ մեզ մարթելի այժմէն սկսանել երեկօթիւք ունել մանկունս ի դպրոցին մերում որ ի Պօլիս, և զայն՝ թէ յաջողեսցի ընդարձակել տակաւ ։

« Սիրալիր ողջունիւ մաղթեմք ողջ լինել

« Յարգոյապատիւ Վարդապետացդ

« Վենետիկ. 20 փետր. 1850.

« Ն. Տ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Նախագահ ժողովոյն.

« Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ԹԷՐՃԻՄԱՆԵԱՆ

« Քարտուղար. »

ԳԼՈՒԽ ԻԹ.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, որով առաքէ վերոյիշեալ պատասխանին առ Հ. Եսային. — Գանգատ Հ. Սարգսի զգնացից խնամակալաց ժողովոյն. — Մխիթար և ցաւալից պատասխանի Հ. Սարգսի առնեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի. — Թուղթ խնամակալաց ժողովոյն. — Պատճառք գնալոյ Գեր. Հիւրմիւզի ի Լոնտոն. — Գանգատ Հ. Սարգսի զվարչութենէ Գեր. Հիւրմիւզի. — Քննութիւն զգնացից Հ. Եսայեայ. — Խնդիր գնալոյ Գեր. Հիւրմիւզի ի Հռովմ.

« Արհիապատիւ Տէր.

« Ահա առաքեմ Վեհիդ ըստ խոստմանս իմում որ ի նախընթաց թուղթն իմ, զպատասխանին թղթոց Վ. Հ. Եսայեայ, զոր խնդրեմ համբերութիւն յանձն առեալ ընթերցջիք նախ՝ ապա տաջիք նմա ։

« Կատարէի արդեօք և զայլ խոստումն իմ, տալով պատասխանի Նամականւոյ Վենետկոյ և խնամակալաց ժողովոյն, եթէ ընկալեալ էի ուղղակի ի Վենետկոյ պատասխանի թղթոյ իմոյ, գրելոյ ի 23 փետրուարի անցելոյ, և եթէ չէր իմ ընկալեալ ընդ այն ի խնամակալաց ժողովոյն պատասխանի, և այնպիսի պատասխանի, . . . որ չթողու ինձ բնաւ տեղի, ոչ խորհելոյ և ոչ գրելոյ ինչ այսուհետեւ զիրաց վարժարանիս, Նախախնամութեամբ գոլով Նոցա յոյժ պահել ինքեան միայն զայն ամենայն իբրեւ սեպհական իրաւունք իւրում իշխանութեան, և չհամարելով բնաւ զայլ ոք և զոմանս աստ ծանօթ և փորձ այնմ, և կամ խորհող երբէք օգտից և վնասուց վարժարանիս և պատւոյ միաբանութեանս, մանաւանդ թէ անտես և անհաս գոլով նոցա, իմ և եղբարցս աստ, ժանրութեան բազմավտանգ հետեւանացն որ երկուստեք զհետ գան ժանու և դժուարին որոշման : . . .

« Շնորհ ունիմ խնամոտ մտաց Վենետկոյ և Յարգոյ ժողովոյ խնամակալաց որ ազատ կացուցանէք զիս ի անտանի հոգոյ և յընդունայն աշխատութենէ մտացս որ ընդ այս, որպէս և ի հոգոյ տեսչութենէ վարժարանիս որ ի չորից ամաց հետէ :

« Մնամ Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 8 մարտ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում հաւանի խորհրդոյ ինչ նորա, և գովէ զազգասիրութիւն նորա, գանգատի ընդ գնացս ուրումն ի միաբանից, և ստգտանէ զգնացս այլոյ ուրումն անտի, հանդերձ սիրոյ խրատուք և կարեւոր տեղեկութեամբ որ զհանգամանաց Միաբանութեան ի կողմանէ Հռովմայ, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Ջերկոսին թուղթս Վերապատուութեանդ, գրեալսն ի 23 և ի 28 փետրուարի և զառաքեալսն միանգամայն զմին

ի գիտութիւն կարեւոր ինձ և զմիւսն իբրեւ խնդիր կատարելի, այն ինչ ընկալեալ ըստ ժամանակին և ընթերցայ, և ի փոխանորդ ահա եհաս թուղթ և ի պարոնէ (Աղէքսանդր Ռաֆայէլ) որով ի նշան հաշտութեան Միաբանութեանս ընդ նմա խնդրէր շնորհել ինքեան վերստին զգործակալութիւն հայրենական դպրոցին ։ Այր վասն և մեր խորհեալ ըստ զիրայն և զթուղթ եւս Վերապատուութեանդ ընթերցեալ՝ իրաւացի դատք զԳըրեալդ և մեզ եւս պատշաճ թուեցաւ կատարել զայս հայցուած նորա, վասն որոյ ձեռնագրեալ և վաւերացուցեալ զթուղթ գործակալութեանն յղեցաք առ նա յերէկն ։

« Այսպէս ահա կատարեցաւ խնդիրն կարեւոր առաջարկեալ ի Վերապատուութենէդ. տացէ Տէր զի այսպէս կատարեսցին և դուշակութիւնք Վերապատուութեանդ և ակնկալութիւնք բարեաց որ ի նմանէ ։ Այն ակնկալութիւնք ահա յորդորեցին և զմիաբանութիւնս ի հաճել զնա հաւանելով ընդ երթն իմ ի հրաւէր նորա. որոյ՝ որպէս իմաստութեամբ ազդառնէ Վերապատուութիւնդ, դժուարութիւնք բազումք են և խափանք, բայց կարօտութիւնն մեծ և անձկութիւն անհնարին յոր տառապի Միաբանութիւնս՝ յաղթեաց այնոցիկ ։

« Եւ թէ լիցի ինձ արդարեւ երթալ, ընդ որ և ես ինքն որպէս զձեզ երկբայիմ դեռ եւս, եկեալ նախ այդր խորհեսցուք ընդ Վերապատուութեանդ զորոց ասէքդ, և արասցուք որպէս ինչ մարթն է և արժան ։

« Ի կարօտութիւն միաբանութեանս զոր ասացի ի վերայ ամենայն արկածից և թշուառութեանց հարուած մեծ յաւելաւ մեզ և Ալէփոն .... Ի Տեառնէ լեալ է զի չեմք տուեալ նմա զանուն գործակալութեան, որում հետամուտն էր, և այնր ազագաւ որպէս զօձ չարաթոյն յուզէր և դրդուէր զվանս... Վիշտ կարեվէրք ....

« Գալով արդ ի պատասխանի միւսոյ թղթոյ Վերապատուութեանդ, գիտէք և դուք զի չկարեմ հաճիլ ընդ այնպիսի դժպատեհ գրութիւնս ուրումն. (Հ. Եսայեայ Մզրքեան.) նա վիշտ մեծ է ինձ ընդ այդպիսի գրութիւնս որոց ոչ այլ ինչ արդասիք են բայց քակտումն և նուազութիւն սիրոյ և եղբայ-

րութեան։ Նմին իրի անդէն յառաջնում գրութեանդ խօսեցայ ընդ Նմա և զթուղթ մի Նորա զոր գրէր յայնժամ արդէն ի գրելոյ այնու ոճով. և տեսանեմ իսկ արդ ի թուականաց թղթոյն զորոց զօրինակն յղէ Վերապատուութիւնդ, զի լռեալ է առ ժամանակ մի ի գրելոյ զայնպիսիս մինչև ցգրութիւն իւր որ ի սկիզբն անցելոյ ամին, յորում սրեալ է դարձեալ զգրիչ իւր և զորմէ չէր իմ բնաւ լեալ իրազեկ։ . . .

« Յաւելից ասել՝ զի որ գրէն զայնպիսիս՝ զճշմարտութիւն կարծելով ասել՝ չզգայ ծանրութեան գրեցելոցն, ոչ յուշ ածեալ զի և զճշմարտութիւնն իսկ ասելոյ չափ է և պայման։

« Այլ արդ տեսեալ զնա խստագոյն ևս խօսեցայց ընդ Նմա և պատուիրեցից լռել յայդպիսի դառն և զկծեցուցիչ բանից։ Իսկ Վերապատուութեանդ խորհուրդ տամ Ներողարար կարեկից լինել տկարութեան եղբօրն և բարեաւ յաղթեալ չարին՝ որպէս միանգամ՝ և միւսանգամ՝ քաղցրութեամբ բանիւք զնա յաղթահարել, որով անգրգռելի հաստատեալ պահի եղբայրութեանս սէր։ . . . .

. . . .

« Յանկամ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 11 մարտի. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՐՄԻԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գէր. Հիւմիւզի, յոր ցուցանէ միխթարութիւն և ցաւ միանգամայն, ընդ զանազան խնդիրս. միխթարութիւն, վասն կատարելոյ միաբանութեան զխնդիր միջնորդութեան իւրոյ, վերստին տալով Պարոն Ալէքսանդր Ռաֆայէլի զպաշտօն գործակալութեան եկամուտ Ռաֆայէլեան վարժարանին, և ցաւ ընդ հակառակութիւն բանից և գործոց Գէր. Հիւմիւզի, և ընդ յիշատակութիւն գործակալութեան Հ. Եսայեայ և գրութեանց Նորա առ Հ. Սարգիս,

հանդերձ կարեւոր աշխատութեամբ հայեցեալ ի հանգամանս միաբանութեան և ի պարտ պաշտաման նորին, օրինակ զայս .

« Արհիապատիւ Տէր .

« Ցանկալի նամակ Վեհիդ, գրեալ ի 11 մարտի, ընկալայ ի 17 սորին ամսոյ, և ընթերցեալ զայն՝ մխիթարեցայ և ցաւեցայ միանգամայն, ըստ զանազան տեսութեան բանիցն որք ի նմին :

« Շնորհ յոյժ ունիմ հաճութեան կամաց Վեհիդ և Յարգոյ Միաբանութեանդ, զի յետ չորից ամաց և բազում գրութեանս առ ձեզ՝ գտայք խնչ մի գոնէ խրատացի ի նոսին, զկարեւոր խնդրոյ սանմ առաջարկելոյ յինէն, զհայցուածոյ Պարոնին մերոյ, զոր և դուք իբրեւ զխս պատշաճ համարեցայք և կատարել կատարեցէք, թէ և առ հարկի, որպէս և ասէք, առ մեծի կարօտութեան և անհնարին անձկութեան հաւանեալ իցէ միաբանութիւնդ ընդ երթն ձեր ի հրաւէր նորա, այն ունելով գտանել օգնութիւն ինչ ի նմանէ :

« Ահա մխիթարութիւն և ցաւ սրտիս միանգամայն . . .

« — Եւ թէ լիցի ինձ արդարեւ երթալ, ասէք, ընդ որ և
« ես ինքն որպէս զձեզ երկրպայիմ դեռեւս, եկեալ նախ
« այդր խորհեսցուք ընդ Վերապատուութեանդ զորոց ասէքդ,
« և տեսցուք որպէս ինչ մարթն է և արժան : »

« Արդարեւ չկարեմ և ես հաւաստեաւ կալ ի վերայ բանիցս այսոցիկ . և յիրաւի՝ քանզի տեսանեմ ես ի նամակի Վեհիդ զի ընդ երթն ձեր ի հրաւէր Պարոնին երկբայիք դեռեւս, և լսեմ ի թղթոյ Գեր. Եդուարդայ թէ որոշեալ և հաստատեալ է այն . քանզի հանդերձեալ է նա ելանել ի ճանապարհ զկնի Զատկին գալ այդր ի Վենետիկ, և անտի անդր ի Փարիզ, և աստի ի Լոնտոն, հարկաւորապէս Ձեօք հանդերձ :

« Թողից ասել զպատճառս մեծի կարօտութեան և անհնարին անձկութեան յոր տառապի միաբանութիւնդ, և որ յաղթեալ է ամենայն դժուարութեանց և խափանաց . ապա չմնայ Վեհիդ երկբայել դեռեւս ընդ այն, և ոչ զայլ ինչ իրաց խորհել ընդ իս աստ . . . ապա չարժէ ինչ արդ խնամատարութեանդ ազդելս որ ընդ բազում դժուարութիւնս . . . բայց եթէ յառաջ քան զայս

որոշումն, որ ի հարկէ իրացն եղեալ է, հարցանէիք ինձ, տանէի ես դարձեալ և համառօտ ինչ պատասխանի իբրև զառաջինն, թէ « Հեռաւոր սուրբն զօրաւոր է. » ըստ ռամիկ առակին : . . .

« Յետ առնելոյ Վեհիդ յիշատակութիւն և զայլ անպատեհ գնացից Հ. Գրիգոր Ալէփսոնի, զառաւել ևս մնասուց հասուցելոց ի Նմանէ, ապա ասէք, թէ « Ի Տեառնէ լեալ է զի « չեմք տուեալ Նմա զանուն գործակալութեան, որում հե- « տամուտ էր, և այնր աղագաւ որպէս զօձ չարաթոյն յու- « զէր և գրգռէր զվանս : »

« Արդ՝ եթէ Ներեսջիք համարձակութեանս, հարցանեմ ես անաչառութեամբ, եթէ խափանումն այն չէր լեալ ի Տեառնէ, տայի՞ք արդեօք Նմա զանուն գործակալութեան, առանց ճանաչելոյ և փորձելոյ զարդիւնս գործոց և զկնիք բնաւորութեան Նորա. . . և եթէ տուեալ էիք Նմա զանունն զայն, միա՞յր արդեօք Նմա տեղի յուզելոյ և գրգռելոյ զվանս որպէս զօձ չարարոյն, կամ հասուցանէ՞ր, և կամ չկարէ՞ր Նա հասուցանել առաւելագոյն մնաս քան զոր հասոյց Նա միաբանութեանս, առանց անուան գործակալութեան : . . .

« Եւ դարձեալ՝ այլոյ ումեմն, Հ. Եսայեայ, որում տուեալ էք զանուն գործակալութեան և ընդհանուր և բացարձակ գործակալութեան կալուածոց վարժարանիս և վանացդ միանգամայն, իբրև երկու և կէս միլիոն փրանք ստացուածոց, ծանօթութեամբ և փորձառութեամբ ձերո՛վ, որ ընդ կարողութիւն և հաւատարմութիւն Նորին տուեալ իցէք Նմա զայն, թէ թելադրութեամբ և ընտրութեամբ որ ի տեառնէ : . . . Եթէ զայս վերջին ասիցէք, ապա ունիք իրաւունս զլանալոյ և չտալոյ մեզ սատ զգիր գործակալութեանս ի վաճառել զպալատս, զի ոչ ազդեցաւ ձեզ այս ի Տեառնէ, զաղտնի խմն խորհրդով Նորին. և ահա յայտնի հանդամանս պէտք են անաչառ տեսչութեան և խոհական առաջնորդութեան, յորս պակասիլ՝ բերէ ապաքէն մեծապէս զեան, բնապէս և բարոյապէս : . . .

« Ա՛հ, Գեր. Տէր, ունել ունիմ բազում ինչ գրել ձեզ ընդ այս, այլ տեսանեմ և տեսի խակ, զի չբերէ ինչ օգուտ գրու-

թիւնս իմ, համարելով Ձեր զճշմարտութիւն բանիցս յանգուգն համարձակութիւն ։

« Եւ յետ ընթեռնլոյ զպատճէնս թղթոցն ուրումն, Հօր Եսայեայ, որ առ իս, և պատասխանեացս որ առ նա, այսչափ միայն ասէք, և այսպիսի առնէք դատաստան, թէ « Գիտէք
« և դուք զի չկարեմ հաճիլ ընդ այսպիսի դժպատեհ գրու-
« թիւնս ուրումն. վիշտ մեծ է ինձ ընդ այսպիսի գրութիւնս
« որոց ոչ այլ արգասիք են, բայց քակտումն և նուազութիւն
« սիրոյ և եղբայրութեան ։ Նմին իրի անդէն յառաջնումն
« գրութեանդ խօսեցայ ընդ նմա և զթուղթ մի նորա զոր գրէր
« յայնժամ արգելի ի գրելոյ այնու ոճով, և տեսանեմ իսկ արդ
« ի թուականաց թղթոցն զորոց զօրինակսն յղէ Վերապատ-
« ուութիւնդ, զի լռեալ է առ ժամանակ մի ի գրելոյ զայնպիսիս
« մինչեւ ցգրութիւն իւր որ ի սկիզբն անցելոյ ամին, յորում
« սրբեալ է դարձեալ զգրիչ իւր և զորմէ չէր իմ բնաւ լեալ
« իրազեկ ։ . . . Այլ արդ տեսեալ զնա խստագոյնս եւս խօսե-
« ցայց ընդ նմա և պատուիրեցից լռել յայսպիսի դառն և զկծե-
« ցուցիչ բանից ։ »

« Յայսչափ և յայտնի բանից գրութեան Վեհիդ, ես այսչափ և այնպիսի իմանամ զիմաստս նոցին, թէ խելամուտ էր ձեզ յառաջագոյն այնպիսի ոճով գրութեան նորա առ իս, զոր և արգելեալ էք յայնժամ, և թէ ի սկիզբն անցելոյ ամին, յորում սրբեալ է դարձեալ զգրիչ իւր, արդ իրազե՞կ էր Վեհդ, և համարէ՞ր թէ սուրբ գրիչ ունի նա, և ի հեռաւորութեանն իւրում գրեալ է. և արդ կարեւոր և հարկ էր ինձ առաքել ձեզ զպատճէնս թղթոց նորա, առ ի լաւ եւս գիտել, թէ արդարեւ սուրբ գրիչ ունի նա, թէ բրիչ շինականի, և կամ մկրատ Քէօսօղլուի ։

« Իսկ յաղագս այս բանից թղթոյ Վեհիդ, թէ « Զի որ
« գրէն զայսպիսիս զճշմարտութիւն կարծելով ասել չզգայ
« ծանրութեան գրեցելոցն, ոչ յուշ ածեալ զի և զճշմարտու-
« թիւնն իսկ ասելոյ չափ է և պայման ։ »

« Այլ ես ասեմ, զի որ գրէն զայսպիսիս, եթէ արդարեւ զճշմարտութիւն կարծելով ասել, նիրհեալ է նմա անզգայու-

թիւն ծանրութեան գրեցելոցն. քանզի կշիռն ճշմարտութեան ծանրագոյն է քան զկշիռ բանից գրութեան ։

« Մեծ է ճշմարտութիւն և յաղթող և զօրաւոր ։

« Բայց պարտ է ինձ նախ՝ կամ ապա՝ ցուցանել զկարծեցեալն իւր ճշմարտութիւն. իսկ եթէ ստութիւն իցէ այն գըլխովին, որպէս և ցուցեալ եմ ես ի պատասխանիս տուեալ ձեզ այդր 18 ամսոյս, ապա որ գրէն զայդպիսիս անզգամ ոք է, վասն այսորիկ չըգայ նա ընաւ ծանրութեան գրեցելոցն իւրոց, և ոչ միտս ունի հասարակաց, որով կարիցէ չափ և պայման դնել բանից գրութեան իւրոյ ։

« Այլ թէ զիա՞րդ պարտ իցէ վարիլ ընդ այսպիսեաց, խորհուրդ տայ ինձ վեհդ ներողաբար կարեկից լինել տկարութեան եղբօրն, և բարեաւն յաղթել չարին, որպէս միանգամ և միւսանգամ, քաղցրութեամբ բանիւք զնա յաղթահարել, որով անդրդուելի հաստատեալ պահի եղբայրութեան սէր ։

« Արդարեւ այդպէս պահանջէին և օրէնքն իսկ աւետարանական, եթէ ունէր նա հասարակաց զգայութիւն և զգաստանայր արդեօք այնու. բայց քանզի փորձեցի ես միանգամ և երկիցս, եթէ երկար լռութեամբ, և եթէ անյիշաչարութեամբ և քաղաքավար բանիւք գրութեամբ, այլ չիմացաւ նա զայն ամենայն, այլ հակառակութեամբ բանից և անմտութեամբ հանապազորդեաց յամենայն թուղթս իւր որ առ իս ուղղակի և որ առ այլ ոք ստոր անուղղակի նախատել զիս յանդուգն բանիւք, որպէս և տեսանէք մինչև ի վերջին թուղթ նորա գրեալ ի 22 փետրուարի անցելոյ, և այն՝ յետ իմանալոյ զդարման վնասուց արարելոց ի մէնջ, ըստ կարծեաց իւրոց, դնելով մեր զպարտս այնչափ մեծ գումար արծաթոյ, և ըստ բանից իւրոց չունի համեմատութիւն ընդ ողորմելի վիճակ ազգիս, և ոչ ընդ դրամագլխոյ վարժարանին, վասն որոյ աղաղակէր անդադար և համարէր զմեզ ստոր իբրեւ վատնիչ արծաթոյ աղքատաց ազգիս, և վասն այսորիկ բողոքէ առ Տէրն աղքատաց ազգիս ընդդէմ մեզ ։ . . .

« Տեսանէք զի անզգամ է նա և զգաստանալ ոչ ունի ընաւ ։ . . .

« Այսպէս պարտ է վարիլ ընդ նմա ըստ խրատու իմաստնոյն Սողոմոնի, թէ « Տալ պատասխանի անզգամի ըստ անզգա-« մութեան նորա, զի մի իմաստնագոյն երևեսցի յանձն իւր։ » Վասն այսորիկ արարի ես պատասխանի յանդուգն և անմիտ բանից թղթոց նորա, և առաքեցի ձեզ այդր, զի ընթերցեալ ձեր զայն նախ՝ ապա տայջիք նմա, զոր և յուսամ արարեալ իցէք ըստ խնդրոյս. ապա թէ ոչ հարկաւորիմ ես աշխատութիւն յանձն առնուլ, այլ օրինակ մի առաքել առ նա ուղղակի. և եթէ յանդգնեսցի նա վերստին առ իս ինչ գրել, և կամ եթէ Վեհդ ըստ այսմ բանից և դատաստանի որ ի թուղթն ձեր ընդ այս՝ իրաւունս առնել՝ չգիտեմ ես յայնժամ թէ ուստի և զիա՞րդ պարտ իցէ զիրաւունս իմ խնդրել։ . . .

« Ահա զայս ազգարարութիւնս պարտ անձինս համարիմ առնել. քանզի առանց արդարութեան՝ մեր եղբայրութեանս անդրդուելի հաստատեալ պահել ոչ ունի։ . . .

« Ընթերցաք մեք սատ զգրեալն որ ի Վ. Հ. Արսէնէ, որով ծանուցանէ նա զխորհուրդ Նոծոյ (Սերվիան Յովհաննէս վարդապետի) համախոհութեամբ Խալին (Գեր. Հասունի.) ընդ այս զխտաւորութիւն նոցա հարցանէ Վեհդ ի մէնջ, թէ զի՞նչ պարտիք առնել, ի հաւաստել և յարգիլնս գալ իրացն։

« Արդ ասեմք մեք, թէ խորհուրդ մեր սատ առանձինն, որպէս և խորհուրդ այդր հասարակաց, չկարենն տնօրինել զերթն ձեր ի Հռովմ, յորժամ կոչեսջիք ուղղակի ի սուրբ ժողովոյն, հարկ է ձեզ գնալ անդ։ . . . Այլ թէ զի՞նչ լինիցին վախճան և ելք վճռոյն մերոյ ընդ Նախագահին (Գեր. Հասունին,) չկարեմք մեք զայն գուշակել, որպէս զի ըստ այնմ կարէաք տալ Ձեզ խորհուրդ. այլ այսչափ միայն կարեմք տալ ի ժամուս, թէ պարտ է Վեհիդ ամենայն ջանիւք պաշտպանել զիրաւունս առաքելութեան մերոյն յարեւելս և յարեւմուտս, և զօրինաւոր անկախութիւն մեր ի Նախագահէն։ Եթէ զայս այսպէս կարիցէք պաշտպանել հաստատութեամբ զահին Հռովմայ, դադարեսցի այնուհետեւ վէճ մեր ընդ Նախագահին, և զայս օգտակար համարիմք միաբանութեանս և ազգիս միանգամայն. և եթէ դէպ

լիցի Վեհիդ գնալ ի Հռոմ, բարւոք լիցի ածել ընդ ձեզ և զՎ. Հ. Յովհաննէս Սորկուճեան, զի տեղեակ է նա քաղաքավարութեան արանց սրբոյ ժողովոյն, և ճարտար ի խօսել և ի պատասխանել նոցա ։

« Մնամ Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 20 մարտ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Գեր. Հիւրմիւզի, հայեցեալ ի վաճառումն տանն դպրոցին, և ի փոխադրութիւն նորին ի Պօլիս, օրինակ զայս .

« Արհիապատիւ Տէր.

« Թէպէտ և առաջին և երկրորդ հատուածոց բանից նամակի Վեհիդ, գրելոյ ի 15 ամսոյս, չունիմ ես տանել ինչ պատասխանի, հատուցեալ իմ զայն ի նախընթաց Թուղթսն իմ առ Ձեզ երբեմն, հայեցեալ ի հնարաւոր դարման հակառակութեան որ ի մէջ համակրօն կարծեցեալ եղբարցս, և յարհամարութիւն խորհրդոց մերոց փորձ եղելոցս, ի խնդիր վաճառման պալատիս. բայց քանզի երկրորդէք դուք յամենայն Թուղթս ձեր, եթէ ի գլխոց ձերոց և եթէ ի գլխոց ժողովոյդ զմի և նոյն պատճառս և զիրաւունս ձեր որ ի խնդիրս յայս վաճառման տանս, և որ ունի այսպէս.

« — Որչափ մատախոհ եղեւ ի նոյն ժողովն, դոյնչափ խո-
« րամուխ լեալ ի դոյն ծանրութիւն բազմավտանգ հետեւա-
« նացն որ երկուստեք զհետ գան ծանու և դժուարին որոշ-
« ման, հարկ համարեցաւ դարձեալ մնալ զալստեան այսր
« Վ. Հ. Յովհաննու... զի մինչեւ բերան ի բերան խօսե-
« ցեալ զիրացս և զվտանգացն և զհետեւանացն վաճառման
« վարժարանիդ, դժուարացի ժողովոյս որոշումն և յերկա-
« րեսցին իրքդ ։ » Եւ թէ՝
« — Իրաւունք էին Վերապատուութեանդ, եթէ ժողովոյն
« մերժեալ և արհամարհեալ զխորհուրդ այդր եղելոցդ՝ որո-
« չեալ ինչ էր յիւրմէ. այլ նա ի վերայ ամենայն երկիւղին

« և կասկածանացն և վասն իրացն իսկ հարկաւորութեան
« չկամեցաւ որոշել ինչ յիւրմէ, մինչեւ եկեսցէ հասցէ այսր
« Վ. Հ. Յովհաննէս, զոր կանխաւ իսկ կոչեցեալն էր, զի
« առեալ գրով և բանիւ զկարծիս ձեր և զպատճառս՝ եկես-
« ցէ այսր բերան ի բերան խօսել վասն իրաց վարժարանիդ.
« նմա տեղեկանալ աստ ամենայն հանգամանաց ծանօթից
« մեզ իրաց և մեզ ինքեամբ՝ ձերոցդ որ այդր, և այնպէս մի-
« աբան խորհրդով որոշել ինչ վաղվաղակի և մի՛ յերթեւեկս
« թղթոց անցուցանել զաւուրս: »

« Ահա այսոքիկ են պատճառք և իրաւունք ձեր զոր բերէք
և երկրորդէք ի Թուղթս ձեր առանձին և հասարակաց, յար-
համարհել զխորհուրդ մեր, կամ ըստ բանից ձերոց, յապա-
ղել զկարեւոր խնդիրս՝ չառաքել մեզ զիր գործակալութեան.
վասն որոյ հարկաւորիմ երկրորդել և իմ զպատճառս և զի-
րաւունս մեր որ ի խնդիրս յայս, և որք են այսոքիկ.

« — Զցանկալի նամակ Վենիզ, գրեալ ի 16 փետրուարի
« ընկալայ ի 20 սորին ամսոյս, և ընթերցեալ զայն՝ զարմա-
« ցաք մեք ամենեքեան, ոչ այնչափ ընդ կարծիս խնդրոյն
« դժուարութեան, փոխադրութեան աստ վարժարանիս
« այլուր, զիտելով և մեր քաջ թէ կարօտի այն հասարակաց
« հաւանութեան և ժամանակի, և կարեւոր պայմանաց ար-
« դէն ի մէնջ եդելոց, այլ ընդ այնչափ անհոգութիւն կա-
« րօտութեանս մերոյ աստ և զարմանոյ նորին յաջողելոյ մեզ
« ինքնին, զոգցես ի մասնաւոր խնամոց Տեառն, տեսանե-
« լով նորա զմեր կարօտութիւն: . . .

« Ապա աւելորդ համարիմք մեք արդ հարցանել Վենիզ,
« թէ քանի՛ և զի՛նչ իցեն ի բազում գլխոց կրելի կարծեցեալ
« դժուարութիւնք, թէպէտ և երկու միայն էին գլխաւորքն
« առաջարկեալք ի ձէնջ և լուծեալք ի մէնջ. ապա այս է մի-
« այնակ և կարեւոր խնդիր մեր ի ժամուս, հոգ և դարման
« տանել կարօտութեանս մերում աստ՝ և եթէ ոչ բարւոք
« և որոշ բացատրեալ իցէ մեր զխնդիրս ի նախընթաց թուղթն
« որ առ Վենզ, բացատրեսցուք մեք զայս ի սմին առաւել
« մեկին ի խելամտութիւն ձեզ յամենայնի. վասն այսորիկ

“ պարտ է մեզ ի սկզբանէ անտի սկսանել, թէ զի՛նչ էր
“ պատճառ փոխադրելոյ վարժարանիս ի Փարիզ, և թէ զի՛նչ
“ վախճանաւ ծախեցաք մեք աստ 500,000 ֆրանք ի գին
“ պալատին, այլովքն հանդերձ ։

“ Արդ՝ պատճառ փոխադրելոյ մեր աստ զվարժարանս էր
“ նախադասութիւն մեր ի բնութենէ Աւստրիոյ տէրութեան ։

“ Իսկ պատճառ խորհելոյ մեր այժմ փոխադրել զվարժա-
“ րանս ի Պօլիս է նախ՝ մատակարարել ազգիս առհասարակ
“ զշնորհս Բարերարին ըստ դիտաւորութեան նորա, որպէս
“ և Վ.եհզ. ինքնին վկայէ և ցանկայ. և երկրորդ՝ չբաւել
“ եկամտիցն մարզելոյ աստ մանկունս և ոչ իսկ երեսուն,
“ սակս ծանրութեան հարկացն որ ի վերայ կալուածոց վար-
“ ժարանիս, յերեսաց խռովութեան Իտալիոյ, թէպէտ զամ
“ երիս այլ Տէր գիտէ թէ ե՞րբ այն թեթեւասցի . . . և սակս
“ պարտուց սորին, որք հասանեն արդ ց350,000 ֆրանք, և
“ վաշխ նոցին 18,000 ֆրանք ի տարւոջն, և յաւելցին պար-
“ տիքն ամ ըստ ամէ, զի տարեկան ծախք վարժարանիս,
“ վասն 25 և եթ մանկանց, են 50,000 ֆրանք, իսկ եկա-
“ մուտք կալուածոցն 40,000 ֆրանք, ըստ վկայելոյ և յայ-
“ տարարելոյ միանգամ և երկիցս Հ. Եսայեայ, գործակալի
“ կալուածոցն ։

“ Ապա յաւելցին պարտիք վարժարանիս ամ ըստ ամէ
“ 10,000 ֆրանք, հանդերձ վաշխիւն, և եթէ այսպէս ըն-
“ թասցի գործս, հարցանեմ ես Վ.եհիդ, ո՞ւր հասեալ յան-
“ գիցէ բանն .՝.. ո՞չ ապաքէն յետ սակաւ ամաց բովանդակ
“ եկամուտքն հատուսցին ի վաշխս պարտուցն, որպէս և իրա-
“ ւամբք կարծէ Հ. Եսային, թէպէտ և ոչ իրաւամբք խորհի
“ և գործէ ի դարման տանել իրացն ։ . . .

“ Եթէ կամիցէք զթիւ մանկանց վարժարանիս պակասեցու-
“ ցանել կիսով չափ, սակայն և այնպէս, ոչ նուազիցին
“ ծախքն բաց ի սակաւ ինչ զանազանութենէ, թողից ասել
“ զքննութենէ հակառակորդաց և բարեկամաց մերոց, զոր
“ և առնեն արդէն, ասելով թէ յայսպիսի մեծի պալատանն
“ պարտ է լինել հարիւրաւոր մանկանց ։

« Եւ արդ ընդ այս ամենայն, զոր այսպէս մեկին բացատ-
« րեցաք, պա՞րտ իցէ Վեհիդ անհոգ լինել և ոչ՞ժամ մի յա-
« ռաջ դարման իրաց գտանել, վաճառել զպալատս և հատու-
« ցանել զպարտս վարժարանիս միով մասամբ արծաթոյ, և
« միւս մասամբն գնել տուն մի ի Պօլիս, և կամ զդպրոցս որ
« անդ ընդարձակել յերեկօթեայ վարժարան, եթէ հաճոյ
« իցէ այս Հաստրակութեանս, և զայս պարապով, երկար
« քննութեամբ և հասուն խորհրդով, աւուրբք և ամսօք ժամա-
« նակաւ, հանդերձ կարեւոր պայմանօք եղելովք ի մէնջ և
« առաջարկելով ձեզ... և ոչ յերկուս աւուրս շտապաւ և հապ-
« ճեպ խորհրդով բառնալոյ զայն անտի և փոխադրելոյ յայ-
« լուր։...

« Իսկ եթէ ոչ հաճեսցի միաբանութիւնս ընդ այս, և կամ
« չյաջողեսցի նմա անդ ըստ ցանկալի պայմանաց իւրոց, և
« կամիցի աստ ի Փարիզ պահել զվարժարանս, կալցի տուն
« մի ի վարձու 5,000 ֆրանքի վասն բնակութեան 25 մանկանց,
« և ոչ 25,000 ֆրանք, որ է շահ դրամագլխոյ գնոյ տանս,
« թող զտարեկան հարկսն, և զծախսն նորոգութեան և պա-
« հուլութեան, որ ընդ ամենայն 28,000 ֆրանք. զանազա-
« նութիւն մեծ է, 23,000 ֆրանք առաւել։

« Եւ վասն գնոյ պալատիս ծանուցի ձեզ թէ որչափ ինչ
« պահանջեցաք մեք ի կուսանաց, 500,000 ֆրանք, հան-
« դերձ պայմանօք, և թէ յօժարութեամբ յանձն առին նոքա
« զայն ամենայն. չիցէ՞ այս գեղեցիկ և սքանչելի դիպուած
« և յաջողութիւն մեզ. ապա մնայցէ՞ Վեհիդ տակաւին
« տարակուսիլ և չառաքել մեզ փութով զգիր գործակալու-
« թեան. մեք ընդ այս ոչ տարակուսիմք բնաւ, տեղեկանա-
« լով Վեհիդ զհանգամանաց վարժարանիս, և ունելով փոյթ
« մատակարարել համօրէն ազգիս զշնորհս հանգուցեալ Բա-
« րերարին ի լրումն կամաց նորին։

« Եւ ահա այսոքիկ են պատճառք և իրաւունք մեր, զոր
երկրորդեցի ի թուղթս յայս։

« Եւ արդ հարցանեմ ես Վեհիդ թէ չիցե՞ն այս բաւական
պատճառք և իրաւունք ի փարատել զերկիւղ ձեր, և ի փու-

թացուցանել զձեզ յորոշումն կարեւոր խնդրոյս. ապա ընդէ՞ր երկրորդէք միշտ զմի և նոյն բանս ձեր այսպէս. ‹‹ Որչափ մը-
‹‹ տախոհ եղեւ ի նոյն ժողովն, դոյնչափ խորամուխ լեալ
‹‹ ի դոյն ծանրութիւն բազմավտանգ հետեւանացն որ երկուս-
‹‹ տեք զհետ գան ծանու և դժուարին որոշման, ›› և այլն:

‹‹ Հարցանեմ ես դարձեալ՝ թէ զի՞նչ իմացաւ ժողովն ի բանից գրութեան մերոյ ասոի, և զարհուրեցաւ այնչափ ի հետեւանաց անտի, ի վաճառելոյ մեր զտունս: Կամիցի՞մք մեք վաղվաղակի փոխադրել զվարժարանս ի Պօլիս. ո՞չ ապաքէն փարատեալ եմք զայս կասկած ի մտաց ձերոց ասելով այսպէս. Եւ այս փոխադրութիւնն վարժարանիս պարապով, երկար քննութեամբ և հասուն խորհրդով, աւուրբք և ամսօք ժամանակաւ, և այլն: Եւ կամ հարկաւ զհե՞տ գայցէ, զի վաճառելով մեր զտունս, հարկաւորիցի միաբանութիւնս փոխադրել զվարժարանս ի Պօլիս. և ո՞չ ապաքէն զայս հարկաւորութիւն թողեալ եմք հաճութեան կամաց միաբանութեանս, ասելով այսպէս. Իսկ եթէ ոչ հաճեսցի միաբանութիւնս ընդ փոխադրութիւն վարժարանիս ի Պօլիս, և կամիցի աստ ի Փարիզ պահել զվարժարանս, ի վարձու կալցի տուն ինչ 5,000 ֆրանքով, և այլն:

‹‹ Ապա առ ի՞նչ իցեն երկիւղ ձեր և կասկածդ որք ի հետեւանաց վաճառման տանս . . . և եթէ ժողովդ ի բանից գրութեան մերոյ ասոի, որչափ մտախոհ եղեւ ի նոյն, դոյնչափ խորամուխ լեալ ի դոյն ծանրութիւն բազմավտանգ հետեւանացն որ երկուստեք զհետ գան ծանու և դժուարին որոշման, ընդէ՞ր սակաւիկ մի ոչ մտախոհ եղեւ նա ի բանս մեր յայն որ զծանրութենէ պարտուց վարժարանիս և զհետեւանացն անտի, զանպտղութենէ սորին խոպան, որպէս վերադոյն հաշուեցի : . . .

‹‹ Թողից սակ և զնախատանաց միաբանութեանդ որ յայսպիսի մատակարարութեան : . . .

‹‹ Անդ երկիցեն զերկիւղ, ուր ոչ իցէ երկիւղ: ››

‹‹ Հարցանեմ ես դարձեալ՝ թէ զի՞նչ ունէր ժողովդ որոշել յիւրմէ, և ոչ որոշեաց: Զկամեցաւ, ասէք, որոշել ինչ յիր-

մէ։ Չկարեմ ես ի բանից աստի այլ ինչ իմանալ, բայց յարհամարհելոյ խորհրդոյ մերոյ լուութեամբն իւրով։ . . .

« Եւ դարձեալ՝ ընդէ՞ր կախեալ իցէ որոշումն մեծի այս և ծանր խնդրոյս ի գալստենէ այդր Վ. Հ. Յովհաննու, զոր յամենայն թուղթս ձեր երկրորդէք և երեքնէք։ . . . Մի թէ չիցե՞ն բաւական գրով տուեալ Ձեզ այդր պատճառք և կարծիք մեր ամենեցուն աստ. և եթէ չհամարեցայք դուք զայն բաւական, ընդէ՞ր և զառաւելն եւս ոչ պահանջեցէք ի մէնջ գրութեամբ, այլ զնա կամիք զի եկեսցէ այդր և բերան ի բերան խօսեսցի ընդ ձեզ։ . . . Եւ կամ ընդէ՞ր զկարծիս ձեր և զպատճառս ոչ ետուք մեզ աստ գրով, այլ բերանով կամիք տալ զայն այդր։ Մի թէ դժուարին ի՞նչ իցէ ճարտար գրչացդ բացատրել մեզ զայն աստ գրութեամբ։ . . .

« Արդարեւ չկարեմ ես կալ համօրէն ի վերայ բանիս այսորիկ, և գուշակել ինչ զգաղտնիս խորհրդոյդ . . . այն զի և փարատեցաք մեք ի մտաց ձերոց զերկիւղն զայն փոխադրութեան վարժարանին ի Պօլիս, այլ միայն խնդիր էր զվաճառմանէ տանս, զորոյ զկարեւորութիւնն ցուցաք ձեզ բանաւոր պատճառօք . . . և այն զի հարկ էր Վ. Հ. Յովհաննու աւարտել նախ զկարեւոր գործառնութիւնս այս, զվաճառումն տանս, առ ի չկորուսանել զգեղեցիկ և զօգտակար պատեհութիւնն, և ապա գալ այդր խորհել ընդ ձեզ և զայլ կարեւոր իրաց վարժարանիս, եթէ արդարեւ ճանաչէք դուք զայն և փոյթ ունիք զայնմանէ, զոր ես ոչ կարծեմ. և յիրաւի՝ քանզի եթէ ճանաչէր ժողովդ և փոյթ էր դմա զկարեւորութենէ իրաց վարժարանիս, ոչ յաւելոյր անփութութեամբ իմն, մանաւանդ թէ հենդնութեամբ զայս բանս ի թուղթն իւր.

« — Յայլմէ կողմանէ եթէ այդչափ վառեալ է կուսանացդ
« ի սէր պալատանդ, ոչ մեծ ինչ թուեսցի նոցա յապաղումն
« հնդետասանօրեայ, մանաւանդ զի ոչ առ ժամայն, այլ
« յետ ամսոց փոխադրելոց են յայն։ »

« Եւ զի վկայէ խիղճ մտաց իւրոց թէ արհամարհանօք և հենդնօրէն է ասացեալն իւր, կնքէ զթուղթն այսպէս.

« — Մի ծանր թուեսցի Վերապատուութեանդ այս յա-

« պաղումն ժողովոյս ի խնդիր մի որ մեծապէս երկեցուցանէ
« զնա ։ » Առ որ այս է իմ պատասխանին, եթէ յապաղումն
հնգետասանօրեայ ոչ չիջուցէ զվառումն կուսանաց, առաջար-
կելով նոցա չահաւէր միջնորդի և զայլ բազում, մեծագոյն և
դիւրագնոյ քան զմեր պալատն, զայս մասնաւոր շնորհք աղ-
քատաց ազգիս ի Տեառնէ համարիմ ։ . . ։ Իսկ եթէ ընդհակա-
ռակն՝ չիջցի վառումն կուսանաց ի համոզելոյ միջնորդի որ և
ջանայ անդադար, ապա զկորուստ այսր պատեհութեան, որ
և մեծապէս վնաս աղքատաց ազգիս, գիտեմ ես արդինս
անծանօթութեան և անփութութեան ժողովոյդ ։ . . .

« Յուսամ և ես ոչ ծանր թուեսցի յարգոյ ժողովոյդ այս
անաչառ դատաստան իմ . . . քանզի զիրաւանց աղքատաց ազ-
գիս և զպատուոյ և զխղճի մտաց միաբանութեանդ է խնդ-
դիրս ։

« Իսկ յաղագս և այլ խորհրդաւոր բանից նամակի Վեհիդ,
և զոր թէպէտ սխալանաց գրչին և ոչ զիտաւորութեան պրո-
զին տամ ես, այլ ըստ առակին թէ՝ « Ի յաւելուածոյ սրտի
« խօսի բերան . » քանզի այսպէս գրի, « Նմին իրի յարհա-
« մարհութիւն խորհրդոցդ ձերոց և վաստակոց համարեաջիք
« զայդ, այլ յառաւելագոյն ապահովութեան իրացն և ի փու-
« թով որոշումն մեծի խնդրոյդ միաբանութեամբ զի մինչև
« ցվախճան դոցուք միաբանք ։ » Ներեալ իմ սխալանաց գրո-
չին, մոռանալով նորա զմակրայն մի՛, զի մոռացումն յայտնա-
պէս երևի ի շաղկապէն այդ, և ոչ ընդ այս զարմանամ
և խռովիմ բնաւ, հայեցեալ յորդինս բանիցս մինչև ցարդ ։
Եկից ի քննութիւն վերջին բանից նամակի Վեհիդ, թէ « Զի
« և մինչև ցվախճան դոցուք միաբանք ։ »

« Ասեմ ես առ այս, թէ կարևոր և հարկ էր Վեհիդ յետ
չորից ամաց ծանօթութեանդ և յետ այսչափ գրութեանն որ
ի մէջ մեր՝ ճանաչել ձեր ցարդ զկնիք բնաւորութեանս իմոյ,
թէ ունիմ ես հաստատութիւն մտաց ի բանս իմ, թէ անհաս-
տատ և յեղյեղուկ իցեմ ես յայն . . . և թէ ունիմ ես արդեօք
արժանիս ինչ, վասն որոյ և իրաւունս ի խնդիրս և ի գործս
յայս, թէ ոչ ։ . . . Եթէ զայսոսիկ ծանուցեալ էր Ձեր ցարդ ,

կարծեմ ես, Գեր. Տէր, թէ ոչ այսպիսի բանս գրէիք առ իս այժմ։ . . .

« *Ապա կնքեցից և ես զԹուղթն իմ բանիւք ճանաչմամբ մըտացս և փորձառութեամբս որ ի գործս յայս, թէ բովանդակ պատճառք տուեալք ի Թուղթս ձեր, եթէ ի դիմաց ձերոց և եթէ ի դիմաց ժողովոյդ ոչ են բուն պատճառք յապաղելոյ ձեր ցարդ որոշել զխնդիրս այս մեծ և կարեւոր, այլ պատճառանք, առ ի կասեցուցանել զմեզ ի գործոյս և ի խորհըրդոյս անգամ։ . . .*

« *Իսկ թէ զինչ իցեն և սյսմ բուն պատճառք, ասացեալ եմ ես երբեմն համարձակ, չորիւքամօք յառաջ, բռնադատեալ իմ յայնժամ յարդարութենէն, և աասցի ես ապա Նովին համարձակութեամբ և ամօք ինչ յառաջ, բռնադատեալ իմ դարձեալ յարդարութենէն, զոր չկամիմ աստ վերստին երկրորդել, զխտելով զայն անախորժ լսելեաց, թէ և ճշմարտութիւն. . . բայց երկրորդեցից զայն ապա, յորժամ տեսից զեւս իրացս, և զայն առաւել եւս համարձակութեամբ և բացայայտ, ի դարման վէրաստց արդեօք ապաղայ չարեաց։ . . .*

« *Խնդրելով Ներումն համարձակ և ակամայ գրութեանս,*

« Մնամ

« Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 24 մարտ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ Լ.

Թղթակցութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի վասն վերոյիշեալ խնդրոյ Մ. վարժարանին, և վասն այլ և այլ խնդրոց միաբանութեան. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Հ. Յովհաննու և ընդ Հ. Եսայեայ. — Թղթակցութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի վասն խնդրոյ մատակարարութեան Մուրատեան վարժարանին, և քննութիւն ընդ այն.

Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս, որով ծանուցանէ զժամանել Հ. Յովհաննու ի Վենետիկ, և զորոշումն ժողովոյն. զհրաւէր իւր ի Լոնտոն, և զխափան ընդունելոյ զայն. զհաւանումն միաբանութեան, և զմաքառումն Նորին, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Յութեւտասն ամսոյս ընդ առաւօտն եկն եհաս ի քաղաքի այսր Վ. Հ. Յովհաննէս ողջամբ և ամենայն յաջողութեամբ... ընդ գալ Նորա իսկ և իսկ ի վաղիւ անդր գումարեցաք ի ժողով վասն կարեւոր իրաց վաճառման պալատանդ և զօր մի խօսեցեալ որոշեցաւ ապա առաւելութեամբ քուէից վաճառումն լռելի գնովքն, ոյր վասն պատրաստին այսօր կարեւոր թուղթք գործակալութեանն և իշխանութեան ի վաճառել ։

« Իսկ վասն փոխադրութեանն ի Պօլիս լիցին դեռեւս բանք, բայց որպէս թուի՝ դժուարին յոյժ լիցի որոշումն Նորին, մինչեւ հանդամանք ժամանակիս և յաջողութիւն իրացն ի Հռովմ և ընկճել ոսոխին տացեն մեզ վստահութիւն և քա-

ջալերս ի նոյն, և մինչև յղեալ զըք անդր քննեցուք ծածկաբար զերակս մերակողման իշխանաց ոմանց, որպէս և ձեր այդր խորհուրդ է ի սկզբանէ:

« Ընկալայ յերեկն և զյղեալն ի Վերապատուութենէդ ըղպատճէն Թղթոյ Պարոն Աղեքսանդրին, և զպատասխանւոյ ձերոյ առ այն՝ տուեալ պատշաճապէս և ըստ ամենայն արժանեաց: Երկու աւուրբք յառաջ գրեցի և ես առ նա դարձեալ՝ զի մինչ ջանահնար լինէի ի կարգի դնել զիրս և յարմարել ընդ ծերունւոյ Փափազեան Դիտապետին ի Հռովմ՝ զի կարող լիցի և հարազատն իմ գալ ի քաղցր հրաւէրդ, և ահա յարեաւ այլ կրճիմն, այն է հալածումն ի Նախագահէն Պօլսոյ ի վերայ Միաբանութեանս, որով բացաւ առաջի մեր ասպարէզ կըռւոյ, մաքառել ընդ ոսոխին մերում ի Հռովմ: Նմին իրի չմարթէ հարազատին իմում ի բազմավտանգ ժամանակիս պակասիլ ի Հռովմայ, նա՝ թերևս և իմոյ իսկ գալստեանս լիցին խափան իրքն. Նմին իրի ցաւով մեծաւ հարկաւորիմ ծանուցանել ձեզ զայս փութով զի ըստ այնմ տնօրինեալ զիրս ձեր՝ չլինիցիմք մեք խափան գեղեցիկ հանդիսին: . . . . .

. . . .

, ...

« Մնամ

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ 20 մարտի. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում երկրորդէ զպատճառ արհամարհութեան խորհրդոց իւրոց և զվնաս հասարակաց որ անտի, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ահա ըստ խոստմանս իմում որ ի նախընթաց Թուղթն

իմ առ Վենդ, զամ արդ ի հաստուցանել զվերջին պարտս պաշտաման և խղճի մտացս միանգամայն, Թէպէտ և ակամայ և ցաւօք սրտիս, տեսանելով իմ զայն, ոչ ճշմարտախօսիս և արհամարհողաց բանիցս ի մխիթարութիւն, զի հասարակաց է թշուառութիւն, զերկրորդել ասեմ զբուն պատճառս արհամարհութեան բանիցս և խորհրդոցս մինչև ցարդ, վասն որոյ և վնաս աղքատաց ազգիս և Նախատինք Միաբանութեանս : . . .

« Բայց յառաջ քան զայս՝ կարևոր համարիմ հարցանել և քննել զեկից իրաց վարժարանիս, զարդեանցն ասեմ որ ի գալստենէ այդր Վ. Հ. Յովհաննու մերոյ, ըստ հրաւիրանաց և բազում անգամ հրաւիրանաց ձերոց :

« Հարցանեմ ես արդ Գեր. Տեառնդ և Յարգոյ ժողովոյդ, թէ զի՞նչ առաւել տեղեկութիւն ետ ձեզ այդր Վ. Հ. Յովհաննէս բերան ի բերան խօսելով ընդ ձեզ, կամ ո՞ր բանաւոր պատճառօք և հզօր փաստիւք փարատեաց նա ի մտաց ձերոց զանհնարին երկիւղն և զանլոյծ տագնապն. « Ջծանրութիւն « բազմավտանգ հետևանացն որ երկուստեք զհետ գային « ծանու և դժուարին որոշմանն, հարկ համարեցաւ մնալ « գալստեան այսր Վ. Հ. Յովհաննու, » որ և անտես և անհաս էր մտաց մերոց աստ, տեսանելի և հասանելի միայն մըտաց ձերոց այդր, և կամ զիա՞րդ հաւանեցոյց նա զձեզ ի ժամս երիս, ի խնդիրս յայս մեծ և ծանր կարևոր իրաց վաճառման պաղատիս :

« Ո՞չ ապաքէն զոր ինչ միանգամ խօսեցաւ նա ձեզ այդր բերանով, զնոյն և նորա իսկ և այլոց ոմանց մերոցն աստ ետու ես ձեզ այդր գրովս միանգամ և երկիցս : . . . Ապա պատճառանք էին երկիւղալից բանք նամակաց ձերոց, և հրաւէրքդ որ առ Վ. Հ. Յովհաննէս, և ոչ բուն պատճառք խելամտութեան և հաւանութեան ձեզ և ժողովոյդ, զոր տայք ինձ այժմ Նամակաւդ ձերով, այլ առ ի կասեցուցանել զմեզ ի կարևոր գործոյս և ի խորհրդոյս անգամ, որպէս ի Նախընթացն իմ ասացի, և ի կորուսանել զյաջող պատեհութիւնն, որ ի վնաս աղքատաց ազգիս, և որպէս յառաջագոյն

գուշակեցի, և որ ապա յետ գրութեանս այնորիկ խոյն ճըշմարտեցաւ յանհնարին ցաւս սրտից մերոց եղելոցս աստ։ . . . Ահա արդիւնք յապաղմանդ գրոյ գործակալութեանս, չափազանց պահանջման ձերոյ յայն։

« Իցի՜ւ թէ ծանօթութեամբ և փորձառութեամբ էր պահանջումն ձեր, ապա և իրաւամբք այն . . . և ապա կարի՛ իրաւամբք ասացի ես, թէ կորուստ այս պատահեցաւ, որ և մեծապէս զեան աղքատաց ազգիս, անծանօթութեան և անփութութեան ժողովոյդ գիտացի և գիտեմ ես արդիւնս։ . . .

« Եթէ այնչափ գրութիւն մեր ամենեցուն աստ և յայնչափ ժամանակս չհամոզեաց զձեզ ի խնդիրս յայս, ապա զիա՞րդ բերանով խօսակցութիւն միոյ ի մէնջ և ի սակաւ ժամու համոզեաց զձեզ յայն։ . . . Տեսանէք թէ պատճառանք են բանից և ոչ բուն պատճառք իրացս բովանդակ գրութիւնք ձեր . . . և տեսանէք եւս՝ թէ քանի՛ պէտք են անաչառ տեսչութեան և խոհական վարչութեան, յորս պակասել՝ բերէ մեծապէս զեան բնապէս և բարոյապէս։

« Զայսոսիկ այսպէս կարեւոր հարցմամբ և անաչառ քննութեամբ հաւատարիմ արարեալ Գեր. Տեառնդ և յարգոյ ժողովոյդ՝ եկից արդ ի լնուլ զխոստումն իմ, երկրորդել ձեզ զբուն պատճառս արհամարհութեամբ բանիցս որ ի ձէնջ, վասն որոյ և անուղղութիւն մատակարարութեան վարժարանիս որ ի Վենս աղքատաց ազգիս։

« Արդ՝ ապաքէն բուն պատճառքն ե՛ն են Ասիական սկըզբունքն, բացարձակ իշխանութիւնն, որ և խափան ամենայն յառաջադիմութեան ազգաց Ասիոյ առհասարակ։ Եթէ ոք անհաւատալիցի բանիցս, ցուցանեմ ես նմա զարդիւնսն որ անտի, զտգիտութիւն գրականութեան, որ է մայր ամենայն թշուառութեան ազգաց Ասիոյ, ուր պակասի այն, առ պակասութեան ազատ մտածութեան, արգելեալ այնր ի բացարձակ իշխանութենէ։ Թէպէտ և այս ազգ վարչութեան չէ այժմ հաճոյ և Տաճկացն անգամ, սկսեալ նոցա փոխել զայս յայլ կերպարան, բայց Հայք միայն աւանդապահ են այս վնասակար օրինաց, որպէս տեսանի արդ ի գնացս Գեր. Հաւու-

նին, . . . Թէպէտ և դժկամակք դուք ընդ այն, անիրաւ բռնութիւն համարելով զայն: . . . « Ձի եթէ զանձինս քննէաք, « ապա ոչ դատապարտէաք: »

« Թողից ասել զայժմեան հանգամանաց Եւրոպայ առհասարակ, և մասնաւորաբար զՀռովմայն, թէ զի՛նչ էին և զի՛նչ եղեն, և զի՛նչ լինիցին ապա, զորոց գուշակել ոչ է դժուարին նա և տկար տեսութեան . . . և Թողից ասել զարդեանցն որ անտի, զորոյ զՎեասն կրեաց միաբանութիւնս և կրէ տակաւին, և կրեսցէ միշտ, ցորչափ նոյն ոգիք պահանջման և հակառակութեան կայցեն ի միջի: . . .

« Թէպէտ և Յարգոյ ծերունին Վ. Հ. Մրկրտիչ Աւգերեան ջատագովէ զհանգուցեալ Աբբայն Մելքոնեան ի ժամանակագրութեան անդ վանացս, այլ բանք ժամանակակից Հարց, ա՛յլ ծերոյ Միաբանութեանս, յորոց բերանոյ լուեալ եմ և ի Թուղթս նոցին ակնարկեալ եմ այդր, այլազգ են կարծիք և դատաստան նոցա. չափազանց և անխոհեմ պահանջումն Մելքոնեան Աբբային եղեալ է պատճառ երկպառակութեան ի միաբանութեանս, դնելով նորա ի մտի, թէ պարտին բոլոր միաբանք հաւանիլ կարծեաց իւրոց միայն, և ոչ այլ ինչ խորհել և գործել նոցա քան զխորհեալն և զհրամայեալն յիւրմէ:

« Թէպէտ և բազմաթիւ էին յայնժամ միաբանք վանացս, Թէպէտ և ալեօք, իմաստութեամբ և փորձառութեամբ վերագոյն էին քան զինքն ոմանք ի նոցանէ, այլ նա ոչինչ համարի զայն ամենայն, Առաջնորդ գոլով նոցա և յաջորդ մխիթարայ: . . . Երանի թէ խոհեմութեան և համօրէն առաքինութեանց նորին էր յաջորդ, և երանի՛ թէ յօրինակ և ի խրատ լիցի յաջորդաց իւրոց վնասն որ ի գնացից նորին անտի:

« Ասէք ապաքէն թէ զամենայն զոր հրամայէք մեզ աստ, առանց խորհրդոյ խնամակալաց ժողովոյն, և երբեմն վանական ժողովոյն, ոչ առնէք բնաւ:

« Ասեմ ես թէ բարւոք առնէք, զի ըստ կանոնաց վարիք: Բայց քանզի իրաւունս կալայ ճշմարտախօսի, կամ եթէ հանդումեք Թուիցի համարձակախօսի, հարցանեմ ես Վեհիդ,

թէ ո՞յք և ո՛րպիսի ոմանք են անձինք ժողովոյդ այդորիկ ։ Ո՞չ ապաքէն ոմն անուի կարճատես անձնասիրութեամբ չշնչէ միշտ յամենայն դէպս կրաց որ ի խնդիր վարժարանիս, և ըստ սեփական անուան իւրում, Թ·րեանց, հատանէ զզօդ սիրոյ որ ի մէջ համասսուն եղբարցս ։ . . . Եւ այլ ումն անուի, կերպարանեալ ոգւով ազգասիրութեան աղաղակէ անդադար ընդդէմ մատակարարութեան մերում, և ըստ յատուկ անուան իւրում, Մզրաքեան, խոցոտէ զսիրտ վաստակաւորացս աստ, որպէս և տեսիք ի գրուածս նորա ։ . . . Իսկ այլք ոմանք անուի՝ անծանօթ և անփորձ ամենեւին հանգամանաց վարժարանի՝ հաստատուն զկարծիս ձեր և զպատգամդ որ առ մեզ աստ . . . ահա ճշգրիտ պատկեր ժողովոյդ այդորիկ ։ . . .

« Ես ըստ ճանաչմանս իմում և ըստ փորձառութեանս, թողեալ զանժխտելի իրաւունս զոր ունիմ յայսմ, ազդ արարի Վեհիդ գրութեամբ և բազում անգամ. ցուցի Ձեզ զանուղղութիւն մատակարարութեան վարժարանիս, յիշեցուցանելով ձեզ զկամս Բարերարին, և զպարտս պաշտամանդ. այլ դուք արհամարհելով արհամարհեցիք միշտ զամենայն բանս ազդարարութեան իմոյ, մերթ խոհական կարծեցեալ լռութեամբդ, և մերթ զանազան պատճառանօք, որպէս և այժմ ի խնդիրս յայս վաճառման տանս ։

« Վասն այսորիկ հրաժարեցայ ես ի պաշտօնէ աստի տեսչութեան վարժարանիս ի սկզբանէ անտի, ի չորից ամաց հետէ . . . այլ միայն խորհէի միշտ և խօսէի երբեմն ընդ եղբարս աստ զդարմանոյ վնասուց, զվայրապար ծախուց սորին, համեմատելով զայն ընդ արդեանցն, և ճանաչելով զկարօտութիւն ազգիս առհասարակ ըստ դիտաւորութեան Բարերարին. . . մինչեւ դէպ եղեւ յաւուրս յայսոսիկ հաղորդել զայս Վեհիդ գրութեամբս, և զայս եւս՝ շարժեալ իմ ի տարակուսական բանից գրութեան ձերոյ առ իս, յորեւ լուծումն նոցին ետու ես զայն պատասխանին ։

« Բայց քանզի արհամարհեցիք և զայս, զառաջարկեալն ի ձէնջ իսկ, վասն որոյ դադարեցայ ես այսուհետեւ գրել առ ձեզ և զխորհուրդն իմ անգամ, որ գիրաց վարժարանիս,

տեսանելով զի ոչ միայն չեղեւ ձեզ հաճոյ այս, և ինձ ինչ մը-
խիթարութիւն, այլ և պատճառ անհնարին երկիւղի և ան-
լոյծ տագնապի եղեւ ձեզ այդր, զանազան տեսութեամբ մը-
տաց, և ինձ յաւաւելութիւն ցաւոց սրտի... ապա շատացայց
ես ընդ ակնկալութիւն ապագայ մխիթարութեանն որ կայ-
լուսա, ի քննութենէ և ի դատաստանէ հասարակաց ազգիս,
յընթեռնուլ զպատմութիւն վարժարանիս, սկսեալ ի սկըզ-
բանէ անտի մինչեւ ցայսօր ժամանակի, յոր և պարապիմ ես
այժմիկ, և զոր ի տիպ արձանացուցից ապա, հանդերձ հա-
ւաստեօք։

« Վասն որոյ աղաչեմ զձեզ, դադարեցուսջիք և դուք գը-
րել առ իս այսուհետեւ զիրաց վարժարանիս, և կամ առա-
քել յանուն իմ արծաթ որ ի ծախս սորին, զի ամենայն ինչ
որ վասն իմ և ընդ այս վճարեալ է իսպառ. և եթէ գրեսջիք
առ իս թուղթ և չգտջիք յինէն պատասխանի, մի՛ տաջիք զայն
արհամարհութեանս, այլ վճարման գործառնութեանս որ
ընդ այս, և ապա ըստ այսմ կարգաւորեսջիք զիրս վարժա-
րանիս առանց ինչ ակնածութեան որ յինէն կողմանէ, զերծ
գոլով Ձեր այսուհետեւ յընդունայն հոգոյ, ի ձանձրալի և
յանհաճոյ գրութենէս իմոյ, և ի պատասխանւոյ սորին իս-
պառ։...

« Իցի՛ւ թէ պատճառ ինչ խափանման և ինձ գտանէր, առ
ի հրաժարել և իմ ի հրաւիրանաց Պարոնին, զոր և ջանամ
գտանել. քանզի չգիտեմ ես թէ զի՞նչ պատասխանեցից Յով-
հաննու Մուրատի, յորժամ հաշտեալ նորա ընդ մեզ միջ-
նորդութեամբ Պարոնին, հարցանիցէ ցիս մտերմաբար և իրա-
ւամբք, թէ զամս քան ո՞րչափ ինչ եկամուտս բերեալ իցեն
կալուածք վարժարանի հանգուցեալ հօր իւրոյ, և թէ քա-
նի՞ մանկունս մարզեալ իցեն ցարդ ի գիտութիւնս, և յո՞ր-
պիսի գիտութիւն։

« Արդ՝ եթէ զճշմարտութիւն խոստովանեցայց ես նմա,
ապաքէն անհնարին նախատինս լիցին միաբանութեանս, ընդ
այսպիսի մատակարարութիւն սորա... և եթէ կեղծեցից ես
նմա զայն, ընդդէմ լիցի այն խղճի մտացս, ստելով յայտնա-

պէս ։ . . . Իսկ եթէ ջանացայց ես ծածկել զթերութիւն միաբանութեանս զանազան պատճառանօք, սակայն չկարացից ես երաշխաւոր լինել ուղիղ մատակարարութեան նորա այսուհետեւ, չունելով իշխանութիւն և խորհել անգամ զայնմանէ ։

« Ահա վասն այսորիկ տագնապ է ինձ յամենայն կողմանց, և յաղագս այսորիկ ցանկամ ես պատճառի իմիք խափանման հրաժարել և իմ անտի, և ահա ընդ այս դժուարութիւն էին առակաւոր բանք թղթոյս որ ընդ երթ Վեհիդ ի Լոնտոն, և զոր յայլ միտս առեալ իցէք ։

« Զայսմանէ ոչինչ փոյթ եղեւ Վեհիդ երբէք, և ոչ հոգ ունիք բնաւ այժմիկ, իբրեւ սեփական ժառանգ և բացարձակ տէր հրիտակին Թողլոյ ի Բարբերարէն վասն դպրոցին ։ Այլ մի միայն և մեծապէս հոգ Վեհիդ այժմիկ՝ են զհալածմանէ Միաբանութեանդ որ ի Նախագահէն Պօլսոյ, ի Գեր. Հասունէն, զվիճոյ սանմ և զպահանջմանէ նորին, որ ի խնդրիծս իւրոց իրաւանց, թէ մինչեւ ցորվայր ջանայցէ նա հասուցանել զայն, և որ ի խափան արգեօք առաքելական քարոզութեան և մեծի արդեանց մերոցն ի Պօլիս . . . և վասն այսորիկ բացեալ է, սաէք, ասպարէզ կռուոյ մաքառել ընդ ոսոխի ձերում ի Հռովմ ։

« Արդարեւ կարեւոր հոգ, վասն որոյ և մեծի արիութեան պէտք են Աբբային Միաբանութեանս, մարտ դնել ընդ ոսոխի իւրում ի պաշտպանութիւն իրաւանց իւրոցն ի Պօլիս, առ ի փայելել նոցա միշտ զընկերութիւն ազգականաց և բարեկամաց իւրեանց անդ, և յօժանդակել նոցա, դաստիարակել զմանկունս նոցա ձրի ի դպրոցս, ըստ դիտաւորութեան հանգուցեալ Բարբերարայ ազգին, Եդուարդայ Ռաֆայէլի, և Սամուէլ Մուրատի ։ Ապա աղօթս արասցեն մերքն ի Պօլիս ընդ յաջողակ ելս կռուոյդ այդորիկ ։ . . .

« Հապա մխիթարեցայց և ես սաստ ընդ այս՝ յաղթանակդ տեսանելով զարդիւնս երեսուն և երեք ամաց ոգւով չափ աշխատութեանս, և երանի տաց ես աչացս, ընդ լրումն բազմամեայ ցանկութեանս, աղօթելով և իմ անարժան բե-

բանովս վասն յաջողութեան գործոց հաստատակութեանս։

« *Մնամ*

« *Գերապայծառ Տէրութեանդ*

« *Ի Փարիզ. 30 մարտ. 1850.*

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում ջանայ արդարացուցանել զինքն ի բանս նախընթաց թղթոյ իւրոյ և ի գնացսն, և վկայէ հաւատարմութեան Հօր Սարգսի ի գործ Մ. վարժարանին, այլովքն հանդերձ, որինակ զայս.

« *Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խանդալ.*

« *Ընկալեալ զթուղթ Վերապատուութեանդ զգրեալն ի 20 ամսոյս՝ ոչ յարդարութիւն ինչ անձինս, այլ ի համարատութիւն և եթ սրտի Ձերոյ ի հոգոցդ՝ հարկ համարիմ նշանակել համառօտիւ նախ՝ զի Միաբանութիւնս ոչ առ հարկի կարօտութեանն իւրոյ, այլ վասն իրացն պատշաճողութեան հաւանեցաւ առաջարկութեանդ ձերոյ և խնդրոյ Պարոնին դարձուցանել անդրէն ի նա զգործակալութիւն հայրենական դպրոցին, այնպէս զի՝ թէպէտ և անկարօտի ամենևին և յառաջնումն էաք վիճակի՝ սակայն տակաւին հաւանելոց էաք առաջարկութեանդ։*

« *Այլ զի Վերապատուութիւնդ յաւելոյր ի թղթին իւրում և զակնկալիս բարեաց 'որ ի կատարմանէ անտի խնդրոյն, այնմ ի վերայ ածի և ես թէ այսպիսեաց բարեաց ակընկալութեամբ յորդորեալ հաւանեցաւ միաբանութիւնս՝ ոչ ընդ առաջարկութիւն ձեր, այլ ընդ երթն իմ ի հրաւէր նորա։ Իսկ թէ արդեամբք յաջողեսցի այն եթէ ոչ՝ Տեառն է գիտելի. և զոր ինչ յաղագս այսորիկ հարկ եղեւ ինձ գրել*

ի վերջոյ առ Պարոն՝ ծանուցեալ է իմ Վերապատուութեանդ, յորմէ իմանայք թէ որպէս ինչ իցէ և որոշումն Գերապայծառ Եդուարդայ ։

«Երկրորդ՝ չիք ինձ բնաւ երբէք կասկած ինչ այնպիսի ի միտս անկեալ զՎերապատուութենէդ, զի վասն այնորիկ չյղէի առ ձեզ զգործակալութեանն գիր, և յոյժ իսկ անտեղի է և դժպատեհ կասկածել, զի որ զերկուս միլիոնս փրանքաց ի ձեռին ունելով վարեցաւ ամենայն հաւատարմութեամբ, և որ այնչափ նախանձայոյզն է օգտի և փառաց վարժարանիդ՝ ի վաճառման պալատանդ գտցի անհաւատարիմ. Նմին իրի իսկ ընդ որոշել իրացն մինչչեւ ընկալեալ զթուղթդ՝ ահա գիր գործակալութեանն ի ձեռին ձերում կայ։ Տարապարտ են ապա կասկածանքդ, և չիք ինձ լեալ յայտնութիւն երկնաւոր, որում և արժանի իսկ զանձինս համարել յանդգնութիւն մեծ իցէ ինձ՝ չասացից թէ և յիմարութիւն ։

«Իսկ զասելն իմ վասն Ալեփսոնի թէ ի Տեառնէ եղեւ, ոչ զաստուածայնոյ յայտնութենէ է իմանալ, այլ զմարդկօրէն յայտնութեանց և ըստ դիպաց, որք ըստ կամաց և ըստ հաճութեանն աստուծոյ ի յայտ եկեալք՝ արգելին ինձ ի տալոյ այնպիսումն զանուն գործակալութեան ։

«Իսկ միւռոնն զորմէ ասէք՝ թէպէտ ոչ ես ինքն ետու ըզգործակալութիւն երկմիլիոնեան կալուածոց վարժարանիդ, բայց և ոչինչ յայդպիսեաց տեսեալ եմ ի նմա զի մերժեցից զնա ։ Այլ վասն դժպատեհ և անարժան գրութեանցն յանդիմանեալ զնա՝ ասացի նմա զոր ինչ առնելն պարտ էր, յոր թէ դանդաղեալ իցէ, յաւելից արդ երկրորդել առ նա ըզհրամանն և կարծեմ թէ ոչ ստունգանեսցէ զայն ։

«Յերթալս իմ ի Հռովմ որ չեւ եւս է յայտ թէ ե՞րբ յաջողեսցի, չիք երկբայութիւն զի ջանացայց յամենայն զօրութենէ պաշտպան կալ իրաւանց և իշխանութեանց Միաբանութեանս, և զոր թելադրէքն ինձ ածել ընդ իս և զՎ. Հ. Յովհաննէս, բարւոք է յոյժ և ինձ իսկ ցանկալի, բայց զիա՞րդ կարասցէ նա յայնժամ փութալ ի գործ կատարման առաջարկութեան վարժարանիդ ։ . . .

« Միրալիր ողջունիւ փանականացս ամենեցուն և շնորհաւոր մաղթելով զկենսաբեր Յարութիւնն Քրիստոսի և զերկայնօրեայ կեանս բարութեան և քաջողջութեան,

« Մնամ

« Յարգոյապատիւ Վեհապատուութեանդ

« Վենետիկ. 30 մարտի. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ,

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Հ. Յովհաննու Սուրկունձի, յորում յանդիմանի մեղմիւ բարք և անձնասիրութիւն Նորա. օրինակ զայս.

« Յարգոյապատիւ Հայր.

« Բանք թղթոյ Վեհապատուութեանդ գրելոյ ի Թուրինէ սովորական և ծանօթ են ինձ, խօսակցութիւն ձեր ընդ Նեկռիի, որ զառաջագրութենէ փոխագրութեան վարժարանիս ի Պօլիս, և զոր օգտակար համարի և Նա, առաւել ճանաչելով քան զմերն զօգուտն ազգիս. այլ բանք թղթոյդ գրելոյ ի վանացս Նո՛ր և անծանօթ են ինձ յոյժ, որ ունի այսպէս.

« — Զարդարն ասելով անկեղծ սրտիւ, յոյժ այլազգ գտի
« զամենեսեան քան զոր կարծէի, և ցաւ է ինձ յոյժ, զի
« ոչ եկի այսր ամօք յառաջ. զի բերանով այլազգ բացատրին
« միտք և սիրտ, զոր չէ հնար գրով բացատրել ըստ արժան-
« ւոյն, որով արդարանայ հանապազօրեայ առած Վեհապատ-
« ուութեանդ առեալ յառաքելոյն, թէ « Գիրն սպանանէ,
« այլ ոգին կեցուցանէ: » Եւ եթէ մարդկային ինչ անցեալ
« էր ընդ մեզ և ընդ վանս, արդաւք բացակայութեան և
« մարդկային տկարութեան, յուսամ զի իսպառ անհետա-
« ցաւ, և կամ ոչ անազանեացէ, զի ի մէջ համամնուեանդ եղ-
« բարց չէ հնար պահել մինչեւ իսպառ զեկամուտ կիրս և

« զհոմութիւն սիրոյ, այլ զիջանելով երկուստեք սակաւ թե-
« րութեանց որ անմեկին է ի բնութենէս, կարեմք դիւրաւ
« յարմարել զամենայն: »

« Ահա այսօրիկ են զոր նոր և անծանօթ ինձ յոյժ բանք գիտեմ, և յիրաւի՝ քանզի չկարծէի ես երբէք և չկարծեմ բնաւ, թէ կարիցէ ժամանակն այնչափ այլայլել զհարազատութիւնն եղբարց, մինչեւ այլազգ գտանել ձեզ զամենեսեան քան զոր կարծէիք. և թէ՝ չիցէ հնար գրով բացատրել զմիտս և զսիրտ ըստ արժանւոյն, այլ բերանով միայն. և թէ՝ չկամիլ հոգեհարազատ եղբարց խմանալ զմիտս իւրեանց արգասիք իցեն բացակայութեան և մարդկային տկարութեան. և թէ՝ ընդ երեւիլ նոցա միմեանց՝ անհետանայ խսպառ այն ամենայն. և թէ՝ զիրաւունս խնդրել աղքատաց և զարդարութիւն պահանջել հասարակաց, եկամուտ կիրք և հովութիւն սիրոյ համարեալ իցէ ի մէջ համամանունդ եղբարց... աղաչեմ ուշ դիջիք այս նշանաւոր բանիցդ. և թէ՝ վասն այսօրիկ չէ պարտ մինչեւ խսպառ զայն սկզբունս պահել, այլ զիջանելով երկուստեք սակաւ թերութեանց, որ անմեկին է ի բնութեանս, կարեմք դիւրաւ յարմարել զայն ըստ քմաց մերոց և ըստ շահու անձին:...

« Եւ ահա այսօրիկ են բանք և բուն խմաստք բանից թըղթոյ ձերոյ առ իս, ընդ որս զարմացայ և զարմացեալ եմ ես յոյժ յոյժ, տեսանելով զտասնամեայ և զբազում աշխատութեամբ ուսեալ լեզուն և զփորձառութեամբ ճանաչումն ի տասն աւուրս այնչափ փոփոխեալ և գրեթէ խսպառ մոռացեալ, մինչեւ նոր և անծանօթ ինձ յոյժ այնր երեւիլ:

« Ով յանկարծ և սքանչելի փոփոխութեանս. ուստի՞ իցէ այս. յերկնի՞ւստ թէ ի մարդկանէ:... Յերկնուստ ոչ կարծեմ ես, զի ամիսք կան դեռ աւուր Պէնտէկոստէի... և զի ըստ հոգւոյ չեմ ես ընդունակ այնմ շնորհի, և ըստ մարմնոյ տկար եմ ի յիշողականին, վասն որոյ չկարեմ ուսանել զայս նոր և անծանօթ լեզուն. և ոչ խսկ ի մարդկանէ, զի հեռի եմք յոյժ ի բուն Բաբիլոնէ:...

« Այլ շնորհ յոյժ ունիմ բնութեան, մանաւանդ թէ

Տեառն բնութեան, որ տուեալ է ինձ հաստատուն բնաւորութիւն և միտս անյեղլեղ, զի յառաջ քան զժամանել Թըղթոյդ առ իս, որոշեցի ես զամենայն, զոր և լուեալ էք հարկաւ ի Վեհէն, առ որ գրեցի զվերջին Թուղթս, յոր և ակնարկեալ եմ զազդեցութիւն բանից Թղթոյդ, գուշակելով իմ ի հաճոյական նմա բանիցդ, թէ չէ նա անծանօթ այնոցիկ:…

« Եւ հաստատութիւն այսոցիկ, ահա կարծեցեալ ապացոյց բանիցդ որ ունի այսպէս.

« — Ապացոյց բանիցս, ասէք, զի անդէն գումարեալք
« ի ժողով, տեսի զՊեր. Տէրն առաւել քան զամենեսեան մի-
« տեալ ի խորհուրդ մեր, և ժողովն լուեալ զամենայն պատ-
« ճառս արդէն տուեալս ի Թղթի ձերում, և լուեալ յինէն
« զբացատրութիւն առարկութեան ինչ, միաբան հաւանու-
« թեամբ հաստատեցին զվաճառումն տանս: »

« Բայց ոչ ասէք, թէ՞ որպիսի ինչ առարկութիւն իցէ ժողովոյն, և զի՞նչ բացատրութիւն տուեալ իցէք այնմ, զոր չիցեմք արդէն տուեալ ի Թղթի մերում:

« Տեսանէք զի մոռացեալ էք դուք զձեր սովորական լեզուն և զփորձառութեամբ ճանաչումնդ, զբանս Թղթոյն ասեմ նորին Պեր. Տեառն որ առ իս ի կողմանէ իւրմէ և ի կողմանէ ժողովոյն, յորոց և դուք ինքնին գուշակէք հաւաստեաւ, թէ չունէր նա բնաւ կամս հաւանել մերոյ խորհրդոյն, և այժմ ասէք, թէ առաւել քան զամենեսեան միտեալ ի խորհուրդ մեր:

« Թողի՛ց ասել թէ զի ոչ էք լուեալ ականջօքձերովք զբանս նորա խօսեցեալ յառաջին ժողովմն, թէ զիա՛րդ կամ զի՛նչ էր նա խօսեցեալ անդ, համաձա՞յն արդեօք բանիցն խօսեցելոց ի վերջին ժողովդ, թէ համաձայն բանից Թղթոց իւրոց որ առ իս:

« Եւ Թողից ասել զզանազանութենէ բանիցն որ ի Թուղթն ձեր և ի Թուղթն Վեհին որ գքուէից, զի՛ ի Թուղթն Վեհիս ասի, թէ « Որոշեցաւ առաւելութեամբ քուէից վաճառումն
« պալատիդ: » Իսկ ի Թուղթն ձեր, թէ « Միաբան հաւա-
« նութեամբ հաստատեցին զվաճառումն տանս: »

« Ապա ասեմ ես և իրաւամբք՝ թէ առաւել համարումն ունէի ես, եթէ Գեր. Տէրն ոչ առաւել քան զամենեսեան էր ի խորհուրդն մեր, և ժողովն ոչ միաբան հաւանութեամբ հաստատեալ էր զվաճառումն տանս... քանզի տայրն դոքա յայնժամ սակաւիկ մի յարգ նախկին բանից գրութեան իւրեանց առ իս, գոնէ կարծիս տայրն թէ գաղտնի ինչ խորհուրդ ունէր յամառութիւն նոցա ի կարծիս իւրեանց, և ինձ՝ չափ արգեօք ի վերջին պատասխանին իմ որ առ Վեհս... զի հաստատուն բնաւորութեան և անյեղլեղ մտաց պէտք են միոյ Առաջնորդի և ժողովոյ իւրոյ... և ապա արդարանալով արդարանայ հանապազօրեայ առաջն իմ ասացելոյն յառաքելոյն, թէ « Գիրն սպանանէ, այլ ոգին կեցուցանէ: »

« Այո՛ սպան գրուածն որ այտի, և սպանանէ միշտ, պակասելով յայն արդարութեան և ճշմարտութեան:

« Իսկ յաղագս վերջին հատուածոյ բանից թղթոյդ, թէ

« — Հանդերձիմ արդ մատուցանել զհաշիւ ելի և մտի
« վարժարանիս, կարծեմ նոյնպէս դիւրաւ աւարտեցին իրք.
« վասն որոյ ըստ կարծեացս թէ ոչ այլազգ ձեւ առցեն իրք
« վարժարանիս, լաւ լիցի երկուստեք թէ ոչ յամենայն՝ամի
« գոնեայ յիւրաքանչիւր երկուս ամս միանգամ տեսաւորել
« ընդ վանացս կամ տեսչի և կամ գործակալի վարժա-
« րանիս: »

« Ասեմ ես, թէ 1,000 և առաւել եւս ֆրանք որ ի ծախս ճանապարհի երթեւեկելոյ այսր և այդր ոչինչ է, հայեցեալ յարդիւնս, ի տեսաւորութիւն միայն եղբարցդ, որ անձնա առնէ ի մտաց խափառ զամենայն երկիւղ և զկասկած, զիա՛րդ և իցէ մատակարարութեամբ վարժարանիս:...

« Նրանի դարձեալ աղքատաց ազգիս, որ ունի այսպիսի երկիւղած և զգուշաւոր մատակարար իրաւանց իւրեանց:...

« Եթէ մոռացայք դուք զսովորական լեզուն ձեր, յուսամ զի չէք մոռացեալ զհոգս պարտուց վարժարանիս, ուր չպակասին յամենայն աւուր երկու և երեք պահանջողք գալ հարցանել զողջունէ ձերմէ: Ապա զիարդ և իցէ եղանակաւ պարտ է ձեզ հոգալ զայսմանէ, բերել ընդ ձեզ արծաթ ի հատուցա-

նել զպարտսն, որք և հասանեն ց33,000 ֆրանք, ըստ նը-չանակելոյ, և ըստ բերանացի ասելոյ ձեր մեզ աստ, և զայս ի պատիւ ձեզ գիտեմ, պահելով իմ միշտ զնոյն կնիք բնաւո-րութեան, որով և

« Մնամ

« Յարգոյապատիւ Հայրութեանդ

« Ի Փարիզ. 2 ապրիլ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԼԱ.

Թղթակցութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի վասն խնդրոյ վաճառման պալատին, և վասն մատակարարութեան Մուրատեան վարժարանին. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Հ. Եսայեայ, և ընդ Հ. Յովհաննու, հանդերձ քննութեամբ.

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Եթէ ըստ բառական և եթէ ըստ պայմանաւոր՝ բանից թղթոյս, գրելոց ի 24 և յ30 անցելոյն, չմնայ ինձ արդ առնել պատասխանի բանից Նամակի Վեհիդ,՝ գրելոյ յ30 նորին մար-տի, բայց եթէ բանից ինչ միայն և իրաւացի կարծեցեալ բանիցն որ ի նմին և որ ունի այսպէս.

« — Զիք ինձ բնաւ երբէք կասկած ինչ այնպիսի ի միտս
« զՎերապատուութենէդ, ասէք, զի վասն այնորիկ չյղէի
« Ձեզ զգործակալութեանն գիր, և այժմ իսկ անողի է և
« զժպատեհ կասկածել, զի որ զերկու մլիոնս ֆրանքաց

« ի ձեռին ունելով վարեցաւ անձնային հաւատարմութեամբ, և
« որ այնչափ նախանձայոյզն է օգտի և փառաց վարժարա-
« նիդ, ի վաճառման պաշտաման գոցի անհաւատարիմ. Նմին
« լոյ խակ ընդ որոշել իրացն մինչև ընկալեալ զթուղթդ՝
« ահա գիր գործակալութեանն ի ձեռին ձերում կայ: »

« Ասեմ ես առ այս և հաստատեմ, թէ այո՛ չեղեւ հանգու-
ցելոյն ի Քրիստոս Գերապայծառ Սուքիաս Սոմալի բնաւ եր-
բեք կասկած ինչ այդպիսի ի միտս անկեալ զՀ. Սարգսէ,
առաքելով նմա ի Հնդիկս հեռագնեալ երեք գիր գործակալու-
թեան, թէպէտ և զանազան պայմանաւ, ըստ զանազանու-
թեան ժամանակին, և ըստ խղճի մտացն իւր Աստուածարան
վարդապետաց, և ճանաչելով զնա խնկարկս այնչափ նախան-
ձայոյզ օգտի և փառաց վարժարանին և միաբանութեան իւրոյ,
մինչև չարհամարհել երբէք զխորհուրդ նորա որ գիրայ սա-
րին և գորին:...

« Այլ այս ամենայն երբեմն էր, չորք ամօք յառաջ, իսկ
յետ այնորիկ ամենայն ինչ կերպարանափոխ եղեւ, յաջորդե-
լով նոր ձանաչմանն և չափազանց վարկմանն, յորոց և զանա-
զան ոգիք չարժեալք արարին զոր արարին և առնեն մինչեւ
ցարդ:... Եւ հաստատութիւն այսմ, յուշ առնեմ ես արդ
Վեհիդ զհամարձակ ասացեալն ձեր ինձ երբեմն, թէ « Մերքն
« որք ի Փարիզ, Հարք Յովհաննէս և Ստեփաննոս, ոչ կամին
« ընդ տեսչութիւնդ վարժարանիս, առանցքննելոյ Ձեր զար-
« ժանիսն և զկրաւունս անձանցն այնոցիկ: »

« Թողից յիշատակել և զաւանձին զխաւսրութիւն Ձեր
և զծածուկ խորհուրդդ, որ և յայտնեցաւ այպս ի Հռովմ և
ի Փարիզ, խորհրդակցութեամբ Հ. Աղեքսանդրի... այս ամե-
նայն ծանօթ և յայտնի էր ինձ արդէն, առանց աշխատու-
թիւն յանձն առնելոյ Վեհիդ յիշատակել ինձ գրութեամբդ.
միայն անծանօթ և անյայտ է ինձ, թէ զինչ և օրպիսի Թըղ-
թոյ մեայիք դուք յինէն ընդունել, և զոր մինչեւ ընկալեալ
զթուղթդ առաքեցիք ինձ զգիր գործակալութեանն:... Զի եր-
կու գիր գրեցի ես առ Վեհդ, խնդրելով զգիր գործակալու-
թեանն, և որոց արարիք դուք պատասխանի, թէ « Մինչեւ

“ բերան ի բերան խօսեցեալ զիրացս և զվտանգացն և զհե-
“ տեւանացն վաճառման տանդ, դժուարացի ժողովոյս որո-
“ շումն և յերկարեսցին իրքդ: ”

“ Եւ եղեւ այնպէս: Զի մինչեւ եկեալ այդր Վ. Հ. Յով-
հաննու և բերան ի բերան խօսեցեալ ընդ ձեզ՝ ոչ առաքեցիք
զգիր գործակալութեանս: Ապա չմնայր ինձ այլ գիր առ ձեզ
գրել, և ապա չեն իրաւացի այս բանք Թղթոյ Վեհիդ որպէս
և վերագոյն ասացի:

“ Իսկ միւռոնմն, Հ. Եսայեայ, զորմէ ասէք, “ Թէպէտ
“ ոչ ես յինէն ետու զգործակալութիւն երկմիլիոնեան կալ-
“ ուածոց վարժարանիդ, բայց և ոչինչ յայդպիսեաց տեսեալ
“ է իմ ի նմա, զի մերժեցից զնա: Այլ վասն դժպատեհ և
“ անարժան գրութեանցն յանդիմանեալ ասացի նմա զոր
“ ինչ առնելն պարտ էր, յոր թէ դանդաղեալ իցէ՝ յաւելից
“ արդ երկրորդել առ նա զհրամանն, և կարծեմ թէ ոչ ստուն-
“ գանեսցէ զայն: ”

“ Առ այս ասեմ ես և իրաւամբք, թէ այո՛ զի ոչ դուք
ետուք նմա զգործակալութիւն երկմիլիոնեան կալուածոց վար-
ժարանիս, այլ հանգուցեալ Գեր. Սոմալեան, և զայն խոր-
հրրդով և հաճութեամբ իմով, գոլով իմ յայնժամ անդ տե-
սուչ վարժարանիս, և ճանաչելով զիրս կալուածոցն, տեղե-
կանալով զայնմանէ յիտալացի գործակալացս, և փոյթ ունե-
լով զիրաւանց աղքատաց ազգիս, ըստ ճանաչմանս յարգի նո-
ցին, և ըստ ոգւով չափ աշխատութեանս:...

“ Բայց այժմ ընդ հակառակն է ամենայն, հեռի գոլով
ձեր ի Պատուխնէ և անծանօթ իրաց կալուածոցն, և անփոյթ
զիրաւանց աղքատաց ազգիս, չճանաչելով ձեր զյարգ նոցին,
առանց ինչ աշխատութեան ստացեալ զայն, որպէս և յայտ
է յարդեանց գործոց ձերոց ցարդ, ծախելով երկու միլիոն
ֆրանք եկամուտ զամս քսան, վասն յխուն և եթ մանկանց
առաջին սկզբանց ուսման, և ի նոցանէ եւս ոմանք թերակա-
տար յետս առաքեցան, սակս անյարմարութեան և ստահակ
վարուց իւրեանց, և նոքա եւս Պօլսեցիք էին ամենքեան,
յաղգականաց և ի բարեկամաց միաբանութեանդ:...

« Եւ թէ այո՛ ունէր նա, Հ. Եսայի, զպաշտօն գործակալութեան յառաջ քան զՁեր Առաջնորդութիւն միաբանութեանս, բայց չունէր նա յայնժամ զայդ ժպիրհ յանդգնութիւն առ տեսուչ վարժարանիս, զոր ունի այժմ յԱռաջնորդութեան ձերում, և պատճառքն յայտնի են ամենեցուն, արհամարհութիւն ձեր որ զխորհրդոյ իմոյ։ . . . Թողից ասել, զի ունի նա և զգործակալութիւն կալուածոց միաբանութեանդ, ստացեալ ի ձէնջ զպաշտօնն զայն, զոր չյիշատակէք դուք բնաւ, յիշատակելով իմ միանգամայն ի նախընթաց թուղթն իմ առ ձեզ։ . . .

« — Բայց և ոչինչ յայդպիսեաց տեսեալ է իմ ի նմա, « ասէք, զի մերժեցից զնա։ »

« Հարցանեմ ես ընդ այս նախ՝ թէ զի՞նչ պարտ իցէ տեսանել ձեր ի նմա, որով և իրաւունս ունիցիք մերժել զնա. արարքն Հ. Գրիգորի Ալէփսոնի՝, 5,000 ֆրանք խորիցէ և կամ վատնիցէ նա ի պաշտօն անդ իւրում. . . և եթէ առնիցէ նա զայն, զի՞րդ խմանայցէք դուք զայն, հեռի գոլով ձեր ի կալուածոց, և անծանօթ իրացն այնոցիկ։

« Երկրորդ՝ գրեա՛լ իցեմ ես առ Վեհդ թէ մերժեսջիք զնա ի պաշտօնէ անտի, թէ չէ պարտ թողուլ ի ձեռս նորա միայն զայդչափ մեծ և զծանր պաշտօն, այլ օգնական և ընկեր նմա կարգել զգք այսի ի զգուշութիւն իրացն։ . . .

« Եւ երրորդ՝ չեղէ՞ք արդեօք խելամուտ ի յանդուգն և յանմիտ բանից գրութենէ նորա առ իս, թէ զի՞նչ ակնկալութիւն պարտ իցէ ձեզ ունել ի նմանէ ի պաշտօնն յայն կարեւոր, զոր ակնարկեալ եմ ի պատասխանիս թղթոց նորա։ . . .

« Տեսանէ՞ք թէ զի՞րդ արհամարհեալ են ի ձէնջ ամենայն խորհուրդք իմ։ . . .

« Ահա ի համառօտ և յիրաւացի կարծեցեալ բանից թղթոյ ձերոյ գուշակեմ ես, թէ ո՛րպիսի յանդիմանութեամբ յանդիմանեալ իցէք զնա ընդ դժպատեհ և անարժան գրութիւնս նորա առ իս, և թէ զի՞նչ պարտն իցէ զոր ասացեալ իցէք նմա։ . . .

« Արարէք Գեր. Տէր, որպէս և կամիք, զի բացարձակ իշ-

խանութիւն ունիք դուք այսօր ի ձեռին ձերում... բայց գիտասջիք, զի այս ամենայն ի պատմութիւնս մնացէ և ի տիպ արձանացի յաւուր միում, որով և անաչառ քննութիւն լիցի զմատակարարութենէ ձերմէ, ի պաշտօնդ յայդ որբազան, յիրաւունս աղքատաց, և որով դատաստան, ոչ ըստ կարծեցեալ խղճի մտաց ձերոց, այլ ըստ արդարութեան և ըստ ուղիղ ճանաչման հասարակաց:..

“ — *Եւ զոր թելադրէքն ածել ընդ իս ի Հռոմ և զՎեբապատուելի Հ. Յովհաննէս, բարւոք է յոյժ և ինձ իսկ ցանկալի, առէք, բայց զի՞րդ կարացէ նա յայնժամ փութալ ի գործ կատարման առաջարկութեան վարժարանիդ:* ”

“ *Զոր ինչ միանգամ թելադրեցի ես ցարդ Վենիդ դըրութեամբս, ոչ վարկպարագի և առանց մտածութեան թելադրեցի, գուշակելով իմ հաւաստեաւ զանյաջող ելս առաջարկութեան վարժարանիս, կախելոյ ի վաճառմանէ տանս, զորոյ անյաջողութենէն յայտնապէս գուշակեցի ես ի թուղթն իմ որ ի 25 անցեալ ամսոյ, որպէս և զճշմարտութիւն բանիցս ծանուցի անդ յետ գրութեանս:..*

“ *Ապա ոչ են առանց մտածութեան գրեալքն իմ առ ձեզ ցարդ:..*

“ *Մնամ*

“ *Գերապայծառ Տէրութեանդ*

“ Ի Փարիզ. 10 ապրիլ. 1850.

“ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

“ Յ. Գ. *Առանձին և կարեւոր գիտելիք ։ Ինչ մի միայն զոր հարկաւոր համարիմ ծանուցանել Վենիդ, թէպէտ և անագան, բայց ակամայ, իբրեւ ի լրումն պարտուց անուղղակի պաշտամանս, զպաշտօնէս առեմ յղելոյ իմ այդր երիցս զհաշիւ տարեկան ծախուց վարժարանիս, տալով ինձ ի գործակալէ սորին ։*

« Ի մեկնիլ սորա աստի զալ այդր ըստ հրամանի ձերոյ, ասացի ցնա նշանակել ի թղթի զամենայն պարտիս և զանուանս պարտատեարցն, որոց քանի՛ ինչ և ե՛րբ պարտ էր հատուցանել։ Արար նա այնպէս, և եթող զայն առ Վ. Հայր Գաբրիէլ. քննեալ իմ զայն ապա՝ տեսի, զի հասանէին նշանակեալ պարտիքն յ11,000 ֆրանք, որ ընդ ամենայն լինին 33,000 ֆրանք, հանդերձ վաշխիւքն։ Բայց յայտնանէ զոն և այլ պարտիք. զի գան աստ օր ըստ օրէ և այլ պարտատեարք, զորոց պահանջ և զանուանս չէ նա նշանակեալ ի թղթի անդ, և ոչ բերանով ասացեալ մեզ աստ երբէք, և այսպէս՝ կարծեմք մեք զի բոլոր պարտիք վարժարանիս հասանիցեն յ40,000 ֆրանք և առաւել... կարծեմ ես զի յայտնեալ իցէ նա ձեզ այդր, թէ քանիո՞ն իցեն բովանդակ պարտիքն, զոր կիսով չափ թաքոյց նա յինէն մինչև ցարդ, վասն որոյ և ես անմեղադրելի եմ ընդ անագան ծանուցանելս Վեհիդ, չունելով իմ տեղեկութիւն զծախուց անցեալ ամի, թէ քանի՛ էին։

« Իսկ եթէ թաքուցեալ իցէ նա և ի ձէնջ ըստ սովորութեան իւրում, ... գիտասջիք զի ըստ այնմ զարման տանել իւրացն, հատուցանել ժամ մի յառաջ զբովանդակ պարտսն առ ի փակել զհաշիւ ծախուց վարժարանիս, եթէ ոչ կամիք զի քաղցկեղս այս առաւել եւս ճարակ գտցէ հնանալովն։

« Ահա լրումն պարտուց անուղղակի պաշտամանս, յղելոյ այդր զտարեկան հաշիւ ծախուց վարժարանիս, հայեցեալ ոչ միայն ի վնաս աղքատաց ազգիս, որ արդէն անհնարին ցաւ է սրտիս, ... այլ և ի նախատինս միաբանութեանս, որում բաժանորդ եղէ ես հարկաւ, թէպէտ և անհաղորդ եմ մատակարարութեանն։ Եւ ահա զայս ցաւոյ և զքաղցկեղէ էին բանք թղթոյ իմոյ երբեմն որ առ ոմն, Հ. Եսայի, և որոց արար նա այնպիսի պատասխանի։

« Թէպէտ և լսեմ այժմ, ի բանից թղթոյ ուրումն այտի, Հ. Յովհաննու, թէ ոմն այն, ըստ առակին, ոչ այնպէս տըգեղ է որպէս ինքն կարծէր և նկարագրէր աստ երբեմն, և թէ՝ ամենայն բանք գրուցեալք որ զկրուանց աղքատաց ազգիս եղեալ մինչև ցարդ, արգասիք իցեն մարդկային տկարութեան

և եկամուտ կրից, և թէ՝ պարտ է գործակալաց վարժարանին, համասնունդ եղբարց, տեսանել երբեք երբեք զմիմեանս այդր, և զայլոց ամենեցուն զգիրս ածանել այսր և այդր։

« Ահա արդիւնք ճանապարհորդութեան հրաւիրելոյն ի ձէնջ, բայց ճշմարտութիւնն յայտնեսցէ ապա զամենայն… և արդարութիւնն արասցէ զարժանն. . . .

« Եւ արդ յառաջել և յանակնկալ ծախուց վարժարանիս բռնադատիմ ես դարձեալ ի խղճէ մտացս, և յանհնարին և յանհրաժեշտ նախատանաց միաբանութեանս յիշեցուցանել ձեզ վերստին և կրկին կրկին զտարեկան ծախս վարժարանիս, որք հասանեն այժմ առաւել քան զ80,000 փրանք, և այսչափ գումար արծաթոյ վասն քսան և եթ մանկանց, և վասն սկզբանց ուսման նոցա, զոր կարէին նոքա ուսանել ի Պօլիս սակաւիկ ինչ ծախիւք և բազմագոյն թուով։

« Քսան ասացի զնոսա, զի վեց ի նոսա անընդունակ են ամենայն ազգ ուսմանց։

« Եւ ահա ընդ այս անուղիղ և չարաչար մատակարարութիւնն էին և են բողոք և յայտարարութիւն իմ ի սկզբանէ հետէ, զոր Վեհդ մեր այլ ընդ այլոյ մեկնեալ զբանս գրութեանս՝ և մերթ արհամարհեալ զայն լռութեամբ։ Մեկնեսջիք դարձեալ և զբանս այս գրութեանս որպէս և գիտէք, և արհամարհեսջիք և զայս լռութեամբդ որչափ և կամիք. զի որ ինչ վասն իմ ի խորհուրդ և ի գործ վարժարանիս վճարեալ է ամենայն, քաւեալ գոլով իմ յամենայնէ, ի մնացուց աղքատաց ազգիս և ի նախատանաց միաբանութեանս։

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 10 ապրիլ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Եսայեայ տուեալ յանդիմանական պա-

տասխանւոյ, Հ. Սարգսի, զոր վերագոյն յիշատակեցաք, օրինակ զայս.

« Գերյարգոյ և Արժանապատիւ Վ. Հ. Սարգիս վարդապետ.

« Ջյարգոյ գիր Վերապատուութեանդ ընկալայ աւուրբք ինչ յառաջ ընդ ձեռն Գեր. Աբրահօր, զոր և ընթերցայ բազում երկայնմտութեամբ և համբերութեամբ, և առ ի տալ նմին զվախճանական պատասխանին, ասացից միայն, զի եթէ Վերապատուութիւնդ ուշի ուշով ի քնին առնուցու զամենայն հանգամանս գրուածոց իմոց, քաջ տեսանէ զի բանք իմ չեն արտադրեալք յոգւոյ նախանձու և ատելութեան և ոչ իսկ նպատակ եղեալ էր իմ ի վիրաւորել զսիրտ Վերապատուութեանդ, վասն որոյ խնդրեմ ներումն շնորհել սըխալանացս։

« Գտանէք ծրարեալ ի գիրս զփոխանակագիր 4,000 ֆըրանքաց՝ յանուն ձեր, զոր յղեմ ի պատճառս ներկայ գրութեանս. յայլ նուագ յղեսցէ որում անկ իցէ։ . . .

« Ամենեցուն սիրոյ ողջունիւ որ ի վարժարանիդ,

« Մնամ

« Գեր. Վերապատուութեանդ

« Բատվա. 12 ապրիլ. 1850.

« Ն. Ծ. Հ. ԵՍԱՅԻ ՄՋՐԱՔ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ վերոյիշեալ Թղթոյ Հօր Եսայեայ, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ Հայր.

« Ընկալայ այսօր զցանկալի պատասխանին ձեր, տուեալ ի 12 ամսոյս, հանդերձ ծրարելովն ի նմին 4,000 ֆրանքի փոխանակագրովն, զոր յղեցիք յանուն իմ պատճառաւ վերջին

այս գրութեանդ, յայլ նուագ յղեսջիք զայն որում և առ որ անկ իցէ յղել:

« Շնորհ ունիմ երկայնմտութեան և համբերութեան ձերոյ ընթեռնուլ զձիգ և զանախորժ արդեօք պատասխանիս թղթոց ձերոց, թէպէտ և ճշմարտութիւն . . . և առաւել ևս ճանաչմանն սխալանացդ, եթէ իցեն այնք ի հաւանութենէ մտաց, և ոչ ի հարկէ իրաց : . . Եւ եթէ արդարեւ ուշի ուշով ի քննե առեալ իցէք զամենայն բանս պատասխանւոյս, չտեսանէիք յայն բնաւ զնախանձու և զատելութեան ոգւոց զանգատանացս, այլ զկարճմտութենէ և զանզգացողութենէ միայն, որով վիրաւորեցիք զսիրտ իմ տարապարտ. և հաստատութիւն այսմ, ահա տեսանէք յայն, զի չեմ ես տուեալ պատասխանի ամենայն բանից թղթոց ձերոց, որպէս և բանից թղթոյդ, գրելոյ ի 11 հոկտեմբերի 1846, տալով իմ ձեզ յայն իրաւունս լռութեամբս, զոր և հաստատեմ այժմ նորոգ փորձառութեամբս, զի ըստ սկզբանց իմոց՝ պարտ է տալ ամենեցուն և հակառակորդին մերում անգամ զիւր ինչ իրաւունս, և զի ըստ առակին թէ « Պարտ է և սատանայի տալ « զբաժին իւր : » Եւ թէ « Սատանայն չէ այնպէս տգեղ որ« պէս և նկարագրի, » և որպէս նկարագրեաց զնա ոմն, Հ. Յովհաննէս, երբեմն այսր, և այժմ զզջացեալ է ընդ այնր այդր, գուցէ այլ ինչ խորհրդով և զխտաւորութեամբ:

« Բայց գիտասջիք զի եթէ կանուխ և եթէ անագան ճշմարտութիւնն յայտնեսցէ զամենայն, և արդարութիւնն տրասցէ զարժանն : . . . Ապա երկայնմտութեան և համբերութեան պէտք են յամենայնի:

« Մնամ

« Յարգոյապատիւ Հայրութեանդ

« Ի Փարիզ. 18 ապրիլ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում խոստովանի նա զճշմարտութիւն բանից Հ. Սարգսի,

հայեցեալ ի ճանաչումն յարգոյ արժաթոյ աշքատաց, և խոստանայ կատարել զառաջարկութիւն նորա, հայեցեալ ի գործակալութիւն կալուածոց վարժարանին, այլովքն համդերձ, որ ունի օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Ընթերցեալ զթուղթ Վերապատուութեանդ, զգրեալն ի 10 ամսոյս, չգիտեմ զինչ և զիարդ տալ պատասխանի, որովմարթացայց ոչ զանձն իմ արդարացուցանել, այլ համոզուցանել զսիրտ ձեր վշտացեալ։ Ինձ միշտ մեծարոյ են խորհուրդք ձեր և թելադրութիւնք, և զոր կարեմս և որչափ յիսն է իշխանութիւն՝ ջանամ առնել և ջանացայց։ Զայս թէ չկարեմ արդ հաւատարիմ առնել ձեզ՝ ժամանակն թերևս ցուցցէ և հաւատարմացուսցէ զամենայն։

« Խոստովանիմ և ես, զի զյարգ արծաթոյն կորզելոյ առ ի ձէնջ՝ ոչ ոք կարէ գիտել իբրև զձեզ, և ես թէպէտ և ոչ ձեօք չափ գիտիցեմ, սակայն գէթ վասն երաշխաւորութեանս հարկ է ինձ խնամ ունել այնմ և խնայել, զի ոչ ի մարդկանէ միայն, որպէս ազդէ Վերապատուութիւնդ այժմուցն և ապագայից, այլ որ և մեծագոյն և ահաւորագոյն ևսն է՝ ի դատաստանացն Աստուծոյ մարթացայց անդատապարտ զերծանիլ. վասն այնորիկ իսկ մարմրքի սիրտ իմ և մաշին ոսկերքս ի հոգոյ, քուն հատեալ է յաչաց իմոց և ի տանջանս ինձ կերակուրն զոր ուտեմ։

« Թելադրեք ինձ և կարի իմաստութեամբ՝ տալ զդք ընկեր և գործակից Վ. Հ. Նշայեայ։ Մեր էր թէ զոյր, և տայի ոչ մի և եթ այլ և զերկուս, և ոչ առիպէի զնոյն ինքն և ի վերայ կալուածոց միաբանութեանս կարգել։ Սակաւիկ մի ևս համբերեսցէ Վերապատուութիւնդ, մինչև խուն մի ևս զարգասցին կրտսերագոյնքս մեր, և յայնժամ մարթ լիցէ մեզ առնել և զայն։

« Իսկ բանիւն այնուիկ՝ թէ « Մինչև ընկալեալ զթուղթդ

« յղեցի զգիր գործակալութեան, » ոչ զայն ասել կամէի թէ և այլում թղթոյ միայի առ ի ձէնջ ի յղել զայն, այլ թէ մինչչեւ ընկալեալ զգանգատանացդ գիր, զորմէ մարթ էր կարծել թէ շարժեալ և յղեալ իցեմ։ Զայսոսիկ համառօտիւ տուեալ պատասխանի, զմնացեալն ի տեսանելս տէրամբ զմի-մեանս ի բերանոյ ցեից յերկար։

« Զվ. Հ. Յովհաննէս մտադիր՝ որպէս գրեցի, ածէի ընդ իս ի Հռովմ, այլ նա փութայ դառնալ այդրէն, զոր ամենա-կարեւոր համարի, զի առանց վնասուց և ըստ կարգի աւար-տեսցին պարտք իւր։

« Ի Հռովմայ չիք նոր դեռ ևս, և որ ինչ են՝ ընթերցջիք ի վերջնում թղթի Գեր. Եդուարդայ, զորոյ զօրինակն ծրա-րեմ ի սմին։ Ողջ ցանկամ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 22 ապրիլ. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում ցուցանէ զաղէտն որ ի խիստ բանից գրութեան Հօր Սարգսի, զղջայ և ցաւի ընդ կորուստ պատեհութեան փաճառ-ման տանն գպրոցին, զոր պատիժ յերկնուստ համարի, և գան-գատի զմատակարարութենէ Հ. Յովհաննու, վկայելով և իւր թէ չճանաչէր նա զյարգ արծաթոյ, զոր երբեմն ազգ արա-րեալ էր Հ. Սարգիս, և յանդիմանեալ իբրեւ արատող համ-բաւոյ նորին։ Ահա արդարանայ Հ. Սարգիս ի կարծիս իւր վկայութեամբ Աբբային, հանդերձ մխիթար ինչ բանիւք, օրի-նակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ՝ և մեծարանաց ողջունիւ խանդաղ.

« Յապաղեցի գրել ցայս վայր կարեվէր հարեալ տրտմու-թեամբ եթէ՝ վասն փոխելոյ կուսանացդ ի խորհրդոց իւրեանց

և եթէ՛ վասն ցաւալից և աղեկէզ բանիցդ գրեցելոց ։

“ Առաւելագունից արդեօք արժանի էի բանից, եթէ արգարեւ՝ որպէս համարի Վերապատուութիւնդ, այնպէս լեալ էին իրքն ։ Այլ իցէ՛ թէ խուն ինչ նուազ զանգիտեալ էր իմ ի վարելոյ Ասիական իշխանութեամբ, զի ոչ զայս կիրս կրէի արդ. քանզի և իմ կամք եթէ ոչ յառժամայն փոխադրութիւն դպրոցիդ, սակայն ի վաճառումն պալատանդ համաձայն ընդ ձեզ էին, այլ այս կամք եղեն երկնից հարկանել զիս յամենուստ ։

“ Այժմ ի փոխել հանգամանաց իրացն՝ զհետ եմ հաւանեցուցանել զՎ. Հ. Յովհաննէս աստի դէպ ուղիղ երթալ ի Պօլիս, և այդր յղել արծաթ ի հատուցումն պարտուցն, որ ոչ եթէ հնգետասան հազար ֆրանք, որպէս այդր ասացեալ էր, այլ երեսուն և եօթն հազար լեալ են, և ութեւտասն հազար վանացս կամ տպարանիս ։

“ Եթէ խուն ինչ առաւել գիտացեալ էր նորա զյարգ արծաթոյ՝ ոչ արդեօք յայս հասանէին իրք վարժարանիդ, այլ եղեւ որ ինչ եղեւն ։ Իմ արդ միակ սփոփանք քաջապէս զարգացումն է և յառաջադիմութիւն մանկտւոյդ, որում և ինքն վկայէ մեծապէս դրուատեօք ։

“ Եւ զի Պարոն Աղեքսանդր գրեալ էր առ իս չառնել զհանդէս նուակատեացն մինչեւ չերթայց ես՝ սպասեմ առ ինմանէ պատասխանւոյ, զի ի Հռո՛վմ նախ եթէ ի Լոնտոն ուղեւորեցայց. վասն որոյ յանցանելն իմ ընդ այդր բերան ի բերան խօսեցեալ՝ յաջողեսցի ինձ թերեւս ցուցանել Վերապատուութեանդ, զի չեն յիս այն կամք և խորհուրդք զոր կարծէք, և այնպէս միաբանութեամբ խորհել զօգուտ Միաբանութեանս և զվարժարանիդ ։

“ Մաղթեմ ողջ լինել

“ Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

“ Վենետիկ. 18 ապրիլ. 1850.

“ Ն. Տ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ,

“ Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. ”

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում վերստին յիշատակէ զբողոք իւր որ ընդ անուղիղ մատակարարութիւն Մ. վարժարանին, և խնդրէ դադարեցուցանել զգրութիւն նորա ընդ այն, հանդերձ նորոգ ազդարարութեամբ և մաղթանօք, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ցանկալի և զցաւալից նամակ Վեհիդ, գրեալ ի 18 ապրիլիս, ընկալայ ի 23 սորին ամսոյս, և ընթերցեալ զայն՝ նորոգեցան և յաւելան յիս ցաւքն, որ ընդ խնդիր վարժարանիս, ի յիշատակել անդ զնորոգ և զառաւել վնասն աղքատաց ազգիս, և ի համարել զգրութիւն իմ առ ձեզ աղեկէզ թանք, և ոչ դարման վիրաց, վնասուց ասեմ հասարակաց:... Ո՞չ ապաքէն վասն այսորիկ աղաչեցի ես զՎեր. Տէրդ դադարեցուցանել զգրութիւն ձեր ընդ այս, տեսանելով իմ քաջ և փորձ իսկ գոլով, թէ ոչ գոյ բնաւ ի գրութենէ աստի մեզ ինչ մխիթարութիւն մանաւանդ թէ նորոգութիւն և յաւելումն ցաւոց զոր զգամ ես այժմ միանգամայն... և վասն այսորիկ չկամիմ ես արդ ի սմին յիշեցուցանել ձեզ վերստին զազդարարութիւնս իմ առ ձեզ երբեմն, և հաստատութիւն բանից ճշմարտութեան, չտեսանելով և յայսմ ևս ինչ մխիթարութիւն, միանգամայն և հատուցեալ իմ զամենայն ի նախընթաց թուղթն իմ առ ձեզ. ապա մնայ և ինձ արդ ասել ընդ Վեհիդ, թէ այլ եղեւ որ ինչ եղեւն, թէպէտ և ամենայն ինչ ոչ բարւոք եղեւ. և թէ և իմ արդ միայն սփոփանք սրտի են անվրէպ ճանաչումն և անարատութիւն խղճի մտացս, որ ի խնդիր վարժարանիս, չխորշելովիմ բնաւ ուստեք խօսել և գրել զճշմարտութիւն, հայեցեալ յիրաւունս աղքատաց ազգիս և ի պատիւ միաբանութեանս:

« Իցի՜ւ թէ այս ամենայն վնաս լիցի ի խրատ մանաւորաց և յօգուտ հասարակաց, եթէ ոչ ձեռամբ իմով, գոնէ ի ձեռն այլոյ, հոգեհարազատ եղբարց իմոց:...

« Եւ ապա մնայ ինձ արդ առանձին անարժան բերանովս

աղօթել առ Աստուած, վասն յաջող ճանապարհորդութեան և գործառնութեան Վեհիդ ի Հռոմ և ի Լոնտոն, և վայելել զցանկալի տեսութիւն և զհայրական օրհնութիւնդ յանցանելդ այսր : . . .

« Մնամ

« Գերայպածառ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 24 ապրիլ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ վերոյիշեալ պատասխանւոյ Գեր. Հիւրմիւզի, յորում ցուցանէ մխիթարութիւն ընդ ճանաչումն նորա ուղիղ, և քաջալերէ զնա հանապազորդել ի նոյն հանդերձ արդեամբք, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ցանկալի և զմխիթար նամակ Վեհիդ, գրեալ ի 22 ապրիլի, ընկալայ ի 28 սորին ամսոյս, և մխիթարեցայ ոչ սակաւ ի յուսադրական և ի քաջալեր բանից նորին որ ի դարման իրաց վարժարանիս, և ի հանդարտութիւն վշտացելոյ սրտիս:

« Շնորհ յայժ ունիմ Աստուծոյ և հզօր Աջոյ նորին որ զօրացոյց զՎեհդ ի միտս հաստատուն խորհել և առնել զարժանն, ոչ միայն ըստ հարկի երախտաւորութեանդ, այլ և ըստ պարտուց որբազան պաշտամանդ, և աղաչեմ զնա զի զօրացուսցէ զձեզ միշտ ի նոյն, հանդերձ գործունեայ կամօք և արդեամբք իսկ, ի լրումն մխիթարութեան սրտի իմոյ և ի յաւելումն վարձուց և փառաց ձերոց որ յԱստուծոյ և որ ի մարդկանէ :

« Զայսոսիկ այսպէս հաւատարիմ արարեալ՝ ապա չեն է չիցեն Վեհիդ ջանից պէտք յորդորայցուցանել զանձն իւր և հանդուցանել զսիրտ իմ, զի արդիւնք իւրացն ինքնին վճա-

րեսցեն զամենայն . . . և ապա չմոռմոքիցի սիրտ Վեհիդ ի հոգոց, զի կարեկից սիրտք որդւոցդ և աշխատութիւն ոգւոյ Նոցա և արթնութիւն ի գործս թեթևացուսցեն զհոգս ձեր ։

« *Զպահանջեմ ես յայլոց ձանձրալից իրրեւ զիս գյարգ արժարոյն, զոր ոգւով չափ աշխատութեամբ կորզեցի ի բերանոյ առիւծոյն. այլ բաւական և չատ համարիմ, ճանաչել Նոցա միայն զկորուստ Նորին և դարման տանել վնասուն, որում ակն ունիմ ողորմութեամբն Աստուծոյ և յուսադրական բանիւք Վեհիդ ։*

« *Յաղագս սակաւութեան բաւական անձանց ի միաբանութեանդ չունիմ, ասէք, զոք յարմար տալ գործակից Հ. Եսայեայ ։ Շատ համարիմ ես արդ զճանաչումն Վեհիդ որ ընդ կարեւորութիւնն այն, և աղաչեմ զՏէր զի հանցէ մշակ ի հունձս իւր : . . . Ապա արթնութեան պէտք են Ձեզ ի պաշտօնն յայն մինչեւ յաջողեսցէ Տէր զայն ։ Իսկ յաղագս կարծեաց իմոց, ածելոյ ընդ Ձեզ ի Հռովմ զՎ. Հ. Յովհաննէս, և ամենակարեւոր համարելոյ Նորա փութով դառնալ այսրէն, զի առանց վնասուց և ըստ կարգի աւարտեսցին պարտք իւր, չկամիմ ես արդ առաւել ինչ ասել, մինչեւ արդիւնք բանիցն ինքնին յայտնեսցին. այլ այսչափ միայն ասեմ, թէ արդարեւ որոշեալ էք առաքել զնա ի Պօլիս, և նա յանձն առեալ է գնալ անդ, և թէ ունի նա ճիշդ յիշատակութիւն պարտուց իւրոց աստ, և յայտնեալ է ձեզ զայն այդր, թեթեւ ինչ համարի նա զվայրապար ծախսն կրկին ճանապարհորդութեան իւրոյ այտի այսր և աստի ի Պօլիս, քան զվնասն պարտուց իւրոց հատուցելոց ձեռամբ այլոյ, և կամ ո՞չ ըստ կարգի աւարտեսցին պարտք իւր աստ : . . . Տարակուսիմ ես ընդ այս, մանաւանդ թէ զհակառակն կարծեմ ես, ճանաչելով և փորձ իսկ գոլով բազում իրաց : . . .*

« *Զպատճէն թղթոյ Գեր. Եդուարդայ ընթերցաք բազում մխիթարութեամբ, և գոհութիւն Տեառն մատուցաք յոյժ, որ պաշտպան է անմեղաց. յուսամք զի մինչ խապառ պաշտպանեսցէ Նոցա հանդերձ յաղթանակաւ, զոր և փափաքեմ լը-*

ռել ի բերանոյ Վեհիդ կենդանի ձայնիւ ի ցանկալի գալստեան Ձերում այսր Տերամբ, և Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« Ի փարիզ. 30 ապրիլ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Հ. Յովհաննու, յորում ցուցանէ, զի այս երկրորդ թուղթ նորա կրկնութիւն է առաջնոյն, որում չկամի Հ. Սարգիս այլ ինչ քան զառաջին պատասխանին իւր ասել, յանդիմանելով եւեթ զփոփոխականութիւն բարոյից Հ. Յովհաննու, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ Հայր.

« Ընկալայ յերէկ և զցանկալի գրեալդ, որ ի 27 անցելոյ, և ընթերցեալ զայն ուշի ուշով, ապաքէն ոչ առաւել և ոչ նուազ ինչ իմաստս բանից քան յառաջին գրեալդ իմացայ ես յայն, թէպէտ և ջանայք դուք այլազգ մեկնել զայն, ի ձեզ ինքն միայն հայեցուցանել զբանս գրութեան ձերոյ. բայց յայտնի են բուն իմաստք նոցին, թէ՛ ի դիմաց դերանուանն և թէ յարգեանց իսկ իրացն։ Ի դիմաց դերանուանն, քանզի ասէք անդ, եթէ մարդկային ինչ անցեալ էր ընդ մեզ և ընդ վանս, և ոչ՝ ընդ քեզ և ընդ վանս, ըստ այժմու մեկնութեանդ. և յարգեանց իսկ իրացն, քանզի չէր ինչ անցեալ ընդ քեզ և ընդ վանս, չլինելովքո բնաւ գրութեամբ ընդ Վեհիս, և ընդ Հ. Եսայեայ։ Գիր մի միայն համարձակութեամբ գրեցիք դուք առ Վեհս, և զայն եւս չառաքեցիք առ նա, չկամեցեալ քո ի վէճ գալ ընդ նմա. այլ ես էի միայն որ գրէի և վիճէի ընդ ամենեսեան, ընդ Վեհիս և ընդ Հ. Եսայեայ, պաշտպանելով զիրաւունս ողբատաց ազգիս, և ջատագովելով ընդ քեզ յայն ինչ յոր իրաւունս ունէիր արդեօք։ . . .

« Ապա արդեամբք յիս հային բանք գրութեանդ և ոչ

ի քեզ ինքնդ, և արգասիք մարդկային տկարութեան և եկամուտ կրից գրութիւնք իմ իմացեալ լինին... և ապա չմնայ ինձ արդ աւելի կամ պակաս իմաստիւք բանից առնել պատասխանի վերջին գրութեանդ՝ քան զոր միանգամ արարի առաջին գրութեանդ, հատուցեալ իմ անդ զամենայն լիով, մեկնեալ զհարազատ իմաստս բանից գրութեանդ, և ծանուցեալ քեզ զճանաչումն իմ և զփորձառութիւնս որ ի պաշտօնս և ի պաշտօնեայս վարժարանիս:... Վասն որոյ աղաչեմ մի՛ ևս աշխատ լինիր գրել առ իս գիր կամ բերանով խօսել ընդ իս զայսմանէ... զի Առաւելութիւն բանից պատերազմող է լըսելեաց. որպէս ասաց ոմն ի հնումն, և իմաստութեամբ. և զի ըստ առակին, Ձայն մժղան քնար է իմացողին, երգիոն սակաւ է չիմացողին: Այո՛ բաւական և շատ է այսչափ գրել, եթէ տակաւին հարկ է զմիմեանս տեսանել:

« Ինչ մի միայն զոր ոչ աւելորդ և ոչ անդէպ համարիմ աստ յիշատակել, և զձեզ խելամուտ առնել:

« Ի թուղթն ձեր որ առ Վ. Հ. Գաբրիէլ, յիշէք դուք զառակս զայս Իտալացի, թէ Սատանայն ոչ այնպէս տգեղ է որպէս նկարագրի. զոր և ի դէպ համարիք ի դէմս Հ. Եսայեայ առնուլ, յարդարացուցանել զնա ի գնացս իւր որ ընդ իս, և այն ի պատճառս քո:...

« Այո՛ հաւանեալ եմ և ես ընդ քեզ այսմ, և հաստատեմ ևս զայս, այլ ինչ դիպողագոյն նմա առակս, թէ Պարտ է և Սատանայի ևս տալ զիւր բաժին. այսինքն, թէ պարտ է և հակառակորդին մերոյ յիրս ինչ տալ իրաւունս որում և ետու ես զայն. ի պատասխանիս թղթոյն Հ. Եսայեայ՝ ջատագովեցի զքեզ անդ, հայեցեալ ի ջանս և յաշխատութիւն քո որ ընդ ազատութիւն միաբանութեանս ի բռնութենէ Աւստրիոյ տէրութեան՝ թէպէտ և ոչ ամենայն եղբարքդ որոց տեսութեամբ բերկրեալ ես այժմիկ ծանեան և ընդունին զայն:...

« Իսկ հայեցեալ ի կնիք բնաւորութեանդ, զորմէ գրէր նա, համանունդ եղբայրդ, ասելով թէ ինքն քաջ ճանաչէր, ըստ որում և նկարագրէր ի թուղթն իւր առ իս, ես ոչ արարի

այնր բանից թղթոյ Նորին պատասխանի, տալով Նմա իրաւունս յայն, թէպէտ և ցաւօք սրտի ։ . . .

« Մնամ

« Յարգոյապատիւ Հայրութեանդ

« Ի Փարիզ. 5 մայիս. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԼԲ.

Խնդիր Գեր. Հիւրմիւզի խնամ ունել Հ. Սարգսի Մ. վարժարանին, և չքանիլ խոպառ. — Գուշակութիւն Գեր. Հիւրմիւզի զպահեալ դիպացն Մ. վարժարանին. — Հաւանութիւն Հ. Սարգսի ընդ խնդիրն և ընդ գուշակութիւն նորա. — Գաղտնի բնաւորութիւն Հ. Յովհաննու և ցանկութիւն նորա. — Հակառակութիւն բանից և գործոց նորա. — Յայտնութիւն նորոգ պարտուց Մ. վարժարանին. — Յուսահատութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ այն, և գանգատ զգնացից Հ. Յովհաննու ի մատակարարութիւն Մ. վարժարանին. — Ամբաստանութիւնք զմիաբանութենէ ի Հռովմ օր ըստ օրէ սաստկանայ. — Չկամիլ Հ. Յովհաննու գնալ ի Պօլիս նախ քան զդարձ իւր ի Փարիզ. — Քաջալերութիւն և խրատ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ ընդ ամբաստանութիւնս ոտխից. — Ցնծութիւն ընդ գնացս Հ. Յովհաննու.

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում խնդրէ պահել նորա զխնամս իւր առ վարժարանն և չքանիլ խոպառ, գուշակելով մարգարէական իմն ոգւով զպահեալ դէպս վարժարանին, որ մասամբ ինչ կատարի ի 1855 ամին, յամսեանն մայիսի. և կատարեսցի արդեօք բոլորովին, այլ չգիտեմ յորո՛ւմ ամի, ի հատուցումն իրաւանց

աղքատաց ազգիս, և ի մխիթարութիւն պաշտպանողի նո-րին,... օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջունիւ խնդալ.

« Թէպէտ և խնդրէ յինէն Վերապատուութիւնդ չգրել ինչ առ ձեզ գիրաց վարժարանիդ, բայց իմ չկարացեալ հա-ւանել այնմ՝ խնդրեմ և ես ի Վերապատուութենէդ խուն մի եւս երկայնամտել, մինչեւ յաջողեսցի ինձ Տերամբ գալ այդր. ո՛ գիտէ թերեւս այլազգ քան զոր կարծիմս գտայց ձեզ։

« Վերապատուութիւնդ եկից արդարեւ զպարտս իւր առ իս ազգարարութեամբքն. բայց որպէս ծնողք մինչ խպառ խնամարկեն առ որդիս՝ ոչ չատ սսացեալ երբէք, զնոյն օրի-նակ անշուշտ և Վերապատուութեանդ խնամք իցեն առ վարժարանդ։ Նմին իրի չէ պարտ լքանել ձեզ մինչ խպառ. ո՛ գիտէ զինչ այլ դէպք և պատեհ պատրաստիցեն երկինք, որում միայնոյ է ի չարեաց անակնկալ հանել բարիս։

« Առաւելագոյն քան զայս չկարեմ տալ պատասխանի ցաւագին Թղթոյ Վերապատուութեանդ՝ գրեցելոյ ի 24 ապրի-լի. այլ յաւելում և եթ ծանուցանել, զի որոշեալ հաստատե-ցաւ ժողովով՝ Վ. Հ. Յովհաննու երթալ աստի դէպ ուղիղ ի Պո-լիս, և խօսել անդ ընդ մերոցն վասն փոխադրութեան վար-ժարանիդ անդր, և խելամուտ առնել զնոսա ամենայն պատ-ճառաց և օգտութեանց իրին, որպէս զի բազմացն հաւա-նութեամբ եւցէ ի գլուխ կարեւորագոյն այդ խորհուրդ։

« Յանկամ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 3 մայիսի. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ,

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի առեալ բանից թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում ցուցանէ զանպակաս խնամս իւր առ վարժարանն, և հաւանի գուշակութեան նորին որ զգիպաց պատրաստելոց երկնից, ի պաշտպանութիւն իրաւանց աղքատաց ազգին, զոր և հաստատէ վկայութեամբ սուրբ գրոց և ապացուցութեամբ գործոց ի դատաստանի, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Խնամք իմ և փոյթ ի գործս վարժարանիս, որ վասն իրաւանց աղքատաց ազգիս, արդեամբք վկայեալ են յայաչափ ամաց հետէ. զի որպէս մինչեւ ցայժմ երկայնամտեցի կալով աստ և սպասելով իրաւանց և արդարութեան, նոյնպէս և այժմ առանց խնդրելոյ Վեհիդ երկայնամտեցից սիրով մինչեւ ցգալուստ ձեր աստ Տերամբ. քանզի ակն ունիմ զի Գեր. Տէրդ լա՛ւ եւս իմասցի, թէ յորմէ՛ ոգւոյ շարժեալ խօսեցայ և գրեցի ես ցարդ զիրաց վարժարանիս։... Այն զի՝ հաւանեալ եմ և ես արդ հաւատարիմ և իմաստուն բանից Վեհիդ, թէ Ո՛ գիտէ զի՛նչ այլ դէպք և պատճառ պատրաստիցեն երկինք, որում միայնոյ է ի չարեաց անակնկալ հանել բարիս, ըստ այնմ թէ, « Անհնարինք ի մարդկանէ հնարաւորք են յԱստուծոյ։ »

« Այո՛ պաշտպանութեան ձեռին Տեառն կարօտացան և կարօտին միշտ իրաւունք աղքատաց ազգիս,... որպէս երբեմն ի Մատրաս, մինչեւ խոստովանել ուրումն, փաստաբանին մերոյ անդ, թէ՝ Զձեռն Աստուծոյ տեսանէր ինքն ի գործ յայն աղքատաց ազգիս ի դատաստանին։ Ապա չկարեմ և ես առաւելագոյն ինչ քան զայս տալ պատասխանի մխիթար թղթոյ Վեհիդ, գրեցելոյ յ3 մայիսի, այլ յաւելում միայն երկրորդել ի սմին, թէ փափաքելով փափաքիմ ես ցանկալի գալըստեան ձերոյ այսր, որպէս զի և բերանով եւս հատուցից ըզպարտս իմ, զվերջին և զխոնարհ կարծիս իմ որ ի խնդիրս յայս։ Մնամ Գերապայծառ Տերութեանդ ձերում

« Ի փարիզ. 10 մայիսի. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս, յորում ծանուցանէ զտրտմութիւն իւր որ ընդ անյաջող ելս իրաց միարանութեան ի Հռոմ, և կամակորութիւն Հ. Յովհաննու, օրինակ զայս.

« *Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջոյն.*

« *Վաղագոյն պարտ էր ինձ տալ պատասխանի շնորհագիծ թղթոյն ձերոյ գրելոյ յ30 անցելոյն, այլ ընկրկէր ձեռն իմ և սիրտ ի գրելոյ, զի ոչ յոյժ հաճոյական էր զոր առաջի կայր ինձ ի գրել: Քանզի յետ յուսադրական բանիցն որ ի Հռովմայ՝ վերջնով գրութեամբն ծանուցանէ Գեր. Եդուարդ, զի ի վերջնում ժողովի Ծաւալոցին ձախողեալ են իրք մեր. զի Քաստրաքանէ լցեալ և մթերեալ յառաջէն՝ խօսի զմէնջ չարաչար, մինչև կամիլ կլանել, ջնջել զՄիաբանութիւնս ողջոյն, որում ընդդիմախօսէ Պարպէրինի. և Մայն գիտեմք դեռևս թէ լեա՞լ իցէ ի ժողովի անդ. քանզի չէ կարացեալ գտանել ի նախընթացին: Եւ այսպէս ոչ միայն հաստատին հուսկ ուրեմն և ընտրին եպիսկոպոսքն Շիշմանեան Գաղատիոյ,.. այլ և նորոգին միւսանգամ կանոնքն սահմանեալք յամի 1842 վասն բարեկարգութեան կրօնաւորաց, որք և տպագրին, ասէ, զի յղեսցին ի վանորայս: Տեսցուք ի գալն թէ ո՛րպիսի բացատրութեամբք և յաւելուածովք իցեն հաստատեալք:..*

. . . .

. . . .

« *Ի լինել այսոցիկ այսպէս՝ տեսցուք թէ ՚ինչ ի դարձին իւրում արդ ի Պօլիս արասցէ Հասուն, և զո՛ր ընթացս կալցի: ՈՀ, յոյժ ծանր զիպաւ ինձ արկածս:*

« *Վ. Հ. Յովհաննէս բացարձակապէս անհնարին ցուցանէ զերթ իւր ի Պօլիս առանց գալոյ նախ այդր զաւուրս ինչ առ ի յստակել զբազմաշփոթ իրս իւր զոր ունել ասէ և յորոց մեծագոյն յոյժ մարթին լինել տոյժք արծաթոյ քան զծախս ճանապարհին աստի այդր. նմին իրի հարկ է ինձ խորհել և խօ-*

սել դեռեւս: Աղօթեսջիք եւ վերապատուելիդ զի տացէ ինձ Տէր լոյս եւ զօրութիւն ի դժուարին ժամանակիս:...

« Մաղթեմ ողջ լինել եւ զօրանալ

« Յարգոյապատիւ վերապատուութեանդ

« Վենետիկ. 12 մայիսի. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս եւ ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում քաջալերէ զնա չերկնչիլ ի յաղթութենէ Գեր. Հասունին ի Հռոմ, եւ ցուցի ընդ չճանաչել միաբանութեան ըզկարողութիւն իւր զոր ունի, եւ յիշեցուցանէ նմա զգաղտնի բնաւորութիւն եւ զըստ քմաց գործառնութիւն Հ. Յովհաննու, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Փուշակէի ես արդեօք զպատճառս անագանելոյ նամակի Վեհիդ առ իս զայս նուագ. մանաւանդ իբրեւ լուայ ուստեք զկարծեցեալ յաղթութիւն Խակին ի Հռոմ, եւ զձախորդութիւն իւրացս անդ, կարծեցեալ յաղթութիւն նորին ասեմ, ըստ ճանաչմանս իմում եւ ձախորդութիւն իւրացս, ըստ երկիւղի ձերում որ անտի. եւ յիրաւի՝ քանզի զի՞նչ օգտութիւն իցէ կուրի ուրուք, յորժամ զայլ կոյրս առաջնորդս ունիցի նա:... Ո՞չ ապաքէն ըստ Տեառն բանից ամենեքեան նոքա ի միասին ի խորխորատ անկանիցին... եւ զի զի՞նչ ձախորդութիւն իւրացս լիցի, յորժամ ի կամս եւ ի ձեռս մեր է յաջողութիւն նոցին:...

« — Ո՛հ, յոյժ ծանր դիպաւ ինձ արկածս, » ասէք: Այլ ես ասեմ, եւ իրաւամբք՝ թէ աւա՜ղ, զի ոչ ծանեաւ միաբանութիւնս մեր ցարդ զկար զօրութեան իւրոյ, եւ զյաջողութիւնն որ ի Տեառնէ: Այո՝ ընդ անծանօթութիւն սոյին պարտ է մեզ մեծապէս ցաւել, զի պակասեցաք մեք առնել

զարժանն ։ Ունել ունիմ ես բազում և կարեւոր ինչ ընդ այս առ Վեհդ գրել... բայց տեսանեմ ես, զի չկարէք դուք հանդարտել բանից, երկուցեալ յոյժ ի կարծեցեալ յաղթութենէ խակին,... զոր ի պարտութիւն նմին դիտեմ անշուշտ, և զարհուրեալ մանաւանդ ի յանդուգն բանից Շանկլատանին, զոր ի թիւս յիմարաց և ոչ ի կարգս ծիրանաւորաց դասեն որք միանգամ զնա ճանաչեն, ըստ արժանի մականուան իւրում ։...

« Ապա թողում ես բերան ի բերան զայսմանէ խօսել, յորժամ յաջողեսցի Տերամբ զմիմեանս տեսանել ։ Ապա քաջալերասցի Վեհդ և մի՛ վհատիցի բնաւ, զի կենդանութիւն համբերողին է խոստացեալ ի Տեառնէ՝ « Որ համբերեսցէ իսպառ « նա կեցցէ ։ »

« Աւելորդ համարիմ առաւել ինչ գրել զգալստենէ այսր Վ. Հ. Յովհաննու, և զերթէ նորին աստի ի Պօլիս, զի այնպէս կամի նա զայն... և իրաւամբք արդեօք, ըստ գաղտնի բնաւորութեան և ըստ քմաց գործառնութեան իւրում... և զի ակնարկեալ եմ զայս և բաւական ի նախընթաց թուղթն իմ առ ձեզ ։

« Իցի՛ւ թէ սխալեցայց ես ի կարծիս իմ,... այլ Վեհիդ մնայ, թէ որպիսի՛ տիտղոսիւ և պայմանաւ պարտ է զնա վերըստին այսր առաքել, խելամուտ և փորձ գոլով ձեր մատակարարութեան նորին ի վարժարանիս, մանաւանդ և լսելով ձեր ի բերանոյ իսկ իւրոյ, թէ բազմաշփոթ իրս ունի ինքն ի քաղաքիս, բոլորովին անծանօթ մեզ իրք նորա ։ Ապա համբերութեան և մեծի համբերութեան պէտք են Վեհիդ և արիութեան սրտի, մանաւանդ յայսմ ժամանակի, զոր և մաղթեցի և մաղթեմ միշտ ի Տեառնէ, հանդերձ քաջառողջ կենդանութեամբ և յաջողութեամբ ամենայն գործոցդ, և որով մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ ձերում

« Ի Փարիզ. 20 մայիսի. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում ցուցանէ զսփոփանս իւր որ ի մխիթար բանից թղթոյ նորին, հայեցեալ ի խնամս ընչից աղքատաց ազգին, զորմէ փոյթ էր նմա յոյժ. և ծանուցանէ զչկամութիւն Հ. Յովհաննու գնալոյ ի Պօլիս ուղղակի անտի, այլ աստի ապա, և ըզկամս ժողովոյ խնամակալաց, չթողուլ այլ եւս ի ձեռս նորա զմատակարարութիւն վարժարանին, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջոյն։

« Այն ինչ ձեռն ի գրիչ արկանէի գրել զթուղթս առ Վերապատուութիւնդ, մատուցաւ ինձ գրեալն ի Վերապատուութենէդ ի 10 ամսոյս, որով սփոփէիք զիս մխիթար բանիւք և անթուլանալի փութովդ ի խնամս ընչից աղքատաց և յօգուտ վարժարանիդ, որովք արդարեւ սփոփեցայ ոչ սակաւ։ . . . .

. . . .

. . . .

« Է և այլ ինչ խորհելի։ Վ. Հ. Յովհաննէս՝ որպէս և կանխաւ ծանուցի, չկամի ուղեւորիլ ի Պօլիս մինչեւ եկեալ այդր և յստակեալ զիրս իւր դժուարինս, և զխառնակ հաշիւսն անծանօթս, որպէս ասէ՝ եղելոցդ այդր. և ժողովս մեր յետ այսչափ փորձառութեանն և տեսանելոյ զառաւելութիւն տարեւորական ծախուցն և զանակնկալ պարտուց ծածկելոցն ցայս վայր եթէ ի հաշիւ վարժարանիդ և եթէ վանացս՝ չհամարի խոհեմութիւն թողուլ այլ եւս ի ձեռս նորա զմատակարարութիւն վարժարանիդ, այլ ըստ խնդրոյ իւրոյ առժամանակեայ եւեթ և վասն սակաւ աւուրց յղել այդր, զի առանց տուժից ի կարգի եդեալ և մաքրեալ զիրս իւր մեկնեսցի այտի. նմին իրի ի գալստեան իւրում այդր չխառնիցի հարկաւ ի տնտեսութիւն վարժարանիդ։ Այսր աղագաւ խորհի ժողովս մեր, զի թէ և ձեզ այնպէս կարեւոր և պատշաճ թուեսցի ի զգուշութիւն և ի խնայութիւն ընչից աղքատաց՝

յղել զայլ ոք՝ որոյ գործ իցէ ուշ ունել իրաց տնտեսութեան վարժարանիդ, որով յուսամք թէ ոչ սակաւ նուազեսցին ծախք։

« Այն ունելով պատասխանւոյ Վերապատուութեանդ՝ աւարտեմ զթուղթս, մատուցանելով զխրալիր ողջոյն վանականացս ամենեցուն Հարց և Եղբարց սիրելեաց, և մաղթեմ Հայրագորով սրտիւ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

« Վենետիկ. 17 մայիս. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում յիշատակէ զնպատակ գնալոյ Հ. Յովհաննու ի վանս, և խնդրէ ժողովով որոշել զայն, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ապաքէն գալուստ Վ. Հ. Յովհաննու այդր՝ էր վասն որոշելոյ զայս խնդիր կարեւոր, և վասն այսորիկ փութացուցանէիք զնա նորին աստի, և մեք եւս վասն այսորիկ յորդորեցաք զնա բանիւ և գրով փութալ գնալ ի Պօլիս հրամանաւ ձերով, և անձամբ խորհել զիրացս ընդ որոց արժան էր. և զի նա կամի այժմ, որպէս ասէք, յետ դեգերելոյն այդր ի վանս գալ այսր նախ՝ և ապա աստի գնալ ի Պօլիս, յայտ ուրեմն է թէ որոշումն փոխադրութեան վարժարանիս ոչ լիցի յայսմ ամի, և ոչ յառաջիկային արդեօք, որպէս գուշակէ ամենայն ոք։

« Ուր թողից, զի եթէ արդարեւ 4,000 Ֆրանք աւելի պարտք իցեն նորա աստ առանձինն, մի թէ չկարէ՞ր յետ դարձին իւրոյ ի Պօլսոյ հատուցանել զայն առանց կորստեան, և չզնել այսպէս ի վտանգի զկարեւոր խնդիր և զգործ վարժարանիս։...

« Արդ կարծիք մեր և աղաչանք այս են, զի հաճեսցի Գեր. Տէրդ ընդ առնուլ զթուղթս ժողով գումարել և որոշել զվերոյիշեալ խնդիր մեր, այո՛ կամ ոչ, և ըստ այնմ ծանուցանել մեզ։

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեան ձերում

« Ի Փարիզ. 23 մայիս. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում ծանուցանէ զհանգամանս վարժարանին, հայեցեալ ի պարտս նորին, և ցուցանէ զհակառակութիւն կարծեաց Հ. Յովհաննու, և զանպատեհ գնացս նորա ի պաշտօն անդ մատակարարութեան, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

« Ցանկայ Վեհդ յղել գումար մի տասն հազար ֆրանքի, ի հատուցումն ամենայն պարտուց վարժարանիս. բայց դժուարիք յոյժ գտանել արժաթ ի փոխ։

« Ապա ուրեմն դժուարացի հարկաւ յայսմ ամի հատուցումն ամենայն պարտուց վարժարանիս, և ձգեսցի այն մինչև ցգալոյ տարին, և անդր ևս արդեօք։ . .

« Եւ ապա զխ՛րդ յուսայ Վ. Հ. Յովհաննէս ի քանի մի աւուրս աւարտել զայն այսր անձամբ և գնալ աստի ի Պօլիս։ Ապաքէն հակառակութիւն բանից և գործոց տեսանեմք մեք աստ, չզխտելով զառանձին խորհուրդ մտանաւորաց ի հասարակութեանս։

« Ժամանակն և արդիւնք իւրացն յայտնեսցեն զամենայն։

« Իսկ ծախք վանացդ և տպարանի գործին անծանօթ են մեզ աստ ամենևին, որպէս և այլ ինչ ինչ ծախք և պարտիք զորս չծանօյց մեզ և չեթող ինչ յիշատակութիւն Վ. Հայր

Յովհաննէս ոչ բանիւ և ոչ գրով, այլ իմացաք մեք ապա ի պարտատեարցն, որք եկին և գան երբէք երբեք հարցանել զնա և ցուցանել մեզ զհաշիւ առնելեաց իւրեանց ։ . . . »

« Ահա այսչափ էին յարդ ծանօթութիւն և իշխանութիւն կարծեցեալ տեսչի վարժարանիս . . . և այս ոչ միայն յառաջ, այլ և յետ հանելոյ ձեր զնա ի պաշտօնէ աստի գործակալութեան և թողլոյ իմ ի ձեռս նորա զայն պաշտօն, վասն զանազան պատճառաց, զոր բերանով ասացից ձեզ ապա, որով արդարացայց արդեօք իսպառ ընդ հրաժարելս իմ խառնել ի գործ վարժարանիս ։ . . .

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեան Ձերում

« Ի Փարիզ. 29 մայիս . 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում յայտ առնէ զուրախութիւն իւր և իւրոյն ընդ գործունեայ կամս Աբբային որ ի դարման իրաց վարժարանին, և զորոշումն կամաց իւրեանց որ զպաշտօնէ տնտեսութեան, հանդերձ կարեւոր ազդարարութեամբ վասն փոխադրութեան վարժարանին ի Պօլիս, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Ձցանկալի պատասխանին Վեհիդ, տուեալ յ30 մայիսի անցելոյն, ընկալայ ի 15 ամսոյս, և խրախացաք յոյժ ես և եղբարք իմ աստ առհասարակ ընդ գործունեայ կամս և փոյթ ձեր այդր ի դարման իրաց վարժարանիս և յօգուտ հասարակաց ազգիս, որ և լրումն պարտուց միաբանութեանս ։

« Շնորհ յոյժ ունիմ խնամակալ և զօրացուցիչ Աջոյ բարձրելոյն, և աղաչեմ զնա զի խնամ կալցի այսմ և զօրացուսցէ զձեզ միշտ ի փառս անուան իւրում և յառաւելութիւն արժա-

նեաց ձերոց ։ . . . Ահա զպարտս մեր հատուցաք, ծանուցանելով ձեզ զարժանն, ըստ ճանաչման մտաց մերոց, և ձեր փութով ի գործ դնել զայն ըստ յօժարութեան կամաց ձերոց. իսկ յաջողութիւն նորին թողեալ է հաճութեան կամաց Վերին, որպէս և զխնդրդ հաճոյ իցէ Նմին։ . . .

« Յաղագս հոգոց անընդունակ եղելոցն յաշակերտաց վարժարանիս ծանուցաք Վեհիդ ապա, յետ տեղեկանալոյ մեր զելից իրացն ի Պօլիս. զի անտի կախի որոշումն վիճակի սոցա, թէ ե՛րբ և զխնդրդ պատշաճ իցէ յետս դարձուցանել ընդ Նոսա։ Սովին խորհրդով էր և գրութիւն իմ որ վասն առաքելոյ անձին այսր ի գործ տնտեսութեան. զի թէ յաջողեսցի Տէրամբ փոխադրութիւն վարժարանիս ի Պօլիս, յայնժամ աւելորդ լիցի աստ Նմին. իսկ եթէ ոչ՝ չա՛տ լիցի աստ եղբօր միոյ, որում յանձնեսցի հոգ տնտեսատանն և հանդերձատանն. այլ քահանայ գործակալի, հանդերձ սեփական իշխանութեամբ, ոչ ընաւ, խրատեալ մեր ի փորձոյ, և ի վնասակար փորձոյ։ . . .

« Իսկ փոխադրութիւն վարժարանիս ի Պօլիս՝ արդեամբք և ոչ անուամբ լիցի. զի չէ պարտ և ոչ իսկ արժան հրատարակել զայն ի ժամուս և ի հանգամանս մեր յայս, հայեցեալ ի ներքին և յարտաքին հակառակորդս մեր այսր և անդր. այլ պարտ է ասել, թէ պահեմք մեք ի Փարիզ զՄ. վարժարանն վասն բարձրագոյն ուսմանց և կարեւոր արուեստի, որպէս և է դիտաւորութիւն մեր, մինչեւ տեսցուք և փորձեսցուք ընդ յաջողութիւն գործոյս ի Պօլիս, և զվիճակ պետութեանց աստ և անդ։ . . . Յուսամք թէ այսպիսի հրահանգօք առաքեալ իցէք զՎ. Հ. Յովհաննէս ի Պօլիս։

« Մնամ

« Արհիապատիւ Տէրութեանդ ձերում

« Ի Փարիզ. 6 յունիս. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս ի Փարիզ, որով յղէ արծաթ ի հատուցումն պարտուց վարժարանին, և յուրում զանգատի ընդ զանազանութիւն հաշուի տուեալ ի Հ. Յովհաննէսէ, վասն որոյ և անուղղա պարտիք և յուսահատութեան իրք հոմարի, և ծանուցանէ զջան իւր առաքել փութով զՀ. Յովհաննէս ի Պօլիս, և զամբաստանութիւնս թշնամեացն որ զմիաբանութենէն, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջոյն.

« Ըստ խոստմանս իմում որ ի նախընթաց թղթիս՝ փութամ աչա յղել փոխանակագիրս չորս, միահամուռ ինն հազար եօթն հարիւր ութսուն և ինն ֆրանքաց, զորս ընկալեալ ըստ ժամանակին հատուցջիք զանազանելի պարտսն, զի մի ի վերայ այլոց նեղութեանցդ յաւելցին ձեզ վիշտք ի պահանջմանց պարտատերացդ։

« Անապատելի ասացի, զի ի յղելս զայսոսիկ ընկալայ ըզթուղթ Վերապատուութեանդ՝ գրեալ ի 29 մայիսի, որով ծանուցանէք զյաւելուած պարտուցն քան զցուցեալն այդր և այսր։ Քանզի ինքն Վ. Հ. Յովհաննէս ըստ տուեալ հաշուին ի վերջ անցելոյ ամին, կամ ի սկիզբն տարւոյս, ցուցանէր պարտս 36,292 ֆրանքաց, զորոց զ7,000 ես հատուցեալ ի յղելոցն գումարաց ի սկիզբն տարւոյս, ապա զմնացորդ պարտուց վարժարանիդ զօլ ընդ ամենայն 29,292, զորոց հատուցեալ ձեր զ22,521, պարտ էր մնալ 6,770. և զի ասէք մնալ դեռ ևս 15,561 ֆրանքաց, ապա յաւելուն պարտքն 8,770 քան զցուցեալն ի նմանէ, որ արդարև յուսահատութեան իրք են։

« Եւ զի ինքն չէ այժմ աստ առ իս զի հարցեալ տեղեկացայց զիրացդ, (այլ ի Պատաւիոն է առ Աղանուրեանս,) միակ անկարութիւն իմ և յոյս այն է՝ զի զյաւելումն պարտուցդ հաշուել պարտ իցէ յութևտասնհազարոց պարտս ապարանին. քանզի երիցս և չորիցս հարցեալ զնա և որպէս թէ

երգմնի արարեալ՝ յապահովեաց զիս զի ոչ առաւել քան զցուցեալսն լիցին պարտք իւր. վասն որոյ համարիմ թէ ի գրամոց վարժարանին ծախեալ ի պէտս տպարանին, վասն այնր յաւելուն պարտքն։

« Այս եւեթ նշոյլ մխիթարութեան է իմ արդ, թէ լիցէ արդարեւ մխիթարութիւն. տեսցուք զինչ ինքն տացէ պատասխանի։... Գրեցի առ նա և պատուիրեցի ջանալ հնարել և որպէս մարթն է սակաւ աւուրբք գոհ արարեալ զԱզգանուրեանն՝ փութալ յուղեւորութիւն իւր։ Ի վերայ լրոցն Հռովմայ որ ըստ օրէ զայրանան յուզմունք և վրդովմունք և իբրեւ կաթսայ յեռանդման կայ ազգն, և թշնամիք զմէնջ ամբաստանեն իբրեւ պատճառս և գրգռիչս յուզմանցն։ Տէր այցելու լիցի և Ազգին և մեզ։

« Մաղթեմ ողջ լինել

« Յարգոյապատիւ Վերապատուութեանդ ծերում

« Վենետիկ. 8 յունիսի. 1850.

« Ն. Տ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում իրաւունս տայ նմա, զարմանալ և ցաւիլ ընդ գաղտնի բնաւորութիւն Հ. Յովհաննու Սուրկուճի, և ընդ զանազան հաշիւ նորա, և գուշակէ զպատճառ յապաղելոյ նորա գնալ ի Պոլիս, և ցուցանէ զպատճառն ամբաստանութեանց որ զմիաբանութենէն և զդարման նոցին, օրինակ զայս.

« Արհիապատիւ Տէր.

« Զյանկալի նամակ Վեհիդ, գրեալ յ8 ամսոյ, ընկալայ ի 13 սորին ամսոյ, հանդերձ ծրարիւքն ի նմին ինն հազար եօթն հարիւր ութսուն և ինն ֆրանքաց փոխանակա-

գրաւքն։ Շնորհ յոյժ ունիմ դարձեալ խնամոտ մտաց Հօրդ հաստարակաց, որ ջանայ միշտ թեթեւացուցանել զվիշտս որդւոցս։

« Ցիրաւի է Վեհիդ զարմանալ և ցաւիլ ընդ առաւելու-թիւն պարտուցն զոր գտանեմ առտ քան զցուցեալն ձեզ այդր ի Հ. Յովհաննէ։ Այո՛ ցաւիմ և ես, այլ ոչ զարմանամ, գիտելով արդէն զի այսպիսի էր համար տնտեսութեան Նորա ի վարժարանիս զամս եօթն։

« Զինչ և իցէ, առ այժմ այս է գիտելին, զի պարտա-տեարքն գան այսր անդադար և խնդրեն զՄօնիքօ Սորկու-ձին իբրեւ զՏիւէրբիօռ վարժարանիս. ըստ յայտարարութեան իւրում, և մեզ հարկ է ունել ի ձեռին արծաթ բաւական զի հատուսցուք նոցա։

« Բարւոք ասէ Վեհդ. « Այս եւեթ նշոյլ մխիթարութեան « է իմ արդ, թէ իցէ արդարեւ մխիթարութիւն։ » Զի զինչ մխիթարութիւն իցէ Վեհիդ, կամ ինձ, խորհել թէ ի պատ-ճառս տպարանիդ պարտք վարժարանիս եւս քան զեւս ծան-րասցին, հանդերձ ծանր վաշխիւ։ . . .

« Այլ իմ միակ մխիթարութիւն այս է այժմիկ, զի խրա-տեալ մեր արդեօք ի վնասուց եղելոց՝ զգուշասցուք յապագայ վնասուց։

« Իսկ յաղագս յապաղելոյ երթին Հ. Յովհաննու ի Պօլիս՝ զուշակեմ ես զդանդաղումն կամաց Նորա ի գործ յայս հա-սարակաց, և եթէ այսպիսի է յօժարութիւն կամաց Նորա, ապա զի՞նչ լինիցին արդիւնք գործոց իւրոց։

« Իսկ վասն ամբաստանութեանց որ զմիաբանութենէս, ասեմ թէ ոչ առաջին է և ոչ վերջին լիցի, այլ ցորչափ ազգ-տութիւն ազգիս կայցէ ի միջի . . . ապա ջանք միաբանութեանս լիցին լուսաւորել զմիտս նորին, ըստ այցելութեանն որ եղեւ նմա ի Տեառնէ։ . . . Մնամ

« Արհիապատիւ Տէրութեանդ

« Ի Փարիզ. 14 յունիս. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ Թղթոյ Հ. Սարգսի, յորում գանգատի զգանգատութենէ ուղւոյ Հ. Յովհաննու, և զտարապայման և զթաքուն պարտուց Նորին, հանդերձ քննութեամբ և ստգտանօք որ ընդ անհաստատութիւն մտաց Նորա, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջոյն.

« Թէպէտ և վաղ իսկ ընկալայ ըստ ժամանակին զԹուղթ Վերապատուութեանդ գրեալն ի 6 ամսոյս, այլ տագնապեալ՝ չգիտէի զի՛նչ գրել և զի՛նչ տալ պատասխանի, զի ի վերայ ամենայն փութոյ մերոյ և գործունեայ կամաց ի լրումն պարտուց միաբանութեանս ի տեսչութիւն դպրոցիդ, ոչինչ մարթացաք վճարել ցարդ։

« Իմ զանց արարեալ և զաւուրքս օգափոխութեան կացի մնացի ի վանս սպասելով դարձի ուղեւորին զի զամենայն կարեւորսն հոգացեալ փութացուցից զնա յուղի. բայց վայրապար ակնկալեալ ցարդ, (եկն յերէկն ի գիւղ այսր, ուր եկեալ է և ինքն ընդ Աղանուրեանս ի տուն Բիզանի յօդափոխութիւն,) խօսել ընդ Նմա անձամբ, բայց չեւ եւս մարթացայ տեսանել զնա։

« Յայսմ վայրի ընկալայ և զմիւս Թուղթ Վերապատուութեանդ՝ գրեալն ի 14 ամսոյս, յորում ընթերցեալ զդուչակութիւն ձեր և զխորհրդածութիւնս զգանգատելոյ ուղեւորին, ասեմ, Թէ այդպէս իցէ՝ ընդէ՞ր և ինքն միաբանեաց ի ժողովն ի նոյն խորհուրդ. ո՞չ լաւ եւս էր յայտնապէս ասել ի սկզբանէ զչկամութիւն իւր քան թէ տանջել զմեզ այսպէս և ժամավաճառ առնել։ Սակայն եթէ ի պակասութենէ յօժարութեան և եթէ յանհոգ դանդաղութենէ Նորա իցէ յապաղումնս, ոչ անստգիւտ իցէ միշտ։...

« Յայտ է յասացելոցս, զի պարտին լինել Նորա և այլ պարտք ի հաշիւ տպարանին, զորս թէ հատուցեալ իցէ մասամբ ի դրամոց վարժարանիդ, հարկաւ նուազեալ արծա-

թոյն նորա պարտքն յաւելուցուն. և արդարև չէր պարտ այժմ այդպէս լինել։

“Բայց ո՛ գիտէր զայդոսիկ, և ո՛ զառաւելութիւն այդչափ պարտուց և ի հաշիւ մնացս գուշակէր, յետ յղելոյ ի նուագս նուագս գումարս երկուց, երից և հնգից հազար ֆրանքաց, և յետ պատուիրելոյ նմա՝ զի ընդ ծախելն ինչ վասն մնաց ցուցցէ առժամայն զհաշիւսն։

“ Այլ նորա յանցանք այն եղեն և են՝ թաքուցանել զհաշիւսն, և կրկին և երեքկին հարցեալ՝ ծածկել և չցուցանել զպարտս իւր և ստել իսկ թէ զերծաք յամենայն հին պարտուց, որով յայս վիշտս և ի տագնապ արկ զմիաբանութիւնս և եբաց զբերան ամենեցուն ի վերայ իւր։

“ Զգիտեմ թէ գուցէն արդեօք այլ ևս մնացորդ պարտք անյայտք նորա. զինչ արարեալ է զայսչափ արծաթն ոչ գիտեմ, վասն այնորիկ չկամէր տալ հաշիւ. և ո՛ կամ զի՞րդ կարիցէ վստահ լինել ի տնտեսութիւն նորա յայսմ հետէ։

“ Այլ արդ՝ քանզի չիք հնար և հարկ է աղեկեզ սրտիւ քակել և յստակել զամենայն կնճիռս պարտուց նորա, ըստ գրելոյ Վերատեսչութեանդ ի գումարն այն 15,561 ֆրանքաց պարտուց նորա որ ի հաշիւ վարժարանիդ՝ յաւելեալ և զգումարն ցուցեալ ի նմանէ ի հաշիւ տպարանիս 1,970 ամենայն պարտք նորա ծանուցեալ ձեզ այդր և խնդրեալք ի պարտատեաց գումարին յ17,504 ֆրանքս, յորոց նուազեցուցեալ զյղեալն յինէն վերջնովք փոխանակագրովք, մնան այլ ևս իբր 8,000 ֆրանք, զոր հարկ իցէ մեզ որ և է օրինակաւ հայթայթել և յղել ի հաշիւ միաբանութեանս որպէս և զառաջինսն յղեցի, որպէս զի ճողոպրեսջիք զանձինս ի ձեռաց պարտատեարցն և ի տաղտկացուցիչ երթևեկելոյ նոցա, և վասն մնացելոցն անծանօթից ձեզ և մեզ պարտուցն խորհել ճանապարհ իմն աներկևան։

“ Առ այժմ փութացայց յղել զսովորականն ի ծախս ամսոյս 4,000 ֆրանք, զորոց զփոխանակագիրն ակն ունիմ ընդունել այսօր կամ վաղիւ։

« Ոչ երկրային զի այժմ ի խնամոց և յորդնութենէ վերապատուութեանդ ըստ կարգի ընթանայցէ ամենայն ։

« Մաղթեմ ողջ լինել

« Յարգոյապատիւ վերապատուութեանդ

« Ի Տփղիս. 22 յունիսի. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. »

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՅՍ

ԳԼԽՈՑ ՀԱՏՈՐՈՅՍ

ԳԼՈՒԽ Ա.

Վրիպիլ Սարգսի վարդապետի ի Մխիթարութենէ Մուրատեան վարժարանին. — Անմիաբանութիւն և թերութիւն Պաշտօնէից վարժարանին. — Ընտրութիւն աշակերտաց հակառակ դիտաւորութեան բարերարին. — Թողուլ Ս. վարդապետի ընդ անուղիղ մատակարարութիւն Մ. վարժարանին. — Դարման թերութեան վարժապետի նորին. — Հակառակութիւն ուրումն ընդդէմ վարժարանին. — Գանգատ Պ. Աղեքսանդր Ռափայէլի զՀ. Աղեքսանդրէ Պէշիքթաշլեան. — Խափանումն բարեաց հասարակաց ի ձեռն Աղեքսանդր Ռափայէլի : 1

ԳԼՈՒԽ Բ.

Պատճառ յապաղման բանալոյ Ռափայէլեան վարժարանին ի Վենետիկ. — Խնդիր տեղւոյ Ռ. վարժարանին և գտանել նորին. — Ընտրութիւն Տեսչի, և այլ պաշտօնէից Ռ. վարժարանին. — Ժամանումն աշակերտաց և բացումն Ռ. վարժարանին. — Ամբաստանութիւն զմատակարարութենէ Մ. վարժարանին. — Ամբաստանութիւն զմատակարարութենէ Մ. և Ռ. վարժարանաց. — Առիթք ամբաստանութեանց զայնցանէ. — Անխոհեմ գնացք ոմանց ի Մխիթարեան միաբանէից : 7

ԳԼՈՒԽ Գ.

Տնանկութիւն Պօղոս Լազարովիչի և պահանջ նորա ի Մխիթարեան միաբանութենէն. — Փախուստ Պօղոս Լազարովիչի ի Վիեննա և թուղթ պահանջման նորա առ Գեր. Սուքիաս Սո-

ման. — Պատասխանի թղթոյ Պ. Լ. ի Գեր. Սոմալէ. — Դարձ Պ. Լ. ի Վենետիկ և վէճ նորա ընդ Միաբանութեան. — Հաւաստիք պահանջման Պ. Լ. և կուսակիցք նորա ի Միաբանից. — Թուղթ Պ. Լ. առ Ճանիկ Ամիրայն ի Պոլիս. — Պատասխանիք ամբաստանութեանց գանգատաւորաց Պ. Լ. — Վճիռ Ատենի Վենետկոյ ընդդէմ Պ. Լազարովիչի. — Զղջական թուղթ աղերսանաց Պ. Լազարովիչի առ Գեր. Սուքիաս Սոմալեան : 16

ԳԼՈՒԽ Դ.

Հրաժեշտ Հ. Իգնատիոսի Փափազեան ի պաշտօնէ Տեսչութեան Մ. վարժարանին. — Կարգումն ի տեղի նորա Հ. Սարգսի Թէոդորեան. — Հանգամանք զանազան բարուց և գնացից այլ պաշտօնէից ի Մ. վարժարանին. — Ելն Հ. Պետրոսի ի պաշտօնէ անտի. — Մուտն ի պաշտօն նորին Հ. Միքայէլի Ջէմպէրճեան. — Վերստին մուտն Հ. Պետրոսի ի պաշտօն իւր անդ. — Թուղթ ընդունելութեան Յովհաննու Մուրատեան առ Գեր. Սուքիաս Սոմալ. — Պատասխանի թղթոյ նորա ի նմանէ. — Երկրորդ թուղթ նորին առ նա. — Երկրորդ պատասխանի նորին ի նմանէ : 28

ԳԼՈՒԽ Ե.

Երբ Աղեքսանդր Ռափայէլի ի Վենետիկ. — Միջնորդութիւն նորա ի կողմանէ Յովհաննու Մ. վասն բանի խնդրոյ Մ. վարժարանին. — Անյաջողութիւն միջնորդութեան նորին. — Պահանջմանք Աղ՚քսանդր Ռափայէլի ի Միաբանութենէ վասն բանի Ռափայէլեան վարժարանին. — Հակառակութիւն Ա. Ռափայէլի ընդ Մխիթարեան միաբանութեան. — Գնացք նորա առ Բանչէլիէր ի Լոնտոն ընդդէմ Միաբանութեան. — Պատասխանին Միաբանութեան առ գանգատն այն ի Լոնտոն. — Երթն Ա. Ռափայէլի ի Վենետ. — Բողոք նորա առ Մէրէրինի ի դիմաց Յովհաննու Մ. — Հրամանագիր Մէրէրինիի առ Միաբանութիւնն տալ հաշիւ Մ. վարժարանին. — Պատասխանի Միաբանութեան առ հրամանագիրն Մէրէրինիի. — Վճիռ Լորտ Բանչէլէրի ընդդէմ Ա. Ռափայէլի. — Դարձ նորա

ի Վենետիկ և չանք նորին հաշտիլ ընդ Միաբանութեան. — Վերադարձ նորա ի Լոնտոն առ վրիպել ցանկութեան իւրոյ. — Թուղթ Հ. Կարապետի Եսայեան Ազգապետի Պօլսոյ առ Հ. Մ. Թէոդորեան ի Պատուաքին : 39

ԳԼՈՒԽ Զ.

Տրտունջ և գանգատ զընտրութենէ մանկանց Մ. և Թ. վարժարանաց. — Թուղթ ազդարարութեան Հ. Սարգսի, առ Հ. Անանիա Ճէլալեան ընդ գանգատն այն. — Թուղթ մեղադրութեան Հ. Սարգսի առ Հ. Անանիա ընդ պակասութիւն նորա ի պաշտօնի իւրում. — Պատճառանք նորա յարդարացուցանել զինքն ընդ պակասութիւնն այն. — Խորհուրդ Հ. Սարգսի ի դարման տանել վնասուց հասարակաց, հաստատելով ժողով խնամակալաց. — Հաւանութիւն ընդ այն Գեր. Սոմալի և պատուէր նորին կատարելոյ զայն. — Յապաղումն գործոյն այնորիկ ի պատճառս դանդաղութեան Հ. Ռափայէլի. — Կատարէ զայն Հ. Սարգիս հրամանաւ Գեր. Սոմալի. — Կարգի Հ. Սարգիս նախագահ ժողովոյն այնորիկ. — Ընտրէ նա իւր օգնական զՀ. Ռափայէլ. — Ընտրի ատենադպիր ժողովոյն Հ. Գաբրիէլ Այվազեան. — Առաջին գործ խնամակալաց ժողովոյն լինի որոշումն կառուցման դպրոցին ի Պօլիս. — Ծախք դպրոցին Պօլսոյ մեծ և արդիւնքն անտի չնչին. — Հիւանդութիւն Հ. Սարգսի. — Թուղթ խնդակցութեան Հ. Կարապետի Եսայեան առ Հ. Սարգիս, և պատասխանին նորա առ այն. — Հրաժեշտ գործակալի կաղուածոց Մ. վարժարանին, և գնացք նորին : 47

ԳԼՈՒԽ Է.

Կայսերական վճիռ Աւստրիոյ Տէրութեան ի պարտաւորել զմիաբանութիւնն տալ հաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին. — Բողոք և աղերսագիր Միաբանութեան առ Կայսրն Աւստրիոյ ձեռամբ գործակալաց իւրոց ընդ այն. — Արձակումն աշակերտաց Մ. վարժարանին. — Գործք գործակալացն ի Վեննա և թղթակցութիւն նոցա ընդ Միաբանութեան. — Զանազան կարծիք մասնաւորաց ոմանց Միաբանից զանեղոյ

փոխադրութեան Մ. մարմարանին. — Յուսահատեալ գործակալաց ընդ յաջողութիւն եղից իրացն դառնան ի Վենետիկ և պատմեն զայն: 57

ԳԼՈՒԽ Ը.

Վանական ժողով յորոշել զվիճակ Մ. մարմարանին. — Որոշումն փոխադրութեան Մ. մարմարանին ի Լոնտոն կամ ի Փարիզ. — Ընտրութիւն գործակալաց ի գործառնութիւնն այն. — Երթ գործակալաց ի Լոնտոն և գործ նոցա անդ. — Անցանել գործակալաց ի Լոնտոնէ ի Փարիզ, և գործ նոցա անդ. — Թղթակցութիւն գործակալաց ընդ Միաբանութեան ի Վենետիկ 78

ԳԼՈՒԽ Թ.

Աղերսագիր գործակալաց Միաբանութեան առ Ոստիկան արտաքին գործոց պետութեան Գաղղիացւոց. — Կարեւոր թղթակցութիւն գործակալաց Միաբանութեան ընդ Գեր. Սուքիաս Սոմալի, և նորա ընդ նոսա. — Առանձնագրութիւն ինչ ի մէջ Գեր. Սոմալի և ի մէջ Հ. Սարգսի Թէոդորեան 93

ԳԼՈՒԽ Ժ.

Առանձնագրութիւն ի մէջ Գերապայծառ Սոմալի և ի մէջ Հ. Սարգսի 119

ԳԼՈՒԽ ԺԱ.

Պատասխանի Ոստիկանի արտաքին գործոց առ աղերսագիրն գործակալաց. — Թուղթ գոհութեան Գեր. Սոմալի առ գործակալս ընդ ընդունելութիւն պատասխանւոյ աղերսագրի նոցա. — Վանական ժողովով հաւանութիւն ընդ փոխադրութիւն Մ. մարմարանին ի Փարիզ. — Թղթակցութիւն գործակալաց ընդ Գեր. Սոմալի վասն տեղւոյ և կարեւոր իրաց մարմարանին ի Փարիզ. — Կոչ Հ. Սարգսի ի վանս վասն կարգա-

զօրութեան վարժարանին. — Խնամակալաց ժողով ի վանս վասն պաշտօնէից Մ. վարժարանին ի Փարիզ. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Գեր. Սոմալի վասն կոչման իւրոյ ի վանս և յապաղման նորին 139

ԳԼՈՒԽ ԺԲ.

Հաստատութիւն Կայսերական վճռոյ ընդդէմ միաբանութեան տալ հաշիւ մատակարարութեան Մ. վարժարանին. — Տագնապ Գեր. Սոմալի ընդ այն. — Կոչ Հ. Սարգսի ի վանս խորհել զայնմանէ. — Թուղթ քաջալերութեան Հ. Սարգսի առ Գեր. Սոմալ, և տեղեկութեան զտեղւոյ վարժարանին, և ազդարարութեան հաստուցանել անդ մանկունս ի Պօլսոյ. — Պատճէն Կայսերական վճռոյ. — Պատասխանի նորին ի Միաբանութենէ 166

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատասխանի թղթոյ Գեր. Սոմալի, տուեալ ի Հ. Սարգսէ. — Պատճառ յապաղման դառնալոյ Հ. Սարգսի ի Վենետիկ. — Տեղեկութիւն զատուցմանէ տեղւոյ Մ. դպրոցին, և զպաշտպանութենէ նորին ի Գաղղիական տէրութենէն. — Հնարք գործակալաց յազատել զատուցումն վարժարանին ի բռնութենէ Աւստրիոյ. — Ջանք գործակալաց հաստատել տալ զընդունելութիւն Մ. վարժարանին ի Փարիզ վճռով արքունի. — Ստացումն տեղւոյ Մ. վարժարանին ի Փարիզ և ամէք նորին. — Մահ Գեր. Սուքիաս Սոմալի. — Կոչ Հ. Սարգսի ի վանս յընտրութիւն նորոգ Աբբայի. — Դարձ Հ. Սարգսի ի վանս 175

ԳԼՈՒԽ ԺԴ.

Հրաման վեշտասաներորդ Գրիգոր Պապին դարձուցանել վերստին ի Պատուշիոն զՄ. վարժարանն. — Հնազանդիլ միաբանութեան հրամանին նորին. — Թուղթ ազդարարութեան Հ. Յովհաննու առ Հ. Սարգիս ի Վենետիկ ի խափանել զհրամանն այն. — Ժամանել Հ. Սարգսի ի վանս, և ջանք

Նորա ի չկատարել զայն հրաման. — Հոգ Հ. Սարգսի հայթայթել արծաթ ի հաստուցումն տեղւոյ վարժարանին, և առաքել զոք օգնական Հ. Ստեփանի ի Փարիզ. — Ժամանումն Հ. Ստեփանի ի Փարիզ հանդերձ 35 մանկամբք. — Արկածք վնասուց ուրուրումն ի մանկանց անտի. — Գնացք Հ. Յովհաննու և Հ. Ստեփանի ընդ Հ. Սարգսի 180

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ընդհանուր ժողով ի վանս Սրբոյն Ղազարու յընտրութիւն նորոգ Աբբայի. — Բնաւորութիւն բարուց Հ. Գէորգայ Հիւրմիւզեան. — Առաջարկութիւն նորոգ սահմանադրութեան. — Վկայութիւն Հ. Սարգսի ընդ ընտրութիւն Հ. Գէորգայ. — Ընտրութիւն նորոգ Աբբայի. — Ընտրութիւն Արուակայի և Առաջակայից Աբբայի. — Թուղթ Հ. Սարգսի առ Հ. Յովհաննէս. — Պատասխանի Հ. Յովհաննու առ Հ. Սարգիս. — Պատճէնք հրովարտակաց Աբբային Գաղղիացւոց ի հաստատութիւն Մ. վարժարանին ի Փարիզ. — Պատճէն պատասխանւոյ աղերսագրի գործակալաց տուելոյ յատեանն արտաքին գործոց պետութեանն. — Սխալանք ինչ ի հրովարտակս յայն յանձնուցուածն Հ. Յովհաննու. — Վէճ անտի 191

ԳԼՈՒԽ ԺԶ.

Առաջարկութիւն Հ. Սարգսի վասն կարգաւորութեան Մ. վարժարանին. — Մերժողական պատասխանին Աբբային ընդ այն. — Ժողով Առաջակայից վասն իրաց Մ. վարժարանին. — Մերժումն կարծեաց Հ. Սարգսի և յանդիմանութիւն ի միոյ առաջակայից. — Պահանջումն հաշուին ծախուց ի Հ. Յովհաննէ, և յանդիմանութիւն ընդ այն ի Հօրէ Ստեփանէ. — Խորհուրդ Հ. Սարգսի գնալ ի Փարիզ առ նոյն հաշիւ ի Հ. Յովհաննէ. հաւանութիւն ընդ այն Աբբային և թուղթ նորա առ Հ. Յովհաննէս. — Խորամանկ և անհաստատ հաշիւ ծախուց տուեալ ի Հ. Յովհաննէ. — Պատուէր Աբբային առ Հ. Սարգիս ի ժամու մեկնելոյ նորա ի վանաց 205

ԳԼՈՒԽ ԺԷ.

Դարձ Հ. Սարգսի ի Փարիզ. — Հանգամանք սննդի նորա ի Մ. վարժարանին. — Խօսակցութիւն Հ. Սարգսի ընդ Հօր Յովհաննու. — Թուղթ խնդակցութեան Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ ի Հռովմ. — Ժամանումն Գեր. Հիւրմիւզի ի Փարիզ. — Գտանէ նա պատուանշան յարքայէն Գաղղիոյ, և տեսութիւն նորա ընդ նմա. — Պահանջէ նա ի Հ. Յովհաննէ զհաշիւ ծախուցն. — Ծածուկ խորհուրդ նորա ընդ Հ Աղեքսանդրի վասն ուղղչի վարժարանին. — Նշանական թուղթ Հ. Սրապիոնի առ Հ. Սարգիս. — Կամք Հ. Յովհաննու դնել զտունն ի գրաւ և ընդդիմութիւն Հ. Սարգսի ընդ այն. — Խնդիր Հ. Սարգսի ի Գեր. Հիւրմիւզէ. — Նշանական թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Հ. Եսայեայ Մզրաքեան . . 209

ԳԼՈՒԽ ԺԸ.

Կարօտութիւն Հ. Յովհաննու ի հատուցումն պարտուց վարժարանին. — Կամք նորա դնել ի գրաւի զտունն ի գտանել արծաթ. — Կամք Հ. Սարգսի հարցանել ընդ այն զկամս հասարակութեան. — Յայտնութիւն ծածուկ խորհրդոյ Հօր Սարգսի ընդ այն. — Թուղթ զանգատանաց Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ. — Խիստ պատասխանի Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս. — Համարձակ պատասխանի Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ. — Թուղթ յանդիմանութեան Հ. Սամուէլի առ Հ. Սարգիս. — Անաչառ պատասխանի Հ. Սարգսի առ Հ. Սամուէլ 225

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թուղթ զանգատանաց Հ. Սարգսի առ Հ. Եսայի. — Յանդուգն և քննողական պատասխանի Հ. Եսայեայ առ Հ. Սարգիս. — Թուղթ չքմեղութեան Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս. — Պատասխանի Հ. Սարգսի առ թուղթն այն Գեր. Հիւրմիւզի և քննութիւն ընդ տուեալ կանոնս նորա. — Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, վասն հոգոց դպրոցին որ

ի Պօլիս. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Գեր. Հիւր-միւզի, վասն բանի խնդրոյ երրորդական դպրոցի . . 279

ԳԼՈՒԽ Ի.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն յայտարարու-թեան Մ. վարժարանին. — Պատասխանի Հ. Սարգսի վասն երրորդական դպրոցի վանուց. — Թուղթք Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն Ռափայէլեան դպրոցին. — Տեղեկու-թիւն զհանգամանաց Հօր Սամուէլի, և Հօր Վարդանայ և զմահուանէ նոցա. — Թուղթ ցաւակցութեան և ազդարարու-թեան Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ 302

ԳԼՈՒԽ ԻԱ.

Պատճառ յապաղման տալոյ զհաշիւ ծախուց Մ. վարժարա-նին. — Պատճառանք ընդ անկարգութիւն մանկանց վարժա-րանին. — Յանդիմանութիւն ընդ այն. — Հաշիւ ծախուց վարժարանին. — Առաջարկութիւն ի բաց արձակել զան-պիտան մանկունս ի վարժարանէն. — Մեղադրութիւն ընդ այն. — Գանգատ ընդ մեղադրութիւնն այն. — Անկարգու-թիւն մանկանց վարժարանին. — Արձակումն նոցա ի վար-ժարանէն. — Հրաժեշտ Հ. Սարգսի ի պաշտօնէ տեսչու-թեան. — Հրաժեշտ Հ. Տիմոթէոսի ի պաշտօնէ իւրմէ, և խնդիր դառնալոյ ի վանս. — Յուսահատութիւն և հրաժեշտ Հ. Ստեփանի ի պաշտօնէ իւրմէ, և խնդիր դառնալոյ ի վանս. — Քննութիւն և դատաստան ընդ գնացս նորա . . . 314

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թուղթ Նախագահին. խնամակալաց ժողովոյն առ Հ. Սարգիս և առ ընկերս նորա վասն նորոգ կարգաւորութեան Մ. վարժարա-նին — Հ. Սարգիս կարգի յառաջին պաշտօնանն իւրում, հանդերձ ընդհանուր տեսչութեամբ. — Հ. Գաբրիէլ Այվազեան կարգի ուսուցչապետ, և օգնական նմա Հ. Ամբրոսիոս Գալ-ֆայեան. — Պատասխանի Գեր. Հիւրմիւզի առ տուեալ թղթոյ Հօր Սարգսի. — Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի. — Ժամանել Հ. Գաբրիէլի ի Փարիզ հանդերձ

Հ. Ամբրոսիոսի. — Գնացք Հ. Գաբրիէլի որ ընդ Հ. Սարգսի. — Ճանաչումն և վարկ Հ. Սարգսի որ զՀ. Գաբրիէլէ. — Յաղագս Հ. Գաբրիէլի ի Մասնաւորի, և վասն հրատարակութեան ամբաստանական թղթոց նորա զՀ. Սարգսէ. — Պատճէնք նամակացն այնցիկ. — Վրիպել Հ. Ստեփանի յականկալութենէ իւրմէ, և գժտիլ ընդ Հ. Գաբրիէլի և դառնալ ի Վենետիկ. — Մեղմելս գնացք Հ. Յովհաննու որ ընդ Հ. Սարգսի և ընդ Հ. Գաբրիէլի. — Անօգուտ կարգադրութիւն ժողովոյն. 347

ԳԼՈՒԽ ԻԳ.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ. — Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ նորա. — Երկրորդ օրինակ թղթոյ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն դիտաւորութեան Բաբերարին, և պարտուց Միաբանութեան. — Ճանաչումն Հ. Սարգսի և փորձ նորա ի լուսաւորել զազգն. — Հաստատութիւն և վախճան խնամակալաց ժողովոյն. — Քանիութիւն եկամտից վարժարանին, և աշակերտաց նորին զամս քսան. — Պատճառ ցաւոց սրտի Հ. Սարգսի. — Անբաւականութիւն Միաբանութեան ի գործ Մ. վարժարանին. — Նախատինք Միաբանութեան յազգայնոց վասն բերութեան Մ. վարժարանին. — Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս. — Տարեկան հաշիւ ծախուց վարժարանին, հանդերձ առանձին գրով և կարեւոր քննութեամբ. 368

ԳԼՈՒԽ ԻԴ.

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ խնամակալաց ժողովոյն ի վանս. — Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, իբրեւ նախագահի խնամակալաց ժողովոյն. 390

ԳԼՈՒԽ ԻԵ.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ վասն բանի պահանջման վաշխի հրիտակին Մ. վարժարանին. — Տեղեկութիւն

զպահանջմանէ Տիկնոջ Աղանուրի յեղբօրէ իւրմէ ի Պ. Յով-
հաննէս Մուրատ. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Յովհան-
նու Մ. վասն բանի պահանջման քեռն նորա. — Թուղթ շը-
նորհակալութեան Տիկնոջ Աղանուրի առ Հ. Սարգիս վասն
աշխատելոյ զպահանջումն իւր. — Օգնուն Մ. վարժարանին
յաւարտմանէ պահանջմանն անտի. 470

ԳԼՈՒԽ ԻԶ.

Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Գեր. Հիւրմիւզի, և ընդ զա-
նազան անձինս միաբանից նորին, հանդերձ կարեւոր բա-
ցատրութեամբ բանից իւրաքանչիւր թղթոց 485

ԳԼՈՒԽ ԻԷ.

Խորհուրդ և առաջարկութիւն փոխադրութեան Մ. վարժարանին
ի Կոստանդնուպօլիս. — Վստահութիւն Հ. Սարգսի ի բանս
թղթոց Գեր. Հիւրմիւզի և Հ. Արսէնի Բագրատունւոյ. —
Դժուարութիւնք ընդ այն. — Լուծումն դժուարութեանցն
այնոցիկ. — Եղանակ և պայմանք ի գործ դնել զայն. —
Պատեհութիւն վաճառելոյ զտուն Մ. վարժարանին. —
Հոգ զպարտուց նորին. — Թղթակցութիւն Հ. Սարգսի և
Գեր. Հիւրմիւզի վասն խնդրոյն այնորիկ. 504

ԳԼՈՒԽ ԻԸ.

Բողոք Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ ընդդէմ յանդուգն գրու-
թեանց Հ. Եսայեայ առ ինքն. — Անփոյթ լինել ընդ այն
Գեր. Հիւրմիւզ. — Առնէ Հ. Սարգիս զարժան պատասխա-
նին գրութեանց նորին. 523

ԳԼՈՒԽ ԻԹ.

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, որով առաքէ վերոյի-
շեալ պատասխանին առ Հ. Եսային. — Գանգատ Հ. Սարգ-
սի զգնացից խնամակալաց ժողովոյն. — Մխիթար և ցա-
ւալից պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հիւր-

միւզի. — Պատճառ գնալոյ Գեր. Հիւրմիւզի ի Լոնտոն. — Գանգատ Հ. Սարգսի զվարչութենէ Գեր. Հիւրմիւզի. — Քննութիւն զգնացից Հ. Եսայեայ. — Խնդիր գնալոյ Գեր. Հիւրմիւզի ի Հռոմ. 550

ԳԼՈՒԽ Լ.

Թղթակցութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի վասն վերոյիշեալ խնդրոյ Մ. վարժարանին, և վասն այլ և այլ խնդրոյ միաբանութեան. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Հ. Յովհաննու և ընդ Հ. Եսայեայ. — Թղթակցութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի վասն խնդրոյ մատակարարութեան Մուրատեան վարժարանին, և քննութիւն ընդ այն. . . . 568

ԳԼՈՒԽ ԼԱ.

Թղթակցութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի վասն խնդրոյ վաճառման պայմանին, և վասն մատակարարութեան Մուրատեան վարժարանին. — Թղթակցութիւն Հ. Սարգսի ընդ Հ. Եսայեայ, և ընդ Հ. Յովհաննու, հանդերձ քննութեամբ. 582

ԳԼՈՒԽ ԼԲ.

Խնդիր Գեր. Հիւրմիւզի խնամ ունել Հ. Սարգսի Մ. վարժարանին, և չքանիլ հապառ. — Գուշակութիւն Գեր. Հիւրմիւզի զպահեալ դիպացն Մ. վարժարանին. — Հաւանութիւն Հ. Սարգսի ընդ խնդիրն և ընդ գուշակութիւն նորա. — Գաղտնի բնաւորութիւն Հ. Յովհաննու և ցանկութիւն նորա. — Հակառակութիւն բանից և գործոց նորա. — Յայտնութիւն նորոգ պարտուց Մ. վարժարանին. — Յուսահատութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ այն, և գանգատ զգնացից Հ. Յովհաննու ի մատակարարութիւն Մ. վարժարանին. — Ամբաստանութիւն զմիաբանութենէ ի Հռոմ որ ընդ օրէ սաստկանայ. — Չկամիլ Հ. Յովհաննու գնալ ի Պօլիս նախ քան զդարձ իւր ի Փարիզ. — Քաջալերութիւն և խրատ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ ընդ ամբաստանութիւն ոսոխաց. — Քննութիւն ընդ գնացս Հ. Յովհաննու. 599

ՍԽԱԼԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՎՐԻՊԱԿԱՑ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
10	10	անիրաւ	զանիրաւ
80	31	ի մի	զի մի
96	9	գիցութեան	գիտութեանց
121	34	ազգի	ազգիս
151	31	իւրում	ձերում
188	28	զօգեստուց	զզգեստուց
191	17	նման	նմա
192	11	ցկարծիս	զկարծիս
372	23	վանան:	վասն
425	16	կարիցէ՞	կարիցէ
454	8	զխափանարայ	զխաբանարար
566	22	գըո-	գըր-
579	25	սոռացեալ	մոռացեալ

ՀՀ Ազգային գրադարան
NL0246454